ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հատոր Բ

330

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА АРМЕНИСТИКИ
ARMENOLOGICAL LIBRARY

ЛЕВОН ХАЧИКЯН
LEVON KHACHIKIAN

Труды
Works

Том II
Volume II

ГАНДЗАСАР GANDZASAR
БОГОСЛОВСКИЙ ЦЕНТР THEOLOGICAL CENTER
Ереван 1999 Yerevan

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հատոր Բ

6622

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1999

ԴՏՀ 941(479.25)+809.198.1+
ԳՄԴ 63.3(2Հ)+81.2Հ+76.11
Խ 280

*Նուիրւում է Հայաստանում
քրիստոնէութիւնը պետական կրօն
հռչակելու 1700-ամեակին*

Հրատարակւում է Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական յանձնախումբ

Պարոյր Մուրադեան (գլխ. խմբագիր), տ. Մեսրոպ քհն. Արամեան, տ. Գրիգոր վրդ. Մաքսուտեան, հ. Լեւոն Զէքիեան, Պիոն Յակոբեան, Պաւել Չոբանեան (քարտուղար)

Հատորը կազմեց Շ. Լ. Խաչիկեան
Խմբագիր Պ. Մ. Մուրադեան

Խաչիկեան Լ.
Խ 280 Աշխատութիւններ. - Հ 2. - Եր.: Գանձասար, 1999 -. - 22 սմ:
Հ 2. - 1999. - 384 էջ:

«Աշխատութիւնների» սոյն հատորը ամփոփում է ակադ. Լեւոն Խաչիկեանի՝ հայոց միջնադարեան իշխանական տների եւ վարչական կազմաւորումների, գաղթօջախների ու բնակավայրերի պատմութեանը վերաբերող ուսումնասիրութիւնները, գրուած ձեռագրական նոր նիւթերի հիման վրայ՝ քննական վերլուծութեան մեթոդով: Նոյնը վերաբերում է նաեւ հայոց միջնադարեան արհեստագործութեանն ու տնտեսական գործարքներին: Հեղինակի բացայայտումները բազում առեղծուածներ են լուծում կամ լուծման ուղի հարթում:

Սկզբունքօրէն նոր ու սթափ գնահատութիւն է տրւում Քռնայի դպրոցի գործունէութեանը:

Խ $\frac{4502030000}{846(01)-99}$ 99   ԳՄԴ 63.3(2Հ)+81.2Հ+76.11

ISBN 5-8079-1040-0
© «Գանձասար» աստուածաբանական կենտրոն 1999

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա

**ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. ՊԱՐԳԵՒԻ

**ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ**

**Սոյն հատորը հրատարակւում է
Մատենադարանի վաղեմի բարեկամ
պրն Վարուժան Սալաթեանի
մեկենասութեամբ:**

**Հրատարակութեանն օժանդակելու համար
խմբագրութիւնը շնորհակալութիւն է յայտնում
գերաշնորհ տ. Մեսրոպ արք. Աշճեանին
եւ
ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութեանը**

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ակադ. Լեւոն Խաչիկեանի «Աշխատութիւնների» սոյն հատորը կազմելիս, ինչպէս եւ նախորդի պարագային, ջանք գործադրուեց կարելոյն չափ ի մի ժողովել եւ համադրել յօդուածների ու հրապարակումների այն խումբը, որ զետեղելի է ընտրուած ենթաբաժինների շրջագծում: Արտաքնապէս առանձնակի եւ մասնաւոր խնդիրների քննութեանը վերաբերող այդ ուսումնասիրութիւնները ամփոփում են միջնադարեան Հայոց պատմութեան հանգուցային բնոյթ ունեցող եւ նոր արծարծումներ թելադրող դրուագների շարադրանքը՝ միշտ աղբիւրագիտական ամուր առաղձով եւ մեկնաբանութեան ակադեմիական չափաւորութեամբ: Եւ իրօք, Սիւնեաց Օրբէլեան իշխանական տան մասին քիչ չի գրուել (Ղ. Ալիշան, Գ. Յովսէփեան), սակայն նրանց մի քանի ներկայացուցիչների ժամանակային յաջորդականութեան եւ ինքնութեան փաստացի ճշգրտմամբ լուծելի են դառնում ԺԳ-ԺԵ դարերի պատմութեան ոչ սակաւ խրթնութիւններ: Ինչ վերաբերում է Արցախի հայկական իշխանութեանն ու Մրծորի դպրոցին, ապա այստեղ գործ ունենք բազմաթիւ առեղծուածներ լուսաբանող եւ ազգային պատմութեան ու մշակոյթի մոռացուած էջեր լոյս աշխարհ բերող հիմնարար մենագրութեան հետ, որ վաղուց արժանի էր առանձնակի հրատարակութեան, թերեւս նաեւ այլալեզու թարգմանութեան:

Հանգուցեալ հեղինակի անուրանալի ծառայութիւնների խմբին պիտի դասել ուշ միջնադարի հայկական գաղթավայրերի պատմութեան ներառումը ժողովրդի ընդհանրական պատմութիւն, որ լաւագոյնս կատարուած է ակադեմիական բազմահատորեակի նրա իսկ խմբագրած IV գրքում:

Համշէնահայերի, ինչպէս նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի հայութեան տնտեսական ու մշակութային գործունէութեանը վերաբերող այս հատորում ներկայացուող աշխատութիւնները իրապէս եզակի են՝ թէ հարցերի ընդգրկմամբ եւ թէ վերլուծութեան խորքով: Ի տարբերութիւն նախորդող ուսումնասիրողների, Լ. Խաչիկեանը հետամուտ է նաեւ գաղթի ճանապարհներին եղած հետքերի քննութեանը, որով լուծւում են, բացի պատմականից, բանասիրութեան (լեզուի պատմութեան, բանահիւսութեան) առանցքային հարցեր: Նշեալ առումով եւս այստեղ ամփոփուած աշխատութիւնները կարող են ձեռնարկային կիրառութիւն ունենալ եւ, հայագիտութիւնից բացի, յարակից գիտութիւնների անծանօթ էջեր յայտնել (ճիշտ այդ պարագայով պիտի բացատրել Համշէնահայոց պատմութեանը վերաբերող աշխատութեան թուրքերէն թարգմանութեան փաստը, որ լոյս տեսաւ Ստամպուլում անցեալ տարի, ինչպէս նաեւ Ռուսաստանի եւ Ուկրաինայի հայկական բնակավայրերի պատմութեանը վերաբերող էջերի թարգմանութիւնը ռուսերէն):

«Աշխատութիւնների»-ի այս հատորի երրորդ բաժինը՝ «Գիւղական համայնք եւ արհեստագործութիւն», տասնամեակներ ձեռագրական յիշատակարան-յիշատակագրութիւններով զբաղուելու եւ «մանր ու անհրապոյր» նկատուած տեղեկութիւնների համադրական վերլուծութեան ենթարկելու հեղինակային կարողութեան ապացոյց է, ընդ որում դժուար է ասել՝ ինչն է այստեղ գերակշռում, տնտեսական պատմութի՞ւնը, պատմական ազգագրութի՞ւնը, թէ՞ յաճախ խրթին ու անբացատրելի համարուած իրաւական, հարկային, սոցիալական տերմին-եզրերի լուծումը: Բոլորն էլ հաւասարապէս կարեւոր են եւ նոյնքան նոր ու համոզիչ:

Իր բնոյթով մասամբ առանձնանում է Քռնայի հոգեւոր-մշակութային կենտրոնի պատմութեանը նուիրուած աշխատութիւնը: Այն գրուել ու հրապարակուել է իբրեւ Քերականութեան բնագրի ներածական, բացատրելով երկի գոյացման միջավայրի ու հեղինակի դաւանած գաղափարախօսութեան քաղաքական ու մշակութային առանձնայատկութիւնները: Ի դէպ, աշխատութեան լրջմիտ ընթերցումը այսօրուայ մտաւորականին կարեւոր թելադրութիւններ կբերի:

Հատորը տպագրութեան պատրաստելիս, ինչպէս եւ սպասելի էր, կատարուել են բնագրական եւ տեղեկատուական որոշ միջամտութիւններ, նկատի են առնուել հեղինակային օրինակների վրայ Լեւոն Խաչիկեանի ձեռքով գրուած բոլոր լրացումներն ու սրբագրումները, որոշ հնօրեայ տերմիններ փոխարինուել են արդիական հասկացութիւններով, անհրաժեշտութեան պարագային չենք վարանել ժամանակի սխալմունքով գրուած տողեր ու որակումներ կրճատել: Բայց այդ ամէնը եղել է խիստ չափաւոր, հեղինակի ասելիքն ու նպատակը չխաթարող: Ծանօթագրութիւնների մէջ եղած մատենագիտական յաւելումները նշանակուած են անկիւնաւոր փակագծով կամ «խմբ.» յապաւումով:

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

ՍԻՒՆԵԱՑ ՕՐԲԷԼԵԱՆՆԵՐԻ ԲՈՒՐԹԷԼԵԱՆ ՃԻՒՂԸ*

XIV-XV դդ. Պատմական Հայաստանի Սիւնեաց նահանգի մի շարք գաւառների աշխարհիկ ու հոգեւոր իշխանութիւնը կենտրոնացուած էր Օրբէլեան ֆեոդալական գերդաստանի Բուրթէլեան կոչուող ճիւղի պայազատների ձեռքում[1]:

Շուրջ երկու հարիւրամեակ, սկզբից Սիւնեաց մի շարք գաւառների հզօր տիրակալներ, իսկ այնուհետեւ որպէս նոյն աշխարհի տարբեր մասերում որոշ կալուածքներ ունեցող սակաւազօր աւատատէրեր կամ հոգեւոր առաջնորդներ՝ XIV-XV դդ. սկզբնաղբիւրներում յիշատակւում են Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղից սերուած տասնեակ ներկայացուցիչներ: Առ այսօր, սակայն, այդ տուեալների բաղդատական ուսումնասիրութեամբ դեռեւս չի ստեղծուած ֆեոդալական այդ գերդաստանի ճիւղագրութիւնը՝ ժամանակագրական վստահելի հիմքով:

Առաջին փորձն այս ուղղութեամբ կատարել է հայագիտութեան մեծ երախտաւոր Ղ. Ալիշանը[2]: Երկրորդ փորձը, շատ աւելի հարուստ նիւթերի հիման վրայ, ըստ իր հաւաստման, կատարելու էր Գ. Յովսէփեանը, Օրբէլեանների մասին գրելիք իր ուսումնասիրութեան մէջ[3]: Նրա անտիպ գործերի շարքում յիշատակուած է նաեւ Օրբէլեան իշխանութեան մասին անաւարտ մի երկ, որի մէջ, թերեւս, տրուած է նաեւ Բուրթէլեան գերդաստանի տոհմագրութիւնը. ցաւօք, այդ ձեռագիր աշխատութիւնը անմատչելի է մեզ:

Ալիշանի «Սիսականում» տպագրուած տոհմածառը, մեզ հետաքրքրող իր մասով, այսպիսի տեսք ունի (տե՛ս յաջորդ էջ):

XIV-XV դդ. հայերէն ձեռագրաց յիշատակարանների եւ վիմական արձանագրութիւնների վերջին տարիներս կատարուած հրատարակութիւնների մէջ ամբարուած են բազմաթիւ տուեալներ ու ակնարկներ, որոնք հնարաւորութիւն են ընձեռում վերանայելու Ղ. Ալիշանի խիստ թերի տոհմածառը եւ կազմելու Բուրթէլեան գերդաստանի շատ աւելի ամբողջական ու ստուգապատում ժամանակագրական պատմութիւնը: Այդ աշխատանքը, անշուշտ, ինքնանպատակ չէ. յիշեալ դարերի հայ քաղաքական մշակութային կեանքի շատ խրթնութիւններ առնչւում են Սիւնեաց աշխարհի հետ, եւ շատ անցուդարձերի ժամանակագրութիւնը աղերսուած է սերտօրէն Սիւնեաց այս կամ այն իշխանի ու եպիսկոպոսի աթոռակալութեան տարիներին: Ըստ այդմ՝ Բուրթէլեան գերդաստանի տոհմածառն ու ժամանակագրական պատմութիւնը, անտարակոյս, իր դոյզն նպաստն է բերելու վերոյիշեալ ժամանակաշրջանի Հայոց պատմութեան ամբողջական ուսումնասիրութեանը:

* «Բանբեր Մատենադարանի», N 9, Երեւան, 1969, էջ 173-199

1 Ժամանակակից յիշատակարաններում Օրբէլեանների այդ ճիւղը կոչւում է «Տուն Բուրդելի» («ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 560), «Տուն Բիւրթէլեանց» («ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», I, էջ 194, II, էջ 194), «Պուրթելեանց զարմ» (ԺԵ, I, էջ 258), «Բուրթէլեանց ազգ» (ԺԵ, III, էջ 147) եւ այլն:

2 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, ներդիր՝ 92-93-րդ էջերի միջեւ

3 Գարեգին արքեպս. Յովսէփեան, Խաղբակեանք եւ Պռօշեանք Հայոց պատմութեան մէջ, մասն առաջին, Երեւան, 1928, էջ IV-V. Ս. Սիմոնեան, Գարեգին կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Հասկ», 1952, էջ 253: [Տե՛ս նաեւ Kyrille Toumanoff, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasie chrétienne (Arménia-Géorgia-Albanie), Roma, 1976, էջ 358-359: Տոհմածառը մասամբ լրացնող ճիւղեր կան Նորավանքի նորայայտ արձանագրութիւններում: Տե՛ս Ս. Սաղումեան, Նորայայտ վիմագրեր Նորավանքից, «Յուշարձան», Բ, Երեւան, 1993, էջ 91-103]:



Ազգատոհմն Օրբելեանց

Ահա այս ակնկալութեամբ մանրակրկիտ քննութիւն կատարելուց յետոյ ստորեւ ի մի ենք բերում մեզ յայտնի բոլոր կարեւոր վկայութիւնները Բուրթէլեան գերդաստանի պայազատների մասին: Քիչ թէ շատ նշանաւոր անձանց կեանքի դրուագներին նուիրել ենք առանձին ամփոփ հատուածներ, Բուրթէլեանների պատմութիւնը, բնականաբար, սկսելով այդ գերդաստանի հիմնադրի կեանքի համառօտ տարեգրութեամբ:

ԲՈՒՐԹԷԼ ՕՐԲԷԼԵԱՆ

Բուրթէլը Տարսայիճ Օրբէլեանի թոռն է, Էլիկումի որդին, անուանի պատմիչ եւ Սիւնեաց մետրապոլիտ Ստեփանոս Օրբէլեանի եղբօրորդին:

Սիւնիքում ու նրա սահմաններից դուրս Բուրթէլը որպէս Սիւնեաց մեծ իշխան, յիշատակւում է 1306-1344 թուականներին: Առաջին անգամ նրա անունը գտնում ենք 1306 թ. Սարգիս գրչի Եղեգիսում շարադրած յիշատակարանում (ԺԴ, 42)[1], իսկ վերջին անգամ՝ Նորատուսի 1344 թ. վիմական մի արձանագրութեան մէջ:

Ժամանակակիցները Բուրթէլին մեծարում են շռայլ տիտղոսներով. «մեծ ամիր» (ԺԴ, 100) «մեծ կոմս եւ կողմնակալ» (ԺԴ, 117), «մեծ քրիստոսազաւր իշխան» (ԺԴ, 167), «մեծ իշխանաց իշխան տանս Սիւնեաց», «յաղթող սպայապետ» (ԺԴ, 182), «Հայոց Մեծաց թագազարմ ժառանգ՝ տէր տանն Սիսակայ՝ մեծիմաստ պարոն» (ԺԴ, 292), «մեծ սպարապետ Հայոց եւ Վրաց՝ թագազարմ իշխան» (ԺԴ, 297), «հիւպատոս եւ սպարապետ Հայոց» (ԺԴ, 328) եւ այլն: Շռայլօրէն մատնատրուած այս բնոյթի տիտղոսները, իհարկէ, հնարաւորութիւն չեն ընձեռում ճշգրիտ որոշելու այս կամ այն գործչի քաղաքական ու տնտեսական կշիռն իր ապրուած ժամանակաշրջանում: Սրանք, այնուամենայնիւ, ցուցանիշ են այն իրողութեան, որ մոնղոլական իշխանութեան վերջին տասնամեակներում Սիւնեաց իշխանաց իշխան ամիր Բուրթէլը ազդեցիկ դիրք էր գրաւում: Մի յիշատակարանում ասուած է, որ նա «առաջի աշխարհակալացն մեծարեալ եւ բազում ընծաիւք պատուեալ» էր, եւ որ 1307 թ. իր զօրքերով (Ջեսար Օրբէլեանի հետ միասին) մասնակցել է Խարբանդա խանի դէպի Գիլանի կողմերը ձեռնարկած մի արշաւանքին, որից «խաղաղութեամբ» տուն է դարձել՝ բայց կորցրել է իր զօրքի մի մասը («բայց զօրացն պակաս մնացին»[2]: Այս արշաւանքի մասին ուշագրաւ տուեալներ են գրանցուած «Վրաց ժամանակագրութեան» մէջ: Անանուն հեղինակը յայտնում է, որ «Երբ բորբոքուեց ճակատամարտը, ոչ Վախթանգ թագաւորը, ոչ էլ նրա բանակը թիկունք չէին դարձնում, այլ տեղի նեղութիւնից այնպէս էին ջարդւում, որ տասից հազիւ երկուսն էր կենդանի մնում: Մարտ մտան սոմխիթացիք՝ որքան հեծեալներ կային: Նոյնպէս կոտորուեցին... իսկ Վախթանգ թագաւորին ու նրա բոլոր դիդեբուլներին քաջամարտութեան համար յարգեցին, ապա մեծ շնորհով ուղարկեցին երկիր»[3]:

Իր իշխանութեան տարիներին Բուրթէլը մասնակցել է նաեւ այլ պատերազմների,

---

1 Այստեղ եւ այսուհետեւ ամէնուրեք մեր կազմած «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուն (Երեւան, 1950 թ.) վկայակոչում ենք «ԺԴ» համառօտագրութեամբ՝ շարադրանքի մէջ եւ ոչ տողատակում: Նոյն ձեւով՝ XV դ. յիշատակարանների եռեակ հատորները՝ ԺԵ, I, ԺԵ, II եւ ԺԵ, III համառօտագրութեամբ:

2 «Բազմավէպ», 1947, N 9-10, էջ 216-217

3 Վրաց ժամանակագրութիւն (1207-1318), աշխատասիրութեամբ Պարոյր Մուրադեանի, Երեւան, 1971, էջ 183-184

վատակելով «քաջի եւ միշտ յաղթողի» համբաւ[1]*:*

Ժամանակակից աղբիւրներում տուեալներ կան Բուրթէլի զօրահրամանատարի՝ Շահուռնեցի Վահրամ իշխանի որդի Ամատա զօրավարի մասին (մեռել է 1349-ից առաջ), որ տէր էր կարգուած Վայոց ձորում գտնուող Երերան (Հերհեր), Վանք եւ Քալատակ կոչուող բնակավայրերի (ԺԴ, 376): Տեղեկութիւն ունենք նաեւ Բուրթէլի նայիպ (հաւատարմատար) կոչուած ոմն Ալինախ իշխանի մասին, որը յիշատակուած է միջնադարեան ուշագրաւ մի զրոյցի մէջ[2]*:*

Մեծարուել է Բուրթէլ իշխանը նաեւ որպէս բարեպաշտ մի անձնաւորութիւն, որ «էր խստակրօն ցայգաջան եւ գիշերաւատակ ծնրադրող, առաւել քան զմիանձունս քարանձաւաց»[3]*: Եղեգիսի Նորվանքում կառուցել է Բուրթէլաշէն կոչուող հոյակապ եկեղեցին՝ հայ միջնադարեան ճարտարապետութեան գոհարներից մէկը, գրել է տուել ու շքեղ զարդարել ձեռագրեր*[4]*:*

Գլաձորեան համալսարանի բարունապետ Եսայի Նչեցին, 1323 թ. գրած մի յիշատակարանում, մեծարում է Բուրթէլին ու նրա որդիներին եւ յայտնում, որ նրանց առատաբաշխութեամբ՝ «յոլով շինութիւն եւ խաղաղութիւն գործեցաւ մեզ եւ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի», եւ որ՝ «ի հաստարակախնամ բարեաց սոցա ընդ ամենեսեան եւ մեք՝ մեր աշակերտաւք՝ բազում եւ անթիւ գումս գտաք ի սոցանէ» (ԺԴ, 182-183):

1306-1315 թթ. Եղեգիսում շարադրուած յիշատակարաններում Բուրթէլի կողքին, որպէս տեղի տէր, յիշատակւում է նրա եղբայր Բուղտա (կամ Պուղտա) իշխանը, որը, սակայն, երիտասարդական հասակում՝ «յետ յոլով քաջ մրցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ պսակ», այսինքն՝ սպանուեց (1318 թ.):

Բուրթէլի մահուան ստոյգ թուականը չգիտենք. վերջին անգամ, որպէս ապրող անձնաւորութիւն, յիշուած է 1344 թ., մեռած էր արդէն 1348-ին: Այդ թուականին շարադրուած մի

1 ՄՄ ձեռ. N 4515, էջ 81

2 Տե՛ս **Ն. Մառ,** Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 343-344: Զգալի տարբերութիւններ ունի տպագրուածից նոյն զրոյցի ՄՄ N 8076 ձեռագրում ընդօրինակուած փոփոխակը, որ բերում ենք ստորեւ. «Պարոն Բուրթէլն յաւուր միում գնայր զօրօքն ի ճանապարհ, եւ երէց մի աշխարհի պատահեալ ի ճանապարհին: Եւ իջեալ ի ձիոյն՝ հանդերձ զօրօքն համբուրեցին զաջ քահանային: Եւ նայիպն Ալինախ անուն տրտնջաց պարոնին: Եւ նա գաղտ պատուէր ետ, զի մի կնքեսցեն եւ թաղեսցեն զընտանիս նորա: Մեռաւ որդին եւ ոչ թաղեցին զնա: Եկն առ Բուրթէլն եւ նա ասէ. «Ես եւ դու գնամք, թաղեմք զնա»: Եւ նա ասէ. «Արդ անհնար է»: Եւ նա ասէ. «Բայց դու այն օրն էր տրտնջեցեր՝ յորժամ զքահանայն պատուեցի»: Վասն այսորիկ պատուել զքահանայն պարտ է՝ միջնորդ հաշտութեան առ Աստուած» (ձեռ. N 8076, էջ 72ա):

Բուրթէլ Օրբէլեանի մասին կան նաեւ այլ զրոյցներ, որոնք ուշագրաւ են որպէս պատմական նշանաւոր անձնաւորութիւնների շուրջ հիւսուած զուարճախօս պատմութիւններ եւ վկայում են Սիւնեաց այդ իշխանի ժողովրդականութեան մասին: Աւելորդ չենք համարում ներկայացնել նաեւ դրանք՝ քաղելով ՄՄ N 2226 ձեռագրից:

-«Վարդապետ մին գովեցին մօտ պարոն Բուրթէլն, թէ յոյժ համբերող է: Ասէ «Գնացէք, բերէք, որ փորձեմ»: Երբ ի դուռն երեկ, տեսաւ զնա, ասէ. «Երթ ի բաց, յիմար եւ շէթ»: Եւ նա լռութեամբ ի բաց գնաց: Դարձեալ ասէ. «Վարդապետ, եկ, վարդապետ, եկ»: Եւ դարձեալ եկն առ իշխանն: Ասէ. «Վարդապետ, զայդ ուստի գիտէիր համբերել»: Ասէ. «Պարոն, զայդ ի շանէն եմ ուսել, դեռ ի գրոց շատ բան գիտեմ»: Եւ պարոնն յոյժ սիրեաց զնա:

-«ԶՏիրատուր վարդապետն ի պաշտօն տարան եւ այն օրն հաց մոռացան տալ ուտելոյ: Երեկոյին ժամուն տարան ի տուն: Ասէ պարոնն (Բուրթէլ) «վարդապետ, քանի՞ տարոյ ես»: Ասէ. «Խ (40) տարոյ, պակաս մի օր»: Ասէ. «Մէկն է՞ր է պակաս»: Ասէ. «Օրս այս, որ քաղցած պահեցեր, ժամանակի կարգ ոչ է» (ՄՄ ձեռ. N 2226, էջ 59ա-59բ, հմմտ. նաեւ **Ղ. Ալիշան,** Սիսական, էջ 127):

3 ՄՄ ձեռ. N 4515, էջ 81-82

4 Տե՛ս «Բազմավէպ», 1947, N 9-10, էջ 216-217:

յիշատակարանում ասուած է. «Փոխեցելոյն առ Քրիստոս յոյսն ամենեցուն պարոն Բուրթելին» (ԺԴ, 369):

Բուրթէլի կինն է Վախախ իշխանուհին, որ հաւանաբար Ծարի Դոփեան կոչուող գերդաստանից է սերում: Բուրթէլ եւ Վախախ ամուսիններից ծնուած զաւակներն են՝ Բեշքէնը, Իւանէն ու Սամէղը, որոնք միասին յիշատակուած են 1344 թ. Նորատուսում գտնուող վիմական մի արձանագրութեան մէջ[1]*:*

Սամէղը (հմմ՛ Սամուէլ)՝ եղբայրներից կրտսերն է, մեռած լինելով պատանի հասակում՝ չի յիշատակուած այլ աղբիւրներում, իսկ Բեշքէնի եւ Իւանէի մասին կան բաւարար տեղեկութիւններ:

ԲԵՇՔԷՆ ՈՐԴԻ ԲՈՒՐԹԷԼԻ

Անտարակոյս՝ Բուրթէլի աւագ որդին է. յիշատակագիրները ամէնուրեք, նախ սրա անունն են տալիս եւ նոր միայն Իւանէի: Առաջին անգամ յիշատակուած է Արփա գիւղի եկեղեցու արձանագրութեան մէջ (1322 թ.) եւ ապա՝ Եսայի Նչեցու կողմից՝ 1323 թ. (տե՛ս վերը):

1337 թ. Բեշքէնը գտնւում էր Իլղանութեան կենտրոններում՝ Թաւրիզում եւ Սուլթանիայում՝ զինուորական ծառայութեան մէջ: Այս քաղաքներում Բեշքէնի պատուէրով նշանաւոր գրիչ Աւագն ընդօրինակեց փառայեղ մի Աւետարան, որ նա վաղամեռիկ իր տիկնոջ՝ Փաշայի յիշատակին նուիրեց Տաթեւի վանքին (ԺԴ, 232): Ձեռագրի յիշատակարանում Աւագը Բեշքէնին կոչում է «մեր տէրն ըստ մարմնոյ» եւ մեծարում նրան՝ «Հայոց Մեծաց թագազարմ ժառանգ, տէր տանն Սիսական, մեծիմաստ պարոնաց պարոն» տիտղոսներով: Այստեղ յիշատակւում է նաեւ Բեշքէնի մանկահասակ որդի Էլիկումը:

Ուշագրաւ են Բեշքէնի եւ Իւանէի մասին Սարգիս մետրապոլիտի շարադրուած տողերը՝ 1337 թ. յիշատակարանում. այստեղ ասուած է, որ սրանք ամէն բանով նման են իրենց բարեպաշտ հօրը՝ Բուրթէլ իշխանին՝ «Խոնարհութեամբ եւ մատակարարութեամբքն զաշխարհս եւ զզօրս, նաեւ յառաջադէմ յարքունիս եւ մեծափառ, զի մեծարանս արար տէր երեսաց սոցա»[2]*:*

Վերջին անգամ Բեշքէնը յիշատակուած է 1349 թ.՝ որպէս «քաջ զաւրավար Հայոց, աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխան» (ԺԴ, 375): Երբ է կնքել իր մահկանացուն՝ չգիտենք:

Բեշքէնի որդի Էլիկումի մասին տուեալները խիստ աղքատիկ են: 1337 թ. Աւագ գրիչը յիշատակում է նրան, որպէս «նորաբոյս ոսկեբողբոջ աստուածատուր հարազատ ծիրանածին եւ բարենշան զաւակ» (ԺԴ, 292), որը որբ էր մնացել մօրից եւ դաստիարակւում էր, հաւանաբար, իր պապ Բուրթէլի եւ տատ Վախախի խնամածութեամբ:

Երբ Օրբէլեանների սպարապետ Ամատա Շահուռնեցին վախճանուեց երիտասարդ հասակում, թողնելով միայն մի դուստր՝ Նաթիլ անունով, Բուրթէլն ու Վախախը Շահուռնեցի իշխանների տիրոյթների ժառանգ այդ դեռատի օրիորդին ամուսնացրին Բեշքէնի որդի

1 **Ղ. Ալիշան,** Սիսական, էջ 47

2 Երուսաղէմ, ձեռ. N 1033, էջ 62: Հմմտ. ԺԴ, 297:

Էլիկումի հետ, որ 1349 թ. յիշատակարանում (ուր խօսւում է այդ ամուսնութեան մասին) կոչուած է Կուկա («զորդի Բեշքէնայ՝ զԿուկայն»): Գիտենք արդէն, որ Բեշքէնն ունէր միայն մէկ որդի, ուստի դժուար չէ եզրակացնել, որ Կուկա անունը Էլիկում անուան փաղաքշական ձեւն է:

Արդ, այս ամուսնութեամբ Բեշքէնի որդի Էլիկումը ժառանգեց Ամատա Շահուռեցու (Նաթիլի հանգուցեալ հօր) կալուածքները եւ իր պապի կողմից կարգուեց «տէր հայրենեաց Վահրամայ որդոյ Շահուռեցոյն՝ Երերան եւ Վանացն եւ Քալատակին եւ այլ հայրենեացն ամենայնի» (ԺԴ, 376): Այս դէպքերը կատարուել են 1344-1348 թթ. առաջ, երբ դեռ ողջ էին Բուրթէլն ու Վախախը:

Ինչքան են ապրել ու տիրել իրենց կալուածքներին Էլիկումը (Կուկան) եւ Նաթիլը, չգիտենք: Նրանց մասին որեւէ այլ տուեալ չեն հաղորդում ժամանակակից աղբիւրները: Ըստ այդմ կարծում ենք, որ շատ կարճատեւ է եղել նրանց կեանքը, եւ հեռացել են աշխարհից՝ անյիշատակ:

ԻՒԱՆԷ ՈՐԴԻ ԲՈՒՐԹԷԼԻ

Բուրթէլի երկրորդ որդու՝ Իւանէի անունը սկզբնաղբիւրներում տառադարձուած ենք գտնում տարբեր ձեւերով՝ Իւան (ԺԴ, 303), Իւանէ (բազմիցս), Իւանի («Սիսական», 96), Իւանիկ (ԺԵ, II, 317, «Սիսական», 47), Ինանիկ (ԺԵ, I, 87, 656, «Սիսական 96»), Նանիկ (ԺԴ, 567): Բարեբախտաբար, գրեթէ ամէնուրեք, նա յիշատակուած է կամ հօր ու աւագ եղբօր հետ միասին, կամ իր որդիների ու թոռների առնչութեամբ, ուստի դիւրութեամբ որոշւում է, որ տարբեր ձեւերով գրի առնուած այդ անուան տակ ժամանակակիցները նկատի են ունեցել նոյն անձնաւորութեանը՝ Բուրթէլ իշխանի Իւանէ որդուն:

XIV դ. առաջին տասնամյակներին, սակայն, Սիւնիքում ապրել է նաեւ մի այլ Իւանէ իշխան՝ տէր Որոտան գաւառի: Եւ ահա մինչեւ Իւանէ Բուրթէլեանի կենսագրականին անցնելը անհրաժեշտ է տարբերակել համանուն այս իշխաններին[1]:

Նախ, անդրադառնանք Որոտանի տէր Իւանէին:

Այս անձնաւորութեան եւ նրա գերդաստանի մասին ամենաուշագրաւ տուեալներ գրանցուած են 1337 թ. ընդօրինակուած մի Սաղմոսարանի յիշատակարանում, որ ստացել է հէնց այս Իւանէի եղբայր՝ Սիւնեաց մետրոպոլիտ Սարգիս եպիսկոպոսը՝ «յիշատակ անջինջ իւր եւ ծնողաց իւրոց՝ հօր իւրոյ Հասանայ, որ էր յազգէ և յազնէ մեծափառ իշխանաց տանս Սիւնեաց, եւ մօր իւրոյ տիկին Վախախին, եւ եղբօրն իւրում՝ պայազատի եւ քաջազօրի զամրի Իւանէի, որ էր ամիրա եւ պետ երկրին Որոտան, եւ եղբօրորդւոյ իւրոյ՝ կորովամիտ սրբազան նորընծա քահանայի Յովհաննիսի... նայ եւ եղբարց սորին հարազատաց եւ հսկայազօրու հաստաբազուկ մանկտուոյն՝ Հասանայ եւ Զաքարէի, եւ ամենայն արեան մերձաւորաց»[2]:

Այս արժէքաւոր տուեալները հաւաստում եւ լրացնում են Իւանէ իշխանի դուստր եւ

1 Այդ աշխատանքը առ այսօր չի կատարուած, եւ, ինչպէս այլ բանասէրներ, այնպէս էլ մենք «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուի անձնանունների ցանկի մէջ եւ այլուր շփոթել եւ որպէս մի անձնաւորութիւն ենք ներկայացրել Իւանէ անունը կրող այս երկու իշխաններին: Դրանց տարանջատման գործում մեզ օգնել է Ա. Մնացականեանը, որին յայտնում ենք շնորհակալութիւն:

2 Երուսաղէմ, ձեռ. N 1033, էջ 61-62: Տե՛ս նաեւ «Սիոն», 1868, N 8, էջ 192, 1938, N 9, էջ 275-278:

Օրբէլեանների սպարապետ Ամատա Շահուռեցու տիկին՝ Թուղթանի իշխանուհու յիշատակարանով, որ շարադրուած է 1349 թ.: Այնտեղ ասուած է. «Արդ, ես՝ անարժան Թուխթանի, դուստր Իւանէ Որոտան իշխեցողի, քոյր քաջ քարտուղարի եւ երջանիկ րաբունապետի Յովաննէս վարդապետի, հարսն մեծ Շահուռեցեանց, կենակից հզաւր եւ մեծ իշխանին Ամատին շինեցի յԵրերան ժամատունս...յիշատակ ինձ, եւ առն իմում Ամատին... եւ զաւակին իմ Նաթիլին, եւ հաւր իմ Իւանէ, եւ մաւր իմ Տիկնանց-Տիկնայ, հարազատ եղբարց իմոց Հասանայ եւ Զաքարէի, եւ ամենայն արեան մերձաւորաց» (ԺԴ, 375):

Որոտան գաւառի հին աւատատերերի այս գերդաստանի մասին աւելի աղքատիկ տուեալներ կան նաեւ ձեռագրաց այլ յիշատակարանների մէջ, գրանցուած մեծանուն գիտնական ու մանկավարժ Յովհան Որոտնեցու կապակցութեամբ, որը ըստ վերոյիշեալ աղբիւրների եւ բազմաթիւ այլ վկայութիւնների, որդին էր «քաջի Իւանէի՝ Որոտան իշխեցողի» (տե՛ս, օրինակ, ԺԴ, 497, 520):

Թովմա Մեծոփեցին եւս յայտնում է, որ Յովհան Որոտնեցին ծննդեամբ էր «ի գաւառէն Որոտնոյ, ի գեղջէն Վաղանդնայ՝ որդի մեծի իշխանին Իւանի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»[1]:

Այս գերդաստանի տոհմագրութիւնը ըստ վերոյիշեալ տուեալների՝ հնագոյն դարերից է գալիս, նրանք սերուած են համարւում Սիւնիքի հին ու բնիկ իշխաններից: Սակայն, ցաւոք, յանուանէ յիշատակւում են միայն Հասանը (կինն է՝ Վախախ), նրա որդիները՝ Սարգիս եպիսկոպոսն ու Իւանէ իշխանը (կինն է՝ Տիկնանց-Տիկին), եւ թոռները (Իւանէի զաւակները)՝ Յովհան Որոտնեցին, Հասանը, Զաքարէն եւ Թուղթանին, եւ այս վերջինի դուստրը՝ Նաթիլ իշխանուհին:

Հասան իշխանը, հայրը լինելով Սարգիս մետրոպոլիտի (որ արդէն 1326 թ. յիշուած է որպէս Վաղադնի վանահայր) ապրած պէտք է լինի XIII դ. երկրորդ յիսնամեակում: Այդ ժամանակաշրջանից յայտնի են Հասան անունը կրող շուրջ երկու տասնեակ գործիչներ[2], որոնցից մէկը՝ Դլենեանց կոչուող Հասանը՝ ըստ երեւոյթին նոյնացուելու է սրա հետ:

Ստ. Օրբէլեան պատմիչը յայտնում է, որ Դլէն իշխանի սերնդից Հասան իշխանը, իր երկու եղբայրների հետ միասին, «եկեղեցի եւ բազում միաբանութիւն» է ունեցել Տաթեւում, սակայն XIII դ. վերջին՝ «յաւերմանէ գաւառին իւրեանց եւ ի դառն եւ վերջին աղքատութենէ», ստիպուած է եղել Ստ. Օրբէլեանին վաճառելու իրենց գերդաստանին պատկանող մի սուրբ մասունք, ստանալով 500 դահեկան եւ «այլ բազում պարգեւս ձիոց եւ եզանց եւ հանդերձից»[3]:

Ահա Դլենեան այս Հասանի որդին է եղել, հաւանաբար, մեզ հետաքրքրող Իւանէ Որոտնեցի իշխանը: Իւանէի եղբայր Սարգիս մետրոպոլիտի 1337 թ. յիշատակարանում ասուած է, որ նա «էր ամիրա եւ պետ երկրին Որոտան»: Ուստի մեռած էր արդէն այդ թուականից տարիներ առաջ, մինչդեռ Բուրթէլի որդի Իւանէ իշխանը առաջին անգամ յիշատակուած է Արփա գիւղի եկեղեցու մի արձանագրութեան մէջ՝ 1322 թ. որպէս «նորաբողբոջ» երիտասարդ: Յետագայ տարիների (1323, 1333, 1334, 1337, 1338, 1348,

1 Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ, 1860, Փարիզ, էջ 14

2 Տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 57-59:

3 Ս. Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 485-487

1349) բազմաթիւ յիշատակարաններում, Սիւնեաց իշխանների թուարկման ժամանակ, տրւում է նաեւ այս Իւանէի անունը՝ նրա աւագ եղբայր Բեշքէնից յետոյ: Վերջին անգամ, որպէս կենդանի անձնաւորութիւն, Իւանէն յիշատակուած է 1377 թ., երբ, մի ժամանակագրի վկայութեամբ, «իշխանութիւնս Հայոց էր նուազեալ, եւ միայն մնացեալ Իւանի, որ կոչի Իւանիկ, որդի մեծին Բուրթէլին, ի մէջ այլասեռից՝ բազում հարկապահանջութեամբ»[1]*:*

Իւանէ Բուրթէլեանը ունեցել է 4 արու զաւակ՝ Ստեփանոս-Սուլթանշահ, Սմբատ, Բուրթէլ եւ Գորգուն: Արդ, առանձին-առանձին ծանօթանանք Իւանէի այս որդիներին:

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ-ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ԻՒԱՆԷ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Մաշտոցեան Մատենադարանի N 9450 Աւետարանի վերջում կան այդ ձեռագրի յետագայ տէրերի մասին մի քանի յիշատակագրութիւններ:

Մեզ համար յատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում 374ա եւ 373բ էջերի գրանցումները: Դրանցից առաջինում ոմն «Գրիգոր նուաստ եւ անարժան քահանայ» ասում է, որ իր հալալ արդիւնքով 1366 թ. գնել է այդ Աւետարանը՝ «յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց եւ եղբարց»: 373բ էջի յիշատակագրութեան առաջին տողը («Կամաւ կարող հզաւրին Աստուծոյ») գրուած է վերոյիշեալ յիշատակարանի ձեռագրով, իսկ շարունակութիւնը գրել է ոմն տէր Ստեփանոս-Սուլթանշահ՝ այսպէս. «Ես տէր Ստեփաննոս մականուն Սուլթլանշահ, թոռն Բուրթէլին որդի Նանկի [Ն ե]ղբաւրն [Բ]շքինի պարոնի՝ ի Քրիստոս է հանգուցել: Մեք վկայ եմք այս սուրբ Աւետարանիս Վահրամայ եւ իւր եղբայր ///, իւրեանց հալալ արդեմք գնեցին զայս սուրբ Աւետարանս, Աստուած շնորհաւոր առնէ, ամէն, ամէն»:

Ստացող Վահրամի եւ նրա եղբօր եղծուած անունները գրուած են ջնջուած այլ բառերի վրայ, իսկ ջնջուել են, հաւանաբար, վերոյիշեալ Գրիգոր քահանայի ու նրա եղբօր անունները[2]*: Ըստ այդմ Ստեփանոս-Սուլթանշահի յիշատակագրութիւնը գրանցուած պէտք է լինի նոյն թուականին, ինչ Գրիգոր քահանայինը, այսինքն՝ 1366 թ.: Այս յիշատակագրութեան համաձայն Բուրթէլի որդի, Բեշքէնի եղբայր Նանիկ-Իւանէն ունեցել է Ստեփանոս-Սուլթանշահ անունով մի որդի, որ եղել է եպիսկոպոս (սրա մասին աւելի հանգամանալից խօսք կլինի Սիւնեաց եպիսկոպոսներին նուիրուած բաժնում):*

ՍՄԲԱՏ ԵՒ ԲՈՒՐԹԷԼ՝ ՈՐԴԻՔ ԻՒԱՆԷ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Սմբատի մասին առաջին տեղեկութիւնը գտնում ենք Յովհան Որոտնեցու աշակերտ Յակոբ գրչի 1386 թ. շարադրուած բովանդակալից յիշատակարանում: Խօսելով 1-2 տարի առաջ տեղի ունեցած քաղաքական անցուդարձի մասին՝ նա գրում է, որ «զմեղքն իմ ծովացեալ եհան զգունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդէլի: Որ եկին եւ առին զբերդն Որոտան, եւ հայրենազուրկ արարին զպարոն Սմբատն, որդի Նանիկին» (ԺԴ, 560): Այստեղ յիշատակուած «անօրէնները», հաւանաբար, Ոսկեայ-Հորդայի դան Թողթամիշի զօրքերն են, որ 1385-ին մեծ աւերածութիւններ գործեցին նաեւ Սիւնիքում: 1400-1403 թթ. Սմբատ եւ Բուրթէլ եղբայրները Տաթեւում շարադրուած մի

1 «Միսաչեան», էջ 96

2 Անունների այս փոփոխութիւն կատարողը նպատակ է ունեցել ներմուծել այդ յիշատակագրութեան մէջ ձեռագրի նախկին ստացողների՝ Վասիլի եւ Վահրամի անունները:

յիշատակարանում կոչուած են տեղի իշխաններ (ԺԴ, 632, ԺԵ, 1, 4, 35): Հաւանաբար 1403 (կամ յաջորդ) թուականին Լանկթամուրի թոռ Միրզա-Օմարը, որ կուսակալ էր կարգուած Իրանի եւ Անդրկովկասի վրայ, Սմբատ եւ Բուրթէլ իշխաններին «դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն» (այսինքն՝ դարձրեց մահմեդական) եւ, իրենց ընտանիքներով, ուղարկեց Սամարղանդ: Շատ չի տեւում, սակայն, սամարղանդեան գերութիւնը, շուտով նրանք վերադառնում են Սիւնիք[1] *եւ կրկին դառնում քրիստոնէական հաւատքի: 1406 թ. նրանք նորից սկսում են յիշատակուել Տաթեւում գրուած ձեռագրերում (ԺԵ, I, 74):*

Բուրթէլ իշխանն իր երկու մանկահասակ որդիների հետ, ինչպէս եւ Սմբատի մի որդին (բոլորն էլ՝ անանուն) զոհ են գնում 1407 թ. մեծ հունձ կատարած համաճարակին. «Այսօր եղբայր Սմբատին պարոն Բուրթէլ՝ հանդերձ որդւովք իւրովք հանգեաւ ի Քրիստոս, եւ որդի Սմբատին, եւ այլքս անթուելիք են»,- գրել է Թ. Մեծոփեցին իր ընդարձակ յիշատակարաններից մէկում (ԺԵ, 1, 80, հմմտ. նաեւ ԺԵ, 1, 75):

1407 թ. Սմբատ իշխանն իր հեծելազօրքով մասնակցում է Ջելաիրեան Ահմադ Ղանի եւ Կարա-Իւսուֆի դաշնակցած ուժերի մղած կռիւներին՝ Թամուրեանների դէմ: Յիշատակարանը, որի մէջ տուեալներ են եղել այդ մասին, պահպանուել է խիստ քայքայուած վիճակում, ուստի շատ բան մութ է մնում: Պարզ է, սակայն, որ Սմբատի զօրագունդը մեծ կորուստներ է ունեցել (ԺԵ, I, 82):

Երբ Կարա-Իւսուֆը զբաղուած էր Աղ-Կոյունլուների դէմ պատերազմելով, Սուլթան-Ահմադը իշխանութիւնը գրաւելու փորձ է կատարում, միայնակ վայելելու համար Կարա-Կոյունլուների գործակցութեամբ Թամուրեանների դէմ տարած յաղթանակը: Սմբատ Բուրթէլեան իշխանը, անսալով իր ոչ հեռատես խորհրդատուներին, նոյնպէս յայտնւում է Ահմադի կուսակիցների շարքում եւ նրանից պարգեւ ստանում Անգեղակոթ գիւղը[2]*: 1410 թ. օգոստոսին Ահմադը պարտութիւն է կրում եւ սպանւում Կարա-Իւսուֆի կողմից: Ջելաիրեաններին աջակցողները պատժւում են: Իւսուֆը բռնագրաւում է Սմբատ իշխանի կալուածքները. «Էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանէ»,- յայտնում է Թ. Մեծոփեցին*[3]*: Եւ Սմբատ իշխանը ստիպուած է լինում պատսպարուել Վրաստանում: 1412 թ. իր Բեշքէն որդու հետ միասին նա յիշատակւում է որպէս Գորիի մօտ գտնուող Ափլիսցիխէ (Ուփլիսցիխէ) գիւղաքաղաքի իշխան: Այստեղ շարադրուած մի յիշատակարանում Մելքիսեդեկ գրիչը յայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «իշխանութեան տեղոյս (Ափլիսցիխէի) պարոն Սմբատի եւ որդւոյ նորին պարոն Բէշքէնի, որ ի յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց» (ԺԵ, I, 133):*

Սմբատ իշխանը կնքում է իր մահկանացուն օտարութեան մէջ՝ 1412-1414 թթ. միջոցին: 1415 թ. Տաթեւում գրուած մի ձեռագրում, որպէս տեղի իշխաններ, յիշատակւում են սրա որդիները՝ Բեշքէնն ու Շահը: Ուստի հաւանաբար հայրը՝ Սմբատ իշխանը, մեռել էր այդ թուականից առաջ (ԺԵ, I, 653): Մատթէոս Մոնոզոնը 1417 թ. Գանձասարում շարադրուած յիշատակարանում Սմբատի մասին գրում է. «Քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բուրթելեանց՝… որոյ անուն Սըմբատ կոչիւր, եւ անդ (ի Վրաստան) ի յօտարութեանն վախճանեցաւ» (ԺԵ, I, 194): Սմբատ Բուրթէլեանը մեծ հաւանականութեամբ ամուսնացած է եղել

1 Թովմա Մեծոփեցի, Փարիզ, 1860, էջ 68

2 Նոյն, էջ 72-73

3 Նոյն, էջ 34

վրացուհի մի իշխանուհու հետ, այդ ամուսնութիւնից ծնուած որդիներից տեղեկութիւն ունենք 4-ի մասին. մէկը 1407 թ. ժանտախտի ժամին զոհ գնացած պատանին է, որի անունն իսկ չի պահպանուել, միւսներն են՝ Բեշքէնը, Իւանէ-Ստեփանոսը եւ Շահը: Բայց մինչեւ սրանց անդրադառնալը անհրաժեշտ է ի մի բերել Իւանէի միւս որդու՝ Գորգուն իշխանի գործունէութիւնը լուսաբանող հատուկենտ վկայութիւնները[1]:

ԳՈՐԳՈՒՆ ՈՐԴԻ ԻՒԱՆԷ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Գորգունի անունը, իր հօր անուան պէս, տառադարձուած ենք գտնում տարբեր ձեւերով՝ Գորգուն, Գորգոն, Գուգուն, թերեւս նաեւ Գորգունէ:

Սամուէլ Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողներից մէկը, ՊԼԵ (1386) թուականի տակ, պատմում է հետեւեալը. «Թուրքն էառ զբերդն Որոտան, եւ մեծ վարդապետն Կախիկ գնաց փախստական ի Տարայ, եւ պարոն Գորգունէն զարդամահ եղեւ»[2]: Այս ուշագրաւ տեղեկութիւնը Հ. Աճառեանի կողմից հասկացուել է այն իմաստով, որ «Սրա (իմա՛ Գորգուն իշխանի) ձեռքից վշտամահ եղաւ Յովհան Որոտնեցին»[3]: 1386 թ. այս վկայութիւնը միակն է, ուր Իւանէ Բուրթէլեանի Գորգուն որդին յիշատակուած է որպէս կենդանի, կամ քիչ առաջ մեռած անձնաւորութիւն:

XV դ. յիշատակարանների ու Թ. Մեծոփեցու «Պատմութեան» մէջ մի երկու անգամ դարձեալ հանդիպում ենք Բուրթէլեան այս իշխանի անուանը, բայց արդէն՝ նրա Տարսայիճ որդու կապակցութեամբ: Մեծոփեցին, օրինակ, յայտնում է, որ Սմբատ եւ Բուրթէլ իշխանների հետ մէկտեղ Թամուրեան տիրակալ Միրզա-Օմարը բռնի հաւատափոխ է արել նաեւ վերոյիշեալ Տարսայիճին («Զուէրն Եղեգեաց Տարսայիճ անուն՝ զորդի Գորգոնին ուրացուցին»[4]), իսկ Գրիգոր Ախալցխացի գրիչը, 1419 թ. շարադրած իր յիշատակարանում, Բուրթէլեանների այս ճիւղի յաջորդականութեան մասին այսպիսի ցուցում է տալիս. «...պարոն Տարսայիճին, որդւոյ Գուգունին, որդոյ Ինանիկին, որդոյ Բուրթէլին» (ԺԵ, I, 656): Այս վկայութիւններից պարզւում է, որ պարոն Գորգունը իշխել է Եղեգնաձորում:

Այժմ դառնանք Սմբատ իշխանից սերուող պայազատներին:

ԲԵՇՔԷՆ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Սրա անուանն առաջին անգամ հանդիպում ենք 1406 թ. Տաթեւում շարադրուած մի յիշատակարանում, ուր ասուած է, որ ձեռագրի ընդօրինակութիւնը կատարուել է «յիշխանութեան պարոն Սմբատին եւ որդոց նորին Բեշքէնին եւ Իւանէին» (ԺԵ, I, 58):

1410 թ. յետոյ, իր հօր հետ միասին, Բեշքէնն էլ հայրենազուրկ է լինում, վտարւում Սիւնիքից ու պատսպարւում Վրաստանում: 1412 թ., ինչպէս գիտենք արդէն, նա եւս յիշւում է որպէս Աֆլիսցիխէ գիւղաքաղաքի տէր («իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի եւ որդւոյ նորին պարոն Բեշքէնի»), (ԺԵ, I, 133):

Սմբատը, տեսանք, որ վախճանւում է «ի յօտարութեանն» (Վրաստանում), բայց նրա որդիներից երկուսը, Մատթէոս Մոնազոնի ստուգապատում տուեալներով, «եկին ի հայրենիս իւրեանց, եւ ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց» (ԺԵ, I, 194): Երկու այդ որդիներից մէկը, անտարակոյս, Բեշքէնն է, միւսը՝ Շահը. այդ մասին է վկայում Յովհաննէս գրիչը, որ 1415 թ. Տաթեւում շարադրած իր յիշատակարանում գրում է. «Իշխանութեան տեղոյս մեծատոհմի Բեշքէնի, հարազատով Շահիւ» (ԺԵ, I, 653): Մի քանի տարի անց՝ 1422 թ., նոյն Տաթեւում, նա յիշատակւում է որպէս այդ վայրի իշխան՝ միայնակ, առանց իր եղբայր Շահի ընկերակցութեան (ԺԵ, I, 292):

Բեշքէնի որդի Ռուստամը, Կարա-Կոյունլու Սքանդար փադիշահի մերձաւոր զինակիցներից մէկը լինելով, պետական բարձր պաշտօններ է գրաւել (այդ մասին՝ քիչ յետոյ): Սքանդարի իշխանութեան տարիներին (1421-1437) Բեշքէնին յաջողւում է, անշուշտ իր Ռոստամ որդու աջակցութեամբ, վերստանալ Բուրթէլեան տան կալուածքների մի մասը: 1428 թ., օրինակ, նրան էր պատկանում նաեւ Անգեղակոթ գիւղը (ԺԵ, I, 382), իսկ 1429 թ. մի պաշտօնական գրութեան մէջ Բեշքէնը յիշատակւում է իր մի քանի վասալների հետ միասին[1]:

Դրութիւնը, սակայն, փոխւում է 1434-1435 թուականից յետոյ, երբ Լանկ-Թամուրի Շահռուխ որդին, երրորդ անգամ լինելով, արշաւեց Կարա-Կոյունլու Սքանդարի վրայ եւ պարտութեան մատնեց նրան: Թամուրեանները ներխուժում են նաեւ Սիւնիքի սահմանները եւ աւերածութիւններ գործում. Բեշքէնը, իր Ռուստամ որդու հետ միասին, դարձեալ ստիպուած է լինում թողնել իր հայրենական կալուածքները եւ, հազարաւոր հպատակների գլուխ անցած, գաղթել վրաց տիրապետութեան տակ գտնուող Հիւսիսային Հայաստանի շրջանները:

Վրաց Ալեքսանդր թագաւորը, որ Բեշքէնի փեսան էր, Լոռու բերդն իր շրջակայքով յանձնում է իր աներոջը: Սիւնիքից Լոռի կատարուած մեծ գաղթի մասին ուշագրաւ տողեր է գրանցել Թովմա Մեծոփեցին. «...Առեալ (Բեշքէնն) զամենայն կողմն Սիւնեաց եւ զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Սիւնիս, աւելի քան զՋՌ (6000) քրիստոնեայ տունս, ազատեալ ի Շահռուհէն, հասոյց ի կողմն Վրաց: Եւ թագաւորն առ երեսս պատուեալ զնա, տայ նմա զդղեակն Լոռու»[2]:

Որպէս Լոռու տիրակալ Բեշքէնը եւ Ռուստամը յիշատակւում են նաեւ 1437 թ. Սանահնի վանքում Շմաւոն վարդապետի շարադրած յիշատակարանում. այստեղ կարդում ենք. «Իշխա-

1 Սմբատի նախնեաց այլ յաջորդականութիւն է տալիս Երուսաղէմի N 1719 ձեռագիրը, ըստ որի Սմբատի հայրը՝ Գուգուն է, պապը՝ Պեշքէնը, պապի հայրը՝ Բուրթէլը (տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 6, Երուսաղէմ, 1972, էջ 28):

2 «Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 170

3 «Հայոց անձնանունների բառարան», հտ. Ա, էջ 493: Բացառուած չէ, որ տարաձեւ գրանցուած այս (Գորգուն) անձնանուան ուղղական հոլովաձեւերից մէկն էլ եղել է Գորգունէ (հմմտ. Իւանէ, Կուրիկէ, Ստեփանէ եւ այլն): Այդ դէպքում պէտք է ենթադրել, որ ժամանակագիրն ակնարկել է պարոն Գորգունի վշտամահ լինելու մասին՝ թուրքերի կողմից ի կալուածքների գրաւման կապակցութեամբ:

4 **Թ. Մեծոփեցի,** էջ 68

1 Ստորեւ բերում ենք այդ գրութիւնը. «Յանուն Աստուծոյ ես՝ Բեշկէն, որդի մեծի իշխանին Սմպա[տա]յ, տեսի զԱւետարանս, որ բազում ժամանակ ի մեր երկիրս էր ու գնել էր Տանձիկանց Աւագն: Երեկ Թումայ երէց Սիւնայվանից, թէ այս մեր եկեղեցոյն է, Սիւնավանից թալան է տարել, ու երդումն կերաւ: Ես Բեշքէն, որդի պարոն Սմպատին, տուի մեզ արեւշատութեան ու մեր նախնեացն յիշատակ ի Սիւնեց վանիցն, որ Սիւնիվանք ասեն:

Ես Յովհաննես վարդա[պ]ետ, որ զգիրս գրեցի վկա եմ: Ես Յովանէս եկեղեցպան Վաղաղնոյ [վա]նացն վկայ եմ: Ես Դիլանճի որդի Լեշին վկա [եմ], ես Պաշարաթ՝ որդի Էլէկ[ս]անին Լորեցի վկայ եմ, ես Էլտուր՝ որդի Փալիկին վկայ եմ, ես Ափդագ՝ որդի Սեթիկայ, որ մեր հայրն ու հարեղբայրն Աւագն գնել էր, մեք էլ հետ տուինք, մեք ենք Դաւալքարու տէր՝ տուինք ի յեկեղեցին Սիւնէվանից, ոչ ում խաւսք ու զրոյց չկայ, Աստուած շնհատր առնէ:

Ամիս արեգ, թուական հայոց ՊՀԸ (1429): Դաւալքարն պատժաւք լինի» (ԺԵ, I, 392):

2 **Թ. Մեծոփեցի,** էջ 117-119: Տպագիրն այստեղ աղաւաղուած է, սրբագրում ենք մի շարք ձեռագրերի բաղդատութեամբ:

6622

նութեան տեղոյս իշխանաց իշխանին պարոն Բէշքենին՝ շառաւիղին Օրբէլեանց, եւ որդոյ իւրոյ պարոն Ռուստամին» (ԺԵ, I, 468):

Մի տարի անց՝ 1438 թ., Վրաց Ալեքսանդր թագաւորը, երկիւղ կրելով, որ «Հայք առ նա ժողովեցին եւ աւերումն լինի կողման Վրաց», թունաւորել է տալիս իր աներոջը՝ Բեշքեն իշխանին[1]:

Բեշքենի զաւակներից տեղեկութիւն ունենք երեքի մասին. Ռուստամից բացի ունեցել է 1438-ին հազիւ 10 տարին բոլորած մանկահասակ մի որդի[2], որի անունը չի հաղորդւում եւ որի յետագայ կեանքի մասին վկայութիւններ չկան: Դուստրը, որի անունը նոյնպէս չգիտենք, ինչպէս ասացինք, եղել է Վրաց Ալեքսանդր թագաւորի (1412-1443) կինը:

ԻՒԱՆԷ-ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Սմբատ իշխանի այս որդին մեզ արդէն ծանօթ է 1406 թ. Տաթեւում շարադրուած յիշատակարաններից, ուր նա յիշուած է հօր եւ եղբօր հետ միասին, որպէս տեղի իշխաններից մէկը («յիշխանութեան պարոն Սմբատի եւ որդոց նորին Բեշքենին եւ Իւանէին»): Այդ ժամանակ նա դեռեւս աշխարհական էր ու արդէն ընտանիք կազմած (Իւանէի որդի պարոն Սմբատի տարիներ յետոյ թողած մի յիշատակագրութիւնից յայտնի է դառնում նաեւ նրա կնոջ՝ Մարգարիտ-Խաթունի անունը):

Ե՞րբ է Իւանէն եկեղեցականի սքեմ հագել ու դարձել Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, ստոյգ չգիտենք, գուցէ 1410 թ. (այս մասին տե՛ս Սիւնեաց եպիսկոպոսների ժամանակագրութեանը նուիրուած բաժնում): 1419 թ. Հերմոնի վանքում շարադրուած արժէքաւոր մի յիշատակարանի մէջ նրա մասին կարդում ենք. «Եւ ի հայրապետութեան այսմ նահանգի տէր Ստեփաննոսի՝ մականուն Իւանէի, որդի պարոն Սմբատայ եւ եղբայր պարոն Բէշքէնի» (ԺԵ, I, 656):

Իւանէ-Ստեփանոս պարոնտէրը վերջին անգամ յիշատակուած է 1421 թ.՝ Տաթեւի վանքում («Ի յառաջնորդութիւն տէր Ստեփաննոսի ի զարմէն Պուրթելեանց. մեռել է հէնց նոյն թ. (ԺԵ, I, 256) Վրաստանում, ուր գնացել էր իր մօրը տեսութեան: Թովմա գրիչը նրա վախճանի մասին գրում է. Յառաջնորդութեան տանս Սիսականայ տէր Ստեփաննոսի՝ որդւոյ պարոն Սմբատին, որ եւ յայսմ ամի գնացեալ ի տունն Վրաց առ մայրն իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս» (ԺԵ, I, 292)

Իւանէ-Ստեփանոս պարոնտէրի որդուն ու սերնդին քիչ յետոյ անդրադառնալու խոստումով, երկու խօսք ասենք Սմբատ իշխանի միւս որդու՝ Շահի մասին:

ՇԱՀ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Շահը, իր աւագ եղբայր Բեշքենի հետ միասին, հօր մահուանից յետոյ վերադարձել է Սիւնիք: 1415 թ. Տաթեւում գրուած մի յիշատակարանից պարզւում է, որ երկու այս եղբայրները այդ ժամանակ գտնւում էին Սիւնիքում («Իշխանութեան տեղոյս մեծատոհմի Բէշքէնի, հարազատով՝ Շահիւ»): Մի քանի տարի անց Բեշքենը մենակ է յիշւում որպէս իշխան Տաթեւի, յետագայում նաեւ այլ կալուածքների: Պէտք է ենթադրել, ուրեմն, որ Շահը երկար չի մնացել Սիւնիքում, այլ վերադարձել է Վրաստան, ուր ապրում է դեռեւս իր մայրը (հաւանաբար ազգութեամբ վրացուհի):

Բեշքեն իշխանի եղեռնական մահուան պատմութիւնը շարադրելիս Թովմա Մեծոփեցին տխրութեամբ արձանագրում է, որ այդ ժամանակ (1438) նրա Շահ անունով եղբայրը ողջ էր եւ հանգիստ ապրում էր Վրաստանում՝ «վարժեալ եւ սնեալ առ որովայնամոլ ազգին Վրաց: Եւ անարի գտեալ եւ ոչ ի խնդիր եղեալ հայրենի գաւառին»[1]:

1 Նոյն, էջ 118
2 Նոյն, էջ 119

ՏԱՐՍԱՅԻՃ ՈՐԴԻ ԳՈՐԳՈՒՆ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Տարսայիճն իշխում էր Եղեգիսում. յիշատակուած է այն իշխանների շարքում, որոնք բռնութեամբ մահմեդական դարձուեցին Լանկ-Թամուրի թոռ Միրզա-Օմարի կողմից, 1403 թ.[2]: Թամուրեանների պարտութիւնից յետոյ Տարսայիճը նոյնպէս դառնում է քրիստոնէական հաւատքի. «Մարդիկ,- գրում է Թ. Մեծոփեցին,- որք յաւուրս չարաթային ի հաւատոյ ուրացեալք էին, եկին ի հաւատս՝ Բուրթէլն Որոտնայ, Տարսայիճ՝ Եղեգեաց»[3]: 1415 թ. Տարսայիճի մասին ուշագրաւ տուեալներ է գրանցել Գրիգոր Ալաւլցեացի գրիչը, յայտնելով, որ հէնց նոյն տարում նա զրկուեց հայրենական իր կալուածքներից ու թշուառ վիճակի մէջ է գտնւում: «Գրեցաւ գիրքս, որ կոչի Հարցմունք,- կարդում ենք վերոյիշեալ գրչի յիշատակարանում,- ...ի հայրապետութեան սուրբ ուխտիս եւ գաւառիս պարոն Տարսայիճին, որդոյ Գուրգունին, որդոյ Ինանիկին, որդոյ Բուրթէլին: Զի յայսմ ամի յոյժ ի նեղութիւն, ի տառապանք եւ յաղքատութիւն անկաւ, զի նա, որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել, զի խլեալ եւ յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գեւղ եւ զքաղաք, զվանք եւ զանապատ ի նմանէ. եւ նա փախեալ եւ թագուցեալ էր ի ծերպս վիմաց եւ ի մայրիս, մինչեւ այց արասցէ նմա տէր Աստուած եւ յառաջին փառսն եւ իշխանութիւնն դարձուսցէ զնայ» (ԺԵ, I, 656):

Գրչի այս բաղձանքը չի իրականացել. ճիշտ է, Տարսայիճի որդիներից Սմբատը դարավերջի մի յիշատակարանում (տե՛ս ստորեւ) մեծարուած է «իշխանաց իշխան» տիտղոսով, բայց չունենք որեւէ վկայութիւն հաւաստելու, որ Տարսայիճին կամ նրա ժառանգներին յաջողուել է յետագայում վերստանալ իրենց կալուածքները Եղեգիսում:

«Իշխանաց իշխան» այդ Սմբատը յիշատակուած է իր որդի՝ Վայոց-ձորի արքեպիսկոպոս Եղիշէի կապակցութեամբ՝ Եղեգիս քաղաքում ընդօրինակուած մի Աւետարանի յիշատակարանում, որի մեզ հետաքրքրող մասը բերում ենք ստորեւ. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թւականիս Հայոց ՋԽԴ. (1495), ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի ... եւ վերադիտող այսմ նահանգի (իմա՛ Վայոց ձորի) պարոնտէր Եղիշա արքեպիսկոպոսի, որդոյ իշխանաց իշխանի պարոն Սմպ[ատ]ա, որդոյ մեծին Տա[ր]սաիճի»[4]:

Այսքանով սպառւում են Տարսայիճի յաջորդների մասին մեզ յայտնի աղքատիկ տուեալները:

1 Թ. Մեծոփեցի, էջ 119
2 Նոյն, էջ 68
3 Նոյն, էջ 73
4 Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա, 1914, էջ 585

ՌՈՒՍՏԱՄ ՈՐԴԻ ԲԵՇՔԷՆ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Ռուստամը մեզ արդէն մասամբ ծանօթ է Բեշքէնի կեանքի տարեգրութեանը նուիրուած հատուածից: XV դ. Հայոց պատմութեան մէջ կարեւոր դեր կատարած մի գործիչ է: Սքանդար Կարա-Կոյունլուն ներքնապէս ուժեղ պետութիւն ստեղծելու իր ծրագրերն իրագործելու ճանապարհին ինչ-որ չափով յենւում էր նաեւ հայ իշխող վերնախաւի վրայ. իրեն կոչում էր «Հայաստանի Թագաւոր» (Շահ-ի արմեն), պետական բարձր պաշտօններ էր շնորհում հայ ֆեոդալական տներից սերուած որոշ գործիչների, իր զօրքի մէջ հաւաքագրում էր նաեւ հայ ռազմիկների եւ այլ: Ռուստամ Բուրթէլեանը, անտարակոյս իր արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ, դարձել էր Սքանդարի մերձաւոր գործակիցներից մէկը եւ առաջ քաշուել պետական բարձր պաշտօնների: 1431 թ., լինելով հաւանաբար Երեւանի նահանգի կառավարիչ, Ռուստամը Էջմիածնի վանքին վաճառքի անուան տակ վակֆ արեց 7 խոշոր գիւղեր, որով եւ տնտեսական հող ստեղծեց Հայ եկեղեցու հոգեւոր կենտրոնը Կիլիկիայից մայր հայրենիք՝ Էջմիածին տեղափոխելու համար: Նուիրաբերուած այդ գիւղերի պարսկերէն ընդարձակ կալուածագրում շատ ուշագրաւ են Ռուստամին տրուած տիտղոսները, որոնք ինքնին ցուցանիշ են այն բարձր դիրքի, որ գրաւել էր Բուրթէլեան այդ իշխանազունը Կարա-Կոյունլուների վարչական ատեաններում: Այնտեղ ասուած է. «Վեհանձնեայ էմիր եւ իշխան, մեծափառ, ազնուաշուք, բարձրաստիճան, բարձրագոյն, վստահելի ծառայ եւ ամենաազնիւ վեզիր, նորին կայսերական մեծութիւն սուլթանի մտերիմ, ամենազօր, արքայական պետութեան սիւնը, մեծագոյն արքունի խորհրդական, արքաններից ամենից իմաստունի վստահելի, որի անձը վեր է ամէն տեսակ նկարագրութիւնից ու գովասանքից, յաւիտենականութեան տէր Աստուծոյ ողորմութեամբ իշխանութեան եւ կրօնի քաջայաղթ էմիր Ռուստամ, որդի էմիր Բեշքէնի, որդի էմիր Սմբատի»[1]:

Պէտք չէ տարակուսել, որ Սքանդարի իշխանութեան տարիներին Ռուստամի բարձր հեղինակութեամբ Սիւնեաց Օրբէլեանները եւ, մասնաւորապէս, Ռուստամի հայր Բեշքէնը, վերստացել էին իրենց կալուածքների մի մասը եւ բարեկեցիկ վիճակ ստեղծել իրենց համար: Դրութիւնը փոխուեց արմատապէս Սքանդարի պարտութիւնից ու սպանութիւնից յետոյ: Գիտենք արդէն, որ 1437 թ. Ռուստամը, պետական գործերից հեռացած ու պատիւներից զրկուած, պատսպարուել էր Լոռիում: Յետագայում սակայն նա կրկին վերադարձել է Սիւնիք: 1451 թ. պահպանուել է մի պարսկերէն կալուածագիր, որի համաձայն նոյն Ռուստամը Տաթեւի վանքին է վաճառում իրեն պատկանող Սուարանց, Տաշու, Աղանց ու Տանձատափ գիւղերը: Բայց այս փաստաթղթում նա յիշատակւում է առանց բազմայարկ տիտղոսների, սոսկ որպէս՝ «Հայ ամիրզադա Ռուստամ, որդի ամիր Բեշքէնի, որդի Սմբատի»[2]:

Ամիր Ռուստամի կեանքի յետագայ տարիների մասին տեղեկութիւններ չեն պահպանուել: Մեծ հաւանականութեամբ նա ունեցել է որդիներ, գուցէ ոչ հայ եւ ոչ քրիստոնեայ կնոջից կամ կանանցից:

Դառնանք այժմ Ռուստամի հօրեղբայր՝ պարոնտէր Իւանէ-Ստեփանոսի սերնդին:

1 Յ. Փափազեան, Մի էջ Արեւելեան Հայաստանի քաղաքական կեանքի պատմութիւնից. «Տեղեկագիր», 1955, N 8, էջ 86

2 Նոյն տեղում

ՍՄԲԱՏ ՈՐԴԻ ԻՒԱՆԷ-ՍՏԵՓԱՆՈՍ ԲՈՒՐԹԷԼԵԱՆԻ

Այս Իւանէ-Ստեփանոսը, տեսանք արդէն, որ մինչեւ Սիւնեաց եպիսկոպոս դառնալը ամուսնացած է եղել եւ ունեցել Սմբատ անունով մի որդի: Այս պարոն Սմբատը 1471 թ. ստանում է մի Աւետարան, որի յիշատակարանում տուեալներ է հաղորդում իր նախնիների մասին. «Ես՝ պարոն Սմբատս,- գրում է նա,- առի զկենսաբեր Աւետարանս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ զհայրն իմ Ստեփանոս, մայրն իմ Մարգարիտ-Խաթուն, զպապն իմ Սմբատ, զմեծ պապն Իւանիկ» (ԺԵ, II, 317):

Կարելի է ենթադրել, որ հէնց այս Սմբատն է յիշատակուած Հերհերի մօտ գտնուող աւերակ գիւղատեղում կանգնեցուած մի խաչքարի արձանագրութեան մէջ, ուր ասուած է. «Թվ. ՋԼԸ. (1489), կամաւն Աստուծոյ ես Խաչատուր երէցս... կանգնեցի զխաչս հոգ(ոյ) փրկութիւն պարոն Սմբատին»:

Այս գրութիւնը խորհրդածութիւնների տեղիք է տալիս. նախ, ինչո՞ւ է խաչքարը կանգնեցուած ոմն Խաչատուր երէցի կողմից, որը, կարծես, ազգակցական կապ չունի պարոն Սմբատի հետ, եւ ապա Սմբատի ի՞նչ մեղքերն ի նկատի ունի արձանագրութիւն կազմողը՝ աղերսելով նրա հոգու փրկութիւնը: Կարելի՞ է արդեօք հետեւեցնել, որ հէնց այս Սմբատով է սկսւում Սիւնեաց Օրբէլեանների հաւատափոխութեան պրոցեսը, եւ որ նա կնքեց իր մահկանացուն՝ որպէս առաջինը մահմեդականութիւն ընդունած Բուրթէլեան պայազատներից:

Այս հարցին անկարող ենք պատասխանել, բայց տեղեկութիւն ունենք «Սմբատ որդի Ուռութցի (իմա՝ Որոտնեցի) Սոհրաբ» անունով մի մահմեդականի մասին, որը 1508 թ., որպէս վկայ, իր ստորագրութիւնն է դրել Տաթեւի վանքապատկան գիւղերի Շմաւոն վարդապետին պատկանելու իրողութիւնը հաւաստող մի վակֆնամէի տակ: Գուցէ այդ Սոհրաբը որդին է հէնց 1489 թ. մահացած այս Սմբատի, բայց կարող է նաեւ լինել Ռուստամի սերնդից (թոռը՞): Ռուստամ ու Սոհրաբ անունները բնական են ազգակցական աւելի սերտ աղերս ունեցող անձանց համար: Սոհրաբի ստոյգ տեղը Բուրթէլեանների տոհմածառում առկախ թողնելով, յայտնենք, որ նրա հեռաւոր ժառանգներին՝ «Բուրթէլլուների համայնք» («Ջմաըթ-ի Բուրթէլլու») անուան տակ, բազմիցս հանդիպում ենք XVI-XVII դդ. փաստաթղթերում. այդ բուրթէլլուները, ազգային իրենց դիմապատկերը կորցրած, յաճախ վէճի են բռնուել Տաթեւի վանքի հետ եւ, միջոցների ընտրութիւն չկատարելով, փորձել են բռնագրաւել վանական կալուածքները[1]:

Այսպիսով, XV դ. վերջերին Սիւնեաց Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղը, որ շուրջ երկու դար հայրենի աշխարհին պարգեւեց աշխարհական ու հոգեւորական նշանաւոր գործիչներ, օտար տիրակալների անլուր բռնութիւններին ենթարկուելով՝ ազգային դիմայեղծման է ենթարկւում եւ իջնում Հայոց պատմութեան բեմահարթակից:

1 Բուրթէլուների մասին այս տուեալները քաղել ենք Յ. Փափազեանի «Մատենադարանի պարսկերէն կալուածագրերը» տպագրուող աշխատութիւնից: [Աւելի հանգամանօրէն տե՛ս **А. Д. Папазян**, Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике, "К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении", т. I, Ереван, 1991, с. 236-254. Նաեւ՝ **А. А. Хачатрян**, К расшифровке и интерпретации некоторых арабских надписей Армении (XV-XVI вв.), նոյն տեղում, էջ 255-275]:

***

Որպէս աշխարհիկ ու հոգեւոր տէրեր XIV-XV դդ. Սիւնեաց աշխարհում տիրակալած Օրբէլեան իշխանների Բուրթէլեան ճիւղի պայազատների մասին մեր հետազօտութեան արդիւնքները հնարաւորութիւն են ընձեռում կազմելու այդ գերդաստանի ըստ հնարաւորի ամբողջական տոհմածառը:

Հարկ է նշել, սակայն, որ ձեռագրական յիշատակարանների, վիմական արձանագրութիւնների եւ այլ աղբիւրների մէջ կարող են դեռեւս յայտնաբերուել նոր տուեալներ, որոնց օգտագործմամբ հնարաւոր կլինի լրացնել տոհմածառը անշշան դեր կատարած մի քանի նոր անուններով, ինչպէս եւ ճշգրտումներ կատարել թուականների մէջ: Որոտնավանքում պահպանուած մի տապանաքարի արձանագրութեան մէջ, օրինակ, յիշատակուած է ոմն «բարեպաշտ իշխան արքայազուն Սմբատ», վախճանուած 1430 թ.: Սրկղունքում 1461 թ. շարադրուած մի յիշատակարանում, Պռօշեան իշխան Ջումայի հետ միասին, տեղեկութիւն է գրանցուած նաեւ ոմն իշխան Ինանիկի մասին (ԺԵ, II,157): Չենք տարակուսում, որ այդ Սմբատն ու Ինանիկը նոյնպէս Բուրթելեան գերդաստանից են սերուած, բայց անհրաժեշտ տուեալներ չունենք պարզելու նրանց ծնողների անունները եւ տեղ տալու նրանց Բուրթէլեանների տոհմածառի մէջ: Աւելացնենք նաեւ, որ յետագայ դարերի աղբիւրներում կան ու դեռեւս կարող են գտնուել ստոյգ կամ չինծու տուեալներ իրենց Օրբէլեան իշխանների շառաւիղ համարող ընտանիքների մասին[1]: Այս կարգի տուեալների հաւաքումն ու դասակարգումը՝ մեր նպատակից դուրս ենք համարել:

Կից էջի վրայ տալիս ենք Բուրթէլեանների տոհմածառը, իւրաքանչիւր անձնանուան տակ նշանակելով ծայրային այն թուականները (կամ թուականը), որ գտել ենք նրա մասին սկզբնաղբիւրներում:



1 Այսպիսի մի տուեալ, շարադրուած կիսագրագէտ մէկի կողմից XVIII դ., հրատարակել է Ղ. Ալիշանը «Սիսականի» մէջ (էջ 97):

***

Այժմ, մանաւոր քննութեան նիւթ դարձնելով, փորձենք որոշել Սիւնեաց մետրոպոլիտների յաջորդական կարգը XIV-XV դդ.՝ Բուրթէլեան գերդաստանի գործունէութեան երկդարեայ ժամանակաշրջանում:

Ղ. Ալիշանը «Սիսականի» մէջ՝ «Եպիսկոպոսունք Սիւնեաց» խորագրի տակ (էջ 20-21) տալիս է այսպիսի ցանկ.

-1310 Յովհաննէս Օրպէլ

-1329 Ստեփանոս Օրպէլ (վրիպակ է, պէտք է լինի Տարսայիճ), որդի Ջալալայ

-1337 Սարգիս եւ Ներսէս

................................[1]:

-1407 Առաքել քեռորդի Գ. Տաթեւացւոյ

-1422+ Ստեփանոս, որդի Սմբատայ Օրբէլեան

-1464+ Ստեփանոս միւս, որդի Իւանէի Որոտնեցւոյ

- ...+ Շմաւոն յազատ տանէ

-1483+ Ստեփանոս, եղբօրորդի Շմաւոնի

-1495+ 1522 Եղիշէ Օրպէլեան:

Ալիշանի հաղորդած տուեալների վրայ որոշ յաւելումներ կատարելով մի ցանկ էլ կազմել է Արտակ եպս. Սմբատեանը, «Համառօտ պատմութիւն Տաթեւի վանքի» իր ուսումնասիրութեան մէջ, առանց սկզբնաղբիւրների վկայութեան[2]:

Աւելի հանգամանօրէն Սիւնեաց եպիսկոպոսների յաջորդական ցանկը կազմելու աշխատանքով զբաղուել է Նորայր եպս. Պողարեանը իր «Տաթեւ» ուսումնասիրութեան մէջ[3], իւրաքանչիւր անձանուան դիմաց տալով նրա աթոռակալութեան իրեն յայտնի թուականները, նաեւ համառօտակի նշելով աղբիւրները (ըստ մեծի մասի Հ. Աճառեանի «Անձնանունների բառարանի» ընձեռած տուեալներով):

Ծանօթանանք նաեւ այդ ցանկին (առանց նշելու աղբիւրները).

-Յովհաննէս եպս. Օրպէլ, 1310-1324

-Ստեփանոս եպս. Օրպէլ, 1329

-Շմաւոն եպս. 1332

-Սարգիս արքեպիսկոպոս, 1337

-Յովհաննէս Որոտնեցի, 1375°-1386, որդի Իւանէ Օրբէլեանի

-Գրիգոր Տաթեւացի, 1336-1407

-Առաքել եպս. Սիւնեցի, 1407-1416°

-Ստեփանոս եպս. 1417°-1422, որդի Օրբէլեան Սմբատի

-Յովհաննէս փակակալ, 1422°-1463°

-Ստեփանոս եպս. 1464-1472, որդի Որոտնեցի Իւանէի°

-Շմաւոն եպս. 1472°, յազատ տանէ

-Յովհաննէս եպս. 1478

-Ստեփանոս եպս. 1478°-1485, եղբօրորդի Շմաւոն եպս.-ի

-Եղիշէ եպս. Օրբէլեան, 1495-1522

Ալիշանի եւ Պողարեանի (Ծովականի) այս ցանկերը՝ վերանայման ու ճշգրտման խիստ կարիք են զգում:

Ուրիշ կամ այլ առիթի թողնելով հարցի մանրակրկիտ ու ամբողջական ուսումնասիրութիւնը, հիմնականում ձեռագրական յիշատակարանների մատուցած տուեալներով, փորձելու ենք աւելի ճշգրտուած ցանկ կազմել XIV-XV դդ. աթոռակալած Սիւնեաց եպիսկոպոսների:

Յովհաննէս-Օրբէլ. *նշանաւոր պատմագիր՝ Ստեփանոս Օրբէլեանի կենդանութեան օրօք (Ստեփանոսը մեռել է 1303 թ.[1]) Սիւնեաց մետրոպոլիտ է օծուել նրա հօրեղբայր Լիպարիտ Օրբէլեանի որդի Յովհաննէս-Օրբէլը: 1302 թ. մի պաշտօնական գրութեան մէջ նա իրեն կոչում է. «Տէր Յովհաննէս յազգէ Աւրպելեանց, պռաւառթրանոէս Հայոց Մեծաց եւ մետրոպաւլիտ Սիսակ[ան] նահանգի» (ԺԴ, 7): Վերջին անգամ յիշատակուած է որոշակիօրէն 1323 թ.՝ «Տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրապաւլիտ եւ այցելու Սիւնեաց երկրաւան գաւազանաց» (ԺԴ, 183): Երբ է վախճանել՝ չգիտենք:*

Ստեփանոս-Տարսայիճ. *որդին է Ջալալ Օրբէլեանի, եղբօրորդին Ստեփանոս պատմագրի: Հոգեւոր կոչում էր ընդունել 1314 թ. առաջ. այդ թուականին, դեռեւս «դեռաբողբոջ եւ յուսազարդ պատանի», նա յիշատակուած է որպէս «Տէր Ստեփանոս մականուն Տարսաիճ» (ԺԴ, 99, 100)՝ աթոռակալ Սիւնեաց (ԺԴ, 104): 1321-23 թուականներին եւս, Յովհաննէս-Օրբէլի հետ միասին, յիշատակուած է որպէս «վերադիտող տանս Սիւնեաց» (ԺԴ, 166)՝ «մանուկ տիաւք առեալ գաշտիճան արհեպիսկոպոսութեան» (ԺԴ, 183):*

Յովհաննէս-Օրբէլի մահուանից յետոյ (տարեթիւը անյայտ) միայնակ է վարել Սիւնեաց մետրոպոլիտութիւնը. 1331 թ. յիշատակուած է որպէս «տէր եւ վերատեսուչ գահերեց եւ գլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց՝ Տաթեւոյ եւ Նորավանից եւ Ցախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց» (ԺԴ, 231):

Սարգիս մետրոպոլիտ. *որդին է Հասան իշխանի, «որ էր յազգէ եւ յազնէ մեծափառ իշխանաց տանս Սիւնեաց»: Սրա եղբայր Իւանէ իշխանը կոչուած է «ամիրա եւ պետ երկրին Որոտան» (հայրն է նշանաւոր Յովհան Որոտնեցու):*

Սարգիսը 1326 թ. եղել է Վաղաղնի վանքի վանահայր եւ այնտեղ կառուցել մի պանդոկ: 1333 թ. յիշատակուել է որպէս «աթոռակալ» Սիւնեաց (ԺԴ, 257): Իսկ նոյն թուականին մի այլ յիշատակարանում (Նոր Ջուղա, ձեռ. N, 402) կոչուած է արդէն արքեպիսկոպոս Սիւնեաց («Իշխանութեան պարոն Բուրթէլին... եւ ի յարքեպիսկոպոսութեան մերոյ տէր Սարգսի»):

---

1 Եօթանասունամեայ այս բացատի կապակցութեամբ Ալիշանը գրում է. «Ոչ յիշին եւ յաջորդք սոցա (իմա՝ Սարգսի եւ Ներսիսի - Լ. Խ.) մինչեւ ի սկիզբն ԺԵ դարու՝ ցամս 70» («Սիսական», էջ 21):

2 Տե՛ս «Տաթեւ» տարեցոյց, 1930, էջ 276-351

3 **Ն. Վ. Ծովական**, «Տաթեւ» («Սիոն», 1950, յունիս-յուլիս, էջ 197-202)

1 Ղ. Ալիշանը մահուան տարեթիւ է համարում 1309 թ., որ անընդունելի է:

1337 թ. առաջ եղել է Երուսաղէմում, ուր ստացել է մի Սաղմոսարան (Երուսաղէմ, ձեռ. N 1033), որի յիշատակարանում ուշագրաւ տուեալներ է հաղորդում իր ազգականների մասին: Նոյն 1337 թ. ստացել է նաեւ Մանրուսման մի ձեռագիր, որի յիշատակարանում կոչուած է «Մեծ եւ ամենաերջանիկ մետրապօլիտն եւ արքիական գլուխն այժմ (Սիւնեաց) նահանգիս տէր Սարգիս»[1]:

Սրա աթոռակիցն է եղել ոմն տէր Ներսէս. պահպանուել է Սարգսի ու Ներսէսի մանրանկար համատեղ պատկերը՝ 1337 թ. («Սիսական», էջ 20): Այդ տարեթուից յետոյ եօթանասունամեայ անջրպետ կայ, որ Ղ. Ալիշանը դատարկ է թողել՝ բազմակէտեր դնելով, իսկ Արտակ եպս. Սմբատեանն ու Նորայր եպս. Պողարեանը լրացրել են Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու եւ Առաքել Սիւնեցու անուններով: Սակայն Սարգիս մետրապոլիտն եւ Յովհան Որոտնեցին շարունակական շղթայ չեն կազմում, շուրջ 40-ամեայ անորոշ ժամանակաշրջանով նրանք անջատուած են միմեանցից Ն. Պողարեանի ցանկում:

Ահա այդ տարիների մի մասը պէտք է տալ Ստեփանոս-Սուլթանշահ եպիսկոպոսին:

Ստեփանոս-Սուլթանշահ. սրա ինքնագիր յիշատակարանի հետ, շարադրուած շուրջ 1366 թ., ծանօթացանք Բուրթէլեան պայազատների տոհմագրութեան բաժնում: Վերյիշենք այստեղ, որ նա ներկայանում է որպէս «տէր Ստեփանոս մականուն Սուլթանշահ»: Այս մականունը հնարաւորութիւն է ընձեռում նոյնացնելու այս տէր Ստեփանոսին՝ «Տաղ տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմի նահատակ հերոսի հետ[2]: Պոեմի տուեալներով Սիւնեաց այս եպիսկոպոսը, մինչեւ հոգեւոր կոչում ընդունելը, եղել է Թաւրիզում՝ զինուորական ծառայութեան մէջ: Ինչ-ինչ պատճառներով սպանել է իր խորթ մօրը՝ Էլխութլուին, գժտուել հօր հետ:

Ստեփանոսի աշխարհական անունն ի յայտ է գալիս այն տողերից, որ դրել է պոեմի հեղինակը որդեկորոյս մօր բերանին. սա ողբում է վաղամեռած իր որդուն՝ կոչելով. «Որդեակ իմ, որդեակ, Սաւլթանշայ» (տպագրուած է սխալ՝ «սաւլթան» եւ «շահ» ձեւով, որպէս առանձին բառեր): Նահատակութեան տարեթիւը չգիտենք, բայց պէտք է եղած լինի 1366 թ.-ից հետո եւ 1377 թ.-ից առաջ: Մեծ հաւանականութեամբ նա թաղուած է Վայոց ձորի Հերմոնի վանքում. այնտեղ հանգչող նշանաւոր անձինք յիշատակուած են 1423 թ. մի ձեռագրի մէջ՝ այսպէս. «Աստ (ի վանս Հերմոնի) հանգուցեալ կան Տիրայտուր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, տէր Սուլտանշէն...» (ԺԵ, I, 301):

Յովհան Որոտնեցի, Կախիկ մականունով. ծնուել է 1313 թ., Որոտան գաւառի Վաղադին գիւղում: Որդին է մեզ ծանօթ Իւանէ իշխանի, որին Մեծոփեցին համարում է «ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»: 1337 թ. Որոտնեցին նորընծայ քահանայ էր, որ «մեծ ջանիւ եւ սիրով յիմաստս բանի դեգերի՝ զպատուականսն ի սուրբ մատենաց

1 D. N. Karamianz, Verzeichniss Armenischen Handschriften, Berlin, 1888, էջ 26

2 Թերի պահպանուած այս պոեմը Ա. Մնացականեանի աշխատասիրութեամբ հրատարակուել է «Բանբերի» նախորդ համարում («Բանբեր Մատենադարանի», N 8, 1967, էջ 291-317): Պոեմին անդրադարձել է նաեւ Պ. Խաչատրեանը («Պատմա-բանասիրական հանդէս», 1965 թ., N 2, էջ 197-204): Պոեմի հերոսին նոյնացնելով Իւանէ Բուրթէլեանի որդի Ստեփանոս-Սուլթանշահի հետ՝ հնարաւորութիւն ենք ստանում քննարկելու ուշագրաւ այդ ստեղծագործութեան շարժառիթը հանդիսացող ողբերգական դէպքերի ժամանակի, միջավայրի ու գործող անձանց հետ առնչուող վիճելի հարցերը նոր լուսաբանութեամբ:

որոճալով»[1]: Սովորել է Գլաձորի ու Հերմոնի վանքերում՝ աշակերտելով Եսայի Նչեցուն եւ Տիրատուր վարդապետին, եղել է Մարաղայում[2], Տփղիսում, Դարանաղեաց գաւառում, Երուսաղէմում, Գողթան գաւառի Սինէական անապատում, Վաղադնի վանքում, Ծարում, ի վերջոյ՝ Երնջակի Ապրակունեաց վանքում, ուր եւ մահացել ու թաղուել է 1386 թ.: Տաթեւի վանքում համալսարան է հիմնել 1373 թ., անհաշտ պայքար է ծաւալել կաթոլիկ քարոզիչների ու նրանց յարած հայ ունիթորների դէմ: 1379 թ. Ապրակունեաց վանքը մաքրել է կաթոլիկներից, դպրոց է հիմնել նաեւ այդտեղ՝ իր աշակերտ Գրիգոր Տաթեւացուն կարգելով ղեկավար: Մի-երկու տարի անց կրկին վերադարձել է Տաթեւ, ու շարունակել է մանկավարժական գործունէութիւնը, ունկնդիր ունենալով 60 ուսանող: Ժամանակակիցներից, մասնաւորապէս՝ Տաթեւացու կողմից մեծարուած է «մեծ վարժապետ», «տիեզերալոյս բաբունապետ», «աստուածարեալ բաբունապետ» եւ այլ տիտղոսներով (տե՛ս ԺԴ, 497, 498, 501, 507, 514, 556), եւ միայն մէկ անգամ 1386 թ.՝ «տիեզերահամբաւ եւ երանաշնորհ բաբունապետ Հայաստանեաց եւ վերադիտող տէր Յովհան Որոտնեցի» (ԺԴ, 560): «Վերադիտող» բառացի նշանակում է եպիսկոպոս, ուստի վիճելի կամ ինչ-որ տարիների համար միայն ստոյգ պէտք է համարել Հ. Աճառեանի հաղորդած տուեալը, ըստ որի «Հրաւիրուեց Սիւնեաց առաջնորդական աթոռը, բայց նա մերժեց»[3]: Որ կեանքի վերջին տարիներին Յովհան Որոտնեցին ստանձնել էր Սիւնեաց թեմի ղեկավարութիւնը, երեւում է նրա աշակերտներից մէկի՝ Յակոբ կրօնաւորի բովանդակալից յիշատակարանից. այստեղ ասուած է, որ խուսափելով օտար դաւթիչներից (որոնք ներխուժել էին Սիւնիք, գրաւել Որոտան բերդն ու ցանկանում էին ձերբակալել նաեւ Որոտնեցուն «վասն հայրենեաց ժառանգութեան»), նա փոխւում է տալիս ու ազատւում. իսկ ապա՝ կրկին վերադառնում «ի վերայ վանորէից իւրոց, ի գաւառն Երնջակայ», եւ որոշ ժամանակ խաղաղ կեանք վարում. «Շինէր եւ հաստատէր զսուրբ եկեղեցիս շքեղ եւ փառաւոր ի մէջ անօրէն իշխանաց եւ բերթաւազաց» (ԺԴ, 560):

Այս անուղղակի տուեալները յուշում են, որ Յովհան Որոտնեցին, եթէ նոյնիսկ չի օծուել պաշտօնապէս Սիւնեաց եպիսկոպոս, ապա փաստօրէն իր կեանքի վերջին տարիներին վարել է այդ պաշտօնը:

Գրիգոր Տաթեւացի, Խաթլուշահ մականունով. հայրը՝ Ամիր Սարգիս՝ Քաջբերունեաց նահանգից էր, մայրը՝ Մարիամ՝ Փարպի գիւղից: Ծնուել է շուրջ 1344 թ. Վրաստանի Թմոգուի բերդաւանում, եւ պատանեկութիւնը անցկացրել այնտեղ՝ եղբօր խնամակալութեան ներքոյ (ԺԵ, I, 103): 1370 կամ 1371 թ. Յովհան Որոտնեցին, Երուսաղէմ գնալու նախօրէին, տեսնելով պատանի Խաթլուշահի առաջադիմութիւնը «յամենայն ուսմունս», վերցնում է

1 Երուսաղէմ, ձեռ. N 1033, էջ 61

2 Յ. Որոտնեցու Մարաղա գնացած լինելու մասին վկայութիւն է պահպանուել Թովմա Մեծոփեցու թերի վիճակում պահպանուած մի յիշատակագրութեան մէջ: Ինչ-որ աշխատութիւն սրբագրելու կապակցութեամբ նա ասում է, որ այդ ձեռագիրը «բերաւ ի Մարաղու քաղաքէն ձեռամբ Յովանէս գրագրի՝ աշակերտի մեծին Տիրատրոյ» (Ս. Տէր-Աւետիսեան, Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Ստեփանոսի, որ ի Գողթն, 1904 թ., ձեռ. N 54): Որոտնեցին Մարաղա էր գնացել, հաւանաբար, այնտեղ հաստատուած կաթոլիկ միսիոներ Բարթուղիմէոս Բոլոնիացու հետ ծանօթանալու եւ, գուցէ, նրա դասախօսութիւնները ունկնդրելու նպատակով:

3 «Հայոց անձնանունների բառարան», Գ, էջ 628: Երուսաղէմի N 1084 ձեռագրի յիշատակարանում Որոտնեցին կոչուած է «Մեծ վարդապետ» («...Այս է հաւատոյ դաւանութիւն, զոր գրեաց մեծ վարդապետն Յոհաննէս Որոտնեցի, որ մականուն Կախիկ կոչի, հրամանաւ պր. Խաթլուշահին ի Հայս առ կաթողիկոսն տէր Կոստանդին ի թվին Հայոց ՊԻԴ (= 1375)»): Տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոյ Յակոբեանց, Երուսաղէմ, 1969, հտ. Դ, էջ 124:

նրան իր մօտ աշակերտ, տանում Երուսաղէմ եւ դարձի ճանապարհին, Դարանաղեաց գաւառում, ձեռնադրում վարդապետ (հաւանաբար 1373 թ.):

Յովհան Որոտնեցու մահուանից մի քանի տարի յետոյ, հաւանաբար 1393 թ., Ապրակունեաց տեղափոխուել է Տաթեւի վանք ու ստանձնել Սիւնեաց դպրոցի ղեկավարութիւնը: Այս տարիներին է Տաթեւի համալսարանն ապրել իր ամենածաղկուն շրջանը, որ տեւել է շուրջ 15 տարի: Տաթեւում եղած տարիներին՝ մինչեւ 1408 թ., երբ նա «վասն իւիք ինչ պատճառի» (ԺԵ, I, 93) ստիպուած էր իր դպրոցը տեղափոխել Մեծոփայ վանք, Գրիգոր Տաթեւացին միաժամանակ (հաւանաբար տեղապահի հանգամանքներով) ղեկավարել է Սիւնեաց աթոռը: XIV դ. վերջերին եւ, մանաւանդ, XV դ. սկզբներին Տաթեւի վանքում շարադրուած մի շարք յիշատակարանների այն հատուածում, ուր ըստ սովորոյթի պէտք է յիշատակուէր տեղի եպիսկոպոսը, գտնում ենք միայն Գրիգոր Տաթեւացու անունը, որպէս «քաջ հռետոր եւ բանիբուն վարդապետ», «ամենրջանիկ դիտապետ Հայոց», «[առաջնորդ] տանս Սիւնեաց» եւ այլն (տե՛ս ԺԵ, I, էջ 34, 60, 77): Շատ աւելի ուշագրաւ են Յովհաննէս գրչի հաղորդած տուեալները. վերջինս 1407 թ. Տաթեւում ձեռագիր էր ընդօրինակում «ի տեղապահութեան աթոռոյս... վարժապետին Գրիգորի» (ԺԵ, I, 81). նոյն թուականի մէկ ուրիշ յիշատակարանում նոյն գրիչը յայտնում է, որ «վարդապետն մեր Գրիգոր... հակի յաթոռ վարդապետութեան եւ աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս» (ԺԵ, I, 82):

Առաքել Սիւնեցի. այս նոյն տարիներին Սիւնիքում եպիսկոպոս էր նաեւ Գրիգոր Տաթեւացու քեռորդի Առաքել Սիւնեցին (հայրն է Դաւիթ, մայրը՝ Մելիք):

Իր «Քարոզգրքի» յիշատակարանում Տաթեւացին նրա մասին գրում է.

«Նախ քեռորդւոյն իմ ըստ մարմնի

Մնընդամիտ երգարանի՝

Առաքելոյ առաքինի,

Եւ Սիւնական գլուխ արհի» (ԺԵ, I, 73):

Առաքելն իրեն «Տէր Առաքել» է կոչում 1401 եւ 1403 թթ. շարադրած «Ադամգրքի» յիշատակարաններում, ուստի եպիսկոպոս էր այդ թուականներից առաջ: Վերջին անգամ նրա մասին, որպէս կենդանի արձնաւորութիւն տեղեկութիւն է գրանցուած 1422 թ. Անգեղակոթ գիւղում շարադրած ինքնագիր յիշատակարանում, ուր նա ներկայանում է որպէս «Տէր Առաքել Սիւնեաց», (ԺԵ, I, 292):

1425 թ. արդէն մեռած էր (ԺԵ, I, 336)[1]: Ղ. Ալիշանը Առաքելին Սիւնեաց եպիսկոպոս է համարում 1407-1422 թթ. միջոցին, Ն. Պողարեանը՝ 1407-1416 թթ. է նշում, Մ. Պոտուրեանը եւ նրան հետեւող Ն. Տէր-Ներսէսեանը՝ 1401 կամ 1403 թ. են սկսում նրա եպիսկոպոսութեան տարիները[2]:

1 Առաքել Սիւնեցու մասին առկայ շատ սուղ կենսագրական տուեալները պէտք է լրացնել 1407 թ. ուշագրաւ մի յիշատակարանով, որ շարադրել է նա իր իսկ ընդարձակած Աւետարանի մէջ: Նախ պարզւում է, որ Առաքելը եղել է նաեւ ծաղկող եւ ապա յայտնի դառնում, որ նրա աւագ եղբայր Բարսեղ քահանան 1393 թ. մեկնած է եղել Կիլիկիա՝ կաթողիկոսի մօտ (գուցէ եւ եպիսկոպոս ձեռնադրուելու), բայց դարձի ճանապարհին սպանուել է անօրէնների կողմից: Առաքելը իր եղբօր մասունքները գտնելու համար 7 ամիս շրջել է «յերկրէ յերկիր, բազում աշխատութեամբ». ի վերջոյ այլոց օգնութեամբ մարմինը գտել է Եղջախոռ կոչուող սարում, տեղափոխել Սիւնիք ու ամփոփել Վաղաղնի վանքում (ԺԵ, I, 602):

2 Առաքել Սիւնեցի, Դրախտագիրք, հրատարակեց Հ. Ն. Տէր-Ներսէսեան, Վենետիկ, 1956, էջ 54

Գր. Տաթեւացու եւ Առաքել Սիւնեցու մասին ներկայացուած տուեալներից կարելի է եզրակացնել, որ մինչեւ 1407 թ. Սիւնեաց մետրոպոլիտութեան ղեկը գտնւում էր Տաթեւացու ձեռքում: Նախորդ շարադրանքից գիտենք արդէն, որ Սիւնեաց եպիսկոպոսները իրենց կենդանութեան օրօք յաճախ ունենում էին նաեւ փոխանորդ եպիսկոպոսներ, ուստի Առաքելը անձնիշխան Սիւնեաց եպիսկոպոս կարող էր լինել միայն Գրիգոր Տաթեւացու Մեծոփայ վանք մեկնելուց (1408) յետոյ: Իսկ մինչեւ ո՞ր թուականը. այս՛ հարցին որոշակի պատասխան տալու համար ստոյգ տուեալներ չունենք. սակայն կարելի է մօտենալ ճշմարտութեանը՝ ծանօթանալով յաջորդ եպիսկոպոսի՝ Ստեփանոս-Իւանէի կեանքի տարեգրութեանը:

Ստեփանոս-Իւանէ եպիսկոպոսը, ինչպէս ասել ենք Բուրթէլեան պայազատների տոհմագրութեանը նուիրուած էջերում, Սմբատ Բուրթէլեանի որդին էր, 1406 թ.՝ դեռեւս աշխարհական: 1410 թ., երբ Կարա-Իւսուֆը գրաւեց Բուրթէլեանների կալուածքները, սրա հայր Սմբատն ու եղբայր Բէշքէնը գաղթեցին Վրաստան: Իւանէ-Ստեփանոսը նրանց հետ չէր: Նա, ըստ երեւոյթին, մնաց Սիւնիքում եւ հոգեւոր կոչում ընդունելով՝ կոչուեց «Տէր Ստեփանոս մականուն Իւանէ»: Որպէս «հայրապետ Սիւնեաց նահանգի» կամ «առաջնորդ տանս Սիսականայ» նա յիշատակուած է 1419 թ. Հերմոնի վանքում եւ 1421 թ. Տաթեւում շարադրուած յիշատակարաններում: 1421 թ. մեկնել էր Վրաստան իր մօր մօտ, այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն (ԺԵ, I, 258, 292):

Այս Ստեփանոսից յետոյ Սիւնեաց մետրոպոլիտական աթոռը, որ դարեր շարունակ հոգեւոր իր իշխանութեան տակ էր պահում Սիւնեաց աշխարհի 12 գաւառները, փեղկւում էր տարբեր մասերի: Սիւնիքի տարբեր գաւառների՝ Վայոց ձորի, Ծղուկի, Գողթան վանական հաստատութիւններում շարադրուած հիշատակարանները տեղեկութիւններ են հաղորդում յաճախ նոյն տարիներին կամ տասնամեակներին եպիսկոպոս եղած անձնաւորութիւնների մասին: Ուստի սխալ կլինի միահեծ շարայարութեամբ կազմել Սիւնեաց թեմի առաջնորդների գաւազանագիրքը XV դ. 20-ական թթ. յետոյ: Նոյնիսկ այն դէպքում, երբ ժամանակակիցների կողմից այս կամ այն հոգեւոր առաջնորդը, հին աւանդոյթի ուժով մեծարուած է «Սիւնեաց եպիսկոպոս» բարձր կոչումով, վստահաբար չենք կարող հաւաստել, թէ նա իրօք եղել է ողջ Սիւնեաց աշխարհի հոգեւոր առաջնորդը: 1424-1425 թթ. Տաթեւի վանքում յիշատակուած է «մեծ բաբունապետ եւ տիեզերալոյս վարդապետ» Մխիթարը (ԺԵ, I, 319, 338):

1428 թ. ոմն Պետրոս արքեպիսկոպոս Եղեգեցի իրեն կոչում է «վերադիտող այսմ (Եղեգեա՞ց) նահանգի» (ԺԵ, I, 382):

Բազմիցս յիշատակւում է Հերմոնի դպրոցի բաբունապետ Յովհաննէս Կոլոտիկը, որը մեծ հեղինակութիւն ունեցող եկեղեցական էր:

1475-1484 թթ. Վայոց ձորի Բոլորաբերդ անապատում եւ Սրկղունքում քանիցս յիշատակւում է մի այլ Յովհաննէս արքեպիսկոպոս, որպէս հոգեւոր առաջնորդ «այսմ նահանգի», կամ «յայսմ գաւառի» (ԺԵ, II, 375, 400, 427, ԺԵ, III, 27, 55):

Գողթան գաւառում 1477թ. արքեպիսկոպոս է յիշւում ոմն տէր Սիմոն (ԺԵ, II, 420), իսկ 1489 թ.՝ տէր Ազարիան (ԺԵ, III, 129):

Այս ցանկը կարելի է կրկնապատկել, սակայն մեզ հետաքրքրող հարցի համար ուշագրաւ են յատկապէս հոգեւոր այն առաջնորդները, որոնք գրաւել են Սիւնեաց գլխաւոր եպիսկոպոսանիստ՝ Տաթեւի աթոռը, եւ, մասնաւորապէս, այն գործիչները, որոնք Բուրթէլեան գերդաստանի պայազատներ են:

Այս առումով ըստ ժամանակի Ստեփանոս-Իւանէից յետոյ ուշադրութեան արժանի գործիչ է Շմաւոն Անգեղակոթցին *(հայրն է Խաչատուր, մայրը՝ Աղուտ): Շմաւոնին առաջին անգամ հանդիպում ենք 1437 թ. Սանահնի վանքում շարադրուած մեծարժէք յիշատակարանում, որը տեղեկութիւն է հաղորդում իշխան Բեչքէնի ու նրա Ռուստամ որդու Սիւնիքից արտագաղթելու եւ Վրաստանում հաստատուելու մասին:*

Շմաւոնն այստեղ կոչւում է «Երանաշնորհ եւ երջանիկ րաբունի՝ առաջնորդ եւ վերադիտող առաքելական աթոռոյն Սիւնեաց» (ԺԵ, I, 470):

Ռուստամ Բուրթէլեան նշանաւոր իշխանը 1451 թ. այս Շմաւոնի անունով Տաթեւի վանքին վաճառում է 4 գիւղեր:

1459 թ. շարադրուած մի քանի յիշատակարաններում Շմաւոնը իրեն կոչում է րաբունապետ եւ յայտնում, որ Շամախի ու Շամրան քաղաքներում ձեռք է բերել ձեռագրեր ի վայելումն իր եղբօրորդի Ստեփանոս արքեպիսկոպոսի: Դրուատական խօսքեր են գրանցուած Շմաւոնի մասին Ս. Օրբէլեանի «Պատմութեան» վերջում որպէս յաւելուած հրատարակուած «Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց» ցանկի մէջ: Այնտեղ ասուած է, որ «Տէր Սիմէոն (իմա՝ Շմաւոն) եպիսկոպոսն Անգեղակոթցի… յոյժ ջանակուռ եղեւ վասն շինութեան եւ պայծառութեան սրբոյ աթոռոյս: Եւ զի տաճիկք բռնութեամբ յափշտակեալ էին զբազում անդս եւ անդաստանս սրբոյ աթոռոյս, սա… վերստին սեփականեալ է սրբոյ տանս զխլեցեալսն զամենայն»: Ասուած է նաեւ, որ այդ պատճառով մահմեդականները թշնամացել են նրա դէմ ու սպանել[1], բայց այդ տուեալը հաւաստող ժամանակակից որեւէ վկայութիւն չի պահպանուել:

1471 թ. Տաթեւի վանքում ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանում ասուած է. «Ի յառաջնորդ[ութեան] Շմաւոն վարդապետի եւ Ստեփանոս արքեպիսկոպոսի», ուստի Շմաւոնը 1471 թ. դեռ ապրում էր, հաւանաբար մահացել է մէկ-երկու տարի յետոյ:

Ստեփանոս արքեպիսկոպոս. *Շմաւոնի եղբօրորդին է: Առաջին անգամ յիշուած է Թ. Մեծոփեցու կողմից որպէս 1441 թ. Էջմիածնի ժողովի մասնակիցներից մէկը. «Տէր Ստեփանոս տեղապահ Սիւնեաց աթոռոյն ի յաղատաց»[2]:*

1459 թ. Շմաւոնը իր եղբօրորդուն կոչում է արդէն «եպիսկոպոս Եւստաթէի սուրբ առաքելոյս», կամ «Տէր Ստեփանոս արքեպիսկոպոս Սիւնեաց նահանգէ» (ԺԵ, II, 123, 124):

1478 թ. Աղ-Կոյունլուների նշանաւոր զօրահրամանատար, Աթաբեկ Սուֆի-Խալիլը բանտարկեց Ստեփանոս արքեպիսկոպոսին եւ բռնադատեց ընդունել մահմեդականութիւն: 5 տարի շարունակ, անասելի խոշտանգումների դիմանալով, տոկաց Ստեփանոսը, ի վերջոյ ազատուեց բանտարկութիւնից, վերադարձաւ Տաթեւի վանք, գնաց Երուսաղէմ ուխտի եւ վերադարձին՝ 1485 թ. վախճանուեց[3]:

---

1 Ս. Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1919, էջ 525

2 Թ. Մեծոփեցի, Յիշատակարան, էջ Ա

3 «Հայոց նոր վկաները», գիտ. հրատ., էջ 313-319

Ստեփանոսի անմիջական յաջորդը, հաւանաբար, եղել է Շմաւոն Բ եպիսկոպոսը[1]: Յիշուած է 1508 թ.: Մի քանի տարի յետոյ՝ 1513 թ. Գեղարքունեաց մելիքները ստորագրեցին պարտաւորագիր իրենց ենթակայ գիւղերը վերստին Տաթեւի վանքի հոգեւոր իշխանութեանը ենթակայ դարձնելու մասին: Պարտաւորագրի մէջ ասուած է. «Թւին ՋԿԲ (1513) էր, մեք Գեղարքունոյ մելիք ու տանուտէրքս եկայք ի սուրբ յաթոռս Ըստաթէի Սիւնեաց Բժ-ն գաւառ, եւս առաւել երկրին մեր Գեղամայ, որ ճշմարիտ երկիրն մեր Գեղարքունի թեմ եւ վիճակ է սուրբ առաքելոցս Ըստաթէի… Յուխտ եւ դաշինք դրինք սուրբ առաքելոցս եւ առաջի եպիսկոպոսացս՝ Շմաւոն եպիսկոպոսի եւ տէր Ստեփանոսի եւ Մարտիրոս փակակալի եւ տէր Ղուկաս հայրապետին եւ այլ միաբանիցս՝ մեծի եւ փոքու…»[2]:

Այս Շմաւոնի եւ նրան յաջորդող եպիսկոպոսների աթոռակալութեան ժամանակաշրջանը դուրս է մնում մեր հետաքրքրութեան շրջանակից:

XIV-XV դդ. Սիւնեաց եպիսկոպոսների յաջորդական ժամանակագրութիւնը փակելուց առաջ անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ երկու այլ հոգեւոր պետերի, որոնք սերուած են Բուրթէլեան տոհմից:

Ղ. Ալիշանի «Սիսականից» վերը մէջբերուած «Եպիսկոպոսունք Սիւնեաց» ցանկի մէջ, 1464 թ. տակ, կարդում ենք՝ «Ստեփանոս միւս, որդի Իւանէի Որոտնեցւոյ». նոյն այս անձնաւորութեան մասին Ալիշանը յայտնում է նաեւ այսպիսի մի տուեալ. «Յիշի գրեաթէ եւ ի կէս ԺԵ դարու (1447) Տէր Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց որդի Իւանէի՝ տեառն Որոտան, հարկ է ուրիշ ի նախորդէն (իմա՝ Ստեփանոս-Իւանէի, որդւոյ Սմբատայ - Լ. Խ.), զի նա մեռաւ յամի 1422 (ուղղելի է՝ 1421 - Լ. Խ.) բայց այս Իւանէ որո՞յ որդի եւ զիարդ էր տակաւին տէր Որոտան, ոչ գիտեմ»[3]:

Եւ իրօք, այս տեղեկութիւնների մէջ, որոնց սկզբնաղբիւրը յայտի չէ, կան ստուգման ու բացատրութեան կարօտ տեղիներ: Նախ, ինչո՞ւ Ալիշանը ցանկի մէջ այս Ստեփանոսին եպիսկոպոս է համարել 1464, իսկ նոյն աշխատութեան մի այլ բաժնում՝ 1447 թ.: Եթէ նրան յայտնի էին երկու տարբեր աղբիւրներ, ինչո՞ւ է նա զլացել ցանկի մէջ 1464 թ. առաջ նշելու 1447 թ., եւ, հակառակը, 218-րդ էջի մեր կողմից մէջբերուած հատուածում չի յիշեցրել, որ այդ նոյն Ստեփանոսի մասին տեղեկութիւն ունի նաեւ 1464 թ.: Այս հարցերին պատասխանել կարելի է միայն Ալիշանի դիւանը ուսումնասիրելուց յետոյ. թերեւս պարզուի, որ այդ տուեալները քաղուած են անստոյգ աղբիւրներից (որ բացառուած չէ): Ո՞վ էր այս Ստեփանոս եպիսկոպոսի հայր Իւանէն եւ ինչպէս կարող էր նա XV դ. կէսերին կոչուել «տէր Որոտան», այս հարցը յուզել է Ալիշանին. պատասխանը եղել է՝ «ոչ գիտեմ»: Կարելի է երկու ենթադրութիւն անել. կամ առաջադրուած թուականները (1447, 1464) մէկ հարիւրամեակով պէտք է ետ տարուեն ու սրբագրուեն 1347, 1364, այդ դէպքում այս Ստեփանոսը կնոյնանայ մեզ արդէն ծանօթ Ստեփանոս-Սուլթանշահ եպիսկոպոսի հետ, որ իրօք Իւանէ Բուրթէլեանի որդին էր: Կամ էլ պէտք է ենթադրել, որ Սմբատ Բուրթէլեանի որդի Ստեփա-

---

1 Մի Աւետարան վաճառելու մասին 1491 թ. շարադրուած գրութեան տակ պահպանուել է իրեն «տէր Սարգիս եպիսկոպոս Տաղեացի» կոչող բարձրաստիճան մի եկեղեցականի ստորագրութիւնը (ԺԵ, III, 172), սակայն հիմք չունենք այդ Սարգսին Սիւնեաց եպիսկոպոս համարելու: Նա իրեն նոյնիսկ չի կոչում Տաթեւի եպիսկոպոս, այլ՝ *Տաթեւացի* եպիսկոպոս:

2 «Բանբեր Մատենադարանի», 8, էջ 192

3 «Սիսական», էջ 218

նոս-Իւանէ եպիսկոպոսը, որ մինչեւ հոգեւոր կոչումն ընդունելը ամուսնացած է եղել եւ հայրն է Սմբատ անունով մի իշխանի, ունեցել է նաեւ մի այլ որդի, որ յետագայում ընդունել է հոգեւոր կոչում՝ Ստեփանոս անունով: Եթէ հաստատուի այս վարկածը, ապա պէտք է կարծել, որ նրա հայր Իւանէն (յետագայում Ստեփանոս եպիսկոպոս), ինչ-որ կարճատեւ ժամանակ Որոտանի տէր է եղել, կամ այդպէս է կոչուել աւանդոյթով (Որոտանի տէր էր, իրօք, նրա հայրը՝ Սմբատ իշխանը):

Այսպիսով, 1447 կամ 1464 թ. Իւանէի որդի Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոսի գոյութիւնը երկրայական է:

Գորգուն Բուրթէլեանի որդի Տարսայիճին նուիրուած հատուածում արդէն ասել ենք, որ Տարսայիճի թոռ, Սմբատի որդի Եղիշէն՝ XV դ. վերջերին, եղել է արքեպիսկոպոս: Նրա մասին տեղեկութիւններ են պահպանուել 1490 թ. Վերին Նորավանքում եւ 1495-1496 թթ. Եղեգիսում շարադրուած յիշատակարաններում. այսպէս. «յարհեպիսկոպոսութեան մերոյ Ճահանճի տէր Եղիշէի՝ յազգէ Բուրթէլանց» (ԺԵ, III, 147) եւ «վերադիտող այսմ Ճահանճի պարոնտէր Եղիշա արքեպիսկոպոսի» (ԺԵ, III, 213, նաեւ 229): Ըստ այդմ Եղիշէի հոգեւոր իշխանութեան սահմանները սահմանափակուել են Եղեգնաձորի շրջանակներով, ուստի նրա անունը պէտք է դուրս հանել Սիւնեաց եպիսկոպոսների գաւազանացանկից:

Վերը մէջբերուած տուեալները հնարաւորութիւն են ընձեռում կազմելու XIV-XV դդ. աթոռակալած Սիւնեաց եպիսկոպոսների ճշգրտուած ու ստուգուած ցանկը, որ տալիս ենք ստորեւ, իւրաքանչիւր եպիսկոպոսի դիմաց նշելով նրա աթոռակալութեան ծայրային թուականները՝ եթէ յայտնի են, կամ այն տարեթուերը, որ յիշատակուած են նրանց կապակցութեամբ ժամանակակից աղբիւրներում:

ՑԱՆԿ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ (XIV-XV դ.)

1. Ստեփանոս Օրբէլեան, որդի Տարսայիճի - 1286-1303 թթ.:

2. Յովհաննէս Օրպել, որդի Լիպարիտ Օրբէլեանի - 1302-1323 թթ.:

3. Ստեփանոս-Տարսայիճ, որդի Ջալալ Օրբէլեանի - որպէս աթոռակալ Սիւնեաց յիշուած 1314-1323 թթ., որպէս մետրոպոլիտ՝ 1331 թ.:

4. Սարգիս, որդի Որոտան իշխան Հասանի, եղբայր Իւանէի (Սիւնիքի հին իշխանական տան սերնդից) - Վաղադնի վանահայր 1326 թ., մետրոպոլիտ՝ 1333°-1337 թթ. (յիշուած է վերջին անգամ):

5. Ստեփանոս-Սուլթանշահ, որդի Իւանէ (Նանիկ) Բուրթէլեանի - յիշուած շուրջ 1366 թ.:

6. Յովհան Որոտնեցի, որդի Իւանէ Որոտնեցու, եղբօրորդի Սարգիս մետրոպոլիտի - մհ. 1386 թ.:

7. Գրիգոր Տաթեւացի, որդի ամիր Սարգսի - 1386°-1408 թթ.:

8. Առաքել Սիւնեցի, որդի Դաւթի, քեռորդի Գր. Տաթեւացու - եպիսկոպոս էր 1401 թ., Սիւնեաց մետրոպոլիտ 1408°-1410° թթ.:

9. Ստեփանոս-Իւանէ, որդի Սմբատ Բուրթէլեանի - 1410°-1421 թթ.:

10. Շմաւոն Անգեղակոթցի, որդի Խաչատուրի - յիշուած 1437-1471 թթ.:

11. Ստեփանոս եպիսկոպոս, Շմաւոնի եղբօրորդի, «ի յաղատաց» - յիշուած 1441 թ. որպէս «տեղապահ Սիւնեաց», եպիսկոպոս 1471°-1485 թթ.:

12. Շմաւոն Բ - յիշուած 1508-1513 թթ.:

Սիւնեաց 12 այս եպիսկոպոսներից 5-ը Օրբէլեան-Բուրթէլեան գերդաստանի պարոնտէրեր են՝ (Ստեփանոս Օրբէլեան, Յովհաննէս-Օրբել, Ստեփանոս-Տարսայիճ, Ստեփանոս-Սուլթանշահ, Ստեփանոս-Իւանէ): Ուշագրաւ է, որ Յովհաննէս-Օրբելից բացի, բոլորն էլ հոգեւոր կոչումն ընդունելով՝ Ստեփանոս անունն են ժառանգել, բայց պահել են նաեւ իրենց աշխարհական անունները: Եպիսկոպոսներից երկուսը (Սարգիս եւ Յովհան Որոտնեցի) սերում են Սիւնեաց հին իշխանների գերդաստանից, որոնք մինչեւ XIV դ. առաջին տասնամեակները դեռեւս տէրն էին Որոտանի: Ըստ երեւոյթին ազգակցական կապերով շաղկապուած մի փունջ են կազմում նաեւ միւս 5 եպիսկոպոսները, սկսած Գրիգոր Տաթեւացուց, մինչեւ Շմաւոն Բ (Առաքել Սիւնեցին Տաթեւացու քեռորդին է, Շմաւոն Անգեղակոթցին եւս Առաքելի ազգականներից պէտք է լինի):

ՕՐԲԵԼԵԱՆ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԲՈՒՐԹԷԼԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ ԵՒ ՍԻՒՆԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՈՆՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍԸ*

«Պատմա-բանասիրական հանդէսի» 1965 թ. 2-րդ համարում բանասէր Պ. Խաչատրեանը հրատարակեց մի հաղորդում «Տաղ Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» կոչուող միջնադարեան ողբ-պոեմի մասին[1]: Այդ գեղեցիկ ստեղծագործութեան բնագիրը խիստ թերի վիճակում է հասել մեզ, ուստի պատմող ողբերգական անցուդարձերի բովանդակութեան, ժամանակի, սոցիալական միջավայրի հետ առնչուող մի շարք էական հարցեր մթութեան քողով են պատուած: Ողբ-պոեմի կենտրոնական հերոսը՝ Ստեփանոս անունով մի եպիսկոպոս, մեղսակից է դառնում իր խորթ մօր՝ Էլ-Խութլուի սպանութեանը. Նրա չարակամները լուր են տարածում, որ նա մտադրութիւն ունի սպանելու «Մեծ Դիւանի» կոչուող իր հօրը, ու պահանջում հօր համաձայնութիւնը՝ «զի սպանցուք այսօր քո զորդին»: Հայրը տուայտանքի մէջ է, տատանւում է մահուան վճիռ արձակել, սակայն ի վերջոյ, երբ յայտարարում են, որ «եթէ ոչ տայցես մեզ հրաման՝ մեռցիս ընդ նմին», նրանք կորզում են հօր համաձայնութիւնը եւ սպանում տէր Ստեփանոսին:

Նահատակուած տէր Ստեփանոսի որդեկորոյս մօր կսկիծն ու վիշտը պատկերուած են գեղարուեստական կատարելութեամբ: Հեղինակը, անտարակոյս, օգտագործելով միջնադարեան լալկան կանանց ողբասացութիւնների հնարքները, իր հերոսի եղեռնական մահուան տխուր պատմութիւնը ազդեցիկ ու աղեկտուր է դարձնում: Ուշագրաւ են նաեւ ողբի այն տողերը, որով բացայայտւում են նահատակուածի արտաքին ու ներքին բարեմասնութիւնները եւ այլն:

Ձեռքի տակ չունենալով հաւաստի տուեալներ՝ որոշելու, թէ երբ եւ ինչ հանգամանքներում են կատարուել պոեմի հիմքում ընկած պատմական դէպքերը, Պ. Խաչատրեանը մանրակրկիտ վերլուծութեան է ենթարկում խնդրոյ առարկայ ստեղծագործութեան պահպանուած հատուածները եւ առկայ ակնարկների խոր ուսումնասիրութեամբ փորձում է լուսաբանել մթագնուած այդ եղելութեան դրուագները: Նա յանգում է այն եզրակացութեան, որ ողբ-պոեմի մէջ արտացոլուած միջավայրը «Արեւելեան Հայաստանն է, աւելի կոնկրետ՝ Պարսկաստանին սահմանակից Սիւնեաց նահանգի Վայոց ձոր գաւառը՝ Եղեգնաձորը, եւ մասամբ՝ Ատրպատականի Թաւրիզ քաղաքը աւելի վաղ անցեալի համար»[2]: Տէր Ստեփանոսը հաւանաբար Օրբելեան իշխանական տան պայազատներից է: «Ողբի նիւթը վերցուած է աւատական ընտանիքի ոլորտից», սակայն «ընտանեկան ու նեղ թուացող դրամայի մէջ բեկուել է միջնադարի պատմութեան բնորոշ մի էջ: Յաճախ է պատահել, որ օտար տիրապետողների պահանջով կամ այլ դրդապատճառներով հայ (եւ ոչ միայն հայ) իշխանական տների որոշ ներկայացուցիչներ, դիրքի ու պաշտօնի մղումով կամ մահուան սարսափից, դիմել են ոճրագործութեան՝ հաշուի չառնելով անգամ արենակցական կապերը»[3]:

Տէր Ստեփանոսի եւ նրա հօր շուրջ համախմբուած անձնաւորութիւնների միջեւ ստեղ-

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1991, N 1, էջ 85-92

1 **Պ. Մ. Խաչատրեան**, Միջնադարեան մի անտիպ ողբ («Տաղ Ստեփանոսին»), «Պատմա- բանասիրական հանդէս», 1965, N 2, էջ 197-204

2 Նոյն, էջ 202

3 Նոյն, էջ 197

ծուած թշնամութիւնը, խորթ մօր սպանութիւնն ու Ստեփանոսի եղեռնական վախճանը Պ. Խաչատրեանը բացատրում է «հարազատ մօր կենդանութեամբ այլազգի խորթ մայր ունենալու՝ քրիստոնէային անպատուաբեր ու հակաբարոյական» վիճակով: Ողբի մէջ, նրա կարծիքով, «դէմ-յանդիման կանգնել են հայրը՝ անձնական բարօրութեան ու դիրքի «խոհեմ» ընթացքով, եւ որդին՝ քրիստոնեայ մարդու եւ հարազատ մօր պատուի շահախնդրութեամբ»[1]: Ողբում նկարագրուած դէպքերը տեղի են ունեցել «XIV դ. ոչ ուշ, քան մինչեւ XV դ. սկզբները»[2], իսկ ողբի հեղինակը, հաւանաբար, եղել է Սիւնեաց եպիսկոպոս ու անուանի բանաստեղծ Առաքել Սիւնեցին:

Սրանք են, ահա, Պ. Խաչատրեանի ուսումնասիրութեան հիմնական հետեւութիւնները:

Միջնադարեան հայ գրականութեան մէջ գեղարուեստական իր յատկանիշներով ու բովանդակութեամբ պատուաւոր տեղ գրաւող այս ստեղծագործութեանը Մատենադարանի «Բանբերի» ութերորդ գրքում անդրադարձել է անուանի բանասէր Ա. Մնացականեանը, որը, տարիներ առաջ օգտագործելով առկայ ձեռագրերը, կազմել էր ողբի համեմատական բնագիրը[3]: Հրատարակելով ողբ-պոեմի 3 տարբերակներ ձեռագրական տարընթերցուածքներով՝ Ա. Մնացականեանը ընդարձակ իր ներածականում կանգ է առնում այդ ստեղծագործութեան յօրինման ժամանակի, նրա հիմքում ընկած անցուդարձերի բովանդակութեան հետ առնչուող հարցերի վրայ եւ յանգում այն եզրակացութեան, որ Պ. Խաչատրեանի կողմից «անտեսուած է պոեմի քաղաքական, հայրենասիրական ոգին, ճիշտ չեն բացատրուած նրա ստեղծման ժամանակը, հեղինակը, տաղաչափութիւնը» եւ այլն[4]:

Եւ ահա, մերժելով այն ամէնը, ինչ ասուած է տէր Ստեփանոսի նահատակութեան հանգամանքների մասին Պ. Խաչատրեանի կողմից, քննարկուող բնագրի մէջ պահպանուած մութ ակնարկներին տալով իւրովի մեկնաբանութիւն՝ Ա. Մնացականեանը փորձում է վերստեղծել ողբ-պոեմի հիմքում ընկած պատմական եղելութիւնները այսպէս:

Տէր Ստեփանոսի հայրը պոեմում կոչուած է «Մեծ Դիւանի», որ նշանակում է ոչ այլ ինչ, քան «Սահիպ Դիւանի» (այսպէս էին կոչւում մոնղոլական իլղանութեան հարկային ու ֆինանսական գործերի կենտրոնական ատեանի բարձրագոյն պաշտօնեաները): «Այդ պաշտօնին հասած հայ գործիչ մեզ ծանօթ չէ եւ, հաւանաբար, ոչ միայն չի եղել, այլեւ չէր կարող լինել»[5]: «Քանի որ Սահիպ Դիւանիները եւ մոնղոլական միւս իշխողները նստում էին Թաւրիզում, ուստի այնտեղ պիտի ապրելիս լինէր նաեւ մեր պոեմի «Մեծ Դիւանին» իր կանանց եւ զաւակների հետ»[6]: Այդ «Սահիպ Դիւանիի» կանանցից մէկը (Ստեփանոսի մայրը) եղել է քրիստոնեայ, իսկ մէկ ուրիշը (պոեմի մէջ յիշատակուած Էլ-Խութլուն)՝ մահմեդական: Այս վերջինը, «ինչպէս կարելի է ենթադրել, հանդիսացել է մոնղոլ տիրողների ականաւոր տոհմերից մէկի դուստրը եւ, հաւանաբար, հարազատների եւ այլ բռնակալների դրդումով, մեծ եռանդով խառնուել պետական գործերին: Նրա այդ գործունէութիւնը շատ ծանր է նստել «ժո-

1 Նոյն, էջ 198

2 Նոյն, էջ 202

3 **Ա. Մնացականեան**, Միջնադարեան հայրենասիրական մի նորայայտ պոեմ («Տաղ տէր Ստեփանոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսին»), «Բանբեր Մատենադարանի», N 8, 1967, էջ 291-317

4 Նոյն, էջ 292

5 Նոյն, էջ 298

6 Նոյն, էջ 299

ղովրդի» վրայ, որն էլ խնդրել ու համոզել է Ստեփանոսին՝ սպանել նրան՝ որպէս բոլոր տեսակ չարիքների մօր»[1]*: Եւ ահա, տէր Ստեփանոսը, հաշուի առնելով Էլ-Խութլուի «Հասարակական վնասակարութիւնը», ի կատար է ածել «ժողովրդի ցանկութիւնը»: Ըստ այդմ էլ այդ սպանութիւնը, ինչպէս եւ պոեմում նկարագրուած յետագայ դէպքերը, կրել են «ոչ թէ ընտանեկան բնոյթ, այլ՝ հասարակական, քաղաքական». «այդ ամենի հիմքում ընկած են եղել բռնատիրական ծայրայեղ չարաշահումներ՝ ուղղուած նուաճուած ժողովրդի դէմ»*[2] *եւ այլն:*

Ողբ-պոեմի առանցքը կազմող դէպքերը, ըստ Ա. Մնացականեանի, տեղի են ունեցել XIII դ. երկրորդ կէսին կամ ամենաուշը՝ XIV դ. սկզբներին Թաւրիզ քաղաքում՝ «Մեծ Դիւանի» նստավայրում: Առաքել Սիւնեցին, յարգելի բանաստեղծի կարծիքով, չի կարող համարուել հեղինակը խնդրոյ առարկայ ստեղծագործութեան, որովհետեւ 1387 թ. «տասնամեակներ առաջ» այն գոյութիւն ունէր: Այդ թուականին յարմարեցնելով Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսի նահատակութեանը՝ ստեղծել է պոեմի մի փոփոխակը, այն էլ արդէն «աղճատուած, ժողովրդականացման ուղին բռնած» մի տարբերակի հիման վրայ[3]*:*

Այսպիսով, միեւնոյն գրական ստեղծագործութեան պատմական բովանդակութեան, յօրինման ժամանակի եւ յարակից հարցերի մասին երկու տարբեր բանաստեղծներ յայտնում են իրարամերժ տեսակէտներ՝ իւրովի մեկնաբանելով պոեմի մէջ առկայ անորոշ ու մութ տեղերը:

Ողբ-պոեմի մեկնաբանները տարակարծիք չեն միայն մի հարցում, թէ Հայաստանի որ նահանգում է ապրել եւ եպիսկոպոսական պաշտօն վարել նահատակուած հերոսը՝ տէր Ստեփանոսը: Պոեմի ընդօրինակութիւններից մէկի խորագրում, ինչպէս նաեւ բնագրի մէջ, որոշակի ասւում է, որ Ստեփանոսը Սիւնեաց եպիսկոպոս եւ Սիւնեաց իշխան է եղել. յիշատակութիւն կայ նաեւ Եղեգնաձորի մասին: Ըստ այդմ էլ ուշագրաւ այս ստեղծագործութիւնը ճիշտ վերլուծելու եւ հասկանալու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ մանրախոյզ քննութեամբ ուսումնասիրել Սիւնեաց նահանգի աշխարհիկ ու հոգեւոր տէրերի մասին պահպանուած տպագիր ու անտիպ գրաւոր յիշատակութիւնները՝ յոյս ունենալով գտնել հաւաստի պատմական վկայութիւններ տէր Ստեփանոսի եւ պոեմի միւս գործող անձանց մասին[4]*:*

* * *

Այժմ անդրադառնանք «Տաղ Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին» ողբ-պոեմին:

Իւանէ Բուրթէլեանի Սուլթանշահ-Ստեփանոս որդու մասին մեր ունեցած վկայութիւնները, նոյնիսկ առանց լրացուցիչ փաստերի, միանգամայն բաւարար են համոզելու, որ խնդրոյ առարկայ ստեղծագործութեան հերոսը նոյն այդ Սուլթանշահ-Ստեփանոսն է եղել: Այդ մասին, սակայն, հէնց պոեմի մէջ հանդիպում ենք շատ որոշակի ասուած մի վկայութեան, որ վրիպել է ե՛ւ Գ. Խաչատրեանի, ե՛ւ Ա. Մնացականեանի ուշադրութիւնից:

Պոեմի մէջ ուշագրաւ են որդեկորոյս մօր դառը վիշտը պատկերող տողերը.

1 Նոյն, էջ 301

2 Նոյն, էջ 301, 303 եւ այլն.

3 Նոյն, էջ 292-293

4 Այդպիսի ուսումնասիրութիւն կատարել է այս յօդուածի հեղինակը. տե՛ս այստեղ՝ «Սիւնեաց Օրբելեանների Բուրթէլեան ճիւղը»:

Լաց ասէր գերին,
Գրգուէր զիր որդին,
«Որդեակ իմ, որդեակ, սալթան շայ,
Մաւրս մասն եւ բաժին»[1]:

Ընդգծուած «սուլթան շայը», անտարակոյս, պէտք է միացնել ու կարդալ Սուլթանշահ, որ, ինչպէս գիտենք, Ստեփանոսի աշխարհական անունն է եղել ու չի մոռացուել նրա կողմից նոյնիսկ եպիսկոպոս դառնալուց յետոյ (յիշենք, որ նա ինքնագիր իր յիշատակարանում եւս իրեն ներկայացրել է որպէս «տէր Ստեփաննոս-Սուլթանշայ»): Ա. Մնացականեանը այն ընկալել է սոսկ որպէս վշտահար մօր կողմից իր սիրասուն զաւակի հասցէին շռայլուած գովեստի խօսքեր՝ «սուլթան» եւ «շահ»:

Ողբ-պոեմի մէջ աննշան աղաւաղումով պահուել է նաեւ Ստեփանոս-Սուլթանշահի հօր՝ Իւանէ Բուրթէլեանի անունը:

Ստեփանոսին սպանել ցանկացող անձինք ներկայանում են նրա հօրը եւ չարախօսում՝ ասելով, որ նա իր խորթ մօրը՝ Էլ-Խութլուին սպանելուց յետոյ մտադրուել է սպանել նաեւ քեզ:

Պոեմի մեզ հասած պատումներից (ճիշտ կլինէր ասել՝ ընդօրինակութիւններից) առաջինում է միայն պահպանուել այդ հատուածը, այն էլ աղաւաղուած ձեւով.

Գումարեալ եկին
Առ Մեծ Դիւանին,
Զի «գայ՝ սպանանէ զքեզ, այսար,
Ահա քո որդին»[2]:

Գիտենք արդէն, որ «Մեծ Դիւանի» կոչուած անձնաւորութիւնը, ըստ Ա. Մնացականեանի, Ստեփանոսի հօր «պաշտօնի անունն է, անձնանունը չի պահպանուած»: Այդպէս մտածելով՝ յարգելի բանաստեղծը «Մեծ Դիւանին» դարձնում է մոնղոլական իշխանութեան բարձրաստիճան պաշտօնեայ՝ Սահիպ Դիւան, յայտարարում, որ այդ պաշտօնին հասած հայ գործիչ «չի եղել եւ չէր կարող լինել», եւ հասարակական, սոցիալական ու քաղաքական հիմքեր է նշմարում տէր Ստեփանոսի սպանութեան դրդապատճառների մէջ՝ նրան համարելով աշխատաւոր ու բռնադատուած հայ ժողովրդի շահերը պաշտպանելու համար պայքարի ելած մի հերոս, կշտամբելով Գ. Խաչատրեանին՝ պոեմի «քաղաքական, հայրենասիրական ոգին» անտեսելու մէջ:

«Մեծ Դիւանի» խճճուած խնդիրը, սակայն, լուծւում է զարմանալի դիւրութեամբ:

Ճիշտ այնպէս, ինչպէս ձեռագրերում պահպանուած «սուլթան շայը» սրբագրուեց «Սուլթանշահ» ձեւով, «գումարեալ եկին առ Մեծ Դիւանին» նախադասութիւնն էլ պէտք է սրբագրել (ընդամէնը մի «դ» դուրս նետելով)՝ «գումարեալ եկին առ մեծ Իւանին» ձեւով:

Անիմաստ կլինի կրկին անդրադառնալ այն հարցին, թէ ով էր Բուրթէլի որդի, Բեշքէնի եղբայր, Սուլթանշահ-Ստեփանոսի հայր, Որոտանի տէր Իւանէ իշխանը (յիշենք, որ նրա

1 «Բանբեր Մատենադարանի», N 8, էջ 310

2 Նոյն, էջ 308

անունը տառադարձուած է սկզբնաղբիւրներում տարբեր ձեւերով՝ Իւանէ, Իւանիկ, Իւան, Իոանիկ, Նանիկ):

«Տաղ Ստեփանոսին» ողբ-պոեմը տուեալ է պահպանել Իւանէի երկու կանանց՝ Էլ-Խութլուի եւ Սուլթանշահ-Ստեփանոսի անանուն մօր մասին:

Ա. Մնացականեանի կարծիքով՝ «Էլ-Խաթլուն... հանդիսացել է մոնղոլ տիրողների ականաւոր տոհմերից մէկի դուստրը»: Հարկ է նշել, սակայն, որ Էլ-Խութլու, Խութլու, Էլ-Խաթուն թուրք-թաթարական ծագում ունեցող տասնեակ ու հարիւրաւոր նման անձնանուններ լայնօրէն տարածուած էին Հայաստանում XIV-XV եւ յետագայ դարերում[1]: Ուստի, անունից դատելով, հնարաւոր չէ որոշել որեւէ անձնաւորութեան, իսկ տուեալ դէպքում՝ Իւանէ Բուրթէլեանի կնոջ ազգային պատկանելութիւնն ու սոցիալական դիրքը:

Իւանէ-Էլ-Խութլու զոյգի զաւակներին հնարաւոր է զատել միւս կնոջից ծնուած զաւակներից:

Սուլթանշահ-Ստեփանոսի մօր անունը, ասացինք, չի պահպանուել. այս կնոջից Իւանէն ունեցել է միայն մի որդի՝ Սուլթանշահին: Մօր բերանով պոեմի հեղինակը որոշակի յայտնում է. «Աստուած, դու գիտես, որ էս մէկս, էլ որդի չունիմ»[2]: Տարաբախտ այս կնոջը «գերի» է կոչում հեղինակը («լաց ասէր գերին, գըգուէր գիւր որդին»): «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» նշանաւոր բառարանը այդ բառին տալիս է «կալանաւոր, վտարանդեալ յօտարութիւն կամ յափշտակեալ ի ստրկութիւն...» իմաստները: Կարելի է ուրեմն հետեւեցնել, որ Սուլթանշահի մայրը Իւանէ Բուրթէլեանի օրինաւոր կինը չի եղել, այլ սոսկ «գերին»՝ հարճը:

Ըստ այդմ Իւանէի Էլ-Խութլու կնոջից ծնուած զաւակներն են Գորգուն, Սմբատ եւ Բուրթէլ եղբայրները: Էլ-Խութլուն եւ անանուն հարճը, անտարակոյս, ապրել են միաժամանակ: Եւ այս հանգամանքը զարմանալի չպէտք է թուայ քրիստոնեայ հայ մի ֆեոդալի համար: Յիշենք, որ Իւանէի մեծ պապ Տարսայիճ Օրբելեանը կնութեան առաւ Խաչէնի իշխան Ջալալի դուստր Մինախաթունին «առ կենօք առաջի ամուսնոյն»[3]:

Սուլթանշահ-Ստեփանոսը երիտասարդ հասակում որոշ տարիներ անց է կացրել Թաւրիզ քաղաքում. այդ մասին շատ պարզ ցուցում կայ պոեմի մէջ.

Թարվէզ քաղաքին
Ի մեծ մէղանին
Մէկ մանուկ չըկայր, որ քաշէր
Զաղեղ պարոնին:
Թարվէզ քաղաքին,
Մէջ շատ ճեծելին
Զճուքմ ու զուրաւի կու առնէր
Զնետարանին[4]:

1 Էլ-Խութլու անունն էր կրում, օրինակ, Ամիր-Ասադ Պռօշեան իշխանի կինը՝ Գրիգոր Տաթեւացու «Ոսկեփորիկ» աշխատութեան պատուիրատու խոջայ Մասուտ-շահի մայրը, եւ ուրիշներ:

2 «Բանբեր Մատենադարանի», N 8, էջ 310

3 **Ս. Օրբելեան**, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիզ, 1910, էջ 424

4 «Բանբեր Մատենադարանի», N 8, էջ 316

Այս տողերը կասկած չեն թողնում, որ պատանի Սուլթանշահը դաստիարակուել է որպէս զինուորական ու փայլել Թաւրիզում իր տարեկիցների մէջ՝ դիպուկ աղեղնաձիգի, հզօր բազկի տէր ու խոստումնալից ռազմիկի համբաւ ձեռք բերելով:

Սուլթանշահի հօրեղբայր Բեշքէն իշխանի կեանքի տարեգրութիւնը շարադրելիս նկատել ենք, որ նա 1337 թ., հաւանաբար որպէս Սիւնեաց զօրախմբի հրամանատար, գտնւում էր իլղանութեան հին ու նոր մայրաքաղաքներում՝ Թաւրիզում եւ Սուլթանիայում[1]: Պէտք չէ կասկածել, որ նրա հետ եղել են նաեւ Բուրթէլեան այլ պայազատներ, որոնցից էր նաեւ մեր Սուլթանշահը: Այս ենթադրութիւնը աւելի հաւանական է դառնում, երբ ուշադրութիւն ենք դարձնում Սուլթանշահի ինքնագիր յիշատակագրութեան մի ուշագրաւ առանձնայատկութեան վրայ: Ընդամէնը մի քանի տող գրաւող այդ գրութեան մէջ նա անհարկի յիշատակում է ոչ միայն իր հօր ու պապի (Իւանէի ու Բուրթէլի) անունները, որ լիուլի բաւարար էին նրա ով լինելը մատնանշելու համար, այլեւ անհրաժեշտ է համարում աւելի շեշտել արդէն վախճանուած իր հօրեղբօր՝ Բեշքէնի անունը[2]: Գուցէ անգիտակցաբար նա իր հոգեհարազատութիւնն է ցոյց տուել հօրեղբօր նկատմամբ, որի ձեռքի տակ Թաւրիզ քաղաքում դաստիարակուել է որպէս զինուորական:

Բեշքէն իշխանին իր հայրենական կալուածներից բաժին էր ընկել Եղեգնաձորը. նա ունէր մէկ որդի՝ Էլիկում-Կուկան, որ 1349 թ. մի քանի տարի առաջ, ամուսնանալով Ամատա Շահուռեցի իշխանի Նաթիլ դստեր հետ, ժառանգել էր Շահուռեցիների կալուածքները: Կարելի է ուստի կռահել, որ Բեշքէնը իր Սուլթանշահ եղբօրորդուն գուրգուրում էր նաեւ որպէս իր կալուածքների ապագայ ժառանգորդի (չմոռանանք, որ պոեմի մէջ տէր Ստեփանոսը մեծարուած է որպէս «իշխան Սիւնեաց»):

Սուլթանշահի ճակատագիրը, սակայն, այլ կերպ էր գծուած:

Իւանէ Բուրթէլեանի Էլ-Խութլու կնոջ սադրանքով հաւանաբար, հայրենական կալուածքների մասնատման որոշուած կարգը փոխւում է յօգուտ Էլ-Խութլուի զաւակների եւ ի վնաս Սուլթանշահի, որին պարտադրում են եկեղեցականի սքեմ հագնել ու բաւարարուել Սիւնեաց եպիսկոպոսի հոգեւոր պաշտոնով: Եղեգնաձորը բաժին է տրւում Իւանէի եւ Էլ-Խութլուի Գորգուն որդուն:

Կարծում ենք, որ մի կողմից՝ Սուլթանշահ-Ստեփանոսի ու միւս կողմից՝ Էլ-Խութլու իշխանուհու եւ նրա որդիների թշնամութեան դրդապատճառը պէտք է որոնել հէնց հայրենական կալուածքների տիրակալման համար ծաւալուած վէճերի մէջ: Տեղին է յիշել Մատթէոս Ջուղայեցու սրամիտ մի դիտողութիւնը այս ժամանակաշրջանի հայ իշխանների մասին. «Այժմ մնացեալ սուտ իշխանքն Հայոց,- գրել է նա,- զմիմեանց ջիլս հատանեն եւ զարմանալի եւս է, զի բոլոր երկրիս աւեր՝ եւ վասն աւերածիս կռուին»[3]:

Այս դէպքում, սակայն, խնդիրը չի փակւում կռուով ու թշնամութեամբ. Սուլթանշահը իր համակիրների խորհրդով սպանել է տալիս Էլ-Խութլուին: Խորթ մօր նկատմամբ թշնամութիւնը վերաճել կարող էր ատելութեան՝ հարազատ մօր նուաստ ու ստորադաս վիճակի գիտակ-

1 «Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 177

2 Տե՛ս նոյն, էջ 179:

3 «Բանբեր Մատենադարանի», N 3, էջ 71

ցութեամբ ու թելադրանքով, ինչպէս իրաւացիօրէն ակնարկել է Գ. Խաչատրեանը[1]:

Երբ Սուլթանշահ-Ստեփանոսի արիւնաշաղախ գլուխը նետում են մօր գիրկը, նա աղերսում է Աստծուն պատուհասել որդուն սպանողին.

Զգոգն արեամբ լցեալ եւ խնդրէր
Վրէժ սպանողին:

Աստծոյ արդար դատաստանը չի ուշանում.

Հուր բորբոքեցաւ
Յեղեգեց ձորին.
Հրդեհեալ կիզեաց զամենայն
Բնակիչք երկրին[2]:

Պարզ է ուրեմն, որ Եղեգեաց ձորում պէտք է փնտրել ոճրագործին, իսկ Եղեգնաձորի իշխանը Գորգուն Բուրթէլեանն էր:

Եւս մի վկայութիւն ողբ-պոեմից.

Վայղեցին զարիւնն
Տէր Ստեփանոսին.
Արիւնն գոչէր առ Քրիստոս՝
Որպէս զԱբելին[3]:

Շատ որոշակի է ասուած. Աբէլին սպանեց իր եղբայր Կայէնը, ըստ այդմ Ստեփանոսին եւս սպանել է իր եղբայրներից մէկը, որ վերոյիշեալ տուեալներով եղել է Եղեգնաձորի տէր Գորգուն իշխանը՝ Ստեփանոսի համահայր եղբայրը: Աւելացնենք, որ նա միայնակ չի եղել, այլ գործել է «խառնիճաղանչ» եւ «աստուածուրաց» մարդկանց գործակցութեամբ, որոնք մէկ անգամ էլ կոչուած են «գինուորքն չարին»:

Որտե՞ղ է կատարուել Սուլթանշահ-Ստեփանոսի սպանութիւնը: Ա. Մնացականեանի կարծիքով՝ Թաւրիզում, բայց այս եզրակացութիւնը տարօրինակ է թուացել նոյնիսկ հեղինակին. «Պոեմի պակասաւորութեան պատճառով,- գրել է նա,- լրիւ չի ընկալւում, թէ Ստեփանոսը, Սիւնիքում գտնուելով, ինչպէ՞ս եղաւ, որ պատժուեց «Մեծ Դիւանի» նստավայրում՝ Թաւրիզում»[4]:

Վերոյիշեալ փաստերի լոյսի տակ անիմաստ է դառնում նման հարցադրումը: Ստեփանոսը սպանուել է Եղեգնաձորում: Նոյնիսկ յայտնի է, թէ ուր է թաղուած նրա խոշտանգուած մարմինը:

Թումա Սպատկերոցի գրիչը 1423 թ. Հերմոնի վանքում օրինակել է Գրիգոր Տաթեւացու «Հարցմանց գիրքը». այդ ձեռագրի յիշատակարանում նա յայտնում է, որ աշխատել է «ի

1 «Պատմա-բանասիրական հանդէս», 1965, N 2, էջ 198
2 «Բանբեր Մատենադարանի», N 8, էջ 310
3 Նոյն, էջ 308
4 Նոյն, էջ 303

յերկիրն Վայուձոր, ի յանապատն Հերմոնի վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, եւ սուրբ վարդապետացն, որ անդ հանգուցեալ կան՝ Տերատուր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, տէր Սուլթանշէն»[1]:

Այսպիսով, պարզւում է, որ նահատակ Սուլթանշահ-Ստեփանոսի աճիւնը հանգչում է Եղեգնաձորի Հերմոնի վանքում:

Իսկ ե՞րբ է կատարուել սպանութիւնը: Ըստ Ա. Մնացականեանի՝ XIII դ. երկրորդ կէսին կամ «առնուազն» XIV դ. սկզբներին: Այս եզրակացութիւնն արդիւնք է, հիմնականում, ողբ-պոեմի բովանդակութեան ու գործող անձանց մասին արտայայտած թիւր տեսակէտների: Ժամանակի հարցը պարզելու նպատակով մէջ է բերուած նաեւ մի «փաստ», որի համաձայն 1387 թ. արդէն գոյութիւն է ունեցել մեր պոեմի «այլափոխուած ու վերամշակուած» եւ Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսի նահատակութեանը յարմարեցուած մի փոփոխակ: Ցաւօք, հիմնաւոր չէ Ա. Մնացականեանի նաեւ այս եզրակացութիւնը:

Սեբաստիայի եպիսկոպոս Ստեփանոսի նահատակութեանը յարմարեցուած փոփոխակը հրատարակուած է առաջին անգամ Ղ. Ալիշանի կողմից 1848 թ.[2]: Ալիշանը ոչ մի խօսք չի ասել այդ հրատարակութեան համար հիմք ծառայած ձեռագրի, ինչպէս եւ այդ քերթուածի յօրինման ժամանակի մասին. նա սոսկ նշել է, որ Սեբաստիայի եպիսկոպոս Ստեփանոսը նահատակուել է 1387 թ.: Նրա նահատակութեան պատմութիւնը հրատարակուած է «Հայոց նոր վկաները» ժողովածուի մէջ 24 ձեռագիր Յայսմաւուրքների բաղդատութեամբ[3]: Եւ ահա, այդ 24 Յայսմաւուրքներից եւ ոչ մէկում, վկայաբանութեամբ կից, չկայ մեզ հետաքրքրող պոեմի փոփոխակը: Պարզ է ուրեմն, որ 1387 թ. անարդարացի եւ իզուր է հրապարակ բերուած Ստեփանոսի ոճրապարտ սպանութեան ու պոեմի ստեղծման ժամանակը պարզելու ակնկալութեամբ:

Սուլթանշահ-Ստեփանոսի ինքնագիր Յիշատակարանը շարադրուած է, մեծ հաւանականութեամբ, 1366 թ., Իւանէ Բուրթէլեանը կենդանի էր դեռեւս 1377 թ. (դրանից յետոյ շատ ապրած չպէտք է լինի)[4]: Թուական այս տուեալները բաւարար հիմք են հանդիսանում ենթադրելու, որ Սուլթանշահի սպանութիւնը տեղի է ունեցել XIV դ. 60-ական թթ. վերջերին կամ 70-ական թթ.:

Այժմ անդրադառնանք ողբ-պոեմի յօրինման ժամանակի ու հեղինակի հարցին: Հեղինակի մասին նոր ասելիք չունենք. կարծում ենք, որ չի սխալւում Գ. Խաչատրեանը, երբ ամփոփում է իր յօդուածի այս հարցին նուիրուած բաժինը այսպէս. «Ողբի տաղաչափական, գեղարուեստական-պատկերաւորման եւ քերականական նշուած առանձնայատկութիւնները, այսպիսով, որոշ հիմք են տալիս ենթադրելու, որ նրա հեղինակը, թերեւս, Առաքել Սիւնեցին է, որի գրական գործունէութեան եռուն շրջանը, համաձայն մեզ հասած տուեալների, համընկնում է XV դ. առաջին տասնամեակին»[5]:

1 Երուսաղէմ, ձեռ. N 2181, էջ 681 (հմմտ. ԺԵ, I, 301): Յիշատակարանում «Սուլթանշէն» անունը գրչի վրիպակով գրուած է «Սուլթանէշն» աղաւաղ ձեւով:
2 «Բազմավէպ», 1848, էջ 341-343
3 «Հայոց նոր վկաներ», գիտական հրատարակութիւն՝ աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 137-150
4 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 117-118:
5 «Պատմա-բանասիրական հանդէս», 1965, N 2, էջ 204

Առաքել Սիւնեցին իր նշանաւոր «Ադամգիրքը» յօրինել է 1403 թ.: Պէտք չէ տարակուսել, որ նա ստեղծագործական աշխատանքի բազմամեայ փորձ է ունեցել այդ բարդ երկը շարադրելիս: Եւ կարծես որեւէ արգելք չկայ «Տաղ Ստեփանոսին» ողբ-պոեմի յօրինման ժամանակը նկարագրուած ողբերգական դէպքերին մօտեցնելու համար:

Այնուամենայնիւ մենք հակուած ենք աւելի տեւական անջրպետ տեսնելու պոեմում պատմուող անցուդարձերի եւ նրա յօրինման ժամանակի միջեւ:

Ոճիրը կատարող կամ ոճրագործին նպաստող անձինք Սիւնեաց նշանաւոր իշխաններն են եղել: Ժամանակի գրչի մարդիկ յարմար չեն դատել եւ, գուցէ, երկիւղ են կրել իշխանաւորների ամբողջ արարքները բացայայտող այդ դէպքի պատմութիւնը գրի անցկացնելուց, քանի դեռ կենդանի էին գործող անձինք՝ Իւանէն, Գորգունը եւ նրանց կուսակիցները: Ժամանակ էր պէտք այդ ողբերգութիւնը գրաւոր խօսքով պատմութեանը յանձնելու համար: Եւ այդ ժամանակը հասունացել էր, ըստ երեւոյթին, XV դ. սկզբներին:

Ամփոփենք արդիւնքները. «Տաղ Ստեփանոսին՝ Սիւնեաց եպիսկոպոսին» ողբ-պոեմի հերոս-նահատակը Սիւնեաց մեծ իշխան Բուրթէլի թոռ, Իւանէի որդի Սուլթանշահ-Ստեփանոս պարոնտէրն է: Նրա խորթ մօր՝ Էլ-Խութլուի սպանութիւնը եւ իր նահատակութիւնը, ամենայն հաւանականութեամբ, արդիւնք է Իւանէ Բուրթէլեան իշխանի տարբեր կանանցից ծնուած որդիների միջեւ ժառանգական ստացուածքները բաժանելու հողի վրայ ծագած վէճերի ու թշնամութեան: Ստեփանոսի սպանութիւնը կատարուել է XIV դ. 60-70-ական թթ. (հաւանաբար՝ 1366-1377 թթ. միջոցին) Վայոց ձորի Եղեգնաձոր գաւառում՝ Իւանէ Բուրթէլեանի Գորգուն որդու նախաձեռնութեամբ: Սուլթանշահ-Ստեփանոսի աճիւնը հանգչում է Հերմոնի վանքում:

ԱՐՏԱԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾՈՐԾՈՐԻ ԴՊՐՈՑԸ*

Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Արտազ գաւառը, որ հնում կոչուել է Շաւարշաւան գաւառ, իսկ միջնադարում՝ Մակու կամ Առաքելոց երկիր, կարեւոր դեր է կատարել Հայոց տնտեսական, քաղաքական եւ եկեղեցական պատմութեան մէջ: Հնագոյն ժամանակներից ի վեր այդ շրջանով է անցել Փոքր Ասիան Հայաստանի, Ատրպատականի եւ Իրանի հետ շաղկապող մայրուղին. Արշակ Բ արքան այստեղ է կառուցել Արշակաւան քաղաքը՝ փորձելով այն դարձնել թագաւորական իշխանութեան յենարանը՝ կենտրոնախոյս ուժերի դէմ մղած իր պայքարում. այստեղ է գտնւում Աւարայրի դաշտն ու Տղմուտ գետը՝ տեղանուններ, որ յաւէտ կենդանի են հայ ժողովրդի յիշողութեան մէջ՝ շաղկապուած լինելով 451 թ. Պարսից գերազանց ուժերի դէմ հայրենիքի ազատութեան համար մաքառած հերոսների փառքին: Նոյն այս բնաշխարհի հետ են աղերսւում նաեւ հայ եկեղեցու առաքելական սկզբնաւորութեան մասին հիւսուած հնաբոյր աւանդութիւնները եւ այլն:

Չնայած վերոյիշեալ հանգամանքներին, Արտազի պատմութիւնը յատուկ ուսումնասիրութեան նիւթ չի դարձել, առաջին հերթին պատմական սկզբնաղբիւրների աղքատիկ լինելու հետեւանքով:

XIII դ. կէսերին ճոխացուած ու գունազարդուած վկայաբանական երկերի մէջ Արտազի մասին առկայ տուեալներից կարելի է հետեւեցնել, որ այդ գաւառը մեր թուարկութեան առաջին դարերին պատկանել է Արշակունիներին՝ մաս կազմելով արքունի տան՝ Ոստանի: Մի այլ վարկածով այն եղել է Ամատունեաց նախարարների բնօրրանը[1]: Թերեւս ի նպաստ այս կարծիքի Թովմա Արծրունի պատմիչը վկայում է, որ XI դ. վերջերին Ամատունեաց տան եպիսկոպոս Գրիգորը իր աթոռը փոխադրել է Արտազ գաւառի այն վայրը, ուր Թադէոս առաքեալի գերեզմանն է նշուել. «Նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդոզական գաւառի»[2]:

Այլ տեղեկութիւններ չկան, ուստի սկզբնաղբիւրները հնարաւորութիւն չեն ընձեռում հետեւելու Հայոց հնամենի այս բնաշխարհի կապակցուած պատմութեանը. ի՞նչ անցուդարձեր են տեղի ունեցել այստեղ, ո՞վ է իշխել, ո՞ւմ ենթարկուել եւ այլն:

Այսպէս, մինչեւ 1247 թ., երբ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267) յատուկ կոնդակով Թադէոս առաքեալի անուամբ սրբագործուած այս վայրը դառնում է Հայոց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, Առաքելոց աթոռի առաջնորդութիւնը ժառանգած գերդաստանի հոգեւոր եւ աշխարհիկ գործիչներին յաջողւում է Արտազի շրջանը դարձնել իրենց տիրոյթը. այսպիսով, դարաւոր ընդմիջումից յետոյ այստեղ վերահաստատւում է հայկական իշխանութիւնը, որ գոյատեւում է շուրջ մէկուկէս հարիւրամեակ (մինչեւ 1426 թ.)՝ զգալի դեր կատարելով օտար լծի տակ կեղեքուող ժողովրդի քաղաքական ու մշակութային կեանքում:

Մեր այս յօդուածում փորձելու ենք համախմբել մեզ մատչելի ցաքուցրիւ տուեալները,

* «Բանբեր Մատենադարանի», N 11, 1973, էջ 125-209

1 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 304, 321

2 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 259

որոնք նպաստում են մոնղոլական տիրապետութեան ծանր տարիներին ստեղծուած հայկական այս իշխանութեան պատմութիւնն ուսումնասիրելու գործին: Մեր նպատակի իրագործման ճանապարհին յաղթահարելու են դժուարութիւններ՝ կապուած ինչպէս անհրաժեշտ նիւթի պակասի, այնպէս էլ ժամանակաշրջանի քաղաքական պայմաններին առնչուող մի շարք հարցերի ոչ բաւարար մշակուած լինելու հետ: Ըստ այդմ՝ հարկադրուած ենք եղել երբեմն բուն նիւթից զգալի շեղումներ կատարել, քննարկուող ժամանակաշրջանի պատմութեան կնճռոտ հարցերը լուսաբանելու նպատակով:

Շարադրանքը բաժանել ենք երկու մասի՝ առաջինը նուիրելով Արտազի հայկական իշխանութեան պատմութեանը, երկրորդը՝ նրա մշակութային կենտրոն Ծործորի վանքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԶԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱԿՆԱՐԿ
(XIII-XV դդ.)

1. Հայ-մոնղոլական յարաբերութիւնները XIII դ. կէսերին

Երբ մոնղոլները սկսեցին իրենց աշխարհաւեր արշաւանքները եւ, քայլ առ քայլ առաջ շարժուելով, նուաճեցին Միջին Ասիայի, Ռուսաստանի ու Մերձաւոր Արեւելքի բարեբեր երկրամասերը, նրանց դաւանանքի եւ առաջխաղացման քաղաքական դրդապատճառների մասին ծայր առան ու սփռուեցին անստոյգ, մտացածին լուրեր: Ասում էին, որ իբր այս նոր աշխարհակալները «մոգք են եւ քրիստոնեայք հաւատով, եւ նշանագործք. եւ եկեալ են ի վրէժխնդրութիւն քրիստոնէից, որ ի բռնութենէն տաճկաց: Եւ ասէին, թէ ունին եկեղեցի վրանեայ եւ խաչ սքանչելագործ» եւ այլն[1]:

Մահմեդական իշխողների բռնութիւններին ենթակայ քրիստոնեայ ժողովուրդների լայն շրջաններում, ինչպէս նաեւ արեւմտաեւրոպական մի շարք երկրներում, ուր խաչակրաց նոր արշաւանքների ծրագրեր էին մշակւում, մոնղոլների մասին այս «սուտ համբաւը» (Կ. Գանձակեցի), պարարտ հող գտնելով, տարածւում էր անարգել: Մոնղոլներին համարում էին այն ժողովուրդը, որոնց թագաւոր-մոգերը երկնառաք պատգամով Արեւելքից Բեթղեհէմ էին եկել նորածին Աստուածորդուն՝ Յիսուս Քրիստոսին երկրպագելու[2]: Կրկին շրջանառութեան մէջ էր դրուել մէկդարեայ հնութիւն ունեցող լեգենդը հեռաւոր Արեւելքում Յովհաննէս երէցի կողմից հիմնադրուած քրիստոնեայ հզօր պետութեան մասին: Ինչպէս իրաւացիօրէն նշել են ուսումնասիրողները, այս լեգենդի հիմքում ընկած էր այն իրողութիւնը, որ ասորի նեստորականների ծաւալուն միսիոներական գործունէութիւնը շօշափելի արդիւնք էր տուել Կենտրոնական Ասիայում ստեղծուած Կարակիտայների պետութեան (Բալասագուն մայրաքաղաքով)

1 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 202

2 Մեծահամբաւ հայ մանրանկարիչ Թորոս Ռոսլինը Կոստանդին կաթողիկոսի պատուէրով 1260 թ. Հռոմկլայում նկարազարդած իր Աւետարանի «Ծնունդ Տեառն» տէրունական նկարում Քրիստոսին երկրպագող եւ ընծաներ մատուցող երեք մոգերի կողքին նկարել է հինգ այլ կարմրազգեստ ու մոնղոլատիպ դէմքեր՝ օժտելով նրանց «թաթարն երեկ այսաւր» (այսօր եկաւ թաթարը) բացատրականով (Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի մատենադարան, ձեռ. N 251, էջ 14բ): Սրանով մեր մանրանկարիչը, խախտելով Սուրբ Գրքի պատկերագրութեան աւանդական ձեւերը, քաղաքական երանգ է տուել կաթողիկոսի պատուէրով նկարազարդուող փառաշուք այդ Աւետարանին: Մոնղոլներին դասելով Քրիստոսի Աւետարանով սրբագործուած ժողովուրդների շարքը՝ նա ընդառաջել է նոր այդ աշխարհակալների հետ համագործակցութեան եւ բարեկամութեան դաշինք կնքած Կիլիկեան հայկական թագաւորութեան իշխող շերտերի ձգտումներին:

սահմաններում: Այս նորելուկ պետութեան հիմնադիր Ելոյ Դաշին (մհ. 1143 թ.) յենւում էր նեստորականների վրայ, իսկ նրա որդին, որ քրիստոնէական Իլեա անունն էր ստացել, թագաւորելով 1151-1161 թթ., կարողացաւ պահպանել իր հօր ստեղծած ընդարձակածաւալ պետութեան քաղաքական կշիռն ու հեղինակութիւնը. հայր եւ որդի այս զուրխանների գործունէութեան շուրջ արեւմտեան երկրներում տարածուած լուրերի հիման վրայ հիւսուեցին հեռաւոր Արեւելքում գոյութիւն ունեցող քրիստոնէական մեծ մի պետութեան մասին շրջանառութեան մէջ դրուած առասպելները[1]:

Անհրաժեշտ է այստեղ աւելացնել, որ հեռաւոր արեւելեան այդ երկրամասերում սիրիացի նեստորականների հետ միասին, մանաւանդ XIII դ. կէսերին, եռանդուն գործունէութիւն էին ծաւալել նաեւ Հայոց եկեղեցու պաշտօնեաները, որոնց դերը ստուերի տակ է մնացել: Մոնղոլ տիրակալների արքունիքներում հայ միսիոներների եւ քաղաքական գործիչների կատարած դերը բացայայտելու համար յատուկ ու մանրակրկիտ ուսումնասիրութիւն պէտք է կատարել, որ դուրս է մեր նպատակներից: Հարկ է նշել, սակայն, որ XIII դ. 40-50-ական թթ., երբ մոնղոլական հորդաների յետագայ արշաւանքների ուղիներն էին կանխորոշւում, յատկապէս աշխոյժ գործունէութիւն ծաւալեցին հայ դիւանագէտներն ու քարոզիչները, անպարտելի համարուող նոր աշխարհակալների զօրութիւնը հայ ժողովրդի, մասնաւորապէս՝ Կիլիկեան հայկական թագաւորութեան առջեւ ծառացած քաղաքական խնդիրներին ի նպաստ օգտագործելու յոյսով:

Գույուկ խանի (1240-1248) մահուանից յետոյ բովանդակ կայսրութեան փաստական տիրակալ դարձած Բաթու խանի մերձաւոր խորհրդականների շարքում կային փորձառու հայ գործիչներ. թարգմանի պաշտօն վարող եւ այլ ծառայութիւններ կատարող այդ հայերը առիթ չէին կորցնում սրելու մոնղոլների եւ մահմեդական աշխարհի հակամարտութիւնները[2]:

Բաթուի ժառանգ Սարթախին նոյնպէս շրջապատում էին «հայ հոգեւորականներ, որոնք գիտէին թուրքերէն եւ արաբերէն»[3]: Սրանց մասին տեղեկութիւններ կան նաեւ հայկական աղբիւրներում. Կ. Գանձակեցին, օրինակ, յայտնում է, որ Բաթու խանի մօտ գտնւում էին բազմաթիւ հայ «վարդապետք եւ եպիսկոպոսունք եւ երիցունք», որոնցից Մարկոս վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը, Մխիթարը եւ Բարսեղ քահանան (յատկապէս վերջինս) քաղաքական կարեւոր դեր էին կատարում[4]:

Հեթում թագաւորի՝ Մանգու խանի մօտ այցելելուց մի քանի ամիս առաջ Ղարաղորում էր եկել եւ մեծ խանի հորդայում բարձր դիրք գրաւել Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի կամ Պաղեստինի մի այլ վանական հաստատութեան միաբան Սարգիս ճգնաւորը: Այս խորագէտ եւ ճարպիկ գործիչը, աստուածաբանական գիտելիքներ չունեցող ու հազիւ գրագէտ մէկը լինելով, խօսում էր արեւելեան ու եւրոպական մի շարք լեզուներով: Մեծ խանի վրանից ոչ հեռու նա կանգնեցրել էր խաչակիր գագաթով մի վրան-մատուռ, զարդարել այն գեղեցիկ սպասներով եւ խանի ու նրա մերձաւորների շրջանում անարգել քարոզում էր քրիստոնէու-

1 **Л. Н. Гумилев,** Поиски вымышленного царства (легенда о "государстве пресвитера Иоанна"), М., 1970, էջ 128 եւ հետ.

2 "Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука", редакция, вступительная статья и примечания Н. П. Шастиной, М., 1957, էջ 136

3 Նոյն, էջ 113

4 Կ. Գանձակեցի, էջ 366

թիւն: Եթէ մեծ խանը քրիստոնէութիւն ընդունի, համոզում էր նա, ողջ աշխարհը, նաեւ ֆրանկները՝ պապի գլխաւորութեամբ, կենթարկուեն նրան՝ ընդունելով մոնղոլական գերիշխանութիւնը[1]:

Սարգիս ճգնաւորը պարարտ հող նախապատրաստեց Կիլիկեան Հայաստանի գահակալ Հեթում թագաւորի համար, որը հրաւիրուած էր Ղարաղորում, բանակցելու մեծ խանի հետ:

Հեթումը բարեկամական կապերի մէջ էր Ֆրանսիայի թագաւոր Լիւդովիկոս Թ-ի հետ, որն այդ ժամանակ գտնւում էր Սիրիայում՝ պատերազմելով Էյուբեանների դէմ: Քրիստոնեայ այս գահակալները, անտարակոյս, միասնական ծրագիր էին մշակել մոնղոլների հետ բանակցութիւններ վարելու նախօրէին: 1254 թ. գարնանը դուրս գալով Սիս մայրաքաղաքից ու ծպտեալ անցնելով Իկոնիայի սուլթանութեանը պատկանող շրջաններով՝ Հեթումը հասաւ Հայաստան եւ կանգ առաւ Արագածոտնի տէր Քուրդ Վաչուտեանի իշխանանիստ Վարդենիս գիւղում: Այստեղ նա տեսակցութիւն ունեցաւ մի շարք հայ իշխանների ու եկեղեցական բարձրաստիճան գործիչների հետ: Վարդենիս եկաւ նաեւ Յակոբ վարդապետը, որ ուղարկուել էր Տրապիզոնի կայսեր մօտ, դաւանաբանական եւ քաղաքական հարցերի շուրջ բանակցելու յանձնարարութեամբ: Անհրաժեշտ նախապատրաստութիւններն աւարտելով՝ թագաւորն անցաւ Բաթուի եւ Սարթախի մօտ, որոնք հաստատուել են Կասպից ծովից հիւսիս՝ Վոլգա գետի ափերին: Այստեղից մեկնեց Ղարաղորում՝ Մանգու մեծ խանի արքունիքը, ուր մնաց 50 օր եւ, յաջողութեամբ աւարտելով իր առաքելութիւնը, վերադարձի ուղին բռնեց: Հեթումին առաջնորդեցին այնպիսի ճանապարհով, որ նա տեսակցութիւն ունենայ Մանգու խանի եղբայր Հուլաղուի հետ: Իլխանութեան ապագայ հիմնադիրը իր հորդայով շարժւում էր արեւմուտք՝ ստանձնելու նուաճուած Իրանի եւ Անդրկովկասի կառավարչութիւնը, նոր նուաճումներ կատարելու Մերձաւոր Արեւելքում եւ Փոքր Ասիայում:

Հեթումի բանակցութիւնները պսակուեցին յաջողութեամբ. այդ մասին մանրամասն տեղեկութիւններ է գրանցել նրա եղբօրորդի Հեթում պատմիչը՝ 1307 թ. ֆրանսերէն լեզուով թելադրած իր «Պատմութեան» էջերում (պահպանուել է ֆրանսերէն ու լատիներէն խմբագրութիւններով ու բազմիցս հրատարակուել է Եւրոպայում): Ուսումնասիրողները իրաւամբ նշել են, որ Հեթում պատմիչը, իր երկը ստեղծելով 1254 թ. բանակցութիւններից կէս դար յետոյ, ժամանակի պահանջներից ելնելով, կարող է չափազանցրած լինել հայ-մոնղոլական բանակցութիւնների արդիւնքը, իր թագաւոր հօրեղբօրը քրիստոնեայ աշխարհին ներկայացնելով որպէս մոնղոլների ահռելի ռազմական ուժը ի նպաստ խաչակիր պետութիւնների օգտագործելու վաղեմի ծրագրերի իրականացման գծով մեծ յաջողութիւններ արձանագրած քաղաքական գործիչ: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ քննաբար ու զգուշօրէն պէտք է օգտագործել Հեթումի «Պատմութեան» մէջ ամբարուած արժէքաւոր տուեալները: Սակայն բաւարար հիմ-

1 "Путешествия в восточные страны", էջ 138: Այս գործչի մասին մանրամասն տեղեկութիւններ գրանցած Ռուբրուկը ամէնուրեք նրան կոչում է «հայ կրօնաւոր», մի քանի անգամ յայտնում, որ նա եկել է Երուսաղէմի սուրբ երկրից եւ վերադառնալու է իր եկած վայրը՝ «Սուրբ Յակոբ», այսինքն Երուսաղէմի Հայոց գլխաւոր վանքը (եւ ո՛չ Իսպանիայի հիւսիսարեւմտեան ծայրամասում գտնուող Ս. Յակոբ Կոմպոստելլա վանքի շրջանը, ինչպէս ենթադրել է անգիտութեամբ Ռուբրուկի ռուսերէն թարգմանչուհի-ծանօթագրողը): Զննած այս բոլորին, որոշ ուսումնասիրողներ, հաւատ ընծայելով Ռուբրուկի «Ուղեգրութեան» հրապարակողներից մէկի մտցրած գլխակարգութեանը եւ ինքնահնար խորագրերին (32-րդ գլուխն, օրինակ, խորագրուած է այսպէս. «Քրիստոնէական մատուռի եւ Սարգիս անունով նեստորական կեղծ վանականի հետ հանդիպելու մասին»), այս նշանաւոր հայ գործչին նեստորական աստի են համարել՝ արհամարհելով Ռուբրուկի տասնեակ պարզ ու մեկին պնդումները Սարգսի հայ լինելու մասին:

քեր չկան մեր պատմիչին անարժանահաւատ որակելու, ինչպէս հակուած են որոշ ուսումնասիրողներ[1]: Պէտք չէ մոռանալ մանաւանդ այն հանգամանքը, որ արքայազարմ պատմիչն իր տեղեկութիւնները քաղել է իրադարձութիւնների գլխաւոր դերակատար Հեթում թագաւորից[2]:

Արդ, ի մի բերելով Հեթում պատմիչի եւ այլ սկզբնաղբիւրների տուեալները, կիլիկեան հայ գահակալի եւ Մանգու մեծ խանի բանակցութիւնների կարեւոր արդիւնքները կարելի է ամփոփել հետեւեալ վեց կէտերով.

1. Մոնղոլները համաձայն են քրիստոնեայ դառնալ, սակայն այդ պէտք է կատարուի իւրաքանչիւրի բարի կամքով, «քանի որ հաւատքը բռնադատութիւն չի հանդուրժում»:

2. Քրիստոնեաների եւ մոնղոլների միջեւ կայուն խաղաղութիւն եւ յարատեւ բարեկամութիւն կլինի, եթէ քրիստոնեաները չխախտեն այն:

3. Քրիստոնէական բոլոր եկեղեցիներն ու եկեղեցու պաշտօնեաները ազատ են լինելու ամէն տեսակ հարկերից:

4. Մեծ խանի կամ նրա եղբայր Հուլաղուի գլխաւորութեամբ մոնղոլներն ազատագրելու են քրիստոնեաների սուրբ երկիրը՝ Պաղեստինը:

5. Բաղդատը պէտք է գրաւուի եւ խալիֆայութիւնը վերացուի:

6. Բոլոր այն շրջանները, որ բռնագրաւել են Կիլիկեան թագաւորութիւնից սելջուկները կամ այլ թշնամիներ՝ պէտք է վերադարձուեն: Կիլիկիային են կցուելու նաեւ այն տարածութիւնները, որոնք կնուաճի Հայոց թագաւորը մահմեդականների դէմ մղուելիք պատերազմների ընթացքում[3]:

Այս կէտերի մէջ անհաւատալի ոչինչ չկայ: Մոնղոլ աւագանու ուժեղ մի խմբակցութիւն իրօք հակուած էր քրիստոնէութիւնը պետական կրօն ընդունելու. մի շարք նշանաւոր պետական գործիչներ, եթէ չէին էլ դարձել քրիստոնեայ, ոչ միայն չէին հերքում այդ մասին տարածուող լուրերը, այլ իրենք էին նպաստում դրանց շրջապտոյտին[4]: Այդ հանգամանքը

1 Տե՛ս Ա. Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք առաջին, Երեւան, էջ 174-175:

2 Ա. Գալստեանը «Հեթումի «Պատմութիւն թաթարաց» գրքի բնութագրման հարցի շուրջ» յօդուածում («Տեղեկագիր», 1958, N 9, էջ 63-72) փորձում է համոզել, որ Հեթում պատմիչի գրանցուած տեղեկութիւնների սկզբնաղբիւրը Սմբատ սպարապետն է, որն, իբր, ընկերակցել է իր թագաւոր եղբօրը՝ նրա Ղարաղորում կատարած ճանապարհորդութեան ընթացում եւ այլն: Այս յայտարարութիւնները անհիմն են ու անընդունելի: Տեղին է, սակայն, նշել, որ Ա. Գալստեանը հայ-մոնղոլական քաղաքական կապերի ուսումնասիրութեան գծով զգալի աշխատանք է կատարել. պարզել է շատ թիւրիմացութիւններ ու ճիշտ գնահատել 1254 թ. բանակցութիւնների արդիւնքը: Տե՛ս նրա «Մոնղոլական շրջանի հայ դիւանագիտական պատմութիւնից» աշխատութիւնը (Լենինական, 1945) եւ «Հայ-մոնղոլական առաջին բանակցութիւնները» յօդուածը («Պատմա-բանասիրական հանդէս» 1964, N 1, էջ 91-106):

3 "Recueil des historiens des Croisades. Documents armeniens", t. II, էջ 164-165: Հայ-մոնղոլական բանակցութիւնների արդիւնքի մասին հատուածների ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս **Г. Г. Микаелян,** История киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 310- 312:

4 1240-ական թթ. վերջերին, օրինակ, Կիպրոսում գտնուող Լիւդովիկոս IX թագաւորի մօտ եկած մոնղոլ դեսպաններ՝ յայտնելով, թէ մեծ խանը քրիստոնէութիւն է ընդունել ու մեծապէս համակրում է քրիստոնեաներին (**Г. Микаелян,** նշ. աշխ., էջ 314): Բաթու խանի Սարթախ որդու քրիստոնեայ լինելու մասին լուրեր էին շրջում ամէնուրեք. «Սնա քրիստոնեայ դայեկօք, եւ ի չափ հասեալ հաւատաց ի Քրիստոս եւ մկրտեցաւ յատրուցն»,- յայտնում է Կ. Գանձակեցին (էջ 358):

նպաստաւոր դիրք էր ապահովում նրանց համար ինչպէս Մերձաւոր Արեւելքում, այնպէս էլ Եւրոպական մայրցամաքում նոր նուաճումներ ձեռնարկելու նախօրէին: Քրիստոնէական վանքերի ու եկեղեցիների եւ, ընդհանրապէս, բոլոր դաւանանքների սրբատեղիների ու պաշտօնէութեան նկատմամբ մոնղոլները հովանաւորող քաղաքականութիւն էին որդեգրել մինչեւ Մանգու խանի եւ Հեթումի բանակցութիւնները[1]: Ուստի ճշմարտացի ու ստոյգ պէտք է համարել Հեթում պատմիչի եւ ժամանակակից միւս հեղինակների հաւաստիացումն այն մասին, որ եկեղեցին ու կղերականութիւնը ապահարկ է ճանաչուել Մանգու խանի կողմից. «Ետ եւ գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս»,- գրել է Հեթում Թագաւորը վերադարձին Վարդենիս գիւղում նրա հետ տեսակցած ու նրա զրոյցներին ունկնդիր դարձած Կիրակոս պատմագիրը[2]:

Հայ-մոնղոլական համաձայնութեան միւս նախատեսումները (նախկինում Կիլիկեան Թագաւորութեան պատկանող շրջանների վերադարձման, Բաղդադի գրաւման, Պաղեստինի ազատագրման մասին) քայլ առ քայլ սկսեցին իրագործուել այն բանից յետոյ, երբ Հուլաղու խանը հաստատուեց Իրանում եւ Անդրկովկասում ու ծնկի բերեց հաշիշեաններին: 1257 թ. Հեթում Թագաւորի զինական օժանդակութեամբ մոնղոլները պարտութեան մատնեցին Իկոնիայի սուլթանութեանը եւ հասան մինչեւ Միջերկրական ու Սեւ ծովերը: Նոյն թուականին սկսուեց նաեւ մեծ արշաւանք դէպի Միջագետք՝ Բաղդադի խալիֆի դէմ. մոնղոլական բանակի կազմում կռւում էին նաեւ հայ ֆեոդալների՝ Զաքարիայի, Պռօշ Խաղբակեանի, Սեւադա Խաչենցու, Թաղիադին Կիւրիկեանի եւ այլոց զօրախմբերը: 1258 թ. փետրուարի 4-ին Բաղդադն ընկաւ: 1259 թ. Հուլաղուի հրամանատարութեամբ գործող մոնղոլական բանակն արշաւեց Ասորիք, ուր իշխում էր Էյուբեան մելիք Սալահեդդին Իւսուֆը: Հեթում Թագաւորը միացաւ մոնղոլներին: Հալեպը գրաւուեց այդ թուականի վերջերին, ապա հնազանդուեցին Դամասկոսն ու սիրիական միւս քաղաքները:

Հուլաղուն եւ Հեթումը պէտք է այնուհետեւ արշաւէին Պաղեստին եւ գրաւէին Երուսաղէմը, բայց, իր եղբայր Մանգու խանի մահուան լուրը ստանալով, խանը ետ դարձաւ՝ Ասորիքում թողնելով իր զօրքի մի մասը Քիթբուղայի հրամանատարութեան ներքոյ: Մոնղոլական ջլատուած ուժերը սկսեցին ծրագրուած արշաւանքը դէպի Պաղեստին, բայց այլեւս անկարող եղան յաջող մարտեր մղել: Եգիպտոսի սուլթան Կուտուզը (ալ-Մուզաֆֆար Սայֆ ադ-դին Կուտուզ, 1259-1260) պարտութեան մատնեց Քիթբուղային՝ վերստին նուաճելով Սիրիան: Մեծ կորուստներ տուեցին նաեւ մոնղոլների դաշնակից հայ զօրախմբերը[3]:

Ինչպէս տեսնում ենք քաղաքական դէպքերի թռուցիկ այս թուարկումից, մոնղոլների եւ Կիլիկեան Հայկական Թագաւորութեան միջեւ Հեթումի եւ Մանգու խանի բանակցութիւննե-

---

1 Ասորի մեծանուն վաճառական Ռաբան-Աթան, օրինակ, բազմաթիւ եկեղեցիներ էր կառուցել մոնղոլական տիրապետութեան տակ գտնուող այնպիսի վայրերում, ուր մինչ այդ «ոչ իշխէին անուանել զՔրիստոս»: Խիստ ուշագրաւ են Կ. Գանձակեցու հաղորդած տեղեկութիւնները Ոսկէ Հորդայի հիմնադիր Բաթու խանի եւ Սարթախի կրօնական հաստատութիւնների նկատմամբ որդեգրած քաղաքականութեան մասին. «Սա (Սարթախը),- գրում է Գանձակեցին,- բազում դիւրութիւն արար եկեղեցւոյ եւ քրիստոնէից, եւ կամաւ հօր իւրոյ գրեաց գիր ազատութեան քրիստոնէից եւ եկեղեցեաց, եւ առաքեաց կողմանս սպառնալիս եւ մահ, եթէ ոք հարկ առնու յեկեղեցւոյ, կամ ի նորին պաշտօնէից, զինչ ազգ եւ իցեն, այլ եւ ի տաճկաց մզկիթացն եւ ի նորին սպասաւորաց» (Կ. Գանձակեցի, էջ 358):

2 Կ. Գանձակեցի, էջ 367

3 Այս դէպքերին, սկզբնաղբիւրների վկայակոչմամբ, մանրամասն անդրադարձել է ակադ. Յ. Մանանդեանը (Տե՛ս «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», հտ. III, Երեւան, 1952, էջ 232-236):

րից յետոյ, իրօք, մշակուել էր քաղաքական սերտ համագործակցութիւն: Փոքր Ասիայում եւ Մերձաւոր Արեւելքում նոր նուաճումներ կատարելու իրենց ծրագրերի իրականացման համար մոնղոլները դաշնակիցների պէտք ունէին, եւ մոնղոլական տիրապետութեան տակ ընկած կամ գերիշխանութիւնը ճանաչած հայ իշխանների մի մասը, ինչպէս բուն Հայաստանում, այնպէս էլ Կիլիկիայում քաղաքական ու տնտեսական իրենց ակնկալութիւններն ունենալով՝ դաշնակցում էին մոնղոլներին:

XIII դ. կէսերի քաղաքական կացութեան համառօտ այս նկարագիրը, ինչպէս կտեսնենք ստորեւ, նպաստելու է Արտազի հայկական իշխնութեան սկզբնաւորման պայմանների ուսումնասիրութեանը: Բուն նիւթին անցնելուց առաջ անհրաժեշտ է, սակայն, համառօտ մի ակնարկով անդրադառնալ նաեւ նոյն այս տարիներին Հայոց եկեղեցու առջեւ ծառացած քաղաքական ու գաղափարական խնդիրներին:

2. Հայոց եկեղեցին XIII դ. կէսերին

Կիլիկեան Հայկական Թագաւորութիւնը ամենասերտ տնտեսական ու քաղաքական կապերի մէջ էր եւրոպական երկրների եւ Մերձաւոր Արեւելքում ստեղծուած խաչակիր իշխանութիւնների հետ: Այդ երկրի տնտեսական բարգաւաճ վիճակն իսկ առաջին հերթին պայմանաւորուած էր միջազգային տարանցիկ առեւտրով, որի կարեւոր հանգուցակէտերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կիլիկեան նաւահանգիստներն էին: Կիլիկիայի հայ աւատատէրերն ու մեծահարուստ վաճառականները, տնտեսական սերտ համագործակցութեան մէջ լինելով «ֆռանկների» հետ, իրենց նիստուկացով եւ կենցաղով զգալապէս հեռացել էին հայրենական աւանդներից, հագնւում ու պճնւում էին եւրոպացիների նման, խնամիական կապեր հաստատում խաչակիրների հետ՝ իրենց կեանքն ու կենցաղը յարմարեցնելով միջնադարեան Եւրոպայի չափանիշներին:

Կիլիկեան Հայկական պետութեան շահերը եւրոպական երկրների հետ շաղկապած հասարակական շերտերը՝ ազգային դիմահեղման ընթացքի մէջ մտած խոշոր աւատատէրերն ու մեծատուն վաճառականները, ընդառաջ գնալով Կաթոլիկ եկեղեցու Արեւելք առաքուող պաշտօնեաների օրաւուր ծաւալուող քարոզչութեանը, պատրաստ էին նաեւ դաւանաբանական զիջումներ կատարելու գնով սերտ միութիւն ստեղծել Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների միջեւ: Հռոմկլայում հաստատուած Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը XIII դ. կէսերին դեռեւս ի զօրու էր հակահարուած տալու Վատիկանի գործակալներին եւ պաշտպանել իր դիրքերը որպէս ինքնագլուխ (աւտոկեֆալ) եկեղեցի:

1246 թ. Հռոմի պապը յատուկ պատուիրակի միջոցով մի գրութիւն էր յղել Հեթում Ա Թագաւորին, որով Հայոց եկեղեցու դաւանանքը հերձուածողական համարելով՝ Կաթոլիկ եկեղեցու գիրկն էր հրաւիրում «մոլորեալ» հայերին: Հռոմի եկեղեցին հիմնադրել է Պետրոս առաքեալը՝ Քրիստոսի սիրեցեալ աշակերտը («վէմն հաւատոյ»), ուստի բոլոր եկեղեցիները պարտաւորուած են ճանաչելու նրա յաջորդը համարուող պապի գերիշխանութիւնը. «Հռոմի աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ եւ արձակելոյ, եւ ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք»,- գրուած էր այնտեղ:

Հեթում Թագաւորը, ինչպէս եւ սպասելի էր, այդ մասին իրազեկ է դարձնում Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդցուն եւ ստանում նրանից մի ուշագրաւ պատասխան, որը շարա-

գրուել էր այդ ժամանակ Հռոմկլայում գտնուող Վարդան Արեւելցու գործակցութեամբ[1]:

«Հնդետասան սխալ եւ անընդունակ բան» գտնելով պապի գրութեան մէջ՝ կաթողիկոսն իր պատասխանով վճռականօրէն մերժում է Պետրոս առաքեալի յաջորդի հիմնազուրկ պահանջները՝ յայտարարելով, որ Քրիստոսի բոլոր 12 աշակերտները համահաւասար պատիւ եւ իշխանութիւն են ունեցել: Այս գրութիւնը պաշտօնական մի վաւերագիր չէ, անշուշտ, այլ Հայ եկեղեցու գահակալի մտերմական մի նամակը երիտասարդ թագաւորին, սակայն, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Մ. Օրմանեանը, «Մտերմական գրուածներ աւելի զօրաւոր են իւրաքանչիւրին ներքին համոզումը իմանալու համար, քան պաշտօնական գրութիւններ»[2]:

Առաքեալների համապատուութեան թեզը պաշտպանելով՝ Հայոց եկեղեցու վարիչները Կաթոլիկ եկեղեցու հիմնադիր հռչակուած Պետրոս եւ Պօղոս առաքեալների դիմաց պարզում էին երկու այլ առաքեալների՝ Բարթուղիմէոսին եւ Թադէոսին, որոնք, իբր, քարոզչական իրենց շրջագայութիւններն աւարտել ու իրենց վախճանը գտել էին Հայաստանի Արտազ գաւառում՝ հիմնաքարը դնելով Հայաստանեայց եկեղեցու: Այս մասին տակաւին V դ. յօրինուել էին որոշ զրոյցներ, բայց «Հայոց առաքեալների» նահատակութեան պատմութիւնները ճոխացուեցին հէնց Կոստանդին կաթողիկոսի աթոռակալութեան այս տարիներին՝ որոշակի տեղ մասնանշելով նրանց շիրիմների համար: Ուշագրաւ է, որ պաշտօնական գրութիւնների մէջ, կաթողիկոսական իր տիտղոսից անմիջապէս յետոյ («Ծառայ Քրիստոսի եւ շնորհօք նորին կաթողիկոս Հայոց»), Բարձրբերդցին շեշտում էր Հայոց եկեղեցու «ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բաթուղիմէոսի» լինելու պարագան:

Եւ ահա, պապի վերոյիշեալ գրութեան ստացման եւ պատասխանը պատրաստելու օրերին, Կոստանդին կաթողիկոսը յատուկ մտահոգութեան առարկայ է դարձնում Թադէոս առաքեալի վանքի վերաշինութեան հարցը՝ այն դարձնելով Հայաստանեայց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, որի հոգեւոր իշխանութեան սահմանները տարածուելու էին շրջակայ գաւառների վրայ՝ իրենց մէջ առնելով նաեւ Իրանում եւ Անդրկովկասում հաստատուած մոնղոլ

1 Այդ պատասխան գրութեան ընդարձակ խորագիրն է. «Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապաճ դղեկէս՝ ի ճայրապետական աթոռոյս Հռոմկլաէս ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթին, որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում, ի ձեռն լիկաթին որ կոչէր Տիմանչ, ի թուիս Հայոց ի ՈՂԵ (1246), ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս» («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503-509):

Մ. Օրմանեանը («Ազգապատում», § 1129) այս գրութեան թուականը առաջարկում է սրբագրել ՈՂԷ (1248): Այդ թերեւս ճաստատւում է պապի վերոյիշեալ գրութեամբ, որ շարադրուած է 1246 թ. ու թարգմանուած ճայերէն 1247 թ.: Ուշագրաւ այդ գրութիւնը «Գիր դաւանութեան ճռոմնեցւոց ի Հայս՝ վասն բխման Հոգւոյն Սրբոյն» խորագրով, պաճպանուել է Մաշտոցի անւ. Մատենադարանի N 248 ձեռագրում: Բանասիրական ճետաքրքրութիւն է ներկայացնում յատկապէս գրութեան յիշատակարանը, որ տալիս ենք ստորեւ.

«…Արդ ես ֆրա Տիմանչ սպանօլ, որ եմ ըստ կարգի ֆրա մնուրաց կաթոլիկէ առաքելական աթոռոյն ի Հայս. վկայեմ առաջի ամենակալին Աստուծոյ եւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս եւ զմեռեալս, որ կարողութեամբ սուրբ ճօրն եւ պապուն արգելեալ եմ ի ներքս ի բանադրանաց զամենեսեան զայնոսիկ զգրողսն, զկարդացողսն, զունողսն եւ որք օրինակեն զայս թուխտս դաւանութեան ճաւատոյ, որ յառաջմէն մինչեւ ի վերջն ոչ յաւելցուցանեն եւ ոչ պակասեցուցանեն, եւ ոչ փոխեն բնաւ ի բանիցս այսցիկ. եւ եթէ ոք յանդգնի յիրացս եւ յառաջէ անել՝ եղիցի ձեռն տեառն ի նա: Գրեցաւ թուխթս այս ի թուականութեան յաւիտենից յամս որ է ի մարմնանալ տեառն մերոյ ՌՄԽԶ, յամս նոյեմբերի եւ ի չորրորդ ամի եպիսկոպոսութեան տեառն պապուն, որ է չորրորդ Ընձիցունց (իմա՛ Իննովկենտիոս - Լ. Խ.): Եւ թարգմանեցաւ ի թուիս Հայոց ՈՂԶ (1247), յամս կաթօլիկոսութեան Հայոց տեառն Կոստանդնայ եւ թագաւորին Հեթմոյ եւ ճօր նորին աւագ պարոն Կոստանդնի» (ձեռ. N 248, էջ 196բ):

2 «Ազգապատում», ճտ. Բ, գիրք Ա, Պէյրութ, էջ 1960, էջ 1643 (§ 1130)

տիրակալների վարչա-քաղաքական կենտրոն Ատրպատականը՝ Մարաղա եւ Թաւրիզ քաղաքներով[1]:

Կոստանդին կաթողիկոսն ու Հեթում թագաւորը, վերոյիշեալ նկատառումներից բացի, հաշուի էին առնելու անշուշտ եւ այն հանգամանքը, որ Կիլիկեան հայկական թագաւորութեան դաշնակից մոնղոլների վարչա-քաղաքական կենտրոնում ստեղծելով եկեղեցական նոր թեմ՝ իրենց մշտական ներկայացուցիչն էին ունենալու այնտեղ՝ յանձինս թեմական առաջնորդ եպիսկոպոսի:

Արտազի կամ Առաքելոց երկրի նորաստեղծ թեմի առաջնորդը, ստանձնելով իր պաշտօնը, կամայ թէ ակամայ շփումներ ու բախումներ էր ունենալու հարեւան շրջանների, մասնաւորապէս՝ Սիւնիքի ու Վասպուրականի հոգեւոր առաջնորդների հետ: Սրանք, ըստ մեծի մասի լինելով կրօնաւորի սքեմ հագած աւատատէրեր, գործում էին ի շահ իրենց գերդաստանների, եկեղեցական կալուածատիրութեան ցուցանակների տակ ապահովելով բռնագրաւման վտանգից իրենց կալուածքների մի մասը: Ի տարբերութիւն հին ու պատմական անցեալ ունեցող թեմերի իշխանաշուք առաջնորդների, Արտազի եպիսկոպոսը նորաստեղծ իր թեմի դիրքը, հեղինակութիւնն ու տնտեսական կշիռը բարձրացնելու համար յենուելու էր, հիմնականում, Ամենայն Հայոց կաթողիկոսութեան եւ նրան զօրավիգ կանգնած Կիլիկեան հայկական թագաւորութեան վրայ, հանդիսանալով նրանց մշակած քաղաքականութեան ջատագովը Մեծ Հայքում:

3. Արտազի թեմի ճիմնադրումը եւ Թադէոս առաքեալի վանքի վերաշինումը

Թադէոս առաքեալի անուան եպիսկոպոսանիստ վանքի վերաշինման մասին տեղեկութիւններ պահպանած կարեւոր սկզբնաղբիւրը Կ. Գանձակեցու «Պատմութիւնն» է: Նրա վկայութեամբ վանքն աւերուած է եղել «ի թուրքաց եւ ի հինից վրաց»[2] շատ ժամանակ առաջ, «քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ եւ ամայի»[3]: Վանքի վերշինութեան աշխատանքները ղեկավարել է նշանաւոր գիտնական եւ եկեղեցական գործիչ Յովհաննէս Վանականի աշակերտներից Յովսէփ վարդապետը, որն այդ ժամանակ, իր Կիրակոս ու Վարդան դասընկերների հետ միասին, մեծ հեղինակութիւն վայելող եկեղեցական էր:

Կոստանդին կաթողիկոսը 1247 թ. յատուկ կոնդակով որոշեց Թադէոս առաքեալի նորաստեղծ թեմի սահմանները եւ յորդորեց վանքի վերաշինման նպատակին յատկացնել «ոսկի յոլով»: Յովսէփ վարդապետը, նիւթական ու բարոյական օժանդակութիւն ստանալով, դիմում է Անագուրակ-Նուին կոչուող մոնղոլ ցեղապետին, որի գերդաստանի ամառային կայանքը գտնւում էր վանքի շրջակայքում, եւ նրանից թոյլտւութիւն ստանալով վերաշինում է եկեղե-

1 Հուլաղու խանի (1256-1265) ժամանակ մայրաքաղաքը Մարաղան էր, իսկ Աբաղա խանը (1265-1282) իշխանութեան կենտրոնը փոխադրեց Թաւրիզ (**А. А. Али-заде**, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв., Баку, 1956, էջ 265):

2 Վրաց զօրքերի այս կողմերը կատարած արշաւանքի մասին խօսք կայ նաեւ XIV դ. վրաց անանուն ժամանակագրի մօտ. նրա տուեալներով Շահնշահ եւ Աւագ Զաքարեանները շուրջ 30 ճազար զօրքով անցել են Արաքսը եւ յաջող մարտեր մղել թուրքերի դէմ Վաղարշակերտի եւ Խլաթի կողմերում: Հաւանաբար մի զօրախումբ էլ մտել է Արտազի շրջան՝ ճալածելով թուրքերին (տե՛ս «Վրաց ժամանակագրութիւն» (1207-1318), Երեւան, 1971, էջ 91):

3 **Կ. Գանձակեցի**, էջ 311

ցին, կառուցում գաւիթ եւ այլ շինութիւններ, մեծ միաբանութիւն ստեղծում («շինեաց զվանսն եւ ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս»): Ուշադրաւ է Կ. Գանձակեցու եւ այն խօսքը, որ «զօրքն Թաթար ոչ էին թշնամի խաչի եւ եկեղեցւոյ, այլ եւ յոյժ պատուէին եւ ընծայս մատուցանէին, քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանիւր»[1]:

Ե՞րբ աւարտուեցին շինարարական այս աշխատանքները, ստոյգ չգիտենք, կարելի է ենթադրել, որ 50-ական թթ. վերջերին: Չգիտենք նաեւ որքան է ապրել Արտազեցի կոչուած Յովսէփ վարդապետը եւ երբ կնքել իր մահկանացուն: Նրան յաջորդել է Տիրացու եպիսկոպոսը, որ աշակերտել է Վարդան Արեւելցուն[2]: Սա պաշտօնի վրայ էր արդէն 1285 թ., երբ նրա մօտ իջեւանեց եւ հիւրընկալուեց Կիլիկիայի Լեւոն Գ թագաւորը (1270-1289) Արղուն խանի արքունիքն այցելելու ճանապարհին: Այս եպիսկոպոսի Տիրացու անունը ենթադրել է տալիս, որ նա մանուկ հասակից ընտրուած է եղել ու դաստիարակուել որպէս Թադէոս առաքեալի թեմի եպիսկոպոսացու: Միջին դարերում Հայաստանի եկեղեցական թեմերի ու նշանաւոր վանական հաստատութիւնների առաջնորդական պաշտօնը, գրեթէ ամէնուրեք, ժառանգական բնոյթ էր ստացել եւ փոխանցւում էր առաջնորդի մերձաւոր ազգականներից մէկին (մեծ մասամբ՝ եղբօր որդուն), որը պաշտօնի էր կոչւում իր տարեց հօրեղբօր կենդանութեան օրօք, եւ փոխարինում նրան՝ մահուանից յետոյ: Ամենայն հաւանականութեամբ այդպէս է եղել նաեւ տուեալ դէպքում, եւ Յովսէփ Արտազեցուն յաջորդել է Տիրացու եպիսկոպոսը՝ մերձաւոր ազգականի հանգամանքով:

Տիրացու եպիսկոպոսը շարունակել է իր նախորդի գործունէութիւնը Արտազի նորաստեղծ թեմի տնտեսական ու գաղափարական հիմքերն ամրապնդելու, նրա հոգեւոր իշխանութեան տակ գտնուող վանական հաստատութիւնների շինութեան եւ կալուածքներով օժտելու գծով: 1289 թ. ընդօրինակուած մի Աւետարանի յիշատակարանում հետաքրքրական տուեալներ են գրանցուած այն մասին, որ «ի ձեռն... մեծ փիտապետիս տէր Տիրացուի», «սքանչելի հրաշիւք» յայտնաբերուել են Սուքիասեան սրբերի նշխարները, շէնացուել է Կողբայ վանքը՝ վերստանալով նախկինում իրեն պատկանած կալուածքները. «Գանձագին արարեալ ազատեաց զբազմամեայ ծառայեալքս յայլազգեաց, եւ զհնացեալ եւ զամայացեալ հայրենիքս եւ զվիճակ, որ յառաջ լեալ էր»[3]:

«Գանձագին արարեալ», այսինքն՝ հնչուն դրամ վճարելով էին ընդարձակում իրենց կալուածքները Թադէոս առաքեալի նորաստեղծ թեմի առաջնորդները, ըստ երեւոյթին նիւթական օժանդակութիւն ստանալով նաեւ Կիլիկիայի հոգեւոր եւ աշխարհիկ աւատատէրերից:

Տիրացու եպիսկոպոսը 1293 թ. շարադրուած մի յիշատակարանի մէջ մեծարուած է «գերահռչակ եւ արժանապատիւ եպիսկոպոս» խօսքերով, ասուած է, որ նա փայլում է «իբրեւ զՋահ վառեալ ի մէջ գիշերի», լինելով «նաւահանգիստ վտանգելոց եւ ծարաւելոց, շնորհաւք սուրբ առաքելոյն [Թադէոսի]»[4]:

1 Նոյն, էջ 312

2 Տիրացուն 1266 թ. Խոր Վիրապում ընդօրինակել է իր ուսուցչի «Սաղմոսաց մեկնութիւնը»՝ իրեն կոչելով «անարժան աշակերտ... նորուն (Վարդանայ)» (**Ս. Տէր-Աւետիսեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի, Վիեննա, 1970, էջ 551):

3 **Ս. Տէր-Աւետիսեան**, էջ 256

4 Այս յիշատակարանը, որ ձեռագրից անջատ պահւում է Մաշտոցեան Մատենադարանի) պատառիկների ֆոնդում (պատառիկ N 919), պոկուել է անցեալում Գողթան գաւառի Ս. Թովմա առաքեալի վանքի մի ձեռագրից, որ

Այս յիշատակարանն ուշագրաւ է իր հարուստ բովանդակութեամբ: Հեղինակը՝ Թորոս Դրազարկցին, ընկերակցութեամբ Թովմաս եպիսկոպոսի, եկել է Մեծ Հայք, 1292 թ. գրաւուած ու աւերուած Հռոմկլայի փոխարէն մի նոր վայրում կաթողիկոսական աթոռ հաստատելու եւ նոր գահակալ ընտրելու նպատակով Արեւելեան Հայաստանի նշանաւոր հոգեւոր ու աշխարհիկ տէրերին Կիլիկիա հրաւիրելու յանձնարարութեամբ: Նա յայտնում է, որ Հեթում թագաւորը, «բոլոր ուխտիւն եկեղեցւոյ եւ իշխանաւք հանդերձ» որոշել է «շնորհել բերդ ամուր եւ երկիր առատ սուրբ աթոռոյ Լուսաւորչին՝ առ ի հաստատել վերստին»: Այսպիսով պարզւում է, որ եգիպտացիների կողմից գերեվարուած Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսի մահուանից անմիջապէս յետոյ Կիլիկիայում ժողով է գումարուել կաթողիկոսական աթոռի վերահաստատման օրակարգով:

XIII դ. վերջին ծանր վիճակ էր ստեղծուել Կիլիկեան հայկական թագաւորութեան համար: Հիւսիսից եւ հարաւ-արեւմուտքից արշաւող թշնամիներն ասպատակում էին երկիրը, գերում ու թալանում. մոնղոլները, արդէն հակուած մահմեդականութեան կողմը, այլեւս շահ չունէին շարունակելու իրենց վաղեմի բարեկամութիւնը Կիլիկեան հայ իշխանութեան հետ. Թուլացած ու միայնակ մնացած երկիրն այլեւս անկարող էր տոկալ զօրեղ թշնամիների յարձակումներին: Հեթում Բ թագաւորը, եւրոպական երկրներից ռազմական օգնութիւն ստանալու սին յոյսեր փայփայելով, Կաթոլիկ եկեղեցու գերիշխանութիւնը պաշտօնապէս ընդունելու քաղաքականութիւն էր վարում: Հէնց 1293 թ. նա հոգեւոր կոչում էր ընդունել, դառնալով ֆրանցիսկեան միաբանութեան անդամ՝ Յովհաննէս կրօնաւոր անունով[1]:

Նոյն քաղաքականութեան ջատագով էր նաեւ կաթողիկոսական գահի թեկնածու Գրիգոր Անաւարզեցին, որը հակուած էր հրաժարուելու հայ եկեղեցու դարաւոր աւանդութիւններից, ծառայագրուելու Կաթոլիկ եկեղեցու հովուապետին, հաւատ ընծայելով խաչակրաց նոր արշաւանքներ կազմակերպելու ձրի խոստումներին:

Հեթում թագաւորն ու իր կուսակիցները պէտք ունէին Մեծ Հայքի ամենախոշոր ու հեղինակաւոր թեմական առաջնորդների, մասնաւորապէս Արտազի, Տաթեւի, Հաղբատի ու Բջնիի եպիսկոպոսների աջակցութեանը՝ իրենց ծրագրերն իրականացնելու ճանապարհին[2]: Նրանց

այժմ պահւում է Լենինգրադի Էրմիտաժում (V 3-835 համարի տակ): Յիշատակարանը տպագրուել է բազմիցս. տե՛ս "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXIX, Тифлис, 1901 (А. И. Туманов), Арм. древние рукописи монастыря св. Фомы, էջ 11. «Ազգագրական հանդէս», XII, 1905. **Ե. Լալայեան**, Գողթն գաւառ, Ձեռագիրներ, էջ 155-156. **Մ. Վ. Մաքսուդեան**, Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանուց. «Արարատ», 1911, էջ 223-224. **Հ. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, Բ, էջ 470-471 եւ այլն:

1 Այս անունն ընտրուել էր ի պատիւ ֆրանցիսկեան միաբանութեան նշանաւոր գործիչ Ջովանի (Յովհաննէս) Մոնտեկորվինոյի, որը Կիլիկիայում եղած տարիներին դարձել էր հայոց թագաւորի մտերիմ խորհրդատուն ("После Марко Поло, путешествия западных чужеземцев в страны трех Индий", перевод с латинского и староитальянского языков, введение и примечания Я. М. Света. М., 1968, էջ 70-71):

2 Մ. Չամչեանի (Գ. 37), Ալիշանի («Շնորհալի...», 57), Մ. Օրմանեանի («Ազգապատում», § 930) եւ այլոց կարծիքով 1114 թ. Գրիգոր Վկայասէր կաթողիկոսի կողմից Քեսունի Կարմիր վանքում գումարուած ժողովը հաստատել է կարգ, որի համաձայն կաթողիկոսական ընտրութիւնը վաւերական է ճանաչուելու Մեծ Հայքի չորս գլխաւոր աթոռների՝ Բջնիի, Հաղբատի, Տաթեւի եւ Արտազի հաւանութեան դէպքում: Այդ տարածուած կարծիքը հիմնազուրկ է ու սխալ: 1114 թ. Արտազի աթոռ գոյութիւն չի ունեցել, իսկ Բջնին, XII դ. Հայոց եկեղեցու նուիրապետութեան առումով, աննշան մի վայր է եղել: Կաթողիկոսական ընտրութեան վերոյիշեալ կարգը, մեծ հաւանականութեամբ, հաստատուել է հէնց 1293 թ. խնդրոյ առարկայ ժողովում, որը գումարուել էր Հռոմկլայի անկումից յետոյ՝ կաթողիկոսական աթոռի համար նոր նստավայր որոշելու եւ նոր կաթողիկոսի ընտրութիւնը նախապատրաստելու նպատակով: Այս թիւրիմացութիւնը, ըստ երեւոյթին, ծագել է Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին Գրիգոր Գ

հետ բանակցելու նպատակով էր Հայաստան ուղարկուել Թովմաս եպիսկոպոսի գլխաւորած պատուիրակութիւնը, որը յանձնարարութիւն էր ստացել, առաջին հերթին, ներկայանալ Արտազի աթոռակալ տէր Տիրացուին[1]: Թագաւորն ու կաթողիկոսացուն, անձամբ ճանաչելով այդ եկեղեցականին, գիտէին հաւանաբար, որ նա լատինամէտ քաղաքականութեան համակիրներից է: Ուշագրաւ է եւ այն փաստը, որ հէնց այս տարիներին Հեթում թագաւորի պահանջով փորձ է կատարւում վերացնելու Աղթամարի կաթողիկոսութեան վրայ 1114 թ. դրուած բանադրանքը, նաեւ Վասպուրականի հայ մեծամեծների համակրանքը շահելու մտահոգութեամբ[2]:

1295 թ. աշնան ամիսներին մոնղոլական իլխանութիւնը փոթորկուել էր գահակալական արիւնահեղ կռիւներով: Իշխանութիւնը գրաւած Բայդուի դէմ գահի յաւակնորդ Ղազանը՝ Արղուն խանի որդին՝ ուղարկեց իր զօրահրամանատար Նովրուզին, որը Նախիջեւանում, 1295 թ. հոկտեմբերի 4-ին պարտութեան մատնեց ու սպանել տուեց Բայդուին[3]: Նովրուզ ամիրի եւ Սաղրաղդին Սահիպ դիւանի նախաձեռնութեամբ մոնղոլական զօրամասերը սկսեցին անլուր հալածանքներ քրիստոնեայ հպատակների նկատմամբ: Նախիջեւանի, Արտազի եւ Մարաղայի շրջաններում ոչնչացուեցին մեծ թուով եկեղեցիներ եւ «բազում վիշտս եւ անհնարին աղէտս հասուցին քրիստոնէից ընդ ամենայն տեղիս»[4]: Բարեբախտաբար այս խժդժութիւնները երկար չտեւեցին. Նովրուզը շուտով, իր մերձաւորների հետ միասին, կասկածուելով դաւաճանութեան մէջ՝ մահապատժի ենթարկուեց: Ղազան խանը, ընդառաջելով իրենց այցի եկած Հեթում Բ թագաւորին, հրաման արձակեց դադարեցնել բռնութիւններն ու աւերածութիւնները, այդ բանի մէջ մեղադրելով մահուան դատապարտուած Նովրուզին:

Արտազի Ս. Թադէի վանքը մեծապէս տուժեց Նովրուզի զօրքերից. Տիրացու եպիսկոպոսը անասելի տանջանքների ենթարկուեց ու կողոպտուեց: Ս. Օրբէլեանն այդ մասին գրում է. «Ըմբռնեցին եւ զեպիսկոպոսն Առաքելոց զտէր Տիրացուն, եւ ազգի ազգի անարգանօք ճաղեցին, եւ առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Թադդէոսի, քանդեցին զշինուածս տանցն, աւերեցին, կողոպտեցին եւ խայտառ կործանեցին»[5]: Նոյն դէպքերի մասին տեղեկութիւններ է գրանցել նաեւ մի յիշատակագիր. «Ի թւին ՉԽԶ (1297) էր աշխարհակալ Ղազանն, եւ եպիսկոպոս Սիւնեաց՝ Ստեփանոս Տարսայճի որդի, եւ եպիսկոպոս Թադէոսի առաքելոյ՝ Տիրացու, որ բազում նեղութիւնս կրեալ յանօրինաց, յա-

Պահլաւունի (Փոքր Վկայասէր) կաթողիկոսի (1113-1166) հետ շփոթելու հետեւանքով (Անաւարզեցին եւս, որ Գրիգոր Գ-ի նման «վկայասէր էր, յունական ու լատինական վարքերի թարգմանութիւններով ճոխացրել է հայկական Յայսմաւուրքը):

1 Յիշատակարանում այդ մասին գրուած է. «Եւ մեզ հրամայեալ ի թագաւորէն եւ ի սուրբ ժողովոյն յառաջագոյն գալ ի սուրբ առաքելոյն Թադէոսի, առ գերահռչակ եւ արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացու, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելոյ» (ՄՄ պատառիկ N 919):

2 Հեթում թագաւորին հասցէագրած իր մտերմական նամակի մէջ Գ. Անաւարզեցին գրում է. «Աղթամարն օրհնել ետուր» (Կ. Գալանոս, Միաբանութիւն..., Ա, 1690, էջ 439): Մ. Չամչեանը յայտնում է, որ Անաւարզեցին «բազում սէր եցոյց յայնմհետէ առ նոյն աթոռ» (Մ. Չամչեան, Գ, էջ 289), ուստի պէտք է կարծել, որ վասպուրականցիները այդ տարիներին իրօք նպաստել էին Հռոմի եկեղեցուն մերձենալու ծրագրերի իրականացմանը:

3 **А. А. Али-заде,** նշ. աշխ., էջ 280-282

4 **Ս. Օրբէլեան,** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 472-473. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. II, Երեւան, 1956, էջ 150

5 **Ս. Օրբէլեան,** էջ 473

ւերել տանց եւ շինուածոց վանից ի չարագլխէն Նաւռուզայ»[1]:

Սրանք են Տիրացու եպիսկոպոսի մասին պահպանուած ստոյգ վկայութիւնները:

Ս. Թադէի վանքի հարաւարեւմտեան սեան պատուանդանը շիրմաքարի դեր է կատարել նշանաւոր անձնաւորութեան աճիւնին. անցեալ դարավերջին այդ պատուանդանի վրայ կարդացուել է «Թւ. ՉԽԷ (այսինքն՝ 1298 թ.) այս է հանգիստ ///» եղծուած արձանագրութիւնը[2]: Կարծում ենք, որ այստեղ ամփոփուած են հէնց Տիրացուի մասունքները, ուստի նա իր մահկանացուն կնքել է Նովրուզի կողմից խոշտանգուելուց ընդամէնը 2-3 տարի յետոյ՝ 1298 թ.:

Տիրացու եպիսկոպոսին յաջորդել է անուանի եկեղեցական գործիչ, Արտազի հայկական իշխանութեան փաստական հիմնադիր Զաքարիա եպիսկոպոսը, որ յայտնի է պատմութեան մէջ Ծործորեցի մականունով: Սրա եռանդուն գործունէութեանն անդրադառնալուց առաջ պէտք է պարզել մի թիւրիմացութիւն:

Հեթում թագաւորին ուղղած իր նշանաւոր նամակի մէջ, որի գրութեան տարեթիւը ստոյգ որոշուած չէ, Գրիգոր Անաւարզեցի լատինամոլ կաթողիկոսը յիշատակում է Մեծ Հայքի նշանաւոր այն եկեղեցական գործիչներին, որոնց վերջին երեք տարիների ընթացքում տեղեակ է դարձրել (հաւկաւ՝ իր նուիրակների միջոցով) Կաթոլիկ եկեղեցու հետ մերձենալու նպատակով դաւանաբանական զիջումներ կատարելու իր ծրագրերի մասին: Նա գրում է. «Եւ յառաջ գայս աւելի զօր ի դէպ է, որ մեր հայերուն Արեւելցւոյ մեծերուն զիրքս գիտացուցել եմք եւ կեցուցել: Առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արքեպիսկոպոս, որպէս հոգեւոր իշխան զոլով, նոյնպէս եւ մարմնաւոր, եւ իւր ընգերացն ցուցաք զգիրքսն եւ հաստատեցաք այս տարի եւ յանցեալ տարին՝ տէր Յոհաննէսի Առաքելոց եպիսկոպոսի, եւ ի միւս այլ ամին Բջնեցուն եւ Վարագեցեաց»[3]:

Մ. Չամչեանի կարծիքով այս գրութիւնը շարադրուած պէտք է լինի 1294 թ.: Ըստ այդմ այստեղ Առաքելոց եպիսկոպոս կոչուած տէր Յովհաննէսը նոյնանալու է Տիրացու եպիսկոպոսի հետ[4]: 1294 թ., սակայն, անհաւանական է, քանի որ թղթի գրութեան ժամանակ Սիւնեաց եպիսկոպոս է յիշւում Յովհաննէս Օրբելը՝ 1303 թ. վախճանուած Ստեփանոս Օրբէլեանի յաջորդը: Ուստի ճիշտ պէտք է համարել Մ. Օրմանեանին, որ նամակի շարադրման ժամանակը յարմար է գտնում «դնել մինչեւ 1304 յետաձգել»[5]:

Այս դէպքում մնում է երկու ենթադրութիւն անել:

Գրիգոր Անաւարզեցին իր նամակի մեր կողմից վկայակոչուած հատուածում խօսում է

1 Երուսաղէմ, ձեռ. N 1428, էջ 168

2 **Խ[աչիկ] վ[արդապետ Դադեան],** Համառօտ նկարագիր Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադէոս առաքելոյ վանքի, «Արարատ», 1898, էջ 91

3 «Թուղթ տեառն Գրիգորի կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հեթում, հայր արքային հայոց Լեւոնի» խորագրով այս մեծարժէք գրութիւնն ամբողջապէս հրապարակուած է Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» աշխատութեան մէջ (տե՛ս հտ. առաջին, Հռոմ, 1650, էջ 441):

4 Բազմաթիւ են օրինակները, երբ որեւէ մականուն, յաճախ գործածուելով, բռնել է նշանաւոր պատմական դէմքերի անուանց տեղ: Յիշենք թէկուզ Յովհաննէս Սարկաւագին, որ միջնադարում յայտնի էր առաւել Սարկաւագ վարդապետ անունով, կամ էլ Յովհաննէս Վանականին, որը ճանաչուած էր որպէս Վանական վարդապետ: Յովհաննէս Տիրացու եպիսկոպոսն էլ վերոյիշեալների պէս կարող էր աւելի ծանօթ լինել իր Տիրացու մականունով:

5 **Մ. Օրմանեան,** § 1207, 1222

Սիւնիքի, ինչպէս նաեւ Բջնիի եպիսկոպոսների մասին, որոնցից մէկի միայն մականունն է նշում (Օրպել), իսկ միւսի անունն էլ չի տալիս: Յայտնի է, որ այդ երկու բարձրաստիճան եկեղեցականներն էլ Յովհաննէս են կոչուել[1]:

Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ նամակը շարադրելիս Անաւարզեցին, թերեւս, շփոթուել է ու գրչի վրիպումով Յովհաննէս անունը Բջնիի կամ Սիւնիքի եպիսկոպոսներին յատկացնելու փոխարէն, տուել է Առաքելոց աթոռի եպիսկոպոսին: Բացառուած չպէտք է համարել նաեւ այն վարկածը, որ Տիրացու եպիսկոպոսից յետոյ ու Զաքարիա Մործորեցուց առաջ Արտազի եպիսկոպոս է եղել իրօք ոմն Յովհաննէս. այդ դէպքում պէտք է արձանագրել, որ նա՝ շատ կարճ պաշտօնաւարելով՝ շօշափելի հետք չի թողել պատմութեան մէջ:

4. Պարոնտէր Զաքարիա Մործորեցին եւ իր գերդաստանը

Ժամանակակիցների կողմից «Էքսարխոս Հայոց» կոչուած[2] եւ գերագրական տիտղոսներով մեծարուած[3] Զաքարիա արքեպիսկոպոսը որդին էր պարոն Մանուէլի: Այս իշխանաւորի մասին սկզբնաղբիւրները ժլատ են, անտարակոյս նա եղել է Տիրացու եպիսկոպոսի մերձաւոր ազգականներից մէկը (հաւանաբար եղբայրը), եւ մեծ դեր կատարել Արտազի հայկական իշխանութեան տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու գործում: Սիւնեաց մետրոպոլիտ Յովհան-Օրբէլը Զաքարիային հասցէագրած իր մի նամակում գրում է. «Դու գիտես, որ մեր հայրքն ամենեքին մի էին լեալ ըստ մարմնոյ բարեկամութեան եւ հոգեւորի»[4]: Ուշագրաւ այս տողերն իրաւունք են տալիս եզրակացնելու, որ նամակի գրութիւնից առնուազն մի քանի տասնամեակ առաջ (շուրջ XIII դ. 70-80-ական թթ.) Առաքելոց աթոռին եպիսկոպոսներ պարգեւող գերդաստանը ամրապնդել էր աւատատիրական իր իրաւունքներն Արտազի շրջանում, եւ «ըստ մարմնոյ» ազգակցական կապեր հաստատել Սիւնեաց Օրբէլեանների հետ:

Պարոն Մանուէլը, Զաքարիայից բացի, ունեցել է եւս չորս որդի՝ Պետրոս, Սարգիս, Խութլուբուղա եւ Արղութ (վերջին անուան վերծանութիւնը կասկածելի է): 1315 թ. Ս. Թադէի վանքում շարադրուած մի յիշատակարանում գրիչ Ոստակէսը, որպէս Արտազի շրջանի հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդներ յիշատակում է ե՛ւ Զաքարիա եպիսկոպոսի, ե՛ւ նրա եղբայր պարոն Պետրոսի անունները՝ այսպէս. «...յառաջնորդութեան այսմ նահանգիս աստուածախնամ Արտազ գաւառիս սուրբ եւ առաքելաշնորհ արհիական գլխոյն, տիեզերալոյս եւ աշխարհածաւալ, բարիախորհ եւ վերադիտող, պարիսպ ամրութեան հանուրց եկեղեցեաց եւ բերդ հաստատուն քահանայից եւ ամենայն քրիստոնէից տէր Զաքարիայի, եւ պարոն եղբաւր նորին Պետրոսի, եւ զաւակաց սորին»[1]:

1 Յովհաննէս-Օրբէլի մասին տե՛ս մեր «Սիւնեաց Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղը» յօդուածը («Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 190), իսկ Բջնիի եպիսկոպոս տէր Յովհաննէսը յիշատակուած է 1302 թ. որպէս «տէր Յովհաննէս, որ ունէր զվերատեսութիւն այցելականն դիտման քահանայականն դասու կատարելապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի» («ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Երեւան, 1950, էջ 5):

2 Այսպէս է կոչուած նա Յովհան-Օրբէլի կողմից: «"Εξαρχος յոյն եկեղեցւոյ մէջ կը նշանակէր պատիւ մ'ընդ մէջ պատրիարքութեան եւ մետրապոլտութեան» (Վ. Հացունի, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 309):

3 Իր կուսակիցները նրան մեծարում են «լուսաւորիչ տանս Արեւելեան», «ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի» եւ բազմաթիւ նման արտայայտութիւններով, որոնց կհանդիպենք յետագայ էջերում:

4 Այս նամակին անդրադառնալու ենք ստորեւ:

Զաքարիա եպիսկոպոսն ու պարոն Պետրոսը, ձեռքում կենտրոնացրած լինելով Արտազի շրջանի հոգեւոր ու աշխարհիկ իշխանութիւնը[2], եռանդուն գործունէութիւն են ծաւալում իրենց գերդաստանի տնտեսական եւ քաղաքական դիրքերն ամրապնդելու ուղղութեամբ:

Նիւթական մեծ միջոցներ ծախսելով, նրանք պաշտպանական կառոյցներով ամրապնդում են իրենց գերդաստանի նստավայրը՝ Մակուի բերդը, կարգի են բերում միջազգային նշանակութիւն ունեցող կարաւանային ճանապարհի իրենց իշխանութեան սահմաններով անցնող հատուածը, կառուցում փառայեղ կամուրջներ (տե՛ս նկար 1) եւ այլ շինութիւններ, հիմնադրում վանական նոր հաստատութիւններ եւ այլն: Ժամանակակից հայ եւ օտարազգի սկզբնաղբիւրներում կան արժէքաւոր վկայութիւններ Զաքարիայի եւ նրա եղբայրների գործունէութեան այս կողմը լուսաբանելու համար:

Մակուի անառիկ բերդի դիրքն ու պաշտպանական ամրութիւնները զարմանք են պատճառել շատերին: Նշանաւոր պատմագիր Համդուլլա Ղազուինին (ծն. 1281 թ.), «Նուզհաթ-ուլ-կուլաբ» (Սրտերի վայելք) պատմա-աշխարհագրական աշխատութեան մէջ, որ շարադրուած է Արտազի հայկական իշխանութեան ծաղկման ժամանակաշրջանում, յայտնում է, որ «Մակուն բերդ է մի քարաժայռի ճեղքուածքում եւ մի գիւղ այդ բերդի ստորոտում, այնպէս որ այդ լեռը մինչեւ օրուայ կէսն այդ գիւղն իր ստուերի տակ է պահում. եւ «մահրասիան», որ քրիստոնեայ հոգեւորականների (քեշիշների) մեծն է՝ այդտեղ է բնակւում»[3]: Խիստ ուշագրաւ է, որ պաշտօնական շրջաններում, որոնց ներկայացուցիչն էր Ղազուինին, Մակուի հոգեւոր առաջնորդ «մահրասիան», այսինքն՝ Զաքարիա եպիսկոպոսը, ճանաչուած էր որպէս հայ հոգեւորականութեան պարագլուխ:

1 ՄՄ ձեռ. N 3778, էջ 464ա-464բ (տե՛ս նաեւ **Լ. Խաչիկեան**, ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 114-115. **Ն. Մառ**, Ցուցակ ձեռագրաց վանուց Սեւանայ, Մոսկուա, էջ 20-21):

2 Շրջանի աշխարհագրական սահմանները ճշգրիտ որոշելու տուեալներ չկան: Մակուի խանութիւնը, որ ստեղծուել է XVII դ. Արտազի հայկական իշխանութեան տարածքի վրայ, վարչականօրէն բաժանուած է եղել հետեւեալ 18 մահալների. Կալա-Դարասի (Բերդադաշտ), Աւաջուղ, Կարա-կոյուն, Չայփարա, Չայ-բասար, Բաբաջուղ, Ալանդ, Ջալալինեան եւ Միլանեան իրտեր, Քաջլարատ (Քջո"տ - Լ. Խ.), Արազ-քանարի, Չալդրան, Սոկմանաբադ, Թամաշ"ալար, Դոշ-քանդլարը, Խոշաբ, Շարուր եւ Մուշ (տե՛ս **Н. И. Исхаги**, Исторический очерк макинского ханства, автореферат, Баку, 1966, էջ 16): Սրանց մէջ կենտրոնական դիրք էր գրաւել Բերդադաշտը: Արտազի հայկական յուշարձանների վրայ դեռեւս պահպանուած արձանագրութիւնների յետագայ ուսումնասիրութեան ճանապարհով թերեւս երեւան բերուեն նոր տուեալներ հայկական իշխանութեան ծայրային սահմանները որոշելու: Պէտք է ենթադրել, որ դրանք (այդ սահմանները) XIII-XIV դդ. ընթացքում կայուն չեն եղել: Հակուած ենք ենթադրելու, որ Լանկ-Թամուրի արշաւանքների շրջանում հայ աւատատէրերի իշխանութիւնը պարփակուած էր Բերդադաշտի տարածքով, ուր կային շուրջ երեք տասնեակ գիւղեր: Լանկ-Թամուրը, երկրորդ անգամ յայտնուելով այդ կողմերում եւ իշխանազուն Սորղաթմիշին պատանդ վերցնելով, պարտադրել է Նուրադին իշխանին ըստ հարկի Թամուրեանների տրամադրութեան տակ դնել 20 այրուձի: Մակուի ողջ շրջանի համար այդ թիւը փոքր է: Յայտնի է, որ Մակուի խանը XIX դ. կէսերին պարտաւորուած է եղել պատերազմ դուրս բերել «հարիւր այրուձի եւ մի վաշտ հետի[ոտն] զինուորներ» (**Ա. Թոխմախեան**, Մասիս լեռների հարաւային ստորոտներ, մաս Բ, Թիֆլիս, 1882, էջ 6):

3 **Համդուլլա Ղազուինի**, Նուզհաթ-ուլ-կուլաբ, քննական բնագիր, Թեհրան, 1336 (1958), էջ 102: Այս տեղեկութիւնը շնորհակալութեամբ ստացել ենք իրանագէտ Ց. Փափազեանից:



Նկ. 1. Մակուի կամուրջը

Մակուի բերդի մասին շատ աւելի մանրամասն ու հետաքրքրական տեղեկութիւններ է գրանցել Ռուի Գոնսալես դէ Կլաւիխոն՝ Սպանիայի Հենրիկոս Գ թագաւորի դեսպանը, որ XV դ. սկզբներին, Լանկ-Թամուրի արքունիք մեկնելու ճանապարհին, հիւրընկալուել է այստեղ եւ գրի անցկացրել իր տպաւորութիւնները. «Ամրոցը,- գրում է նա Մակուի մասին,- կանգնած է բարձր լեռան ստորոտում գտնուող հովտի մի անկիւնում, իսկ քաղաքը կառուցուած է աւելի բարձր՝ նրա լանջին. Հէնց քաղաքից ներքեւ, նոյն այդ լանջի վրայ բարձրանում է ամուր պարիսպը՝ ներքին աշտարակներով: Այդ պարսպից այն կողմ կային տներ, ուր մարդիկ էին բնակւում, իսկ նրանցից անդին՝ նոյնպէս ապրում էին մարդիկ եւ լանջը շարունակւում էր աւելի վեր: Այստեղ այժմ կառուցուած է մի այլ պարիսպ՝ աշտարակներով եւ բարձր մարտկոցներով, որ երկարում է ու միանում առաջին պարսպին: Այս երկրորդ պարսպի մուտքը ժայռի մէջ փորուած սանդուղներով էր, իսկ մուտքի վրայ ի պաշտպանութիւն նրա կար մի մեծ աշտարակ: Այդ երկրորդ պարսպից այն կողմ, ժայռի վրայ տներ էին կառուցուած, որոնց միջամասերում՝ աշտարակներ, ինչպէս եւ տներ, ուր իշխանն էր բնակւում, եւ այստեղ էին պահում բնակիչներն իրենց բոլոր պաշարները: Քարաժայռը, որի վրայ կառուցուած էին այդ տները, շարունակւում էր շատ աւելի վեր, քան տներն ու պարիսպներն էին: Եւ ժայռի բարձունքները կարկառի նման ծածկում են ամրոցը, պարիսպներն ու տները, թեքուած լինելով նրանց վրայ երկնքի նման: Երբ անձրեւ է տեղում, ջուրն երկնքից չի հասնում ամրոցին, որովհետեւ քարաժայռերն ամբողջովին ծածկում են այն. այսպիսով ամրոցը կառուցուած է այնպէս, որ նրա վրայ կարելի չէ յարձակուել ոչ ցամաքից, ոչ էլ նոյնիսկ երկնքից»[1]:

Ուշագրաւ է նաեւ Մակուի բերդի Էվլիեա Չելեպիի (XVII դ.) նկարագրութիւնը. ըստ նրա՝ բերդը «կառուցուած է բարձր եւ սեպ ժայռի մը վրայ, պատուանդանը նեղ եւ բարակ է եւ կաշտարակէ դէպի երկինք, ամէն կողմէ անառիկ ըլլալով: Միայն մէկ դուռ կայ, որուն վրայ կրնաս բարձրանալ ժայռին մէջ փորուած մինարէի նման փոքր սանդուխով: Շարժական կամուրջը, որ գետին վրայէն կ'երկարի դէպի բերդը, ամէն երեկոյ կը բարձրացուի, եւ այդպէս բերդը բոլորովին կ'առանձնանայ»[1]:

1 **Рюи Гонзалес де Клавихо,** Дневник путешествия к двору Тимура в Самарканд, в 1403-1406 гг., пер. И. И. Срезневского. СПб., 1881, էջ 158-162: Հմմտ. **Յ. Յակոբեան,** Ուղեգրութիւններ, հտ. Ա, ԺԳ-ԺԶ դդ., Երեւան, 1932, էջ 113-116 (այս թարգմանութիւնը անփոյթ է կատարուած):

Արտազի հայ իշխանները մէկ դարից աւելի, ապաւինելով բերդի ամրութիւններին եւ հմտօրէն կազմակերպելով պաշտպանութիւնը, դիմագրաւեցին մէկը միւսին յաջորդող նուաճողներին, հակահարուած տալով նոյնիսկ Լանկ-Թամուրի անյաղթահարելի զօրաբանակներին[2]:

Զաքարիա եպիսկոպոսի եւ նրա պայազատ եղբայրների համատեղ ջանքերը, ինչպէս նշեցինք վերը, նշանակալից եղան Արտազի շրջանով անցնող ճանապարհների բարեկարգման գործում: Անցեալ դարի 80-ական թթ. գրանցուած տեղեկութիւնների համաձայն Մակու գետի վրայ Զաքարիան ու պարոն Պետրոսը սրբատաշ քարերով կառուցել են չորս կամարապատ կամուրջներ, որոնց վրայ կարդացուել են 1318-1328 թթ. արձանագրութիւններ[3]: Այդ կամուրջներից միայն մէկի մասին ունենք բաւարար տեղեկութիւններ. կառուցուած է Մակուից 2 կմ հեռաւորութեան վրայ. ունեցել է 7 փառայեղ կամարներ, որոնցից պահպանուել են կենտրոնի մեծ-կիսակոր կամարը եւ մէկ կողմի 3 գմբէթաձեւ կամարները (տե՛ս լուսանկարը): Կառուցողական ընդարձակ արձանագրութիւնը (տե՛ս նկար 2), որի բնագիրը յայտնի դարձաւ բանասիրութեանը միայն վերջերս, լրացուցիչ տեղեկութիւններ է պարունակում Արտազի իշխանական գերդաստանի պայազատների, մասնաւորապէս պարոն Պետրոսի եւ նրա հարազատների մասին: Պարզւում է, որ նա ունեցել է Սանասար եւ Մանկասար անունով որդիներ. արձանագրութեան մէջ յիշատակուած են նրա տիկինը, (Թամսի կամ Թամթի անունով) եւ 4 եղբայրները՝ Զաքարիան, Սարգիսը, Խութլուբուղան եւ Արղութը[4]:

1 **Հ. Մ. Յովհաննէսեան,** Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 312 (թրգմ. Հ. Քիւրդեանի): Մակուի բերդի մասին հետաքրքրական տեղեկութիւններ կան նաեւ հայ ուղեգիրների եւ տեղագիրների աշխատութիւններում (տե՛ս, օրինակ, **Ե. Ֆրանգեան,** Ատրպատական, Թիֆլիս, էջ 13-14):

2 Բնական եւ արհեստական հզօր ամրութիւններով պաշտպանուած այս բերդը, որ միջնադարեան հայկական ռազմավարական արհեստի մի փայլուն կոթող է եղել, քարուքանդ աւերուել է 1642 թ. Շահ-Աբբաս Բ-ի հրամանով, 3 տարի դրանից առաջ Թուրքիայի եւ Պարսկաստանի միջեւ կնքուած հաշտութեան պայմանագրի թելադրութեամբ: Այդ մասին լեռան վրայ փորագրուած է պարսկերէն չափածոյ մի արձանագրութիւն, որ մէջ է բերել ու թարգմանել Վ. Մինորսկին իր "Древности Маку, путевые заметки" (Петроград, 1916) աշխատութեան մէջ: Արձանագրութեան առաջին տողը՝ «ին ղալէ ղաբան բուդ» Մինորսկին թարգմանել է այսպէս. "эта крепость, бывшая крепостью вепря", «ղաբան» բառը վերծանելով որպէս «կաբան» (վայրի խոզ): Այս թարգմանութիւնը անհամոզիչ է. ըստ երեւոյթին այդ բառը հայերէն «կապան» բառն է, որ նշանակում է «կիրճ, որի ամենանեղ տեղում ամուր դուռ է շինած՝ ճանապարհն ըստ կամի կապելու կամ բանալու համար» (**Ս. Մալխասեանց,** Հայերէն բացատրական բառարան, հտ. երկրորդ, Երեւան, 1944, էջ 239): Մակուի բերդը իրօք մի կապան էր, ընկած ռազմական կարեւոր նշանակութիւն ունեցող ճանապարհի վրայ եւ պաշտպանուած հզօր ամրութիւններով:

3 **Ա. Թոխմախեան,** Մասիս լեռների հարաւային ստորոտները, Թիֆլիս, 1882, էջ 56: Հեղինակը յայտնում է, որ այդ արձանագրութիւնները փորագրուած են «Հայոց 967-968 թուականներին»՝ հաստատապէս շփոթելով Չ (700) եւ Ջ (900) թուանշանները: Այդ կամուրջները, անտարակոյս, կառուցուած պէտք է լինեն ՉԿԷ (767=1318)-ՉՀԷ (777=1328) թթ. (Չ եւ Ջ թուերի շփոթութեան բազմաթիւ օրինակներ կան մեր բանասիրական գրականութեան մէջ):

4 **Լ. Գ. Մինասեան,** Հնադարեան մի կամուրջ Ատրպատականում («Հանդէս ամսօրեայ», 1968, 4-6, էջ 243-246): Արձանագրութիւնը սկզբից թերի է, պակասում են առնուազն կառուցման թուականը եւ «զառաջնորդութեան» կամ «ի վերադիտողութեան» բառը. պահպանուած մասը վերծանւում է այսպէս. «[Ի թվ. /// յառաջնորդութեան»] Ս. աթոռոյս Թադէոսի տէր Զաքարոյ, ես Պետրոս որդի պրն Մանուէլայ շին[եցի] էջս զայս ի հալալ արդեանց իմոց. յիշատակ ծնողաց իմոց եւ ամուսնոյ իմոյ Թամսէ, եւ եղբարց իմոց Սարգիս, եւ Խութլուբուղին եւ Արղութի (այս անուան վերծանութիւնը կասկածելի է), եւ որդոց իմոց Սանասարին եւ Մանկասարին, զոր տէր աստուած վայելել տացէ մինչեւ ի կատարած աշխարհի. շինողքն եւ աշխատողքն յիշեալ եղիցին, ամէն: ՋԱկոբ վդպետս (իմա՛ վարդպետս, այսինքն՝ կառուցող վարպետը - Լ. Խ.) յաղաւթս յիշեցէք»:

Նկ. 2. Մակուի կամրջի արձանագրութիւնը:

Կամուրջներից բացի, նշանաւոր է եղել նաեւ Կապի կոչուող կիրճը, որ Ս. Թադէի վանքի եւ Մակուի միջնամասում բացել է Զաքարիա եպիսկոպոսը՝ «Թուանքչի լեռան շխթայաձայ-ռը պատռելով». ճանապարհաշինական այս վիթխարի աշխատանքի մասին հանդիպակաց ժայռի վրայ փորագրուած է արձանագրութիւն, որից վերծանուել են ՉԿԷ (1318) թուականը եւ «իշխանութեամբ տէր Զաքարին» բառերը[1]:

Զաքարիա եպիսկոպոսի գործունէութիւնն արգասաւոր է եղել նաեւ վանական հաստա-տութիւնների կառուցման ու վերաշինման ասպարէզներում: Նրա անուան հետ է առնչւում, յատկապէս, Ծործորի վանքի հիմնադրումը, որն աւարտուած պէտք է լինի 1314 թ. մի քանի տարի առաջ: Նորակառոյց այս վանքի անունով Ծործորեցի մականունը ստացած Զաքարիա եպիսկոպոսը, իր կուսակից, անուանի մատենագիր Յովհան Ծործորեցու համագործակցու-թեամբ, այստեղ բարձրագոյն դպրոց է բացել եւ նիւթական պայմաններ ստեղծել գիտա-մանկավարժական աշխատանքների ծաւալման համար[2]:

1319 թ. կենտրոնական Հայաստանում երկրաշարժ է լինում, տուժում է յատկապէս Արտազի շրջանը: Մի ժամանակագիր այդ մասին գրում է. «Ի ՉԿԷ (1319) թուին եղեւ շարժ յա-

Ստանալով պր. Մինասեանից այս արձանագրութեան լուսանկարը (որի համար յայտնում ենք մեր շնորհակալու-թիւնը), ճշգրտել ենք «Հանդէս ամսօրեայում» տպագրուած վերծանութիւնը:

1 Ս. Հայկունի, Պարսկահայք (թղթակցութիւն), «Արարատ», 1896, էջ 587-588: Վերոյիշեալ կամուրջների եւ այս կիրճի արձանագրութիւնները, ինչպէս նաեւ Մակուի շրջանի հայկական միւս յուշարձանները արժանի են աւելի հանգամանալից ուսումնասիրութեան: Այժմ, երբ Ս. Թադէի վանքը վերանորոգուել ու դարձել է իրանահայերի սիրուած ուխտատեղին, աւելի լայն հնարաւորութիւններ են ստեղծուել պատմական Արտազի հնագիտական արժէք ներկայացնող յուշարձանների գիտական ուսումնասիրութեան համար: Համոզուած ենք, որ տեւական աշխատանքով վանքերի ու եկեղեցիների կիսակործան պատերի ու տապանաքարերի վրայից հնարաւոր կլինի վերծանել անձկատ մնացած բազմաթիւ արձանագրութիւններ, որոնք նոր լոյս կսփռեն Արտազի պատմութեան եւ այդ երկրամասի հայ տէրերի գործունէութեան վրայ:

2 Ծործորի վանքի հիմնադրման հանգամանքներին եւ այստեղ ստեղծուած բարձրագոյն դպրոցի գործունէութեանը հանգամանօրէն անդրադառնալու ենք վերջում՝ յատուկ պարբերութեամբ:

րեւելս և զԹադէոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց, եւ զտունս փլոյց եւ ՀԵ (75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ վանքն տէր Զաքարէ»[1]: Շինարարական այդ մեծ աշխատանքներն աւարտուել են երկրաշարժից տասը տարի յետոյ՝ 1329 թ., ու պսակուել Զաքարիա եպիսկոպոսի եւ նրա մերձաւորների մասին կարեւոր տեղեկու-թիւններ պարունակող մի արձանագրութեամբ (տաճարի եւ արձանագրութեան լուսանկարնե-րը տե՛ս նկ. 3 եւ նկ. 4): Արձանագրութիւնը փորագրուած է վանքի հիւսիսային որմի վրայ, երկաթագիր խոշոր տառերով եւ վերծանւում է այսպէս.

«Այս տաճար լուսակերտ եւ երկնանման առկայացեալ հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ առաքելոյս Թադէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էառ ի շարժէ: Իսկ ես նուաստ սպասաւոր նմին Զաքարիայ եպիսկոպոս, որդի պարոն Մանվէլայ, կարողութեամբն Աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն, ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ եւ բազում եկեղեցիք քակտին, վասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն եւ անարիւն զենման զաւրինն Աստուծոյ հանդերձ ծնողօք եւ զարմիւք, եւ կաջորդն մեր աղբաւր որդին զտէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբայրս մեր զՊետրոս եւ զՍարգիս, որք ըստ կարողութեան նպաստաւորք եղեն ընչիւք: Կատարումն թվ. ՉՀԸ (1329)»[2]:

Վանքի շրջափակում, անշուշտ, կառուցուած են եղել նաեւ կացարաններ եւ տնտեսական նշանակութիւն ունեցող օժանդակ այլ շինութիւններ. XVII դ. տեղեկութիւն է պահպանուել Կառնուտի կոչուող ջրմուղի մասին, որ «յառաջ ժամանակս բերեալ էր Զաքարիա եպիսկո-պոսն՝ պարոն Էմանուէլի որդին»[3]:

Բերդերի, վանական հաստատութիւնների, ճանապարհների, կամուրջների եւ այլ շինու-թիւնների[4] կառուցման մեծածախ աշխատանքներն ի կատար ածելու համար, մանաւանդ քրիստոնեաների նկատմամբ ծաւալուած հալածանքների տարիներին, պէտք էր ունենալ մեծ

1 Սամուէլ քահանայ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 157

2 Ձեռքի տակ ունենք այս արձանագրութեան յաջող լուսանկարը (տե՛ս նկար 4) եւ տարբեր անձանց կողմից կատարուած հետեւեալ չորս վերծանումները՝ 1. ՄՄ ձեռ. N 340, էջ 122բ-123ա. 2. **Յ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842. 3. **Խ. Վ. Դադեան**, Շաւարշան-Արտազ գաւառի Ս. Թադէոս առաքելոյ վանքը («Արարատ», 1898, էջ 89). 4. **Լ. Մինասեան**, Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 12 (արձանագրութիւնը տպագրուած է նաեւ ուրիշների կողմից):

3 1679 թ. մի յիշատակարանում Թադէոս առաքեալի վանքի վանահայր Իսահակ վարդապետ Մակուեցին յայտնում է, որ «քակտեալ եւ աւերեալ» այդ ջրմուղը «կրկին նորոգեցաւ եւ յորդաբուխ աղբիւրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս եւ գեղջս» (ՄՄ ձեռ. N 808, էջ 489ա, նաեւ՝ **Գ. Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պռօշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ հրատ., Անթիլիաս, 1969, էջ 283):

4 Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպէս նաեւ նրանցից առաջ ու յետոյ, Մակուի շրջանում ստեղծուած աշխարհիկ եւ հոգեւոր շինութիւնների մեծաքանակ լինելու մասին վկայութիւններ կան հայ եւ օտարազգի ուղեգիրների աշխատութիւններում: Ա. Թոխմախեանն, օրինակ, ասում է, որ «Մակուայ, Աւաջուղի, Գարայնի բոլոր թաթարաբնակ գյուղերումը եկեղեցիներ կան, բոլորն էլ աւերուած: Լեռներում, գետերի ափերին կառուցած են վանքեր, մատուռներ: Իսկ խաչարձաններ, խաչեր այնքան բազմաթիւ են, որոնք թէեւ թաթարները անհետացնելու մտօք խորտակում, փշրում են, բայց եթէ մինչեւ յաւիտեան էլ շարունակէին, հայոց քրիստոնէական կնիքը այդ աշխարհի վրայից չէին կարող եղծել» («Մասիս լեռների հիւսիսային ստորոտները», էջ 52):

Նշանաւոր արեւելագէտ Վ. Մինորսկին Մակուի շրջանի տարբեր վայրերում տեսել ու նկարագրել է մի քանի հայկական վանքեր ու եկեղեցիներ, յիշատակել, որ Մակուի բերդաժայռի վրայ փորագրուած են խաչեր ու արձանագրութիւններ եւ այլն:

Հեղինակութիւն՝ իշխանութեան բարձրաստիճան պաշտօնէութեան շրջանում եւ նիւթական լայն հնարաւորութիւններ: Արտազի եպիսկոպոսն ու նրա եղբայրները օժտուած էին ե՛ւ մեկով, ե՛ւ միւսով:

Արտազի հայ աւատատէրերի գերդաստանի մասին ժամանակակից սկզբնաղբիւրներում կան նաեւ ակնարկներ: Նշանաւոր մատենագիր Յովհան Որոտնեցին, օրինակ, իր քարոզներից մէկի ընծայական-վերջաբանում, մեծարանքի խօսքեր շռայլելով Զաքարիա եպիսկոպոսի հասցէին, անդրադառնում է նաեւ նրա մերձաւորներին՝ գրելով. «Եւ որք ընդ սովաւ կարգեալ են իշխանութիւնք եւ ի զարմից սորին շառաւիղեալք բարեպաշտ պարոնայք, զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա»[1]:

Այս տողերով եւս աներկբայելի է դառնում Զաքարիա եպիսկոպոսի դերը Արտազի հայ աւատատէրերի ընտանիքում. նրանց քաղաքական կշիռն ու տնտեսական բարգաւաճ վիճակը խարսխուած էր Առաքելոց աթոռի հեղինակութեան եւ Հայաստանեայց եկեղեցու կազմակերպութեան մէջ նրա գրաւած դիրքի վրայ: Նկատի առնելով հէնց այս հանգամանքը, ստորեւ վերլուծում ենք կարեւոր այն տուեալները, որոնք լոյս են սփռում XIV դ. առաջին տասնամեակներին Հայ եկեղեցու պառակտեալ վիճակի եւ Կիլիկիայի ու կենտրոնական Հայաստանի հոգեւոր եւ աշխարհիկ պետերի քաղաքական ու գաղափարաբանական հակադիր դիրքորոշման վրայ, բացայայտելով մասնաւորապէս Արտազի աթոռի եւ նրա իշխանազուն եպիսկոպոսի դիրքն ու դերը այդ լարուած պայքարում:

5. Արտազի աթոռը դաւանաբանական պայքարի յորձանքում

Կիլիկեան Հայաստանի բարձրաստիճան հոգեւորականութեան ամենաազդեցիկ ներկայացուցիչները՝ յանձինս Գրիգոր Անաւարզեցի (1293-1307) եւ Կոստանդին Կեսարացի (1307-1322) կաթողիկոսների, Կաթոլիկ եկեղեցու գերիշխանութիւնն ընդունելը նախապայման էին համարում Հայկական թագաւորութեան գոյութիւնը պահպանելու համար անհրաժեշտ նկատուող եւ եւրոպական խաչակիր երկրների կողմից շարունակ խոստացուող ռազմական օգնութիւնն ստանալու: Եկեղեցու վեհապետերը, կուսակից ունենալով Կիլիկիայի հայ աւատատէրերի գերակշիռ մասին, եռանդուն քայլերի էին դիմում իրենց քաղաքականութեան դէմ ե՛ւ Կիլիկիայում, եւ, մանաւանդ, Մեծ Հայքում կազմակերպուած հուժկու դիմադրութիւնը յաղթահարելու համար: Դաւանաբանական շղարշի տակ կատաղի պայքար էր մղւում հայ ժողովրդի քաղաքական բաղձանքների իրականացման երկու հակադիր ուղիների վրայ կանգնած ու սոցիալ-քաղաքական տարբեր դիրքորոշում ունեցող խմբակցութիւնների միջեւ: Եւ եթէ արքայանիստ Սիս քաղաքում կայեան գտած Հայոց կաթողիկոսները՝ լատինասէր քաղաքականութեան ջատագովներն էին, ազգային եկեղեցու աւանդոյթներին հաւատարիմ կուսակցութեան պարագլուխները՝ Սիւնեաց եպիսկոպոսներն էին. սրանք, որ սիրում էին պճնուել «պռոտոֆրոնդէս Հայոց Մեծաց եւ մետրոպոլիտ Սիսական նահանգի» բարձրագոչ տիտղոսներով, յենւում էին Սիւնեաց Օրբէլեանների եւ Հայաստանի աշխարհիկ ու հոգեւոր միւս աւատատէրերի միասնական ուժի վրայ, որոնք, գիտակցելով հեռաւոր Եւրոպայից օգնութիւն ակնկալելու անիրական լինելը, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը մայր հայրենիք տեղափոխելու ծրագրեր էին մշակում, գտնելով, որ դարերով սրբագործուած ազգային աւանդութիւններն

1 Երուսաղէմի մատենադարան, ձեռ. N 1003, էջ 68

իրենին՝ գաղափարական հզօր ազդակ են ժողովրդի ինքնագիտակցութեան եւ գոյատեւման համար: «Հաւան եմք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ոչ ընդ հռոմոց յերկինս ելանել», այս էր նրանց կարգախօսը, որ այնքան գեղեցիկ ու դիպուկ ձեւակերպել էր Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը:

Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը, ընթանալով իր նախորդ Տիրացու եպիսկոպոսի նախագծած ուղիով, Հռոմէական եկեղեցուն մերձենալու քաղաքականութեան ջերմ կողմնակիցն ու ջատագովն էր Մեծ Հայքում. «Տէրս Զաքարիա զինքն նուաստ եւ հնազանդ ունի եւ հրամանակատար յաջորդին Պետրոսի» (այսինքն՝ Հռոմի պապին),- այսպէս է գրում նրա մասին իր կուսակիցներից մէկը[1]:

Այս հաստատւում է ժամանակակիցների բազմաթիւ վկայութիւններով. Ֆրանցիսկեան միաբանութեան անդամ դարձած մի հայ կրօնաւոր՝ Դանիէլ Թաւրիզեցին, լատիներէն լեզուով շարադրած դաւանաբանական իր գրուածքի մէջ յայտնում է, որ «Հռոմէական եկեղեցու հետ միաւորուած ժամանակակից հայերը ընդունում են Սուրբ Հոգու բխումն ինչպէս Հօրից, այնպէս էլ Որդուց. ես համոզուած եմ, որ այդ հէնց այդպէս է, քանի որ անձամբ տեսել եմ մի քանիսի, այսինքն՝ տէր Թագաւորի, տէր կաթողիկոսի եւ Մեծ Հայքում տէր Զաքարիայի, ինչպէս եւ Հռոմի եկեղեցու հետ միաւորուած մի քանի այլ անձանց մօտ»[2]:

Հայ եկեղեցու առաքելական հիմնադրութեան մասին գոյութիւն ունեցող աւանդութիւնների, կաթոլիկութեանը յարած հայերի եւ մասնաւորապէս՝ Զաքարիա եպիսկոպոսի մասին խիստ ուշագրաւ տեղեկութիւններ է գրանցել դոմինիկեան կրօնաւոր Ժուրդեն դէ Սեւերակը, որ Հնդկաստան ուղեւորուելու ճանապարհին՝ 1320 թ. ձմռանը եղել էր Հայաստանում: Նրա ուղեգրութեան Արտազի շրջանին եւ Ս. Թադէի վանքին վերաբերող հատուածը մէջ ենք բերում ստորեւ ամբողջութեամբ, չնայած այն պարունակում է նաեւ մեր նիւթին անմիջապէս չառնչուող տեղիներ. «[Արարատ] լեռան վրայ,- գրում է նա,- կանգնած է մի տուն, որն ինչպէս պատմում են, կառուցել է ինքը՝ Նոյը, իր տապանը թողնելուց յետոյ: Ասում են նաեւ, որ լեռան վրայ ինչ-որ տեղ պահպանուել է Նոյի տնկած խաղողի որթը, որի գինուց Նոյն արբեց: Իսկ Նոյի որթատունկի հատիկներն այնքան հսկայական են, որ մարդիկ իրենց աչքին չեն հաւատում: Այս բոլորի մասին ես իմացա մեր մի կաթողիկ արքեպիսկոպոսից՝ մեծ եւ ուժեղ վեհապետից: Նա իշխում է այս կողմերում եւ ըստ ամենայնի արժանի է վստահութեան[3]: Իսկ ես, չնայած եղել եմ այստեղ (հաւատացէք իմ խօսքերին), բայց ոչ ամռանը, այլ ձմռանը:

Այս Մեծ Հայքը շատ է տառապել. այստեղ նահատակութեամբ իրենց վախճանն են գտել երեք առաքեալներ՝ Բարթուղիմէոսը, Սիմէոնն ու Յուդան[4]: Ես տեսել եմ այն զնդանը, ուր

1 Երուսաղէմի մատենադարան, ձեռ. N 789, էջ 149

2 Տե՛ս Դանիէլ Թաւրիզեցու «Հայերին վերագրուած մոլորութիւնների կապակցութեամբ եղբայր Դանիէլի պատասխանը» խորագրով լատիներէն աշխատութիւնը՝ հետեւեալ հրատարկութեան մէջ. "Recueil des historiens des Croisades. Documents arméniens", t. II, Paris, 1906, էջ 561:

3 Ինչպէս կտեսնենք ստորեւ, խօսքը Զաքարիա Որոտնեցու մասին է, ուստի Ժուրդեն դէ Սեւերակի գրանցած տեղեկութիւնների սկզբնաղբիւրը նա է՝ Առաքելոց աթոռի եպիսկոպոսը:

4 Բարթուղիմէոսը համարւում է Քրիստոսի 12 աշակերտներից մէկը, որ ըստ աւանդութեան քարոզել է Խորասանում, Պարսկաստանում եւ Հնդկաստանում, բայց ի վերջոյ հաստատուել է Հայաստանում ու նահատակուել Սանատրուկ թագաւորի կողմից: Սիմոնը կամ Շմաւոնը նոյնպէս 12 առաքելական առաքեալներից է համարւում. քարոզել է, իբր, Եգիպտոսում, Լիբիայում եւ Մաւրիտանիայում. ոմանք նրան նահատակուած են համարում Բրիտանիայում, ուրիշներ՝ Երուսաղէմում, իսկ հայկական միջնադարեան աւանդութեամբ՝ Յուդա-Թադէոսի հետքերով մեկնել է Հայաստան եւ վկայական իր վախճանը գտել Ռշտունեաց գաւառում: Յուդան կամ Թադէոսը հա-

տանջուել են Սիմոնն ու Յուդան եւ աղբիւրները, որոնք առաքելական դաւազանի հարուածով ժայթքել են կենսատու ժայռից: Ութ, տասը, տասնեօթ անգամ դաւազանը դիպել է քարին, եւ այժմ այդտեղ հէնց այդքան աղբիւրներ կան, իսկ նրանցից ոչ հեռու կառուցուած է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի:

Այս Մեծ Հայքում նահատակուել է մի հիանալի կոյս Սանդուխտ[1] անունով եւ նա արքայադուստր է եղել: Այստեղ (Մեծ Հայքում) են նետել վիրապի մէջ՝ առիւծի եւ վիշապի բերանը՝ հայերին կաթոլիկական հաւատքի բերող սուրբ Գրիգորին. եւ այդ տեղի է ունեցել, երբ Հայաստանում թագաւորում էր Տրդատը, սուրբ Սեղբեստրոսի եւ կայսր Կոստանդիանոսի ժամանակներում: Նոյն այս Հայաստանում է մարթուել երանելի Յակոբ վկան[2]:

Այս նահանգում (այսինքն՝ Հայաստանում) մեծ մասամբ բնակւում են հերձուածող հայեր. քարոզիչ եւ կրտսեր եղբայրները[3] կաթոլիկութեան են դարձի բերել այս հերձուածողներից[4] ճիշտ չորս հազար, թերեւս նոյնիսկ աւելի անձանց. եւ այս բացարձակ ճշմարտութիւն է:

Եւ իրօք, մի մեծ արքեպիսկոպոս՝ տէր Զաքարիան, իր ողջ հօտի հետ միասին, ընդունել է մեր կրօնը: Ապաւինելով Տիրոջ ողորմածութեանը մենք յուսով ենք, որ բոլոր (հերձուածողները) շուտով դարձի կբերուեն, եթէ այդ գործին ձեռնամուխ լինեն արժանաւոր եղբայրներ:

...Այս Հայաստանը երկայնութեամբ ձգւում է Սեբաստիայից մինչեւ Օրոգի (իմա՛ Մուղանի) հարթավայրը, իսկ լայնութեամբ՝ Պարխար լեռից մինչեւ Թաւրիզ: Պարխարից Թաւրիզ քանիրեք օրուայ ճանապարհ է, Սեբաստիայից Մուղան՝ քառասուն օրուայ»[5]:

Ժուրդենի հաղորդած տեղեկութիւնները կարեւոր են նաեւ իշխանութեան վարչական կենտրոններում եւ այլ հայաբնակ վայրերում կաթոլիկ դաւանանք ընդունած բնակչութեան թիւը պարզելու համար. «Այստեղ,- գրում է նա Թաւրիզի մասին,- մենք (իմա՛ կաթոլիկները) ունենք բաւականին գեղեցիկ մի եկեղեցի՝ հազարի չափ հաւատացեալներով. նախկինում նրանք հերձուածողներ էին, իսկ այժմ դարձի են եկել մեր հաւատքի: Գրեթէ նոյնքան նորադարձներ կան Ուրում (իմա՛ Հեր կամ Խոյ)... այս քաղաքը հարուստ է եւ գտնւում է Թաւրիզից երկօրեայ հեռաւորութեան վրայ. ճիշտ այդպէս հինգհարիւր կամ վեց հարիւր (կաթոլիկներ) են հաշւվում Սուլթանիայում...այնտեղ եւս մենք ունենք շատ գեղեցիկ մի եկեղեցի»[6]:

Միջնադարեան երկրներում Կաթոլիկ եկեղեցու ծաւալած քարոզչական աշխատան-

մարտում է Քրիստոսի 70 աշակերտներից մէկը՝ Թովմա առաքեալի եղբայրը. ըստ աւանդութեան՝ բժշկել ու քրիստոնէական հաւատքի է բերել Եդեսիայի հայ թագաւոր Աբգարին, նահատակուել է Սանատրուկ թագաւորի կողմից. արքայադուստր Սանդուխտի հետ միասին (տե՛ս **Մ. Աւգերեան**, Ծաղիկ վարուց սրբոց, Վենետիկ, 1800, էջ 52, 106-107, 227-228):

Զաքարիա Տործորեցին իրեն համարում էր հիմնականում Թադէոս առաքեալի յաջորդ, սակայն ըստ հարկի պճնում էր նաեւ Բարթուղիմէոսի եւ Սիմոնի հեղինակութեամբ՝ կոչուելով առաքելոց եպիսկոպոս:

1 Սանդուխտ անձնանունը թիւրիմացաբար արտածելով հայերէն՝ սանդուխտ (աստիճան) բառից եւրոպացի ուղեգիրը տուել է այդ բառի լատիներէն թարգմանութիւնը՝ Scala:

2 Խօսքը հաւանաբար Յակովիկ Պարսկի մասին է (տե՛ս «Ծաղիկ վարուց սրբոց», էջ 188-189):

3 Քարոզիչ եղբայր էին կոչւում դոմինիկեան միաբանութեան անդամները, իսկ կրտսեր եղբայր (նաեւ՝ մինոր)՝ ֆրանցիսկեանները:

4 Կաթոլիկ այս կրօնաւորը հերձուածող է անուանում բոլոր ոչ կաթոլիկ քրիստոնեաներին, տուեալ դէպքում՝ լուսաւորչական հայերին:

5 "После Марко Поло...", էջ 137-138

6 Նոյն, էջ 164

քի հիմնական ծանրութիւնը մինչեւ 1318 թ. ընկած էր ֆրանցիսկեան միաբանութեան անդամների ուսերին: Նրանք առաջին հերթին յայտնւում ու յենակէտեր էին ստեղծում միջազգային տարանցիկ առեւտրի հիմնական մայրուղիների վրայ գտնուող այն վայրերում, որոնք նշանակալից դեր էին կատարում որպէս ապրանքափոխութեան կենտրոններ եւ կարաւանային երթեւեկի կանգառներ: Ըստ այդմ էլ՝ նրանց հարում էին հասարակական այն շերտերը, որոնք ներգրաւուած լինելով միջազգային առեւտրի ոլորտի մէջ, անմիջական շահ ունէին եւրոպական երկրների հետ տնտեսական եւ քաղաքական կապերի յետագայ ամրապնդումից: Ինչպէս նշել ենք արդէն, ֆրանցիսկեան միաբանութեան քարոզիչ անդամները XIII դ. վերջերին եւ XIV դ. սկզբներին իրենց ազդեցութեան տակ էին առել Կիլիկեան Հայաստանի աշխարհիկ ու հոգեւոր աւատատէրերից շատերին եւ, առաջ շարժուելով դէպի արեւելք, քայլ առ քայլ ներթափանցում եւ յենակէտեր էին ստեղծում Պատմական Հայաստանի առեւտրական-արհեստագործական նշանաւոր կենտրոններում եւ Անդրկովկասի ու Իրանի հայաշատ քաղաքներում: Դեռեւս 1302 թ. Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը, իր «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» վիճաբանական գրուածքի մէջ դառնութեամբ անդրադառնում էր Լատինական եկեղեցու ազդեցութեան տարածման երեւոյթին. «Կիլիկիա բոլոր,- գրում էր նա,- որ տեղի էր մեր պարծանաց, յայս (իմա՛ Լատինական եկեղեցու դաւանանքով) վարակեալ կայ. եւ գլխաւոր քաղաքք որ ի Հոռոմք՝ ի սոյն մոլորեալ են. եւ հասս մինչեւ առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն ի Տփխիս, եւ ի հին տունն Բագրատունեաց յԱնի՝ որ ի Շիրակ, նաեւ ի Թավրէժ շահաստան, եւ յայլ բազում տեղիս»[1]:

Ժուրդենը, ինչպէս տեսանք քիչ առաջ, Օրբէլեանի այս ցանկը լրացնում է Հեր եւ Սուլթանիա քաղաքների անուններով, որոշակի տեղեկացնելով, որ Կաթոլիկ եկեղեցին հետեւորդներ է ձեռք բերում այդ վայրերում ոչ թէ մահմեդականներին քրիստոնեայ դարձնելով, այլ «հերձուածող» քրիստոնեաներին, այսինքն՝ հայերին «դարձի բերելով»:

Լատինական եկեղեցուն մերձենալու քաղաքականութեան վարիչները, Կիլիկիայում՝ թագաւորն ու կաթողիկոսը, Մեծ Հայքում՝ Արտազի եպիսկոպոսը, դաւանաբանական եւ ծիսական տարբերութիւնները վերացնելու իրենց պահանջը հիմնաւորում էին տեսական այն դրոյթներով, որ, իբր, Հայոց եկեղեցին ի սկզբանէ անտի (Գրիգոր Լուսաւորչի ժամանակներից սկսած), Կաթոլիկ եկեղեցու մասն է կազմել, ուստի յետագայում առաջացած տարբերութիւնները վերացնելով, եկեղեցին վերականգնում է իր անաղարտ վիճակը: Սակայն ընդունելով Հռոմի պապի գերիշխանութիւնը, լատինամէտ հայ գործիչները հեռու էին այն մտքից, թէ այդ քայլով ոտք են դնում ինքնալուծարքի ճանապարհի վրայ:

Այլ վիճակ ստեղծուեց Հայաստանում 1318 թ. յետոյ, երբ Յովհաննէս ԻԲ պապի (1316-1334) յատուկ կոնդակով ֆրանցիսկեան եւ դոմինիկեան միաբանութիւնների միջեւ քարոզչական գործունէութեան շրջանների նոր բաժանում կատարուեց: Վաշխառու պապի կամակատարները դարձած դոմինիկեան կրօնաւորները, ի տրիտուր իրենց ծառայութիւնների, որպէս քարոզչութեան ասպարէզ ստացան ասիական Արեւելքի այն երկրները, որոնցով անցնում էին միջազգային առեւտրի ամենաբանուկ ճանապարհները: Այդ կոնդակով հիմնադրուեց մի նոր արքեպիսկոպոսութիւն՝ Սուլթանիա կենտրոնով, որի անծայրածիր սահմանները որոշւում էին այսպես. «Արարիո (իմա՛ Արարատ) լեռից սկսած դէպի արեւելք, ներառեալ Պարսկական Թա-

1 Տեառն Ստեփաննոսի Նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց, շարադրեալ ի թուին Հայոց ՉԸԱ, Կ. Պոլիս, էջ 1756, էջ 42-43 (հմմտ. նաեւ ՄՄ ձեռ. N 573, էջ 63ա-63բ):

Թարխայի մեծ պետութեան... ողջ կայսրութիւնը... ինչպէս եւ Դոխիի ու Խայդուի Թագաւորութիւնը (այսինքն՝ Միջինասիական երկրները) եւ նրանց ենթակայ բոլոր շրջանները: Այս արքեպիսկոպոսութեանն են ենթարկւում նաեւ Հնդկաստանն ու Եթովպիան, իսկ արքեպիսկոպոսն ինքը այսուհետեւ նստելու է Սուլթանիա քաղաքում, քանի որ այդ արժանաւայել ու մեծ բնակավայր է»[1]:

Սուլթանիայի արքեպիսկոպոս է նշանակւում դոմինիկեան միաբանութեան անդամ Ֆրանկո Պարուջացին, որն իր ենթակայութեան տակ ունէր վեց եպիսկոպոսութիւններ, որոնցից երեքը՝ Ատրպատականի Թաւրիզ, Մարաղա եւ Դեհխարկան քաղաքներում[2]:

Դոմինիկեան այս քարոզիչները սկզբնական շրջանում համագործակցում էին ֆրանցիսկեանների հետ, հաշուի առնելով, որ նրանք այդ վայրերում ստեղծել էին արդէն որոշ յենակէտեր, կառուցել եկեղեցիներ եւ հետեւորդներ շահել: Դոմինիկեաններն սկզբից զգոյշ էին նաեւ Հայոց եկեղեցու պաշտօնէութեան հետ իրենց յարաբերութիւններում՝ խուսափելով իրենց թշնամական դիրքը բացայայտելուց:

Սակայն քիչ անց, ամրապնդելով իրենց դիրքերը Նախիջեւանի գաւառում[3] եւ իրենց ազդեցութիւնը տարածելով ֆրանցիսկեանների ստեղծած լատինադաւան համայնքների վրայ, նրանք անսքօղ պայքարի դրօշ են պարզում Հայոց եկեղեցու դէմ: «Իրենց գլխաւոր զէնքն էր,- գրել է նրանց մասին Հայոց եկեղեցու պատմութեան նշանաւոր հետախոյզ Մ. Օրմանեանը,- շարք մը պիտակ հեղինակութիւններով եւ իմաստակ պատճառաբանութիւններով խիղճերը վրդովել, Հայոց եկեղեցւոյն մէջ պաշտուած խորհուրդները անվաւեր ու չեղեալ նկատել, եւ հաւատացելոց մկրտութեան եւ պաշտօնէից ձեռնադրութեան վրայ կասկածներ յարուցանելով, կրկնամկրտութիւններ եւ կրկնաձեռնադրութիւններ ընել, հայ եկեղեցիներու եւ սրբութիւններու նուիրականութիւնը ուրանալ եւ անարգել, եւ պարզապէս հայադաւանները անհաւատներու հաւասարուել»[4]:

Արտազի շրջանի հայ աւատատէրերի գերդաստանը, պարոնտէր Զաքարիա եպիսկոպոսի գլխաւորութեամբ, փորձում է ի շահ իր նպատակների օգտագործել Հայաստանի եւ Ատրպատականի հարեւան շրջաններում խարիսխ նետած կաթոլիկ քարոզիչների գաղափարական ազդեցութիւնն ու կշիռը: Ստեղծուած պայմաններում Մեծ Հայքի աշխարհիկ ու եկեղեցական գործիչները, ի պաշտպանութիւն ազգային եկեղեցու գաղափարական եւ կազմակերպչական դիրքերի, հակամիջոցների պէտք է դիմէին: Այսպիսով, Հայաստանում սկսւում է դաւանաբանական լարուած պայքարի մի շրջան, որ տեւում է տասնամեակներ, ունենալով մակընթացութեան եւ տեղատուութեան իր փուլերը: Մեզ, բնականաբար, հետաքրքրելու են այդ պայքարի այն դրուագները, որոնք առնչւում են Արտազի շրջանին եւ Թադէոս առաքեալի վիճակին:

Այս առումով ուշագրաւ են յատկապէս Սիւնեաց մետրոպոլիտ Յովհան-Օրբելի (յիշատակուած է որպէս եպիսկոպոս 1302-1323 թթ.) զոյգ նամակները, մէկն ուղղուած կաթողիկոսին,

1 **G. Golubovich**, Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell' Oriente Francescono, t. II, էջ 570 եւ հտ., օգտուել ենք М. Я. Свет-ի "После Марко Поло" աշխատութեան միջնորդութեամբ:

2 "Marcus Antonius v. d. Oudenrijn. Linguae Haicanae Scriptores", Bern, 1960, էջ 19-20

3 Այստեղ կաթոլիկ դաւանանք է ընդունում Երնջակի շրջանի Քռնա, Ապարաներ, Սալիթաղ, Ապրակունիս, Խոշկաշէն եւ Ջահուկի շրջանի Ջահուկ եւ Շահապոնս գիւղերի հայ բնակչութեան մեծ մասը:

4 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, § 1350

միւսը՝ Զաքարիա Տործորեցուն: Բանասիրութեան մէջ տարբեր կարծիքներ են յայտնուել այդ գրութիւնների շարադրման ժամանակի մասին. Մ. Չամչեանը գրուած է համարում 1305 թ. կապելով Գրիգոր Անաւարզեցու հետ, Մ. Օրմանեանը գրեթէ համամիտ է նրան, իսկ Գ. Յովսէփեանը, գրութեան հնագոյն եզրը 1314 թ. համարելով, աւելի հաւանական է գտնում 1317-1318 թթ.:

Նամակներից պարզւում է, որ կաթողիկոսը Արեւելեան Հայաստան է ուղարկել Գրիգոր անունով իր նուիրակին, պատուիրելով նրան մեռոն բաշխել միայն թեմական այն առաջնորդներին, ովքեր յանձն կառնեն ջրախառն գինով պատարագ մատուցել եւ Քրիստոսի Ծննդեան տօնը դեկտեմբերի 25-ին կատարել: Հայոց եկեղեցու պատմութեան XIV դ. առաջին տասնամեակների կարեւոր իրադարձութիւնների լոյսի տակ դժուար չէ յանգել այն եզրակացութեան, որ այդպիսի վճռական պահանջով կաթողիկոսը կարող էր հանդէս գալ միայն Սսի (1307թ.) կամ Ադանայի (1317թ.) եկեղեցական ժողովներից յետոյ, յենուելով հէնց այդ ժողովների խիստ կասկածելի իրաւական ուժ ունեցող որոշումների վրայ: Հարցի մանրակրկիտ քննութիւնը մեր նպատակից դուրս համարելով, մենք եւս այդ նամակների գրութեան ամենահաւանական տարեթիւ համարում ենք 1317-1318 թթ.[1]:

Արդ, կաթողիկոսին հասցէագրուած իր նամակում Սիւնեաց մետրոպոլիտը յայտնում է, որ արտայայտելով իր վիճակի իշխանների, ազատների, հոգեւորականութեան ու ժողովրդի միաձայն կամքը, նա հրաժարւում է կատարել կաթողիկոսի պահանջը, եւ մնալով ազգային եկեղեցու աւանդական դիրքերի վրայ, իրեն ազատ է համարում այսուհետեւ վարելու ինքնուրոյն քաղաքականութիւն[2]:

Յովհան-Օրբելի Զաքարիա Տործորեցուն հասցէագրած նամակից պարզւում է, որ վերջինս ոչ միայն հաճոյքով կատարել է կաթողիկոսի պահանջը՝ պատարագի խորհրդին ջուր խառնելով եւ դեկտեմբերի 25-ին Քրիստոսի Ծննդեան տօնը կատարելով, այլեւ ընդառաջ է գնացել Կաթոլիկ եկեղեցուն բազմաթիւ այլ հարցերում եւս (տարուայ ընթացքում պահք 50 օր է հաստատել, արգելել է աշխարհիկ քահանաների ամուսնութիւնը եւ այլն): «Ի հակառակաց կողմն դարձուցեր զքեզ,- մեղադրում է նրան Յ. Օրբելը,- եւ երդմամբ չափ քակես զեկեղեցի Աստուծոյ, եւ զհնազանդեալքս ի հոգեւոր գլխոյն օձտես, երբեմն իշխանաբար սաստելով, երբեմն գիրս եւ խօսս չարախօսութեան զմէնջ առ հոգեւոր տէրն առաքելով, եւ ի նմանէ մեզ սաստ եւ սպառնալիս տաս բերել» եւ այլն[3]:

Մ. Չամչեանի ձեռքի տակ եղել են նաեւ այլ թղթակցութիւններ. Զաքարիայի պատասխան-նամակը Յովհան-Օրբելին, վերջինիս երկրորդ գրութիւնը եւ այլն: Դրանց տուեալներով

1 Այսպէս ենք կարծում՝ հաշուի առնելով նաեւ Յովհան-Օրբելի Զաքարիա Տործորեցուն ուղղած նամակի մի հատուածը, ուր խօսք կայ այն մասին, որ Արտազի եպիսկոպոսը պարծենալիս է եղել ինչպէս իր, այնպէս էլ իր շուրջ համախմբուած անձանց գիտութեան վրայ («...թէ դու այնպէս գիտուն եղար՝ որպէս կարծես զքեզ կամ զքոյքդ՝ որպէս պարծես հանապազ եւ խրոխտացեալ ես առաջի իշխանաց»): Պարզ է, որ Զաքարիան այդպիսի դիրք կարող էր բռնել 1314 թ. յետոյ միայն, երբ արդէն հիմնադրել էր Տործորի վանքը՝ բարձրագոյն իր դպրոցով, իր կուսակիցը դարձրել Յովհաննէս Երզնկացի-Տործորեցի վարդապետին եւ այլն: Որ այս նամակների շարադրման ժամանակ Երզնկացին արդէն հաստատուել էր Տործորի վանքում ու դարձել Զաքարիայի մերձաւոր գործակիցը, պարզ երեւում է Մ. Չամչեանի ձեռքի տակ եղած եւ օգտագործած նիւթերից (տե՛ս «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306-308):

2 «Ճռաքաղ», 1860, էջ 43: Հմմտ. ՄՄ ձեռ. N 8245, էջ 182:

3 «Ճռաքաղ», 1860, էջ 56: Հմմտ. ձեռ. N 8245, էջ 183:

Արտազի եպիսկոպոսը Կաթոլիկ եկեղեցուն ընդառաջ գնալու իր գործելակերպը փորձում է արդարացնել տեսական այն դրոյթով, որ «Օրէնք Աստուծոյ զամենեսեան միաւորէ ընդ Քրիստոսի, իսկ օրէնք սատանայի՝ բաժանէ ի նմանէ, զի մի է Տէր, մի հաւատ, մի օրէնք, եւ գլուխ օրինացն՝ սէր, եւ մի եկեղեցի՝ ժառանգ սիրոյ նորա, յորմէ արտաքսեալ ոք ոչ ունի բնաւին փրկութիւն»: Ինչպէս հրեաները հնում ունեցել են մի քահանայապետ, այնպէս էլ քրիստոնեաները՝ պէտք է մէկ հօտ լինեն՝ մէկ հովիւ ունենալով, դաս առնելով հրեաների պատմութիւնից. «Որչափ ժամանակ հրեայքն ի մի տաճար երկրպագէին եւ մի թագաւոր ունէին, Աստուած ընդ նոսա էր, իսկ յորժամ բաժանեցան՝ յաւար եւ յափշտակութիւն մատնեցան. որպէս եւ այժմ քրիստոնեայք՝ տուեալ եղեն կոխան հեթանոսաց»,- գրում է նա[1]:

Սսի եւ Ադանայի ժողովների որոշումները Մեծ Հայքի թեմերին պարտադրելու մտահոգութեամբ կաթողիկոսն ու իր գործակիցները եռանդուն քայլերի են դիմում. գրւում են յորդորական նամակներ՝ հասցէագրուած ոչ միայն վիճակաւոր առաջնորդներին, այլեւ անուանի ու հեղինակաւոր գիտնական-վարդապետներին: Պահպանուել են այդպիսի մի քանի նամակների Եսայի Նչեցու շարադրած պատասխան-գրութիւնները: Գլաձորի համալսարանի մեծ րաբունապետը, իր եւ իր կուսակիցների անունից («Ես եւ հաւանողքն ինձ»,- գրում է նա) յայտնում է, որ քրիստոնէական եկեղեցիների միաբանութիւնը իրօք աստուածահաճոյ մի գործ է, եւ սատանան է, որ «առելութեամբ զմեզ առ իրեարս գրգռէ եւ բաժանէ, զի դիւրաւ յաղթեսցէ»: Բայց իրատես լինելով՝ նա գտնում է, որ քանի դեռ չեն ստեղծուել եկեղեցիների միաւորման համար անհրաժեշտ պայմաններ, ամէն մի եկեղեցի, առաջնորդուելով «հին սովորութիւն քաղցր է իւրաքանչիւր ումեք» սկզբունքով, պարտաւոր է հաւատարիմ մնալ անցեալից ժառանգած եւ ազգային երանգ ստացած աւանդութիւններին, միաժամանակ յարգելով միւսների օրէնքներն ու սովորոյթները:

Նչեցի րաբունապետը կիլիկեցիների կողմից «սուրբ» հռչակուած ժողովը (ամենայն հաւանականութեամբ խօսքն Ադանայի ժողովի մասին է)՝ «սուտ ժողով» է կոչում, ելնելով այն իրողութիւնից, որ՝ նախ, ժողովին մասնակցել են սակաւաթիւ պատգամաւորներ (այն էլ միայն Կիլիկիայի ներքին թեմերից), եւ ապա, շատերը հէնց տեղում հակառակել են ու «դեռ տակաւին եւս հակառակին»՝ մերժելով ժողովի վնասակար որոշումները. իմաստասէր վարդապետը իր միտքն եզրափակում է այսպէս. «Իրք, որ ի սահմանելն իւրում հակառակութիւն կրէ՝ յայտ է թէ ոչ է ճշմարիտ, այլ սուտ»[2]: Ի վերջոյ Եսայի Նչեցին յայտնում է, որ ինքը եւ

1 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306-308

2 Ուշագրաւ այս գրութիւնը որ պահպանուել է Մաշտոցի անւ. Մատենադարանի N 9622 ձեռագրում (էջ 734-753), խորագրուած է այսպէս. «Թուղթ Եսայեայ վարդապետին, պատասխանի թղթոյ Սսոյ կաթողիկոսին եւ թագաւորին»: Գրութեան ստոյգ տարեթիւը յայտնի չէ, բայց գրուած պէտք է լինի նոյն այս տարիներին՝ XIV դ. 10-ական թթ. վերջերին:

Հարկ է նշել այստեղ, որ չնայած Եսայի Նչեցի րաբունապետի անունը Գլաձորի համալսարանի առնչութեամբ վերջերս շատ է հոլովւում, բայց նրա կեանքի ու գիտական գործունէութեան դրուագները գիտական ուսումնասիրութեան առարկայ չեն հանդիսացել: Աշխարհով մէկ ցրուած հայերէն ձեռագրերի մէջ նրա անունով կան շուրջ երկու տասնեակ աշխատութիւններ՝ մեկնութիւն, ճառ, նամակ, շրջաբերական գրութիւն եւ այլն, որոնց մեծագոյն մասը ոչ միայն չի հրապարակուած, այլեւ չի գնահատուած մասնագէտների կողմից: Հ. Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանի» Բ հատորում (Երեւան, 1944, էջ 128) թուարկուած են Նչեցու 12 աշխատութիւնները. առանց յատուկ քննութիւն կատարելու այդ ցանկը կարող ենք լրացնել հետեւեալ գործերով. (1) «Թուղթ վասն կարգաց եկեղեցոյ եւ ժամուց, զոր արարեալ է Եսայի վարդապետի ի խնդրոյ վարդապետաց Սիւնեաց եւ առաջնորդաց վանորէից, աստուածասէր կրօնաւորաց» (ՄՄ ձեռ. N 5154, էջ 259ա-261ա). (2) «Երիցս երանեալ բազմերջանիկ վարդապետին Եսայեայ, արարեալ ի խնդրոյ Ստեփանոս վարդապետի Թեղենեցւոյ. Ցաղագս եկեղեցւոյ

իր կուսակիցները պատրաստ են նոյնիսկ իրենց կեանքը զոհաբերելու, բայց չեն շեղուելու երբէք նախնիներից ժառանգած ու դարերով սրբագործուած աւանդութիւններից[1]:

Մեծ Հայքի քաղաքական եւ եկեղեցական գործիչները չեն սահմանափակւում լոկ գաղափարական պայքար մղելով, ի պաշտպանութիւն իրենց սկզբունքների գրուածքներ շարադրելով ու բանավիճելով: Շուտով գործարար քայլեր են կատարւում Զաքարիա Տործորեցու լատինամէտ գործունէութեան արդիւնքները խափանելու եւ նրա իրաւասութիւնները սահմանափակելու ուղղութեամբ: Առաքելոց աթոռի հոգեւոր իշխանութիւնը, ինչպէս ասել ենք արդէն, դուրս էր գալիս պատմական Արտազ գաւառի սահմաններից՝ ընդգրկելով Պարսկահայքի եւ Ատրպատականի հայաբնակ մի շարք շրջաններ. ներառեալ Թաւրիզ ու Մարաղա քաղաքները[2]:

Այս վիճակը, սակայն, երկար չի տեւում. շուրջ 1321 թ., Մեծ Հայքի բարձրաստիճան հոգեւորականութեան ու ֆեոդալների համատեղ ջանքերով, Թաւրիզում թեմական առաջնորդ է կարգւում Զաքարիա Տործորեցուց կախում չունեցող եւ նրա որդեգրած քաղաքականութեան հակառակորդ Մատթէոս եպիսկոպոսը, որին մեծարում են «սրբազան քաւչապետ եւ վերատեսուչ առաքելական աթոռոյ» տիտղոսով[3], հակադրուելով Առաքելոց թեմի լատինադաւան առաջնորդներին:

Այս Մատթէոսին Եսայի Նչեցին «մեր յոյժ սիրեցեալ որդի» է կոչում[4] եւ նրան հասցէա-

խորհրդեան» (ՄՄ ձեռ. N 9622, էջ 754-772). (3) Շրջաբերական թուղթ, որով յորդորում է հաւատացեալներին ողորմութիւն տալ Տարոնի Ս. Կարապետի վանքի նուիրակին (ՄՄ ձեռ. N 848, էջ 100-106բ) եւ վերջապէս, (4) կաթողիկոսին եւ թագաւորին հասցէագրուած այս նամակը, որից քաղուածքներ ենք կատարում եւ որը առիթ տուեց անդրադառնալու Եսայի Նչեցու գրական ժառանգութեանը: [Վերջին տարիներին Նչեցու ժառանգութեան վերաբերեալ պրպտումներ կատարեց այժմ յանգուցեալ Աւետիս Սանճեանը:]

1 Մ. Չամչեանը, Յ. Տահխաթունեանցը, Ղ. Ալիշանը եւ այլ բանասէրներ, յենուելով Սամուէլ Անեցու շարունակողներից մէկի հաղորդած տուեալի վրայ (Սամուէլ, էջ 155), նոյնացրել են Կոստանդին Կատուկեցի (Պրոնգործ) եւ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսներին, գտնելով, որ Հեթում թագաւորի կողմից 1289 թ. գահընկէց արուած վեհափառը՝ երկրորդ անգամ կաթողիկոս է դարձել 1307 թ.: Մ. Օրմանեանը, հանգամանօրէն քննարկելով այս կաթողիկոսների մասին առկայ տուեալները, յանգել է այն եզրակացութեան, որ դրանք տարբեր անձնաւորութիւններ են (տե՛ս «Ազգապատում», §§ 1169, 1245): Եսայի Նչեցու այս թղթի մէջ կայ մի հատուած, որ թերեւս հնարաւորութիւն է ընձեռում վերանայելու Օրմանեանի ուսումնասիրութեան արդիւնքները: Նչեցու գրութեան մէջ կան նաեւ մէջբերումներ կիլիկեցիների իրեն յղած նամակից. «Այլ եւ պատուով,- ասէ,- ընկալարուք զհրամանս սուրբ հօրս՝ իբրեւ ճշմարիտ» խօսքերի կապակցութեամբ Նչեցին գրում է. «Թէ սուրբ հայր էր ընդէ՞ր ընկեցիք յաթոռոյն եւ չար ի վերայ եդիք»: Դժուար չէ կռահել, որ աթոռազուրկ արուած եւ կրկին սուրբ հայր» դարձած անձը, որի հրամաններին պարտաւոր էին ենթարկուել Մեծ Հայքի հոգեւորականները, պէտք է կաթողիկոսը լինէր, իսկ այդպիսին Կոստանդին Կատուկեցին կարող էր լինել, որի կրկին կաթողիկոս դառնալու մասին, ինչպէս ասացինք, կան ձեռագրական վկայութիւններ:

2 Այդ երեւում է ստորեւ վկայակոչուող երկու յիշատակարաններից, որոնք գրուած են Զաքարիա եպիսկոպոսի իշխանութիւնը ճանաչող դաւանակիցների կողմից: 1. Տէր Տիրացու եպիսկոպոսը՝ Զաքարիայի յաջորդն ու եղբօրորդին, 1342 թ. յիշատակուած է որպէս առաջնորդ Թաւրիզ քաղաքի եւ շրջակայքի («...ի յառաջնորդութեան աստուածապահ նահանգիս Թավրիժու քաղաքիս տէր Տիրացուի եպիսկոպոսի», «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 331): 2. Մարաղայում 1361 թ. ընդօրինակուած Աստուածաշնչի յիշատակարանում որպէս հոգեւոր առաջնորդ դարձեալ յիշատակուած են Արտազի եպիսկոպոսները. «...ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թադէոսի տէր Տիրացուի եւ Զաքարիայի» (Նոր Ջուղա, ձեռ. N 336):

3 Մատթէոս եպիսկոպոսի մասին անդրանիկ վկայութիւնը գտնում ենք Եսայի Նչեցու ծանօթ թղթի մէջ, որն ըստ Գ. Յովսէփեանի՝ գրուած պէտք է լինի կամ 1321 թ. կամ քիչ առաջ (տե՛ս «Խաղբակեանք կամ Պռօշեանք Հայոց պատմութեան մէջ», Բ հրատ., Անթիլիաս, 1969, էջ 286-288):

4 Որոշ ուսումնասիրութիւնների մէջ ասւում է, թէ իբր, Եսայի Նչեցու գլխաւորած Գլաձորեան համալսարանն աւարտել ու վարդապետական գաւազան են ստացել 360 անձինք: Այդ թիւը, սակայն, խիստ չափազանցուած է ու

գրած իր ուշագրաւ թղթի մէջ խորհուրդ է տալիս մերժել ու հալածել Ֆռանկ եւ կաթոլիկ դարձած հայ այն վարդապետներին, որոնք թշնամական դիրք են գրաւել Հայոց եկեղեցու նկատմամբ ու հայերին իրենց հաւատքից հանելու նպատակ ունեն. «Դարձեալ լսեցաք,- գրում է նա,- թէ սուտ վարդապետք ի Ֆռանկաց յազգէ եւ այլք ի Հայոց՝ ծագեր, եկեալ են առ ձեզ, եւ զՀայոց քրիստոնէութիւնս հայհոյեալ՝ նախատեն զեկեղեցի, եւ զառաջնորդս ուրանալ տուեալ, բազում հակառակութիւնս յեկեղեցիս ձգեն:

Զայնպիսի հերձուածողսն մի ընդունիցիք ի տունս ձեր, եւ մի ողջոյն տայք նոցա, եւ մի առնոյք աղջոյն ի նոցանէ, զի ուրացողք են, այլ եղիցին ձեզ իբրեւ զհեթանոս եւ զմաքսաւորս»[1]:

Մատթէոս եպիսկոպոսը պաշտոնավարում է երկար. 1335 թ. պահպանուել է չափածոյ մի յիշատակարան, գրուած ոմն Գրիգոր երէցի կողմից, որի մէջ դրուատանքի ջերմ խօսքերի է արժանանում եռանդուն այս գործիչը: Նա, որ կարողանում է «որպէս արծիւ սլանալով առ Թագաւոր եւ ընդ իշխան» հոգալ իր վիճակի հայ բնակչութեան կարիքները, յաջող պայքար է մղում նաեւ կաթոլիկ քարոզիչների ու նրանց դաւանանքն ընդունած հայ գործիչների դէմ.

«Տէրն ոչ արար ընդ մեր մեղացն,
Աստուածութեան կամք քաղցրացան,
Յարոյց կրկին կանկնող բնութեանս
Ըստ առաջին Մաթէոսեան,
Լուսաւորիչ սուրբ հաւատոյս
Որպէս Գրիգոր Պարթեւական
Որ զշարժեալ թիւն (իմա՛ թոյնն) մահաբեր
Իմիցն արար փախըստական,
Բաղկեդոնի չար /// անդնելով.
Զնեստոր առնէր թշուառական»[2]:

Այս Մատթէոսին յաջորդած պէտք է լինի Արտազի արքեպիսկոպոս եւ Ս. Թադէի վանահայր կոչուած Մեսրոպ վարդապետը: 1335 թ. նա յիշատակուած է որպէս անուանի րաբունապետ, որի մօտ ուսանելու էին գալիս աշակերտներ նոյնիսկ Կիլիկեան Հայաստանից եւ այլ վայրերից: Սա եպիսկոպոս է եղել 1335 թ. տարիներ յետոյ[3], 1359 թ. ընտրուել է կաթողիկոս

չի հիմնաւորում իրեն աղբիւրներով: Մխիթարիչ Ապարանեցու «Գիրք ուղղափառացի» մէջ այդ մասին կայ ուշագրաւ տուեալ. «Մեծ վարդապետն Հայոց Եսայի, որ էր ի Գայլիձորն... տուեալ է գաւազան իշխանութեան վարդապետելոյ զՃ եւ ԿԷ (167) անձանց» (**M. Oudenrijn,** նշ. աշխ., էջ 216): Հաւանաբար դրանցից մէկն էր Առաքելոց թեմի առաջնորդ դարձած Մատթէոս եպիսկոպոսը:

1 «Ճռաքաղ», 1860-1861, էջ 210: Հմմտ. ՄՄ ձեռ. N 2776, էջ 248ա, N 8245, էջ 170:

2 ՄՄ ձեռ. N 2776, էջ 262ա

3 Մեսրոպ րաբունապետի ջանքերով Ս. Թադէի վանքում ստեղծուած դպրոցի մասին կարեւոր տուեալներ է հաղորդել Յովհան անունով Սսեցի մի երիտասարդ, որ «սակս ուսման» Կիլիկիայից Մեծ Հայք էր եկել, սովորել Գլաձորում, ապա հաստատուել Ս. Թադէի վանքում՝ դառնալով Մեսրոպի աշակերտը: Ներսէս Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին» աշխատութեան իր ընդօրինակութեան յիշատակարանում Յովհանը գրել է. «Այլ եւ ես թարմատարս Յոհան աշակերտ բանի յաշխարհէն Կիլիկեցոց, ծնեալ եւ սնեալ ի մայրաքաղաքն Սիս, եկի յաշխարհս Արեւելից՝ տարաշխարհիկ շրջելով սակս ուսման, որ եւ ուսայ զորն որ յեռամեծէն Եսայեայ եւ է զոր ի մե-

եւ աշխոյժ գործունէութիւն ծաւալել Կաթոլիկ եկեղեցուն արուած զիջումներն ի չիք դարձնելու, Հայոց եկեղեցու ազգային դիմապատկերն անաղարտ պահելու ուղղութեամբ: Սրա ջանքերով 1361 թ. Սսում գումարուել էր եկեղեցական ժողով, որն անվաւեր ճանաչելով Սսի եւ Ադանայի ժողովների որոշումները, խստիւ մերժել է կաթոլիկական նորամոյծ ծէսերը[1]. «Եբարձ զՋուրն ի սուրբ խորհրդոյն եւ հերքեաց զախթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածողէն եւ յՕշին թագաւորէն»,- ասում է սրա մասին Սիմէոն Երեւանցին[2]:

Որոշ տուեալներ թոյլ են տալիս յանգելու այն եզրակացութեան, որ Մեսրոպ վարդապետի Արտազի եպիսկոպոս եղած տարիներին, հաւանաբար Զաքարիա եպիսկոպոսի մահուանից յետոյ՝ Ս. Թադէի վանքը դուրս է բերուել Արտազի հայ աւատատէրերի իրաւասութիւնից՝ դառնալով ազգային եկեղեցու աւանդութիւններին հաւատարիմ եպիսկոպոսի աթոռանիստ: Արտազի կաթոլիկութեան յարած եպիսկոպոսները՝ Զաքարիա Ծործորեցու յաջորդները՝ ստիպուած տեղի են տուել, ամփոփուելով Մակուի բերդում եւ Ծործորի վանքում:

Ստոյգ տուեալներ չեն պահպանուել պարզելու, թէ Մեսրոպ վարդապետից յետոյ ո՛վ է գրաւել Արտազի եպիսկոպոսութիւնն ու Ս. Թադէի վանքի վանահայրութիւնը, գիտենք, սակայն, որ 1397 թ. այդ պաշտօնում եղել է Պետրոս անունով մի եպիսկոպոս, որ քահանայ է ձեռնադրել Էջմիածնի ապագայ կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն[3]: Այսուհետեւ տեղեկութիւն ունենք 1426 թ., երբ Գրիգոր Մակուեցի Ջալալբեկեանը, ներկայանալով որպէս «աթոռակալ սրբոյն Թադէոսի», տեղեկութիւններ է գրանցում Իսքանդար Կարա-կոյունլուի կողմից Մակուի բերդի գրաւման եւ Արտազի հայկական իշխանութեան վերացման մասին[4]:

* * *

Զաքարիա եպիսկոպոսը Արտազի հայկական իշխանութեան սահմաններում 1313-1321 թթ. ընթացքում շարադրուած յիշատակարանների մէջ[5] մեծարուած է որպէս եկեղեցական

րոյս րաբունապետէ Մեսրոպայ, առ ոտս սորա դեգերելով եւ վարժելով. եւ տեսի ի մեր յաւուրանիս զայս լուսաւոր եւ թուրվանդա մեկնիչս. եւ ստացա զսայ յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնողաց եւ ուսուցչաց: Արդ, գրեցաւ սա ի թվականիս ՉՁԴ (1335), ի յաշխարհիս Արտազ կոչեցեալ, ի հայրապետութեան տեառն Յակոբայ... եւ յեպիսկոպոսութեան Արտազու եւ սուրբ առաքելոյն Թադէոսի տէր Զաքարիայի» (Երուսաղէմ, ձեռ. N 1428):

Թերեւս նոյն այս գրչի մէկ ուրիշ յիշատակարանն է տպագրուած Գ. Զարպհանալեանի «Պատմ. հայ դպրութեան» աշխատութեան Բ հատորի մէջ (Վենետիկ, 1878, էջ 193-194). այնտեղ ասուած է. «Եղեալ թափառական տարագնաց ընթացիք ի կոյս կողմանց արեւու. եւ գկայ առեալ դադարեցի յԱրտազ... դեգերեալ առ ոտս աստուածախօս սուրբ րաբունոյս Մեսրոպի»:

1 **Մ. Օրմանեան, Ազգապատում, § 1322**

2 Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 17

3 Այս տեղեկութիւնը քաղուած է Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանից», որի տպագրում Պետրոս անուան փոխարէն, հաւանաբար վրիպակով, Պօղոս է գրուած: Մատենադարանի մեր համեմատած 12 ձեռագրերը, առանց բացառութեան, այս եպիսկոպոսին Պետրոս են կոչում:

4 Անտեղեակ լինելով Արտազի աթոռի եպիսկոպոսութեան եւ Ս. Թադէի վանքի առաջնորդութեան զոյգ պաշտօնների շուրջ XIV դ. ընթացքում Հայ եկեղեցու աւանդութիւններին հաւատարիմ եւ Կաթոլիկ եկեղեցու դաւանանքն ընդունած հակընդդէմ խմբաւորումների միջեւ ծաւալուած պայքարի դրուագներին, պատմագիտական աշխատութիւններում շփոթել են միմեանց «Թադէոս առաքեալի աթոռակալ» կոչուած անձնաւորութիւններին, ապարդիւն փորձեր կատարելով միասնական մի շղթայի մէջ առնելու Զաքարիային ու նրա յաջորդներին՝ մի կողմից, եւ Մատթէոսին ու նրա յաջորդներին՝ միւս կողմից:

5 Պահպանուել են յիշատակարաններ 1313, 1315, 1318 եւ 1321 թթ., որոնք տպագրուած կամ յիշատակուած են հե-

այդ թեմի եւ Ս. Թադէի վանքի միահեծան առաջնորդ[1], իսկ 1329 թ. շինարարական ընդարձակ արձանագրութեան մէջ, ինչպէս տեսանք վերը, Զաքարիան գրանցել է տալ նաեւ իր փոխանորդ կարգուած Տիրացու եպիսկոպոսի անունը, որ եղել է նրա եղբօրորդին («Եւ զաջորդն՝ մեր աղբաւր որդին՝ զտէր Տիրացուն»)[2]: XIV դ. 30-40-ական թթ. մի շարք յիշատակարաններում, իր մեծանուն հօրեղբօր հետ միասին յիշատակւում է նաեւ այս Տիրացու եպիսկոպոսը, որ ժամանակակիցների կողմից «հեզ եւ մարդասէր» մակդիրն է ստացել[3]:

Զաքարիայի մահուան թուականը անյայտ է մնում. իր մահկանացուն կնքած պէտք է լինի 1340-ական թթ. վերջերին, անտարակոյս 1350 թ. առաջ, քանի որ այդ թուականի մի յիշատակարանից պարզւում է, որ նա այլեւս գոյութիւն չունի («զհանգուցեալն ի Քրիստոս») եւ նրան յաջորդել է իր ժառանգ տէր Տիրացուն, «որ է այ[ր բար]եխորհ եւ իմաստուն, յայժ անուանի եւ ամենեցուն մեծամեծաց սիրելի»[4]:

Մինչեւ Տիրացու եպիսկոպոսի ու նրան յաջորդող Արտազի հայ հոգեւոր ու աշխարհիկ տէրերի գործունէութեանն անդրադառնալը, անհրաժեշտութիւն է զգացւում հակիրճ մի ամփոփումով փակել Զաքարիա եպիսկոպոսին նուիրուած այս դրուագը:

Գրեթէ մի ամբողջ յիսնամեակ իշխելով որպէս Առաքելոց թեմի եպիսկոպոս եւ Արտազի շրջանի աւատատէր դարձած հայ գերդաստանի նահապետ՝ պարոնտէր Զաքարիա Ծործորեցին զգալի դեր է կատարել Հայաստանի քաղաքական ու մշակութային կեանքում: Ընդառաջելով Կիլիկեան Հայաստանի արքունի տան անդամների ու բարձրաստիճան հոգեւորականութեան լատինամոլ քաղաքականութեանը՝ նա դարձել է նրանց ձայնափողը Մեծ Հայքում՝ պայքարելով Հայոց եկեղեցու ինքնուրոյն գոյութիւնը ամրապնդել ցանկացող եւ ազգային աւանդութիւններին հաւատարիմ մնացած քաղաքական ու եկեղեցական գործիչների դէմ: Իր գործունէութեան առաջին երեք տասնամեակների ընթացքում նա յաջողութիւններ է ունեցել: Հաւատ ընծայելով եւրոպական երկրներից քաղաքական ու ռազմական օգնութիւն ստանալու սին ու պատիր խոստումներին՝ Արտազի շրջանի եւ շրջակայ նահանգների քաղաքային բնակչութեան որոշ խաւեր (մանաւորապէս՝ եւրոպական երկրների հետ տնտեսական կապեր ունե-

տնեալ աշխատութիւնների մէջ. Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. հինգերորդ, Երուսաղէմ, 1971, էջ 96-97, «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Երեւան, 1950, էջ 114-115, ՄՄ ձեռ. N 2104, էջ 164բ. Վ. Հացունի, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 310:

1 1313 թ. Թաւրիզում ընդօրինակուած Սարգիսգրքի մէջ յիշատակուած է նաեւ ոմն տէր Յակոբ «Յաթոռակալութիւն Բ աթոռոցն Թադէոսի եւ Բարդողիմէոսի տէր Զաքարիա եւ տէր Յակոբի» (Ն. Պողարեան, նշ. աշխ., էջ 96-97): Այս Յակոբը, սակայն, Զաքարիային ենթակայ մի կղերական է, հաւանաբար Սալմաստի առաջնորդ Յակոբ եպիսկոպոսը, որ յիշատակուած է նաեւ Կ. Գալանոսի կողմից՝ որպէս Աղանայի ժողովի մասնակից:

2 XIV դ. 40-ական թթ. սկզբներին կաթոլիկների կողմից Հայ եկեղեցու վրայ բարդուած 117 «մոլորութիւնների ցանկում» կայ նաեւ մի կէտ (103-րդ), որով հայերը մեղադրւում են բազմակնութեան նկատմամբ ներողամիտ լինելու մէջ: Համառօտելով այդ գրութեան հիմնական մասերը՝ Մ. Օրմանեանն այսպէս է ձեւակերպում մեզ հետաքրքրող հատուածը. «Հայերը… ապօրէն զաւակները իբր օրինաւոր ժառանգ կընդունին, եւ մինչեւ իսկ այսպիսիները եպիսկոպոսութեան կը բարձրացնեն, եւ օրինակ կը բերեն Զաքարիայի եղբօր ապօրէն զաւակը, որ հօրեղբօր տեղը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ» («Ազգապատում», § 1305):

Եթէ այս վերաբերում է Զաքարիա Ծործորեցուն, ապա պէտք է հետեւեցնել, որ 1329 թ. նրա հետ միասին Արտազի եպիսկոպոս կոչուած տէր Տիրացուն Զաքարիայի եղբայրներից մէկի (հաւանաբար՝ պարոն Պետրոսի) ապօրէն զաւակն է եղել:

3 Տե՛ս «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 227, 282 եւ Քեշիշեան, Ցուցակ, էջ 579:

4 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 385

ցող եւ քարաւանային առեւտրի մէջ ներգրաւուած վաճառականներ ու արհեստաւորներ) ընդունել են կաթոլիկ դաւանանք եւ ճանաչել Արտազի արքեպիսկոպոսին՝ որպէս իրենց հոգեւոր առաջնորդ: Զաքարիա Ծործորեցին, իր գերդաստանի իշխանազունների գործակցութեամբ, թերեւս նաեւ Կիլիկիայից ու եւրոպական երկրներից նիւթական օժանդակութիւն ստանալով, Արտազի շրջանում ծաւալել է շինարարական աշխոյժ գործունէութիւն: Կառուցել է Ծործորի վանքը, ստեղծելով այնտեղ վանական դպրոց եւ մշակութային աշխատանքների համար նպաստաւոր պայմաններ[1] վերաշինել է Ս. Թադէի երկրաշարժից գրեթէ հիմնայատակ կործանուած վանքը եւ այլ վանքեր ու եկեղեցիներ, բարեկարգել Արտազի շրջանով անցնող միջազգային նշանակութիւն ունեցող ճանապարհը՝ կառուցելով գեղեցիկ կամուրջներ եւ այլն:

1320-ական թթ., երբ կաթոլիկ քարոզիչների քայքայիչ աշխատանքը թափ է ստանում Հայաստանում, ազգային եկեղեցու ինքնուրոյն գոյութեան անհրաժեշտութիւնը գիտակցող հայրենասէր գործիչները, Եսայի Նչեցի րաբունապետի գաղափարական ղեկավարութեամբ, հակագրոհի են անցնում: Շուտով Զաքարիա եպիսկոպոսի իրաւասութիւնից դուրս է բերւում իշխանութեան մայրաքաղաքն ու ողջ Ատրպատականը. Թաւրիզում ստեղծւում է Արտազի թեմին հակադրուող, Թադէոս առաքեալի անունը իրեն վերապահող եկեղեցական նոր թեմ, կաթոլիկութեան ակնյայտ թշնամի Մատթէոս եպիսկոպոսի աթոռակալութեամբ: 1340-ական թթ. Առաքելոց եպիսկոպոսի հոգեւոր իշխանութիւնից դուրս է բերւում նաեւ Ս. Թադէի վանքը. Արտազի կաթոլիկ դարձած տէրերը աւելի են սեղմում իրենց գործունէութեան շրջանակները՝ տեղի տալով ազգային եկեղեցու սկզբունքներին հաւատարիմ կուսակցութեան գրոհներին: Եւ այսպէս, Արտազի եպիսկոպոս Զաքարիա Ծործորեցու յաջորդներին ժառանգութիւն է մնում բզկտուած եկեղեցական մի թեմ, որ սահմանափակւում է Մակուի բերդի եւ Ծործորի վանքի անձուկ շրջանակներով: Սրանց հոգեւոր առաջնորդութիւնը՝ Մակուի իշխանութեան սահմաններից դուրս ճանաչում են միայն Ատրպատականի հայաբնակ շրջաններից կաթոլիկ դաւանանք ընդունած հայ բնակիչները:

6. Արտազի իշխանութիւնը Զաքարիա եպիսկոպոսից յետոյ

Զաքարիայի յաջորդ Տիրացու եպիսկոպոսը, որին պատշաճ է Տիրացու Բ անունը տալ (տարբերակելու համար XIII դ. վերջերին ապրած նոյնանուն գործչից), աթոռակալել է իր հօրեղբօր հետ միասին արդէն 1329 թ.. Զաքարիայի մահուանից յետոյ, մի քանի տարի միայնակ վարել է Արտազի եւ Ատրպատականի միւս հայաբնակ շրջանների հայ կաթոլիկների առաջնորդի պաշտօնը. 1350 թ. շարադրուած մի յիշատակարանի գրիչ մաղթում է նրան իշխել երկար տարիներ «ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ եւ ջահ լուսատու լինել բանիւ եւ գործով նուազեալ ազգիս մերոյ, հանդերձ հարազատ եղբար[բ]ք իւրովք, այլ եւ նախնեօք հարց եւ հաւուց եւ ամենայն արեան մերձաւորօք՝ կենդանեօք եւ հանգուցելովք»[2]: 1361 թ. տեղեկութիւն ունենք, որ Տիրացու Բ եպիսկոպոսը իր մերձաւոր ազգականներից մէկին՝ Զաքարիա ա-

1 Զաքարիա եպիսկոպոսն անձամբ զբաղուել է մատենագրական աշխատանքներով, որպէս մեկենաս զարկ տուել ինքնուրոյն ու թարգմանական երկերի ստեղծման, ձեռագրերի բազմացման աշխատանքներին: Նրա գործունէութեան այս բնագաւառին անդրադառնալու ենք Ծործորի վանքին նուիրուած դրուագի մէջ:

2 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 385

նունով՝ կարգել է իրեն փոխանորդ[1]*: Համբաւաւոր իր նախորդի անունը ժառանգած այս Զաքարիա եպիսկոպոսը յիշատակւում է նաեւ 1392 թ. շարադրուած երկու յիշատակարաններում՝ որպէս Թադէոս առաքեալի վիճակի Հայրապետ*[2] *եւ Արտազի գաւառի պարոնտէր: Ֆրա Մխիթարիչը Սաղմոսի մեկնութեան այդ թուականին ընդօրինակած ձեռագրի յիշատակարանում յայտնում է, որ «Շտապելով գրեցի զսա ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրաւնաւորի»*[3]*: Սրանից պարզւում է, որ Տիրացու Բ եպիսկոպոսը վաղուց արդէն հեռացել էր կեանքից՝ ասպարէզ թողնելով իր յաջորդ Զաքարիա Բ եպիսկոպոսին:*

Պատմական այս ժամանակաշրջանում գոյութիւն ունեցող հայ փոքրաթիւ եւ ուժասպառ հայ աւատատէրերը պատուարում էին իրենց տիրոյթները վանական (վակֆային) հողատիրութեան ցուցանակով: Պետական ատեանների առջեւ աւելի յաճախ ներկայանում էր աւատատէր գերդաստանի հոգեւորական սքեմ հագած ներկայացուցիչը հանդիսանալով վանական հաստատութիւնների վակֆ արուած կալուածների պաշտօնական տնօրէնը, սակայն աւելի յաճախ տուեալ գերդաստանին պատկանող կալուածքների տնտեսական գործերի տնօրինութիւնն իրագործում էր նոյն գերդաստանի աշխարհական տանուտէր-իշխանը:

Զաքարիա Բ եպիսկոպոսի աթոռակալութեան տարիներին, մասնաւորապէս XV դ. սկզբներին, Արտազի շրջանի հայկական իշխանութեան տիրակալը՝ պարոն Նուրադին էր: Ֆրա Մխիթարիչի ընդօրինակած վերոյիշեալ ձեռագրի մէջ 1406 թ. գրանցուած մի յիշատակարանում այս իշխանի մասին կարդում ենք. «Ի գաւառս Արտազու, ի գիւղս որ կոչի Մակու, առ պարոնութեան պարոն Նուրադնի»[4]*:*

Արտազի հայկական իշխանութեան վիճակի, պարոն Նուրադնի ու նրա որդիների, Մակուի բերդի անառիկ ամրութիւնների եւ յարակից հարցերի մասին բացառիկ հետաքրքրութիւն ունեցող տուեալներ է հաղորդում Սպանիայի Հենրիկոս Գ թագաւորի դեսպան, մեց ծանօթ Ռուի Գոնսալես դէ Կլաւիխոն, որ 1403-1406 թթ. անցել է Հայաստանով եւ ուշագրաւ տեղեկութիւններ գրանցել իր տեսածի ու լսածի մասին՝ «Մեծ Թամերլանի պատմութիւն» (Historia del gran Tamerlan) խորագիրը կրող ճանապարհորդական իր նոթերի մէջ: Այս աշխատութեան 78-րդ հատուածն ամբողջապէս նուիրուած է Մակուի հայկական իշխանութեան պատմութեանը եւ ժամանակակից վիճակի նկարագրութեանը:

Ստորեւ մէջ ենք բերում այդ հատուածը՝ գրեթէ ամբողջութեամբ (բաց թողնելով Մակուի բերդի գեղեցիկ նկարագրութիւնը, որի մասին խօսք է եղել նախորդ էջերում).

«Կիրակի, յունիսի 1-ին (1404)՝ երեկոյեան ժամերգութեան պահին նրանք (այսինքն՝ ինքը՝ Կլաւիխոն եւ իր շքախմբի անդամները - Լ. Խ.) հասան մի ամրոց, որ Մակու էր կոչւում եւ այդ ամրոցը պատկանում էր Նորադին անունով մի կաթոլիկ քրիստոնեայի, եւ (ամրոցի)

1 Այս տեղեկութիւնը գտնում ենք Մարաղայում մի կաթոլիկ հայի ընդօրինակած Աստուածաշնչի յիշատակարանի մէջ, ուր ասուած է. «Գրեցաւ աստուածաշունչս… ի քաղաքիս Մարաղա, ի մարդեղութեան Քրիստոսի ՌՅԿԱ (1361) եւ ի թվ. Հայոց ՊԺ, ի թագաւորութեան սուլթան Վախսին եւ ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թադէոսի տէր Տիրացուի եւ տէր Զաքարիայի» (յիշատակարանը քաղել ենք Մ. Տէր-Մովսիսեանի կազմած հայերէն ձեռագրերի անտիպ ցուցակից):

2 Վ. Հացունի, նշ. աշխ., էջ 310

3 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա, Երեւան, 1955, էջ 61

4 Նոյն տեղում

բոլոր բնակիչները նոյնպէս կաթոլիկ քրիստոնեաներ էին, թէեւ ծագումով հայ էին եւ իրենց լեզուն էլ հայերէնն էր, սակայն նրանք գիտէին եւ թաթարերէն եւ պարսկերէն: Այդ վայրում կար Ս. Դոմինիկի եղբայրների մի վանք[1]*: Ամրոցը կանգնած է բարձր լեռան ստորոտում գտնուող հովտի մի անկիւնում…*[2] *Ամրոցի ներսից սկիզբ է առնում մի յորդ աղբիւր, որի ջրից օգտւում է ժողովուրդն ու ջրում բազմաթիւ պարտէզները*[3]*: Ամրոցի ստորոտում տարածւում է շատ գեղեցիկ մի հովիտ, որի միջով անցնում է գետը. այն ծածկուած է որթատունկերով ու մշակուած արտերով:*

Թամուրբեկը յարձակուել է այս ամրոցի վրայ, բայց չի կարողացել գրաւել. ուստի պայմանագիր է կնքել տեղի իշխանի հետ, որի համաձայն նա պարտաւորուել է ըստ պահանջի տրամադրել նրան (Թամուրին) քսան հեծեալ: Սրանից ոչ շատ ժամանակ անց Թամուրբեկը զորքով անցնելիս է եղել նրա (Մակուի) մօտով. ամրոցի իշխանը կանչել է շուրջ քսան տարեկան իր որդուն, յանձնել նրան երեք լաւ թամբած ձիեր, որպէսզի նա տանի դրանք Թամուրբեկին նուէր: Երբ Թամուրբեկը հասնում է ամրոցի ստորոտը, իշխանի որդին դուրս է գալիս եւ իր հօր անունից առաջարկում (նուէր ընդունել) այդ ձիերը: Նա ընդունում է եւ հրամայում, որ այդ ամրոցին պատկանող հողերին իր զօրքը պէտք չէ որեւէ վնաս հասցնի: Այնուհետեւ Թամուրբեկն ասում է. քանի որ այս ամրոցի իշխանն ունի այսպիսի մեծ որդի, պատշաճ չէ նրան իր մօտ պահի. եւ նրան (որդուն) տանում է իր հետ: Յետագայում նա նրան յանձնում է Օմար-Միրզա կոչուող իր թոռանը, որպէսզի նա ապրի նրա մօտ, քանի որ նա (Օմար-Միրզան) Պարսկաստանի եւ այդ երկրի կառավարիչն էր: Եւ այժմ էլ նա ապրում է նրա մօտ եւ ծառայում այդ թագաւորի զօրքերում: Այդ թագաւորը բռնի ստիպել է ամրոցի իշխանի որդուն դառնալ մահմեդական (մաւր), տուել է նրան Սորղաթմիշ անունը եւ դարձրել իր թիկնապահը: Եւ չնայած նա այսպիսով մահմեդական է դարձել, սակայն իր կամքով չէ մահմեդական եւ մահմեդական չէ իր վարուեցողութեամբ:

Դեսպանները լաւ ընդունելութիւն գտան այդ ամրոցի իշխանի կողմից, որին շատ հաճելի էր նրանց քրիստոնեայ լինելը: Նա հիւրամեծար ընդունեց նրանց ու պատմեց, որ մի երկու շաբաթ դրանից առաջ Թամուրբեկի զարմիկ Հասան Միրաշան[4]*, որ նրա մերձաւորներից էր, մարդ էր ուղարկել պահանջելու, որ նա ընդունի իրեն ամրոցում, որովհետեւ ցանկութիւն ունի այնտեղ պահելու իրեն պատկանող ինչ-որ գանձ: Նա պատասխանել է, որ չի ընդունի նրան, բայց եթէ նա ունի պաշտպանութեան կարօտ գանձ, ապա թող յանձնի իրեն, եւ ինքը լաւ կպահպանի. դրանից յետոյ նա այդ մասին այլեւս ակնարկ չի արել:*

1 Խօսքն, անշուշտ Մործորի վանքի մասին է, որ XIV դ. առաջին յիսնամեակում ֆրանցիսկեան միաբանութեան ազդեցութեան տակ էր գտնւում, բայց յետագայում՝ Նախիջեւանի շրջանում դոմինիկեանների հաստատուելուց յետոյ, ամբողջապէս ընկաւ նրանց ազդեցութեան տակ:

2 Ինչպէս ասացինք վերը, բաց ենք թողնում Մակուի ամրոցի նկարագրութիւնը, որ տրուած է վերը (տե՛ս էջ 141): Մակուի այս նկարագրութիւնը "История Азербайджана" գրքում (т. I, Баку, 1958, էջ 215), անգիտութեամբ ադրբեջանական ամրոցի նկարագրութիւն է համարուել, ըստ այդմ հայ իշխան Նուրադինը՝ ադրբեջանցի ֆեոդալ ներկայացուելով:

3 Այս աղբիւրը սկիզբ է առնում ժայռի մէջ եղող մի մեծ (շուրջ 180 մետր երկարութիւն եւ 45 մետր լայնութիւն ունեցող) քարայրից, որը բնական պահեստի դեր է կատարել բերդի բնակիչների համար, իսկ յետագայում, քաղաքական յանցագործների համար բանտարգելութեան ապահով վայր դարձել: Քարայրի արդի վիճակը նկարագրուած է Վ. Մինորսկու կողմից ("Древности Маку», էջ 4-5):

4 Յ. Յակոբեանի թարգմանութեան մէջ այս անունը տառադարձուած է «Ջահան Շահ Միրզա» ձեւով, որ, իհարկէ, ճիշտ չէ: Հաւանաբար պէտք է կարդալ՝ Հասան-Միրանշահ:

Դեսպանորդներն այդտեղ (Մակուում) մնացին իրենց եկած օրը: Յետագայում, պարսից Թագաւորի բանակատեղում նրանք հանդիպեցին այդ ամրոցի իշխանի որդուն եւ զրոյց ունեցան նրա հետ: Այդ (Նուրադին) իշխանն ունէր սրանից երիտասարդ մի այլ որդի եւս. եւ նա դեսպանորդիներին ասաց, որ այդ որդին գիտնական է, լաւատեղեակ իր լեզուին, եւ եթէ կամօքն Աստուծոյ նրանք վերադառնան, ապա նա նրանց հետ (Եւրոպա) կճանապարհի իր այդ որդուն, որպէսզի նրանք տանեն նրան (Սպանիայի) Թագաւորի մօտ, որպէսզի Թագաւորի յանձնարարութեամբ պապը նրան այս երկրի եպիսկոպոս ձեռնադրի: Յիրաւի շատ զարմանալի է, որ այդ ամրոցը գոյատեւում է քրիստոնեաներից այդքան հեռու, ամէն կողմից շրջապատուած լինելով մահմեդականներով[1]:

Զարմանալի է նաեւ, որ նրանք լինելով հայ՝ դառնում են կաթոլիկ, դրանով գոհացնում տալով Աստուծուն»[2]:

Կլաւիխոյի «Ուղեգրութեան» ընդարձակ այս հատուածը հնարաւորութիւն է ընձեռում պարզելու Արտազի հայկական իշխանութեան վիճակն սկսած XIV դ. 80-ական թթ.: Լանկ-Թամուրի արշաւանքի մասին տեղեկութիւնը, անշուշտ, վերաբերում է 1386-1387 թթ., երբ կաղ աշխարհակալի զօրաբանակները, Թաւրիզը գրաւելուց յետոյ սկսեցին իրենց ասպատակութիւնները Ատրպատականի եւ Հայաստանի բարեբեր շրջաններում: Հայկական շատ բնակավայրեր ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեցին. Կողբ գիւղի բնակիչները, քաջարի տանուտէր Մարտիրոսի գլխաւորութեամբ դիմադրեցին Լանկ-Թամուրին «մեծաւ պատերազմաւ եւ սրտապինդ զօրութեամբ»[3]: Դիմադրութիւն կազմակերպեցին նաեւ Սուրմարի բերդաքաղաքի, Պռօշեանների իշխանանիստ Շահապոնք ամրոցի, Բջնիի, Երեւանի եւ շատ այլ վայրերի բնակիչներ: Կլաւիխոյի շարադրանքից պարզւում է, որ Մակուի բերդը պաշարելուց յետոյ, երբ ակնյայտ է դառնում նրա անառիկ լինելը, Թամուրը գերադասում է համաձայնութեան գալ Նուրադին իշխանի հետ, ճանաչել նրա իշխանութիւնն Արտազի շրջանի վրայ, պայմանով, որ ըստ պահանջի իրեն տրամադրուի 20 հեծեալից բաղկացած մի ջոկատ: «Սրանից ոչ շատ ժամանակ անց»,- ինչպէս ասում է Կլաւիխոն,- Լանկ-Թամուրը կրկին յայտնվում է այս կողմերում եւ իր մօտ պատանդ վերցնում Արտազի իշխանի երիտասարդ որդուն՝ Սորղաթմիշին: Այս դէպքը կատարուած պէտք է լինի աշխարհակալ բռնաւորի ձեռնարկած երրորդ մեծ արշաւանքի սկզբներին՝ 1399 թ., երբ նրա զօրքերը, մտնելով Անդրկովկաս, մինչեւ յաջորդ տարուայ ամռան ամիսները աւերում, գերում ու կողոպտում էին Վրաստանի եւ հիւսիսային Հայաստանի շրջանները:

1 Տեղին է այստեղ մէջբերել նաեւ Հանս Շիլտբերգերի վկայութիւնը Մակուի հայ կաթոլիկների մասին, որ վերաբերում է գրեթէ նոյն ժամանակներին: Շիլտբերգերը, գերի ընկնելով մահմեդականների ձեռքը, XIV դ. վերջերին եւ XV դ. սկզբներին շրջել է Մերձաւոր Արեւելքի երկրներում, Հայաստանում եւ Իրանում, առիթ է ունեցել շփուելու հայերի հետ, նոյնիսկ սովորել է հայերէն եւ կարեւոր տուեալներ գրանցել մեր ժողովրդի սովորութիւնների ու հաւատքի մասին: «Կայ նաեւ մի քաղաք,- գրում է նա,- ընկած մի լեռան վրայ եւ կոչուած Մակու. այստեղ հռոմէական դաւանանքի մի եպիսկոպոսութիւն կայ. նրա քահանաները պատկանում են դոմինիկեան միաբանութեանը, բայց երգում ու խօսում են միայն հայերէն լեզուով» (Hans Schiltbergers Reisebuch... Tübingen, 1885, էջ 58: Համտ. նաեւ՝ "Путешествия Ивана Шильтбергера по Европе, Азии и Африке, с 1394 по 1427 год", пер. с немецкого и снабдил примечаниями Ф. Брун, Одесса, 1866, էջ 49): Շիլտբերգերի ռուսերէն թարգմանիչ Ֆ. Բրունը հայերին վերաբերող էջերի թարգմանութեան ու ծանօթագրութեան ժամանակ դիմել է Գաբրիէլ Այուազովսկու օգնութեանը. վերջինս, անտեղեակ սկզբնաղբիւրների մէջ առկայ տուեալներին, վճռականօրէն յայտարարել է, որ Մակուում կաթոլիկ դաւանանքի հայերի մասին տեղեկութիւնները սխալ են: Ֆ. Բրունը, սակայն, յենուելով Կլաւիխոյի վրայ, հաւատ է ընծայել ճշմարտապատում Շիլտբերգերին:

2 **Рюи Гонзалес де Клавихо,** նշ. աշխ., էջ 158-162

3 «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոբեցւոյ», Փարիզ, 1860, էջ 18:

Դառնալով Ատրպատականի տիրակալ կարգուած Միրզա-Օմարի թիկնապահ, հայ իշխանազուն Սորղաթմիշը ստիպուած է լինում առերես ընդունել մահմեդականութիւն: Այս մասին տեղեկութիւն է հաղորդել նաեւ Թ. Մեծոփեցին՝ ասելով, որ քրիստոնեաների նկատմամբ թշնամական դիրք գրաւած Թամուրեան այս ամիրզադան «յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք (իմա՛ չորս - Լ. Խ.) իշխան յազգէս մերմէ, որք իբրեւ զճիռ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն»[1]: Այդ իշխաններն էին՝ Որոտանի տէր Բուրթէլ Օրբէլեանը՝ իր Սմբատ եղբօր հետ միասին, Եղեգիս տէր Գորգուն Օրբէլեանը, Աղցք գիւղի տէր Ազիտանը եւ Մակուի տէր Սորղաթմիշը[2]:

Սրանց յաջողւում է քրիստոնեայ ապրելու արտօնութիւն ստանալ Թամուրեանների պարտութիւնից յետոյ՝ 1408 թ., երբ Հայաստանում հաստատւում են Ջելաիրեանները, դաշնակից ունենալով Կարա-կոյունլու Թուրքմէնական ցեղի առաջնորդներին: «Եւ մարդիկ,- յայտնում է այդ մասին Թ. Մեծոփեցին,- որք յաւուրս չաղաթայինի հաւատոյ ուրացեալք էին, եկին ի հաւատս՝ Բուրթէլն Որոտնայ, Տարսայիճ՝ Եղեգեաց, Սուրղաթմիշ՝ Մակուայն, Ազիտան՝ Աղցից»[3]:

Թ. Մեծոփեցին Սորղաթմիշին ճանաչում է որպէս «տէր Մակուայ»: Ե՞րբ է Նուրադինը մահացել եւ ե՞րբ իշխանութիւնն անցել Սորղաթմիշին, ճշգրիտ որոշելու հնար չունենք. կարելի է ենթադրել, որ այդ տեղի է ունեցել շուրջ 1408-1410 թթ. յետոյ, երբ Մեծ Հայքի կենտրոնական նահանգների վրայ իր տիրապետութիւնը հաստատեց Կարա-Իւսուֆ Կարա-կոյունլուն, Մակուում իշխում էր արդէն Սորղաթմիշը: Կարելի է հաւանական համարել եւ այն ենթադրութիւնը, որ Արտազի վերջին այս իշխանի գործունէութեան տարիներին՝ նրա հետ միասին, որպէս նոյն շրջանի հոգեւոր առաջնորդ, իշխում էր նրա կրտսեր եղբայրը՝ անանուն այն իշխանազունը, որին Նուրադինը ցանկանում էր ուղարկել պապի մօտ Արտազի եպիսկոպոս ձեռնադրելու համար[4]: Կարա-Իւսուֆի մահուանից յետոյ իշխանութեան գլուխ անցած Իսքանդար Կարա-կոյունլուն՝ 1422-1427 թթ. եռանդուն քայլերի է դիմում իր պետութեան սահմաններում գտնուող կիսանկախ ամիրութիւնների վերացման, այլազգի ֆեոդալների պատկանող տիրոյթների բռնագրաւման ուղղութեամբ: Նա վճռական մարտեր է մղում յատկապէս Բաղեշում, Խլաթում, Ոստանում, Վանում, Խիզանում եւ այլ վայրերում ինքնավար իշխանութիւններ ստեղծած քուրդ ամիրների դէմ, որոնք յաճախ հանդէս էին գալիս թշնամիների բանակում եւ դժկամութեամբ էին ենթարկւում կենտրոնական իշխանութեան հրահանգնե-

1 **Թ. Մեծոփեցի,** էջ 67-68

2 **Թ. Մեծոփեցին** ասում է. «...եւ զտէրն Մակուայ հանին ի սուտ եւ յերկարնակ աղթարմայութենէն» (այսինքն՝ կաթոլիկ դաւանանքից հանելով՝ դարձրին մահմեդական): Այս իշխանի անունը՝ «Սորղաթմիշ Մակուայն» Մեծոփեցին նշում է մի այլ տեղ, երբ խօսում է բռնի ուրացուած վերոյիշեալ իշխանների կրկին քրիստոնեայ դառնալու մասին (տե՛ս ստորեւ):

3 **Թ. Մեծոփեցի,** էջ 73 (հմմտ. նաեւ **Լ. Խաչիկեան,** Սիւնեաց Օրբէլեանների Բուրթէլեան ճիւղը, «Բանբեր Մատենադարանի», N 9, 1969, էջ 180-182):

4 Տեսանք, որ Արտազի նախկին եպիսկոպոսները՝ փոխնիփոխ կոչւում էին Տիրացու (Ա), Զաքարիա (Ա), Տիրացու (Բ), Զաքարիա (Բ): Ելնելով այս փաստից՝ անանուն այս պարոնտէրին կարելի է կոչել Տիրացու Գ: Հէնց այստեղ նշենք, որ Զաքարիա Ծործորեցուց կամ, թերեւս, Տիրացու Բ-ից յետոյ Արտազի եպիսկոպոս դարձած լատինադաւան այս եպիսկոպոսները, ինչպէս պարզ երեւում է Կլաւիխոյի վերոյիշեալ տուեալներից, ձեռնադրւում էին Հռոմի եկեղեցու վեհապետից՝ իրենց բոլոր կապերը խզած լինելով Հայոց եկեղեցուց:

րին: Այս պայքարի ընթացքում՝ 1426 թ. վերջ է տրւում նաև Արտազի իշխանութեանը, որ գոյատևել էր շուրջ մէկուկէս դար, կարևոր դեր կատարելով Հայ բնաշխարհի քաղաքական ու մշակութային կեանքում:

Ապաւինելով բերդի անառիկ նկատուող ամրութիւններին Մակուի Հայ իշխանները, անտարակոյս, ուժեղ դիմադրութիւն պէտք է կազմակերպած լինէին. այդ մասին, սակայն, տեղեկութիւններ չեն պահպանուել:

Մակուի բերդի գրաւման և Արտազի իշխանութեան վերացման մասին անդրանիկ վկայութիւնը գրանցել է Ս. Թադէոս առաքեալի վանքի առաջնորդ Գրիգոր Մակուեցի Ջալալբեգեանը, որ յետագայում հաստատուեց Էջմիածնի վանքում և դարձաւ Ամենայն Հայոց կաթողիկոս: Երուսաղէմի մատենադարանի N 1582 ձեռագրի 342-րդ էջի վրայ նա գրել է.

«Ի յայսմ ամի թուականի՝
Յութ հարիւր ու եաւթանասնի,
Հընկից թուից եւս աւելի (1426)՝
Յարեաւ հողմն մրրկի,
Սքանդար անուն յազգէ թուրքի
Էառ զդղեակն Վանայ,
Նաև զՄակուա և զՆվանա»[1]:

Երկու տարի յետոյ, նոյնն ձեռագրի մէջ գրանցած ընդարձակ յիշատակարանում, Ս. Թադէի առաջնորդ եպիսկոպոսը աւելի հանգամանօրէն է անդրադարձել Մակուի անկման և Արտազի հայկական իշխանութեան բարձման դէպքերին, անքող բացայայտելով իր թշնամական դիրքը Մակուի «աղթարմայ» (այսինքն՝ դաւանափոխ եղած-կաթոլիկ դարձած) տէրերի նկատմամբ, որոնք Ս. Թադէի վանքից տարել էին իրենց միջոցներով կառուցել տուած դուռը (հաւանաբար՝ գեղեցիկ մի յօրինուածք), մեծ զանգակը, ժամատան գերանները և շարժական այլ իրեր. լինելով Արտազի շրջանի իշխաններ, նրանք միաժամանակ թոյլ չէին տալիս վերաշինել վանքը, և այլ դժուարութիւններ էին յարուցում ազգային եկեղեցու աւանդութիւններին հաւատարիմ մնացած եկեղեցականների առջև և այլն: Նկատի ունենալով Գ. Մակուեցու այս յիշատակարանի կարևորութիւնը՝ ստորև մէջ ենք բերում գրեթէ ամբողջութեամբ.

«Արդ՝ եղև գրութիւն սորա ի թւականութեանս Հայոց Մեծաց ի ՊՀԷ (1428), ի մայրաքաղաքի որ այժմ Դաւրէժ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարին, զի անդ սկսայ և փոքր ինչ գրեցի, և եկեալ առ ոտս սուրբ առաքելոյս Թադէոսի աւարտեցի՝ ի սոյն ամի, որում էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր, որդի Ղարա-Իւսուֆին, զանառիկ դղեակն Մակուայ, և զերկարեակ, ուրացող ազգն ախթարմայից տարագիր և տարաշխարհիկ արար ի վերայ երկրի, և կատարեցաւ բանն տեառն, զի զչարքն չարեաւ կորոյս, և զայգին ետ այլոց մշակաց:

Որ և ես նուաստից նուաստս, և տրուպս ամենայնի Գրիգոր անձն եղկելի՝ գծող ամին, ի վաղուց հետէ փափաքէի շինութեան առաքելական սուրբ աթոռոյս մերոյ, և ոչ տային թոյլ նախասացեալ ներհակքն բնակիչքն Մակուայ, որ և կրկին վայ եկն ի վերայ նոցայ և եբարձ զիշխանութիւն նոցա ի յԱրտազ գաւառէ, և ետ շխ Բայազիթ ոմն այլազգոյ, և որ յառաջառացեալ չարքն բարձեալ էին ի դրանէ սուրբ առաքելոյս և տարեալ թասպութեամբ և նախանձու, սա դարձեալ ի տեղի իւր եբեր մեծաւ յօժարութեամբ և հնազանդութեան սիրով՝ զդուռն եկեղեցոյս, և զմեծ զանգակն, և զգերան ժամատանս, և այլ ամենայն կերպիւ անիաթ և ողորմութիւն, զոր ի մարդապաշտ անիծեալ յազգէն յայն ոչ տեսաք ամենևին, զոր սա արար. որ և ըստ հնազանդութեան իւրոյ զհաս[ուց]ումն ի մարմնաւորս առցէ՝ զառողջութիւն և զդաւլաթ»[1]:

Հազիւ թէ հնարաւոր լինի չարախինդ այս տողերը հասարակական կարծիքի բնորոշ արձագանք համարել. Ս. Թադէի վանքի առաջնորդը, ինչպէս ասացինք, ունէր նաև անձնական հաշիւներ Մակուի «ախթարմա» տէրերի հետ:

Արտազի հայկական իշխանութեան անկման տխուր փաստին անդրադարձել են նաև այլ ժամանակակիցներ, և յատկապէս՝ աղթամարցի բազմաշխատ գրիչ Թովմա Մինասենցը իր ընդարձակ յիշատակարաններից մէկում, որ իրաւամբ ճանաչուած է որպէս ժամանակագրութիւն. «Իսկ ի յՊՀԶ (1427) թւին,- գրել է նա,- էառ նոյն Սքանդարն զանառիկ բերթն Մակուայ ի ձեռաց քրիստո[նէից... և անմխի]թար կրս[կիծ ե]հաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից, և այն եւս առաւ ի մէնջ»[2]:

Խորը կսկիծով են շաղախուած այս տողերը. հայրենասէր գործիչը ողբում է կենտրոնական Հայաստանում իր գոյութիւնը պահպանած հայկական վերջին այս իշխանութեան բռնագրաւումը օտար տիրակալների կողմից. հաւատքի ու դաւանանքի հարցերը մէկ կողմ նետելով:

Սորգաթմիշը Արտազի իշխանական գերդաստանի վերջին ներկայացուցիչն է, որ յիշատակուած է սկզբնաղբիւրներում: Մակուի բերդի անկումը և կաթոլիկ Հայ տէրերի իշխանութեան բարձումը տեղի է ունեցել, հաւանաբար, հէնց Սորգաթմիշի օրօք: Մեծ հաւանականութեամբ սրա ազգականներն ու յաջորդները որպէս գիւղատէր-կալուածատէրեր, շարունակել են իրենց գոյութիւնը պատմա-աշխարհագրական այդ միջավայրում նաև յետագայ մէկ-երկու դարերի ընթացքում: Այդ բնաշխարհի հայկական յուշարձանների, մանաւանդ վիմական արձանագրութիւնների մանրակրկիտ ուսումնասիրութեամբ կարող են ի յայտ բերուել Արտազի Հայ աւատատէրերի նոր անուններ, ինչպէս և նոր տուեալներ արդէն յայտնի անձնաւորութիւնների մասին: Այդ աշխատանքը թողնելով մեր յաջորդներին, ստորև փորձելու ենք տոհմաբանական մի ծառ կազմել՝ ներառելով նրա մէջ Արտազի հոգևոր և աշխարհիկ տէրերի ընտանիքին պատկանող ու մեզ յայտնի բոլոր անձանց անունները. խորհում ենք, որ այն կարող է իր նպաստը բերել որպէս շարադրուած նիւթի հակիրճ ամփոփում (տե՛ս յաջորդ՝ 80 էջ)[3]:

---

1 Ն. Պողարեան, Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հտ. հինգերորդ, Երուսաղէմ, 1971, էջ 368

1 Ն. Պողարեան, նշ. աշխ., էջ 368: Համմտ. նաեւ «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա., էջ 353 (այս հրատարակութիւնը, որ կատարուած է Մ. Տէր-Մովսիսեանի ընդօրինակութիւնից, ունի սխալ ընթերցումներ ու բացթողումներ):

2 «ԺԵ դարի յիշատակարաններ» մասն Ա., էջ 376

3 Տոհմածառը բաժանել ենք երկու մայր ճիւղերի՝ ձախակողմեանը յատկացնելով գերդաստանի հոգեւոր տէրերին, աջակողմեանը՝ աշխարհիկ իշխաններին: Եղբայրական առնչութիւնները կէտագծերով են ցոյց տրուած: Իւրաքանչիւր անուան կից դրուած են տուեալ անձնաւորութեան մասին յայտնի ծայրային թուականները:
Հոգեւոր տէրերին յատկացուած ճիւղին առընթեր՝ ձախ կողմից, տրուած է Ս. Թադէոս առաքեալի թեմի հայադաւան եպիսկոպոսների ցանկը:



1426 թ. յետոյ Մակուի նշանաւոր բերդը դառնում է Կարա-կոյունլու Թուրքմէնների կաբեւորագոյն ամրութիւններից մէկը: Ջհանշահ փադիշահի (1437-1467) անհնազանդ որդիներից Հասան-Ալին երկար տարիներ արգելափակուած էր անմատչելի այս բերդում: Իր հօր պատուհասից յետոյ, նա, որ «ի Մակու էր ի զընդան», ազատ է արձակւում եւ պատրաստւում դիմագրաւելու Աղ-կոյունլու Ուզուն-Հասանի յաղթականօրէն առաջ շարժուող զօրքերին, սակայն պարտութիւն է կրում եւ նրանով էլ վերջ է տրւում Կարա-կոյունլուների տիրապետութեանը Իրանում եւ Անդրկովկասում: Արտազի շրջանում բնակութիւն հաստատած Կարա-կոյունլու Թուրքմէնները այսօր էլ ամենաբազմամարդ էթնիկական տարրն են Իրանի հիւսիս-արեւմտեան սահմանագլուխը դարձած այդ շրջանի: Նրանց միջավայրում շատ տարածուած է Ալի-Իլահի աղանդը, որ ինքնատիպ մի խառնուրդ է մահմեդականութեան, քրիստոնէութեան եւ հեթանոսական հաւատալիքների[1]:

Արտազի շրջանում իրենց գոյութիւնը երկար պահպանեցին նաեւ կաթոլիկ դաւանանք ընդունած հայերը, կենտրոն ունենալով Տործորի Ս. Աստուածածնի վանքը եւ Կեծուկ գիւղը, որի ճիշտ վայրը որոշելու համար նիւթեր չունենք[2] 1654 թ. կազմուած մի վիճակագրութեան մէջ տուեալ է եղել այս գիւղում բնակուող 9 տուն (50 շունչ) կաթոլիկների մասին[3]: Այստեղից էր Գրիգոր Տործորեցի կոչուած վարդապետը, որ 1672 թ. գտնւում էր Վենետիկում, ուր ղրկուած էր Նախիջեւանի կաթոլիկ վանքերի շահի դրուած դրամագլխի տոկոսներն ստանալու գործով. 1675-1676 թթ. վերադարձած լինելով Տործորի վանք, նա ընդօրինակել է մի քարոզգիրք, կատարել է նաեւ թարգմանութիւններ՝ իտալերէնից հայերէն, գրել տաղեր եւ կրօնական այլ գրուածքներ[4]:

Արտազի շրջանի հայ կաթոլիկները, կտրուած լինելով ազգային կենսատու աւանդու-

---

1 Ըստ որոշ տուեալների՝ կարելի է ենթադրել, որ Կարա-կոյունլուների իշխող դինաստիայի անդամներից ոմանք եղել են կրօնական այս վարդապետութեան հետեւորդներ: Իսքանդարի եւ Ջհանշահի գործունէութեան մէջ դիտուած են դրուագներ, որ անբացատրելի պէտք է մնային, եթէ նրանց ուղղադաւան մահմեդական համարէինք: Առաւել չափով նոյնը կարելի է ասել Հասան-Ալու մասին, որը նորոգել է Արճէշի հայկական եկեղեցիներց մէկի գմբէթը, Մակուում կառուցել է Ս. Վարդան անունով եկեղեցի եւ այլն:

Ալի-Իլլահի աղանդի մասին առաջին գիտական խօսքն ասել է Ա. Թոխմախեանը, որ XIX դ. 80-ական թթ. սկզբներին եղել է Մակուի շրջանում եւ մի քանի օր ապրել աղանդաւորների գիւղերում: Ըստ նրա պատմածի՝ տարին մի քանի անգամ նրանք կատարում են սրբազան կրակը լուցանելու արարողութիւն՝ երկսեռ բազմութեամբ: Տարին մէկ անգամ, չելխի ձեռքով, մատաղի (ազապի) արարողութիւն է կատարւում. միսը բաժանում են բոլոր մեծահասակներին, ոսկորները (առանց ջարդելու) թաղում են: Ուխտ են կատարում սոսի ծառերին, մոմ են վառում, խունկ ծխում, մատաղ անում իրենց ուխտատեղերում, որ «Ղարա-օղլան», այսինքն՝ Թուխ-մանուկ են կոչւում: Չնայած արտաքուստ իրենց ձեւացնում են մահմեդական, բայց ո՛չ ծոմ են պահում, ո՛չ նամազ անում: Գինի եւ օղի գործածում են, առանց քաշուելու: Երբ նրանց հարցնում են, թէ Ալիին ինչու են աստծոյ որդի դաւանում, նրանք պատասխանում են. «Նրան, Որին դուք Քրիստոս էք անուանում, միեւնոյն է որին մենք Ալի ենք ասում, զանազանութիւնը անուան մէջ է միայն. մեր եւ ձեր (հայերի) միջեւ եղած տարբերութիւնը սոխի կճեպի չափ է» (**Ա. Թոխմախեան**, Մասիս լեռների հարաւային ստորոտները, մասն Բ, Թիֆլիս, 1882, 33-38):

Այս աղանդաւորների մասին գրել են նաեւ Իրան այցելած եւրոպացի ու ռուս արեւելագէտներ (տե՛ս, օրինակ, **В. Минорский**, Материалы для изучения персидской секты "Люди истины" или Али-Илахи, ч. I, М., 1911):

2 Տործորի վանքից շուրջ 2 կմ հիւսիս գտնւում է Բարոն գիւղը, որ այսպէս է կոչուել, հաւանաբար, պարոնապատկան կալուածք լինելով: Գուցէ այդտեղ են պատսպարուել Մակուի տէրերը 1426 թ. յետոյ՝ զրկուելով իրենց իշխանանիստ բերդից: Կարելի է ենթադրել նաեւ, որ Կեծուկը հէնց այս Բարոն կոչուած գիւղի հին անունն է:

3 **Հ. Ս. Էփրիկեան**, Բնաշխարհիկ բառարան, հտ. երկրորդ, Վենետիկ, 1907, էջ 386

4 **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երեւան, 1942, էջ 628. «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անւ. Մատենադարանի», հտ. Ա, էջ 1207, հտ. Բ, էջ 499

թիւններից. Նախիջեւանի շրջանի իրենց դաւանակիցների հետ միասին խզեցին իրենց կապը մայր ժողովրդից եւ ընդունեցին մահմեդականութիւն:

Փորձենք պարզել այս իրողութեան ժամանակը:

1732 թ. շարադրուած իր «Դրախտ ցանկալի» գրուածքի մէջ Ղազար Ջահկեցին կաթոլիկ հայերի կրօնափոխութեան մասին խօսում է՝ որպէս տարիներ առաջ կատարուած փաստ. «Նմանապէս եւ յերկրին Նախջուանայ ախթրմայից գեղորայքն,- գրում է նա,- բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ եւ Քռնայ... եւ Կէծուկ՝ սոքա ամենեքեան. իսկ Ապրակունիս եւ Շահրունիս եւ Խոշկաշէն եւ Ապարանէր, որ է եպիսկոպոսարան իւրեանց՝ սոցա մեծ մասն: Բայց ի գեօղաքաղաքին Ճահկայ եղեալ ախթարմայքն ոչ դարձան ի կրօնս պարսից վասն ազգիս միաբնակաց, որ գտեղեալք եմք ի միջի նոցա»[1]: Ըստ այսմ՝ կրօնափոխութիւնը տեղի է ունեցել 1732 թ. տասնամեակներ առաջ:

1691 թ. Երնջակի շրջանի Նորաշէն գիւղում շարադրուած մի յիշատակարանի մէջ ասւում է, որ արդէն 7 տարի է ինչ պարսից շահի զօրավարներից մէկը, «իբրեւ գաւակ ծովու» զօրքի գլուխ անցած, ասպատակութիւններ է կատարում, աւերում եւ աւարում է Գանձակից սկսած՝ մինչեւ Գողթան գաւառն ընկած շրջանները: Յիշատակագիրը այդ դէպքերի հետ է առնչում նաեւ շատ «սուտ քրիստոնեաների» (իմա՝ կաթոլիկ հայերի) մահմեդականութիւն ընդունելը. «Բազում սուտ քրիստոնեայք զսուրբ եւ զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին... եւ միաբանեցան ընդ պարսից»,- գրում է նա[2]:

Այս տեղեկութիւնների համադրումով յանգում ենք այն եզրակացութեան, որ Արտազի եւ Նախիջեւանի հայ կաթոլիկների զանգուածային հաւատափոխութիւնը տեղի է ունեցել 1691 թ. մի քանի տարի առաջ, եզրափակիչ արարը հանդիսանալով Մակուի եւ Քռնայի հոգեւոր եւ աշխարհիկ տէրերի միջավայրում XIV դ. առաջին տասնամեակներին սկիզբ առած հռոմէական եկեղեցու հետ միաբանելու անհեռատես շարժման:

II
ԱՐՏԱԶԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔԸ

1. Ծործորի վանքի տեղագրութիւնը

Արտազի հայկական իշխանութեան մշակութային կենտրոնը Ծործորի վանքն է եղել, որ հիմնադրուել է Զաքարիա եպիսկոպոսի կողմից եւ ծաղկել XIV դ. առաջին յիսնամեակում՝ հանդիսանալով գրական ու թարգմանչական գործունէութեան աշխոյժ միջավայր:

Ծործորի Ս. Աստուածածնի վանքի մասին հնագոյն վկայութիւնը 1314 թ. է եւ կապւում է Յովհան Երզնկացի վարդապետի գրական-մանկավարժական գործունէութեան հետ. հաստատուելով նորաստեղծ այդ վանքում՝ նա Ծործորեցի մականունն է ընդունել, եւ «Յովաննէս Երզնկացի» անունը ճոխացրել՝ «որ այժմ կոչիմ Ծործորեցի» վերադիր բանաձեւով: Վանական այս համալիրի ճշգրիտ վայրն առ այսօր չի որոշուած եւ, նոյնիսկ, այն կարծիքն է գե-

1 Ղազար Ճահկեցի, Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 333-334

2 Գ. Զարպհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 614-615

րիշխում, որ Ծործորի վանքը նոյն Ս. Թադէի վանքն է՝ սխալմամբ տարանջատուած[1]:

Այս տեսակէտն անհիմն է եւ անընդունելի: Ս. Թադէի վանքում ընդօրինակուած ձեռագրերի մէջ վանական այդ հաստատութիւնը յիշատակւում է այսպիսի բանաձեւերով. «Ի գաւառիս կոչեցելումն Արտազ... ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս եւ ի հանգիստս սուրբ առաքելոյս Թադէոսի, ընդ հովանեաւ ամենազաւր աջոյն Յիսուսի, առ ոտս սուրբ եւ աստուածային արեամբ ներկեալ նշանիս՝ սուրբ գեղարդեանս եւ սուրբ կուսին Սանդխտոյ, եւ այլ բազմահաւաք սրբոցս»[2], կամ. «Ի գաւառս որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թադէոսի եւ աստուածամուխ սուրբ գեղարդեանս»[3]: Ինչպէս տեսնում ենք, Ս. Թադէի վանքի սրբութիւնների շարքում Աստուածամօր անունն իսկ չկայ, մինչդեռ Ծործորի վանքի կապակցութեամբ ամէնուրեք յիշատակւում է միայն Աստուածածինը, ակնարկ անգամ չլինելով Թադէոս առաքեալի եւ Սանդուխտ կոյսի մասունքների, աստուածամուխ գեղարդի եւ «բազմահաւաք» այլ սրբութիւնների մասին: Ըստ այդմ անհերքելի է երկու տարբեր վանքերի գոյութիւնը:

Ս. Թադէի վանքը գտնւում է Մակու քաղաքից շուրջ 20 կմ հարաւ, Ղարաքիլիսա գիւղի մօտակայքում: Վանքը կանգուն է առ այսօր, ունենալով XVII դ. եւ XIX դ. սկզբներին կառուցուած յաւելեալ շէնքեր. ուխտագնացութեան սիրուած վայր հանդիսանալով իրանահայութեան համար՝ մասնակի վերանորոգութիւններով ամրացուել եւ շէնացուել է վերջին տարիներս[4]:

Ծործորի վանքի տեղը որոշելու համար բացառիկ նշանակութիւն ունի Մակուի շրջանի մասին առկա տեղագրական գրուածքներից ամենակարեւորը՝ Ա. Թոխմախեանի «Մասիս լեռների հարաւային ստորոտները» աշխատութիւնը: Այստեղ գրանցուած խիստ արժէքաւոր տուեալների հիման վրայ, օգտագործելով նաեւ տեղագրական ու քարտէզագրական այլ նիւթեր, հնարաւոր է լինում պարզել, որ Ծործորի վանքը գտնւում է Ակի կոչուող ձորի բերանում ուր միախառնւում են երեք գետակներ՝ սկիզբ տալով Զենգիմար կոչուող գետին, որ նոյնանուն կիրճով հարաւից հիւսիս հոսելով, Օղակ գիւղի մօտ թափւում է Մակու-չայ գետը[5]: Հայերի կողմից Զենգիմերա Ասպարածին (նաեւ Ասպարազին), իսկ տեղացի մահմեդա-

1 Հ. Ոսկեանը, յատուկ անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Հ. Ինճիճեան եւ Հ. Էփրիկեան երկու զանազան վանքեր կը համարին (հմմտ. «Ստորագրութիւն», էջ 205, Բնաշխարհիկ բառարան, Բ, էջ 251), Մ. Չամչեան կը գրէ իր Պատմութեան ցանկին մէջ (էջ 155)՝ «Ծործորու վանք, այն է ուխտ սուրբ Աստուածածնի ի վիճակ Թադէի յԱրտազ գաւառի» (հմմտ. եւ Պտմ. Գ, էջ 271): Հ. Զարբհանէլեան (Պտմ. հայ դպրութեան, էջ 757) եւ Հ. Պոտուրեան (Բազմավէպ, 1906, էջ 257) կը համարին միեւնոյն վանքը, ինչպէս նաեւ Ղ. Ալիշան (Յուշիկք հայրենեաց, Բ, էջ 472)»: Հ. Ոսկեանը քաղուածքներ է անում մի շարք յիշատակարաններից, որոնց մէջ գրչութեան վայրը մատնանշւում է այսպէս. «Ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի վանս Ծործորու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի»: Այս բանաձեւը անկողմնակալ ընթերցողի համար երկու տարբեր վանքերի գոյութիւնը հաստատող մի փաստ է. Ոսկեանը, սակայն, հակառակ եզրակացութեան է յանգել. «Այս վկայութիւններու եւ տեղիքներու վրայ հենելով,- գրում է նա,- հաւանական կը թուի թէ Ս. Թադէի եւ Ծործորու վանքերը միեւնոյն վանքերն են... գուցէ անոր եկեղեցիներէն մին նախապէս կոչուած է Ս. Աստուածածին եւ միւսը Ս. Թադէոս եւ կամ նախապէս թեմը Թադէոսի վիճակ եւ վանքը Ս. Աստուածածին անուանուած. եւ ապա քանի որ առաջնորդարանը մէկ հատ էր, կոչուած է՝ Ս. Թադէոսի վանք անունով» (նշ. աշխ., էջ 467-468):

2 ՄՄ ձեռ. N 3778, էջ 464ա

3 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 227

4 Documenti di Architettura Armena 4, S. Tadei vank, Milano, 1971

5 Ա. Թոխմախեանը գրում է. «Այս աշխարհի ամենամեծ գետը Մակու գետն է, որ ոռոգում է Մակուա դաշտը. նորա... երրորդ ամենամեծ ճիւղը բաժանւում է երեք գլխաւոր սկիզբների. առաջինը՝ Սարիդայիր, սկսւում է Օա-

կանների կողմից Մայրամ-Նանա կոչուած այդ վանքը, որի աւերակների ուսումնասիրութիւնը տեղում ուշագրաւ նիւթեր կարող է պարգեւել հայ բանասիրութեանը, անտարակոյս նոյն այն վանական հաստատութիւնն է, որ յայտնի է միջնադարեան հայկական աղբիւրներում Մործո-րի վանք անունով[1]:

Հանդիսանալով Արտազի հայկական իշխանութեան մշակութային կենտրոնը, Մործորի վանքը ծաղկում է ապրել XIV դ. առաջին յիսնամեակում, իր անուան հետ յաւերժ շաղկապե-լով Զաքարիա եպիսկոպոսի եւ նրա մերձաւոր խորհրդական ու կուսակից, նշանաւոր գիտնա-կան ու մանկավարժ Յովհաննէս Մործորեցու անունները: Ստորեւ, առանձին հատուածներով անդրադառնալու ենք նրանց գործունէութեանը, հանգամանօրէն ներկայացնելով յատկապէս Յովհան Մործորեցու գիտական աշխատանքի արդիւնքները:

2. Զաքարիա եպիսկոպոս Մործորեցի՝ մեկենաս ու մատենագիր

Ամէն մի բարձրաստիճան եկեղեցական պաշտօնեայ, մանաւանդ տասնամեակներ աթոռա-կալած եւ գաղափարական թէժ պայքար մղած մէկը, իր կեանքի ընթացքում պարտաւորուած է լինում պաշտօնական բազմաթիւ ու բազմաբնոյթ գրութիւններ առաքել իր ժամանակի հո-գեւոր եւ աշխարհիկ տէրերին, վերադաս եւ ստորադաս պաշտօնեաների ու այլ անձանց: Այդ-պիսի գրութիւնների հեղինակները, սովորաբար, տեղ չեն գրաւում մատենագրութեան պատ-մութեան մէջ: Այլ է Առաքելոց թեմի նշանաւոր առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսի պարա-գան: Նրա նամակներից մէկը՝ հաւաստագրուած Յովհան-Օրբելին, որ տպագրուած է գրեթէ ամբողջութեամբ[2], հեղինակի ճարտար ընդդիմախօս լինելու մասին առատ վկայութիւններ է պարունակում. նա ոչ միայն պաշտպանում է իր որդեգրած դիրքը դաւանաբանական պայքա-րում, այլեւ հակայարձակման անցնում, մեղադրելով Սիւնեաց մետրոպոլտին անհնազանդու-թեան եւ մեծամտութեան մէջ: Ժողովրդական բառ ու բանով եւ երգիծանքի հնարանքներով Զաքարիան համեմում է իր գրութեան տարբեր մասերը, ներկայանալով ընթերցողին որպէս բնածին տաղանդով օժտուած մի անձնաւորութիւն: Ըստ տեղեկութիւնների նա շարադրել է եւ այլ նամակներ՝ ուղղուած կաթողիկոսին ու այլ գործիչների:

Մործորի վանքի հիմնադիրը, վերոյիշեալ նամակներից բացի, հեղինակել է նաեւ այլ եր-կեր, որոնցից կարեւորները կամ դեռեւս չեն յայտնաբերուել, կամ էլ տեղ են գրաւելու հայ մատենագրութեան աւաղելի կորուստների ցանկում:

Մ. Չամչեանն իսկ գիտէր, որ Զաքարիան գրել է ինչ-որ պատմութիւն՝ «Ի վերայ կարգի վարդապետացն Հայոց» եւ այլ երկեր:

Հաւանաբար նոյն այս «Պատմութիւնն» ի նկատի ունէր լեհահայ գործիչ Վարդան Յու-նանեանը 1703 թ. յետոյ եւրոպացիներին յղած իր մի նամակում, եպս կաթողիկոսի հրաւիրած ժողովի մասին խօսելիս: Նա մերժում է այն կարծիքը, թէ Մաթուսաղան գիտնականագոյնն է եղել այդ ժողովի 195 մասնակիցներից. նրանց մէջ եղել են Արտազի արքեպիսկոպոս Տիրա-տուրի, Հաղբատի արքեպիսկոպոս Վահանի նման նշանաւոր մարդիկ: Որպէս աղբիւր այդ վկայութիւնների Յունանեանը ձեռագրի լուսանցքի վրայ նշել է. «Զաքարիայ Մործորեցի, Յաղագս ժողովոց, գլ. Թ»[1]: Այս նոյն աղբիւրի մասին հպանցիկ տեղեկութիւն ունի նաեւ լե-հահայ այլ գործիչ՝ Ստեփանոս Ռոշկան[2]:

Զաքարիա Մործորեցու պատմական ինչ-որ գրուածքի հեղինակ լինելու մասին լուր է ու-նեցել նաեւ Յովհաննէս Շահխաթունեանցը. 1847 թ. ապրիլի 25-ին Ներսէս Աշտարակեցուն յղած իր մի գրութեան մէջ նա խնդրում է Աստրախան ուղարկուող Մատթէոս եպիսկոպոսին յանձնարարել նաեւ հետեւեալը. «Ի գնալ նորա անդ հաւու լիցի գրատան եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի անդ յԱստրախան, եւ գամենայն առեալ ի տումար ըստ ամբողջութեան մատե-նիցն եւ ըստ հատուածոց հեղինակութեանց պարունակելոց ի նոսին, յորս, որպէս լսեմս, գտանի եւ պատմութիւն ի Զաքարիայէ Մործորեցւոյ, որ անգիտ է ամենեւին ցարդ»[3]:

Զաքարիայի պատմագրական գործունէութեան մասին այս տուեալները տարբերւում են միմեանցից. ըստ Չամչեանի նրա գրուածքը եղել է «Ի վերայ կարգի վարդապետացն Հա-յոց», ըստ Յունանեանի նա գրել է. «Յաղագս ժողովոց» խորագրով մի աշխատութիւն, իսկ Շահխաթունեանցի տուեալներով՝ ուղղակի «Պատմութիւն»: Հակուած ենք կարծելու, որ տար-բեր անուանումներով յիշատակուածը՝ միեւնոյն պատմագրական երկն է, որի մէջ, ամենայն հաւանականութեամբ, մանրամասն տեղեկութիւններ են եղել յատկապէս հայոց եկեղեցական ժողովների մասին: Այդ գրուածքն առ այսօր չի յայտնաբերուած, բայց որոնումները պէտք է շարունակել. բացառուած չէ, որ աշխարհով մէկ սփռուած հայերէն ձեռագրերից որեւէ մէ-կում, գուցէ առանց հեղինակի անուան յիշատակութեան, թաքնուած է Զաքարիա Մործորե-ցու գրչի այդ արգասիքը՝ նոր տուեալներ պարունակելով. Հայոց եկեղեցու պատմութեանը եւ Արտազի հայկական իշխանութեանն առնչուող անցուդարձերի մասին:

Զաքարիայի պատմագրական աշխատանքների հետ աղերսւում են նաեւ Արտազի եւ Կա-պադովկիայի աթոռների առաքելական ծագման ու յաջորդականութեան մասին հիւսուած ցանկերը: Արտազի թեմի առաքելական սկզբնաւորութեան մասին վաղ միջնադարում կեանքի կոչուած հնաբոյր աւանդութիւնների վերարծարծումն ու զարգացումը նոր շունչ էր տալու եւ հեղինակութիւն բերելու Մակուի հայ տէրերի գերդաստանին: Դրանով է բացատրւում այն

տարշ[ան] լեռների հիւսիս-արեւելեան կողմերից եւ ոռոգում է Թալզարարա հովիտը, երկրորդը՝ Կուասանց գետը, իջնում է Աւջուղի հարաւային սահմաններից եւ քերելով Արշակաւան քաղաքի աւերակները, Հարամլու ձորումը միանում է Սարիդալիրի հետ: Երրորդը բղխում է Սանատրուկ եւ Սահար լեռներից, անցնում է Թադէոս առաքելոյ վանքի տակից: Այս երեք ճիւղերը Ասպարածին վանքի աւերակների մօտ խառնւում են իրար եւ կազմում Զինգիմեր գետը, որ Ակի ժայռոտ եւ դժուարակոխ ձորից անցնելով հարաւից դէպի հիւսիս՝ Օղակ գիւղի մօտ խառնւում է վերոյիշեալ ճիւղերի հետ եւ շրջելով ընթացքը դէպի արեւելք, մտնում է Մագուա ձորը» («Մասիս լեռների հարաւային ստորոտները», մասն Ա, Թիֆլիս, 1882, էջ 34):

Այս շրջանի պատմական աշխարհագրութեան մասին արժէքաւոր տուեալներ կան նաեւ Հ. Օ. Աղաբեկեանի "К вопросу о месте аварайрского сражения" յօդուածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1967, N 4, էջ 91-114):

1 Մործորի վանքի շատ անյաջող լուսանկարը տպագրուած է Վ. Մինորսկու վերոյիշեալ "Древности Маку" աշ-խատութեան մէջ (էջ 11). հրապարակում ենք դրա հիման վրայ կատարուած ճշգրիտ գծանկարը (տե՛ս նկ. 5): Վանքի մասին Մինորսկու մօտ կարդում ենք. "В Бебеджике у самого входа Зенгимар в глубокую и непроходимую щель, по которой река выбегает на Макинскую долину (выше города Маку), находятся развалины часовни из тесаного камня, известной у мусульман под названием Марьям-нене, т. е. "матерь Мария"" (նոյն, էջ 11-12):

2 **Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Գ**, էջ 306-308

---

1 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ, 115. **Հ. Տաշեան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատե-նադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 114 (մեզ հետաքրքրող վկայութիւնը գրանցուած է Վիեննայի մատենադարանի N 12 ձեռագրի 52ա էջի վրայ):

2 **Հ. Տաշեան**, նոյն, էջ 681

3 **Ա. Սեդրակեան**, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 174-175

հանգամանքը, որ Ս. Թադէի վանքի վերաշինումից անմիջապէս յետոյ Զաքարիա պարոնտէրը շրջանառութեան մէջ է դնում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» կոչուած մի գրութիւն, որի անաքող նպատակն է անընդմէջ յաջորդականութեան կարծեցեալ շղթայով յարաբերութեան մէջ մտնել Գրիգոր Լուսաւորչի եւ Քրիստոսի աշակերտ Թադէոս առաքեալի հետ:

Զաքարիա եպիսկոպոսը իր այս յօրինուածքին պատմական ստոյգ գրութեան տեսք տալու մտահոգութեամբ յայտնում է, որ ձեռքի տակ ունեցել է Հայոց ՂԸ (այսինքն՝ մեր թուարկութեան 650) թուականին Մաղարթա վանքի սպասաւոր ոմն Յովհաննէսի գրած մի յիշատակարան: Ուշադիր քննութիւնը բերում է այն համոզման, որ ցանկի մէջ թուարկուած անուններն ըստ մեծի մասի յօրինուած են նոր ժամանակներում՝ Զաքարիայի գործակցութեամբ: Ուշագրաւ են այն տողերը, որ Զաքարիայի հաւաստումով պատկանում են, իբր, Մաղարթա վանքի վերոյիշեալ վանականին. «Բայց ի սոցանէ չկարացաք գտանել,- ասէ հաւաքողն յիշատակագրութեանս,- թէ ոյք եւ զի ոք կարգեալ եղեւ տեսուչ այսմ վիճակիս յաղագս կործանման եւ աւերման քաղաքիս եւ վանացս ի ձեռս բռնաւորաց եւ չարժից»:

Դժուար չէ այս տողերը շաղկապել XIII դ. վերջերին մոնղոլ զօրավար Նովրուզի կատարած խժդժութիւնների եւ 1319 թ. մեծ երկրաշարժի թարմ յիշատակների հետ, քննարկուող գրուածքի յօրինման պատիւը շնորհելով Զաքարիա Ծործորեցուն: Ըստ այդմ՝ նրան պէտք է վերագրուել նաեւ «Յաջորդութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի ի Կեսարիայ Կապադովկացոց վիճակի» կոչուած ցանկի վերախմբագրման աշխատանքը: Այս ցանկը եւս, նախորդի նման, կեանքի է կոչուել Թադէոս առաքեալի վիճակի հեղինակութիւնը ժամանակակիցների աչքում բարձրացնելու նպատակով: Կեսարիայի եպիսկոպոսական հինաւուրց աթոռը վաղուց ի վեր գոյութիւն չունէր. Արտազի հայ եպիսկոպոսը, իրեն հռչակելով Թադէոս առաքեալի յաջորդ, այս ցանկի թելադրութեամբ փորձում էր պճնուել նաեւ Կապադովկիայի հին եկեղեցու վեհապետների՝ Ղեւոնդի, Բարսեղ Կեսարացու եւ միւս նշանաւոր գործիչների փառաւոր անուններով[1]:

Զաքարիա եպիսկոպոսն ունեցել է նաեւ այլ գրուածքներ, մասնաւորապէս ինչ-որ կանոնագրութիւն, որի մասին ակնարկներ կան Յովհան Օրբելի մեզ ծանօթ մեղադրական թղթի մէջ: Սիւնեաց մետրոպոլիտն այստեղ նախատում է Արտազի եպիսկոպոսին Հայոց եկեղեցու աւանդութիւններն արհամարհելու, Կաթոլիկ եկեղեցուն դաւանաբանական զիջումներ կատարելու մէջ՝ վկայակոչելով վերջինիս գրած կանոնները: Պարզւում է նաեւ, որ Ծործորեցու այդ կանոններն ըստ էութեան եղել են եկեղեցական արարողութիւնների ու ծէսերի փոփոխման մասին հրահանգներ, որոնք ընդառաջել են Կաթոլիկ եկեղեցու պահանջներին[2]:

1 Այս ցանկերն առաջին անգամ հրապարակուել են «Արարատ» ամսագրի մէջ (1868, էջ 102-104), ապա արտատպուել բազմիցս (տե՛ս, օրինակ, «Հանդէս ամսօրեայ», 1941, էջ 44, «Սամուէլ Անեցու ժամանակագրութեան յաւելուած», էջ 279-281 եւ այլն): Վ. Հացունին իր «Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն» մեր կողմից վկայակոչուած աշխատութեան մէջ, վերլուծելով վերոյիշեալ տուեալները, յանգել է ընդունելի այն եզրակացութեան, որ «Ծործորեցւոյն ցուցակին «ի հին գրուցատրութենէ» եւ «գործակցութեամբ հոգւոյն» հաւաքուած անուանք՝ կրնային նպաստել իւր աթոռին փառաց, բայց ոչ եւ Հայ եկեղեցւոյ պատմութեան» (էջ 102): Ցաւալի է, սակայն, որ աղբիւրների գիտական քննութիւն կատարելու անհրաժեշտութեան մասին գեղեցիկ դատողութիւններ կատարող բանասէրը դառնում է ծայրայեղ դիւրահաւատ, երբ խօսքը վերաբերում է Կաթոլիկ եկեղեցու առաքելական սկզբնաւորութեան մասին գոյութիւն ունեցող աւանդութիւններին:

2 Մէջ ենք բերում Յովհան Օրբելի նամակի համապատասխան հատուածը. «Զգիտացաք թէ ինչ պատճառաւ դու ի մէնջ բաժանեցար. թէ զհոգեւոր տիրոջ հրամանքն պատճառես, նա ի քեզնէ ջուր միայն խնդրեց ի խորհուրդն

Մեծ է Զաքարիա եպիսկոպոսի դերը որպէս մեկենաս. նրա նախաձեռնութեամբ եւ օժանդակութեամբ գրուել ու թարգմանուել են աստուածաբանական երկեր եւ մեկնութիւններ (դրանց մասին խօսք կլինի ստորեւ), ընդօրինակուել են արժէքաւոր ձեռագրեր եւ այլն[1]:

3. Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի

Միջնադարեան հայ մատենագիրները քաջ տեղեակ էին, որ XIII-XIV դդ. ապրել ու ստեղծագործել են երզնկացի երկու Յովհաննէսներ՝ Պլուզը եւ Ծործորեցին: Հայ մեկնիչների մի ցանկի մէջ, օրինակ, գրուած է. «Զքերականն բացումք (մեկնեցին), բայց յետոյ Յոհաննէս վարդապետն Եզնկացին, յետ նորա՝ Եսային, յետ նորա՝ Յոհաննէս Ծործորեցին»[2], իսկ Ղ. Ջահկեցին ոչ միայն տարանջատում է նոյնանուն այդ երզնկացիներին, այլեւ համառօտակի ներկայացնում դրանցից իւրաքանչիւրի գրական վաստակը՝ վերջինիս մասին գրելով. «Յոհաննէս Ծործորեցին, այր քաջուսումն եւ մտապերճ: Սա մեկնեաց զԱւետարանն Մատթէոսի պարզ եւ դիւրահաս ոճով, եւ մեկնեաց զքերականութիւնն»[3]:

Մ. Չամչեանն էր հաւանաբար առաջինը, յանիրաւի միաձուլելով նոյնանուն այդ գործիչներին, կեանքի կոչեց անգոյ մի մատենագիր՝ Յովհաննէս Երզնկացի-Պլուզ- Ծործորեցի եռայարկ մակդիրներով, որ ապրել է, իբր, շուրջ մէկ դար, կեանքի վերջին տասնամեակներում հրաժարուել գաղափարական իր սկզբունքներից ու կնքել իր մահկանացուն որպէս Կաթոլիկ եկեղեցու սպասաւոր[4]: Այսպէս են պատկերացրել Յովհաննէս Երզնկացու կեանքն ու գործունէութիւնը եւ Գ. Զարպհանալեանը, եւ Ղ. Ալիշանը, եւ նրանց հետեւող բոլոր բանասէրները՝ մինչեւ վերջին տարիներս, երբ միացեալ ջանքերով լուծուեց այդ թիւրիմացութիւնը, Պլուզ եւ Ծործորեցի կոչուած Յովհաննէսների կրկին տարանջատումով[5]:

Յովհաննէս Պլուզ-Երզնկացու մասին գրուել են արդէն լուրջ ուսումնասիրութիւններ, որոնց մէջ տրուել է բազմավաստակ այդ մատենագրի երկերի գրեթէ ամբողջական ցանկը, հրապարակուել են նրա չափածոյ ստեղծագործութիւնների մեծ մասը եւ այլ գործեր:

առնու եւ ի դեկտեմբերի ԻԵ (25) զծնունդն առնել. դու զպահոց լուծումն յո՞ստ ուսար, եւ զառաքելական կանոնաց ջրումն կամ հեթանոսաբար զանխտիր շաղղակերութիւնն... եւ ի հաւատոյն ուրացութիւն յո՞ր Քրիստոսէ ուսար, կամ զեկեղեցիս Հայաստանեայց ուրանալ եւ յոլով նախատանօք նախատել, կամ զտարոյն բոլոր պահքն ի Ծ (50) օր բերեալ, որպէս քո գրեալ կանոնս էր, կամ զամուսնութիւն աշխարհի քահանայի՝ բառնալ, եւ զոչ արժանիսն քահանայագործութեան ի գործ սուրբ խորհրդոյն ածել, դու զքո խորհրդովդ զքեզ ի միջոյ քո եղբարցս եւ ի քո գլխոյն եւ յամենայն եկեղեցւոյ որոշեցեր՝ ուրիշ առանձին կանոնադրութեամբք» («Ճռաքաղ», 1860 էջ 55. ձեռ. N 8245, էջ 183):

1 Ներսէս Տարօնացի վարդապետը 1332 թ. գրած իր յիշատակարանում յայտնում է, որ իր պատուէրով ընդօրինակուող Աստուածաշնչի գրութեան համար ծախսուել է 1350 դրամ, որից 500-ը իրեն անփոխադարձ տուել է Զաքարիա եպիսկոպոսը. «Ու ես,- գրում է նա,- յայնժամ յարեալ անտի եւ գնացի ի սուրբ առաքեալն Թադէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս, եւ նա ետ ինձ Շ (500) դր[ամ]» («ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 246):

2 **Յ. Անասեան**, Հայկական մատենագիտութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ LXI

3 «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ջահկեցւոյ», Կ. Պոլիս, 1775, էջ 638 (հմմտ. **Հ. Անասեան**, նշ. աշխ., էջ XLVI):

4 **Մ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, էջ 271-274

5 Այս հարցի շուրջը ժամանակագրական կարգով արտայայտուել են Լ. Խաչիկեանը, Յ. Քիւրտեանը, Ա. Սրապեանը եւ Է. Բաղդասարեանը: Մանրամասնութիւնները տե՛ս Է. Բաղդասարեանի «Նոր տուեալներ Յովհաննէս Երզնկացու (Պլուզի) մասին» յօդուածի մէջ («Բանբեր Հայաստանի արխիւների», 1969, N 2, էջ 131-140):

Անհամեմատ քիչ աշխատանք է կատարուած Մործորեցի Յովհաննէսի կենսագրութեան եւ գիտա-մանկավարժական գործունէութեան կարեւոր դրուագների բացայայտման ուղղութեամբ: Ա. Սրապեանը, ուսումնասիրելով XIV դ. յիշատակարանների հրապարակուած ժողովածուն, նշել է, որ նրա կենսագրութեան հնագոյն տուեալը 1302 թ.-ից է եւ որ նա Մործորեցի մականունն է ընդունել 1314 թ. յետոյ[1]: Հ. Քիւրդեանը Վենետիկի Մխիթարեանց մատենադարանի N 2019 ձեռագրում գտել է «Խոստովանութիւն գաղտնեաց», «Խրատք ոգեշահք վասն զղջման եւ արտասուաց» եւ այլ խորագրերով մի քանի չափածոյ գործեր, որոնց հեղինակն է ոմն Յովհաննէս Երզնկացի՝ «որոյ գիւղն Պարկանց կոչի»: Նոյն ձեռագրի մէջ գտնւում են նաեւ նոյն Յովհաննէսի խնդրանքով Գէւորգ վարդապետի գրած ինչ-որ մեկնութիւններ: Այս Գէւորգին նոյնացնելով նշանաւոր Գէւորգ Սկեւռացու հետ (մհ. 1301 թ.), Քիւրդեանը ենթադրել է, որ Պարկանցի Յովհաննէսն էլ ոչ այլ ոք է, քան ինքը՝ Մործորեցի Յովհաննէսը, որ մինչեւ Արտազում հաստատուելը, իր ծննդավայր գիւղի անունով կոչուել է Պարկանցի[2]:

Հարկ է նշել, որ փաստական ոչ մի հիմք չունենք ի հաստատութիւն այս նոյնացումների: Մործորեցին մինչեւ Արտազի համանուն վանք տեղափոխուելը գրել է մի շարք յիշատակարաններ, որոնցից եւ ոչ մէկում իրեն Պարկանցի չի կոչել, իսկ մի յիշատակարանում, ինչպէս կտեսնենք ստորեւ, ասուած է ուղղակի, որ նա «էր ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ»: Անընդունելի է նաեւ Գէւորգ վարդապետին Սկեւռացու հետ նոյնացնելը, որը Երզնկայի կողմերում երբէք չի գործել[3]: Կարծում ենք ուստի, որ վերոյիշեալ ձեռագրի մէջ յիշատակուած վարդապետը՝ նշանաւոր Գէւորգ Երզնկացին է (մհ. 1416 թ.)՝ Յովհան Որոտնեցու աշակերտն ու Գրիգոր Տաթեւացու դասընկերը, որ XIV դ. վերջին Երզնկայի մօտ գտնուող Կապոսի վանքում դպրոց էր հիմնադրել եւ իր շուրջ համախմբել ուսման կարօտ մի տասնեակ աշակերտների: Հաւանաբար սրանցից մէկն էր սխալմամբ Յովհաննէս Մործորեցու հետ նոյնացուած Յովհաննէս Պարկանցին[4]:

Յովհաննէս Երզնկացին, իր իսկ վկայութեամբ, եղել է «երջանիկ վարժապետ» Եսայի Նչեցու աշակերտը: Գլաձորի համալսարանում սովորելու տարիներին ընդօրինակել է մի քանի ձեռագիր, բոլորն էլ իմաստասիրական ուշագրաւ նիւթերի ժողովածուներ: 1298 թ. «ի գաւառիս Վայոց ձոր, ի վանս Գլաձոր» արտագրել է Մ. Խորենացու խմբագրած ճարտասանական գրութիւնների ձեռնարկը՝ «Պիտոյից գիրքը», որի յիշատակարանում իրեն կոչում է «յոգնամեղ ծառայ… աշակերտ բանի»[5]: Չորս տարի յետոյ՝ 1302 թ., նոյն վայրում («ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Աթէնս»): Յովհաննէսն ընդօրինակել է Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատութեան մի մասը. յաջորդ

1 Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Երեւան, 1958, էջ 31-32

2 Հ. Քիւրդեան, Յովհաննէս Երզնկացի-Մործորեցի (Նորագիւտ նիւթեր Ս. Ղազարու մէկ նոր ձեռագրէն), «Բազմավէպ», 1954, էջ 242-245

3 Է. Բաղդասարեան, Գէւորգ Սկեւռացու «Վանքը» («Բանբեր Մատենադարանի», N 7, 1964, էջ 399-434)

4 Նորայր եպս. Պողարեանը վերջերս հրատարկուած իր «Հայ գրողներ» արժէքաւոր աշխատութեան մէջ (Երուսաղէմ, 1971, էջ 406) տալիս է այդ աշակերտների ցանկը՝ «Աբրահամ աբեղայ, Արիստակէս Սեբաստացի, Աւետիք Կրօնաւոր, Յակոբ վրդ. Ղրիմեցի եւ Յովհաննէս աբեղայ Երզնկացի»: Այս Յովհաննէսին նոյնացնելով Պարկանցի Յովհաննէսի հետ՝ լրացնում ենք Նորայր եպիսկոպոսի ցանկը Խաչատուր կրօնաւորի անունով: Սրանք բոլորն էլ վարժ ու ժիր գրիչներ են եղել:

5 ՄՄ ձեռ. N 6273, էջ 100 (այս ձեռագիրը Ղ. Փիրղամէլեանի հաւաքած յիշատակարանների ժողովածուն է)

մասի գրիչ Մկրտիչը իր գործընկերոջը ներկայացնում է ոչ որպէս «բանի աշակերտ», այլ «սպասաւոր… բանի մերձ ի կատարելութիւն», այսինքն՝ վարդապետական աստիճան ստանալու նախադռանը կանգնած մի անձնաւորութիւն[1]: Մէկ տարի անց Յովհաննէս Երզնկացին յիշատակւում է արդէն որպէս վարդապետ. նրա աշակերտներից մէկը, որի անունը ցաւօք անյայտ է մնում, նրա պատուէրով ընդօրինակում է քերականագիտական, բնագիտական եւ իմաստասիրական արժէքաւոր յօդուածների մի ժողովածու, որի յիշատակարանում դրուատում է իր ուսուցչին, ընդգծելով գրչութեան արուեստի մէջ նրա քաջավարժ լինելը[2]: Յաջորդ տեղեկութիւնը մեր գործչի մասին ստանում ենք 1306 թ. Գլաձորի վանքում իր իսկ ընդօրինակած ձեռագրի չափածոյ եւ արձակ յիշատակարաններից: Ձեռագիրը պարունակում է ուշագրաւ եւ հազւագիւտ բնագրեր՝ Ստեփանոս Սիւնեցու եւ Նանա վարդապետի գրած «Յովհաննու Աւետարանի մեկնութիւն»-ները, Անդրէաս Կապադովկացու «Մեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու» աշխատութիւնը եւ այլ հետաքրքրական բնագրեր: «Դարձեալ,- գրում է Յովհաննէս վարդապետն իր աշխատանքի մասին,- յիշեսջիք ի Քրիստոս եւ զիս՝ զտարժանեալ մեղսամերկ ոգիս՝ զնուաստ Յով[աննէս] Եզընկայեցի սպասաւոր բանի, որ յարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխեղծ մատամբս ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ, եւ ի վարժ կրթութեան երկասէր անձին բանասիրի, եւ ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ ամենայն նախնեաց»[3]:

Հաւանաբար հէնց այս տարիներին «ի դառն գաղափարաց ստուգեալ», այսինքն վերծանելով դժուարընթեռնելի ձեռագրեր ու սրբագրելով աղաւաղուած տեղերը, Յովհաննէս Երզնկացին ընդօրինակել է եւս մի ձեռագիր, որը պարունակում է Վահրամ Րաբունու Փիլիսոփայական երկերը, Գր. Նարեկացու «Ողբերգութեան մատեանի», Կիւրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի», Գրիգոր Նիւսացու եւ Աստուածաբանի աշխատութիւնների լուծմունքներ եւ այլ հետաքրքրական նիւթեր[4]:

Սրանք են Յովհաննէս Երզնկացու նախամործորեան շրջանի մասին առկայ տեղեկութիւնները: Դրանց համադրումով պարզւում է, որ նա, ծնուել է շուրջ 1270-ական թթ. Երզնկա քաղաքում, XIII դ. վերջին տարիներին սովորել է Գլաձորում. վարդապետական գաւազան է ստացել 1302-1303 թթ. ու դարձել նշանաւոր ուսումնական այդ հաստատութեան ուսուցիչ, Եսայի րաբունապետի օգնականներից մէկը, այդ պաշտօնում մնալով, հաւանաբար, մինչեւ Մործորի վանք տեղափոխուելը:

Գլաձորում սովորելու եւ աշխատելու տարիներին Յովհաննէսն ընդօրինակել է մի շարք ձեռագրեր. դրանցից առնուազն չորսն հասել են մեզ ու վկայում են գրչի լայն հետաքրքրութիւնների մասին: Նա, մասնաւորապէս, ուշադրութիւն է դարձնում գիտական եւ իմաստասիրական ծանրակշիռ աշխատութիւնների վրայ, որոնց վերծանման եւ ընդօրինակման համար ջանքեր չի խնայում:

1 «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա,- գրում է նա,- եղեւ… ձեռամբ ուրումն սրբազան քահանայի՝ առն իմաստնոյ եւ ճարտարի, որ էր ամենայն աստուածաշունչ կտակարանացն վարժեալ՝ սպասաւոր գոլով բանի մերձ ի կատարելութիւն՝ Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ» (ՄՄ ձեռ. N 6558, էջ 637բ. հմմտ. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 5-6):

2 ՄՄ ձեռ. N 598, էջ 213բ (հմմտ. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 17-18):

3 ՄՄ ձեռ. N 2520, էջ 344ա. չափածոյ յիշատակարանը գտնւում է ձեռագրի 143բ էջում (հմմտ. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 43-44):

4 ՄՄ ձեռ. N 59 (տե՛ս «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 649)

Որոշակի տուեալներ չունենք պարզելու, թէ երբ եւ ինչ պարագաներում է Յովհաննէս Երզնկացին Սիւնիքից Արտազ փոխադրուել եւ հաստատուել Տորձորի վանքում, բայց գիտենք, որ այդ տեղի է ունեցել 1314 թ. առաջ: Հէնց այդ թուականին «Ճանճին խուղ» կոչուած ինչ-որ վայրում Խաչիկ անունով մի գրիչ ընդօրինակել է իմաստասիրական ու մեկնողական նիւթերի հարուստ մի ժողովածու, որի մէջ տեղ է յատկացրել նաեւ մեր Յովհաննէսի երեք քարոզներին, դրանցից առաջինի խորագրում՝ Երզնկացի կոչմանն աւելնթեր՝ դնելով նաեւ «որ եւ Տորձորեցի» որոշիչը[1]:

Տորձորեան շրջանի առաջին տարիները գիտական վաստակի առումով Յովհաննէսի համար բեղմնաւոր չեն եղել: Մեր վարդապետի կեանքում, ինչպէս կտեսնենք ստորեւ, դարձակէտային նշանակութիւն է ունեցել 1316 թ. Նրա շուրջ համախմբուել են, ինչպէս ինքն է ասում՝ «բանաւէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան», եւ նա, իրագործելով ուսումնական իր ծրագիրը եւ գոհացում տալով ուսումնասէր աշակերտների հարցասիրութեանը, շարադրել է իր աշխատութիւնները՝ գիտական մեկնութիւններ, քարոզներ եւ այլ գործեր:

Ստորեւ որոշ հերթականութեամբ ներկայացնում ենք Յովհաննէս Տորձորեցու մեզ յայտնի բոլոր աշխատութիւնները, անհրաժեշտ տեղեկութիւններ հաղորդելով իւրաքանչիւրի բովանդակութեան, գրութեան հանգամանքների, գիտական ու ճանաչողական նշանակութեան եւ յարակից հարցերի մասին:

ա. Համառօտ տեսութիւնք քերականի

Ամբողջական խորագիրն է «Նուաստ վարդապէտի Յոհանիսի Եզընկայեցւոյ, որ եւ Տորձորեցի, արարեալ համառօտ տեսութիւն քերականի»[2]:

Գրութեան հանգամանքների մասին ակնարկներ կան աշխատութեան սկզբում զետեղուած փոքրիկ յիշատակագրութեան մէջ[3] եւ ընծայական-վերջաբանում, այստեղ, հաւանաբար դիմելով պատուիրատու Վարդանին, հեղինակը գրում է. «Յորմէ տեղեկացեալ քո ներհուն հմտութեամբ ի սակաւ աշխատութենէս բարձօղդ արուեստիս՝ մի անճաշակ եւ զմերս թողցես փափագ, այլ յիշմամբ բարոյն ի տէր եւ զմեզ մասնաւորեսցես յագեցումն ի Քրիստոս Յիսուս ի տէր մէր, որ է օրհնեալ ընդ հօր եւ արարչակից հոգոյն իւրոյ, որպէս էրն ի սկզբանէ եւ այժմ եւ յանբաւ յաւիտեանս»[1]:

Քերականութեան այդ դասագրքի հիմքում դրուած է Յովհաննէս Պլուզի համահաւաք «Մեկնութիւն քերականին», որ աղբիւր է հանդիսացել նաեւ Եսայի Նչեցու, Առաքել Սիւնեցու եւ այլ քերականագէտների համար: Նիւթի ընդգրկման առումով հետեւելով իր մեծանուն հայրենակցին, Տորձորեցի դարձած վարդապետը տարբերւում է յունաբան հայերէնով շարադրուող նախկին քերականագէտներից իր պարզ լեզուով ու յստակ ձեւակերպումներով. «Եթէ նոյնիսկ,- գրում է այդ կապակցութեամբ Լ. Խաչերեանը,- առանձին նախադասութիւնների բառային կազմը նրա (իմա՛ Տորձորեցու) մօտ հիմնականում նոյնն է լինում Երզնկացու (իմա՛ Պլուզի) համեմատութեամբ, ապա դրանց շարադասութիւնը ամբողջութեամբ փոփոխութեան է ենթարկւում համապատասխանեցնելով ժամանակի լեզուամտածողութեանը[2]:

Այս երկի գիտական արժանիքների գնահատականը թողնելով լեզուաբաններին, նշենք այստեղ, որ Յովհաննէս Տորձորեցին մեծ ճիգ է գործադրել Դիոնիսիոս Թրակացու եւ նրա հայ մեկնիչների ժամանակավրէպ դատողութիւններից ձերբազատուելու եւ ժամանակի գիտական պատկերացումներին համապատասխան եւ ուսումնական նպատակների համար դիւրմատչելի մի ձեռնարկ ստեղծելու համար:

Աշխատութիւնը արժէքաւոր է նաեւ հեղինակի փիլիսոփայական հայեացքների ուսումնասիրութեան առումով: Մասնաւորի (անհատի) եւ ընդհանուրի (տեսակի) յարաբերակցութեան հարցը քննութեան նիւթ դարձնելով, մեր հեղինակը մերժում է Պլատոնի իդեալիստական տեսակէտը, պաշտպան կանգնելով Արիստոտելին. «Յայսմ տեղւոջ,- գրում է նա,-ուսուցաւորս (իմա՛ Դիոնիսիոս Թրակացին) Արիստոտելի կարծեացն հետեւի, որ զանհատն պատուական եւ առաջին գոյացութիւն վարկանի, քան զտեսակն, թէպէտ Պղատոն զառաստականն[3] ասաց առաջին, իբրեւ թէ ի տեսակաց ոմանց միրական գաղափարեալս ըստ ժամանակի: Բայց Արիստոտել զխեկն առեալով, թէ տեսանելն հաստատուն է քան զլսելն, որպէս զարեգակն ոչ ոք կարէ մխտել, որ է անյայտ, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք, վասն որոյ եւ սա նախադասեաց առասականին»[4]:

«Յամառօտ տեսութիւն քերականին» աշխատութեան մէջ ուշագրաւ տուեալներ կան հաստատապէս պնդելու, որ Յովհաննէս Տորձորեցի վարդապետը քաջ լեզուագէտ է եղել, տի-

1 Յովհաննէս Երզնկացու կեանքի ծորձորեան շրջանի մասին լրացուցիչ տուեալներ ձեռք բերելու ակնկալութեամբ ուշադիր քննեցինք Մաշտոցի անւ. Մատենադարանի N 626, 627 եւ 4234 ձեռագրերը եւ պարզեցինք, որ դրանք ստեղծուել են XIV դ. առաջին երկու տասնամեակների ընթացքում, նոյն Խաչիկ գրչի ջանքերով: Այդ ձեռագրերից միայն N 627-ի մէջ է նշուած «Ճանճին խուղ» այլուստ անյայտ տեղանունը, որ թւում է, թէ ինչ-որ բնակավայրի անուն չէ, այլ յայտնի մի վանքի շրջափակում գտնուող մի նեղ խցի (խուղ՝ նշանակում է հիւղ, խուց, խցիկ) զաւեշտական յորջորջում: N 626 ձեռագրի յիշատակագրութիւնների մէջ Խաչիկ գրիչը տալիս է իր (էջ 94ա) եւ ձեռագրի պատուիրատու Վարդանի անունը՝ կոչելով նրան «սրբազան եւ երջանիկ, սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոս տէր Վարդան» (էջ 28ա): Նոյնացնելով այս Վարդանին 1315 թ. Ս. Թադէի վանքում յիշուող Վարդանի հետ, որ պատուիրատուն է Մատենադարանի N 3778 ձեռագրի (սրա խնդրանքով Յովհաննէս Տորձորեցին 1316 թ. շարադրել է իր «Մեկնութիւն Դանիէլի» աշխատութիւնը), կարծում ենք, որ Խաչիկ գրիչն աշխատել է հէնց Ս. Թադէի վանքում: Այսպիսով, «Ճանճին խուղ» կոչուածը մի նոր գրչավայրի անուն չէ, այլ Արտազի նշանաւոր այդ վանքի խցերից մէկի ծաղրական յորջորջումը: Տորձորի վանքում հաստատուած Յովհաննէս Երզնկացին, բնականաբար սերտ կապերի մէջ է եղել մի քանի կիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Ս. Թադէի վանքում աշխատող գրչի մշակների հետ՝ արդէն 1314 թ. ճանաչուած լինելով նրանց կողմից որպէս «տիեզերալոյս վարդապետ» եւ ստացած լինելով Տորձորեցի մականունը:

2 Օգտագործել ենք Մատենադարանի N 7037 (էջ 12ա-75ա) ձեռագիրը: Քերականութիւնը սկսւում է այսպէս. «Միշտ բաղձանք բանին բնաւորեալ է ի յոգիս բանականաց արարչական դրութեամբ, յորմէ զարթուցեալ յօժարիմք ի քննութիւն սորին, որոյ դուռն եւ մուտ է քերականութեանս արհեստս…»:

3 Յիշատակագրութիւնն այս է. «…եւ զնուաստ աշխատողս Յոհ[աննէս] յաղաւթս յիշեա: Զստացող սորա զՎարդան եւ զծնողսն իւր յիշեցէք ի Քրիստոս» (ՄՄ ձեռ. N 7037, էջ 11բ):

1 ՄՄ ձեռ. N 7037, էջ 75ա

2 Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ. Գ. Խաչերեանի, Երեւան, 1966, էջ 28 եւ հետ.

Տեղին է նշել, որ Գ. Ջահուկեանի «Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում» (Երեւան, 1954) աշխատութեան մէջ Տորձորեցու քերականութեան մասին խօսք չկայ: Հեղինակը, հետեւելով արդէն յաղթահարուած աւանդոյթին, մի անձնաւորութիւն է համարել Յովհաննէս Պլուզ եւ Յովհաննէս Տորձորեցի գործիչներին, ըստ այդմ էլ բաւարարուել է միայն Պլուզի քերականական հայեացքների վերլուծութեամբ:

3 Քիչ յետոյ տալիս է «առասական» տերմինի բացատրութիւնը. «Եւ առասական է որ զհասարակաց էութիւն ցուցանէ, որգոն՝ մարդ, ձի»:

4 ՄՄ ձեռ N 7037, էջ 45ա

բացեալ է յունարէն, լատիներէն, թերեւս նաեւ պարսկերէն լեզուներին[1]:

բ. Մեկնութիւն Մատթէի Աւետարանին

Հեղինակային ընդարձակ խորագիրն՝ այսպէս է. «Լրումն Թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ յԱւետարանին որ ըստ Մատթէի, հաւաքեալ նուաստ վարդապետի Յովհաննու Երզնկայեցւոյ, որ եւ ասի Ծործորեցի»:

Ներսէս Շնորհալին, մինչեւ կաթողիկոսանալը, սկսել էր մեկնել Մատթէոսի Աւետարանը, հասնելով մինչեւ V գլխի 17-րդ համարը. կարեւոր այդ աշխատանքն ինչ-ինչ պատճառներով անկատար էր մնացել. որոշ փորձեր կատարուել էին շարունակութիւնը լրացնելու, բայց անյաջող: Նկատի ունենալով այդ եւ ընդառաջելով Ծործորի վանքում իր շուրջ համախմբուած աշակերտներին՝ Յովհաննէս Երզնկացին 1316 թ. լրացնում է այդ Թերին, իր կատարածի մասին գրելով ընդարձակ յիշատակարան, որի կարեւոր մասը մէջ ենք բերում ստորեւ. «...Ես՝ նուաստս ի Քրիստոս եւ յետինն յորդիս Սիոնի՝ ապիկար ոգիս Յոհաննէս Եզնկայեցի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի Վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, այլ եւ ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան, յորոց յորդորմանէ եւ ի փափաքելի խնդրոյ եդեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյն աւետարանին Մատթէի, լնլով զԹերի նորին ըստ կարողութեան իմում»[2]:

Ղ. Ալիշանի հեղինակաւոր կարծիքով՝ Շնորհալու Թերին լրացնողը մեծատաղանդ բանաստեղծի «անուշ գրչէն հեռու չի մնար», այսինքն՝ կարողացել է ստեղծել համահաւասար մակարդակի աշխատութիւն[3], իսկ Ներսէս Տէր-Ներսէսեանի վկայութեամբ՝ նա «հմուտ է աստուածաբանական եւ բարոյական հարցերու»[4]. ի լրումն կարող ենք աւելացնել, որ Մատթէոսի մեկնութեան Ծործորեցու բաժինը, կեանքի տարբեր բնագաւառներից քաղուած հետաքրքրական օրինակներ պարունակելով, օգտակար նիւթ է ընձեռում պատմաբաններին՝ ուսումնասիրելու ժամանակի սոցիալ-տնտեսական այլազան երեւոյթները: Մի առիթով նա յայտնում է, որ «զոն յաշխարհի ըստ քաղաքի-քաղաքի սովորութիւն՝ տալ զարծաթն ի սեղանաւորս շահի», մի այլ առիթով արձանագրում, որ շատերը տրտնջում են եւ, նոյնիսկ, մեղադ-

1 Պարսկերէնի իմացութեան մասին տուեալը որոշակի չէ. անդրադառնալով յարաբարդ բառերին՝ Ծործորեցին ասում է, որ այդպիսիք շատ կան «ի պարսից եւ ի մերս լեզու, որպէս Նիւ-Խոսրով, Ջուան-Խոսրով, Վարազ-Տրդատ, եւ մերս Լեւոն, Քաջ-Լեւոն, Քաջ-Վարդան եւ այլ սոյնպիսիք» (ՄՄ ձեռ. N 7037, էջ 42ա): Յունարէն եւ լատիներէն լեզուների իմացութեան մասին աներկբայելի փաստեր ենք գտնում աշխատութեան բառերի սեռերին նուիրուած բաժնում. «Մերք,- կարդում ենք այնտեղ,- ոչ ի գոյութենէ վերակոչին, զի ոչ զբնութիւնս յայտնեն, այլ զձայնի նշանակս, որք ի յունին եւ ի հռոմայեցին յիով է եւ յատուկ անուն արական եւ իգական եւ չէզոքին, զի որք յանուանց սկզբունս ունին զով, որպէս ասելն ով այիովս ապօստօլոս (ι hgioV ppstoloV), որ յսի սուրբ առաքեալք՝ արական է, իսկ ասելն հա՝ հա օդօկօս (հաւանաբար՝ □ dokhV-գերան)՝ իգական է, իսկ տօ քսօլօ (հաւանաբար՝ th xQlon-փայտ) չէզոք է, զի անուն որ ի սկիզբն տօ ունի՝ չէզոք է. այսպէս եւ ի վախճանս անուանց յորում պատահին՝ զնոյն նշանակութիւն ունին: Իսկ հռոմայեցոյն եւս յատուկ. քանզի անուն պատահական, որ ունիցի յանգի իւրում կուս՝ արական է, եւ որ ունի զայ՝ իգական է, իսկ զում՝ չէզոք է. այսպէս ալպուս, ալպայ, ալպում» (ՄՄ ձեռ. N 7037, էջ 38բ):

2 Ամբողջը տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 512-513. Հ. Տաշեան, Մայր ցուցակ, էջ 338. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 124-125 եւ այլն:

3 Ղ. Ալիշան, Հայապատում, Ա, էջ 120

4 «Բազմավէպ», 1960, էջ 115

րում Արարչին՝ տեսնելով կեանքում սոցիալական անարդարութիւններ, տեղեկութիւն է հաղորդում վարձկան հնձուորներին տրուող աշխատավարձի եւ կերակուրի մասին, լլկիչ ու հալածիչ համարում օտարերկրեայ բռնակալներին, որոնք «կեղեքեն զկեանս մեր զաղնութեամբ եւ ապա ի հայրենեաց մերոց արտալածեալ վարեն» եւ այլն: Այստեղ կարելի է գտնել նաեւ անսպասելի բնագաւառների մասին ուշագրաւ տուեալներ, որոնցից է, օրինակ, մրգերի բարձրորակ տեսակներ ստանալու եղանակի նկարագրութիւնը, անշուշտ քաղուած հայ այգեգործների կենցաղից. «Թողում ասել եւ զայն,- գրում է նա,- թէ եւ զանբան բնութիւն տնկոց կարեն մարդիկ ի հաւանութիւն ածել, որպէս զԹթուութիւն նոան քաղցրացուցանեն եւ կամ զզաւնութիւն նշի անուշացուցանէն ի ձեռն արուեստին, զի զբեւեկնի եպերկես փայտ վարսեալ ուռամբ յարմատս ատացեալ տնկոցդ՝ փոփոխեն զբնութիւն»[1]:

Մինչ «Մեկնութիւն Մատթէի Աւետարանին» աշխատութեան մասին մեր ասելիքն աւարտելը անհրաժեշտ է անդրադառնալ Ներսէս Տէր-Ներսէսեանի «Պատարագ վասն ննջեցելոց» յօդուածին, որի 12-րդ բաժինն ամբողջապէս նուիրուած է Յովհաննէս Ծործորեցու դաւանաբանական հայացքների վերլուծութեանը: Յարգելի բանասէրը իրաւամբ նշում է, որ խնդրոյ առարկայ աշխատութեան Կ. Պոլսի տպագրութեան մէջ կատարուել են աղճատումներ՝ կոծկելու համար հեղինակի Կաթոլիկ եկեղեցու դաւանանքին յարած լինելը, բայց ինքն էլ շեղւում է ճշմարտութիւնից, երբ Ծործորեցուն ներկայացնում է որպէս Հայոց եկեղեցու դաւանաբանական սկզբունքների ջատագով[2]: Նա հաշուի չի առնում, որ Արտազ տեղափոխուելուց եւ Զաքարիա եպիսկոպոսի կուսակիցը դառնալուց յետոյ՝ այսինքն դոմինիկեան քարոզիչների Հայաստան ներթափանցելուց շուրջ մէկ տասնամեակ առաջ, Յովհաննէս վարդապետն արդէն ծառայագրուել էր ունիթորական շարժմանը՝ ձայնափողը դառնալով Կաթոլիկ եկեղեցու:

գ. Մեկնութիւն մարգարէութեանն Դանիէլի

Այս մեկնութեան մատենագրանեան բնագիրը (ձեռ. N 1187, էջ 305ա-379բ)՝ սկզբից եւ միջին մասերից Թերի է[3], բայց վերջում ունի ընդարձակ յիշատակարան. գրութեան հանգամանքների մասին տուեալներ կան նաեւ աշխատութեան միջին մասերում. Նեռի գալստեան եւ աշխարհի կործանման կանխագուշակումների կապակցութեամբ արուած դատողութիւններից յետոյ: Ըստ այդ տուեալների՝ շարադրուած է 1316 թ., Ծործորի վանքում Վարդան վարդապետի խնդրանօք[4], նախորդ մեկնիչների՝ Հիպողիտի, Եփրեմի եւ Վարդան Արեւելցու աշխատութիւնների քննական օգտագործման ճանապարհով (ինչպէս ինքն է ասում՝ «յղկեալ ըստ չափու տարազու մտաց մերոց»):

1 Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչեւ ի համարն 17 հինգերորդ գլխոյն, եւ անտի աւարտեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ, որ եւ կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 536, 422 390, 129 եւ 178 (էջերը մատնացոյց են արուած ըստ վերոյիշեալ օրինակների հերթականութեան):

2 «Բազմավէպ», 1960, էջ 114-124

3 Այդպէս թերի է նաեւ երուսաղէմեան օրինակը՝ ձեռ. N 207, էջ 363ա-446ա (տե՛ս «Մայր ցուցակ», Ա, էջ 584-585):

4 Նորայր եպս. Պողարեանը այս Վարդան վարդապետին, որ, ինչպէս ասացինք, պատուիրատուն է եղել նաեւ «Համառօտ տեսութիւն քերականի» աշխատութեան, հնարաւոր է համարում նոյնացնել Վարդան Բարձրբերդցու հետ (տե՛ս «Հայ գրողներ», էջ 35): Հազիւ թէ ճիշտ լինի այս ենթադրութիւնը:

Միջնադարեան ընթերցողի համար այս մեկնութիւնը զգալի հետաքրքրութիւն էր ներկայացնում, մանաւանդ իր այն մասերով, որոնց մէջ տեղեկութիւններ կան գրանցուած Հին Արեւելքի պատմութեան եւ առասպելաբանութեան մասին՝ ի լրումն Հին Կտակարանի մէջ առկայ պատմութիւնների:

Աքեմէնեան Իրանի մասին, օրինակ, ի թիւս այլ տուեալների ասուած է նաեւ հետեւեալը. «Յետ Կիւրոսի յարեաւ Դարեհ, ապա Արտաշէս Ուշեղ, ապա Արտաշէս Քսերքսէս, եւ չորրորդն մեծացի (°) յետինն Դարեհ, որ յարեաւ ի վերայ թագաւորութեանցն Յունաց, զոր սպան Աղեքսանդր՝ որդի Փիլիպոսի, եւ եբարձ զթագաւորութիւնն Պարսից, որ տեւեաց ամս ՄԼ (230)[1]: Բայց գիտել պարտ է, զի նշանաւորսն ասաց Դ. թագաւոր, ապա թէ ոչ՝ չորեքտասան թագաւոր նստան Կիւրոսիւ եւ վերջին Դարեհիւ աթոռն Պարսից, որ զօրաժողով եղեւ ի վերայ Աղեքսանդրի»[2]:

Ծործորեցին մի երկու տեղ փորձ է կատարում Հին Արեւելքի պատմութեան առանձին դրուագների մասին Աստուածաշնչի եւ թարգմանական պատմական երկերի մէջ առկայ տուեալները շաղկապելու հայոց հին պատմութեան իրեն յայտնի տուեալների հետ: Բէլի մասին խօսելիս, օրինակ, նա անհրաժեշտ է համարում յիշեցնել, որ հայոց նախահայր Հայկն է նետահարել ու սպանել նրան եւ այլն:

Ասացինք, որ այս մեկնութեան գրութեան հանգամանքների մասին կարեւոր տեղեկութիւններ կան հեղինակային յիշատակարանի եւ շարագրանքի մէջ: Նախ ծանօթանանք գլխաւոր յիշատակարանին.

«Ընդ որում եւ մեզ լիցի մասն անարժանի անձինս սակաւ ինչ վաստակողի ի բանս սրբոյս՝ նուաստ Յոհաննիսի Երզնկեցւոյ, որ եւ Ծործորեցի կոչեցելոյ, վայելել ի փառս շնորհեաց նորա, հանդերձ կրկին ծնօղօք, ի գթութեանն հօր ամենակալին եւ յաւեժախաղաց պարգեւ Որդւոյն Միածնի Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ եւ յուխս սիրոյ մարդասէր Հոգւոյն Աստուծոյ, որում վայել է փառք անեզրական եւ պատիւ վայելչական եւ գոհութիւն անվախճան այժմ եւ միշտ:

Եղեւ աշխատութիւնս մեր ի նպաստաւորութենէ Հոգւոյն Սրբոյ եւ սրբոց հարցն մերոց վարդապետացն առաջնորդաց՝ Հիպողիտեայ, Եփրեմի եւ Վարդան վարդապետի եւ այլոց, ի թիւս Հայոց ՉԿԵ (1316)[3] եւ ի մարդեղութենէ ամաց Յիսուսի Քրիստոսի ՌՅ եւ ԺԶ ամին, գրեալ եւ յղկեալ ըստ չափու տարազու մտաց մերոց, եւ կշիռ առ բանին եդեալ զմեկնութիւնն ի գաւառս հռչակաւոր Արտազ կոչեցեալ, ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Ծործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասաւորի Յոհաննիսի Երզնկեցւոյ, ի խնդրոյ եղբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ վարդապետի, եւ յիշատակ ինձ՝ անարժանիս հոգւոյ եւ մարմնոյ, այլ եւ ձեզ մասն եղիցի ընդ յիշման յիշեցելոյս անմոռաց յիշումն Արարչին, որում փառք յաւիտեանս, ամէն»[4]:

1 Մի այլ տեղ, այս նոյն տուեալը հաղորդելուց յետոյ, ասում է, որ «այլք ՄԽԳ (243) ամ կալեալ ասեն Պարսից թագաւորութիւնն»:

2 ՄՄ ձեռ. N 1187, էջ 364-365ա

3 Ձեռագրում, ընդօրինակողի վրիպումով, գրուած է ՉԿԷ (1318). ուղղում ենք փրկչական թուականի, միւս յիշատակարանում առկայ տուեալի, ինչպէս նաեւ Գ. Զարպհանալեանի («Պատմութիւն հայ դպրութեան», էջ 765) հիման վրայ:

4 Ձեռ. N 1187, էջ 379բ

Յիշատակարանի բնոյթ ունեն նաեւ Նեռի գալստեան ժամանակի կապակցութեամբ արուած դատողութիւններին յաջորդող ստորեւ մէջբերուող տողերը. «...Եւ դարձեալ, ոչ զՆեռինն ժամանակ թուէ աստ, քանզի զայն ի վեր անդ ասաց, այլ թուէ յառաջին գալստեանն տեառն այսչափ ամ, յորում կարապետք Նեռինն ըստ վարդապետութեանն եւ առաքելոցն հալածեն եւ չարչարեն, վշտացուցանելով զեկեղեցի, կեղեքելով զկեանս քրիստոնէից հոգեպէս եւ մարմնապէս, որպէս տեսանեմք այսօր: Իսկ ի լրմանց ամաց նախ քան զգալ Նեռինն անդորրանայ եկեղեցի եւ խաղաղանայ առ ժամանակ մի, եւ բարձցի գայթակղութիւնք, եւ այլասեռիցն կրօնք եւ հերձուածողաց խափանեսցի, եւ Աւետարանն պայծառանայ ընդ ամենայն տիեզերս, եւ եկեղեցի բարձրանայ, եւ ապա յետոյ երեւի Նեռն, եւ լիցի լրումն աշխարհի:

Արդ՝ ի գրելս մեր զմեկնութիւն թուոյս էր թիւն Տեառն ըստ մեզ մարդեղութեանն ՌՅ եւ ԺԶ ամ. եւ յորժամ այս հասանէ յերեսուն եւ հինգն, զի է պակաս ԺԹ ամ, կատարին ասացեալ երանութիւնքս ի մարգարէէս ի վերայ համբերողաց: Եւ դու եթէ ժամանեսցես ի թիւն յայն եւ տեսցես զբարութիւնն եկեղեցւոյ՝ յիշեսցես եւ զնուաստս Յոհան Եզնկեցի, որ եւ Ծործորեցի, զի ես այսպէս զթիւս զայս մտածեցի, եւ եթէ ոչ լիցի այս, ընկալ զառաջին ասացեալն ի սրբոցն, որ վասն աւուրց Նեռինն, եւ զմեզ ազատ ի պարսաւանաց արասցես»[1]:

դ. Քարոզներ

Միջնադարեան բարձրագոյն դպրոցների ծրագրերի մէջ յատուկ նշանակութիւն էր տրուած այն գիտելիքներին, որոնք անհրաժեշտ էին նկատւում կրօնա-բարոյախօսական ու խրատական բովանդակութեամբ քարոզներ հիւսելու համար: Վարդապետացու ուսանողը, մինչեւ գաւազան ստանալն ու ինքնուրոյն գործունէութեան ասպարէզ մտնելը, հրապարակաւ պէտք է ցոյց տար իր ձեռք բերած գիտելիքներն ու շնորհքը, յաւուր պատշաճի քարոզ կարդալով՝ Աստուածաշնչից քաղուած որեւէ բնաբանի շուրջ կամ եկեղեցական որեւէ տօնի կապակցութեամբ:

Ըստ ձեւի եւ բովանդակութեան կուռ եւ գեղեցիկ քարոզներ շարադրելու հմտութիւնը անհրաժեշտ նախապայման էր համարւում Գլաձորեան համալսարանի շրջանաւարտների համար: Դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ պահպանուել են այդ ուսումնական հաստատութեան կամարների տակ ստեղծուած՝ աւարտուն քարոզներ կամ քարոզների նախաբան ու վերջաբաններ պարունակող մի քանի ձեռագիր ժողովածուներ: Դրանց մանրակրկիտ ուսումնասիրութեամբ հնարաւոր է լինելու աւելի հանգամանօրէն բացայայտել միջնադարեան Հայաստանի ուսումնական կենտրոնների կազմակերպչական սկզբունքների, ուսանողներին հրամցուող գիտելիքների, ուսուցման եղանակների հետ առնչուող խնդիրները[2]:

Յովհաննէս Երզնկացին, լինելով Գլաձորեան համալսարանի շրջանաւարտ ու դասախօս, չէր կարող այս կամ այն չափով չառնչուել քարոզչական աշխատանքներին: Եւ իրօք, աշխարհասփիւռ հայերէն ձեռագրերի էջերում պահպանուել են ե՛ւ առանձին՝ հատուկենտ քա-

1 Նոյն, էջ 373ա-373բ

2 Այս առումով որոշ բան արդէն արուած է (տե՛ս «Գլաձորեան համալսարանը եւ նրա սաների աւարտական ատենախօսութիւնները» յօդուածը՝ տպագրուած Երեւանի պետ. համալսարանի գիտական աշխատութիւնների XXIII հատորում, 1946, էջ 423-450), սակայն ձեռագրական նորայայտ նիւթերը հնարաւորութիւն են ընձեռում յաջողութեամբ շարունակելու եւ խորացնելու ձեռք բերուած արդիւնքները:

րոզներ, և՝ մի շարք քարոզներից բաղկացած փնջեր՝ մեր հեղինակի անունով: Ձեռքի տակ չունենալով քարոզչական այդ նիւթերի ամբողջական բնագրերը, հնարաւորութիւն չունենք այսօր հանգամանալից խօսք ասելու նրանց բոլորի բովանդակութեան ու պատմա-գիտական նշանակութեան մասին: Բաւարար տուեալներ չկան նոյնիսկ որոշելու քարոզներից շատերի շարադրման ժամանակը, պարզելու, թէ որոնք են դրանցից հնագոյնները, երբ եւ ում կողմից են շարադասուել կողք-կողքի՝ փոքր ու մեծ խմբերի գոյացման հիմք հանդիսանալով եւ այլն: Ըստ այդմ՝ Յովհաննէս Մործորեցու գրաւոր ժառանգութեան այս բնագաւառի համակողմանի ուսումնասիրութիւնը վաղաժամ համարելով, փորձելու ենք սոսկ խմբաւորել առկայ նիւթը:

Յովհաննէս վարդապետի Մործորի վանքում հաստատուելու ժամանակը որոշելիս անդրադարձել ենք արդէն Մատենադարանի N 627 ձեռագրին, որի մէջ ընդօրինակուած է Մործորեցու երեք քարոզներից բաղկացած մի փունջ. դրանցից առաջինը վերնագրուած է այսպէս «Յովհաննիսի Եզնկացո, որ եւ Մործորեցի տիեզերալոյս վարդապետի ասացեալ» (սկսւում է «Յարարչական բանէ աննդանակ լուսոյն հաստատեալ գոյացան բոլոր եւ մանաւոր արարածք...» բառերով). քարոզն ամբողջական չէ. ձեռագրերի մէջ յաճախակի հանդիպող քարոզից նախերգանքների կամ Գլաձորեան համալսարանի սաների աւարտաճառերի ընծայական մասի տպաւորութիւն է թողնում:

Երկրորդ քարոզը՝ «Յոհաննիսի Մործորեցո հոգացեալ գրանքս» խորագրով (սկսւում է «Վստահացեալ յուսո քաջութեամբ...» բառերով)՝ պահպանուել է անվթար: Հակառակ այն բանի, որ խորագրի մէջ հեղինակն արդէն Մործորեցի է կոչուած, բովանդակութիւնից պարզւում է, որ շարադրուած է ուսանողութեան տարիներին: Վերջաբանում կան տողեր՝ ուղղուած այնպիսի ունկնդիրների, որոնք գիտութեամբ կատարեալ են, մտքով՝ լուսափայլ. նրանցից հեղինակը ներողամտութիւն է հայցում[1]: Ըստ այդմ՝ այս քարոզը շարադրուած պէտք է լինի Գլաձորեան համալսարանում, որպէս աւարտաճառ: Զգալի հետաքրքրութիւն է ներկայացնում գիտական բովանդակութիւն ունեցող հատուածներով. օգտակար տուեալներ է պարունակում միջնադարեան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում դասաւանդուող առարկաների բնոյթն ու տարողութիւնը որոշելու համար: Մասնաւորապէս ուշագրաւ է քարոզի այն հատուածը, որ նուիրուած է մարդկային հոգու բնական ու ստացական կարողութիւնների բացայայտմանը. «Արդ,- ասուած է այստեղ,- բնական զօրութիւնք յերկուս բաժանին՝ ի գիտնականս եւ ի կենդանականս. եւ են այսոքիկ՝ տրամախոհութիւնք՝ միտք, կարծիք, երեւակայութիւնս, զգայութիւն, կամք, ընտրողութիւն, յօժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն...: Իսկ ստացական զօրութիւն հոգոյն այն իսկ է՝ յորժամ զխորհուրդս աճեցուցանելով ի քնին ելցէ ուսման եւ կամ առաքինութեան, եւ ստացցի իմաստասիրութիւն, որ է գիտութիւն էակացս, եւ զտրամաբանական հանճարս: Եւ սոքօք են մասունք ուսմանց զքերականութիւն ասեմ, զճարտասանութիւն, զատեղաբաշխութիւն, զերաժշտութիւն, զերկրաչափութիւն, զթուականութիւն եւ զայլսն, որ տեսակք են տեսականին: Նմանապէս եւ զգործնականին մասունք՝ զօրէնսդրութիւն եւ զդատողութիւն, եւ կամ ըստ այլոց՝ զտնտեսութիւն, զբարոյականութիւնն եւ զքաղաքականութիւնն, եւ կամ զեւս բարձրագոյնն՝ զանախտութիւն վարուց, զարդարութիւն, զողջախոհութիւն, զպարզմտութիւն, զհեզութիւն, զչափաւորութիւն» եւ այլն[1]:

1 «Իսկ մեք,- գրում է նա,- ըստ մերում տկար զօրութեան սուղ ինչ պատճառ տվաք բանիս, վստահանալով առաջի կատարելոցդ, եւ զկատարեալն տեսութիւն՝ հոգին շնորհաց՝ բաց է առաջի լուսափայլ մտացս ձերոց: Եւ մեք ի լրման բանիս զօրհնեալն ամենայնի բանական սեռից անլռելի ձայնիւ բարեբանեսցուք, եւ անծախելի շնորհաց նորին, հանդերձ երկրպագութեամբ, զոհութիւն մատուցուք, խնդրելով՝ խաղաղութիւն պարգեւեա ամենայն աշխարհի» (ՄՄ ձեռ. N 627, էջ 37ա):

Քարոզի մէջ կան նաեւ հեթանոսական հաւատալիքների եւ տիեզերագիտական պատկերացումների (մասնաւորապէս՝ «Արամազդի մանկունք» կոչուող երկնային մարմինների) մասին հետաքրքրական տեղեկութիւններ:

Երրորդ քարոզը, որ N 627 ձեռագրում կրում է «Նորին Յովհաննէս վարդապետի ասացեալ ի փոխումն սուրբ կուսին եւ ի ծնունդն» խորագիրը, միջնադարեան ձեռագրերում հանդիպում է նաեւ առանձին ընդօրինակութիւններով[2]: Այն տեղ է գրաւել նաեւ Մործորեցու քարոզների ժողովածուի մէջ, որին անդրադառնալու ենք քիչ յետոյ:

Սրանցից բացի տեղեկութիւն ունենք մեր հեղինակի «միայնակ» ընդօրինակուած երկու այլ քարոզների մասին եւս: Մէկի միայն խորագիրն է յայտնի. «Ս. Յոհաննոյ Երզն[կացւոյ], զոր մականուն Մործորեցի յորջորջի. մեկնութիւն աւետարանի Մարկոսի ի Ե. կիրակէին աղուհացիցն, վասն մահու եւ կատարածի աշխարհի, ի բանն որ ասէ. Արթուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու գող գայցէ» (սկսւում է «Նախախնամութիւնն Աստուծոյ եւ բարերարութիւնն յամենայն ժամ յայտնի...» բառերով)[3]: Միւսի մասին տեղեկութիւն ենք քաղում Ղ. Ալիշանի «Յուշիկք հայրենեաց Հայոց» աշխատութիւնից. վերնագրուած է այսպէս. «Յովհաննէս վարդապետի Մործորեցոյն արարեալ ի բանէն Եսայեայ, որ ասէ. Հոգի տեառն ի վերայ իմ». վերջաբանի մէջ, գոհաբանական խօսքեր ուղղելով Աստծուն, հեղինակն անուանի մի գործչի եւ իր անձի մասին ուշագրաւ ակնարկներ է անում. «Եւ ի մտաւորն ծնունդ եւ ի բանին ծնողութիւն եւ յերկուեա մտաւոր աշխատութեանցն արժանացայ տկար եւ ցաւագին մարմնով. եւ ի մէջ ծփան ալեաց ծովածուփ աշխարհիս եւ տրտմալից կրից կենցաղոյս, առաջնորդեաց ինձ հոգին եւ էառ առ ոտս բարիոք նաւուղղելի եւ իմաստուն կատարողապետի»[4]: Ըստ Ալիշանի՝ այս խօսքերը վերաբերում են Գլաձորի րաբունապետ Եսայի Նչեցուն, ուստի քարոզը շարադրուած է Յովհաննէսի ուսանող եղած տարիներին: Կարծում ենք, սակայն, որ մէջբերուած տողերը վերաբերում են Արտազի վեհաշուք եպիսկոպոսին. կատարողապետ բառը, որ քահանայապետ-եպիսկոպոս է նշանակում, պատշաճ է գալիս Զաքարիա Մործորեցուն, որը նաւուղղի[5] դեր ստանձնելով՝ փորձում էր Հայոց եկեղեցին առաջնորդել հռոմէական եկեղեցու հետ համաձուլելու ազգադաւ ճանապարհով: Իր մարմնի «տկար եւ ցաւագին» լինելու մասին հեղինակի ակնարկը նոյնպէս խօսում է յօգուտ այն ենթադրութեան, որ այս քարոզը յօրինուած է Յովհաննէսի կողմից Մործորի վանքում հաստատուելուց տարիներ յետոյ:

Տարբեր ժամանակներում, այլեւայլ առիթներով Յովհաննէս Մործորեցու շարադրուած քարոզներից առնուազն 15-ը, համախմբուել են մի ժողովածուի մէջ նրա երախտաւոր աշա-

1 ՄՄ ձեռ. N 627, էջ 35ա

2 Դրանցից են, օրինակ, հետեւեալ ձեռագրերը. N 734 (էջ 67ա-89բ), N 2178 (էջ 361ա-370բ) եւ N 5933 (էջ 65ա-82բ): Սրանցում հեղինակի անունը չի յիշատակուած: Վերջին (N 5933) ձեռագրի մէջ քարոզը վերնագրուած է այսպէս. «Յաղագս արարչագործութեանն Աստուծոյ եւ լուսաւորացդ, որ ի չորեքշաբթի արարան, եւ փոխման Տիրամօրն, եւ վասն մերո հոգոյս բաժանման»:

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանին», հտ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ», Վիեննա, 1971, էջ 116

4 **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց Հայոց, Ա տպ., Վենետիկ, 1869, էջ 479, Բ տպ., 1921, էջ 420-421

5 Այսպէս («Նաւուղիղ» ձեւով) ենք սրբագրում քարոզից մէջբերուած հատուածի «նաւուղղելի» աղճատուած բառը՝ նրան տալով «ղեկն իր ձեռն առած նաւապետ» իմաստը:

կերտներից մէկի կողմից, որը մեծարել է իր ուսուցչին «աղբիւր իմաստից», «այր կորովամիտ» յորջորջումներով եւ օժտել ժողովածուն «Երանաշնորհ եւ բազմիմաստ րաբունապետի Յովհաննու Ծործորեցւոյ կորովաբիր մտացն տեսութիւն» խորագրով:

Քարոզների այդ ժողովածուից յայտնի է երկու ընդօրինակութիւն. մէկը Երուսաղէմի մատենադարանի N 1003 ձեռագիրը, միւսը՝ Վիեննայի N 646-ը[1]:

Ն. Պողարեանն ու Գ. Զարպհանալեանը Ծործորեցուն են վերագրում իրենց ձեռքի տակ եղած ձեռագրերի մէջ առկայ քարոզներց 20-ը, ըստ Հ. Ոսկեանի նկարագրութեան՝ մեր հեղինակին են պատկանում նրա անուան տակ շարայարուած քարոզներից 15-ը: Այս խնդիրը կարօտ է յատուկ ուսումնասիրութեան: Ըստ երեւոյթին ճշգրիտ է դուրս գալու վերջին կարծիքը, քանի որ Զարպհանալեանն ինքը, թուարկելով իր ձեռքի տակ եղած ձեռագրի մէջ եղող 20 քարոզները, ԺԶ քարոզի կապակցութեամբ նշում է, որ սրա սկզբնաւորութիւնը նոյնն է «ընդ չորեքտասաներորդ ճառին», իսկ ԺԷ քարոզի առթիւ ասում, որ «յոմանց ի գրչագրաց՝ Տիրատուր վարդապետի կը տրուի այս ճառ»:

Քարոզգրքի առաջի միաւորի խորագիրն է. «Բանն որ առ Յովբ. Զինչ երկիր բցէ յորում լոյսն ագանիցի»: Առել ենք արդէն, որ այս քարոզը շրջանառութեան մէջ է եղել նաեւ որպէս առանձին միաւոր, ինչպէս եւ Ծործորեցուն պատկանող երկու այլ քարոզների հետ շղթայուած շարքով: Հինգերորդ քարոզի վերջում պահպանուել է հեղինակի ընծայական-վերջաբանը, հասցէագրուած «Երջանիկ լուսաւորիչ տանս Արեւելեան», «ջահ անշիջանելի» կոչուած նշանաւոր մի գործչի, որի ջանքերով նրա գերդաստանի պայազատները մեծ դիրքի են հասել եւ այլն: Ծործորեցին մաղթում է, որ նա եւ նրա մերձաւորները՝ «անսասան կենօք, հոգեկան եւ մարմնական ճոխութեամբ յղփացեալ՝ ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն»: Այս խօսքն, անտարակոյս, ուղղուած է Զաքարիա եպիսկոպոսին ու Արտազի աւատատէր հայ գերդաստանի իշխանաշուք անդամներին[2]:

1 Այդ ձեռագրերը նկարագրուած են Նորայր եպս. Պողարեանի («Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հտ. չորրորդ, Երուսաղէմ, 1969, էջ 4-6) եւ Հ. Համազասպ Ոսկեանի («Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հտ. Բ, Վիեննա, 1963, էջ 130) կողմից: Քարոզների այդ ժողովածուին ծանօթ է եղել Գ. Զարպհանալեանին (տե՛ս «Պատմութիւն հայ դպրութեան», Վենետիկ, 1897, էջ 762-763). չգիտենք, սակայն, նա ձեռքի տակ ունեցել է վերոյիշեալ ձեռագրերից որեւէ մէկի նկարագրութի՞ւնը, թէ՞ այդպիսի մի ձեռագիր էլ պահւում է Վենետիկի Մխիթարեանների մատենադարանում:

1966 թ. Երուսաղէմում ուսումնասիրել ենք N 1003 ձեռագրերը, որոշ քաղուածքներ կատարել առանձին քարոզներից, բայց նրանց հեղինակային պատկանելութեան հարցն այն ժամանակ մեր տեսադաշտից դուրս է եղել:

2 Ստորեւ մէջ ենք բերում այդ վերջաբան-յիշատակարանը առանց կրճատումների՝ հաշուի առնելով նրա մէջ գրանցուած տուեալների ու ակնարկների օգտակարութիւնը Արտազի հայ աւատատէրերի, մասնաւորապէս՝ Զաքարիա Ծործորեցու գործունէութեան ուսումնասիրման համար. «...Նոցին եւ մեզ մասնաւորեսցէ թագաւորն փառաց եկեալ յաշխարհ՝ արքայութեանն իւրոյ հաղորդս լինել, եւ զընտիր վիճակ ազգիս Հայկայ զքահանայութիւն եւ զթագաւորութիւն պահեսցէ, եւ թէ ինչ ի չարէն, որում ընդ բարիոք սերմանցն իցէ մշակեալ յանդաստանս եկեղեցոյ՝ արմատաքի խլեսցէ: Է լոյսն ճշմարիտ Քրիստոս, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ, լուսաւորեսցէ զաչս սրտից մերոց եւ ընդ ծագման լուսոյ առաւօտուս ծագեսցէ Քրիստոս զգութ անճառելի խնամոց յարարածս իւր, եւ ընդ զգալի լուսոյս տարածման արեգակն արդարութեան Քրիստոս ծաւալեսցէ զլոյս հոգեւոր գիտութեանն իւրոյ յամենայն ազգս քրիստոնէից, եւ լուսաւորեալս բանիւն ճշմարտութեան զերջանիկ լուսաւորիչ տանս արեւելեան, յոյսն մշտնջենաւոր պահեսցէ զսա ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի, եւ զկապտեր հոգւոյ սորա պայծառացուսցէ օրըստօրէ հայել ի խորս անճառ գիտութեան նորա, եւ ամենայն ներհակք սորա՝ երեւելիք եւ աներեւոյթք՝ տապալեսցին ի ներքոյ ոտից սորա, եւ դիցէ զսա իբրեւ զվէմ անդամանդեայ պարսպին հաւատոյ. զի ամենայն որ ոք հարցի ընդ սա՝ փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ որք սովաւ կարգեալ են իշխանութիւնք եւ ի զարմից սորին շառաւիղեալք բարեպաշտ պարոնայք՝ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա յելս եւ ի մուտս, եւ եղիցին կարող յամենայն գործս քաջութեան, եւ անսասան կենօք, հոգեկան եւ մարմնական ճո-

Այս յիշատակարանի առկայութիւնն իսկ ընդհանուր շարքի մէջ մտած ու հինգերորդ տեղը գրաւած քարոզի վերջում ամրապնդում է մեր եզրակացութիւնը՝ Ծործորեցու քարոզների ժողովածուի առանձին միաւորների տարբեր առիթով ու տարբեր ժամանակներում գրուած լինելու եւ յետագայում, ուրիշ մէկի կողմից, մի կազմի տակ համախմբուելու մասին: Այս կարծիքն աւելի է ամրապնդւում ԺԲ համարը կրող քարոզի ուսումնասիրութեամբ (Վիեննայի ձեռագրում սրան համապատասխանում է ԺԳ քարոզը): Սրա վերջում եղող յիշատակարանից պարզւում է, որ նրա հեղինակը Ծործորեցու աշակերտներից մէկն է, ամենայն հաւանականութեամբ հէնց այն աշակերտը, որին յանձնարարուած է եղել տարբեր ձեռագրերի մէջ ընդօրինակուած քարոզչական նիւթերի համախմբումով եւ խմբագրութեամբ ստեղծել իր ուսուցչի քարոզների մի փունջ: Անունն անյայտ խմբագիր-աշակերտը սրանց մէջ ագուցել է նաեւ իր հեղինակած մի քարոզը, որի վերջում փառքի գովք է հիւսել իր ուսուցչի մասին, յայտնելով, որ նա՝ րաբունապետ Յովհաննէսը «յայսմ իրակերտութեան գործոյ եղեւ նպաստ եւ առիթ՝ յորդորական բանիւք քաջալերս տալով»[1]:

Այս նախաբանից յետոյ մէջ ենք բերում Յովհաննէս Ծործորեցու քարոզգրքի ամբողջական ցանկը՝ յիշեցնելով նախ, որ նրա մէջ կան նաեւ ուրիշ հեղինակների պատկանող միաւորներ (յատկապէս վերջին մասերում), եւ որ Ծործորեցու ոչ բոլոր քարոզներն են տեղ գտել այս ժողովածուի մէջ:

Երանաշնորհ եւ բազմիմաստ րաբունապետի Յովհաննու Ծործորեցւոյ կորովաբիր մտացն տեսութիւն.

ա. Բանն որ առ Յովբ. «Զինչ երկիր բցէ յորում լոյսն ագանիցի». - Եթէ ոք իմաստուն խորհրդով ներակրթել զինքն կամիցի...

բ. «Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն». - Թէպէտ եւ ըմբռն ուրեմն էր մեզ աստանօր...

գ. «Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր». - Յաղագս խորհրդոյ լուսափայլ տօնիս...

դ. «Տէր զլուր քո լուայ եւ երկեայ». - Զոր օրինակ մշակ ոք հմուտ, որ երկրագործութեան արուեստիւն իցէ հրահանգեալ...

ե. «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի». - Աստուածն բան հրամայէ ուրեք յիւրում վարդապետութեանն...

զ. «Այլ մեզէն եղեալ ականատես նորա մեծութեանն». - Թէպէտ հրաման ի տեառնէ ընկալաք ոչ հոգալ յորժամ յատեան կոչիցիմք...

է. «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ». - Յիրաւի ի սկիզբն նախադրութեան բանիս եպերեցայ ի գերահրաշ եւ ի հոգիահրաւէր ժողովոյդ...

ը. «Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր տէր մի է». - Վստահացեալ յուսոյ քաջու-

խութեամբ յղփացեալք ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն, տեսանելով զորդիս եւ զորդիս որդւոց մինչ յերիս եւ չորս ազգս, որպէս զի մի պակասեսցէ ճիռ օրհնութեան եւ զաւակ բարեպաշտութեան ի տանէն յայսմանէ՝ մինչ ի գալուստ երկնաւոր թագաւորին Քրիստոսի» (Երուսաղէմ, ձեռ. N 1003, էջ 68):

Քարոզի միջին մասերում եւս կան Զաքարիային հասցէագրուած մեծարանքի խօսքեր, դրանցից է, օրինակ, հետեւեալը. «Նոյնպէս եւ դու ըստ անարգամեծար չնաշխարհիկ քոյին ճոխութեանդ, ընդունելով զմերս ի գոհութիւն անկարօտին փառաց վերացուսցես: Եւ արդ՝ օն առեալ զաղօթս քո՝ մխեսցուք ի քննութիւն» (նոյն, էջ 57):

1 Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., հտ. չորրորդ, էջ 5

թեամբ…[1]:

թ. «Որպէս ջուր ցուրտ՝ ծարաւելոյ անձին ախորժելի է». - Ի հոգին սուրբ: Բանադատիմ ահա եւ յոյժ վարանիմ յերկաքանչիւր կողմանց…

ժ. «Ժամանակ ծնանելոյ եւ ժամանակ մեռանելոյ». - Բանական բնութիւնք արարածոց յերկուս մասունս բաժանեալ են…

ժա. «Առ քեզ, տէր, համբարձի զաչս իմ». - Եւ ո՞րպէս համբառնայ անձն առ Աստուած…

ժբ. «Ահաւանիկ ես առաքեմ զհրեշտակ իմ». - Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք…

ժգ. «Ես իմաստութիւն բնակեցայ ի խորագիտութեան». - Յարարչական բանէ անեղական լուսոյն հաստատեալ գոյացան…

ժդ. «Զի՞ բարի եւ զինչ վայելուչ զի բնակեն». - Հրամայէ տէր ի սրբում Աւետարանին, թէ որ խնդրէ ի քէն՝ տուր…

ժե. «Ահաւասիկ ես ածից զծառայ իմ զծագումն». - Յարեւելեաց սատի ոչինչ ըղձալի գոլ քան զփրկելեացն կատարել բաղձանս…

ժզ. «Փոքր էի ես յեղբարս իմ». - Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք…

ժէ. «Զխորհուրդ արքայի ծածկել բարւոք է». - Եթէ ոք ի մարդկային բնութենէ մաքրեցաւ…

ժը. «Եւ ահա չորս կառք ելանէին». - Բազում ինչ առնեմք զոր ոչ կարեմք…

ժթ. «Երդուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ». - Որպէս յաստեղս արեգակն եւ ի կենդանիս գիմակն…

ի. «Ի քէն է, տէր, աղբիւր կենաց». - Ի կարգ բանիս հայելով երիս խորհուրդս ծանուցանի մեզ…[2]

Այս քարոզներից հինգերորդի մէջ Տործորեցին, պատասխանելով «զի՞նչ է առակ» հարցին, յայտնում է, որ Սուրբ Գրքի մէջ առակ բառն օրինակ բառի իմաստով է գործածուած. «Իբր թէ օրինակաւ յայտնի կացուցանել զբանին իմաստ յորժամ լսողքն անկատարք իցեն, որպէս առնեն կատարեալ վարժապետք ծանրալուր ծանօթից»[3]: Ղեկավարուելով այս սկզբունքով, Տործորեցի վարդապետը, ինչպէս իր քարոզներում, այնպէս էլ միւս աշխատութիւնների մէջ, յաճախ է կիրառում կեանքի տարբեր բնագաւառներից քաղուած հանրամատչելի օրինակներով «ծանրալուր» մտքեր բացայայտելու եղանակը: Այլեւայլ առիթներով նա անդրադառնում է վարձկաններին, շեշտելով այն հանգամանքը, որ նրանք աշխատում են վարձ ստանալու համար միայն. «Քանզի մարդկան սովորութիւն է,- գրում է նա,- որքան ոչ են ընկալեալ զվարձս վաստակոցն՝ արագ են ի փոյթն, իսկ յորժամ ընդունին՝ ծուլանալով կա-

1 Վիեննայի ձեռագրում այս քարոզից յետոյ, 9-րդ համարի տակ, ընդօրինակուած է Երուսաղէմի ձեռագրից բացակայող հետեւեալ քարոզը. «Խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտենից. խորհ[եալ] զբարիս առ[նել եւ] մարդկան» - Բարի առնելն յերեք տեղ է՝ ի խորհուրդն, ի բերանն, ի գործն… (**Հ. Ոսկեան**, Ցուցակ…, էջ 130):

2 Այս ցանկն արտագրել ենք Գ. Զարպհանալեանի վերոյիշեալ աշխատութիւնից՝ սրբագրելով ու ճշտելով միւս աղբիւրներով (տե՛ս 54-րդ ծանօթագրութիւնը):

3 Երուսաղէմ, ձեռ. N 1003, էջ 60

սին ի գործոյն»[1]: Մէկ ուրիշ քարոզի մէջ ասում է, որ «Վարձկաննն զբովանդակ զգործս տեառն կատարելով եւ ոչ զմիով իւիք անցանէ ի գործեացն, ապա վարձուցն արժանացի»[2]: Քանիցս նա անդրադառնում է ծառայ եւ ազատ մարդկանց գոյավիճակի տարբերութեանը. «Զօր օրինակ,- գրում է մի առիթով,- ի տան իշխանի առ որդիս սիրելի եւ առ ծառայս է տեսանել զանազանութիւն». երկուսն էլ հլու հպատակ են իրենց հօր կամ տիրոջ հրամանին, բայց նրանց հնազանդութեան հիմքում ընկած են միանգամայն տարբեր գործօններ. ծառայ «ըստ առաջի ախորժակաց», այսինքն՝ իր ազատ վիճակի քաղցր յուշերը փայփայելով՝ միշտ տենչում է ազատագրուել ստրկական կապանքներից. նա ենթարկւում է տիրոջ կամքին՝ տանջանքի երկիւղից. «Ոչ ի սիրոյ սպասաւորեալ յորդորի, բայց… պակուցեալ յերկիւղէ տանջանացն՝ ամենայն հրամանին պատկառ կայ հնազանդութեամբ»[3]: Մի այլ առիթով գրում է. «Զօր օրինակ ծառայ ապստամբ հեռացեալ ի տեառնէ իւրմէ, կցորդ լեալ գողոց եւ աւազակաց եւ զժառանգութիւնս տեառն իւրոյ գերեալ՝ ի ծառայութիւն վտարէ յաշխարհ հեռի» եւ այլն[4]: Աւելի ուշագրաւ է ծառաների եւ ազատ մարդկանց իրաւական վիճակի մասին Տործորեցու մի դատողութիւնը. «Թէ իշխանի ուրուք ծառայ հարուստ իցէ եւ այլ ոք ազատ եւ աղքատ, ոչ կարէ նախադահ լինել ծառայն ազատին: Նոյնպէս եւ նախադրութիւնն իբր ազատ իմն նախադասեցաւ մակբայիս, իսկ սա վասն փարթամութեանն՝ զկնի»[5]:

Ժամանակի սոցիալ-տնտեսական կեանքի տարբեր բնագաւառների, դասակարգերի, նրանց փոխյարաբերութիւնների ու պայքարի եւ յարակից հարցերի մասին Յովհաննէս Տործորեցու քարոզների մէջ առկայ մեծաքանակ ու կարեւոր տուեալները բարձրացնում են նրանց ճանաչողական արժէքը, նպաստելով միջնադարեան պատմութեան մթին ծալքերի լուսաբանման գործին:

ե. Չափածոյ ստեղծագործութիւններ

Գլաձորեան համալսարանի սաների ընդօրինակած ձեռագրերից շատերի մէջ կան չափածոյ յիշատակարաններ[6]. սրանից կարելի է հետեւեցնել, որ միջնադարեան Հայաստանի ուսումնական բարձրագոյն հաստատութիւնների ուսանողները ծանօթացել են չափածոյ գրուածքներ շարադրելու տարրական հնարանքներին: Չափ ու յանգի մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերած, տնակապ տառերով որեւէ անուն կամ բառ յօդելու եղանակների ծանօթացած երիտասարդները դրանով, իհարկէ, բանաստեղծ չէին դառնում, բայց աւարտելով համալսարանը եւ գործունէութեան ասպարէզ մտնելով, ըստ անհրաժեշտութեան՝ առաւել կամ նուազ յաջողութեամբ՝ շարադրում էին չափածոյ յիշատակարաններ, ողբեր ու գանձեր:

Ոտանաւոր գրուածքներ էր յօրինում նաեւ Յովհաննէս Երզնկացին: Դեռեւս Գլաձորում գտնուած տարիներին նա չափածոյ մի յիշատակարան էր հիւսել 1306 թ. ընդօրինակած իր

1 Նոյն, էջ 31

2 ՄՄ ձեռ. N 627, էջ 36ա

3 Երուսաղէմ, ձեռ. N 1003, էջ 23

4 Նոյն, էջ 65

5 Այս նախադասութիւնը քաղուած է Յովհաննէս Տործորեցու «Համառօտ տեսութիւն քերականի» աշխատութիւնից (տե՛ս ՄՄ ձեռ. N 7037, էջ 63ա):

6 Տե՛ս, օրինակ, Մխիթար, Ստեփանոս, Վարդան եւ Եզեկիէլ գրիչների յիշատակարանները («ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 103-104, 745, 165, 300, 302 եւ այլն):

ձեռագրի մէջ, գովերգելով ուսումնական այդ հաստատութիւնը, բացայայտելով իր աշխատանքի հետ կապուած դժուարութիւնները:

Տալիս ենք ստորեւ 26 տողից բաղկացած այդ յիշատակարանը.

«Կարգիս եւ զանձն իմ եղկելի
Եւ մեղսաներկ արհեստ գրչի,
Զոր եւ մատամբ ծրագրեցի
Ես՝ Յոհ[աննէս] աղքատ ոգի,
Տառապանօք թանձրագունի,
Կարօտութեամբ անպատմելի.
Սակայն փափաք յոյժ տենչալի
Եւ ախորժանք անքննելի,
Զիս յորդորեաց ցայս գործ իրի՝
Զսա շարել ի քարտիսի:
Զի յայս տեղիքս յորում էի
Էր դպրութիւն հրաշալի,
Եւ ես կարօտ այսմ տառի,
Զի յիւր տեղին սա հասանի՝
Շտապեցա յաւետ կարի,
Բայց իւր տեղոյն ոչ հասուցի,
Զի եկն եհաս սա ի կարգի
Ընթեռնելոյ ի հանդիսի.
Տակաւ կիսով չափ է թերի,
Հանգէտ գոլով սա աւարտի:
Զոր աղաչեմք, որք հանդիպի
Աստուածախօս այս մատենի,
Յիշման գոլով զմեզ արժանի
Զենման գառինըն առաջի,
Եւ մաղթանք աղերսալի
Խոշորութեանս ներելի»[1]:

Յիշատակարանը, ինչպէս տեսնում ենք, շարադրուած է կանոնաւոր, չափածոյով եւ զուրկ չէ բանաստեղծական ներշնչումից: Ուստի բնական է ենթադրել, որ սրան նախորդել ու յաջորդել են չափածոյ այլ ստեղծագործութիւններ: Եւ եթէ աւելի վաղ շրջանի նշումներ չեն

1 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 43-44

պահպանուել, յետագայ տարիների ստեղծագործութիւններից յայտնի են մի քանիսը: Դրանցից մէկը հասել է մեզ՝ մուտք գործելով XV դ. սկիզբներին ստեղծուած «Գանձարան» կոչուող ժողովածուի տարբեր խմբագրութիւնների մէջ, կոչուելով մերթ գանձ, մերթ երգ կամ քարոզ՝ առնչուելով Ծննդեան երկրորդ կամ երրորդ օրերին եւ Ջրօրհնէքին. բաղկացած է 12 տներից, որոնց սկզբնատառերով յօդւում են «Յոհաննիսի երգ» բառերը[1]: Իր կառուցուածքով նմանւում է աւելի շարականատիպ ստեղծագործութիւնների, ձայնագրուած է հայկական հին խազերով, ուստի յօրինուել է որպէս երգ, վկայութիւն տալով նաեւ հեղինակի երաժշտական գիտելիքների մասին: Տարբեր խորագրերից նախնական կարելի է համարել «Երգ Ջրօրհնեաց»-ը, որ պահպանուել է N 5951 ձեռագրում (էջ 42ա-44ա):

Սկսւում է այսպէս.

«Յամենայն ժամ աւրհնեմք զաւրհնեալ Փրկիչդ Էմմանուէլ՝ ծնեալդ ի Կուսէն,
Եւ վերստին ծընընդեամբ մկրտեցար այսաւր ի Յորդանան ի Մըկրըչէն,
Նորին բարեխաւսութեամբ ընդալ զաղաչանս քոց պաշտաւնէից, աղաչեմք:
Որ սրբեցեր ըղջուրսըն Յորդանանու՝ սըրբիչդ աշխարհի,
Տալով ըզկընիք նորոգման որդոց Սիովնի,
Տուր մաքրութիւն սուրբ եկեղեցոյ եւ ազատութիւն քում ժողովրդեանս, աղաչեմք...»[2]:

Հայ եկեղեցու երկու հակառակորդ խմբակցութիւնների միջեւ ծաւալուած գաղափարական գոտեմարտերի արձագանքները եւ մեր հեղինակի դիրքաւորումն այդ պայքարում արտացոլուած ենք գտնում երգի 9-րդ տան մէջ, ուր նա, ջատագովը լինելով Լատինական եկեղեցու հետ միաբանելու քաղաքականութեան, աղաչում է Աստծուն զօրավիգ լինել քրիստոնէական եկեղեցիների համախմբման ու միաւորման շարժմանը: Նա գրում է.

«Ի խաղրից Թըշնամոյն պարըսպեալ ամրացոյ սուրբ եկեղեցի,

Եւ յանուն քո ժողովելոցս շնորհեա զքաւութիւն յանցանաց եւ թողութիւն մեղաց՝ միածին որդի Աստուծոյ.

Ահա յիշեա եւ նես առաւել բամեա ըզցըրուեալսն ի մի միաբանութիւն հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ, աղաչեմք»[3]:

Յովհաննէս Ծործորեցին յատուկ ակնածանք է ունեցել Ներսէս Շնորհալու գրական ժառանգութեան նկատմամբ: 1316 թ. լրացնելով Մատթէոսի Աւետարանի Շնորհալու մեկնութիւնը եւ հիւսելով այդ մասին յիշատակարան, նա մեծարում է իր սիրելի հեղինակին՝ կոչելով նրան «գերապատիւ եւ գերահռչակ հայր», «երկրորդ լուսաւորիչ սուրբ եկեղեցւոյ», եւ «կորովամիտ եւ համեղաբան կաթողիկոս»[4]:

«Կորովամիտ եւ համեղաբան» Շնորհալու ստեղծագործութիւններից մի քանիսը, ե՛ւ ի-

1 Պահպանուել է բազմաթիւ ձեռագրերում, որոնցից մի մասի խորագրերից բացակայում է հեղինակ Յովհաննէս Ծործորեցու անունը: Հեղինակի մասին վկայութիւն պահպանել են Մաշտոցի անւ. Մատենադարանի N 474, 5899, 5951, 6489 եւ այլ ձեռագրերը, ինչպէս նաեւ Զմմառի վանքի N 510 ձեռագիրը (տե՛ս «Ցուցակ», հտ. Բ, էջ 108):

2 ՄՄ ձեռ. N 5899, էջ 56բ

3 ՄՄ ձեռ. N 5899, էջ 58բ, N 474, էջ 33ա- 33բ

4 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 124

րենց բովանդակութեամբ և՛ ձևով, խորապէս ներգործել են Մործորեցու վրայ, և նա նրանց նմանողութեամբ ստեղծել է նոր գործեր: Շնորհալին, օրինակ, Սողոմոն Իմաստունի, նրան վերագրուած Առակաց գրքի Ժ («Որդի իմաստուն...») և ԻԵ («Փառք Աստուծոյ...») գլուխների, ինչպէս նաև Ժողովողի ու Երգ Երգոցի մասին գրել է բանաստեղծութիւններ[1]: Դրանց նմանողութեամբ Առակաց գրքի Թ («Իմաստութիւն...») գլխի մասին մի բանաստեղծութիւն էլ գրել է մեր հեղինակը, որ տրւում է ստորև.

«Նուաստ Յոհանիսի Մործորեցոյ Իմաստութիւն գլխոյն

Յիմաստութիւն կենաց վերին

Շարժեա և գիմ սիրտ ըստորին

Որում ըղձամ տարփմամբ կրկին

Դըպիր լինել Սողոմոնին.

Հեղցես և յիս առատ զհոգին,

Արփիաւոր զիմաստ բանին,

Առնուլ զտիպ, որ ատ քերին

Առակաւոր խորոց խրթին,

Նմանել տոհմի Իսրայէլին,

Որ այս պարգև վայելեցին.

Եկեղեցոյ սուրբ ժողովին,

Առնել և զիս հաղորդ նոցին,

Սրբել սիրով յաղտից զմարմին,

Այլ և զհոգիս իմ անմարմին՝

Ի փառս քո սուրբ տաճարին,

Երգել զերիս սուրբ սրովբէին.

Էիդ լուսոյ հօրդ երկնային,

Այլ և որդոյ քում միածնին,

Բըղխման հոգոյդ ի մի բնութիւն

Եւ կատարեալ երրեակ անձին,

Այժմ և յանցեալն, ապագային

Տալ աւրհնութիւն զյաւիտեննին,

Նման իններակ դասուց յերկին

Որք են սկսեալ 'ւ ոչ դադարին»[2]:

---

1 Տե՛ս «Տեառն Ներսէսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի բանք չափաւ», Բ տպ., Վենետիկ, 1928, էջ 380-395:

2 ՄՄ ձեռ. N 2407, էջ 201ա-201բ, N 2079, էջ 143բ: Երկեակ տողերի սկզբնատառերով յօդւում են «Յոհանեսի է բան» բառերը:

Ներսէս Շնորհալին ունի երեք ստեղծագործութիւն՝ նուիրուած Հայոց այբուբենի տառերին, որով փորձում է նորավարժ մանկանց սրտերում բորբոքել սէր հանդէպ եկեղեցին, ուսումն ու գիտութիւնը.

«-Այբն անըսկիզբն ասէ զԱստուած,

Անեղ բնութիւն՝ ոչ արարած.

-Այբն Աստուծոյ զքեզ մերձակայ

Խրատ լինել, թէ հաւատա...

-Այբն առաջին ըզքեզ, տըղայ,

Հանէ յիմաստըն գերակայ...»:

Ահա սրանք են միջնադարեան Հայաստանում շատ տարածուած այդ գեղեցիկ ստեղծագործութիւնների սկզբնատողերը[1]:

Յովհաննէս Մործորեցին սրանց նմանողութեամբ յօրինել է «այբբենականը», որի մէջ նոյնպէս կենտրոնական տեղ է գրաւում խրատը, հնազանդութեան քարոզը, ուսման գովքը: Այս բանաստեղծութեան վերջում, դարձեալ Շնորհալու հետևողութեամբ, գրուած է չափածոյ յորդորակ-յիշատակարան՝ «Յոհանիսի բան» տնակապ բառերով, որից յետոյ ընդօրինակուած է Թ. Սաղմոսի մասին գրուած մեզ արդէն ծանօթ բանաստեղծութիւնը, և ապա՝ այս եզրափակիչ նախադասութիւնը. «Տունք ԻԳ (23), այբուբենիւ, ԾԹ (59) ընդ ամենայն, ՁՀԳ»[2]: Եւ իրօք, չափածոյ յորդորակը՝ Սաղմոսի գովքի հետ միասին, պարունակում է 23 երկտող տուն, իսկ «այբբենականը»՝ 36 քառատող տուն, ընդամէնն՝ իսկապէս 59 տուն: Վերջում գրուած ՁՀԳ-ը, անտարակոյս, միմեանց կից գրուած չափածոյ գրութիւնների յօրինման թուականն է՝ 1324 թ., որը Մործորեցու ձեռքով գրուած ու մեզ յայտնի ամենավերջին տարեթիւն է:

Ստորև, ընդհանուրի մասին գաղափար տալու համար, մէջ ենք բերում ուշագրաւ այդ բանաստեղծութեան բուն մասից մի քանի քառեակ, իսկ յորդորակ-յիշատակարանն՝ ամբողջութեամբ.

«Յոհաննէս վարդապետի Մործորեցոյ ոգեալ ի չափ մերոյին տառից՝ ոտանաւոր ձևով

Այբն՝

Արարած զքեզ ասէ

Մահկանացու ի բնութենէ,

Մերկ ես եկեալ ի յարգանդէ,

Մերկ դառնալոց ես յաշխարհէ:

Բենն՝

Բանալ տա քեզ զաչըս հոգւոյ

Բնաւ չըսիրել զկամըս մարմնոյ,

---

1 Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, էջ 335-345, 351-367, 369-379

2 ՄՄ ձեռ. N 2079, էջ 143բ

Զի մի բողոք բառնաս յետոյ
Զունայնութեան զհետ երթալոյ…
Կենն՝
Կատարած քեզ եւ յագումն,
Կաթն իմաստից առ ի յարբումն,
Այլ եւ կենաց կցորդ զուսումն,
Զի մի յետոյ գաս ի զղջումն…
Շայն՝
Շուրջ պատեսցես ուսման գրոց,
Որ զմիտս առնէ զինչ բով հալոց,
Մաքրագործէ ի յարքունուց,
Եւ արասցէ հաղորդ վերնոց…
Ջեն՝
Զանիւ ստիցէ ըզքեզ ի խրատ,
Զի գիտութիւն առցես առատ,
Եւ մի մնասցես յուսմանց աղքատ,
Զի տայցես վրէժ եւ դատ…
(Յորդորակ)
Յորդորական ձայնիւ գոչեմ,
Նախ եկեղեցըդ բողոքեմ,
Որ գրեցի զքանըս պատմեմ՝
Ես Յոհաննէս ձեզ ծառայ եմ.
Հեռի եղէք, ահա ասեմ,
Յախտից մարմնոյ, զձեզ աղաչեմ:
Ահա եհաս աւրըն գըրեմ
Եւ ժամ մահու, որ ժամանեմ,
Նեղիմ տապով, զոր այժմ երկնեմ,
Զունիմ ջուապ, պատասխանեմ,
Ի դատաստան ես մտանեմ
Եւ չիմ մեղացն յոյժ ամաչեմ,
Սրբոցըն փառս, զոր տեսանեմ,
Վիշտ տանջանօք զանձս կոծեմ.
Ի մեղական մարդ, զայս գիտեմ,

Բնութեան նոցին հաւասար եմ,
Բայց ի գործոցն յոյժ հեռի եմ,
Ջներհակ նոցին, եւ մըտածեմ,
Այս ինձ կրկին /// գործեմ
Զի զլաւն այլոց ուսուցանեմ,
Նման յեսանի՝ զայլըս սրեմ,
Ի սրոյ բանին զիս յոյժ ըթեմ»[1]:

Յովհաննէս Տորձորեցու չափածոյ ստեղծագործութիւնների մէջ յատուկ տեղ են գրաւում հանելուկները, որոնց անդրադառնում ենք առանձին պարբերութեամբ:

գ. Հանելուկներ

Ներսէս Շնորհալու՝ ժողովրդական բառ ու բանով համեմուած, գիւրալուր եւ հետաքրքրաշարժ հանելուկները սիրուած ստեղծագործութիւններ են եղել եւ լայն տարածում գտել ամենուրեք: Նրանց նմանողութեամբ միջնադարում ստեղծուել են հանելուկների նոր շարքեր, որոնք, ընդօրինակուելով յետագայում Շնորհալու հանելուկներին առընթեր՝ ձուլուել են նրանց հետ, զրկուելով իրենց հեղինակացոյց խորագրերից[2]: Շնորհալուց յետոյ հանելուկներ են ստեղծել Յովհաննէս Պլուզը, Գեւորգ Երզնկացին, Գրիգոր Տերէնց Խլաթեցին[3], Յովհաննէս Տորձորեցին եւ ուրիշներ: Տորձորեցու հանելուկների մեզ յայտնի միակ ընդօրինակութիւնը պահպանուել է մեր Մատենադարանի N 7035 ձեռագրի մէջ, բաղկացած լինելով 20 միաւորից: Նկատի ունենալով դրանց բանասիրական արժէքն ու ճանաչողական նշանակութիւնը՝ ստորեւ հրապարակում ենք ամբողջութեամբ.

«Յոհան վարդապետ Տորձորեցւոյ արարեալ հանելուկս

1. Տեսի արուեստ մի զարմազան,
Զի նշտրակով զերկիր բանան,
Հանեն արիւն անդի զինչ թան
Եւ գիր գրեն կայսերական: (Քարն)

---

1 ՄՄ ձեռ. N 2079, էջ142ա-143բ

2 Հաստատապէս Ներսէս Շնորհալուն են պատկանում շուրջ 120-140 հանելուկներ (տե՛ս «Բանք չափաւ», էջ 609-639, ձեռ. N 7035, էջ 117ա-130ա եւ այլ ձեռագրեր): Կան, սակայն, բազմաթիւ ձեռագրեր (օրինակ՝ N 2079, էջ 278բ-283բ), որոնցում հանելուկները բազմացել են ի հաշիւ այլ հեղինակների ստեղծագործութիւնների: Ներսէս Շնորհալու հանելուկներն արժանի են մանրակրկիտ ձեռագրագիտական ուսումնասիրութեան, որով պարզուելու են այդ ուշագրաւ ժանրի ստեղծման ու զարգացման ընթացքի հետ կապուած լուսաբանութեան կարօտ շատ խնդիրներ:

3 Այս երեք նշանաւոր մատենագիրների յօրինած հանելուկների մասին տեղեկութիւն ենք քաղում Տրդատ վրդ. Պալեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիոն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա (Զմիւռնիոյ վիճակ)» (Զմիւռնիա, 1897) աշխատութիւնից (ձեռքի տակ ունեցել ենք նոյնի հատուածաբար տպագրութիւնը «Արեւելեան մամուլ» պարբերականի մէջ, 1897, էջ 140-142): Այստեղ նկարագրուած է 1526 թ. Աղթամարում ընդօրինակուած մի ժողովածու, որի մէջ եղել են 6 հանելուկ Յովհաննէս Պլուզից, 5 հանելուկ՝ Գեւորգ Երզնկացուց եւ 16 հանելուկ՝ Գրիգոր Տերենցից: Տ. Պալեանը իւրաքանչիւրից մէկական օրինակ նմուշ է բերել:

2. Եկ եւ տես այլ սոսկալի,
Զի յատոցով երկիր բըրի,
Ելնէ կենդան 'ւ ոչ կենդանի,
Առնէ կարմիր զգոյն սպիտակի: (Որդն)

3. Ի սուլտանին մեծ քարխանայն
Կայր մին ուսթայ խիստ աննման,
Առանց հորի եւ մաքոքայն
Գործէր բարակ գործ անխաբան: (Սանդ)

4. Ձերդ աղեղան լար է բարակ,
Հանց հնաւոր զերդ աղուսեակ,
Ի յամէն չորս եղանակ
Նա նորանա զերդ արծուակ: (Աւձ)

5. Ըստ Արարչին մեծ սահմանի,
Նա բուրգն եւ հիմն է աշխարհի,
Աստուածայշէն տանն է տեղի,
Մարդկան ոտից անկոխելի: (Մասիս)

6. Ազգ ունի զինչ առիւծու,
Կնճիթն է սուր զերդ աղուեսու,
Խաւարասէր է որպէս բու
Եւ ձայն ածէ որպէս հաւու: (Մուկն)

7. Քան ըղշուն ինքն է վազան,
Սիւներն երկայն՝ զինչ զպարան,
Է թեւատ աքլաղ նըման,
Կամ հաւասար ըղտու կոզւան: (Մաքի)

8. Ի կարուակէ հանճարեղին
Կարեալ կապա զանմաշելին,

Զնիւթն ի քարէ կակղացուցին,
Ասեղն՝ սալն է դարբընին: (Զրեհ)

9. Ի յերկու կողմանց է ծուռ,
Կուշտն կապած խիստ եւ կուռ,
Թէ կորովի է ոք եւ փուռ,
Ցրուէ զոսկերս մարդկան զերդ բուռ: (Աղեղն)

10. Զինչ խեչեփառ ոտուի ժանի,
Ընդ որ երթայ՝ հետն երեւի,
Նա ի մազէ կամուրջն անցնի,
Թէ եւ թընդայ՝ հող չթափի: (Մկրատ)

11. Ոչ է մարդ եւ ոչ կընիկ,
Բայց բոքասուն զերդ առեւծիկ,
Թէ պխտենայ՝ քեզ է թախտիկ,
Եւ թէ կամիս՝ լինի սայլիկ: (Ջորի)

12. Է գովելի կորիճ աղեկ,
Անուն կոչին իւր ղարապէկ,
Զինչ ըզսեւ անէ զընմէկ մէկ(°)
Լծուի եւ գայ յուս եւ ի թէկ: (Մրջիմն)

13. Ղարապէկիս կայր շէկ եղբայր
Զինչ թուխարիկ ձի ըընվար(°)
Որ գոլորշաւք ցաւին յերկար,
Նա հաքմութիւն գիտէ ճարտար: (Մեղու)

14. Ի յերկու սալի միջի,
Ինքն բնակէ զինչ ի փորի,
Եւ թէ մահու տա[ս] ըմպելի,
Նա խոտ ո[ւ] տէ ու չմեռանի: (Կրեա)

15. Անուն անեղն ասել ի Գրոց,
Բայց ինքն վառի որպէս զբոց,
Անճառ փայլիւն առնէ գունոց
Եւ հաշտութեան նըշան ամպոց: (Ծիածան)

16. Ի հրոյ ունի նա զգոյութիւն
Վառէ եւ զհուր ներգործութիւն
Խռիւ ցաւղնոյ յինքն միութիւն
Բայց ոչ այրէ նա քան զբնութիւն: (Մ[իրանի՞] ծով)

17. Մանուկ մի կայր խիստ հրաշատես,
Անիւ սայլի եւ հուր ի ներս,
Զորս կենդանի լծեալ եռես
Եւ մարդ յաթոռն՝ նըման քեզ: (Եզեկիէլ)

18. Զինչ պօղոսիկ գերան ի ցից
Կառաց լծեալ դիմաց չորից,
Նա վերանայր յերկինս երկնից
Բազմեալն աստուած էր ամենից: (Կառքն)

19. Էին հրեշտակք աթոռ եղեալ,
Մին ըղչորից երես առեալ,
Նըման կառանց յուղըղ թռեալ՝
Յերուսաղէմ ի յօթ իջեալ: (Այլ)[1]

20. Էր ինքն բոլոր զերդ արեգակ,
Ունէր սռնակ խաչատեսակ,
Անիւ սայլի համաքատակ
Եւ կենդանիս քառադիդակ»[2]:

1 «Այլ» ասելով նկատի ունի նախորդ (18-րդ) հանելուկի պատասխանը՝ «Կառք»: Եզեկիէլի կառքի մասին է նաեւ վերջին հանելուկը:

2 ՄՄ ձեռ. N 7035, էջ 130ա-132ա

Այս հանելուկներից մի քանիսը յետագայում վերագրուել են Ներսէս Շնորհալուն եւ, նոյնիսկ, հրատարակուել նրա անունով[1]: Բայց հաստատապէս պատկանում են Յովհաննէս Ծործորեցու գրչին: Այս ապացուցւում է նաեւ այն իրողութեամբ, որ N 7035 ձեռագրի մէջ Ծործորեցու հանելուկներին նախորդում է Շնորհալու շարքը բաղկացած շուրջ 140 միաւորից. ձեռագիրն ընդօրինակող գրչին քաջ յայտնի է եղել ե՛ւ Շնորհալու ե՛ւ Ծործորեցու վաստակը նոյնատիպ այս ստեղծագործութիւններ յօրինման մէջ:

Ծործորեցի բանաստեղծի չափածոն, վկայելով հեղինակի շնորհքի ու հմտութեան մասին, մտածել է տալիս, որ նա ստեղծագործած պէտք է լինի նաեւ այլ գործեր: Եւ կարելի է յուսալ, որ գիտական շրջանառութեան մէջ չդրուած հայերէն ձեռագրերից որեւէ մէկի ծալքերից առաջիկայում լոյս աշխարհ են բերուելու մեր հեղինակի բանաստեղծութիւններից ուրիշ նմուշներ եւս:

Է. Գիրք խորհրդոց եկեղեցւոյ

Կաթոլիկ եկեղեցու նշանաւոր գաղափարախօս Պետրոս Լոմբարդացու (մհ. 1164 թ.) «Վկայութիւնք» (Sententiarum) կոչուող քառահատոր աշխատութիւնը մինչեւ ռեֆորմացիայի դարաշրջանը տարածուած էր ողջ Եւրոպայում եւ ճանաչուած որպէս կաթոլիկ դաւանանքի համապարփակ ուղեցոյց: Այդ աշխատութեան մասին գրուել են տասնեակ մեկնութիւններ, որոնց մէջ ուրոյն տեղ է գրաւում Թովմա Աքուինացու համառօտ վերլուծութիւնը՝ «Գիրք խորհրդոց» (Liber Sacramentorum) խորագրով[2]:

Արեւելեան երկրներում, մասնաւորապէս՝ հայկական միջավայրում Կաթոլիկ եկեղեցու ազդեցութիւնը տարածել ցանկացող գործիչները, բնականաբար, ձեռքի տակ պէտք է ունենային դիւրալուր ոճով շարադրուած համապարփակ մի ձեռնարկ՝ կաթոլիցիզմի հիմնական սկզբունքների մասին խօսել եւ քարոզել կարենալու համար: Եւ ահա՝ համանման աշխատութիւններից լաւագոյնն է ճանաչւում Թովմա Աքուինացու վերոյիշեալ "Liber Sacramentorum" հատորը: Յովհաննէս Ծործորեցին, լատիներէն իմանալով եւ կաթոլիկ դաւանանքին յարած լինելով, յարմարագոյն անձն է նկատուել այդ գրուածքի թարգմանութիւնն իրագործելու: Եւ այդ պատասխանատու աշխատանքը յաջողութեամբ նա ի կատար է ածել Յովհաննէս ԻԲ պապի կարգադրութեամբ («Հրամանաւ պապին Հռոմա»), Զաքարիա եպիսկոպոսի հոգածութեամբ եւ Մարաղայում բուն դրած Բարթուղիմէոս Փռանկ եպիսկոպոսի օժանդակութեամբ՝ 1321 թ.՝ անկիւնաքարը դնելով հայ ունիթորական գրականութեան:

Յաջորդ տասնամեակների ընթացքում, ինչպէս Ծործորի վանքում, այնպէս էլ՝ աւելի մեծ ծաւալով՝ Քռնայում եւ հայ ունիթորների միւս կենտրոններում Յովհան եւ Յակոբ Քռնեցիների, Բարթուղիմէոս Մարաղացու, Պետրոս Արագոնացու եւ բազմաթիւ այլ հայ ու օտարազգի քարոզիչների ջանքերով ստեղծւում է հայ-կաթոլիկական ինքնատիպ մի գրականութիւն. ծիսական մատեաններից բացի հայերէն լեզուով շարադրւում կամ լատիներէնից թարգմանւում են փիլիսոփայական մեկնութիւններ, քերականագիտական երկեր, դատաստանագիրք, քա-

1 Այս հարցի հանգամանալից քննութիւնը դուրս համարելով մեր նպատակից՝ մատնանշում ենք N 2079 ձեռագիրը (էջ 282բ) եւ Յակոբ Մեղապարտի «Տաղարանը» (Վենետիկ, 1513, էջ 52-53), որոնցում զետեղուած Ն. Շնորհալու հանելուկների շարքի մէջ տեղ են գտել նաեւ Յ. Ծործորեցու հանելուկներից առանձին միաւորներ:

2 Միջնադարեան հայկական ձեռագրերում կոչուած է «Գիրս խորհրդոց եկեղեցւոյ» կամ «Յաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ»:

բովգիրք եւ բազմաթիւ այլ աշխատութիւններ, որոնց գիտական ուսումնասիրութիւնը դեռեւս չի կատարուած[1]:

«Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանութեան վերջում Յովհաննէս Ծործորեցին թողել է ընդարձակ յիշատակարան գրքի արժանիքների եւ իր կատարած աշխատանքի մասին, որ բազմիցս հրապարակուել է հայագիտական աշխատութիւններում[2]:

Զմմառի վանքի մատենադարանի «Անտոնեան հաւաքածու» շարքի մէջ պահւում է աշխատութեան մի ընդօրինակութիւն (ձեռ. N 105), որ կարող է Ծործորեցու ինքնագիրը լինել[3]:

ը. Այլ գրուածքներ

Վերոյիշեալ աշխատութիւններից բացի, Յովհաննէս Ծործորեցին, անշուշտ, գրել է նաեւ այլ գործեր, որոնց մասին միջնադարեան աղբիւրներում կան ակնարկներ եւ ստուգման կարօտ վկայութիւններ:

Այսպէս՝ Ամրդոլու վանքի «Վարդապետական գրեաց» ցուցակի մէջ, որ կազմել է Վարդան Բաղիշեցին XVII դ. վերջերին, ՃԻԶ (126-րդ) համարը կրող ձեռագիրը նկարագրուած է այսպէս. «Ա. Գիրք Յովհաննու Երզնկացւոյ Պլզոյ ասացեալ ժամանակագրութիւն եւ բազում նախերգանք եւ ասացուածք վարդապետաց. մանաւանդ բազում ասացուածք երկարք միւս Յովհաննու Եզնկացւոյն արարեալ, ոչ Պլզոյն, այլ Յովհաննու Ծործորեցւոյն»[4]:

«Բազում ասացուածք երկարք» արտայայտութեան տակ ի՞նչ պէտք է հասկանալ, Ծործորեցու քարոզնե՞րը, մեկնողական գրուածքնե՞րը, թէ՞ մեզ չհասած որեւէ այլ աշխատութիւն, դժուար է պատասխան տալ այս հարցերին:

Երուսաղէմի մատենադարանի N 1171 ձեռագրում (էջ 335-339) ընդօրինակուած է «Յոհանէս Ծործորեցւոյ ընդդէմ սուրբ պատարագին» խորագրով մի բնագիր, որ սկսւում է «Տէր ամենակալ, Աստուած հզօր, Արարիչ ամենայնի...» բառերով[5]: Սրա բովանդակութեան մասին աւելի բան չգիտենք:

Մեր Մատենադարանի N 3522 ձեռագրում (էջ 171բ-186ա) գտնում ենք Զաքարիա եպիսկոպոսի Սիւնեաց մետրոպոլիտ Յովհան Օրբելին ուղղած պատասխան-նամակի մի ընդօրինա-

1 Ունիթորական գրականութեան ցանկը կարեւոր պարզաբանումներով տուել է Markus Antonius v. d. Oudenrijn-ը՝ իր "Linguae Haicanae Scriptores" (Bern, 1960) մեծարժէք աշխատութեան մէջ. այդ գրականութեան գիտական ուսումնասիրութիւնը, սակայն, դեռ չի կատարուած:

2 Տե՛ս, օրինակ, **Գ. Զարպհանալեան**, Մատենադարան թարգմ. նախնեաց, էջ 274-275. **Հ. Տաշեան**, Մայր ցուցակ, էջ 777. «Բազմավէպ», 1906, էջ 257. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 173-174. **M. A. v. d. Oudenrijn**, էջ 182-183 եւ այլն:

3 Նոր Ջուղայի հայերէն N 614 ձեռագրի մէջ (85ա-91բ) ընդօրինակուած է «Նուաստ վարդապետի Յոհանու Եզնկացոյ, որ եւ Ծործորեցի թարգմանեալ զխորհուրդ պսակին ի լատին լեզուէ ի հայ բարբառ» խորագրով մի փոքրիկ բնագիր (տե՛ս **Լ. Մինասեան**, Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հտ. Բ, Վիեննա, 1972, էջ 91): «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատութեան եւ ձեռագրական այս հատուածի բաղդատումից յետոյ միայն հնարաւոր կլինի որոշել՝ ուրոյն մի աշխատութի՞ւն է սա, թէ՞ Թովմա Աքուինացու վերոյիշեալ գործի մի բաժնի առանձնակի ընդօրինակութիւն:

4 «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրդոլու՝ համարով անջինջ յիշատակ գրեալ իմովս ձեռամբ Վարդանայ վարդապետի» («Արարատ», 1903, էջ 187):

5 **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ, Դ, էջ 270

կութիւնը՝ այսպիսի ուշագրաւ խորագրով. «Թուղթ եւ պատասխանի առարկութեանցն ընդդէմ հակառակորդաց, արարեալ մեծի եւ իմաստնոյն Յոհանու Ծործորեցոյն»: Յովհաննէսի անունն այստեղ կարող է բացատրուել գրչագրական վրիպակով, իսկ եթէ այն գալիս է նախագաղափար օրինակից, ապա պէտք է ենթադրել, որ Յովհաննէս Ծործորեցին գործօն մասնակցութիւն է ունեցել Առաքելոց թեմի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսի ստորագրած գրութիւնների շարադրման ու յարդարման աշխատանքներին:

Ծործորեցու անունը թիւրիմացաբար առնչւում է նաեւ Մխիթար Գոշի առակներին: Մեր Մատենադարանի N 2189 ձեռագրի մէջ ընդօրինակուած են Գոշի ՃԿԱ-ՃՂ առակները, ինքնուրոյն համարակալութեամբ (Ա-ԻԸ)՝ «Առակք ստեղծականք պիտանիք առնուլ ի զրուցատրութիւնս եւ յասացուածս, արարեալ Յոհանու Ծործորեցո» խորագրով, վերջում ունենալով այսպիսի յիշատակագրութիւն. «...եւ զվերջացեալս ի բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս զՅոհ[աննէս] ծանօթ բանի եւ տեղեաւ Եզնկացի, իսկ այժմ Ծործորեցի, աղաչեմ չմոռանալ ի բարիս գիս եւ զիմսն ամենայն, ի թւականիս փրկչին ՌՅԺԶ(1316)»[1]:

Ակադեմիկոս Ն. Մառը, մանրակրկիտ ուսումնասիրելով այս ձեռագիրն ու յիշատակագրութիւնը, յանգել է այն ճիշտ եզրակացութեան, որ սխալմունքով պէտք է բացատրել վերոյիշեալ խորագրի մէջ Ծործորեցու անուան ներմուծումը: Նա, 1316 թ. սոսկ ընդօրինակել է Մխիթար Գոշի առակների վերջին բաժինը՝ չնշելով հեղինակի անունը: Տարիներ յետոյ (1394 թ. առաջ) Գրիգոր անունով մէկը, տարատեսակ նիւթերի հետաքրքրական մի ժողովածու կազմելով, Յովհաննէս Ծործորեցու ձեռագրից արտագրել է նաեւ այդ առակները, բայց սխալ մեկնաբանելով Ծործորեցու յիշատակագրութիւնը, իրեն այլուստ անծանօթ առակների հեղինակ է համարել գաղափար հանդիսացող ձեռագրի գրիչ Ծործորեցուն[2]:

Այսպիսով ժխտւում է Յովհաննէս Ծործորեցու մասնակցութիւնը միջնադարեան հայկական առակների ստեղծման աշխատանքներին, բայց բացայայտւում է, որ նա 1316 թ. երբ Ծործորի վանքում ծաւալել էր գիտա-մանկավարժական եռանդուն գործունէութիւն, ժամանակ է գտել շարունակելու ձեռագրերի բազմացման իր համար սովորական աշխատանքը՝ այս անգամ ընդօրինակման նիւթ դարձնելով Մխիթար Գոշի առակների «Առակք ստեղծականք» բաժինը[3]: Պէտք չէ տարակուսել, որ դեռեւս չուսումնասիրուած հայերէն ձեռագրի միջից յայտնաբերուելու են Յովհաննէս Ծործորեցու ստեղծագործութիւններին առնչուող նոր նիւթեր, ամբողջացնելով մեր գիտելիքները նրա կեանքի ու վաստակի մասին:

* * *

Յովհաննէս Երզնկացին մշտական բնակութիւն հաստատեց Ծործորում՝ նորակառոյց այդ վանքին կից բարձրագոյն դպրոց ստեղծելու կապակցութեամբ: Նրա աշխատութիւնների մեծագոյն մասը՝ Քերականի մեկնութիւնը, Մատթէոսի եւ Դանիէլի մեկնութիւնները եւ այլն,

1 ՄՄ ձեռ. N 2189, էջ 424ա-434ա: Նոյնը, ուղղագրական աննշան տարբերութիւններով, գտնում ենք նաեւ Երուսաղէմեան N 1376 ձեռագրում (էջ 497-524):

2 **Н. Я. Марр**, Сборники притч Вардана, ч. I, СПб, 1899, էջ 73-74: Ն. Մառի եզրակացութիւնն ըստ ամենայնի ճիշտ է. պէտք է աւելացնել միայն, որ մեր Մատենադարանի N 2189 (նախկին 2238) ձեռագրի նիւթերի համախմբողն ու գրիչը ինքը՝ Գրիգոր Տաթեւացին է: Ըստ այդմ՝ բովանդակալից այդ ժողովածուն թանկագին մի մատեան է, արժանի յատուկ ուշադրութեան:

3 Հմմտ. **Մխիթար Գոշ**, Առակներ (տեքստը ձեռագրերի համեմատութեամբ եւ ներածութիւնը Է. Պիւազեանի, Երեւան, 1951, էջ 119-133):

շարադրուած են հէնց ուսուցողական նպատակներով, իր շուրջ համախմբուած բանասէր անձանց եւ գրոց աշակերտների յորդորներով: 1318 թ. Ծործորի վանքում շարադրուած իր մի յիշատակարանում Մխիթար գրիչը, ժամանակի նշանաւոր անձանց՝ Հայոց թագաւորի, կաթողիկոսի, Արտազի եպիսկոպոսի անուններից անմիջապէս յետոյ, արձանագրում է Յովհաննէս Ծործորեցու անունը, մեծարելով նրան «վարժապետ եւ ուսուցիչ» տիտղոսով[1]: Ծործորեցու աշակերտներից մէկ ուրիշը, որի անունը չի պահպանուել, բայց արժանի է յիշատակութեան, որպէս խմբագիր իր ուսուցչի քարոզներից կազմուած ժողովածուի, վերը յիշատակուած ԺԲ-քարոզի ընծայական-յիշատակարանի մէջ իր րաբունապետին համահաւասար է համարում Յովհան Ոսկեբերանին եւ Գրիգոր Աստուածաբանին, յատկապէս շեշտելով նրա հայրական խնամքն իր աշակերտների նկատմամբ[2]:

Ծործորի բարձրագոյն դպրոցն աւարտած եւ վարդապետական գաւազան ստացած անձնաւորութիւններից յայտնի է Իսրայէլ րաբունին[3], որ յիշատակուած է նաեւ Յովհան Քռնեցու հետ միասին «փռանգաց դաւանութիւն» ընդունած 12 վարդապետների շարքում, իր հայրենակից Առաքել վարդապետի ընկերակցութեամբ («Առաքել եւ Իսրայէլ վարդապետք՝ ի գաւառէն Արտազու»)[4]: Սրանք եւս Ծործորեցու աշակերտներից են: Ուրիշ տեղեկութիւններ մեր րաբունապետի մանկավարժական աշխատանքի եւ սնուցած աշակերտների մասին չենք գտել:

Յովհաննէս Ծործորեցու գործունէութեանը վերաբերող վկայութիւններն ամփոփելու համար նշենք այստեղ, որ նա, Զաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մասնակցել է 1317 թ. Ադանա քաղաքում գումարուած եկեղեցական ժողովի աշխատանքներին. այդ մասին սկզբնաղբիւրներում կան ուղղակի վկայութիւններ[5]:

---

1 «Յորժամ գծագրեցաւ մատեանս գայս,- գրուած է այդ յիշատակարանում,- թուական Հայոց ՉԿԷ (1318) էր, եւ թագաւոր Օշին, եւ կաթողիկոս տէր Կոստանդին, եւ բնակութիւնս Ծործորոյ վանք, եւ տեղոյս առաջնորդ տէր Զաքարիայ, եւ վարժապետ եւ ուսուցիչ Յոհաննէս՝ ստացող գրոցս, եւ անուն գծողիս Մխիթար» (ՄՄ ձեռ. N 2104, էջ 164բ):

2 Այս գեղեցիկ ներբողեանը, որ պարունակում է Յովհաննէս Ծործորեցու մասին կենսագրական եւ բնութագրական տեղիներ, մէջ ենք բերում ստորեւ գրեթէ ամբողջութեամբ.

«Բեր այժմ ի մէջ առցուք զաղբերն իմաստից՝ զայրն կորովամիտ՝ զշքեղացեալն զանազան իմաստիւք բանականութեանն արգասեօք, զերկրորդն Ոսկիբեան, եւ կամ համարձակեցայց ասել Աստուածաբան, զհայրն մեր հոգեւոր, զրաբունապետն Յոհան: Որ զի թէպէտ եղեալ ոմանք եւ փայլեալք ի վերայ երկրի, եւ են, եւ լինին, որք համբաւեալ հռչակին ի խումբս աստուածեղէն տառից, սակայն ոմն այսու եւ ոմն այնու շնորհացն պայծառութեամբ յարգին ըստ առաքելոյ, եւ ըստ այնմ եւ զգովութեանն տարան մրցանակ, եւ կամ տանին: Իսկ նա զբովանդակն ընկալաւ իմաստ, եւ բոլորին եղեւ ընդունակ հանճարոյ: Քանզի թէպէտ մասն էր ինքն բոլորին, սակայն զհանուրցն եւ զմասանցն ստացաւ գիտութիւն, եւ ի ձեռն վարժից կրթութեանն, եւ բնական շնորհացն աջողութեան, նաեւ առաքինի եւ հեզ վարուցն պարկեշտութեան: Եթէ ըստ մտացն տեսողութեան եւ ծննդական գոյոյն ի գիտս հնարից դարձուածոց բանից՝ արագ էր քան զամենեսեան, եւ թէ ըստ առատ եւ յորդաբուղխ բանին բղխողութեան, եւ համեղ եւ ախորժ ի շահ օգտութեան ի լուր լսողաց՝ ամենեցուն էր նա ըղձալի: Զորս զամենեսեան ի բաց թողեալ իբրեւ զյայտնիս, զմին միայն եւեթ յիշեցից, զգութ հայրական խնամոցն, որ առ մեզ, զի սնոյց եւ վարժեաց զմեզ յոգնաբեղուն խրատութեամբ, իբրեւ զորդի սիրելի, եւ կամ զճշմարտագոյնն ասել՝ ի վեր քան զբնական սիրոյն գուցակութիւն, վասն զի կրկնակի տածմանն եցոյց առ իս օրինակ, մանաւանդ յայսմ իրակերտութեան գործոյ եղեւ նպաստ եւ առիթ՝ յորդորական բանիւք քաջալերս տալով» (Երուսաղէմ, ձեռ. N 1003, էջ 119. հմմտ. **Ն. Պողարեան,** Մայր ցուցակ, Դ, էջ 5):

3 **Մ. Քեշիշեան,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 579

4 ՄՄ ձեռ. N 1361, էջ 341ա

5 Զաքարիա եւ Յովհաննէս Ծործորեցիների անունները բացակայում են ժողովականների ցուցակից, բայց նրանց մասին տեղեկութիւն է հաղորդում Յովհան Քռնեցին. «Եւ ի մէջ եպիսկոպոսաց, որք եկեալ էին այն ժողովն եւս

Բանասէր Յ. Քիւրդեանը չի հաւատում դրանց արժանահաւատութեանը՝ նշելով, որ 1317 թ. Ծործորեցին գտնւում էր Արտազում, զբաղուած լինելով գրական աշխատանքներով[1]: Այս պնդումը, սակայն, հիմնազուրկ է. Յովհաննէս վարդապետի 1316 եւ 1318 ու յետագայ թուականներին Ծործորի վանքում լինելը վկայուած է սկզբնաղբիւրներով, մինչդեռ 1317 թ. մասին ոչ մի տեղեկութիւն չունենք: Ուստի հարկ չկայ տարակուսելու, որ նա, Զաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մեկնել է Կիլիկիա ու մասնակցել Ադանայի ժողովի աշխատանքներին: Հակուած ենք կարծելու, որ այս ճամփորդութիւնը չի սահմանափակուել Կիլիկիայով: Ծործորեցին, հաւանաբար, ուղեւորուել է նաեւ Աւինիոն ու տեսակցել Յովհան ԻԲ պապի հետ: Քիչ առաջ ասացինք, որ Թովմա Աքուինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանութեանը նա ձեռնարկել է, ինչպէս ինքն է գրում, «հրամանաւ պապին Հռոմա», իսկ այդպիսի հրաման Ծործորեցի վարդապետը կարող էր ստանալ՝ անձամբ տեսակցած լինելով Կաթոլիկ եկեղեցու վեհապետի հետ, հռոմէական եւ Հայկական եկեղեցիների միաւորման հետ առնչուող տեսական ու գործնական հարցերի շուրջ բանակցելու համար: Պէտք չէ մոռանալ, որ 1317 թ. Կաթոլիկ եկեղեցու առաջնորդները նախապատրաստւում էին աւելի աշխոյժ քարոզչական աշխատանք ծաւալելու արեւելեան երկրներում՝ այնտեղ առաքելով դոմինիկեան մի խումբ կղերականների ու ստեղծելով եպիսկոպոսական նոր թեմ:

Այս փաստերի լոյսի տակ Յովհաննէս Ծործորեցին ներկայանում է պատմութեան դատական ատեանին, որպէս մի գործիչ, որ հայրենի երկրի ազատագրման ու բարգաւաճման հեռանկարները շաղկապած լինելով եւրոպական երկրներից ակնկալուող ռազմական օգնութեան հետ, ընդառաջ էր գնում Կաթոլիկ եկեղեցու գաղափարական եւ կազմակերպչական պահանջներին, հրաժարուել էր Հայոց եկեղեցու որոշ ծէսերից ու աւանդութիւններից, ընդունել պապի գերիշխանութիւնը եւ այլն: Անհեռատես ու վնասակար այս քաղաքականութեան գործունեայ պաշտպաններից մէկը դառնալով, Ծործորեցի վարդապետը, սակայն, բնաւ չէր մտածում լուծարքի ենթարկել Հայոց եկեղեցու հնաւուրց կազմակերպութիւնը, դարձնելով այն սոսկ հռոմէական եկեղեցու կամազուրկ կցորդը: Նա ջատագով էր աւելի ճկուն ու զգուշաւոր քաղաքականութեան: Այդ մասին որոշակի տուեալներ է ունեցել Մ. Չամչեանը: Անդրադառնալով Սիւնեաց մետրապոլիտ Յովհան Օրբելի եւ Զաքարիա Ծործորեցու պայքարի դրուագներին, նա յայտնում է, որ Արտազի եպիսկոպոսը, հետեւելով Յովհաննէս Ծործորեցու յորդորներին, ի վերջոյ համոզուել է, որ հնարաւոր չէ ընդառաջել Կաթոլիկ եկեղեցու բոլոր պահանջներին, ուստի որդեգրել է աւելի զգուշաւոր մի գործելակերպ. «Զայս թուղթ Որպէլի առեալ Զաքարիայ,- կարդում ենք Չամչեանի մօտ,- թէպէտ եւ ինչ ոչ անսաց նմա, բայց ըստ խորհրդոյ Յովհաննու վարդապետի Ծործորեցւոյ՝ որ էր առ նմա՝ սկսաւ այնուհետեւ զգաստութեամբ վարիլ առ արտաքս, զգուշացեալ յՈրպէլէ եւ յայլոց. քանզի եւս եւ ինքն, թէ

եղեւ արհեպիսկոպոսն Զաքարիա, որ էր իշխող եկեղեցւոյն սրբոյն Թադէոսի առաքելոյն... եւ ի մէջ նոցին էր եւ մեծ վարդապետն Յոհան Ծործորեցին» (**Կ. Գալանոս,** Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ աշխարհի, Հռոմ, 1690, էջ 517-518): Համանման տեղեկութիւն գտնում ենք «Պատմիչ ժողովոցն Կիլիկիոյ» աղբիւրի մէջ. «Հինգերորդ ընդհանրական ժողով,- գրուած է այնտեղ,- եղեւ ի մայրաքաղաքին Ատանայ Կիլիկիոյ... յամի տեառն ՌՅԺԷ-ին եւ ի թվ. Հայոց ՉԿԶ-ին, այսու պատճառաւ, զի տգէտք եւ կամապաշտք ոմանք միակեացք խռովէին զպարզամիտս իբր թէ ժողովն Սսոյ իցեր հակառակ աւանդութեանց սրբոյն Լուսաւորչին... համագումարեցին ի քաղաքն Ատանայ, ընդ որս էր եւ մեծ արքեպիսկոպոսն Մեծին Հայաստանի Զաքարիայ... եւ վարդապետն հռչակաւոր Յոհան Ծործորեցի» (**Յ. Տաշեան,** Մայր ցուցակ, էջ 115):

1 **Յ. Քիւրտեան,** Երիզա եւ Եկեղեաց գաւառ, հտ. Ա. Վենետիկ, 1953, էջ 195-196, 241

անհնարին իմն էր միահաղոյն յայտնի կատարել զամենայն զօր կամէր կաթողիկոսն»[1]:

1316-1325 թթ. գիտա-մանկավարժական աշխոյժ գործունէութիւնից յետոյ Յովհաննէս Ծործորեցին կարծես չքւում է ասպարէզից: Ոմանք ենթադրել են, թէ նա կնքել է իր մահկանացուն 1326 թ., հաւանաբար ելնելով այն փաստից, որ նրա կողմից շարադրուած յիշատակարանների մէջ նշուած վերջին տարեթիւը 1325 թ. է[2]: Յայտնուել են նաեւ այլ կարծիքներ[3]: Ծործորեցու մահուան ճշգրիտ թուականն այսօր էլ անյայտ է մնում, բայց վերջերս գիտական շրջանառութեան մէջ դրուած մի յիշատակարան հնարաւորութիւն է ընձեռում նոր լոյս սփռել նրա կեանքի վերջին շրջանի վրայ: Ծործորեցու մեզ արդէն ծանօթ աշակերտներից Իսրայէլ բաբունին 1337 թ. Արտազի գաւառում, հաւանաբար հէնց Ծործորի վանքում, ընդօրինակել է տուել արժէքաւոր նիւթերի մի ժողովածու, որի մէջ կենտրոնական տեղ էր գրաւում Պետրոս Արագոնացու աշխատասիրութեամբ հայացուած «Գիրք դատաստանացը»[4]: Ձեռագրիս յիշատակարանում այս Իսրայէլի մասին ասուած է, որ «Սա սնեալ եւ վարժեալ եղեւ առ ոտս ամենապարկեշտ ծերունւոյն եւ մաքրամիտ բաբունապետին՝ որ մականուն Ծործորեցի, եւ որ դաստիարակեալ զսա յերկեղն Աստուծոյ եւ ի պաշտօն եկեղեցւոյ բազում աշխատութեամբ եւ խնամօք փոյթ արարեալ վասն սորա, մինչեւ յարբունս կատարելութեան հասուցեալ, զօր ըստ վաստակոցն եւ աշխատութեան նորա տէր հատուցէ յերանաւէտ կեանսն»[5]:

Կասկած չի կարող լինել, որ «ամենապարկեշտ ծերունի» կոչուած Ծործորեցի բաբունապետը այս յիշատակարանի գրութեան ժամանակ, այսինքն՝ 1337 թ. դեռ կենդանի էր, բայց համրում էր իր կեանքի վերջին օրերը. ըստ այդմ նա կեանքից հեռացած պէտք է լինի հաւանաբար 1338 թ.:

4. Ծործորի դպրոցը Յովհաննէսից յետոյ

Յովհաննէս Ծործորեցուց յետոյ խամրում է նրա ծաւալած գիտա-մանկավարժական աշխատանքի շնորհիւ համբաւ ձեռք բերած ուսումնական հաստատութիւնը: Բայց շարունակում է իր գոյութիւնը եւս մի քանի տասնամեակ: Հաւանաբար դեռեւս Յովհաննէս բաբունապետի կենդանութեան օրօք Ծործորի վանք էր տեղափոխուել ֆրանցիսկեան միաբանութեան անդամ Ֆրա Պոնցիուս կոչուած վարդապետը[6], որ ճանաչուած է որպէս իմաստուն մի մարդ՝

1 **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 308

2 Այս թուականին է մաքրագրուել ու շրջանառութեան մէջ դրուել Թ. Աքուինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատութեան Յ. Ծործորեցու թարգմանութիւնը:

3 Պատշաճ է այստեղ ծանօթանալ այս հարցի մասին Ա. Սրապեանի ուսումնասիրութեան մէջ առկայ տողերին. «Ղ. Ալիշանը եւ Գ. Զարպհանալեանը (Յովհաննէս Երզնկացուն) համարել են մահացած 1326 թ., Մ. Պոտուրեանն ու Ա. Զամինեանը՝ 1332 թ., Ա. Չոպանեանը՝ 1330 թ. կամ 1340 թ. եւ այլն: Յ. Քիւրտեանը հաւանական է համարում 1325-1326 թթ.» (նշ. աշխ., էջ 31):

4 «Գիրք դատաստանաց եւ կանոնաց թարգմանեալ ի լատին լեզուէ ի հայ բարբառ նպաստաւորութեամբ Ֆրա Պետրոսի ի կարգէ Դոմինիկոսի. միջնորդութեամբ Առաքել վարդապետի ի մերս զարմէ՝ ճոցին դպրութեան հետեւողի» (Ջմմառի վանքի մատենադարան, ձեռ. N 251, էջ 290բ):

5 **Մ. Քեշիշեան**, Ցուցակ, էջ 579

6 Ֆրանցիսկեան այս վարդապետի անունը հայերէն ձեռագրերում տառադարձուած ենք գտնում Պոնցիոս, Պոնցիուս, Պոնցի, Ապօնց այլազան ձեւերով: Հաւանաբար Bonifacius անուան համառօտութիւնն է կամ էլ Boëtius-ի աղճատ ձեւը: Պոնցիուսն ըստ երեւոյթին, արագոնացի է եղել. այդպէս ենք կարծում՝ հաշուի առնելով այն փաստը, որ «Յովհաննու Աւետարանի մեկնութեան» սրա կատարած թարգմանութեան ձեռագրերից մէկում, որ դարիս սկզբներին խիստ քայքայուած վիճակում պահուելիս է եղել Տաթեւի վանքում, տուեալ է եղել թարգմանչի արագոնացի լինելու մասին (**Օ. Եգանեան**, Տաթեւի գրատան ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», N 9, էջ 423):

«յոյժ հմուտ հայոց գրոյն»: «Քաջ բաբունապետի» համբաւ ձեռք բերած եւրոպացի այս քարոզիչը Ծործորի վանքում զբաղուել է գիտա-մանկավարժական աշխատանքով, թարգմանել է մի շարք երկեր՝ օգնական ունենալով Իսրայէլ վարդապետին:

Նրա թարգմանած գործերից մեզ յայտնի են հետեւեալները.

«Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Յովհաննու... արարեալ մեծ վարդապետին Նիկողայոսի Լիւրացւոյ»:

Նշանաւոր աստուածաբան ու քարոզիչ, ֆրանցիսկեան միաբանութեան անդամ Նիկողայոս Լիւրացին կամ Լիրան (մհ. 1340 թ.) գրաւել է Ծործորում գործող գրագէտների սեւեռուն ուշադրութիւնը: Ծագումով հրեայ այս աստուածաբանը գրել էր Հին եւ Նոր Կտակարանի բոլոր գրքերի մեկնութիւններ՝ լայնօրէն օգտագործելով հրէական գրականութեան տուեալները: Նրա գրուածքները մի քանի դար շարունակ կաթոլիկ աշխարհում ճանաչուած էին որպէս անգերազանցելի ձեռնարկներ: Եւ ահա 1341 թ. մի քանի տարի առաջ, այսինքն հեղինակի կենդանութեան օրօք[1] Զաքարիա եպիսկոպոսի յանձնարարութեամբ եւ Իսրայէլ վարդապետի աջակցութեամբ Ֆրա Պոնցիուսը հայերէն է թարգմանում Լիրայի «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Յովհաննու» ծաւալուն աշխատութիւնը:

Այս թարգմանութեան ձեռագրերից մեզ յայտնի են երեքը. մէկը մեր Մատենադարանի N 6903 ձեռագիրն է, արտագրուած Նորավանքում, Ղուկաս գրչի կողմից 1341 թ.[2], միւս ձեռագիրը Մատենադարան է մուտք գործել վերջերս ու գրանցուել 10539 համարի տակ, իսկ վերջինը՝ Երուսաղէմի N 789 ձեռագիրն է, որ չնայած ուշ ժամանակի ընդօրինակութիւն է (1740), բայց արժէքաւոր է ամբողջական ու լրիւ լինելով: Այս երեք ձեռագրերի մէջ առկայ տուեալների համադրութեամբ ստորեւ տալիս ենք քննարկուող բնագրի խորագիրը, յիշատակարանը եւ միջին մասերում եղած ընծայական պարբերութիւնը, որի մէջ կարեւոր տուեալներ կան Զաքարիա եպիսկոպոսի եւ նրա ազգակիցների մասին:

Ամբողջական խորագիրն է.

«Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յովհաննու, ի խնդրոյ եւ ի հարկեցուցիչ հրամանէ արհիական գլխոյն եւ մեծ գիտապետին տէր Զաքարիայի՝ սպասաւորի սուրբ առաքելոյն Թադէոսի, թարգմանեալ է լատին գրոց ի մերս բարբառ, արարեալ մեծ վարդապետին Նիկողայոսի Լիւրացւոյ, որ ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի»[3]:

Թարգմանութեան մասին պահպանուել են այսպիսի յիշատակագրութիւններ.

ա. «Կատարեցաւ մեկնութիւն, որ ըստ Աւետարանին Յոհաննու ի վերայ բնաբանիս ի ձեռն

1 Մատենադարանի N 6903 ձեռագիրը ասացինք, որ ընդօրինակուած է 1341 թ., Ղուկաս գրչի կողմից, Նորավանքում: Այդ փաստից դժուար չէ հետեւեցնել, որ թարգմանութիւնը կատարուել է 1341 թ. առնուազն 2-3 տարի առաջ: Այդքան, գոնէ եւ աւելի ժամանակ էր հարկաւոր թարգմանութեան օրինակներից մէկը Արտազի ունիթորական միջավայրից դուրս բերելու, Սիւնիք փոխադրելու եւ ընդօրինակելու համար:

2 Ձեռագիրը մինչեւ առաջին աշխարհամարտի դժնդակ տարիները պահուելիս է եղել Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում՝ անաղարտ վիճակում, վերջում ունենալով յիշատակարան թարգմանութեան եւ ընդօրինակութեան հանգամանքների մասին: Սմբատ Տէր-Աւետիսեանը 1904 թ. նկարագրել է ձեռագիրը եւ արտագրել 424ա-424բ էջի վրայ եղած յիշատակարանը: Ձեռագիրը յետագայում տարուել է Թաւրիզ, զրկուել սկզբի ու վերջի թերթերից եւ այդպէս բզկտուած վիճակով բերուել Մատենադարան:

3 Խորագիրը տրւում է ըստ Մատենդարանի N 10539 ձեռագրի:

վսեմախոհ վարդապետի Ֆրա Պօնցի. եւ քերթելով քաջ հռետորի Իսրայէլի. որք ընթեռնուք եւ կամ օրինակէք յիշեցէք յաղօթս»:

բ. «Արդ, թարգմանեցաւ գիրքս այս ի լատին լեզուէ ի հայս հրամանաւ մեծ դիտապետին եւ արհիական գլխոյն, աթոռակալի սուրբ առաքելոյն Թադէոսի արժանաւոր եպիսկոպոսի տէր Զաքարիայի, զոր բազում ըղձիւք եւ սիրայեղձ փափագանօք թարգմանեալ եմ զսա ի նեղ եւ ի դառն ժամանակի, ի լուսաւորութիւն Հայաստանեայցս եկեղեցւոյ եւ խրախութիւն եւ ի վայելումն մանկանց Սիոնի, զոր թարգմանեաց քաջ բաբունապետն Ֆրա Պօնցիուս կոչեցեալ, միջնորդելով վարդապետին Իսրայէլի»[1]:

Բուն մեկնութիւնը օժտուած է Նախադրութեամբ, որի վերջում թարգմանիչ Ֆրա Պօնցիուսը կամ նրա հայ գործակից Իսրայէլ բաբունին՝ Զաքարիա Ծործորեցու գովքն է հիւսում, նրա անունն ստուգաբանելով «յիշող տեառն» կամ «օգնութիւն տեառն» բառերով: «Օգնութիւն տեառն,- գրում է նա,- վասն առատամիտ եւ մշտաձիր տրոցն, որ առ աղքատս եւ կարօտեալս, որք են անդամք Քրիստոսի եւ վասն պահպանութեան եւ խնամակալութեան իւրոցն հնազանդելոց». այստեղ մեծարւում է պարոնտէր Զաքարիան, շեշտւում նրա ոչ միայն հոգեւոր, այլեւ աշխարհիկ աւատատէր լինելու հանգամանքը: Այնուհետեւ ներբողեան յիշեցնող այս հատուածի հեղինակը փորձում է որոշել իր մեկենասի բացառիկ տեղը Հայ եկեղեցու պատմութեան մէջ, նրա գործունէութիւնն անմիջապէս շաղկապելով Թադէոս առաքեալի եւ Գրիգոր Լուսաւորչի հետ: Լուսաւորիչը՝ Թադէոս առաքեալի «որդիացեալը»՝ «ընդարձակեալ տարածեաց» ճշմարիտ հաւատը Հայաստանում,- գրում է նա,- իսկ Զաքարիան այդ «ճշմարիտ հաւատի» (այսինքն՝ կաթոլիկ դաւանանքի) պայծառացնողն է նոր ժամանակներում, ուստի որդին է հէնց Գրիգոր Լուսաւորչի[2]:

Այս փառաբանութիւնները ծլարձակում են պարարտ այն հողի վրայ, որ ներբողեանի հեղինակը հակիրճ բնորոշել է այսպիսի տողերով. «Տէրս Զաքարիա զինքն նուաստ եւ հնազանդ ունի եւ հրամանակատար յաջորդին Պետրոսի»[3]:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում N 10539 ձեռագրի մի մանրանկարը, որի արժէքն աւելի նշանակալից կլինէր, եթէ տուեալներ լինէին պարզելու, որ այն արտագրուած է թարգմանական սոյն բնագրի նախօրինակից: Այստեղ, Էջմիածնի Մայր տաճարի ֆոնի վրայ, նկարուած է Թադէոս առաքեալը՝ նստած գիրքով. մէկ ձեռքին գաւազան, միւսին՝ Աւետարան. ս. սեղանի մի կողմում Գր. Լուսաւորիչն է, նոյնպէս նստած եւ գաւազան ու Աւետարան բռնած: Մի վեղարաւոր նրա բոպիկ ոտքն է համբուրում, իսկ գահի ետնամասում կանգնած են երեք այլ հոգեւորականներ. սեղանի աջեւ ծնրադիր աղօթում է կաթողիկոսական զգեստաւորում եւ կարմիր վեղար ունեցող մի կղերական, որ հաւանաբար Զաքարիա արքեպիսկոպոսն է, նրա մօտ կանգնած են երկու վեղարաւորներ: Նկարուած է նաեւ լատինացի մի վարդապետ, որ երկրպագում է արքեպիսկոպոսին (սրա պատկերի վերին մասում գրուած է.

1 **Ս. Տէր-Աւետիսեան**, Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Ստեփանոս, որ ի Գողթն (ցուցակն այժմ պահւում է Մաշտոցի անւ. Մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հաւաքածոյում):

2 Բառացի ասուած է այսպէս. «Զոր եւ զճշմարտութիւն այսմ հաւատոյս որդիացեալն նմա (Թադէոսի առաքելոյն) Լուսաւորիչն սուրբ Գրիգորիոս ընդարձակեալ տարածեաց, ընդ որս եւ զայն հաւատոյ ճշմարտութիւն եւ զամենայն բարեկարգութեան ուղղութիւն ի վերջին դարս եւ յետին ժամանակս տէրս մեր Զաքարիաս երկաջան վաստակօք նորոգեալ պայծառացոյց: Եւ զի սուրբն Գրիգոր կոչի որդի սուրբ առաքելոյն Թադէոսի՝ վասն հետեւման նորին, նմանապէս եւ տէրս մեր Զաքարիաս առձայնի որդի սրբոյն Գրիգորի» (Երուսաղէմ, ձեռ. N 789, էջ 148):

3 Նոյն, էջ 149

«Պատկերս լատինացւոց վարդապետին է, որ արարեալ է գիրքս». ըստ այդմ կարող է Ֆրա Պօնցիուսի նկարը լինել): Բացի այդ, զանգակատնից ներքեւ մի խումբ է նկարուած, որի մէջ՝ մի վարդապետ, կից ունենալով այսպիսի մակագրութիւն. «վարդապետ մի տեսի ի մէջ պատուհանին, նստում է եւ կարդում է»[1]:

Ֆրա Պօնցիուսի ջանքերով թարգմանուած է նաեւ Լիւրացու մեկնութիւններից մէկ ուրիշը՝ «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի, որ առ եբրայեցիսն... Նիկողայոսի Լիւրացւոյ»: Այս աշխատութեան ընդարձակ խորագրի վերջում բառացի ասուած է, որ թարգմանութիւնը կատարուել է «ի ձեռն վսեմախոհ վարդապետի Ֆրա Պօնցի, լատին լեզուէ ի հայս»[2]:

Պօնցիուսի աշխատասիրութեամբ թարգմանուած միւս երկը Ֆրանցիսկեանների մեծ գաղափարախօս Բոնավենտուրայի (1221-1274) գրած սուրբ Ֆրանցիսկոսի վարքն է, «Մեծի կարդինարին եւ անյախթ վարդապետին սուրբ եկեղեցւոյն Հռոմա Բոնավենդուրէ վասն վարուց սրբոյն Ֆրանցիսկոսի» խորագրով: Դրա յիշատակարանում կարդում ենք. «Թվ. ՉՁԸ (1339) թարգմանեցա[ւ] ձեռամբ Ալօնցի Ֆրա մնուրի»[3]:

Բացի մեկնողական երկերից, Ֆրա Պօնցիուսը թարգմանել է նաեւ ծիսական մատեաններ, որոնցից յայտնի է «Գիրք պատարագի» կոչուածը: 1381 թ. Բոլոնիայում իրականացուել է այս թարգմանութեան մի ընդօրինակութիւն, որի յիշատակարանում կարեւոր տուեալներ կան գրանցուած թարգմանչի մասին. «Որ էր թարգմանած ի լատին գրոյն ի հայկայզան բառս մեր, զոր բացատրեալ էր եւ մեկնեալ Ֆրա Պօնցիոսն՝ ի կարգէն սրբոյն Ֆրանցիսկոսի՝ իմաստուն վարդապետ եւ յոյժ հմուտ հայոց գրոյն»[4]:

Այսպիսով, Յովհաննէս Ծործորեցու, Ֆրա Պօնցիուսի եւ նրանց գործընկերների ջանքերով Ծործորի բարձրագոյն դպրոցը XIV դ. առաջին կիսամեակում գիտա-մանկավարժական աշխատանքների կարեւոր միջավայր դարձաւ: Յատկապէս նշանակալից եղաւ ուսումնագիտական այդ հաստատութեան դերը եւրոպական սքոլաստիկայի կարկառուն ներկայացուցիչների՝ Նիկողայոս Լիւրացու, Թովմա Աքուինացու, Բոնավենտուրայի եւ այլ հեղինակների կարեւոր երկերի հայերէն թարգմանութիւններն իրականացնելու մարզում:

Դպրոցի մայրամուտն սկսուեց 1340-ական թուականներից. դոմինիկեան քարոզիչները, որ հաստատուել էին Քռնայում եւ ստեղծել իրենց բարձրագոյն դպրոցը, շուտով կարողանում են իրենց շուրջ համախմբել կաթոլիկութեան հակուած բոլոր հայ գործիչներին, որոնց թւում նաեւ ֆրանցիսկեանների ազդեցութեան տակ գտնուող ծործորեցիներին: Ֆրա Պօնցիուսից յետոյ այդ դպրոցը գրեթէ դադարում է գիտա-մանկավարժական մտքի կենտրոն լինելուց: Մեծ հաւանականութեամբ Քռնա են տեղափոխւում Ծործորի դպրոցի վարդապետները՝ Իսրայէլ բաբունին եւ ուրիշներ, ինչպէս եւ դպրոցի շուրջ համախմբուած աշակերտների մեծ մասը: Որոշ ժամանակ Արտազի շրջանի հայ կաթոլիկների մշակութային գործունէութեան կենտրոն է դառնում Մակու գիւղաքաղաքը՝ հայ իշխանների նստոցը՝ Ս. Աստուածածնի անուան իր մենաստանով: Այստեղ՝ «ի մենաստանիս ի Մակու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի» XIV դ. 80-ական թթ. գործում է «իմաստուն հռետոր» կոչուած Կարապետ բա-

1 Տե՛ս ՄՄ ձեռ. N 10539, էջ 2բ:

2 ՄՄ ձեռ. N 1412, էջ 2ա-75բ (նոյնն է նաեւ սրանից ընդօրինակուած N 1411 ձեռագիրը):

3 ՄՄ ձեռ. N 1736, էջ 141ա

4 **M. A. Oudenrijn**, նշ. աշխ., էջ 256-257

բունապետը, օգնական ունենալով Մատթէոս անունով մի վարդապետի[1]: Մէկ տասնամեակ յետոյ՝ 1392 թ., նոյն Մակու գիւղաքաղաքում որպէս բարունապետ յիշատակւում է արդէն վերոյիշեալ Մատթէոսը, իսկ 1406 թ.՝ Մխիթարիչ բարունապետը[2]: Սրանց մանկավարժական եւ մատենագրական աշխատանքների մասին տեղեկութիւնները պակասում են: Յայտնի է, որ նոյն այս տարիներին Մակուի անառիկ բերդում ապահով պահելու համար Սսից բերում են 50 լիտր ձեռագիր մատեաններ, ըստ երեւոյթին դրանց մէջ կային նաեւ միարարական շարժման հետ առնչուող գրքեր ու դիւանական փաստաթղթեր[3]:

Մակուի հայ կաթոլիկների գիտա-մանկավարժական գործունէութեան մասին առկայ տուեալներն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նշել, որ Ծործորի վանքը որպէս վանական հաստատութիւն գոյութիւն է ունեցել ընդհուպ մինչեւ XVII դ. վերջերը: Այլ առիթով նշել ենք արդէն, որ իրեն Ծործորեցի էր կոչում Գրիգոր անունով կաթոլիկ այն վարդապետը, որ 1670-ական թթ. թարգմանութիւններ է կատարել, տաղեր ու կրօնական երգեր յօրինել: Ծործորի անուան վերջին այս յիշատակութեամբ էլ աւարտւում են մեր գիտելիքները միջնադարեան Հայաստանի մշակութային այս հաստատութեան մասին: Վանքի աւերակները այսօր էլ կանգուն են Մակուի շրջանի Բարոն գիւղից հարաւ:

***

Արտազի հայկական իշխանութեան ու նրա մշակութային կենտրոնի պատմութեանը նուիրուած այս ակնարկին վերջակէտ դնելուց առաջ եզրափակիչ խօսքի կարիք է զգացւում:

Հայոց պատմութեան Արշակունեաց եւ մարզպանական ժամանակաշրջաններում կենտրոնական դեր գրաւող Արտազի գաւառում, երկարատեւ ընդմիջումից յետոյ, XIII դ. կէսերին վերականգնւում է հայկական կիսանկախ իշխանութիւնը: Արտազի հոգեւոր եւ աշխարհիկ աւատատէրերը, գլխաւորութեամբ Թադէոս առաքեալի նորաստեղծ եկեղեցական թեմի պարոնտէր եպիսկոպոսների, կարողանում են ի շահ իրենց գերդաստանի օգտագործել մոնղոլների եւ Կիլիկեան հայկական թագաւորութեան միջեւ կնքուած դաշնագրով քրիստոնեայ եկեղեցիների նկատմամբ մոնղոլների կողմից խոստացուած բարեացակամ կեցուածքը: Ընդառաջելով կիլիկեան հայ արքունիքի եւ կաթողիկոսարանի եւրոպական կողմնորոշմանն ու լատինամէտ քաղաքականութեանը, Արտազի հայ իշխողները դառնում են հայ ժողովրդի ազատագրական իղձերի իրականացման առումով վնասակար ու անհեռատես այդ քաղաքականութեան կամակատարները Մեծ Հայքում, եւ քայլ առ քայլ զիջումներ կատարելով, ի վերջոյ դաւաճանում են ազգային աւանդութիւններին եւ ընդունում կաթոլիկ եկեղեցու դաւանանքը:

Նրանց մշակութային կենտրոնը դարձած Ծործորի վանքում, Յովհաննէս Ծործորեցի բաբունապետի ու նրա հետեւորդների ջանքերով, դրուած են հայ ունիթորական գրականութեան հիմնաքարերը. լատիներէնից հայերէն են թարգմանւում Նիկողայոս Լիւրացու, Թովմա Աքուինացու, Բոնավենտուրայի եւ այլ հեղինակների մի շարք երկեր, սահղծւում են ինքնուրոյն աշխատութիւններ՝ ի պաշտպանութիւն Կաթոլիկ եկեղեցու դաւանաբանական սկզբունքների:

1 Սրանց յանձնարարութեամբ 1383 թ. այստեղ իրեն «սպասաւոր բանի» կոչող Սարգիսը ընդօրինակում է Բարթուղիմէոս Մարաղացու Քարոզգիրքը (տե՛ս ՄՄ ձեռ. N 2259, էջ 297բ. «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 545):

2 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա, Երեւան. 1955, էջ 61

3 «Հայապատում», Ա, էջ 123

Մեծ Հայքի աշխարհիկ ու հոգեւոր տէրերը, միասնական ճակատ ստեղծելով, անհաշտ պայքար են ծաւալում ինչպէս հայ ունիթորների, այնպէս էլ Եւրոպայից Արեւելք առաքուող կաթոլիկ քարոզիչների դէմ՝ ի դէմս ազգային հնամենի աւանդութիւններին կառչած Հայոց եկեղեցու տեսնելով ազատագրական պայքարի դժուարին ճանապարհն ընտրած ժողովրդի համախմբմանը սատարող մի կազմակերպութիւն:

Արտազի հայ տէրերի անհեռատես քաղաքականութեան դէմ ծաւալուած պայքարը, որ գլխաւորում էին Սիւնեաց հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդները, տասնամեակներ է տեւում: Թադէոս առաքեալի մեծ թեմի առաջնորդական պաշտօնը բռնագրաււում է Արտազի կաթոլիկ տէրերի գերդաստանից. նրանց հոգեւոր իշխանութիւնը սահմանափակւում է միայն Մակուի շրջակայքով, տարածուելով միայն կաթոլիկ դաւանանք ընդունած հայերի վրայ: Օտար բռնակալների դէմ մղուած անհաւասար մարտերում ջլատւում է նաեւ Արտազի հայ իշխանների ռազմական ուժը: Ապաւինելով Մակուի ամրութիւններին, նրանք յաջողութեամբ վանում են շատ զօրեղ թշնամիների ձեռնարկած գրոհներ (ի թիւս որոց նաեւ Լանկ-Թամուրի հրոսակներին), բայց ի վերջոյ, կորցնելով իրենց տիրոյթի ծայրագաւառները, նրանք ամփոփւում են Բերդադաշտի տարածութեան մէջ, եւ կորցնում իրենց քաղաքական իշխանութեան վերջին պատուար Մակուի բերդը՝ 1326 թ.:

Արտազի շրջանի կաթոլիկ դարձած հայ բնակչութիւնը կտրուած ազգային աւանդութիւններից եւ հայրենի մշակոյթի հետ ունեցած կապերից, արմատախիլ ծառի նման՝ թօշնում է ու չորանում: Այդ համայնքի խղճուկ մնացորդները XVII դ. վերջերին մահմեդականութիւն են ընդունում, մի աւելորդ անգամ հաստատելով այն ճշմարտութիւնը, որ «ծառ արմատով է ծառ, տուն հիմամբ է տուն»:

ԷՋԵՐ ՀԱՄՇԻՆԱՀԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ*

1. Աբխազական Ինքնավար Հանրապետութեան սահմաններում ու ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամասում՝ առանձին բնակավայրերով, ինչպէս եւ աբխազների, ռուսների ու վրացիների դրկիցութեամբ, շուրջ հարիւր տարի է, ինչ հաստատուել են տասնեակ հազարաւոր հայեր, որոնք ստեղծագործ աշխատանքով խթանում են այդ վայրերի տնտեսական կեանքի ու մշակոյթի զարգացմանը: Սրանց մեծագոյն մասի նախնիները համշէնցիներ են եղել: Առ այսօր, սակայն, գոյութիւն ունեցող հայկական խոշոր ու կենսունակ այդ գաղթօջախի բնակիչները շատ աղօտ պատկերացում ունեն իրենց անցեալի, մանաւանդ՝ իրենց բնօրրան Համշէնի պատմութեան մասին:

Մեր սոյն յօդուածում, առաջին անգամ լինելով, փորձելու ենք համառօտ մի ակնարկով լուսաբանել համշինահայ պատմութեան դրուագները՝ գիտական շրջանառութեան մէջ դնելով նոր տուեալներ եւ քննաբար օգտագործելով պատմական, տեղագրական ու ազգագրական արդէն յայտնի ցաքուցրիւ նիւթերը: Եւ եթէ աշխատանքը շարունակուի ուրիշների կողմից եւ առաջիկայում հնարաւոր լինի համատեղ ջանքերով ստեղծել համշինահայութեան կապակցուած ու ամբողջական պատմութիւնը, մենք հասած կլինենք մեր նպատակին:

2. Համշէնի հայկական իշխանութեան հիմնադրման առայժ թուականը հնարաւոր է լինում որոշել Ղեւոնդ պատմիչի հաղորդած վստահելի տուեալներով: VIII դ. այդ սկզբնաղբիւրի համաձայն արաբական բռնապետութեան տակ հեծող հայ ժողովրդի տնտեսական եւ իրաւական վիճակը յատկապէս անտանելի է դառնում 788-790 թթ.՝ Օբայդուլլահ իբն ալ-Մահդի ոստիկանի ու սրա կողմից փոխանորդ կարգուած «քան զամենեսին ժանտ եւ չարագործ» Սուլայմանի կառավարչութեան տարիներին[1]:

Սուլայմանն առաջինն էր արաբ ոստիկաններից, որ Հայաստանի փոխարքայութեան նստավայրը տեղափոխեց Պարտաւ: Նա Դուին ուղարկեց ծագումով յոյն հաւատուրաց իր փեսային, որ հարկապահանջներ առաքելով Հայաստանի տարբեր շրջանները «սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս աշխարհին»: Մէկ տարի անց («ի գալ միւսոյ ամին») հարկապահանջութիւնն ու կողոպուտն այնպիսի ծաւալ ստացան, որ պատմիչի խօսքերով՝ «յայնմհետէ ոչ ոք էր տէր ընչից իւրոց»[2]: Շատերը, պայքարելու եւ տոկալու ուժ չունենալով այլեւս, լքում էին իրենց հազարամեայ բնակավայրերը եւ, յաղթահարելով տիրողների դիմադրութիւնը, արտագաղթում այլ երկրներ:

Բիւզանդական կայսրութեան հիւսիսարեւելեան Խաղտեա (հայկական՝ Խաղտիք) ծայրագաւառում, Հայաստանից կազմակերպուած արտագաղթի հետեւանքով, ստեղծւում է Համշէնի հայկական իշխանութիւնը, որը յարատեւում է երկար դարեր եւ զգալի դեր կատարում հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային պատմութեան մէջ:

Այդ արտագաղթի մասին խիստ ուշագրաւ են ժամանակակից պատմագիր Ղեւոնդի հաղորդած տուեալները, որ մէջ ենք բերում ստորեւ՝ տողատակում տալով նաեւ աշխարհաբար թարգմանութիւնը:

«Իսկ ապա, իբրեւ այնպէս թափուրք ի ստացուածոց մնային, մերկ եւ բոկք եւ սովամահք, եւ ոչ գտանէին ապրուստ անձանց՝ դէմ եղեալ տարադէմ գնացին փախստեայ յաշխարհն Յունաց. զորոց ասեն լինել զթիւ մարդկանն աւելի քան ԺԲՌ (12000) արանց հանդերձ կանամբք եւ մանկտեաւ. որոց առաջնորդք Շապուհ ի տոհմէ Ամատունեաց եւ Համամ որդի նորա եւ այլք ի նախարարաց Հայոց եւ նոցին հեծելոց: Եւ անօրէն չարաշուք թշնամւոյն հետամուտ եղեալ զօրու իւրով զկնի փախստէիցն՝ հասանէին ի սահմանս Վրաց ի գաւառն Կող: Ընդ որում մարտ եղեալ՝ փախստական առնէին եւ զոմանս սատակէին. եւ ինքեանք անցանէին ընդ գետն Ակամսիս, որ ի կողմանս Տայոց բղխեալ՝ երթայ զհիւսիսոյ արեւմտից, անցանելով ընդ Եգեր՝ մտանէ ի Պոնտոս: Եւ իբրեւ անցին ընդ գետն՝ վաղվաղակի ազդ եղեւ արքային Յունաց Կոստանդնի: Եւ կոչեցեալ զնոսա առ ինքն՝ տայր պատիւ նախարարացն եւ նոցին հեծելոցն. եւ զայլ խառնիճաղանճն բնակեցուցանէր ի բարւոք յարգաւանդ երկրի»[1]:

Այս անցուդարձերի առիթով, բացի արտագաղթը գլխաւորող Շապուհ եւ Համամ Ամատունի իշխաններից, յիշատակուած են հետեւեալ նշանաւոր դէմքերը. Եսայի Եղիպատրուշեցի կաթողիկոսը (775-788), արաբական ոստիկան Օբայդուլլահն ու նրա փոխանորդ Սուլայմանը (788-790)[2] եւ բիւզանդական կայսր Կոստանդին VI-ը (780-797):

Վերը նկարագրուած արտագաղթը եւ Համշէնի հայկական իշխանութեան ստեղծումը տեղի է ունեցել Եսայի կաթողիկոսից (մհ. 788) յետոյ, Օբայդուլլահ ու Սուլայման ոստիկանների կառավարչութեան տարիներին, ուստի՝ 789-790 թթ.:

Արտագաղթը գլխաւորել, արաբ տիրողների դիմադրութիւնը ջախջախել եւ 12 հազարից աւելի բնակչութեան համար Բիւզանդական կայսրութեան տիրապետութեան ներքոյ ապահով բնօրրան են ստեղծել Շապուհ եւ Համամ Ամատունիները: Համշէն անունն իսկ կապւում է Համամ Ամատունու անուան հետ: Ըստ խառնաշփոթ ու ժամանակավրէպ մի աւանդութեան՝ գրանցուած այս դէպքերից շուրջ մէկ-երկու հարիւրամեակ յետոյ, Համամը բնակութիւն է հաստատել սկզբից Տամբուր կոչուող քաղաքում: Այդ քաղաքը յետագայում գրաւուել է

* «Բանբեր Երեւանի համալսարանի» 1969, N 2, էջ 115-144: Վերահրատարակութեան լրացում-սրբագրումները կատարել է հեղինակը:

1 Ղեւոնդի շարադրանքից այն տպաւորութիւնն է ստացւում, թէ Օբայդուլլահ ոստիկանը, իբր, յաջորդել է Սուլայմանին («Իսկ ապա ի գալ միւսոյ ամին՝ ի գալ Ովբեդլայի, զնոյն վտանգ տարակուսանաց եւս առաւել զօրացուցանէր»), սակայն Հայաստանի արաբ ոստիկանների գիտական ժամանակագրութիւնը վերականգնող Յ. Նալբանդեանը այս երկուսի կառավարչութիւնը դնում է միեւնոյն՝ 788-790 թթ.՝ Սուլայմանին համարելով Օբայդուլլահի կողմից նշանակուած փոխանորդ (տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 167-169. «Տեղեկագիր», 1956, N 8, էջ 114):

2 Ղեւոնդ, գլ. ԽԱ, էջ 167

1 Ղեւոնդ, գլ. ԽԲ, էջ 168-169: «Եւ շատերը, չկարողանալով տանել աղէտների ծանրութիւնը, կամովին թողնում էին իրենց (անասունների) հօտերն ու արտերը. իսկ թշնամիները գերեվարում էին անասուններին եւ աւար առնում նրանց ունեցուածքը: Իսկ ապա, երբ այդպէս ունեցուածքից զուրկ, մերկ ու բոկ եւ քաղցած մնացին ու չգտան ապրուստի միջոցներ, հեռագնաց ճանապարհ բռնելով փախան գնացին Յունաց աշխարհ, որոնց (փախչողների) թիւը, ասում են, եղել է աւելի քան 12 հազար տղամարդ՝ կանանց ու երեխաների հետ միասին: Սրանց առաջնորդներն էին Շապուհը՝ Ամատունեաց տոհմից, նրա որդի Համամը եւ ուրիշներ հայ նախարարներից ու նրանց հեծեալներից: Եւ անօրէն ու ժանտ թշնամին, իր զօրքով հետամուտ լինելով փախչողներին, հասնում է նրանց Վրաստանի սահմանում գտնուող Կող գաւառում, որտեղ ճակատամարտ տալով փախուստի են մատնում եւ ոմանց էլ սպանում (արաբներից), իսկ իրենք անցնում են Ակամսիս (Ճորոխ) գետը, որ բխելով Տայքի կողմերում՝ հոսում է հիւսիս-արեւմուտքով, անցնելով Եգերով, թափւում է Պոնտոս (Սեւ ծով): Եւ երբ անցան գետը, յունաց կայսր Կոստանդինը, շտապ լուր ստանալով, կանչեց նրանց, պատիւներ տուեց նախարարներին ու նրանց հեծեալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց գեղեցիկ ու արգաւանդ մի երկրում»:

2 Յ. Նալբանդեան, Արաբացի ոստիկանները Հայաստանում (տե՛ս «Տեղեկագիր», 1956, N 8, էջ 114):

Վաշդեան անունով վրաց իշխանի կողմից, որ նենգելով հայերին ու բիւզանդացիներին՝ գործակցել է պարսիկների (իմա՛ արաբների) հետ ու օգնական զօրք ստացել նրանցից: Համամ իշխանը, որ Վաշդեանի քեռորդին էր, մեղադրել է նրան նենգութեան ու դաւաճանութեան մէջ, սակայն ձերբակալուել է ու պատժուել՝ ոտքերի ու ձեռքերի ծայրատումով: Վաշդեանն այնուհետեւ, ըստ աւանդութեան, «առեալ զպարսիկս, անց ընդ գետն Ճորոխ, եւ գնաց ի քաղաքն Համամայ, որ կոչի Տամբուր, եհար սրով եւ հրով եւ գերեաց զքաղաքն»[1]:

Այս դէպքերից յետոյ է, որ Համամ իշխանը աւերուած Տամբուրի տեղում կառուցել է մի նոր քաղաք՝ իր անունով կոչելով Համամաշէն[2], որ յետագայում աղուելով հնչուել է ու հնչւում է առ այսօր Համշէն կամ Հեմշին ձեւերով (հմմտ. Մանաւազակերտ-Մանազկերտ):

Որքան էլ վիպական կերպարանք ստացած ու գունազարդուած լինեն Յովհան Մամիկոնեանի կողմից գրանցուած կամ նրա անունով մեզ հասած այս տուեալները, նրանցում, անտարակոյս, կան իրական դէպքերի արձագանքներ: Ուշադրութեան արժանի են յատկապէս Վաշդեան վրաց իշխանի ու Համամի ազգակցութեան ու բախումների մասին առկայ տեղեկութիւնները: Դրանք հնարաւորութիւն են ընձեռում խորհելու, որ Շապուհ եւ Համամ Ամատունիները իրենց ժողովրդին առաջնորդել են Թաղտիքի անմատոյց շրջանները՝ նախապէս ծանօթ լինելով այդ վայրերին, խնամիական կապեր ունենալով Ճանիքի (Լազիստանի) իշխանների հետ: Վաշդեանի ու Համամի հակամարտութեան մասին յուշերը, հաւանաբար, արդիւնք են իրական այն պայքարի, որ մղել են գաղթողները տեղացի բնակչութեան դէմ՝ աշխարհագրական այդ միջավայրում հաստատուելու եւ բարգաւաճելու համար: Ըստ այդմ՝ պատմական հիմքից զուրկ է համշէնցիների միջավայրում տարածուած թեւաւոր այն խօսքը, որի համաձայն «Համշէնը աշխարհի ստեղծմանէ ի վեր մարդու երես չէր տեսած»[3]:

3. Ղեւոնդ պատմիչի հաղորդած տուեալները հնարաւորութիւն են ընձեռում ոչ միայն պարզելու Համշէնի հայկական իշխանութեան հիմնադրման ստոյգ ժամանակը՝ 789-790 թթ., այլեւ որոշելու Հայաստանից արտագաղթած ու Համշէնում հաստատուած հայ բնակչութեան բնօրրանը:

Գիտենք արդէն, որ Համշէն արտագաղթած հայերի ղեկավարները հայ ժողովրդի պատմութեան մէջ մեծ դեր կատարած Ամատունեաց նախարարական տան պայազատներ էին: Պատմագրական ու վիմագրական աղբիւրներում առկայ ակնարկների համադրումով հնարաւոր է լինում յանգել անտարակուսելի այն եզրակացութեան, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ամատունեաց նախարարութեան կալուածքներն ընկած էին Այրարատեան նահանգի Արագածոտն եւ Կոտայք գաւառներում՝ կենտրոն ունենալով Օշական նշանաւոր աւանը[4]: Գիտենք ստոյգ, որ Ամատունիների տիրապետութեան սահմանների մէջ էր գտնւում միջնադարեան Հայաստանի նշանաւոր մշակութային կենտրոն Յովհանավանքը (կոչուած նաեւ՝ Ս. Կարապետ). այդ մասին վկայութիւն է պահպանուել XVII դ. արժէքաւոր մի յիշատակարանում, ուր վանքը կոչուած է «Ամատունեաց սուրբ Կարապետ, որ ի ստորոտս Արագածու եւ ի

1 Յ. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941, էջ 284

2 Նոյն, էջ 285

3 Ս. Հայկունի, Համշէն (տե՛ս «Արարատ», 1895, էջ 297):

4 Ըստ Ն. Ադոնցի՝ Ամատունիների նախնական բնակավայրը եղել է Արտազի շրջակայքը՝ այժմ Մակուի շրջանը, Իրանում (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, էջ 304):

գաւառս Կարբոյ եւ Յանբերդոյ»[1]: VI դ. կառուցուած Պողնավանքի պատին քանդակուած է մի հեծեալ՝ «Մանուեղ Ամատունեաց տէր» մակագրութեամբ[2]: Այդ Մանուէլը, ուսումնասիրողների կարծիքով, վանքի շինողն է, ուստի պէտք է եզրակացնել, որ Կոտայքը, աւելի ճիշտ՝ այդ գաւառի մի մասը (Հրազդանի ձորը) եւս պատկանում էր Ամատունիներին: Սրանց տիրապետութեան սահմանները որոշելուն նպաստում է եւ այն իրողութիւնը, որ XIII դ. Զաքարեանների կողմից Արագածոտնի իշխաններ կարգուած Վաչուտեանները իրենց համարում էին Ամատունիների սերունդ՝ տիրելով նախկինում Ամատունիներին պատկանած շրջաններին[3]:

Վերոյիշեալ փաստերը իրաւունք են տալիս աներկբայ յայտարարելու, որ Շապուհ եւ Համամ Ամատունիների գլխաւորութեամբ Համշէն ներգաղթած հայ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, լինելով Ամատունեաց հպատակ հեծեալներ ու շինականներ, դուրս էին եկել Հայաստանի սրտից՝ Այրարատեան նահանգից[4]:

1 ՄՄ ձեռ. N 201, էջ 613բ

2 Գ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ, պր. Գ, Նիւ Յորք, 1914, էջ 14

3 Հ. Ոսկեան, Ուսումնասիրութիւններ հայ նախարարութիւններու մասին, Վիեննա 1925, էջ 117

[Այժմ ճշգրտուած է, որ Վաչուտեանների տոհմական առնչակցութիւնը Ամատունիներին հիմնուած է Յոհաննավանքի վիմագրի «Այրարատին տէրն» արտայայտութեան վրիպեալ ընթերցման վրա («Այր Ամատունի»), որ առկայ է Զաքարիա Սարկաւագի երկում: Տե՛ս Հայրապետ Մարգարեան, Վաչուտեանների իշխանական տան պատմութիւնից, «Շողակաթ», 1995, էջ 30-36]:

4 Ս. Հայկունին, «որպէս կաւանդեն», անորոշ ձեւով յայտնում է, թէ. «Անւոյ աւերումից յետոյ փախստականաց մէկ մասն ապաստանած է Համշէն» («Արարատ», 1895, էջ 295): Համշէնցիներին անեցի ծագում են վերագրում նաեւ ուրիշներ: Այս առասպելը, որ տարածուած է համշէնցի հայերի միջավայրում եւ տպագիր խօսքով հրամցւում է երբեմն որպէս իրողութիւն (տե՛ս, օրինակ, «Գրական թերթ», 1968, N 21), զուրկ է պատմական հիմքից: Անի քաղաքը բնակչութիւնից պարպուել ու որպէս քաղաք դադարել է գոյութիւն ունենալուց ոչ զանգուածային արտագաղթի կամ բնական աղէտի հետեւանքով: Այն հարցը, թէ որտեղ են բնակութիւն հաստատել անեցիները մի շարք տասնամեակների ընթացքում՝ խումբ-խումբ կամ անհատապէս լքելով իրենց քաղաքը, կարօտ է մանրակրկիտ ուսումնասիրութեան եւ դուրս է մեր այս յօդուածի ծրագրից, սակայն համշէնցիների ծագման հարցի առնչութեամբ ստիպուած ենք հպանցիկ անդրադառնալու այդ խնդրին:

Անին ծաղկեց ու բարգաւաճեց որպէս տարանցիկ առեւտրի եւ արհեստագործութեան նշանաւոր կենտրոն՝ գտնուելով միջազգային նշանակութիւն ունեցող բանուկ այն մայրուղու վրայ, որն իր մի ճիւղով կապւում էր Տրապիզոնի (այնուհետեւ ծովով՝ Ղրիմի ու Կ. Պոլսի), միւսով՝ Թաւրիզի (այնուհետեւ Միջին Ասիայի ու Հնդկաստանի), իսկ երրորդով՝ Տփղիսի ու Հիւսիսային Կովկասի հետ: Ըստ այդմ՝ անեցի վաճառականները վերոյիշեալ ճանապարհների յանգուցակէտերում ստեղծելու էին կայուն յենակէտեր, ուր բնակութիւն էին հաստատելու իրենց ներկայացուցիչներն ու գործակատարները՝ ունենալով պահեստային շէնքեր, կարաւանատներ եւ այլն: Կան որոշ տուեալներ ու ակնարկներ հաւաստելու, թէ այդպիսի յենակէտեր անեցիների համար եղել են Տփղիսը, Տրապիզոնը, Սուլթանիան, Կաֆան, թերեւս Աղսարայը (Վոլգայի ափին) եւ այլ քաղաքներ: Համառօտակի անդրադառնանք այդ տուեալներին՝ նշելով, որ առաջին հերթին ու բնականաբար անեցիների համար գաղթօջախներ պէտք է լինէին հէնց այն վայրերը, որոնք ծանօթ ու հարազատ էին նրանց քաղաքի ծաղկուն ժամանակներից:

XV դ. 20-ական թթ. Տփղիսում ու Թմոգվիում են գտնւում Անիի եպիսկոպոս Յովհաննէս Ոսկեփորը եւ նրա եղբայրը՝ իշխանաց իշխան պարոն Զալաբին («ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ա, էջ L): Այս փաստն ինքնին Վրաստանի սահմաններում, մանաւանդ Տփղիսում ու Թմոգվիում, անեցի բազմաթիւ գերդաստանների բնակութիւն հաստատած լինելու օգտին է խօսում:

XIV դ. 30-ական թթ. մի խումբ անեցիների ենք հանդիպում իլդանութեան վարչական կենտրոն Սուլթանիա վաճառաշահ քաղաքում: Դրանցից էր Մխիթար Անեցի նշանաւոր գրիչը («ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 307-311) եւ նրա հոգեւոր հայր Գրիգոր երէց Անեցին (Երուսաղէմ, ձեռ. N 1941):

Տրապիզոնի հայերի հնագոյն մասի անեցի լինելու վերաբերեալ տեղեկութիւններ է հաղորդում այդ քաղաքի լաւագոյն պատմիչ Մ. Բժշկեանը. «Ասոնք,- գրում է նա Տրապիզոնում հաստատուած գիւղացիների մասին,- Համշէնէն եկած են, բայց քաղաքացիք Անի քաղաքէն են, ուստի գիւղացիների լեզուն եւ հնչմունքը շատ տարբեր

Բնականաբար, յետագայ դարերում Համշէնի լեռնաշխարհը իր անմատչելի ձորագաւառներում պատսպարած պէտք է լինի նաեւ Հայաստանի այլ շրջաններից, մասնաւորապէս՝ Համշէնին սահմանակից Բարձր Հայքի գաւառներից արտագաղթած նոր խմբերի, սակայն հայկական Համշէնի հիմնադիրները Շապուհ ու Համամ Ամատունիների գլխաւորութեամբ արաբական լծի դէմ զէնք վերցրած եւ յաղթական պայքարով իրենց համար նոր հայրենիք նուաճած այն հերոսներն էին, որ դուրս էին եկել, ինչպէս տեսանք, Այրարատեան նահանգի Արագածոտն ու Կոտայք գաւառներից:

4. Անանցանելի լեռներով, խոր ձորերով ու խիտ անտառներով արտաքին աշխարհից կտրուած, ինքնամփոփ, մութ ու մառախլապատ մի երկրամաս էր Համշէնը: Հեթում պատմիչը, որ XIII դ. վերջերին անձամբ եղել է այնտեղ, յայտնում է, թէ «տեղին այն այնչափ մառախլապատ է եւ խաւարչուտ՝ այնպիսի նսեմութեամբ, զի ոչ ոք է՝ որ կարիցէ նշմարել ինչ անդ. եւ ոչ ոք է՝ որ համարձակեսցի մտանել յայն երկիր, զի ոչ ոք գտանէ շաւիղ գնալոյ ընդ այն»[1]: Հեթումին լրացնում է իսպանացի դիւանագէտ Ռուի Գոնզալես դէ Կլաւիխոն, որ 1406 թ. սեպտեմբերին տուեղարձի ճանապարհին անցել է Համշէնով՝ մեծարժէք իր ուղեգրութեան մէջ գրանցելով կարեւոր տեղեկութիւններ այդ երկրամասի դիրքի, պատմութեան ու ժողովրդի բարքի մասին[2]:

Համշէնի դիրքի, աշխարհագրական ու կլիմայական պայմանների, հաղորդակցութեան միջոցների եւ յարակից խնդիրների մասին շատ արժէքաւոր տեղեկութիւններ են հաղորդում նաեւ XIX դ. օտարազգի եւ հայ ուղեգիրներ ու տեղագիրներ, մասնաւորապէս՝ Կ. Կոխը, Ս. Հայկունին, Պ. Թումաեանցը եւ ուրիշներ: Թումաեանցն, օրինակ, գրում է. «[Համշինի] ժողովուրդը, այս ամէն չարչարանքը իր երկրին լեռնային դիրքը պատճառով կը կրէ, ուր կառք

եմ քաղաքացիներէմ» («Պատմութիւմ Պոմտոսի», Վեմետիկ, 1819, էջ 82):

1357 թ. պահպանուել է ուշագրաւ մի յիշատակարան Անի քաղաքի ու նրա շրջակայքի աւերածութեան ու գերեվարութեան մասին. «Զօրքն տանկաց,- ասուած է այնտեղ,- բազմացեալ ամբոխից հասին գաւառն քաղաքին Անոյ: Եւ զաղէտս եւ զոր ինչ արարին ի վանս եւ ի գեաւղս եւ ի գաւառս, ո՞ր բերան պատմէ կամ ո՞ր լեզու խօսի. սատակեցին առաջի ծնողաց զտղայս եւ առաջի տղայոց զծնողսն: Եւ զորս ըմբռնեալ՝ տանէին գերիս՝ բանտից եւ տանջանաց մատնեալ, որոց գլուխ աթապակ եւ մեծ սպասալար Շահնշահ, որ հազիւ կարաց զերծանիլ ի ձեռաց թշնամեացն» (ՄՄ ձեռ. N 6764, էջ 264ա):

Չոբանեան Մելիք-Աշրաֆի թագաւորութեան այս տարիներին ամայանում ու կործանւում էին Անդրկովկասի եւ Իրանի վաճառաշահ միւս քաղաքները եւս: Մեծատուն շատ առեւտրականներ լքում էին իրենց հայրենի քաղաքները եւ փախչում այլ երկրներ: Ոսկէ Հորդան ամենաբարգաւաճ ու ապահով վայրն էր համարւում, ուր Ջանիբեկ խանի թագաւորութեան տարիներին (1342-1357) «Մելիք-Աշրաֆի կեղեքումների հետեւանքով ժամանում էին Թաւրիզից, Սերաբից, Արդաբիլից, Բայլականից, Պարտաւից եւ Նախիջեւանից շատ խոջաներ»,- ինչպէս գրում է «Շեյխ-Ուվեյսի պատմութեան» հեղինակը (տե՛ս **В. Г. Тизенгаузен,** Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.-Л., 1941, էջ 101): Անիի մասին այստեղ յիշատակութիւն չկայ, բայց համոզուած ենք, որ Ջանիբեկի իշխանութեան տակ գտնուող Ղրիմի թերակղզում, մասնաւորապէս՝ Կաֆա քաղաքում, անեցիներ հաստատուեցին հէնց այս շրջանում կամ քիչ առաջ՝ 1330-ական թթ., եթէ հաւատալու լինենք XVII դ. աւանդութիւնների հիման վրայ շարադրուած այն յիշատակարանին, որն այսօր որպէս անվիճելի հեղինակութիւն օգտագործւում է շատ բանասէրների կողմից, առանց քննութեան ու քննադատութեան (ՄՄ ձեռ. N 7442, էջ 280-283. **Մ. Բժշկեան,** նշ. աշխ., էջ 335-342): Մեծ քանակութեամբ անեցիներ, անտարակոյս, գաղթել են նաեւ Հին Ջուղա, Երեւան եւ Հայաստանի ու հարեւան երկրների այլ քաղաքներ: Երեւանի մասին կայ ուշագրաւ մի վկայութիւն՝ փորագրուած Կաթողիկէ եկեղեցու պատին: 1364 թ. ոմն Շապուհին, մեծ հաւանականութեամբ 1357 թ. վերոյիշեալ դէպքերի առնչութեամբ, գրում է. «Անու աւիրողն աւրէ»:

1 «Հեթում պատմիչ թաթարաց, Վենետիկ», 1842, էջ 15

2 **Рюи Гонзалес де Клавихо,** Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406 гг., пер. И. И. Срезневского, СПб, 1881, էջ 382-384

թանել բնականաբար անհնարին ըլլալէ զատ՝ շատ մը ճանապարհ կոչուած տեղերն անգամ ձի եւ ջորի ալ չ՚կրնար բանիլ, որով շինականը արտէն եւ թէ անտառէն ի տուն եւ թէ ի քաղաք փոխադրելիք բաները... կը ստիպուի շալակաւ կրել՝ գժուարին եւ վախուոր ճանապարհներով»[1]:

Թէ ինչ երկրամաս գրաւեց Շապուհ եւ Համամ Ամատունիների գլխաւորութեամբ Այրարատեան նահանգից արտագաղթած 12 հազար բնակչութիւնը սկզբնական շրջանում, չգիտենք: Միջին դարերից եւս տեղեկութիւններ գրեթէ չեն պահպանուել, եթէ անտեսենք Համշէնի իշխանութեան հարաւից Սպերին սահմանակից լինելու մասին ձեռագրական տուեալը՝ XV դ. (այդ մասին՝ յետոյ): Ուստի, կամայ թէ ակամայ, դիմելու ենք XIX դ. ուղեգիրների օգնութեանը:

Գերմանացի գիտնական Կարլ Կոխը, որ 1843-1844 թթ. անձամբ անցել է Համշէնով ու գրանցել ճամփորդական ուշագրաւ իր տպաւորութիւնները, նկատում է, թէ Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող այդ երկրամասը կիսանկախ էր՝ վոյվոդ կոչուող պաշտօնեայի կառավարութեան ներքոյ[2]: Համշէնի սանջակի մէջ, բացի կենտրոնական դիրք գրաւող բուն Համշէնի շրջանից, Կ. Կոխի տուեալներով մտնում էին 3 ձորապետութիւններ (դերեբեյութիւն): Դրանցից մէկի կենտրոնը եղել է Ջեմիլ գիւղը՝ համանուն գետի (Կալապոտամոս գետի ակունքներից), երկրորդի կենտրոնը՝ Օրթաքյոյը՝ Մապաւրա գետի ափին, իսկ երրորդինը՝ Մարմանադ գիւղը՝ Աթենա ծովափնեայ գիւղաքաղաքից 2,5 ժամուայ հեռաւորութեամբ[3]:

Համշէնի սահմանների մասին աւելի մանրամասն տուեալներ հաղորդում է բազմարդիւն ազգագրագէտ Ս. Հայկունին: «Համշէնի վիճակը,- գրում է նա,- բռնած է Սպերի եւ Իրիզէի միջավայրն, Սպերից սկսած գետի մը երկու հովիտներն կը գրաւէ, որ հինաւուրց հսկայ անտառներով պատած է, եւ շրջապատուած է նաեւ հսկայ լեռներով: Խաչվանք սարից Թեթեւիթ սարի երեսը անցնելու համար մի լճակի եզրից պիտի անցնենք, որ ձկներով առատ է եւ որի շրջապատը կարելի է կտրել 20 վայրկեանում: Քյողցեր լերան վրայ եւս լիճ մի կայ, Այդըկյոլ անունով: Այս լճերն երկու գետերու սկզբնաւորութիւն են, մին 6 ժամու ճանապարհ Սպերի կողմ հոսելով Ճորոխի կը խառնուի, որը եւս (իմա՛ միւսը - Հ. Խ.) կը հոսի Սեւ ծով 5 ժամ Իրիզէի արեւմտեան կողմից: Ճեմել գետն արեւմտեան կողմը հոսելով կիջնայ՝ աջ կողմից Կալապատամուզի կը խառնուի... բուն Համշէն կը սկսի Եօթը-Փարա գիւղից, որ Իրիզէից 24 ժամ բարձր է: Եօթը-Փարա գիւղից 8 ժամ բարձր է Համամշէնի Գարադերէն, որ Կալապատամուզի կը խառնուի: Մափաւրի գետն եւս կը հոսի Սեւ ծովը Իրիզէից 4 ժամ յարեւելս, որն եւս Համշէնի լեռներէն կիջնայ... վերին Կալէ գետակն 2 ժամ ընթացքէ յետոյ՝ արեւելեան եզրից Ֆըրթունա (Բուք) գետին կը խառնուի Զաթփոսի մօտ՝ Թեթեւեթի հովտէն անցնելով: Ֆըրթունան Խաչվանքի սարից կիջնայ, Արտաշէնից կանցնի, եւ Ատինայէն 2 ժամ յարեւելս Սեւ ծովը կը թափի...»[4]:

1 **Պ. Թումաեանց,** Պոնտոսի հայերը («Լումայ», 1899, Ը գիրք, էջ 164)

2 Յայտնի է, եւ Կ. Կոխն էլ պարզաբանում է, որ վոյվոդ էին կոչւում Օսմանեան կայսրութեան այն սանջակների կառավարիչները, որոնց վստահուած երկրամասի բնակչութիւնը քրիստոնեայ էր, ի տարբերութիւն մութեսելիմ կոչուածների, որոնք իշխում էին հիմնականում մահմեդական բնակչութիւն ունեցող շրջանների վրայ:

3 **K. Koch,** Wanderungen im riente während der Jahr 1843 und 1844. II, Reise im Pontischen Gebirge und Türkisch -Armenien, Weimar, 1846, էջ 22-25 եւ հտ.

4 Ս. Հայկունի, Համշէն («Արարատ», 1895, էջ 296)

Կ. Կոխի եւ Ս. Հայկունու հաղորդած տեղագրական տուեալները, մեզ մատչելի քարտէզագրական նիւթերի համադրութեամբ, հնարաւորութիւն են ընձեռում ստուգման ու ճշգրտման կարօտ մի քարտէզ ներկայացնելու Համշէնի երկրամասի, որի սահմանները, անշուշտ, դարերի ընթացքում կրել են մեծ փոփոխութիւններ:

Մեր խնդրանքով պատմաբան Բ. Յարութիւնեանը կազմել է այդպիսի մի քարտէզ, որ տրւում է ներդիր:

Համշէնի բնական պայմանները՝ լեռնային լանդշաֆտ, անանցանելի ու խիտ անտառներ եւ այլն, հնարաւորութիւն չեն ընձեռում բազմամարդ բնակավայրեր ստեղծելու: Գիւղերն այստեղ, սովորաբար, կազմուած են լինում 20-30, առաւելն 50 միմեանցից 1-3 եւ աւելի կիլոմետր հեռու ընկած տների խմբերից կամ հատ-հատ տներից[1]: «Գիւղացիին բնակարանը երբեք գայ,- գրում է Համշէնի մեծավաստակ ազգագրագէտը,- կամ քանի եղբայրներ միասին բնակելու խոչընդոտներ յառաջ կգան, իրենց տնէն 1-2-3 վերստ հեռու... անտառի յարմարաւոր վայրերը կորօշե տուն շինել, այնպիսի տեղ մի, որ լինի զառիվայր, տան վերեւը իրեն յատուկ անտառ... տանը շուրջը պտղատու ծառներ տնկելու յարմարութիւն ունենայ» եւ այլն[2]:

Կ. Կոխը նոյնպէս ուշադրութիւն է դարձրել համշէնցիների բնակավայրերի նոյն առանձնայատկութեան վրայ եւ յայտնել, որ Համշէնի ամբողջ տարածքի վրայ, այս ու այն կողմ ցրուած, կայ ընդամէնը 1500 տուն: Իւրաքանչիւր տան կամ ընտանիքի անդամների թիւը հաշուելով 5,5 միաւոր՝ նա ենթադրել է, որ Համշէնի ազգաբնակչութեան թիւը շուրջ 8 հազարի չափ պէտք է լինի[3]:

Մշակելի նոր հողամասերի իրացման հետ կապուած գրեթէ անյաղթահարելի դժուարութիւնները, հնագոյն ժամանակներից սկսած, արտագաղթի ու պանդխտութեան պատճառ են հանդիսացել համշէնցիների համար: Նրանք, քայլ առ քայլ դուրս գալով բուն Համշէնի սահմաններից, տարածուել են գրեթէ բոլոր ուղղութիւններով:

. 5. Կրկին անդրադառնանք քաղաքական կեանքի պատմութեանը:

Տեղեկութիւններ չկան պարզելու, թէ Համամ Ամատունի իշխանից յետոյ Համշէնը որքան ժամանակ է մնացել նոր տոհմի տիրապետութեան ներքոյ: Կարող ենք միայն ենթադրել, որ IX-XI դդ.՝ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի սահմաններում Բագրատունիների հզօրացման եւ աննախընթաց վերելքի այդ ժամանակաշրջանում, Համշէնը նոյնպէս, հարաւից սահմանակից լինելով Բագրատունիների հին բնօրրան Սպերին[4], ընկել է նրանց քաղաքական ազդեցութեան տակ: Այս մութ ժամանակահատուածի վրայ, կարծես, աղօտ լոյսի մի ճառագայթ է նետում համշէնցիների միջավայրում մինչեւ XIX դ. վերջերը պահպանուած աւանդութիւնը թագաւորական ցեղից սերուած Գրիգոր եւ Մարտիրոս իշխանների մասին: Ըստ այդմ՝ «Մարտիրոս Գրիգորի աղջիկը կուզէ իւր որդոյն՝ Արտաշէնի համար. Գրիգորը չի յօժարիր տալ.

[1] Ս. Հայկունի, Տրապիզոնի հայ գիւղացոց կեանքը («Արարատ», 1905, էջ 738). Հ. Մուրադեան, Համշէնի հայերը, Թիֆլիս, 1901, էջ 5

[2] Նոյն, էջ 739

[3] K. Koch, նշ. աշխ. էջ 22-25: Ս. Հայկունու հաշիւներով Համշէնի ու Կարա-դերէի բնակչութեան թիւը 16 հազար է («Արարատ», 1895, էջ 239): Համշէնին ընկնելու է այդ թուի շուրջ կէսը՝ 8 հազար, այսինքն՝ այնքան, ինչքան նշել էր Կոխը Հայկունուց կէս դար առաջ:

[4] Յ. Մարկուարտ, Վրկան Բագրատունեաց ծագումը, Վիեննա, 1913, էջ 139

Մարտիրոս զինու զօրութեամբ Գրիգորի երկիրը կը մտնէ, կը պատերազմի, կը յաղթէ, կառնէ աղջիկը, կը պսակէ Արտաշէնի վրայ, Արտաշէն Գրիգորի երկրի մէջ, Համշէնի մեծ գետի վերի ակներուն մօտ մի հսկայ բերդ կը կառուցանէ, որ այսօր եւս Արտաշէն կասուի»[1]:

Այս աւանդութեան մէջ պատմական է, անշուշտ, հայ իշխանների միմեանց դէմ մղած պատերազմների վերյուշը եւ, մանաւանդ, ուշագրաւ այն տուեալը, որ իրար դէմ պատերազմող հայ այդ իշխանները եղել են «թագաւորական ցեղէ»:



Պատմա-աշխարհագրական այս միջավայրում «թագաւորական ցեղ» էին առաջին հերթին Բագրատունիները, որոնք զէնքի ուժով, խնամիական կապեր հաստատելով եւ այլ ուղիներով քաղաքական իրենց ազդեցութիւնը տարածում էին նորանոր շրջանների վրայ՝ մանաւանդ Տայքի ու Կղարջքի հայազգի ան Դաւիթ Կիւրոպաղատի իշխանութեան տարիներին (961-1001), ինչպէս նաեւ յետագայում՝ վրաց Բագրատունիների քաղաքական վերելքի ժամանակներին: Այս ժամանակաշրջանից պատմական ստոյգ վկայութիւններ, ցաւօք, չեն պահպանուել:

[1] «Արարատ», 1895, էջ 295-297

XIII դ. սկզբներին, խաչակրաց 4-րդ արշաւանքի հետեւանքով մասնատուած ու բզկտուած Բիւզանդական կայսրութեան հիւսիսարեւելեան շրջաններում ստեղծուեց պետական մի նոր կազմակերպութիւն՝ Տրապիզոնի կայսրութիւնը, որը միաւորեց յոյն, հայ ու վրացի ազգութիւններով բնակեցուած մի շարք շրջաններ եւ XIII-XIV դդ. նշանակալից դեր խաղաց միջազգային առեւտրի մէջ:

Համշէնի հայկական իշխանութիւնը, մասն կազմելով բիւզանդական Խալդեա (Խաղտիք) թեմի, կիսանկախ իր գոյութիւնը պահպանեց Տրապիզոնի կայսրութեան կազմի մէջ: Խաղտիքի դժուարակոխ ճանապարհների ու նրա ռազմատենչ բնակչութեան մասին 1223 թ. ունենք պերճախօս մի վկայութիւն, որը հարեւանցիօրէն վերաբերում է նաեւ Համշէնին ու նրա քաջարի զաւակներին: Այդ թուականին իրար բախուեցին Իկոնիայի սուլթանութեան ու Տրապիզոնի կայսրութեան զինական ուժերը: «Պատմութիւն սուրբ Եւգենիոսի հրաշագործութեանց» երկի տուեալներով սուլթանը ճամբար զարկեց Բաբերդից ոչ հեռու մի վայրում եւ շրջակայ բնակչութիւնից տեղեկութիւններ սկսեց քաղել Տրապիզոն տանող ճանապարհի մասին. նրան ասացին, որ անհրաժեշտ է շրջանցել Խաղտիքը, քանի որ այդ թեմը դժուարանցանելի է եւ ունի ռազմատենչ բնակչութիւն[1]: Յետագայ դէպքերն եկան հաւաստելու այդ տեղեկութիւնը. «Խաղտիքի եւ Մացուկա կոչուող շրջանի բնակիչները, տրապիզոնցիների յաջող դիմադրութեան մասին լուր ստանալով, ոգեւորուեցին եւ, ժամանելով գիշերով, հալածեցին պահապաններին, թշնամու բանակատեղից քշեցին-տարան պատերազմական ձիերը, յափշտակեցին ու գերեցին»: Խիստ ուշագրաւ են, մանաւանդ, սկզբնաղբիւրի հետեւեալ տողերը. «Յոյները գրաւեցին հապճեպ փախուստի հետեւանքով թողնուած ձիերն ու զէնքը: Իսկ հնարաւո՞ր է, արդեօք, թուարկել, թէ մացուկացիներն ու Խաղտիքի բնակիչները որքան փախստականներ ջարդեցին Տաւրոսի ձորերում»[2]: Խաղտիքի բակիչներն այստեղ խիստ որոշակի տարանջատուած են յոյներից ու մացուկացիներից, անշուշտ, էթնիկապէս տարբեր լինելով: Հիմք չունենք պնդելու, որ «Խաղտիքի բնակիչ» ասելով՝ սկզբնաղբիւրի հեղինակը նկատի է առել միայն եւ բացառապէս Համշէնի հայերին (այդպէս կարող էր կոչուել Բաբերդից հիւսիս՝ հնում Խաղտոյ ձոր կոչուող շրջանի, ինչպէս եւ Սպերի հայ ազգաբնակչութիւնը), սակայն կարող ենք չտարակուսել, որ Տրապիզոնի կայսրութեան հովանու տակ մտած Համշէնի հայկական իշխանութիւնը իր հարեւանների նման կիսանկախ դիրք ունէր կայսրութեան եւ սուլթանութեան նկատմամբ, պահպանել էր ռազմատենչ իր ոգին եւ պատրաստ էր ոչ միայն դիմադրելու թշնամի բանակներին, այլեւ նպաստաւոր իրադարձութիւնից օգտուելով՝ նախայարձակ լինելու:

XIV դ. կէսերից Տրապիզոնի կայսրութիւնը, քայքայման ու մասնատման անկարգ ընթացքի մէջ մտնելով, մէկը միւսի ետեւից կորցնում էր իր ծայրագաւառները՝ փաստական իշխանութիւն պահպանելով միայն Տրապիզոն քաղաքի ու մերձակայքի վրայ: 1360-ական թթ. արդէն Խաղտիքը կայսրութեան մաս չէր կազմում. որոշակի մի տեղեկութեամբ այդ տարիներին երկրամասը՝ հաւանաբար Համշէնի հետ միասին, գտնւում էր արդէն Բաբերդի էմիրի գերիշխանութեան ներքոյ, որն իր հերթին Ջելաիրեանների, ապա Թեմուրեանների վասալն էր[3]:

---

1 **Ф. И. Успенский,** Очерки из истории Трапезундской империи, Л., 1929, с. 52

2 Նոյն, էջ 56: Վերը մէջբերուած հատուածները քաղուած են "Сказание скевофилака Лазаря о чудесах св. Евгения" երկից, որի ռուսերէն ամբողջական թարգմանութիւնը մէջ է բերել Ф. Ուսպենսկին իր վերոյիշեալ աշխատութեան մէջ:

3 Տե՛ս նոյն, էջ 115:

6. Սկզբնաղբիւրների բազմադարեան լռութիւնը Համշէնի հայկական իշխանութեան մասին խզւում է XV դ. սկզբներին, երբ այդ անհիւրընկալ երկրով անցնում է իսպանացի դիւանագէտ Կլաւիխոն: Այսուհետեւ լեզու են առնում մի քանի հայ յիշատակագիրներ, որոնց հաղորդած չոր ու ցամաք տեղեկութիւններն ի մի բերելով՝ հնարաւոր է լինում ստուերագծել այդ իշխանութեան վերջին հարիւրամեակի պատմութիւնը[1]:

Սամարղանդից հայրենիք վերադառնալու ճանապարհին, Սեւ ծովի նաւահանգիստներից որեւէ մէկին հասնելու համար, Կլաւիխոն ժամանում է Սպեր, ուր հիւրընկալւում է մահմեդական իշխանից, որին անուանում է Piahacabea: Այնուհետեւ 1406 թ. սեպտեմբերի 13-15-ին նա անցնում է Համշէնով՝ այդ երկրի մասին արձանագրելով կարեւոր տեղեկութիւններ. «Այդ գիշեր նրանք (Կլաւիխոն եւ իր ուղեկիցները - Լ. Խ.) օթեւանեցին լեռան ստորոտում գտնուող մի գիւղում: Յաջորդ օրը՝ կիրակի (սեպտեմբերի 13-ին) բարձրացան անտառազուրկ բարձր լեռը, որն այնքան զառիվեր էր, որ ե՛ւ մարդիկ, ե՛ւ անասունները շարժւում էին մեծ դժուարութեամբ: Այդ օրը նրանք դուրս եկան Գորդանիայից եւ մտան Առաքել (Arraquiel) [կոչուող] երկիրը: Յաջորդ երկուշաբթի նրանք ճաշեցին այդ Առաքել երկրի մի գիւղում եւ, անմիջապէս մեկնելով, գիշերեցին մի այլ գիւղում:

Ահա պատճառը, որի հետեւանքով այդ մահմեդականը (Piahacabea-ն - Լ. Խ.) իշխում է [միաժամանակ] Սպերին եւ այդ Առաքել [կոչուող] երկրին: Այդ երկրի բնակիչները դժգոհ էին իրենց իշխանից, որին, ինչպէս եւ երկիրը, կոչում էին Առաքել: Նրանք ուղեւորուեցին Սպեր վերոյիշեալ իշխանի մօտ՝ ասելով, որ նրան կդարձնեն իրենց իշխան, պայմանով, որ նա պաշտպանի իրենց: Եւ արեցին այդպէս՝ յանձնուեցին նրա իշխանութեանը: Նա ընդունեց եւ իր փոխարէն մի մահմեդական նշանակեց այդ երկրի կառավարման համար՝ մի քրիստոնէի ընկերակցութեամբ:

Այդ երկրամասը շատ լեռնոտ է, ունի մի քանի լեռնանցքներ, որոնցով անկարող են անցնել կենդանիները: Որոշ տեղերում ժայռից ժայռ անցնելու համար փայտէ կամուրջ են կապել: Բեռնակիր կենդանիներն այդ երկրամասում, ըստ մեծի մասի, անկարող են շարժուել, եւ մարդիկ ստիպուած են ամէն ինչ կրել իրենց ուսերին: Հացահատիկն այնտեղ քիչ է [աճում]:

Այդ երկրի բնակիչներից դեսպաններին մեծ վտանգ էր սպառնում, որովհետեւ նրանք չնայած հայ քրիստոնեայ էին, բայց, լինելով վատաբարոյ ու չար ազգ, չէին կամենում ճանապարհ տալ դեսպաններին, մինչեւ նրանք իրենց հետ տարածից որոշ բան չտուեցին նրանց:

Այդ լեռներով նրանք շարժւում էին չորս օր, մինչեւ հասան ծովափնեայ մի տուն, որից մինչեւ Տրապիզոն վեց օրուայ ճանապարհ էր: Այստեղից նրանք վատ ճանապարհով գնացին մինչեւ Սիւրմենէ կոչուող վայրը»[2]:

Համշէնի պատմութեան համար յոյժ կարեւոր այս տեղեկութիւնները կարօտ են մեկնաբանութեան: Դժուարակոխ ճանապարհներով Սպերից Սիւրմենէ հասնելու համար Կլաւիխոն,

---

1 Այդ աշխատանքի նախնական արդիւնքները շարադրել էինք «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» մեր ժողովածուի Ա մասի առաջաբանում (Երեւան, 1955, էջ XLVIII-L): Այժմ ձեռքի տակ ունենք նոր տուեալներ, որոնք հնարաւորութիւն են տալիս կատարելու զգալի ճշգրտումներ ու լրացումներ:

2 **Рюи Гонзалес де Клавихо,** Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406 гг., пер. И. И. Срезневского, СПб., 1881, էջ 382-384. **Յ. Յակոբեան,** Ուղեգրութիւններ, հտ. Ա, Երեւան, 1932, էջ 142-143 (Յակոբեանի թարգմանութիւնը յաջող չէ):

անտարակոյս, անցել է Համշէնով, սակայն այդ երկիրը նախկին իշխանի անունով կոչել է Առաքել:

Որեւէ երկրի անուան փոխարէն նրա իշխողի անունը կամ տիտղոսը օգտագործելու դէպքերը եզակի չեն միջնադարեան մատենագրութեան մէջ: Պարսկական ու հայկական սկզբնաղբիւրներում, օրինակ, Գոռել է կոչուել Լեհաստանը՝ լեհ թագաւորի Կառոլ տիտղոսից, կամ էլ՝ Ջուվեյնին Գույուկ Խանի թագադրման հանդէսին ներկայ հիւրերի շարքում յիշատակել է «Թագաւոր երկրի սուլթանին», այսինքն՝ հայերէն թագաւոր բառն ընկալել է որպէս երկրի անուն[1], ճիշտ այնպէս, ինչպէս Կլաւիխոն Համշէնը իշխան Առաքելի անունով է կոչել[2]:

Խիստ ուշագրաւ է Կլաւիխոյի պատմածն այն մասին, որ Համշէնի բնակիչները, դժգոհ լինելով իրենց Առաքել իշխանից, պատգամաւորութիւն են ուղարկում հարեւան Սպերի իշխանի մօտ եւ, որոշ պայմաններ առաջադրելով, կամովին ընդունում նրա գերիշխանութիւնը: Այն անուանական է լինում, քանի որ Համշէնը կառավարւում է մէկ մահմեդական ու մէկ քրիստոնեայ պաշտօնեաների համագործակցութեամբ, եւ համշէնցիներն այնքան անկախ դիրք են գրաւում, որ իրենց սիւզերեն Սպերի իշխանի կողմից մեծ պատւով ընդունուած եւ ճանապարհուած դեսպաններին իրենց երկրամասից անցնելու իրաւունք են տալիս միայն համապատասխան տուրք ստանալուց յետոյ: Համշէնի իշխաններն այնքան ուժ ունէին, որ ի վիճակի էին հրաժարուելու Սպերի տիրոջ խնամակալութիւնից նրա ստանձնած պարտաւորութիւնների թերացման կամ քաղաքական նոր իրադարձութիւնների պայմաններում: Եւ այդպէս էլ կատարւում է. Կլաւիխոյի նկարագրած իրավիճակը փոխւում է XV դ. սկզբին, երբ Լանկ-Թամուրի մահով ծայր են առնում գահակալական կռիւներ, եւ երկարատեւ պայքարից յետոյ Հայաստանի ու հիւսիսային Իրանի վրայ իրենց տիրապետութիւնն են հաստատում Կարա-կոյունլուները:

Ստոյգ չգիտենք երբ, բայց անտարակոյս 1422 թ. տարիներ առաջ Համշէնի իշխանութիւնն անցնում է կրկին մեզ արդէն ծանօթ Առաքելի կամ նրա գերդաստանից սերած համանուն մի այլ իշխանի ձեռքը: Այդ մասին տեղեկութիւն է գրանցուած Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան գրատան N 1617 ձեռագրի մի յիշատակագրութեան մէջ, որի համաձայն ձեռագրի սկզբի մասն ընդօրինակուել է Համշէնի Քոշտենց վանքում 1422 թ.՝ «Արդ, գրեցաւ գիրքս հոգեշահ եւ պիտանի եւ բան խրատական յաղագս խնդրոյ պարոնաց պարոնին պարոն Առաքելին եւ որդոյ իւրոյ տէր Սարգսին, ի վայելումն անձին իւրոյ եւ որդեկին եւ ամենայն զարմից, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս այնէ, եւ փրկէ զինքն յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմնոյ, ամէն: Գրեցաւ գիրքս ի թվիս Հայոց ՊՀԱ (1422), նաւասարդի Ա»[3]:

Երեք տարի անց՝ 1425 թ., Համշէնի պարոն է կոչւում Դաւիթ իշխանը, հաւանաբար նախորդի որդին. այդպէս ենք կարծում, որովհետեւ նրա վերաբերեալ տեղեկութիւնը նոյնպէս գրանցուած է Առաքել իշխանին պատկանած վերոյիշեալ ձեռագրի մէջ՝ նրա վերջին մասում.

1 Այս մասին տե՛ս **Э. Шюц,** Значение слова «Գոռել» по армянским источникам («Լրաբեր» հասարակական գիտութիւնների, 1967, N 8, էջ 66 եւ հտ.):

2 Այդ մասին աներկբայ վկայում է ինքը Կլաւիխոն՝ գրելով. «Այդ երկրի բնակիչները դժգոհ էին իրենց իշխանից, որին, ինչպէս եւ երկիրը, կոչում էին Առաքել»:

3 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հտ. Ե, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1971, էջ 417. «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա, էջ 344: Այսուհետեւ ԺԵ դարի յիշատակարանների մեր հրատարակած I, II եւ III մասերը վկայակոչում ենք ԺԵ, I (կամ՝ II, III) համառօտութեամբ:

«Գրեցաւ գիրս… յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի… ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշտենց վանք, ի գաւառն ի Համշինու, հայրապետութեանն տէր Պաւղոսի, թագաւորութեանն Սքանդար պակին, պարոնութեանն պարոն Դաւթին»[1]:

XV դ. առաջին յիսնամեակում՝ Սքանդար Կարա-Կոյունլուի եւ նրա յաջորդ Ջհանշահի իշխանութեան տարիներին, երբ բովանդակ Հայաստանի վրայ իրենց տիրապետութիւնը տարածելու համար յարատեւ բախումների մէջ էին Աղ-կոյունլու եւ Կարա-կոյունլու թուրքմենական դինաստիաները, վերջիններիս համար փակ էր Երզնկայի վրայով Սեւ ծովի ափերը (Տրապիզոն եւ այլ նաւահանգիստներ) տանող միջազգային առեւտրի մայրուղին: Այս պայմաններում Կարա-կոյունլուների գերիշխանութիւնը ճանաչած Համշէնի հայկական իշխանութիւնը, հակառակ իր դժուարակոխ անցուղիներին, որոշակի նշանակութիւն էր ստացել. զգալի չափով Բաբերդի, Սպերի եւ Համշէնի վրայով էր կատարւում ապրանքափոխանակութիւնն ու անցուղարձը իր հոգեվարքն ապրող Տրապիզոնի կայսրութեան եւ Իրանի միջեւ:

Երթեւեկող առեւտրականների համար կեանքի ու գոյքի ապահովութիւն ստեղծելու եւ կայուն մաքսատուրքեր սահմանելու խնդիրը, բնականաբար, մտահոգելու էր Սեւ ծովով կատարուող միջազգային առեւտրի մէջ ներգրաւուած վաճառականներին: Դրանցից մէկն էր, անշուշտ, խոջայ Շամշադինը, որ 1431 թ. վերակառուցեց Տրապիզոնի Հայոց Զարխափան եկեղեցին, իսկ մէկ տարի յետոյ Ղրիմի տնտեսական կենտրոն, հայաշատ Կաֆա (Թէոդոսիա) քաղաքից ոչ հեռու գտնուող Ս. Անտոնի վանքում գրել տուեց Ներսէս Շնորհալու բանաստեղծութիւնների ձեռագիր մի ժողովածու[2]:

Եւ ահա, Համշէնի իշխաններ Առաքելին ու Դաւթին պատկանող վերոյիշեալ ձեռագրի մէջ, երջանիկ պատահականութեամբ, գրանցուել է այս խոջայ Շամշադնի՝ Համշէնի տէր պարոն Դաւթին ուղղուած մի նամակը, որը պատմական ուշագրաւ փաստաթուղթ է՝ արժանի մէջբերման առանց սղումների.

«Յանուն Աստուծոյ եւ սուրբ Նիկողայոսի. պարոն Դաւիթ՝ յառաջն դուն զայս ուխտէ Աստուծոյ, որ ճամփորթ[ի] համար լաւ լինաս ու զճամփորթի ապրանքն հանց պահես որպէս զԱստուծոյ տված հոգիդ, ով որ լինա՝ թէ քրիստոնեա եւ թէ այլազգ, առ քեզ աւանդ: Եւ զինչ քեզ ես Շամշադինս աւանդ դնեմ՝ զայն առնուս, այլ աւելի տամահութիւն չլինայ: Վրայ այս բանիս գրէ մօտ ի Սպերու տէրն, որ բեռն բեռ բռնէ, թամպալիթ՝ թամպալիթ, ըլտման՝ ըլտմայ, խուրճին՝ խուրճի, պողչան՝ պողչայ[3]: Եւ բեռին տալիքն ընդ սաղվաթ ընդ ամէն խարճ մինչեւ Բասենու սինօռն՝ զան որ պիտ առնուն՝ զան յիստակ գրեն որ [թա]մահ եւ տուութիւն

1 ԺԵ, III, 365: Երուսաղէմի N 1617 ձեռագրի Առաքել իշխանի պատուէրով ընդօրինակուած բաժինը (ձեռագրի սկզբի մասը) պարունակում է Գրիգոր Տաթեւացու Քարոզգիրքը, իսկ Դաւիթ իշխանի խնդրանքով ընդօրինակուածը՝ «Վասն թագաւորելոյ Թէոդոսի» խորագրով առասպելախառն մի պատմութիւն:

2 Խոջայ Շամշադնի մասին տե՛ս **Մ. Բժշկեան,** Պատմութիւն Պոնտոսի, էջ 81. **Հ. Տաշեան,** Ցուցակ, էջ 1016: Այս աղբիւրներում յիշատակուած Շամշադիններին Հ. Աճառեանը ներկայացրել է որպէս երկու տարբեր անձնաւորութիւններ («Հայոց անձնանունների բառարան», հտ. Դ, էջ 141). մենք նոյնացնում ենք՝ նկատի ունենալով, որ երկու դէպքում էլ նա յիշատակուած է իր Խաչատուր որդու հետ: Հաւանաբար այս Շամշադնի ազգականներից է նաեւ խոջայ Ստեփանոսը՝ կոչուած «Շէմսէտլի», որ կառուցել է Տրապիզոնի Հայոց Ամենափրկիչ վանքը (**Մ. Բժշկեան,** նոյն տեղ, էջ 82):

3 Այստեղ թուարկուած՝ <u>բեռ, թամպալիթ, ըլտմա, խուրճի, պողչա</u> տերմինների տակ պէտք է հասկանալ Համշէնի արահետներով դէպի Սեւ ծով ու հակառակ ուղղութեամբ տրանզիտով տարուող ապրանքների տարբեր չափերը:

չլինայ ի մէջն»[1]:

Ուշագրաւ այս յանձնարարական-նամակի բովանդակութիւնը կարելի է ամփոփել 2 կէտերով.

1. Խոջայ Շամշադինը յորդորում է Դաւիթ իշխանին Համշէնով անցնող վաճառականներից (ճամփորդ), լինեն նրանք քրիստոնեայ թէ մահմեդական, գանձել չափաւոր մաքս ու պայմաններ սահմանել, որ նրանց ապրանքներն անկորուստ մնան իր իշխանութեան սահմաններում:

2. Խորհուրդ է տալիս յատուկ զգուշութեամբ դիմել Սպերի տիրոջը եւ յորդորել, որ նա որոշակի դարձնի Սպերի ճանապարհներով փոխադրուող բեռների փոխադրավարձն ու մաքսատուրքը, որպէսզի «Թամահ եւ սուտութիւն չլինայ ի մէջն»:

Ըստ ինքեան հետաքրքրական այս նամակը յուշում է մեզ, որ Դաւիթ իշխանը Սքանդար Կարա-կոյունլուի թագաւորութեան տարիներին մեծ հեղինակութիւն վայելող ու զօրաւոր մի աւատատէր է եղել, ի վիճակի նոյնիսկ խրատներ տալու իր հարեւան Սպերի իշխանին:

Դաւիթ Համշէնցու մասին տեղեկութիւն ունենք նաեւ 1440 թ., երբ նա իր դեռաբոյս զաւակ Վարդի հետ շարունակում էր իշխել իր հայրենի երկրին: Այդ վկայութիւնը պահպանուել է Մաշտոցի անուան Մատենադարանի N 7263 ձեռագրի յիշատակարանում (էջ 228ա). «Արդ,- ասուած է այնտեղ,- ի յանկ եղեալ աւարտեցաւ Մաշդոցս ձեռամբ անիմաստ եւ անարհեստ գրչի Աստուածատուր աբեղի, ի գաւառիս որ կոչի Համշէն եւ ի վանքս Խուժկա, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսակիր աստուածընկալ սուրբ նշանացս, ի թուականութեանս յաբեթական տումարիս ՊՋԹ (1440), հոռի ամսոյ Բ (2), ի պարոնութեանն պարոն Դոթի (իմա՛ Դաւթի - Լ. Խ.) եւ դեռաբոյս զաւակին իւրոյ պարոն Վարդին, զոր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, ամէն»[2]:

Երկու տասնամեակ յետոյ Համշէնի հայկական իշխանութիւնը ծանր կացութեան մէջ է ընկնում: Երուսաղէմի N 3701 ձեռագրի մէջ ընդօրինակուած ժամանակագրութեան անծանօթ հեղինակը ՋԹ(=1460) թուականի տակ գրանցել է այսպիսի տողեր. «Եւ յայսմ ամի զՎէքէ մանուկն, զորդի պարոն Վարդին, զտէրն Համշինու ըմբռնեաց Շահալին, եւ ետ ի ձեռն Սոֆուն, որ Շէխ կոչէին»[3]:

Այս տեղեկութեան համաձայն 1440-1460 թթ. ընթացքում վախճանուել են ինչպէս պարոն Դաւիթը, այնպէս էլ 1440 թ. «դեռաբոյս» կոչուած նրա Վարդ որդին: Ահա այս Վարդի «մանկահասակ» ժառանգ Վէքէ[4] իշխանի մասին է վերոյիշեալ տուեալը. նա 1460 թ., լինելով Համշէնի տէրը, պարտութիւն է կրել Շահալի կոչուող մէկի կողմից, ձերբակալուել ու յանձնուել «ի ձեռն Սոֆուն, որ Շէխ կոչէին», այսինքն, ամենայն հաւանականութեամբ, Արդաբիլում նստող Ղզլբաշ ցեղերի առաջնորդ Սեֆեան շեյխ Հայդարին (1456-1488):

Վէքէ Համշէնցուն պարտութեան մատնած Շահալին Փոռնակ ցեղից էր, նրա մասին է, հաւանաբար, հետեւալը. «Վայ ահագին լալի եւ կոծելի աւուրն, որ ի մեղացն Աստուած հաշ-

[1] ԺԵ, I, 345

[2] ԺԵ, I, 510

[3] Մեծարժէք այս ժամանակագրութեան հեղինակը Սամուէլ Անեցու անանուն շարունակողներից է. հաղորդում է ուշագրաւ շատ տեղեկութիւններ:

[4] Հաւանաբար Վիգէն (գրում է նաեւ Վեգէն) անուան աղճատուած ձեւն է:

տեցաւ եւ ետ գերել զՏփխիս ի ձեռն անաւրէն եւ անիրաւ Փոռնակ Շահալին: Երկու եղբարն գերեցան...»[1]: Ըստ երեւոյթին թուրքական այս ցեղն ի նկատի ունի վրաց ժամանակագիրը, երբ XIV դ. սկզբների մասին խօսելիս յայտնում է, թէ 60 հազար անձից բաղկացած վաչկատուն թուրքերի մի բազմութիւն, ձմեռելով Սպերում եւ Բաբերդում, ամառները ողողում էր Պարխարի լեռները եւ ասպատակութիւններ սփռում դէպի Տայք եւ աւելի հեռու շրջաններ[2]:

Պատանի իշխան Վէքէի գերութեամբ Համշէնի հայկական իշխանութիւնը չի դադարում գոյութիւն ունենալուց. նրան յաջորդում է Դաւիթ անունով մի իշխան, որ հաւանաբար եղբայրն էր Վէքէի, որդին Վարդի ու Դաւիթ էր կոչուել իր պապի անունով:

Եօթ հարիւրամեակ գոյատեւած Համշէնի հայկական իշխանութեանը վերջ է տրւում 1489 թ., կամ դրանից մէկ-երկու տարի առաջ: Ողբերգական այդ դէպքի մասին պահպանուած արժէքաւոր յիշատակարանի հետ ծանօթանալուց առաջ վերյիշենք, որ 1453 թ. Կոստանդնուպոլսի գրաւումից յետոյ օսմանեան թուրքերը, ամէնուրեք սարսափ տարածելով, նուաճումներ էին կատարում Փոքր Ասիայում ու Եւրոպական մայրցամաքում: 1458 թ. նրանք գրաւեցին Աթէնական հերցոգութիւնը, 1459 թ.՝ Սերբիան, 1460 թ.՝ Մորեան, 1461 թ. հոկտեմբերին՝ Բիւզանդական երբեմնի հզօր կայսրութեան վերջին յիշատակը՝ Տրապիզոնի կայսրութիւնը: Քիչ անց թուրքերը հաստատւում են նաեւ Լեսբոս կղզում, Բոսնիայում, Ղարամանիայում, իսկ 1475 թ. գրաւում են Ղրիմ թերակղզին, որ մեծաքանակ հայ բնակչութիւն ունենալու պատճառով եւրոպական որոշ աղբիւրներում կոչւում էր «Ծովային Հայաստան»:

Համշէնի հայկական իշխանութեան վախճանի մասին վերոյիշեալ յիշատակարանում գրանցուած են ուշագրաւ տեղեկութիւններ.

«...Զորոյ տեսեալ պայծառութիւն Աւետարանիս այս Գրիգոր երէցս եւ ետ գաղափարել զսա ի ձեռն քահանայի՝ անարժան սարկաւագի եւ փանաքի գրչի: Եւ ժամանակս վերջին, որ էր թուականս հայոց ՋԼԸ (1489), ի վերադիտողութեան Հայոց տեառն Սարգսի եւ Յոհաննէսի, եւ վերակացութեանն Գրիգոր վարդապետի, եւ իշխանութեանն պարոն Դաւթի, որ էր տէր Համշէնի, զոր եղեւ պանդխտանալ նմա եւ բնակիլ ի յերկիրս Սպերու ի յազգէն չիթախին, զոր շատ քրիստոնեայ իշխանք եւ թագաւորք պանդուխտ եղեն ի յաւարութիւն ի ձեռաց նոցա, զորոց զաւուրս նոցա Աստուած խորտակեսցէ ամենազաւր աջովն իւրով, ամէն:

Զօր եւ ես՝ մեղսամած եւ անիմաստ գրիչս գրեցի զսա ի պանդխտութեան մերում ի յերկիրս Սպերու, ի գեաւղս Կաընկանց, ընդ հովանեաւ սրբոյն Դաւթի, իշխանութեանն տաճկաց Դատային, եւ սուլթանութեանն Եաղուպին, որ տիրէր տանս Արեւելից»[3]:

Մեծարժէք այս յիշատակարանի համաձայն, Համշէնի տէր պարոն Դաւիթը, պարտութիւն կրելով թուրքերից, թողել էր հայրենի իր երկիրը եւ պատսպարուել Սպերի գաւառում՝ 1489 թ. առաջ, բայց որոշակի որ թուականին՝ չգիտենք: Պարզ չէ նաեւ, թէ իր տիրոյթից վտարուած իշխանը, ձեռագիրն ընդօրինակող գրչի նման, հաստատուել էր Սպերի Կաընկանց գիւղո՞ւմ, թէ՞ մի այլ բնակավայրում (հարկաւ՝ ազգակցական կապ ունենալով տեղի հայ աւատատէրերի հետ կամ էլ որոշ կալուածքներ ստանալով Սպերի կառավարիչ-իշխանից):

[1] «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ եւ շրջակայից», Վենետիկ, 1969, էջ 21

[2] **Brosset**, Histoire de la Géorgie ....., Pétersburg, 1858, vol. I, 1, էջ 626-630. հմմտ. **Հ. Տաշեան**, Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 46:

[3] ԺԵ, III, 470 (ՄՄ ձեռ N 7638, էջ 314բ-315ա)

Պէտք չէ մոռանալ, որ Համշէնին Հարաւից սահմանակից Սպերի ու Բաբերդի գաւառները մեր հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպէս եւ նրանից առաջ ու յետոյ, զուտ Հայաբնակ էին: Յակոբ Կարնեցի տեղագիրը Բաբերդի գաւառը կոչում է «քաղցր եւ համեղ երկիր եւ Հայոց բնակարան», իսկ Սպերի մասին գրում՝ «բնակիչք երկրին՝ բովանդակ Հայք»[1]: Այս գաւառները XV դ. ընթացքում քանիցս պատերազմական գործողութիւնների ասպարէզ դարձան: Բնակիչները կողոպտուեցին, գերեվարուեցին ու բազում տառապանքներ կրեցին նախ Աղ-կոյունլու եւ Կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի յարատեւ բախումների շրջանում, ապա Աղ-կոյունլու փադիշահ Ուզուն-Հասանի (1468-1478) եւ օսմանեան սուլթան Մուհամմադ Բ Ֆաթիհի (1451-1481), իսկ յետագայում նաեւ Օսմանեան ու Սեֆեան գահակալերի միջեւ մղուող արիւնահեղ պատերազմների ժամանակ:

Դաւիթ Համշէնցու տարագրութեան տարիներին Սպերի գաւառը գտնւում էր դեռեւս Աղ-կոյունլու Յաղուբ փադիշահի (1478-1490) իշխանութեան ներքոյ, սակայն թուրքերը իրագործելով իրենց նուաճողական ծրագրերը, քայլ առ քայլ առաջ էին շարժւում՝ նորանոր երկրամասեր կցելով իրենց կայսրութեանը: Համշէնի հայկական իշխանութիւնը որպէս քաղաքական ինքնուրոյն միաւոր դադարեց գոյութիւն ունենալուց 1489 թ. մէկ-երկու տարի առաջ՝ գրաւուելով թիւրքերի կողմից, որոնք այդ դէպքն արձանագրող յիշատակագրի կողմից կոչուած են չիթաղ: XV-XVI դդ. հայկական սկզբնաղբիւրներում բազմիցս հանդիպում ենք այդ (չիթաղ կամ չիթախ) տերմինին՝ օսմանցի թուրք իմաստով[2]:

Այժմ ի մի բերենք Համշէնի հայ իշխանների յաջորդականութեան մասին XV դ. մեզ հասած տուեալները. դրանց համադրութեամբ ստացւում է հետեւեալ պատկերը.

<u>ԱՌԱՔԵԼ</u>

(1406 թ. առաջ վտարուել էր իշխանութիւնից, 1423 թ. կրկին յիշատակւում է որպէս Համշէնի պարոնաց-պարոն)

<u>ԴԱՒԻԹ Ա</u>

(յիշ. 1425-1440 թթ.)

<u>ՎԱՐԴ</u>

(յիշ. 1440 թ.)

1 «Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ.», հտ. II, կազմեց՝ Վ. Յակոբեան, Երեւան, 1956, էջ 553

2 Չիթաղ բառն, օրինակ, գործածուած է ժամանակագրութիւնների ու յիշատակարանների ստորեւ թուարկուող հատուածներում. «Թվին ՋԺ (1461) չիթախն զՏրապիզոն առաւ» («Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 163). «Եւ ողորմութեամբն Աստուծոյ (ազատեցաւ) աշխարհս մեր ի զօրաց չիթախին... իսկ փատրիահն նոցա, որ խոնին, որ յայսմ 1473 ամի կոխեալ եղեւ ի չիթաղէն» (ԺԵ, II, 344). «Աւախ հարիւր հազար բերան, չիթախն էառ զմեծն Կաֆան» (ԺԵ, II, 62). «Վասն ահին ժանտաբարոյ չիթախին եկաք (1478) ի քաղաքս մեր Պաւնտոս» (ԺԵ, II, 433). «Ցայս օրերս (1503) էառ չիթախն զԲաբերդ ի Սոֆոյն եւ զՍպերու բերդն» (Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 186), «Այսմ (=1509) ամի գնաց Ալիմշայ պարոն՝ ազգաւ չիթախ, ի վերայ Գուրիելին (=Գուրիայի իշխանի)» (ՄՄ ձեռ. N 7180, էջ 126բ): Այս Սելիմշահի մասին N 9335 ձեռագրում ասուած է. «[Գրեցաւ] ի սուլտանութեանն Հոռոմց. Պայազիդ պակին եւ իր որդուն՝ Սուլիմշահ սուլթանին, որ տիրէր ի Տրապիզոն» (էջ 235բ):

Ուշագրաւ է, որ բոլոր այս վկայութիւնները գրուած են պատմա-աշխարհագրական միեւնոյն միջավայրում՝ Բարձր Հայք, Բաբերդ, Տրապիզոն եւ հարեւան շրջաններ: Ուրեմն այլեւս պարզ է, որ Չիթախ կոչւում է թուրքերի կառավարող դինաստիան:

<u>ՎԵՔԷ</u>

(գերուել է 1460 թ.)

<u>ԴԱՒԻԹ Բ</u>

(իշխանութիւնից զրկուել է 1489 թ. առաջ)

7. Անշուշտ, Համշէնի իշխանական տան պայազատներից էր նաեւ XV դ. երկրորդ յիսնամեակի ականաւոր գիտնական-մանկավարժ Յովհաննէս Համշէնցին: Նրա գործակիցների ու աշակերտների միաբերան վկայութեամբ մշակոյթի այս գործիչը «պարոնորդի» էր՝ սերուած «ի թագաւորական ազգէ», եւ հաւանաբար մանուկ հասակից նուիրուել էր եկեղեցուն՝ փեոդալական այդ տիրոյթի հոգեւոր առաջնորդը դառնալու համար: Յովհաննէս րաբունապետի թագաւորական ազգից սերուած լինելու մասին վկայութիւնները առիթ են տալիս կրկին անդրադառնալու Համշէնի իշխանական գերդաստանի տոհմաբանութեան խնդիրն: Այլ կապակցութեամբ ասել ենք արդէն, որ IX-XI դդ. բովանդակ Անդրկովկասի ու Պատմական Հայաստանի մեծ մասի վրայ տիրապետութիւն հաստատած Բագրատունիները (որոնց հին բնօրրանը Սպերի շրջանն էր), պէտք է որ թափանցած լինէին նաեւ Համշէն կամ էլ ազդեցութեան իրենց ոլորտի մէջ առնէին այդ երկրամասը՝ խնամիական կապեր հաստատելով VIII դ. այնտեղ իշխող Ամատունիների հետ: Կարելի է, թերեւս, ուշադրութիւն դարձնել եւ այն հանգամանքի վրայ, որ Համշէնի մեզ յայտնի վերոյիշեալ 5 իշխաններից 2-ը կրում են Բագրատունեաց տոհմի համար այնքան բնորոշ ու գերադասելի համարուած Դաւիթ անունը[1]:

Յովհաննէս րաբունապետ Համշէնցին եղել է Գրիգոր Տաթեւացու սան Դանիէլ վարդապետի աշակերտը, ուստի դաստիարակուել եւ ուսում է ստացել միջնադարեան Հայաստանի ամենանշանաւոր բարձրագոյն հաստատութեան՝ Տաթեւի համալսարանի գիտական աւանդոյթներով: Վարդապետական գաւազան ստանալուց յետոյ նա հաստատուել է Երզնկայի մօտակայքում գտնուող Աւագ վանքում, որ դարեր շարունակ մեծ դեր է կատարել հայ դպրութեան ու ձեռագրական մշակոյթի զարգացման գործում[2]: 1463 թ. տեղեկութիւն ունենք Յովհաննէս Համշէնցու մասին՝ որպէս «առատաշնորհ երջանիկ րաբունապետ», որի շուրջ Հայաստանի տարբեր շրջաններից ու հայկական գաղթավայրերից (Հաղբատ, Տարօն, Դարանաղեաց գաւառ, Սեբաստիա, Տիվրիկ, Տրապիզոն, Ղրիմ) հաւաքուել էին «անձինք Լ (30)՝ արք պարկեշտք եւ գովելիք»:

Զգիտենք, թէ մինչեւ որ թուականն է Յովհաննէս րաբունապետը դասաւանդել Աւագ վանքում: Ստոյգ է, սակայն, որ 1489 թ. արդէն նրա գլխաւորած համալսարանը տեղափոխուել էր Կապոսի կոչուող Ս. Յակոբի վանքը: Վերյիշելով, որ հէնց այդ թուականից մէկ-երկու տարի առաջ թուրքերը Համշէնից վռնդեցին Դաւիթ Բ իշխանին՝ ակամայ մտածում ենք,

1 Համշէնում իշխող հայ աւատատէրերի թագաւորական ազգից սերուած լինելու մասին տուեալները քննարկելիս պէտք է հաշուի առնել եւ հետեւեալը: Տրապիզոնի կայսրութեան վերջին գահակալները, մանաւանդ Ալեքսեյ III-ը (1349-1390), իրենց կիսակենդան պետութեան կեանքը երկարաձգելու մտահոգութեամբ յաճախ խնամակալական կապեր էին հաստատում հարեւան քրիստոնեայ եւ մահմեդական իշխողների հետ՝ իրենց դուստրերին, քոյրերին եւ այլ ազգականուհիների կնութեան տալով նրանց (տե՛ս **Ф. И. Успенский**, նշ. աշխ., էջ 81): Պէտք չէ անտեսել եւ այն հնարաւորութիւնը, որ Յովհաննէս Համշէնցին սերուած էր համարւում «ի թագաւորական ազգէ», որովհետեւ նրա մայրը, տատը կամ մայրական գծով մերձաւոր նախնիներից որեւէ մէկը Կոմնինոսների դինաստիայի իշխանուհիներից էր:

2 Հ. Ոսկեանը (նշ. աշխ., էջ 12) գրում է, որ Յովհաննէս Համշէնցին կոչուել է նաեւ Հունունցի: Եթէ ճիշտ է այդ, պէտք է ենթադրել, որ նա մինչեւ Աւագ վանքում հաստատուելը որոշ ժամանակ եղել է Հունունտի վանքում կամ էլ պատանի հասակում ապրել Հունունտում:

որ այդ տեղափոխութիւնը ինչ-որ ներքին առնչութիւն ունի Դաւիթ Համշէնցու իշխանազուրկ լինելու հետ: Թերեւս Աւագ վանքի համալսարանի տնտեսական կարիքների մի մասը հոգում էր ինքը՝ Յովհաննէս իշխանազուն-բաբունապետը, իր հարազատների հետ: Երբ վերջ տրուեց Համշէնի հայկական իշխանութեանը, դադարեց նաեւ տնտեսական այդ օգնութիւնը, որի հետեւանքով էլ, թերեւս, համալսարանը տեղափոխուեց տնտեսապէս աւելի ապահով Կապոսի վանք: Համշէնցի վարդապետը կնքեց իր մահկանացուն 1497 թ., եւ մինչեւ իր կեանքի վերջին օրերը գլխաւորեց նշանաւոր ուսումնական այդ հաստատութիւնը: Իր աշակերտների համար նա մեկնաբանում էր աստուածաբանական-իմաստասիրական լուրջ երկեր, որոնց շարքում կարեւոր տեղ էին գրաւում Գրիգոր Նիւսացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, կեղծ Դիոնիսիոս Արիոպագացու աշխատութիւնների ժողովածուները, «Մեկնութիւն նուրբ գրեանց» ուշագրաւ բանասիրական գործը եւ այլ աշխատութիւններ[1]:

8. Միջնադարեան Համշէնի մշակոյթի ամենաակնառու ներկայացուցիչ Յովհաննէս բաբունապետը գիտա-մանկավարժական իր գործունէութիւնը ծաւալել էր հիմնականում Համշէնից դուրս: Բուն Համշէնի իշխանութեան սահմաններում եւս XV-XVI դդ. եղել են վանական հաստատութիւններ ու գրչութեան կենտրոններ, որոնցում աշխատող բանիմաց ու դրագէտ գրիչները բազմացրել են արժէքաւոր ձեռագրեր եւ աշխատել մշակոյթի այլ բնագաւառներում:

Միջնադարեան Հայաստանի վանական հաստատութիւնների պատմութեան վաստակաշատ խուզարկու Հ. Ոսկեանին յայտնի է Համշէնի սահմաններում գտնուող 3 վանք՝ Խաչեքարի կամ Խաչքեարի, Սուրբ Խաչիկ Հօր եւ Վարշամակի կամ Վարսամպեկի[2]:

Ուշադիր բաղդատելով վանական այս հաստատութիւնների մասին առկայ հին ու նոր տուեալները՝ գալիս ենք այն համոզման, որ Եղնովիտ գիւղի մօտ գտնուող «Սուրբ Խաչիկ Հօրն Հոգեւորի» կոչուած վանքը՝ նոյն «Խաչեքարոյ» վանքն է: Կարծում ենք նաեւ, որ «Խաչիկ հայր» անունն իսկ, ժողովրդական ստուգաբանութեամբ, ծագել է Խաչեքար-Խաչքար (ճաներէն՝ Կաչկարի)[3] լեռնագագաթի անունից: Կովկասի եւ Փոքր Ասիայի 10 վերստանոց ռուսական քարտէզի վրայ Կաչգար են կոչւում Պարխարեան լեռնաշղթայի 2 տարբեր գագաթներ. այն, որից սկիզբ է առնում Ճորոխա գետի Կաչգար-սու վտակը, կոչուած է Վարսամբեկ-Կաչգար, իսկ միւսը, որ գտնւում է սրանից շուրջ 28 կմ հիւսիս-արեւելք, կոչուած է միայն Կաչգար: Կարծում ենք ուստի, որ Վարշամակ կամ Վարսամբեկ կոչուած վանքը նոյն Խաչեքարի կամ Ս. Խաչիկ Հօր վանքն է, որ կոչուած է այդպէս Խաչքար (Կաչկարի) լեռնագագաթի Վարսամբեկ անունով: Քրիստոսի վարշամակի այնտեղ պահուելու աւանդը, որի մասին խօսում է Ղ. Ալիշանը[4], հաւանաբար ստեղծուել է վերոյիշեալ լեռնագագաթի անունից:

---

1 Յովհաննէս Համշէնցու համալսարանի մասին աւելի հանգամանօրէն գրել ենք «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուի Բ մասի ներածական ուսումնասիրութեան մէջ (LXXXV-LXXXVII):

2 Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, էջ 183-189, 199

3 Н. Я. Марр, Из поездки в Турецкий Лазистан (впечатления и наблюдения), "Известия Императорской Академии наук", 1910, էջ 608

4 Ղ. Ալիշանը գրում է «Համշէն, որ է Պաշ Համշէն. կայ ի ստորոտս Տէմիրտաղ լերին, առ որով եւ Խաչեքար լեառն, յորում մենաստան հին, ուր պահէին նշխարք Վարդանանց, ի գագաթան նորին աւանդի պահել վարշամակին Քրիստոսի, վասն որոյ լեառն Վարշամակ կոչեցաւ եւ ի ռամկաց Վարսամպէկ» («Տեղագիր Հայոց Մեծաց», Վենետիկ, 1855, էջ 39):

Ամփոփելով այս տուեալները՝ յանգում ենք այն եզրակացութեան, որ վերոյիշեալ 3 տարբեր անունների տակ թաքնուած է Համշէնի միջնադարեան մշակոյթի միեւնոյն կենտրոնը՝ Խաչեքարի վանքը, որ յետագայում կոչուել է նաեւ Խաչիկ Հօր վանք, ինչպէս նաեւ Վարսամպեկ-Վարշամակ: Վանքը գտնուել է Եղնովիտ գիւղի մօտ, «ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Սիովնի եւ սուրբ Խաչիկ Հօրն Հոգեւորի եւ սուրբ Վարդանանցս, որ աստ կան հաւաքեալ ի պահպանութիւն երկրիս եւ գաւառիս մերոյ (Համշինու)»: Այսպէս է գրել Կարապետ երէցը իր ընդօրինակած աղթարական բժշկարանի յիշատակարանում[1]:

Վերոյիշեալ Կարապետը բազմարդիւն գրիչ է եղել. մեզ են հասել 1499-1528 թթ. ընթացքում՝ նոյն Եղնովիտ գիւղում նրա ընդօրինակած հետեւեալ ձեռագրերը՝ Բժշկարան, տարբեր նիւթերի մի ժողովածու, Տօնացոյց-աւետարանացոյց, Ներսէս Շնորհալու «Յիսուս որդի», 2 Մաշտոց, 3 Շարակնոց: Մի այլ գրիչ՝ Յովհաննէս Մալազ անունով, 1517 թ. ընդօրինակել է Բժշկարան, իսկ 1523 թ.՝ Աւետարան[2]:

Խաչեքարի վանքը, ըստ երեւոյթին, Համշէնի վանական հաստատութիւններից ամենանշանաւորն էր, բայց ոչ միակը: XV դ. կէսերին այնտեղ եղել է 2 այլ վանք եւս՝ Քոշտենց եւ Խուժկայ վանքերը, որոնց մասին Հ. Ոսկեանը տեղեկութիւն չունի: Սրանցից առաջինում (Քոշտենց վանքում), ի վայելումն Համշէնի իշխաններ Առաքելի ու Դաւթի, 1422-1425 թթ. Խաչատուր գրիչն ընդօրինակեց մեզ արդէն ծանօթ ձեռագիրը[3]: Խուժկայ վանքը յայտնի է 1440 թ., երբ այստեղ Աստուածատուր գրիչն ընդօրինակեց մի Մաշտոց՝ «Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ կենսակիր աստուածընկալ սուրբ նշանացս»[4]:

Զպէտք է տարակուսել, որ Համշէնում ստեղծուել են տասնեակ ու հարիւրաւոր այլ ձեռագրեր ու մշակոյթի արժէքներ, որոնք, սակայն, վերջին հարիւրամեակների ընթացքում ոչնչացուել են բարբարոս տիրապետողների կողմից կամ դեռեւս յայտնի չեն գիտական աշխարհին[5]:

Համշէնի հայկական իշխանութեան անձուկ սահմաններից դուրս՝ Պատմական Հայաստանի մշակութային այլ հաստատութիւններում եւս աշխատել ու ստեղծագործել են բազմաթիւ համշէնցիներ: Առայժմ մեզ յայտնի են դրանցից մի քանիսի անունները, որ նշում ենք ստորեւ:

Յովհաննէս եպիսկոպոս Համշէնցի. սա 1401 թ. շարադրել է չափածոյ մի յիշատակարան՝ այսպիսի սկսուածքով.

«Զսակաւ գիրս գրեցի

Եպիսկոպոսս Համշինցի.

---

1 ԺԵ, III, 288

2 Հ. Ոսկեան, նշ. աշխ., էջ 185-189

3 Երուսաղէմ, ձեռ. N 1617: Յիշատակարանում գրուած է. «Գրեցաւ գիրքս... ձեռամբ մեղաւոր եւ անարժան Խաչատուր աբեղի, յաղագս խնդրոյ պարոնաց պարոն Դաւթի... ի դրան սուրբ Աստուածածնի, որ կոչի Քոշտենց վանք, ի գաւառն ի Համշինու» (ԺԵ, III, 365):

4 ԺԵ, I, 510

5 Ս. Հայկունին յայտնում է, որ «Այս երկիրը (Համշէն) մտնող հայք կը հաւատացնեն, թէ բազմաթիւ տներու մէջ տեսած են եկեղեցական հին անօթներ, որք իբրեւ նուիրական կամ սրբութիւն մի պահած են, այլեւ ուրիշ հնութիւններ՝ ձեռագիրներ եւ այլն, որ ինձ շատ հաւատալի է նորա համար, որ հաւատարիմ անձերէ լսած եմ» («Արարատ», 1895, էջ 297):

Այս անպիտանս յամենայնի,
Որ Յովաննես անունս կոչի.
Ցաւաք նեղեալ յայս աշխարհի՝
Դառն եւ դժնեայ եւ անբարի.
Միտքս փութով ի չար դիմի
Եւ ի բարոյն յոյժ հեռացի...»[1]:

Յայտի է նաեւ Յակոբ Համշէնցի անունով գրիչը, որ 1428 թ. շարադրել է դարձեալ չափածոյ մի այլ յիշատակարան.

«Յակոբ ծառայ անպիտանի,
Որ յիշելոյ չ[եմ արժանի].
Զի եմ բնական ես Համշէնցի,
Որ բնաւ բարութիւն [չունի]...»[2]:

Այս եւ նախորդ յիշատակագրերը հեղինակել են, անշուշտ, եւ այլ գրուածքներ. մէջբերուած քառեակները վկայում են չափածոյ տողեր յօրինելու նրանց հմտութեան մասին:

Մի այլ համշէնցի գրիչ՝ Մովսէս աբեղան, Խաղտեաց գաւառի Բերդակա վանքում XV դ. 70-ական թթ. ընդօրինակել է Աւետարան[3]:

Համշէնի գրչութեան առանձնայատկութիւնների ուսումնասիրութեան համար որոշակի արժէք ունի նաեւ Մատենադարանի N 7056 ձեռագիրը, որ գեղեցիկ մանրանկարներով զարդարուած եւ երաժշտական խազերով օժտուած մի Շարակնոց է: Այն ընդօրինակել է 1506 թ. Կողոնիայի շրջանում Հայրապետ կրօնաւորը՝ «ի Համամաշէն գաւառոյ»:

Համշէնի մշակութային գործիչների այս ցանկը, վստահ ենք, լրացուելու է հայերէն հազարաւոր ձեռագրերի այս առումով չուսումնասիրուած յիշատակարաններից քաղուած մի շարք անուններով:

9. Համշէնահայերի մշակոյթին նուիրուած էջը փակելուց առաջ մի երկու խօսքով պէտք է անդրադառնալ նրանց բանաւոր գրականութեանը, որ մեղուաջան բանահաւաքներ Ս. Հայկունու, Գ. Սրուանձտեանցի եւ այլոց ջանքերով համեմատաբար լաւ է ուսումնասիրուած[4]:

«Երկիր դրից բնական պատճառներով» դարեր շարունակ ինքնամփոփ կեանք վարելով՝ համշէնահայերը պահպանել են իրենց բնաշխարհի լեռների ու ձորերի, գիւղերի ու շէների հայկական անունները. Նրանց գաւառաբարբառում կան տասնեակ ու հարիւրաւոր զուտ հայերէն բառեր կենդանական ու բուսական աշխարհի տարբեր նմուշների մասին: Համշէնցի հայը, քրիստոնեայ թէ մահմեդական, պահպանել է նաեւ իր հնամենի ժողովրդական երգը, ա-

1 ԺԵ, I, 18-19

2 ԺԵ, III, 368-369

3 **Հ. Ոսկեան,** նշ. աշխ., էջ 171

4 Տե՛ս Հ. Աճառեանի «Քննութիւն Համշէնի բարբառի» (Երեւան, 1947) ուսումնասիրութիւնը, որտեղ բերուած է Համշէնի ազգագրութեան եւ բանահիւսութեան մասին հայ պարբերական մամուլի էջերում ցրուած կարեւոր յօդուածների ցանկը:

ռածներն ու հանելուկները, զուարճալի պատմուածքները անբան եւ խելապակաս կանանց ու արանց մասին: Արժէ յիշատակել, որ Յ. Թումանեանի տաղանդաւոր մշակումով հանրայայտ դարձած «Կիկոսի» ու «Բարեկենդանի» հիմքում ընկած է համշինահայերի «Հայ Գասպարը»[1]:

Ուշագրաւ է նաեւ «Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛» ժողովրդական երգի համշինեան գեղեցիկ փոփոխակը, որի առաջին 6 տողերն են.

«Յօրոր զարունը կու գայ, կուկուն կու կօնչէ,
Ոտքս փուշ պատեցաւ, սիրտս կու խոռչէ:
Կօնչէ, կուկուս, կօնչէ բարձրի լեռներէ,
Էշթամ զարիբութին, վախիմ մեռնիլէ:
Կուկուն էլ թառեցաւ ածուքի պատին.
Աստուած հոգիս առնուր մայրիկիս գոգին...»[2]:

10. Համշէնի հայկական իշխանութիւնը, ինչպէս տեսանք, դիմագրաւեց Օսմանեան կայսրութեանը ու կարողացաւ պահպանել կիսանկախ իր գոյութիւնը շուրջ 3 տասնամեակ աւելի, քան իր նախկին սիւզերեն Տրապիզոնի յունական կայսրութիւնը:

1489 թ. արդէն Համշէնի վերջին հայ իշխան Դաւիթը, վտարուած իր տիրոյթից, հանգրուանել էր Սպերի շրջանում, որ դեռեւս գտնւում էր Աղ-կոյունլու փադիշահերի գերիշխանութեան ներքոյ: Պէտք է նկատել, սակայն, որ Համշէնի իշխանանիստ գիւղի գրաւումից ու հայ իշխանի փոխարէն թուրք վոյվոդի նշանակումից յետոյ էլ, դեռ երկար ժամանակ, իրենց ինքնավար վիճակը պահպանեցին անմատչելի ու ինքնամփոփ այդ լեռնագաւառների հայ ձորապետները: «Այսպիսի դժուարամուտ լերանց մէջ,- յենուելով Կ. Կոխի հեղինակութեան վրայ՝ գրել է Հ. Տաշեանը,- դիւրին էր իշխանաց կէս-անկախ գոյութիւն մը պահել: Նաեւ օսմանեան տիրապետութեան տակ երկար տեւած է այս վիճակը, եւ Քոխ գեղեցիկ նկարագրէ տակաւին իւր ուղեւորութեան առեն (այսինքն՝ XIX դ. 40-ական թթ.) շարունակուող այս դրութիւնը»: Կոխը հիւր եղաւ վաղուց ի վեր մահմեդականութիւն ընդունած մի գերդաստանի զաւակ՝ Ջեմիլի շրջանի դերեբեյի (ձորապետի) տանը, եւ նրա արտաքինից դատելով նկատեց, որ «գլխաւորաբար հայ արիւնն էր հոսում նրա երակների մէջ»[3]:

Իրենց կիսանկախ ու ինքնավար վիճակը պահպանեցին նաեւ բուն Համշէնից դուրս եկած

1 Յ. Թումանեանի մշակումը ժողովրդական պատումի հետ համեմատել կարենալու համար ստորեւ բերում ենք 2 հատուած «Հայ Գասպարից»:

«Վախ գիտի վախ, եիս էշտայի մաշղու, ինձիկի ըլլիր մօնչ մը. օնունը դնեի Գասպար, Գասպար մեծընար, դրկիցներու մօնչերու հիտ խաղեր, հիտրար իդա տեղ գեին, իդա փթած ծառի վրան էլլեին, ծառի ճուղը փետուիր, Գասպար ըղնիր տակը մեռնիր, հապա իմ բօնը ինցօ" կըլլիր, վայ կիտի Գասպար, վայ քեօրնար քու մօր աչքեր» («Արարատ», 1895, էջ 397-398: Համտ. Աղբիւրի մօտ Կիկոսի մօր լաց ու կոծի հետ):

«Էն գետնի վրա քելե կու, ունի երկու օտք, կընե մեկ, էրկուս մէկ, էրկուս ու կեշտայ, քու ձին ունի չուս ոտք, կընե մեկ, էրկու, իրեք, չուս. ինչաք դուն չուս ընիս, էն մեկ էրկուս կասե ու կոնցնի քեզիկի. ինչիր վեր, ձիդ տուր ինձիկ, դուն էլ էն մաշղու լոմոն մեկ էրկուս երե ու գնա, ժմնե» («Արարատ», 1895, էջ 400: Համտ. «Բարեկենդանի» հերոսի խրատը խելապակաս տղամարդուն, որ ձիով դուրս էր եկել հետապնդելու իր կնոջը խաբած երիտասարդին):

2 Գ. Սրուանձտեանցի գրառումն է (տե՛ս «Մասիս», 1886, N 3824, էջ 963. **Հ. Աճառեան,** նշ. աշխ., էջ 217-218):

3 **Հ. Տաշեան,** Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 27

եւ Հարեւան շրջաններում ու Սեւ ծովի ափամերձ վայրերում բնակութիւն հաստատած հա... շէնցիները: Չարշամպայից ոչ հեռու գտնուող Խուաշունլի աւանի Համշէնից գաղթած հ... բնակչութեան մասին, օրինակ, ունենք վկայութիւն XIX դ. սկզբներից, որի համաձայն նրան... ամէնքը «գինուոր գրուած են որդւոց որդի. եւ ունին զօրապետ հայ իշխան, որ գիրենք կ... կառավարէ. մարդէ ահ չունին. միայն տերեպեկիին հետ պատերազմ կերթան, եւ զօրա... մարդիկ են»[1]:

Համշէնի ու շրջակայ գաւառների հայ ազգաբնակչութեան վիճակը էական փոփոխ... թիւն չկրեց XVI-XVII դդ.: Թուրք զաւթիչները կայսրութեան ծայրագաւառներում քրիստ... նէութեան դէմ անսանձ հալածանքի ու բռնի մահմեդականացման իրենց քաղաքականութեա... իրագործումն սկսեցին XVIII դ. սկզբներից:

II. Համշէնի եւ մերձակայ հայաբնակ շրջանների բռնի մահմեդականացման հե... առնչուող սրտաճմլիկ դէպքերը, անշուշտ, գրանցուել են ժամանակակից ու ականատես յիշ... տակագիրների կողմից: Սակայն այդ աղբիւրները, ըստ մեծի մասի, անդարձ կորած են, եւ ու... սումնասիրողները անդրադառնալով այդ խնդրին, կամայ թէ ակամայ, հետեւել են ազգ... գրագէտ-բանահաւաք Ս. Հայկունուն, որը աւանդութիւնների հիման վրայ զարմանալի ման... րամասնութիւններով շարադրել է Կարա-դերէի հայութեան մահմեդականացման առասպել... խառն պատմութիւնը, որ նրա կարծիքով տեղի է ունեցել 1708-1710 թթ.[2]: Ըստ այդմ՝ բու... Համշէնի հաւատափոխութիւնը, կատարուած լինելով տասնամեակներ առաջ, վերաբերելու (... XVII դ.:

Տարակոյս չունենալով, որ ժողովրդական աւանդութիւնները հիւսուած են լինում պատ... մական անցուդարձերի իրական յենքի վրայ՝ փորձելու ենք, այնուամենայնիւ, աւելի՛ ստոյ... տուեալներ որոնել:

Թուրք զաւթիչների կողմից համշէնցիներին մահմեդականութիւն պարտադրելու փորձե... րը մասն են կազմում Օսմանեան բովանդակ կայսրութեան եւ մանաւանդ նրա հիւսիսարեւ... մտեան շրջանների բուն բնակչութեանը՝ քրիստոնեայ յոյներին, հայերին, վրացիներին ու լա... զերին կրօնափոխ անելու ճանապարհով, ռազմավարական ու տնտեսական մեծ նշանակութիւ... ունեցող այդ երկրամասը կայսրութեան հետ ամուր շաղկապելու ծրագրի, որը բռւն թափով... ու բռնի միջոցներով գործադրել սկսեցին XVII դ. վերջերից:

Համշինահայութեան վիճակի լաւագոյն ուսումնասիրող յանիրաւի մոռացուած Պ. Թու... մաեանցը 1870 թ. կազմած իր տեղագրութեան մէջ յայտնում է, որ Կարա-դերէի հայերը գաղ... թել են Սպերից, Բաբերդից եւ, մանաւանդ, Համշէնից՝ «կրօնափոխութենէ ազատելու նպա... տակով, ասկէ գրեթէ 170 կամ 180 տարի առաջ», այսինքն՝ 1690-1700-ական թթ.: «Բաւական... տարիներ ետքը,- շարունակում է նա,- երբ Համշէն գաւառը մնացող ժողովուրդը ամբողջը... տաճկացուցին եւ հալածանքը Գարա-տերէի վրայ դարձաւ՝ հազարաւոր ընտանիք ամէն բանէ...

1 Մ. Բժշկեան, նշ. աշխ., էջ 49

2 Բռնի հաւատափոխութեան առասպելախառն այս պատմութիւնը Ս. Հայկունին հրապարակել է «Կորած եւ մոռացուած հայեր. Սեւ գետացիք» խորագրով իր յօդուածաշարքում («Արարատ», 1895, էջ 239-243, 293-297 եւ յատկապէս՝ էջ 239, 240-242): Այնուհետեւ տպագրուել է «Հայոց նոր վկաներ» ժողովածուի մէջ՝ «Տէր Կարապետ քահանայ Թորոսլեցի» վերնագրով (Վաղարշապատ, 1903, էջ 702-709), ինչպէս նաեւ վերապատմուած է Հ. Աճառեանի «Քննութիւն Համշէնի բարբառի» աշխատութեան մէջ (էջ 5-8): Հ. Աճառեանը այդ դէպքերը կատարուած է համարում 1715 թ.:

զրկուած փախան Տրապիզոնի, Օրտուի, Յունիայի, Չարշամպայի, Պաֆուայի, Սինոպի եւ մինչեւ Ատապազարի գիւղերն ու քաղաքները»[1]:

Պարզ է ուրեմն, որ Համշէնի բուն բնակչութեան «տաճկացումը» (մահմեդականութիւն ընդունելը) տեղի է ունեցել 1690-1700-ական թթ. «բաւական տարիներ ետքը», բայց աւելի վաղ, քան Կարա-դերէի կամ Սիւրմենէի հայութեան «տաճկացումը»: Պ. Թումաեանցը Ուզի Սամիրա գիւղում անձամբ տեսել է մի Շարակնոց, որի յիշատակարանում գրանցուած է եղել Կարա-դերէի հայութեան բռնի մահմեդականացման պատմութիւնը: Ցաւօք, այդ յիշատակարանը լրիւ մէջ չի բերուած Թումաեանցի յօդուածում. նրա բովանդակութիւնը վերապատմուած է այսպէս. «Գարա-տերէի ամբողջ տաճկանալը եւ վերջին մաս մը մնացողներու սպաննուելն եւ փախչիլը՝ Հայոց ՌՄԻԹ (1780) թուին պատահեր է. սակայն հալածումը շատ առաջ սկսեր եւ ոտք-ոտք առաջացեր ու տաճկացած հայոց ձեռքով այլ շատ անօրէնութիւններ ու արիւնհեղութիւններ ըլլալէ յետոյ՝ վերոյիշեալ թուականին Գարա-տէրէի վերին ծայրը Խաղող գիւղը վերջացրել է, ուսկից փախեր է գիշերային եւ այլ յիշատակարանը գրող տէր Կարապետ անուն առաքինի քահանան»[2]:

Մեծ հաւանականութեամբ այս յիշատակարանի մէջ թռուցիկ գրանցուած դէպքերն են հէնց հիմք ծառայել Թորոսլեցի տէր Կարապետ քահանայի վկայաբանութեան, որ բերնէբերան պատմուելով զունազարդուել է այդ ժանրին յատուկ վիպական տարրերով, այդպէս էլ գրանցուել է Ս. Հայկունու կողմից ու դրուել գիտական շրջանառութեան մէջ: Ճիշտ կլինի, ուստի, մի կողմ դնել այդ վկայաբանութիւնը եւ առաջնորդուել յիշատակարանի տուեալներով, ըստ որի Կարա-դերէի հայութեան մահմեդականացումը, արիւնահեղ պայքարով ու բռնութիւններով, իրագործուեց 1780 թ.:

Մերձաւորապէս նոյն ժամանակաշրջանում է կատարուել նաեւ Ճորոխի հովտում եւ նրանից հարաւ բնակութիւն հաստատած համշէնցիների («Խոպէ Հեմշին» կոչուածների) մահմեդականացումը: 1887 թ. հրապարակած իր մի յօդուածում խօսելով սրանց եւ Օլթիի շրջանի մահմեդական հայերի մասին՝ Գ. Արծրունին յայտնում է, որ նրանք «60-100 տարի սրանից առաջ», այսինքն՝ շուրջ 1780-1820-ական թթ. են ընդունել իսլամը[3]:

Ահա ժամանակագրական վերոյիշեալ տուեալները, որքան էլ թէկական լինեն, հնարաւորութիւն են ընձեռում եզրակացնելու, որ համշինահայութիւնը բուն Համշէնում, Կարա-դերէի շրջանում եւ Ճորոխի հովտում մահմեդականութիւն է ընդունել տասնամեակներ տեւած յամառ պայքարից յետոյ, որ սկսուելով XVII դ. վերջերից՝ աւարտուել է, հիմնականում, 1780-ական թթ.[4]:

1 Պ. Թումաեանցի «Պոնտոսի հայերը» անստորագիր յօդուածը տպագրուած է «Լումայի» 1899 թ. Բ գրքի մէջ (էջ 175):

2 «Լումայ», 1899, գիրք Բ, էջ 176-177

3 «Մշակ», 1887, N 5

4 Աւելորդ չէ այստեղ մէջբերել Համշէնից ոչ շատ հեռու գտնուող Բերդագրակ (Կիսկիմ) գաւառի հայերի մահմեդականացման մասին Կ. Կոխի հաղորդած տուեալները: Բաղդատելով դրանք համշինահայութեան մասին մեր գիտցածի հետ՝ գալիս ենք այն համոզման, որ ամէնուրեք թուրք իշխանութիւնները նոյն քաղաքականութեամբ էին առաջնորդւում: Այս գաւառի մահմեդականները,- ասում է Կոխը,- XVIII դ. վերջերին դեռ քրիստոնեայ էին, եւ գաւառի կիսանկախ իշխանը ընկել էր հաւատի համար մղած կռուի մէջ: Սրա որդին մանուկ հասակում տարուել էր Կ. Պոլիս, կրթուել որպէս մահմեդական ու դարձուել իր հայրենի իշխանութեան: Ժողովրդի մեծ մասի մահմեդական դառնալու սկզբնաւորութիւնը, ինչպէս ամէնուրեք Մահմեդի վարդապետութեան տարածումը, այստեղ եւս

Այս եզրակացութեան օգտին է խօսում եւ այն փաստը, որ XIX դ. 10-ական թթ. այդ վայրերում շրջագայած Մ. Բժշկեանը, «Պատմութիւն Պոնտոսի» նշանաւոր աշխատութեան մէջ գրում է, թէ «Համշինցիք կէս-կէս (այսինքն՝ կէս քրիստոնեայ, կէս մահմեդական - Լ. Խ.) են, շատը դարձած են, բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն, ժամոց եւ ողորմութիւնը պակաս չեն ընկեր. գրեթէ ամէնքը Վարդավառին եւ Վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն եւ մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար»: Նոյնը նաեւ Կարա-դերէի (Սիւրմենէի) հայութեան մասին. «Կան ծերեր, որ գիտեն քրիստոնէութիւն, կը պատուին խաչը եւ ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն»[1]:

Այսպիսի «կէս-կէս» վիճակի համար շատ բնորոշ են նաեւ մահմեդականի ու քրիստոնէի կրկնակ անունները՝ Ալի-Սարգիս Կարապետ-օղլի, Մահմուդ Յովհաննէս-օղլի, որ վկայուած են այդ հայերի միջավայրում[2]:

Բնականաբար հին սերնդի հետ վերանալու էին քրիստոնէական ծէսերն ու սովորոյթները, մանաւանդ որ դրանց դէմ ծրագրուած պայքար էին մղում պարտադրուող կրօնի պաշտօնեաները: XIX դ. վերջին տասնամեակներին արդէն այդ շրջաններում մահմեդականութիւնն ըստ ամենայնի յաղթանակել էր: Պ. Թումաեանցն, օրինակ, վկայում է, որ համշինցիները «քրիստոնէութեան ամէն նշան կորուսած են» եւ այդ մեծ գաւառում միայն նշանաւոր Եղնովիտ (Էլեհովիտ) գիւղում է մնացել քրիստոնէութիւնը պահած քսան ընտանիք[3]:

Միջին դարերում գրեթէ ամէնուրեք, մանաւանդ Օսմանեան կայսրութեան նման թէոկրատիկ-բռնատիրական մի երկրում, էթնիկական որեւէ խմբի ազգային պատկանելութիւնը որոշելու կարեւորագոյն յատկանիշը համարւում էր նրա դաւանած կրօնը: Իրենց «մուսուլման» եւ «օսմանլի» էին կոչում յոյն, լազ, վրացի, հայ եւ այլ ազգութիւնների մահմեդականութիւն ընդունած ներկայացուցիչները: Սակայն համշէնահայերը, մահմեդականութիւն ընդունելուց յետոյ էլ, պահպանեցին, եւ ըստ մեծի մասի շարունակում են պահպանել, իրենց լեզուն՝ համշինահայ գաւառաբարբառը, իրենց բնակավայրերից շատերի, գետերի, ձորերի ու լեռների հնամենի հայկական անունները, իրենց աւանդութիւնները, երգերը, բառ ու բանը:

Տեղեկութիւն կայ, որ Անատոլիայի շատ շրջաններում, փաշաների կարգադրութեամբ, կտրել են հայերէն խօսող հպատակների լեզուն՝ պարտադրելով թուրքերէնը: Ուծացում պարտադրող բարբարոս այս միջոցը կիրառուե՞լ է արդեօք նաեւ համշինահայերի միջավայրում, չգիտենք: Բայց պէտք չէ տարակուսել, որ թուրք կրօնական ու պետական պաշտօնեաները այստեղ եւս քաջ գիտակցել են, որ մայրենի լեզուն՝ հայերէնը պահող նորաթուխ «օսմանցիները» վաղ թէ ուշ կարող են դառնալ իրենց պապերի հաւատքին եւ մայր ժողովրդի գիրկը:

կատարուել է կոտորածով (**K. Koch**, նշ. աշխ., էջ 75):

1 **Մ. Բժշկեան**, նշ. աշխ., էջ 92-93, 96-97

2 «Մշակ», 1887, N 13: Խ. Լինչը իր «Հայաստան» աշխատութեան մէջ ուշագրաւ տուեալներ է հաղորդում Տրապիզոնից ոչ հեռու գտնուող մի գիւղի բնակիչների մասին, որոնք մահմեդականութիւն ընդունած յոյներ էին, բայց դեռ պահպանել էին քրիստոնէական շատ սովորութիւններ. «Նրանք,- գրում է Լինչը,- կնքում են իրենց զաւակներին, բայց մոլլան նոյնպէս աղօթքներ է կարդում նրանց վրայ, եւ ամէն ոք կրում է ինչպէս քրիստոնէական, նոյնպէս էլ մահմեդական անուն, ինչպէս Ահմեդ-Ապոստոլ» (**Х. Ф. Б. Линч**, Армения, путевые очерки и этюды, II, Тифлис, 1910, с. 302):

3 «Լումայ», 1899, գիրք Բ, էջ 156: Այս Եղնովիտ գիւղը ամենից երկար դիմադրեց մահմեդականներին. 1806 թ. միայն գիւղի բնակչութեան կէսը դարձաւ մուսուլման (տե՛ս **Հ. Տաշեան**, նշ. աշխ., էջ 31):

1840-ական թթ.[1] իսլամ ընդունած մի քանի ընտանիք վերստին քրիստոնեայ դարձան. այս բանի առաջն առնելու համար մոլլաները ճնշումներ գործադրեցին եւ փորձեցին արգելել հայերէնը՝ յայտարարելով, որ «մուսուլմանի համար 7 հայերէն բառը մէկ հայհոյանք է»: Կանայք, որ թուրքերէն չգիտէին, մի քանի գիւղերից դագանակներով քշեցին մոլլաներին, իսկ այր մարդիկ, երկիւղ կրելով կոտորածից, ժողով անելով պայման կապեցին 5 ոչխար տուգանք տալ իրենց աղային՝ ամէն անգամ հայերէն խօսելու համար[2]: Սակայն հաշուեյարդարով ու արգելքներով հնարաւոր չեղաւ փոխել համշինահայերի ընտանեկան լեզուն. եւ այսօր էլ նրանք պահպանել են իրենց բարբառը: Մի քանի տարի սրանից առաջ, 1962 թ., եւրոպացի հայագէտ Գ. Դյումեզիլը Ստամբուլում գրանցել էր Համշէնի բարբառով 3 պատմուածք եւ ուսումնասիրել այդ բարբառը՝ հարցափորձ անելով համշին մի ուսանողի (Ismet Akbiyik)[3]: Սրա պատմածները անառակ իրենց բովանդակութեամբ արժանի չէին գրի առնուելու, բայց նրանք խօսուն փաստեր են այն իրողութեան, որ այսօր իսկ կենսունակ է համշինահայ բարբառը շուրջ 2 դար առաջ հաւատափոխ եղած համշէնցիների նոր սերնդի շրթերին:

Մահմեդական համշէնցիները, ըստ հնարաւորի, պահպանել են նաեւ ընտանեկան իրենց կենցաղն ու բնաւորութիւնը. ականատեսների վկայութեամբ նրանք դրականօրէն տարբերւում են իրենց հարեւանութեամբ ապրող մահմեդական յոյներից, լազերից ու վրացիներից. քաջարի են, վեհանձն, անխարդախ ու պարզասիրտ, չեն խնամիանում ուրիշների հետ եւ հարեւաններից տարանջատւում են իրենց «հեմշին» անուանումով, որ մատնանշում է ոչ այնքան իրենց հայրենի երկրամասը, որքան հայկական ծագումը:

Ստոյգ տուեալներ չունենք հեմշինների թիւը որոշելու: Անցեալ դարավերջին, մերձաւոր հաշիւներով, նրանք 16 հազար էին. «Համշէնի եւ Սեւ գետ (Կարա-դերէ) գաւառաց մէջ,- գրում էր Ս. Հայկունին,- կան 16000-ի չափ հայեր, որոնք մտած որջացած են այնպիսի վայրեր, գաւառակներ, որոնց յարաբերութիւնը արտաքին գաւառներու հետ խզուած էր երկրի դրից բնական պատճառներով»[4]: Հ. Աճառեանը յայտնում է, որ ապրիլեան Եղեռնից առաջ Թիւրքիայում ապրում էին 20 հազար քրիստոնեայ համշէնցիներ. «Նոյնքան կամ աւելի կարելի է դնել մահմեդական հայերին»[5],- ենթադրում է նա: Այսօր, իհարկէ, բնական աճով նրանք բազմացած պէտք է լինեն եւ ստուգման կարօտ տուեալներով 70 հազարից աւելի են:

Հեմշինները ապրում են 2 խոշոր զանգուածով. բուն համշէնցիները, որոնք յայտնի են «բաշ հեմշին» անունով, հաստատուած են Ֆըրթընա գետի ու նրա վտակների ափերին ու Կարա-դերէ գետի հովտում[6]: «Խոպէ հեմշին» կոչուածները բնակւում են Խոպէի շրջանում,

1 Պ. Թումաեանցի պատմածով՝ 1858 թ. («12 տարիէ ի վեր»,- գրում է նա 1870 թ.):

2 «Արարատ», 1895, էջ 297. «Լումայ», 1899, գիրք Բ, էջ 175

3 **G. Dumezil**, Trois récits dans le purler des arméniens musulmans de Hemsin ("Revue des Etudes Arméniensnes", Nouvelle série, t. IV, 1967, p. 19-35)

4 «Արարատ», 1895, էջ 239

5 **Հ. Աճառեան**, նշ. աշխ. էջ 10

6 Կարա-դերէի կամ Սիւրմենէի շրջանը այսպէս է սահմանազատել Հ. Աճառեանը. «Գովաթայի արեւելեան եւ Համշէնի արեւմտեան կողմը՝ Գայլ գետից սկսած մինչեւ Մահոնա գետը, որ 5 ժամ կտեւի, գտնւում է Սիւրմենէ կոչուած ծովեզերեայ անտառախիտ գաւառը՝ սահմանակից Օֆի: Այս գաւառը Սեւ ծովի եզերքից բռնում է մինչեւ Բաբերդի Թորոսանց լեռը եւ 16 ժամ տարածութիւն ունի: Գաւառն ունի երեք գետ՝ Ցամպոլի, Կարա-տերէ եւ Քիւչուք-տերէ» (**Հ. Աճառեան**, էջ 5-6):

որը համանուն գաւառի ծովափնեայ վարչական կենտրոնն է[1]: Հեմշինցիների գիւղերն այստեղ հիմնականում ընկած են լազերով բնակեցուած ծովափնեայ շերտից հարաւ, սակայն լազերին պատկանող մի շարք բնակավայրերում կամ նրանց հարեւանութեամբ եւս վաղուց ի վեր ինքնամփոփ կենցաղով բնակւում են հեմշիններ[2]:

12. Այժմ մի քանի խօսք իրենց պատմական բնօրրանից դուրս եկած ու Սեւ ծովի թուրքական եւ կովկասեան ափերին բնակութիւն հաստատած համշինահայերի մասին:

Բուն Համշէնի բնական ու աշխարհագրական պայմանները անյաղթահարելի դժուարութիւններ էին յարուցում անասնապահութեան ու երկրագործութեան յետագայ ընդարձակման ու զարգացման համար: Բնակչութեան աճը ստիպում էր համշինահայերին տաժանակիր աշխատանքով մշակելի փոքրիկ հողամասեր կորզել զառիթափ ու խաւարչուտ անտառներից, կամ էլ ապրուստի միջոցներ որոնել հայրենի երկրից դուրս՝ նոր բնակավայրեր հիմնելով հարեւան շրջաններում ու արտագաղթելով հեռաւոր երկրներ:

Կարա-դերէի եւ Խոպէի շրջաններում հաստատուած համշէնցիների մասին նախորդ հատուածում արդէն առիթ ունեցանք խօսելու: Բուն Համշէնին արեւելքից ու արեւմուտքից հարեւան, բնական ու կլիմայական պայմաններով նոյն պատկերն ունեցող այդ շրջանները համշէնցիների ուշադրութիւնը գրաւել են վաղ ժամանակներից, եւ նրանք, քայլ առ քայլ առաջ շարժուելով, ներթափանցել ու հաստատուել են այդ վայրերում, բնականաբար, բախուելով տեղացի հին բնակչութեան՝ յոյների ու լազերի հետ: Նրանց միջեւ տեղի ունեցած պատերազմների մասին եղել են աւանդութիւններ, որոնք, դժբախտաբար, գրի չեն առնուել[3]:

Ներթափանցման այդ պրոցեսը մեծ ծաւալ է ընդունել յատկապէս XVIII դ. սկզբներից, երբ բուն Համշէնում սկսուել են բռնադատութիւններ իսլամը տարածելու համար: Իրենց հաւատքին հաւատարիմ մնացած համշինահայերը կազմակերպուած խմբերով գաղթել են Կարա-դերէ, իսկ մի քանի տասնամեակ յետոյ, երբ հաւատափոխութեան է հարկադրուել նաեւ Կարա-դերէի բնակչութիւնը, քաջաբար մարտնչող հազարաւոր հայեր լքել են իրենց այդ նոր հանգրուանը եւս եւ ազատուել հետապնդումից՝ փախչելով ու հաստատուելով Սեւ ծովի հարաւային ափերին՝ Սինոպից մինչեւ Բաթում: Այս ողջ տարածքի վրայ համշինահայ բնակավայրեր կային, անշուշտ, մինչեւ այդ տխուր իրադարձութիւնները, բայց նոր գաղթականութեամբ հայ տարրը ստուարանում եւ աւելի կենսունակ է դառնում:

Հ. Աճառեանը «Քննութիւն Համշէնի բարբառի» մեծարժէք ուսումնասիրութեան մէջ վիճակագրական տեղեկութիւններ է հաղորդում Տրապիզոնից մինչեւ Սինոպ ընկած շրջանների հայ բնակչութեան վերաբերեալ, որոնց գերակշիռ մասը եղել է համշէնցի: Ստորեւ, առ ի չգոյէ աւելի ստոյգ տուեալների, մէջ ենք բերում այդ վիճակագրութիւնը, որ վերաբերում է առաջին աշխարհամարտին նախորդող ժամանակաշրջանին:

1 Տե՛ս "БСЭ", հտ. 46, էջ 118, "Хемшины" յօդուածը: Հեմշինաբնակ 2 գիւղ էլ եղել է Ճորոխի աջ ափին՝ Բաթումի շրջանում: Անհատի պաշտամունքի տարիներին այդ գիւղերի բնակչութիւնը գաղթեցուել է Ղազախստան: Նրանք գիտակցում են իրենց հայ ծագումը եւ ցանկութիւն ունեն, հազարամեայ դեգերումներից յետոյ, վերադառնալու իրենց բնօրրանը:

2 910-ական թթ. տուեալներով լազաբնակ Աթինայի կազայի 69 գիւղերից 5-ը հեմշինական գիւղեր էին (Խաչափիթ, Բոգինա, Խոշնիշին, Մելեսկուր, մասամբ՝ Սալին-քեոյ), իսկ Խոպէի կազայի ծովամերձ շրջանում հեմշինական 6 գիւղ կար (Ճուքուլիթի, Մուփա, Պաի, Ջուրպիշի կամ Ջուրպիշի, Չաուշլի եւ մասամբ՝ Պիցխելա Սուֆլա): Այս մասին տե՛ս Н. Я. Марр, նշ. աշխ., էջ 609-614:

3 «Արարատ», 1895, էջ 296

«Վերջին կոտորածներից առաջ 1) Տրապիզոն քաղաքում կար 800 տուն հայ (խօսքը միայն քրիստոնեայ հայերի մասին է - Լ. Խ.): 2) Գաւաթա կամ Յոմուրա գաւառը, որ տարածւում էր Տեյիրմէն-տերէից մինչեւ Յամպոլի գետը, ունէր 2340 շունչ հայ. հայոց գիւղերն էին՝ Զեֆանոս, Սամարուքսա, Կուխլա, Շանա (Ծինկլա, Կիւշանա), Ճոշարա, Կալաֆկա, Ուզ, Ապիոն, Կաոմիլա: 3) Սիւրմենէ... ունէր 100 տուն հայ (քրիստոնեայ). հայոց գիւղերն էին՝ Փերուանա, Գատրա, Էլեմոնաս, Վահանցիք, Մախթելա, Քութունոց, Քինոսցոց, Սարէս, Ալչաք-տերէ, Ժուժք, Փիրկի եւ Մանդրալ: 4) Աղճաբատ՝ Տրապիզոնից արեւմուտք, ունէր 4000 շունչ հայ. գլխաւոր կենտրոնն է Փլաթանա. հայոց գիւղերն էին՝ Սաթարխ, Մալա, Անիֆա, Վերանա, Էլեու, Ֆոչ, Ղալինոս: 5) Տրիպոլի կամ Թերեպոլու, Տրապիզոնից արեւմուտք՝ ընդարձակ նաւահանգիստ, ունէր 40 տուն հայ: 6) Կիրասոն, Տրիպոլիից արեւմուտք՝ գեղեցիկ նաւահանգիստ. հիմնուել է 1810 թ.՝ Աւետիք հայ իշխանի ձեռքով. ունէր 400 հայ բնակիչ. շրջակայ հայաբնակ գիւղերն էին՝ Զամալ, Մուսագըրգ, Քելթեփէ, Խոճօղլու, Սըլլար, Խոչկըլը, Պազարսու, Գուշճի, Էօրէն, Ալաճատամ, Սայաճա, Գըմա, Պուլթան, Գատըր, Ջաթար Ֆոտանա եւ Թեփեքյոյ. գիւղացոց մեծ մասը Համշէնից էր գաղթած հին կոտորածների ժամանակ: 7) Սամսոն, Սեւ ծովի վրայ, Օրտուից աւելի արեւմուտք, նշանաւոր նաւահանգիստ. հարեւան Սինոպ նաւահանգստի հետ կազմում են Ճանիկի վիճակի երկու գլխաւոր քաղաքները: Սամսոնի եւ Սինոպի հայերը գաղթած են ներքին գաւառներից, իսկ գիւղերը Համշէնի հին կոտորածից փախած հայեր են: Ամբողջ Ճանիկ վիճակի համշէնցի հայերը 2000 տուն են, որոնք բնակւում են 30 գիւղերում» (թուարկւում են այդ գիւղերը՝ Չարշամպայի շրջանում 17 գիւղ, Յունիէի շրջանում՝ 8, Թերմէի՝ 3 եւ Ֆացայի՝ 2)[1]:

Սեւ ծովի հարաւի ափամերձ այս շրջաններից բացի, համշինահայերը գաղթօջախներ հիմնեցին նաեւ իրենց հայրենիքից շատ հեռու, օրինակ, Նիկոմեդիայի (Իզմիտ) շրջանի Մանիշակ գիւղը[2]:

Համշինահայութեան այս մեծ գաղթականութիւնը զոհ գնաց վայրագ թուրքերի կազմակերպած ազգասպանութեանը՝ 1915 եւ յետագայ թուականներին:

Պէտք է յուսալ, սակայն, որ նրանց մի մասը, հետեւելով բուն Համշէնի եւ Կարա-դերէի իրենց ազգակիցների օրինակին, մեծ սպանդի օրերին հաւատափոխութեամբ փրկեց իր կեանքը եւ այսօր էլ շարունակում է ապրել տեղ-տեղ, ընտանեկան յարկի տակ՝ պահպանելով իր գաւառաբարբառը եւ ազգային վարք ու բարքի որոշ յիշատակներ:

13. Համշինահայութեան համար արտագաղթի կարեւորագոյն վայրեր հանդիսացան Ղրիմն ու Սեւ ծովի կովկասեան ափերը:

Ղրիմի մասին քիչ բան կայ ասելու: Եւրոպական աղբիւրներում Ծովային Հայաստան յորջորջուած այդ թերակղզին տնտեսական սերտ կապերի մէջ է եղել Սեւ ծովի հարաւի ափամերձ շրջանների եւ, ընդհանրապէս, Փոքր Ասիայի հետ՝ հնագոյն ժամանակներից:

Դեռեւս Կոստանդին Ծիրանածին կայսրը գիտել է, որ խերսոնացիք (այսինքն՝ հարաւային Ղրիմի բնակիչները) անկարող են ապրել «եթէ չճանապարհորդեն Ռոմանիա եւ չվաճա-

1 Հ. Աճառեան, նշ. աշխ., էջ 9-10

2 Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն («Էմինեան ազգ. ժողովածու», հտ. Ը, էջ 184)

ուն պէչենեգներից ձեռք բերած կաշիներն ու մոմը», «եթէ Ամիսոսից եւ Պափլագոնիայից, Բուկելարներից եւ Արմենիակոնից անասուններ չստանան»[1]:

Սերտ էին յատկապէս Տրապիզոնի եւ Ղրիմի տնտեսական կապերը. XIII դ. Թերակղզու հարաւային շրջանները ենթակայ էին Տրապիզոնի կայսրութեանը՝ քաղաքական մի կազմակերպութիւն, որի կենսունակութիւնը խարսխուած էր յոյն, հայ եւ վրացի աւատատէրերի համագործակցութեան վրայ: Ղրիմի տարացեղ բնակչութեան կազմում, վաղ ժամանակներից սկսած, հայ տարրը զգալի դեր է կատարել. սակայն Թերակղզին, մանաւանդ նրա վաճառաշահ քաղաքները, հայ բնակչութեան նորանոր ու բազմամարդ խմբեր ընդունեցին ու հայաշատ բնակավայրեր դարձան յատկապէս XIV դ. 30-ական թթ.:

Ղրիմահայ գաղութի ծագման մասին աւանդութիւններ պարունակող XVII դ. ծանօթ յիշատակարանը, ուշագրաւ լինելով հանդերձ, մեծ վստահութիւն չի ներշնչում: Բնաւ չմերժելով Անի մայրաքաղաքից հայ բնակչութեան բազմամարդ մի խմբի Ղրիմ (մասնաւորապէս՝ Թէոդոսիա) գաղթած լինելու հնարաւորութիւնը՝ համոզուած ենք, որ ղրիմահայութեան հիմնական զանգուածը բաղկացած է եղել Տրապիզոնի, Համշէնի, Բաբերդի, Սպերի եւ ընդհանրապէս Պատմական Հայաստանի հիւսիսարեւմտեան շրջաններից արտագաղթած ընտանիքներից: Յատուկ քննութեան արժանի այս խնդրի մանրամասների մէջ չմտնելով՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ուշագրաւ եւ ստոյգ տուեալներ կան Բաբերդից, Երզնկայից ու Բարձր Հայքի այլ շրջաններից Ղրիմ գաղթած հայերի եւ այդ երկրամասերի միջեւ մշակութային ու տնտեսական ամենասերտ կապերի գոյութեան մասին:

Վստահ կարելի է յայտարարել, որ XIV դ., գուցէ եւ աւելի վաղ ժամանակներից սկսած, Ղրիմի Թերակղզին ծանօթ ու սիրուած է եղել նաեւ համշինահայութեան համար: Մեր այս ենթադրութիւնը կարող էր հաւաստել նաեւ հայ բարբառագիտութեան ընձեռած տուեալներով, եթէ մենք ծանօթ լինէինք ղրիմահայութեան հին բարբառին, որը անդարձ կորած է գիտութեան համար, քանի որ հին ղրիմահայերը զանգուածաբար ղփչաղախօս էին դարձել տակաւին XVI-XVI դդ.: Ինչ-որ չափով, սակայն, այդ բարբառի հետքերը պահպանուած պէտք է լինեն Նոր-Նախիջեւանի հայոց բարբառի մէջ, որ զարմանալի ընդհանրութիւն ունի համշինահայ բարբառի հետ՝ բաղաձայնային իր համակարգով եւ, մանաւանդ, «ր»-ի տարօրինակ հնչիւնափոխութեամբ: Միայն այդ երկու գաւառաբարբառներով «ր»-ն լեզուատամնայիններից առաջ դառնում է «շ», ինչպէս, օրինակ, մաշդ//մաշթ (մարդ), եշթալ (երթալ), մօշթի (մորթ) եւ այլն[2]:

Ղրիմի վրայով համշինահայերը միջին դարերում պէտք է կապուած լինէին նաեւ Ուկրաինայի, մերձբալթեան երկրների ու Ռուսաստանի հետ: Ակադ. Ն. Մառը Լազիստանում կատարած գիտական իր ճամփորդութեան ընթացքում հանդիպել ու զրուցել է մի համշինի հետ, որ Ռեւել (Տալլին) քաղաքում փուռ է ունեցել եւ մէկ ուրիշի, որ 20 տարի ապրել ու աշխատել է Կիեւում: Մեծ հաւանականութեամբ այդ երթեւեկը համշինահայութեան համար աւանդական էր ու խարսխուած դարաւոր փորձի վրայ:

14. 1860-ական թթ. արդէն, բայց աւելի մեծ ծաւալով 1877-1878 թթ. ռուս-թուրքական

1 Կ. Ծիրանածին, Կայսրութեան կառավարման մասին, գլ. 53 (հատուածի յունարէնից կատարուած թարգմանութիւնը շնորհակալութեամբ ստացել ենք բիւզանդագէտ Հ. Բարթիկեանից):

2 Հ. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն, էջ 186, 264 եւ այլն

պատերազմի յաղթանակից յետոյ, երբ Սեւ ծովի կովկասեան ափերն անցան Ռուսական կայսրութեանը, համշինահայերը սկսեցին գաղթել Աբխազիա ու հաստատուել Սուխում, Սոչի, Մացեստա, Լոո, Մծարա, Ծեբելդա, Ադլեր, Շափշուկա, Նոր-Աֆոն, Գագրի եւ այլ բնակավայրերում: Յետագայում ծովեզերքից համշէնցիներն առաջացան դէպի Կուբան ու մի շարք գիւղեր հիմնեցին Մայկոպի ու Եկատերինոդարի (այժմ Կրասնոդար) շրջակայքում: Աբխազիայում հաստատուած համշէնցիների մասին ազգագրական ուշագրաւ ուսումնասիրութեան հեղինակ Հ. Մուրադեանը XX դ. շեմին (համշինահայերի ներգաղթից ընդամէնը երկու տասնամեակ յետոյ) այսպէս է բնորոշում նրանց դերը այդ երկրամասի տնտեսական զարգացման գործում. «Կարելի է ասել, թէ կովկասեան ափերի ծաղկելն ու առաջ գնալը սկսւում է հայ գաղթականների գալու օրից: Այդ հաստատապէս նկատւում է այսօր Սուխումի շրջանում, որ ութսունական թուերի սկզբներին, երբ դեռ նոր էին սկսել հայերը գաղթել այդ կողմերը, մի աննշան, յետ ընկած ամայի ու աւերակ տեղ էր. այնինչ այսօր կովկասեան ափերի ամենածաղկած տեղերիցն է, իսկ թութունի արդիւնաբերութիւնով՝ առաջինն է ամբողջ Ռուսիայում...

Հայերի գալուց յետոյ ամէն տեղ՝ կովկասեան ափերում, շարժում, կենդանութիւն է ընկնում: Հետզհետէ առաջուան դարաւոր ճահիճներն ու անտառները մաքրելով՝ նոր-նոր սիրուն արտեր ու պլանտացիաներ են բացւում. հարիւրաւոր դեսյատիններով նոր վարելահողեր են աւելանում այդ վայրի ու խիտ անտառներով ծածկուած երկրի մէջ: Եւ ամենամեծ մասով այդ բոլոր արտերը թուրքահայերի ձեռքովն են փորուել ու բացուել...»[1]:

Աբխազիայում հաստատուած համշէնցիների տնտեսական շինարար գործունէութեան մասին այս անկեղծ ու հիացական տողերը գրանցուել են շուրջ 7 տասնամեակ առաջ, երբ նրանց թիւը, մօտաւոր հաշիւներով չէր անցնում 15 հազարից: Առաջին աշխարհամարտի դժնդակ տարիներին եւ դրան յաջորդող շրջանում հիւրընկալ այդ ափերում մշտական բնակութիւն հաստատեցին թուրքական սրից փրկուած համշինահայութեան նոր հատուածներ, որոնք միաւորելով իրենց ջանքերը արդէն տուն ու տեղ ստեղծած իրենց հայրենակիցների ջանքերին՝ նորանոր յաջողութիւններ գրանցեցին երկրամասի տնտեսական կեանքի պատմութեան էջերում:

1944 թ. համշինահայութեան այս հատուածի թիւը շուրջ 60 հազար էր համարւում, իսկ այսօր անտարակոյս, անցել է 100 հազարից:

Աբխազիայում եւ Կրասնոդարի երկրամասում բնակութիւն հաստատած հայերն ունեն իրենց դպրոցներն ու մշակութային հաստատութիւնները եւ սերտօրէն շաղկապուած են մայր հայրենիքի հետ: Համշինահայութեան այս հանգրուանի պատմութեան հարցերը, սակայն, արժանի լինելով յատուկ ուսումնասիրութեան, դուրս են մնում մեր յօդուածի ծրագրից:

1 Հ. Մուրադեան, Համշէնցի հայեր (արտատպութիւն «Ազգագրական հանդէսից»), Թիֆլիս, 1901, էջ 3-4

ՀԱՅԵՐԸ ՀԻՆ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ԵՒ ՄՈՍԿՈՒԱ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱՅ*

Մոսկուայի մասին հնագոյն գրաւոր տեղեկութիւնը պահպանուել է 1147 թ., սակայն հնագիտական նիւթերի հիման վրայ ոմանք յանգել են այն եզրակացութեան, որ տակաւին X-XI դդ. հին Մոսկուայի տարածքի վրայ գոյութիւն է ունեցել առեւտրա-արհեստագործական մի բնակավայր, որը տնտեսական սերտ կապերի մէջ է եղել եւրոպական երկրների (յատկապէս՝ Գերմանիայի), Միջին Ասիայի եւ Հայաստանի հետ[1]:

Մոսկուայի բարգաւաճումը կատարւում է շատ արագ: Շուտով այն դառնում է Վլադիմիր-Սուզդալեան Ռուսիայի նշանաւոր քաղաքներից մէկը: XIII դ. սկզբներին ստեղծւում է Մոսկովեան ինքնուրոյն իշխանութիւնը, որը հմտօրէն հաշուի առնելով մոնղոլական գերիշխանութեան տակ ստեղծուած քաղաքական իրավիճակը եւ օգտագործելով կենտրոնական Ռուսաստանի միմեանց դէմ մաքառող ռուսական իշխանութիւնների հակամարտութիւնները՝ ընդարձակում է իր սահմանները հարեւանների հաշուին, եւ XIV դ. կէսերին արդէն դառնում ողջ Ռուսաստանի քաղաքական ու եկեղեցական ճանաչուած կենտրոն: Նոյն դարի երկրորդ կէսին Մոսկովեան մեծ իշխանութիւնը գլխաւորում է ռուս ժողովրդի պայքարը Թաթար-մոնղոլական տիրապետութեան դէմ: 1380 թ. ռուսական զօրքերը, Մոսկուայի մեծ իշխան Դմիտրի Դոնսկոյի գլխաւորութեամբ, պարտութեան են մատնում մոնղոլական բանակին՝ յաջող սկիզբը դնելով օտար բռնակալական լծից հայրենի երկրի ազատագրութեան եւ միմեանց դէմ պայքարող ռուսական իշխանութիւնների միաւորման:

Այսպիսով, Մոսկուայի մեծ իշխանները, XIV-XV դդ. ընթացքում օտար տիրապետութեան ու ֆեոդալական մասնատուածութեան դէմ յամառ պայքար մղելով, վերամիաւորում են ռուսական հողերի մեծագոյն մասը եւ Մոսկուան դարձնում Նոր Ռուսաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն[2]:

Մոսկուայի եւ արեւելեան երկրների տնտեսական սերտ կապերն իրականացւում էին միջազգային նշանակութիւն ձեռք բերած երեք հիմնական մայրուղիներով: Դրանցից կարեւորագոյնը Վոլգեան մայրուղին էր. Վոլգայի վրայով Մոսկուան կապուած էր անդրկովկասեան երկրների, Իրանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի եւ Չինաստանի հետ: Հին այդ ճանապարհի ողջ երկայնքով, Վոլգայի գետաբերանից սկսած մինչեւ ակունքները, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ծաղկում էին առեւտրա-արհեստագործական խոշոր նշանակութիւն ունեցող նաւահանգիստ-քաղաքներ, որոնցում միջազգային աշխոյժ ապրանքափոխանակութիւն էր կատարւում:

* «Բանբեր Մատենադարանի», N 13, 1980, էջ 7-107: Հետազօտութեան առանձին էջերի ռուսերէն համառօտագրութիւնը տե՛ս "Гости-сурожане" в русских летописях и сказании о Мамаевом побоище" в сб. "Русская и армянская средневековые литературы" Л., 1982, էջ 333-357:

1 **М. Г. Рабинович,** Раскопки в Москве в 1950 году. "Краткие сообщения ИИМК", XLIV, М.-Л., 1952, էջ 117: Մ. Տիխոմիրովը կասկածի տակ է առնում նոր յայտնաբերուած նիւթերի՝ Մ. Ռաբինովիչի առաջարկած ժամանակագրութիւնը, այն տեղաշարժելով XII-XIII դդ. (**М. Н. Тихомиров**, Древнерусские города, М., 1956, էջ 408-409):

2 "Очерки истории СССР", период феодализма, IX-XV вв. в двух частях, II, М., 1953, с. 271-332

VIII-X դդ., Խազարական խաքանաթի տիրապետութեան ժամանակաշրջանում, բացառիկ դեր էր կատարում Իթիլ մայրաքաղաքը՝ Հազարան կոչուող առեւտրա-արհեստագործական իր թաղամասով (գտնւում էր ներկայիս Աստրախան քաղաքից 15 կմ հիւսիս)[1]: Խազարական պետութեան քայքայումից յետոյ մերձվոլգեան երկրամասերի տէրը դարձան Վոլգայի բուլղարները, որոնց նշանաւոր մայրաքաղաքը՝ Բուլղարը, կառուցուած Վոլգա եւ Կամա գետերի հատման շրջանում, հինգ դար շարունակ պահպանեց իր բացառիկ դերը որպէս միջազգային ապրանքափոխանակութեան կարեւոր մի հանգուցակէտ:

Մոնղոլական արշաւանքներից յետոյ այս երկրամասերն ընկան Ոսկէ Հորդայի տիրապետութեան տակ. գետի ողջ երկայնքով, կարեւոր անցուղիներին առընթեր, ստեղծուեցին ու բարգաւաճեցին վարչական ու տնտեսական նոր կենտրոններ՝ Սարայ-Բերքէն (Հին Սարայը), Սարայ-Բաթուն (Նոր Սարայը), Ովեակը կամ Ուկեկը եւ Ղազանը:

Վոլգայի ռուսական տիրապետութեան տակ գտնուող հատուածում կարեւորագոյն տնտեսական դեր էր կատարում 1221 թ. հիմնադրուած Նիժնի-Նովգորոդը, որ 1392 թ. դարձաւ Մոսկովեան մեծ իշխանութեան վաճառաշահ քաղաքներից մէկը: Ճիշտ է, պատերազմական գործողութիւնների, աւազակային արշաւանքների եւ այլ անբարենպաստ հանգամանքների հետեւանքով երբեմն ժամանակաւորապէս դադարում էր հաղորդակցութիւնը Վոլգայի ողջ երկայնքով կամ նրա առանձին հատուածներում, սակայն կարճատեւ էր լինում այդ դադարը: Աւերուած կենտրոնների փոխարէն ստեղծւում էին նորերը, եւ նոյնիսկ թշնամի ուժերն աջակցում էին միմեանց (անշուշտ՝ իւրաքանչիւրն իր շահերից ելնելով) տնտեսական վիթխարի նշանակութիւն ունեցող մայրուղու վերականգնման ու բարգաւաճման համար, եւ այն շարունակում էր կատարել իր բացառիկ դերը միջազգային ապրանքափոխանակութեան բնագաւառում:

Վոլգեան մայրուղին ծանօթ էր հայերին մեր պատմութեան հնագոյն ժամանակներից ի վեր. որոշակի տուեալներով տակաւին մ. թ. ա. I դ. մարերն ու հայերը ցամաքային ճանապարհով Միջագետքից արեւելեան ապրանքներ էին հասցնում Կասպից ծովի հիւսիսային շրջանները[2]:

Տնտեսական այդ կապերն, անշուշտ, աւելի լայն ծաւալ էին ստացել Արշակունեաց եւ մարզպանական շրջաններում: VII դ. մեծանուն գիտնական Անանիա Շիրակացին իր «Աշխարհացոյցի» մէջ[3] խազարների պետութեան ու նրա տիրապետութեան տակ գտնուող ցեղախմբերի մասին այնպիսի ուշագրաւ եւ ստոյգ տուեալներ է հաղորդում, որ կասկած չի մնում այն մասին, որ նա ունեցել է հայազգի տեղեկատուներ: Այդ մասին նա նոյնիսկ որոշակի ակնարկ ունի: Յունական (Սեւ) եւ Կասպից ծովերի մասին իր ձեռքի տակ ունեցած նիւթերի շարադրութեանն անցնելուց առաջ, նա ուղղակի գրում է. «Բանզի զՅունականաւն եւ զԿասբիականաւն մերոց իսկ արանց պատահեաց շուրջ անցանել…»[4]: Եւ, հաւանաբար, հէնց «մերոց իսկ

1 Խազարների մայրաքաղաքը սկզբնական շրջանում Բալանջարն էր, որն աւերուեց արաբների կողմից 722 կամ 723 թթ.: Դրանից յետոյ մայրաքաղաք դարձաւ Իթիլը (**В. В. Бартольд,** Арабские известия о русах. "Советское востоковедение", I, М.-Л., 1940, էջ 18):

2 **В. В. Бартольд,** նշւ. աշխ., էջ 16:

3 Է. Լ. Դանիէլեանի "Армянские космографические труды VII века о строении вселенной" (Ереван, 1978) աշխատութեան տպագրութիւնից յետոյ «Աշխարհացոյցի» Անանիա Շիրակացուն պատկանելու հարցը կարելի է վերջնականապէս լուծուած համարել:

4 **Ա. Աբրահամեան,** Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 339: Տե՛ս նաեւ էջ 347-348, ուր

տրանց» Հաղորդած տեղեկութիւնների հիման վրայ նա տեղեակ էր, որ Վոլգան (Աթըլ գետը) եօթանասուն վտակներ կազմելով է թափւում Կասպից ծով՝ մի գիտելիք, որ նրանից դարեր յետոյ է միայն տեղ գտել ռուսական առաջին (Լաւրենտիեւեան) տարեգրութեան մէջ, ինչպէս եւ արաբ աշխարհագիրներ Իբն-Հաուքալի, ալ-Գարնատիի, Եակուբի եւ այլոց գրուածքներում[1]:

VII դ. վերջերին Արեւելից Հայոց կաթողիկոսական աթոռը, որ աւելի յայտնի է Աղուանից կաթողիկոսութիւն անունով, քարոզչական լայն գործունէութիւն էր ծաւալել Խազարական խաքանաթի սահմաններում եւ, մանաւանդ, նրա հարաւային երկրամասերում (Հիւսիսային Կովկասի Կասպից ծովին առափնեայ շրջաններում): Ճիշտ է, ի վերջոյ խազարական հասարակութեան վերնախաւը պետական կրօն է յայտարարում յուդայիզմը (կարաիմեան դաւանանքը), սակայն հայ քրիստոնէական եկեղեցին նոյնպէս այնտեղ ունեցել է մեծաքանակ հետեւորդներ[2]: X դ. արաբ պատմագիր Մասուդին վկայում է, որ Իթիլ քաղաքի բնակչութեան մէջ կային մեծ թուով քրիստոնեաներ[3], իսկ Իբն-Հաուքալը խօսում է խազարական Սըմընդըր ծովափնեայ քաղաքի մասին՝ նշելով, որ «այնտեղ բնակւում էին մուսուլմաններ եւ ուրիշներ, որոնք ունէին իրենց մզկիթները, քրիստոնեաներն՝ իրենց եկեղեցիները, հրեաները՝ սինագոգներ»[4]:

X դ. կէսերին հիւսիսարեւմտեան Ղազախստանից դէպի արեւմուտք շարժուելով եւ անցնելով Վոլգան՝ Կովկասի ու Սեւ ծովի հիւսիսային տափաստանները ներխուժեցին ղփչախ (նաեւ պոլովցի, կուման) կոչուող թուրքական լեզուաընտանիքին պատկանող քոչուոր ցեղերը: Աշխարհագրական այդ միջավայրում յաջորդելով խազարներին՝ նրանք դարեր շարունակ, մինչեւ մոնղոլական արշաւանքները, իրենց հսկողութեան տակ պահեցին Արեւելքն Արեւմուտքի հետ կապող հիւսիսային մայրուղիները: Այդ ցեղերը, սակայն, միասնական պետութիւն չկարողացան ստեղծել: Նրանք ցրուած էին Դեշտ-ի Ղփչախ կոչուող անծայրածիր տափաստաններում՝ բաժանուած լինելով մի շարք կիսանկախ ցեղախմբերի. Դանուբի եւ Դնեպրի միջեւ հաստատուել էին լուկոմորեան կոչուող ղփչախները, ապա արեւմուտքից արեւելք գալով՝ նրանց հարեւանութեամբ ապրում էին մերձդնեպրեան կամ զապարոժեան, մերձծովեան (ներքին Դոնից մինչեւ Ազովի ծովափերը), Դոնեցկի, Դոնի, Ղրիմի, Հիւսիսային Կովկասի ղփչախական զանգուածները[5]:

հետաքրքրական տեղեկութիւններ կան խազարների, նրանց խաքանի (հականի), թագուհու (խաթուն) մասին եւ թուարկուած են Սարմատիայում ապրող 50 ցեղախմբերն ու ցեղերը (խազիրք, բուխք, բարսիլք, ապշեղք... եւ այլն):

1 **Б. Н. Заходер,** Из истории волжско-каспийских связей древней Руси. "Советское востоковедение", 1955, N 3, էջ 118: Արաբ աշխարհագիրների երկերում տարբեր աշխարհամասերի վերաբերեալ առկայ տեղեկութիւնների զգալի մի մասը փոխ է առնուած իրենց տիրապետութեան տակ գտնուող հին մշակոյթ ունեցող ժողովուրդներից, որոնց շարքում հայերը նոյնպէս գրաւել են պատուաւոր տեղ:

2 Խազարական պետութեան սահմաններում հայ հոգեւորականների ծաւալած քարոզչական գործունէութեան ու ձեռք բերած յաջողութիւնների մասին պատմում է Մովսէս Կաղանկատուացին (տե՛ս «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մ., 1860, II, գլուխ ԼԹ-ԽԵ, յատկապէս՝ էջ 197-198):

3 **В. В. Бартольд,** նշւ. աշխ., էջ 24-25

4 Նոյն տեղում, էջ 34-35

5 **К. В. Кудряшов,** Половецкая степь, М., 1948, էջ 134: Պարտուելով մոնղոլ-թաթարներից եւ ընդունելով նրանց գերիշխանութիւնը, ղփչախները ոչ միայն չդադարեցին գոյութիւն ունենալուց, այլեւ իրենց մէջ ձուլեցին թաթարներին. վերջիններս, ըստ XIV դ. առաջին կէսի արաբ հեղինակ էլ-Օմարիի՝ «ձուլուեցին եւ խնամիացան նրանց (ղփչախների) հետ... եւ նրանք բոլորը դարձան կատարեալ ղփչախներ, այնպէս որ կարծես նոյն ցեղից

Խազարական պետութեան մայրաքաղաք Իթիլի անկումից (995 թ.) յետոյ հաւանաբար հէնց նոյն վայրում ստեղծուեց ու բարգաւաճեց ղփչախական տնտեսական կենտրոն Սաքսին քաղաքը[1]: Տնտեսական կարեւոր նշանակութիւն ստացաւ նաեւ Սարկել քաղաքը՝ կառուցուած Դոն գետի մեծ աղեղի այն մասում, որ առաւել մօտ էր գտնւում Վոլգային[2]:

Հայերը, որ աշխոյժ յարաբերութիւններ էին ստեղծել այս երկրամասերի հետ պատմական նախորդ ժամանակաշրջանում, բնականաբար, պահպանել էին իրենց տնտեսական դիրքերը ղփչախական իշխանութիւններում՝ զգալի դեր կատարելով Դեշտ-ի Ղփչախի ճանապարհներով կատարուող միջազգային առեւտրի մէջ: Պէտք է խոստովանել, սակայն, որ այդ մասին պահպանուել են միայն սակաւաթիւ նիւթեր, որոնցից մի քանիսը՝ ըստ ինքեան պերճախօս:

1180 թ. տեղի է ունենում Վրաց պետութեան գահակալի՝ Թամար թագուհու ամուսնութիւնը Վլադիմիրի մեծ իշխան, XII դ. կէսերին Ռուսաստանի պատմութեան մէջ խոշոր դեր կատարած Անդրեյ Բոգոլիւբսկու որդու՝ Իւրի (Գեորգի) Բոգոլիւբսկու հետ: Իւրին, իր հօրեղբայր Վսեվոլոդի կողմից հալածուելով, հիւրընկալուել էր ղփչախների թագաւորի մօտ, ըստ երեւոյթին, Սաքսին քաղաքում (մեծ հաւանականութեամբ նրա մայրը ղփչախական իշխանուհիներից է եղել): Երբ վրացական արքունիքում քննութեան նիւթ է դառնում ջահել թագուհու համար պատշաճ ամուսին գտնելու հարցը, Թբիլիսցի ոմն Թաւադ Աբուլ-Հասանը առաջարկում է իրեն քաջածանօթ Իւրի Բոգոլիւբսկու թեկնածութիւնը: Վրաց դարբազը (պետական խորհուրդը) ընդունում է այդ առաջարկը: Ռուս իշխանին հրաւիրելու պարտականութիւնը դրւում է Թբիլիսիի բնակիչ, վաճառական Զանքան Զորաբաբէլի վրայ, որը աւելի արագ, քան ակնկալւում էր, ճեպում է ղփչախ թագաւոր Սեւինջի մօտ եւ Թբիլիսի հասցնում փեսացուին[3]:

Ո՞վ էր Վրաստանի քաղաքական կեանքի համար կարեւոր նշանակութիւն ունեցող խնամիական այս կապի ստեղծման նախաձեռնողը: Այս հարցը յուզել է շատ պատմաբանների՝ XVIII դ. կէսերից սկսած մինչեւ մեր օրերը[4]: Եւ ինչպէս յաճախ է պատահում բանասիրութեան մէջ, տարբեր ու հակասական տեսակէտներից հաւանականը բնաւ էլ վերջին ուսումնասիրողներին չի պատկանում: Այսօր էլ ուժի մէջ է արքայազն Վախուշտիի հաղորդած տուեալն այն մասին, որ Աբուլ-Հասանը Թբիլիսցի մի վաճառական է եղել, ինչպէս նաեւ

լինէին» (**В. Г. Тизенгаузен;** Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. 1, Извлечения из сочинений арабских, СПб., 1894, էջ 235):

1 "Очерки истории СССР", период феодализма, IX-XV вв., в двух частях, I, М., 1953, էջ 202

2 **К. В. Кудряшов,** նշւ. աշխ., էջ 9-34 (այստեղ յատուկ գլուխ է նուիրուած Սարկելի տեղադրութեանը): Վոլգայի եւ Դոնի ջրաւազանները միմեանցից բաժանող եւ ընդամէնը 60 կմ տարածութիւն բռնող ջրբաժան այդ շրջանը դարեր շարունակ վիթխարի դեր է կատարել, լինելով Սեւ ծովը Կասպից ծովի հետ կապող տնտեսական զարկերակի անխափան մասը եւ ունենալով ռազմաստրատեգիական կարեւոր նշանակութիւն: Դեռեւս XVI դ. թուրքական սուլթան Սելիմ II-ը անյաջող փորձ կատարեց Դոնը Վոլգային ջրանցքով միացնելու: Այսպիսի ծրագրեր առաջ քաշուեցին նաեւ Պետրոս I-ի ժամանակ:

3 ქართლის ცხოვრება, II, თბ., 1959, էջ 36: Նաեւ՝ **С. Т. Еремян,** Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. "Научные труды Ереванского ун-та", т. XXIII 1946, էջ 395-396 եւ **З. В. Папаскири,** Эпизод из истории русско-грузинских взаимоотношений. "История СССР", 1977, N 1, էջ 135

4 Արքայազն Վախուշտի, Ա. Խախանով, Ս. Երեմեան, Պ. Իգորոդուա, Ի. Ջինջաձէ, Ն. Բերձենիշուիլի, Ծ. Մեսխիա. ահա հարցին անդրադարձած գիտնականների ոչ լրիւ ցանկը (սրանց, յաճախ իրարամերժ, տեսակէտների համառօտ շարադրանքը տե՛ս Զ. Պապասկիրիի վերոյիշեալ յօդուածի մէջ):

պրոֆ. Ա. Խախանովի կարծիքը, թէ ազգութեամբ նա հայ է եղել եւ առեւտրական սերտ կապեր է ունեցել տարբեր երկրների, ըստ որում նաեւ՝ Դեշտի-ի Ղփչախի հետ[1]:

Ղփչախում բնակութիւն հաստատած հայերը սերտ կապեր են ունեցել հայոց բնաշխարհի եւ հայկական հեռաւոր գաղթօջախների հետ: Ուշագրաւ է այն փաստը, որ 1193 թ. ոմն Աղբարիկ՝ որդի Առիւծի, Ղփչախում (ցաւօք, տեղը որոշակի չի նշուած) գնել է մէկ դար դրանից առաջ Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում ընդօրինակուած հայերէն մի Աւետարան[2]:

Ղփչախների հետ միասին Խազարական պետութեան ժառանգորդները դարձան Միջին Վոլգայի առափնեայ երկրամասերում հաստատուած բուլղարները, որոնք յայտնի են գիտութեան մէջ Վոլգայի բուլղարներ անունով:

Բացի գետային մայրուղուց, բուլղարներն արեւելեան երկրների հետ առեւտրական աշխոյժ կապեր են պահպանում ցամաքային այն ճանապարհով, որ Մեծ Բուլղար քաղաքից տափաստաններով ձգւում էր դէպի Եաիկ, իսկ այդտեղից էլ, անցնելով Ղազախական անապատով, դէպի Խորեզմ: Այս ճանապարհի նշանակութիւնն, ըստ երեւոյթին, մեծացաւ XII-XIII դդ.՝ Խորեզմշահերի պետութեան ծաղկման ժամանակաշրջանում[3]:

X դ. արաբ ուղեգիր Իբն-Ֆադլանի վկայութեամբ բուլղարների արքայական վրանի յատակին փռուած էին մեծ մասամբ հայկական գորգեր[4]: Հնագիտական պեղումներից յայտնաբերուած ուշագրաւ նիւթերի հիման վրայ ապացուցուած է արդէն, որ Բուլղար քաղաքի պարիսպներից դուրս գոյութիւն է ունեցել հայկական առեւտրա-արհեստագործական մի թաղամաս, որը, հիմնադրուած լինելով դեռեւս IX դ., իր զարգացումն է ապրել ու բարգաւաճել յատկապէս XIII-XIV դդ.՝ դառնալով Ոսկէ Հորդայի վաճառաշահ բնակավայրերից մէկը: Այդ թաղամասում նախկին փայտածածկ եկեղեցու փոխարէն XIV դ. կառուցուել է երկյարկանի քարաշէն թաղակապ մի շքեղ եկեղեցի, որի աւերակները, թիւրիմացաբար «յունական դահլիճ» անուանումն ստանալով, երկար ժամանակ հնագէտների ուշադրութեան կենտրոնում էին գտնւում[5]: Յատուկ նշանակութիւն ունեն Բուլղարի հայկական գերեզմանատան արձանագիր տապանաքարերը, որոնցից պահպանուել են միայն չնչին յիշատակներ (4-ը հասել են մեզ ամբողջական կամ թերի, իսկ 3-ից պահպանուել են միայն արձանագրութիւնների անյաջող ընդօրինակութիւններ): Դրանց մէջ կան թուակիր արձանագրութիւններ, որոնք, առանց բացառութեան պատկանելով XIV դ. առաջին յիսնամեակին (1308-1337 թթ.), խօսուն վկայութիւններ են այդ շրջանում Բուլղարի հայկական թաղամասի ծաղկուն վիճակի մասին[6]:

---

1 **А. С. Хаханов,** Положение армян в грузинском царстве. "Братская помощь пострадавшим в Турции армянам", М., 1897, էջ 55

2 **Գարեգին Ա կաթողիկոս,** Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, N 255, սիւն 569-570, **С. Т. Еремян,** նշւ. աշխ., էջ 393

3 **А. П. Новосельцев, В. Т. Пашуто,** Внешняя торговля древней Руси (до середины XIII в.). "История СССР", 1967, N 3, էջ 106

4 **Ибн-Фадлан,** Путешествие на Волгу, перевод с комментариями, под редакцией акад. И. Ю. Крачковского, М., 1939, էջ 73: **Բաբկէն Առաքելեան,** Քաղաքները եւ արհեստները Հայաստանում IX-XIII դդ., 2, Երեւան, 1964, էջ 39

5 **А. П. Смирнов,** Армянская колония города Болгар. "Материалы и иследования по археологии СССР", (МИА), вып. 61, М., 1958, էջ 330-359

6 **Հ. Ջանփոլադեան,** Վոլգայի ափին յայտնաբերուած հայկական արձանագրութիւնները («Բանբեր Մատենադարանի», N 11, 1973, էջ 211-222): Տեղին է այստեղ նշել, որ մերձվոլգեան երկրամասերում հայկական վիմագրա-

Հետաքրքրական արդիւնքներ են տուել նաեւ հայկական գերեզմանատան պեղումները: Այստեղ յայտնաբերուել են ոսկէ եւ արծաթէ զարդեր, մետաքս եւ դիպակ՝ հիւսուած ոսկեհուռ թելերով: Մասնագէտները մեծ նմանութիւն են տեսնում սրանց եւ Հայաստանի քաղաքներում, մասնաւորապէս՝ Անիում եւ Դուինում արտադրուած գործուածքների միջեւ՝ միաժամանակ նշելով, որ պեղածոյ նիւթերը վկայում են հայ վաճառականների բարեկեցիկ վիճակի մասին[1]: Մեծ Բուլղար քաղաքի հայկական համայնքը, առաջին հերթին Մոսկուայի հետ էր զարգացնում տնտեսական իր կապերը: Սակայն, ելնելով այն փաստից, որ Բուլղարի մօտակայքում, Կամա գետի վրայ եւս եղել են հայկական փոքրիկ գաղթօջախներ[2]՝ պէտք է հետեւեցնել, որ տեղի հայ վաճառականները սերտ յարաբերութիւնների մէջ էին նաեւ հիւսիսային եւ հիւսիսարեւելեան հեռաւոր անտառատունդրային շրջաններում թափառող որսորդական եւ եղջերուապահ ցեղերի հետ:

1431 թ. ռուսները գրաւեցին եւ աւերեցին Բուլղար քաղաքը. ըստ երեւոյթին, հէնց այս շրջանում էլ դադարեց գոյութիւն ունենալուց Բուլղարի հայկական թաղամասը: Ինչ վերաբերում է թաղամասի բնակչութեանը, պէտք չէ տարակուսել, որ նրանց մեծագոյն մասը, վերաբնակուելով նոյն մայրուղու վրայ գտնուող այլ կենտրոններում, շարունակեց գործուն դեր կատարել Վոլգայի վրայով կատարուող միջազգային առեւտրի բնագաւառում:

XIII դ. 30-ական թթ. մերձվոլգեան երկրամասերը բռնագրաււում են մոնղոլների կողմից ու տեւականօրէն մտնում Ոսկէ Հորդայի կազմի մէջ: Հորդայի տիրակալները, դառնալով Արեւելքն ու Արեւմուտքը կապող տնտեսական հսկայական նշանակութիւն ունեցող այդ ճանապարհի տէրը, անհրաժեշտ քայլեր են կատարում միջազգային աւանդական ապրանքափոխանակութեան վերականգնման ուղղութեամբ: Նրանց տիրապետութեան սկզբնական շրջանում ստեղծւում ու բարգաւաճում է Սարայ-Բաթու կամ Հին Սարայ քաղաքը՝ Վոլգայի գետաբերանից ոչ հեռու (արդի Աստրախանի նահանգի Սելիտերնոյէ գիւղի շրջանում): Սարայ-Բաթուն, որպէս Ոսկէ Հորդայի մայրաքաղաք եւ արհեստագործութեան ու առեւտրի խոշոր կենտրոն, գոյատեւում է ընդամէնը մէկ դար: Բայց այդ կարճ ժամանակամիջոցում այստեղ հայերի թիւն այնքան է աճում, որ կառուցւում են եկեղեցիներ (Ս. Աստուածածին եւ Ս. Նշան), հիմնադրւում է Գանձասարի կաթողիկոսութեան ենթակայ արքեպիսկոպոսական թեմ[3], որի հոգեւոր վարչութեան տակ էին գտնւում, անտարակոյս, նաեւ Ոսկէ Հորդայի այլ

կան յուշարձանների եւ այլ նիւթերի յայտնաբերման հնարաւորութիւնները պէտք չէ սպառուած համարել: Այս առումով ուշադրութեան արժանի է անգլիացի վաճառական Քրիստոֆեր Բուրոյի 1579 թ. իր հօրեղբօրը հասցէագրած մի նամակը, որից յայտնի է դառնում, թէ հայերէն արձանագիր տապանաքարեր են եղել նաեւ Ուկեկ կամ Ուվեկ քաղաքի մօտ (արդի Սարատովի մերձակայքում). «Այս վայրում,- գրել է նա,- եղել է շատ նուրբ քարից շինուած մի բերդ, եւ նրան կից կար մի քաղաք... մնում են մինչեւ այսօր բերդի աւերակների մի մասը եւ որոշ թւով գերեզմաններ, որոնց մէջ թւում է թէ ազնուական մարդիկ են թաղուած, որովհետեւ գերեզմանաքարերի վրայ տեսնւում է ձիու պատկեր, որի վրայ նստել է մի մարդ աղեղը ձեռքին եւ մէջքին նետի գօտի: Գերեզմանաքարերից մէկի վրայ վահանի մի կտոր կար, որի վրայ տառեր էին փորուած, որոնց մէկ մասը եղծուած էր եւ մնացեալը դարձել էր պակասաւոր, բայց մնացորդի ձեւերից դատելով հայկական տառեր էին» (տե՛ս **Յով. Յակոբեան,** Ուղեգրութիւններ, հատոր Ա, Երեւան, 1932, էջ 436-437):

1 **М. Фехнер,** Великие Булгары, Казань, Свияжск, М., 1978, էջ 47-48, **Р. М. Джанполадян,** О двух тканях из Ани и Болгарах. "Краткие сообщение инст. археологии АН СССР" (КСИА), вып. 132 էջ 221

2 Կրասնայա-Պոլեանա եւ Կիրեյկայա գիւղերում յայտնաբերուել են հայերէն արձանագիր տապանաքարեր (տե՛ս **Հ. Ջանփոլադեան,** նշւ. յօդուածը, էջ 219):

3 Գիտենք արդէն, որ տակաւին VII դ. Հիւսիսային Կովկասում եւ Խազարների պետութեան այլ շրջաններում քարոզչական լայն գործունէութիւն էին ծաւալել Հայոց Արեւելից կողմանց կամ Աղուանից կաթողիկոսները: Նրանց

շրջաններում բնակութիւն հաստատած հայերը: Պահպանուել է մի Աւետարան՝ ընդօրինակուած 1319 թ. «ի մայրաքաղաքիս Սարայ... մերձ առ ծովուն Կասպիականի»: Այդ ժամանակ Սարայում արքեպիսկոպոս էր «քաջ հովուապետ» կոչուած տէր Պօղոսը:

Ըստ երեւոյթին, Հին Սարայի հայ բնակչութեան կազմում մեծ դեր են կատարել նաեւ արհեստաւորները: Պեղումներից յայտնաբերուել են երկու կաւէ թաղարների բեկորներ, որոնց վրայ պահպանուել է միեւնոյն վարպետի նոյն կնիքով դրոշմուած արաբերէն հետեւեալ արձանագրութիւնը. «Ինանիկ որդի Սարգսի»[1]:

XIV դ. 20-ական թթ. Սարայ-Բաթուն վայրէջքի շրջան էր թեւակոխել՝ իր տեղը զիջելով Սարայ-Բերքէին (Նոր Սարային), որը կառուցուել էր Բերքէ խանի (1257-1266) ժամանակ՝ հաճելի կլիմայով ու բարեբերութեամբ հռչակուած Վոլգա-Ախտուբինեան հովտամասում (Վոլգոգրադից ոչ հեռու): Ուզբեկ խանի ժամանակ Սարայ-Բերքէն դարձաւ Ոսկէ Հորդայի մայրաքաղաքը: Տնտեսական ու վարչական կենտրոնների այս փոփոխութեան համար, անշուշտ, կային հիմնաւոր պատճառներ: Մոնղոլական երկու աշխարհածաւալ պետութիւնների՝ Իլխանութեան եւ Ոսկէ Հորդայի ստեղծման հէնց առաջին տարիներից քաղաքական ու տնտեսական անհաշտելի հակադրութիւնների դուռ բացուեց նրանց միջեւ: Ոսկէ Հորդայի տիրակալները ձգտում էին իրենց ազդեցութեան ոլորտի մէջ պահել Կասպից ծովով եւ ծովափնեայ շրջաններով դէպի հիւսիս՝ Մոսկուա ու Նովգորոդ (ապա Հիւսիսային Եւրոպա) եւ Ղրիմի վրայով դէպի միջին եւ հարաւային եւրոպական երկրներ տանող առեւտրական բանուկ ճանապարհները: Իսկ իլխանները, վճռականօրէն հակադրուելով նրանց, փորձում էին խցել այդ ուղիները, իրենց երկրում արտադրուող եւ հեռաւոր արեւելեան երկրներից ստացուող ապրանքների առաքումը դէպի Եւրոպա իրականացնելու համար Սեւ եւ Միջերկրական ծովերի, մասնաւորապէս Տրապիզոնի եւ Կիլիկեան հայկական թագաւորութեան Այաս նաւահանգստի վրայով[2]:

հոգեւոր ազդեցութիւնն աշխարհագրական այս միջավայրում յարատեւել է մինչեւ XVIII դ. վերջերը, երբ Էջմիածնի կաթողիկոսներին յաջողուել է իրենց ենթակայութեան տակ առնել այդ երկրամասերում գտնուող հայերի հոգեւոր առաջնորդութիւնը:

Սարայ-Բաթու քաղաքում ընդօրինակուած Աւետարանի գրիչ Խաչատուր քահանան, իր յիշատակարանի այն հատուածում, ուր ընդունուած էր նշել, թէ ե՛րբ եւ ո՛ր կաթողիկոսի գահակալութեան տարիներին են աւարտուել ընդօրինակման աշխատանքները, տարբերուելով իր ժամանակակից գրիչներից, կողք-կողքի յիշատակում է միաժամանակ հայոց երկու կաթողիկոսների. «Յամս աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Ստեփանոսի՝ Արեւելեան կաթողիկոսի Հայոց, եւ տեառն Կոստանդեա՝ Կիլիկեցւոց կաթողիկոսի» («ԺԴ դարի... յիշատակարաններ», Երեւան, 1950, էջ 155-156): Սկզբից յիշատակուած «Արեւելեան կաթողիկոս հայոց»-ը ոչ այլ ոք է, եթէ ոչ 1261-1323 թթ. գահակալած Ստեփանոս Դ Աղուանից կաթողիկոսը (**Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, Դ, էջ 639): Սրան «Արեւելեան կաթողիկոս հայոց» անուանելով եւ այդ ժամանակուայ Ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդինից առաջ յիշատակելով, Խաչատուր քահանան անժխտելի վկայութիւն է թողել այն մասին, որ Ոսկէ Հորդայի հայկական գաղթավայրերը մտել են Գանձասարի թեմի մէջ եւ Գանձասարի կաթողիկոսները շատերի կողմից ճանաչուել են որպէս «Արեւելեան հայոց կաթողիկոսներ»:

1 Տե՛ս **М. Г. Крамаровский**, Гончар-армянин из Сарая ал-Джедид. "Труды Гос. Эрмитажа", XIX, Л., 1978, էջ 102-105: Կնքադրոշմի առաջին անուան վերծանութիւնը դժուարութիւնների առջեւ է կանգնեցրել յօդուածագրին. նա առաջարկել է Անան, Անանայ, Ինանայ, Անանկ, Ինանակ ընթերցումները, աւելի հաւանական համարելով «Անանը»: Մեր կարծիքով բրուտագործ-վարպետի իսկական անունը եղել է Ինանիկ՝ XIV դ. Հայաստանում գործածուող մի անուն (ինչպէս յայտնի է, այդպէս էին կոչում Բուրթէլ Օրբելեանի որդի Իւանէին): Չի բացառում նաեւ «Անանիկ»-ը՝ Անանիա անուան փաղաքշական ձեւը:

2 Ապահովելու համար կենսական նշանակութիւն ունեցող այս մայրուղիները, առաջին իլխանները սիրաշահում էին հայ եւ ասորի վաճառականներին, արտօնութիւններ շնորհում նրանց, նոյնիսկ զօրավիգ կանգնում հայկական որոշ իշխանութիւնների (նկատի ունենք յատկապէս Երզնկայի, Համշէնի եւ Մակուի իշխանութիւնները), հաշուի

Իլխանների այդ քաղաքականութիւնը ժամանակաւորապէս պսակուեց յաջողութեամբ: Ոսկէ Հորդան, իհարկէ, չէր կարող հայեցողի դերով բաւարարուել: Եւ XIII դ. 60-ական թթ. սկսած մինչեւ իլխանութեան քայքայման շրջանը, մոնղոլական երկու այդ պետութիւնների միջեւ տեղի ունեցան արիւնահեղ պատերազմներ (1262-1263, 1265, 1288, 1290, 1318-1319, 1324-1325, 1335-1336), որոնց հետեւանքով ծայր աստիճանի աւերուեցին Դերբենդի ու Շիրուանի երկրամասերը, ժողովուրդը լքեց իր հայրենի բնակավայրերը, երկիրն ամայացաւ[1]: Սարայ-Բաթուի կամ Հին Սարայի տնտեսական յետադիմութիւնն ու անկումը առաջին հերթին անխզելիօրէն կապուած էին պատմական այս անցուդարձերի հետ:

Ի՞նչ եղաւ Սարայ-Բաթուի հայ բնակչութիւնը: Մի մասը, անտարակոյս, փոխադրուեց Ղրիմ՝ նոր շունչ հաղորդելով այդ թերակղզու հայկական հին գաղթօջախներին: Հաւանաբար զգալի թիւ են կազմել նաեւ այն հայերը, որոնք խարիսխ նետեցին Հին Սարայից ոչ հեռու կեանք առած ու յետագայում միջազգային նշանակութիւն ստացած Աստրախան քաղաքում: Սարայի հայերի երրորդ զանգուածը, պէտք է ենթադրել, որ բնակութիւն է հաստատել Ոսկէ Հորդայի նոր մայրաքաղաքում՝ Սարայ-Բերքէում, որը, ինչպէս ասուեց, 1330-ական թթ. դարձաւ հսկայածաւալ մոնղոլական հիւսիսային կայսրութեան վաճառաշահ կենտրոնը:

1333 թ. Սարայ այցելած հռչակաւոր արաբ ճանապարհորդ Իբն-Բատուտան, ողջ աշխարհը ոտնատակ արած մի անձնաւորութիւն, հիացմունքով է խօսել այդ քաղաքի մասին. «Սարայ քաղաքը,- գրել է նա,- կառուցուած է հարթ տարածութեան վրայ եւ վիթխարի չափեր ընդունած մէկն է գեղեցկագոյն քաղաքներից. այն լի է մարդկանցով, ունի գեղեցիկ շուկաներ ու լայն փողոցներ... այնտեղ բնակւում են տարբեր ժողովուրդներ... ամէն մի ժողովուրդ ապրում է առանձին՝ իր թաղամասում, որտեղ եւ գտնւում է նրա շուկան»[2]:

Այս եւ արաբ այլ հեղինակների տուեալներով Սարայում բնակուել եւ առեւտրով ու արհեստներով են զբաղուել Կովկասից, Պարսկաստանից, արաբական տարբեր երկրներից (Սիրիա, Իրաք, Եգիպտոս), Ռուսաստանից, Յունաստանից, Իտալիայից ներգաղթածներ: Ինչպէս տեսնում ենք, նրանց շարքերում հայերը յանուանէ չեն յիշատակուած, սակայն կարելի է առանց դոյզն-ինչ կասկածի հաւաստել, որ տնտեսական դերով ու բազմամարդութեամբ այստեղ եւս հայերն առաջաւոր տեղ են գրաւել: Այդ են վկայում, օրինակ, Նոր Սարաում յայտնաբերուած եւ Սարգիս անունով հայ վարպետի ստորագրութիւնը կրող անօթներն[3] ու հայերէն արձանագրութիւններով տապանաքարերը: Նկատուած է նաեւ, որ տեղական ջնարակուած թասերից շատերը խիստ նման են Հայաստանում արտադրուած ամաններին[4]:

առնելով դրանց գրաւած հանգուցային դիրքը միջազգային նշանակութիւն ունեցող ճանապարհների վրայ:

1 **А. А. Али-заде**, Борьба Золотой орды и государства ильханов. "Сборник по истории Азербайджана", вып. I, Баку, 1949, էջ 57-94: Այս յօդուածի հեղինակի կարծիքով Ոսկէ Հորդայի տիրակալների պայքարի նպատակն էր գրաւել Ադրբեջանն ու իշխել այդ երկրով անցնող ճանապարհներին: Սակայն թւում է, թէ նրանց մտահոգութեան հիմնական առարկան Կասպ-Վոլգեան ճանապարհի միջազգային դերի պահպանումն էր: Պետութեան եկամուտների մէջ հսկայական տեղ էին գրաւում այդ ճանապարհով ներմուծուող ու արտահանուող ապրանքներից գանձուող մաքսատուրքերը:

2 **В. П. Тизенгаузен**, նշւ. աշխ., I, էջ 306

3 **А. Якубовский**, Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой в X-XV вв. "Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР", Ленинград, 1933

4 **Т. А. Измайлова**, Керамика из раскопок Амберда. "Труды отдела Востока Гос. Эрмитажа", т. IV, Л., 1947, էջ 188: **Բաբկէն Առաքելեան**, Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX-XIII դդ., հտ. 2, Երեւան, 1964, էջ 39-40:

Սարայ-Բերքէ քաղաքի հայկական համայնքը 1370-ական թթ. եղել է կազմակերպուած գաղութ, ունեցել է իր եկեղեցին: Հաւանաբար այստեղ թեմական առաջնորդի հանգամանքով նստել է հայ եպիսկոպոս, որը Սսի կաթողիկոսների կողմից դիտուել է որպէս «Ամենայն Ռուսաց եւ Ալանաց» կոչուող եւ Լւովում հաստատուած արքեպիսկոպոսի ենթակայութեան տակ գտնուող եկեղեցական պաշտօնեաներից մէկը: Պէտք է ենթադրել, սակայն, որ Սարայի եւ մերձվոլգեան երկրամասերի հայկական միւս համայնքները առաջուայ պէս ենթարկուել են Գանձասարի հայ կաթողիկոսներին, որոնք դարեր շարունակ իրենց ազդեցութեան ոլորտի մէջ են պահել Կովկասից հիւսիս գտնուող հայկական գաղթօջախները: Սսի կաթողիկոսները, բնականաբար, եռանդուն քայլեր էին կատարում իրենց ազդեցութիւնն այս երկրամասերի հայկական համայնքների վրայ տարածելու եւ ամրապնդելու ուղղութեամբ՝ այնտեղ առաքելով բարձրաստիճան նուիրակներ: Պահպանուել է կաթողիկոսական անթուակիր մի կոնդակ՝ շարադրուած Ոսկէ Հորդայի Ջանիբէկ խանի իշխանութեան տարիներին (1342-1357), հաւանաբար Մխիթար Գռներցի կաթողիկոսի կողմից: Կոնդակը տուեալներ է պարունակում Ոսկէ Հորդայի տարածքով մէկ սփռուած հայ զանգուածների, նրանց բնակութեան կենտրոնների եւ ունեցած եկեղեցիների մասին: Հասցէագրուած է Ղրիմ (Սուլխաթ), Ազախ (Ազով, Տանա), Սարայ քաղաքների հայկական համայնքների բնակչութեանը եւ բոլոր նրանց, ովքեր ցրուած են «շուրջ զբոլոր Էթիլ գետով, եւ որք զՋահուն գետով, զոր Ամոյն կոչեն ակումբ առեալ եւ ընդարձակ տարածեալ, այսինքն՝ մինչեւ ի ծովն Կասբից»[1]: Այս ուշագրաւ վկայութեամբ ոչ միայն ընդարձակւում են մեր գիտելիքները Վոլգա գետով եւ Ազովի ու Սեւ ծովերի վրայով կատարուող միջազգային առեւտրի բնագաւառում հայ վաճառականների կատարած դերի մասին, այլեւ հնարաւորութիւններ են ստեղծւում յանգելու այն եզրակացութեան, որ նրանք շատ աւելի լայն չափերով, քան ենթադրւում է առ այսօր, իրենց գործունէութեան շրջանակների մէջ են առել նաեւ Միջին Ասիայի երկրամասերը: Այս փաստերի լոյսի տակ աւելի կարեւոր նշանակութիւն են ստանում Բալխաշ լճի աւազանում յայտնաբերուած Յովհան հայոց եպիսկոպոսի տապանաքարը (1323) եւ Իսսիկ-Կուլ լճից հարաւ սուրբ Մատթէոսի անունով հայկական վանքի գոյութեան մասին 1375 թ. եւրոպական մի քարտէզի տուեալը[2]:

Միջին Ասիայից դէպի հեռաւոր Հնդկաստան ու Չինաստան ձգուող ճանապարհներին հայ վաճառականների քաջածանօթութեան մասին վստահելի տուեալներ կան նաեւ հայ միջնադարեան գեղարուեստական գրականութեան էջերում: XVI դ. նշանաւոր բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին իր «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն» ստեղծագործութեան մէջ տեղեկութիւններ է գրանցել Մխիթար Բաղիշեցի անունով մի հայ վաճառականի մասին, որ հեռագնաց ճանապարհորդութեամբ անցնելով Ատրպատական, Ղում, Իրաղ, Խորասան՝ հասել է Միջին Ասիա (Սամարղանդ եւ Բուխարա), այնտեղից անցել Հնդկաստան եւ «հռչակաւոր քաղաքն Խաթայ» («մերձ սահմանացն Չինումաչինայ»): Աւարտելով իր առեւտրական գործերը՝ նա հայրենիք է վերադարձել՝ ընտրելով մի այլ ուղի. Միջին Ասիայից անցել է Կասպից ծովի հիւսիսային շրջանները, ապա հիւսիսային Կովկաս եւ Ալանաց աշխարհով իջել հարաւ ու հասել իր հայրենի երկիրը՝ Հայաստան[3]:

---

1 ՄՄ ձեռ. N 9622, էջ 671

2 **Н. Я. Марр**, Надгробный камень из Семиречья с армяно-сирийской надписью 1323 г. ЗВОАО. т. VIII, էջ 344-439. **В. В. Бартольд**, Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, էջ 45. **Լ. Խաչիկեան**, Հայ պատմագրութեան անյայտ էջերից. «Պատմա-բանասիրական հանդէս», 1972. N 4, էջ 243-244

3 **Գրիգորիս Աղթամարցի**, Ուսումնասիրութիւն, քննական բնագիր եւ ծանօթագրութիւններ Մացիս Աւդալբեգեանի,

1380 թ. Կուլիկովեան ճակատամարտում Ոսկէ Հորդայի կրած պարտութիւնից յետոյ սկսւում է բռնութեամբ ստեղծուած արհեստական այդ պետական կազմակերպութեան մայրամուտը: 1395 թ. Ոսկէ Հորդան ծանր հարուած է կրում Լէնկ-Թեմուրից: Թեմուրեանները գրաւում եւ աւերում են Սարայ-Բերքէն, Աստրախանը, որոնցից առաջինը այլեւս բնաւ չի վերականգնւում որպէս խոշոր քաղաք, իսկ երկրորդը շունչ է առնում տասնամեակներ յետոյ: Զգալի չափով տուժում են նաեւ Ղրիմի քաղաքները: Մեծ հարուած է հասցւում միջազգային նշանակութիւն ունեցող կարաւանային առեւտրին: Շուտով աւելի են սրւում քոչուորական տարբեր խմբաւորումների հակամարտութիւնները, եւ իշխանութեան համար մղուող պատերազմները տարէցտարի աւելի արիւնահեղ են դառնում: Ոսկէ Հորդայից անջատւում եւ առանձին խանութիւն է դառնում Ղազանի խանութիւնը (1445): Քիչ յետոյ, 1449 թ., հիմնադրւում է Ղրիմի ինքնուրոյն խանութիւնը, իսկ 1450-1464 թթ. միջոցին՝ Աստրախանի խանութիւնը: Այսպիսով, Ոսկէ Հորդան, զրկուած բարեբեր, զարգացած եւ նստակեաց բնակչութիւն ունեցող հիմնական շրջաններից, իր հոգեվարքն է ապրում՝ այլեւս կարեւոր դեր չկատարելով միջազգային տարանցիկ առեւտրի բնագաւառում[1]:

Վոլգայի ցամաքային ու գետային ճանապարհները, ինչպէս նաեւ Ղրիմից դէպի Միջին Ասիա ձգուող կարաւանային մայրուղին (որ հատւում էր Վոլգան Սարայ-Բերքէ քաղաքի մօտակայքում), ամբողջապէս ընկնում է Ղազանի խանի տիրապետութեան տակ:

Քաղաքական ու սոցիալ-տնտեսական նոր այս պայմաններում մերձվոլգեան հայկական գաղթօջախների բնակչութիւնն արագօրէն յաղթահարում է ստեղծուած դժուարութիւնները եւ շարունակում կատարել փորձուած վաճառականի եւ հմուտ արհեստաւորի իր դերը Ղազանի խանութեան նշանաւոր քաղաքներում՝ Բուլղարում, Սուվարում եւ, յատկապէս, խանութեան տնտեսական կենտրոնում՝ Ղազան մայրաքաղաքում: Ամէն տարի մայիսի վերջերին քաղաքի մերձակայքում գտնուող «Վաճառականների կղզում» (ГОСТИНЫЙ ОСТРОВ) կազմակերպւում էր միջազգային նշանակութիւն ունեցող մեծ տօնավաճառ, որին մասնակցում էին Ռուսաստանից եւ արեւելեան երկրներից ժամանած բազմաթիւ վաճառականներ[2]: Ղազանի դերը, որպէս Ռուսաստանի եւ արեւելեան երկրների առեւտրի կարեւոր հանգուցակէտ, յատկապէս մեծանում է XV դ. կէսերին, երբ ստորին Վոլգայի տափաստաններով անցնող ճանապարհները խափանուել էին եւ դեռեւս չէին կարգաւորուել Թուրքիայի հետ տնտեսական կապերը[3]: Հէնց այս ժամանակ քաղաքի մերձակայքում կազմակերպուել է հայկական կայուն գաղթօջախ, որի աղօտ յիշատակները հասել են մեզ՝ «Արմեանսկայա» կոչուող զոյգ փողոցների անուններով[4]:

Ղազանի հայերն ունեցել են իրենց եկեղեցին եւ գերեզմանատունը, որից պահպանուել է միայն 4 տող արձանագրութեամբ մի տապանաքար[5]:

Երեւան, 1963, էջ 121-123:

1 **Б. Д. Греков, А. Ю. Якубовский**, Золотая орда и ее падение, М.-Л., 1950, էջ 407-416

2 Այդ տօնավաճառի մասին «Ղազանեան տարեգրքի» մէջ գրուած է. "На тот же день съеждяхуся в Казань изо всея Руския земля богаты купцы и многия иноземцы дальния и торговаху с Русью великими драгими товары". "Полное собрание русских летописей" (այսուհետեւ՝ ПСРЛ), т. XIX, էջ 23:

3 "Очерки истории СССР", т. II, М., 1953, էջ 432

4 Նոյն տեղում, էջ 432: Նաեւ՝ **Б. М. Миллер**, Об армянских надписях в Болгарах и Казани. ИРАИМК, հտ. IV, էջ 69:

5 **Հ. Ջանփոլադեան**, նշ. աշխ., էջ 221: Հայերէն արձանագրութեամբ տապանաքարերի առկայութիւնը, նոյնիսկ

Պէտք է նկատել, որ ղազանցի հայերի մեծամասնութիւնը աշխատում էր առեւտրի ոլորտում, սակայն նրանց մէջ, անշուշտ, եղել են նաեւ հմուտ արհեստաւորներ եւ այլ զբաղմունքի տէր մարդիկ: «Ղազանեան տարեգրքի» մէջ պահպանուած է հետաքրքրական մի վկայութիւն Ղազանի խանի բանակում ծառայող հայ թնդանօթաձիգների մասին: Երբ 1552 թ. ռուսական ցար Իւան Ահեղի զօրքերը պաշարել էին Ղազանը, հայ թնդանօթաձիգները, ըստ երեւոյթին, հրաժարուել էին կռուել ռուսների դէմ: Թաթարները հայերին շղթայել են թնդանօթներին եւ, մերկ սրերով նրանց գլխավերեւ կանգնած, հարկադրել կրակ բացել ռուսների վրայ: Հայերը, սակայն, մահուան վտանգն իսկ արհամարհելով, այնպէս են արձակել արկերը, որ ռուսական զօրքերին որեւէ վնաս չհասնի: Այդ կապակցութեամբ տարեգիրը վկայում է. "Лестно и худо бияху и не улучаху, аки неумеющи, и ядра черес все перепущаху или не допущаху, едва кого убиваху"[1]:

Թաթարները միաժամանակ բանտարկել եւ խիստ հսկողութեան տակ էին պահում հինգ հազար օտարերկրեայ վաճառականների. «բուխարացիների, եւ շամախեցիների, եւ թուրքերի, եւ հայերի, եւ ուրիշների» ("...Бухар, и Шемахеи, и Турчан, и Армян, и инех")*՝ անշուշտ անդեակ լինելով նրանցից շատերի ռուսասիրութեան մասին*[2]*: Այս թուարկման մէջ, չնայած յատուկ տեղ է յատկացուած հայերին, բայց պէտք է նկատել, որ հայազգի են եղել նաեւ շամախեցի եւ նոյնիսկ «թուրքիացի»* (Турчан) *կոչուածներից ոմանք:*

Իւան Ահեղի այս պատերազմով ոչ միայն Ղազանի խանութիւնն անցաւ ռուսական տիրապետութեան տակ, այլեւ նախապատրաստուեց Աստրախանի նուաճումը (1556): Նոյն այս տարիներին ռուսական գերիշխանութիւնը ճանաչեցին նաեւ Սիբիրի խանները եւ Նողայի իշխանները: Վոլգեան մայրուղին, այսպիսով, մէկ ծայրից միւսը իր ամբողջութեամբ անցաւ ռուսական տիրապետութեան տակ. Վոլգան մէկընդմիշտ դարձաւ ռուսական գետ՝ "Матушка Волга"*:*

Ղազանի հայկական գաղթօջախի մասին որոշ փաստեր կան նաեւ միջնադարեան հայկական աղբիւրներում: Գիտենք, օրինակ, որ այդ քաղաքում եւս ապրել են գրասէր հայեր, որոնց պատուէրով ընդօրինակուել ու բազմացուել են հայերէն ձեռագիր-մատեաններ: Այսպէս, XVII դ. 40-ական թթ. այստեղ աշխատել է Վասիլ անունով մի գրիչ, որը խոջայ Աւետիսի պատուէրով ընդօրինակել է երկու Աւետարան[3]*:*

Ղազանի խանութեան վերացումից յետոյ Ռուսաստանի ներքին եւ արտաքին առեւտրի համար անհամեմատ մեծ նշանակութիւն ստացաւ ռուսական հնամենի քաղաք Նիժնի-Նովգորոդը: Այն հիմնադրուել էր 1221 թ. եւ, արագ զարգանալով, դարձել ռազմական նշանակութիւն ունեցող կարեւորագոյն յենակէտ՝ ընդդէմ նախ վոլգեան բուլղարների, ապա Ղազանի թաթարների: Այստեղ էին խաչաձեւվում Ռուսաստանից դէպի Արեւելք տանող հիմնական ճանապարհները: 1350 թ. Նիժնի-Նովգորոդը դարձաւ Սուզդալեան-Նիժեգորոդեան միացեալ իշխանութեան մայրաքաղաքը. իսկ XIV դ. վերջերին Մոսկուայի մեծ իշխան Վասիլի I-ը իր

այն դէպքում, երբ յայտնաբերուել են միայն մէկ-երկու նմուշ կամ թերի բեկորներ, երբեմնի շէն գաղթօջախի գոյութեան խօսուն փաստ պէտք է համարել:

1 ПСРЛ, т. XIX, էջ 130. **К. Н. Григорьян**, Из истории русско-армянских культурных связей X-XVII веков. "Труды отдела древнерусской литературы", IX, М.-Л., 1953, էջ 334

2 **М. В. Фехнер**, Тоговля русского государства со странами Востока в XVI веке, М., 1952, էջ 56

3 Մէկը Մաշտոցի անուան Մատենադարանի N 3004 ձեռագիրն է, ընդօրինակուած 1642 թ., միւս ձեռագիրը պահւում է Ղազանի համալսարանում:

տիրապետութիւնը տարածեց հին Ռուսիայի արեւելեան այս շրջանների վրայ, եւ Նիժնի-Նովգորոդը բարգաւաճելով՝ դարձաւ օրաւուր հզօրացող Մոսկովեան իշխանութեան կարեւորագոյն տնտեսական կենտրոններից մէկը: 1525 թ., ի հակադրութիւն Ղազանի, Մոսկուայի մեծ իշխան Վասիլի III-ը Նիժնի-Նովգորոդի մօտակայքում հիմնադրեց Մակարեւեան նշանաւոր տօնավաճառը: Իսկ Ղազանի անկումից յետոյ Նիժնի-Նովգորոդը, աւելի ընդարձակելով տնտեսական իր կապերը, դառնում է Ռուսաստանի առեւտրական կենտրոնը՝ հսկայական դեր կատարելով համառուսական շուկայի ձեւաւորման գործում: Յատուկ ուսումնասիրութեան նիւթ կարող է դառնալ Նիժնի-Նովգորոդեան առեւտրի բնագաւառում հայ վաճառականների կատարած դերի համակողմանի բացայայտումը: Մենք, սակայն, կբաւարարուենք՝ յիշատակելով հետեւեալ փաստը. 1368 թ. Մեծ Նովգորոդի կողմից կազմակերպուող եւ վոլգեան գետուղու վրայ գործող զինուած ջոկատները, որ յայտնի են ուշկույնիկներ անունով[1]*, յարձակում են գործել Նիժնի-Նովգորոդում գտնուող մահմեդականների ու հայերի վրայ* ("бесерман и армен")[2]*, ոչնչացրել նրանց նաւակներն ու կողոպտել նրանց պատկանող մեծաքանակ ապրանքները* ("Товар их безчисленно весь пограбиша")[3]:

***

Նիժնի-Նովգորոդից Մոսկուա էին հասնում երկու ճանապարհով. մէկն Օկա գետով տանում էր Կոլոմնա, իսկ Կոլոմնայից Մոսկուա գետով՝ Մոսկուա. միւս ճանապարհը Վոլգայով շարունակւում էր մինչեւ Եարոսլաւլ, ապա Մոսկուա՝ ցամաքային ճանապարհով[4]*:*

Մենք կարող էինք, այս երկու ճանապարհներից մէկն ընտրելով, ուղեւորուել դէպի Մոսկուա այդ մեծ քաղաքում հայկական յիշատակներ որոնելու նպատակով, սակայն, դանդաղեցնելով մեր ընթացքը, փորձենք համառօտակի ծանօթանալ Մոսկուայից դէպի արեւելեան երկրներ ձգուող միւս կարեւոր մայրուղուն, որի տնտեսական նշանակութիւնը փոքր-ինչ գերագնահատուած է որոշ ուսումնասիրողների կողմից:

Պիմէն մետրոպոլիտի՝ Մոսկուայից Կոստանդնուպոլիս կատարած ճամփորդութեան ուղեգրութիւնը (շարադրուած XIV դ. 90-ական թթ.)[5] *հնարաւորութիւն է ընձեռում ճշգրիտ հետեւելու Մոսկուա-Օկա-Դոն-Ազախ-Ղրիմ-Փոքր Ասիա գետային-ցամաքային-ծովային ճանապարհի ուղեգծին*[6]*:*

1 Մեծ Նովգորոդի բոյարների կողմից կազմակերպուող ուշկույնիկների աւազակային այս արշաւների նպատակն էր Վոլգեան մայրուղուց դուրս մղել արեւելեան երկրներից ժամանող վաճառականներին, իրենց ձեռքում կենտրոնացնելու համար նաեւ տնտեսական վիթխարի նշանակութիւն ունեցող այդ ճանապարհով կատարուող առեւտուրը: Ուշկույնիկների արշաւանքները նուազեցին XV դարի ընթացքում եւ վերջ գտան 1478 թ. յետոյ, երբ Մոսկուայի գերիշխանութիւնը տարածուեց Մեծ Նովգորոդի վրայ:

2 Ակադ. Մ. Տիխոմիրովը նշել է, որ յաճախ "бесерман" էին կոչւում մուսուլմանական երկրներից ժամանած բոլոր վաճառականները, անկախ դաւանանքից եւ ազգային պատկանելութիւնից (**М. Н. Тихомиров**, Средневековая Москва в XIV-XV вв., М., 1957, էջ 131-132):

3 ПСРЛ, т. XVIII, էջ 104

4 **Н. Костомаров**, Очерк торговли московского государства в XVI и XVII столетиях, СПБ., 1862, էջ 100-101

5 "Хождение Пимена в Царьград" (ПСРЛ, т. XI, էջ 95 եւ հտ.)

6 Մոսկուա եւ Օկա գետերով նաւարկելով եւ անցնելով Կոլոմնա, Պերեյասլաւ (Ռեազան) քաղաքներով՝ ուղեւորները դուրս էին գալիս ցամաք եւ շարժւում դէպի Դոնի ակունքները: Դուբոկ քաղաքի մօտ կրկին նաւակներ էին վերցնում եւ նաւարկելով դէպի հարաւ հասնում Դոնի գետաբերանի մօտ կառուցուած Ազով (Տանա) քաղաքը:

Ուսումնասիրելով այդ մայրուղու ընթացքը եւ պարզելով դրան առնչուող եւ գիտակա որոշակի հետաքրքրութիւն ներկայացնող մի շարք հարցեր՝ մեծանուն գիտնական Մ. Ն. Տի-խոմիրովը հակուած էր կարծելու, թէ մոնղոլական արշաւանքներից յետոյ, մինչեւ XIV դ. կէ-սը, այս ճանապարհը շատ աւելի բանուկ է եղել, քան Մոսկուայից դէպի Սեւ ծով տանո դնեպրեան կամ վոլգադոնեան ճանապարհը: Թւում է, թէ այս եզրակացութիւնը կարօտ աւելի համոզիչ փաստարկների: Միջազգային ապրանքափոխանակութեան համար Դոնը, ան տարակոյս, այս շրջանում կարեւոր դեր կատարում էր՝ սակայն, հիմնականում իր ստորին հո սանքով, սերտօրէն շաղկապուած լինելով Վոլգայի հետ: Դոնի գետաբերանում գտնուող Ազով քաղաքը, որ եւրոպական աղբիւրներում յայտնի է Տանա անունով, իսկ հայերի կողմից կոչուել է Ազախ, կարեւոր նշանակութիւն է ունեցել ոչ միայն որպէս միջազգային համբա ձեռք բերած նաւահանգստային քաղաք, այլեւ որպէս ցամաքային ճանապարհների հանգու ցակէտ: Ազովից էր սկսում Հիւսիսային Կովկասով դէպի Վոլգայի գետաբերանը՝ Սարայ-Բա թու եւ Աստրախան, այստեղից էլ՝ դէպի Միջին Ասիա, այնուհետեւ դէպի Չինաստան ձգուող այն ճանապարհը, որն այնքան հանգամանօրէն նկարագրուած է Ֆլորենտացի վաճառական Ֆ. Բ. Պեգոլոտտիի կողմից՝ XIV դ. սկզբներին[1]:

Ղրիմի արեւելեան ծովափում հաստատուած եւ Կաֆայի տէրը դարձած ջենովացիները մեծ ջանքեր թափեցին Ազովը եւս իրենց յենակէտը դարձնելու համար, եւ այդ նրանց յաջո ղուեց 1316-1332 թթ.: Սակայն քիչ անց ջենովացիների մրցակից վենետիկցիները, անշուշտ, նիւթական մեծ միջոցներ վատնելով, կարողացան Ոսկէ Հորդայի տիրակալ Ուզբէկ խանից հրովարտակ ստանալ Ազովում մշտական ներկայացուցիչ ունենալու եւ այդտեղ անարգել ու անմաքս առեւտուր անելու համար: Ազովը, փաստօրէն, դարձաւ վենետիկցիների միջնաբեր դը: Նրա տնտեսական նշանակութիւնը շատ մեծ էր, երբ 1343 թ. մոնղոլները ներխուժելով՝ աւերածութիւններ գործեցին այստեղ, եւ Ջանիբէկ խանը ժամանակաւորապէս դադարեցրեց իտալացիների հետ առեւտուրը, Իտալիայում կրկնակի բարձրացան մետաքսի եւ արեւելեան համեմունքի գները[2]:

Արեւելեան ապրանքները Ազովից արտահանւում էին ոչ միայն Իտալիա եւ հարաւային Եւրոպայի ուրիշ երկրներ, այլ նաեւ Գերմանիա: Նիւրնբերգցի մի վաճառական՝ Ուլման Շտրոմէրն, իր հետաքրքրական նոթերի մէջ արձանագրել է, որ իր հայրենի քաղաքը Լուովի ճանապարհով արեւելեան ապրանքներ է ստացել Տանա (Ազով) քաղաքից[3]:

Ազովը, ինչպէս նշել է Հայդը, ծովային ճանապարհով կապուած էր Ակքերմանի հետ: Ակքերման հասցուած ապրանքները Դնեստրի վրայով փոխադրւում էին Լուով, իսկ այնտե-ղից էլ՝ կենտրոնական Եւրոպայի շրջանները: Եւ եթէ նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ բոլոր քաղաքներում (Ակքերման, Լուով եւ այլն) հայ վաճառականները կազմում էին

Մոսկուայից Ազով ճանապարհը տեւում էր շուրջ 40 օր: Ազովից ճամբորդելով՝ 5 օրում հասնում էին Կաֆա, այս-տեղից էլ նոյնքան ժամանակում՝ Սինոպ, իսկ Սինոպից 18 օրում՝ Կ. Պոլիս: Տե՛ս **М. Н. Тихомиров**, Пути из России в Византию в XIV-XV вв. "Византийские очерки" (Труды советских ученых к XIV конгрессу византинистов). М., 1971, էջ 4-7: Նոյնի՝ Россия и Византия в XIV-XV столетиях. "Зборник Радова Византолошког института", N 7, էջ 23-38:

1 Francesco Balducci Pegolotti. La pratica della mercatura. Ed. by A. Evans The Medival Academy of America, Cambridge (Mass.), 1936, էջ 21

2 **В. Е. Сыроечковский**, Гости-сурожане, М.-Л., 1935, էջ 1

3 **В. Василевский**, Древняя торговля Киева с Регенсбургом: ЖМНП, 1888, июль, էջ 148

բնակչութեան մի զգալի մասը, ապա կարելի կլինի առանց կասկածի հետեւեցնել, թէ Ազովում եւս գոյութիւն է ունեցել կազմակերպուած հայ գաղթօջախ:

Ազովը, որպէս ջրային ու ցամաքային ճանապարհների հանգուցակէտ, իր բացառիկ դերը պահպանեց մինչեւ XV դ. սկզբները, երբ 1418 թ. մոնղոլները գրաւեցին ու աւերեցին քաղաքը. վենետիկցիները վերջնականապէս դուրս մղուեցին Սեւ եւ Ազովի ծովերից[1]: Դոնի նշանակութիւնը աւելի նուազեց նոյն դարի կէսերից, երբ թուրքերը գրաւեցին Կոստանդնուպոլիսը, իսկ այնուհետեւ տէր դարձան Ղրիմին ու Դոնի գետաբերանին:

Անշուշտ, իրաւացի էր ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ Թուրքիայի առաջխաղացումն ու գրաւումները մեծ աղէտ էր համարում ոչ միայն Վենետիկի ու Ջենովայի, այլեւ Ռուսաստանի համար, որը Կաֆայի եւ Ազովի անկումից յետոյ կորցրեց դէպի Եւրոպա բացուած եւ իր տնտեսական զարգացման համար վճռական նշանակութիւն ունեցող «պատուհանը»[2]:

Ազովի հայկական գաղութի ու նրա տնտեսական դերի մասին աննշան տեղեկութիւններ են պահպանուել, սակայն կասկածի ենթակայ չէ, որ այնտեղ քաղաքի ծաղկման շրջանում ապրել են մեծ թուով հայեր՝ ունենալով համայնքային իրենց մարմինները եւ առնուազն մէկ եկեղեցի (Գրիգոր Լուսաւորչի անունով)[3]: 1341 թ. Տէրտէր Երեւանցի թափառական գրիչը այստեղ, «անման Ազախում», ընդօրինակել է բովանդակալից մի ժողովածու՝ յիշատակարանի մէջ գրելով նաեւ մեզ հետաքրքրող հետեւեալ տողերը. «Գրեցաւ գիրքս յաշխարհիս ամենաւրհնեալ խան Աւզպէկին եւ բարեհամբաւ որդոյ իւրոյ Դինիպէկին, ի քաղաքս յԱզախս, առ դրան սուրբ Գրիգորոյ Լուսաւորչին, ի յայպիսկոպոսութեանն տէր Ստեփաննոսի՝ որդոյ Գրիգորի քահանայի Սուղտացոյ, եւ յաւագերիցութեանն Սարգսի՝ որդոյ Մանուէլ քահանայի»[4]:

1328-1365 թթ. Ղրիմում գրուած ձեռագրերի մէջ բազմիցս յիշատակուած է Հայաստանեայց եկեղեցու Ամենայն Հիւսիսական կողմանց կոչուող թեմի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը կամ արքեպիսկոպոսը[5]: Կարծում ենք, որ այստեղ եւս նոյն գործչի անունն է տրուած, ուստի Ազովը Ղրիմի հայ եպիսկոպոսի ենթակայութեան տակ եղող գաղթավայրերից է եղել: Եպիսկոպոսի կողքին յիշատակուած է Մանուէլի որդի Սարգիս աւագերէցը՝ որ-

1 **Е. С. Зевакин и Н. А. Пенчко**, Очерки по истории генуэзских колоний на западном Кавказе в XIII и XIV вв., "Исторические записки", 1938, N 3, էջ 76. **Г. Гиббонс**, История торговли Европы. СПб., 1901, էջ 52

2 Մէջ ենք բերում Մ. Տիխոմիրովի խօսքերը. "Донской путь и связи с Судаком, Кафой и Константинополем в XIV веке были своего рода "окном в Европу", непосредственной связью русских земель с богатым Средиземноморьем. Захват итальянских колоний в Крыму турками надо считать большим бедствием не только для итальянских торговых республик, в первую очередь для Венеции и Генуи, но и для России" (**М. Н. Тихомиров.** Средневековая Москва, էջ 131):

3 Ասում ենք «առնուազն», նկատի ունենալով, որ 1341 թ. Նազխաթուն անունով մի կին, իր հանգուցեալ որդու յիշատակին մի Աւետարան է նուիրել Ազախի Ս. Գրիգոր եկեղեցուն. յիշատակարանում գրուած է. «Ետու ի սուրբ Գր[իգոր] յԱզախ քաղաք՝ եկեղեցին տէր Մանուէլի» («ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 330): Այստեղից կարելի է հետեւեցնել, որ տէր Մանուէլի եկեղեցուց բացի, թերեւս, Ազովում եղել է նաեւ մի ուրիշ հայկական եկեղեցի: Ուշագրաւ է նաեւ, որ 1339 թ. այստեղ մի ձեռագիր է ընդօրինակել Մկրտիչ քահանան (նոյն տեղում, էջ 321), ըստ այդմ Ազովը եղել է հայ գաղթաշխարհի գրչութեան կենտրոններից մէկը:

4 «ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 328-329

5 Մէկ անգամ միայն, 1328 թ. մի յիշատակարանի մէջ, կոչուած է «արքեպիսկոպոս… Խրիմի աշխարհին» («ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 208):

պէս Ազախի հայ գաղթօջախի հոգեւոր առաջնորդ: Աւագերէցի գոյութիւնն իսկ ենթադրել է տալիս մի քանի քահանաների առկայութիւնն այդ կենտրոնում, իսկ այդ հանգամանքն ինքնին Ազովի հայկական համայնքի բազմամարդութեան ստոյգ վկայութիւնն է հանդիսանում: Ըստ այդմ՝ պէտք չէ տարակուսել, որ Ազովի հայ վաճառականները գործօն դեր են կատարել վենետիկեան հասարակապետութեան տնտեսական խոշոր նշանակութիւն ունեցող այդ գաղութի կեանքում. ի թիւս այլ երկրների (Ոսկէ Հորդա, Միջին Ասիա, Անդրկովկաս եւ այլն) նրանք սերտ կապեր պէտք է հաստատած լինէին նաեւ կենտրոնական Ռուսաստանի բաժնետիրական իշխանութիւնների եւ մասնաւորապէս՝ Մոսկովեան մեծ իշխանութեան հետ:

* * *

Որքան էլ կարեւոր լինէր Ազովի դերն ու տնտեսական նշանակութիւնը եւրոպական երկրների առեւտրական կապիտալի համար, այն չէր կարող մրցակցել Ղրիմի նշանաւոր կենտրոն, ջենովական առեւտրական կապիտալի խարսխակայեան Կաֆայի հետ, որը XIII-XV դդ. (մինչեւ Թուրքիայի կողմից նուաճումը) Արեւելքի եւ Արեւմուտքի ապրանքափոխանակութեան հիմնական կէտն էր եւ մի շարք կողմերով առաջ էր անցել նոյնիսկ Եւրոպայի ու Ասիայի ոսկէ կամուրջը համարուող Կոստանդնուպոլսից:

Այստեղ անհրաժեշտութիւն է զգացւում նշելու, որ, IX դ. սկսած, արեւելեան առեւտրի հռչակաւոր ճանապարհն անցնում էր Ղրիմի վրայով, եւ Սեւ ծովը միջազգային ապրանքափոխանակութեան ասպարէզում յաջողութեամբ մրցում էր Միջերկրականի հետ: Հայաստանի պատմութեան համար այդ բախտորոշ ժամանակաշրջան էր. դարաւոր պայքարն օտար բռնակալութեան դէմ պսակուեց յաջողութեամբ եւ ժողովուրդը, թօթափելով արաբական ծանր լուծը, վերստեղծեց իր նոր պետականութիւնն ու տնտեսական բարգաւաճման ընթացքի մէջ մտաւ: Դրան նպաստեց նաեւ Հայաստանի աշխարհագրական դիրքը: Հայ վաճառականները, ամենայն հաւանականութեամբ, հէնց այդ ժամանակ տնտեսական սերտ կապեր հաստատեցին Ղրիմի վաճառաշահ քաղաքների հետ՝ բազմամարդ գաղթավայրեր հաստատելով նրա տարբեր մասերում: Թուրք-սելջուկների աշխարհաւեր արշաւանքները եւ հայրենի երկրի տնտեսական կեանքի յետադիմութիւնը ժամանակաւորապէս խզեցին այդ կապերը: Ղրիմի ու ողջ Սեւ ծովի առեւտուրն ամբողջովին իրենց ձեռքն առնելու համար հրապարակ իջան իտալական երկու առեւտրական հասարակապետութիւններ՝ Վենետիկն ու Ջենովան: Դրանց մրցակցութիւնը դարաւոր պատմութիւն ունէր: Վենետիկը տակաւին 1082 թ. Բիւզանդական կայսրութեան սահմաններում անմաքս առեւտուր անելու առանձնաշնորհումներ էր ստացել: Երբ խաչակրաց IV արշաւանքի հետեւանքով 1204 թ. Բիւզանդական կայսրութիւնը բզկտուեց, եւ Կոստանդնուպոլիսը գրաւուեց եւրոպացիների կողմից, Վենետիկը տէր դարձաւ կայսրութեան տարածքի երեքութերորդ մասին[1] եւ փորձեց իր ձեռքում կենտրոնացնել սեւծովեան ողջ առեւտուրը: Այստեղ, սակայն, նա յամառ դիմադրութեան հանդիպեց ջենովացիների կողմից, որոնք նոյնպէս գաղութատիրական մեծ ախորժակներ ունէին: 1169 թ. Մանուէլ Ա կայսեր հետ կնքուած պայմանագրով, որը վերահաստատուեց Իսահակ Անգելոս կայսեր կողմից 1192 թ., ջենովացիները ստացել էին Սեւ ծովում առեւտուր անելու բացառիկ առանձնա-

1 Վենետիկի տիրապետութեան տակ անցան Էպիրոսը, Ակարնանիան, Էտոլիան, Իոնիական կղզիները, Պելոպոնէսը, արխիպելագի հարաւային եւ արեւմտեան կղզիները, Դարդանելի նեղուցի եւ Մարմարայի ծովի մի շարք քաղաքներ, Թրակիայի քաղաքներից շատերը (Ադրիանապոլիս եւ այլն), Կ. Պոլսի արուարձան Պերան, Կրետէ կղզին եւ այլն: Տե՛ս **Вернер Зомбарт**, Современный капитализм, т. I, М., էջ 311:

շնորհումներ[1]. 1260 թ. Ջենովան ռազմական օգնութիւն ցոյց տուեց Միքայէլ Պալեոլոգին՝ լատինների դէմ նրա մղած պայքարում: Ի տրիտուր այդ օգնութեան նա ստացաւ Կ. Պոլսի Պերա եւ Գաղատա արուարձանները: 1266 թ. ջենովացիները, թոյլտուութիւն ստանալով Մանգու խանից, նախկինում քիչ յայտնի ծովափնեայ մի բնակավայրում հիմնադրեցին իրենց առեւտրական կենտրոնը՝ յետագայում մեծ հռչակ ստացած Կաֆա քաղաքը[2]: Կան հիմքեր ենթադրելու, որ ջենովացիներից առաջ այդ վայրում հաստատուած են եղել հայ գաղթականներ: Շուտով Կաֆան դարձաւ միջազգային առեւտրի կարեւորագոյն կենտրոն: Կաֆայեցի վաճառականները ծովային ու ցամաքային ճանապարհներով տնտեսական սերտ կապեր ստեղծեցին մերձաւոր ու հեռաւոր շատ երկրների հետ: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ, սկսած XIII դ. վերջերից, արեւելեան ապրանքների հոսքը դէպի Եւրոպա մեծ չափով կատարւում էր Կաֆայի վրայով, եւ միջազգային ապրանքափոխանակութեան ասպարէզում Սեւ ծովը յաջողութեամբ մրցում էր Միջերկրականի հետ[3]: Բացառիկ նշանակութիւն ունէր Կաֆան Ռուսաստանի եւ մասնաւորապէս՝ Մոսկովեան մեծ իշխանութեան համար: Ռուսական բաժնետիրական իշխանութիւնների մեծագոյն մասը ջենովական Կաֆայում էր անմիջական շփման մէջ մտնում կենտրոնական Եւրոպայի եւ միջերկրածովեան աւազանի երկրների հետ:

Անշուշտ, իրաւացի է ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը, երբ գրում է. «Նովգորոդն ու Մոսկուան իրենց առեւտրական ջանքերն ուղղում էին տարբեր կողմեր: Նովգորոդեան առեւտուրը կողմնորոշուած էր դէպի հիւսիս, իսկ մոսկովեանը՝ դէպի հարաւ: Նովգորոդը ապրանք էր մատակարարում գերմանական Հանզեան քաղաքներին, իսկ մոսկովեան առեւտրական գործարքների մասնակիցները իտալական հասարակապետութիւններն էին՝ Ջենովան եւ Վենետիկը»[4]:

1475 թ. թուրքերը նուաճեցին Ղրիմը եւ յետագայ տասնամեակների ընթացքում իրենց հսկողութեան տակ առան Սեւ ծովի ողջ աւազանը: Ղրիմի խանը դարձաւ սուլթանի հպատակ-կամակատարը: Անցնելով թուրքական տիրապետութեան տակ՝ ղրիմեան առեւտրական մայրուղին կորցրեց իր նախկին նշանակութիւնը: Թուրքերը ոչ միայն Սեւ ծովից դուրս շպրտեցին իտալացիներին, այլեւ ծանր հարուած հասցրին Ռուսաստանի արտաքին առեւտրին: Յետագայում, տասնամեակների մաքառումից յետոյ, կիսակործան Կաֆան սկսեց կենդանութեան նշաններ ցոյց տալ: Կաֆայեցիների յամառ ջանքերով հնարաւոր եղաւ մասամբ վերականգնել դարերի ընթացքում ամրապնդուած տնտեսական առնչութիւնները մէկ կողմից՝ Հիւսիսային Կովկասի, Իրանի եւ Թուրքիայի, միւս կողմից՝ Լեհաստանի եւ Ռուսաստանի հետ:

Միջնադարեան Ղրիմի տնտեսական նշանակութեան մասին հանրայայտ գիտելիքների համառօտ այս շարադրանքից յետոյ անհրաժեշտութիւն է առաջանում թռուցիկ մի ակնարկով վերաշարադրելու ղրիմահայութեան պատմութեան մասին գիտութեանը յայտնի փաստերը՝ ըստ հնարաւորի որոշ լրացումներ ու ճշգրտումներ կատարելով: Բայց մինչեւ այդ հարկ ենք համարում մեր վերաբերմունքը ճշգրտել ղրիմահայութեան պատմութեան կարեւորագոյն սկզբնաղբիւր համարուած Յիշատակարանի նկատմամբ: Այն գրանցուած է 1690 թ. Ղրիմում

1 **А. Л. Якобсон**, Крым в средние века, М., 1973, էջ 79 եւ հտ.

2 **Е. С. Зевакин и Н. А. Панчко**, Նշւ. աշխ., էջ 75

3 "История стран зарубежной Азии в средние века", изд. "Наука", М., 1970, էջ 391

4 **М. Н. Тихомиров**, Средневековая Москва..., էջ 136

ընդօրինակուած մի Յայսմաւուրքի մէջ[1]: Հայագիտական շրջաններին Յիշատակարանի բովանդակութիւնը յայտնի է եղել XVIII դ. վերջերից, բայց այն գրեթէ ամբողջութեամբ գիտական շրջանառութեան մէջ է դրուել Մ. Բժշկեանի կողմից 1830 թ.[2]:

Այդ Յիշատակարանի հիմնական աղբիւրը XVII դ. անուանի բանաստեղծ ու եկեղեցական գործիչ Մարտիրոս Ղրիմեցու չափածոյ Պատմութիւնն է, որ հէնց հեղինակի ուղղակի վկայութեամբ յօրինուած է բանաւոր զրոյցների հիման վրայ.

«Քանզի պատմագրաց չունիմք նախնական
Գրեալ վասն նորին պարզ եւ յայտնի բան,
Այլ անգիր զրուցաց՝ յարմար եւ պատկան
Առեալ՝ կամիմ լինել նորա պատմաբան»[3]:

Մարտիրոս Ղրիմեցին «անգիր զրոյցներին» հետամուտ է եղել XVII դ. երկրորդ յիսնամեակում (հաւանաբար 70-ական թթ.), այսինքն՝ պատմական մի ժամանակաշրջանում, երբ Ղրիմի հայկական գաղթօջախները բոլորել էին իրենց պատմական գոյութեան առնուազն չորրորդ շրջափուլը[4]:

Տնտեսական ու քաղաքական բազմապիսի ազդակների (աշխարհաւեր պատերազմներ, ծանր հարկապահանջութիւն, միջազգային ապրանքափոխանակութեան ուղիների փոփոխութիւն եւ այլն) հետեւանքով ինչպէս Ղրիմում, այնպէս էլ այլ երկրներում հաստատուած հայկական գաղթավայրերը ոչ միայն ապրում էին տնտեսական աշխուժացման եւ փլուզման միմեանց յաջորդող շրջաններ, այլեւ փոխում էին իրենց բնակչութեան կազմը. գաղթօջախների հին բնակիչները (մանաւանդ տնտեսական մեծ կարողութիւն ունեցող վաճառականները) տնտեսական գործունէութեան աւելի բարենպաստ պայմաններ գտնելու հոյսով զանգուածաբար արտագաղթում էին այլ երկրներ: Ղրիմի հայկական գաղութն, այսպիսով, ինչպէս վկա-

1 ՄՄ ձեռ. N 7442, էջ 280ա-283ա

2 Տե՛ս **Մ. Բժշկեան**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ այլ կողմանս բնակեալս ի հայազանց, սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարադրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք, Վենետիկ, 1830, էջ 335-342: Ինչպէս տեսնում ենք, նոյնիսկ իր աշխատութեան խորագիրը Մ. Բժշկեանը կազմել է հաւատ ընծայելով Յիշատակարանի այն վկայութեանը, որի համաձայն Ղրիմի, Լեհաստանի եւ շատ այլ երկրների հայկական գաղթօջախների բնակչութիւնը սերունդն է հանդիսանում Անի մայրաքաղաքից արտագաղթած հայերի: Բնականաբար, բոլորովին այլ հարցերի նուիրուած այս ուսումնասիրութեան մէջ, մենք անկարող ենք հանգամանօրէն անդրադառնալ այդ գրուածքի բոլոր մասերին: Մեզ համար կարեւոր է պարզել, թէ որոնք են նրա աղբիւրները եւ թէ որչափ են նրանք արժանահաւատ: Յիշատակարանի ամբողջական հրատարակութիւնն իրականացրել է Դիւտ Աղանեանցը, տե՛ս «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ը, Թիֆլիս, 1911, սիւն. 489-496:

3 **Ա. Ա. Մարտիրոսեան**, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 143

4 Ղրիմահայ գաղթօջախների պատմութիւնը կարելի է բաժանել չորս հիմնական շրջափուլերի. ա) Բագրատունեաց շրջան. այս շրջանում ստեղծուած տնտեսական կապերը Ղրիմի թերակղզու հետ խզւում են, եւ հայկական գաղթօջախները խամրում են սելջուկեան արշաւանքների ու տիրապետութեան առաջին շրջանում, բ) Կրկին աշխուժանում են XII դ. վերջերին եւ XIII-ի սկզբներին, երբ պատմական Հայաստանի մի զգալի մասն ազատագրւում է սելջուկեան լծից, գ) Նոր թափ են ստանում Իլխանութեան շրջանում, երբ Ջենովայի ու Վենետիկի առեւտրական կապիտալի ջանքերով՝ Սեւ ծովը առաջնային նշանակութիւն է ստանում միջազգային չափանիշներով, դ) Թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի եւ Կաֆայի նուաճումը ծանր հարուած է հասցնում Ղրիմի առեւտրական կենտրոններին: Մի քանի տասնամեակ յետոյ միայն Կաֆան ուշքի է գալիս, վերականգնւում են նրա տնտեսական աշխարհատարած կապերի մի մասը, սակայն քաղաքը այլեւս երբեք չի հասնում իր նախկին բարգաւաճ վիճակին:

յում են շատ աղբիւրներ, շարունակաբար զրկուել է իր նախկին բնակիչներից, որոնք արտագաղթել են այլ երկրներ՝ ստեղծելով հայկական նոր գաղթօջախներ (Լւով, Կամենեց-Պոդոլսկ եւ այլն): Հին բնակիչների տեղը յետագայում գրաւել են տնտեսական ու քաղաքական զարհուրելի պայմանների հետեւանքով իրենց հայրենի տները լքած նոր գաղթականներ, որոնք ինչ-որ չափով շէնացրել են Ղրիմի անշքացած հայկական բնակավայրերը՝ հայկական թարմ շունչ հաղորդելով նրանց: Հասկանալի է, որ այդ փոփոխութիւնների հետեւանքով խամրում էին պատմական յիշատակները, մոռացւում պատմական դէպքերի յաջորդական օղակներից շատերը, գունազարդւում շատ եղելութիւններ: Այս բոլորից յետոյ դժուար չէ համոզուել այն բանում, որ XVII դ. երկրորդ կէսերին ղրիմահայերի միջավայրում պատմուող «անգիր զրոյցները» հաւաստի շինանիւթ չէին կարող լինել ստոյգ պատմութիւն կերտելու համար:

Եւ այսպէս, ձեռքի տակ չունենալով պատմական ստոյգ աղբիւրներ եւ հաւատ ընծայելով ղրիմահայութեան որոշ շրջաններում տարածուած զրոյցներին՝ Մարտիրոս Ղրիմեցին յանգել է այն եզրակացութեան, որ ղրիմահայութեան հիմնական զանգուածն Անի մայրաքաղաքից է արտագաղթել Ղրիմի թերակղզի ու հաստատուել Կաֆա քաղաքում 1331 թ.՝ մինչեւ այդ երկար ժամանակ ապրած լինելով Վոլգայի գետաբերանի մերձակայքում գտնուող Աղսարայ կոչուած քաղաքում:

Չափածոյ այս գրուածքը Մարտիրոս Ղրիմեցուց մէկ-երկու տասնամեակ յետոյ (1690) աւելի ընդարձակելով, ճոխացնելով եւ պատմական յիշատակարանի ձեւ տալով՝ մուծել է Յայսմաւուրքի մէջ Դաւիթ Ղրիմեցի անունով մի գրիչ: Նրա պատկերացմամբ Անի մայրաքաղաքի բնակչութիւնը, մոնղոլների կողմից քաղաքը գրաւուելուց յետոյ (այդ դէպքը կատարուել է 1236 թ.), ցրուել է աշխարհով մէկ. «Ոմանք գնացին ի Ծուղա,- գրում է նա,- ոմանք ի Վան, եւ այլք ի Սիս. եւ այլք Ախսարայ եկին, հրաման առեալ ի թաթար խանէն բնակեցան անդ ոչ բազում ժամանակս, որ էր զայս ՉԽԸ (1299) թուին»:

Անիի բնակչութեան արտագաղթի եւ Ջուղայում, Վանում, Սսում կամ Պատմական Հայաստանի մի այլ կենտրոնում խարիսխ նետելու մասին այս յայտարարութիւնը չի հաստատւում XIII դ. մեր արժանահաւատ սկզբնաղբիւրների՝ պատմագիրների եւ յիշատակարանների հաղորդած տուեալներով: ՉԽԸ (1299) թուականը աղաղակող անախրոնիզմի արգիւնք է: Եւ եթէ դրան աւելացնենք նաեւ Աղսարայ քաղաքի գտնուելու վայրի մասին Մարտիրոս Ղրիմեցու եւ Յիշատակարանի հեղինակի պատկերացումների իրարամերժ բովանդակութիւնը (ըստ Մ. Ղրիմեցու՝ Աղսարայը գտնուել է Վոլգայի գետաբերանում, իսկ ըստ Յիշատակարանի՝ «ի մէջ Հաշտարխանու եւ Ղազանու»), ապա պարզ կլինի, որ երկու հեղինակներն էլ ո՛չ բաւարար գիտելիքներ են ունեցել եւ ո՛չ վստահելի նիւթ ղրիմահայութեան քիչ թէ շատ հաւաստի պատմութիւն շարադրելու համար:

Միանգամայն անհիմն ու հեքիաթային է նաեւ այդ զոյգ աղբիւրների պնդումն այն մասին, որ Աղսարայում հաստատուած հայերը («իշխանք եւ ազնիւք եւ հասարակ ժողովուրդք»), պայման կապելով ջենովացիների իշխանի հետ, որ բնակւում էր «ի ֆռանկհիսարին Ֆէօտոսիու», Ղրիմ են փոխադրւում՝ ճեղքելով հսկայական այդ տարածութիւնը Աղսարայից մինչեւ Կաֆա՝ զինուած պայքար մղելով թաթարների դէմ («վառեալք զինու, պատերազմելով ընդ թաթարացն, ճեղքեալ գան ի Ղրիմ»):

Ջենովացիների ու հայերի բարգաւաճ վիճակը եւ կարեւոր դերը միջազգային առեւտրի մէջ XIII-XV դդ. սերտօրէն առնչուած էր Ոսկէ Հորդայի հետ ունեցած նրանց տնտեսական կապերի հետ: Թաթարների դէմ հայերի զինուած ընդհարումը XIVդ. 30-ական թթ. բացա-

ռուած է, քանի որ հայերը Կաֆայում եւ Ղրիմի միւս կենտրոններում բնակութիւն էին հաստատում՝ հաշուի առնելով հէնց այդ կենտրոնների դերը միջազգային առեւտրի մէջ, իսկ այդ առեւտուրը չէր կարող բարգաւաճել առանց Ոսկէ Հորդայի վրայով անցնող առեւտրական մայրուղիների:

Նկատի ունենալով այս եւ մի շարք այլ փաստեր՝ կարելի է եզրակացնել, որ Յիշատակարանի հիման վրայ անհնարին է ճիշտ պատկերացում կազմել միջնադարեան հայկական ամենախոշոր ու նշանակալից գաղթօջախի՝ Ղրիմի հայոց պատմութեան հանգամանքների մասին:

Մարտիրոս Ղրիմեցու Պատմութեան եւ Յիշատակարանի մէջ շատ մեծ տեղ է յատկացուած XVII դ. երկրորդ կէսերին ղրիմահայ գաղութում տնտեսական դիրքով ու փարթամութեամբ հռչակուած մեծահարուստ ընտանիքների ծագման հարցերին: Այդ հեղինակները, նոյնիսկ տարրական գիտելիքներ չունենալով միջնադարեան Հայաստանի ֆեոդալական տների ծննդաբանութեան եւ պատմական աշխարհագրութեան վերաբերեալ, ազնուական ծագում են վերագրել Պատմութեան պատուիրատուներին՝ մէկ հարուածով նրանց շաղկապելով միջնադարեան Հայաստանի գրեթէ բոլոր իշխանական տների հետ: Զաւեշտական երանգ ունեն Յիշատակարանի այն տողերը, որոնք կոչուած են բացայայտելու Բագրատունիների եւ Պահլաւունիների հետ շաղկապուել երազող Աբրահամի որդի Տրդատի գերդաստանի տոհմաբանական շղթայի հին օղակները:

Յիշատակարանի հեղինակը տեղեկութիւն ունի, որ նրա նախնիները 1602 թ. Ջալալիների խժդժութիւնների հետեւանքով Ղրիմ են ներգաղթել Պարսից աշխարհից: Սրանց ազնուական ծագումը «հաստատելու» համար հարկ է եղել վերարծարծել ունիթորների երդուեալ հակառակորդ Մաղաքիա Ղրիմեցու յիշատակը, նրա հետ Ղրիմից դէպի Հայաստան առաքել նրա ազգականներից մէկին («պապու եղբօր որդուն»), որպէսզի սա ինչ-որ հրաշքով առնչուի Սիւնեաց ոմն իշխան Իւանէի հետ, լինի նաեւ Աղթամարում եւ Նախիջեւանում, սերունդներ ունենայ, որոնցից սերուած Աբրահամը կրկին վերադառնայ Ղրիմ՝ Բագրատունի-Պահլաւունի նորածիլ գերդաստանի հիմնադիրը հանդիսանալու համար[1]:

Ի՞նչ բանի համար է ստեղծուած այս հէքիաթը: Այս հարցի պատասխանը դիւրութեամբ գտնում ենք, երբ հաշուի ենք առնում, որ «ազնուական» այս գերդաստանի բարեյիշատակ շառաւիղ Տրդատ «Պահլաւունին» իր քրոջ՝ Աննայի հետ միասին կառուցել է տուել Կաֆայի Ս. Նիկողայոս եկեղեցին, հանդիսացել է միաժամանակ այն անձնաւորութիւնը, որի պատուէրով Յիշատակարանի վերջում տեղադրուել է նրա իսկ ցանկութեամբ կազմուած ազգաբանական ծառը, եւ հրահանգ է տրուել գալիք սերունդներին՝ անցնել ծառի ճիւղերը յետագայ ժառանգների անուններով[2]:

1 Մէջ ենք բերում Յիշատակարանի այդ հատուածն ամբողջութեամբ: «Տէր Մաղաքիայն ընդ պապու եղբօր թոռոյն Պետրոսի ելեալ ի Ղրիմոյ գնացին ի յԱղթամարայ (այսպէս - Լ. Խ.) առ Յոհաննէս վարդապետն, որ էր պապու եղբօր որդի տէր Մաղաքիային եւ եղբայր Պետրոսի՝ հօրն Անանիային, որք էին որդիք Իվանայ, ի տոհմէ Պահլաւունեանց, ի գաւառէն Որոտնայ, ի քաղաքէն Վանանդու: Զի Պետրոսըս այս ծնաւ ի Նախիջեւան քաղաքի զԴաւիթ, Դաւիթ զՍեդրակ, Սեդրակ զՄարգար, Մարգար զՍակի, Սակի զԱբրահամ…» եւ այլն (տե՛ս ՄՄ ձեռ. N 7442, էջ 282բ): Այս տողերի հեղինակը, պարզ երեւում է, որ Թովմա Մեծոփեցուց եւ Յայսմաւուրքից բացի ուրիշ «աղբիւր» չի ունեցել: Տարբեր առիթներով այնտեղ պատմուած առանձին դրուագներ (Մաղաքիա Ղրիմեցու Հայաստան գալը, Իւանէ Օրբելեանի հետ կապուած անցուդարձերը եւ այլն) շաղկապելով միմեանց, նա «ստեղծել» է իրենից ակնկալուող տոհմաբանական ծառը, ճիշտ այն հիմունքներով, ինչպէս դրանք ուշ միջնադարում ստեղծում էին ամէնուրեք:

2 Այս մասին դեռեւս մեր դարի առաջին թուականներին հետաքրքրական ու ճիշտ դատողութիւններ է արել

Ըստ այդմ՝ Բագրատունի եւ Պահլաւունի կոչուել ցանկացող Տրդատ Կաֆայեցու եւ նրա նախնիների յիշատակը յաւերժացնելու անսքող մտահոգութեամբ ստեղծուած Պատմութիւնն ու Յիշատակարանը չեն կարող համարուել արժանահաւատ այնպիսի աղբիւրներ, որոնց հիման վրայ կարելի լինէր շարադրել ղրիմահայ գաղթօջախների ստոյգ պատմութիւնը: Յանգելով այս եզրակացութեանը՝ մենք բնաւ էլ այն կարծիքին չենք, թէ նրանց մէջ գոյզն-իսկ չափով չկան պատմական անցուդարձերի իրական յիշատակներ: Հաւատացած ենք, օրինակ, որ ղրիմահայերը իրենց շաղկապել են Բագրատունեաց Հայաստանի մայրաքաղաք Անիի հետ ոչ միայն փառաւոր անցեալով պճնուելու համար, այլեւ՝ յենուելով պատմական հիմք ունեցող որոշ իրողութեան վրայ. Անիի մեծահարուստ վաճառականներն էին առաջին հերթին (Արծնի, Կարսի եւ հայկական այլ քաղաքների վաճառականների հետ միասին), որ գործարար կապեր հաստատեցին Ղրիմի ծովափնեայ քաղաքների հետ, նրանցից շատերում ստեղծեցին յենակէտեր, պահեստներ ու մշտական կայաններ, որոնք յետագայում դարձան կենսունակ գաղթօջախներ[1]:

Պատմական ենթահող է նկատւում նաեւ XIV դ. 30-ական թթ. Աղսարայ քաղաքից մեծ թւով հայերի դէպի Կաֆա եւ Ղրիմի այլ քաղաքներ կատարած զանգուածային ներգաղթի գրոյցի մէջ: Մարտիրոս Ղրիմեցու կարծիքով Աղսարայը Ոսկէ Հորդայի հին մայրաքաղաք Սարայ-Բաթուն է: Իսկ ինչպէս գիտենք, 1330-ական թթ. էր հէնց, որ դադարեց գոյութիւն ունենալուց Սարայ-Բաթուն՝ նշանաւոր այն քաղաքը, ուր ապրում էին մեծ քանակութեամբ հայեր՝ ունենալով իրենց եկեղեցին (գուցէ՝ եկեղեցիները) եւ թեմական առաջնորդը: Սարայ-Բաթուի անկման եւ Կաֆայի ծաղկման թուականների զարմանալի համընկնումները դժուար կլինէր պատահականութեան արդիւնք համարել: Ըստ այդմ՝ ղրիմահայերի միջավայրում գոյութիւն ունեցող անգիր զրոյցներից քաղուած տուեալը 1330 (կամ 1331 կամ 1340) թ. Աղսարայից Ղրիմ կատարուած մեծ ներգաղթի մասին որոշակի արժէք է ներկայացնում ոչ այն առումով, որ ղրիմահայ գաղթօջախները ստեղծուել են հէնց այդ ներգաղթի հետեւանքով (ինչպէս կարծել են շատերը), այլ այն լուսաբանութեամբ, թէ այդ տարիներին, իրօք, Ղրիմի քաղաքներում բնակութիւն են հաստատել Վոլգայի գետաբերանից գաղթած բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք նոր շունչ են հաղորդել վաղ ժամանակներից գոյութիւն ունեցող ղրիմահայ գաղթօջախներին:

Այսպիսով, պարզ է դառնում, որ վաղուց ի վեր գիտական շրջանառութեան մէջ դրուած Յիշատակարանը (Մարտիրոս Ղրիմեցու չափածոյ Պատմութեան հետ միասին) ուշադրութեան արժանի խիստ անբաւարար տեղեկութիւններ է պարունակում ի նպաստ ղրիմահայ գաղթօ-

Երուանդ Շահազիզը (տե՛ս «Նոր-Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք», Թիֆլիս, 1903, էջ 26-27):

1 Այս առիթով ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում մի փաստի վրայ, որը հանգիչ համարուելով կարող է լրացուցիչ կռուան դառնալ Անիի եւ Ղրիմի միջեւ XIII դ. եւ նրանից առաջ գործարար տնտեսական կապերի առկայութիւնը հաստատելու համար: XIII դ. սկզբներին Անի քաղաքում տնտեսական բացառիկ դիրքի էին հասել Հոնենց կոչուող գերդաստանի անդամները, յատկապէս Ամբատորենց Սուլեմայի որդի Տիգրան Հոնենցը, որը հսկայական հարստութիւններ էր դիզել՝ զբաղուելով առեւտրական ու վաշխառուական ընդարձակ գործարքներով: Նրա գործունէութեան մասին հետաքրքրական տեղեկութիւններ են գրանցուած իր իսկ կողմից Անիում կառուցուած եկեղեցու պատին փորագրուած ընդարձակ արձանագրութեան մէջ (տե՛ս «Դիւան հայ վիմագրութեան», պրակ I, Անի քաղաք, կազմեց Յ. Ա. Օրբելի, Երեւան, 1966, էջ 63): Միջնադարեան հայկական շատ աղբիւրներում (յատկապէս ձեռագրական Յիշատակարանների մէջ) Ղրիմի արեւելեան ծովափը կոչւում էր Հոնաց աշխարհ. հաշուի առնելով այդ իրողութիւնը, կարելի է հետեւեցնել, որ Հոնենց գերդաստանի անուան առնչւում է հէնց Հոնաց աշխարհի հետ: Նրանք, ըստ երեւոյթին, տնտեսական սերտ կապեր են ունեցել առաջին հերթին Հոնաց աշխարհի (Ղրիմի) հետ, կամ էլ Անիում բնակութիւն են հաստատել՝ մինչ այդ ապրած լինելով Ղրիմում:

ջախների ստեղծման ժամանակագրական հարցերի եւ վաղ շրջանի պատմութեան ուսումնասիրութեան: Այդ բացը վերացնելու համար այլ կարգի սկզբնաղբիւրների կարիք է զգացւում: Բարեբախտաբար, այդպիսի ստոյգ աղբիւրներ՝ դիւանական փաստաթղթեր (նկատի ունենք յատկապէս Ջենովայի արխիւներում պահպանուած նիւթերը), ձեռագրական յիշատակարաններ, ժամանակագրական տուեալներ եւ այլն, գոյութիւն ունեն բաւարար քանակութեամբ, եւ դրանց ժողովման, դասդասման ու մասնագիտական քննարկման գծով տարուող աշխատանքները նոր են միայն լայն ծաւալ ստանում:

Հայկական յիշատակների անբաւ շտեմարան է հանդիսանում նաեւ Ղրիմի թերակղզին՝ վերգետնեայ ու ստորգետնեայ իր յուշարձաններով: Ձեռնարկելով դրանց համակողմանի ուսումնասիրութիւնը՝ ղրիմահայ գաղթօջախների պատմութեան հարցերը քննարկող մասնագէտները կարողացել են ամբողջական պատկերն ուրուագծել եւրոպական որոշ աղբիւրներում՝ «Ծովային Հայաստան» կոչուած այդ թերակղզու հայկական գաղթօջախների պատմութեան[1]:

Ստորեւ փորձելու ենք համառօտակի վերաշարադրել այդ պատմութեան հիմնական դրուագները՝ կատարելով որոշ ճշգրտումներ ու լրացումներ:

* * *

IX-X դդ. հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխաւորութեամբ տեւական եւ յամառ պայքար մղելով արաբական բռնատիրութեան դէմ, թօթափեց օտար տիրապետութեան դարաւոր լուծը եւ մտաւ սոցիալ-քաղաքական ու տնտեսական բարգաւաճման ընթացքի մէջ: «Շնորհիւ միջազգային առեւտրի գլխաւոր ճանապարհներից մէկի վրայ ունեցած իր դիրքի,- գրել է ակադ. Յ. Մանանդեանը,- Բագրատունեաց Հայաստանը... դառել էր իդեալական չէզոք երկիր տարանցիկ առեւտրի եւ միջազգային յարաբերութիւնների համար»[2]:

Հեռաւոր արեւելեան երկրներից ցամաքային ու ծովային ճանապարհներով Պարսկաստան ներմուծուող եւ այդտեղից Հայաստանի վրայով դէպի Բիւզանդիա ու եւրոպական երկրներ արտահանուող ապրանքներ (հում մետաքս, մետաքսէ ոսկեհուռ գործուածքներ, համեմունք, բուրումնաւէտ նիւթեր, թանկագին քարեր եւ այլն), ինչպէս նաեւ հէնց Հայաստանի քաղաքներում (մասնաւորապէս՝ Դուինում եւ Անիում) արտադրուող ապրանքներ (գորգեր, բրդէ զգեստներ, օթոցներ, ժանեակներ, գօտիներ, մետաքսէ գործուածքներ, արծաթագործութեան եւ ոսկերչութեան արտադրանք, բարձրորակ ներկեր եւ այլն)[3] Հայաստանով անցնող

1 Նկատի ունենք յատկապէս Խ. Փորքշեանին եւ Վ. Միքայէլեանին, որոնց արժէքաւոր ուսումնասիրութիւնները բազմիցս վկայակոչելու ենք յաջորդ էջերում:

2 **Я. А. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, 2-ое изд., Ереван, 1954, էջ 203: Յ. Մանանդեանը վկայակոչում է Վ. Գուրկո-Կրեաժինին, որը նոյնպէս շեշտել է Հայաստանի բացառիկ նշանակութիւնն այդ շրջանում՝ «իբրեւ միակ տարանցիկ ճանապարհ, երկու կռուող կողմերի (հմմ՝ Բիւզանդական կայսրութեան եւ արաբական խալիֆաթի - Լ. Խ.) առեւտրական յարաբերութիւնների համար» (տե՛ս **В. Гурко-Кряжин,** Прошлое и настоящее Советской Армении. "Новый Восток", кн. 16-17, 1927, էջ 206):

3 Հայաստանի քաղաքներում արտադրուող ու հեռաւոր երկրներ արտահանուող ապրանքների տեսակների ու բարձր որակի մասին բազմաթիւ տեղեկութիւններ են գրանցուած արաբական (ալ-Իսթախրի, իբն-Հաուկալ, ալ-Մուկադդասի եւ այլն) եւ պարսկական (Հուդուդ ալ-Ալամ) աղբիւրներում: Դրանց մեծագոյն մասը գիտական շրջանառութեան մէջ է դրել Ն. Լ. Կարաուլովը: Տե՛ս **Н. А. Караулов.** Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", вып. XXIX (Тифлис, 1901), вып. XXXI (1902), вып. XXXVIII (1903). Այս նիւթերը լայնօ-

կարաւանային ճանապարհներով[1] մեծ մասամբ հէնց հայ վաճառականների ջանքերով հասցւում էին Սեւ ծովի հարաւարեւելեան նաւահանգիստները, այնուհետեւ՝ դէպի Կոստանդնուպոլիս, դէպի Դանուբի գետաբերան ու դէպի Ղրիմ:

Միջազգային առեւտրի մէջ ներգրաւուած հայկական քաղաքների տնտեսական զարգացման ու հեռաւոր երկրների հետ հաստատուած կապերի մասին բաւարար տեղեկութիւններ չեն պահպանուել: Ուշագրաւ են յատկապէս Արիստակէս Լաստիվերցու տուեալները Անի, Կարս եւ Արծն «հոյակապ», «ականաւոր» ու «տիեզերահռչակ» քաղաքների մասին, որոնք «ի ծովէ եւ ի ցամաքէ ամբարեալ»՝ փարթամացել էին «բազում ընչեղութեամբ» եւ մեծ հռչակ ձեռք բերել ամբողջ աշխարհում[2]:

Ղրիմը, անտարակոյս, այն երկրամասն էր, ուր ամենից շատ էին այցելում հայ վաճառականները: Հնագիտական շատ նիւթեր, որ յայտնաբերուել են Ղրիմի տարբեր վայրերում (յատկապէս՝ Խերսոնէսում), հայկական մշակոյթի անվիճելի ազդեցութեան հետքեր են կրում՝ վկայելով հայ տարրի գոյութիւնն այդ երկրամասում տակաւին IX-XII դդ.[3]:

Այդ իրողութիւնը հաստատող գրաւոր աղբիւրները, սակայն, XIII դ. երկրորդ յիսնամեակից են սկսում բազմանալ՝ կապուած լինելով ջենովական արխիւներում պահպանուած նիւթերի հետ:

Ե՞րբ են հայերը հաստատուել Ղրիմում. այս հարցը յուզել է շատ ուսումնասիրողների: Դեռեւս անցեալ դարի 80-ական թթ. Ֆ. Բրունը, քննարկելով հարցին առնչուող սկզբնաղբիւրները, յանգել է այն եզրակացութեան, որ այդ կատարուել է ջենովացիների ու թաթարների Ղրիմում հաստատուելուց շատ առաջ[4]:

Աւելի հանգամանօրէն հարցի գիտական քննութեամբ զբաղուել է Խ. Փորքշեանը: Ջենովայի ս. Գէորգ բանկի արխիւում պահւում են 1290, 1313 եւ այլ թուականներին շարա-

րէն օգտագործել ու մեկնաբանել են Յ. Մանանդեանի, Բ. Առաքելեանի եւ այլոց աշխատութիւններում:

1 Այս ճանապարհի ակունքները գտնւում էին հեռաւորարեւելեան երկրներում՝ Չինաստանում, Հնդկաչինում, Հնդկաստանում, արաբական եւ աֆրիկեան երկրամասերում: Ծովային ճանապարհներով այդ երկրների արտադրանքը հասցւում էր Պարսից ծոցի Բասրայ նաւահանգիստը, իսկ այդտեղից՝ դէպի Բաղդադ ու Թաւրիզ (**Ф. И. Успенский,** Морское и сухопутное движение из центральной Азии в Европу и обратно в XIII-XIV вв. "Византийский временник", т. II (XXVII), էջ 271 եւ հտ.): Թաւրիզից Հայաստան էր մտնում բանուկ այն ճանապարհը, որ հայկական Մարանդ քաղաքում բաժանւում էր երկու ճիւղի: Մէկ ճիւղն անցնում էր Նախճաւան-Դուին-Անի գծով, ուղղութիւն վերցնում Կարսի եւ Արտանուջի վրայով դէպի Ճորոխի գետաբերանը կամ էլ Կաղզուանի, Վաղարշակերտի, Արծնի ու Բաբերդի (ինչպէս նաեւ Կարինի ու Երզնկայի) վրայով դէպի Տրապիզոն: Միւս ուղեգիծը Մարանդից՝ Հերի (Խոյ) վրայով մտնում էր Վասպուրական, անցնում Վան, Բերկրի, Արճէշ քաղաքներով եւ Վաղարշակերտում միանում նախորդ ուղեգծին: Կարեւոր նշանակութիւն ունէր նաեւ Բաղդադից սկիզբ առնող այն ճանապարհը, որ Մերդինի ուղեգծով մտնում էր Պատմական Հայաստանի հարաւային շրջանները, անցնում հիմնականում հայ բնակչութիւն ունեցող Ամիդ-Խարբերդ-Մելիտինէ-Սեբաստիա-Եւդոկիա(Թոխաթ)-Ամասիա քաղաքներով եւ կապւում էր Սեւ ծովի Սամսոն եւ Սինոպ նաւահանգիստներին (տե՛ս «Հայ ժողովրդի պատմութեան» 3-րդ հատորի (Երեւան, 1976) մէջ տեղադրուած «Հայաստանը եւ հարեւան երկրները 855-953 թթ.» շատ արժէքաւոր քարտէզը):

2 Հմմտ. «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզբաշեանի, Երեւան, 1963, էջ 74, 75, 83, 133 եւ այլն: Ուշագրաւ է նաեւ բիւզանդական պատմագիր Միքայէլ Ատտալիատեսի վկայութիւնն Արծն քաղաքի մասին, ըստ որի այնտեղ վաճառւում էին Պարսկաստանից, Հնդկաստանից եւ ասիական այլ երկրներից ներմուծուող ապրանքներ (**Я. А. Манандян,** նշւ. աշխ., էջ 215-216):

3 **А. Л. Якобсон,** նշւ. աշխ., էջ 86-103

4 **Ф. Брун.** Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 137 եւ հտ.

դրուած փաստաթղթեր, որոնց մէջ յիշատակութիւններ կան Կաֆայի Հայոց եպիսկոպոսի պատկանող ջրմուղի մասին: 1316 թ. Կաֆայի ջենովական հիւպատոսին հաւաքագրուած մի գրութեան մէջ հրահանգուած է հեռու մնալ քաղաքի այն հողամասից, որի վրայ գտնւում են երեք հայկական եկեղեցիներ, երկուսը՝ գործող, մէկը՝ կիսակործան: 1281-1290 թթ. գրանցուած առեւտրական մի շարք պայմանագրեր անհերքելիօրէն հաստատում են, որ Հայերը մեծ դեր են կատարել Ղրիմի տնտեսական կեանքի տարբեր ոլորտներում: Նրանց մէջ տարբեր առիթներով յանուանէ յիշատակուած են կաֆայեցի բազմաթիւ Հայեր՝ Տրապիզոն ցորեն փոխադրելու համար նաւ վարձողներ, Սիրիա դրամ փոխադրողներ, Սինոպ ապրանք առաքողներ, իրենց արհեստի արտադրանքը վաճառքի հանողներ եւ այլն:

Մէջբերելով այս կարգի ծանրակշիռ այլ փաստեր եւս՝ Խ. Փորքշէեանը վերջնականօրէն ապացուցել է, որ Հայերը Ղրիմում (մասնաւորապէս՝ նրա արեւելեան ծովափերին) հաստատուել եւ կարեւոր դեր են ստանձնել ջենովացիներից շատ առաջ[1]: 1316 թ. Կաֆայում կիսակործան հայկական եկեղեցու գոյութեան փաստն ինքնին զօրաւոր ապացոյց է այդտեղ կազմակերպօրէն ձեւաւորուած հայկական գաղութի առկայութեան՝ այդ տարեթուից առնուազն երկու-երեք հարիւրամեակ առաջ (հայկական քարաշէն տաճարները շատ աւելի երկար ժամանակ էին կանգուն մնում):

Ղրիմի հայկական գաղթօջախների ժամանակագրական հարցերին անդրադարձել է նաեւ Վ. Միքայէլեանը[2]:

Ղրիմի հայկական գաղթօջախներից շատերը եւ յատկապէս Կաֆան ու Սուրխաթը եղել են հայ գրչութեան ու մանրանկարչութեան նշանաւոր կենտրոններ[3]: Նրանցում ընդօրինակուած հայերէն ձեռագրերից շատերը պահպանուել ու հասել են մեզ՝ փառայեղ վկաները հանդիսանալով հայկական գաղթօջախների բնակչութեան գեղագիտական բարձր ճաշակի ու գրասիրութեան: Ժամանակագրական առումով դրանք շատ հին չեն. Ղրիմում ստեղծուած եւ մեզ յայտնի հնագոյն հայերէն ձեռագիրն ընդօրինակուած է 1328 թ., XIV դ. 30-ական թթ. պահպանուել է երկու, 40-ական թթ.՝ վեց ձեռագիր: Երբ ուշադրութեամբ ծանօթանում ենք դրանց յիշատակարաններին, դարձեալ յանգում ենք այն եզրակացութեան, որ Ղրիմում հայկական գաղթօջախներ գոյութիւն են ունեցել XIV դ. շատ առաջ: 1328 թ. շարադրուած յիշատակարանի մէջ, օրինակ, որպէս Ղրիմի հայ արքեպիսկոպոս յիշատակուած է Ստեփանոսը՝ եղբայրը պարոն Տուրայի, որ անուանուած է «վերադիտող Խրիմին»[4]: Մէկ ուրիշ յիշատակարանից տեղեկանում ենք, որ այս Ստեփանոսը որդին է Սուղդացի (Սուրոժցի) Գրիգոր քահանայի: 1320 - ական թթ. արդէն եպիսկոպոս դարձած Ստեփանոսը, անտարակոյս, ծնուած պէտք է լինի դրանից առնուազն 30 տարի առաջ, ուստի XIII դ. վերջերին: Պարզ է ուրեմն, որ այդ ժամանակ Սուղդայում (Սուրոժում) ապրել է ոմն Գրիգոր քահանայ՝ հայրը պարոն Տու-

1 **Խ. Ա. Փորքշէեան**, Ե՞րբ է կատարուել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդէս», 1962, N 2, էջ 104-117: Հարկ է նշել, որ յանձինս Խ. Փորքշէեանի մենք ունեցել ենք հայ գաղթավայրերի (ղրիմահայութեան, չերքեզահայութեան, Նոր-Նախիջեւանի հայութեան) պատմութեան հարցերի հմուտ ու խորազնին մի ուսումնասիրող, որի վաստակն ըստ արժանւոյն չի գնահատուել:

2 **Վ. Ա. Միքայէլեան**, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1964, էջ 41-66 եւն

3 «ԺԴ դարի… յիշատակարաններ» ժողովածուի մէջ տեղ են գտել Ղրիմի տարբեր վայրերում ընդօրինակուած 70-ից աւելի ձեռագրերի յիշատակարաններ, դրանցից 42-ը հաստատապէս շարադրուած են Սուրխաթում, 20-ը՝ Կաֆայում, միւսները՝ այլ բնակավայրերում ու վանքերում:

4 «ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 208

րայի եւ Ստեփանոսի, այլ խօսքով՝ Կաֆայի եւ Սուրոժի հայկական գաղութների գոյութիւնը XIII դ. հաստատւում է նաեւ հայերէն յիշատակարանների տուեալներով:

1334 թ. Կաֆայում շարադրուած մի յիշատակարանի մէջ[1] թուարկուած են մի քանի կաֆայեցի Հայեր, որոնք իրենց կարողութեան համեմատ նպաստել են մի ձեռագիր Յայսմաւուրքի ընդօրինակութեան աշխատանքներին: Յատկապէս նշանակալից է մանկաւագ Կազուրի յիշատակութիւնն այդ ձեռագրի մէջ. եթէ վերյիշենք, որ մանկտաւագ կամ մանկաւագ էին կոչւում հայկական միջնադարեան քաղաքների երիտասարդ առեւտրականներին ու արհեստաւորներին միաւորող կազմակերպութիւնների՝ կտրիճուորաց եղբայրութիւնների ղեկավարները[2], ապա պարզ կլինի, որ 1334 թ. արդէն հայկական Կաֆան օժտուած է եղել միջնադարեան հայկական քաղաքներին բնորոշ հասարակական կազմակերպութիւններով, ուստի, որպէս համայնք, կազմակերպուել է XIV դ. 20-ական թթ. շատ առաջ:

Նոյն այդ ձեռագրում, որի մէջ յիշուած է մանկաւագ Կազուրը, տուեալ կայ նաեւ Կաֆայի մերձակայքում գոյութիւն ունեցող Գամճակ (կամ Քամճակ) հայկական վանքի մասին, որի շրջակայքում կառուցուել է Աստուածածնի անուան մի նոր եկեղեցի: Վանական հաստատութեան առկայութիւնն իր հերթին այդ գաղթավայրի հնութեան, բազմամարդութեան եւ նիւթական բարօրութեան պերճ վկայութիւն պիտի համարել:

Նոյնը կարելի է ասել նաեւ Սուրխաթի մասին (հին յիշատակարաններ քաղաքն աւելի շատ կոչուած է Սուլխաթ կամ Ղրիմ): Մեծ հաւանականութեամբ, այստեղ XIV դ. 40-ական թթ. բազմավաստակ գրիչ Նատերի կողմից ընդօրինակուած է մի Ճաշոց գիրք՝ բազմաթիւ մանր յիշատակագրութիւններով: Դրանց մէջ, որպէս գրքի ընդօրինակութեան գործին նիւթապէս օժանդակողներ, յիշուած են մի քանի տասնեակ քաղաքացիներ՝ տղամարդ ու կին, որոնցից շատերը ծանուցել են իրենց մասնագիտութիւնը նշող անուանումներով: Ըստ այդմ՝ պարզ է դառնում, որ այդ քաղաքում ապրել են հետեւեալ արհեստի տէր մարդիկ՝ կօշկակար, բազազ, ճոն, ջուլհակ, ոսկերիչ, ներկարար, դանկրար-դանակագործ, կտաւագործ, քթանագործ, ապրեփեց, հուս (հիւսն), թաւկիր, դերձակ, դարբին, գինեծախ, սանրագործ, այգեպան (թուարկումը կատարում ենք ըստ ձեռագրի համապատասխան գրանցումների յաջորդականութեան)[3]: Այսպիսով, Սուրխաթի հայ գաղութում ապրել ու աշխատել են բազմապիսի արհեստների տէր անձինք, իսկ այդ կարող էր լինել գաղութի սկզբնաւորումից առնուազն մի քանի տասնամեակ (եթէ ոչ հարիւրամեակ) յետոյ:

Ղրիմահայ գաղթօջախների հնութեան վկայութիւններ են նաեւ վիմական բազմաթիւ այն արձանագրութիւնները, որոնք տակաւին նախանցեալ դարի կէսերին պահպանուած են եղել Կաֆայի եւ այլ քաղաքների հայկական եկեղեցիների պատերին կամ խաչքարերի վրայ (դրանցից մի քանի տասնեակ միաւորներ կաֆացիներն իրենց հետ փոխադրել են Նոր-Նախիջեւան եւ երկիւղածութեամբ օգտագործել նոր եկեղեցիների կառուցման ժամանակ):

Որոշ ուսումնասիրողներ (նկատի ունենք յատկապէս Խ. Քուչուկ-Յովհաննիսեանին), բաւարար գիտելիքներ չունենալով հայ վիմագրութիւնից, հրատարակել են հայկական մի շարք

1 Տե՛ս Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ, 1924, էջ 511-512 (նաեւ «ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 265-266): Այդ ձեռագրերի գրութեան թուականը որոշ չէ. կարող է լինել նաեւ 1305-ը:

2 **Լ. Խաչիկեան**, Երզնկայում 1280 թ. կազմակերպուած «Եղբայրութիւնը», «Տեղեկագիր», 1951, N 12, էջ 79-81

3 «ԺԴ դարի… յիշատակարաններ», էջ 359-367

վիմական արձանագրութիւններ, որոնցից շատերն ունեցել են ստոյգ տարեթիւ: Եթէ դրանք ճիշտ վերծանուած լինէին, մենք հնարաւորութիւն կունենայինք այսօր խօսք բացելու նաեւ Կաֆայի հայ բնակչութեան մասին տակաւին XI դ., բայց ինչպէս ասուած է արդէն[1], վերծանումների զգալի մասը եղել է սխալ կամ յոյժ կասկածելի: Ըստ այդմ՝ ղրիմահայ վիմագրական նիւթերի ուսումնասիրութեան արդի վիճակը թոյլ չի տալիս դրանք եւս օգտագործելու ժամանակագրական հարցերի պարզաբանման համար:

Ղրիմի վերը յիշատակուած վաճառաշահ կենտրոններում, ինչպէս նաեւ այլ քաղաքներում (Խերսոնէս, Մանգուպ եւ այլն) XIII դ. առաջ հայ բնակչութեան առկայութեան մասին պատմագիտական գրականութեան մէջ արդէն հաւաքուած բոլոր տուեալների թուարկումով մենք շատ պիտի հեռանայինք առաջադրուած նպատակից: Ժամանակագրական հարցերից աւելի կարեւոր նշանակութիւն ունեն Ղրիմի նշանաւոր տնտեսական կենտրոններում (յատկապէս Կաֆայում) հայերի կատարած դերի, բնակչութեան թուական կազմում նրանց գրաւած տեղի ճշգրտման հետ առնչուող հարցերը:

Բարեբախտաբար, հարցերի այս փունջը լուսաբանող շատ փաստաթղթեր արդէն դրուած են գիտական շրջանառութեան մէջ: Կարեւոր նշանակութիւն ունի այս առումով ջենովական հիւպատոսին առընթեր գործող խորհրդի 1455 թ. մի արձանագրութիւնը, որի մէջ ուղղակի ասուած է, որ Ղրիմը «մեծ մասով բնակեցուած է հայերով, որոնք հանդիսանում են մեր (այսինքն՝ ջենովացիների - Լ. Խ.) հաւատարիմ վաճառականները»[2]: Մի այլ փաստաթղթի համաձայն, թուրքերի կողմից քաղաքի գրաւման նախօրէին Կաֆան ունեցել է 70 հազար բնակիչ, որի երկու երրորդը (այսինքն 46 հազարը)՝ հայեր[3]: Նոյնն են հաստատում նաեւ թուրքական տուեալները (70 հազարից 65 տոկոսը՝ հայ)[4]:

Այսպիսի ճշգրիտ տուեալներ միւս քաղաքների վերաբերեալ չեն պահպանուել, բայց, ըստ որոշ հետազօտութիւնների, հայերը մեծամասնութիւն են կազմել նաեւ Սուրխաթ եւ Սուրոժ քաղաքներում[5]: Եւ եթէ, այնուամենայնիւ, յետագայում պարզուի, որ տնտեսական որոշ կենտրոններում հայերից աւելի մեծ թիւ են կազմել թաթարները, յոյները կամ այլ ազգութեան պատկանող բնակիչներ, անփոփոխ պէտք է մնայ այն հիմնական եզրակացութիւնը, թէ տնտեսական գործունէութեան բոլոր ոլորտներում հայերը գրաւել են առաջատար բնագծեր:

Այս առումով խիստ հետաքրքրական է Ղրիմի հարաւային ծովափնեայ քաղաքների տնտեսական պատմութեան հմուտ ուսումնասիրողներ Ե. Զեւակինի ու Ն. Պենչկոյի տեսակէտը. «Իտալական սկզբնաղբիւրների հիման վրայ Ղրիմի հարաւային ծովափի միջնադարեան քաղաքների մասին նիւթի մշակումը մեր կողմից թոյլ է տալիս հաստատելու, որ գլխաւոր դերը Ղրիմում, ըստ երեւոյթին, կատարել է հայկական առեւտրական բուրժուազիան: Սեւ ծովի ջենովական կենտրոն Կաֆայում հաստատապէս հայերը կազմում էին քաղաքային բնակչու-

1 **И. А. Орбели.** Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями. "Избранные труды", Ереван, 1963, էջ 214

2 **Е. С. Зевакин и Н. А. Пенчко,** նշւ. աշխ., "Исторические записки", 1938, N 3, էջ 127, հմմտ. **Աշ. Յովհաննիսեան,** Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Բ, Երեւան, էջ 431:

3 **Vigna,** Codice diplomatico, t. I, էջ 365 (տեղեկութիւնը քաղել ենք Վ. Միքայէլեանի վերը նշուած աշխատութիւնից):

4 **Վ. Միքայէլեան,** նշւ. աշխ., էջ 102

5 Տե՛ս օրինակ **Ф. Брун,** Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140 (հմմտ. **Խ. Փորքշէեան,** նշւ. յօդուածը, էջ 109):

թեան երկու երրորդը, եւ հայ վաշխառուների ոչ մեծ խումբը (XV դ.) իր ձեռքում էր պահում քաղաքի տնտեսական հանգոյցները: Այս հանգամանքը նոյնիսկ անհանգստութիւն է պատճառել ջենովական կառավարչութեանը՝ Կաֆայում քաղաքական իշխանութիւնը պահպանելու առումով»[1]:

* * *

Այստեղ անհրաժեշտութիւն է առաջանում մի հայեացք նետել նաեւ Ղրիմի տնտեսական զարկերակներից մէկի՝ Թամանեան թերակղզու եւ Հիւսիսային Կովկասի արեւմտեան շրջանների վրայ, որոնք հնագոյն ժամանակներից որոշակի դեր են կատարել անդրկովկասեան երկրների եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական կապերի իրականացման բնագաւառում:

Թամանեան թերակղզին դարեր շարունակ տնտեսապէս եղել է Ղրիմի անբաժան մասը՝ քաղաքականապէս եւս յաճախ շաղկապուած լինելով նրա հետ: Հնդկաստանից, Միջին Ասիայից, Իրանից եւ Անդրկովկասից դէպի Ղրիմ տանող ցամաքային ճանապարհները խաչաւորւում էին Թամանում: Ընդամէնը 4-15 կմ լայնութիւն ունեցող Կերչեան նեղուցը արգելք չէր հանդիսանում արեւելքից արեւմուտք եւ հակառակ ուղղութեամբ կատարուող միջազգային նշանակութիւն ունեցող ապրանքափոխանակութեան համար: Դրանով է բացատրւում այն հանգամանքը, որ Թամանեան թերակղզին իր հարեւան շրջանների հետ միասին երկար դարեր շարունակ կռուախնձոր է հանդիսացել հզօր պետութիւնների միջեւ: X դ. կէսերին լուրջ քայլեր կատարուեցին Թամանեան թերակղզին Կիեւեան Ռուսիային ենթարկելու ուղղութեամբ: Կիեւի մեծ իշխան Սվեատոսլաւ Իգորեւիչը Դոնի գետաբերանում 965 թ. ջախջախիչ հարուած հասցրեց խազարներին, վռնդեց նրանց այդ վայրերից, այնուհետեւ, շարժուելով դէպի հարաւ, յարձակուեց խազարներին ենթակայ եասերի ու կասոգների վրայ եւ իր տիրապետութեան տակ առաւ ընդարձակ մի երկրամաս, որը ձգւում էր մինչեւ Կովկասեան լեռնաշղթայ: Ռազմական այս յաջողութիւնների հետեւանքով X դ. 80-ական թթ. Թամանեան թերակղզում եւ նրան կից շրջաններում ստեղծուեց Տմուտարականի բաժնեկալուածային ռուսական իշխանութիւնը, որը պահպանեց իր գոյութիւնը մէկ դարից աւելի՝ զգալի դեր կատարելով հին Ռուսիայի պատմութեան մէջ[2]:

Առատ տուեալներ՝ նորանուաճ ռուսական այս երկրամասում հայ գաղթավայրերի գոյութեան եւ նրա տնտեսական կեանքում հայերի կատարած դերի մասին, ցաւօք, չեն պահպանուել: Վաղուց ի վեր գիտական շրջանառութեան մէջ է դրուած Գալիցիայի ռուս իշխան Թէոդոր Դմիտրեւիչի 1062 թ. մի հրովարտակը՝ ուղղուած կոսոխացի հայերին (kosochackim Armenam), որով նրանք հրաւիրուել են մշտական բնակութեան Գալիցիա՝ երեք տարի հարկերից ազատ լինելու արտօնութեամբ[3]: Բազմաթիւ փորձեր են եղել որոշելու, թէ ում է հասցէագրուած այդ հրաւէր-հրովարտակը եւ արդեօք այն XI դ. հաւաստի փաստաթո՞ւղթ է, թէ՞

1 "Разработка нами на основании итальянских первоисточников темы о средневековых городах южного берега Крыма позволяет установить, что главную роль в Крыму, по-видимому, играла армянская торговая буржуазия. По крайней мере, в генуэзском центре на Черном море-Каффе - армяне составляли 2/3 городского населения и небольшая кучка армян-ростовщиков (в XV в.) держала в своих руках экономические нити города, это даже вызывало опасения генуэзкой администрации за политическое господство в Каффе" ("Исторические записки", 1938, N 3, էջ 127):

2 "Очерки истории СССР", ч. I, 1953, էջ 400-406. **Խ. Փորքշէեան,** Ե՞րբ եւ որտեղից են հայերը գաղթել Չերքեզիա, ՊԲՀ, 1959, N 2-3, էջ 235

3 **Մ. Բժշկեան,** Ճանապարհորդութիւն, էջ 85

ստեղծուել է յետագայ դարերում Գալիցիայի հայերի կողմից, իրենց հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով[1]:

Ո՞ւմ է հասցէագրուած այդ հրովարտակը. այս հարցին տրուած բազմաթիւ պատասխաններից ամենից հաւանականը պէտք է համարել Խ. Փորքշեանի առաջադրած եւ բազմաթիւ փաստերով ու նկատառումներով հիմնաւորուած պատասխանը: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Տմուտարականի բնակիչները բիւզանդական, ռուսական եւ այլ հին աղբիւրներում կոչուած են կասոխ կամ կասոխ[2]՝ Խ. Փորքշեանը յանգում է այն հաւանական եզրակացութեան, որ ռուս իշխան Թէոդոր Դմիտրեւիչը Գալիցիա է հրաւիրել հէնց Տմուտարականի իշխանութեան սահմաններում բնակութիւն հաստատած եւ իրենց առեւտրական գործարքներով ողջ հին Ռուսիայում հռչակուած հայերին:

XI դ. վերջին տասնամեակներին Տմուտարականը դառնում է արիւնալի բախումների թատերաբեմ, որի գլխաւոր դերերը ստանձնում են ինչպէս ռուսական մրցակից իշխանները, այնպէս էլ Բիւզանդական կայսրութեան պետական պաշտօնեաները: XII դ. այդ շրջանները գտնւում են Բիւզանդիայի տնտեսական ու քաղաքական ազդեցութեան ոլորտի մէջ, իսկ այնուհետեւ՝ տեղական ցեղապետերի իշխանութեան ներքոյ, որոնք ընդունել էին ղփչախների գերիշխանութիւնը: XIII դ. երկրորդ կիսամեակում Կաֆայում հաստատուած ջենովացիները աստիճանաբար իրենց ազդեցութիւնը տարածում են Ղրիմի թերակղզու արեւելեան ծովափնեայ քաղաքների վրայ, ապա ամուր յենակէտեր ստեղծում Սեւ եւ Ազովի ծովերի կովկասեան առափնեայ շրջաններում: Դոնի գետաբերանից մինչեւ Սուխում ընկած տարածքի վրայ, ըստ մի շարք հին քարտէզների, XIV դ. ընթացքում գոյութիւն են ունեցել 39 իտալական առեւտրական յենակէտեր: Դրանց մէջ բացառիկ նշանակութիւն ունէին յատկապէս երկուսը՝ Մատրեգան եւ Կոպան[3]:

Մատրեգան պատմական գրականութեան մէջ յայտնի է տարբեր անուններով՝ Մատրախա, Տամատարխա, Տմուտարական եւ այլն: Այն գտնուել է Կուբանի գետաբերաններից մէկում, որն այժմ գոյութիւն չունի: Նրա նաւահանգստում խարիսխ էին նետում առեւտրական խոշոր նաւեր, որոնք Ազովի ծովի ծանծաղութեան պատճառով անկարող էին հասնել Ազով: Մեծ էր նրա նշանակութիւնը ոչ միայն որպէս միջազգային ապրանքափոխանակութեան հանգրուան, այլեւ որպէս Հիւսիսային Կովկասի արեւմտեան շրջանների տնտեսական կենտրոն: Շրջակայ ցեղերն այստեղ աշխոյժ փոխանակութիւն էին կատարում՝ իրենց արտադրանքը՝ ձուկ, ձկնկիթ, մեղր, մեղրամոմ, տարբեր տեսակի փայտանիւթ (յատկապէս՝ տոսախ), փոխանակելով արեւելեան եւ արեւմտեան երկրներից ստացուող ապրանքների հետ: Ջենովացիները Մատրեգայում ունէին հիւպատոսարան եւ առեւտրական հաստատութիւններ:

1 Վերջերս այս տեսակէտը հիմնաւորելու մի անյաջող փորձ կատարեց ուկրաինահայ գաղթավայրերի վաստակաւոր ուսումնասիրող Եա. Դաշկեւիչը (տե՛ս նրա "Грамота Феодора Дмитриевича 1062 г." յօդուածը, տպագրուած հետեւեալ պարբերականում. "Науковоінформаційний бюлетень Архівного управління УРСР", Киев, 1962 N 4, էջ 9-20): Համգամանօրէն քննարկելով Եա. Դաշկեւիչի բոլոր առարկութիւնները, Վ. Միքայէլեանը «Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն» (Երեւան, 1964, էջ 54-63) իր արժէքաւոր մենագրութեան մէջ արդէն ցոյց է տուել, որ բաւարար հիմքեր չկան այդ հրովարտակը յետագայ դարերի կեղծիք համարելու: Ընդհակառակը, հին ու հաւաստի փաստաթուղթ լինելու մի շարք յատկանիշ ունենալով՝ հրովարտակը արժանի է վստահութեան: Մենք բաժանում ենք այդ տեսակէտը:

2 Ըստ Խ. Փորքշեանի՝ այդ անուանումը ալանական ծագում ունի. ալանների հետնորդ օսերն այժմ էլ չերքեզներին անուանում են «կաշեկներ»:

3 Е. С. Зевакин и Н. А. Пенчко, նշւ. աշխ., էջ 78-86

Իր նշանակութեամբ երկրորդ տեղն էր գրաւում Կոպա (նաեւ Լակոպա, Կոպարիօ) կոչուող քաղաքը, որի տեղադրութիւնը տակաւին չի որոշուած: Այստեղ եւս եղել է ջենովական հիւպատոսարան, կառուցուել են եկեղեցիներ, գոյութիւն են ունեցել առեւտրական գրասենեակներ, չափ ու կշռի կէտեր եւ տօնավաճառ, որն սկսուել է ապրիլի վերջերին ու տեւել է մինչեւ մայիսի 15-ը: Կոպայի վաճառականները մեծ քանակութեամբ ձուկ եւ ձկնկիթ են արտահանել Կոստանդնուպոլիս: Տնտեսական որոշակի նշանակութիւն են ունեցել նաեւ Անապան, Գելենջիկը եւ այլ նաւահանգիստներ:

Ջենովացիների ազդեցութեան ժամանակաշրջանում կարգի էին բերուել Հիւսիսային Կովկասով անցնող կարաւանային ճանապարհները[1]: Կաֆա քաղաքը միջազգային հռչակ էր ձեռք բերել ոչ միայն որպէս անգերազանցելի նաւահանգիստ, այլեւ կիզակէտն էր դարձել բոլոր այն ճանապարհների, որոնցով Հիւսիսային Կովկասի եւ Անդրկովկասի ժողովուրդները Թամանեան թերակղզու վրայով հաղորդակցւում էին Ղրիմի, իսկ նրա միջնորդութեամբ՝ Ռուսաստանի եւ եւրոպական երկրների հետ:

Արդ. բուն նիւթին անցնելով, նշենք, որ Հիւսիսարեւմտեան Կովկասի վերոյիշեալ կենտրոններում եւ այդ կենտրոնները Անդրկովկասի ու Իրանի հետ շաղկապող ճանապարհների բոլոր հանգուցակէտերում՝ հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչները յենակէտեր էին ստեղծել եւ տնտեսական աշխոյժ գործունէութիւն ծաւալել ջենովացիների մուտքից դարեր առաջ:

Հայկական աղբիւրներում շատ քիչ տեղեկութիւններ կան այդ մասին: XIX դ. սկզբներին եղել են ինչ-որ տուեալներ, որոնց հիման վրայ Յովհաննէս Ղրիմեցին գրել է այսպիսի տողեր. «...Այլ եւ աշխարհն Ափխազաց, եւ աշխարհն Եգերացւոց, այսինքն՝ Չէրքեզաց, ի նախկին ժամանակս, յորս էին հայք բազումք ի հնումն, ըստ ակնարկելոյ պատմութեանց. եւ այժմ իսկ ի հիւսիսային ծագս այսորիկ աշխարհաց գտանին ոչ սակաւ տունք հայոց՝ ի հին ժամանակաց անտի մնացեալք»[2]:

Ցաւով պէտք է նշել, որ առ այսօր ծրագրուած աշխատանք չի կատարուած հնագոյն այդ գաղթավայրերի հետքերը որոնելու ուղղութեամբ: Սակայն պատահականօրէն յայտնաբերուած նիւթերն իսկ հնամենի ու սերտ կապերի առկայութեան օգտին են վկայում:

Դեռեւս անցեալ դարի վերջերին Մայկոպի շրջանում, Բելայա գետի ափին, Բելորեչենսկայա եւ Խանսկայա ստանիցաների մերձակայքում յայտնաբերուել է քառանկիւն (9x5,7 մ) յատակագծի եւ կիսաշրջան աբսիդ ունեցող քարակոփ մի եկեղեցու աւերակներ: Այդ եկեղեցու բարաւորը, որ այժմ պահւում է Վրացական ՍՍՀ Պետական թանգարանում, կրում է անվարժ-ուռուցիկ տառերով փորագրուած այսպիսի արձանագրութիւն. ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵԿԵ-

1 Գլխաւոր ճանապարհը Կուբանի աջ ափով ձգւում էր դէպի արեւելք եւ Թերեքի ափերով հասնում մինչեւ Կասպից ծով: Կովկասեան լեռնականների հետ ստեղծուած տնտեսական աշխոյժ կապերին նպաստում էր Անապայից սկսող ճանապարհը, որը Կովկասեան լեռնաշղթայի հիւսիսով անցնում էր դէպի արեւելք եւ կտրելով Կուբանի լեռնային վտակները (Կեֆար, Մեծ Զելենչուկ, Մարուխա, Թեբերդա) հասնում մինչեւ գետի վերին հոսանքները, ապա Կուրաչայ: Այստեղ ճանապարհը բաժանւում էր երկու ուղղութեան. մէկը կտրելով Կովկասեան լեռնաշղթան, մտնում էր Անդրկովկաս, միւսը՝ Թերեքի ափերով հասնում Կասպից ծով: Այս ճանապարհի հետքերը պահպանուել էին մինչեւ անցեալ դարի 60-ական թուականները (տե՛ս "Исторические записки", 1938, N 3, էջ 87-88):

2 «Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Ս. Նշանի». հրատարակեց Հ. Համազասպ Ոսկեան. Վիեննա. 1965. էջ 92

ՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾ ԽՐԸՄՊԼԻՆ ԿԱՖԱՑՈՒՆ[1]:

XVII դ. 80-ական թթ. Ղրիմում ստեղծագործել է Սիմէոն Կաֆացի անունով մի տաղասաց, որի հօր անունը եղել է Խրըմպէյ[2]: Նոյնացնելով քարգործ (իմա՛ ճարտարապետ վարպետ) Խրըմպէյ Կաֆացուն տաղասացի հօր հետ, որ շատ հաւանական է (արձանագրութեան տառաձեւերը բնորոշ են հէնց այդ ժամանակաշրջանին), կարող ենք եկեղեցու կառուցման ժամանակը համարել, մերձաւորապէս, 1650-ական թթ.: Բայց չի բացառուած, որ այստեղ հայեր են հաստատուած եղել այդ ժամանակից շատ դարեր առաջ, իսկ որ նրանք սերտօրէն կապուած են եղել Ղրիմի հետ, այդ երեւում է այն իրողութիւնից, որ եկեղեցու կառուցման համար հրաւիրուել է կաֆայեցի մի վարպետ: Ինչպէ՞ս է կոչուել հայկական այդ բնակավայրը, չգիտենք: Եւ եթէ յետագայում գիտական պեղումներ կատարուեն եկեղեցուց ոչ հեռու գտնուող տարածութիւններում, թերեւս հնարաւոր լինի պարզել, որ հէնց այստեղ է գտնուել միջնադարում շատ յայտնի վերոյիշեալ Կոպա քաղաքը[3]:

Ժամանակագրական առումով շատ աւելի հին կարող են լինել պատմական Չերքեզիայի մի այլ անկիւնում՝ Կարաչայ-չերքեզների ինքնավար մարզում, Մեծ Զելենչուկ գետի միջին հոսանքից ոչ հեռու գտնուող երեք եկեղեցիները: Դրանցից ամենամեծը, որ գտնւում է շատ խարխուլ վիճակում, երեք տասնամեակ առաջ ենթարկուել է հնագիտական հետախուզման: Եկեղեցու յատակի մի անկիւնում յայտնաբերուած 1,5 մ խորութիւն ունեցող փոսից դուրս են բերուել ոսկեղէն առարկաներ, մատանիներ, օղեր, զարդասեղաններ, թանկագին քարեր եւ, որ ամենակարեւորն է, Աշոտ Ա Բագրատունի հայոց թագաւորի (885-890) մատանի-կնիքը, արաբերէն յստակ ընթերցուող՝ «Աշուտ բն Սմբատ» (այսինքն՝ «Աշոտ Սմբատի որդի») մա-

1 Այս արձանագրութեան զարմանալի սխալ վերծանութիւնը տպագրել է դեռեւս 1893 թ., հայ բանասիրութեան մէջ բազմաթիւ թիւրիմացութիւնների դուռ բացած Խ. Քուչուկ-Յովհաննիսեանը: Ըստ նրա՝ արձանագրութիւնը պէտք է կարդալ այսպէս. «ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՔԱՐԳՈՐԾԻՍ Մ... ՐՊԷԻՆ. ՀԱՅՈՑ... ՈՒ. Ն, եւ պէտք է թարգմանել այսպէս. "Церковь построена каменщиком (имя нерозборчиво)... в 620 году армянской эры, т. е. в 1171 году" (տե՛ս **Х. И. Кучук-Иоаннесов.** Христианская надпись XII столетия. "Материалы по археологии Кавказа, собранные экспедициями московского археологического общества", вып. III, М., 1893, էջ 106-109): Արձանագրութիւնը փորագրուած համարելով 1171 թ., Քուչուկ-Յովհաննիսեանը գիտական արժէքից զուրկ դատողութիւններ է արել Հիւսիսային Կովկասի այդ շրջաններում հայկական եկեղեցու գոյութեան պատմական պատճառների մասին: Նոյն արձանագրութեան վերծանութեան եւ արժէքաւորման մի փորձ էլ կատարուեց վերջերս: Հայ արուեստին նուիրուած միջազգային 2-րդ սիմպոզիումին զեկուցումով հանդէս եկաւ հնագէտ Մ. Լոժկինը, որը, սակայն, էական առարկութիւններ չարեց Խ. Քուչուկ-Յովհաննիսեանին (տե՛ս **Михаил Ложкин,** Об армянской церкви XII века в Белореченске, Ереван, 1978, էջ 2 եւ 8):

2 **Հ. Աճառեան,** Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երեւան, 1948, էջ 517

3 Իտալական աղբիւրների տուեալներով Կոպան գտնուել է Կուբանի գետաբերանից 280 մղոն (շուրջ 400 կմ) հեռաւորութեան վրայ՝ գետափին: Եթէ քաղաքի հետքերը փնտրելու համար նկատի առնուի Կուբան մայր գետը եւ նրա խոշոր վտակները, ապա որոնումները պէտք է կենտրոնացուեն ներկայիս Կրապոտկինի շրջանում, բայց եթէ Կուբան գետի հետ շաղկապենք նրա խոշոր վտակներից՝ Բելայա կոչուածը, ապա Կոպայի աւերակների հետքերը կարող են յայտնաբերուել վերոյիշեալ եկեղեցու մերձակայքում: Այս առումով յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել նաեւ այն փաստի վրայ, որ Բելորեչենսկայա ստանիցայի մօտ գտնուող հին գերեզմանատան պեղումներից եւս յայտնաբերուել են հայկական նիւթեր: Մասնաւորապէս արժէքաւոր են մի գօտու արծաթէ ճարմանդները, որոնք անտարակոյս միջնադարեան հայկական արհեստագործութեան գեղեցիկ նմուշներից են: Դրանց հրատարակիչ Կ. Ա. Ռոկտինան (**К. А. Роктина.** Группа серебряных украшений из кубанских могильников XIV-XV вв. "Труды отдела истории культуры и искусства Востока Гос. Эрмитажа", т. III, Л., 1940, էջ 211 եւ II. 4, 5 պատկերներ) յայտնել է այն կարծիքը, որ դրանք արտադրուել են Կիլիկեան Հայաստանում XV դ.: Մեր կարծիքով, սակայն, ոչ մի արգելք չկայ դրանց ժամանակը մի քանի դարով ետ տանելու եւ դրանք կենտրոնական Հայաստանի հետ կապելու համար:

կագրութեամբ[1]:

Ցաւօք, յայտնաբերուած առարկաները առ այսօր մասնագիտական քննութեան բովով չեն անցել: Մեծ հաւանականութեամբ, նրանք կնիքի հետ միասին բերուել ու պահուել են եկեղեցու գաղաններից մէկում Բագրատունեաց հարստութեան անկումից յետոյ, XI դ. կէսերին՝ խօսուն վկաները լինելով Հայաստանի եւ Հիւսիսային Կովկասի միջեւ գոյութիւն ունեցած տնտեսական սերտ առնչութիւնների:

Հիւսիսարեւմտեան Կովկասի վաճառաշահ կենտրոնների բնակչութեան ազգային կազմի մասին աննշան տեղեկութիւններ են պահպանուել: Ե. Զեւակինն ու Ն. Պենչկոն իրենց վերոյիշեալ յօդուածում ոչ միայն տարբեր առիթներով խօսել են Մատրեգայում եւ Կոպայում հայ բնակչութեան առկայութեան մասին, այլեւ յանգել են այն եզրակացութեան, որ հաւանաբար հայ առեւտրական կապիտալն է այդ գաղթավայրում կատարել առաջնային դեր[2]:

Այս երկրամասում հայկական յիշատակների յայտնաբերման ուղղութեամբ աշխատանքները պէտք է շարունակել՝ օգտագործելով ինչպէս մայրենի լեզուն մոռացած չերքեզահայերի մասին դեռեւս գիտական շրջանառութեան մէջ չդրուած աղբիւրները (այդպիսիք պէտք է որ լինեն ռուսական արխիւներում), այնպէս էլ հայկական մատենագրութեան մէջ գոյութիւն ունեցող ակնարկները:

Այս առումով ուշադրութեան արժանի են Քաշոտ կոչուող երկրամասի եւ ցեղանուան մասին առկայ ցաքուցրիւ տեղեկութիւնները: Կիեւեան Ռուսիայի տարեգիրները, ինչպէս նաեւ բիւզանդական որոշ հեղինակներ, խօսելով Տմուտարականի ռուսական իշխանութեան բուն բնակիչների՝ հին չերքեզների մասին, դրանց միշտ անուանում են կասոխներ կամ կոսոխներ (КАСОГИ կամ КОСОГИ): Այդ ցեղանունը տարբեր ժողովուրդների կողմից ու տարբեր ժամանակներում արտաբերուել է իրարից շատ տարբերուող ձեւափոխութիւններով. կոսոխ, կոսող, կասախ, խազուխ, քեշակ, քաշայի, քաշոտ[3]: Այս վերջին (քաշոտ) ձեւը կամ ստեղծուել է հայերի միջավայրում, կամ էլ գերադասուել է նրանց կողմից՝ որպէս աւելի հարազատ ու դիւրալուր ձեւ:

Կաֆա քաղաքի պարիսպներից դուրս XV-XVII դդ. գոյութիւն է ունեցել հայկական մի թաղամաս Քաշոտ անունով[4]: Մեծ հաւանականութեամբ, կարելի է հետեւեցնել, որ այդ վայ-

1 **В. А. Крачковская.** Печать Багратида Ашота с арабской надписью. "Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры", XII, М.-Л., 1946, էջ 112-117: Նաեւ **Հ. Օ. Լեապունով,** Աշոտ Բագրատունու կնիքը («Տեղեկագիր», 1955, N 2, էջ 97-98), որը նորութիւն չի պարունակում:

2 Նրանք բառացի գրել են. "Без сомнения армянский торговый капитал проник и на Западный Кавказ и быть может играл в тамошних колониях первенствующую роль" ("Исторические записки", 1938, N 3, էջ 127):

3 "История Кабарды с древнейших времен до наших дней", М., 1957, էջ 22-25: Տեղեկութիւնը քաղել ենք Խ. Փորքշէեանի վերոյիշեալ յօդուածից:

4 «Այլ արտաքոյ (Կաֆայ) քաղաքին մէկ մահալա թաղ հայք կային, որ Քաշոտ ասեն»,- գրում է նրա մասին Գր. Դարանաղցին (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղեցւոյ», հրատարակեց Մեսրոպ վրդ. Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 80):

1458 թ. Կաֆայում գինեծախ Աւդոլը ընդօրինակել է տուել մի ձեռագիր՝ Քաշոտի Ս. Գէորգ զօրավարի եկեղեցուն նուիրաբերելու համար («ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Բ, Երեւան, 1958, էջ 112): Խաչատուր Կաֆայեցի տարեգիրը 1649 թ. դէպքերի կապակցութեամբ յայտնում է, որ ապրիլի 15-ին Գրիգոր պարոնտէրը ոմն Սիմէոնի քահանայ է ձեռնադրել «ի վերայ Քաշոտին» («Մանր ժամանակագրութիւն-

րի Հայ բնակչութեան մեծամասնութիւնը գաղթել է այստեղ Թամանեան թերակղզուց կամ պատմական Չերքեզիայի Թամանից ոչ հեռու գտնուող շրջաններից կամ էլ տնտեսական սերտ կապերի մէջ է եղել նոյն այդ շրջանների (այսինքն՝ բուն Քաշոտի) հետ:

Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրութեան մէջ, 1624 եւ 1628 թթ. կատարուած դէպքերի առնչութեամբ, Քաշոտի մասին գտնում ենք երկու կարեւոր գրանցում.

1. «Թուին ՌՀԳ (1624)... ապրիլի ԺԱ (11) կիրակին Քաշոտի յուռուսն կոխեց Խրիմին վերի մաՀալան եւ քրիստոնեայքն գերեցոյց, եւ պարծանքնրն քրիստոնէից՝ Սուրբ Նշանն գերի վերուց, եւ խաւարեցոյց վանքն աէր Մովսէսի»[1]:

2. «Թվին ՇՀԷ (1628), ապրիլի Ի (20), աւր կիրակի, Քաշաւտի ուռուսն Կաֆան կոխեց, մաՀալան Համբարձման: Անիծաձն, որ է որդի Թումանպէին, եկաւ գերեցուց, ոմանս թալլեց, ոմանս ի սուր մաչեց, եւ այլ շատ չարիք գործեց»[2]:

Այս կարեւոր տեղեկութիւնները, անտարակոյս, վերաբերում են Դոնի կազակների դէպի Ղրիմ (Սուրխաթ, Կաֆա) կատարած արշաւանքներին[3]:

Խիստ ուշագրաւ է այն Հանգամանքը, որ կազակներն այստեղ կոչուած են «Քաշոտի ուռուս», որանից կարելի է Հետեւեցնել, որ Դոնի կազակները արդէն XVII դ. իրենց ազդեցութիւնը տարածել էին Ազովի ծովի արեւելեան ափերը եզերող պատմական Չերքեզիայի շրջանների վրայ, ու թերեւս, այդ կողմերում ունէին իրենց յետակէտերը, որոնք կորիզը Հանդիսացան աւելի քան մէկ դար յետոյ Կուբանի շրջանում ձեւաւորուած կազակական զօրքերի[4]:

ներ 13-18-րդ դդ.», Հատոր I, կազմեց Վ. Ա. Յակոբեան, Երեւան, 1951, էջ 225): Ըստ այդմ Կաֆայի Քաշոտ կոչուող թաղամասի գոյութիւնը Հաստատւում է XV-XVII դդ. աղբիւրներով:

1 «Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 212

2 Նոյն տեղում, էջ 217

3 Քաշոտի տեղադրութիւնը որոշելու անյաջող ու երկչոտ մի փորձ է կատարել Խաչատուր Կաֆայեցու «Տարեգրութեան» Հրատարակիչը, տալով այսպիսի բացատրութիւն. «Արդեօ՞ք Կազոխը չէ, Անապայի եւ Նովոռոսիյսկի մօտերքը, թերեւս աւելի Հիւսին» (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ» I, էջ 231):

Հունգարացի վաստակաւոր արեւելագէտ Է. Շիւցը, որ իրագործել է Տարեգրութեան գերմաներէն թարգմանութիւնը, օժտել է այն շատ արժէքաւոր ծանօթագրութիւններով ու ճշգրտել նրա անհասկանալի բազմաթիւ հատուածները, զատել է միմեանցից Կաֆայի Հայկական թաղամաս Քաշոտը «Դոնի կազակների բնակավայր» Քաշոտից: Այս բնակավայրի տեղադրութիւնը որոշելու նպատակով նա որոնումներ է կատարել, անդրադարձել է Կուբան գետի Կոնենտի վտակի անուանը, ինչպէս նաեւ Վոլգայի կալմիկների Կոշոտ կոչուող բնակավայրին եւ այլն (տե՛ս **E. Schütz.** Eine Armenische Chronik von Kaffa aus der ersten Hä lfte des 17. Jahrhunderts. "Acta Orientalia Academia Scientiarum Hungaricae", 1975. Hung. Tomus XXIX, Fasc. 2, էջ 167-181):

Մեր կարծիքը Քոշոտի մասին՝ շարադրուած է վերը:

Ընդունելով բուն նիւթից, անդրադառնալու ենք Խաչատուր Կաֆայեցու Տարեգրութեան մէջ «Հայ» բառի տարօրինակ գործածութեանը, որ տարակուսանքների տեղիք է տուել: Ըստ Տարեգրութեան, օրինակ, 1628 թ. Ղրիմ է ներխուժել 12 Հազար Հայ, մէկ տարի յետոյ՝ 40 Հազար Հայ եւ նողայ եւ այլն (տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 214, 215 եւ այլն): Խաչատուրը խօսում է թուրքերի՝ Մալթայում տարած յաղթանակի մասին, ասելով, որ «վէզիրն Հայն սպաննէր է ի կղզին», նկարագրում է Ազովի Հերոսական պաշտպանութիւնը Դոնի կազակների կողմից, դերակատարներին դարձեալ «Հայ» անուանելով եւ այլն (տե՛ս նոյն տեղում, էջ 223):

Կնճիռը Հարթւում է դիւրութեամբ: Մեր Հեղինակը «Հայ» բառը գործածում է նաեւ «քրիստոնեայ» բառի փոխարէն, «Հայ» են կոչւում ե՛ւ Զապորոժեան կազակները, ե՛ւ Դոնի կազակները, ե՛ւ Մալթայի պաշտպան վենետիկցիները, ե՛ւ այլ քրիստոնեայ ժողովուրդներ:

4 Քաշոտը Տմուտարական ռուսական բաժնետիրական իշխանութեան տարածքն էր միաժամանակ: Կարելի՞ է, արդեօք, այս Հանգամանքը նկատի առնելով մտածել, թէ աշխարհագրական այդ միջավայրում, Տմուտարականի իշխանութեան անկումից դարեր յետոյ եւս պահպանուել էին ռուսական Համայնքներ, որոնք աշխուժացել էին

Սրանք են, ահա, մեզ Հասած տեղեկութիւնները Ղրիմի Հետ տնտեսապէս շաղկապուած Թամանեան թերակղզում եւ պատմական Չերքեզիայի այլ շրջաններում երկար դարեր գոյատեւած Հայկական գաղթօջախների մասին: Դրանք ցաք ու ցրիւ են ու աղքատիկ, բայց, այնուամենայնիւ, Հնարաւորութիւն են ընձեռում յանգելու այն եզրակացութեան, որ այս վայրերում խարիսխ նետած Հայերը եւս կարեւոր դեր են կատարել Ղրիմի վրայով ռուսական իշխանութիւնների եւ Արեւմտեան Եւրոպայի այլ երկրների Հետ տնտեսական կապերի ստեղծման ու իրականացման բնագաւառում[1]:

***

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ղրիմը կապուած է եղել Անդրկովկասի, Իրանի, Միջին Ասիայի եւ Հեռաւոր Արեւելքի Հետ միջազգային նշանակութիւն ունեցող ծովային ու ցամաքային մի շարք ճանապարՀներով: Հայաստան-Ղրիմ կապերն իրագործուել են՝ ա) Սեւ ծովի Հարաւային եւ արեւելեան նաւաՀանգիստներից՝ ծովային ճանապարՀով, բ) Սեւ ծովի արեւմտեան եզերքով եւ Կովկասեան լեռնաշղթան Հատող կածաններով, որոնց Հանգրուանն էր Թամանեան թերակղզին, գ) Դերբենդի կիրճով դէպի Հիւսիս ուղղուած ճանապարՀով, որը Հիւսիսային Կովկասում երկճիւղւում էր. ճիւղերից մէկն ուղղութիւն էր վերցնում դարձեալ դէպի Թաման, միւսը՝ դէպի Վոլգայի գետաբերան, դ) Ռուսաստանից եւ Միջին Ասիայից, տարբեր ճանապարՀներով արեւելեան ապրանքներ էին Հասցւում Ազով, այնտեղից էլ՝ Ղրիմ. այս ուղեգծի վրայ եւս Հայերը, որպէս տնտեսապէս շաՀագրգռուած կողմ, ունէին իրենց գաղթօջախները:

Կաֆա քաղաքն այս ճանապարՀներով ստացուող ապրանքների վիթխարի մի պաՀեստ էր դարձել:

Այդ ապրանքների մի զգալի մասը արտաՀանւում էր Արեւելեան Եւրոպա կարաւանային բանուկ այն ճանապարՀով, որ կտրում էր Ղրիմի թերակղզին Հարաւ-արեւմուտքից Հիւսիս-արեւելք եւ, անցնելով Պերեկոպը (Հայկական միջնադարեան աղբիւրներում՝ կոչուած Օր, Օրինբերան), ուղղութիւն էր վերցնում դէպի Կիեւ:

Պէտք է նեթադրել, որ Պերեկոպում, առնուազն XIV դ. սկզբներից գոյութիւն է ունեցել Հայկական կայուն գաղթօջախ, որի մասին, ցաւօք, Հին տեղեկութիւններ չեն պաՀպանուել: Այստեղ Հաստատուած Հայերն ունէին իրենց եկեղեցին. քաղաքում կային Հայերին պատկանող կարաւանատներ, պաՀեստներ եւ այլն[2]: XVIII դ. 30-ական թթ. ռազմական գործողութիւնների Հետեւանքով տուժած Պերեկոպի դերն իր վրայ է վերցնում նրա մօտակայքում Հայերի կողմից Հիմնադրուած եւ Արմեանսկի բազար (Հայկական շուկայ) անունն ստացած բնակավայրը, որը Հռչակուած էր իր շուկայով, անընդմէջ ծխացող խոՀանոցներով, որոնցում ընտիր կերակուրներ էին պատրաստւում անցնող ու դարձող ճանապարՀորդների Համար[3]:

Պերեկոպից Հիւսիս, մինչեւ Կիեւ ձգուող ճանապարՀը, միշտ էլ եղել է շատ վտանգաւոր՝

Դոնի գետաբերանի շրջակայքում Հաստատուած կազակների ազդեցութիւնը կրելով:

1 [Ղրիմի եւ յարակից շրջանների Հայոց պատմութեան Համար կարեւոր նիւթեր կան տեղի արձանագրութիւններում: Նրանց Համախմբական Հրատարակութիւն տես «Դիւան Հայ վիմագրութեան», պրակ VII, Երեւան, 1996]

2 Վ. Միքայէլեան, նշւ. աշխ., էջ 114 (վկայակոչուած է "Заседания Одесского общества истории и древностей", т. I, 1844, էջ 602):

3 Նոյն տեղում, էջ 114-115

ենթակայ լինելով Հարաւային Ռուսաստանի տափաստաններում մէկը միւսին յաջորդող վաչկատուն ժողովուրդների շարունակական աւազակային յարձակումներին: Յայտնի է, որ 915-1036 թթ. ընթացքում Կիեւի իշխանները մարտնչել են պեչենեգների դէմ, մանր միջադէպերը չհաշուած, 16 անգամ[1]: Եւ այդ պարբերականութիւնը պահպանուել, նոյնիսկ աւելի յաճախակի է դարձել յաջորդ դարերում, երբ թաթարները, ապա նաեւ թուրքերը, գրեթէ ամէն տարի ներխուժում էին ռուսական երկրամասերը, աւերում բնակավայրերը, ամայացնում երկիրն ու իրենց հետ տանում հազարաւոր գերիներ[2]:

Այս պայմաններում կարաւանային առեւտրի ասպարէզում առաջնային դիրք գրաւած հայ վաճառականները միաժամանակ հանդիսանում էին զինուոր-մարտիկներ: Մենք դեռեւս առիթ կունենանք աւելի հանգամանօրէն շօշափելու այս հարցը՝ բացայայտելով հայերի դերը Դնեպրի աջափնեայ տարածութիւններում ստեղծուած նշանաւոր բերդ-քաղաքների տնտեսական եւ քաղաքական կեանքի տարբեր ասպարէզներում:

* * *

Հին Ռուսիայի նշանաւոր Կիեւ մայրաքաղաքը դարեր շարունակ եղել է հայ-ռուսական տնտեսական ու մշակութային կապերի դարբնոց, ուստի նրա ներսում ծաղկած հայկական գաղթօջախի պատմութիւնն արժանի է աւելի հանգամանալից քննութեան:

Կիեւի հին պատմութիւնը լուսաբանող գրաւոր աղբիւրներ գրեթէ չեն պահպանուել: Մեծ իշխան Անդրեյ Բոգոլիւբսկու գործած աւերածութիւններին (1169), մոնղոլական զոյգ արշաւանքներին (1240, 1263), ինչպէս եւ բազմիցս կրկնուող ամենակուլ հրդեհներին զոհ են գնացել նաեւ քաղաքի պատմութեան ձեռագրական սկզբնաղբիւրները:

Հնագիտական նիւթի ուսումնասիրութիւնը մասնագէտներին բերել է այն համոզման, որ մերձդնեպրեան շրջանները Կովկասի ու Սեւ ծովի ափամերձ յունական գաղթօջախների հետ տնտեսական որոշ կապեր են ունեցել տակաւին մ. թ. ա. V-IV դդ.: Մեր թուարկութեան առաջին հարիւրամեակների ընթացքում տեւական տնտեսական կապեր են հաստատուել Հռոմէական կայսրութեան, իսկ III-IV դդ.՝ նաեւ գոթերի հետ:

VIII դ. միջազգային ապրանքափոխանակութեան համար մեծ նշանակութիւն է ստանում Բալթիկ եւ Սեւ ծովերը միմեանց շաղկապող գետային այն մայրուղին, որ յայտնի է պատմագրութեան մէջ «Վարեագներից դէպի Յունաստան» ("Из Варяг в Греки") անունով: Այդ մայրուղու շնորհիւ բարգաւաճում են Ռուսաստանի պատմութեան մէջ հսկայական դեր կատարած մի շարք քաղաքներ, մասնաւորապէս՝ Մեծ Նովգորոդը եւ «ռուսական քաղաքների մայր» Կիեւը:

Կիեւը դառնում է արհեստագործութեան եւ առեւտրի խոշոր կենտրոն հէնց այն ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը, Բագրատունիների գլխաւորութեամբ թօթափելով արաբական լուծը, քաղաքական ու տնտեսական առաջադիմութեան ընթացքի մէջ էր մտել՝ դառնալով «իդեալական չէզոք երկիր տարանցիկ առեւտրի եւ միջազգային յարաբերութիւնների համար» (Յ. Մանանդեան):

Հայաստանի քաղաքներից շատերը, մասնաւորապէս՝ Դուինը, Անին, Կարսը, Արծնը ոչ

1 Б. Д. Греков. Киевская Русь, М., 1949, էջ 463

2 "Очерки истории СССР", т. II, էջ 556

միայն դարձել էին տարբեր ճանապարհներով արեւելեան երկրներից Հայաստան ներմուծուող, այստեղից էլ եւրոպական երկրներ արտահանուող ապրանքների ապահով պահեստատեղիներ ու փոխանակային առեւտրի կենտրոններ, այլեւ մասնակցում էին միջազգային առեւտրին իրենց սեփական արտադրանքով:

«Ի ծովէ և ի ցամաքէ» ճոխացած հայ վաճառականները ամենայն հաւանականութեամբ տնտեսական կապեր էին ստեղծել նաեւ «Վարեագներից դէպի Յունաստան» ճանապարհի նշանաւոր կանգառներում: Գոտլանդ կղզում, Լադոգայում, Նովգորոդում, Մոգիլեւում եւ Կիեւում յայտնաբերուած հազարաւոր դրամների մէջ կան նաեւ Դուինում VIII-X դդ. կտրուած դրամների բազմաթիւ նմուշներ, որոնք տնտեսական այդ կապերի խօսուն վկաներն են[1]: Կիեւի մերձակայքում գտնուել են նաեւ ականջօղեր եւ այլ զարդեր, որոնք, մեծ նմանութիւն ունենալով Դուինից յայտնաբերուած ոսկերչական իրերի հետ, ըստ մասնագէտների՝ դարձեալ իրեղէն վկայութիւններ են Հայաստանի եւ Կիեւի միջեւ գոյութիւն ունեցած առեւտրական կապերի[2]:

Աւելի պերճախօս են սակաւաթիւ գրաւոր աղբիւրները եւ մասնաւորապէս՝ Կիեւի Պեչորեան վանքի նշանաւոր «Հարանց վարքը»: Ռուսական հին գրականութեան մեծարժէք այդ յուշարձանի մէջ ուրոյն տեղ է գրաւում վանքի նշանաւոր միաբաններից մէկի՝ երանելի Ագապիտի կեանքի պատմութիւնը[3], որի մէջ արժէքաւոր տուեալներ են գրանցուած Վսեվոլոդ Եարոսլաւիչի եւ մանաւանդ նրա որդու՝ Վլադիմիր Մոնոմախի իշխանութեան տարիների, այսինքն՝ XI դ. վերջերի եւ XII դ. առաջին տասնամեակների մասին: Այստեղ, մասնաւորապէս, ասուած է, որ այդ ժամանակ Կիեւում բնակուել է հմուտ ու ճարտար մի հայ բժիշկ. երբ Չերնիգովում հիւանդացել է Մոնոմախը, «նրան ջանադրութեամբ բուժել է այդ հայը»: Այստեղ խօսք կայ եւ այն մասին, որ Կիեւում բնակուել են նաեւ հայ բժշկի բազմաթիւ հաւատակիցները: «Հարանց վարքի» մի այլ յօդուածից պարզւում է, որ վանքի միաբաններից մէկ ուրիշը յաճախակի այցելել է Կիեւի այն թաղը, ուր ապրել են հայերը, եւ դաւանաբանական հարցերի շուրջ բուռն վէճեր բորբոքել նրանց հետ[4]: Այս տուեալներն ի նկատի ունենալով՝ ակադ. Մ. Տիխոմիրովը յանգել է այն եզրակացութեան, որ Կիեւում «եղել է լիակազմ հայկական մի գաղութ»[5]:

Կիեւի Պեչորեան վանքն, իր հիմնադրման օրից լինելով Ռուսական եկեղեցու շահերի արտայայտիչ, մաքառել է Բիւզանդական եկեղեցու քաղաքական ու մշակութային ճնշումների

1 Գիտական մեծ նշանակութիւն ունի 1913 թ. Կիեւում յայտնաբերուած գանձը, բաղկացած VIII-X դդ. կոփուած 2760 արծաթէ դրամներից: Դրանց մէջ կան Հայաստանում կոփուած աբբասեան դրամներ: Այս նիւթերը խնամքով ճառաքել եւ գիտականօրէն արժէքաւորել է անուանի դրամագէտ Խ. Մուշեղեանը (տե՛ս **Х. А. Мушегян**, Денежное обращение Двина, по нумизматическим данным, Ереван, 1962, էջ 160-165):

2 Տե՛ս **Н. П. Кондаков**. Русские клады. Исследование древностей великокняжеского периода, т. I, СПб., 1896, էջ 128. **Կ. Ղաֆադարեան**, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, Երեւան, 1952, էջ 176:

3 "Патерик Киево-Печерского монастыря", СПб., 1911 ("Памятники славяно-русской письменности", т. 2): Տե՛ս նաեւ՝ **Л. Меликсет-Бек.** Древняя Русь и Армения. ("Сборник трудов Института языка АН Арм. ССР", Ереван, 1946, էջ 122), **Լ. Խաչիկեան**, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում 16-17-րդ դարերում («Տեղեկագիր»), 1954, N 4, էջ 47) եւ այլն:

4 "Изложение веры церкви Армянской", историко-догматическое исследование И. Троицкого, СПб., 1875, էջ 245-247

5 **М. Н. Тихомиров.** Древнерусские города, М.,1956, էջ 293: Անուանի գիտնականից առաջ եւ յետոյ նոյն եզրակացութեանը յանգել են եւ այլ բազմաթիւ ուսումնասիրողներ:

դէմ: Այստեղ են ստեղծուել ռուս պատմագրութեան եւ վարքագրութեան առաջին ինքնորոյն ստեղծագործութիւնները, որոնց մէջ, ի հակադրութիւն յունարէնից կատարուած թարգմանական երկերի, փառաբանուել են յանուն Ռուսաստանի եւ Ռուս եկեղեցու նահատակուած հերոսները: Այդ բնոյթի ստեղծագործութիւնների առաջնեկը «Բորիսի եւ Գլեբի վարքն էր» ("Сказание о Борисе и Глебе"): Ռուսաստանում բարձր եկեղեցական պաշտօններ գրաւած յոյն կղերականները հարկադրուած էին ճանաչել այս գործիչների «սրբութիւնը»: Աւելի բացայայտ կերպարանք ստացաւ ռուս-բիւզանդական հակամարտութիւնը, երբ փորձեր կատարուեցին սրբերի շարքը դասելու ազգութեամբ ռուս այլ նահատակների[1]:

Խիստ ուշագրաւ է, որ նոյն այս ժամանակաշրջանում Բիւզանդական եկեղեցու ոտնձգութիւնների դէմ յամառ պայքար մղող Հայ եկեղեցին առանց յապաղումի ճանաչեց Բորիսի եւ Գլեբի (նրանց քրիստոնէական անուններն էին՝ Ռոման եւ Դաւիթ) «սրբութիւնը». Նրանց վարքը վերաշարադրուեց հայերէն եւ մուծուեց հայկական Յայսմաւուրքի մէջ: Վարքի հայերէն խմբագրութեան վերջում ասուած է, որ այդ սրբերի մասունքները նորանոր սքանչելագործութիւնների աղբիւր են հանդիսանում եւ նոր հրաշքներ գործում, որոնց «բազում[ք] ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ, պատմեն մեզ»[2]: Այս արդէն որոշակի փաստ է այն մասին, որ «ի մերոյ աշխարհէս», այսինքն՝ Հայաստանից շատ-շատերը, այցելելով Կիեւ եւ վերադառնալով հայրենիք, վարքի հայ խմբագրողին վկայութիւն են տուել ռուսական սրբերի նոր «հրաշագործութիւնների» մասին:

Ըստ Մ. Էմինի, որ առաջին անգամ ուշադրութիւն դարձրեց այս բնագրի վրայ, ուսումնասիրեց եւ հրատարակեց նրա ռուսերէն թարգմանութիւնը՝ վարքի հայկական խմբագրութիւնը ստեղծուել է XII դ. Կիլիկեան Հայաստանում[3]: Որոշակի փաստեր ի հիմնաւորումն այս ենթադրութեան չկան, ուստի բացառուած չի կարելի համարել եւ այն վարկածը, որ այդ աշխատանքը կատարուել է մայր երկրի այն շրջաններից մէկում, որը տնտեսական սերտ կապեր է ունեցել Ղրիմի եւ Կիեւեան Ռուսիայի հետ:

Այս առնչութեամբ տեղին է յիշել Գրիգոր Տղայ կաթողիկոսի եւ հիւսիսային Հայաստանի նշանաւոր եկեղեցական գործիչ Գրիգոր Տուտեորդու 1170-ական թթ. թղթակցութիւնը: Նամակներից մէկում Տուտեորդին ջերմ խօսքերով մեծարում է Ռուսական եկեղեցին՝ կոչելով այն «քրիստոնէութեամբ պատուեալ մեծափառ եկեղեցիս Ռուզաց»[4]: Քաղկեդոնականու-

1 Б. Д. Греков, նշւ. աշխ., էջ 406-408

2 «Յայսմաւուրք ըստ կարգի ընտրեալացն ատենակի Յայսմաւուրաց տէր [illegible] ճաշոցի». Կ. Պոլիս, 1834

3 Н. О. Эмин. Сказание о святых Романе и Давиде (Борисе и Глебе) и о кончине русского епископа св. Фомы. По армянским четьи-минеям. "Русский архив", М., 1877, I, էջ 273-288: Նաեւ "Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859-1882 гг.). апокрифы, жития, слова и др.", М., 1899, էջ 150-167:

4 **Ա. Տէր-Միքելեան**, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումները եկեղեցական խաղաղութեան համար («Արարատ», 1893, N 4, էջ 349). նաեւ՝ **Աս. Մնացականեան**, Մոսկուան միջնադարեան հայկական մի պոեմում («Տեղեկագիր», 1948, N 3, էջ 49): Գրիգոր Տուտեորդուց վկայակոչուած հատուածը ճիշտ մեկնաբանելու համար պէտք է խորամուխ լինել թղթի գրութեան հանգամանքների ու բովանդակութեան մէջ: Գրիգոր Տղայ կաթողիկոսը Տուտեորդուն հասցէագրած իր երկու նամակներով անդրադառնում է բիզանդացիների հետ եկեղեցական միութիւն ստեղծելու նպատակով տարուող բանակցութիւնների ընթացքին: Նրա միտք բանին այս է. հայերը Քրիստոսի բնութեան մասին յոյների հետ վիճաբանելիս՝ ամուր դիրքի վրայ չեն գտնւում, ուստի ստիպուած են որոշ զիջումներ կատարել: Իր պատասխան թղթով, Տուտեորդին, ամենայն վճռականութեամբ մերժում է աւանդական դիրքերից դոյզն-իսկ զիջում կատարելու հնարաւորութիւնը: Վերջում, չթաքցնելով նուրբ հեգնանքը, նա խորհուրդ է տալիս եկեղեցական միութիւնը գլուխ բերել՝ հայոց դաւանանքը պարտադրելով միւս եկեղեցիներին,

թեան դէմ անհաշտ պայքարի քաղաքականութեան ջատագով սանահինցիների գաղափարական ղեկավարը երկարենակ դաւանանքի որեւէ եկեղեցի «քրիստոնէութեամբ պատուեալ» կամ «մեծափառ» կարող էր կոչել այն դէպքում միայն, եթէ նա լուր ունենար յունական ճնշումների դէմ նոյն այդ եկեղեցու ընդվզումների մասին: Դաւանանքով տարբեր, բայց գոյավիճակով նման Հայ եւ Ռուս եկեղեցիների շահերն այս հարցում համընկնում էին:

Սրանք են, ահա, սակաւաթիւ այն նիւթերը, որոնք լոյս են սփռում կիեւահայ գաղթօջախի պատմութեան հնագոյն շրջանի վրայ:

XII դ. կէսերից Կիեւի պատմութեան համար սկսւում է նոր շրջան, ի հետեւանս նախ՝ ռուսական բաժնեկալուածատիրային իշխանութիւնների միջեւ ծայր առած գզվռտոցների եւ ապա՝ աւելի մեծ չափով միջազգային ապրանքափոխանակութեան մայրուղիների փոփոխութեան:

Սելջուկ-Թուրքերի աշխարհաւեր արշաւանքները եւ Իրանի, Անդրկովկասի ու Փոքր Ասիայի բռնագրաւումը, խաչակրաց արշաւանքները դէպի մերձաւորարեւելեան երկրներ, Երուսաղէմի, Անտիոքի, Կիպրոսի խաչակիր իշխանութիւնների ստեղծումը Միջերկրականի ափերին, Կիլիկիայի հայկական պետութեան տնտեսական ու քաղաքական յաջողութիւնները եւ, մանաւանդ, Բիւզանդական կայսրութեան ամենազարգացած շրջանների բռնագրաւումը խաչակիրների կողմից եւ Լատինական կայսրութեան ստեղծումը այդ երկրամասերում, հսկայական ու յեղաբեկիչ հետեւանքներ ունեցան Արեւելքի ու Արեւմուտքի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքի բոլոր բնագաւառներում:

Մենք արդէն առիթ ենք ունեցել անդրադառնալու իտալական քաղաք-պետութիւնների՝ Ջենովայի ու Վենետիկի դէպի Սեւ ծովի աւազանը կատարած առաջխաղացման եւ միջազգային նշանակութիւն ունեցող ճանապարհների հանգոյցներում յենակէտեր ստեղծելու պատմական դրուագներին: Այդ երկու թշնամի քաղաքների հակամարտութիւնից, ի վերջոյ, յաղթանակով դուրս եկաւ Ջենովան. մինչեւ Կաֆայի գրաւումը թուրքերի կողմից (1475), նրա հսկողութեան տակ էին գտնւում Ղրիմից եւ Կովկասի հիւսիսարեւմտեան շրջաններից դէպի եւրոպական երկրներ ձգուող ծովային ու ցամաքային գլխաւոր ճանապարհները, որոնց երթուղիների մէջ եւս կատարուեցին փոփոխութիւններ: Կիեւահայ գաղթօջախի պատմութեան առնչութեամբ առաջին հերթին անհրաժեշտ է յիշատակել, որ «Վարեագներից դէպի Յունաստան» տանող հին ճանապարհը կորցրեց իր երբեմնի նշանակութիւնը, եւ նրա դերն իր վրայ առաւ նախկին ուղեգծից դէպի արեւմուտք ձգուող այն նոր մայրուղին, որ Բալթիկ ծովը շաղկապում էր Սեւ ծովին՝ Վիսլա-Արեւմտեան Բուգ-Դնեստր գետերի միջնորդութեամբ[1]:

Այս նոր ճանապարհի տարբեր հատուածներում բարգաւաճեցին առեւտրա-արհեստագոր-

այսինքն վճռականօրէն մերժում է միութեան գաղափարն իսկ, քաջ գիտակցելով, որ յոյներն ու փռանկները միութեան կոչեր են անում Հայաստանում եւ հայկական գաղթավայրերում իրենց ազդեցութիւնն ուժեղացնելու նպատակով: Սանահինցիների առաջնորդը գրում է. «Ի Հռոմս երթիցես, տուր առ նոսա հաւանութիւն եւ ամենայն ազգին փռանկաց, առ ասորիս եւ քրիստոնէութեամբ պատուել մեծափառ եկեղեցիս Ռուզաց, խնդրեալ զպատշաճս ի նոցանէ. եւ միով հաւանութեամբ թէ տայցեն՝ ճանապարհորդեա ի քաղաքն Կոստանդնուպօլիս, տուր զմկրտութիւն լուսաւորութեան, եւ ըստ օրինաց՝ նախնի քոց հարցն՝ օրհնութեամբ պսակեա զսուրբ Սոփիա, որեարք (տպուած է՝ որ է այրք - Լ. Խ.) նոցա, եւ քրիստոսազարդ փառօքն զարդարեալ, յարեւմտից ծագեալ ըղձ հիւսիսի կոչել յորդեգրութիւն հաւատոյ սրբոյ աւազանին ծննդեամբ զբարեյաղթ քրիստոսապսակեալ թագաւորս մեր՝ զսիրելի ամենեցուն, այսպէս հաստատեալ պարծանս առ Աստուած, ասելով. «Ահա ես և մանկունք իմ»» («Արարատ», 1893, էջ 349):

1 **В. Т. Пашуто.** Очерки по истории Галицко-Волынской Руси, 1950, էջ 167

ծական մեծ նշանակութիւն ունեցող նոր քաղաքներ. Ակքերման՝ Դնեստրի գետաբերանի ծո-
վախորշում, Կամենեց-Պոդոլսկը՝ Ռուսաստանից դէպի Մոլդաւիա եւ դէպի Հարաւային Եւրո-
պայի այլ երկրներ տանող ճանապարհների վրա եւ մանաւանդ՝ Լւովը, որը երկու նշանաւոր
ճանապարհներով (via nova եւ via antique) կապուած էր Լեհաստանի ու կենտրոնական Եւրո-
պայի երկրների հետ: Միջազգային ճանաչում ստացան նաեւ Լուցկ եւ Վլադիմիր (հայկա-
կան աղբիւրներում՝ Օլատմիր) քաղաքները, որոնց վրայով աշխոյժ ապրանքափոխանակու-
թիւն էր կատարւում Լիտուայի, հիւսիսային Լեհաստանի, Մագդեբուրգի եւ Հանզայի մէջ
ընդգրկուած մերձբալթեան քաղաքների հետ[1]:

Կամենեց-Պոդոլսկ եւ Լւով քաղաքների հայկական ինքնավար մարմինների մեծաքանակ
արձանագրութիւնները եւ հայերէն, ղփչախերէն, լեհերէն լեզուներով պահպանուած դիւանա-
կան բազմաթիւ փաստաթղթերն ու այլ սկզբնաղբիւրներ հնարաւորութիւն են ընձեռում հան-
գամանորէն լուսաբանելու հայկական այդ խոշոր գաղթօջախների եւ նրանց հետ կապուած
միւս բնակավայրերի պատմութեան հետ կապուած շատ դրուագներ՝ բացայայտելու նրանց
կատարած դերը Հարաւային Ռուսաստանի (մասնաւորապէս՝ Գալիցեան եւ Վոլինեան երկրա-
մասերի) տնտեսական կեանքի տարբեր բնագաւառներում:

Առանց չափազանցութեան կարելի է հաստատել, գրել է այդ մասին պրոֆ. Ի. Լիննիչեն-
կոն, որ Հարաւային Ռուսիայի ամենանշանաւոր հայկական կենտրոնները՝ Լւովը, Լուցկը,
Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստութեամբ, փարթամութեամբ եւ նշանակութեամբ մեծ մա-
սամբ ու յատկապէս պարտական են հայերին: Այս ճարպիկ, աշխոյժ եւ բոլոր ասպարէզնե-
րում յաջողակ ժողովրդի շնորհիւ էր յատկապէս, որ Հարաւային Ռուսիայի առեւտրական
կենտրոնները միջնորդի դեր կատարեցին Արեւելքի եւ Արեւմուտքի առեւտրի ասպարէզում[2]:

Հարաւային Ռուսաստանում եւ Լեհաստանում այնքան էին սովոր հայերին տեսնել
միայն արեւելեան ապրանքներ վաճառողի մենաշնորհային դերում, որ մի ամբողջ շարք արե-
ւելեան ապրանքներ «հայկական ապրանք» էին կոչւում[3]:

Քաղաքական ու տնտեսական այս տեղաշարժերի հետեւանքով, XII դ. վերջին տասնա-
մեակներից սկսած, Կիեւը դադարեց ռուս իշխանների աթոռանիստ կենտրոն լինելուց եւ
զրկուեց դարերի ընթացքում հաստատած միջազգային իր կապերի մի մասից: 1240 թ. մոնղո-
լական հորդաները գրաւեցին Կիեւը ու այնպիսի ծանր հարուած հասցրին նրա տնտեսութեա-
նը, որ քաղաքն այլեւս անկարող եղաւ վերահաստատելու իր գերադասութիւնը միջնադա-
րեան ռուսական քաղաքների շարքում[4]: Շուտով Ռուսական եկեղեցու հոգեւոր պետը մետրո-
պոլիտական իր աթոռը Կիեւից փոխադրեց Մոսկուայից ոչ հեռու՝ Կլեազմայի վրայ գտնուող
Վլադիմիր բարգաւաճ քաղաքը:

1362-1471 թթ. Կիեւը գտնւում էր Լիտովեան մեծ իշխանութեան տիրապետութեան տակ,
իսկ այնուհետեւ, մինչեւ Ուկրաինայի վերամիաւորումը Ռուսաստանի հետ (1654) ենթակայ
էր Լեհաստանին՝ հանդիսանալով Կիեւեան վոյեվոդութեան վարչական կենտրոնը:

1 Я. Д. Исаевич. Культура Галицко-Волынской Руси ("Вопросы истории", 1973, N 1, էջ 94-95)

2 Տե՛ս Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի եւ արեւմտեան-հարաւային Ռուսիայի հայերը, Մոսկուա, 1894, էջ 3 (հմմտ. Վ. Ռ. Գրիգորեան, Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրութիւնները, էջ 37-38):

3 Л. Меликсет-Бек, նշւ. աշխ., էջ 113

4 Б. Д. Греков. նշւ. աշխ., էջ 501-507. В. Васильевский. նշւ. յօդուած. ЖМНП, 1888, июль, էջ 148

Պատմական ձախորդ այս հանգամանքների հետեւանքով, ինչպէս ասացինք, Կիեւը մե-
ծապէս տուժել էր ու զրկուել իր երբեմնի փառքից, սակայն սխալ կլինէր կարծել, թէ երկա-
րատեւ այդ դարերի ընթացքում քաղաքը չի ապրել վերելքի ու ծաղկման պահեր: Կան որո-
շակի փաստեր այն մասին, որ չնայած տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին,
XIV դ. վերջերին վերականգնուել էին Կիեւի կապերը Մոսկուայի հետ, եւ Լեհաստանից, Ռու-
սաստանից ձգուող հիմնական ճանապարհն այդ ժամանակ եւս անցնում էր նրա վրայով: Լեհ
անուանի գիտնական Մ. Մալովիստի կարծիքով XV դ. Կիեւը Մոսկուայից դէպի Կաֆա տա-
նող հիմնական ճանապարհի կարեւորագոյն հանգրուանն էր: Մոսկուայից Կիեւ էին ժամա-
նում պատմական նախորդ շրջանից յայտնի ուղիներով, այնուհետեւ անցնում էին Կանեւ ու
Չերկաս եւ, միշտ երկիւղ կրելով թաթարական յարձակումներից, սայլերով ու բեռնակիր
անասուններով կտրում էին տափաստանը, Պերեկոպով մտնում էին Ղրիմ: Ըստ նոյն գիտնա-
կանի՝ այս երթուղին, չնայած իր վտանգաւորութեանը, աւելի բանուկ էր, քան այն ճանա-
պարհները, որոնք Մոսկուան կապում էին Կաֆայի հետ Վոլգայի կամ Դոնի վրայով[1]:

Այս ճանապարհի տնտեսական նշանակութեան եւ Կիեւի արտաքին կապերի ընդլայնման
մասին ուշագրաւ տւեալներ է հաղորդում նաեւ Միխայիլ Լիտուինը՝ լաւատեղեակ մի անձ-
նաւորութիւն (Լիտուայի դիւանագիտական ներկայացուցիչը Ղրիմում), որը հեղինակն է
1548-1551 թթ. ընդգրկող մի յուշագրութեան. «Կիեւը,- գրում է նա,- լի է օտարերկրեայ ապ-
րանքներով, քանի որ չկայ աւելի սովորական մի ճանապարհ, քան այն հին ու հանրայայտ
ճանապարհը, որը տանում է... դէպի Դնեպրի Տաւանեան գետանցքը, իսկ այնտեղից էլ տա-
փաստանով դէպի Կիեւ: Այս ճանապարհով Ասիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Արա-
բիայից, Սիրիայից առաքւում են դէպի Մոսկուա, դէպի Պսկով ու Նովգորոդ... արեւելեան
բոլոր ապրանքները, այսինքն՝ թանկարժէք քարեր, մետաքս, մետաքսէ գործուածքներ,
խունկ, բուրաւէտ նիւթեր, զաֆրան, պղպեղ եւ այլ համեմունք: Այս ճանապարհով յաճախ ու-
ղեւորւում են օտարերկրեայ վաճառականներ. նրանք կազմում են կարաւան կոչուող խմբեր,
երբեմն բաղկացած 1000 մարդուց, եւ շարժւում են բազմաթիւ բարձուած սայլերի եւ բեռնա-
ւորուած ուղտերի ուղեկցութեամբ»[2]:

Այստեղ թուարկուած ապրանքներն են հէնց, որ «հայկական ապրանք» անունն էին
ստացել. ուստի պէտք չէ տարակուսել, որ Կիեւի վրայով դէպի հիւսիս ու մասնաւորապէս՝
դէպի Մոսկուա ուղեւորուող «օտարերկրեայ վաճառականների» շարքում հայերը կենտրոնա-
կան տեղ են գրաւել:

Այս ժամանակաշրջանի Կիեւի հայկական գաղթօջախի մասին համեմատաբար աւելի
առատ տեղեկութիւններ են պահպանուել: Հայ-ուկրաինական յարաբերութիւնների վաստա-
կաշատ ուսումնասիրող Եա. Դաշկեւիչը Լւովի հնադարաններում պահուող մի քանի տաս-
նեակ փաստաթղթերի վրայ յայտնաբերեց Կիեւի հայկական գաղութի ինքնավարութեան ղե-
կավար մարմնի՝ տանուտէրերի խորհրդի կնքադրոշմը ԱՅՍ Է ՄՈՀՐՆ ՄԱՆԳԵՐՄԱՆԻ ՏԱ-
ՆՈՒՏՐԱՑ մակագրութեամբ: Կնիքը բոլորաձեւ է. կենտրոնում պատկերուած է Գառն Աստու-

1 Marian Malowist. Kaffa-kolonia genuéska na Krymie i problem vschodni w latach 1453-1475, Warszawa, 1947 (հմմտ. М. Н. Тихомиров. Пути из России в Византию, էջ 18-19):

2 "Мемуары, относящиеся к истории Южной Руси", т. I, Киев, 1890, էջ 51 (հմմտ. М. Фехнер. նշւ. աշխ., էջ 19-20):

ծոյ՝ խաչակերպ վերջաւորութեամբ մի դրօշ պարզած[1]: Այս փաստով հաստատուեց, որ կիեւահայերը կազմակերպուած են եղել եւ ճանաչուել պետութեան կողմից որպէս առանձին համայնք՝ ունենալով իրենց ինքնավար մարմինները:

Ինչպիսի՞ իրաւունքներով է օժտուած եղել տանուտէրերի այս խորհուրդը. Հարցին կարելի է պատասխանել՝ հաշուի առնելով այն տուեալները, որոնք վերաբերում են Ուկրաինայի միւս հայկական գաղթօջախների ինքնավար մարմիններին: 1572-1619 թթ. Լուովի հայկական համայնքի դատարանում որպէս գրագիր աշխատող Մինաս Թոխաթեցի բանաստեղծը հայ դատաւորների իրաւունքների մասին գրել է այսպիսի տողեր.

«Զհայոց ազգն դոքա դատեն,
Ուխտ եւ դաշինք կու հաստատեն,
Զապստամբեալսն խրատեն,
Զկարգ եւ զսահմանքն կու պընդեն:
Երկոտասան դատաւորք են,
Զծուռն եւ զշիտակն դոքա քննեն,
Զմեղապարտսն վիրաւորեն»
Եւ զուղիղսն ազատեն»[2]:

«Այսօրէկ դատաւորք,- ասում է նրանց մասին Մ. Բժշկեանը,- կոչէին տանուտէարք, եւ ամենայն ինչ, թէ՛ աշխարհական եւ թէ՛ եկեղեցական, նոցին վճռաւ որոշեալ լինէր»[3]:

Համայնքին վերաբերող հարցերով նրանք իրաւասու էին դիմելու պետական իշխանութիւններին՝ անմիջական յարաբերութիւնների մէջ մտնելու պետական բարձրագոյն ատեանների, նոյնիսկ թագաւորի հետ, տնօրինելու համայնքի ներքին գործերը, ղեկավարելու բարեգործական հաստատութիւնները եւ այլն[4]: Այդպիսի իրաւունքներով էր օժտուած, անշուշտ, նաեւ կիեւահայերի տանուտէրերի խորհուրդը:

Ստոյգ յայտնի է, որ Պոդոլ թաղամասում կիեւահայերն ունեցել են համայնքի միջոցներով կառուցուած ու չէն պահուող հիւանդանոց, որի գոյութիւնն իսկ առհաւատչեան է համայնքի ինքնավար մարմինների աշխոյժ գործունէութեան եւ նիւթական միջոցների առատու-

1 Я. Р. Дашкевич. Армянские общественные печати на Украине. «Բանբեր Մատենադարանի», N 11, 1973, էջ 240
Կնիքի դրոշմը կրող փաստաթղթերի ծայրային թուականներն են 1648-1730 թթ.: Այդ շրջանում Կիեւի հայկական համայնքը, ինչպէս տեսնելու ենք ստորեւ, այլեւս գոյութիւն չունէր. քաղաքում ապրում էր միայն մի քանի հայ ընտանիք: Սակայն Լուովի հայ տանուտէրերը տնօրինում էին եկեղեցուն պատկանող կալուածքների հասոյթները եւ չէին պահում եկեղեցին: Կնիքը գործածում էին հաստատելու համար այն փաստաթղթերը, որոնք առնչւում էին մարած գաղթօջախի եկեղեցուն պատկանող կալուածքներին ու հասոյթներին: Այդ հանգամանքը, սակայն, կնիքի իրաւական ուժի վրայ չի ազդել. պետական մարմինները, քաջ տեղեակ լինելով, որ կիեւահայ գաղութը ունեցել է իր ինքնավար մարմինը, նրա մարումից յետոյ էլ վաւերական են ճանաչել այդ մարմնի կնիքը կրող փաստաթղթերը:
2 Ն. Ակինեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 80. համտ. Վ. Գրիգորեան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրութիւնները, Երեւան, 1963, էջ 56:
3 Մ. Բժշկեան, նշւ. աշխ., էջ 216
4 Վ. Գրիգորեան, նշւ. աշխ., էջ 56-57

թեան[1]:

Հաշուի առնելով Հայաստանի խոշոր քաղաքների եւ Արեւելեան Եւրոպայի հայկական մի շարք գաղթավայրերի մասին առկայ տուեալները՝ կարելի է պնդել, որ Կիեւի հայկական ինքնավար մարմինները եւս մեծ չափով մասնակցել են քաղաքի ինքնապաշտպանութեան աշխատանքներին. ամրութիւնների կառուցման համար նիւթական միջոցներ ու աշխատուժ են տրամադրել, աշխարհազօրային ռազմունակ ուժեր են կազմակերպել ու վտանգի պահին դրանք ռազմի դաշտ առաջնորդել[2]: Կիեւահայերի գործունէութեան այս կողմը լուսաբանելու համար եւս հարկադրական մի շեղում ենք կատարելու:

Հարաւային Ռուսաստանի Կիեւեան, Վոլինեան եւ Պոդոլեան երկրամասերի աշխարհագրական դիրքն ու դարաւոր հարեւանութիւնը միմեանց յաջորդող վաչկատուն ժողովուրդների՝ պեչենեգների (IX-XI դդ.), ղփչախների (XI-XIII դդ.), թաթար-մոնղոլների (XIII-XVIII դդ.) հետ իր խոր կնիքն էր դրել նրանց բնակչութեան կեանքի ու կենցաղի վրայ: Արեւելեան երկրների հետ հաղորդակցուելու խոշոր գետային ու ցամաքային ճանապարհները՝ «Վարեագներից դէպի Յունաստան» ձգուող գետային ուղին եւ, մանաւանդ, Կիեւից Ղրիմ տանող կարաւանային ճանապարհը անցնում էին քոչուորների հսկողութեան տակ գտնուող երկրամասերով. եւ նրանք ոչ միայն դարանակալ յարձակումներ էին գործում անցնող ու դարձող կարաւանների վրայ, այլեւ պարբերաբար, զինական մեծ ուժերով յարձակւում էին ռուսական քաղաքների վրայ, աւարում, աւերում, գերեվարում: Այդ արշաւանքներն աւելի յաճախակի էին դարձել XV դ. 80-ական թթ. յետոյ, երբ թուրքերին հպատակուած Ղրիմի խաները, գրեթէ ամէն տարի, իսկ երբեմն նոյնիսկ տարին մի քանի անգամ արշաւում էին դէպի Կիեւ ու հարեւան շրջանները՝ հսկայական նիւթական կորուստներ պատճառելով խաղաղ բնակչութեանը[3]:

Աւազակային այս ներխուժումների առաջն առնելու համար Կիեւի իշխանութեան հարաւային շրջաններում տակաւին XI դ. կառուցուել էին մի շարք բերդ-ամրոցներ, որոնք, յետագայ դարերում աւելի ընդարձակուելով, վեր էին ածուել ռազմական ու առեւտրական խոշոր կենտրոնների: XV-XVI դդ. Դնեպրի աջափնեայ տարածութիւններում քոչուորների դէմ մարտնչում էին Կիեւը, Կանեւը, Չերկասը, Ժիտոմիրը, Բրացլաւը, Վիննիցան, Կրեմենեցը, Կամենեց-Պոդոլսկը, Լուովը, Գալիչը[4] եւ այլ քաղաքներ: Այդ ամրոց-քաղաքներում էին

1 Д. И. Мышко. О жизни армян в Киеве в XV-первой половине XVII вв. "Исторические связи и дружба украинского и армянского народов". Киев, 1965, էջ 113-121
2 Յայտնի է, օրինակ, որ Կամենեց-Պոդոլսկի հայերն իրենց միջոցներով կառուցել ու դարերի ընթացքում յաճախ վերանորոգել են քաղաքի պարիսպների մի հատուածը, որ յայտնի է Հայկական ամրութիւն (Армянский редут) անունով: Պարիսպների այդ հատուածի պաշտպանութիւնը հայերի պարտականութիւնն է եղել, եւ նրանք քաջաբար են կատարել իրենց քաղաքացիական պարտքը (համտ. Մ. Բժշկեան, նշւ. աշխ., էջ 135, Վ. Գրիգորեան, նշւ. աշխ., էջ 34 եւ այլն):
3 "Очерки истории СССР", II, էջ 556, М. Грушевский. Иллюстрированная история украинского народа, СПб., 1913, էջ 154
4 Հին Գալիչի հայկական գաղութի պատմութեան համար զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում վերջերս այդ քաղաքի Ս. Պանտելեյմոն եկեղեցում յայտնաբերուած հայերէն արձանագրութիւնները, որոնց գծագրութիւնները բերուած են Օ. Խալփախչեանի "Культурные связи Владимиро-Суздальской Руси и Армении" հետաքրքրական աշխատութեան մէջ: Ամբողջովին պահպանուած եւ լաւ ընթերցուող միակ արձանագրութիւնը վերծանւում է այսպէս (վերծանութիւնն առաջարկում ենք ձեռքի տակ ունենալով յաջող մի լուսանկար, որ ժամանակին մեզ ուղարկել էր Եա. Դաշկեւիչը). «Ես Ասվատուրս Թոլային որդին գիրեց գիրս. թվ. ՊՂԳ (1444)»: Օ. Խալփախչեանը Թոլայ անձնանունը վերծանել է «Թուլայգ» (Тулайг) սխալ ձեւով, մինչդեռ ճիշտ ձեւն ուշագրաւ է՝ առնչուելով թոնդրակեցիներին տրուած թուլայեցի անուանը:

պատսպարւում նաեւ շրջակայ գիւղերի բնակիչները, որոնք դաշտային աշխատանքների էին դուրս գալիս զինավառ: Քաղաքացիները իրենց ձիերով ու զէնքերով պարտաւոր էին մասնակցել ինչպէս պաշտպանական մարտերին, այնպէս էլ թշնամուն հակահարւած տալու նպատակով կազմակերպուող արշաւներին: Այս պայմաններում քաղաքացիներից իւրաքանչիւրը (արհեստաւոր կամ առեւտրական) միաժամանակ զէնքի սովոր ռազմիկ էր[1]: Առաւել չափով ռազմունակ էին վաճառականները, որոնք ստիպուած էին զէնք կրելու եւ ըստ հարկի այն օգտագործելու առեւտրի նպատակով ձեռնարկած իրենց ուղեւորութիւնների ժամանակ: Ըստ ինքեան հասկանալի է, որ կիեւահայերը բացառութիւն չէին կազմում: Նրանք էին հէնց կարաւաններ կազմած մշտապէս երթեւեկում վերը յիշատակուած վտանգաւոր ճանապարհներով: Ուստի յարաժամ պատրաստ պիտի լինէին կողոպտիչներին դիմագրաւելու, իրենց անձն ու գոյքը պաշտպանելու[2]:

Այս անհրաժեշտ ներածականից յետոյ դիւրաւ պիտի հասկանանք եւ ըստ արժանւոյն գնահատենք Սիմէոն Լեհացու հաղորդած խիստ արժէքաւոր տուեալը Մանքերման-Կիեւի հայերի մասին: Վերյիշելով հայկական այդ հին գաղութի փառաւոր անցեալը՝ հայրենասէր հեղինակը ցաւով է արձանագրում, որ իր ապրած ժամանակներում, այսինքն՝ XVII դ. սկզբներին, նախկին բազմամարդ ու շէն գաղութից պահպանուել են միայն տխուր յիշատակներ: Նա գրում է. «Եւ մեծն Մանքէրման ասին թէ յորժամ սէֆէր լինէր, հինգ հարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմ, նարար պահատուրնի (այսինքն՝ արի դիւցազուններ - Լ. Խ.). եւ այժմ չորս տուն հայի մնացել է, բայց շատ խանութնի, վախըֆ աներ, ջաղացք, արտեր, պախչանի եւ այլք դեռ հայոց ձեռքն է»[3]: Ըստ այսմ՝ կիեւահայերը վտանգի պահին թշնամու դէմ դուրս էին բերում 500 ռազմիկ-քաղաքացիներ: Այս ուշագրաւ տուեալը, գրանցուած արժանահաւատ ու ճշմարտախօս հեղինակի կողմից, բացառիկ արժէք ունի XV-XVI դդ. Կիեւում բնակութիւն հաստատած հայերի մօտաւոր թիւը որոշելու համար: Եթէ նոյնիսկ ենթադրենք, որ կիեւահայ ընտանիքներից իւրաքանչիւրն ի վիճակի էր աշխարհազօրային ունենալու, ապա ըն-

Օգտուելով առիթից, առաջարկում ենք եւս մէկ ճշգրտում: Օ. Խալփախչեանն իր այս ուսումնասիրութեան մէջ, ինչպէս նաեւ «Պատմա-բանասիրական հանդէսի» 1971 թ. N 2-ում (էջ 254-262) տպագրած յօդուածում, վերատպել է Սերբիայի Պետրովիցի քաղաքից 10 կմ արեւելք գտնուող Վիտովնիցէ վանքի եկեղեցիներից մէկի հայերէն կառուցողական արձանագրութիւնը, որը պատմական կարեւոր արժէք է ներկայացնում՝ լինելով հաւաստի փաստ այդ երկրամասում հայկական հին գաղթավայրի գոյութեան: Ցաւոք պէտք է նշել, սակայն, որ Օ. Խալփախչեանը (ինչպէս եւ նրանից առաջ ուրիշներ) ճիշտ չի վերծանել արձանագրութեան ամենակարեւոր մասը՝ տարեթիւը: Արձանագրութեան վերջին փակագիր «ԱմէՆ» բառից առաջ կարդացւում է «ՈԻԷ» (1178) թուականը: Տասնաւոր «Ի» թուի ձախակողմեան ուղղահայեաց գծի ներքեւի հատուածը կարճ է փորագրուած, ճիշտ այնպէս, ինչպէս կարճ են այդ տառի բոլոր գրութիւնները նոյն արձանագրութեան մէջ: Հաշուի առնելով այդ հանգամանքը, «Ի»-ի փոխարէն յարգելի գիտնականը «Կ» է կարդացել, որի հետեւանքով եկեղեցու կառուցման թուականը, 1178-ի փոխարէն համարել է 1218-ը:

1 Առաւել կամ նուազ չափով ռազմիկներ էին միջնադարեան բոլոր քաղաքների բնակիչները, եւ արեւմտեան, եւ արեւելեան երկրներում: Յայտնի է, որ XIII դ. 30-ական թթ. Հայաստան ներխուժած մոնղոլական նուաճողների դէմ հերոսաբար մարտնչեցին հէնց քաղաքացի-աշխարհազօրայիններ՝ Գանձակի, Անիի, Կարսի, Երզնկայի եւ այլ քաղաքների աշխատաւոր բնակչութիւնը:

2 Լեհ պետական պաշտօնեաները վկայել են, որ Կիեւի ու միւս սահմանամերձ քաղաքների բնակիչները «զինուած են հրացաններով եւ գիտեն դիպուկ կրակել» (**М. Грушевский,** նշւ. աշխ., էջ 154): Կիեւցիները 1523 թ. բողոքագիր են ներկայացրել լեհ իշխանութիւններին ու մեղադրել իրենց վոյեվոդ Անդրեյ Նեմիրովիչին այն բանում, որ նա անօրէն քայլեր է կատարում, բռնագրաւում է իրենց ձիերն ու զէնքերը, ստիպում արշաւի դուրս գալ հետիոտն եւ այլն (**Н. Костоморов.** Богдан Хмельницкий, историческая монография, т. I, СПб., 1884, էջ 11):

3 «Սիմէոնի դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն», ուսումնասիրեց եւ հրատարակեց Ն. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 347-348

տանիքների թիւը պէտք է առնուազն 500 լինէր, իսկ հայ բնակիչների թիւը՝ 2500-ից ոչ պակաս (ամէն մի ընտանիք 5 անձից բաղկացած համարելով)[1]: Բայց նկատի պէտք է առնել եւ այն հանգամանքը, որ քաղաքում կային նաեւ երիտասարդ որդի կամ հասուն տղամարդ չունեցող բազմաթիւ ընտանիքներ. եթէ նրանց նուազագոյն թիւը 100 հաշուենք, ապա կիեւահայութեան թիւը կաւելանայ եւս մի քանի հարիւրով: Թուական այս արդիւնքը գուցէ եւ փոքրինչ չափազանցուած, արտայայտել է իրական պատկերը: Յայտնի է, որ նոյն այդ ժամանակներում Լուցկ քաղաքում բնակուել է 800 հայ ընտանիք (այսինքն շուրջ 4000 անձ)[2]. 1566 թ. հայերը Կամենեց-Պոդոլսկում ունեցել են 900 տուն (ընտանիքների թիւը հասել է մինչեւ 1200-ի)[3]. բազմամարդ է եղել նաեւ Լւովի հայկական գաղութը: Մոլդաւիայի Սուչաւա մայրաքաղաքում հայերի թիւն անցել է 3000-ից[4] եւ այլն:

Իրականին մօտ համարելով Սիմէոն Լեհացու տուեալները, կարող ենք հետեւեցնել, որ Կիեւի հայ աշխարհազօրայինները պատկառելի ռազմական ուժ լինելով՝ ի վիճակի էին ոչ միայն արժանավայել տեղ գրաւելու քաղաքի պաշտպանական համակարգում, այլեւ պաշտպանելու կիեւահայ վաճառականների բոլոր ուղղութիւններով շարժուող կարաւանները յափշտակիչների յարձակումներից:

Ի լրումն վերոյիշեալի հարկ է նշել, որ մէջբերուած փաստերի լոյսի տակ այլեւս կասկածելի չեն կարող համարուել գերմանական ասպետական միաբանութիւնների եւ թուրք-թաթարական զավթիչների դէմ ռուս, լիտուացի եւ լեհ ժողովուրդների մղած կենաց ու մահու մարտերին հայերի բերած մասնակցութեան մասին առկայ տեղեկութիւններն ու ակնարկները[5]:

Կիեւի հայոց ինքնավար մարմնի՝ «Տանուտիրաց խորհրդի» հետ միասին գաղութի կեանքում մեծ դեր է կատարել Հայ եկեղեցին՝ միջնադարեան այն միակ կազմակերպութիւնը, որը սերտ կապեր պահպանելով հայրենի երկրի հետ ու իր հսկողութեան տակ պահելով գաղափարական ազդեցութեան բոլոր զսպանակները՝ հսկայական ազդեցութիւն է ունեցել մայր երկրից ծովերով ու ցամաքներով բաժանուած գաղթօջախների բնակչութեան բոլոր խաւերի վրայ:

Շուրջ 3000 բնակիչ ունեցող գաղթօջախում, անշուշտ, պէտք է գոյութիւն ունենային մի քանի հայկական եկեղեցիներ, որոնցից միայն մէկի՝ Աստուածածնի վերափոխման եկեղեցու մասին ունենք ստոյգ տեղեկութիւն: Այն կառուցուել է XV դ. կէսերին[6]: Տուեալներ կան նաեւ Կիեւի մերձակայքում Գրիգոր Լուսաւորչին նուիրուած մի տաճարի վերաբերեալ, բայց յայտնի չէ, հայերի՞ն է պատկանել այն, թէ՞ եղել է ռուսական տաճար[7]: Ուշագրաւ է, որ

1 Այս հաշուով են առաջնորդւում միջնադարեան քաղաքների բնակչութեան թիւը մերձաւորապէս որոշել ցանկացող ուսումնասիրողները:

2 **Սիմէոն Լեհացի,** էջ 347

3 **Վ. Գրիգորեան,** նշւ. աշխ., էջ 19

4 "Ученые записки Молдавского филиала АН СССР", том VI (серия историческая), Кишинев, 1957, էջ 262

5 Նկատի ունենք, մասնաւորապէս, 1410 թ. Գրունվալդի եւ 1444 թ. Վառնայի ճակատամարտերը:

6 **Н. Закревский.** Описание Киева, том II, М., 1868, էջ 859, том I, М., էջ 453-454 (օգտուել ենք Դ. Միշկոյի վերոյիշեալ յօդուածից):

7 **Л. Меликсет-Бек,** նշւ. աշխ., էջ 120: Ռուսաստանի տարբեր վայրերում եղել են Գրիգոր Լուսաւորչին նուիրուած տաճարներ եւ, աւելի մեծ քանակութեամբ՝ առանձին խորաններ. օրինակ Նովգորոդի մօտ գտնուող եւ 1198 թ. կառուցուած Փրկչի եկեղեցու (Спас Нередицы) խորանի աբսիդի վրայ նկարուած են Գր. Լուսաւորիչը, իսկ

կիեւահայերը. մանաւանդ ուրիշ վայրերից Կիեւ ժամանած հայ վաճառականները, հոգեւոր իրենց կարիքները բաւարարելու համար օգտուել են նաեւ ռուսական եկեղեցիներից: Այդ եկեղեցիների մայրը համարուող Ս. Սոֆիայի տաճարում՝ ս. Անտոնի եւ ս. Թէոդորոսի խորանի հիւսիսային պատին, պահպանուել են Գրիգոր Լուսաւորչի եւ Հռիփսիմէի որմնանկարները. դրանց՝ ինչպէս եւ տաճարի այլ մասերի որմնանկարների վրայ վերջերս յայտնաբերուեցին Ղրիմից, Աղքերմանից եւ այլ վայրերից Կիեւ այցելած հայ վաճառականների եւ հոգեւորականների կողմից խազուած 24 յիշատակագրութիւններ[1]. Հայերէն տառերի հետքեր նկատուած են նաեւ տաճարում գտնուող Եարոսլաւ Իմաստունի սարկոֆագի կափարիչի վրայ[2]:

Վերջերս յայտնի դարձաւ, որ Կիեւո-Պեչորեան վանքի ստորգետնեայ նորայայտ լաբիրինթոսներում ի յայտ են բերուել բացառիկ արժէք ունեցող ռուսերէն, լեհերէն եւ հայերէն արձանագրութիւններ: Ցաւօք, դրանք դեռեւս չեն հրապարակուել, ուստի յայտնի չէ, թէ երբ են գրուել եւ ինչ բովանդակութիւն ունեն[3]:

Կիեւում մէկից աւելի հայկական եկեղեցիներ լինելու մեր ենթադրութիւնն ուժ է ստանում լեհական աղբիւրներից քաղուած մի վկայութեամբ, ուր խօսք կայ 1371-1378 թթ. Կիեւում հայ եպիսկոպոսութեան առկայութեան մասին[4]: Մի նոր շեղում կատարելով, փորձենք լուսաբանել այս հարցը:

1328 թ. մի յիշատակարանի մէջ, առաջին անգամ լինելով, յիշւում է սուրդացի (սուրոժցի) Գրիգոր քահանայի որդի Ստեփանոս եպիսկոպոսը, որպէս «երջանիկ արքեպիսկոպոս... Խրիմի աշխարհին»: Նրա թեմի կենտրոնն է Կաֆա քաղաքը: Չի անցնում երկու տասնամեակ, եւ նոյն այդ հոգեւոր գործիչը յիշատակւում է իր ժամանակակիցների կողմից՝ արդէն որպէս «Ամենայն հիւսիսային (կամ հիւսիսական) կողմանց» կոչուող թեմի առաջնորդ[5]: Դժուար չէ կռահել, որ այն ժամանակ Կաֆայում նստող հայ արքեպիսկոպոսին էին ենթարկւում Ղրիմից հիւսիս ընկած երկրամասերը, ուստի նաեւ Կիեւում բնակութիւն հաստատած հայերը: Կացութիւնն, ըստ երեւոյթին, փոխուել է 1360-1370-ական թթ., երբ, ինչպէս ասացինք վերը, Կիեւում յայտնւում է ինչ-որ հայ եպիսկոպոս: Այդ մասին լուր ունի նաեւ Ալոյիսիոս Պիդուն. «զԿիև ասեն լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին հայոց, ուրանօր պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին... այլ և իրաւունս ունէր ձեռնադրելոյ եպիսկոպոսունս»,- գրում է նա[6]:

հիւսիսային պատին՝ Հռիփսիմեան կոյսերը: Գր. Լուսաւորիչը պատկերուած է նաեւ Խոտինի վանքի հէնց Լուսաւորչի անուամբ 1445 թ. կառուցուած եկեղեցում եւ այլն (տե՛ս **О. Х. Халпахчьян,** նշւ. աշխ., էջ 12-13):

1 Այս կարեւոր արձանագրութիւնների մեծ մասը թուագրուած է. կան 1507, 1510, 1514, 1537, 1545, 1556, 1557 1551, 1575, 1577, 1605, 1607 թթ. յիշատակագրութիւններ, որոնք խնամքով հրատարակել է արձանագրագէտ Գ. Գրիգորեանը (տե՛ս նրա "Армянские надписи Киевского собора святой Софии" յօդուածը՝ «Լրաբեր», 1979, N 4, էջ 85-93): Դրանց մէջ Կիեւը յիշատակուած է իր Մանքրման (նաեւ՝ Մանքռման) անունով, ճիշտ այնպէս, ինչպէս կոչւում էր այդ քաղաքը միջնադարեան պարսկերէն, արաբերէն, լատիներէն, հայերէն մի շարք աղբիւրներում (տե՛ս **Л. С. Хачикян.** Новые материалы о древней армянской колонии Киева. "Исторические связи и дружба украинского и армянского народов", Ереван, 1961, էջ 110-120):

2 **Վ. Յարութիւնեան,** Հայկական մի արձանագրութեան մասին («Տեղեկագիր», 1956, N 5, էջ 110)

3 **Е. Оберемок.** Встреча с легендой. "Комсомольская правда", 1979 г. 30 июня, էջ 4

4 **Я. Р. Дашкевич,** նշւ. յօդուածը, «Բանբեր Մատենադարանի», N 11, 1973, էջ 241

5 «ԺԴ դարի... յիշատակարաններ», էջ 208, 350, 370, 397, 400, 410

6 **Ա. Պիդու,** Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ եւ ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ եւ մերձակայ աշխարհաց (տե՛ս «Բոնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ

Լուովի հայկական առաջնորդարանում անցեալ դարի վերջերին պահւում էին Հայոց կաթողիկոսների կողմից առաքուած բազմաթիւ կոնդակներ. դրանք խնամքով հրատարակուած են Ղ. Ալիշանի կողմից: Կոնդակներից առաջինը՝ տրուած Մեսրոպ կաթողիկոսի կողմից, կրում է 1364 թուականը եւ ծանուցում է Լուով կենտրոնով եկեղեցական մի նոր թեմ ստեղծելու վճիռը[1]: Այնտեղ միաժամանակ ասուած է, որ տարիներ առաջ, նոյն այդ կողմերում եղել են ուրիշ առաջնորդ-եպիսկոպոսներ, որոնք, սակայն, գործել են «առանց մերոյ աթոռոյս հրամանի»: Ինչպէ՞ս հասկանալ այս տեղեկութիւնը: Արդեօ՞ք Գանձասարի կաթողիկոսներն են առաջին քայլերը կատարել այս երկրամասերում հայկական եկեղեցական թեմ հաստատելու ուղղութեամբ, թէ՞ ինքնագլուխ ինչ-որ եկեղեցականներ են հրապարակ իջել, ենթակայ չլինելով որեւէ կաթողիկոսի: Այս հարցերին առայժմ չենք կարող հիմնաւոր պատասխան տալ:

Հաշուի առնելով, ահա, այդ հանգամանքը, Մեսրոպ կաթողիկոսը եպիսկոպոս է օծում Գրիգոր անունով մի հոգեւորականի եւ թեմական առաջնորդի պաշտօնով ուղարկում Լուով: Կոնդակի մէջ նորաստեղծ թեմի սահմանները նշուած են այսպէս. «Այլ և մերով բարձր առաքելական եւ հայրապետական ամէներեւելի հրամանաւդ պարգեւեցաք զձեզ՝ ըզԼաւվդ, և ըզԱւլայտէմիր, իւր սահմանեալ վիճակաւդ՝ Լուցկայիւ», այսինքն՝ Գալիցիայի եւ Վոլինիայի նշանաւոր քաղաքները՝ Լուովը, Վլադիմիրը եւ Լուցկը[2]: Կիեւն այստեղ չի յիշատակուած եւ գուցէ այն պատճառով, որ Կիեւ կենտրոնով եղել է հայ եկեղեցու մի ուրոյն թեմ: Պէտք է նշել, սակայն, որ մի քանի տարի անց փոխւում է իրավիճակը. 1379 թ. պարոն Նասրատինի որդի Յովհաննէս կրօնաւորը, հաւանաբար Կաֆա քաղաքից մեկնում է Սիս՝ ինչ-որ թեմի (բացառուած չէ, որ հէնց Կիեւի) եպիսկոպոս ձեռնադրուելու համար: Կաթողիկոսը, գժտուած լինելով Լուովի առաջնորդ վերոյիշեալ Գրիգոր եպիսկոպոսի հետ, այս Յովհաննէսին եպիսկոպոս է կարգում ոչ միայն Լուով, Վլադիմիր ու Լուցկ քաղաքներն ընդգրկող թեմի վրայ, այլեւ մեծապէս ընդարձակում է հայ գաղթաշխարհի այդ առաջնորդութեան սահմանները՝ նրան ենթակայ դարձնելով հին Ռուսիայի եւ Մոլդովիայի բոլոր հայկական գաղթօջախները: Թեմական նոր առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը մի կարեւոր յիշատակարանի մէջ կոչուած է «Ամենայն Ըռսաց և Աւլախաց աշխարհի» հայոց առաջնորդ[3], իսկ նրա գլխաւորած ընդարձակ թեմի սահմանները 1388 թ. կաթողիկոսական կոնդակի մէջ թուարկուած են այսպէս. «...զրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ, յանուանի և յականաւոր թագաւորանիստ

եկեղեցւոյն Հռովմայ, ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16): Կիեւահայ եպիսկոպոսի մասին Ա. Պիդուի հաղորդած տուեալները՝ գրաւոր հիմք չեն ունեցել (նա գրում է «... ասեն լինել...»): Կարելի է կարծել, որ նա կամ իր տեղեկատուն Կիեւի երբեմնի հայ եպիսկոպոսին օժտել է պատրիարքական իրաւունքներով (այդ եպիսկոպոսն, իբր, իրաւունք է ունեցել նոյնիսկ ինքնագլուխ կերպով ուրիշ եպիսկոպոսներ ձեռնադրելու...), փորձելով «փաստերով» հիմնաւորել Նիկոլ Թորոսովիչի անօրինական գործողութիւնները եւ պայքարը Հայոց եկեղեցու գերագահութեան դէմ (յիշենք, որ Ա. Պիդուն կաթոլիկ կղերական էր, որ միջոցների առջեւ կանգ չէր առնում, Նիկոլ Թորոսովիչի հետ միասին, Լուովի հայերին բռնի կաթոլիկ դարձնելու համար):

1 **Ղ. Ալիշան,** Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 5-8

2 Լուցկի Հայոց եկեղեցին սուրբ Ստեփանոսի անուան էր, գոյութիւն է ունեցել 1445-ից շատ առաջ: Այդ թուականին լիտուական իշխան Սուիդրիգայլոն հայկական այդ եկեղեցուն նուիրել է ձեպերով գիւղը. յետագայում եկեղեցին ձեռք է բերել նաեւ այլ կալուածքներ («Հայ ժողովրդի պատմութիւն», հատոր IV, Երեւան, 1972, էջ 362: Տե՛ս նաեւ **Б. В. Колосок, П. П. Мах, Л. П. Санжаров.** Луцьк, Київ, 1972, էջ 17, ուր գրուած է. «Գալիցո- Վոլինեան առեւտրի բնագաւառում հայերի կատարած դերը փոքր չէ. Վոլինում նրանք հաստատուել են արդէն XIII դ.: XIV-XV դդ. նրանք Լուցկում կառուցել են եկեղեցի»):

3 ՄՄ ձեռ. N 1527, էջ 7ա, 667բ (հմմտ. «ԺԴ դարի... յիշատակարաններ», էջ 529)

քրիստոսական մայրաքաղաքն ի Լովն և յամենայն վիճակն իւր բոլորովին. ի Սերաթն, ի Չիչովն, ի Կամենեցն, ի Լուցկայն, ի յԱւլատէմուրն, ի Մանքրման, ի Վըլախաց երկիրն, և ի Պաւին, ի յԸնկի-Սալայն, և ի յայլ ամենայն թեմն իւր առ հասարակ»[1]:

Այստեղ յիշատակուած են, առաջին հերթին, մոլդաւական, ապա Գալիցիայի եւ Վոլինիայի ամենանշանաւոր ու բազմամարդ հայկական գաղթօջախները: Թուարկումը կատարուած է հաշուի առնելով նրանց աշխարհագրական դիրքը՝ հարաւից հիւսիս. նախ Մոլդաւիայի Սերաթ եւ Սեչով (գրուած՝ Չիչով) քաղաքները, ապա Կամենեց-Պոդոլսկը, Լուցկը, Վլադիմիրը, Կիեւը (Մանքրման)[2]. այնուհետեւ յիշատակուած է Վլախաց երկիրը՝ միջնադարեան Վալախիան, որի նշանաւոր քաղաքներում եւս (Տրգովիշտէում, Բուխարեստում եւ այլն) վաղ ժամանակներից բնակուել են հայ գաղթականներ: Որոշ դժուարութիւնների ենք հանդիպում վերջին երկու՝ Պաւին եւ Ընկի-Սալայ տեղանունների ճշգրտման ճանապարհին:

Ղ. Ալիշանը, կասկածանքով, Պըտինը նոյնացրել է Հունգարիայի մայրաքաղաք Պուտա Բէշտի (իմա՛ Բուդապեշտ) հետ[3]: Կարծում ենք, որ կասկածների հիմք չկայ, քանի որ կամենիցեան «Տարեգրքում», 1526 թ. վերաբերող մի գրանցման մէջ այդ մասին ասուած է շատ որոշակի. «զՊուտին քաղաքն՝ որ էր դախթն Մաճարաց» (այսինքն՝ «Պուտին քաղաքը, որ Մաջարների աթոռանիստն էր»)[4]:

Մնում է պարզել Ընկի-Սալայ կոչուած բնակավայրի տեղադրութիւնը: Մեր կարծիքով կաթողիկոսական կոնդակը յղղարող գրագիրը կամ Ղ. Ալիշանի համար արտագրող անձնաւորութիւնը՝ այս տեղանունը սխալ է վերծանել. բնագրում, մեծ հաւանականութեամբ, եղել է Ընկի-Սարայ, այսինքն՝ Ենկի (Նոր) Սարայ. յայտնի է, որ այդպէս էր կոչւում Ոսկէ Հորդայի նոր մայրաքաղաքը՝ Սարայ-Բերքէն, ուր, ինչպէս ասել ենք արդէն, հաստատուել էին մեծ քանակութեամբ հայ գաղթականներ:

Կրկին դառնալով Հայ եկեղեցու «Ամենայն Ռուզաց և Ալլախաց» կոչուող թեմին, պէտք է եզրակացնենք, որ այդ թեմի առաջնորդի հոգեւոր իշխանութիւնը, ընդգրկելով ահռելի տարածութիւններ, իր մէջ է առել Ոսկէ Հորդայի մայրաքաղաքից սկսած մինչեւ Հունգարիայի մայրաքաղաքն ընկած երկրամասերի հայկական գաղթօջախները:

Կիեւ-Մանքերմանը, եթէ նոյնիսկ չի եղել երբեւէ աթոռանիստ կենտրոն, ապա, անտարակոյս, նշանակալից դեր է կատարել՝ որպէս այս թեմի ամենաբազմամարդ հայկական գաղթօջախներից մէկը:

Լիտուայի մեծ իշխան, նշանաւոր Կազիմիր IV-ի[5] կողմից տրուած հրովարտակներով կիեւահայերը քաղաքի բուն բնակիչներին համահաւասար իրաւունքներ են ձեռք բերել տնտեսական գործունէութեան բոլոր մարզերում. ազատօրէն զբաղուել են առեւտրով ու արհեստներով, կառուցել են տներ, ունեցել բանջարանոցներ եւ այլն:

1 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 9. տե՛ս Թէոդորոս կաթողիկոսի կոնդակը:

2 Մանքերմանի կապակցութեամբ Ղ. Ալիշանը գրել է. «համարիմք Ագքերման», այսինքն՝ նոյնացրել է Դնեստրի գետաբերանի նշանաւոր նաւահանգիստ, վաճառաշահ Աղքերմանի հետ: Արդէն ապացուցել ենք, որ Մանքերմանը Կիեւն է (տե՛ս մեր "Новые материалы о древней армянской колонии Киева", վերոյիշեալ յօդուածը):

3 Ղ. Ալիշան, նշւ. աշխ., էջ 4

4 Նոյն տեղում, էջ 17

5 Մեծ իշխան է եղել 1440-1447 թթ., այնուհետեւ դարձել է Լեհաստանի թագաւոր. մահացել է 1492 թ.:

Հայերի բնակութեան հիմնական վայրը եղել է Պոդոլ թաղամասը՝ Դնեպրի ափին. այստեղ նրանք ունեցել են իրենց հաւաքատեղին, բազմաթիւ բնակելի տներ, արհեստանոցներ, խանութներ ու պահեստներ[1]: Գաղթօջախի բնակչութեան մեծամասնութիւնն, անշուշտ, զբաղուած է եղել առեւտրով: Եղել են մեծահարուստ վաճառականներ, որոնք մտել են քաղաքի արտօնեալ դասի մէջ եւ օգտուել մագդեբուրգեան իրաւունքից[2]: Կարելի է ենթադրել, որ այդ դասի մէջ էին մտնում նաեւ հայազգի սակաւաթիւ պետական պաշտօնեաները[3], ինչպէս նաեւ թարգմանի պաշտօն ունեցող անձինք, որոնք յաճախ կատարում էին դիւանագիտական յանձնարարութիւններ: Հայեր են եղել նաեւ բերդաբնակ քաղաքացիների մէջ, բայց հայերի մեծամասնութիւնը, ինչպէս ասուեց, բնակուել է Պոդոլ թաղամասում. այստեղ է կառուցուած եղել նաեւ Աստուածածնի վերափոխման եկեղեցին:

Վաճառականներից եւ առեւտրի հետ աղերսուող այլ զբաղմունքի տէր քաղաքացիներից բացի, կիեւահայերի մէջ եղել են մեծ թուով արհեստաւորներ. կաշեգործներ, մուշտակագործներ, կօշկակարներ, գինեգործներ, ջրաղացպաններ եւ այլն:

Հայկական գաղթօջախների պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւններում, ինչպէս եւ սպասելի էր, կենտրոնական տեղ է յատկացւում առեւտրական դասի գործունէութեան հարցերին: Արհեստագործութեան տարբեր ճիւղերի զարգացման գործում հայերի կատարած դերի մասին նոյնպէս որոշ նիւթեր են զրուել շրջանառութեան մէջ: Գրեթէ անտեսուած է, սակայն, գիւղատնտեսութեան բնագաւառը: Միջնադարեան քաղաքների բնակչութեան մի զգալի մասը զբաղուել է գիւղատնտեսութեամբ: Անվարան կարելի է նշել, որ գրեթէ բոլոր երկրներում, ուր ստիպուած խարխսի են նետել տարագիր հայ զանգուածներ, նրանց մէջ եղել են հմուտ այգեգործներ եւ բանջարաբոյծներ: Եւ նրանք մեծ ջանքեր են գործադրել իրենց նոր բնակավայրերում արմատաւորելու գիւղատնտեսական բարձր կուլտուրաների մշակութիւնը: Նոյնը պէտք է ասել նաեւ կիեւահայերի մասին: Քաղաքից դուրս՝ շրջակայ գիւղերում[4], եւ քաղաքի տարբեր թաղամասերում՝ Շչեկաւիցայում, Օբոլոնում, Վիշգորոդի մօտակայքում, եւ, մանաւանդ, իրենց բնակութեան բուն վայրում՝ Պոդոլում, հայերն ունեցել են այգիներ, ստեղծել են գինեգործարաններ, եւ իրենք էլ վաճառքի են հանել իրենց պատրաստած գինիները: «Հայերը,- իրաւացիօրէն նշել է Դ. Միշկոն,- որպէս գինեգործութեան բնագաւառի մասնագէտներ, եռանդուն կերպով նպաստել են խաղողագործութեան զարգացմանը Կիեւում»[5]:

1 Д. М. Мышко, նշւ. աշխ., էջ 115-116

2 Մագդեբուրգեան իրաւունքից օգտուող, ուստի հայկական ինքնավար մարմինների իրաւասութիւնից դուրս գտնուող մեծահարուստ բոլոր հայ վաճառականներին ճանաչելն անհնարին է. նրանցից շատերի անուն-ազգանունները ռուսականացուած են այն աստիճան, որ հայկական ծագման հետքերն իսպառ ջնջուել են: Անկասկած հայեր են ստորեւ յիշատակուողները. Իլեա Օրմենին, Եոլպեյ Օրմենին, Մորոդին Օրմենին, Կիրկոր Օդիրկովիչ, Ֆեդկո Սերկիզէն (տե՛ս Д. М. Мышко, նշւ. աշխ., էջ 117):

3 Այդպիսի բարձրաստիճան մի պաշտօնեայ է եղել Փիլիպպոս Հայը, որը երկարամեայ ծառայութիւնների դիմաց 1540 թ. Լիտուայի մեծ իշխան Սիգիզմունդից կալուածքներ է ստացել Կիեւի շրջակայքում (Д. М. Мышко, նշւ. աշխ., էջ 115):

4 «Պատմական փաստաթղթերը,- գրել է Դ. Միշկոն,- վկայում են, որ այդ ժամանակ (XV դ.) հայերը Կիեւի մօտակայքում՝ Կուրենեւկայում, Սիրեցում, Ժիտոմիրեան ճանապարհի երկայնքով՝ ունեցել ու մշակել են բանջարանոցներ եւ այգիներ» (նշւ. աշխ., էջ 114):

5 Այս առիթով հարկ ենք համարում, մի փոքր շեղում կատարելով, հարեւանցիօրէն անդրադառնալ միջնադարեան Ղրիմի խաղողագործութեան զարգացման գործում հայերի կատարած դերին, որ երբեմն անտեսւում է որոշ ու-

Գաղթած լինելով դաշտավարական եւ այգեգործական մշակոյթի հազարամեայ աւանդոյթներ ունեցող մի երկրից, գիւղատնտեսութեան մարզում աշխատող կիեւցի հայերը, անտարակոյս, կիրառելու էին երկրագործութեան մշակոյթի իրենց նախնիներից ժառանգած արդիւնաւէտ եղանակները, հայրենիքից բերած կամ հայրենի աւանդոյթներով ստեղծած արտադրական գործիքները՝ նպաստելով դրանց տարածմանն ու արմատաւորմանը աշխարհագրական այն նոր միջավայրում[1]*:*

Այս առումով հետաքրքրական են նաեւ Կիեւի հայկական համայնքին պատկանող ջրաղացների մասին առկայ տեղեկութիւնները: Սիմէոն Լեհացին իր «Ուղեգրութեան» մեր կողմից արդէն մէջբերուած հատուածում հաւաստում էր լոկ, որ Կիեւում հին ժամանակներից մինչեւ իր օրերը, գործում էին հայերին պատկանող ջրաղացներ: Դրանց մասին տեղեկութիւններ կան նաեւ օտար աղբիւրներում: Փաստաթղթերը վկայում են, գրել է Դ. Միշկոն, որ հայերը Սիրեց գետի վրայ ունեցել են ամբարտակ, արհեստական լճակ ու ջրաղաց, որից ստացուող եկամուտը յատկացուած է եղել եկեղեցու կարիքներին[2]*: Յիշատակուած ամբարտակն ստեղծուել է, անշուշտ, Սիրեց գետի ջուրը ջրաղացի թափանիւն աշխատացնելու հա-*

ուսումնասիրողների կողմից (տե՛ս, օրինակ, **М. К. Старокадомская.** Русское торговое население генуэзской Каффы. "История и археология средневекового Крыма", М., 1958, էջ 154): Վ. Միքայէլեանն արդէն լոյս է սփռել այս հարցի վրայ (տե՛ս «Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն», I, էջ 201): Աւելացնենք, որ Սուրխաթում եւ Կաֆայում ընդօրինակուած հայերէն ձեռագրերի յիշատակարաններում գրանցուած են մի շարք հայ այգեգործ-գինեգործների անուններ. յիշատակուած են, օրինակ, Գրիգորիս եւ Տուրք այգեպանները, Աղբարշահ, Էվատշահ եւ Օղուլ գինեգործ-գինեծախները (տե՛ս «ԺԴ դարի... յիշատակարաններ», էջ 366, 367, 576, «ԺԵ դարի... յիշատակարաններ», Բ, էջ 112):

Դոնի տափաստանում, ինչպէս եւ Հիւսիսային Կովկասի մի շարք շրջաններում եւս (մասնաւորապէս Ղզլարում եւ Մոզդոկում)՝ խաղողագործութեան զարգացումն անխզելիօրէն կապուած է հայերի անուան հետ (**Վ. Բ. Բարխուդարեան,** Նոր Նախիջեւանի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1967, էջ 146): Ըստ որոշ տեղեկութիւնների, Ֆրանսիայի Փիլիպպոս Յանդուգն թագաւորը (1342-1402) Հայաստանից հրաւիրել է հայ գինեգործներ, որոնց գործածած հնձանները ցարդ պահւում են Դիժոնի գինու գործարանում (**Ա. Ալպոյաճեան,** Պատմութիւն հայ գաղթականութեան, Բ, Գահիրէ, 1955, էջ 618): Տեղեկութիւններ կան Աֆղանստանի Քաբուլ քաղաքում գինեգործութեամբ զբաղուած հայերի մասին եւ այլն: Ի լրումն այս ամենի հիմքեր կան ենթադրելու, որ հայերը խաղողագործութեամբ եւ գինեգործութեամբ զբաղուելու որոշ փորձեր են կատարել նոյնիսկ հեռաւոր Չինաստանում, տակաւին Թան դինաստիայի տիրապետութեան դարաշրջանում, այսինքն՝ 618-907 թթ. միջոցին: Պահպանուել են այդ ժամանակ պատրաստուած յախճապակէ գունազարդ արձանիկներ՝ տարբեր ազգի մարդկանց՝ ոյգուրների, թոխարցիների, կաշգարցիների, խորեզմցիների, պարսիկների, սեմական ժողովուրդների եւ այլոց դիմորոշ պատկերներով: Դրանց շարքում ուշագրաւ տեղ են գրաւում հայի արտաքին յատկանիշներով (արծուակտուց-կեռ քիթ, սեւ բեխ ու մորուք) օժտուած անձանց արձանիկները, որոնք կերտուած են ծալապատիկ նստած եւ իւրաքանչիւրը մէկական գինով լի տիկ բռնած (The westerners among the figurines of the Tang dynasty of China, by Jane Gaston Mahler, Roma, 1959, գունաւոր ներդիրը՝ դրուած 94-95 էջերի միջեւ եւ պատկերների բաժնի III a, b, c, d սեւ-սպիտակ լուսանկարները):

Այս մի քանի փաստերը յիշատակեցինք այն յոյսով, որ առաջիկայում որեւէ տնտեսագէտ-պատմաբան, խնամքով հաւաքելով ցաքուցրիւ բոլոր նիւթերը, յատուկ հետազօտութիւն է գրելու տարբեր երկրների գիւղատնտեսութեան զարգացման գործում հայ գաղթականների կատարած դերի մասին:

1 Նշանաւոր հնագէտ Ա. Վ. Արցիխովսկին, որ շեշտում է արտադրական գործիքների զարգացման փուլերի ուսումնասիրութեան սոցիոլոգիական կարեւոր նշանակութիւնը, ձեռքի տակ չունենալով վստահելի աղբիւրներ, հեռամէտ դատողութիւններ է անում քննարկման նիւթ դարձնելով Հռոմի երկրագործական մշակոյթի մասին յայտնի նիւթերը, որոնք Ռուսաստանի հետ անմիջական առնչութիւն չունեն (տե՛ս **А. В. Арциховский,** Социологическое значение эволюции земледельческих орудий. "Труды социологической секции РАНИОН", 1927, էջ 133): Պէտք է յուսալ, որ շօշափելի արդիւնքներ կարելի է ստանալ հայկական նիւթի օգտագործման ճանապարհով, նկատի առնելով հայկական բազմաթիւ գաղթօջախների գոյութիւնն ու հայ երկրագործների եւ այգեգործների գործունէութիւնը ռուսական այդ երկրամասերում:

2 **Д. Мышко,** նշւ. աշխ., էջ 115

մար անհրաժեշտ մակարդակի բարձրացնելու նպատակով: Պէտք է ենթադրել, որ Հայաստանում լայն տարածում գտած ջրաղացների նմանողութեամբ Կիեւի մերձակայքում կառուցուած ջրաղացներն ընդօրինակուել են տեղացիների կողմից, տարածուել շրջակայքում, եւ իրենց նպաստը բերել հացահատիկի աղացման տաժանակիր աշխատանքի դիւրացման գործին:

Տնտեսութեան տարբեր բնագաւառներում կիեւահայերի ծաւալած գործունէութեան բնագաւառները վերոյիշեալով չեն կարող սպառուած նկատուել:

Որոշ ուսումնասիրողներ, օրինակ, հարեւանցիօրէն նկատել են, որ հայ ճարտարապետութեան ու որմնանկարչութեան ազդեցութեան հետքեր են նկատւում սուրբ Սոֆիայի տաճարի, Միքայէլ Հրեշտակապետի ոսկեգմբէթ վանքի եւ Կիեւի ճարտարապետական հնագոյն այլ յուշարձանների վրայ[1]*: Կա՞ն արդեօք հիմնաւոր փաստեր այսպիսի եզրայանգումների համար, չգիտենք: Հարցը կարեւոր է եւ կարօտ մասնագիտական անկանխակալ հետազօտութիւնների:*

Ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում եւս մի հարց: Յայտնի է, որ Լուովում՝ Գալիցեան Ռուսիայի հայաշատ այդ մայրաքաղաքում, հայ վարպետների կողմից, թերեւս հէնց հայ վաճառականների նախաձեռնութեամբ, կոփուել են սեփական արծաթէ դրամներ[2]*: Արծաթէ նման դրամներ հատուել են նաեւ Կիեւում՝ X դ. վերջերին, XI-ի սկզբներին (դրանից յետոյ, երկար ժամանակ, շրջանառութեան մէջ են գտնուել Կիեւում պատրաստուած որոշակի կշիռ ունեցող արծաթէ կշռաչափերը)*[3]*: Դրամագէտների գործն է, առաջիկայում յատուկ ուսումնասիրութեան նիւթ դարձնելով այս հարցը, պարզել, թէ կիեւեան դրամների ու կշռաչափերի արտադրութեան մէջ ինչ դեր է վիճակուած եղել հայ վարպետներին:*

Լուծման կարօտ հարցերի այս շարքը կարելի է լրացնել նոր կէտերով, որոնք, վերը թուարկուածներին գումարուելով, հաստատելու են այն միտքը, թէ կիեւահայ գաղթօջախի պատմութեան ամբողջական պատկերը ուրուագծելու համար յաղթահարելու են դեռեւս շատ դժուարութիւններ:

Լեհաստանի եւ Լիտուական մեծ իշխանութեան միջեւ կնքուած Լիւբլինեան դաշնագրից յետոյ (1569 թ.) Կիեւի վիճակը աւելի է վատթարանում: Լեհ ազնուականութիւնն ու Կաթոլիկ եկեղեցին սկսում են բռնագրաւել ուկրաինացիներին եւ հայերին պատկանող քաղաքամերձ կալուածքները: Ըստ երեւոյթին հէնց այս ժամանակ մեծ ծաւալ է ստանում կիեւահայերի արտագաղթը հարաւարեւելեան Եւրոպայի վաճառաշահ այլ կենտրոններ: Արտագաղթի հոսքը չի դադարում նաեւ այն բանից յետոյ, երբ Ռեչպոսպոլիտայի թագաւոր Ստեփան Բատորին (1575-1586) յատուկ հրովարտակով վերահաստատում է հայերի իրաւունքը՝ Կիեւում կալուածքներ, խանութներ, արհեստանոցներ ունենալու: 1596 թ. կնքւում է Բրեստի եկեղեցական Ունիան. Ուկրաինական եկեղեցին ստիպողաբար միաւորւում է Կաթոլիկ եկեղեցու հետ եւ ընդունում Հռոմի պապի գերիշխանութիւնը: Դրանից յետոյ, ինչպէս իրաւացիօրէն նշում է Դ. Միշկոն, կիեւահայերը շատ աւելի անզուսպ ճնշումների են ենթարկւում: Կաթոլիկ եւ ու-

1 Նոյն տեղում, էջ 114

2 **Я. Д. Исаевич.** նշւ. աշխ. ("Вопросы истории", 1973, N 1, էջ 95): Այստեղ ասուած է, որ մոլդաւական դրամակշռային համակարգը ձեւաւորուել է գալիցեան համակարգի օրինակով: Նկատի ունենալով մոլդաւական քաղաքներում հայ առեւտրական կապիտալի կատարած մեծ դերը, կարելի է հետեւեցնել, որ դրամակոփութեան գործն այստեղ եւս հայերի մենաշնորհն է եղել:

3 **В. Л. Янин.** Денежно-весовые системы русского средневековья. Домонгольский период, М., 1956

նիթոր հոգեւորականները կանգ չէին առնում միջոցների առջեւ՝ հայերին եւս կաթոլիկ դարձնելու եւ Հայ եկեղեցուն պատկանող կալուածքները բռնագրաւելու ճանապարհին: Կիեւը չլքած սակաւաթիւ հայերը, Լուովի հայկական մագիստրատի օժանդակութեամբ, փորձում են դիմագրաւել այդ ճնշումներին, իրենց ձեռքում պահել համայնապատկան կալուածքները, սակայն այդ պայքարն, ի վերջոյ, անյաջող վախճան է ունենում:

Եւ այսպէս, XVII դ. կէսերին կիեւահայ գաղութը՝ շուրջ վեց հարիւրամեակ գոյութիւն ունենալուց յետոյ եզրափակում է իր պատմութեան միջնադարեան շրջանը: Խամրում է գաղթօջախը՝ հսկայական դեր կատարելով հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ տնտեսական ու մշակութային կապերի ստեղծման ու ամրապնդման բնագաւառում, մի քանի տասնամեակ յետոյ, պատմական ու սոցիալ-տնտեսական նոր պայմաններում նորից վերակենդանանալու հեռանկար ունենալով:

Իրենց հայեացքը դէպի Ռուսաստան ուղղած հայերի համար Կիեւի տեղը բռնում է համայն Ռուսիայի նոր ու հզօր մայրաքաղաք Մոսկուան:

Ինչ ճանապարհով էին հայ վաճառականները Կիեւից ուղեւորւում Մոսկուա. առայժմ այդ հարցին պատասխանելու հնարաւորութիւն չունենք: Ամենակարճ ուղին Դեսնա գետի եզերքով էր ընթանալու եւ կանգառներ էր ունենալու Նովգորոդ-Սեւերսկ ու Բրեանսկ քաղաքներում: Սակայն չի բացառուած նաեւ դնեպրեան ուղին՝ Լիւբեչ, Գոմել, Սմոլենսկ կանգառներով: Սրանցից որն է աւելի բանուկ եղել եւ երբ, կարելի կլինի պարզել մանրակրկիտ հետազօտութիւններ կատարելուց յետոյ:

Յայտնի է, որ XV դ. սկսած Պուտիւլ քաղաքը դառնում է տնտեսական աշխոյժ կապերի աչքի ընկնող կենտրոն: Ղրիմից ու Թուրքիայից Պուտիւլ են ժամանում օտարազգի (նաեւ հայ) մեծաքանակ վաճառականներ, որոնք այստեղ հանդիպում են Մոսկուայի մեծ իշխանութեան Կոլոմնա ու Մոժայսկ քաղաքներից եկած ռուս վաճառականների հետ[1]:

Յայտնի է միաժամանակ, որ XVII դ. սկզբներից որոշակի դեր է սկսում կատարել նաեւ ուկրաինական կազակական ամենախոշոր զօրամիաւորման՝ Նեժինեան գնդի կենտրոնը հանդիսացող Նեժին քաղաքը: Վերջերս գիտական շրջանառութեան մէջ դրուեցին մի շարք արխիւային փաստաթղթեր, որոնք հետաքրքրական տեղեկութիւններ են պարունակում XVIII դ. 30-ական թթ. այդ քաղաքում մշտական բնակութիւն հաստատած կամ առեւտրական գործերով եկող ու գնացող բազմաթիւ հայ վաճառականների մասին[2]:

Նկատի ունենալով այդ փաստերը, մենք, այնուամենայնիւ, կարծում ենք, որ հայ վաճառականները Կիեւից Մոսկուա երթեւեկել են Պուտիւլ-Բրեանսկ ուղեգծով, սակայն այդ վայրերի քաղաքներում մշտական ու կայուն գաղթօջախներ չեն ստեղծել:

* * *

1380 թ. սեպտեմբերի 8-ին ռուսական 150 հազարանոց բանակը, որի մէջ միաւորուել էին գրեթէ բոլոր բաժնետիրական իշխանութիւնների գնդերը, պարտութեան մատնեցին Ոսկէ

1 **М. В. Фехнер.** Նշւ. աշխ., էջ 62

2 **Վ. Ս. Միքայէլեան**, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն. I, էջ 187-193: **Вардкес Микаелян, Ваграм Мартиросян.** Материалы по истории армянского купечества в России (30-ые годы XVIII в.). «Լրաբեր», 1978, N 4, էջ 79-99

Հորդայի կրկնապատիկ զօրքերին, որոնք Թումանբէկ Մամայի գլխաւորութեամբ արշաւանքի էին դուրս եկել Մոսկուայի վրայ: Այդ առաջին խոշոր յաղթանակն էր 150 տարի ռուսական հողը կեղեքող դաժան թշնամու դէմ: Յաղթանակը ցոյց տուեց, որ ռուսական իշխանութիւնների կոտորակուած ուժերի միաւորումը գրաւականն է լինելու մոնղոլական անարգ լծի թօթափման, մի լուծ, որը «ոչ միայն ճնշում, այլեւ անպատւում ու ցամաքեցնում էր իր զոհը դարձած ժողովրդի հոգին իսկ» (Կ. Մարքս): Կուլիկովեան փառաւոր յաղթանակով Մոսկովեան մեծ իշխանութիւնը վերջնականապէս իր ձեռքն առաւ ռուսական հողերի միաւորման հայրենանուէր գործի ղեկավարութիւնը եւ դուրս եկաւ տնտեսական ու քաղաքական զարգացման լայն ասպարէզ:

Ըստ երեւոյթին հէնց այս ժամանակաշրջանում էր, որ հայերը հաստատուեցին Մոսկուայում եւ սկսեցին զգալի դեր կատարել տարէցտարի հզօրացող ռուսական այդ իշխանութեան տնտեսական կեանքի տարբեր ոլորտներում, մասնաւորապէս՝ արտաքին առեւտրի բնագաւառում:

Բազմիցս վկայակոչուելով համընդհանուր ճանաչում է գտել ռուսական տարեգրութիւններից քաղուած այն տեղեկութիւնը, որի համաձայն 1390 թ. Մոսկուայում ծագած հրդեհն սկսուել ու տարածուել է Աբրահամ անունով մի հայի բնակարանից. "Загореся посад за городом от Аврама некоего арменина"[1]: Մասնագէտների կարծիքով, տարեգիրը «քաղաքից դուրս՝ առեւտրա-արհեստագործական արուարձան» ասելով նկատի է ունեցել նշանաւոր Կիտայգորոդը, որի Վարուարկա կոչուող ամենաբանուկ փողոցի վրայ՝ դեռեւս XVII դ. կար մի հատուած, ուր «տեղաւորւում էին հայերն ու յոյները»[2]: Ուրիշ հաւաստի տեղեկութիւններ՝ Մոսկուայում բնակութիւն հաստատած կամ Մոսկուայի հետ տնտեսական սերտ կապեր ստեղծած հայերի մասին այս դարաշրջանից չեն պահպանուել: Եւ այն կարծիքն է տիրապետում, որ հայերի համակողմանի կապերը համայն Ռուսիայի քաղաքական, տնտեսական ու մշակութային կենտրոն դառնալու ընթացքի մէջ մտած Մուսկուայի հետ՝ տեսանելիօրէն ուրուագծւում են այս դէպքերից առնուազն մէկ դար յետոյ: Այսուհանդերձ, սկզբնաղբիւրների մէջ առկայ որոշ ակնարկներ հնարաւորութիւն են ընձեռել ուսումնասիրողներին Մոսկուայի հայկական գաղութի պատմութեան ակունքները որոնել հէնց այս ժամանակաշրջանում:

XIV-XV դդ. սահմանագլխին Մոսկուայի մետրոպոլիտն էր Կիպրիանոսը, որը կատաղի յարձակումներ էր գործում հայերի դէմ՝ նրանց դաւանանքը համարելով խոտելի հերձուած: Նա խստիւ պատուիրում էր բոլոր ուղղափառներին՝ շփում չունենալ հայերի հետ, տօներին ու պասուց օրերին չընդունել նրանց իրենց յարկի տակ, չհաստատել նրանց հետ մտերմական կապեր եւ այլն: Մետրոպոլիտն այսպիսի խիստ հրահանգներ չէր արձակի, եթէ կեանքում հակառակը տեղի չունենար: Ռուս հասարակ մարդիկ, ինչպէս իրաւացիօրէն նկատել է ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը, էական տարբերութիւններ չէին տեսնում ռուս-ուղղափառ եւ հայ-լուսաւորչական դաւանանքների միջեւ, հաճոյքով մտերմանում էին հայերի հետ, ընդունում էին նրանց իրենց եկեղեցիներում, խնամիական կապեր հաստատում եւ այլն: Դրանց դէմն

1 "Троицкая летопись", էջ 436, ПСРЛ, т. XVIII, էջ 140. **В. Е. Сыроечковский.** Гости-Сурожане, М., 1935, էջ 23 եւ այլն

2 **М. Н. Тихомиров.** Средневековая Москва..., էջ 215: Մ. Տիխոմիրովը Վարուարկա (Ցախկին Վարսկայա) փողոցի մասին գրում է. "Улица быстро стала оживленной артерией великого посада. Одним концом она входила к торговым рядам и Кремлю, другим-к городскому рву" (նոյն տեղում, էջ 47-48):

առնելու նպատակն էին հետապնդում Կիպրիանոսն ու նրա յաջորդները: 1423 թ. հաստատուած եպիսկոպոսների ձեռնադրութեան ծէսի մէջ յատուկ կէտ սահմանուեց այն մասին, որ պէտք է խստագոյնս արգելուեն հայերի եւ ուղղափառների (ռուսների) միջեւ տեղի ունեցող ամուսնութիւնները, խնամիութիւնը եւ այլն[1]:

Այս կարգի կողմնակի վկայութիւնները, որքան էլ հետաքրքրական համարուեն եւ արժանի լինեն ուշադրութեան՝ անկարող են բաւարարել մեր հարցասիրութեանը: Հին Մոսկուայի հայկական գաղութի պատմութեան գիտական լուսաբանութեան համար նոր նիւթեր են պէտք:

Բարեբախտաբար, այդպիսի նիւթեր կան. բայց դրանք կարող են օգտագործուել մեր առջեւ ծառացած խնդիրների լուծման համար այն բանից յետոյ միայն, երբ նախօրօք հարթուած լինի Մոսկուայի միջնադարեան պատմութեան կնճիռներից մէկը՝ կապուած Մոսկուայի տնտեսական կեանքում մեծ դեր կատարած «սուրոժցի հիւրերի» ազգային պատկանելութեան եւ գործունէութեան բնագաւառների հետ:

* * *

XVI դ. ընթացքում Մոսկուան բարգաւաճել եւ դարավերջին դարձել էր Արեւելեան Եւրոպայի ամենախոշոր տնտեսական կենտրոններից մէկը: Մեծ էին նրա կապերը ինչպէս Թաթարական տափաստանների, այնպէս էլ եւրոպական երկրների հետ: Նովգորոդն ու Մոսկուան մրցակիցներ էին ռուսական իշխանութիւնների եւ Եւրոպայի միջեւ տեղի ունեցող ու շարունակ աւելի լայն ծաւալ ընդունող ապրանքափոխանակութեան բնագաւառում: Եւ եթէ Նովգորոդը ռուսական ապրանքներ էր մատակարարում Հանզայի քաղաքներին, Մոսկուան իր հիմնական ուշադրութիւնը սեւեռել էր հարաւի վրայ, կապուած լինելով իտալական նշանաւոր քաղաք-պետութիւնների՝ Ջենովայի ու Վենետիկի հետ: Տնտեսական այդ կապերի հանգուցակէտը Ղրիմի նշանաւոր ծովափնեայ քաղաքներն էին՝ նախ Սուրոժը, ապա Կաֆան: Մինչեւ XV դ. 70-ական թթ., այսինքն՝ մինչեւ Ղրիմի գրաւումը Թուրքերի կողմից, այդ քաղաքները (մանաւանդ՝ Կաֆան) վճռական դեր էին կատարում Ռուսաստանի համար՝ լինելով միջերկրածովեան հարուստ երկրների հետ տնտեսական կապերի հանգուցակէտ, դէպի Եւրոպա բացուած լայնարձակ հորիզոն ունեցող մի պատուհան:

Մենք արդէն առիթ ենք ունեցել նշելու, որ Կաֆայում հայերը մեծամասնութիւն են կազմել, իսկ Սուրոժում շատ ազդեցիկ դիրք գրաւել: Հարցի ուսումնասիրութեան արդի վիճակում կարելի է ապացուցուած համարել, որ հիմնականում այդ քաղաքների հայ վաճառականներն էին զբաղուած արեւելեան երկրներից ներմուծուող ապրանքների՝ մանաւանդ մետաքսէ, շքեղ գործուածքների, համեմունքի, բուրումնաւէտ նիւթերի եւ թանկագին քարերի առեւտրով: Մոսկուայում արեւելեան այդ ապրանքների առեւտրի մենաշնորհը գտնւում էր վերոյիշեալ «սուրոժցի հիւր» ("гости сурожане") կամ ուղղակի «սուրոժցի» ("сурожанин") կոչուող վաճառականների ձեռքում[2]:

1 М. Н. Тихомиров, նշւ. աշխ., էջ 216

2 Նշենք այստեղ, որ միջնադարեան տարբեր երկրներում լայնօրէն գործածուել են որեւէ քաղաքի անուան հետ աղերսուած ուրիշ համանման տերմիններ: Այսպէս՝ օրինակ, Միջին Ասիայում արտաքին առեւտուրը եղել է բուխարացի վաճառականների մենաշնորհը, եւ բոլոր այն մարդիկ, որոնք զբաղուել են այդ գործով, կոչուել են «բուխարալիւրտուշի» ("Очерки истории СССР", т. II, էջ 431): Թուրքական սուլթանները երկար ժամանակ Բարձր դրան թարգմանիչների պաշտօնին էին կոչում եւ Մոլդաւիայի ու Վալախիայի գոսպոդարներ էին կարգում Կ. Պոլսի Ֆանար թաղամասի յոյներին, ըստ այդմ վերոյիշեալ պաշտօնները գրաւած անձինք կոչւում էին

Եւ այսպէս, «սուրոժցի հիւր» կամ «սուրոժցի» էին կոչւում Մոսկուայի բարձրագոյն դասի վաճառականները, ի տարբերութիւն «սուկոննիկների» (մահուդավաճառների) եւ միւս առեւտրականների: Սրանք իրաւական իրենց գոյավիճակով հաւասարեցուած էին բոյարներին եւ հոգեւորականութեանը, ազատուած էին մի շարք հարկերից ու մաքսերից, իրաւասու էին առանց տուրք վճարելու իրենց տներում ոգելից խմիչք պահելու եւ, որ ամենակարեւորն է, անմիջապէս ենթակայ էին մեծ իշխանի դատական ատեանին[1]:

«Սուրոժցի հիւր» կամ «սուրոժցի» տերմինները լայնօրէն գործածական լինելով առտնին կենցաղում՝ կիրառւում էին նաեւ տարեգիրների կողմից, սակայն պաշտօնական հանգամանք չէին ստացել: XIV-XV դդ. Մոսկուայի մեծ իշխանների ստորագրած պաշտօնական փաստաթղթերի մէջ վաճառականների այս դասը յիշատակւում է «հիւր» ("гость") անունով միայն, մի տերմին, որ վաղ ժամանակներից յատկացւում էր «օտար երկրներից կամ այլ քաղաքներից ժամանած այն վաճառականներին, որոնք բնակւում կամ առեւտուր էին անում ոչ այն վայրերում, ուր գրանցուած էին»[2], այլ խօսքով «սուրոժցի» վաճառականները, չնայած Մոսկուայի տնտեսական կեանքում մեծ դեր էին կատարում, բայց իրենց գործունէութեան սկզբնական շրջանում, եթէ նոյնիսկ տարիներ շարունակ մնում էին Մոսկուայում՝ չէին համարւում այդ քաղաքի մշտական բնակիչներ:

Արդ՝ ո՞րն է եղել «սուրոժցիների» բուն բնակավայրը: Այսպիսի հարց, որքան մեզ յայտնի է, չի էլ դրուել բանասիրութեան մէջ: Ուսումնասիրողները տարակոյս չեն ունեցել, որ «սուրոժեան հիւրերը» ժամանել են Ղրիմի թերակղզու վաճառաշահ համանուն քաղաքից՝ Սուրոժից, որը գտնուել է Կաֆայի եւ Ալուշտայի մէջտեղում եւ մինչեւ Կաֆայի ծաղկումը հսկայական դեր է կատարել՝ որպէս փոխանակային առեւտրի միջազգային նշանակութիւն ունեցող կենտրոն: Յոյները քաղաքն անուանել են Սուգդայա, Սուգդեա, նաեւ Սուգդիա, արեւմտաեւրոպական աղբիւրներում այն կոչուել է Սոլդայա, ռուսական աղբիւրներում՝ Սուրոժից բացի, նաեւ Սուդակ, արաբական աղբիւրներում՝ Սուդաղ, Սուրդակ կամ Սողդադիա, Շողդադիա. հայերը կոչել են Սուղդա կամ Սուղտա[3]:

«Սուրոժեան հիւրերին» անվերապահօրէն Սուրոժ քաղաքի հետ շաղկապողները հաշուի չեն առել այն հանգամանքը, որ կան աղբիւրներ, որոնք այդ քաղաքի անունով Ղրիմի թերակղզին ամբողջութեամբ կոչել են Սուրոժեան թերակղզի, իսկ արաբական (թերեւս նաեւ ռուսական) որոշ աղբիւրներում ողջ Սեւ ծովն է ճանաչուել Սուրոժի անունով[4]:

Այս փաստերը ստիպում են ուսումնասիրողին շրջահայեաց լինել այդ տեղանուան հետ

«փանարիոտներ»: XVI դ. Մոսկուայում կար վաճառականների մի դաս, որին պատկանող անձինք կոչւում էին «սմոլենցի» ("смоляне"), սրանք Սմոլենսկ քաղաքի բնակիչներ էին (**Б. Н. Флоря.** Привилегированное купечество..., "История СССР", 1977, N 5, էջ 149): Այս կարգի փաստերի թիւը կարելի է կրկնապատկել:

1 **М. Н. Тихомиров.** նշւ. աշխ., էջ 160

2 **Вл. Даль.** Толковый словарь, I, էջ 386

3 Հայկական անուանման մասին տեղեկութիւնների աղբիւրը հայերէն ձեռագրերի յիշատակարաններն են, իսկ միւս տուեալները քաղուած են Վ. Վասիլեւսկուց (տե՛ս **В. Г. Васильевский.** Труды, III, Петроград, 1915, էջ CLVI):

4 Այս մասին տե՛ս **А. Н. Веселовский,** Южно-русские былины, СПб., 1884 ("Сборник отделения русского языка и словесности Академии Наук", т. XXXVI, N 3, էջ 69-70):
Պէտք է ենթադրել, որ ռուսները Սուրոժսկի անունով կոչել են Ղրիմի առափնեայ ծովը եւ ոչ (կամ ոչ միայն) Ազովի ծովը, ինչպէս ենթադրել են ոմանք (տե՛ս **В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 17):

առնչուող պատմաբանասիրական հարցերը մեկնաբանելիս: «Սուրո՜» ասելով՝ Մոսկուայի բնակիչները, ամենայն հաւանականութեամբ, նկատի են ունեցել ոչ թէ մասնաւորապէս Սուրոժ քաղաքը, այլ Ղրիմի թերակղզու հարաւարեւելեան ծովափն ամբողջութեամբ, ներառեալ ափամերձ շրջանները, ուր XIII-XV դդ. Սուրոժից բացի եւ Սուրոժից աւելի ծաղկուն քաղաքներ էին դարձել Կաֆան, Սուլխաթը, Մանգուպը եւ այլ կենտրոններ:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել այդ «հիւրերի» ազգային պատկանելութեան մասին: Այս հարցը յուզել է մի շարք պատմաբանների: Նրանց յայտնած տարբեր տեսակէտներին անդրադառնալուց առաջ անհրաժեշտութիւն է զգացւում ծանօթանալ «սուրոժցի» տերմինի գործածութեան պատմութեանը: Առաջին անգամ այն յիշատակուած է Իպատեւեան տարեգրութեան մէջ՝ 1288 թ. տակ: Այստեղ ասուած է, որ Վոլինեան երկրամասի իշխան Վասիլկոյ Վլադիմիրովիչի մահուան եւ թաղման արարողութիւնների ժամանակ Վլադիմիր քաղաքում ներկայ են եղել եւ ողբացել տարբեր ազգերի ներկայացուցիչներ. "Плакашеся над ним все множество Володимерцев, мужы и жены и дети, Немци и Сурожвце, Новогородцы, Жидове"[1]: Այս տուեալը Մոսկուայի հետ որեւէ առնչութիւն չունի եւ հէնց այս առումով զգալի արժէք է ներկայացնում: Դրա գոյութեամբ ժխտւում է այն տեսակէտը, թէ «սուրոժեան հիւր» տերմինը գործածական է եղել միայն Մոսկուայում:

Տեղին է այստեղ վերյիշել, որ Վոլինեան Վլադիմիր նշանաւոր քաղաքում բնակուել են բազմաթիւ հայեր, որոնք ունեցել են իրենց կազմակերպուած համայնքն ու եկեղեցին: Մահացած իշխանի յուղարկաւորութեանը քաղաքի բուն բնակիչներից՝ ռուսներից բացի, իհարկէ, մասնակցել էին նաեւ ազգային փոքրամասնութիւնները, որոնցից յանուանէ յիշատակուած են գերմանացիները, հրեաները եւ «սուրոժցիները»:

Հիւսիսային ռուսական տարեգրութիւնների մէջ 1318 թ. առաջին անգամ յիշատակութիւն ենք գտնում «Սուրոժեան ծովի» մասին, իսկ 1356 թ. տակ տարեգրութիւնը ծանուցում է, որ Հորդայից Մոսկուա է ժամանել Իրընչեյ անունով մի դեսպան, «սուրոժցի հիւրերի» ընկերակցութեամբ: Մասնագէտները նշում են, որ այդ «առաջին ուղղակի վկայութիւնն է Մոսկուայի եւ Ղրիմի իտալական գաղթօջախների միջեւ առեւտրական կապերի առկայութեան մասին»[2]:

Այսպիսով, XIV դ. կէսերից առաջ որեւէ տուեալ չի պահպանուել «սուրոժեան հիւրերի» Մոսկուայում ծաւալած տնտեսական գործունէութեան մասին:

Վերը շարադրուածից պարզ է, որ տարեգրութեան հեղինակը «սուրոժեան հիւրեր» ասելով նկատի է առել ընդհանրապէս Ղրիմի թերակղզուց եւ մասնաւորապէս Կաֆա քաղաքից ժամանած վաճառականներին:

Սակայն մի վայրկեան մոռանանք մեր այս տեսակէտը եւ փորձենք հարցին մօտենալ այն ուսումնասիրողների հայեցակէտից, ովքեր «Սուրոժ» տերմինի տակ բառացիօրէն հասկացել են հէնց Ղրիմի Սուրոժ-Սուդակ-Սուղդա քաղաքը: Բնակչութեան ազգային պատկանելութեան առումով ի՞նչ պատկեր էր ներկայացնում այդ քաղաքը XIV դ. կէսերին:

Սուրոժի պատմութեան հարցերով հետաքրքրուած բոլոր ուսումնասիրողներն էլ, միաբերան վկայում են, որ քաղաքի բնակչութեան կազմում հայերը զգալի թիւ են կազմել, իսկ մի

1 ПСРЛ, т. II, էջ 920. "Летопись по Илатскому списку", СПб., 1871, էջ 605

2 В. Е. Сыроечковский, նշվ. աշխ., էջ 17

քանի մասնագէտներ էլ (օրինակ, Ֆ. Բրունը)[1], թերեւս փաստերը չափազանցնելով, յանգել են այն եզրակացութեան, որ հայերը կազմել են քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը: Քաղաքի հանգամանալից պատմութիւնը շարադրել է Վ. Գ. Վասիլեւսկին «Սուրբ Ստեփանոս Սուրոժցու վարքի» ներածականում[2]: Նշանաւոր գիտնականը պարզել է, որ XIII-XIV դդ. Սուրոժի կառավարիչները կոչուել են սեբաստոսներ. դրանցից շատերի անունները գրանցուել են քաղաքի Յունական եկեղեցուն պատկանած Սինաքսարի (Հարանց վարքի) լուսանցքներին: Յիշատակուած սեբաստոսների մեծ մասին Վ. Վասիլեւսկին յոյն է համարել, նշելով միաժամանակ, որ հանդիպում են նաեւ այնպիսի անուններ, որոնց մէջ կան յունարէնին խորթ հնչիւններ: 1305 թ. յիշատակուած է, օրինակ, սեբաստոս Թոփտին՝ իր Թամար տիկնոջ հետ միասին: Հիմք ընդունելով տիկնոջ անունը, ուսումնասիրողն անորոշ դատողութիւններ է արել նրա (նաեւ նրա ամուսնու) վրացական ծագման մասին, անշուշտ, տեղեակ չլինելով, որ Թամար անունը, սկսած X դ. խիստ տարածուած էր հայոց մէջ եւ որ Ղրիմում, շատ վաղ ժամանակներից, գոյութիւն է ունեցել Թոփտի զուտ հայաբնակ խոշոր գիւղը (ունեցել է երկու եկեղեցի), որն այդպէս է կոչուել թերեւս կառուցուած լինելով այդ նշանաւոր սեբաստոսի կողմից, կամ մի այլ կերպ առնչուած լինելով նրա անուան հետ: Այդ նոյն Սինաքսարում յիշատակուած են Սուրոժի պատմութեան մէջ նշանակալի դեր կատարած մի քանի այլ հայազգի անձնաւորութիւններ եւս. Սամատ հայի տիկինը, Սմբատի որդի Դաւիթը եւ ուրիշներ: 1292 թ. սուրոժցի հայերը Զատիկը կատարել են ոչ թէ յոյների հետ՝ ապրիլի 6-ին, այլ նրանցից մէկ շաբաթ յետոյ: Այս կապակցութեամբ, ինչպէս միշտ ծռազատիկների ժամանակ, քաղաքում վէճեր են բորբոքուել հայ եւ յոյն համայնքների միջեւ[3], մի հանգամանք, որ իր հերթին վկայում է Սուրոժում հայ հօծ բնակչութեան առկայութեան մասին:

1322 թ. Սուրոժի պատմութեան համար դարձակէտային նշանակութիւն է ունեցել: Ուզբեկ խանի զօրահրամանատար Կարա-Բուլատը գրաւել է քաղաքը եւ հալածանքներ սկսել քրիստոնեաների նկատմամբ. փակուել են շատ եկեղեցիներ, կործանուել խաչեր եւ սրբատեղիներ, ցած բերուել եկեղեցական զանգակներ եւ այլն: Քրիստոնեայ բնակչութեան մեծ մասը լքել է քաղաքը: Իբն-Բատուտան 1334 թ. այցելելով Սուրոժ, գտել է այնտեղ միայն մի քանի յոյն արհեստաւորներ: Որոշ աշխուժութիւն է սկսւում 1365 թ. յետոյ միայն, երբ ջենովացիներին յաջողւում է իրենց տիրապետութիւնը տարածել նաեւ Սուրոժի վրայ, սակայն քաղաքն այլեւս ինքնուրոյն տնտեսական նշանակութիւն ձեռք չի բերում, եւ վերականգնւում է միայն Կաֆայի շնորհիւ՝ դառնալով նրա երկրորդական կցորդը:

Մէջբերուած այս թուականներն արժանի են սեւեռուն ուշադրութեան: Սուրոժը, այսպիսով, 1322-1365 թթ. իր պատմութեան ողբերգական շրջանն էր ապրում: Բայց հէնց այս շրջանում, աւելի որոշակի՝ 1356 թ., ռուսական տարեգրութիւնների մէջ առաջին անգամ գրանցում է կատարւում «սուրոժեան հիւրերի» Մոսկուա ժամանելու մասին: Ինչպէ՞ս բացատրել

1 **Ф. К. Брун,** Черноморье, ч. II, Одесса, 1880, էջ 140

2 Տե՛ս Труды В. Г. Васильевского, том третий, Петроград, 1915. Русско-Византийские исследования. Жития св. Георгия Амастридского и Стефана Сурожского, էջ CLVI-CCVII ("Исторические сведения о Суроже"):

3 **В. Г. Васильевский,** նշվ. աշխ., էջ CLXXXVIII: Այս տեղեկությունների մի մասը, նույն այս աշխատությունից քաղելով, օգտագործել են նաև ուրիշ հայագետներ (տե՛ս **Խ. Ա. Փորքշեյան,** Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, N 2, էջ 108, **Վ. Միքայելյան,** Ղրիմի հայկական գաղութի պատմություն, I, էջ 50):

այս առեղծուածը:

Առաջին հերթին՝ մեր կողմից արդէն բացատրուած ձեւով. «սուրոժեան հիւրեր» տերմինը տարեգրի կողմից օգտագործուել եւ ժամանակակիցների կողմից ընկալուել է՝ «Ղրիմից ժամանած վաճառական» (աւելի ճիշտ՝ «ղրիմահայ վաճառական») իմաստով: Իսկ եթէ, այնուամենայնիւ, «Սուրոժ» անուանումը պէտք է վերագրուէր ոչ ամբողջ Ղրիմին, այլ որոշակի մի բնակավայրի": Այդ դէպքում կայ միայն հետեւեալ բացատրութիւնը. Կաֆա քաղաքը բարգաւաճելով եւ բռնելով Սուրոժի տեղը, կատարելով տնտեսական այն վիթխարի դերը, որը վիճակուած էր նախկինում Սուրոժ քաղաքին, ինչ-որ ժամանակ սեփականել է նաեւ իր նախորդի աշխարհասփիւռ անունը:

Աշխարհագրապէս այդ երկու քաղաքներն այնքան մօտ էին գտնւում միմեանց եւ այնքան նոյնական էր նրանց դերը որպէս միջազգային ապրանքափոխանակութեան հանգրուան, որ հեռաւոր երկրամասերում, Ղրիմի թերակղզու նոր կենտրոնի՝ Կաֆա քաղաքի պատմութեան իրողութիւնները, շփոթումով կամ սովորոյթի ուժով, վերագրում էին Սուրոժ քաղաքին:

Ի հաստատումն այս բացատրութեան մէջբերենք մի բնորոշ փաստ: 1298 թ. Նողայ ամիրի զօրքերը գրաւում են Կաֆան եւ այստեղ հսկայական աւերածութիւններ են գործում: Այս լուրը վաճառականները հասցնում են Եգիպտոս, ուր եւ գրանցւում է, բայց արդէն ոչ թէ որպէս Կաֆայի հետ կատարուած դէպք, այլ Սուրոժ-Սուղտայի[1]:

Այսպիսով, կարելի է վստահօրէն յայտարարել, որ Մոսկուայի քաղաքացիների առտնին խօսակցութեան մէջ «սուրոժցի հիւր» կոչուած վաճառականները, որ յիշատակուել են սկսած XIV դ. կէսերից, իրականում սուրոժցի չէին, այլ Մոսկուա էին ժամանում Ղրիմի թերակղզու վաճառաշահ կենտրոններից՝ Սուրխաթից, Մանգուպից, Սուրոժից եւ այլ քաղաքներից, բայց առաջին հերթին եւ մասնաւորապէս՝ հռչակաւոր Կաֆա (Թէոդոսիա) քաղաքից:

Արձանագրելով այս հետեւութիւնը, պէտք է կրկին վերյիշենք այն փաստը, որ Կաֆայի բնակչութեան մեծամասնութիւնը հայերից էր բաղկացած եւ, որ կաֆայեցի հայերի ձեռքում էր կենտրոնացուած արեւելեան ապրանքների առեւտրի գերակշիռ մասը:

Այս անհրաժեշտ բացատրութիւններից յետոյ տեսնենք այժմ, թէ ինչպիսի կարծիքներ են արտայայտուել «սուրոժցի հիւրերի» ազգային պատկանելութեան մասին:

Մոսկուա քաղաքի պատմութեան անուանի ուսումնասիրողներից Ի. Զաբելինը այդ կապակցութեամբ գրել է. «Մոսկուան, հէնց այն պահից, երբ սկսեց պատմական իր ասպարէզը, ի հետեւանս մեր (Ռուսաստանի) հարաւային երկրամասերում ծաւալուած առեւտրական, մասնաւորապէս իտալական բարեպատեհ յարաբերութիւնների, ըստ երեւոյթին կարողացաւ իր կողմը ձգել յատուկ մի գաղութ իտալական վաճառականների, որոնք սուրոժցի անուան տակ, ռուսների հետ միասին, շատ ակնառու եւ ազդեցիկ դիրք գրաւեցին [Մոսկովեան] մեծ իշխանութեան մայրաքաղաքի ներքին կեանքում, եւ յետագայում մեծապէս նպաստեցին իտալական-ֆրանկական Եւրոպայի հետ նրա առնչութիւններին ու կապերին»[2]:

1 **В. Г. Васильевский,** նշւ. աշխ., էջ CXCI

2 "Москва, как только начала свое историческое поприще, по счастливым обстоятельствам торгового и именно итальянского движения в наших южных краях, успела привлечь к себе, по-видимому, особую колонию итальянских торговцев, которые под именем сурожан, вместе с

Այսպիսով, ըստ Ի. Զաբելինի «սուրոժեան հիւրեր» կոչուող վաճառականները հիմնականում եղել են իտալացիներ, եւ նրանք են, որ մեծ դեր են կատարել Մոսկուայի եւ եւրոպական երկրների հետ տնտեսական կապերի ստեղծման ու ամրապնդման գործում: Պէտք է նշել, որ այս տեսակէտի հեղինակը հաշուի չի առել երկու հանգամանք. նախ՝ որ ռուսական աղբիւրներում իտալացիները յիշատակւում են որպէս «ֆրեազ» կամ «ֆրեազին» (համապատասխանում է հայկական «ֆրանկ» բառին), եւ որեւէ ցուցում չկայ «սուրոժեան հիւր» ու «ֆրեազ» տերմինների նոյնացման ի նպաստ, եւ այնուհետեւ՝ արեւելեան ապրանքները ներմուծւում էին ջենովացիների տիրապետութեան տակ անցած ղրիմեան նաւահանգիստներն ու այնտեղից էր արտահանւում Ռուսաստան ոչ թէ իտալացի վաճառականների, այլ հէնց հայերի կողմից:

Ի. Զաբելինի նշած ճանապարհով է ընթացել նաեւ «սուրոժեան հիւրերի» մասին շատ արժէքաւոր ու փաստալից մենագրութեան հեղինակ Վ. Սիրոյեչկովսկին՝ իտալացիներից բացի «սուրոժցի» քաղաքային դասի շարքում տեղ յատկացնելով նաեւ յոյն վաճառականներին: Իր տեսակէտը Վ. Սիրոյեչկովսկին հիմնաւորում է երկու «սուրոժցիների»՝ Նեքամատի եւ Սալարեւի, անուն-ազգանունների իւրովի ստուգաբանութեամբ. Նեքամատ անունը (ըստ երեւոյթին նոյնացնելով յունական Նիկոմեդէս անուան հետ), նա համարում է յունական, ուստի այդ «սուրոժցուն» յոյն է համարում, իսկ Սալարեւ ազգանունը (հաւանաբար առնչելով լատիներէն salarius *բառի հետ, որ նշանակում է «աղը դրած ձկան վաճառական») իտալական հռչակելով՝ այդ «սուրոժցուն» էլ իտալական ծագում է վերագրում:*

Մեր կարծիքով, սակայն, մէկ-երկու անունների չհիմնաւորուած ստուգաբանութիւնների վրայ յենուելով հնարաւոր չէ պարզաբանել պատմաբանասիրական այնպիսի բարդ հարցեր, որոնցից է «սուրոժեան հիւրերի» ծագումնաբանութեան հարցը: Ըստ այդմ հաւատ չի ներշնչում նաեւ Վ. Սիրոյեչկովսկու եզրակացութիւնը, որ շարադրուած է այսպէս. «Մոսկովեան վաճառականների մէջ առկայութիւնը ղրիմեցի նշանաւոր յոյների եւ իտալացիների, որոնք հաստատուել էին Մոսկուայում ֆեոդալական այդ կենտրոնի բուռն զարգացման հետեւանքով, օգնելու է մեզ բացատրելու «սուրոժցիներ» տերմինի առաջացումը: Ղրիմից ներգաղթած վաճառականների խմբի նշանաւոր անդամները, որոնք շարունակ երթեւեկում էին դէպի հարաւային շուկաները, կարող էին սուրոժցի անուանումը տարածել բովանդակ դասի վրայ»[1]:

Ծագումնաբանական այս հարցին հպանցիկ անդրադարձել է նաեւ ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը: Յստակ տեսակէտ նա չի առաջադրել, սակայն, ըստ երեւոյթին, յանգել է այն եզրակացութեան, որ «սուրոժցի» կոչուող եւ Մոսկուա քաղաքի հետ առնչուած վաճառականները ազգութեամբ ռուս են եղել, բայց կոչուել են «սուրոժցի», որովհետեւ նրանց գործունէութիւնը խարսխուած է եղել Սեւ ծովի հարաւային նաւահանգիստների հետ: «Մոսկուայի վաճառականների ձեռքում դրամական միջոցների կուտակումը սերտօրէն կապուած էր սեւ-

русскими заняли очень видное и влиятельное положение во внутренних делах великокняжеской столицы и впоследствии много способствовали ее сношениям и связям с итальянскою, фряжскою Европою" (**Иван Забелин.** История города Москвы, ч. I, М., 1905, էջ 86):

1 "Наличие среди московских купцов видных греков или итальянцев из Крыма, привлеченных в Москву пышным ростом этого феодального центра помогло бы нам объяснить появление термина "сурожане". Выходцы из Крыма, видные члены группы купцов, постоянно отправлявшихся к южным рынкам, могли сообщить всей группе наименование сурожан" (**В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 24):

ծովեան առեւտրի հետ: Այդ պատճառով,- գրել է մեծանուն գիտնականը,- վաճառականների առաջատար խումբը Մոսկուայում ստացել էր սուրոժցի հիւր մականունը»[1]*: Սակայն այս բացատրութեամբ եւս խնդիրը չի լուծւում, քանի որ 1356 թ. անդրանիկ վկայութեան մէջ «սուրոժցի հիւրեր» են կոչուած ոչ թէ մոսկուացի, այլ Ղրիմից ժամանած օտարերկրացի վաճառականները:*

Այս հարցին անդրադարձել է նաեւ Վ. Միքայէլեանը եւ յանգել այն եզրակացութեան, որ ազգային կազմով «սուրոժցի» կոչուող վաճառականները միատարր չեն եղել. «Նրա մէջ առաջին հերթին մտնում էին ռուսներն ու հայերը, ապա նաեւ իտալացիներ եւ ղրիմաբնակ յոյներ»[2]*,- գրել է նա՝ փորձելով միաւորել ու հաշտեցնել վերոյիշեալ տեսակէտները՝ հայերի համար եւս տեղ ապահովելով «սուրոժցիների» շարքում:*

«Սուրոժցի հիւր» տերմինի իմաստը բացայայտելու փորձեր կատարելիս պէտք չէ անտեսել, որ այդպէս էին կոչուել արեւելեան ապրանքների վաճառականները ոչ միայն միջնադարեան Մոսկուայում, այլեւ ուրիշ քաղաքներում, մասնաւորապէս Վոլինեան Վլադիմիրում (այդ մասին խօսք եղաւ արդէն), Կիեւում, Սուզդալում, Մեծ Նովգորոդում (դրանց մասին՝ ստորեւ), գուցէ եւ ուրիշ քաղաքներում: Ըստ այդմ «սուրոժցի հիւր» տերմինը գործածուելով Մոսկուայի բնակչութեան առանձին կենցաղում եւ գրանցուելով տարեգրութիւնների մէջ՝ ենթադրել է տալիս ուրիշ մի վայրից ժամանած եւ տուեալ վայրում «հիւրի», այսինքն օտարերկրեայ վաճառականի գոյավիճակ ունեցող վաճառականների մի դասի առկայութիւն: Այդ վաճառականների յետագայ սերունդները, տասնամեակներ շարունակ ապրելով ու գործելով Մոսկուայում, դառնալով այդ քաղաքի մշտական բնակիչ, խնամիանալով ռուսների հետ, ի վերջոյ՝ դաւանափոխ լինելով՝ պէտք է որ փոխէին ազգային իրենց դիմապատկերը եւ հանդէս գային որպէս ռուս վաճառականներ: Բայց այդ վերաբերում է արդէն «սուրոժցիների» յետագայ պատմութեանը եւ ոչ նրանց պատմական ասպարէզ իջնելու հանգամանքներին: Ուստի, հետեւելով վերոյիշեալ ուսումնասիրողներին, տեսնենք, թէ ինչ արդիւնքներ կարող ենք ստանալ «սուրոժցի» վաճառականներից մի քանիսի անուն-ազգանունների անկանխակալ քննութեան ճանապարհով:

Սկսենք հէնց Նեքամատի (ռուսական աղբիւրներում գրուած է Некомат*) մասին տուեալների քննութիւնից: Կուլիկովեան ճակատամարտին նախորդող տարիներին Մոսկուայում հանրայայտ էր այդ «սուրոժցին»: Նա լայն կապեր էր հաստատել մի կողմից Մոսկուայի ու Տուերի իշխանների, միւս կողմից Ոսկէ Հորդայի տիրակալների հետ: Նրա ջանքերով 1375 թ. Դմիտրի Դոնսկոյի քաղաքական հակառակորդ Տուերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը Ոսկէ Հորդայից, երկրորդ անգամ լինելով, Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսն ստացաւ: Դմիտրի Դոնսկոյը* "со всей силою собрався, и со всеми князи русскими совокупяся"*, պարտութեան մատնեց իր քաղաքական հակառակորդին եւ ստիպեց նրան՝ անվերապահօրէն ենթարկուել Մոսկուայի մեծ իշխանութեանը*[3]*: «Սուրոժցի» Նեքամատը յետագայում մասնակցեց Դմիտրի Դոնսկոյի դէմ Մոսկուայի վերջին հազարապետի* (ТЫСЯЦКИЙ)

1 "Накопление капиталов в руках московских купцов было тесно связано с черноморской торговлей. Поэтому ведущая купеческая группа получила в Москве прозвание гостей-сурожан" (**М. Н. Тихомиров,** նշւ. աշխ., էջ 150):

2 **Վ. Միքայէլեան,** նշւ. աշխ., էջ 184-185

3 ПСРЛ, т. XI, էջ 15: "Очерки истории СССР", II, էջ 217

որդու գլխաւորութեամբ նիւթուող դաւադրութեանը, իսկ աւելի ուշ՝ 1383 թ. մահապատժի ենթարկուեց. Նրան պատկանած գիւղերն ու կալուածքները՝ Մոսկուայի մեծ իշխանի սեփականութիւնը դարձան[1]*: «Կարելի է չտարակուսել այն բանում,- գրել է այդ կապակցութեամբ ակադ. Մ. Տիխոմիրովը,- որ Նեքամատը կողմնակիցներ է ունեցել առեւտրական շրջանակներում եւ որ շօշափուած են եղել առեւտրական բարձր շահեր, մեր կարծիքով՝ Սուրոժի հետ առեւտուր անող հիւրերի շահերը, որոնց համար Ոսկէ Հորդայի հետ խաղաղութիւն պահպանելը չափազանց կարեւոր գործ է եղել, քանի որ Մոսկուայից դէպի Սեւ ծով տանող ճանապարհներին անցել են Ոսկէ Հորդայի տարածութիւններով»*[2]*:*

Քիչ առաջ ասացինք, որ Վ. Սիրոյեչկովսկին Նեքամատին համարել է յոյն վաճառական: Անուանի պատմաբանը, անշուշտ, աւելի շրջահայեաց կլինէր, եթէ ձեռքի տակ ունենար միայն վերջերս գիտական շրջանառութեան մէջ դրուած միջնադարեան հայկական ձեռագրերի յիշատակարանները՝ հայերի մէջ տարածուած անձնանունների մասին բազմաբովանդակ նիւթերով: Այդ աղբիւրների համաձայն, հէնց Նեքամատի գործունէութեան շրջանում կամ նրանից ընդամէնը մի քանի տասնամեակ յետոյ, Պատմական Հայաստանի մի շարք նահանգներում ու հայկական գաղթավայրերում սիրուած ու տարածուած է եղել Նեքամատ անձնանունը, որն ըստ Հ. Աճառեանի պարսկերէնից է փոխառուած եւ նշանակում է «բարի եկաւ», այսինքն «բարի գալուստ» («բարեբախտ»)[3]*: Նեքամատ անունն էին կրում Ամիդի Ս. Թէոդորոս կաթուղիկէ եկեղեցու կառուցող ճարտարապետը, Խարբերդի հայ ռայիսը, խլաթեցի մի տանուտէր, Խուլայս վանքի դպիրներից մէկը եւ նրանց ժամանակակից մի քանի այլ հայ անձնաւորութիւններ*[4]*:*

Այսպիսով, «սուրոժցի» Նեքամատը, իր անունից դատելով, եղել է ոչ թէ յոյն, այլ հայ վաճառական՝ մէկը ղրիմահայ հարիւրաւոր այն վաճառականներից, որոնք XIV-XV դդ. մրցակից չունէին դէպի Ռուսաստան եւ Արեւելեան Եւրոպայի այլ երկրներ արեւելեան ապրանքների ներմուծման բնագաւառում:

«Սուրոժցի» Նեքամատի կեանքի դրուագների համառօտակի շարադրանքից պարզ դարձաւ, որ նա, բարձր դիրք գրաւելով Մոսկովեան մեծ իշխանութեան կառավարող շրջաններում, պատկանում է այն կուսակցութեանը, որի ներկայացուցիչները գործում էին ի նպաստ Ոսկէ Հորդայի հետ տնտեսական կապերի զարգացման, ի վնաս Մոսկուայի մեծ իշխանութեան անկախութեան ջանքերի: Սակայն «սուրոժեան հիւրերի» մեծամասնութիւնը կանգնած էր Դմիտրի Դոնսկոյի կողքին, նպաստում էր ռուսական երկրամասերի միաւորման ուղղութեամբ ծաւալած նրա հայրենասիրական գործունէութեանը, գործուն դեր էր կատարում Ոսկէ Հորդայի դէմ նրա գլխաւորած պայքարում:

Երջանիկ պատահականութեամբ պահպանուել են Դմիտրի Դոնսկոյի կուսակից մէկ տասնեակ այն «սուրոժցի հիւրերի» անունները, որոնք ուղեկցել են Մոսկուայի մեծ իշխանին

1 ПСРЛ, т. XXV, էջ 190, 211, ПСРЛ т. XII, էջ 45, ПСРЛ т. XVIII էջ 135, **В. Г. Васильевский,** նշւ. աշխ., էջ CCII, **М. Н.Тихомиров,** նշւ. աշխ., էջ 161 եւ այլն:

2 **М. Н. Тихомиров,** նշւ. աշխ., էջ 173

3 **Հ. Աճառեան,** Հայ անձնանունների բառարան, հատ. Դ, Երեւան, 1948, էջ 71

4 «ԺԵ դարի... յիշատակարաններ», Ա, էջ 553, 629, Բ, էջ 34, 73, Գ, էջ 31, 383, 527: Նեքամատ կամ Նեքամատիկ անունով մի ծեր դպիր էլ յիշուած է Ց. Հազարեանի հաւաքածոյի XV դ. ընդօրինակուած N 9 ձեռագրում՝ որպէս թղթի կոկող եւ թանաք եփող (այս տեղեկութիւնը մեզ հաղորդել է Օ. Եգանեանը, որին յայտնում ենք շնորհակալութիւն):

Կուլիկովեան ճակատամարտում: Նախ մէջբերենք Նիկոնովեան տարեգրութեան այն հատուածն իր ամբողջութեամբ, որի մէջ տեղեկութիւններ են գրանցուած այդ վաճառականների կատարած դերի մասին. "Поять же тогда князь велики с собою десять мужей сурожане гостей, видения ради: аще что Бог случит, имут поведати в дальных землях, яко сходници суть з земли на землю и знаем всеми и в Ордах и в Фрязех; и другая вещь: аще что приличится, да сии сътворяют по обычаю их; си же суть имена их..."[1]. Այնուհետեւ թուարկուած են նրանց անունները, որոնք տարբերակներով են նշուած ձեռագրերի մէջ եւ Կուլիկովեան ճակատամարտի մասին պահպանուած միւս աղբիւրներում: Ստորեւ տալիս ենք ցանկը, իւրաքանչիւր անուան առընթեր նշելով տարընթերցուածներն ու լրացուցիչ տուեալները.

1. Վասիլի Կապիցա (Պալիցա),
2. Սիդոր Ելփերեւ (Ելուփերեւ, Օլուփերեւ, Օլփերեւ),
3. Կոստանտին (Պետունով, Վոլկ, Բոլկ, Բոլկով, Բելցա),
4. Կուզմա (Կոզմա) Կովերեա (Կովրեա, Կովիր, Կովրեա, Խովրին),
5. Սեմեոն Օնտոնով (Անտոնով. հօր անունն է՝ Անտոն Վերբլիւզին), կոչուած նաեւ Կորտոնոս,
6. Միխայիլ (Միխայլո) Սալարեւ (Սարաեւ, Սամարեւ),
7. Տիմոֆեյ Վեսեակով (Վասկով, Վեզեակով),
8. Դմիտրեյ Չեռնոյ (Չեռնի, Չերմնոյ),
9. Դեմենտեյ (Դմիտրի) Սալարեւ (Սարաեւ),
10. Իւան Շիխ[2]:

Թուարկելով այս անունները, Վ. Վասիլեւսկին յայտնում է այն կարծիքը, որ դրանց մեծամասնութիւնը ռուսներ են, սակայն «առաջինները (որո՞նք - Լ. Խ.) կարող են համարուել նաեւ յոյներ»[3]:

Սալարեւ ազգանունը կրող զոյգ անձինք (չնայած դրանք ձեռագրերում կոչուած են նաեւ Սարաեւ կամ Սամարեւ) ըստ Վ. Սիրոյեչկովսկու՝ հաւանաբար Ղրիմում հաստատուած իտալացիներ են եղել[4]: Ցանկի մէջ յիշատակուած Սիմէոն Օնտոնովի մասին խօսում է Մ. Տիխոմիրովը: Մէջբերելով մի վարքաբանական գրուածքի մէջ առկայ տուեալն այդ մեծահարուստ վաճառականի մասին (այստեղ ասուած է, որ նա եղել է "от великих купець и славных господствующему граду Москве"[5],- մեծանուն գիտնականը գրում է. «Սիմէոն

1 ПРСЛ, т. XI, էջ 54: Հմմտ. "Куликовская битва и подьем национального самосознания", Л., 1979, էջ 234:

2 Անուանացանկը ներկայացնում ենք Ի. Զաբելինի, Վ. Վասիլեւսկու, Վ. Սիրոեչկովսկու, Մ. Տիխոմիրովի, Գ. Մոիսեեւայի վերը յիշատակուած աշխատութիւնների մէջ առկայ ցանկերի համադրութեամբ:

3 **В. Г. Васильевский,** նշւ. աշխ., էջ CCIII

4 "Было бы допустимо и Саларевых считать выходцами из итальянских колоний Крыма",- գրում է նա (տե՛ս **В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 24):

5 **Н. Тихонравов,** Древная жития Сергия Радонежского, М., 1892, էջ 90

Օնտոնովի անունն ու հայրանունը թւում է, թէ վկայում է նրա ռուսական ծագման մասին»[1]:

Եւ այսպէս, միայն անուններից ելնելով, ուսումնասիրողները փորձել են որոշել Դմիտրի Դոնսկոյի ուղեկից «սուրոժեան հիւրերի» կամ նրանց մի մասի ազգային պատկանելութիւնը: Հէնց սկզբից պէտք է ասել, որ այդ ճանապարհով հնարաւոր չէ քիչ թէ շատ վստահելի արդիւնքի հասնել, քանի որ կարելի է վկայակոչել տասնեակ ու հարիւրաւոր օտարազգի անձնաւորութիւնների անուններ, որոնք յիշատակուել են ռուսական պաշտօնական փաստաթղթերում կամ տարեգրութիւններում այն աստիճանի ձեւափոխուած, որ հնաւոր հետք նոյնիսկ չի մնացել նրանց նախնական ու հարազատ ձեւերից: Գիւղնազար Օսուխենցը, օրինակ, դարձել է Նազար Օրեխովիչ, Յովհաննէսի որդիներ Աթանասն ու Բարսեղը՝ կոչուել են Աֆանասի եւ Վասիլի Իւանովներ, Պօղոս Զէնենցը՝ Պաւել Զինովեւ, Աստուածատուրի որդի Եղիան՝ Իլեա Բոգդանով եւ այլն եւ այլն[2]: Թուարկուած այս անձնաւորութիւնների ազգութեան մասին ստոյգ տեղեկութիւններ ունենալով, անվարան կարող ենք յայտարարել, որ նրանք հայ վաճառականներ կամ քաղաքական-զինուորական գործիչներ են եղել: Սակայն տարբեր բնոյթի միջնադարեան աղբիւրների մէջ յիշատակուած են հայազգի (ինչպէս եւ ուրիշ ազգութիւնների պատկանող) բազմաթիւ անձնաւորութիւններ՝ առանց ծանուցիչ տեղեկութիւնների: Ինչպէ՞ս վարուել նման դէպքերում: Պատմաբանասիրական այս բարդ հարցին հնարաւոր չէ գտնել դիւրին պատասխան: Ինքնըստինքեան հասկանալի է, որ ռուսական աղբիւրներում յիշատակուած ռուսական անուն-ազգանուններ կրող անձանց ճնշող մեծամասնութիւնը ազգութեամբ ռուս է եղել, այդ մասին երկու կարծիք չի կարող լինել: Սակայն խնդիրն այսպէս դիւրութեամբ լուծուած չենք կարող համարել, երբ տուեալներ կան այս կամ այն անձնաւորութեան մի ուրիշ երկրից ժամանած լինելու մասին: Եւ նոյնն է պարագան «սուրոժեան հիւրերի», այսինքն՝ Ղրիմի հետ կապուած եւ արեւելեան ապրանքների առեւտրով զբաղուած վաճառականների: Գերզգուշութիւնը նախապայման է լինելու նրանց ազգութիւնը որոշելու ուղղութեամբ կատարուող բոլոր փորձերի:

Այս բացատրութիւնից յետոյ հարկ չկայ յատուկ շեշտելու, որ «սուրոժեան հիւրերի» հարցով զբաղուած վերոյիշեալ ուսումնասիրողների եզրակացութիւններն այն մասին, որ այդ վաճառականները եղել են իտալացիներ, յոյներ, ռուսներ, կամ էլ այդ բոլորի հետ միասին՝ նաեւ հայեր, շատ հեռու են հիմնաւորուած լինելուց: Առաջին հերթին հէնց այն պատճառով, որ բազմապիսի աղբիւրներ միաբերան վկայութեամբ՝ հայ վաճառականների մենաշնորհն է եղել արեւելեան ապրանքների ներմուծումը Արեւելեան Եւրոպայի երկրներ (որոշ աղբիւրներում դրանք նոյնիսկ կոչուել են «հայկական ապրանքներ»):

Ուսումնասիրողներից ոմանք փորձել են «սուրոժցիների» ազգութեան հարցը լուծել նրանց յետագայ սերունդների մասին ռուսական աղբիւրներում առկայ տուեալների համադրումով: Նրանց յաջողուել է ուշագրաւ տեղեկութիւններ հաւաքել XV-XVI դդ. ապրած Սալարեւների, Օնտոնովների, Վեսեակովների, Շիխովների մասին, պարզել, որ նրանք նոյնպէս

1 **М. Н. Тихомиров,** նշւ. աշխ., էջ 151

2 Այս մի քանի տուեալները քաղել ենք պատահականօրէն ընտրուած մի գրքից ("Армяно-русские отношения в XVIII веке", сборник документов, т. III, Ереван, 1978): Հէնց այդ հատորի անուանացանկից դիւրութեամբ կարելի է դուրս գրել Ռուսաստան այցելած հայ վաճառականների եւ այլ զբաղմունքի տէր անձանց անճանաչելի ձեւափոխուած-ռուսականացուած մի քանի տասնեակ ուրիշ անուններ՝ Իւան Մակարով, Գաւրիլ Գրիգորեւ, Վասիլ Մակարով, Բոգդան Բոգդանով, Սերգեյ Իվանով, Մաքսիմ Ֆիլիպով, Պետր Իվանով եւ այլն, եւ այլն:

զբաղուել են իրենց պապերի արհեստով՝ արեւելեան ապրանքների առեւտրով[1]: Անկարելի է թերագնահատել շատ արժէքաւոր այդ աշխատանքը: Եւ կարելի է անվերապահօրէն համաձայնել, որ վերոյիշեալ վաճառականներից շատերի թոռներն ու թոռնորդիները, անքակտելիօրէն մերուելով ռուսական միջավայրին, յետագայում փոխել են իրենց ազգային դիմագիծը: Մեզ, սակայն, տուեալ դէպքում զբաղեցնում է «սուրոժեան հիւրերի» ծագումնաբանութեան հարցը, ուստի կրկին անդրադառնանք Դմիտրի Դոնսկոյի հետ Կուլիկովեան ճակատամարտ մեկնած «սուրոժցիներին»:

Նախ, անհրաժեշտ է ի մի բերել ռուսական աղբիւրներում առկայ տեղեկութիւնները նրանց գործունէութեան մասին:

"Сказание о Мамаевом побоище" ասքի խմբագրութիւններից մէկում ասուած է, որ «սուրոժցիները» "яко гости хозяева быша"[2]: Մէջբերելով այս հատուածը, Վ. Սիրոեչկովսկին փորձում է բացատրել անծանօթ այդ хозяева բառը, առնչելով այն թաթարական хозя-պարոն բառի հետ: Ըստ այդմ, խնդրոյ առարկայ նախադասութիւնը նա մեկնաբանում է այսպէս. «Այդ հիւրերը եղել են «առաջընթաց հիւրեր», այսինքն առեւտրական կարաւանների գլխաւորողներ (իմա՝ «քարաւանբաշիներ» - Լ. Խ.)[3]: Այս բացատրութիւնը տրամաբանուած է եւ ընդունելի, բայց կարող են լինել նաեւ այլ առաջարկներ: Ելնելով այն փաստից, որ ռուսական միջնադարեան աղբիւրներում իրանա-հայկական «խոջայ» տերմինը տառադարձուում էր хози (խոզի) ձեւով[4], աւելի հաւանական է ենթադրել, որ տուեալ դէպքում գործ ունենք հայ մեծատուն վաճառականների համար շատ սովորական «խոջայ» յորջորջման հետ: Ասքի հեղինակը այդ վաճառականներին խոջայ կոչելով՝ ըստ երեւոյթին ցանկացել է շեշտել նրանց մեծահարուստ լինելը, նրանց առեւտրական կապերի հսկայական ծաւալ ունենալը եւ այլն:

Շատ ուշագրաւ է նաեւ Տարեգրութեան ցուցումն այն մասին, որ այդ տասը «սուրոժցիները» "сходници суть з земли на землю и знаеми всеми и в Ордах и в Фрязех", այսինքն՝ «ճանապարհորդում էին երկրից երկիր ու ծանօթ էին բոլորին ե՛ւ Հորդայում, ե՛ւ Ֆռանկստանում»: Մենք, որ գիտենք արդէն հայկական կայուն գաղթօջախների գոյութեան մասին Ոսկէ Հորդայի քաղաքներում եւ եւրոպական բազմաթիւ կենտրոններում, լրացուցիչ կռուան ենք ստանում այդ «սուրոժցիների» հայկական ծագման մասին:

Ի՞նչ նպատակով էր Դմիտրի Դոնսկոյն իր հետ ռազմաճակատ տարել այդ տասը վաճառականներին: Այս հարցին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ: Ստորեւ համառօտ ծանօթանալու ենք այդ մասին արտայայտուած կարեւոր տեսակէտներին, տեղեկութիւնները քաղելով հիմնականում Վ. Սիրոեչկովսկու վկայակոչած աշխատութիւնից:

"Сказание о Мамаевом побоище» ասքում այդ մասին գրուած է. «поведания ради дальных земель", այսինքն, ըստ Վ. Վասիլեւսկու, «սուրոժցիները»՝ աշխարհ տեսած ու փորձառու այդ մարդիկ, կատարելու էին հետախոյզի, ուղեցոյցի եւ սննդամթերք հայթայթո-

1 Տե՛ս, օրինակ, М. Н. Тихомиров, նշւ. աշխ., էջ 151-153:

2 С. Шамбинаго. Повести о Мамаевом побоище. "Сборник отдела русского языка и словесности", LXXXI, էջ 51

3 В. Е. Сыроечковский, նշւ. աշխ., էջ 70

4 Խոզի-Մարում էր կոչւում, օրինակ, վրաց Ալեքսանդր թագաւորի Ռուսաստան առաքած դեսպաններից մէկը (տե՛ս Վ. Բարխուդարեան, Վ. Կ. Ոսկանեան, Հայ-ռուսական պատմական կապերը եւ Արեւելեան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երեւան, 1978, էջ 27):

ղի դեր: Վ. Սիրոեչկովսկին սխալ է համարում այս բացատրութիւնը՝ նշելով, որ ռազմական հետախոյզի դեր կատարողներին միջնադարեան ռուսական աղբիւրներում сторож կամ страж էին անուանում: Այս տեսակէտից հետաքրքրական է հետեւեալ փաստը: Ասքի որոշ ձեռագրերում ասուած է, որ տափաստաններում Մամայի զօրքերի շարժումներին ուշադիր հետեւում էր ոմն "твердый страж" - Սիմէոն Մելիքով կամ Սեմեոն Մելիք անունով. սա առաջինն էր, որ լուր հասցրեց թաթարական Հորդայի Մոսկուայի վրայ յարձակուելու մասին: Անկախ մեզնից եղել են ուսումնասիրողներ, որոնք այս Սիմէոն Մելիքովին հաւանաբար հայ են համարել[1]:

Նիկոնովեան տարեգրութեան մէջ, ինչպէս յիշում ենք, ասուած էր, որ «սուրոժցի» վաճառականները ուղեկցում էին Դմիտրի Դոնսկոյին,- "видения ради», «аще что Бог случит, имут поведати в дальных землях", այսինքն՝ նրանց դերն էր պատերազմի յաջող ելքի լուրը տարածել աշխարհով մէկ, քանի որ առեւտրական իրենց գործերով նրանք լինում էին ամէնուրեք: «Զադոնշչինա» կոչուող գրուածքի մէջ ուղղակի ասուած է, որ Կուլիկովեան ճակատամարտում ռուսների տարած փառաւոր յաղթանակի լուրը արագութեամբ տարածուեց աշխարհի չորս ծագերում. "Шибла слава к Железным вратам, к Риму и к Кафы по морю и к Торнаву и оттоле к Царюграду на похвалу: Русь великая одолета Мамая на поле Куликовье"[2]:

Այստեղ յիշատակուած են Դերբենդը (Երկաթէ դուռ), Հռոմը, Կաֆան, բուլղարական երկրորդ թագաւորութեան Տըռնովօ մայրաքաղաքը, Կոստանդնուպոլիսը՝ դարձեալ այն վայրերը, որոնց հետ ամենասերտ տնտեսական կապերի մէջ էին հէնց հայ վաճառականները:

Նիկոնովեան տարեգրութիւնն այս վաճառականների դերի մասին առաջ է քաշում եւս մի վարկած. "и другая вешь: аще что приличится да сии сътворяют по обычаю их". Նշանաւոր պատմաբան Վ. Օ. Կլիւչեւսկին դժուար հասկանալի այս նախադասութիւնը բացատրում է այսպէս. սուրոժցի վաճառականները «որպէս մեծ փորձ ունեցող ու աշխարհատես մարդիկ, ծանօթ լինելով հեռաւոր երկրների՝ Հորդայի եւ Ֆռանկստանի անցուդարձերին ու սովորոյթներին, կարող էին արշաւանքի ժամանակ օգտակար խորհուրդներ տալ»[3]:

Ա. Շախմատովի կարծիքով մեծ իշխանն իր հետ վերցրել է «սուրոժցի վաճառականներին» հաւանաբար դիւանագիտական հնարաւոր յանձնարարութիւնների համար: Վ. Սիրոյեչկովսկին ճիշտ է համարում հէնց այս կռահումը, նկատելով, որ թշնամու հետ բանակցելու անհրաժեշտութիւնը պէտք է ծագէր ե՛ւ յաղթանակի դէպքում, ե՛ւ պարտութեան, իսկ «սուրոժցի վաճառականներն» իրենց լեզուագիտութեամբ եւ Ոսկէ Հորդայի կառավարող վերնախաւի հետ ունեցած իրենց տնտեսական սերտ կապերով՝ ամենայարմար թեկնածուներն էին դիւանագիտական ծառայութիւններ մատուցելու: Հարկ չկայ այստեղ թուարկելու բազմաթիւ այն դէպքերը, երբ հայ վաճառականներին դիւանագիտական բարդ ու նուրբ յանձնարարութիւններ էին առաջադրում լեհ թագաւորները, Ղրիմի խանները, պարսից շահերը, Վրաստանի գահակալները եւ այլ իշխանաւորները: Մոսկուայի մեծ իշխաններն այս առումով բացառու-

1 Վ. Բ. Բարխուդարեան, Վ. Կ. Ոսկանեան, նշւ. աշխ., էջ 22: Նրանք վկայակոչել են "Хрестоматия по истории СССР", т. I, М., 1949, էջ 219, ուր տպագրուած է «Ասք Մամայի ջարդի մասին» գրուածքի մի փոփոխակ:

2 М. Н. Тихомиров, նշւ. աշխ., էջ 258-259: Հմմտ. В. П. Адрианова-Перетц, Задонщина. Текст и примечания ("Труды отдела древнерусской литературы", V, М.-Л., 1947, էջ 202):

3 В. О. Ключевский. Опыты и исследования, 1912, էջ 464

թիւն չեն կազմել:

Այս անհրաժեշտ բացատրութիւնից յետոյ, կրկին անդրադառնանք վաճառականների ցանկին: Տեսանք, որ տուեալ դէպքում անուն-ազգանունները ազգային պատկանելութիւնը որոշելու անվստահելի աղբիւրներ են: Սալարեւ ազգանուանը մենք արդէն հպանցիկ անդրադարձել ենք. ելակէտ ընդունելով այն վարկածը, որ ազգանունը «աւելի դիւրութեամբ բացատրւում է ռոմանական լեզուներով, քան ռուսերէնով», Վ. Սիրոյեչկովսկին, ինչպէս տեսանք վերը, մի ամբողջ տեսութիւն է զարգացրել «սուրոժեան հիւրերից» շատերի իտալական ծագման եւ իտալական վաճառականների Մոսկուայում կատարած խոշոր դերի մասին: Բայց չէ՞ որ միջնադարեան Հայաստանում գործածական է եղել Սալար անձնանունը (առաջացած պարսկերէն սալար-զօրավար բառից)[1], ուստի, աւելի մեծ վստահութեամբ կարող ենք այդ ազգանունը կրող երկու «սուրոժցիներին» նոյնպէս առնչել հայերի հետ:

Ցանկի հինգերորդ տեղում յիշատակուած է Սիմէոն Օնտոնովը՝ Օնտոն Վերբլիւզինի որդին: Երբ վերյիշում ենք Միխայիլ Լիտուինից մէջբերուած տողերը՝ արեւելեան երկրներից Կիեւի վրայով դէպի Մոսկուա կատարուող աշխոյժ առեւտրի մասին եւ այն մասին, որ արեւելեան ապրանքները «օտարերկրեայ վաճառականները (մեծ մասամբ հայերը - Լ. Խ.) Մոսկուա էին փոխադրում սայլերով ու բեռնաւորուած ուղտերով»[2], այս անձնաւորութեան Վերբլիւզին մականունը իմաստաւորւում է ըստ ամենայնի: Տասնեակ եւ հարիւրաւոր ուղտերից բաղկացած կարաւաններում (որոնց մասին խօսում է Մ. Լիտուինը), անշուշտ, եղել են նաեւ ուղտապաններ: Եւ, ըստ երեւոյթին այդպիսիներից մէկն է եղել Օնտոն Վերբլիւզինը՝ «սուրոժցի» Սիմէոնի հայրը:

Ցանկի ութերորդ տեղում յիշատակուած է Չեռնոյ կամ Չեռնիյ (այսինքն՝ Սեւ) մականունը կրող Դմիտրի վաճառականը: Հարկաւ, անհնարին է պնդել, թէ այդպիսի մականուն ունեցող անձն անպատճառ հայ է եղել, բայց մեծ հաւանականութեամբ կարելի է հետեւեցնել, որ նա իր մաշկի գոյնով խիստ տարբերուել է շրջապատի ռուս մարդկանցից:

Ցանկի չորրորդ հորիզոնականում յիշատակուած է Կուզմա (Կոզմա) Կովերեա (Կովիր, Կովրեա, Խովրին) «սուրոժցին», որից սկիզբ են առնում ռուսական պատմութեան մէջ խոշոր դեր կատարած Խովրին, Գոլովին եւ Տրետեակով իշխանական գերդաստանները[3]: XVI դ. կազմուած իրենց տոհմածառը Խովրիններն սկսում են Ստեփան անունով մի նախապապից, որը Դմիտրի Դոնսկոյի մօտ է եկել "из своей вотчины с Судака, да из Манкупа, да из Кафы": Այդ Ստեփանը (եթէ յօրինովի եւ անգոյ մէկը չէ) ըստ երեւոյթին եղել է վերոյիշեալ Կոզմա Կովերեայի մերձաւոր ազգականը: «Սուրոժցի» վաճառականների այս ընտանիքը, իր ծագումը կապելով Սուդակի (Սուրոժի), Մանգուպի եւ Կաֆայի հետ, ռուսական միջավայրում ներկայացել է որպէս Ղրիմի թերակղզում XIII դ. սկզբներից գոյութիւն ունեցող Թէոդորո ֆեոդալական իշխանութեան (Մանգուպ կենտրոնով) հայազգի տիրակալների՝ Գաւրասնե-

1 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երեւան, 1948, էջ 347: Անունն առաջին անգամ գործածուած ենք գտնում Բարձրաքաշ վանքի 1247 թ. մի արձանագրութեան մէջ, ուր ասուած է. «Ես Սումբա որդի Սալարին միաբանեցա սուրբ ուխտս եւ ըստ կարի աւգնեցի տանս» (Ս. Աւագեան, Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Երեւան, 1978, էջ 296):

2 М. В. Фехнер, նշւ. աշխ., էջ 19-20

3 Ф. К. Брун, Черноморье, II, էջ 236

րի ազգական[1]: Իրակա՞ն է եղել ազգակցական այդ կապը, թէ՞ յօրինուած, այժմ դժուար է որոշել: Մի բան, սակայն, պարզ է. Գաւրասները, լինելով խոշոր ֆեոդալներ, միաժամանակ խոշոր վաճառականներ էին: Այդպիսիք էլ եղան Խովրինները Մոսկուայում հաստատուելուց յետոյ: Վերոյիշեալ Ստեփանի թոռը՝ Վլադիմիր Գրիգորեւիչ Խովրինը, 1450 թ. յիշատակուած է որպէս "гость да и боярин великого князя", յայտնի է միաժամանակ, որ նա եղել է Մոսկուայի մեծ իշխան Վասիլի II-ի գանձապետը[2]:

Կիեւի հայկական գաղթօջախի պատմութեանը յատկացուած էջերում ասել ենք արդէն, որ միջնադարեան քաղաքների պաշտպանութեան մարտերում բոլոր քաղաքացիները, մասնաւորապէս առեւտրա-արհեստաւորական խաւերը, միշտ էլ առաջաւոր դիրքերում են գտնուել: Այս առումով Մոսկուան, իհարկէ, բացառութիւն չէր կազմում: «Մոսկուայի աշխարհազօրը» (московская рать), կազմուած «սուրոժցիներից», մահուդավաճառներից (суконники), միւս վաճառականներից եւ արհեստաւորներից, գործելով մեծ իշխանի կողմից նշանակուող վոյեվոդի հրամանատարութեան ներքոյ, զգալի դեր է կատարել քաղաքի պաշտպանութեան համար մղուող մարտերում: «Մոսկուայի աշխարհազօրը» գործուն մասնակցութիւն է ունեցել նաեւ Կուլիկովեան ճակատամարտում: Նկատի ունենալով այս հանգամանքը, բացառուած չենք համարում, որ Դմիտրի Դոնսկոյի հետ պատերազմի դաշտ դուրս եկած վերոյիշեալ տասը «սուրոժցիները», ինչպէս նաեւ բազմաթիւ ուրիշներ, որոնց անունները չեն պահպանուել, եղել են հայ աշխարհազօրայինների ղեկավարներ, եւ բացառիկ դիրք են գրաւել՝ ծառայելով մեծ իշխանին իբրեւ մատակարար, դիւանագէտ եւ լրաբեր:

«Ասք Կուլիկովեան ճակատամարտի մասին» գրուածքի մէջ յիշատակուած են մի քանի իշխանների, բոյարների եւ վոյեվոդների անուններ, որոնք զոհուել են Կուլիկովեան ճակատամարտում: Դրանց շարքում յիշատակուած է նաեւ Անդրեյ Սերկիզովիչ անուն-հայրանունը կրող մի անձնաւորութիւն[3], որն ըստ ոմանց Ոսկէ Հորդայի թաթարներից է ծագում[4]: Հաով-

1 Թէոդորօ իշխանութեան հայազգի տէրերի գործունէութեան, ֆեոդալական այդ տիրոյթի տնտեսական դերի ու քաղաքական պատմութեան մասին առկայ տեղեկութիւնները հաւաքուած են Ա. Լ. Եակոբսոնի կողմից (տե՛ս А. Л. Якобсон, Крым в средине века, М., 1973, էջ 128-133):

Նրանց հայկական ծագման մասին գրել են Ն. Ադոնցը, Ա. Վասիլեւը (որոշ վերապահումներով) եւ ուրիշներ: Բիւզանդագէտ Ա. Կաժդանը, յենուելով Ա. Բրայերի մի յօդուածի վրայ (A. A. M. Bryer. A. Byzantine Family te Gabrades... «University of Birmingham Historical Journal» 12,1790), յանգում է այն եզրակացութեան, որ "сколько-нибудь определенных свидетельств в пользу армянского происхождения этой семьи не существует", բայց ընդունում է, որ նրանք արեւելեան ծագում ունեն (А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, էջ 88-89):

Մեր նպատակից դուրս ենք համարում Գովրասների ծննդաբանական բարդ հարցի քննարկումը, սակայն խիստ թերահաւատ ենք Ա. Բրայերի ուսումնասիրութեան արդիւնքների նկատմամբ: Մի գիտնական, որ հնարաւոր է համարում ֆեոդալական հզօր մի գերդաստանի ազգանունը շաղկապել արաբ. «գեաուր» (անհաւատ) վիրաւորական բառի հետ, ենթադրելով, որ նրանք սեփականել են մահմեդականների կողմից իրենց «յատկացուած» այդ հայհոյանքը եւ այն դարձրել ազգանուն, վստահութիւն չի կարող ներշնչել: Գիւվեր, Գովրիկեան, նաեւ Կորվին հայկական ազգանունների գոյութիւնն Արեւելեան Եւրոպայի հայկական գաղթօջախներում Գովրասների, ուստի եւ Խովրինների հայկական ծագման օգտին է խօսում:

2 М. Н. Тихомиров, նշւ. աշխ., էջ 155-156

3 "Воинские повести Древней Руси", под ред. члена-корр. АН СССР В. П. Адриановой-Перетц, М.-Л., 1949

Բերում ենք ստորեւ մեզ հետաքրքրող հատուածը. "Не тури возрыкают на поле Куликове, побежени у Дону великого, взолаша посечены князи руския и бояры и воеводы великого князя и князи белозерстии, посѐчени от поганых татар: Федор Семенович, Тимофей Волуевич, Семен Михай-

մէական ծագում ունեցող Սերգիուս անունը միջին դարերում լայն տարածում էր գտել ողջ քրիստոնէական աշխարհում, ընդունելով տարբեր ձեւեր. Սերգիոս (Յունաստանում), Սերգիյ (Ռուսաստանում) եւ այլն: Անունն ամենից շատ գործածական է եղել Հայաստանում՝ հիմնականում Սարգիս, բայց նաեւ Սերգիս ձեւերով[1]: Ռուսական միջնադարեան աղբիւրներում յիշատակուած են այդ անունը կրող մի քանի հայազգի անձնաւորութիւններ՝ այսպէս, օրինակ, կաֆայեցի հայ վաճառական Սերկիզը[2], կիեւցի հայ Ֆեդկո Սերկիզեանը (Федко Серкизен)[3] եւ այլք: Կուլիկովեան ճակատամարտում զոհուած Անդրեյ Սերկիզովիչ զորահրամանատարի ազգանուան -ովիչ (-եւիչ) վերջաւորութիւնը շատ բնորոշ է Լեհաստանում եւ հարաւային Ռուսաստանում հաստատուած հայերի համար. այս միջավայրում նշանաւոր վաճառականներ եւ պետական ու եկեղեցական բարձրաստիճան պաշտօնեաներ են եղել Զաքար Իւաշկեւիչը, Նիկոլայ Բեռնատովիչը, Բեդրոս Զախարիասեւիչը, Պետր Գրիգորեւիչը, Սեֆեր Մուրատովիչը, Նիկոլ Թորոսովիչը եւ տասնեակ ու տասնեակ այլ հայեր:

Այս տեղեկութիւնների լոյսի տակ յանգում ենք այն եզրակացութեան, որ մեծ հաւանականութեամբ հայ է եղել նաեւ խիզախ հրամանատար Անդրեյ Սերկիզովիչը, որը զոհուել է Կուլիկովեան ճակատամարտում[4]:

Սրանք են, ահա, մեզ յայտնի տուեալները XIV դ. վերջին տասնամեակներում Մոսկուայում հաստատուած եւ այդ նշանաւոր քաղաքի տնտեսական ու քաղաքական ոլորտներում կարեւոր դեր կատարած հայերի մասին: Մինչ այժմ յայտնի էր այդ տեղեկութիւնների փոքր մասը միայն. դրանք բազմապատկուեցին «սուրոժեան հիւրերի» ազգային պատկանելութիւնը պարզելու ուղղութեամբ կատարուած քննութիւններով եւ ստացուած նոր արդիւնքներով: Ինչպէս տեսնելու ենք ստորեւ, կան եւ ուրիշ հնարաւորութիւններ այդ արդիւնքներն ամրապնդելու:

* * *

XV դ. Մոսկուայի տնտեսական կապերը Ղրիմի հետ աւելի են ծաւալւում: «Սուրոժցի» բառը գործածութիւնից գրեթէ դուրս է մղւում եւ նրան փոխարինելու է գալիս գոյութիւն ունեցող իրավիճակը ճշգրտորէն արտայայտող «կաֆայեցի» ("кафинец" կամ "кафеанин") տերմինը[5]: Կաֆան նշանաւոր այն կենտրոնն էր դարձել, ուր կանգ էին առնում եւ նախապատրաստւում Մոսկուա մեկնելու՝ Անդրկովկասի, Թուրքիայի եւ Իրանի քաղաքներից ժամանող հայ վաճառականներից շատերը: Չնայած ռուսական փաստաթղթերի մէջ նրանք ըստ մեծի մասի գրանցւում էին որպէս «թուրքական» ("турецкие"), «պարսկական» ("азамляне", այսինքն՝ աճեմցի-իրանցի), «թոխաթցի» ("токатяне"), «բուրսացի» ("бурсяне") վաճառականներ, սակայն կան տուեալներ նրանցից շատերի հայ լինելու մասին:

лович, Микула Васильевич, Ондрей Серкизович, Михайло Иванович и иния многия дружина, а иные лежат посечены у Дона на брези (էջ 37):

4 Նոյն տեղում, էջ 305

1 Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, էջ 402

2 Յիշատակուած է XIV դ. երկրորդ յիսնամեակում (**В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 46):

3 Յիշատակուած է 1552 թ. (**Д. М. Мышко,** նշւ. աշխ., էջ 117):

4 Այս մասին ակնարկ կայ նաեւ Վ. Բարխուդարեանի եւ Վ. Ոսկանեանի վերը յիշատակուած աշխատութեան մէջ:

5 ПСРЛ, т. XVIII, էջ 178: **М. Н. Тихомиров.** Пути из России в Византию, էջ 19-20

Հոծ հայ բնակչութիւն ունեցող Կաֆա քաղաքն էր այն հանգուցակէտը, որտեղ օտարերկրեայ վաճառականների հետ գործարար կապեր էին հաստատում Ռուսաստանի տարբեր իշխանութիւններից այստեղ ժամանող վաճառականները: Առանց ասելու էլ հասկանալի է, որ «սուրոժցի» կամ «կաֆայեցի» կոչուողները միջազգային նշանակութիւն ունեցող այդ ապրանքափոխանակութեան կազմակերպիչների շարքում պատուաւոր տեղ էին գրաւում:

1475 թ. թուրքերը գրաւում են Կաֆան: Ջենովացիներն այդ վայրերից վռնդւում են անվերադարձ: Այդ դէպքերը կատարեալ աղէտ են դառնում բոլոր այն երկրների համար, որոնց միջազգային հաղորդակցութեան ուղիները Սեւ ծովի հետ էին շաղկապուած: Ծանր հարուած է ստանում նաեւ ղրիմահայ առեւտրական կապիտալը: Հարիւրաւոր ընտանիքներ լքում են իրենց նոր հայրենիքը, եւ ապահով կեանքի եւ շահութաբեր գործունէութեան քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններ գտնելու յոյսով՝ արտագաղթում ուրիշ երկրներ: Սակայն երկուերեք տասնամեակ չանցած՝ Կաֆա քաղաքն սկսում է կենդանութեան նոր նշաններ ցոյց տալ եւ քայլ առ քայլ վերականգնել առեւտրական իր հին կապերը, որոնք այլեւս երբէք նախկին ծաւալը չեն ստանում, բայց այնուամենայնիւ, հսկայական նշանակութիւն են ձեռք բերում Ռուսաստանի եւ արեւելեան երկրների միջեւ դարերի ընթացքում հաստատուած ապրանքափոխանակութեան աշխուժացման համար:

Անվարան կարելի է յայտարարել, որ Ղրիմի տնտեսական գահավիժումի առաջն առնում են հիմնականում հայ առեւտրական կապիտալի ներկայացուցիչները, թարմ ուժեր ստանալով մայր երկրից (մասնաւորապէս Տրապիզոնի, Բաբերդի, Երզնկայի շրջաններից): Այդ ժամանակաշրջանում աշխարհագրական այդ միջավայրում գոյութիւն չունէր մի այլ ուժ, որ ի վիճակի լինէր կենդանութիւն ներարկելու կիսակործան Կաֆա քաղաքին:

Կաֆայի վերակենդանացումը տեղի ունեցաւ XV դ. վերջին տասնամեակներին, այն ժամանակ, երբ Մոսկուայի մեծ իշխանութիւնը բուռն զարգացման շրջան էր ապրում: Նրան էին ենթարկուել Նովգորոդը, Ռեազանը եւ կենտրոնական Ռուսաստանի բոլոր իշխանութիւնները: Պետութեան սահմանները հիւսիսից տարածուել էին մինչեւ Սառուցեալ ովկիանոս, հարաւից մօտեցել էին Ղրիմին, արեւմուտքից՝ սահմանակից էին դարձել Լիտուեան ուխտի հողերին (ասպետները պարտաւորուել էին հարկ վճարել): 1480 թ., երկդարեա յամառ պայքարից յետոյ, Մոսկուան թօթափում է նաեւ Ոսկէ Հորդայի նկատմամբ ունեցած հպատակային բոլոր պարտաւորութիւնները եւ փաստօրէն դառնում հզօր մի միապետութիւն՝ ունենալով Իւան III-ի պէս ականաւոր առաջնորդ: Իւան Վասիլեւիչի իշխանութեան տասնամեակներին, այսինքն՝ 1462-1505 թթ., զգալի առաջընթաց է ապրում նաեւ Ռուսաստանի տնտեսութիւնը. զարգանում են քաղաքները, ծաւալւում է առեւտուրը հարեւան երկրների հետ, մայրաքաղաք Մոսկուան զարդարւում է ճարտարապետական գեղեցիկ կառոյցներով, ընդարձակւում է Կրեմլը եւ այլն:

Քաղաքական ու տնտեսական բուռն զարգացման այս տասնամեակներին հայերի գործունէութիւնը Մոսկուայում պէտք է որ աւելի մեծ ծաւալ ընդունէր: Ի հաստատութիւն այս եզրակացութեան այսօր հնարաւոր չէ մէջբերել բազմաթիւ փաստեր. դրանք, թերեւս, երեւան կհանուեն յետագայում, երբ այս տեսանկիւնից քննութեան ենթարկուեն Մոսկուայի պատմութեան բոլոր գրաւոր աղբիւրները՝ տպագիր ու ձեռագիր: Մեզ յայտնի նիւթերը քանակով շատ չեն, բայց ուշադրութեան արժանի են իրենց բովանդակութեամբ:

Իւան III մեծ իշխանը 1469 թ. արշաւանք կազմակերպեց Ղազանի խանութեան դէմ. արշաւողների շարքում, ինչպէս գրուած է տարեգրութեան մէջ, գտնւում էին նաեւ «սուրոժցի-

ները, մահուդավաճառներն ու առեւտրի մարդիկ»[1]: Այսպիսով, «սուրոժցիները», Մոսկուայի ողջ բնակչութեան հետ մէկտեղ, կանգնած էին Իւան III-ի կողքին եւ նպաստում էին ռուսական հողերի միաւորման ու Մոսկուայի մեծ իշխանութեան զարգացմանն ի նպաստ ծաւալած նրա գործունէութեան իրականացմանը:

Մոսկուային նոր միացուած իշխանութիւնների վարչատնտեսական կենտրոններում արմատաւորուելու նպատակով, Իւան III-ը յաճախ բռնի տեղահանում եւ ուրիշ վայրեր էր փոխադրում տեղի բոյարներին ու խոշոր վաճառականներին, նրանց փոխարէն այդ քաղաքներն ուղարկելով իր մոսկուացի կուսակիցներին: 1471 թ. Շելոն գետի մօտ տեղի ունեցած ճակատամարտից յետոյ Մեծ Նովգորոդը կորցնում է իր անկախութիւնը, իսկ մի քանի տարի անց՝ 1478 թ., վերացւում են այդ նշանաւոր քաղաքի «հանրապետական կարգերը», քաղաքն՝ իր լայնատարած շրջաններով մտնում է ռուսական կենտրոնական իշխանութեան կազմի մէջ[2]: Նովգորոդ մշտական բնակութեան են փոխադրւում Մոսկուայի վաճառականների ամենաբարձր խաւի մի շարք ներկայացուցիչներ, որոնցից էին մեզ ծանօթ Սալարեւ գերդաստանին պատկանող մի քանի անհատներ եւ այլ «սուրոժցիներ»: Սրանք Նովգորոդում XVI դ. սկզբներին ունէին «Сурожский двор» կոչուող իրենց վաճառատունը, ձեռք էին բերել գիւղեր ու կալուածքներ եւ այլն[3]: Նովգորոդում սկսում են յայտնուել նաեւ արեւելեան երկրներից ժամանած հայ վաճառականներ. նրանց քանակն այնքան է մեծանում, որ դարի վերջերին (1486 թ.) հրապարակուած հրովարտակով սահմանւում է լիտովցիներից, թուրքերից եւ հայերից գանձուելիք հարկերի չափը. "а с иноземцев, с Литвы и с Турчан, с Армен и с иных иноземцев, опричь Немец, явки с головы с человека имати по 2 алтына"[4]:

Իւան III-ի մերձաւոր գործակիցների շարքում հանդիպում ենք նաեւ հայազգի վաճառականների, որոնք կատարում են նաեւ դիւանագիտական զանազան յանձնարարութիւններ: Կարեւոր տեղ է գրաւում յատկապէս ղրիմահայ վաճառական Բողդանը: Նախ այդ գործիչը Մոսկուա է ժամանում՝ Թամանի իշխան Զախարիայի Մոսկուա փոխադրուելու ցանկութիւնը Իւան III-ին փոխանցելու, իսկ 1488 թ. մեկնում է Ղրիմ այդ գործը գլուխ բերելու համար[5]: Շատ աւելի նշանաւոր դեր է կատարել կաֆայեցի վաճառական Կակոսը, որի մասին տուեալներ կան Ղրիմի խանութեանը վերաբերող արխիւային գործերի մէջ: Նա յիշատակուած է իր «Ժիդովին» մականունով, որ հայերէն կարելի է թարգմանել «ջհուդանման», «ջհուդատիպ» իմաստով: Այս նոյն բովանդակութիւնն ունի ռուս առեւտրաարդիւնաբերողների նշանաւոր գերդաստան Եւրէինովների ազգանունը: Ինչպէս այս «Ժիդովինը», այնպէս էլ Եւրէինովների նախահայրը, հաւանաբար այդպիսի մականուն-ազգանուն է վաստակել իր ժլատ բնաւորութեամբ, կամ էլ վաշխառուական լայնածաւալ գործարքներ կատարելով: Նկատի ունենալով այդ հանգամանքը, կարծում ենք, որ կաֆայեցի վաճառական Կակոսին հրեայ ծագում վերագրելու հիմքեր չկան: Այդ Կակոս անունը միջնադարեան Հայաստանում ամենից շատ

1 "Купчие люди" - «առեւտրի մարդիկ», այսպէս էին կոչւում Մոսկուայի շարքային առեւտրականները:

2 "Очерки истории СССР", II, էջ 276-283: Նովգորոդից վռնդւում են Հանզայի վաճառականները, որոնք այստեղ մեծ արտօնութիւններ էին ձեռք բերել (այդ մասին տե՛ս **Н. А. Казакова.** Из истории торговой политики русского централизованного государства XV в. ("Исторические записки", Т 47, 1954, էջ 259-290):

3 **В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 111-118

4 **М. В. Фехнер.** նշւ. աշխ., էջ 61

5 "Сборник русского исторического общества", т. 41, СПб., 1844, էջ 72-73: Այս փաստը քաղել ենք Վ. Միքայէլեանի «Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն» աշխատութիւնից (տե՛ս էջ 160-161):

տարածուած ու սիրուած Կիրակոս անուան փաղաքշական ձեւն է, որ բազմիցս վկայուած է միջնադարեան աղբիւրներում եւ շատ գործածական է նաեւ այսօր[1]:

Կակոսը հանրայայտ անձնաւորութիւն է եղել Մոսկուայում: Նրա օժանդակութեամբ Իւան III-ը յարաբերութիւնների մէջ է մտել եւ դաշինք կնքել Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի հետ (այս առթիւ Կակոսը մեծ իշխանից պարգեւ է ստացել): Հարթելով Կաֆայի հետ առաջացած տարաձայնութիւնները, Իւան III-ը 1474 թ. պահանջել է խանի դեսպանից՝ վերջ տալ Մոսկուայի վաճառականների նկատմամբ կիրառուող ճնշումներին, իսկ Կաֆա ուղեւորուող իր դեսպանին հրահանգել է այդ հարցի մասին խորհրդակցել Կակոսի եւ այլ կաֆայեցիների հետ: Նոյն այս Կակոսը 1475 թ. ստանձնել է խնամախօսի դեր. նա բանակցութիւններ է վարել Մանգուպի իշխանի դստերը Իւան III-ի որդու հետ ամուսնացնելու խնդրով: Գտնուելով մեծ իշխանի «ծառայութեան» մէջ, փրկագնել է Ղրիմի թաթար իշխանների կողմից գերի վերցուած ռուս վաճառականների, գնել է նրանց համար զգեստներ եւ ճանապարհել հայրենիք: 1486 թ. Իւան III-ը, յիշեցնելով Կակոսին նրա նախկին ծառայութիւնները, առաջարկել է շարունակել իր ջանքերն ի նպաստ Մոսկուայի մեծ իշխանութեան. "Как еси наперед того нам служил и добра нашего смотрел, и ты бы и ныне нам служи, а мы, аж даст бог, хотим тобя жаловати".- գրել է իշխանը[2]:

Այս շրջանի մոսկովեան դիւանագիտական փաստաթղթերի մէջ յիշատակւում են նաեւ կաֆայեցի մի շարք այլ հսկայ վաճառականներ՝ Խաչերեսը (գրուած է Качерис), Խարանդուլը (ըստ երեւոյթին Խերան անուան հետ է կապուած), Պօղոսը (գրուած է Богос), Կուլին, Սարգիսը (գրուած է Серкиз), Բաբեկը, Աւետիքը եւ ուրիշներ[3]:

Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, յատկապէս, Պօղոսի մասին Իւան III-ի, Ղրիմի խանի ու Կաֆայի Թուրք փաշայի միջեւ փոխանակուած փաստաթղթերը, որոնց ուսումնասիրութեամբ զբաղուել է ղրիմահայ գաղութի պատմութեան մասնագէտ Վ. Միքայէլեանը[4]: Այս գրագրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում շատ աւելի յստակ պատկերացում կազմելու «սուրոժցի» կոչուող վաճառականների գործունէութեան տարբեր կողմերի մասին: Պօղոսը եղել է մեծահարուստ վաճառական: XV դ. 90-ական թթ., 5-6 տարի անընդմէջ, նա գտնուել է Մոսկուայում. 1498 թ. ծանր հիւանդացել է. նրա հարազատները, մասնաւորապէս եղբայրը, խօջայ Կուլին, անհրաժեշտ քայլերի են դիմել Պօղոսին Կաֆա փոխադրելու համար: Սակայն հիւանդը կնքել է իր մահկանացուն Մոսկուայում, թողնելով թանկարժէք ապրանքներ: 1499

1 Հ. Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանում» (հատոր Բ, էջ 576-577) յիշատակուած են Կակոս անունը կրող մի շարք անձինք: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական ինքնավարութեան մարմնի 1567 թ. յիշատակուած դատաւորներից մէկը նոյնպէս այդ անունն է կրել (տե՛ս **Վ. Գրիգորեան,** նշւ. աշխ., էջ 96, 212, 267 եւ այլն): Փաստաթղթերի մէջ Կակոս անունը գրանցուած է Կոկոս ձեւով. «ա» եւ «ո» հնչիւնների այս փոփոխութիւնը դիւրութեամբ բացատրւում է օտար բառերի ու անունների՝ ռուսական ուղղագրութեան կանոններին համապատասխան գրութեամբ: «Կառոլ» (թագաւոր) բառը, որ ծագել է Կառլ անձնանունից, ռուսները գրում են «ո»-ով, բայց արտաբերում «Կառոլ». հայկական Փանոս (Ստեփանոսի փաղաքշական ձեւը) անունը ռուսական աղբիւրներում գտնում ենք տառադարձուած Понос (Պոնոս) ձեւով, որ անշուշտ արտասանուել է «ա»-ով (Панос). գրում էին կոզակ, մոնետա, Օնտոն, Օլեքսանդր, բայց արտասանում՝ կազակ, մանետա, Անտոն, Ալեքսանդր եւ այլն:

2 Կակոսի մասին այս բոլոր տեղեկութիւնները քաղել ենք Վ. Սիրոյեչկովսկու մեր կողմից բազմիցս յիշատակուած աշխատութիւնից (էջ 40-41):

3 **В. Е. Сыроечковский,** նշւ. աշխ., էջ 45-46

4 **Վ. Ա. Միքայէլեան,** նշւ. աշխ., էջ 45-46: Փաստաթղթերը տպագրուած են "Сборник русского исторического общества", т. 41, СПб., 1884 ժողովածուի մէջ (էջ 271-395):

թ. Իւան III-ը Կաֆա եւ Կոստանդնուպոլիս մեկնող իր դեսպանորդին հրահանգներ է տուել, թէ վերջինս ինչ պէտք է ասի սուլթանական եւ խանական արքունիքներում Պօղոսի ու նրա ժառանգութեան մասին. ստորեւ մէջ ենք բերում այդ հրահանգների կարեւոր մասի հայերէն թարգմանութիւնը.

«Համայն Ռուսիայի մեծ իշխան Իւան Վասիլեւիչից՝ Օլեչ Գոլոխվոստովին:

Այստեղ (Մոսկուայում) կար մի կաֆայեցի Պօղոս անունով հայ. այժմ նա այլեւս չկա եւ ես կարգադրել եմ նրա իրերը հաւաքել ու կնքել: Եթէ Կաֆայում կամ Ցարգրադում... Պօղոսի իրերի մասին քեզ հարցնեն, ապա դու նրանց պատասխանելու ես այսպէս. այդ մարդը եղել է մեր թագաւորի երկրում եւ այժմ մահացել է. եւ մեր թագաւորի մաքսահաւաքներին հրաման է տրուել պահպանել ու կնքել նրա ապրանքները. եթէ այդ մարդն ունի զաւակներ կամ որեւէ զարմիկ, ապա, առաջնորդուելով արդարութեամբ, մեր թագաւորն այդ ապրանքը կյանձնի այն մարդուն, որին կուղարկի ձեր թագաւորը մեր թագաւորի մօտ»[1]:

Բանակցութիւնները ձգձգւում են. երկուստէք գրւում են բողոքներ ու բացատրութիւններ, մինչեւ որ 1502 թ. ապրիլին հանգուցեալ Պօղոսի գոյքը յանձնւում է Կաֆայից ժամանած դեսպանորդներին եւ հարթւում այդ վէճը:

Ըստ այս նիւթերի Պօղոսը հանդէս է գալիս որպէս մէկն այս «սուրոժցիներից», որոնք տարիներ շարունակ առեւտուր անելով Մոսկուայում՝ չէին դարձել Մոսկուայի բնակիչ: Յայտնի է, որ Պօղոսի մայրը, կինը, երկու դուստրերը, եղբայրը եւ, հաւանաբար, ուրիշ շատ ազգականներ բնակւում էին Կաֆա քաղաքում, եւ հանդէս էին գալիս որպէս Ղրիմի խանի հպատակներ:

Պէտք է նշել, որ «սուրոժցիների» մեծամասնութիւնը իրենց բնակլի սկզբնական շրջանում եղել են Պօղոսի նման. Մոսկուայում առեւտրական աշխոյժ գործունէութիւն են ծաւալել, բայց եղել են ոչ թէ Մոսկուայի քաղաքացի (գործ ենք ածում նորագոյն ժամանակների յարմար այս տերմինը), այլ ղրիմեցի՝ «սուրոժեան հիւր»: Սակայն բազմաթիւ ղրիմահայեր էլ՝ տակաւին XIV դ. կէսերին, իսկ աւելի մեծ չափով XV-ի ողջ ընթացքում, այնպիսի սերտ տնտեսական կապեր էին ստեղծել Մոսկուայի հետ, հաստատուել այդ քաղաքում տեւականօրէն, տուն ու տեղ ստեղծել իրենց համար, ձեռք բերել շարժական ու անշարժ կալուածքներ, խնամիական կապեր հաստատել ռուսների հետ, որ «սուրոժցի» կոչումը նրանց համար դարձել էր արդէն ազգային պատկանելութիւնից աւելի տոհմի ծագումը բացայայտող մի ցուցանիշ: Պէտք չէ անտեսել եւ այն հանգամանքը, որ «սուրոժցիներից» սերուած եւ Մոսկուայի քաղաքացի դարձած վաճառականներից շատերը, տեղի տալով Ռուսական եկեղեցու ճնշումներին, խզում էին իրենց կապերը մայր եկեղեցուց եւ դառնում ուղղափառ: Այդպիսով նրանք աւելի էին մերւում ռուսական միջավայրին, մոռացութեան տալով իրենց գերդաստանի ծագման յիշատակները:

* * *

Ի՞նչ յիշատակներ է պահել Մոսկուայի միջնադարեան պատմութիւնը «սուրոժցի» կոչուող հայ վաճառականների առկայութեան ու գործունէութեան մասին: Հնագոյն տեղեկութիւնը, գրանցուած 1599 թ. մի փաստաթղթի մէջ, վերաբերում է «Հայկական կարաւանատա-

1 Վ. Միքայէլեան, նշվ. աշխ., էջ 162: Վաւերագրի թարգմանութիւնը մէջ ենք բերում փոքր-ինչ սրբագրելով:

նը» ("Армянский двор"), որն ըստ երեւոյթին գոյութիւն է ունեցել այդ թուականից շատ առաջ[1]: Միջնադարեան քաղաքների ներքին կեանքի մասին առկայ տեղեկութիւններից դատելով, հայ վաճառականները իջեւանում էին իրենց այս կարաւանատանը, եւ հէնց այստեղ էլ զբաղւում մեծածախ առեւտրով: Կարաւանատունը գտնւում էր Սրետենսկի փողոցի վրայ[2]:

Մոսկուայի քաղաքային շուկան գտնւում էր Կրեմլի առջեւի հրապարակում եւ գետափին, բաղկացած էր բազմաթիւ շարքերից, որոնց մէջ կենտրոնական տեղ էր գրաւում «Սուրոժեան մետաքսի վաճառաշարքը» ("Сурожский шелковый ряд"), որը սկիզբ էր առնում Կրեմլի Սպասսկի կոչուող դարպասի մօտակայքից եւ ձգւում մինչեւ Իլյինկայի եկեղեցին: 1626 թ. մեծ հրդեհից յետոյ, երբ գրեթէ ամբողջապէս հրոյ ճարակ դարձան Կիտայ-Գորոդի բոլոր շինութիւնները, Մոսկուայի առեւտրական այդ կենտրոնն սկսեց վերաշինուել հիմնովին. տէրութեան եւ մասնաւոր անձանց նախաձեռնութեամբ այստեղ սկսեցին կառուցուել վաճառատներ, պետական հիմնարկներ եւ եկեղեցիներ: Վաճառատներից յիշատակւում են երեքը՝ «Հինը», «Նորը» եւ «Պարսկականը». այս վերջինն իր մէջ բովանդակում էր 200 թաղակապ կրպակներ, որոնք վարձու էին տրւում արեւելեան ապրանքներ վաճառող հայերին, պարսիկներին, ռուսներին[3]:

Հայկական կարաւանատան, «Սուրոժեան մետաքսի վաճառաշարքի», իսկ յետագայում «Պարսկական» վաճառատան գոյութիւնը Մոսկուայի կենտրոնական հրապարակում եւ Սորետենսկի փողոցի վրայ՝ խօսուն փաստեր են նախ ղրիմահայերի, ապա նաեւ այլ վայրերից ժամանող հայ վաճառականների Մոսկուայում կատարած տնտեսական կարեւոր դերի մասին:

* * *

Մոսկուայի հայ գաղութի մասին մեր գիտելիքները կընդարձակուէին, եթէ հնարաւոր լինէր պարզել, թէ երբուանից են հայերն այստեղ ունեցել իրենց եկեղեցին՝ միջնադարեան այն հաստատութիւնը, որի գոյութիւնն իսկ կարելի է զօրեղ առհաւատչեայ համարել բազմամարդ ու կազմակերպուած գաղթօջախի առկայութեան: Նախորդ էջերից մէկում անդրադարձել ենք արդէն Մոսկուայի մետրոպոլիտ Կիպրիանոսին ու նրա՝ հայերի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կեցուածքին: Հոգեւոր այդ առաջնորդը պատուիրում էր ռուս հաւատացեալներին մտերմական կապեր չստեղծել «հերձուածող» հայերի հետ, արգելել նրանց մուտքը եկեղեցիներ եւ այլն:

Այս «յորդորներից» յետոյ, եթէ ոչ հասարակ ժողովուրդը, ապա՝ անտարակոյս եկեղեցական դասը, պէտք է, որ խէթ աչքերով նայէր «կասկածելի» դաւանանք ունեցող հայ քրիստոնեաների վրայ: Եւ նրանք, անկախ եկեղեցու պաշտօնեաների կողմից պարտադրուող անբարեացակամ այս կեցուածքի, եթէ, իհարկէ, պատկառելի թիւ էին կազմում, պէտք է, որ ստեղծէին իրենց աղօթքի տունը, իրենց համայնքի ներքին գործերը տնօրինող հաստատութիւնը: Եւ իրօք, կան աղօտ յիշատակներ այն մասին, որ «սուրոժցի վաճառականները» տա-

1 **Н. М. Карамзин.** История государства российского, изд. Н. Эйнерлинга, т. X. СПб., 1843, էջ 155: **М. В. Фехнер,** նշվ. աշխ., էջ 60:

2 **Н. Костомаров.** Очерк торговли Московского государства в XVI-XVII столетиях, СПб, 1862, էջ 86

3 **М. Н. Тихомиров,** նշվ. աշխ., էջ 130, 147: **Н. Костомаров,** նշվ. աշխ., էջ 85

կաւին XIV դ. վերջերին, Մոսկուայում ունեցել են իրենց եկեղեցին:

1479 թ. Իւան III-ը քանդել տալով փայտաշէն ու խարխուլ մի եկեղեցի, որը գտնւում էր Մոսկուայի առեւտրաարհեստաւորական արուարձանում՝ Պոսադում, նոյն տեղում հիմք է դնում քարաշէն մի եկեղեցու՝ Յովհան Ոսկեբերանի անունով: Այդ մասին տարեգրութեան մէջ գրանցում կատարողը նշել է, որ նախկին փայտաշէն եկեղեցին կառուցուած է եղել մոսկովեան «հիւրերի», այսինքն «սուրոժցի վաճառականների» կողմից, պատկանելիս է եղել նրանց ("бе же та церковь изначала гостей московских строения")[1]. Բայց մեծահարուստ ու փարթամ «սուրոժցի» վաճառականները կարո՞ղ էին, արդեօք, իրենց հոգեւոր հաստատութիւնը պահել վերին աստիճանի լքուած ու խարխուլ վիճակում, եթէ XV դ. վերջերին ունեցած չլինէին մէկ ուրիշ տաճար: Թւում է, թէ չէր կարող այդպէս լինել: Եւ, իրօք, տարեգիրը այդ խարխուլ եկեղեցին անուանում է "бывшей гостиной древяной", այսինքն՝ «հիւրերին պատկանող փայտաշէն եկեղեցի»[2], ակնարկելով թերեւս այն մասին, որ Իւան III-ի կողմից նոր եկեղեցու հիմքերը դնելու ժամանակ Մոսկուայի «հիւրերն» ունեցել են արդէն մէկ այլ՝ ոչ փայտաշէն, այլ քարաշէն տաճար[3]:

Ցաւօք, տեղեկութիւններ չեն պահպանուել այդ տաճարի կառուցման ժամանակի, վայրի եւ գոյատեւման մասին: 1753 թ. մի փաստաթղթում՝ գրուած Օթար Թումանովի եւ այլ հայերի կողմից, տուեալ կա այն մասին, որ վաղ ժամանակներում Կիտայ-Գորոդում հայերն ունեցել են եկեղեցի, որը յետագայում լքուել է, այդ շինութիւնների տեղում մետաքսի արհեստանոց կառուցելու հետեւանքով: Մէկ ուրիշ վկայութեամբ այդ եկեղեցին գտնուելիս է եղել Կիտայ-Գորոդի այն հատուածում, որն ընկած էր Վարուարկա եւ Իլյինկա փողոցների միջեւ, ուր տակաւին XVIII դ. գոյութիւն են ունեցել հայերին պատկանող ինչ-որ շինութիւններ՝ պիտանի հայկական եկեղեցու կարիքների համար[4]:

Իւան IV Ահեղի հրամանատարութեան ներքոյ գործող ռուսական բանակը, երկարամեայ յամառ պայքարից յետոյ, 1552 թ. գրաւեց Ղազանի խանութիւնը: Մենք արդէն ասել ենք, որ Ղազանում բնակւող հայերը ռուսական զէնքի յաղթանակի ջերմ կողմնակիցներն էին: «Ղազանի տարեգրութիւնը» տեղեկութիւն է պարունակում այն մասին, որ պատերազմից յաղթանակով վերադարձող ցարին ու զօրքերին Մոսկուայում ցնծագին դիմաւորողների շարքում եղել են բազմաթիւ հայեր[5]: Ի նշանաւորումն այս յաղթանակի, Իւան Ահեղը Մոսկուայի կենտրոնում կառուցել է տուել ռուս ճարտարապետութեան հրաշալիքներից մէկը՝ Վասիլի Երանելու փառայեղ տաճարը, բաղկացած միմեանց հետ շաղկապուած ինը փոքր եկեղեցիներից:

1 ПСРЛ, т. XI, էջ 221. **В. Е. Сыроечковский**, նշւ. աշխ., էջ 39

2 Այս արտայայտութիւնը քաղում ենք Մ. Տիխոմիրովից (նշւ. աշխ., էջ 158), որը մէջ է բերել՝ վկայակոչելով ПСРЛ, т. VIII, էջ 201. ПСРЛ. т. XXIII, էջ 193:

3 Այս եզրակացութիւնը պատկանում է Մ. Տիխոմիրովին (տե՛ս նշւ. աշխ., էջ 158): Նշենք, սակայն, որ «սուրոժեան հիւրեր» կոչուող վաճառականներին համարելով մոսկուացի ռուս վաճառականներ, որոնք առեւտուր էին անում Ղրիմի հետ, ակադ. Մ. Տիխոմիրովը այս փաստի հիման վրայ խօսք է բացել Մոսկուայում վաճառականական միութիւնների կամ արհեստակցական կազմակերպութիւնների սաղմերի առկայութեան մասին: Այժմ, երբ պարզ է արդէն, որ «սուրոժցի» են կոչուել ոչ թէ ազգութեամբ ռուս վաճառականները, այլ ղրիմահայերը՝ վերանայման կարօտ են դառնում «սուրոժցիներին» պատկանող եկեղեցիների մասին փաստի այս կարգի հեռամէտ մեկնաբանութիւնները:

4 "Материалы для истории, археологии и статистики города Москвы", собр. И. Е. Забелиным, ч. I, էջ 1009, ч. II, էջ 1154 (տե՛ս **Մ. Տիխոմիրով**, նշւ. աշխ., էջ 216):

5 "Казанская история", М., 1957, էջ 154. «Հայ ժողովրդի պատմութիւն», IV, էջ 422

Դրանցից մէկը նուիրուել է Հայոց Լուսաւորիչ Գրիգոր Պարթեւին: Եթէ Մոսկուայի հայերը Ռուսաստանի տնտեսական կեանքում զգալի դեր կատարած չլինէին, այս փաստը կմնար առանց բացատրութեան: Եւ, անշուշտ, ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք հայերին սիրաշահելու խորհուրդ են տեսնում այս փաստի մէջ: Մոսկուայի հայ գաղթօջախի բնակչութեանը, ինչպէս եւ տարբեր ճանապարհներով ու տարբեր գործերով Մոսկուա ժամանող հայազգի բոլոր մարդկանց հնարաւորութիւն է տրւում իրենց անկիւնն ունենալու համայնական նշանակութիւն ստացած նորակառոյց այդ տաճարի մէջ:

* * *

XVI դ. երկրորդ յիսնամեակը Ռուսաստանի եւ մերձակայ երկրների հայկական գաղթօջախների պատմութեան համար դարձակէտային ժամանակաշրջան է եղել: Հայ առեւտրական կապիտալն ընդարձակել է իր գործունէութեան շրջանակները: Ինչպէս միշտ, զբաղուած լինելով հիմնականում արեւելեան ապրանքների առեւտրով, հայ վաճառականներից շատերը մուտք են գործել այդ երկրների տնտեսական կեանքի տարբեր բնագաւառները, զբաղուել են նաեւ տեղական ու եւրոպական ապրանքների մեծածախ առեւտրով, ստեղծել արհեստանոցներ եւ այլն: Քիչ չեն եղել նաեւ մեծահարուստ այն վաճառականները, որոնք, ձեռք բերելով գանձագին խոշոր կալուածքներ, տեղ են գրաւել այդ երկրների կալուածատէրերի շարքում: Բարգաւաճ այս վիճակն արդիւնք էր առաջին հերթին արեւելաեւրոպական երկրների տնտեսական կեանքի բուռն զարգացման, սակայն որոշիչ դեր էին կատարում նաեւ քաղաքական նոր պայմաններն ու միջպետական յարաբերութիւնները:

Օսմանեան Թուրքիայի եւ Սեֆեան Իրանի միջեւ դեռեւս XVI դ. սկզբներին ծայր առած գոտեմարտերն աւելի սուր բնոյթ էին ստացել դարիս երկրորդ յիսնամեակի ընթացքում: Սուննի եւ շիա դաւանանքին պատկանող մուսուլմանների միջեւ հակամարտութիւնները բացարձակ պայքարի ձեւեր էին ընդունել: Թուրքիայի սահմաններից վռնդուել էին բոլոր իրանցի շիաները. իրանցի վաճառականների առջեւ փակուել էին Ատրպատականից Թուրքիայի կենտրոնական քաղաքները եւ սեւծովեան նաւահանգիստները ձգւող բանուկ ճանապարհները: Հակառակ քաղաքական անբարենպաստ այս պայմանների, ապրանքափոխանակութիւնը չէր դադարել մրցակից պետութիւնների միջեւ: Առանց կանգառի Իրանում արտադրուող հում մետաքսի բեռները եւ իրանական ու հեռաւորարեւելեան այլ ապրանքներ մեզ ծանօթ ճանապարհներով մուտք էին գործում Թուրքիա՝ դառնալով հումք Թոխաթում, Բուրսայում եւ այլ քաղաքներում զարգացող մետաքսագործութեան համար: Պատերազմող կողմերի փոխադարձ համաձայնութեամբ մեծ չափերի հասնող այդ առեւտուրը կատարւում էր Իրանի եւ Թուրքիայի տիրապետութեան տակ անցած հայկական նահանգներում բնակւող եւ այդ երկրների տնտեսական կենտրոններում հաստատուած հայ վաճառականների միջոցով[1]: Նոյն այս վաճառականներն էին հիմնականում, որ վերոյիշեալ արեւելեան ապրանքները եւ դրան աւելացուած նաեւ Թուրքիայում արտադրուող թանկարժէք գործուածքեղէնը մեծ քանակութեամբ հասցնում էին Ղրիմ, Լեհաստան, Մոսկուա եւ ուրիշ մերձակայ երկրներ:

Տեւական պատերազմները եւ ռազմական բախումներն անպակաս էին նաեւ Արեւելեան Եւրոպայի երկրներում: Բայց ապրանքափոխանակութիւնը շահութաբեր էր բոլորի համար

1 **Ա. Փափազեան**, Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործութեան մէջ եւ 1729 թ. Թաւրիզում կնքուած համաձայնագիրը, «Բանբեր Մատենադարանի», N 9, 1969, էջ 242-244

հաւաստարապէս: Ուստի հայ վաճառականներն այստեղ եւս դիտւում էին որպէս չէզոք տարր եւ իրաւունք էին ստանում կարաւաններ կազմելով երթեւեկել մի երկրից միւսը՝ նոյնիսկ պատերազմական գործողութիւնների ժամանակ: Եւ այսպիսի երթեւեկը կատարւում էր ոչ դէպքից դէպք կամ բացառիկ պայմաններում, այլ օրէնքի ուժ էր ստացել Լեհաստանի թագաւոր Սիգիզմունդ Օգոստոսի 1570 թ. հրապարակած մի հրովարտակով[1]:

Այս ժամանակաշրջանում Լեհաստանում բնակուող կամ առեւտուր անող հայ վաճառականներն ստացել էին նաեւ այլ առանձնաշնորհումներ, եւ այն աստիճանի ամրապնդել իրենց տնտեսական դիրքերը, որ տեղական առեւտրական բուրժուազիայի ներկայացուցիչների նախանձն էին շարժում: Վերջիններս, զանազան բողոքագրեր ներկայացնելով կենտրոնական իշխանութեանը, փորձում էին սահման դնել հայերի տնտեսական բարգաւաճման առջեւ: Լւովի քաղաքային համայնքն, օրինակ, Սիգիզմունդ Օգոստոս թագաւորին հասցէագրած բողոքագրի մէջ ասում էր. «Հայերն այժմ առեւտուրը տարածել են ողջ թագաւորութեան մէջ, նաեւ Պրուսիայում, Լիտուայում եւ Մոսկուայում, երկրներ, ուր իրենց նախնիները բաւարարւում էին սոսկ արեւելեան ապրանքների վաճառքով: Իրենց ստացած արտօնագրից յետոյ,- շարունակում են բողոքագրի հեղինակները,- հայերի վիճակն այնքան երջանիկ է դարձել, որ ծովից ծով (այսինքն՝ Սեւ ծովից Բալթիկ ծով - Լ. Խ.) են հասցնում իրենց առեւտրի ապրանքները, առիթ չեն կորցնում գիւղեր եւ աւաններ վարձակալելու, բազմացնում են իրենց պարտէզները քաղաքի արուարձաններում, եւ իրենց ձեռքն են առնում քաղաքի (իմա՝ Լւովի - Լ. Խ.) գրեթէ բոլոր վաճառատները»[2]:

Մոսկուայի հայ վաճառականների մասին պահպանուած տեղեկութիւնները, ինչպէս տեսանք արդէն, անհամեմատ աղքատ են, սակայն, հիմքեր կան ենթադրելու, որ մեծ չափերի է հասել նաեւ նրանց առեւտուրը: Մոսկուայի եւ արեւելեան երկրների միջեւ կատարուող առեւտրի մասին յատուկ մենագրութեան հեղինակ Մ. Ֆեխները, սկզբնաղբիւրների հիման վրայ ցոյց տալով, որ արեւելեան (առաջին հերթին՝ հայազգի) վաճառականները մշտապէս առեւտուր էին անում Մոսկուայում, Մեծ Նովգորոդում, Պսկովում, այսինքն՝ Ռուսաստանի սահմանափակ կենտրոններում, ուշադրութիւն է հրաւիրում հետեւեալ հարցերի վրայ: Չնայած այն հանգամանքին, որ կառավարութիւնը սահմանափակել էր արեւելյան վաճառականների գործունէութեան վայրերը, այդուամենայնիւ, Արեւելքից ներմուծուած ապրանքները Ռուսաստանում լայն տարածում էին գտնում: Ռուս վաճառականները հայերից ձեռք բերելով այդ ապրանքները, դրանք վաճառքի էին հանում ոչ միայն Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, այլեւ հասցնում էին պետութեան հիւսիսային եւ հիւսիսարեւելեան ամենահեռաւոր շրջանները. «Այս հանգամանքը,- եզրակացնում է ուսումնասիրողը,- ակնառու կերպով հաստատում է, որ ռուսական ներքին շուկայի համար արեւելեան առեւտուրն ունեցել է ոչ փոքր նշանակութիւն»: Այնուհետեւ հաստատելով, որ հայ վաճառականների առեւտրի հիմնական տարրն XVI դ. եղել է մետաքսը, Մ. Վ. Ֆեխները շեշտում է, որ այդ ապրանքներից բացի «հայերը թանկագին քարերի, մորթիների, կաշուի եւ մոմի մեծ չափերի հասնող առեւտուր են արել»[3]:

1 Հրովարտակում պարզ ասուած է, որ հայ վաճառականներն իրաւունք ունեն կարաւաններով Թուրքիայից լեհական պետութեան սահմանները մտնել եւ Կիեւից ուղեւորուել Մոսկուա նաեւ պատերազմի ժամանակ ("Архив юго-западной России", ч. VII, т. V, 1907, էջ 187-190):

2 Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը, Վիեննա, 1890, էջ 36-37

3 **М. В. Фехнер**, նշւ. աշխ., էջ 60-63

Բարւոք եւ հաւասարակշիռ այս վիճակը խախտւում է XVI դ. վերջերին եւ XVII դ. սկզբներին, երբ Թուրքական կայսրութիւնն ալեկոծւում էր Ջալալիների հուժկու ապստամբութիւններից: Փոքր Ասիայի արհեստագործութեան եւ առեւտրի նշանաւոր կենտրոնները կողոպտւում ու աւերւում էին այն աստիճանի, որ տասնամեակներ պէտք է անցնէին նախկին վիճակին հասնելու համար:

Մոսկուայի հետ տնտեսական ամենասերտ կապեր ստեղծել էին, յատկապէս, Թոխաթեցի հայ վաճառականները: 1602 թ. Ջալալիները գրաւեցին եւ աւերեցին նշանաւոր այս կենտրոնը: Ստեփանոս Թոխաթեցի տաղերգու բանաստեղծը գովերգում է իր հայրենի քաղաքը, նկարագրում նրա ծաղկուն ու բարգաւաճ վիճակը մինչեւ Ջալալիների կողմից աւերուելը: Ի վերջոյ, սրտի խոր կսկիծով նա արձանագրում է, որ ամէն ինչ այնտեղ հողին է հաւասարեցուել, իսկ բնակչութեան մեծամասնութիւնը լքել է քաղաքն ու ցրուել աշխարհով մէկ[1]:

Թուրքիայի քաղաքական կեանքի անկայուն վիճակի եւ կենտրոնական շրջանների տնտեսական փլուզման այս նոյն ժամանակաշրջանում, ինչպէս ասել ենք արդէն, ռուսական պետութիւնը վերելք էր ապրում եւ ընդարձակում իր սահմանները՝ բոլոր ուղղութիւններով: Ղազանի եւ Աստրախանի խանութիւնների գրաւումից յետոյ միջազգային ապրանքափոխանակութեան Կասպ-Վոլգեան հին մայրուղին շատ աւելի մեծ նշանակութիւն է ստանում հզօրացող Ռուսաստանի համար: 1584 թ. հիւսիսային Դուինայի գետաբերանում՝ Սպիտակ ծովի ափին հիմնադրւում է յետագայում Արխանգելսկ կոչուած նաւահանգստային քաղաքը, որով ռուսական պետութիւնը ծովային ճանապարհով հաղորդակցութեան մէջ է մտնում հիւսիսեւրոպական երկրների հետ: Իրանից եւ անդրկովկասեան երկրներից Կասպից ծովի ու Վոլգայի վրայով դէպի Մոսկուա ձգուող տնտեսական զարկերակն սկսում է բաբախել լիարիւն, եւ դրան համընթաց արիւնաքամ է լինում ղրիմեան մայրուղին:

Համայն Ռուսիայի մայրաքաղաք դարձած Մոսկուայում աւելի են բազմանում հայ վաճառականներն ու տարբեր զբաղմունքի տէր մարդիկ, որոնցից շատերը մշտական բնակութիւն են հաստատում այստեղ: Սակայն նրանք, իրենց մեծամասնութեամբ, այլեւս ղրիմահայեր կամ թուրքական տիրապետութեան տակ անցած հայկական նահանգների հետ կապուած հայեր չէին, այլ Արեւելեան Հայաստանից, Վրաստանից եւ Իրանի տիրապետութեան տակ գտնուող անդրկովկասեան խանութիւններից տեղափոխուածներ:

Մոսկուան այդ շրջանում շատ էր ընդարձակուել. Սպիտակ քաղաքից (Белый город) դուրս գտնուող թաղամասերը, որ հողէ պարիսպների ծիրի մէջ էին գտնւում, արդէն անբաւարար էին արագօրէն աճող բնակչութեան կարիքների համար, ուստի այդ պարիսպներից դուրս ստեղծւում էին նոր թաղամասեր[2]: Քաղաքային կեանքի զարգացման հետեւանքով մարդահամար կատարելու փորձեր էին արւում. 1620, 1638, 1665-1672, 1690-ական թթ. կատարուած բնակչութեան ցուցակագրութիւնների տուեալներից ելնելով, ուսումնասիրողները յանգել են այն եզրակացութեան, որ XVII դ. հայերը Մոսկուայում չեն ունեցել յատուկ թաղամաս, այլ բնակութիւն են հաստատել օրաւուր ընդարձակուող քաղաքի տարբեր մասերում[3]: Կան, սակայն, որոշ տուեալներ, որոնք խօսում են յօգուտ այն ենթադրութեան, թէ

1 Ղ. Ալիշան, Հայապատում, հատոր Բ, Վենետիկ, 1901, էջ 606-609

2 **П. В. Сытин**. История планировки и застройки Москвы, материалы и исследования, том первый, 1147-1762 гг., М., 1950

3 **Нина Молева**. Иван Салтаное и его школа. «Լրաբեր», 1977, N 10, էջ 75

բազմաթիւ հայեր գերադասում էին Պրեսնեա թաղամասը, ուր ըստ ստուգելի որոշ տուեալների XVII դ. սկզբներին կառուցուել է Հայոց Ս. Աստուածածնի քարաշէն եկեղեցին[1]: Քաղաքի այս մասում բազմաթիւ հայերի առկայութեամբ է բացատրւում նաեւ այն հանգամանքը, որ հայերի ազգային գերեզմանատունը նոյնպէս ստեղծուել է այստեղ. Վագանկովեան թաղի հայկական այս գերեզմանատանը 1801 թ. կառուցուեց հայկական մի մատուռ, որը կանգուն է առ այսօր եւ Մոսկուայի հայերի միակ գործող եկեղեցին է հանդիսանում:

1729 թ. Պետրոս II-ի հրովարտակով Պրեսնեայի թաղամասում գտնուող Վոսկրեսենսկայա կոչուող թագաւորական կալուածքը տրւում է իր ընտանիքով Մոսկուա փոխադրուած վրաց թագաւոր Վախթանգ VI-ին: Թագաւորի հետ միասին Պրեսնեայի այս նոր թաղամասում բնակութիւն են հաստատում Պետրոս Մեծի անդրկովկասեան արշաւանքից յետոյ հայրենիքից հեռացած բազմաթիւ վրացի եւ հայ ազնուականներ, առեւտրականներ, զինուորականներ եւ հասարակ մարդիկ՝ շուրջ 3000 անձինք: Սրանց ջանքերով շէնանում է քաղաքի այդ մասը, որը յայտնի է դառնում Գրուզինի անունով եւ որի յիշատակները մնում են նաեւ այսօր՝ Մեծ եւ Փոքր Գրուզինսկի փողոցների շրջափակում: Եթէ ճիշտ է այն տեղեկութիւնը, թէ Պրեսնայում հայեր են հաստատուել ու եկեղեցի կառուցել այս դէպքերից շուրջ մէկ դար առաջ, կարելի է ենթադրել, որ ռուսական կառավարութիւնը վրաց թագաւորի եւ նրա հետ ժամանած վրաստանցի գաղթականների համար բնակութեան վայր ընտրելիս հաշուի էր առել նաեւ այդ հանգամանքը: Գրուզինի կոչուած նորաստեղծ թաղամասի բնակչութեան կազմում կարելի է հաստատապէս պնդել, որ զգալի թիւ էին կազմում հայազգի մարդիկ, ըստ մեծի մասի վաճառականներ[2]:

---

1 «Բարձրագոյն հրովարտակք եւ արձանագրութիւնք վերաբերեալք առ եկեղեցիս դաւանութեան լուսաւորչական Հայոց, որ ի Ռուսաստան», Մոսկուա, 1842, էջ 119. **Մ. Մսերեան,** Յիշատակարան կենաց եւ գործոց մեծանուն պալագատաց Լազարեան տոհմի, Մոսկուա, 1856, էջ 18:

Մոսկուայում բնակութիւն հաստատած մի խումբ հայերի կողմից 1753 եւ 1760 թթ. ռուսական պետական մարմիններին ներկայացրած խնդրագրերի մէջ խօսք կայ այն մասին, որ Կիտայ-Գորոդի հայկական եկեղեցու վերացումից եւ ժամանակաւոր ծողովատեղիների փոփոխութիւնից յետոյ, հայերն իրենց աղօթատեղին փոխադրել են Պրեսնեա, որտեղ Վախթանգ թագաւորի կողմից նրանց յատկացուած հողամասի վրայ, նրանք կառուցել են փայտաշէն մի եկեղեցի: 1753 թ. փաստաթղթում գրուած է. "...А как тот Волков двор хозяином продан, то оную церковь принуждено перенесть в деревянной покой, состоящей за земляным городом, близ самого поля, за Преснею рекою, месте которое отдано выехавшим покойным грузинским царем Вахтангом Леонтевичем армянской нации князьям и дворянам и протчего звания людям с фамилиями для поселения" ("Арм.-русские отношения в XVIII в.", 3, էջ 276, հմմտ. նաեւ էջ 337):

Ըստ երեւոյթին հիմնաւոր չեն այն տուեալները, որոնց համաձայն Պրեսնեայում հայկական քարաշէն եկեղեցի է եղել տակաւին XVII դ.: Հաւանաբար այդ թաղամասում հայկական եկեղեցական առաջին շինութիւնը հէնց այն փայտաշէն եկեղեցին է, որի մասին խօսք կա վերյիշեալ փաստաթղթի մէջբերուած հատուածում:

2 Այս կապակցութեամբ պէտք է հաշուի առնել, որ ինչպէս վաղ միջնադարում, այնպէս էլ յետագայ դարերում (մինչեւ XIX դ.), «վրացի» տերմինը հայ եւ օտարազգի բազմապիսի աղբիւրներում լայնօրէն օգտագործուել է «Վրաստանի բնակիչ» իմաստով, յատկացուելով հաւասարապէս Վրաստանի՛ւ վրացիներին, ե՛ւ հայերին: Այս հաստատւում է բազմաթիւ փաստերով, որոնցից մի քանիսի հետ արժէ ծանօթանալ: 1691 թ. հայերէն մի յիշատակարանի մէջ «վրացի» է կոչուել Սպահանում առեւտուր անող Կուտէնց Մաթոսի որդի պարոն Ռամազը (եղբայրն է՝ Ղազար, քոյրը՝ Խաթուն եւ այլն): Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրութեան» մէջ խօսում է երկու հայերի մասին, որոնք իրենց սնանկ յայտարարելով՝ շատ վաճառականների տնտեսական մեծ հարուած են հասցրել. «Այս Բ. բինադարս,- գրում է նա,- վրացի են, ազգաւ հայ, ի քաղաքէն Թիֆլիսու, անունն Շահվերդի, միուսն Գասպար» («Օրագրութիւն», էջ 72): Միշտ այդպէս վրացի են կոչուած նաեւ «Աբրահամի որդի վրացի պարոն Կարապետը» (Բրիտանական գրադարան, O. P. B. N 1048, էջ 77), «վրացի Զօրաբեգը» (Մատենադարան, Արխիւային բաժին, Լազարեանների ֆոնդ, վաւ. 1, էջ 126), «վրացի պրն Մխիթարը» (ձեռ. N 6240, էջ 44ա), «վրացի Սողրոեանց Ալահվերտին» («Եղիա Կարնեցու դիւանը», էջ 68) եւ բազմաթիւ այլ հայ վաճառա-

* * *

Հին Մոսկուայի հետ հայերի ունեցած տնտեսական կապերի ստուերագծուող պատկերն աւելի յստակ կդառնայ, եթէ մենք հպանցիկ մի հայեացք նետենք այն երկու նշանաւոր կենտրոնների վրայ, որոնք երկար ժամանակ եղել են մոսկուացի ռուս վաճառականների կողմից ոչ յաճախ կազմակերպուող հեռագնաց առեւտրական ճամփորդութիւնների վերջնական հանգրուանները: Խօսքը վերաբերում է Փոքր Ասիայում՝ Թոխաթին, Անդրկովկասում՝ Շամախուն:

Նախ Թոխաթի մասին: Թուրքական մի բարձրաստիճան նահանգապետի 1498 թ. գրած նամակում բառացի ասուած է, «որ Մեծ իշխան Իւանի վաճառականներից (ГОСТЬ) շատերը գալիս են մեր Թոխաթ քաղաքը»[1]: Դժուար է ասել, թէ այստեղ խօսք կայ ազգութեամբ ռուս վաճառականների մասին, եւ աւելի հաւանական է ենթադրել, որ թուրք պաշտօնեան նկատի է ունեցել Մոսկուայում հաստատուած հայերին, որոնք յաճախ էին այցելում Թոխաթ: Անկախ այս վկայութիւնից, կան իսկապէս ռուս մարդկանց Թոխաթ այցելելու մասին ուրիշ, աւելի վստահելի տուեալներ:

Արդ, ի՞նչ էր իրենից ներկայացնում Թոխաթ քաղաքը մինչեւ Ջալալիների կողմից աւերումը (1602) եւ յետագայում, երբ բուժուեցին նրա վէրքերն ու այն նորից վերակենդանացաւ: Ստեփանոս Թոխաթեցին յայտնում է, որ քաղաքի եօթ թաղերը եղել են զուտ հայաբնակ, եւ ամէն մէկն ունեցել է իր եկեղեցին: Ս. Սարգսի թաղի մասին, օրինակ, բանաստեղծն ասում է.

«Շատ քրիստոնեայք կայր յայն թաղին,
Ամենքըն նոխ տանուտէրնի,

կաններ, անշուշտ, այն բանի համար, որ դրանք բոլորն էլ եղել են թիֆլիսեցիներ կամ վրացահայեր: Երուսաղէմի հայերէն ձեռագրերից մէկում ընդօրինակուած է զուարճալի մի պատմութիւն, որի մէջ հակադրւում են իրենց կենցաղով շատ տարբեր վրաստանցի (առատաձեռն ու «քեֆչի») եւ պարսկաստանցի (սակաւապէտ) հայերը: Այնտեղ գրուած է. «Հայ ոմն վրացի ճանապարհորդեալ ի Պարսկաստանէ գնայր ի Բասրա ընդ միում պարսկահայի, որ էր փարթամ յոյժ, բայց կերակուր իւր իբրեւ յետինն չքաւորի...»: Երբ այս հարուստ վաճառականը դիտողութիւն է անում վրացահային՝ կերուխումի համար շատ դրամ ծախսելու կապակցութեամբ, վերջինս նրան պատասխանում է. «Պարոն, մինչ ունիմ, այսպէս փարթամօրէն կեամ, եւ յորժամ պակասեցին ինձ, յայնժամ կեցից իբրեւ զքեզ» (**Ն. Պողարեան,** Ցուցակ..., Դ. էջ 561): «Ընտիր պատմութիւն Դաւիթ-բեգին» (Վաղարշապատ, 1871, էջ 5) ծանօթ գրուածքի մէջ Վրաստանից Սիւնիք ժամանած հայ զինուորները «վրացի» են կոչուել. «Սոքա վրացի ասին,- բացատրում է հեղինակը,- ըստ որում էին յերկրէն Վրաց, այլ ոչ ի յազգէ նոցա»: Խօսելով Թիֆլիս քաղաքի մասին, Մ. Թաղիադեանն իր «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատութեան մէջ ուղղակի նշում է, որ «բնակիչք նորա հայք եւ վիրք առ այլազգիս միահաղոյն գուրջիս անուանեալ [են]» («Գրական ժառանգութիւն», հատոր 9, **Մեսրոպ Թաղիադեան,** Երեւան, 1975, էջ 169) եւ այլն: Այս նոյն պատկերը նկատւում է նաեւ ռուսերէն գրուած բազմաթիւ փաստաթղթերում: Լուկա Շիրուանով հայ վաճառականը, օրինակ, թուարկելով իր գերդաստանի հետ սերտօրէն կապուած անձնաւորութիւններին, դրանց շարքում յիշատակում է Բարսեղի որդի Պօղոսին, նրան կոչելով "гилянец грузинец Павел Василев, уроженец города Тефлиса" ("Арм.-русские отношение XVII в.", 3, էջ 180): Զուրաբ Զաւրիեւը, պետական մարմիններին ներկայացրած իր մի գրութեան մէջ, ներկայանում է որպէս "грузинской нации армянского закона дворянин Зурап Завриев". Օթար Թումանեանը ներկայանում է որպէս "армянской нации в Москве обретающееся житель грузинской князь гусарского полку капитан Отар Туманов" (նոյն տեղում, էջ 275) եւ այլն:

Այսպիսով ստացւում է նոյն պատմութիւնը. XIV դ. Մոսկուայի բնակչութիւնը չփւում է Ղրիմից ժամանող հայերի հետ՝ կոչելով նրանց «սուրոժցի» կամ «կաֆացի», հաշուի առնելով Ղրիմի վաճառաշահ այն քաղաքները, որտեղից ժամանում էին այդ հայերը. իսկ XVI-XVII դդ. «վրացի» («գրուզին») անունով են յայտնի դառնում շատ հայեր, քանի որ նրանք Մոսկուա էին ժամանում այս անգամ արդէն ոչ թէ Ղրիմից, այլ Վրաստանից:

1 **В. Е. Сыроечковский,** նշվ. աշխ., էջ 51

Կարդացողներ, հասկըցողնի,
Առատաձեռն խօճանի»:

Այս վաճառականներն էին, որ իրենց առեւտրական գործերով լինում էին ամէնուրեք.

«Գնային Շիրվան և Շամախի,
Շամ, Հալէպ 'ւ Ըստամպօլի,
Պուրսայ, և այլ բազում տեղի»:

Անշուշտ, այս «բազում տեղիի» մէջ էին մտնում նաեւ Ղրիմը, Լեհաստանը եւ Մոսկովեան պետութիւնը՝ տնտեսական իրենց նշանաւոր կենտրոններով: Բանաստեղծը նկարագրում է Թոխաթի շուկան՝ «բարով իլի» խանութներով.

«Վաճառականաց էր նա տեղի.
Չորս կողմանց գայր պազըրկնի,
Մախէր բեռնով ապրուշումնի,
Ջուխայ, բըթան 'ւ այլ դումաշնի»:

Քաղաքը եղել է նաեւ արհեստագործութեան նշանաւոր կենտրոն. արտադրուել են «գոյնըզգունաց ամեն ցեղի» մետաքսէ ծաղկազարդ գործուածքներ, բեհեզ, քաթան եւ այլ կտորեղէն: Բանաստեղծը խօսում է ոսկերչական գեղեցիկ ապրանքների, պղնձէ «թաս-թափսիների», «վարպետաբան» կողպէքների եւ շատ այլ «զարմանալի բաների» արտադրութեան մասին[1]:

Մէկ ուրիշ Թոխաթեցի՝ Յակոբ Բաթուկենցը, լրացնելով նախորդին, տեղեկութիւններ է յաղորդում իր հայրենի քաղաքի «ընտիր խաների», այսինքն՝ կարաւանատների մասին, ուր տարբեր երկրներից ժամանած վաճառականները «օթէին բազում օրեր», գովերգում է տեղի «տոլվաթաւոր խօճաներին», որոնք մեծայամբաւ, փարթամ ու անուանի էին[2]:

XVII դ. սկզբներին կրած հարուածներից մի քանի տասնամեակ յետոյ, երբ յաղթահարւում են ներքին դժուարութիւնները եւ Իրանի ու Թուրքիայի միջեւ վերականգնւում են բնականոն յարաբերութիւնները, Թոխաթը կրկին դառնում է նշանաւոր քաղաք, բայց երբեք այլեւս չի հասնում իր նախկին փառքին: Ֆրանսիացի ճանապարհորդ Յ. Բ. Տաւերնիէն, Թոխաթը համարելով դէպի Արեւելք երկարող տարանցիկ ճանապարհների խոշոր կայաններից մէկը, վկայում է այն մասին, որ «այնտեղ անընդհատ կարաւաններ են ժամանում Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Սինոպից եւ այլ վայրերից»: Անդրադառնալով Թոխաթից մինչեւ Թաւրիզ ընկած երկրամասին՝ նա նշում է, որ ընդարձակ այս տարածութիւնը հների կողմից Հայաստան կոչուած երկիրն է, բնակեցուած է գրեթէ միայն քրիստոնեաներով. եւ պէտք չէ զարմանալ, շարունակում է նա, որ «քաղաքների ու գիւղերի մէջ մէկ մահմեդականի դիմաց գտնւում են յիսուն հայեր»[3]:

Նկատի առնելով Թոխաթի տնտեսական կեանքում հայերի գրաւած դիրքը եւ այն հան-

1 Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, էջ 606-607

2 Նոյն տեղում, էջ 609

3 Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes, t. I, Paris, 1679, էջ 11,12, 20, 47-48

գամանքը, որ Արեւելեան Եւրոպայի երկրամասերի հետ հէնց նրանք էին սերտ կապեր հաստատել՝ դժուար չէ եզրակացնել, որ Թոխաթ ժամանող սակաւաթիւ ռուս առեւտրականները մեծ մասամբ հէնց հայերի հետ էին առնչւում եւ ապրանքափոխանակութիւն կատարում:

Նոյնը կարելի է ասել նաեւ Շամախի քաղաքի մասին: XV դ. 70-ական թթ. ճամփորդելով արեւելեան երկրներում՝ Ջ. Բարբարոն եղել է նաեւ Շամախիում եւ նշել, որ այն «շատ լաւ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն, եւ արտադրում են մետաքս, կտաւ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով», գտնւում է Մեծ Հայքում եւ բնակիչների մեծ մասը հայ է[1]: Ա. Կոնտարինին յայտնում է, որ «այդ քաղաքում պատրաստում են մեզ մօտ տալամանեան (խմբ՝ դեյլեմեան - Լ. Խ.) անունով յայտնի մետաքսը եւ բացի այդ արտադրում են մետաքսէ գործուածքներ, ըստ մեծի մասի անպաճոյճ եւ ոչ շատ բարձրորակ»[2]: Ռուս վաճառական Ֆ. Կոտովը, որ երկարամեայ շփումներ ունենալով հայերի հետ՝ լաւ սովորել է մեր լեզուն, Շամախիում եղել է 1623-1624 թթ.: Ծանօթանանք նաեւ նրա հաղորդած հետաքրքրական տուեալներին. "А Шамаха стоит промеж высокими горами в услоне, город каменной и посады каменные... а посад и ряды и гостиные дворы стоят за городом. А в Шемахе семь гостиных дворов все каменные... а стоят гостиные дворы промеж рядами: Тезичей, Арменьской, на том русские люди торгуют, Лязгинской, Гилянской и иные дворы, и местом велик"[3]:

Այսպիսով, ռուս վաճառականները առեւտրական գործերով ժամանելով Շամախի (աւելի հեռու ընկած պարսկական քաղաքներ նրանք, որպէս կանոն, չէին ճամփորդում)՝ իջեւանում էին հայկական կարաւանատանը եւ հէնց այստեղ էլ կատարում առեւտրական իրենց գործարքները՝ շփուելով հիմնականում հաւատակից հայ վաճառականների հետ:

* * *

Ինչպէս արդէն վաղուց յայտնի, այնպէս էլ նոր միայն շրջանառութեան մէջ դրուած փաստերը, լրացնելով միմեանց, հնարաւորութիւն են ընձեռում յանգելու այն եզրակացութեան, որ հայերի ծանօթութիւնը Մոսկուայի հետ տեղի է ունեցել այդ քաղաքի պատմութեան հնագոյն շրջանում. XIV դ. վերջերից հայերի երթեւեկը Մոսկուա այնքան է ընդարձակուել ու ծաւալուել, որ նրանցից շատերը, մշտական բնակութիւն հաստատելով այնտեղ, ուշագրաւ դերեր են գրաւել Մոսկուայի մեծ իշխանութեան տնտեսական կեանքի տարբեր

1 Յովհ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, հատոր Ա, ԺԳ-ԺԶ դար, Երեւան, 1932, էջ 199

2 **И. П. Петрушевский.** Государства Азербайджана в XV в. "Сборник статей по истории Азербайджана", вып. I, Баку, 1949, էջ 195

3 **М. В. Фехнер,** նշւ. աշխ., էջ 32 (վկայակոչում է "Хождение на Восток Ф. А. Котова в первой четверти XVII в.", "Известия отдела русского языка и словесности императорской Академии Наук", 1907, т. XII, кн. I): Տալիս ենք այստեղ մէջբերուած ռուսերէն հատուածի թարգմանութիւնը. «Իսկ Շամախին կառուցուած է բարձր լեռների միջեւ՝ թեքութեան վրայ. բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից… Եւ բնակավայրը, եւ կրպակների շարքը, եւ կարաւանատները կառուցուած են բերդից դուրս: Շամախիում կան եօթ կարաւանատներ, բոլորն էր կառուցուած քարից. եւ գտնւում են կրպակների շարքերի միջեւ. կան տաճկական (тезичей), հայկական,- ուր առեւտուր են անում նաեւ ռուսները,- լեզգիների, գիլանցիների եւ այլ կարաւանատներ. եւ [քաղաքն] ընդարձակ է»:

Շամախու արհեստագործութիւնը յարատեւել է ընդհուպ մինչեւ XIX դ. վերջերը: Մակար Բարխուտարեանցն այդ մասին գրել է. «Շամախում ծաղկած է մանաւանդ մետաքսագործութեան արուեստն. ոստաններով գործում են մետաքսեայ ընտիր կերպաս, վերմակների երեսներ, կանացի հագուստեղէն, զանազան գունով եւ մեծութեամբ թաշկինակներ, զարդեր եւ այլն» («Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 159):

ոլորտներում: Հասնելով այս արդիւնքներին՝ մեզ գտնում ենք կանգնած բազմազան ու բարդ նոր հարցերի ու խնդիրների առջեւ, որոնցից իւրաքանչիւրի լուծման համար անհրաժեշտ է լինելու երկար տարիների յամառ ջանքեր: Կարեւորագոյն հարցերից է, օրինակ, հետեւեալը. հայկական էթնիկական տարրի առկայութիւնը Մոսկուայում որեւէ հետք չի՞ թողել նոր Ռուսիայի մայրաքաղաքի մշակութային կեանքի տարբեր ոլորտներում: Պէտք է նշել, սակայն, որ այս հարցին հիմնաւոր պատասխանելու ժամանակը չի հասունացել. առ այսօր քիչ բան է արուած հայկական ու ռուսական միջնադարեան մշակոյթի տարբեր բնագաւառների՝ ճարտարապետութեան, մանրանկարչութեան, կիրառական արուեստի եւ գրականութեան փոխադարձ առնչութիւնների ու ազդեցութիւնների բարդ ու դժուարին հարցերի քննարկման ուղղութեամբ: Իսկ թէ այս առումով ինչ դեր է վիճակուած եղել Մոսկուային, այս հարցը քննարկման նիւթ իսկ չի դարձել:

Ռուսական նշանաւոր միջնադարեան տարեգրութիւններից երկուսը տեղեկութիւն են պահպանել այն մասին, որ Վլադիմիր-Սուզդալեան մեծ իշխանութեան տիրակալ նշանաւոր Անդրեյ Բոգոլիւբսկին (1157-1174) փառայեղ քարաշէն տաճարներ կառուցելու համար օտար երկրներից հրաւիրել է մեծ թուով վարպետներ: "Приведе ему Бог из всех земель мастеры",- կարդում ենք Լաւրենտիեւեան տարեգրութեան մէջ, իսկ Նիկոնովեան տարեգրութիւնը հաղորդում է նաեւ, որ Բոգոլիւբսկու կողմից հրաւիրուածների մէջ եղել են "мастеры всякиа"[1]: Ո՞ր երկրներից են ժամանել այդ վարպետները. այս հարցին փորձել են պատասխան գտնել շատ մասնագէտներ, եւ առաջ են քաշուել իրարամերժ տեսակէտներ: Շատերը Վլադիմիր-Սուզդալեան ճարտարապետական յուշարձանների վրայ նկատել են ռոմանական ոճի նշանակալից հետքեր, բայց եկել են այն համոզման, որ այդ ազդեցութիւնը եղել է միջնորդաբար՝ Գալիցիայի եւ Վոլինեայի վրայով (երկրամասեր, որոնց քաղաքների զարգացման գործում հայ գաղթականները զգալի դեր են կատարել): Մի շարք ուսումնասիրողներ յատուկ ուշադրութիւն են դարձրել յուշարձանների որմնազարդերի վրայ՝ արեւելեան ոսկերչական իրերի եւ գործուածքների զարդաձեւերի ուշագրաւ նմանութիւններ գտնելով նրանց մէջ: Անուանի պատմաբաններ Բ. Գրեկովն ու Ա. Եակուբովսկին, նկատի ունենալով յատկապէս Վլադիմիր քաղաքի Դմիտրիեւեան եւ Յուրեւ-Պոլսկի քաղաքի Գեորգիեւեան տաճարի ճարտարապետական յարդարանքը, կովկասեան արուեստի ազդեցութեան հետքեր են նշմարել դրանցում եւ այլն: Ճարտարապետ Հ. Խալփախչեանը հանգամանօրէն քննարկել է այս խնդրի շուրջ արտայայտուած տեսակէտները եւ յանգել այն եզրակացութեան, որ անհնարին է անտեսել արեւելեան տարբեր երկրներից եւ մասնաւորապէս՝ Հայաստանից ժամանած ճարտարապետների ու քարագործ վարպետների դերը Վլադիմիր-Սուզդալեան բաժնետիրական իշխանութեան ճարտապետական հնագոյն յուշարձանների կառուցման եւ յարդարման գործում[2]: Այս տեսակէտի հիմնաւորման համար գիտնականը հետաքրքրական այնպիսի զուգադրութիւններ է կատարել, որոնք, անտարակոյս, խոստումնալից են:

Սկզբնաղբիւրներում առկայ որոշ ակնարկներից կարելի է հետեւեցնել, որ Մոսկուա քաղաքում քարաշէն-կամարակապ առաջին բնակելի շէնքեր կառուցողները «սուրոժցի» կոչուող մեծահարուստ վաճառականներն են եղել. նրանցից մասնաւորապէս՝ մեզ յայտնի են Վխեսկովները եւ Տարոկան (գուցէ՝ Թարխա՞ն) անունով վաճառականը: Սրանց տներն իրենց

1 О. Х. Халпахчьян, Նշւ. աշխ., էջ 28

2 Նոյն տեղում, էջ 31-44

շինանիւթով ու արտաքին տեսքով այնքան տարբեր էին XIV դ. Մոսկուայի միւս շէնքերից, որ գրաւում էին բոլորի ուշադրութիւնը եւ տարեգրութիւններում գրանցուելու նիւթ դառնում[1]:

1485 թ. Կրեմլում քարաշէն ապարանք ու դարպասներ է կառուցում թագաւորի գանձապետ «սուրոժցի» Վլադիմիր Խովրինի որդի Դմիտրին, որին հետեւում է նրա աւագ եղբայր Իւանը: Այս Իւան Խովրինը յայտնի էր Գոլովա մականունով (նրանից է սերում ռուսական պատմութեան մէջ մեծ դեր կատարած Գոլովինների ընտանիքը)[2]:

Յատուկ ուշադրութեան արժանի է Վասիլի III մեծ իշխանի ժամանակակից Վասիլի Դմիտրիեւիչ Երմոլինի գործունէութիւնը: Այս «սուրոժցին» ներկայացուցիչն էր Մոսկուայի ամենափարթամ վաճառական ընտանիքներից մէկի եւ յայտնի էր որպէս կապալառու-ճարտարապետ: Սա է վերականգնել Կրեմլի պարիսպները եւ Համբարձման տաճարը, վանքերից մէկում կառուցել է քարաշէն սեղանատուն, վերականգնել Իւրի-Պոլսկի քաղաքի կործանուած տաճարը (յայտնի իր արեւելեան ոճաւորմամբ զարդաքանդակ քարերով) եւ կառուցել ու վերակառուցել է բազմաթիւ այլ շինութիւններ[3]:

Պէտք է ենթադրել, որ օտարազգի շինարար-վարպետների մասնակցութեամբ առաջին հերթին կառուցւում էին փառայեղ վանքերն ու եկեղեցիները: Եւ եթէ մանրակրկիտ ուսումնասիրուեն Մոսկուայում տակաւին կանգուն քարաշէն հին տաճարները, ապա, մեծ հաւանականութեամբ, դրանց շարքում կարող են երեւան գալ հայկական միջնադարեան ճարտարապետական արուեստին, մանաւանդ կառուցողական աւանդոյթներին հարազատ մի շարք կառոյցներ: Մասնագէտների ուշադրութեանն ենք յանձնում մասնաւորապէս՝ Մոսկուայի Անդրոնիկեան վանքի սուրբ Փրկչի տաճարը՝ կառուցուած շուրջ 1427 թ.: Ձեռքի տակ ունենք նրա գմբէթարդ աւագ խորանի եւ որմնասիւներից մէկի պրոֆիլաւոր խարսխի լուսանկարները, որոնք չափազանց նման են միջնադարեան հայկական տաճարների համապատասխան մասերին:

Այժմ մի քանի խօսք կերպարուեստի եւ կիրառական միւս արուեստների բնագաւառում նկատուող հայկական հետքերի մասին:

Երբ 1660 թ. Զաքար Շահրիմանեանը Սպահանից ժամանեց Մոսկուա ու Ալեքսեյ Միխայլովիչ ցարին մատուցեց նշանաւոր ադամանդեայ գահը, բանակցութիւններ տեղի ունեցան պետական բարձրաստիճան պաշտօնէութեան եւ մեծահարուստ այդ վաճառականի միջեւ՝ ջուղահայ առեւտրականների գործունէութեան ընդարձակման հարցի շուրջ: Ընդառաջելով թագաւորի ցանկութեանը՝ Զաքարը իր հօր՝ Սահրադ Շահրիմանեանի եւ անձամբ իր անունից պարտաւորուեց հայազգի արուեստագէտ-վարպետներ ուղարկել Մոսկուա՝ թագաւորի հրամանի ներքոյ աշխատելու համար. "А великому государю всякими узорочьи и мастеровыми людьми отец ево и он (Захарий) промышлять готовы для его великого государя милости",- ասուած է այդ բանակցութիւնների առթիւ կազմուած փաստաթղթի

1 М. Н. Тихомиров, Նշւ. աշխ., էջ 151: Տարոկանի տան մասին, օրինակ, տարեգրութեան մէջ գրուած է. "Того же лета (իմա՝ 1471 թ.) Тарокан купець заложил себе полаты кирпичны во граде Москве, у градной стены, у Фроловских ворот" (ПСРЛ, т. VI, էջ 191):

2 П. В. Сытин. История планировки..., էջ 43

3 М. Н. Тихомиров. Նշւ. աշխ., էջ 154

մէջ[1]:

Չի անցնում մի քանի տարի, եւ Նոր Ջուղայից Մոսկուա է ժամանում Թանղրիւերան անունով հայ վարպետը, որը ռուսական միջավայրում ճանաչւում է Իւան կամ Բոգդան Սալթանով անուն-ազգանունով եւ հսկայական դեր կատարում Ռուսաստանի մայրաքաղաքի մշակութային կեանքի տարբեր մարզերում, մեծապէս նպաստում ռուսական արուեստի զարգացմանը: 1667 թ. յունիսի 15-ի թագաւորական հրովարտակով նա նկարչի պաշտօնով եւ բարձր աշխատավարձով ընդունւում է աշխատանքի Զինապալատում: Սալթանովի հետ աշխատանքի են անցնում նաեւ հայազգի մի քանի արուեստագէտներ՝ Մատիւշկա եւ Իւաշկա Բոգդանով եղբայրները եւ Մարչկա Օստաֆեւը: Նրանց անուն-ազգանունները ռուսականացուած են անճանաչելի աստիճանի. եւ եթէ յատուկ ուսումնասիրութիւն կատարուած չլինէր, մենք այսօր որեւէ կռուան չէինք ունենայ նրանց հայ լինելը հաստատելու համար[2]: Սալթանովի այս հայազգի աշակերտներն օգնել են իրենց անուանի ուսուցչին, յետագայում կատարել ինքնուրոյն աշխատանքներ: Նրանցից շատ աւելի մեծ ճանաչում է ստացել մեծ վարպետի նշանաւոր աշակերտ Լազար Իւանովիչ Բելսկի նկարիչը՝ նահապետը Բելսկի ազգանունը կրող հայազգի նկարիչների գերդաստանի, որի անդամները մեծ դեր կատարեցին XVII դ. ռուսական գեղանկարչութեան ձեւաւորման գործում[3]:

Կերպարուեստի բնագաւառում հայ-ռուսական կապերի մասին պերճախօս այն փաստերը, վերաբերելով XVII դ. երկրորդ յիսնամեակին, դուրս են գտնւում մեր ուսումնասիրութեան ժամանակագրական սահմաններից: Դրանց անդրադառնալու անհրաժեշտութիւնն զգացուեց նախորդ դարի որոշ երեւոյթներ պարզաբանելու համար:

Նկատուած է արդէն, որ XV-XVI դդ. Մոսկուայում աշխատել է նշանաւոր մի վարպետ կամ աւելի ճիշտ՝ նոյն դպրոցին պատկանող արուեստագէտների մի խումբ, որի ջանքերով պատրաստուել են գեղարուեստական բարձր յատկանիշներով օժտուած մի շարք իրեր, նկարազարդուել են տաճարներ եւ այլն: Ա. Եակոբսոնը, մանրակրկիտ ուսումնասիրութիւններ կատարելով, ի մի է բերել այդ դպրոցին պատկանող արուեստի առարկաները, որոնց համառօտ ցանկը ներկայացնում ենք ստորեւ.

1. Բորովսկու Ս. Պաֆնուտիի վանքի «Թագաւորական դարպասները» ("Царские врата", այսպէս էին կոչւում ռուսական եկեղեցիների աւագ խորանի սրբապատկերներով զարդարուած գեղազարդ դռները).

2. Կիրիլո-Բելոզերսկի վանքի Ս. Սերգեյի եւ Ս. Յովհան Լեստուիչնիկի եկեղեցիների «Թագաւորական դարպասները».

3. Նոյն վանքի պանակէներից մէկը.

4. Նոյն վանքի ս. Կիւրեղի սրբապատկերի դրուագեալ շրջանակը.

5. Նովգորոդի թանգարանում պահուող Բորիսի եւ Գլեբի սրբապատկերի դրուագեալ շրջանակը.

---

1 "Армяно-русские отношение в XVII веке". Сборник документов под редакцией проф. В. А. Парсамяна, Ереван, 1953, էջ 26

2 **Нина Молева.** Иван Салтанов и его школа. «Լուսաբեր», 1977, N 10, էջ 79

3 **Н. М. Молева.** О художниках Бельских. «Լուսաբեր», 1974, N 8, էջ 38-52

6. Մոսկուայի Կրեմլի Աւետման տաճարի սրբապատկերներից մէկի դրուագեալ շրջանակը.

7. Նոյն տաճարի 1508 թ. որմնանկարները.

8. Զինապալատում պահուող 1499 թ. մի Աւետարանի արծաթէ կազմը.

9. Իւան Ահեղի սաղաւարտը եւ այլն:

Համոզիչ համեմատութիւններ կատարելով եւ զուգահեռներ անցկացնելով մէկ կողմից՝ վերոյիշեալ գեղարուեստական առարկաների զարդաձեւերի ու ոճի, միւս կողմից՝ հայկական համապատասխան յուշարձանների (մանրանկարչութեան, ճարտարապետական յուշարձանների, խաչքարերի, արծաթեայ իրերի եւ այլ առարկաների) զարդաքանդակների միջեւ՝ Ա. Եակոբսոնը յանգել է այն եզրակացութեան, որ դրանք միեւնոյն ակունքներից են բխում: Այդ բոլոր առարկաները, նշում է նա, դուրս են եկել միեւնոյն արհեստանոցից. այդ արհեստանոցը, հաւանաբար, գոյութիւն է ունեցել Մոսկուայի Զինապալատին առընթեր, եւ նրա արտադրած եկեղեցական սպասքն ու առարկաները, նուիրաբերուելով տարբեր վանական ու եկեղեցական հաստատութիւնների, տարածուել են մայրաքաղաքում եւ նրա սահմաններից դուրս[1]: Իսկ թէ ինչպէս բացատրել այդ յուշարձանների «մերձաւորարեւելեան» կամ «կովկասեան» յատկանիշները[2], այս հարցին որոշակի պատասխան չգտնելով՝ Ա. Եակոբսոնը զանազան ենթադրութիւններ է անում: Այստեղ աշխատող ռուս վարպետները, ինչ-որ ժամանակ ապրելով արեւելեան երկրներում, դաստիարակուել են տեղական աւանդոյթներով, իւրացրել իրենց ուսուցիչների գեղագիտական սկզբունքները: Իսկ եթէ Մոսկուայից դուրս չեն եկել, այդ դէպքում կա՛մ իրենց ձեռքի տակ ունեցել են «արեւելեան երկրներում» պատրաստուած համանման գեղարուեստական իրեր ու ընդօրինակել են դրանք, կա՛մ էլ օգտուել են զարդանախշերի ինչ-որ ալբոմներից[3]:

Քիչ է ասել, թէ այս պատասխանները գոհացուցիչ չեն: Բազմաթիւ հայ արուեստագէտ-վարպետների առկայութիւնը Մոսկուայի Զինապալատում XVII դ. 60-ական թթ. ու յետագայում, հմուտ արհեստաւորների Ռուսաստան հրաւիրելու մասին ռուս պետական պաշտօնեաների հարցադրումները, որոնք արտայայտութիւն են գտել հայ-ռուսական տնտեսական կապերի մասին առկայ փաստաթղթերում[4] եւ, վերջապէս, մեծաքանակ հայ վաճառականների ու

---

1 Հարկ է նշել, որ Ա. Եակոբսոնը իր կողմից ընտրուած ու մասնագիտական խոր վերլուծութեամբ՝ հայկական նիւթերի հետ զուգադրած առարկաների ոճը բնորոշելու համար խուսափում է «հայկական» տերմինից. նրան աւելի դուր են գալիս «կովկասեան», «մերձաւորարեւելեան» որոշակիութիւնից զուրկ տերմինները, որոնք գուցէ եւ աւելի յարմար են, բայց անզօր բացայայտելու պատմամշակութային իրական երեւոյթները:

2 **А. Л. Якобсон.** Художественные связи московской Руси с Закавказьем и Ближним Востоком в XVI в. "Материалы и исследования по археологии СССР", N 167, "Древности московского Кремля", М., 1971, էջ 245-246

3 Նոյն տեղում, էջ 246

4 Զաքար Շահրիմանեանը 1660 թ. պատասխանելով ռուս պաշտօնեաների հարցումներին, նրանց ասել է նաեւ հետեւեալը. "А мастеровых де всяких людей в шахове области много и он де (Захарий) к великому государю в московское государство призывать учнет". Իսկ նոյն Զաքարի 1666 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ուղղած գրութեան մէջ ասուած է, որ ցարը ծանօթացած լինելով խորհրդաւոր ընթրիքը պատկերող մի փորագրութեան, պահանջել է Մոսկուա ուղարկել այդ պատկերը պատրաստող արուեստագէտին ("Армяно-русские отношения в XVII в.", էջ 26, 41):

«Լուսոյ յառաջ փոքր ծառէղ մին պղնձէ թանուրի վերայ ասագ խինգ շաքար օրէն տնօրինականքն քաշած մեծ թագաւորին զլուխ ինք տուել. շատապաթ էր արարել. նորա շինողն ուզեցել էր. էն քարխանումն որ շինվել էր մի

արհեստաւորների ներկայութիւնը Մոսկուայում XV-XVI դդ. այնպիսի նախադրեալներ են, որ հնարաւորութիւն են ընձեռում յանգելու շատ աւելի հիմնաւոր այսպիսի եզրակացութեան. հայ արուեստագէտ-վարպետներն աշխատել են Մոսկուայի Զինապալատում ոչ միայն XVII դ., այլեւ դրանից շատ առաջ՝ Իւան III մեծ իշխանի ժամանակներում: Նրանց ջանքերով են պատրաստուել բազմաթիւ գեղարուեստական իրեր, որոնց մի մասն արդէն դրուած է գիտական շրջանառութեան մէջ, իսկ շատերն էլ, թերեւս, սպասում են իրենց յայտնաբերողներին:

Այդ հմուտ արուեստագէտ-վարպետների արտադրած իրերի շքեղ զարդապատկերները սիրուել ու լայնօրէն տարածուել են Մոսկովեան պետութեան սահմաններում, թարմ շունչ հաղորդել տեղական արուեստին, դարձել մոդայիկ եւ օգտագործուել ինչպէս փայտափորագրութեան եւ ոսկերչութեան, այնպէս էլ ճարտարապետութեան եւ, նոյնիսկ, գրատպութեան ասպարէզում[1]:

* * *

Ի՞նչ յուշ-յիշատակներ են պահպանուել Մոսկուա քաղաքի եւ Մոսկուայի հայ գաղթօջախի մասին միջնադարեան հայկական ու ռուսական գեղարուեստական ստեղծագործութիւններում: Այս հարցին մասամբ պատասխան է տրուած տարիներ առաջ, երբ Ա. Մնացականեանի ջանքերով գիտական շրջանառութեան մէջ դրուեց բազմաթիւ միջնադարեան ձեռագրերով աւանդուած եւ տարբեր խմբագրութիւնների ենթարկուած հայկական այն պոեմը, որի մէջ Մոսկուան յիշատակուած է աշխարհի շքեղագոյն ու նշանաւոր քաղաքների շարքում՝ որպէս ամենափառաւորն ու մեծագինը[2]: Պոեմը սիրային բովանդակութիւն ունի, նուիրուած է մի «գեղալի» (գեղեցկուհու) բարեմասնութիւնների գովերգութեանը. այնպիսի հմայք ունի այդ գեղեցկուհին, որ նրա երեսնեւնուքի համար փեսացուն շռայլօրէն «նուիրաբերում» է Սելանիկն ու Ատրնան, աչքերի համար՝ Սկիւտարն ու Ղալաթիան, քաղցրիկ զրոյցի համար՝ Բաղդադն ու Բասրան եւ այլն: Յիշատակւում են նաեւ Թոխաթ, Էրզրում, Գեանջա, Կաֆա, Վենետիկ քաղաքները, Մըսր (Եգիպտոս), Շամ (Սիրիա), Հնդուստան, Սպանիա երկրները եւ այլն, այսինքն՝ գլխաւոր այն վաճառաշահ կենտրոնները, որոնք մեծ դեր էին կատարում միջազգային առեւտրի մէջ մինչեւ աշխարհագրական նոր յայտնագործութիւնները:

Ինչպէս ասուեց, Մոսկուան կենտրոնական տեղ է գրաւում վերոյիշեալ քաղաքների ու երկրների շարքում. երգիչը շեշտուած մեծարանքով է յիշատակում այդ քաղաքի անունը[3]:

դապին ուստայ կէր, անունն Բուղտան, որ նորայ հունարն ամենու վերայ առաւել էր, ուղարկեցինք քրիստոնաշէն Մօսկովն, զոն մեծ թագաւորին ղուլաղն տեղն կատարեն» (նոյն տեղում, էջ 41):

1 **А. Л. Якобсон**, նշւ. աշխ., էջ 247

2 **Ա. Մնացականեան**, Մոսկուան միջնադարեան հայկական մի պոեմում, «Տեղեկագիր», 1948, N 3, էջ 49-64

3 Նոյն տեղում, էջ 53: Աս. Մնացականեանը ցոյց է տուել, որ այս պոեմը զգալի ազդեցութիւն է գործել հայ մի շարք բանաստեղծների, որոնց թւում նաեւ Նաղաշ Յովնաթանի վրայ. վերջինս ունի այսպիսի տողեր.

«Քաղաք ես Խութայի Մոսկով,
Խելքս տարար անուշ խօսքով»:

«Ըստ այս տողերի,- գրել է Մնացականեանը, Մոսկուան գտնւում է Խութայում՝ Չինաստանում», ուստի միջնադարեան գուսաններն ու յօրինողները, մեծ մասամբ պատկերացում էլ չեն ունեցել իրենց գործածած վայրերի ուր գտնուելու մասին (տե՛ս նշւ. աշխ., էջ 50-51):

Կարծում ենք, սակայն, որ Խութայի-Մոսկով ասելով՝ Նաղաշ Յովնաթանը, մի բանաստեղծ, որ ապրել է հայ վաճառականների միջավայրում ու ստեղծագործել նրանց համար, նկատի է ունեցել Մոսկուայի առեւտրական

Միանգամայն իրաւացի է Աս. Մնացականեանը, երբ բաւարար փաստեր մէջբերելով յանգում է այն եզրակացութեան, որ պոեմը ստեղծուած պէտք է լինի XIV-XV դդ.: Եւ պէտք չէ տարակուսել, որ այն յօրինուել է այնպիսի խոշոր հայկական կենտրոններից մէկում, ուր գոյութիւն ունէր միջնադարեան Հայաստանի խոշոր քաղաքներում եւ նշանաւոր գաղթավայրերում վկայուած «Կտրիճւորաց եղբայրութիւն» կոչուող կազմակերպութիւններից մէկը: Պոեմի հնագոյն փոփոխակներում պահպանուած են այսպիսի տողեր.

«Մանկունք, մի մեղադրէք
Սէրն արաւ զիս տիւանայ...
Աժէ, ինչ տուաք, եղբարք,
Կուզելին իսկի գին չկայ»:

«Մանկունք», «եղբարք» կոչուող հասցէատէրերը յիշատակուած են նաեւ մի շարք հայրեններում: Կոստանդին Երզնկացին եւս իր բանքերի մի մասը յօրինել է քաղաքաբնակ «եղբայրների» հոգեւոր պահանջները բաւարարելու համար[1]: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ կարելի է յանգել այն եզրակացութեան, որ «Թագուհի մի ես տեսայ» սկսուածքով խնդրոյ առարկայ պոեմը նոյնպէս ստեղծուել է հայկական վաճառաշահ կենտրոններից մէկում (թերեւս հէնց Կաֆա քաղաքում), որի բնակիչները տնտեսական սերտ կապեր են ունեցել Մոսկուայի հետ:

Այժմ անդրադառնանք միջնադարեան ռուս գրականութեանը:

Մոսկուայում ստեղծուած գրական յուշարձանների շարքում որոշակի տեղ է գրաւում «Պատմութիւն վրաց թագուհի Դինարի մասին, ինչպէս յաղթեց պարսից թագաւորին» ("Повесть о грузинской царице Динаре, како победи персского царя") *խորագրով ստեղծագործութիւնը: Նրա ստեղծման հանգամանքների ու ժամանակի մասին ռուս եւ վրաց գրականութեան պատմաբանները տարբեր կարծիքներ են յայտնել: Արդէն յաղթահարուած պէտք է համարել անհիմն այն ենթադրութիւնը, թէ ռուսական այս գրուածքը թարգմանութիւնն է Թամարա թագուհու գործունէութեանը նուիրուած բիւզանդական չափածոյ մի ստեղծագործութեան[2]: Յունարէն լեզուով այդպիսի մի գրուածքի երբեմնի գոյութեան մասին որեւէ փաստ յայտնի չէ, իսկ Թամար թագուհին այնպիսի հռչակաւոր գործիչ է եղել, որ նրա անունը չէր կարող դուրս նետուել ու փոխարինուել իրենից դարեր առաջ ապրած եւ շատ համեստ պատմական դեր կատարած Դինար թագուհու անունով:*

Ուսումնասիրողներից մի մասի կարծիքով (Ն. Կ. Գուդզի, Կ. Վ. Բազիլեւիչ) «Պատմութիւնը» գրուել է Մոսկուայում XV դ. վերջին քսանհինգամեակի ընթացքում, իսկ ըստ ուրիշների (Մ. Սպերանսկի, Եա. Ցինցաձէ)՝ XVI դ. կէսերին[3]: Մեզ համար էական նշանակութիւն չունի, թէ այս տեսակէտներից որն է ի վերջոյ ճիշտ համարուելու: XV դ. վերջերին եւ XVI-ի առաջին յիսնամեակի ընթացքում ոչ միայն աւելի լայն ծաւալ էին ստանում տնտեսական կա-

---

կենտրոն Կիտայ-Գորոդը, եւ բնաւ էլ չի կարծել, թէ Մոսկուան գտնւում է Չինաստանում:

1 **Լ. Խաչիկեան**, Երզնկայում 1280 թ. կազմակերպուած «Եղբայրութիւնը», «Տեղեկագիր», 1951, N 12, էջ 84

2 Այս տեսակէտը տեղ է գտել նոյնիսկ «Վրաց պատմութեան» դպրոցական դասագրքում ("История Грузии", ч. I, Тбилиси, 1946, էջ 237):

3 **Л. С. Шепелева.** Культурные связи Грузии с Россией в X-XVII веках. "Труды отдела древнерусской литературы", IX, М.-Л., 1953, էջ 310-311

պերը Մոսկուայի ու Վրաստանի միջեւ, այլեւ ծայր էին առել դիւանագիտական բանակցութիւններ. վրաց գահակալների կողմից Մոսկուա առաքուող բանագնացները (որոնց շարքում գրեթէ միշտ լինում էին հայազգի գործիչներ) Մոսկուայի մեծ իշխանների օգնութիւնն էին խնդրում թուրքական եւ իրանական զաւթիչների դէմ յաջող պայքար մղելու համար:

Ուսումնասիրողներն իրաւացիօրէն նշել են, որ այդպիսի բանակցութիւնների ժամանակ վրաստանցի դիւանագէտներն առիթը բաց չէին թողնելու՝ շեշտելու համար վրացիների եւ ռուսների դաւանակից-քրիստոնեաներ լինելու հանգամանքը: Նրանք իրենց երկրի ու եկեղեցու հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով կարող էին նաեւ նշել՝ յենուելով «Քարթլիս ցխովրեբայի» վրայ, որ իրենց ժողովուրդը Քրիստոսի ուսմունքին հաղորդակից է դարձել անմիջապէս Աստուածամօր քարոզչութեան շնորհիւ: Կարող էին պարծենալ նաեւ ս. Նունէով եւ Վրաց հին եկեղեցու այլ սրբութիւններով: Այսպիսի դատողութիւնները շարունակելով՝ ոմանք հնարաւոր են համարել «Դինար Թագուհու պատմութեան» յօրինման հանգամանքները նոյնպէս առնչել վրաց դիւանագէտների եւ ռուսական պետական պաշտօնեաների միջեւ տեղի ունեցած բանակցութիւններին: Նրանց կարծիքով վրացի բանագնացներն անբաւարար են նկատել վերոյիշեալ «փաստերը» եւ ռուսներին պատմել են նաեւ Դինարի պատմութիւնը՝ «ուղղափառութեան յաղթանակի համար Վրաստանի վաստակը մի աւելորդ անգամ ընդգծելու նպատակով»[1]:

Եւ ահա այդ ճանապարհով «արեւելեան Վրաստանի» շրջաններից մէկի տիրակալ իշխանի կին Դինարը ճանաչուել է ռուսական միջավայրում եւ գրական մի ուշագրաւ ստեղծագործութեան հերոսուհի դարձել[2]:

Մենք չենք կարող բաւարարուել այսպիսի բացատրութեամբ:

IX դ. կէսերին արաբական լուծը թօթափելուց յետոյ Բագրատունեաց Հայաստանը մի քանի տասնամեակ միայն գոյութիւն ունեցաւ՝ որպէս միասնական պետութիւն: Ֆեոդալական յարաբերութիւնների զարգացման հետեւանքով երկիրը շուտով մասնատուեց մի շարք մանր կիսանկախ թագաւորութիւնների. Վասպուրականը, Սիւնիքը, Լոռին, Կարսը եւ այլ նահանգներ անջատուեցին Բագրատունեաց կենտրոնական իշխանութիւնից: Այդպիսի մի իշխանութիւն էլ ստեղծուեց Պատմական Հայաստանի Արցախ նահանգում, որը յայտնի է սկզբնաղբիւրներում Աղուանից թագաւորութիւն անունով: Այս իշխանութեան կազմի մէջ էր մտնում նաեւ Կուր գետից հիւսիս գտնուող պատմական Կամբեջանի շրջանը, ուր ապրում էին նաեւ բազմահազար հայեր, որոնք դաւանանքով լուսաւորչական էին: Հայկական փոքր այս թագաւորութեան նշանաւոր գահակալը եղաւ Համամ Արեւելցի անուանի մատենագիրն ու բանաստեղծը, որն իր արժանի տեղն է գրաւել հայ գրականութեան պատմութեան մէջ: Նրան յաջորդեց Ատրներսեհը: Վերջինս ամուսնացած էր վրաց իշխանաց իշխան Գուրգէնի քրոջ՝ Դինարի հետ. այս թագուհին X դ. կէսերին իր Իշխանիկ անունով որդու հետ միասին եռանդուն գործունէութիւն ծաւալեց եւ յաջողութիւններ ունեցաւ Հերեթ-Կախեթի հայերին քաղկեդոնական դարձնելու գործում[3]: Ահա այս Դինարի գործունէութեան որոշ դրուագներ են, որ գունազարդուելով՝ հիմք են հանդիսացել նկարագրուող դէպքերից կէս հազարամեակ յետոյ հիւսուած ռուսական «Պատմութեան» համար:

Այդ ստեղծագործութեան յօրինման հնարաւոր դրդապատճառները բացայայտելու նպատակով պատասխան պէտք է գտնել հետեւեալ հարցին. հասարակական եւ էթնիկական ի՞նչ շերտեր կային Մոսկուայում XVI դ. կէսերին, որոնց համար օգտակար կարող էին լինել մի հեռաւոր երկրամասի հայ ազգաբնակչութեան դարեր առաջ տեղի ունեցած դաւանափոխութեան եւ Ուղղափառ եկեղեցուն յարելու մասին հին պատմութիւնները: Ուրիշ առիթով նշել ենք արդէն, որ XIV դ. վերջերին եւ յետագայում Ռուսական եկեղեցու բարձրաստիճան ղեկավարներից շատերը օտարադաւան հայերի նկատմամբ որդեգրել էին անհանդուրժողական կեցուածք: Կրօնական անհանդուրժողականութիւնը երբեմն այնպիսի չափերի էր հասնում, որ ոմանք ստիպուած էին լինում ընդունել ուղղափառութիւն՝ խզելով իրենց կապերը մայր եկեղեցուց: «Դինար Թագուհու պատմութեան» յօրինման շրջանում յաճախացել էր վրաստանցի հայերի երթեւեկը Մոսկուա: Նրանցից շատերը մշտական բնակութիւն էին հաստատում այստեղ եւ, բնականաբար, հնարաւոր ամէն ինչ անում կեանքի բարենպաստ ու բնականոն պայմաններ ստեղծելու իրենց եւ հարազատների համար: Դաւանաբանական անհանդուրժողականութեանը դիմագրաւելու միջոցներից էին նաեւ անցեալի յիշատակները. դարեր առաջ ապրած մի թագուհու ջանքերով հազարաւոր հայեր ընդունել էին Ուղղափառ եկեղեցու դաւանանքը, այսինքն՝ հրաժարուել էին «հայկական հերձուածից», դարձել «իսկական», «ուղղափառ» քրիստոնեաներ: Այդ հայերի հեռաւոր յետնորդները նոր Ռուսիայի մայրաքաղաքում, վերարծարծելով հին այս պատմութիւնը, յոյս կարող էին ունենալ աւելի բարեհամբոյր վերաբերմունքի: Իսկ պալատական պաշտօնէութեան շրջանակներում կային արդէն գրագէտ մարդիկ, որոնք ի շահ Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական կապերի ընդարձակման ոչ միայն ունկնդրում էին այդպիսի պատմութիւնները, այլեւ գրի առնում, տարածում՝ դարձնելով միջոց հասարակական կարծիքի մշակման:

Պէտք է յուսալ, որ հայ-ռուսական հնամենի մշակութային առնչութիւնների մասին ի մի բերուած այս տուեալները յետագայում բազմապատկուելու են ճարտարապետական յուշարձանների, գրական ժառանգութեան ու դիւանական նիւթերի խորագնին ուսումնասիրութեան ճանապարհով:

* * *

Յետագայ ուսումնասիրութիւնների ժամանակ պէտք չէ անտեսուեն նաեւ ռուսական միջնադարեան բանահիւսութեան ընձեռած նիւթերը, մասնաւորապէս՝ վիպական գրականութեան գլուխգործոցներ հանդիսացող բիլինաները: Նկատուած իրողութիւն է արդէն, որ բիլինաների մի շարք ճիւղեր, ի մասնաւորի՝ Զուրիլա Պլենկովիչի, մեծահարուստ վաճառական Սադկոյի, վաճառականի որդի Իւանի մասին պահպանուած երգերի մէջ արտացոլուել են քաղաքային կեանքի շատ հետաքրքրական երեւոյթներ: Սադկոյի մասին բիլինայի մէջ, օրինակ, հէնց վիպական հերոսի անունից ասուած է հետեւեալը.

"Что де я гулял по Волге двенадцать лет,
Со вершины знаю и до устья ее,

1 Նոյն տեղում, էջ 309

2 Նոյն տեղում

3 [Տես Н.Я.Марр, Аркаун..., ВВ, 1906, т. XII, N 1-2 оттиск, стр. 7].
Այս հարցի մասին հանգամանօրէն խօսում է Ա. Շ. Մնացականեանը «Աղուանից աշխարհի գրականութեան հարցի շուրջը» (Երեւան, 1966) արժէքաւոր աշխատութեան մէջ (տե՛ս էջ 204-213): Ուշագրաւ է, որ վերջերս յայտնաբերուեցին Աղուանից մի շարք իշխանների եւ այս Դինար իշխանուհու տապանաքարերը Ղափանի շրջանում գտնուող Վահանավանքի շրջափակում (Գ. Գրիգորեան, Վահանավանքի պեղումների նախնական արդիւնքները. «Լրաբեր», 1970, N 10):

А и нижнея царства Астраханскова".

Կամ՝

"Я сам, Садко, знаю-ведаю:
Бегаю по морю двенадцать лет,
Тому царю заморскому
Не платил я дани-пошлины,
И во то сине море Хвалинское
Хлеба с солью не опускал"[1]:

Ըստ այդմ՝ Սադկոն պատկանում էր ռուսական այն վաճառականների դասին, ովքեր Վոլգայի եւ Կասպից ծովի վրայով առեւտուր էին անում Իրանի ու անդրկովկասեան երկրների հետ: Նախորդ էջերում քանիցս անհրաժեշտութիւն է առաջացել նշելու, որ միջազգային նշանակութիւն ունեցող Վոլգա-Կասպեան մայրուղին ոչ միայն դարեր շարունակ ծանօթ է եղել հայ վաճառականներին, այլ եղել են ժամանակներ, երբ նրանք գրաւել են այդ ճանապարհով կատարուող արտաքին առեւտրի հրամանատարական դիրքերը: Պարզ է ուրեմն, որ բիլինայի ծանօթ հերոսը՝ «մեծահարուստ վաճառական Սադկոն», իր տասներկուամեայ թափառումների ժամանակ բազմիցս հանդիպած պէտք է լինէր հայ վաճառականների եւ համագործակցէր նրանցից շատերի հետ նիւթական անսպառ միջոցների տէր դառնալու համար:

Մոսկուայի տնտեսական զարգացման համար կարեւորագոյն նշանակութիւն ունեցող միւս զարկերակի՝ Դնեպրեան մայրուղու հետ է կապուած բիլինաների վաճառական հերոսներից Ջուրիլա Պլենկովիչը: Սրա հայր Պլենկոն բիլինայի մէջ ուղղակի կոչուած է «սուրոժցի» ("старый Пленка Сароженин"):

Ակադ. Ա. Ն. Վեսելովսկին, որ 22 ամբողջական պատումների համադրութեամբ հանգամանօրէն ուսումնասիրել է Ջուրիլայի մասին բիլինան[2], անդրադարձել է նաեւ գլխաւոր հերոսների անուններին: Ջուրիլա անունը Կիրիլ-Կիւրեղ անուան ժողովրդական փոփոխակն է, իսկ նրա հօր՝ «սուրոժցի» Պլենկոյի անունը Վեսելովսկին, անշուշտ, նկատի ունենալով այն իրողութիւնը, որ Ղրիմի թերակղզու վաճառաշահ ափերը XIII-XIV դդ. գտնւում էին իտալացիների (Ջենովայի եւ Վենետիկի) տիրապետութեան տակ, արտածում է «ֆրանկ» (եւրոպացի, իտալացի) բառի հետ եւ, այդպիսով, իտալական ծագում է վերագրում բիլինաների այս հերոսներին: Հարկ չկայ այստեղ նորից անդրադառնալու «սուրոժցի» կոչուող վաճառականների ազգային պատկանելութեան մասին նախկինում արտայայտած տեսակէտներին, մանաւանդ, որ անձնանունների բանագրօսիկ այսպիսի բացատրութիւնները արդէն իսկ կասկածներ տեղիք են տուել ռուսական բանասիրութեան մէջ[3]:

Ջուրիլային վերաբերող բիլինայի մի այլ փոփոխակի մէջ, որ վերամշակուած պէտք է լինի ուշ ժամանակներում, «սուրոժցիների» մասին գտնում ենք ուշագրաւ այսպիսի տողեր.

1 "Древние российские стихотворения, собранные Киршею Даниловым", М.-Л., 1958, էջ 185, 231

2 **А. Н. Веселовский,** Южно-русские былины, V, Богатыри-сурожцы. Суровец Суздалец и Чурила Пленкович. "Сборник, отделения русского языка и словесности иператорской Академии Наук", том XXXVI, N 3, СПб., 1884

3 **А. И. Соболевский,** Заметки о собственных именах в великорусских былинах. "Живая Старина", вып. II, 1890, էջ 96

"Как жил на Руси
Суровец-молодец,
Суровец-богатырь, он Суроженин,
По роду города Суздаля,
Сын отца-гостя богатого"[1].

Այստեղ նրանք առնչւում են Սուզդալի հետ՝ միջնադարեան Ռուսաստանի նշանաւոր այն քաղաքի, որը, Վլադիմիր-Սուզդալեան իշխանութեան բարգաւաճման շրջանում միջազգային իր կապերով բացառիկ դիրք գրաւած լինելով, անտարակոյս ծանօթ էր «սուրոժցի» վաճառականներին[2]:

Ջուրիլա Պլենկովիչը ռուսական էպոսի հանրաճանաչ դէմքերից է: Ամբողջովին նրան է նուիրուած երկու գրոյց. դրանցից բացի, նա յիշատակուած է եւ այլ բիլինաներում: Առաջին գրոյցի մէջ Ջուրիլան ներկայացուած է որպէս մարտական ջոկատի պետ. այնքան բազմաթիւ են նրա կտրիճները, որ Կիեւի իշխանը, տեսնելով նրանց բազմութիւնը, կարծում է, թէ ժամանել է Ոսկէ Հորդայի խանը կամ որեւէ երկրից հզօր դեսպան.

"Едет ко мне король из Орды
Или какой грозен посол".

Գրոյցի մէջ յատուկ տեղ են գրաւում Ջուրիլայի ու նրա «սուրոժցի» հօր առանձնատան արդուզարդի, շքեղութեան եւ նրանց ունեցած մեծաքանակ թանկարժէք ապրանքների մասին պերճախօս տողերը: Ահա Ջուրիլան իջնում է խորունկ իր նկուղները, բացում է դուռը ոսկէ բանալիով եւ գանձեր է հանում Վլադիմիր իշխանին մատուցելու համար.

"Взял золоту казну
Сорок сороков черных соболей,
Другую сорок печерских лисиц,
И брал же камку белокрушету.
А цена камке сто тысячей,
Принес он к князю Владимеру".

Ջուրիլան հրաւիրւում է արքունիք: Ապրաքսեեա իշխանուհին յափշտակւում է Ջուրիլայի գեղեցկութեամբ եւ խնդրում ամուսնուց նրան անկողնապետի պաշտօնին կոչել: Վլադիմիր իշխանը զայրանում է այդ առաջարկից եւ դարձնում է նրան գզիր (зазыватель):

Պերճօրէն զարդարուած Ջուրիլան զբօսնում է Կիեւի փողոցներում, իր գեղեցկութեամբ գրաւում կանանց ուշադրութիւնը.

"Загляделись на Чуриву все люди-те:

1 "Летописи русской литературы и древности". изд. Н. Тихонравов, IV, М., 1862, էջ 12-14

2 Չի բացառուած, սակայն, որ Սուզդալի յիշատակութիւնն այստեղ ճետաամուտ մի յաւելում է, զուրկ իրական ու պատմական առնչութիւնների հիմքից: Այս կապակցութեամբ ակադ. Ա. Վեսելովսկին գրել է. "Суровец наших былин не что иное, как дублет к Сурожанину, Суровец-Суздалец, очевидно, тавтология, вторая часть которой была искажена или подновлена по созвучию с Суздалем, более известным в северном периоде нашего эпоса: Суздалец вместо Судалец, Согдалец: в одной песне он-богатого гостя заморении сын" (այլուր կոչուած են նաեւ купцы заморяне вавилоняне-Լ. Խ.), что едва ли идет к Суздалю, но быть может, не относится непосредственно и к Сурожу" (**А. Н. Веселовский,** նշւ. աշխ., էջ 70-71):

Где девушки глядят - заборы трещшат,

Где молодушки глядят-лишь оконенки звенят".

Երկրորդ զրոյցը հիմնականում նուիրուած է Չուրիլայի եւ մի ծեր վաճառականի՝ Բերմեատա Վասիլեւիչի[1] երիտասարդ կնոջ՝ գեղեցկուհի Կատերինայի սիրավէպին: Որոշ պատումներում այս զրոյցը ողբերգական վախճան է ունենում. խանդոտ ամուսինը սպանում է Չուրիլային:

Բիլինայի մի ուրիշ պատումի մէջ Չուրիլան (Шурилушка Щапленкович) ապրել ու գործել է ոչ թէ Վլադիմիր իշխանի ժամանակներում, այլ ծառայել է Լիտուայի թագաւորին, այսինքն՝ զրոյցն աղերսուել է պատմական այն ժամանակաշրջանին, երբ Կիեւը գտնւում էր Լիտուայի մեծ իշխանութեան տիրապետութեան տակ (1362-1471), եւ երբ կիեւահայ գաղութն ապրում էր իր զարգացման բարձրագոյն շրջանը: Այս պատումի համաձայն Չուրիլայի սիրավէպի կին հերոսուհին Լիտուայի թագաւորի դուստրն է. Չուրիլան պարծենում է իր սիրային կապով արքայադստեր հետ, բռնւում է յանցանքի մէջ եւ պատժւում[2]:

Չուրիլայի հօր՝ Պլենկոյի «սուրոժցի» վաճառական լինելու հանգամանքն ինքնին մի կռուան է բիլինաների այս հերոսին Կիեւի հայկական գաղթօջախի եւ Կիեւում բնակութիւն հաստատած «սուրոժցի» հայ վաճառականների հետ շաղկապելու համար: Թւում է, սակայն, որ կան աւելի հիմնաւոր հիմքեր այսպիսի ենթադրութեան:

Ասացինք արդէն, որ Չուրիլան առաջին զրոյցի մէջ ասպարէզ է իջնում որպէս մեծահարուստ վաճառական, բայց միաժամանակ իր հրամանի ներքոյ ունի քաջ երիտասարդներից բաղկացած մարտական մի ջոկատ: Նախորդ էջերում մենք արդէն անդրադարձել ենք Սիմէոն Լեհացու «Ուղեգրութեան» այն նշանաւոր տողերին, որոնց համաձայն կիեւահայութիւնը գաղթօջախի շէն տարիներին թշնամու դէմ կռուի է հանել 500 արի դիւցազունների («յորժամ սէֆէր լինէր, հինգ հարիւր հոգի կելէր հայոց ի պատերազմ եարաղ պահատուրնի»)[3]: Նրանք, անշուշտ, խաղաղ օրերին իրենց հրամանատարների գլխաւորութեամբ երբեմն դուրս էին գալիս քաղաքամերձ տարածութիւնները, զբաղւում որսորդութեամբ, զինավարժութիւններով, կերուխումով: Պատմական հէնց այսպիսի իրողութիւնների յիշատակներ են պահպա-

1 Այս վաճառականի անունը բիլինայի տարբեր պատումներում տարբեր տառադարձութեամբ է ներկայացուած՝ Бермята, Пермяна, Бурмяна, Вельма, Берма, Ерма եւ այլն (տե՛ս **А. Н. Васильевский**, նշւ. աշխ., էջ 103):

Հետեւելով Ա. Վասիլեւսկու օրինակին, որը Պլենկո անունը առնչելով «փռանկ» էթնիկական անուան հետ, Չուրիլային եւ նրա հօրը իտալական ծագում է վերագրում, մենք եւս կարող էինք այս վաճառականի անուան փոփոխակների հիման վրայ վերականգնել նրա նախկին ձեւը "Вермяна" (ուկրաիներէն՝ «հայ») ձեւով, եւ նրան հայկական ծագում վերագրել: Սակայն կարծում ենք, որ անձնանունների այս կարգի մեկնաբանութիւնների պատմական հիմքերը շատ խախուտ են:

Ըստ Ա.Սոբոլեւսկու (տե՛ս «Живая старина», вып. II, էջ 103) այս վաճառականի անուան նախնական ձեւը պէտք է եղած լինի Բերնեատա՝ Բերն անուան փաղաքշական փոփոխակը:

2 И услыхали тут короля да литовского,
А слуги ведъ да и верные,
Да сковали-то ему да ножки резвыи,
И завесили ему да очи ясныи,
И хочут вести на поле Куликовое
(**А. Ф. Гильфердинг.** Онежские былины, II, М.-Л., 1950, էջ 359-364)

3 «Սիմէոնի դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 347-348

նուած Չուրիլա Պլենկովիչի բիլինայի մէջ:

Երբ Վլադիմիր իշխանը, Պլենկոյի շքեղ տանը հիւրընկալուելիս պատուհանից տեսնելով տանը մօտեցող մեծ ջոկատը, զարմանքով հարցնում է, թէ՝ ովքե՞ր են նրանք, «սուրոժցի» Պլենկոն հանգստացնում է իշխանին՝ ասելով. «Նրանք թշնամիներ չեն, այլ իր որդի Չուրիլայի ջոկատն է».

"Изволь ты, осударь, Владимир-князь со княгинею

И со всеми своими князи и бояры кушати!

Что-де едет не король из Орды

И не грозен посол,

Едет-те дружина хоробрая сына моего

Молода Чурила сына Пленковича"[1]:

Չուրիլայի կերպարի միւս կարեւոր կողմը՝ պճնասիրութիւն, կնամեծարութիւն, թեթեւ ժամանցի հակամէտութիւն, նոյնպէս բնորոշ է միջնադարեան քաղաքների առեւտրա-արհեստագործական դասի երիտասարդ ներկայացուցիչների համար:

Ինչ վերաբերում է կիեւահայութեանը կամ Կիեւ այցելող հայ վաճառականներին, ապա այդ հանգամանքը որոշակիութեամբ արտացոլուել է 1494 թ. իշխանական մի հրովարտակի մէջ, որով դրամական տուգանք է սահմանուել այն հայ վաճառականների համար, ովքեր, խախտելով քաղաքի սովորոյթները, կապեր կհաստատէին միայնակ կանանց հետ, այլ խօսքով՝ կբռնուէին անբարոյական արարքների մէջ[2]:

Տասնեակ այդպիսի դէպքեր պէտք է եղած լինէին նման հրովարտակի անհրաժեշտութիւնը նախապատրաստելու համար: Եւ Չուրիլա Պլենկովիչի պարագան (ծեր վաճառականի երիտասարդ կնոջ կամ Լիտուայի իշխանի դստեր հետ սիրային կապեր ունենալը, իշխանուհի Ապրակսեեւնային դուր գալը եւ այլն), ըստ երեւոյթին, հեռաւոր մի վերյուշ է պատմական ինչ-որ իրողութեան, որն աւարտուել է «սուրոժցի» երիտասարդ վաճառականի սպանութեամբ:

Այսպիսով, կարելի է եզրափակել հին Մոսկուայի հայկական գաղութի պատմութեան մասին մեր ուսումնասիրութեան արդիւնքները՝ արձանագրելով, որ «սուրոժցի» կոչուող հայ վաճառականներն այնքան նշանակալից դեր են կատարել Մոսկուայի ու Կիեւի տնտեսական ու մշակութային կեանքի տարբեր ոլորտներում, որ ժողովրդական երգիչները յօրինել են նոյնիսկ նրանց կեցութեան ու բնաւորութեան որոշ գծերով օժտուած հաւաքական կերպարներ, որոնք իրենց պատուաւոր տեղն են գրաւել ռուսական միջնադարեան վիպական լաւագոյն ստեղծագործութիւնները հանդիսացող բիլինաների մէջ:

* * *

Աշխարհագրական մեծ գիւտերը, որ ծայր առան XV դ. վերջին տարիներին եւ յաջորդ դարի ընթացքում, յեղափոխիչ դեր կատարեցին ողջ մարդկութեան համար, իրենց անմիջական անդրադարձն ունեցան նաեւ Մոսկովեան պետութեան տնտեսական կեանքի վրայ.

1 "Древние российские стихотворения", էջ 114

2 "Акты, относящиеся к истории западной России", т. I, СПб, 1848, էջ 194, 195. հմմտ. Д. М. **Мышко**, նշւ. աշխ., էջ 118

Միջազգային հաղորդակցութեան դարաւոր աւանդոյթներ ունեցող մայրուղիները կամ կորցրեցին իրենց երբեմնի դերը՝ դարձան տեղական նշանակութիւն ունեցող ճանապարհներ, կամ էլ, նոր ոգի ու բովանդակութիւն ստանալով, դուրս եկան հին ու անձուկ սահմաններից, ձգուեցին դէպի նոր աշխարհամասեր:

«Սուրոժցի» վաճառականների կենսական զարկերակը լիարիւն սնունդ էր ստանում Ղրիմի ակունքներից, իսկ Ղրիմի վրայով անցնող ճանապարհներն էին հէնց, որ կորցրին իրենց վիթխարի միջազգային նշանակութիւնը, ուստի եւ՝ կարեւոր դերը Մոսկուայի տնտեսական կեանքի զարգացման համար: Սակայն խնդիրը միայն ճանապարհների փոփոխութեան հետ չէր առնչւում: Փոփոխուել էին ժամանակներն ըստ ամենայնի: Բաժնետիրական ժամանակաշրջանի ծնունդ հանդիսացող «սուրոժցի» վաճառականը, որը, ինքնուրոյն ձեռներէցութեամբ յաղթահարելով ֆեոդալական մասնատուածութեան արդիւնք հանդիսացող հազար ու մէկ սահմանափակութիւններ, ամէն քայլափոխի զանազան մաքսատուրքեր վճարելով, Մոսկուա էր հասցնում մի քանի բեռ արեւելեան ապրանքներ ու դրա դիմաց օտար երկրներ արտահանում Ռուսաստանի արտաքին առեւտրի նիւթերը, այլեւս չէր կարող քայլ պահել ժամանակի հետ: XVI դ. կէսերից Հիւսիսային եւ Սպիտակ ծովերի վրայով Ռուսաստան էին ներթափանցել արդէն անգլիացի վաճառականները, որոնք փորձում էին իրենց տնտեսական գերիշխանութիւնը հաստատել Կասպ-Վոլգեան հին մայրուղու վրայ, մէկ ծայրից միւսը՝ Իրանից սկսած մինչեւ Հիւսիսային Եւրոպայի երկրներ: Այս ճանապարհի հին բաժնետէրերը՝ հայ վաճառականները, կամ պէտք է դուրս գային ասպարէզից, կամ էլ, յամառ պայքար մղելով իրենց մրցակիցների դէմ, պէտք է բարձրանային նրանց աստիճանին, ընդարձակէին իրենց գործունէութեան շրջանակները, օգտուէին վարկի նոր եղանակներից, շաղկապէին առեւտուրը արտադրական գործունէութեան հետ:

Նոր ժամանակի առաջադրած այդ խնդիրները յաջողութեամբ լուծեցին «սուրոժցի» կոչուող հայ վաճառականներին յաջորդած «ջուղայեցի» հայ վաճառականները: 1667 թ. մայիսի 31-ին Ջուղահայ առեւտրական բուրժուազիայի լիազօր ներկայացուցիչների եւ մոսկովեան պետական պաշտօնեաների մէկ տարուց աւելի տեւած բանակցութիւնները պսակուեցին յաջողութեամբ: Կնքուեց այն նշանաւոր պայմանագիրը, որի զօրութեամբ Ջուղահայ վաճառականները (յետագայում այն տարածուեց նաեւ այլ վայրերից Ռուսաստան այցելող հայ վաճառականների վրայ) իրաւունք էին ստանում արտօնեալ պայմաններով Ռուսաստանում առեւտուր անելու, Ռուսաստանի վրայով եւրոպական երկրներ արտահանելու հում մետաքս եւ անդրկովկասեան երկրներից ու Իրանից բերուող այլ ապրանքներ: Այս պայմանագիրը շրջադարձային նշանակութիւն ունեցաւ ոչ միայն հայ-ռուսական տնտեսական կապերի յետագայ ընդարձակման եւ Ռուսաստանի քաղաքներում դարերից ի վեր գոյութիւն ունեցող հայկական համայնքների բարգաւաճման համար:

Օտար լծի տակ կեղեքուող հայ ժողովրդի զոյգ հատուածների առաջադէմ ներկայացուցիչները, աւելի սերտ տնտեսական կապեր հաստատելով Ռուսաստանի հետ, յանգեցին միակ ճիշտ այն եզրակացութեանը, որ ռուսական հզօր պետութիւնն է քաղաքական այն ուժը, որն ի վիճակի է օգնելու հայ ժողովրդին իր հայրենի երկրի ազատագրութեան համար մղուող պայքարում: Եւ այսպէս, հարիւրամեակների պատմութիւն ունեցող տնտեսական ու մշակութային կապերն ու առնչութիւնները վերաճեցին, հզօրացան եւ քաղաքական բովանդակութիւն ստացան: Դրան զուգընթաց սկսուեց Մոսկուայի հայ գաղթօջախի պատմութեան նոր դարաշրջանը՝ հարուստ հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութիւնը զօդող փաստերով եւ տնտեսական կապերի նոր դրսեւորումներով, որոնք արժանի են հանգամանալից ու խորազնին ուսումնասիրութիւնների:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ XVI-XVII ԴԱՐԵՐՈՒՄ*

Սելջուկեան աշխարհաւեր արշաւանքների ժամանակներից սկսած՝ հայ աշխատաւոր ժողովրդի հոծ զանգուածներ ստիպուած են եղել հեռանալ իրենց հայրենի երկրից եւ համեմատաբար տանելի կեանքի ու ապրուստի պայմաններ գտնելու յոյսով թափառել օտար հորիզոններում:

XI դ. սկսած՝ ուկրաինական հիւրընկալ երկիրը, բարենպաստ պայմաններ ստեղծելով խռպառ բռնաջնջումից փրկուելու տենչով Հայաստանից արտագաղթող աշխատաւորների համար, դառնում է հայկական մարդաշատ ու նշանաւոր գաղթավայրերից մէկը: Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած հայերը ստեղծագործ աշխատանքով ակտիւ դեր են կատարում երկրի տնտեսական ու քաղաքական կեանքում, զարգացնում են իրենց բազմադարեայ մշակոյթը նոր պայմանների բարերար ազդեցութեան ներքոյ եւ շարունակում են պահպանել իրենց կապը մայր հայրենիքի հետ:

Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում ընդարձակւում ու մեծանում են յաջորդ դարերի ընթացքում եւ մայր երկրից քաշում են դէպի իրենց՝ աւելի ու աւելի մեծ թուով արտագաղթողների, որոնք իրենց նախորդների օրինակով, հայրենի երկրին հասած նոր արհաւիրքների տարիներին, մասսայաբար թողնում են իրենց տունն ու տեղը եւ, յաղթահարելով մեծ արգելքներ, իրենց խարիսխն են ձգում ուկրաինական հողում:

XIII դ. յետոյ հին ռուսական երկրների թուլացման հետեւանքով (որը նշանակալից չափով արդիւնք էր թաթարա-մոնղոլական խաների նուաճումների), ուկրաինական հողերը, անջատուելով հիւսիսարեւելեան Ռուսաստանից, մանատւում եւ աւար են դառնում լիտուական, լեհական եւ հունգարական ֆեոդալների, սուլթանական Թիւրքիայի եւ Ղրիմի խանութեան համար:

XIV դ. Ուկրաինայի մեծ մասը զաւթում է պանական Լեհաստանը:

Վատիկանի օգնութեամբ լեհ պաները ձգտում են ամենադաժան միջոցներով կաթոլիկութիւն տարածել Ուկրաինայում եւ լեհականացնել ուկրաինական ժողովրդին: Նոյն քաղաքականութեան զոհ են դառնում նաեւ Ուկրաինայում հաստատուած հայերը:

Պատմական սկզբնաղբիւրները հաղորդում են ուշագրաւ տուեալներ Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած հայերի ծանր վիճակի եւ ուկրաինական ժողովրդի ազատագրական մարտերին ցուցաբերած նրանց համագործակցութեան ու ակտիւ համակրանքի մասին:

Այդ փաստերի վերհանումը եւ ուկրաինահայ գաղթավայրերի պատմութեան շարադրումը կարեւոր մի աշխատանք է, որը նպաստելու է հայ-ռուսական եւ հայ-ուկրաինական բարեկամական դարաւոր կապերի գիտական գնահատման շահեկան գործին:

---

* [Հայկ. ՍՍՌ. ԳԱ, «Տեղեկագիր», 1954, էջ 4, էջ 45-80: Յօդուածի համառօտուած ռուսերէն տարբերակը տե՛ս Л. С. **Хачикян,** Новые материалы о древней армянской колонии Киева, в сб. "Исторические связи и дружба украинского и армянского народов", Е., 1961, с. 110-120.]

Այս համառօտ ակնարկի համեստ նպատակն է՝ ընդհանուր գծերով կանգ առնել միայն ուկրաինահայ գաղթավայրերի պատմութեան ամենանշանակալից դրուագների վրայ՝ ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական մարտերի ժամանակաշրջանում[1]։

Ուկրաինայում հայկական գաղթավայրերի սկզբնաւորման պատմութիւնը մշուշապատ է։ Պահպանուել է քննութեան կարօտ մի վկայութիւն այն մասին, որ դեռեւս 1009 թ., ռուս իշխանները դիմել են իրենցից ոչ հեռու հաստատուած ինչ-որ հայերի՝ միասին դուրս գալու համար Բոլեսլաւ Քաջի (992-1025) դէմ[2]։

Լուրջ կասկածներ է յարուցում նաեւ 1062 թ. Կիեւի մեծ իշխան Թէոդոր Դիմիտրեւիչի կողմից հայերին շնորհուած հրովարտակը[3]։ Այնուամենայնիւ, XI գ. երկրորդ կէսում Կիեւում հայկական գաղութի առկայութիւնը հաւաստում է կարեւոր մի վկայութեամբ, որի արժանահաւատութեան մասին տարակուսանքներ չեն կարող ծագել։

Կիեւ-Պեչորեան վանքի Հարանց վարքի (Патерик) մէջ տեղ է գտել մի գրուածք հետեւեալ խորագրով. "Житие преподобного отца нашеге Агапита, врача безмездного, иже исцеляще молитвою недужных, подая тем зелие от своего брашна, и Арменина врача спасе".

Այստեղ որոշակի կերպով ասուած է, որ XI գ. վերջերին Կիեւում կային հայեր, որոնցից մէկը նշանաւոր էր որպէս հմուտ ու ճարտար բժիշկ. "Быть же в то время в граде Киеве врач некто, родом и верою Арменин, хитр зело во врачевании, яко прежде того не быти таковому"[4]։

Կիեւում հաստատուած հայերի մասին վերոյիշեալ տուեալը իր հաստատութիւնն է գտնում հին ռուսական հնագոյն գրական յուշարձաններից՝ Բորիսի եւ Գլեբի վարքի մեզ հասած հայկական թարգմանութեան մէջ։ Ուշագրաւ են այդ վարքի թարգմանութեան հանգամանքները, որոնք նոյնպէս խօսում են Կիեւում հաստատուած հայերի եւ Հայաստանի հետ ունեցած նրանց աշխոյժ կուլտուրական կապերի մասին։

Վարքի թարգմանութեան մէջ պատմուած է, որ «Եւ են այլ սքանչելիք սրբոցն (Բորիսի եւ Գլեբայ), գրեալ ի կատարեալ պատմութիւնն իւրեանց. եւ կատարին նշանս մինչեւ ցայսօր, որոյ բազում ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ պատմեն մեզ»։

---

1 [Հարցն այժմ մենագրօրէն ուսումնասիրուած է. տե՛ս **Я. Г. Дашкевич,** Армянские колонии на Украине в источниках и в литературе XV-XIX веков, Ереван, 1962։ **В. Р. Григорян,** История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии) Ереван, 1980]

2 **Л. Меликсет-Бек,** Древняя Русь и Армения (отдельный оттиск из первого тома "Сборника трудов" ин-та языка АН Арм. ССР), 1946, с.138

3 Պրոֆ. Ի. Ա. Լիննիչենկոն իր "Черты из истории сословий Юго-западной (Галицкой) Руси XIV-XV вв." աշխատութեան մէջ, ելնելով այն բանից, որ 1062 թ. Կիեւում Թէոդոր Դիմիտրեւիչ անունով մեծ իշխան չի եղել, ենթադրում է, որ այդ հրովարտակը կարող է շնորհուած լինել Վոլինի իշխան Թէոդոր Լիւբարտովիչի (Լիւբարտի քրիստոնէական անունը եղել է Դիմիտրի) կողմից։ Վերջինս վախճանուել է 1414 թ.։ Կայ վկայութիւն այն մասին, որ նա դաւանաբանական հարցերով վէճի է բռնուել Կիեւի հայերի հետ (տե՛ս Ի. Ա. Լիննիչենկոյի աշխատութինից արուած քաղուածքը՝ տպագրուած Մոսկուայում լոյս տեսած «Հանդէս գրականական եւ պատմական» պարբերականի V գրքում, 1894, էջ 341-342)։ Լ. Ս. Խաչիկեանը յետագայում վերանայել է իր կասկածը։ Տե՛ս նրա՝ «Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուա տանող ճանապարհների վրայ», «Բանբեր Մատենադարանի», N 13, էջ 35։]

4 **Л. Меликсет-Бек,** ук. соч., с. 122

Վարքի թարգմանութիւնը մուտք է գործել հայկական «Յայսմաւուրքի» տէր Իսրայէլի կատարած խմբագրութեան մէջ, որն աւարտուած պէտք է լինի 1251 թ. առաջ (աշխատանքը կատարուած է Վանական վարդապետի յանձնարարութեամբ, իսկ վերջինս մահացել է այդ թուականին)։ Պարզ է ուրեմն, որ մինչեւ 1251 թ. «Բազումք ի մերոյ աշխարհէս», այսինքն՝ Հայաստանից[1] եղել են Կիեւում եւ ապա պատմել են թարգմանչին կամ խմբագրողին Բորիսի ու Գլեբի վարքի եւ «հրաշագործութիւնների» հետ կապուած պատմութիւններ, որոնց մասին նրանք լսել են Կիեւում։

Որքա՞ն է եղել Կիեւում հաստատուած հայերի թիւը, ինչո՞վ են նրանք զբաղուել եւ ի՞նչ սկզբունքով է կազմակերպուած եղել այդ համայնքը, մենք չգիտենք։ Այդ մասին սկզբնաղբիւրները համր են։

Յայտնի է սակայն, որ հայերը այնքան են բազմացել Կիեւում եւ շրջակայքում, որ Հայ եկեղեցին անհրաժեշտ է գտել ստեղծել այնտեղ յատուկ եպիսկոպոսական թեմ՝ ընդարձակ իրաւասութիւններով։

Այս մասին տուեալներ կան XVII գ. երկրորդ կէսին ուկրաինահայ գաղութում գործող Հռոմի գործակալ, ֆանատիկ քարոզիչ Ալոյսիոս Պիդուի «Կարճառօտ տեղեկութիւնք զարգի վիճակէ, զսկզբանէ եւ ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ եւ մերձակայ աշխարհաց...» գրքում։ Նա յայտնում է, որ «զԿիեւ ասեն լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին Հայոց, ուր անոր պատրիարք կոչէր արքեպիսկոպոսն եւ էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին... այլ եւ իրաւունս ունէր ձեռնադրելոյ եպիսկոպոսունս»[2]։

Մոնղոլների կողմից Կիեւի գրաւումից եւ նրա տնտեսական ու քաղաքական դերի նուազումից յետոյ կիեւեան հայկական գաղութը անշքանում է։ Այստեղից մեծ թուով հայեր գաղթում են Ուկրաինայի արեւմտեան շրջանները՝ յատկապէս Գալիցիա-Վոլինեան իշխանութեան սահմանները։ Այնուամենայնիւ, յետագայ դարերում եւս Կիեւի հայկական գաղութը շարունակում է իր կիսակենդան գոյութիւնը. XVII գ. կէսերից կայ վկայութիւն այն մասին, որ Կիեւում գոյութիւն ունէր հայկական մի եկեղեցի փոքրաթիւ թեմով[3]։

Գալիցիա-Վոլինեան իշխանութեան սահմաններում եւ, ընդհանրապէս, Աջափնեայ Ուկրաինայում հայկական գաղթավայրերի ստեղծման պատմութիւնը նոյնպէս կարօտ է յատուկ քննութեան։

Յայտնի է, որ 1183 թ. Լուովում հաստատուած հայերը կառուցում են փայտաշէն մի եկեղեցի, որը յետագայում, 1363 թ., դարձնում են քարաշէն[4]։

Վաղ ժամանակներից հայկական գաղութ է հաստատւում նաեւ Լուցկ քաղաքում։ XVII գ. սկզբի հեղինակ Սիմէոն Զամոստեցին իր մեծարժէք «Ուղեգրութեան» մէջ, որի հետ առիթ

---

1 Պրոֆ. Լ. Մելիքսէթ-Բեկը առանց բաւարար հիմքի կարծում է, որ «մերոյ աշխարհէս»-ի տակ պէտք է հասկանալ «Բիւզանդիա», որովհետեւ, իբր, այդ վարքը պէտք է թարգմանուած լինի ոչ թէ ռուսական բնագրից, այլ ինչ-որ յունարէն թարգմանութիւնից (տե՛ս նշւ. աշխ., էջ 130)։ Մեր կարծիքով վարքի հայերէն թարգմանութեան առաջին ուսումնասիրող Մ. Էմինը այս հարցում աւելի ճիշտ դիրքի վրայ էր կանգնած։

2 «Բանի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ, ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16

3 Նոյն տեղում, էջ 15

4 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 104

կունենանք ի մօտոյ ծանօթանալու, յիշատակում է, որ՝ «Առաջին Լուցքան ՈՃ (800) տուն էր գեղեր, ագարակնի ունէր եւ շատ վախֆք, եւ անդ էր յառաջն աթոռ (եպիսկոպոսութեան)»[1]:

Սիմէոնի ժամանակ, սակայն, Լուցկի 800 տնից կազմուած հայկական գաղութից մնացել էր միայն «երկու տուն հայի»[2]:

Հայկական հնագոյն գաղթավայր էր հաստատուած նաեւ Մանքերման (Ակկերմա՞ն) քաղաքում: Պատերազմի ժամանակ Մանքերմանի հայերը հնարաւորութիւն ունէին կռուի դաշտ հանելու 500 ռազմիկներ. «Յորժամ սէֆէր լինէր՝ հինգ հարիւր հոգի կելէր հայոց ի պատերազմ»,- յայտնում է նոյն Սիմէոնը Մանքերմանի անցեալի մասին եւ վշտով արձանագրում, որ «այժմ չորս տուն հայի մնացել է»[3]:

XIII դ. հայերը բնակութիւն են հաստատում նաեւ Վլադիմիր քաղաքում[4], Կամենեց-Պոդոլսկի շրջակայքում, ուր հիմնում են երկու գիւղ՝ Армяне եւ Армянки անուններով[5], իսկ այնուհետեւ նաեւ Արեւմտեան Ուկրաինայի մի շարք այլ քաղաքներում եւ քաղաքատիպ վայրերում: Ուշագրաւ է, որ օտար հարստահարիչների տիրապետութեան տակ գտնուող ուկրաինական հողերը հայերի տեսանկիւնից միշտ էլ դիտուել են որպէս ռուսական «ի գաւառն ըռգաց, որ այժմ տիրեն Լեհք». այդպէս է կոչում իր նոր հայրենիքը Սիմէոն Զամոստիեցին (Լեհացին):

1364 թ. Հայ եկեղեցին ուկրաինահայ գաղութի հոգեւոր գործերի կառավարման համար ստեղծում է նոր թեմ, որը պէտք է հովուէր Լուով, Վլադիմիր (Ալոտեմիր) եւ Լուցկ քաղաքներում ու շրջակայ վայրերում հաստատուած հայերին: Նորաստեղծ այդ թեմի վրայ կարգուած եպիսկոպոսը (առաջինն այդ աթոռի վրայ եղել է Գրիգոր անունով մէկը) կոչւում է «Արքեպիսկոպոս Հայոց Լուովի եւ ամենայն Ռուսաց եւ Վլախաց (Մոլդաւիայի)»: Ինչպէս պարզ երեւում է, այստեղ եւս այդ եւ Ուկրաինայի հայաշատ միւս քաղաքները դիտուած են որպէս ռուսական քաղաքներ: Նշենք դրանցից կարեւորները՝ Յազլովեց, յայտնի է եղել ամէն տարի փետրուարի վերջերին բացուող իր տօնավաճառով, «յոր ժողովին բազմութիւն հայոց յարեւմտից»[6], Յարոսլաւ, Սնետին, Ստուգենց, Ռաշկով, Ստանիսլավով, Զամոստիե, Գալիչ, Պոդհայցի, Բրոտի, Ժուանեց, Գորոդենկա եւ այլն[7]:

Նշուած հայկական գաղթավայրերից Ուկրաինայի հայերի տնտեսական ու մշակութային կեանքում XVI-XVII դդ. առաջնակարգ դեր կատարեցին երկուսը՝ Լուովը (աղբիւրներում կոչւում է Իլով, Լով, Լեոպոլիս, Լեմբերգ) եւ Կամենեց-Պոդոլսկը:

Կամենեցի հայերը 1344 թ., իսկ Լուովինը՝ 1356 թ., արդէն պետական որոշ առանձնաշնորհումներ էին ստացել եւ իրենց դատական գործերում ինքնավար էին: XIV դ. վերջից

1 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, հրտ. Ն. Ակինեան, «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 170

2 Ա. Պիղուն նոյնպէս յայտնում է, որ «Զկնի կիսի Լուցք կարեւոր է արքեպիսկոպոսութեանն Հայոց, այլ զարդիս գրէաթէ ոչ ոք ի Հայոց բնակէ անդ»:

3 «Ուղեգրութիւն», ՀԱ, 1939, էջ 170

4 Ի. Ա. Լիննիչենկո, Լեհաստանի եւ Արեւմտեան-Հարաւային Ռուսիայի հայերը («Հանդէս գրականական եւ պատմական»), հինգերորդ գիրք, 1894, էջ 342

5 Е. К. Колонизация армян в Юго-западной России, Каменец-Подольск, 1903, с. 2

6 Ա. Պիղու, նշւ. աշխ., էջ 15

7 Հմմտ. Ա. Պիղու, Մ. Բժշկեան, Ի. Ա. Լիննիչենկո եւ այլն:

սկսած՝ Լուովն ու Կամենեցը Կրակովի հետ միասին խոշոր դեր էին կատարում մի կողմից՝ գերմանական եւ լեհական պրովինցիաների եւ միւս կողմից՝ Ուկրաինայի, Մոլդաւիայի, Վալախիայի, ինչպէս եւ Թիւրքիայի եւ մոնղոլական խանութիւնների միջեւ կատարուող աշխոյժ առեւտրում:

Առեւտրական ճանապարհները Լեհաստանից Լուովի եւ Կամենեցի վրայով անցնում էին հարաւ, դէպի Սուչաւա, հարաւ-արեւելք, Դնեստրի վրայով՝ դէպի Բելգրադ, ինչպէս եւ դէպի թաթարական տիրոյթները:

Արտահանուող ապրանքների մէջ կարեւոր տեղ էին բռնում մահուդէ գործուածքները, քաթան, թաւիշ, գլխարկներ, գօտիներ, ապա սրեր, թրեր, դանակներ, մանգաղներ, փերանդիներ, սրաքարեր, ցինկէ ամանեղէն եւ այլն: Ներմուծւում էին արեւելեան համեմունքներ՝ պղպեղ, կոճապղպեղ (ИМБИР), խունկ, լիմոն, ապա մետաքսեայ եւ բամբակեայ զանազան գործուածքներ, թամբի կաշի, ինչպէս եւ Աջափնեայ Ուկրաինայից՝ խոշոր եւ մանր եղջերաւոր անասուններ, մորթիներ, բուրդ եւ այլն: Հունգարիայից ներմուծւում էին ձիեր, արծաթ, մոմ եւ այլն: Ներմուծուող ապրանքների մեծագոյն մասը սպառւում էր ոչ թէ տեղական շուկաներում, այլ արտահանւում էր դէպի Արեւմտեան Եւրոպայի այլ երկրներ[1]:

XV դ. երկրորդ կէսից ուկրաինական գիւղատնտեսական շուկան աւելի խոշոր նշանակութիւն է ստանում: Ուկրաինական հացը, անասունները, անտառանիւթը Գալիցիայի վրայով սկսում են արտահանուել դէպի Կենտրոնական Եւրոպայի շուկաները եւ գետերի վրայով՝ դէպի բալթիական նաւահանգիստները:

Այս առեւտրի մէջ կարեւոր դեր էին կատարում նաեւ Ուկրաինայի քաղաքներում հաստատուած հայերը:

Յատկապէս մեծ էր հայերի դերը արեւելեան ծագում ունեցող ապրանքների ներմուծման գործում: Պրոֆ. Ի. Ա. Լիննիչենկոն, յենուելով Վ. Լոզինսկու հրատարակած նիւթերի վրայ, նկատում է, որ՝ «Հարաւային Ռուսաստանում եւ Լեհաստանում այն աստիճանի սովոր էին տեսնել հայերին արեւելեան ապրանքների վաճառորդների մենաշնորհային դերում, որ մի ամբողջ շարք արեւելեան այդպիսի ապրանքներ կրում էին ուղղակի «հայկական ապրանք» անունը»[2]:

Մեզ արդէն ծանօթ Սիմէոն Զամոստիեցին, XVII դ. առաջին կէսին ծանօթանալով Լուովի հայկական գաղութի կեանքին, յայտնում է, որ այստեղ հաստատուած հայ խոշոր առեւտրականներն իրենց գործակատարներն ունեն Կ. Պոլսում, Անկարայում, Սպահանում, Մոսկուայում, Գդանսկում, Պորտուգալիայում եւ այլ վայրերում: Լսենք նրան.

«Իսկ քաղաքացիքն (Լուովի)՝ պերճ փառաւոր, փարթամ եւ փառաւորք որպէս գիշխանս, պարթեւք եւ ազնաւորք, զգեստ ունին մեծագին, քամխայ, սօֆ, սկառլաթ, չուխայ եւ սամուր, զտակ խատիֆայ: Ոմանք ունէին գիւղք, այլք՝ ագարակ եւ աւանս, բայց այժմ չունին, զի անցեալ են տեարքն եւ գեղքն այլոց մնացեալ, բայց անուանք հայոց դեռ կան ի վերայ գիւղիցն...: Եւ չկայ մէջ նոցա արուեստաւորք, այլ ամէնքն վաճառականք են, մեծ եւ անուանիք, ունին եւ վէքիլնի՝ Ստապոլ, Անկուրի, Սպահան, Մոսքով, Կտանսք, Պորթուկալ եւ այլն. կան ի մէջ նոցա խոճայք, որ ունին ԾՌ (50000), ԿՌ (60000), ՁՌ (80000), ՃՌ (100000) դու-

1 Город Коменец-Подольск, исторические описание св. Е. Социнского, Киев, 1985, с. 223-226

2 Օգտուել ենք միջնորդութեամբ Լ. Մելիքսեթ-Բեկի: Տե՛ս Древняя Русь и Армения, с. 113:

առուշ կամ աւելի: Ունին մուլքեր, պաղ եւ պաղչանի, պտղատու ծառեր, պարտէզք, բուրաստանք, ծաղկաստան եւ վարդենիք, այլ եւ բարձր սարայք, ղարպասանի եւ աղբերք յորդաբուխք. եւ լիճք ի մէջն մեծ եւ լայն, լի ձկամբ. զոր ոմանք եւ աշտարակք եւ սարայնի ունին ի վերայ ջրոյն զարմանաշէն» եւ այլն[1]:

Որպէս հայ գաղթականների բնակատեղի, անշուշտ, Լւովից աւելի մեծ նշանակութիւն ունէր Կամենեց-Պոդոլսկը: Լւովի հայկական գաղութը, առկայ տուեալների համաձայն, 70-ից աւելի հայ տուն չի ունեցել: 1407 թ. Լւով քաղաքի պարիսպներից ներս հաշւվում էր ընդամէնը 63 հայ տուն[2]: 1575 թ. նոյնպէս 60-ից չի անցնում Լւովի հայ ընտանիքների թիւը[3]: Համարեա նոյն վիճակն ենք տեսնում նաեւ XVII դ. սկզբներին: Սիմէոն Զամոստեցին յայտնում է, որ «Կայր Քաղաքն եօթանասուն տուն հայի, ամէն տուն երկու-երեք տանուտէր»[4]:

Այնինչ Կամենեցում 1575 թ. ապրում էր աւելի քան 300 հայ ընտանիք[5]: Կայ նաեւ տեղեկութիւն այն մասին, որ հայ ընտանիքների թիւը այստեղ հասել է նոյնիսկ մինչեւ 1200-ի, քաղաքի տներից մօտ 900-ը պատկանել է հայերին[6]:

Թուական այս տուեալները, անշուշտ, ստատիկ վիճակ չէին ներկայացնում, այլ ենթակայ էին յաճախակի փոփոխութիւնների: Գաղթավայրերի բնակչութիւնը մերթ աւելանում էր թիւրքական ու պարսկական բարբարոս լծի տակ կեղեքուող հայ աշխատաւորների հաշուին եւ մերթ էլ պակասում լեհական իշխանութիւնների բռնութիւններից ու կամայականութիւններից, ինչպէս եւ թիւրքական ու թաթարական արշաւանքների սարսափից:

Այսպէս, օրինակ, 1413 թ. Թիւրքիայից եւ այլ վայրերից Մոլդաւիա գաղթեց 3000 հայ ընտանիք: Սրանք հաստատուեցին Սուչաւայում եւ այլ քաղաքներում, մի մասը, սակայն, յետագայում գաղթեց Լւով:

Փոքր Ասիայից հայկական նոր գաղթարշաւ սկսուեց դէպի Աջափնեայ Ուկրաինա XVI դ. վերջին եւ XVII դ. սկզբին՝ Ջալալիների ապստամբութեան կապակցութեամբ:

Գաղթողներից շատերը՝ յատկապէս Թոխաթցի հայերն, անցան Մոլդաւիա, Ղրիմ, Արեւմտեան Ուկրաինա եւ այլ երկրներ: Գաղթականութեան այս նոր հոսանքը որոշ աշխուժութիւն մտցրեց ուկրաինահայ գաղթավայրերի մշակութային ու տնտեսական կեանքում, շատացաւ հայերէն լեզուով խօսողների թիւը, հրապարակ եկան մի շարք մշակոյթի գործիչներ ու բանաստեղծներ եւ այլն:

Ուկրաինահայ գաղթավայրերի բնակչութիւնը յատկապէս Կամենեց քաղաքում հսկայական չափով նուազեց թիւրքական կարճատեւ տիրապետութեան տարիներին (1672-1699):

Հայ բնակչութեան կազմի այսպիսի փոփոխութիւնների մասին տուեալներ կարելի է բերել ուկրաինական հայաբնակ այլ քաղաքների նկատմամբ եւս: Սակայն, չնայած այդ փոփոխութիւնների, Լւովն ու Կամենեցը, սկսած XIV դ., եւ իրենց տնտեսական վիճակով, եւ իրենց

1 ՀԱ, 1935, էջ 164

2 Ի. Ա. Լիննիչենկո, նշւ. աշխ., էջ 340

3 Город Каменец-Подольск с. 214

4 ՀԱ, 1935, էջ 169

5 Город Каменец-Подольск, с. 214

6 Ի. Ա. Լիննիչենկո, նշւ. աշխ., էջ 340

հայ բնակչութեան քանակով՝ առաջին տեղն էին բռնում ուկրաինահայ գաղթավայրերի շարքում:

Բացի միջազգային տարանցիկ առեւտրի մէջ կատարած աչքի ընկնող իրենց դերից, Լւովի եւ Կամենեցի հայ առեւտրական մեծահարուստ տները լայնօրէն զբաղւում էին նաեւ վաշխառուական եւ բանկային գործունէութեամբ: Այսպէս, օրինակ, Բոգդան Դոն-Օվակովիչը, որն ապրում էր Կամենեցում, իսկ յետոյ XVI դ. սկզբին տեղափոխուեց Լւով, բազմաթիւ անգամ մեծ գումարներ փոխ տուեց Սիգիզմունդ Գ-ին: Վլադիսլաւ թագաւորը նոյնպէս յաճախ դիմում էր հայ վաշխառուների օգնութեանը[1]:

Մի խումբ խոշոր մեծատուն վաշխառու-առեւտրականներ դրամի ուժով ձեռք էին բերում նաեւ անշարժ կալուածքներ, գիւղեր, ագարակներ, այգիներ եւ այլն: Իսկ նրանցից մի մասը նոյնիսկ մտնում էր լեհ ազնուականութեան շարքերը՝ ձեռք բերելով շլեախտիչի կոչում: «Հայք ոմանք մեծատունք,- գրում է այդ մասին Ա. Պիդուն,- ընկալեալ էին զպատիւ ազնուականութեան լեհացւոց»[2]:

Արտօնեալ ու տնտեսապէս ապահով վիճակում էր գտնւում նաեւ ուկրաինահայ գաղթավայրերի հոգեւորականութիւնը: Նրանց ճշգրիտ նկարագիրը տրուած է «Վիպասանութիւն Նիկոլական» ուշագրաւ չափածոյ գրուածքի մէջ[3]: Հոգեւոր առաջնորդները, գրում է այդ գրուածքի հեղինակ Սիմէոն Զամոստեցին՝

«Զինչ որ կասեն՝ ինքեանք չառնեն,
Եւ վասն դրամի քարոզեն,
Զամէն քաղաք ժողով կանեն,
Ով որ քիչ տայ՝ կու բանադրեն:
Կուտեն, խըմեն, կուրախանան,
Վասն օրինաց բնաւ չըհոգան»[4]:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ խոշոր առեւտրականներից, վաշխառուներից եւ հոգեւորականներից կազմուած այս վերնախաւը Ուկրաինայի հայկական գաղթավայրերի բնակչութեան մէջ, թուական տեսակէտից, փոքրամասնութիւն էր կազմում:

Ուկրաինահայ գաղթավայրերի հիմնական բնակչութիւնը կազմուած էր արհեստաւորներից, առեւտրականների գործակալներից ու գործակատարներից, կարաւանների ուղեկիցներից, ինչպէս նաեւ հողագործներից եւ անասնապահներից:

Կային այնպիսի գիւղեր եւ քաղաքատիպ վայրեր, որոնցում բնակութիւն հաստատած հայերը ամենաթշուառ պայմանների մէջ էին գտնւում՝ կրելով իրենց վրայ լեհական կալուածատէրերի ճորտատիրական լծի ողջ ծանրութիւնը: Այսպէս, օրինակ, Սնեատինի հայերը, Ա.

1 Город Каменец-Подольск, с. 214-215

2 «Բռնի միութիւն», էջ 222, տե՛ս նաեւ Ի. Ա. Լիննիչենկո, նշւ. աշխ., էջ 355:

3 Ն. Ակինեանը համոզիչ փաստերով ապացուցում է, որ անանուն հասած այդ գրուածքի հեղինակը մեզ արդէն ծանօթ ուղեգիր Սիմէոնն է (տե՛ս Ն. Ակինեանի «Սիմէոն դպիր Լեհացւոյ երկու յիշատակարանք» յօդուածը, տպ. ՀԱ, 1936, էջ 246-258:

4 Ղ. Ալիշան, Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումինիոյ, հաւատաչեալ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 203

Պիդուի վկայութեամբ, «աղքատ են յոյժ, զի խաշնարածութեամբ կեան ամենեքեան»[1]:

Ուկրաինայի համարեա բոլոր հայաբնակ քաղաքներում հայերը ձեռք էին բերել դատական գործերում ինքնավարութեան արտօնագրեր եւ ունէին սեփական դատարաններ: Դատարանում նախագահում էր Վոյթը, որը միեւնոյն ժամանակ հայկական համայնքի ներկայացուցիչն էր պետութեան առաջ: Վոյթ էր ընտրւում ցմահ հաստատուած 12 դատաւորներից մէկն ու մէկը:

Կամենեցում եւ այլ քաղաքներում, բացի այդ, գոյութիւն ունէր 40 հոգուց բաղկացած մի մարմին, որի անդամները կոչւում էին «քառասուն եղբարք»: Այդ մարմինը նոյնպէս ունեւոր վերնախաւերի ներկայացուցիչների մի խորհուրդ էր, որն, ի միջի այլոց, իր միջից ընտրում էր նաեւ 12 դատաւորներին: Մ. Բժշկեանը տեսել է ձեռագիր մի երգարան, որի յիշատակարանում գրուած է եղել. «Յիշատակ է պարոն Թաթուլին, որդւոյ պարոն Գրիգորին՝ Կամենեցոյ տօլվաթաւոր քառասուն եղբարցն մէկ, թվ. ՌՂԳ (1644)»[2]:

Արհեստաւորները քաղաքներում առանց ազգութեան խտրութեան[3] ընդգրկուած էին "братства"-ների («եղբայրութիւնների», այսինքն՝ «համքարութիւնների») մէջ[4]:

Աղբիւրներում յիշւում են հետեւեալ համքարութիւնները՝ «Բիւրքչոց եւ թերզընուն եւ որոնք ասխով կու բանին», «Սուրուկճոց, կօշքարաց, Մազմանողաց, Խասապչոց եւ այլոց»[5]:

Ամէն մի համքարութիւն տարին մէկ անգամ որոշուած օրը հաւաքւում եւ ընտրում էր իր անդամներից երկու «սդարոսդայ» (староста) եւ մէկ «բիսար» (писарь-դրագիր): Համքարութեան գանձանակը պահւում էր ստարոստայի մօտ կամ քահանայի խցում: Այն կողպւում էր երկու տարբեր փականներով, որոնցից մէկի բանալին պահւում էր «պիգոսի ցեխմիստրին ձեռն եւ միւս բալինք աւագ եղբօր ձեռն»: Համքարութիւնները գումարում էին իրենց «սեսիաները», որտեղ քննարկում էին զանազան ներքին հարցեր, դատում էին զանցանքի մէջ մեղադրուող անդամին, տուգանում նրան եւ այլն: Բոլոր անդամները պարտաւոր էին մասնակցել հասարակական հանդէսներին ու տօներին եւ ունէին միմեանց հանդէպ որոշ պարտաւորութիւններ[6]:

Միեւնոյն համքարութեան կազմի մէջ ընդգրկուած ուկրաինացի, հայ եւ լեհ արհեստաւորները, տնտեսական միեւնոյն շահերով շաղկապուած, միասնաբար հանդէս էին գալիս քաղաքային ինքնավար մարմիններն իրենց ձեռքում կենտրոնացրած շահագործող վերնախաւերի դէմ:

Բացի արհեստաւորական համքարութիւններից, Ուկրաինայի քաղաքներում կային նաեւ երիտասարդ ու ամուրի մարդկանց միաւորող «կտրիճների» եղբայրութիւններ, որոնց ստեղծման հանգամանքների եւ ֆունկցիաների մասին մեզ մատչելի աղբիւրներում կան միայն

1 «Բոնի միութիւն», էջ 97
2 **Մ. Բժշկեան,** նշւ. աշխ., էջ 156
3 Колонизация армян в Юго-западной России, с. 9
4 Հայերը այդ "братства"-ները կոչում էին ռուսական տերմինով, փոքր-ինչ աղաւաղուած՝ «պրատսդուա» ձեւով:
5 **Մ. Բժշկեան,** Ճանապարհորդութիւն, էջ 182
6 Տուեալները քաղում ենք Ռաշկով քաղաքին 1751 թ. իշխան Հ. Լիւբոմիրսկու կողմից տրուած «Բրիվելիկ»-ից (Привилегия), որը կազմուած է «ամենայն քաղաքաց» արտօնագրերի օրինակով (տե՛ս **Մ. Բժշկեան,** նշւ. աշխ., էջ 165-183):

կցկտուր ակնարկներ:

Որոշակի եւ հնագոյն տեղեկութիւնը այդ տիպի կազմակերպութեան գոյութեան մասին վերաբերում է 1522 թ.: Կամենեցի Հայոց Սուրբ Աստուածածին եկեղեցու նուիրաբերութիւնների մատեանում այդ թուականի տակ գրանցուած է հետեւեալը. «Միաբան կտրիճներն նկարել տուին գէկս եկեղեցին՝ հանդերձ բոլորովին պատկերներով»[1]:

Նիկոլ Թորոսովիչի արքեպիսկոպոսութեան ժամանակ (1623-1681) ստեղծւում է նաեւ Ստանիսլաւովի «Կտրիճուորաց եղբայրութիւնը» եւ այլն[2]:

Յայտնի է, որ Ուկրաինայում հաստատուած հնագոյն հայկական համայնքները կազմակերպուած էին աշխարհազօրի մէջ եւ զինական պատկառելի ուժ էին ներկայացնում: Հարաւային Ռուսիայի իշխանները XI-XIII դդ. երբեմն դիմում էին նրանց զինական օգնութեանը: Այսպէս, օրինակ, 1280 թ. Գալիցիայի իշխան Լեւ Դանիլովիչը հրաւիրում է հայերին իր զօրքի մէջ մտնել հարեւան ֆեոդալների դէմ կռուելու համար[3]:

Հայկական զինական ուժերը մասնակցում են 1410 թ. Գրունուալդեան ճակատամարտին, որտեղ ռուսական, լիտուական եւ լեհական զինական միացեալ ուժերը փայլուն յաղթանակ տարան տեւտոնական օրդենի շուն-ասպետների նկատմամբ (հայկական զօրաջոկներն այստեղ մտնում էին լեհական բանակի մէջ): Արդէն առիթ ունեցանք նշելու, որ ուկրաինահայ հնագոյն գաղթավայրերից մէկում՝ Մանքերմանում (Ակկերմա՞ն), Սիմէոն Ջամասպեցու ժամանակ դեռ չէին մոռացել, որ անհրաժեշտութեան դէպքում «հինգ հարիւր հոգի կելեր հայոց ի պատերազմ»[4]:

Հայկական աշխարհազօրային միաւորումները հնում կոչւում էին "рыцари Девы Марии" («Կոյս Մարիամի ասպետներ»): Սրանց միջոցով էր, որ հայկական գաղթօղ համայնքները, դիմադրելով մոնղոլական, թիւրքական ու թաթարական բռնակալներին, ճանապարհ էին հարթում իրենց համար հայրենի երկրից կամ հարաւային Ռուսաստանի հայկական հնագոյն գաղթավայրերից (Սարայ, Ազով, Ղրիմ եւ այլն) դէպի Արեւմտեան Ուկրաինայի քաղաքները:

Աշխարհազօրային այդ կազմակերպութիւններն անհետ չվերացան յետագայ դարերում, երբ ուկրաինահայ համայնքները տնտեսական ու քաղաքական բնագաւառներում ձեռք բերեցին կայուն վիճակ եւ մշտապէս հաստատուեցին իրենց նոր հայրենիքում: Ղրիմի թաթարների եւ օսմանեան թիւրքերի յաճախակի արշաւանքների ու ասպատակութիւնների ժամանակ նրանք կազմակերպում էին խիզախ դիմադրութիւն՝ պաշտպանելով իրենց նոր ձեռք բերած տունն ու տեղը: Ըստ երեւոյթին, նրանք կարեւոր դեր էին կատարում նաեւ որպէս առեւտրական կարաւաններին ուղեկցող զինուած ուժեր:

Մեր կարծիքով ուկրաինահայ գաղթավայրերում յիշուող «կտրիճների» եղբայրութիւն-

1 **Մ. Բժշկեան,** Ճանապարհորդութիւն, էջ 149
2 Ղ. Ալիշանի «Կամենիցում» հրատարակուած «Եկեղեցական ժամանակագրութիւն ԺԱ ամաց» խորագրով փոքրիկ խրոնիկայի մէջ 1690 թ. տակը գրուած է. «Վարդան արքեպիսկոպոսն յայս տարի, նոյեմ. 10 զմեր Ստանիսլաւովու կտրիճվորաց եղբայրութիւնն նոր յիրմէն տուած կոնդակովն երկուսումն կու հաստատէ, զորն որ վաղուց Նիկօլ Թորոսովիչն հիմնել էր» («Կամենից», էջ 129):
3 Колонизация армян, с. 1-2, 4
4 ՀԱ., 1935, էջ 170

ները սերտ կապ պէտք է ունենան այդ հին աշխարհազօրային կազմակերպութիւնների հետ: Իսկ այս վերջինները կեանքի էին կոչուել հայկական համայնքներում ոչ թէ գաղթի ճանապարհին կամ նորաստեղծ գաղթավայրերում, այլ ծագել էին եւ կարեւոր դեր էին կատարում Հայաստանի քաղաքներում՝ առնուազն սկսած XII դ. սկզբից[1]: XVI դ. վերջին լեհական իշխանութիւնները յատկապէս ուժեղացրին իրենց պարտադրող քաղաքականութիւնը Ուկրաինայի նկատմամբ:

Պանական Լեհաստանի քաղաքականութիւնը հանդիպում էր, սակայն, ակտիւ դիմադրութեան ուկրաինացիների եւ լեհական լծի տակ կեղեքուող միւս ժողովուրդների կողմից: Որպէս դիմադրութեան կազմակերպչական կենտրոններ՝ XVI դ. ընթացքում եւ յետագայում Ուկրաինայի տարբեր քաղաքներում ստեղծուեցին «եղբայրութիւններ», որոնք միաւորում էին քաղաքային բնակչութեան լայն շերտերին եւ կատարում էին մշակութային ու քաղաքական կարեւոր դեր: Անշուշտ, այդ նորաստեղծ կազմակերպութիւնների օրինակով աշխուժանում են նաեւ ուկրաինահայ գաղթավայրերում գոյութիւն ունեցող «կարիճների» եղբայրութիւնները եւ ստեղծւում են նման նոր կազմակերպութիւններ:

* * *

Արդէն XV դ. սկսած, քայլ առ քայլ սահմանափակւում են հայկական համայնքների դատաստանական արտօնութիւնները: Յայտնի է, որ 1350 թ. Կամենեցի հայերը իրաւունք ունէին նոյնիսկ մահապարտ յանցաւորներին սպանութեան դատապարտել առանց պետական իշխանութիւնների միջամտութեան[2]: Սակայն այդ արտօնեալ վիճակը երկար չի տեւում. 1444 թ. հրովարտակով օտար երկրներից Լւով եկող բոլոր վաճառականները, որոնց թւում նաեւ հայերը, ենթարկուելու էին լեհական մագիստրատի դատական իրաւասութեանը: 1476 թ. հրովարտակով Լւովի հայերի քրէական գործերը՝ սպանութիւն, վիրաւորութիւն, բռնաբարութիւն, ենթարկւում են քաղաքի վոյթի եւ քաղաքային լաւնիկների դատաստանին:

1510 թ. գողութեան եւ անշարժ կալքերի վերաբերեալ գործերի քննութիւնը նոյնպէս յանձնւում է քաղաքի դատաստանի իրաւասութեանը[3]:

Այնպէս որ հայերի դատաստանական իրաւասութեան սահմանները աստիճանաբար սղւում են: Յետագայում փորձեր են կատարւում ընդհանրապէս այդ իրաւասութիւններին վերջ տալու եւ հայ համայնքները քաղաքների լեհական մագիստրատներին ենթարկելու ուղղութեամբ:

Շատ շուտով սկսւում է նաեւ հալածանք ուկրաինահայ ինքնավար կրօնական համայնքի դէմ: Կաթոլիկ միսիոնարները, չխորշելով ոչ մի միջոցից, Լեհաստանի ներքին գործերի տնօրինութիւնն իրենց ձեռքը վերցրած պապական նունցիաների եւ լեհ թագաւոր Սիգիզմունդ Բ-ի (1520-1572) ակտիւ օժանդակութեամբ, արդէն XVI դ. կէսերից աշխատում էին լեհական լծի տակ կեղեքուող բոլոր ոչ կաթոլիկ ժողովուրդներին (որոնց թւում նաեւ հայերին) դարձնել կաթոլիկ[4]: Այս նպատակին հասնելու համար Արեւմտեան Ուկրաինայի շրջաններն են ուղարկ-

1 Այս մասին տե՛ս մեր «Երզնկայում 1280 թ. կազմակերպուած «Եղբայրութիւնը» խորագրով յօդուածը. տպ. Հայկական ՍՍՌ ԳԱ, 1951, N 12 տեղեկագրում:

2 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 131

3 Ի. Ա. Լինճիչենկո, նշւ. աշխ., էջ 350-351

4 Симашкович, Римское католичество и его иерархия в Подолии, с. 87

ւում Եզուիտեան ու Թեատինեան կարգի միսիոնարների անքանակ խմբեր[1]:

Այս քաղաքականութիւնը նոր ընթացք է ստանում XVI դ. վերջին: 1596 թ. ուկրաինական Ուղղափառ եկեղեցու բարձրագոյն պաշտօնեաների եւ լեհական իշխանութիւնների միջեւ կայացած համաձայնութեամբ կնքւում է Բրեստի եկեղեցական Ունիան, որը պէտք է ուժեղացնէր Ուկրաինայի կախումը Լեհաստանից: Ունիայի միջոցով Ուղղափառ եկեղեցին ընդունում էր պապի գերիշխանութիւնը եւ Կաթոլիկ եկեղեցու կազմակերպչական մի շարք ձեւեր եւ ծէսեր: Ունիայի կողմնակիցները, սակայն, հանդիպեցին ուկրաինական գիւղացիութեան, քաղաքացիների, շլեախտայի եւ շարքային հոգեւորականութեան վճռական դիմադրութեանը, որի հետեւանքով այն չիրականացաւ[2]: Ունիայի ձախողումը բնաւ չի թուլացնում կաթոլիկ միսիոնարների գործունէութիւնը Ուկրաինայում: Ընդհակառակը, ամբողջ XVII դ. ընթացքում շարունակ է՛լ աւելի գործուն միջոցներով Վատիկանի գործակալները ձգտում են իրագործել Ուկրաինայի կաթոլիկացումը, իսկ լեհական իշխանութիւնները՝ Ուկրաինայի լեհականացումը:

Կաթոլիկ քարոզիչ Մատթէոս Բեմբուսը 1629 թ. կրկին դիմում է ուկրաինացիներին կաթոլիկութիւնն ընդունելու ուղերձով: Յաջորդ թուականին (1630) նա նոյնպիսի առաջարկ է անում նաեւ հայերին եւ, հայկական համայնքի մէջ երկպառակութիւն ձգելով, ձգտում է հասնել իր նպատակին:

Այդ դիմումները ոչ միայն չեն ծառայում իրենց նպատակին, այլեւ առաջ են բերում հսկայական դիմադրութիւն ե՛ւ ուկրաինացիների, ե՛ւ հայերի կողմից:

Ուկրաինահայ աշխատաւորներն իրենց եկեղեցու, ազգային տրադիցիաների ու իրաւունքների պաշտպանութեան դիրքերում մարտնչում են անօրինակ յամառութեամբ: Տեղի են ունենում զինուած ընդհարումներ եւ ժողովրդական յուզումներ, մինչեւ որ կաթոլիկները, յենուելով ուկրաինահայ գաղթավայրերի շահադէտ վերնախաւերի՝ բարձրաստիճան հոգեւորականութեան ու մեծահարուստ առեւտրական ու վաշխառուական տների վրայ, կարողանում են կոտրել ժողովրդի դիմադրութիւնը եւ ընդունել տալ Ունիան, այսինքն՝ ուկրաինահայ եկեղեցին ենթարկել Վատիկանին եւ կաթոլիկական ծէսեր մտցնել Հայ եկեղեցում:

Շուրջ հինգ տասնամեակ տեւող մի կողմից՝ անձնուրաց դիմադրութեան եւ միւս կողմից՝ քսու նենգութեան ու բռնութեան դրուագներով հարուստ այս պայքարի պատմութեան հետ արժէ ծանօթանալ փոքր-ինչ մանրամասնօրէն:

Մելքիսեդեկ կաթողիկոսը (1593-1626), որը 1610 թ. հպատակութեան թուղթ էր առաքել Հռոմի Պօղոս Ե պապին, 1623 թ. գտնւում էր Լւովում: Ուկրաինահայ եպիսկոպոսական թափուր աթոռի համար անհրաժեշտ էր ձեռնադրել եպիսկոպոս: Եւ ահա նա, Թորոսովիչների հարուստ ընտանիքից թելադիր, համաձայնութիւն է յայտնում 22-ամեայ Նիկոլ աբեղայ Թորոսովիչին ձեռնադրել եպիսկոպոս: Այդ ընտրութիւնը մեծ դժգոհութիւն է առաջացնում ուկրաինահայ համայնքներում: Լւովի հայերը վճռականօրէն դէմ են դուրս գալիս Նիկոլին եւ յայտարարում են կաթողիկոսին, որ «ոչ է դա մեզ ընդունելի»[3]:

Նիկոլի կողմնակիցներից զրկուած կաթողիկոսի համար ժողովրդի ցանկութիւնը, իհար-

1 Колонизация армян, с. 12

2 История СССР, т. 1, 1947, с. 488-489

3 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 280

կէ. արժէք չէր կարող ունենալ: Եւ քիչ անց քաղաքից դուրս գտնուող Հայկական Հանկատար Աստուածածին վանքում կաթողիկոսը գիշերով գաղտագողի կատարում է եպիսկոպոսական ձեռնադրութեան արարողութիւնը: Այնուհետեւ, բանադրութեան թուղթ գրելով Լւովի Հայերին եւ ստիպելով ընդունել Նիկոլին որպէս եպիսկոպոս, Մելքիսեդեկ կաթողիկոսն անցնում է Կամենեց եւ վախճանւում այնտեղ (1626): Լւովի Հայ համայնքի եւ եպիսկոպոսի միջեւ տեղի են ունենում աղմկալից բախումներ: Նիկոլը լեհական իշխանութիւնների օժանդակութեամբ, թիւրքական լրտես կոչելով, վտարել է տալիս լեհական սահմաններից Գրիգոր Կեսարացի վարդապետին, որը փորձում էր պատուարել ուկրաինահայ համայնքները կաթոլիկացման վտանգից:

Համոզուելով, որ առանց կաթոլիկների եւ լեհական իշխանութիւնների բացարձակ օժանդակութեան չի կարողանալու կոտրել ժողովրդի դիմադրութիւնը՝ Նիկոլը 1630 թ. դիմում է Լւովում հաստատուած եզուիտներին, միաբանւում է նրանց հետ եւ ձեռագիր է տալիս այն մասին, որ՝ «Ես՝ Նիկոլայոս եպիսկոպոս Հայոց, իմով կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, եւ մտի ի հնազանդութիւն փափին ամենայն հետեւելովքն իմովք՝ կատարել զամենայն հրամանս, որ առ ի նմանէ»[1]:

Լւովի ժողովուրդը եւ Հայ եկեղեցուն չդաւաճանած հոգեւորականներն ու մեծատունները, լսելով այդ մասին, «կափուցանեն զդրունս եկեղեցեաց ամուր փականօք եւ ուխտեն երդմամբ՝ ի չարչարանս ամենայն գալ մանաւանդ, քան ի ծառայութիւն ուրացեալն Նիկոլի»[2]:

Հայերի դիմադրութիւնը կոտրելու համար Լւովի լեհական իշխանութիւնները պահանջ են ներկայացնում բացել եկեղեցու դռները եւ հնազանդուել իրենց եպիսկոպոսին, սակայն ապարդիւն. «Մինչեւ երեք անգամ այսպէս կրկնեաց իշխանն, եւ Հայք ոչ զեկեղեցին բացին, եւ ոչ ի դատաստան եկին»[3]:

Հարցը լուծւում է զէնքի ուժով: «Ապա յաւուր միում,- պատմում է Ա. Դաւրիժեցին,- ժողովեցան բազում եկեղեցականք յեզուայիթայ կարգէն, նաեւ այլոց եւս կարգացն, առին եւ զբազում աղայս ի դպրոցացն, գնացին առ արքեպիսկոպոսն իւրեանց, առին եւ կարգաւորս ի նմանէ, գնացին առ իշխան քաղաքին եւ առ դատաւորս, առին ի նոցանէ զզօրականս եւ զդատաւորս ընդ իւրեանս, սոքա ամենեքեան եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց, զոր իշխանք Հայոց փակեալ էին... յարեալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն, եւ առեալ զՆիկոլ եպիսկոպոսն մուծին յեկեղեցին, եւ ի նա յանձնեցին զեկեղեցին ամենայն ընչիւք»[4]:

Նիկոլը, տէր դառնալով Լւովի եկեղեցիներին, վաճառում է նրանց գանձատներում ամբարուած եկեղեցական մեծարժէք սպասները եւ հազարից աւելի «ընտիր ու պատուական» ձեռագրեր[5]:

---

1 Ա. Դաւրիժեցի, էջ 289

2 «Բռնի միութիւն», էջ 156

3 Ա. Դաւրիժեցի, էջ 289-290

4 Ա. Դաւրիժեցի, էջ 290

5 Մեզ արդէն ծանօթ Սիմէոն Զամոստիեցին, իր ընդօրինակած ձեռագրերից մէկի յիշատակարանում (ՄՄ ձեռ. N 1004) Լւովի եկեղեցիներից Նիկոլի կողմից թալանուած հարիւրաւոր ձեռագիր-գրքերի առթիւ խորին ցաւ արտայայտելով եւ համառօտակի թուարկելով այդ ձեռագրի բովանդակութիւնը, յիշատակարանի այդ հատուածն աւարտում է հետեւեալ խօսքերով. «Եւ զայն ամենայն վերոյգրեալ մսրայ խազինան՝ ի միում ամի կորոյս» (ՄՄ ձեռ. N 1004, էջ 193ա): Նիկոլ եպիսկոպոսի ընչաքաղց ու անբարոյական կերպարը նոյն յիշատակագիրը

Նա նոյնիսկ օտարազգի ոսկերիչների միջոցով հալել է տալիս եկեղեցական թանկարժէք սպասները, մսխում է շռայլօրէն իր անձի վրայ եւ եկեղեցական Ունիայի իրագործման նպատակներով:

Հայերը լքում են իրենց եկեղեցիները, հրաժարւում են կաթոլիկ ծէսով պատարագին մասնակցելուց. «Սոյն պատճառի վասն եւ պսակք եւ մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս՝ պսակէին եւ մկրտէին, եւ զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին» եւ այլն, գրում է Ա. Դաւրիժեցին[1]:

Տարիներ շարունակ լեհ իշխանութիւնները պատժում, բանտարկում եւ տուգանում են Նիկոլին չենթարկուող Հայերին, բայց դիմադրութիւնը կոտրել նրանց չի յաջողւում, «քանզի որպէս ի ժամանակս կռապաշտ թագաւորացն ունէին քրիստոնեայքն զհալածանս, այսպէս եւ յայսմ ժամանակի եղեւ ի վերայ ազգին Հայոց բնակելոցն Իլով քաղաքին»,- գրում է ժամանակակից նոյն պատմիչը:

1631 թ. յուլիսի 25-ին Լւովի Հայերը Էջմիածին են ուղարկում իրենց դառը վիճակի նկարագրութեամբ մի բողոքագիր, որտեղ վերոյիշեալ դէպքերի մասին յայտնում են ուշագրաւ տուեալներ: Նրանք գրում են.

«Կաթոլիկ եկեղեցականքն լատինացւոց, եւ ռամիկանք քաղաքին Իլովայ ջաղխեցին զփականս եւ զծխնիս եկեղեցւոյն եւ ի ներքոյ մուծին զանիծեալն (Նիկոլ)... Եպիսկոպոսն ոչ միայն եհան ի մէնջ... համօրէն զեկեղեցիս, որով խափանեաց զկարգս աստուածպաշտութեան, այլ եւ չտայ իսկ թոյլ թաղել զմեռեալս: Ունի նա զքահանայս մեր, որ հաւատարիմքն իցեն օրինաց մերոց եւ ոչ կամիցինն հնազանդիլ իշխանութեան նորա, գան հարկանէ զնոսա եւ կապեալս արկանէ ի բանտ եւ ոչ արձակէ՝ մինչեւ դարձցին եւ ընկալցին զլատինացւոցն զհաւատս: Եւ ոչ ոք է որ պատժիցէ զնա. քանզի համօրէն իշխանաւորք աշխարհայինք եւ եկեղեցանք ի կողմն նորա են եւ մանաւանդ Յիսուսեանք: Բողոքելով բողոքեցաք մեք առ արքայ. այլ չեւ է ընկալեալ մեր հրաման յարդարելոյ ատեան հարցափորձից եւ դատաստանի, եւ Աստուծոյ է միայն գիտելի՝ թէ երբ զայն ընկալցուք: Եւ թէ լինիցի իսկ ատեան դատաստանի՝ խիթամք թէ եւ յայնժամ ոչ գայցէ յերեւան ճշմարտութիւնն, քանզի որ ի Վարշաւայ նստի նուիրակն եւ այլ եկեղեցականք լատինացւոց եւ առաւել եւս Յիսուսեանք յամենայն զօրութենէ իւրեանց պաշտպանին անիծեալ եպիսկոպոսն...» եւ այլն[2]:

Շատ-շատերը, ինչպէս հաղորդում է Ա. Դաւրիժեցին, չհանդուրժելով իրենց ազգային աւանդների ու եկեղեցու՝ լեհ իշխանութիւնների կողմից բռնի ոտնահարման փաստը, ստիպուած թողնում են իրենց նոր հայրենիքում ստեղծած տունն ու տեղը եւ «ելեալ ի բնիկ աշխարհէն հեռացան, անջատեալք յընտանեաց եւ յազգաց, պանդուխտք եւ նշդեհք շրջագայեալք յօտար աշխարհի. եւ այսպիսի կենօք՝ հեծելով եւ յոգւոց հանելով վախճանեցան»[3]:

Վատիկանի հաւատի ծաւալման ժողովը (Congregation de Propagande fide) ուկրաինահայ գաղթավայրերում Ունիայի գործը յաջողութեամբ ի կատար ածելու առաջադրանքով 1663 թ.

պատկերում է այսպէս. «Էր յոյժ անառակ եւ վայրապար, ունէր մարդիկ աշխարհականք եւ կարգաւորք Ի. Լ. (20-30), պահէր պետավի ձիան, կառս մեծագինս եւ տաճիկ ձիան, եւ ինքն յագանէր բեհեզս եւ ծիրանիս, մախմուր եւ աթլազ, ներքեւանց սամոյր մորթի կամ վաշախ, զաւազանն բուն արծաթի» եւ այլն (N 1004, էջ 194ա):

1 Ա. Դաւրիժեցի, էջ 292

2 «Բռնի միութիւն», էջ ԻԷ-ԻԸ՝ քաղուած Դ. Տոլստոյի Catolicisme Romain en Russie, հտ. Բ., էջ 491-ից:

3 Ա. Դաւրիժեցի, էջ 296

Լուով է ուղարկում Թեադինեան միաբանութեան յայտնի գործիչ, Հայաստանում երկար տարիներ կաթոլիկութիւն քարոզած Կղեմէս Գալանոսին՝ ուղեկցութեամբ Ալոյիսիոս Պիդուի, որը նրա փոխանորդն ու աջակիցը պէտք է լինէր: Նրանք իրենց առաքելութեան հէնց առաջին օրերին հասկացնում են Նիկոլին, որ անհրաժեշտ է շատ աւելի վճռական միջոցների դիմել ժողովրդի դիմադրութիւնը կոտրելու եւ ուկրաինահայ եկեղեցին Վատիկանին ենթարկելու համար: Լուովում բացած դպրոցում Կ. Գալանոսն ու Ա. Պիդուն ուկրաինահայ տարբեր գաղթավայրերից հաւաքագրած երիտասարդների դաստիարակում են կաթոլիկութեան ոգով եւ նրանցից պատրաստում են հլու կամակատարներ Ունիայի գործը յաջող կերպով գլուխ բերելու համար:

Լեհ իշխանաւորներից, արքունիքից (յատկապէս Թագուհուց) եւ կաթոլիկ հոգեւորականութիւնից ամէն կարգի օժանդակութիւն ստանալով, Ունիայի դէմ մաքառողներին բանտարկել տալով, երկրից վտարելով ու հալածելով՝ Նիկոլին յաջողւում է 1664 թ., 41 տարի պայքարելուց յետոյ, Լուովում կաթոլիկ ծէսով պատարագ անել:

Լուովի հայերի խիզախ դիմադրութիւնը ի վերջոյ յաղթահարւում է «Զի կարգաւորքն ամէն եւ մեծամեծքն հետ Նիկոլ եպիսկոպոսին էին»,- ասում է այդ մասին Սիմէոն Զամոստեցին Երեւանի Մատենադարանի N 1004 ձեռագրի յիշատակարանում[1]:

«Բազում ունէր նա օգնական՝
Կարգաւորք եւ աշխարհական՝
Դատաւորք եւ պարոն 'ւ իշխան»,-

գրում է նոյն Սիմէոնը «Վիպասանութիւն նիկոլական» չափածոյ իր գրուածքի մէջ[2]:

Ա. Պիդուն իր «Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ եւ ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի...» յուշատետրի մէջ այլեւայլ առիթներով յիշատակում է կաթոլիկութեան տարածման ջերմ պաշտպաններից ու գործակիցներից շատերի անունները: Դրանցից էր, օրինակ, աշխարհէ աշխարհ շրջագայած (անկասկած՝ որպէս առեւտրական) եւ բազմաթիւ լեզուներ գիտցող ոմն Ղազար Սլովնիովսկի, որը մի քանի տարի առաջ ձեռք էր բերել լեհ ազնուականի կոչում: Ահա այդ մարդը, Ա. Պիդուի խօսքերով ասած, «նախանձախնդիր էր փառացն Աստուծոյ եւ դարձուցանելոյ զհայրենակիցս իւր ի կաթոլիկութիւն»[3]:

Ունիայի ջերմեռանդ պաշտպաններ էին նաեւ Զախնովիչը, որին Ա. Պիդուն Լուովի Հայոց գլխաւոր (վո°յթ) է կոչում, եւ Կապրովսկին, «որ վարէ զպաշտօն քարտուղարին Հայոց»: Այս երկուսը, ինչպէս եւ բազմաթիւ այլ մեծահարուստ անձինք, Ա. Պիդուի խօսքերով՝ «Կաթոլիկք են ջերմեռանդ եւ պաշտպան առաքելութեան»[4]:

Լուովի հայերի երկարամեայ ու յամառ դիմադրութիւնը կոտրելուց յետոյ Կղեմէս Գալանոսին յաջորդած Ա. Պիդուի միջոցով Վատիկանի գործակալները պահանջում են Նիկոլ եպիսկոպոսին անյապաղ մեկնել Կամենեց եւ Ունիայի գործը գլուխ բերել նաեւ այնտեղ:

1 ՄՄ ձեռ. N 1104, էջ 194ա
2 «Կամենից», էջ 213
3 «Բռնի միութիւն», էջ 36
4 Նոյն տեղում, էջ 38

Նիկոլը, իրաւամբ, Կամենեցի հայերից սպասում էր ոչ պակաս յամառ դիմադրութիւն, ուստի եւ չէր շտապում իրականացնելու այդ «առաքելութիւնը»:

Ի վերջոյ, 1666 թ. Նիկոլը, ընկերակցութեամբ Վատիկանի գործակալ Պիդուի, ձեռքին ունենալով արքունական հրովարտակ, որով պատուիրւում էր Պոդոլսկի զօրապետին (որը միաժամանակ Կամենեցի ամրոցապետն էր) անհրաժեշտութեան դէպքում զինական օգնութիւն ցոյց տալ Վատիկանի «առաքեալներին», մեկնում է Կամենեց-Պոդոլսկ:

Կամենեցի հայերի դիմադրութիւնը շատ աւելի ուժեղ էր, քան սպասւում էր: Միայն երկարատեւ, յամառ պայքարից յետոյ լեհ իշխանութիւնների եւ կաթոլիկ բարձրաստիճան ու ազդեցիկ հոգեւորականութեան միջամտութեամբ ու ակտիւ օժանդակութեամբ հնարաւոր եղաւ կոտրել այդ դիմադրութիւնը: Կամենեցի հայերը, յաղթահարելով մեծ դժուարութիւններ, պատուիրակութիւն ուղարկեցին Վարշաւա, գրեցին խնդրագրեր, յատուկ պատգամաւորի միջոցով ստացան Էջմիածնի կաթողիկոսից եւս Թագաւորի անունով խնդրագիր եւ այլն: Սակայն պայքարն անհաւասար էր: Եւ 1666 թ. հոկտեմբերի 1-ին կաթոլիկ ծէսով պատարագ մատուցուեց նաեւ Կամենեցի հայկական եկեղեցիներում:

Ինչպէս Լուովում, այնպէս էլ Կամենեցում հայ բնակչութեան մեծագոյն մասը երկար ժամանակ շարունակում էր առերես միայն ընդունել կաթոլիկութիւնը: Շատերը հրաժարւում էին եկեղեցի յաճախելուց, անհրաժեշտութեան դէպքում եկեղեցական խորհուրդները ծածուկ անել էին տալիս լուսաւորչական քահանաների միջոցով եւ կամ, մեծ դժուարութիւններով անցնելով լեհական սահմանը, դիմում էին դէպի Մոլդաւիա, ուր կային հայկական լուսաւորչական եկեղեցիներ: Կամենեցի հայերից շատերը տօն օրերին գնում էին Մոլդաւիայի Խոտին քաղաքը: Այս բանին եւս Վատիկանի գործակալները արգելք են յարուցում: Նրանց սադրանքով Պոդոլսկի լեհական զօրքերի փոխհրամանատարը արգելում է հայերին քաղաքից դուրս գալ Նախատօնակ եւ տօն օրերին[1]:

Եւ այսպէս, քայլ առ քայլ լեհ զինուորական իշխանութիւնների գործուն օժանդակութեամբ Վատիկանի հաւատի ծաւալման ժողովի գործակալները, ոտնահարելով ուկրաինահայ գաղթավայրերի բնակչութեան դարաւոր աւանդոյթները, բռնանալով նրանց կամքի վրայ, իրագործում են եկեղեցիների միութիւնը (Ունիան): Վատիկանը այդ ճանապարհով երկպառակութիւն է մտցնում Հայ եկեղեցու մէջ եւ գրաւում է հարուստ մի թեմ, իսկ լեհական կառավարութիւնը վճռական մի քայլ է կատարում ուկրաինահայերին լեհականացնելու ճանապարհին:

***

Ուկրաինահայերի բռնի կաթոլիկացման ուղղութեամբ լեհ իշխանութիւնների եւ Վատիկանի գործունէութիւնը, ինչպէս տեսանք, յատկապէս մեծ ծաւալ ստացաւ XVII դ. կէսերին՝ ճիշտ այն ժամանակ, երբ ուկրաինական ժողովուրդը հերոսական մարտեր էր մղում իր ազատագրութեան համար:

1648-1654 թթ. ժողովրդական-ազատագրական պատերազմը հանդիսացաւ ուկրաինական ժողովրդի պատմութեան ամենափառաւոր էջերից մէկը:

Ուկրաինայի հայկական գաղթավայրերի բնակչութեան աշխատաւոր հիմնական մասը,

1 Նոյն տեղում, էջ 89

բնականաբար, ջերմ համակրութեամբ պէտք է վերաբերուէր եւ ակտիւօրէն մասնակցէր ուկրաինական ժողովրդի մղած պայքարին:

Մեզ մատչելի պատմական սուղ տուեալները որոշակիօրէն հաստատում են այս ենթադրութիւնը:

Ուկրաինահայ աշխատաւորութեան ջերմ համակրանքը Ուկրաինայի ազատագրման համար մարտնչողների առաջին շարքերում գտնուող զապորոժեան կազակների նկատմամբ իր արտայայտութիւնն է գտնում Բոգդան Խմելնիցկու գործունէութիւնից դեռեւս շատ առաջ:

Ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական այս շարժումների մասին ուկրաինահայ գաղթավայրերում գրուած պատմական սկզբնաղբիւրների մէջ պահպանուել են համակրանքով լի ուշագրաւ վկայութիւններ:

Այսպէս, օրինակ, Սեւերին Նալիւայկոյի գլխաւորութեամբ 1594 թ. բռնկուած ապստամբութեան առանձին դրուագների մասին Յովհաննէս Աւագերէցը «Կամենեցի տարեգրքում» պատմում է հետեւեալը.

«Թվ. ՌԽԴ (1595)... եւ ի սոյն ամի խազախներն ժողովեցան մի վայր, զոր ոմանք ասացին եթէ էին իբրեւ 20000, եւ մեծաւ պատրաստութեամբ գինուք յերկիրն օլախաց (իմա՛ Մոլդաւիա)... մինչ զօլախաց պարոն զԱհարոն (Թիւրքերի դրածոն - Լ. Խ.) երկրէն փախուցին, եւ զօրքն կոտորեցին...: Եւ յետ սակաւ աւուրց դարձեալ անցին օլախաց երկիր. եւ գնացին եւ հաշտեցան եւ երդուան միմեանց, եւ միաբանեցան հետ պարոնին. եւ մեծաւ Թուրք աշխարհ վասն պատերազմելոյ ի հետ տաճկաց: Զոր երկնաւոր Աստուած տացէ նոցա կարողութիւն եւ զօրացուցէ զնոսա... զի փոքր մի ժամանակ խաղաղութիւն գացէ ազգն քրիստոնէից... Եւ է գլխաւոր սոցա միոյն անուն Լոպոտայ եւ միւսոյն Նալիվայքս»[1]:

Այնուհետեւ տարեգիրը տուեալներ է հաղորդում կազակների յաջող մարտերի մասին՝ Թիւրքերի դէմ, իսկ 1596 թ. տակ գրանցում է Նալիվայկոյի եւ Լոպատայի պարտութեան պատմութիւնը: Յայտնում է նաեւ, որ «էր այս Նալիվայքս աղքատ տանէ այս (Կամենեց) քաղքիս, եւ եղեւ գլուխ ի վերայ խազախներաց, բայց էր ինքն հմուտ կռուոյ եւ քաջ պատերազմող»[2]:

Ուշագրաւ տուեալներ են հաղորդում ուկրաինահայ գաղթավայրերում ստեղծուած պատմական գրուածքները նաեւ լեհերի ու Թուրքերի միջեւ 1621 թ. տեղի ունեցած Խոտինի ճակատամարտի մասին, որի յաջող վախճանն ապահովեցին կազակներն իրենց խիզախութեամբ ու մարտունակութեամբ:

Կամենեցի հայերը պատերազմի յաղթական աւարտից յետոյ հնարաւորութիւն ունեցան հիւրընկալելու յաղթող բանակին եւ ի մօտոյ շփուելու կազակների հետ: Կազակների հնարամտութիւնն ու խիզախութիւնը զարմանք էր պատճառում նրանց: Խոտինի պատերազմի մասին կարեւոր եւ փաստական ստուգուած նիւթերով հարուստ մի աշխատութիւն է գրել Կամենեցի հայերից մէկը՝ Յակոբ քահանայի որդի Յովհաննէսը: Աշխատութիւնը, որ վերջերս միայն յայտնաբերուեց Մատենադարանում Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմութեան ինստիտուտի գիտաշխատող Յ. Անասեանի կողմից՝ կրում է հետեւեալ խորագիրը՝ «Պատմութիւն պատերազմին

1 «Կամենից», էջ 59
2 Նոյն տեղում, էջ 61

Խօթինու, ի ժամանակս սուլթան Օսմանին տաճկաց եւ ի կաթողիկոսութեան Հայոց Մելքիսեդի սրբոյ էջմիածնի... արարեալ ուրեմն Յովհաննու անիմաստ հետեւողի, ի խնդրոյ հօր իւրում՝ տէր Յակոբ բարեսէր քահանայի...[1]:

Գրուածքի հեղինակին հիացմունք են պատճառում կազակների օրինակելի կարգապահութիւնն եւ կազմակերպչական հիմունքները: Կազակները պատուից զրկում, իսկ քիչ անց նաեւ գլխատում են իրենց զօրահրամանատար Բորոդաւկային այն բանի համար, որ «ի գալն իւրեանց ի Խօթինն ուղարկեալ էր չորս հազար խազախ ի յերկիրն Պուղտանաց վասն ագահութեան, որ կորեան անդ անօգուտ առանց գիտութեան ընկերացն...»[2]:

1648 թ. Բոգդան Խմելնիցկու կոչով Կամենեցի շրջակայքի բոլոր գիւղերը ապստամբում են: Երբ Բոգդան Խմելնիցկին Ժելտիէ Վոդիի ու Կորսունի մօտ ջարդեց լեհերին՝ կազակները Մաքսիմ Կրիւոնոսի հրամանատարութեամբ առաջին անգամ մօտեցան Կամենեցին: Ժողովրդական ապստամբութիւնն այդ ժամանակ արդէն բռնկուել էր ողջ Պոդոլիայում:

Լեհերը, պաշտպանուելով Կամենեցի բերդում, իրենց ողջ յոյսը դրել էին բերդի ամրութիւնների վրայ: Նրանք, գրում է այդ մասին Կամենեց քաղաքի պատմութեան հեղինակ Ե. Սեցինսկին, «նոյնիսկ երկիւղ էին կրում Կամենեցի ռուս (իմա՛ ուկրաինացի) եւ հայ բնակչութիւնից, մի բան, որ չափազանց բնական էր, որովհետեւ քաղաքի բոլոր արուարձանները, որոնք բնակեցուած էին ռուսներով (իմա՛ ուկրաինացիներով), համակրում էին կազակներին եւ ապստամբել էին լեհերի դէմ»[3]:

Քաղաքի ուկրաինացի եւ հայ բնակչութեան համակրանքը կազակների հանդէպ եւ նրանց պատրաստակամութիւնը ապստամբներին միանալու ակնյայտ էր:

Կամենեցի լեհ իշխանութիւնները, այդ պատճառով, 1649 թ. խնդրագիր են ներկայացնում Վարշաւայի Սեյմին, որով անհրաժեշտ են գտնում Կամենեցի հետեւակազօրի շարքերը մաքրել ուկրաինացիներից ու հայերից: Նրանք գրում են. «Ցանկանում ենք, որ Կամենեցի հետեւակազօրը կազմուի գերմանական կամ լեհական ժողովրդից, եւ ոչ տեղի քաղաքացիներից կամ արհեստաւորներից»[4]:

1662 թ. յատուկ որոշում է կայացւում, որով խիստ պատիժ սահմանելով՝ արգելւում է Կամենեցի կայազօրում, բացի լեհերից ու գերմանացիներից, այլ ուղղութեան պատկանող զինուորներ հանդուրժելը:

Այդ որոշման մէջ ասուած է.

«Եթէ Սեյմի կողմից նշանակուած կոմիսարները տեղի (Կամենեցի) հետեւակազօրի կազմում գտնեն քաղաքացիներ եւ կամ արուարձանների բնակիչներ (предмещан), ապա նրանց փոխարէն տեղական ռոտմիստրները պէտք է վարձեն լեհ կամ գերմանացի ազգութեան պատկանող՝ կաթոլիկ դաւանանքի ճանաչուած մարդկանց: Յետագայի համար որոշում ենք, որ Կամենեցի ռոտմիստրները չընդունեն զինուորական ծառայութեան քաղաքացիների կամ

1 ՄՄ ձեռ. N 2644, էջ 229ա-253բ: [Հրտ. տե՛ս Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու՝ աշխատասիրութեամբ Հ. Ս. Անասեանի, Երեւան, 1964:]
2 Նոյն տեղում, էջ 240բ
3 Город Каменец-Подольск, с. 28
4 Նոյն տեղում, с. 92

արուարձանների բնակիչների, հակառակ դէպքում նրանք կպատժուեն»[1]:

Յայտնի է, որ Կամենեց քաղաքի եւ արուարձանների բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը բաղկացած էր ուկրաինացիներից ու հայերից: Ուստի եւ պարզ է, որ լեհական իշխանութիւններն ստիպուած էին դիմելու այսպիսի միջոցառումների սոսկ այն պատճառով, որ տեղի ուկրաինացիներն ու հայերը ակտիւ մասնակցում էին 1648-1654 թթ. եւ յետագայ տարիների ազատագրական պատերազմներին:

Սկզբնաղբիւրներում պահպանուած աղօտ տուեալների հիման վրայ, Կամենեց քաղաքի պատմութեան վերը վկայակոչուած հեղինակը յայտնում է, որ կազակային պատերազմների խառն ժամանակներում «հաւատարիմ հպատակութեան» դէմ հայերի գործած յանցանքների կապակցութեամբ, նրանց նկատմամբ առաջ քաշուեցին ինչ-որ մեղադրանքներ[2]:

Ուկրաինայի աջափնեա երկրամասերը 1648-1654 թթ. պատերազմով չգտան իրենց ազատութիւնը:

Տեղական ազգաբնակչութեան պայքարը լեհական տիրապետութեան դէմ շարունակուեց նաեւ յետագայ տարիներին: Կամենեցի լեհական կայազօրը միշտ էլ իրեն զգում էր թշնամիների շրջապատում եւ լաւ գիտակցում էր, որ կազակների արշաւանքի դէպքում քաղաքի հիմնական բնակչութիւնը օժանդակելու եւ համագործակցելու է նրանց հետ:

Այս մասին ուշագրաւ են Ա. Պիգուլի դիտողութիւնները:

Ինչպէս արդէն առիթ ունեցանք նշելու, 1666 թ. հայոց արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչը, կաթոլիկ քարոզիչների ընկերակցութեամբ, գալիս է Կամենեց, այստեղ եւս եկեղեցական Ունիան իրագործելու մտադրութեամբ: Վատիկանի գործակալներն իրենց հետ բերում էին արքունական յատուկ հրովարտակ, որով կարգադրութիւն էր արւում Կամենեցի ամրոցապետին՝ պահապաններ եւ զօրական ուժեր տրամադրել այդ տխրահռչակ «առաքեալներին», «եթէ խռովութիւն ինչ ծագեսցի»:

Երբ անհրաժեշտ եղաւ ժողովրդին հնազանդեցնելու համար դիմելու ամրոցապահ զօրքերի միջամտութեանը, ամրոցապետի օգնականը, ինքն անձամբ գալով արքեպիսկոպոսի մօտ, խորհուրդ տուեց ցուցաբերել մեծ զգուշութիւն եւ չվրդովեցնել քաղաքի հայերին, «որոց ի ձեռս նոցա է քաղաքն Կամենեց, քաղաք կարեւոր, աւար պատուական համարեալ առ օտարս»: Լեհ բնակչութեան թիւը քաղաքում փոքր է, ասում էր հրամանատարը, իսկ ուկրաինացիների վրայ յոյս դնել անհնարին է, այլ «ընդհակառակն ամին ի ժամ պաշարման հարկ է հսկել ի վերայ տանց նոցա, զի մի մուծցեն զթշնամին ի ներքս ի քաղաքն»[3]:

Անշուշտ, տրամագծօրէն հակադիր դիրքորոշման մէջ էին ուկրաինացիների ազատագրական պատերազմների շրջանում ուկրաինահայ գաղթավայրերի վերնախաւերը:

Այս խաւի մտորումներն ու դիրքորոշումը արտայայտողներից է ոմն պարոն Քրիշթոֆ Մուստաֆայի որդի, պան Միքոյի եղբայր Վարդերեսը: Նա, 1654 թ. ընդօրինակած ժամագրքի յիշատակարանում, իր ժամանակաշրջանը բնորոշում է՝ «դառն եւ տրտում, վշտալից

1 Նոյն տեղում, էջ 92-93

2 Նոյն տեղում, էջ 215 [Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրութիւնները (XVI դ)՝ աշխատասիրութեամբ Վ. Ռ. Գրիգորեանի, Երեւան, 1963]:

3 «Բռնի միութիւն», էջ 72

եւ թշուառական» խօսքերով: Նրա «սիրտը նեղացած է», «լեարդը այրուած», որովհետեւ Բոգդան Խմելնիցկին (Բոգդանին նա կոչում է «չ Պօկտան» այսինքն՝ «ոչ աստուածատուր») երկու տարի է, ինչ պաշարել է «զաշխարհս Իլախաց՝ զքաղաքս, զգիւղս, զգաւառս, զգիւղաքաղաքս» եւ այլն[1]:

Ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի նման գնահատականը՝ «պարոնների» ու «պանների» գնահատականն էր: Ինչպէս տեսանք ուկրաինահայ գաղթավայրերի բնակչութեան մեծամասնութիւնը ոչ միայն համակրանքով էր վերաբերւում իր նոր հայրենիքի ազատագրական ջանքերին, այլեւ ակտիւօրէն մասնակցում էր դրան:

***

Ռուսական պետութիւնը XVII դ. կէսերից միջազգային յարաբերութիւնների ասպարէզ մտաւ որպէս հզօր միապետութիւն, որն ի վիճակի էր ոչ միայն պաշտպանելու իր շահերն ու իրաւունքները, այլեւ պատրաստ էր օգնութեան ձեռք կարկառելու օտար լծի տակ կեղեքուող բոլոր այն ժողովուրդներին, որոնք իրենց ազատագրութեան յոյսերի ու ջանքերի իրականացումը կապում էին ռուսական պետութեան օժանդակութեան հետ:

Հայաստանի ազատագրութեան գործի կազմակերպիչներն աչալուրջ հետեւում էին հիւսիսային հզօր պետութեան առաջընթացին եւ յաջողութիւններին: Ուկրաինահայ գաղթավայրերի հետ աշխոյժ կապեր ունենալով, նրանց քաջ յայտնի էր, որ ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի յաջողութիւնը մեծ չափով պայմանաւորուած էր ռուսական պետութեան օգնութեամբ, ուստի հայ եկեղեցու նշանաւոր գործիչներից մէկը՝ Յակոբ կաթողիկոս Ջուղայեցին (1655-1680), Ուկրաինայի ազատագրումից քիչ յետոյ (հաւանաբար 1673 թ.) յատուկ խնդրագիր է ուղարկում Ալեքսեյ Միխայլովիչ թագաւորին:

Խնդրագրի մէջ կաթողիկոսը նկարագրում է հայ ժողովրդի թշուառ ու տաժանելի վիճակը պարսկական հարստահարիչների տիրապետութեան տակ:

«Պարսկական պաշտօնեաները,- գրում է նա,- դրել են մեր եւ մեր եկեղեցու վրայ ծանրագոյն հարկեր, եւ մեզ, որ խեղճութեան ու աղքատութեան պատճառով անկարող ենք վճարել այդ հարկերը, նետում են բանտ, չարչարում ու տանջում, եւ վերջապէս, ստիպում են ընդունել իրենց հաւատը, մի բան, որ հանդիսանում է մահմեդական (իշխողների) վերջնական ու գլխաւոր նպատակը»[2]:

Կաթողիկոսը, առաջին անգամ լինելով, դիմում է ռուսական ցարի օգնութեանը: Խնդրում է կարգադրել Պարսկաստան առաքուող ռուս դիւանագէտներին՝ ներգործել Պարսկաստանի վրայ, արգելք հանդիսանալ հայ ժողովրդի անօրինակ կեղեքմանը: Նա վստահ է այդպիսի միջամտութեան դրական արդիւնքների նկատմամբ, որովհետեւ քաջ տեղեակ է, որ «ռուսական իշխանութիւնը պարսիկների աչքում մեծ նշանակութիւն ունի»[3]:

Յակոբ Ջուղայեցու այս ուշագրաւ խնդրագիրը գրուած է լատիներէն լեզուով: "Армяно-

1 «Կամենից», էջ 190-191

2 Армяно-русские отношения в XVII веке, сборник документов, подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, Ереван, 1953, с. 257

Փաստաթուղթը հրատարակուած է լատիներէն բնագրով եւ ռուսերէն թարգմանութեամբ: Մէջբերուած հատուածի հայերէն թարգմանութիւնը մերն է:

3 Նոյն տեղում, էջ 258

"русские отношения в XVII веке" փաստաթղթերի ժողովածուի կազմողները (Վ. Պարսամեան, Վ. Ոսկանեան, Ս. Տէր-Աւետիսեան), լիակատար իրաւունք ունենալով, եզրակացրել են, որ խնդրագիրը շարադրած պէտք է լինի նշանաւոր եկեղեցական ու մշակութային գործիչ լատինագէտ Ստեփանոս Լեհացին[1]:

Արժէ համառօտակի ծանօթանալ այս անձնաւորութեան գործունէութեան հետ:

1646 թ. Ստեփանոսի ծնողները, որ Լւովի հայ գաղութում ազդեցիկ դիրք ունէին, տեսնելով կաթոլիկների ոտնձգութիւնների եւ հայերին բռնի կաթոլիկացման նրանց ձգտումները, Լւովից Էջմիածին են ուղարկում իրենց երիտասարդ որդուն, որը սովորել էր լատինական դպրոցում եւ տեղեակ էր քերականական ու փիլիսոփայական գիտութիւններին:

Այս մասին Ա. Դաւրիժեցին գրում է. «Եւ ի ժամանակին՝ յորում Նիկոլ եպիսկոպոսն Իլովայ նեղէր եւ վտանգէր զհայազուն ժողովուրդն՝ որ յԻլով էին, ծնողք Ստեփանոսին՝ վասն բարեպաշտութեան եւ վասն ուղղափառութեան, հանեալ զսա յԻլովայ՝ առաքեցին ի սուրբ աթոռն Էջմիածին, ի ժամանակս Փիլիպպոս կաթողիկոսին»[2]:

Նա հայերէն չգիտէր: Կարճ ժամանակում սովորում է «զլեզու եւ զգիր Հայոց», եւ մի շարք արժէքաւոր գրքեր է թարգմանում լատիներէն եւ լեհերէն լեզուներից (այս մասին քիչ յետոյ):

Կաթոլիկ պրոպագանդայի գործակալ Ա. Պիդուն, անզուսպ ատելութեամբ լցուած Ստեփանոսի հանդէպ, կոչում է նրան «չիլ մոլորեցուցիչ», բայց ստիպուած է արձանագրելու, որ Հայաստանում նրա հռչակն այնքան էր տարածուած, որ «իբրեւ զերկրորդ ամն Բարսեղ (Կեսարացի) ունէին զնա»: Ստեփանոսը Էջմիածնից շարունակում է ակտիւ մասնակցել Ուկրաինայի հայերի՝ կաթոլիկների դէմ մղած պայքարին: Իր եղբօրորդուն՝ Թէոդորոս Վարդանովիչին նա Էջմիածնում դաստիարակելուց յետոյ, արքեպիսկոպոս ձեռնադրել տալով՝ ուղարկում է Լւով՝ Նիկոլի դէմ պայքարելու եւ Ունիայի գործը տապալելու մտադրութեամբ: Էջմիածնի հայ հոգեւորականութիւնը Ստեփանոսի միջոցով (որն իր կապերը չէր խզում ուկրաինահայ գաղթավայրերի հետ) հնարաւորութիւն ունէր հետեւելու ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի ընթացքին եւ տեղեկանալու այդ պայքարի յաջող աւարտման գործում ռուսական պետութեան կատարած խոշոր դերի մասին:

Այսպիսով, Ալեքսեյ Միխայլովիչին հասցէագրուած վերոյիշեալ խնդրագիրը, մի կարեւոր փաստաթուղթ է, որի շարադրման հանգամանքները սերտ աղերսի մէջ են մտնում ուկրաինական ժողովրդի հետ միասին պանական Լեհաստանի ճորտատիրական լծի դէմ պայքարող հայկական գաղթավայրերի աշխատաւոր խաւերի պայքարի եւ ձգտումների հետ:

* * *

Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած հայերը, պայքար մղելով յանուն ազգային իրենց ավանդոյթների ու մշակոյթի պահպանման, ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական պայքարի ժամանակաշրջանում ստեղծեցին նաեւ կուլտուրական նոր արժէքներ, զարկ տուեցին ուսումնական գործին, բազմացրին հայրենի երկրից իրենց հետ բերած բազմաբովանդակ ձեռագրեր եւ այլն:

1 Նոյն տեղում, էջ 251
2 Ա. Դաւրիժեցի, էջ 314

Համառօտ ակնարկով ծանօթանանք նրանց մշակութային կեանքին:

Ուկրաինայի քաղաքներում բնակութիւն հաստատած հայերը, տարագրուելով հայրենի երկրից, իրենց հետ բերել էին նախ եւ առաջ դարերի ընթացքում ժողովրդի կողմից ստեղծուած ու մշակուած ժողովրդական բանահիւսութեան հիանալի ստեղծագործութիւններ:

Այդ ստեղծագործութիւնները թարմ էին մնացել նաեւ Ղրիմի հայ գաղթավայրերի բնակչութեան մէջ, եւ այս կամ այն առիթով գրանցւում էին ղրիմաբնակ հայ գրիչների կողմից իրենց ընդօրինակած ձեռագրերի էջերում:

Ուկրաինահայ գաղթավայրերում գրանցուած հայկական ժողովրդական երգերի քանակը շատ սահմանափակ է: Այնուամենայնիւ, մեզ հասած սակաւաթիւ բանահիւսական փշրանքներն իսկ վկայում են նրանց գոյութեան եւ լայն տարածման մասին:

Սիմէոն Զամոստեցին, օրինակ, իր «Ուղեգրութեան» մէջ, մի քանի անգամ հոգեկան իր ծանր ապրումները արտայայտելու համար դիմում է ժողովրդական անգուգական հայրեններին, եւ գրանցում է նրանցից որոշ քառեակներ:

1611 թ. Հռոմում եղած ժամանակ, գտնուելով անմխիթար վիճակում, նա յիշում է իր հարազատներին եւ գրանցում հետեւեալը.

«Իմ տէր եւ ստեղծող Աստուած
Ամենից ես դու ողորմած,
Իսկ ես վասն էր եմ անկած
՚Ի ի օտար աշխարհ վտարած:
Ամէնքն են իւր տեղ նստած
Մեծամեծ փառաց են հասած,
Իսկ ես ամէնէն զրկած,
Խիստ ողորմ, սիրելեաց զատած...» եւ այլն[1]:

Մի այլ առիթով նա գրանցում է իր բազուկներին միայն ապաւինած հազարաւոր հայ պանդուխտների մտորումների արգիւնք հանդիսացող, սոցիալական խորն բովանդակութեամբ հետեւեալ քառեակը.

«Յաշխարհս ես ի շուրջ եկի
Չի գտայ սրտով սիրելի.
Զխելքուկս ի վրայ բերի,
Իմ բազուկս էր իմ սիրելի»[2]:

Կասկած չի կարող լինել այն մասին, որ Սիմէոնը միայնակ չէր: Հայկական ժողովրդական երգերի գիտակների ու սիրողների թիւը անսահմանափակ էր Ուկրաինայի հայկական գաղթավայրերում: Այդպիսիններից էր նաեւ պապական դպրանոցի աշակերտներից 18-ամեայ Յովհաննէս Բարթոսովիչը եւ ուրիշներ[3]:

1 ՀԱ, 1933, էջ 482
2 ՀԱ, 1935, էջ 89
3 «Բռնի միութիւն», էջ 119

Ուկրաինահայ գաղթականներն իրենց հայրենիքից բերել էին նաեւ հարիւրաւոր մեծարժէք ձեռագրեր՝ փիլիսոփայական, քերականական, գիտական եւ այլ բովանդակութեամբ զարդարուած գունագեղ ու անզուգական մանրանկարներով: Այդ ձեռագրերը յետագայում ուկրաինահայ ճարտար գրիչների կողմից բազմացւում են եւ հայրենի երկրից, յատկապէս Կիլիկիայից, բերւում են նոր մեծարժէք ձեռագիր գրքեր:

Այսպէս, օրինակ, 1379 թ. Կոստանդին կաթողիկոսի կարգադրութեամբ Լւովից Սիս է մեկնում Յովհաննէս քահանան, եւ ձեռնադրուելով արքեպիսկոպոս «ամենայն Ռուսաց աշխարհին եւ Վլախաց»՝ վերադառնում է Լւով: Նա իր հետ բերում է Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատութեան մի ընտիր ընդօրինակութիւն՝ «Մեծ Նուէրք աշխարհիս Ռուսաց» (այսպէս է գրուած յիշատակարանում)[1]:

1616 թ. Լւովում հիմնւում է նաեւ հայկական տպարան, որը, սակայն, կարճատեւ կեանք է ունենում, այստեղ լոյս են ընծայւում մի Սաղմոս եւ բժշկական-աղթարական գիրք:

Յետաքրքրական է Սաղմոսի յիշատակարանը, ուր գրուած է. «Ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Իլախաց քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ Նշխան սուրբ Աստուածածնին, ձեռամբ յոքնամեղ Քարմատանենց Յովհաննէս երիցուս, զորս հոգս արեալ մեծաւ աշխատութեամբ եւ բազում ծախիւք տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցայ մինչեւ գիրն ի գլուխ հանի եւ նոր կազմարան սահմանեցի» եւ այլն[2]:

Ուկրաինահայ գաղթավայրերի եկեղեցիներում եւ մասնաւոր մարդկանց մօտ պահւում էին մեծ քանակութեամբ ձեռագիր եւ տպագիր գրքեր:

Վրթանէս վարդապետ Սռնկեցին, որ երկար ժամանակ ապրել է Մոլդաւիայի Սուչաւա քաղաքում, ապա՝ 1567 թ. դարձել է Կաֆայի (Թէոդոսիա) եպիսկոպոս, յատուկ մի բանաստեղծութեամբ պախարակում է այն մեծատուն մարդկանց, որոնք սեփական ձեռագրեր ունեն եւ չեն թոյլ տալիս ուրիշներին օգտուել դրանցից: Բանաստեղծութեան վերնագրում գրուած է. «Ոմն մեծատուն ունէր Քարոզգիրքը, մեկնիչ Արարածոց՝ ոսկիապատ եւ գեղեցիկ, ոչ գիտէր գիր եւ ոչ կարդալ, եւ ոչ տայր մարդոյ կարդալ, որ ուսանէին». այս կոնկրետ դէպքն առիթ է հանդիսացել շատ գեղեցիկ այդ բանաստեղծութեան յօրինման, որի մէջ հեղինակը լայն ընդհանրացումներ է անում: Նա գրում է.

«Մէկ մարդ մի ճրագ է վառեր
Բարձր մի տեղ դրեր.
Մէկ մի խիստ յիմար եղեր:
Ըզճրագն ի վայր է առեր:
Տարեր սնտուկն է դրեր,
Ըզնորին լոյսն էր արգիլեր:
Վայ այն մարդոյն հոգոյն
Որ ըզլոյսն, առեալ թագուցեր:

1 «ԺԴ դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկեան, 1950, էջ 129

2 Մ. Բժշկեան, էջ 99-100

Մէկ մի Աստուծոյ համար
Լեռնէն աղբիւր է բերեր,
Մէկ մի չարութիւն արեր,
Գնացել աղբիւրն արգիլեր,
Ծառոնք ծարաւած թողեր,
Մարաւուն բազումք են մեռեր:
Վայ այն մարդուն հոգւոյն եւ գլխոյն,
Որ արեան պարտաւոր է եղեր»[1]:

Հեղինակի կարծիքով համահաւասար մեղք են գործում նաեւ նրանք, որոնք գրուանի տակ են պահում գրքերն ու արգելում ուրիշներին կարդալ դրանք:

Իհարկէ, ոչ բոլոր գրքատէրերն են վարուել վերոյիշեալ մեծատան նման: Ընդհակառակը. շատերը բազմաթիւ ձեռագրեր են նուիրաբերել եկեղեցիներին, որով եւ հնարաւորութիւն են ստեղծել աւելի մեծ թուով ընթերցողների կարդալ եւ օգուտ քաղել այդ գրքերից: Այսպէս, օրինակ, Կամենեցի Ս. Նիկողայոսի հայկական եկեղեցու նուիրաբերութիւնների մատեանում 1616 թ. տակ գրանցուած է տուեալ այն մասին, որ եկեղեցին ոմն Խաչատուր աւագերէցից նուէր է ստացել 11 գիրք (10-ը ձեռագիր, 1-ը տպագիր)[2]:

Անշուշտ, այսպիսի նուիրաբերութիւններ արւում էին նաեւ ուրիշների կողմից եւ Ուկրաինայի հայկական եկեղեցիներին կից ստեղծուել էին արժէքաւոր ձեռագրերով հարուստ գրադարաններ:

Այն բանից յետոյ, երբ լեհական իշխանութիւնները զինական ուժի գործադրմամբ գաւթեցին Լւովի հայկական եկեղեցիները եւ յանձնեցին դրանք կաթոլիկութիւն ընդունած Նիկոլ Թորոսովիչին՝ այդ եկեղեցիներում պահուող հայկական ձեռագրերը, ինչպէս ասուեց, մեծ մասամբ թալանուեցին ընչաքաղց ու ապիկար եպիսկոպոսի կողմից ու վաճառուեցին պատահական մարդկանց: Այս մասին ուշագրաւ տուեալներ են հաղորդում մեզ ծանօթ Սիմէոնը իր 1636 թ. ընդօրինակած ձեռագրի յիշատակարանում եւ Առաքել Դաւրիժեցին իր «Պատմութեան» մէջ:

Դրանցից առաջինը Նիկոլի կողմից կողոպտուած ձեռագրերը թուարկում է այսպէս՝ «...Արծաթապատ ոսկիակազմ մագաղաթ ոսկեգիր բազում աւետարանս եւ յոլով շարականս, ոսկով եւ լաջվարդով նկարեալ պատուական պատկերս, եւ Բ (Ճ)-ԳՃ (200-300) ազնիւ գրեանս վարդապետականս՝ ի թագաւորական խաղնայէ ի դուրս եկած, մանաւանդ Սրսու եւ Քաֆայու, Բ-Գ (2-3) Աստուածաշունչք, այլ եւ մեկնիչք եւ քաղուածք, Փիլոն գիրք եւ Քարոզգիրք, Տօնականք, Սարգիս գիրք, Սաղմոսի մեկնիչք եւ Արարածոց մեկնիչք եւ այլ անթիւ ազնիւ գրեանք, նաեւ յոլով արտաքին գիրք, զորս ոչ կարեմ մի ըստ միոջէ գրել, զի ձանձրացին լսողքն: Եւ զայն ամենայն վերոյգրեալ Մուրայ խազինան՝ ի միում ամի կորոյս»[3]:

Առաքել Դաւրիժեցու տուեալով Նիկոլի կողմից գրաւուած ձեռագրերը թուով «աւելի քան գհազար փերթ (էին), ամենեքեան ընտիր եւ պատուականք եւ վարդապետականք»: Այնուհետեւ Դաւրիժեցին հաղորդում է, որ «Բազում գրեանք եւ անօթք ի նորին վաճառելոցն

1 Ն. Ակինեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, 1921, Վիեննա, էջ 31

2 Մ. Բժշկեան, նշ. աշխ., էջ 147

3 ՄՄ ձեռ. N 1004, էջ 193ա

եկին յերկիրս Հայոց՝ եւ առ մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին, որ սքանչելի էր տեսողացն»[1]:

Այդ ձեռագրերից շատերը այժմ էլ պահւում են Մաշտոցի անուան Մատենադարանում եւ շարունակում են հիացմունք պատճառել իրենց մանրանկարների գունագեղութեամբ, գեղեցիկ ու համաչափ տառաձեւերով, կազմերով եւ այլ արժանիքներով:

Դրանցից է, օրինակ, Մատենադարանի N 351 Աստուածաշունչը, որը նկարազարդել է 1619 թ. Ղազար Բաբերդացին, Լւովում: Ղազար Բաբերդացին ձեռքի տակ ունեցել է լւովցի փարիզաբնակ նշանաւոր նկարիչ եւ փորագրիչ Ցիարնկոյի նկարազարդած Աստուածաշունչը, եւ հետեւելով նրա ոճին, հայկական եկեղեցական նկարչութեան մէջ ներմուծել է եւրոպական նկարչութեան որոշ տարրեր: Ղազար Բաբերդացու նկարազարդած Աստուածաշունչը յետագայում տարածուեց շատ օրինակներով[2]:

Ուկրաինահայ գաղթավայրերում որոշակի քայլեր են արուել նաեւ ուսումնական-դպրոցական գործի զարգացման ուղղութեամբ: Սկզբում, ինչպէս ամէնուրեք Հայաստանում, կրթական գործը կենտրոնացուած էր քահանաների ձեռքում, որոնք իրենց տանը գրագիտութիւն եւ կրօնական նախնական գիտելիքներ էին սովորեցնում մի քանի պատանիների, յատկապէս իրենց ազգականներին, նրանց նախապատրաստելով հոգեւոր կոչման:

XVI դ. վերջերից հայկական որոշ ընտանիքներ, գերազանցապէս գաղթավայրերի հայկական վերնախաւերից, իրենց պատանիներին ուսման են տալիս կաթոլիկական զանազան միաբանութիւնների (եզուիտների, թէատինեանների եւ այլն) կողմից բացուած դպրոցներում, որտեղ ուսուցումը տարւում էր լատիներէն ու լեհերէն լեզուներով: Սակայն շուտով, ուկրաինահայերը, գիտակցելով կաթոլիկական դպրոցների վնասակար ազդեցութիւնը իրենց պատանիների վրայ, եռանդուն քայլերի են դիմում հայկական դպրոցներ հիմնելու ուղղութեամբ:

Որոշակի տեղեկութիւն է հասել մեզ այն մասին, որ XVII դ. սկզբին արդէն, Լւովում գործում էր հայկական դպրոց, ուր սովորում էին աւելի քան ութսուն պատանիներ: Այս մասին կարեւոր տուեալ է հաղորդում Սիմէոն Զամոստեցին.

«Եւ կայր դպրոցն,- գրում է նա,- աւելի քան ութսուն տղայ, որք ուսանէին զանազան ուսմունս՝ զերաժշտական, քերական, առոգանութիւն եւ արուեստ համարողական»[3]:

Նման մի դպրոց բացւում է նաեւ Կամենեցում 1604 թ.: Դպրատան կառուցման վրայ Կամենեցի հայերը ծախսում են 170 ֆլորի[4]:

Կրթական գործը Լւովում 1663 թ. Նիկոլ եպիսկոպոսի հաճութեամբ իր ձեռքն է առնում Վատիկանի հաւատի ծաւալման ժողովը, ուղարկելով Լւով կաթոլիցիզմի մոլի պրոպագանդիստ, հայագէտի հռչակ վաստակած եւ հայերէնին քաջ գիտակ Կղեմէս Գալանոսին, իր փոխանորդ ու գործի շարունակող՝ Ա. Պիդուի եւ մի սպասաւորի ուղեկցութեամբ:

Կ. Գալանոսի դպրոցի միակ նպատակն էր Վատիկանին հնազանդ կաթոլիցիզմի ոգով դաստիարակուած հոգեւորականներ պատրաստել ուկրաինահայ գաղթավայրերի եկեղեցինե-

1 Ա. Դաւրիժեցի, էջ 196

2 «Արուեստը հայ գաղութների մէջ», ՀԱ, 1934, էջ 129

3 ՀԱ, 1935, էջ 163

4 Մ. Բժշկեան, նշւ. աշխ. էջ 155

րի համար:

Սկզբում, մեծ դժուարութեամբ միայն, նրանց յաջողւում է հաւաքել մի քանի աշակերտներ (ընդամէնը 6-7 հոգի): Հայերը, գիտակցելով այդ նորաբաց դպրոցի ուղղութիւնն ու նպատակները՝ հրաժարւում են իրենց որդիներին ուղարկել այնտեղ սովորելու:

Հայերի վստահութիւնը ձեռք բերելու դիտաւորութեամբ նրանք լուրջ ուշադրութիւն են դարձնում նաեւ հայոց լեզուի ուսուցմանը:

1668 թ. Կ. Գալանոսի յաջորդ Ա. Պիդուի ձեռներէցութեամբ այդ դպրոցի աշակերտները բեմադրում են Հռիփսիմէի նահատակութեան մասին հայերէն լեզուով գրուած եւ լեհերէն մեկնութիւններ ունեցող մի ողբերգութիւն: Դպրոցական այդ թատրոնի ներկայացումը գրաւում է իրեն մեծաքանակ հանդիսատեսներ, այնքան, որ «չեղեւ հնար զդրունս դպրանոցին պահելոյ՝ խռնեցան ի ներքս բազմութիւն ժողովրդոց, այլազգաք եւ այլասեռք, հետաքրքիր գոլով վասն անլուր տեսարանին ի մէջ Հայոց»:

Ներկայացումը մեծ յաջողութիւն է ունենում. «Ցնծութեամբ կարի մեծաւ ընկալաւ զողբերգութիւնն քաղաքն համօրէն, լատինացիք ասեմ եւ հայք եւ ռուսք»,- յայտնում է Ա. Պիդուն[1]: Անհրաժեշտ է լինում ներկայացումը կրկնել 4 անգամ (1668 թ. ապրիլի 9-ին, 10-ին, 11-ին, 12-ին): Բեմադրութեան ձեւաւորումը նոյնպէս կատարում են աշակերտները, իսկ երաժշտական համարների կատարման համար վարձւում է նուագախումբ:

«Առ ի հաճել զմիտս ժողովրդեան», այսինքն հայերի սիրտը գրաւելու մտադրութեամբ, Ա. Պիդուն մի այլ բեմադրութիւն էլ կազմակերպում է յաջորդ՝ 1669 թ.: Այս անգամ բեմադրութեան նիւթ է ընտրւում Հայ եկեղեցու կողմից չընդունուող Քաղկեդոնի ժողովի գումարման գործում մեծ դեր կատարած Պուլխերիա կայսրուհու վարքը: Ներկայացումը լատիներէն լեզուով էր, որոշ մասերի լեհերէն մեկնութեամբ: Երկիւղ կրելով դպրոցի խարխուլ շինութեան կործանումից, այս անգամ բեմադրութիւնը տեղի է ունենում բացօթեայ՝ հայոց մայր եկեղեցու բակում[2]:

Այս երկու ներկայացումներն էլ, կազմակերպուած լինելով կաթոլիկ քարոզիչների կողմից, հետապնդում էին բացորոշ կերպով մի նպատակ, այն է՝ նպաստել Ունիայի գործին: Այնուամենայնիւ, դրանք, որոշակի նշանակութիւն ունեցան Լւովի հայկական գաղութի մշակութային կեանքում եւ մտան բազմադարեան հայ թատրոնի պատմութեան մէջ, որպէս նոր թատրոնի կազմակերպման ուղղութեամբ կատարուած առաջին քայլերից մէկը[3]:

* * *

Ուկրաինայի հայերը XVI-XVII դդ. ընթացքում պատմագրութեան ու գեղարուեստական ու գիտական գրականութեան բնագաւառներում եւս ստեղծեցին որոշ արժէքներ, որոնք դուրս գալով գաղթավայրի սահմաններից՝ տարածուեցին ու ստացան լայն ժողովրդայնութիւն եւ հաստատուն կերպով տեղ գտան հայ ժողովրդի ստեղծած բազմադարեան մշակոյթի գանձարանում:

Ուկրաինահայ պատմագիրներն իրենց աշխատութիւններում գրանցել են բազմաթիւ ու-

1 «Բռնի միութիւն», էջ 203, նաեւ 250

2 Նոյն տեղում, էջ 208, 250

3 Георг Гоян, 2000 лет армянского театра, т. II, Москва, 1952, с. 374

շագրաւ ու վստահելի տուեալներ, որոնք նպաստում են նաեւ Ուկրաինայի, Ռուսաստանի, Լեհաստանի, ինչպէս եւ հարեւան այլ երկրների պատմութեան ուսումնասիրութեանը:

Այդպիսի պատմական գրուածք է օրինակ՝ Յովհաննէս Աւագերէցի «Տարեգիրք Կամենիցայ» աշխատութիւնը[1]*:*

Իր հիմնական մասով այն ընդգրկում է XVI դ. վերջի եւ XVII դ. սկզբի ժամանակաշրջանը: Այստեղ վստահելի տուեալներ են գրանցուած զապորոժեան կազակների, թաթարների, թուրքերի ու լեհերի դէմ մղած մարտերի, ռուս-լեհական յարաբերութիւնների, պանական Լեհաստանի ճորտատիրական լծի տակ կեղեքուող ժողովուրդների վիճակի, Ուկրաինայի հայկական գաղթավայրերի ներքին կեանքի եւ բազմաթիւ այլ հետաքրքրական նիւթերի մասին: Ծանօթանանք մի քանի գրանցումների հետ:

1563 թ., օրինակ, գրանցուած է հետեւեալ տուեալը. «Թվ. ՌԺԲ (1563) եկաւ Մոսքովի գնացն ի Թագաւորի աշխարհն, եւ զՊոլոցքա քաղաքն էառ, բայց ոչ իւրով կարողութեամբ, այլ... բռուզ ազգին ապստամբութեամբ. զոր նոքա ի մէջ բերդին հինգ վեց տեղ հրով այրեցին, եւ ապա ամենայն քաղաքն ի բերդն շիւարեցան, եւ ինքեանք եռուն զբերդն թշնամեաց...»[2]*:*

Նոյն թուականի (1563) տակ հետաքրքրական տուեալներ են հաղորդւում զապորոժեան կազակների ղեկավարներից մէկի՝ Դիմիտրի Իւանովիչ Վիշնեւեցկու՝ Մոլդաւիա կատարած ինքնագլուխ եւ իր համար կորստաբեր արշաւանքի մասին[3]*:*

1563 թ. դէպքերի կապակցութեամբ «Տարեգրութեան» հեղինակը վշտով արձանագրում է լեհ մագնատների բարքերի ապականութիւնը եւ նրանց անկարողութիւնը թշնամիներին դիմագրաւելու: «Մեծ իշխանքն եւ մեծամեծքն,- գրում է նա,- թուլասիրտ են դարձել եւ ձեռքն լքեալ եւ ծունկքն կթոցեալք, մանաւանդ յուտել եւ ի ըմպել, եւ զմիմեանս սպանանել եւ զազրագործելն պատրաստագոյն են, քան զթշնամիսն հալածել եւ կամ կոտորել»[4]*:*

1591 թ. տակ գրանցուած դէպքերից ուշագրաւ է Ղրիմի թաթարների եւ ռուսական իշխանութիւնների միջեւ տեղի ունեցած պատերազմի մասին վկայութիւնը, որտեղ ասուած է. «Թվ. ՌԽ. (1591/92) ղաթարի խանն ինքն եւ եղբարքն իւր բազում զօրօք գնաց ի վերայ Մոսկովի երկրին եւ Մոսքովի գնեազն իւր հեծելով պատերազմեցաւ ընդ անօրէնսն եւ կոտորեաց զնոսա մինչեւ իսպառ. եւ էին թուով իբրեւ 100000 եւս բազումս կենդանի կալաւ...»[5]*:*

Շատ կարեւոր են նաեւ «Տարեգրութեան» մէջ, 1595-1596 թթ. գրանցուած տուեալները՝ զապորոժեան կազակների խիզախ ղեկավարներից մէկի՝ Նալիւայկոյի մասին (այդ տուեալների հետ արդէն առիթ ունեցանք ծանօթանալու), ինչպէս նաեւ կեղծ-Դմիտրիի մասին տուեալները՝ գրանցուած 1605 թ. տակ:

Յովհաննէս Աւագերէցի «Տարեգրութիւնը» գրուած է հայերէն լեզուով: Շարունակութիւնը, ուր գրանցուած են 1611-1624 թթ. դէպքերը, շարադրել են նրա թոռներ Յակոբն ու Աւգսենդը՝ թաթարերէն լեզուով, բայց հայերէն այբուբենով: «Տարեգրութեան» այս մասում յատկապէս կարեւոր են Ցեցորայի եւ Խոտինի պատերազմների մասին եղած փաստալից գրանցումները:

1 Հրտ. Ղ. Ալիշան, Կամենից, էջ 15-66

2 Նոյն տեղում, էջ 32-33

3 Նոյն տեղում, էջ 33-34

4 Նոյն տեղում, էջ 37-38

5 Նոյն տեղում, էջ 58

Ոչ պակաս արժէքաւոր պատմական գրուածք է մեր կողմից արդէն մէկ անգամ յիշատակուած Յովհաննէս Կամենեցու «Պատմութիւն պատերազմին Խոթինու» նորայայտ աշխատութիւնը:

Ուկրաինահայ պատմագրութեան մէջ ամենապատուաւոր տեղը, սակայն, պատկանում է մի շարք աշխատութիւնների ու յիշատակարանների հեղինակ Սիմէոն Զամոստեցուն (Լեհացուն):

Սիմէոնը ծնուել է 1584 թ.: Նրա ծնողները գաղթել էին Ղրիմի Կաֆա (Թէոդոսիա) քաղաքից եւ հաստատուել Զամոստիէ (հայկական աղբիւրներում՝ Զամոսցա) նորաշէն քաղաքում:

Լինելով ուշիմ, հետաքրքրասէր եւ գիտութեան ծարաւ երիտասարդ, 1608 թ., իր սուղ միջոցներով, Սիմէոնը ձեռնարկում է հեռաւոր ճանապարհորդութեան: Դուրս գալով Լւովից եւ 11 տարի (1608-1619 թթ.) շրջագայելով՝ նա այցելում է հետեւեալ նշանաւոր վայրերը (բերում ենք ըստ հերթականութեան՝ տալով նրա ճանապարհորդութեան ուղեգիծը)՝ Կոստանդնուպոլիս-Զմիւռնիա-Կոստանդնուպոլիս-Վենետիկ-Հռոմ-Մուշ-Կոստանդնուպոլիս-Կահիրէ-Երուսաղէմ-Հալեպ-Կոստանդնուպոլիս-Լւով:

Ուղեգրական իր յուշերի մէջ նա գրանցել է ստացած տպաւորութիւնները այցելած քաղաքների տեսարժան վայրերի ու յուշարձանների, ժողովրդի տնտեսական դրութեան, նիստ ու կացի, զբաղմունքների մասին: Նրան յատկապէս հետաքրքրում ու զբաղեցնում են իրենց հայրենիքից վտարուած ու տարագիր հայերի հետ կապուած տեղեկութիւնները: «Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչեւ Ստամպօլ, պոլթուն Ռուումէլին մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆալիկ, որ հայ չլինայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի»,- գրում է նա, եւ հայերի մասին արժէքաւոր դիտողութիւններով լցնում իր «Ուղեգրութեան» էջերը:

Յատկապէս արժէքաւոր են նրա «Ուղեգրութեան» այն հատուածները, որոնք վերաբերում են ուկրաինահայ գաղթավայրերի (առաջին հերթին Լւովի) եւ թիւրքական լծի տակ կեղեքուող հայերի վիճակի մասին:

Թուրքիայում հայերը, գրում է նա, «յոյժ աղքատ եւ չքաւոր են, զի միշտ զրկեն, զզուեն, տուգնեն, զրպարտեն եւ առաւել հարկ պահանջեն: Եթէ տասն որդի ունիցի ոք, ամենէն խարաճ առնուն...: Ամէն տեղ հարամիք էին, սոխթանի, ամէն տեղ թալան եւ եաղմայ եւ զուլում»:

Սոյն յօդուածի տարբեր մասերում, այլեւայլ հարցերի կապակցութեամբ, բազմիցս առիթ ունեցանք քաղուածքներ մէջբերելու Սիմէոնի «Ուղեգրութիւնից», ինչպէս եւ նրա «Վիպասանութիւն Նիկոլական» չափածոյ գրուածքից ու Մատենադարանի N 1004 ձեռագրի ընդարձակ յիշատակարանից:

Անտարակոյս, Սիմէոնի գրուածքները, յատկապէս նրա «Ուղեգրութիւնը», իր նշանակութեամբ դուրս գալով ուկրաինահայ գաղթավայրերի շրջանակներից, պատուաւոր տեղ են գրաւում XVII դ. հայ պատմագրութեան մէջ՝ ընդհանրապէս:

XVII դ. հայ գրականութեան գործիչների շարքում ոչ պակաս պատուաւոր տեղ է գրաւում մեզ արդէն ծանօթ Ստեփանոս Լեհացին՝ իր բեղմնաւոր թարգմանչական ու հասարակական գործունէութեամբ:

1646 թ. կաթոլիկների դէմ պայքարը ծաւալելու համար Լւովից Էջմիածին ուղարկուած երիտասարդ Ստեփանոսը, ինչպէս ասացինք, հայերէն չգիտէր: Կարճ ժամանակում, ջանասիրութեամբ աշխատելով, նա խորապէս ուսումնասիրում է իր մայրենի լեզուն եւ սկսում լատիներէն ու լեհերէն լեզուներից թարգմանութիւններ կատարել: Նրա թարգմանած գրքերից են՝ 1) Յովսէփ Փլաբիոսի «Պատմութիւն պատերազմին հրէից»-ը, 2) Դիոնիսիոս Արիսպագացու աշխատութիւնները (հին հայկական գոյութիւն ունեցող թարգմանութիւնները նրան չեն գոհացնում), 3) «Գիրք պատճառացը», 4) Արիստոտելի «Մետաֆիզիկան» եւ 5) «Հայելի վարուց»-ը եւ այլն:

Ժամանակակիցները սիրով են ընդունում յատկապէս «Հայելի վարուց»-ի թարգմանութիւնը: «Եւ յոյժ համեղ եւ ախորժ են բանք այս գրոյս»,- գրում է այդ մասին Առաքել Դաւրիժեցին[1]:

Թարգմանութիւնը, ըստ երեւոյթին, կատարուած է Սիմէոն Վիսոցկու 1633 թ. լատիներէնից լեհերէն կատարած թարգմանութիւնից (Великое Зерцало), 1660 թ.: Լեհերէն բնագիրը 7 տարի յետոյ Ալեքսեյ Միխայլովիչի հրամանով թարգմանւում է նաեւ ռուսերէնի:

«Հայելի վարուց»-ի մէջ եղող զուարճալի ու գրաւիչ առակներից շատերը այդ ժողովածուի միջնորդութեամբ մուտք են գործում Վարդան Այգեկցու անունով յայտնի ձեռագիր Առակագրքի մէջ, այդտեղից թարգմանւում են արաբերէնի եւ այլն: Դրանցից շատերը տարածւում են ժողովրդի մէջ նաեւ բերանացի կերպով եւ նոյնիսկ մինչեւ մեր օրերը պատմւում են, որպէս հայկական ժողովրդական առակներ[2]: Այսպիսիներից է, օրինակ, այն նախանձոտի առակը, որը գերադասում է որեւէ նուէր ստանալուց՝ զրկուել իր մի աչքից, որպէսզի իր ընկերը զրկուի երկուսից:

Հանրայայտ է նաեւ յամառ կնոջ մասին զուարճալի առակը, որը բերում ենք ստորեւ ամբողջութեամբ:

«Այր ոմն ընդ կնոջ իւրում երթայր երբեմն ընդ արտորայս եւ ասէ զնա՝ տեսանես զիարդ գեղեցկապէս եւ պատշաճաբար արտս հնձեալ է, եւ կինն ընդդիմաբար ասէ՝ ոչ է հնձեալ, այլ խուզեալ, հակառակ կալով բանից առն իւրոյ: Եւ յորժամ այրն ասէր, թէ հնձեալ է եւ կինն ասէր թէ խուզեալ է, բարկացեալ այրն՝ ընկէց զնա ի ջուրն: Արդ, իբրեւ ոչ կարաց խօսիլ՝ եհան զձեռն ի ջրոյն՝ նշան տալով մատամբ ի կերպ մկրատի՝ ցուցանելով մինչեւ ի մահ, թէ արտն խուզեալ է»[3]:

Նման առակներ «Հայելի վարուց»-ում շատ կան:

Իր գործունէութեան առաջին շրջանով XVII դ. մէջ է մտնում նաեւ Կամենեցի աւագերէց Ստեփանոս Ռոշքան (ծն. 1670): Նա գրել է մի ժամանակագրութիւն՝ ուկրաինահայ գաղթավայրերի պատմութեան յիշարժան դէպքերի մասին ուշագրաւ տուեալներով (ընդգրկում է

1 Ա. Դաւրիժեցի, էջ 316

2 Այս մասին կարեւոր տուեալներ է հաղորդում Գալուստ Տէր-Մկրտչեանը իր «Հայկականք»-ի ԺԳ-ԺԹ յօդուածներում (Վաղարշապատ, 1899):

3 Նոյն տեղում, էջ 54

1350-1736 թթ. ժամանակաշրջանը)[1], ինչպէս նաեւ ընդարձակ ու բազմահմուտ մի բառարան հայ-լատին լեզուի, տրամաբանութեան մասին մի աշխատութիւն, «Բարոյական աստուածաբանութիւն» եւ այլ գործեր[2]:

***

Ուկրաինահայ գաղթավայրերում հաստատուած հայերն իրենց լուման մուծել են նաեւ միջնադարեան հայկական պոեզիայի գանձարանը: XVI-XVII դդ. այնտեղ ապրել ու ստեղծագործել են Պարսամ Տրապիզոնցի, Մինաս Թոխաթեցի, Յակոբ Թոխաթեցի, Ղազար Թոխաթեցի տաղասացները: Դրանցից վերջին երկուսը ապաստանել էին Ուկրաինայի հայկական գաղթավայրերում 1599-1602 թթ. յետոյ, երբ Ջալալիների ապստամբութեան ժամանակ աւերուեց Թոխաթ շէն ու հայաշատ քաղաքը:

Ուկրաինահայ բանաստեղծները հայ միջնադարեան պոեզիայի մէջ առաջիններից էին, որ զաւեշտական, կատակային ժանրի բանաստեղծութիւններ յօրինեցին: Համառօտակի ծանօթանանք վերոյիշեալ տաղասացների ստեղծագործութիւնների հետ:

Պարսամ Տրապիզոնցին 1578-1582 թթ. յիշւում է որպէս Լւովի եպիսկոպոս: Նրա ստեղծագործութիւններից մեզ հասել է միայն մի կատակերգ, ցաւող ատամի մասին՝ «Տաղ վասն ակռայի, զոր ասացեալ է Պարսամ Տրապիզոնցի» խորագրով:

Ատամնացաւից հեղինակը տառապում է, նա քաղցած է, երազում է համադամ կերակուրներ՝ իր սովատանջ որովայնը յագեցնելու համար: Սակայն ատամնացաւը հոգի է հանում եւ նրա ուտելու ցանկութիւնը մնում է սոսկ որպէս անիրագործելի երազանք: Բանաստեղծութեան մէջ, քիչ ձգձգուած ու ոչ կատարեալ քառեակներով յաջորդում են միմեանց ցաւի ու ցանկութեան մէկը միւսին մխտող զգացումները.

«Ակռայեկս հալ մի չունի,
Կու խոցոտէ յիս, չի մնաց հոգի.
Թէ՛ տամ քաշել, նա կու ցաւի.
Դուք ի՞նչ խրատ կու տաք ինձի:
Հոգիս կելնայ հետ չոր հացի,
Հաւատս չունիմ ես չոր մըսի,
Ջետ որ ի յակոտս կու հասնի,
Այլ չի մընայ ի յիս հոգի...»:

Այսպիսի տողերով է սկսում իր տաղը Պարսամ Տրապիզոնցին[3]:

Շատ աւելի բազմարդիւն ու ճաշակաւոր հեղինակ է Մինաս Թոխաթեցին (1510-1621), որը երկար տարիներ գրագրի պաշտօնն է վարել Լւովի հայկական դատարանում:

Իր նախորդի նման, նա եւս սիրում է կատակներ անել: Նրա «Գովասանք հերիսի» խորագրով զաւեշտական ոտանաւորը հայ միջնադարեան գրականութեան մէջ այդ ժանրի ամե-

1 Ժամանակագրութիւնից քաղուածքներ է հրատարակել Ղ. Ալիշանը «Կամենիցում», էջ 131-146:

2 Տե՛ս Գ. Զարպհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, Բ, Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 765:

3 ՀԱ, 1930, էջ 594-596

նայաշող երգերից է:

1563 թ. բարեկենդանի օրերին հեղինակը հարխայի կարոտից հիւանդացած ընկել է մահիճ: Իմանալով Մինասի «հիւանդութեան» պատճառը, Լւովի արքեպիսկոպոս Գրիգոր Վանեցին նամակ է գրում նրան եւ հրաւիրում է իր մօտ հարխայ ուտելու:

«Յանկարծակի գդուռն բացին
Զմօհրած նամակն ի յիս տուին»,- գրում է նա:

Կարդալով նամակը հեղինակի մարմնով դող է անցնում.

«Յանկարծ շուտով առողջացայ,
Հոգւով մարմնով ուրախացայ,
Երբ ճերիսի խապար ճասայ»:

Բանաստեղծութեան շարունակութեան մէջ նա, ցնծագին տրամադրութեամբ, հարխայի գովքն է անում, համարում է այն Գրիգոր Լուսաւորչի ստեղծած կերակուր եւ այլն եւ այլն[1]:

Մինաս Թոխաթեցու գլուխգործոցը, սակայն, «Ողբ ի վերայ Օլախաց երկրին հայերուն» ուշագրաւ ստեղծագործութիւնն է:

Օլախաց երկրում (Մոլդաւիա), յատկապէս Սուչաւա քաղաքում, XIII դ. սկսած բնակութիւն էին հաստատել բազմաթիւ հայեր: 1551 թ. Ստեփանոս Ռարեշ իշխանը պահանջում է հայերից հաւատափոխութիւն, փակել է տալիս Սուչաւայի, Պոթուշանի, Ռոմանի, Եաշի եւ այլ վայրերի հայկական եկեղեցիները, յափշտակում է դրանց գոյքը, այրում է հարիւրաւոր մեծարժէք ձեռագրեր եւ այլն: Մինաս Թոխաթեցու «Ողբը» վերաբերում է այս դէպքերին եւ գեղարուեստական արժանիքներից բացի, ունի նաեւ պատմական նշանակութիւն: Մինասից մեզ հասել են նաեւ մի քանի այլ չափածոյ ստեղծագործութիւններ:

Մինասի հայրենակից Յակոբ երէց Թոխաթեցին (1573-1680), իր ընտանիքով հանդերձ, ճաշակեց հայրենի քաղաքի կործանման եւ բնակչութեան գերեվարման ու սրածման ողբ սարսափները, եւ 1602 թ. իր խարխուլ ձգեց Զամոստիէ քաղաքում, որպէս տեղի հայկական գաղութի քահանայ: Այստեղ նա ծաւալեց գրական ու թարգմանչական բեղմնաւոր գործունէութիւն եւ ընդօրինակեց բազմաթիւ ձեռագրեր:

Նրա չափածոյ ստեղծագործութիւններից ուշագրաւ են յատկապէս երկու «Ողբերը», առաջինը՝ նուիրուած հայրենի Թոխաթ քաղաքի աւերմանը՝ Դելի-Հասան Ջալալիի կողմից («Ողբ ի վերայ Եւդոկիա քաղաքին, որ այժմ ասի Թոխաթ, զոր ումն անօրէն Տելու-Հասան աւեն, որ եկաւ այրեաց եւ աւերեաց գաշխարհ»), երկրորդը՝ նուիրուած 1593-1955 թթ. Մոլդաւիայի քաղաքական անցուդարձերին («Ողբ ի վերայ Օլախաց երկրին»):

Այս վերջին՝ պատմական բովանդակութեամբ ողբի մէջ, կարեւոր ու վստահելի տեղեկութիւններ են պահպանուել կազակների մասին: Մոլդաւիայի Ահարոն վոյեվոդան բանակցում է կազակների հետման Լոպատայի հետ, միացեալ ուժերով թիւրքերի դէմ դուրս գալու նպատակով: Ըստ պայմանաւորուածութեան՝ կազակները գալիս են Մոլդաւիա: Սակայն Ահարոնը փոխում է իր մտադրութիւնը եւ որոշում է կռուել կազակների դէմ: Մոլդաւական ու կազակական զօրքերը բախւում են իրար. Եաշ (Եասսի) քաղաքը գրաււում է կազակների կողմից: Քաղաքի հայ բնակչութիւնը խիստ տուժում է պատերազմական գործողութիւններից եւ այլն:

1 Ն. Ակինեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 102-111 (տե՛ս նաեւ էջ 72-75):

Ահա պատմական այս եղելութիւնների փաբուլայով Յակոբ Թոխաթեցին յօրինել է իր լաւագոյն ստեղծագործութիւններից մէկը՝ «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» խորագրով.

Ծանօթանանք ողբի արժէքաւոր ու գեղեցիկ սկզբնաւորութեան հետ.

«Լալով ասեմ ողբերգական
Արտասուելով ճառաչական
Այս անողորմ բանքս որ եղան
Ի մեր մեղացն գործեցան:
Ի թուին Հայոց ճազար ամին
Քառասուն եւ երեք աւելորդին (1594)
Չար վայվոտայ մի յայտնեցաւ
Այս Ալախաց փոքրիկ երկրին:
Խորհուրդ արաւ ի իւր մտին,
Ասաց՝ չարնեմ զազգն տանկին.
Հրեշտակ առաքեաց Լոպոտին՝
Ղազախներուն զգլխաւորին.
Ասաց՝ եկեք ի յիմ երկրին,
Հետ ձեզ երթամք վերայ թուրքին,
Որ պաշարեմք ըզքաղաքնին,
Եւ տէր լինինք նոցա երկրին:
Ղազախներուն պարոնին,
Որ Լոպոտայ անուանէին,
Հանոյ թուեցաւ յաչըս նորին,
Շատ հեծելով եկան եկին:
Երբ յերկիրն Ալախին մըտին,
Ի Յոցառան եկան ճասին,
Բանակեցան ամենեին
Ի Յոցոռայ ջրեզերին,
Քաղաք մի կայր որ խիստ չէն էր,
Անուն նորա, Եաշ պագար էր,
Պեղծ վոյվոտան ճոն բնակեր,
Յոցոռային նա ի մօտ էր:
Չար վոյվոտան օլախ ազգին
Ասաց՝ չեմ կռուիր ես ճետ թուրքին,
Ես կու կըռուիմ ճետ ղազախնին,
Եւ կոտորեմ զամենեսին»[1]:

Այնուհետեւ նկարագրւում է մոլդաւացիների եւ կազակների կռիւը, որում յաղթանակած կազակները՝ ի պատասխան մոլդաւացիների նենգութեան, թալանում են Եաշ քաղաքը եւ այլն:

Որքան էլ կարեւոր են բովանդակութեամբ ու գեղեցիկ են իրենց պոետական արժանիքներով Յակոբ Թոխաթեցու «Ողբերը», այնուամենայնիւ, նա իր համեստ տեղը գրաւեց հայ միջ-

1 ՀԱ, 1932, էջ 343-348

նաղարեան գրականութեան մէջ ոչ որպէս բանաստեղծ, այլ որպէս թարգմանիչ:

1614 թ. Յակոբը լատիներէնից հայերէն թարգմանեց հնդկական ծագում ունեցող, բայց միջին դարերում արեւելեան ու եւրոպական համարեա բոլոր լեզուներով թարգմանուած եւ բազմաթիւ խմբագրութիւնների ենթարկուած հետաքրքիր խրատական առակների ու պատմուածքների այն ժողովածուն, որ կոչւում է «Գալիլա եւ Դիմնա» կամ «Պատմութիւն եօթն իմաստասիրաց»:

Այդ գրքի ներքին արժանիքները, ինչպէս եւ թարգմանչի ճաշակը եւ ժողովրդական խօսակցութեան ճկուն ու գրաւիչ լեզուն ապահովեցին այդ թարգմանութեան համար լայն տարածում եւ մեծ ընդունելութիւն ողջ Հայաստանում եւ հայկական գաղթավայրերում:

Գիրքը տարածուեց ձեռագիր բազմաթիւ ընդօրինակութիւններով եւ XVII-XIX դդ. ընթացքում լոյս ընծայուեց 10 անգամ: Առաջին անգամ տպագրուեց 1693 թ. Կ. Պոլսում՝ «Գիրք պատմութեանց կայսերն Փոնցիանոսի եւ կնոջն եւ որդւոյն Դիոկղետիանոսի եւ յեօթանց իմաստասիրաց» խորագրով: Ապա Լիվոռնոյում՝ 1696 թ., Կ. Պոլսում՝ 1721, 1740, 1753, 1792,1796, 1804 թթ., Մադրասում՝ 1790 թ., Թբիլիսիում՝ 1857 թ.:

Հայերէնից կատարուեց հայատառ տաճկերէն թարգմանութիւն, որը տպագրուեց 4 անգամ, ապա թարգմանուեց նաեւ ռուսերէն (1847) եւ ֆրանսերէն (1919) լեզուներով[1]:

Ղազար եպիսկոպոս Թոխաթեցին եւս (1550ա-1610ա), Յակոբ Թոխաթեցու նման, հայրենի քաղաքից Ուկրաինա գաղթեց 1602 թ. աղէտի ժամանակ: Նա հաստատուեց Եազլովցա քաղաքում, ուր կար 20-ի չափ հայ ընտանիք:

Իր բանաստեղծութիւններից մէկում նա գրում է.

«Ղազար գերի մեղօք դմրած,
Պանդուխտ եղար մէջ ուռուզաց,
Դու ճոգ մ'ածեր, տէրն ողորմած,
Տանի իր տեղն ամէն ցրուած»:

Բայց, ըստ երեւոյթին,նրա յոյսերը չեն իրականանում եւ նա մինչեւ իր կեանքի վերջը պանդուխտ էլ մնում է: 1605-1606 թթ. Եազլովցայում, իր Արիստակէս եւ Կարապետ աշակերտների խնդրանօք, Ղազարը յօրինում է հայրենի Թոխաթի աւերման մասին երեք տաղ: Նախերգանքի մէջ գրում է.

«Կենամք քաղաք գիւղանըման,
Քաան տուն կայ ժողովըրդեան,
Զունինք գրեան, Ասմաուրքեան,
Ոչ Ճաշու գիրք, ոչ Գանձարան:
Անմխիթար եմք, տըխրական,
Չի կար փեշա եւ գործարան.
Մնացաք պարապ եւ առանց բան,
Գրեցաք տետրակս ի Եազլովցան[2]:

---

1 Ն. Ակինեան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 178-202

2 Նոյն տեղում, էջ 207

1606 թ. Ղազարը տեղափոխւում է «ի մայրաքաղաքն Կամենից, երկիրն ըռուզաց եւ Իլախաց», այստեղ ընդօրինակում է մի շարք ձեռագրեր եւ այլ: Համեմատաբար արժէքաւոր է նրա «Գովասանք ի վերայ Թոխաթ քաղաքի» ստեղծագործութիւնը:

* * *

Ուկրաինայի աջափնեայ հողերը (Կիեւշչինա, Վոլին, Պոդոլիա) XVII դ. ազատագրական պայքարից յետոյ, դեռ երկար ժամանակ, մնացին պանական Լեհաստանի լծի տակ: Լեհ իշխանութիւնների եւ Վատիկանի գործակալների ճնշումն ու ասիմիլեատորական քաղաքականութիւնը հայերի նկատմամբ յետագայում աւելի ուժեղացան: Եւ երբ շուրջ մէկ հարիւրամեակ յետոյ՝ XVIII դ. վերջերին, Արեւմտեան Ուկրաինան եւս Ռուսաստանի օգնութեամբ ազատագրուեց, այդ վայրերի հայերն արդէն անդարձօրէն՝ լեզուով, հաւատով ու սովորութիւններով, ձուլուել էին լեհերի հետ:

Սակայն ուկրաինահայ գաղթավայրերի յիշատակները վառ են մնում եւ կմնան երկար, քանի որ կան եւ պահպանւում են այնտեղ ստեղծուած գրական ու պատմագիտական արժէքաւոր յուշարձանները եւ հարիւրաւոր այն ձեռագրերը, որոնք ընդօրինակուելով այնտեղ, այժմ խնամքով պահւում են Երեւանի Մատենադարանում եւ հայկական ձեռագրերի այլ հաւաքածուներում: Այդ յիշատակները չեն մոռացուի նաեւ Ուկրաինայում, որովհետեւ իրենց երկրորդ հայրենիքում հաստատուելով, հայ գաղթականները զբաղուեցին ստեղծարար ու խաղաղ աշխատանքով, իրենց լուման մուծեցին ուկրաինական քաղաքների զարգացման գործում, զարկ տուեցին առեւտրի ու արհեստների զարգացմանը: Մինչեւ օրս էլ Աջափնեայ Ուկրաինայի շատ վայրերում կանգուն են հայերի ստեղծարար աշխատանքով կերտուած ճարտարապետական մի շարք յուշարձաններ, որոնք իրենց հերթին վառ են պահում ուկրաինահայ գաղութի յիշատակները եւ վկայում են ուկրաինացի եւ հայ եղբայրական ու բախտակից ժողովուրդների տնտեսական ու մշակութային մերձաւոր եւ բարեկամական բազմադարեայ կապերի մասին:

XIV-XV ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ *

Միջնադարեան Հայաստանի գիւղական համայնքի վարչութեան ու պաշտօնէութեան, հողային ֆոնդի կատեգորիաների ու նրանց օգտագործման ձեւերի, գիւղացիութեան դասային կազմի եւ սոցիալ-տնտեսական գոյավիճակի, ինչպէս եւ յարակից մի շարք այլ հարցերի ուսումնասիրութեան ուղղութեամբ մինչ այժմ գրեթէ ոչինչ չի արուած[1]. Հրապարակուած սկզբնաղբիւրները հնարաւորութիւն չեն ընձեռում ուսումնասիրողին ընդհուպ մերձենալու հայ գիւղացիութեան պատմութեան հետ առնչուող այդ կարեւոր հարցերի լուսաբանման գործին: XIV-XV դդ. հայերէն ձեռագրերի յիշատակարանների հաւաքմանը զուգընթաց մեզ յաջողուել է ծանօթանալ ըստ մեծի մասի դեռեւս անտիպ կալուածագրերի, նուիրաբերական արձանագրութիւնների եւ նման կարգի այլ փաստաթղթերի հետ, որոնցում կան վերոյիշեալ հարցերի լուսաբանմանը նպաստող ուշագրաւ նիւթեր ու ակնարկներ:

Մեր այս յօդուածով գիտական շրջանառութեան մէջ ենք դնում այդ նիւթերը՝ խմբաւորելով դրանք ըստ կարեւոր հարցերի, համոզուած լինելով, որ կատարուած աշխատանքով նախադրեալներ են ստեղծւում այս ուղղութեամբ հետազօտութիւնները շարունակելու համար:

* * *

«Գիւղական համայնք» գիտական տերմինը միջնադարեան հայկական աղբիւրներում բնականաբար չի հանդիպում: Այդ ինստիտուտի մասին խօսելիս, XIV-XV եւ ժամանակամերձ դարերի սկզբնաղբիւրները օգտագործում են «ժողովուրդ» տերմինը՝ «ժողովուրդ գեղիս»[2], «ժողովուրդ Շամպայ»[3], «Սալախանի ժողովուրդ»[4], «Յաղեթու ժողովուրդ»[5] եւ այլն:

Յաճախ, ըստ երեւոյթին համընդհանուր տերմինի բացակայութեան հետեւանքով, սկզբնաղբիւրներում «ժողովուրդ» տերմինին կից տրւում են լրացուցիչ բացատրականներ՝ «ամենայն ժողովուրդ գեղիս՝ զմեծ եւ զփոքր, զաղքատ եւ զհարուստ, զայր եւ զկին, զծեր եւ զտղայ»[6] կամ «գեղի տանուտէրքն... եւ առհասարակ մեծ եւ փոքր ժողովուրդքն եւ քահանայքն միաբանութեամբ»[1] եւ այլն: Հանդիպում ենք նաեւ «գիւղականք»[2], «գեղովի միաբան»[3] եւ համանման այլ արտայայտութիւնների:

Նոյն ժամանակաշրջանի պարսկական աղբիւրներում «գիւղական համայնք» հասկացութիւնն արտայայտւում է «ջամա'աթ» արաբերէն տերմինով, որը նոյնպէս բառացի նշանակում է ժողովուրդ[4]: XVII-XVIII դդ. սկսած «ջամա'աթ»-ը («ջամիաթ» ձեւով) մուտք է գործում նաեւ հայերէն լեզուով գրուող կալուածագրերի ու նուիրաբերական արձանագրութիւնների մէջ[5]:

Գիւղական համայնքի հետ առնչուող պաշտօնէութեան մասին ակնարկներ պարունակող սկզբնաղբյուրներում առաջին հերթին յիշատակւում են ձեռնաւորներն ու տանուտէրերը (ռայիսները): Այդ պաշտօնեաների գոյութիւնը անհրաժեշտ էր նկատւում բոլոր գիւղերում: XIV դ. վերջի եւ XV դ. սկզբի մատենագիր Մատթէոս Ջուղայեցին «անկարգ չէն» էր համարում այն գիւղը, որ «ոչ ունի ձեռնաւոր եւ տանուտէր»[6], իսկ նրա ուսուցիչ Գրիգոր Տաթեւացին՝ որը այն տունը, «որ չունի տանուտէր... գեղ, որ չունի ձեռնաւոր»[7]:

Այդ պաշտօնեաների իրաւասութիւնները եւ գործունէութեան բնագաւառները որոշ լուսաբանութիւն են ստանում վիմագիր ու ձեռագիր աղբիւրների համադրումով:

Ձեռնաւոր կոչուող պաշտօնեաներ Հայաստանում կային դեռեւս նախամոնղոլական շրջանում:

Աթաբեկ Իւանէի կին Խոշակը 1228 թ. Շիրակաւանի բնակչութեանն ազատում է «զապուռ իշի» եւ «ջրաահրին բաժ» կոչուող հարկերից, յայտնելով, որ «այս բանիս պատճառ Գուգէն (կամ Գաւրգէն) եղեւ՝ Ցխատի որդին՝ ձեռնաւորն»[8]:

Մոնղոլական իշխանութեան գոյութեան ողջ ընթացքում, ինչպէս նաեւ Կարա-կոյունլուների եւ Աղ-կոյունլուների տիրապետութեան ժամանակաշրջանում ձեռնաւոր անունով պաշտօնեան շարունակում է յիշատակուել հայկական աղբիւրներում:

1286 թ., «Հրամանաւ պարոն Սահմադնի», Ստեփանոս ձեռնաւորն ու Վահրամ քեթորարը[9] Օշականի քահանաներին ազատում են բոլոր հարկերից. «Թողաք զՅաւշականու քահանայից զինչ հարկ որ կայր»,- գրում են նրանք այդ առթիւ փորագրել տուած արձանագրութեան մէջ[10]:

---

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1958, N 1, էջ 110-134:

1 Այս տեսակէտից բացառութիւն է կազմում Պ. Յարութիւնեանի "Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века" (Москва, 1954) աշխատութիւնը, որի մի հատուածը (էջ 72-86) նուիրուած է XVII-XVIII դդ. գիւղական համայնքի պաշտօնէութեան ու սոցիալական դասերի մասին աղբիւրներում հանդիպող մի շարք տերմինների (մելիք, տանուտէր, մեծամեծք, ռայիս եւ այլն) մեկնաբանութեանը եւ համայնքի հետ կապուած որոշ հարցերի պարզաբանմանը: Ըստ ամենայնի գնահատելով վաղաժամ հանգուցեալ գիտնականի կատարած դրական աշխատանքը՝ միաժամանակ գտնում ենք, որ դժուար է համաձայնել հեղինակի այն մտքի հետ, ըստ որի "Танутеры (ресы, кёвха) в деревне были лицами, исполнявшими волю крупного феодала" (էջ 80), կամ "Из числа этой верхушки-мецамецков-кедхуда иногда выходили крупные светские и церковные феодалы" (էջ 78). [Այժմ մասամբ տե՛ս նաեւ Ս. Ե. Յակոբեան, Հայ գիւղացիութեան պատմութիւն, հտ. 2, Երեւան, 1964]:

2 ՄՄ ձեռ. N 7991, էջ 237բ

3 «Կալուածագրեր», կազմեց Յ. Աբրահամեան, Երեւան, 1941, էջ 11

4 ՄՄ ձեռ. N 4512, էջ 155ա

5 ՄՄ ձեռ. N 4961, էջ 1ա

6 ՄՄ ձեռ. N 7991, էջ 237բ

---

1 «Կալուածագրեր», էջ 11

2 «Վիմական տարեգիր», կազմեց Կ. Կոստանեան, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 51

3 ՄՄ ձեռ. N 3850, էջ 26բ

4 **И. П. Петрушевский,** Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, էջ 73

5 Տե՛ս, օրինակ, «Կալուածագրեր», էջ 49. «Զայս եղեւ ներքոյ գրեալ մէլիքի, քանդխուդի եւ ջամիաթի հուզուրումն վկայութեամբն գրեցաւ» կամ «Իր մեք Ամիրդատենց Մէլիքի տան վարիս ջամիաթս» եւ այլն:

6 «Քննութիւն Գործոց առաքելոց», ՄՄ ձեռ. N 1402, էջ 83բ

7 **Գրիգոր Տաթեւացի,** Համառօտ լուծմունք Յոբայ, ՄՄ ձեռ. N 1115, էջ 67բ

8 «Վիմական տարեգիր», էջ 71

9 Յ. Մանանդեանի կարծիքով «քեթորար» տերմինը, առնչուելով արաբական «քաթիբ» բառի հետ, քարտուղարի եւ նոտարի իմաստ ունի (տե՛ս «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», հտ. Գ, Երեւան, 1952, էջ 250):

10 «Վիմական տարեգիր», էջ 129

Թովմա Մեծոփեցին իր «Պատմութեան» էջերում յանուանէ յիշատակում է հայկական քաղաքների ու գիւղերի (Արճէշ, Ասպիսնակ, Զերիշատ եւ այլն) մի շարք ձեռնաւորների[1], ձեռնաւոր է եղել նաեւ նրա հայր Ստեփանոսը[2]:

Արճեշի ձեռնաւոր Յովհաննէսի մասին Թ. Մեծոփեցին ասում է, որ նա «սիրեցեալ եղեւ յաչս ամենեցուն՝ հաւատացելոց եւ անհաւատից», այդ իսկ պատճառով, իբրեւ «եդին զնա ձեռնաւոր քաղաքին եւ երկրին հրամանաւ»: Բոլորի կողմից «սիրուած» այս պաշտօնեան իր ձեռնաւոր դառնալուց 3 տարի յետոյ Քաջբերունիքի «զսինլքոր, զտառապեալ, զքաղցեալ եւ զմերկացեալ» ժողովրդին բերել է տալիս Արճեշ եւ յանձնում մահմեդական իշխողներին, որոնք այդ ընչազուրկ ու քաղցած գիւղացիներից, «յամենայն գլխոյ պահանջէին 540 թանկայ՝ ի կաղէ եւ ի կուրէ, ի ծերոց եւ ի տղայոց. եւ այնպիսիք էն, որ դրամի միոջ տէր ոչ էին»[3]:

Արձանագրական ու մատենագրական այս վկայութիւններից պարզ է դառնում, որ ձեռնաւորները տեղական ֆեոդալներից կախում ունեցող պաշտօնեաներ են եղել, որոնք իրենց ենթակայ շրջաններում կամ գիւղերում հարկադրել են հարկահանման ենթակայ օբյեկտները, որոշել հարկի չափը, հսկել հարկահանման գործին:

Սամցխեթի աթաբեկութեան սահմաններում ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանում կան այսպիսի տողեր. «ի թվ. հայոց ՋՀ (1521), ի ժամանակս պարոնութեան պարոն Ղուզաւրին, ի հայրապետութեան տէր Սարգիս կաթողիկոսին եւ ձեռնաւորութեան մուխթասիբ Մլխամին եւ Դովլաթիարին, զոր տէր Աստուած պարգեւես պահէ զիւրեանքն»[4]:

Սամցխեթի աթաբեկի եւ Հայոց կաթողիկոսի հետ միասին տեղի ձեռնաւորների անուանց յիշատակութիւնն ինքնին վկայում է այն մասին, որ նրանք լայն լիազօրութիւններով օժտուած ու հեղինակաւոր պաշտօնեաներ էին:

Ուշագրաւ է նաեւ ձեռնաւոր Մլհամի «մուխթասիբ» կոչումը: Յայտնի է, որ արաբական այդ տերմինը տրւում էր այն պաշտօնեաներին, որոնք ճշտում էին հարկերն ու տուրքերը եւ հսկում շուկաների վրայ: Իրանագէտ Հ. Փափազեանը կարծում է, որ «ձեռնաւոր» տերմինի պարսկերէն հոմանիշը «ամիլն» է[5], եւ այս ենթադրութիւնը հաւանաբար ճիշտ է, որովհետեւ մուհթասիբի եւ ամիլի գործունէութեան շրջանակները հիմնականում համընկնում են:

Այսպիսով գալիս ենք այն համոզման, որ ձեռնաւորները պաշտօնեաներ էին, որոնք նշանակուելով ֆեոդալների կողմից՝ տնօրինում էին առանձին շրջանների ու գիւղերի հարկահանութեան գործը: Ձեռնաւոր էին դառնում, բնականաբար, տուեալ շրջանի կամ գիւղի ազդեցիկ, ունեւոր եւ փարթամ ընտանիքների ներկայացուցիչները:

Այժմ գիւղական տանուտէրերի-ռայիսների մասին[6]:

1 Թովմա Մեծոբեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց. Փարիզ. 1860, էջ 92, 110-111, 113 եւ այլն

2 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Ա, Երեւան, 1955, էջ 135

3 Թ. Մեծոբեցի, էջ 117

4 ՄՄ ձեռ. N 7643, էջ 90ա

5 «Մատենադարանի պարսկերէն հրովարտակները», պրակ առաջին (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց Յ. Փափազեան, Երեւան, 1956, էջ 104

6 «Տանուտէր» տերմինը նախարարական շրջանից մինչեւ ուշ միջնադար բազմիցս փոխել է իր բովանդակութիւնը եւ միաժամանակ յաճախ գործածուել տարբեր իմաստներով: XIV-XV եւ յետագայ դարերում տանուտէր էին կոչ-

Ռայիս կամ ռես տերմինը հայկական աղբիւրներում սկսում է գերակշռել XIII դ. սկսած՝ բանելով նախկին տանուտէր կամ աւելի հնագոյն գեղջաւագ տերմինների տեղը: 1211 թ. մի արձանագրութեան մէջ կարդում ենք. «Աւշականայ ռայիս» Արտաշիրի, իսկ 1224 թ.՝ Բագարանի ռայիս Վարդի անունները[1]: Հայերէն ձեռագրերի յիշատակարաններում եւ կալուածագրերի նուիրաբերական փաստաթղթերի մէջ ռեսների մասին յիշատակութիւնները հաշւվում են տասնեակներով:

Ռեսի պաշտօնը ինչպէս ասացինք, ընտրովի էր, եւ, որոշ տուեալներից դատելով, ընտրութիւնը կատարւում է տարին մէկ անգամ[2]:

Մի ձեռագիր Աւետարանի գնման մասին 1590 թ. գրանցուած արձանագրութեան մէջ ասուած է, որ «գիրս գրեցաւ էն տարիս, որ Ամիր-Բաբօն տանուտէր էր»[3], իսկ 1606 թ. մի յիշատակարանում՝ «գնեցաւ այգիս ըռէս Շաղաւաթի տարին»:

Այս տուեալներից, սակայն սխալ կլինէր ենթադրել, թէ ամէն տարի ընտրւում էին նոր ռեսներ եւ կամ թէ ընտրութիւնը կատարւում էր այս կամ այն անձնաւորութեան գործարար յատկութիւնների հաշուառմամբ միայն: Ընդհակառակը, կան տուեալներ, որոնք հնարաւորութիւն են տալիս եզրակացնելու, որ ռեսի պաշտօնը գրաւում էին գիւղերի ամենափարթամ ու ազդեցիկ ընտանիքների անդամները, ըստ որում այն ժառանգական դառնալու տենդենց ունէր:

Այսպէս, 1537 թ. ընդօրինակուած մի Աւետարանի յիշատակարանում խօսք կայ ոմն Կարապետ «փոքր տանուտէրի» մասին, որը «վեց ամ տանուտէրութիւն արար գեղջս Վաղարշապատու, ի ԻԲ (22) ամաց փոխեցաւ առ Քրիստոս»[4]: 1471 թ. Խժիշկ գիւղի տանուտէր է եղել ոմն «իմաստուն երիտասարդ» պարոն Վաչօ (կամ Վաղօ), որդի պարոն Մկրտչի[5]:

տում. ա) գիւղական համայնքի ընտրովի առաջնորդները՝ *ռայիսները*, բ) ունեւոր եւ փարթամ գիւղական գերդաստանների աւագները, որոնք ժամանակակից պարսկական, ինչպէս նաեւ յետագայ՝ XVII-XIX դդ. հայկական աղբիւրներում կոչւում էին քեաղխուդա, եւ գ) ընդհանրապէս բոլոր գիւղական տների աւագ անդամները, որոնց ձեռքում էր կենտրոնացուած տուեալ տան (գերդաստանի) տնտեսութեան ղեկավարութիւնը: Շփոթութիւն չստեղծելու համար մեր շարադրանքում գիւղի տանուտէր-գեղջաւագ տերմինի փոխարէն ամէնուրեք գործ ենք ածում ռայիս-ռես տերմինը, իսկ տանուտէր ասելով՝ ի նկատի ենք ունեցել քեաղխուդաներին:

1 «Վիմական տարեգիր», էջ 52, 68

2 Պ. Յարութիւնեանը իր վերոյիշեալ աշխատութեան մէջ բերում է որոշ տուեալներ այն մասին, որ հայ մուլքադարներն ու մելիքները XVIII դ. իրենք էին նշանակում իրենց պատկանող գիւղերի ռեսներին եւ ստիպում գիւղական համայնքին՝ ենթարկուել իրենց թեկնածուին: Այսպիսի դէպքեր (զուգէ նաեւ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում) անշուշտ եղել են, սակայն դժուար է համաձայնել հեղինակի այն եզրակացութեան հետ, ըստ որի, որպէս կանոն, «հայ խոշոր ֆեոդալ-մելիքները իրենք էին նշանակում իրենց գիւղերի տանուտէրերին» (նշ. աշխ., էջ 81):

3 Տեղեկութիւնը քաղել ենք Ե. Լալայեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» աշխատութեան անտիպ մասից, միջնորդութեամբ Մ. Տէր-Մովսիսեանի:

4 Աւետարանը պահուել է ժամանակին Երեւանի Ս. Սարգիս եկեղեցում. նրա նկարագրութիւնը գտնում ենք Ս. Տէր-Աւետիսեանի կազմած անտիպ ցուցակում (Պատմ. ինստիտուտի արխիւ, գործ 48):

5 Տեղեկութիւնը քաղում ենք Յ. Բարաղամի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի» անտիպ աշխատութիւնից, միջնորդութեամբ Մ. Տէր-Մովսիսեանի:

1498 թ. Ապխնակ գիւղում ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանում յիշուած է «գնոր տանուտէրն պարոն Ջաջուռն, որ տղայհասակ ի (20) ամաց ի տանուտրութիւն հաստատեցաւ եւ է ձեռնաւոր գեղիս»[1]: Այս տուեալները, կարծում ենք, բաւարար են ցոյց տալու համար, որ գիւղի ռեսների ընտրութեան ժամանակ մեծ նշանակութիւն էր տրւում թեկնածուի ընչեղութեանն ու սոցիալական դիրքին, եւ այդ պաշտօնը գրաւում էին հարուստ ու ազդեցիկ ընտանիքների ներկայացուցիչները նոյնիսկ այն դէպքում, երբ նրանք շատ երիտասարդ (16-20 տարեկան) լինելով՝ հազիւ թէ կարողանային ինքնուրոյն վարել գիւղական համայնքի ներքին բարդ ու դժուարին գործերը: Նկատենք նաեւ այն, որ երբեմն միեւնոյն անձնաւորութեան ձեռքում կենտրոնանում էին ե՛ւ ռեսի, ե՛ւ ձեռնաւորի պաշտօնները:

Մեծ էր ռեսների գործունէութեան շառաւիղը: Նրանց գլխաւորութեամբ էր կատարւում հողաբաժանութիւնը, առուների ու ջրանցքների անցկացումն ու մաքրումը[2], ճանապարհների ու կամուրջների պահպանումը, հարեւան գիւղական համայնքների միջեւ ծագած վէճերի հարթումը, հարկերի բաշխումը գիւղական համայնքի մէջ ընդգրկուած տների վրայ, պետական պաշտօնեաներին հիւրընկալելու պարտաւորութիւնը եւ այլն:

Շահագործելով իրենց դիրքն ու իշխանութիւնը, գիւղերի ռեսները հնարաւորութիւն ունէին տարբեր մեքենայութիւններից օգտուել ի հաշիւ գիւղացիների: Մատթէոս Ջուղայեցու հաղորդած ուշագրաւ մի տուեալից կարելի է եզրակացնել, որ նրանք, յաճախ, գիւղացիների վրայ էին բարդում պետութեանը կամ կալուածատիրոջը տրուող հարկերի նաեւ այն մասը, որ պէտք է վճարէին իրենց գերդաստանները: Ջուղայեցին «ծածուկ գողերի» շարքն է դասում այդպիսիներին, որոնք «յաղքատս գրկեն եւ այնպէս երեւեցուցանեն, թէ մեք աւելի տամք եւ յաղքատացն առեալ տան եւ զինչս իւրեանց պահեն»[3]: Դրանցից էր, ըստ երեւոյթին Մուժ գիւղի Ստեփանոս ռեսը, որը, հաւանաբար հանդիպելով գիւղական համայնքի դիմադրութեանը, վերացրեց «աղջկան յաղկ» եւ «շանիգաղէ»[4] կոչուող հարկերը եւ պարտաւորուեց միւս գիւղացիների հետ միասին մասնակցել ինչ-որ հարկի վճարմանը: Այդ մասին շարադրուած համաձայնագրում, որը հնագրական տուեալների հիման վրայ XV դ. է, գրուած է. «Քրիստոս Աստուած ալրհնէ զըէս Ստեփանոսն եւ զիւր որդիքն, որ ողորմեցաւ գեղիս Մժայ, եւ եթող զաղջկան յաղկն, որ ի գեղատանին եւ զշանիգաղէն եւ զմեր շարաֆի /// (մի բառ անընթեռնելի) ըռէսն ի հետ գեղին տայ եւ զաւերանիքն ի վերայ գեղիս չի դնէ: Քրիստոս Աստուած զինքն ալրհնէ եւ զիւր որդիքն եւ զիւր եղբարքն, եւ զգեղի տանուտէրք, որ կամակից եղան՝ զէս բաղաղաթս[5] ի գեղէս ի վեր կալին: Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն եւ իւրեանց ծնաւղացն, ամէն: Ով որ յիրար տայ կամ առնու կամ ի յաւան ձգէ՝ նայ զանէծքն զհայէնին առնու...» եւ այլն[6]:

Գիւղական համայնքի պաշտօնէութեան մասին խօսելիս չպէտք է անտեսել նաեւ գզրին:

1 Ձեռագիրը գտնւում էր Իրանի Փերիա գաւառի Օրշկան գիւղում. Ընդօրինակել է Մ. Տէր-Մովսիսեանը:

2 Վերը յիշատակուած ռես Ամիր-Բաբոն, օրինակ, իր տանուտիրութեան շրջանում, ինչպէս հաղորդում է նրան ժամանակակից յիշատակագիրը, «վերի աղբիւր հանեց եւ վարի առուն Սալթաղըցուցէ ջրկեց»:

3 ՄՄ ձեռ. N 2229, էջ 133ա: Հմմտ. Գրիգոր Տաթեւացու հետեւեալ տողերի հետ. «Եւ որ առաջնորդ է գեղի եւ ի գեղջէն զրկէ՝ բոլոր գեղին լինի գող», Քարոզգիրք, Ամառան հատոր, էջ 25:

4 Ըստ երեւոյթին պէտք է կարդալ «շանակիսաթ», որ նշանակում է՝ ապօրինի պահանջմունք, հարստահարութիւն:

5 Բաղաղաթ - նորահնար պահանջմունք, հարկ

6 ՄՄ ձեռ. N 4814, էջ 129ա

Այն փաստը, որ բոլոր գիւղերը իրենց գզիրներն են ունեցել, երեւում է Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսի աթոռակալութեան տարիներին (1465-1489) Մամռտանից շրջանի գիւղերից մէկի բնակչութեանը ինչ-որ վանական հաստատութեան կողմից ուղղուած գրութիւնից: Այստեղ գիւղական համայնքի պաշտօնէութիւնն ու բնակչութեան սոցիալական կազմը թուարկուած է այսպէս. «թէ ըռես է ու տանուտէր, թէ գզիր է, թէ հարուստ է եւ թէ աղքատ...»[1]:

Գզիրը ռեսին ստորադրուած պաշտօնեայ էր. վերջինիս կարգադրութիւններն ու հրահանգները նա հաղորդում էր համայնքի անդամներին եւ, ըստ երեւոյթին, մասնակցութիւն ունէր նաեւ հարկերի ու տուրքերի կամ նրանց մի մասի հաւաքման գործին: Նրա պարտաւորութիւնների մասին կարեւոր վկայութիւն է պահպանուած «Խաղալ իմաստասիրի Տուսացւոյ ասացեալ վասն բանական հոգոյ գիտութեան» խորագրով միջնադարեան մի գրուածքում: Այստեղ մարդը նմանեցւում է քաղաքի, իսկ նրա մարմնի անդամները՝ ձեռքը, ոտքը եւ այլն՝ «գործաւորաց քաղաքի»: «Որկրամոլութիւն նման է գզրի, որ ժողովէ յամենայնէ զպիտոյս եւ զհարկ քաղաքին»,- կարդում ենք այդ գրուածքում[2]: Ճիշտ է, խօսքն այստեղ քաղաքի ու նրա «գործաւորների» մասին է, բայց հազիւ թէ քաղաքի եւ գիւղի գզիրների պարտաւորութիւնները նկատելիօրէն տարբերուէին միմեանցից:

Գիւղական համայնքների տնտեսական ու վարչական կեանքում նշանակալից դեր էին կատարում տանուտէրերը՝ տնտեսապէս ապահով, ունեւոր եւ ազդեցիկ գերդաստանների աւագները: Իրենց գերդաստանի ներսում նրանց խօսքը օրէնք էր, գործը՝ անառարկելի: Գրիգոր Տաթեւացին Երգ երգոցի իր մեկնութեան մէջ գրում է. «...այսպէս եւ տանուտէրք տանց իւրեանց եւ վերակացուք միաբանից, իշխանք երկրի եւ քահանայք ժողովրդոց»[3], այսինքն՝ ինչպէս իշխանները տէր են իրենց երկրի, վանքի առաջնորդները՝ միաբանների, քահանաները՝ իրենց հոգեւոր հօտի նկատմամբ, այնպէս էլ տանուտէրերը տէր են իրենց տներին: Տանուտէրերի համաձայնութեամբ ու կամքով էր օտարւում գիւղական համայնքին պատկանող այս կամ այն արտն ու արօտավայրը, ամէն պարագայում նրանք էին հանդէս գալիս կալուածքների վաճառքի կամ գնման մասին շարադրուած փաստաթղթերի վաւերացնողների կամ վկաների դերում, նրանք էին, որ պաշտպանում էին գիւղի շահերը հողատիրոջ կամ պետական պաշտօնէութեան առջեւ, մի խօսքով ինչպէս ասուած է 1462 թ. մի յիշատակարանի մէջ Մարմետի տանուտէրերի մասին, նրանք են, որ «վարեն եւ ուղղեն խաղաղութեամբ զգեաւղս եւ պահեն ի յաւեյ առ ու պահանջողաց զաղքատսըն»[4]:

Մարմետի նման խոշոր բնակավայրում, որ յաճախ կոչւում է գիւղաքաղաք, տանուտէրերի քանակն անցնում էր 30-ից: 1462 թ. յիշատակարանում յանուանէ թուարկւում են նրանք, մեծարելով «պարոն» տիտղոսով՝ «պարոն Սաղաղէն՝ Վարդանայ որդին, պարոն Էդկարշէն՝ Խաչատրու որդին, պարոն Դովլաթշէն՝ Մաղթումի որդին, պարոն Գուաջիբէկն՝ Թաթարի որդին, պարոն Սարգիսն՝ Բիազատի որդին, պարոն Մկրտիչն՝ Սաղաթիլայ որդին» եւ 25 այլ տանուտէր «պարոններ»:

Յիշատակագիրը բաղձանք է յայտնում, որ այս տանուտէրերի որդիները մեծանան, «ի չափ հասակի հասնեն եւ զտունս հաւր իւրեանց եւ զգեաւղս ի չէն պահեն»: Տեղեկութիւն ու-

1 ՄՄ ձեռ. N 9645, էջ 203

2 ՄՄ ձեռ. N 1113, էջ 110բ

3 ՄՄ ձեռ. N 1264, էջ 432ա

4 ՄՄ ձեռ. N 4883, էջ 614բ

նենք այն մասին, որ յիշատակագրի բաղձանքը մասամբ իրագործուել է: Վերը թուարկած տանուտէր պարոններից երկրորդի՝ Էգկարշահի կամ Էգգարի որդի Բախտիարը 1510 թ. յիշատակւում է որպէս «զՎանայ քաղաքի եւ երկրի մելիք»: Սրան յաջողւում է Շահ-Իսմայիլից ստանալ յատուկ հրովարտակ եւ փրկել Վանի պաշարուած բնակչութիւնը «կարմիրգլուխ» (ղզլբաշ) Բերամ-բեկի զօրքերի կոտորածից եւ գերութիւնից: Այս դէպքը պատմող յիշատակարանի մէջ թուարկած են Ներքին Մարմետի վերոյիշեալ տանուտէրերի՝ 1510 թ. ապրող ժառանգները՝ «զգեօղի տանուտրայքն՝ զմելիք Բախտիարն եւ զըռես Սաղղաթիարն, զթամղաչի Մուսխին, զՂասումն, զԱրապշէն, զՂօչասարն, զԽօշնազարն..., զՄիրաղան, զՔամալն, զՆաւասարդն, եւ զԳուլամիրն եւ զայլ ամենայն»: Սրանք խոստանում են տարին 20 բեռ ձուկ տալ սուրբ Կարապետի վանքին[1]:

Փոքր գիւղերում, բնականաբար, ընչեղ ու ազդեցիկ տանուտէրերը մեծ թիւ չէին կազմում:

1474 թ. մի յիշատակարանում Մատղավանք գիւղի (Արճէշի շրջանում) ազդեցիկ մարդիկ թուարկած են այսպէս. «...Եւ աւրհնեացէ զտանուտէր եւ զառաջնորդ գեղիս՝ զաչս Աւէտշէն՝ իւր ծաղկեալ որդովքն, զպարոն Սօլթանշէն՝ իւր զաւակօքն, զՅոհանէսն՝ իւր որդովքն, զԴանարէկն՝ իւր զաւակաւքն, եւ զայլ ամենայն ժողովուրդք գեղիս՝ զմեծ եւ զփոքր, զաղքատ եւ զհարուստ, զայր եւ զկին, զծեր եւ զտղայ»[2]:

Նոյն պատկերն ենք տեսնում նաեւ Մուղնի գիւղում, 1491 թ.: Այստեղ շարադրուած մի յիշատակարանի մէջ յանուանէ նշուած ենք գտնում միայն 4 տանուտէրերի անուններ. «Եւ զտանուտէրքս գեղիս՝ զՇահազիզ, զխաւճա Մովսէս, զՄատաղէն, զճգտանբաշխն»[3]:

Այս եւ նման բազմաթիւ յիշատակարաններում նշւում են միայն գիւղի ունեւոր եւ ազդեցիկ, ուստի եւ համայնքի կեանքում նշանակալից դեր կատարած գերդաստանների տանուտէրերի անունները: Ուստի դժուար է եզրակացնել, որ գիւղական համայնքների միւս գերդաստանների աւագները, որոնք նոյնպիսի «տանուտէրեր» էին իրենց ընտանիքներում, էական դեր չէին կատարում համայնքի ներքին կեանքում եւ գիւղական տանուտէրերի անուանական թուարկման ժամանակ անտեսւում էին, մտնելով սոսկ «այլ ամենայն ժողովուրդք գեղիս», կամ «շինականք», կամ «հողագործք» հաւաքական տերմինների տակ[4]:

Գիւղական ազդեցիկ տանուտէրերին միւս գերդաստանների աւագներից տարբերելու համար, երբեմն առաջինների նկատմամբ գործ է ածւում «գլխաւոր տանուտէր» տերմինը: Մելիքսեթ եւ Կարապետ Վանեցիների վկայաբանութեան մէջ (նահատակուել են 1403 թ.), օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Եւ կալեալ ուխտ հոգի՝ կրակեցին եւ զմինն ի գլխաւոր տանուտէրացն՝ հարեալ խոցեցին ի գլուխն եւ ի կուշտն սրով»[1]:

1 ՄՄ ձեռ. N 4869, էջ 669բ

2 ՄՄ ձեռ. N 7991, էջ 237բ

3 ՄՄ ձեռ. N 6293, էջ 461բ

4 Զաքարիա կաթողիկոսի ձեռագիր մի կոնդակի մէջ, որն ուղղուած էր եկեղեցական թեմերից մէկի բոլոր բնակիչներին, ժողովրդի դասային կազմը բացայայտուած է այսպէս. «Եպիսկոպոսք, վարդապետք եւ քահանայք, ռայիսք, տանուտէրք, արուեստաւորք եւ հողագործք՝ մեծ եւ փոքր»: Ինչպէս տեսնում ենք, այստեղ եւս արհեստաւորներն ու հողագործները նշուած են տանուտէրերից յետոյ, որպէս նրանցից ցածր սոցիալական դասեր: Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ կոնդակի շարունակութեան մի հատուածը: Զաքարիա կաթողիկոսը ինքնագովութեամբ տեղեկացնում է, որ Ջհանշահից ստանալով Էջմիածնի կաթողիկոսութիւնը՝ եկել է Էջմիածին եւ Այրարատեան գաւառում մեծ կառուցումներ կատարել, դրանից յետոյ՝ «զինչ պատ(ուա)կան եպիսկոպոսք եւ վարդապետք, ազատորդիք եւ երեւելի տան(ու)տէրք՝ ամենեքեան ի յաթոռս ժողովեցան եւ մեծ սիրով ընկալան զմեզ եւ հնազանդեցան» (տե՛ս պահպանակ Մատենադարանի N 4779 ձեռագրի):
Էջմիածնում գումարուած այս ժողովի մասնակիցների շարքում յիշատակուած «երեւելի տանուտէրքը» գիւղական ազդեցիկ եւ հարուստ ընտանիքների աւագներն էին անշուշտ, որոնք միջանկեալ դիրք էին գրաւում «ազատորդիների» ու «արուեստաւորների եւ հողագործների» միջեւ:

Նոյն ժամանակաշրջանի պարսկալեզու աղբիւրներում, նոյնիսկ երբ նրանք վերաբերում են հայկական շրջաններին ու գիւղերին, «տանուտէր» տերմինի դիմաց ամէնուրեք հանդիպում ենք պարսկական «քեադխուդա» տերմինին[2]: «Քեադխուդան»-ն XVII դ. սկսած լայնօրէն սկսում է կիրառուել նաեւ հայալեզու աղբիւրներում: Այսպէս օրինակ, 1660 թ. պաշտօնական մի գրութեան մէջ կարդում ենք. «Ընծնաբերթու... բոլոր քանդխուտայքս՝ տանուտէր Այուազս, երեսփոխան Փերիջանս, քանդխուտայ Ներսէսս, եւ՝ քանդխուտայ Յովանէսս, եւ Փիլիպոսս եւ այլ մեծ եւ փոքր ժողովուրդս»[3]: Յաճախ էլ նոյն իմաստով գործածւում է «դովլաթաւորք» տերմինը, որով, առաւել պարզութեամբ, նշւում է գիւղական այդ տանուտէրերի ընչեղութիւնն ու տնտեսական կշիռը[4]:

Չնայած սոցիալական ու տնտեսական հողի վրայ գիւղական համայնքի ներսում առաջացած շերտաւորմանը, որի մասին դեռեւս առիթ կունենանք խօսելու, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համայնքի տնտեսական ու իրաւական հիմքերը դեռեւս բաւարար չափով ամուր էին, եւ համայնքը միասնական ուժերով կարողանում էր դիմագրաւել հողաբաժանման ենթակայ վարելահողերի, խոտհարքների ու արօտավայրերի բռնագրաւման փորձերին, լինէին դրանք ֆեոդալ-հողատէրերի, պետական պաշտօնեաների, թէ վանական հաստատութիւնների կողմից: Գիւղական համայնքն ամէնուրեք հանդէս էր գալիս որպէս տուեալ գիւղի հողային ֆոնդի հիմնական մասի տնօրինող: Համայնքի իրաւասութեան տակ գտնուող վարելահողերն ու արօտավայրերը դիտւում էին որպէս համայնքային հողի անկապտելի մաս, անկախ այն հանգամանքից, թէ տուեալ դէպքում ում ձեռքում էր գտնւում նրանց օգտագործման իրաւունքը:

Որեւէ հողամասի օգտագործման իրաւունքի օտարման ժամանակ, ամէն պարագայում պահանջւում էր գիւղական համայնքի միասնական կամքն ու համաձայնութիւնը:

Բերենք մի բնորոշ փաստ. 1445 թ. (կամ մի քանի տասնամեակ դրանից յետոյ) կազմուած նուիրաբերական մի արձանագրութեան մէջ ասուած է. «Քրիստոս Աստուած պահէ զքահանայս եւ զտանուտէր եւ զռայիս գեղջիս Աղւայ զմեծ եւ զփոքր առհասարակ, որք կամեցան եւ զսուրբ Ովաննէսն շինեցին վանք, որ ի վաղուց ժամանակէ հանգել էր»: Աղու գիւղի համայնքը, հանդէս գալով միասնաբար, տնտեսական իր միջոցներով վերաշինում է սուրբ Յովհաննէսի վանքը եւ իր հողային ֆոնդից վանքին «լուսագին» է տալիս մի արտ[5]:

XVI դարի անթուական նուիրաբերական մի փաստաթղթի մէջ նոյնպիսի տուեալ կայ Ուշտունիքի Գանձակ գիւղի մասին. «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ,- ասուած է այնտեղ,- որ միաբան մի խորհուրդ եղեն եւ տուին զԽստակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հո-

1 **Յ. Մանանդեան, Հ. Աճառեան,** Հայոց նոր վկաները, գիտ. հրատ., էջ 200

2 «Մատենադարանի պարսկերէն հրովարտակները», էջ 43, 45, 47, 50 եւ այլն

3 «Կալուածագրեր», էջ 19

4 Նոյն, էջ 123

5 **Գ. Սրուանձտեանց,** Թորոս աղբար, Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 306-307

գոյ իւրեանց եւ ննջեցելոց»[1]:

Զաքարիա կաթողիկոսի կենդանութեան օրօք (մհ. 1464 թ.) Աթանանց գիւղի համայնքը ստիպուած է եղել իր վրայ դրուած անէծքի թուղթը օրհնանքի վերածելու համար իր հողային ֆոնդից մի արտ նուիրաբերել Ս. Աստուածածնի վանքին: Այս կապակցութեամբ շարադրուած արձանագրութեան մէջ թուարկուած են գիւղի ռես Բաղշայիշը եւ 13 «աստուածասէր տանուտէրքը», որոնք «ամենեքեան վառեցան ի սէրն Քրիստոսի եւ ի սուրբ Աստուածածինն եւ զայն արտն խաղ ու մուլք տուին Աստուածածնին»[2]:

Կարելի է մէջբերել այս կարգի տասնեակ այլ փաստաթղթեր, որոնք բոլորն էլ միաբերան վկայում են այն մասին, որ գիւղական համայնքի տնօրինութեան տակ գտնուող հողային ֆոնդից որեւէ արտ օտարելու կամ նուիրաբերելու համար պահանջւում էր տուեալ համայնքի բոլոր անդամների համաձայնութիւնը:

Գիւղական համայնքը յաճախ հանդէս է գալիս նաեւ որպէս շարժական գոյքի կոլեկտիւ սեփականատէր:

1469 թ. Խիզանի շրջանի Սուր գիւղի տանուտէրերից մէկը մի Աւետարան է նուիրում իր հայրենի գիւղին եւ պատուիրում, որ «մի ոք իշխեսցէ զսա իւր սեփականել քահանայ կամ տանուտէր, այլ գ[ե]աւղն ամէնքն խնամ տանեն ի վերայ եւ պահեն, զի Աւետարանս գեղին եմ տուեր»[3]:

Այս տուեալները, սակայն, բնաւ չեն խօսում այն մասին, որ որեւէ գիւղի սահմանների մէջ գտնուող բոլոր հողերը, անխտիր, գտնւում էին գիւղական համայնքի իրաւասութեան ներքոյ: Ընդհակառակը, կան տուեալներ, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, թէ գիւղերի հողային տարածութիւնները ստորաբաժանուած էին արդէն մի շարք ենթախմբերի (համայնքի տնօրինութեան տակ գտնուող վարելահողեր եւ արօտավայրեր, մասնաւոր սեփականութիւն դարձած հողեր, գիւղատէրերի կողմից սեփականուած հողեր, վանական հաստատութիւնների կողմից օգտագործուող կամ նրանց սեփականութիւն դարձած հողեր եւ անմշակ ու խոպան հողային տարածութիւններ): Բնականաբար, ամենածաւալուն խմբի մէջ մտնում էին վարելահողերն ու արօտավայրերը, որոնք գիւղական համայնքին պատկանող հողային հիմնական ֆոնդը լինելով, պարբերաբար՝ մէկ կամ մի քանի տարին մէկ անգամ (նայած տուեալ շրջանում գոյութիւն ունեցող սովորոյթին կամ համայնքի անդամների մեծամասնութեան պահանջին)՝ բաժանւում էին գիւղական համայնքի լիիրաւ ընտանիքների միջեւ: Համայնքային հողերի պարբերաբար կրկնուող հողաբաժանումների մասին Հայաստանի տարբեր շրջաններից ունենք բազմաթիւ վկայութիւններ XIX դ. վերաբերեալ[4]: Որ այդպիսի հողաբաժանումներ եղել են նաեւ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այդ մասին կարելի է դատել ոչ միայն յետագայ դարերի տուեալների քննութեան ու վերլուծութեան ճանապարհով, այլեւ հե-

1 ՄՄ ձեռ. N 4868, էջ 321բ

2 ՄՄ ձեռ. N 5512, էջ 1ա

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայեան, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, սիւն 453-456: Հմմտ. նաեւ ՄՄ ձեռ. N 6348, Յովհան Աւետարանչի պատկերի վերին մասում գրուած յիշատակագրութեան հետ:

4 Այս մասին արժէքաւոր տուեալներ է մէջբերում գիւղական համայնքի մասին գրած իր ուշագրաւ աշխատութեան մէջ պրոֆ. Ս. Եղիազարովը (տե՛ս **С. А. Егиазаров,** Исследование по истории учреждений в Закавказье, часть I, Сельская община, Казань, 1889):

նուելով XIV-XVI դդ. աղբիւրներում պատահականօրէն գրանցուած մի-երկու ոչ ուղղակի վկայութիւնների վրայ:

Ծանօթանանք դրանց: XIV դարի նշանաւոր իմաստասէր Յովհան Որոտնեցին (մհ. 1386 թ.) իր «Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի» աշխատութեան մէջ, «բաժանական հասարակութիւն» հասկացութիւնը բացայայտելու համար օրինակ է բերում նաեւ գիւղերի վարելահողերը («անդաստան գեղից»), դրանով իսկ հաւաստելով, որ նրանք ենթակայ են եղել բաժանումների[1]:

XVI դ. մի փաստաթղթի տուեալներով, Ուշտունիքի Բեսաւենք գիւղի տանուտէրերը միաբան պարտաւորուել են Ս. Գէորգի վանքին ամէն տարի տալ «ամէն բաժին կէս կապիճ ցորեն սերմ»[2]: Ամենայն հաւանականութեամբ, այստեղ «բաժին» տերմինի տակ պէտք է հասկանալ այն հողաբաժինները, որոնք համայնքի կողմից տրուած են եղել օգտագործման բազմանդամ ընտանիքների եւ կամ սակաւաշունչ մի քանի ընտանիքներից կազմուած ժամանակաւոր խմբերի՝ հողաբաժանման համփա-չարեքային սկզբունքով: Որ վերոյիշեալ պարտաւորութիւնը ստանձնած «բաժնի» տէրերը հաւասար քանակութեամբ հող են ունեցել, այդ երեւում է այն բանից, որ նրանցից իւրաքանչիւրը պարտաւորւում է վանքին տալ հաւասար քանակութեամբ (կէս կապիճ) ցորեն:

Ըստ ինքեան հասկանալի է, որ կրկնուող հողաբաժանումների դէպքում միայն գիւղական ընտանիքները կարող էին ըստ շնչաքանակի հաւասարաչափ հողաբաժին ունենալ: Կարծում ենք, սխալ գործած չենք լինի, եթէ XIX դ. Հայաստանի բազմաթիւ շրջաններում կիրառուող համփա-չարեքային հողաբաժանութեան ձեւը համարենք յատուկ նաեւ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին: Թւում է, թէ դրա համար ունենք նաեւ բաւարար կռուան: Պահպանուել է Ուշտունիքի Գանձակ գիւղում շարադրուած նուիրաբերական մի արձանագրութիւն, որի կարեւոր մասում ասուած է. «Աստուած օրհնէ զԳանձակ գեղ, որ միաբան մի խորհուրդ եղեն եւ տուին զԽստակիսի գերեզմանաց արտն անջինջ յիշատակ հոգոյ իւրեանց եւ ննջեցելոց, եթէ մելիք, եթէ համբայ, եթէ մեծ, եթէ փոքր՝ ամենեքեան տուին»[3]:

Դժուար չէ համոզուել, որ այստեղ գործածուած «համբայ» տերմինը ըստ իմաստի, համապատասխանում է նման կարգի նուիրաբերական ակտերի մէջ բազմիցս գործածուած «տանուտէր» (կամ «քեադխուդա», «դոլվաթաւոր») տերմինին: Եւ հէնց այն հանգամանքը, որ «տանուտէր»-ը հնարաւոր են համարել փոխարինելու «համբայ»-ով, ըստ ինքեան ենթադրել է տալիս համփա-չարեքային հողաբաժանման սկզբունքի տարածուած լինելը նաեւ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Հողաբաժանման այդ ձեւի կիրառման ժամանակ բազմամարդ գերդաստանները, բաւարարելով ամբողջական հողաբաժին ստանալու համար անհրաժեշտ շնչաքանակի նորման (16 հոգի) կամ գերազանցելով այն՝ ստանում էին մէկ լրիւ, երբեմն մի քանի հողաբաժիններ:

Գիւղական համայնքի հողային ֆոնդից ստանալով մէկ կամ մի քանի ամբողջական բաժին վարելահողեր, ունենալով անհրաժեշտ քանակութեամբ քաշող անասուններ ու գիւղա-

1 Յովհան Որոտնեցի, Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի, Երեւան, 1956, էջ 6: Ստորեւ բերում ենք աշխատութեան մեզ հետաքրքրող հատուածը. «Հասարակութիւնն է ըստ չորս եղանակի... Երկրորդ՝ է բաժանականն, որպէս կերակուր հասարակաց եւ անդաստան գեղից»:

2 ՄՄ ձեռ. N 9223, ԺԷ, էջ 1բ

3 ՄՄ ձեռ. N 4868, էջ 321բ

տնտեսական գործիքներ, ինչպէս նաեւ ապահովուած լինելով աշխատաւոր ձեռքերով, ազդեցիկ տանուտէրերի կամ համփաների գերդաստանները, ինչպէս արդէն ասացինք, գիւղերում մեծ ազդեցութիւն ու կշիռ ունէին եւ, ինչպէս կտեսնենք ստորեւ, տնտեսական կախման վիճակի մէջ էին պահում չքաւոր համագիւղացիներին: Ուստի հասկանալի է, թէ ինչու հայ գիւղացու խօսակցական լեզւում «համփա» բառը պէտք է ստանար նաեւ «ունեւոր դասին պատկանող անձ» նշանակութիւնը[1]:

Ձեռագրերի յիշատակարաններում բազմիցս հանդիպում ենք այդպիսի տանուտէրերի կամ համփաների, որոնք տնտեսապէս ապահով լինելով, հնարաւորութիւն էին ունենում հանդէս գալու որպէս մեծագին ձեռագրերի պատուիրատուներ ու գնորդներ: Յիշատակարաններից շատերի մէջ թուարկուած են այդ տանուտէրերի բազմաքանակ «արեան մերձաւորները»: Մեծ մասամբ հնարաւորութիւն չի լինում պարզելու, թէ նոյն հարկի տա՞կ են ապրել արդեօք արիւնակից այդ ազգականները, թէ՞ զատ-զատ ընտանիքներով, սակայն որոշ դէպքերում յիշատակարաններն ընձեռում են այդպիսի հնարաւորութիւն:

Այսպէս, օրինակ, 1462 թ., որպէս Աղթամարում ընդօրինակուած մի Աւետարանի ստացողներ, յիշւում են Գիշուկ եւ Շամշա ամուսինների 5 արու զաւակները՝ Սարգիս, Խաչատուր, տէր Աւագ, Ստեփանոս, Յովհաննէս: Այնուհետեւ թուարկւում են այդ եղբայրների կանայք, որդիներն ու թոռները, ընդամէնը 66 անուն[2]: Կարծում ենք, որ բազմասերունդ այս եղբայրները միասնաբար մի ձեռագիր կարող էին ստանալ այն դէպքում միայն, եթէ կազմէին մի մեծ գերդաստան, ապրէին մի յարկի տակ:

XV դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններից շատերի մէջ տուեալներ կան ազգակցական նոյն սկզբունքներով կազմուած բազմանդամ գերդաստանների մասին, որոնք իրենց կազմում յաճախ ունենում էին 19, 17 կամ 16 անդամներ[3]:

Բազմամարդ ու մեծ գերդաստանների գոյութիւնը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հաւաստւում է նաեւ այլ աղբիւրներով: Թովմա Մեծոփեցին, օրինակ, հաղորդում է, որ Շահռուխի 1430 թ. արշաւանքի ժամանակ Քաջբերունեաց գաւառի Մաջառուց գիւղից՝ «ի միոջէ տանէ» գերուեցին 10 հոգի[4]: Պէտք է ենթադրել, անշուշտ, 10 հոգի գերի տուած ընտանիքի անդամների թիւը, առնուազն, կրկնակի անգամ մեծ էր: Շատ աւելի ուշագրաւ է բազմանդամ գերդաստանների մասին Սիմեոն Լեհացու «Ուղեգրութեան» մէջ բերուած տուեալը, որը սակայն վերաբերում է XVII դ. սկզբին եւ միայն Խարբերդի ու Սեբաստիայի շրջաններին: Խարբերդի մասին լեհահայ հեղինակը զարմանքով արձանագրում է հետեւեալը.

1 Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, III, էջ 35: «Համփա» տերմինի նշանակութեան մասին յիշատակութեան արժանի տուեալ է հաղորդում հայ գիւղացու արտադրական կենցաղի լաւագոյն ուսումնասիրողներից մէկը՝ Ս. Զելինսկին: Նա գրում է. "Слово "ампа" употребляется как в смысле почета, знаменитости или древности, так и в смысле отвлеченной единицы платежной способности... Название это присваивают себе отдельные семейства, пользующиеся большим количеством земли и платящие, поэтому, больше оброка" (см. "Материалы для изучения экономического быта гос. крестьян Закавказского края", т. I, вып. I, Тифлис, 1885, էջ 20-21):

2 ՄՄ ձեռ. N 7632, էջ 320ա-321ա

3 Տե՛ս ՄՄ ձեռ. N 4768, էջ 350ա, N 4883, էջ 613բ-614ա, Նոր Ջուղա, ձեռ. N 28, էջ 341բ-343բ (միջնորդութեամբ Ս. Տէր-Աւետիսեանի) եւ այլն:

4 **Թովմա Մեծոփեցի**, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 92

«Եւ անդ եւս մեծամեծ տներ էին, որպէս Սեբաստու: Անդ տեսաք մէկ տունն քառասուն օրոցք. եւ ամէնքն հօր հնազանդ. եւ թէ հայրն մեռանէր՝ մեծ եղբօրն հնազանդէին. եւ այսպէս մեծ սէր եւ միաբանութիւն մեծ տեսաք երկիրն այն, զոր այլ տեղ երկու եղբարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին բնակել ի միում տան»[1]: Գիւղական համայնքի բոլոր անդամներին պատկանող ու պարբերաբար հողաբաժանման ենթակայ հողային ֆոնդից զատ, գիւղերում կային նաեւ այս կամ այն ընտանիքի կողմից սեփականացուած կամ սեփականութիւն դառնալու ընթացքի մէջ մտած հողակտորներ: Գրիգոր Տաթեւացին իր Քարոզներից մէկում, անշուշտ, նկատի ունենալով իր միջավայրում ամրակայացած սովորոյթային իրաւունքի նորմերը, հաղորդում է ուշագրաւ տուեալ այն մասին, որ «զանդաստանս ինչ յորժամ ի բազում ամս կալնու ոք՝ հայրենիք լինի նմա»[2]: Գրիգոր Տաթեւացու հաղորդած այս տեղեկութիւնը կարեւոր նշանակութիւն ունի: Համայնքի ազդեցիկ եւ ունեւոր տանուտէրերը, օգտագործելով իրենց կշիռն ու հեղինակութիւնը, առանց մեծ արգելքների ի վիճակի էին իրենց գերդաստանների կողմից մշակուող այս կամ այն արտը նոր հողաբաժանումների ժամանակ կրկին ու կրկին անգամ պահել իրենց ձեռքում եւ, ի վերջոյ, «պարսպով եւ նշանիւ սահման դնելով»[3] հանել գիւղական համայնքի բաժանման ենթակայ հողային ֆոնդից:

Պէտք է ենթադրել, որ հետաքրքրող ժամանակաշրջանում գիւղական համայնքի հողային ֆոնդի որոշ մասն արդէն, յիշեալ ճանապարհով ամրացուած լինելով այս կամ այն գերդաստանին, «հայրենիք» դառնալու ընթացքի մէջ էր մտել:

1470 թ. Աղթամարում շարադրուած նուիրաբերական մի արձանագրութեան մէջ թուարկուած են Արբերդ գիւղի արտերից մի քանիսի անունները. դրանք են՝ Ծիտկանց արտ, Ներկարարենց արտ, Աշըղի արտ[4]: XV-XVI դդ. անթուական մի փաստաթղթի համաձայն Աթանանց գիւղի տանուտէրերի կամքով Վաղպատրիկի վանքը նուէր է ստանում վեց արտ՝ «զԽաչի արտն, ու զՄուռ արտն, ու զՈւռուտն, ու Շապխոնց քաշն, ու Ջաւգերոնց արտն, ու Ջաւգերոնց Թումի արտն»[5]: Կայ տուեալ այն մասին, որ ոմն տէր Ներսէս Ս. Աստուածածնի վանքին է նուիրում Բաղեշից ոչ հեռու գտնուող Մարգար գիւղի «պղնձագործ Մախսուտի արտերն, զՄահտեսի Մուրատի արտն», ինչպէս նաեւ երկու ձեռագիր ու մի արծաթի սկիհ[6]:

Բերուած փաստերն ուշագրաւ են այն տեսակէտից, որ նուիրաբերուող արտերի մեծագոյն մասը կոչւում է այս կամ այն անձնաւորութեան կամ գերդաստանի անուն-ազգանունով (Ծիտկանց, Շապխոնց, Ջաւգերոնց, պղնձագործ Մախսուտի, մահտեսի Մուրատի եւ այլն:) Պէտք է ենթադրել, որ վերոյիշեալ արտերը բոլորի կողմից ճանաչուած իրենց անունները ստացել են շնորհիւ այն բանի, որ գիւղական տուեալ գերդաստանը կամ տանուտէրը միեւնոյն արտը մշակել է «բազում ամս»,- ինչպէս կասէր Գրիգոր Տաթեւացին:

Համայնքապատկան հողերի մի մասի սեփականման պրոցեսը Հայաստանում սկսել էր դարեր առաջ, ուստի համայնքի մէջ ընդգրկուած փարթամ գերդաստաններից շատերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տիրում էին արդէն զգալի քանակութեամբ այգիների, վա-

1 «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 157-158

2 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 593

3 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 298

4 ՄՄ ձեռ. N 8928, էջ 289ա-289բ

5 ՄՄ ձեռ. N 6324, էջ 305ա

6 **Գ. Սրուանձտեանց**, Թորոս աղբար, Բ, էջ 257

րելահողերի եւ այլ կալուածքների:

Համայնքը այլեւս իրաւասու չէր միջամտելու դրանց տնօրինմանը, եւ իւրաքանչիւր «հայրենատէր» կարող էր անարգել նուիրաբերել, վաճառել կամ մի այլ ձեւով օտարել իրեն պատկանող կալուածքը: Մերձաւոր ազգականների համաձայնութիւնը, սակայն, այդ դէպքում պարտադիր էր: Նոյնիսկ, երբ գերդաստանը բաժանուած էր առանձին ընտանիքների, նախկինում ողջ գերդաստանին պատկանող վաճառուած կամ այլ ճանապարհով օտարուած այս կամ այն կալուածքը ենթակայ էր յետգնման, եթէ մերձաւոր ազգականներից որեւէ մէկը համաձայն չէր օտարման այդ գործարքին: Գր. Տաթեւացին այս կապակցութեամբ գրում է. «Եւ որ կամի զհայրենիս աղքատին յետ գնել՝ պիտոյ է... նախ՝ որ լինի ազգական նմա, զի օտարն ոչ կարէ գնել»[1]: Ազգականների յետագայ միջամտութիւնից վանական որեւէ հաստատութեան նուիրաբերած կալուածքները զերծ պահելու մտահոգութեամբ, նուիրաբերական արձանագրութիւնների մէջ յաճախ շեշտում էին այն հանգամանքը, որ ազգականներից եւ ոչ մէկը իրաւունք չունի երբեւէ վէճ բացելու տուեալ նուիրաբերութեան առթիւ. Համարձակուողների հասցէին ուղղւում էին անէծքի սարսուռ ազդող խօսքեր: Այսպէս, օրինակ, 1489 թ. ոմն Դաւիթ երէց Արտամետի Կաղնկեց Ս. Աստուածածնի վանքին նուիրաբերել էր իր ողջ ունեցուածքը՝ անշարժ ու շարժական կալուածքներ: Այդ մասին շարադրուած յիշատակարանի վերջում Դաւիթ երէցը գրանցել է այսպիսի տողեր. «Ով որ հակառակէ յետ իմ անցման, կամ դաւէ անէ, կամ դալապ անէ մազի մի չափ, թէ ազգ է, թէ աղբոր զարմ է թէ հօրեղբոր զարմ է՝ դաւէ եւ տալապ անէ, եկեղեցոյ փարգխանդէն հանէ եւ ցրուէ, նա զանէծքն օծին եւ զԿայէնին, զՅուդային եւ զՆեռան առցէ, ամէն»[2]: Համայնքը, սակայն, վերատանում էր սեփականութիւն դարձած վարելահողերի, այգիների եւ այլ կալուածքների տնօրինման իրաւունքը այն դէպքում, երբ դրանց սեփականատէրերը վախճանւում էին՝ չթողնելով մերձաւոր ժառանգներ[3]:

Սեփականութիւն հանդիսացող կալուածքների օտարման մասին պահպանուած արձանագրութիւնները զգալի թիւ են կազմում: Ծանօթանանք այդ կարգի մի-երկու փաստաթղթերի հետ:

1474 թ.(°) ոմն տէր Յովհաննէս իր «մայրենի» (այսինքն՝ մօրից ժառանգութիւն ստացած) այգին նուիրաբերում է Արարուց Ս. Նախավկայի վանքին, յատուկ շեշտելով, որ այդ նուիրաբերութիւնը անդարձ է եւ «ոչ ում դաւէ չի լինի, ոչ եղբաւր, ոչ եղբաւրորդոյ, ոչ ազգի եւ ոչ աւտարի, ոչ որդոյ եւ ոչ թոռան[4]:

1465-1489 թթ. ոմն Ստեփանոս Հերենըսի որդի, Հայոց-ձորի Կեմ գիւղի տանուտէրերի կամքով Պուտուկի վանքին է նուիրում իր «հերենական գնած մուլքն՝ զՓոս արտն»: Նուիրաբերութեան պայմանն այն է, որ «զինչ երէց որ եկեղեցոյն ծառայութիւն առնէ՝ զնն արտի

1 «Գիրք քարոզութեան, որ կոչի ձմեռան հատոր», էջ 86

2 ՄՄ ձեռ. N 5537, էջ 298ա

3 Այս մասին XIV-XV դդ. տուեալներ չեն պահպանուել, սակայն յետագայ դարերում կիրառուող պրակտիկան օրէնքի ուժ էր ստացել, անտարակոյս, դարաւոր տրադիցիայի ուժով: Յայտնի է, օրինակ, որ 1747 թ. «Երեւանայ Գ (3) եկեղեցու եղեալ ժողովրդի» կողմից լիազօրուած տանուտէրերը իրենց հայեցողութեամբ տնօրինել են անժառանգ մահացած ոմն Մատթէոսի Նորագեղում գտնուող այգին (տե՛ս «Կալուածագրեր», էջ 85):

4 ՄՄ ձեռ. N 9093, էջ 435բ

բերքն այն ուտէ, եւ ի տարին հինգ անգամ զհերենըսենց գերեզմաններն օրհնէ»[1]:

Որոշ գիւղերում «հայրենիք» կամ «մուլք» կոչուող կալուածքներն այնքան ընդարձակ տարածութիւն էին բռնում, որ գիւղի հողային ֆոնդը երկփեղկուել էր համայնքային եւ մլքային բաժինների: Այդպէս էր, օրինակ, Քարուակ գիւղում, որտեղ կար յատուկ «մլքի դաշտ»: Այդ դաշտում գտնուող իր «հալալ մուլքը» XVI դ. ոմն Թերձակենց Թումա նուիրաբերեց Ժաժկանց Սուրբ Աւետարանին[2]:

Գիւղերի սահմաններում կային նաեւ ընդարձակ տարածութիւն բռնող ապառաժ, անջրդի, ճահճային կամ մի այլ պատճառով երկրագործութեան համար ոչ պիտանի հողեր: Դրանք կարող էին դառնալ այս կամ այն գերդաստանի սեփականութիւնը, եթէ նրանք միջոցներ ներդնելով ու ջանքեր գործադրելով կարողանային օգտագործելի դարձնել այդ հողերը: 1507 թ. ընդօրինակած մի Աւետարանի մէջ կայ հետաքրքրական մի գրանցում. ոմն Ստեփանոս ինչ-որ սուրբ Կիրակոսի վանքի նուիրում է գանձագին մի պարտէզ ու մի ջրաղաց: Բացի այդ բարեգործութիւնից, նոյն Ստեփանոսը՝ «ճամ կորդեց, ոխֆ արար Կեչայ կարմընջին».- ասուած է նուիրաբերական ուշագրաւ այդ արձանագրութեան մէջ[3]: «Ճամ» նշանակում է եղէգնուտ, ճահճոտ վայր[4], իսկ «կորդել» («կորդ»-անվար, խոպան հողամաս) հաւանաբար նշանակել է՝ խամ խոպան կամ ճահճուտ հողը մշակել, դարձնել օգտագործելի: Այսպիսով պարզւում է, որ վերը յիշուած Ստեփանոսը իրաւասու էր ցանկացած ձեւով վարուելու ինչպէս իր կողմից գնուած պարտէզի ու ջրաղացի, այնպէս էլ «կորդած»- այսինքն մշակելի դարձրած արտի հետ:

Գիւղական համայնքի ներքին կեանքի ուսումնասիրման տեսակէտից ուշագրաւ է նաեւ այդ արտի նուիրաբերման նպատակը: Այն «ոխֆ» է արւում «Կեչայ գետի կարմընջին» պայմանով, որ այդ արտի մշակողի վրայ դրուած լինի կամուրջը չէն պահելու պարտականութիւնը. «ով որ ցանէ՝ զկարմունջ չէն պահէ».- գրուած է այնտեղ[5]: Մոկքի Ոզմի գիւղի տանուտէրերի բարեգործութիւնները թուարկող XVII դարի մի արձանագրութեան մէջ, որ գրանցուած է Մատենադարանի կողմից վերջերս ձեռք բերուած մի Աւետարանի հատակտորների վրայ, խօսք կայ նաեւ այն մասին, որ տանուտէր Մարտիրոսն ու իր Առաքել եղբայրը «Բ. (2) կճ. (=կապիճ) ցորեն տուին առւին»[6]: Իսկ 1651 թ. պահպանուած մի արձանագրութիւնից տեղեկանում ենք կապիճ ու կէս ցորենով մի արտի գնման մասին. գնողներն արտի արդիւնքը յատկացնում են համայնքին, որպէսզի «առու խանելոյ ալրն ուտեն»[7]:

Արդ, եթէ առանձին տանուտէրեր հող էին տանում համայնքի անդամներին շահագրգռող կամուրջը կամ առուն չէն պահելու կամ մաքրելու աշխատանքներին, ապա առանց վարանման կարելի է ենթադրել, որ այդպիսի նպատակների համար համայնքը եւս իր հողային ֆոնդից կարող էր յատկացնել առանձին վարելահողեր:

1 Ղ. Փիրղալեմեան, Նշխարք պատմ. հայոց, Բ, ՄՄ ձեռ. N 4515, էջ 229-230

2 ՄՄ ձեռ. N 3850, էջ 99ա

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», սիւն. 629

4 Ա. Մնացականեան, Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, Երեւան, 1956, էջ 114, 665

5 Նոյն տեղում: Հմմտ. նաեւ «Թորոս աղբար», Բ, էջ 270, ուր մէջ է բերուած 1578 թ. մի արձանագրութիւն ինչ-որ մէկի կողմից Ս. Գեորգ զօրավարի վանքին «զկարմընճի արտ, ճոթով» նուիրաբերելու մասին:

6 ՄՄ ձեռ. N 9660, էջ 1բ

7 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», սիւն. 699

Կան բաւարար փաստեր այն մասին, որ Հայկական վանքերից շատերը XIV-XV դդ. իրենց պատկանող հողերի վրայ ստեղծում էին սեփական տնտեսութիւններ: Իսկ հայ եւ օտարազգի կալուածատէրերը եւս ունեցե՞լ են արդեօք այդպիսի տնտեսութիւններ իրենց պատկանող գիւղերում, թէ՞ ոչ, առայժմ չենք կարող հաստատապէս ասել[1]: Գիտենք ստոյգ, որ նրանք իրենց պատկանող գիւղերում ունենում էին զգալի քանակութեամբ վարելահողեր, որոնք վարձակալման էին տալիս տուեալ կամ մերձակայ գիւղերի բնակիչներին: Այս մասին ուշագրաւ թեան արժանի տուեալ կայ Բեսաւենք գիւղի համայնքի Ս. Գեորգ վանքի նկատմամբ ստանձնած պարտաւորութիւնների մասին XVI դ. գրուած մի արձանագրութեան մէջ, ուր ասուած է. «Արարիչն Աստուած զԲէջօրինից տանուտրէքն ուրհնէ առհասարակ: Արտ մի ոխւ էր տուած այս եկեղեցոյս, յետ ժամանակաց տաճիկ մի գեղի տէր եղաւ եւ զարտն խլեց եւ արար չարեք հող՝ Աւանի ձեռօք, Աստուած չողորմի իւրենց» եւ այլն[2]: Մէջբերուած հատուածը մեկնաբանում ենք այսպէս. տարիներ առաջ գիւղի տանուտէրերի միաբան համաձայնութեամբ մի արտ է նուիրուած եղել Ս. Գեորգի վանքին, սակայն դրութիւնը փոխուել է, երբ գիւղի տէր է դարձել «տաճիկ մի»: Մահմեդական այս գիւղատէրը խլել է գիւղական համայնքին պատկանող, բայց վանքին նուիրաբերուած արտը եւ այն դարձրել «չարեք հող», այլ խօսքով նա սեփականել է այդ արտը, բերքի մէկ քառորդը ստանալու պայմանով վարձակալման յանձնելու համար[3]: Գիւղական համայնքը տարուայ մէջ մի քանի օր պարտաւոր է եղել ձրի կոռային աշխատանք կատարել կալուածատիրոջ համար: Այս մասին XIV-XV դդ. ուղղակի վկայութիւններ չեն պահպանուել, բայց կան յիշատակութիւններ յետագայ դարերից:

Այսպէս օրինակ, Տաթեւի վանքում հին տրադիցիաների հիման վրայ XVII դ. կազմուած՝ «Հուլավարն, այսինքն վանքական գիւղօրէից հողոց տասանորդքն» մեծարժէք ցուցակում, վանքապատկան Տաթեւ, Սուարանց, Աղանց, Տանձատափ եւ միւս գիւղերի կալուածատիրոջ (տուեալ դէպքում՝ վանքի) նկատմամբ ունեցած պարտաւորութիւնների շարքում, ամէն անգամ նշւում է նաեւ հետեւեալը. «գլխաւրն, բոլոր գեղովն» պարտաւոր են ամէն տարի, ա-

1 Տարսայիճ Օրբելեանի կին Մինախաթունը 1292 թ. Նորավանքին նուիրաբերել է այգիներ. այդ առթիւ փորագրուած արձանագրութեան մէջ նուիրատուն անհրաժեշտ է գտել շեշտելու, որ «այս տուրքս ո՛չ ի զրկանաց, ո՛չ ի գեղէ, ո՛չ ի պարոնահողաց, այլ մեր հալալ դրամագին՝ ազատ յամէն հարկաց, որ ոչ ում հաշիւ չկայ ի հետ» («Վիմական տարեգիր», էջ 135): Հակուած ենք կարծելու, որ այստեղ գործածուած «պարոնահող» տերմինի տակ պէտք է հասկանալ հէնց այն հողաբաժինը, որ կալուածատէրերը իւրացնում էին՝ կտրելով գիւղական համայնքի հողային փոնդից:

2 ՄՄ ձեռ. N 9223, ժԷ, էջ 1բ

3 «Չարեք» տերմինը գործածական է եղել հարեւան Ատրպէյճանում մինչեւ XIX դ.: Ատրպէյճանի միջնադարեան պատմութեան մասնագէտ Ա. Ալի-Զադէի տուեալներով "Чахар-йек (=չարեկ) платили малоземельные крестьяне, отдававшие землевладельцу одну четвертую часть годового дохода" (տե՛ս **А. А. Али-Заде,** Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв., Баку, 1956, էջ 239): Բերուած փաստաթուղթը կարելի է մեկնաբանել նաեւ ուրիշ ձեւով, եթէ «չարեք հող» տերմինը այլ կերպ հասկացուի: Յայտնի է, որ համփա-չարեքային հողաբաժանման սիստեմով գիւղական համայնքի հողերը բաժանւում էին համփաների, չարեքների, պճեղների եւ այլ մասերի եւ յատկացւում գիւղական համայնքի գերդաստաններին, նրանց ընչաքանակի համապատասխան: Չարեք հող (այսինքն՝ համփայի մէկ քառորդի չափով հող) ստանում էին չորս շնչից բաղկացած ընտանիքները:

Արդ, եթէ այս փաստաթղթի մէջ «չարեք հող» գործածուել է հէնց այդ իմաստով, ապա պէտք է ենթադրել, որ գիւղի մահմեդական տէրը խլել է համայնքի կողմից եկեղեցուն նուիրաբերուած արտը եւ այն յանձնել օգտագործման (որպէս «չարեք հող») Բեսաւենք գիւղի բնակիչ Աւանին, որի դրդմամբ կամ խնդրանքով էլ կատարուել է այդ գրաւումը:

Այդ բացատրութեամբ Բեսաւենք գիւղի տանուտէրերի անունից շարադրուած փաստաթուղթը, պահպանած լինելով վկայութիւն համփա-չարեքային հողաբաժանման ձեւի մասին, արժէքաւորւում է այլ առումով:

ռանց վարձատրութեան «մէկ օր վարեն, Բ (կամ Գ) օր հունձ անեն, եւ մէկ օր ալ ջառ անեն ինչ բան որ լինի, եւ մէկ օր եզնարածքն վանքիս համար խոտ հարեն»[1]:

Զպէտք է տարակուսել, որ համանման պարտաւորութիւններ իրենց կալուածատէրերի նկատմամբ, եթէ միայն սրանք վարել են ինքնուրոյն տնտեսութիւն, ունեցել են բոլոր գիւղական համայնքները՝ «գլխովին, բոլոր գեղովն»:

Համայնքի անդամները կալուածատէրերի նկատմամբ ունեցել են նաեւ այլ պարտաւորութիւններ: Ուշ դարերից մեզ յայտնի ազգագրական նիւթերը հնարաւորութիւն են տալիս ենթադրելու, որ կալուածատէրերը իրենց գիւղերի շինականներին յանձնել են անվճար խնամելու մանր ու խոշոր եղջիւրաւոր անասուններ, ինչպէս նաեւ տնային թռչուններ: Այս մասին կայ նոյնիսկ մատենագրական մի տուեալ քննութեան ենթակայ ժամանակաշրջանից:

Գրիգոր Նարեկացու ընդարձակ վարքում, որ մուտք է գործել Գրիգոր Ծերենցի (մհ. 1425 թ.) խմբագրած Յայսմաւուրքի մէջ, Նարեկ գիւղի քուրդ տիրոջ մասին ասուած է, որ նա «հաւ մի... յիւր շինականն եւ թուխս դնել»: Թխական հաւն իր ճուտերով, դժբախտ պատահարով, ընկնում է երկնաքարի տակ եւ սատկում. «իսկ այն կինն, որ զհաւն ի թուխս եդեալ էր, աճապարեալ եղեալ յահէ քրդոյն՝ յուսացաւ յԱստուած եւ յաղօթս սրբոյն Գրիգորի»: Եւ, իբր, Գրիգոր Նարեկացու ձագայարոյց զօրութեամբ ջախջախուած հաւն իր ճուտերով կրկին կենդանանում է, խեղճ ու ահաբեկուած շինական կնոջն ազատելով քուրդ բեկի բարկութիւնից[2]:

Այսպիսով, որքան էլ աղքատիկ ու ակնարկային են մեր օգտագործած նիւթերը, նրանք հնարաւորութիւն են տալիս մասամբ որոշելու կալուածատէրերի նկատմամբ գիւղական համայնքի անդամների ունեցած պարտաւորութիւնները եւ, որ շատ կարեւոր է, պարզում են, որ XIV-XV դդ. գիւղական հողատարածութիւնները հիմնականում, ինչպէս նշեցինք, բաժանուած են եղել հինգ կատեգորիաների՝ ա) հողաբաժանման ենթակայ համայնքապատկան վարելահողեր, խոտհարքներ, արօտավայրեր եւ այլն, բ) տարբեր ճանապարհներով մասնաւոր սեփականութիւն («հայրենիք», «մուլք») դարձած այգիներ, պարտէզներ, վարելահողեր, գ) գիւղատէրերի կողմից սեփականուած վարելահողեր, որոնք տրւում էին վարձակալման, դ) վանական հաստատութիւններին նուիրաբերուած հողակտորներ եւ վերջապես, ե) անմշակ, խոպան ու ճահճուտ հողային տարածութիւններ:

Գիւղական համայնքը Հայաստանում ու հարեւան երկրներում շերտաւորման էր ենթարկուած մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից դարեր առաջ: Դեռեւս V դ. տուեալ ունենք այն մասին, որ գիւղական բնակչութիւնը տնտեսական ու սոցիալական իր դրութեամբ շերտաւորուած էր 3 խմբերի՝ թուանիկների, տառապեալների եւ վար ու այգի չունեցողների: Թուանիկներից եկեղեցին հարկի դիմաց գանձում էր պտուղ՝ 4 գրիւ ցորեն, 6 գրիւ գարի եւ 16 փաս քաղցու, «տառապեալները» տալիս էին հացի կէսը եւ գինի՝ որքան կարողանային, իսկ «որոյ վար եւ այգի ոչ է»՝ ազատւում էին պտղի վճարելուց[3]:

XV դ., անշուշտ, համայնքի շերտաւորման պրոցեսն աւելի էր խորացել, եւ բազմաթիւ

1 ՄՄ ձեռ. N 6271, էջ 678

2 «Գիրք, որ կոչի Յայսմաւուրք», 1730, էջ 395

3 **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկուա, 1860, էջ 66. «Սահմանադրութիւն կանոնական ի Վաչականայ Աղուանից արքայի, եղեալ ի ժողովն, որ յԱղուէնն եղեւ»:

տուեալներից դատելով, հարուստ ու փարթամ գերդաստանների կողքին, կային ընտանիքներ, որոնք անկարող էին սեփական միջոցներով զբաղուել վարուցանքով:

Ցիշատակարանների ու կալուածքների օտարման մասին շարադրուած փաստաթղթերի մէջ, երբ հարկ է լինում խօսել գիւղական որեւէ համայնքի բոլոր անդամների մասին, յաճախ գտնում ենք այսպիսի արտայայտութիւններ՝ «թէ մեծ է եւ թէ փոքր, թէ հարուստ է եւ թէ աղքատ, թէ բնական է եւ թէ նորէկեց»[1]:

Գիւղական հարուստ գերդաստանների, նրանց տնտեսական ու սցիալական դիրքի մասին վերը բերուած տուեալները համարելով բաւարար, փորձենք անհամեմատ շատ աւելի սուղ տուեալներով փոքր-ինչ լուսաբանել աղքատ գերդաստանների տնտեսական ու իրաւական վիճակին առնչուող որոշ հարցեր:

Համայնքից ստացած վարելահողը ինքնարաւ միջոցներով մշակել անկարող գիւղական ընտանիքներից մի քանիսը միանալով կազմում էին հարակցութիւններ կամ հաղկիցների ընկերութիւններ: Նրանք փոխադարձ համաձայնութեամբ երկրագործական աշխատանքների (վար, հունձ) ամիսներին, միացնում էին իրենց անասուններն ու գիւղատնտեսական գործիքները եւ հերթով վարում, ցանում, հնձում ու կալսում կամաւոր սկզբունքներով կազմուած ժամանակաւոր այդ ընկերութիւնների մէջ մտած անդամների արտերը:

Հարակցութեան մասին տուեալ է յիշատակում Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» Բ մասի ՃԻԱ յօդուածում, որը կրում է «Յաղագս դատաստանաց այգեգործաց, ընկերաւոր մաճուորաց հարակցաց եւ վարձկանաց» խորագիրը:

Նշելով, որ տարբեր գաւառներում գոյութիւն ունեն տարբեր սովորոյթներ ու տրադիցիաներ, Գոշը թէեւ դժուարանում է առաջարկել համընդհանուր ու պարտադիր կանոններ, որոնք կիրառելի լինէին ամէնուրեք «ընկերաւոր մաճուորաց հարակցաց» միջեւ ծագող վէճերի ժամանակ, բայց եւ այնպէս սահմանում է հետեւեալը՝ «Մի ոք անիրաւութեամբ զրկանս ինչ գործիցէ, այլ իրաւամբք զրաժանումն արասցէ ընդ ընկերին: Իսկ զող գտեալ ոք ի նոսա կրկին տուգանեսցի եւ ոչ չորեքկին ըստ օրինացն, զի յիւր վաստակն եւ ոչ յօտարին աւերէ»[2]:

Այդպիսի հարակաշներ էին դարձել հայ ժողովրդական առակներից մէկում աղուէսն ու խեցգետինը. «Աղուէսն ու խեչափառն բարեկամացան մէկ մէկի եւ եղան եղբարք եւ սկսան ծաց», - ասուած է առակում: Ցորենի շեղջը կուտելուց հետոյ աղուէսը մտադրւում է նենգել իր ընկերոջն ու բերքի երկուերրորդը վերցնել իրեն. «Շախնայն եւ ի զեղչիս տանուտէրքն պատեհ են տեսել, որ դու մին բաժին առնուս եւ ես երկուս», - ասում է նա խեցգետնին: Սակայն վերջինս հնարագէտ խորամանկութեամբ կարողանում է մեծ բաժինն ինքը ստանալ[3]:

Այս նոյն հարցի լուսաբանման տեսակէտից ոչ պակաս նշանակութիւն ունեն Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի կանոնական խրատները, առաքուած Արեւելեան Հայաստան 1251 թ.: Այդ նորայայտ կանոնական խրատների նախավերջին կանոնը ազգագրական մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում: Այնտեղ ասուած է. «Ի զրկանաց եւ ի խաբելոյ պատրաստ

1 ՄՄ ձեռ. N 4883, էջ 614բ

2 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, հրատ. Վ. Բաստամեանի, Վաղարշապատ, 1880, էջ 432-433

3 Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 37

կայցեն քրիստոնեայքն եւ ի նենգելոյ զիրեարս՝ արք ու կանայք, հաղկիցք, եւ խապկիցք, եւ գինուորակիցք, եւ արուեստակիցք, գնաւղք եւ վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ եւ յաւիտենական կենաւքն»[1]:

Կաթողիկոսն, այսպիսով, զգուշացնում է իր հօտին, որ հանդերձեալ կեանքում մեծ պատժի են արժանանալու բոլոր նրանք, ովքեր այս կեանքում կզրկեն, կխաբեն ու կնենգեն իրենց ընկերներին: Արուեստակիցների, այսինքն, միեւնոյն արհեստով զբաղուող եւ համքարութեան մէջ ընդգրկուած արհեստաւորների, զինուորակիցների, գնողների ու վաճառողների հետ միասին՝ կանոնի մէջ յիշատակւում են նաեւ «հաղկիցք» եւ «խապկիցք» մեկնութեան կարօտ տերմինները:

Հայ բառարաններում պահուել է «հախկ» բառը՝ «ընկերակից դուլթանաւորներից ամէն մէկին ընկած վարելու հողի բաժին» իմաստով[2]: Այսպիսով, պարզ է, որ «հաղկիցք» էին կոչւում ընկերակիցների այն կամաւոր խմբերի անդամները, որոնք միաւորւում էին վարուցանքի, թերեւս նաեւ հունձի ու կալսման աշխատանքները միասնական ուժերով, լծկան անասուններով ու գործիքներով կատարելու համար: Հասկանալի է, որ այդ կարգի խմբերի մէջ կարող էին ընդգրկուել միայն գիւղական այն ընտանիքները, որոնք առանձին-առանձին վերցրած անկարող էին մշակել իրենց հողաբաժինները:

Ոչ պակաս հետաքրքրութիւն է ներկայացնում նոյն կանոնի մէջ յիշատակուած «խապկիցք» տերմինը:

Գիւղերում կային շատ ընտանիքներ, որոնք ունէին աննշան թուով կաթնատու անասուններ (կով, ոչխար, այծ): Օրուայ ընթացքում ստացած կաթի չնչին քանակով նրանք զրկուած պէտք է լինէին իւղ ու պանիր պատրաստելու հնարաւորութիւնից: Սակայն հայ ժողովուրդը դարերի ընթացքում իր արտադրական կենցաղում մշակել էր այդ դրութիւնից դուրս գալու ուշագրաւ մի եղանակ՝ կաթ փոխ տալու միջոցով: Նոյն վիճակի մէջ գտնուող մի քանի գիւղական ընտանիքներ փոխադարձ համաձայնութեան գալով, պայմանաւորւում էին օրուայ ընթացքում իրենց ստացած կաթը որոշ չափով-ամանով հերթով տալ այդ խմբի մէջ մտած ընտանիքներից մէկին: Այս ճանապարհով, խմբի մէջ մտած իւրաքանչիւր ընտանիք հնարաւորութիւն էր ձեռք բերում իր կաթից իւղ ու պանիր պատրաստելու: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, թուրքերէն լեզուով կոչւում էր «ղաբ» կամ «խաբ»-«խապ»[3], այստեղից էլ «խապկիցք» տերմինը, որի տակ հասկացւում էր փոխօգնութեան այդ խմբի մէջ մտած գիւղացիներից իւրաքանչիւրը: Հայ ժողովրդական առակներից մէկում պահպանուած է կարեւոր վկայութիւն տասը այծ ունեցող մի այրի կնոջ մասին, որը լինելով «խապկից» «յամէն օր շերփ մի ջուր լնոյր ի կաթն եւ ի խափ (տարբերակ՝ խապ, խաբ) տայր»: Իր այծարած որդու «է՞ր առնես դայդ վնասդ» հարցին մայրը տալիս է սպառիչ պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է՝ այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմռանս թացան լինի»[4]:

Հաղկիցների եւ խապկիցների խմբերի մէջ կարող էին միաւորուել այն ընտանիքները, որոնք իսպառ չէին զրկուել սեփական տնտեսութիւնը վարելու համար անհրաժեշտ արտադրա-

1 Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անուան հանրային գրադարանի ձեռագրական բաժին, Հայկ. ձեռագրերի ֆոնդ, նոր շարք N 37, էջ 214բ

2 Ս. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, III, էջ 12

3 Հ. Աճառեան, Արմատական բառարան, III, էջ 303-304

4 Ն. Մառ, նշ. աշխ., էջ 238-239

կան միջոցներից: Գիւղական համայնքներում, սակայն, կային նաեւ այնպիսի ընտանիքներ, որոնք ինքնուրոյն տնտեսութիւն կամ բնաւ չունէին, կամ էլ ունէին այնպիսի մանր, գաճաճային տնտեսութիւն, որի արդիւնքով անկարող էին կերակրուել: Այդպիսի ընտանիքներից էին դուրս գալիս վարձկաններն ու մշակները, որոնք վարձւում էին հարուստ համագիւղացիների կողմից երկրագործական սեզոնային աշխատանքների (վար, հունձ եւ այլն) շրջանում, ինչպէս նաեւ դառնում էին հովիւներ ու վարձկան ջրաղացպաններ[1] գիւղերում եւ «գործատուններ» (տնտես, մանկալ, հովիւ, իշվար, ջրբեր, փայտակոտոր եւ այլն)՝ վանական հաստատութիւններում:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ձեռագրերից մէկում, Բ մասի ՃԻԱ յօդուածի մէջ ծանօթ վերնագիրը խմբագրուած է այսպէս. «Վասն որ մարապան մտեն եւ մշակ այլ մարդոյ»:

«Մարապայ» տերմինը ըստ Ստ. Մալխասեանցի, նշանակում է «երկրագործ, որ նստած է կալուածատիրոջ հողի վրայ ու մշակում է այդ հողը, որոշ պարտականութիւններ կատարելով յօգուտ կալուածատիրոջ»[2]: Այս բացատրութիւնը ճշտման ու լրացման կարիք ունի: Մխ. Գոշի վերոյիշեալ յօդուածի խորագրում ասուած է, որ մարապան կամ մշակը վարձւում է «այլ մարդոյ» կողմից, իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կամ Գոշի յօդուածի միջնադարեան խմբագրի ժամանակ «այլ մարդ» կարող էր լինել ինչպէս կալուածատէրը, այնպէս էլ գիւղական փարթամ ու ընչեղ գերդաստանի տանուտէրը: Աւելին, եթէ մշակը ամենայն հաւանականութեամբ աշխատում էր իրեն վարձողի հողի վրայ, ապա հիմք չունենք պնդելու, որ նոյն փոխյարաբերութիւնը գոյութիւն ունէր վարձողի ու մարապայի միջեւ: Բացառուած չէ, որ վերջինս կարող էր աշխատել իր հողամասի վրայ, բայց ուրիշի քաշող անասուններով ու սերմացուով: Պնդել, որ մեծատուն տանուտէրերից տնտեսական այդպիսի կախման մէջ ընկած գիւղացիներն էին հէնց, որ կոչւում էին «մարապայ», չենք կարող, սակայն այդ կարգի յարաբերութիւնների գոյութիւնը հաւաստող տուեալներ կան:

Այսպէս, 1503 թ., նորընծայ ումն Յովհաննէս երէց Սթունի գիւղի բնակիչ Ծփլայի անուամբ մէկին տալիս է երեք եզ, եւ նոյնքան էլ՝ Ճռեռի գիւղի բնակիչ Խալիֆին: Այս երկուսը պարտաւորւում են Յովհաննէս երէցի տուած սերմերով ցանել իրենց հողակտորները, պայմանով, որ տարին 85 լիտր ձէթի գին ուղարկեն Երուսաղէմ, Յովհաննէս երէցի եւ նրա մերձաւորների յիշատակին: Ստորեւ մէջ ենք բերում այդ պայմանագրի կարեւոր մասը. «Ի Թուականութեանս Հայոց ՋԾԲ. (1503), ես նորընծայ Յովհաննէս երէցս որ յիշատակ դրի իմ հոգուս եւ ամենայն արեան մերձաւորացն իմոց: Տուել եմ Գ (3) եզն ի Ծըփլայուն որդին Սամղանայ, ի գեղն որ կոչի Սթունի. Գ.(3) եզն այլ՝ (ի գեղն) որ կոչի Ճռեռի, ի Խալիֆէն, որ վարեն զգետինըն իմ ցորենաւն ու իմ գարովն, ոսպամբ ու շուշմայով, ու այլ զինչ որ լինի...: Եւ զինչ որ Աստուած տայ՝ ամէն տարի... ՁԵ (85) լտեր գին յուղարկեն ի սուրբ Երուսաղէմ, ու զայլն աղքատացն եւ ուխտաւորացն բաժանեն...»[3]:

1 Վարձկան ջրաղացպան էր, օրինակ, Դաւիթ Մարեցին: Սա, Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ, լինելով «ի չքաւորաց եւ ի տնանկաց, պահէր զջրաղացս նոցա (ծարեցւոց), եւ յայնմանէ կերակրէր ինքն եւ կինն իւր եւ որդիք» (Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 307):

2 «Հայերէն բացատրական բառարան», III, էջ 271

3 Օքսֆորդ, Բոդլեան գրատուն, Ms. Marsh. 438 (I-III). (տե՛ս Մատենադարան, Անհատական արխիւներ, թղթ. 122, էջ 2007)

Նման բովանդակութեամբ պահպանուած այս միակ պայմանագիրը գրանցուել ու հասել է մեզ, որովհետեւ գործարքը բարեգործական բնոյթ ունի: Իրենց հողը ուրիշի լծկանով ու սերմացուով մշակող գիւղացիները, տուեալ դէպքում, պարտաւորւում են բերքի մի մասը ոչ թէ լծկան անասունների ու սերմացուի տիրոջը՝ Յովհաննէս երէցին յանձնել, այլ վերջինիս հոգու փրկութեան համար ուղարկում են Երուսաղէմի եկեղեցիներին: Սակայն պայմանագրի պատմական արժէքը սրանով բնաւ չի նուազում: Այդ փաստաթղթի հիման վրայ կարելի է վստահօրէն եզրակացնել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հայկական գիւղերի ունեւոր վերնախաւը (տանուտէրեր, քահանաներ եւ այլն) շահագործում էր արտադրութեան միջոցների մի մասից զրկուած գիւղացիներին՝ տալով նրանց լծկան անասուններ ու սերմացու եւ ստանալով նրանց հողակտորների վրայ, նրանց ջանքերով ու քրտինքով աճեցրած բերքի զգալի մասը:

Առկայ սուղ հնարաւորութիւնների սահմաններում ցոյց տալով գիւղական համայնքի անդամների միջեւ առաջացած շերտաւորումը, անհրաժեշտ ենք համարում շօշափել նաեւ հետեւեալ կարեւոր հարցը. արդեօ՞ք որեւէ գիւղում բնակութիւն հաստատած բոլոր անձինք կամ ընտանիքներն էին համարւում տուեալ գիւղական համայնքի լիիրաւ անդամներ, թէ՞ կային այնպիսի գիւղացիներ, որոնք իրաւազուրկ էին կամ չէին օգտւում համայնքի անդամների բոլոր իրաւունքներից:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ տուեալներ առայժմ չունենք, սակայն սկզբնաղբիւրներում կան որոշ ակնարկներ, որոնք աղօտ լոյս են սփռում գիւղական համայնքի կեանքի այս կողմի վրայ:

Մարմետ գիւղի մասին շարադրուած մեզ ծանօթ յիշատակարանում կան այսպիսի տողեր. «...եւ այլք, որ անուանքն ի միտս չի գար, թէ մեծ է եւ թէ փոքր, թէ հարուստ է եւ թէ աղքատ, թէ բնական է եւ թէ նորեկեց, ամենեքեան՝ մեծ եւ փոքր»[1]:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ հակադրուած են միմեանց գիւղում բնակուող անձինք ըստ իրենց սոցիալական (մեծ եւ փոքր) եւ տնտեսական (հարուստ եւ աղքատ) գոյավիճակի: Սակայն կայ նաեւ մի այլ յատկանիշ, որով տարբերակուել են գիւղի բնակիչները. յիշատակագիրը տարբեր կարգի բնակիչ է համարում «բնական»-ներին, այսինքն՝ գիւղի բուն բնակիչներին եւ «նորեկեց»-ներին, այսինքն՝ այլ վայրերից տուեալ գիւղը եկած ու բնակութիւն հաստատած անձանց:

Որ գիւղական բնակչութեան այս երկու կատեգորիաների միջեւ եղել է իրաւական ու սոցիալական ինչ-որ տարբերակում՝ այդ երեւում է նաեւ Մատթէոս Ջուղայեցու «Վասն քարոզութեան բանի» աշխատութեան մի հատուածից, որտեղ հեղինակը ցանկանում է ցոյց տալ, թէ «բարկութեան դեւը» մարդկանց նետում է յաճախ տարբեր որոգայթների մէջ: Որոգայթներից մէկն էլ համարւում է հետեւեալը. «Ասէ դեւն (բարկութեան) մի համբերեր դոցա, զի նոքա օտար են եւ եկք եւ դու բնիկ. հայրենիքս քո է եւ դոքա առ քեզ են եկեալ եւ ոչ դու առ նոսա. եւ դոքա զքո ապրանքդ կուտեն ու քեզ վնաս առնեն: Արդ. վարեա՛ զնոսա»[2]:

Ինչքան էլ անորոշ համարուեն մեր հեղինակի խօսքերը, այնուամենայնիւ, կարծում ենք, նրանք հնարաւորութիւն են տալիս եզրակացնելու, որ «բնիկ» գիւղացիները, այլ խօսքով հա-

1 ՄՄ ձեռ. N 4883, էջ 614ա

2 ՄՄ ձեռ. N 6607, էջ 47բ

մայնքի լիիրաւ անդամները՝ «նորեկեց»-ներին չէին համարում համահաւասար իրաւունքներով օժտուած: Նրանց պատկերացմամբ այդ նորեկեցները «իրենց ազրանքն են ուտում», ... տի եւ իրենք (բարկութեան դեւի դրդումով) իրաւասու են նոյնիսկ նրանց վռնդելու գիւղից («Արդ. վարեա՛ գնսա»):

Կարելի է յուսալ, որ հայերէն ձեռագրերի յետագայ խուզարկումներով երեւան կբերուեն բնիկների եւ նորեկեցների մասին նոր տուեալներ: XIV-XV դդ. գիւղական համայնքի պատկերը հնարաւորին չափ ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում համառօտակի ցոյց տալ, թէ գիւղացին, բացի պետական, կալուածատիրական ու եկեղեցական հարկերից (որոնց մասին այս յօդուածում խօսելը մեզ շատ կհեռացնէր բուն նիւթից), ի՞նչ հարկեր ու տուրքեր էր վճարում գիւղական պաշտօնէութեանը՝ ձեռնաւորին, ռեսին, գզրին եւ այլն:

Այս մասին քննութեան ենթակայ շրջանից կամ նրան ժամանակամերձ դարերից կան ձեռագրական որոշ ակնարկներ:

Այսպէս, 1288 թ., Սահմադինի եւ նրա որդիների պարոնութեան ժամանակ Օշականում փորագրուած մի արձանագրութիւնից պարզւում է, որ Գեշմարդ ամիրան եւ Հաւիկ ձեռնաւորը Ս. Կարապետի վանքի՝ Օշականում եւ Մրենում ունեցած այգիներն ազատել են ձեռնաւորի հարկից. «Թողաք... զձեռնաւորին հարկն զինչ որ կայր»,- գրում են նրանք[1]:

1313 թ. Տայքում գտնուող Վխկայ գիւղի տանուտէր Դաւիթը պարտաւորւում է գիւղից դուրս հարս տանելու դէպքում նախկինում գանձուող 12 սատակ դրամի դիմաց՝ վերցնել 6 սատակ («...հարս տանի՝ ԺԲ. ստկէն Զ. թողել է, Զ. կառնում»,- գրուած է այդ առթիւ կազմուած յիշատակարանում)[2]:

XV դ. անթուական մի արձանագրութեան տուեալներով Մթայ գիւղի ռես Ստեփանոսը հրաժարւում է գանձելուց «զաղչկան յաղկն» կոչուող տուրքը[3]: Ըստ երեւոյթին այս տերմինի տակ եւս պէտք է հասկանալ գիւղից աղջիկ ամուսնացնելու ժամանակ ռեսին տրուող տուրքը, որի մասին ակնարկ կայ նաեւ XVII դ. անթուական մի արձանագրութեան մէջ: Վերջինս պահպանուել է խիստ վնասուած վիճակում (բոլոր տողերի վերջին բառերը ընկել են), բայց, այնուամենայնիւ, մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում[4]:

Արձանագրութեան սկզբում փառաբանական խօսքեր են ուղղուած «Ոզմայ տանուտէ րացն» հասցէին, «որ չար (բադ)ազաթ կայր ի վերայ գեղին՝ Թողին», ապա թուարկւում են այդ «չար բադազաթները» (նորահնար պահանջմունք, հարկ), որոնց մեծ մասը տողերի վնասուած լինելու պատճառով չի հասկացւում:

Արձանագրութեան մէջ ընթերցւում են նաեւ այսպիսի տողեր. «Աստուած ող(որ)մի Թումին, որ գլուխն ԸՋ (°) կորեկ եթո(ղ), գխարնեց դրամն արար Բ. չայի»: Ապա յիշատակուած է մի այլ տանուտէր, որ «զմատղու վարձն եթող», երկրորդը՝ որ «զսուլն արար Գ. աւթմանի»: «Սուլ» նշանակում է ջրաղացի խողովակ, նաւ, ուստի կարելի է ենթադրել, որ այստեղ խօսքը ջրաղացներից գանձուող ինչ-որ տուրքի մասին է: Տանուտէրերից մէկ ուրիշը, ասուած է նոյն

[1] «Վիմական տարեգիր», էջ130 [Այս եւ մի քանի այլ հարկատեսակների հանգամանալի քննութիւնը տես Ս.Ա.Աւագեան, Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն, Երեւան, 1978, էջ 152-173]:

[2] «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», էջ 95

[3] ՄՄ ձեռ. N 4814, էջ 129ա

[4] ՄՄ ձեռ. N 9660, էջ 1բ

արձանագրութեան մէջ, «տուն մի մանած ու գուրպէ մի եթող», պէտք է ենթադրել, ուրեմն, որ իւրաքանչիւր գիւղական ընտանիք պարտաւոր է եղել որոշ քանակութեամբ մանած թել եւ գուլպա տալ տանուտէրին եւ այլն:

1596 թ. մի յիշատակարանից տեղեկանում ենք «ալրղան» կամ «ալեղան» կոչուող ինչ-որ տուրքի գոյութեան մասին: Յիշատակարանում ասուած է, որ Բասդ գիւղում «ամէն տուն չափ մի ցորեն կու տային ի յըռէսն ալեղան», բայց Կակոս անունով մէկը դառնալով ռես եւ «զմտաւ ածեալ զօր մահուն եւ զերկիւղն Աստուծոյ՝ վերուց զայն չար ղաբալն ի գեղջէն»[1]:

Գիւղական համայնքի ներքին կեանքին վերաբերող այս մանր տուրքերի մասին մեր գիտցածը շատ քիչ է: Առայժմ դժուար է ասել նոյնիսկ, թէ այդ բոլոր տուրքերը իւրացնում էին ռեսներն ու ձեռնաւորները:

Եւ միանգամայն հնարաւոր է ենթադրել, որ դրանց գոնէ մի մասը, այլեւայլ ճանապարհներով, դարձեալ մուտք էր գործում պետական պաշտօնեաների ու ֆեոդալ տէրերի գրպանները:

XIV-XV դդ. գիւղական համայնքի կազմակերպութեան ու պաշտօնէութեան, հողային ֆոնդի տնօրինման, դասային կառուցուածքի, արտադրական կենցաղի եւ յարակից հարցերի մասին մեզ մատչելի տուեալները, անշուշտ, հնարաւորութիւն չեն ընձեռում լուսաբանելու համայնքի բարդ կեանքի բոլոր կարեւոր կողմերը: Այնուամենայնիւ, ստացուած արդիւնքը, կարծում ենք, գոհացուցիչ է եւ յոյս է ներշնչում, որ աշխարհով մէկ ցրուած հայերէն ձեռագրերի մէջ առկայ բոլոր նիւթերի օգտագործմամբ հնարաւոր կլինի աւելի լրիւ ու ամբողջական պարզաբանել հայ գիւղացիութեան պատմութեան կարեւորագոյն հարցերից մէկը՝ միջնադարեան գիւղական համայնքի հարցը:

[1] Ն. Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի, հտ. առաջին, 1948, էջ 358-359

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ*

Արաբական դարաւոր ծանր ու մղձաւանջային տիրակալութեան դէմ հայ ժողովրդի մղած հերոսական մարտերի ու ապստամբութիւնների հետեւանքով, IX դ. երկրորդ կէսին Հայաստանի մեծ մասը թօթափեց օտար բռնապետական լուծը եւ վերանուաճեց իր անկախութիւնը. 886 իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին օծուեց հայոց թագաւոր:

Աշոտը եւ նրան յաջորդող Բագրատունի թագաւորները ձգտում էին իրենց իշխանութեան տակ միաւորել հայկական բոլոր հողերը ու ստեղծել միասնական եւ ուժեղ հայկական պետութիւն: Սակայն շուտով Պատմական Հայաստանի հողի վրայ ստեղծուեցին կիսանկախ մի քանի այլ մանր իշխանութիւններ՝ Վասպուրականի եւ Սիւնեաց, իսկ այնուհետեւ նաեւ Կարսի ու Ձորագետի թագաւորութիւնները:

Չնայած միջֆեոդալական բախումները եւ արաբական ամիրայութիւնների դէմ մղած մարտերը IX-X դդ. մերթ ընդ մերթ վրդովում էին խաղաղութիւնը, բայց, այնուամենայնիւ, հայ ժողովուրդը շուրջ մէկ հարիւրամեակ զերծ մնաց օտար նուաճողների հրոսակախմբերի արշաւանքներից: Հարիւրամեայ խաղաղութեան այդ ժամանակաշրջանում, արտադրողական ուժերի յետագայ զարգացման եւ երկրի տնտեսական կեանքի վերելքի հետեւանքով, ֆեոդալիզմը Հայաստանում թեւակոխեց իր զարգացման երկրորդ («զարգացած ֆեոդալիզմի») փուլը:

Սկզբնաղբիւրները հնարաւորութիւն են ընձեռում հետեւելու այդ շրջանին յատուկ տնտեսական ու սոցիալական կարգի մի շարք նոր երեւոյթների արմատաւորման կամ աննախընթաց խորացման փաստերին: Այսպէս, Հայաստանում ամէնուրեք սկսում են հանդէս գալ ու զարգանալ ֆեոդալական խոշոր տնտեսութիւններ. կալուածատէրերն ու վանքերը, ի հաշիւ գիւղական համայնքների հողաբաժինների, ընդարձակում են իրենց տնտեսութիւնները, կոռային աշխատանքի օգտագործումը այդ տնտեսութիւններում հասնում է աննախընթաց չափերի, շինականներին հողին ամրացնելու պրոցեսը լայն ծաւալ է ստանում: Կալուածատէրը կապւում է շուկայի հետ՝ վաճառքի հանելով գիւղատնտեսական մթերքները նորաստեղծ ու բազմամարդ քաղաքներում եւ այլն:

Քաղաքների հիմնադրման ու աճի տեմպերը Հայաստանում զարմանք են պատճառում ուսումնասիրողներին: Մի քանի տասնամեակների ընթացքում Հայաստանի տարբեր նահանգներում, յաճախ կողք կողքի, ծագում ու բարգաւաճում էին արհեստագործութեան ու առեւտրի նոր եւ նոր կենտրոններ: Դրանց առաջացմանն ու զարգացմանը մեծապէս նպաստում էին նաեւ տարանցիկ առեւտրի միջազգային նշանակութիւն ունեցող երկու այն բանուկ ուղեգծերը, որոնք, անցնելով Հայաստանի վրայով, կապում էին Արեւելքը Արեւմուտքի հետ:

Հայկական նորաստեղծ այդ քաղաքներում արհեստագործութիւնն ու առեւտուրը մեծ զարգացման են հասնում, դրամական մեծ գումարներ են կենտրոնանում առեւտրա-վաշխառուական շերտերի ձեռքին, կառուցւում են ճարտարապետական հոյակապ կոթողներ, ստեղծւում են քաղաքային մշակոյթ ու գրականութիւն:

* «Տեղեկագիր» (հասարակ. գիտութիւններ), 1958, N 3, էջ 29-50

Երկրի սոցիալ-տնտեսական ու մշակութային կեանքում առաջացած այս եւ յարակից ուշագրաւ երեւոյթները չէին կարող չգրաւել հայ ժողովրդի պատմութեան մասնագէտների սեւեռուն ուշադրութիւնը: Եւ իրօք, մի շարք անուանի հայագէտներ, զբաղուելով X-XIV դդ. պատմութեան, գրականութեան ու արուեստի հարցերով, մեր դարի 20-ական թթ. սկսած աշխատեցին պարզել նշուած երեւոյթների բովանդակութիւնը:

Կարծում ենք, որ մասամբ Պոկրովսկու «շկոլայի» ազդեցութեամբ պէտք է բացատրել այն հանգամանքը, որ X-XIV դդ. հայ ժողովրդի պատմութեան հարցերով զբաղուող մասնագէտների մի մասը՝ ճիշտ եզրակացութիւնների չյանգեց այդ ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը որոշելիս եւ մշակութային երեւոյթները գնահատելիս: Առաջիններից մէկը, որն անդրադարձաւ այդ հարցերին՝ նշանաւոր հայագէտ պրոֆ. Ն. Ադոնցն էր: «Քաղաքական հոսանքները հին Հայաստանում» խորագրով իր յօդուածում նա մէկէն հայտարարեց, որ երբ Բագրատունեաց Հայաստանում քայքայւում էր ֆեոդալական արտադրաձեւը եւ ձեւակերպւում բուրժուական իրաւակարգ. «Մինչ Անիում մարում էին ֆեոդալականութեան վերջին ճառագայթները,- եզրակացրեց նա,- Արեւմուտքը նոր էր ողջունում նրա արշալոյսը: Հասարակագիտական տեսակէտից Արեւելքին էր պատկանում առաջնութիւնը, եւ նա էր կարապետը նոր բուրժուական իրաւակարգի»[1]:

Ադոնցն իր այս յայտարարութիւնն արեց այնպիսի մի աշխատութեան մէջ, որն անմիջապէս չէր առնչւում Հայաստանի X-XIV դդ. պատմութեան, եւ, մանաւանդ, այդ շրջանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների հարցերին: Ուստի նրա յայտարարութիւնը լուրջ հետեւանք չունեցաւ: Այլ նշանակութիւն ունեցաւ հանգուցեալ ակադեմիկոս Յ. Մանանդեանի 1930 թ. հրատարակուած եւ 1954 թ. վերահրատարակուած "О торговле и городах Армении в связи с мировой торговлей..." *մեծարժէք մենագրութիւնը: Այստեղ, հեղինակը, ի մի բերելով IX-X դդ. Հայաստանում ստեղծուած քաղաքների միջազգային նշանակութիւնը բացայայտող փաստերը, յանգեց այն եզրակացութեան, որ «քննարկուող ժամանակաշրջանում տնտեսական կեանքը Հայաստանում վերակառուցւում էր նոր սկզբունքներով: Արհեստների ու առեւտրի զարգացումը, ազգային բուրժուազիայի[2] տեսակարար կշռի բարձրացումը, քաղաքային կենտրոնների ծաղկումն ու աճը նպաստում էին, անտարակոյս, տնտեսական ու սոցիալական նոր յարաբերութիւնների սաղմնաւորմանը եւ, հնարաւոր է, որ նոր այդ ուժերը ժամանակի ընթացքում առաջ կբերէին ֆեոդալական կարգի կործանում, եթէ միայն այդ զարգացումը չկանխուէր XI դ. կէսերի անցուդարձերով ու սելջուկների արշաւանքով»[3]:*

Նոյն այս միտքը, աւելի որոշակի արտայայտութիւններով, ակադ. Յ. Մանանդեանը կրկնեց 1940 թ. լոյս ընծայած «Հայաստանի քաղաքները X-XI դարերում» ուսումնասիրութեան մէջ, գրելով հետեւեալը. «Տնտեսական այն երեւոյթները, որ վերեւ մենք մատնանշեցինք... յատկանշական են ու բնորոշ քայքայուող ֆեոդալիզմի համար, որի սկիզբը կարելի է ըստ իս Հայաստանում ենթադրել հէնց այս (X-XI դդ. - Լ. Խ.) ժամանակաշրջանում: Եւ կամ

1 **Ն. Ադոնց,** Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948, էջ 48

2 Ուշագրաւ է, որ աշխատութեան երկրորդ հրատարակութեան մէջ ակադ. Յ. Մանանդեանը փոխել է «ազգային բուրժուազիայի» ("национальной буржуазии") արտայայտութիւնը՝ «առեւտրա-վաշխառուական տարրի» ("торгово-ростовщический элемент") արտայայտութեամբ:

3 **Я. А. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1930, с. 149 (первое издание), с. 212 (второе издание)

«Մեր վերոյիշեալ փաստական դիտողութիւններից... կարելի է ըստ իս հետեւցնել, որ աւանների, քաղաքների, արդիւնագործութեան եւ դրամական ու ապրանքային տնտեսութեան բուռն ու արագ աճմամբ Հայաստանում եւս ֆեոդալիզմը սկսել էր քայքայուել, եւ որ հասարակական կեանքն այնտեղ եւս կարող էր վերակառուցուել առաջադէմ նոր հիմքերի վրայ, ինչպէս այդ հինգ դար յետոյ տեղի ունեցաւ Արեւմտեան Եւրոպայում»[1]:

Այսպիսով, իր աշխատութիւններից մէկում IX-X, իսկ միւսում՝ X-XI դդ. ակադ. Յ. Մանանդեանը համարեց այն ժամանակաշրջանը, երբ Հայաստանում քայքայւում էին ֆեոդալական արտադրական յարաբերութիւնները եւ սաղմնաւորւում, Արեւմտեան Եւրոպայից հինգ դար առաջ, բուրժուական յարաբերութիւններ:

Մեզ հետաքրքրող հարցերին թեթեւակիօրէն անդրադարձել է նաեւ ակադ. Ն. Մառը Անիի պեղումների արդիւնքների մասին գրած իր յօդուածներում եւ նրանց ամփոփումը հանդիսացող «Անի» մեծարժէք աշխատութեան մէջ (տպ. 1934 թ.): Տարբերուելով նախորդ հեղինակներից, որոնք ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիստական յարաբերութիւնների սաղմնաւորման մասին խօսում էին նկատի ունենալով միայն սելջուկեան արշաւանքներին նախորդող ժամանակաշրջանը՝ ակադ. Ն. Մառը իրաւամբ կարծում էր, որ այդ արշաւանքները չկանխեցին երկար ժամանակով արտադրողական ուժերի զարգացումը Հայաստանում. քաղաքների ծաղման ու ընդարձակման, արհեստագործութեան եւ առեւտրի զարգացման տեսակէտից Հայաստանի տնտեսութեան համար աւելի մեծ նշանակութիւն ունեցան յաջորդ՝ XII-XIII դդ.՝

Խօսելով Անիի նշանաւոր մեծատուն Տիգրան Հոնենցի մասին, նրան համարելով «իր էպոխայի համար տիպական կապիտալիստ», նշելով այն փաստը, որ Տիգրանը «զբաղւում էր փոխատուական գործարքներով գրաւի դիմաց, եւ նրա մօտ գրաւի տակ էին գտնւում բազմաթիւ հողեր եւ կալուածքներ»՝ Ն. Մառը ի վերջոյ եզրակացրեց, որ «այս բոլորը ստիպում է յանգել այն մտքին, որ Անին հէնց այն հնոցն էր, որի մէջ հայկական ֆեոդալիզմը վերափոխուեց... հայկական բուրժուական աշխարհի[2]:

Յաջորդ հեղինակը, որը շատ աւելի հանգամանօրէն անդրադարձաւ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հասարակական ու սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների հարցերին, հիմնաւորելու համար «հայկական վերածնութեան» իր տեսութիւնը՝ ականաւոր գիտնական Մ. Աբեղեանն էր: Իր «Վերածնութիւնը հայոց հին գրականութեան մէջ» յօդուածում (տպ. 1943 թ.) եւ մանաւորապէս «Հայոց հին գրականութեան պատմութեան» երկրորդ գրքի առաջին գլխում (տպ. 1946 թ.) Մ. Աբեղեանը այսպէս է բնորոշում Հայաստանի տնտեսական զարգացման աստիճանը X-XI դդ. «Երկարատեւ խաղաղ շինարարութեան դարաշրջանում... արագ բարձրանում է ժողովրդական տնտեսութիւնը, երկրի բնակչութիւնն աճում է, շինւում են բազմաթիւ գիւղեր, քաղաքագիւղեր ու գիւղաքաղաքներ, որոնք հետզհետէ դառնում են աւելի ու աւելի մարդաշատ», առաջանում են խոշոր քաղաքներ: «... Ոչ միայն Անիի, այլեւ Կարսի, Արծնի եւ ուրիշ քաղաքների վրայով էին անցնում տարանցիկ առեւտրական մեծ ճանապարհի ճիւղերը. ուստի եւ նրանք եւս դարձել են վաճառաշահ կենտրոններ եւ ներքին, եւ արտաքին առեւտրի, եւ ապրանքների փոխանակութեան համար: ...Բնականաբար առաջ էր գալիս դրամական տնտեսութիւնը. դրամը մի նոր աստուած էր դարձել, մարդիկ ամէն տեսակ

1 Յ. Մանանդեան, Հայաստանի քաղաքները Ժ-ԺԱ դդ., Երեւան, 1940, էջ 46-47
2 Н. Я. Марр, Ани, 1934, с. 35

շահի առեւից չէին ընկնում... X դարից արդէն նիւթական կարողութիւնը՝ ոսկին, երկրի հարստութիւնները, կալուածքներ եւ ուրիշ անշարժ կայքեր, կենտրոնանում էին առանձին վաճառական անհատների ձեռքին. առաջ էին գալիս կապիտալիստներ, որոնք կազմում էին մի նոր դասակարգ»:

«Այսպիսով, ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի՝ ազնուականութեան եւ եկեղեցականութեան կողքին տնտեսապէս, ապա եւ մտաւորապէս բարձրանում եւ դիրք էր ձեռք բերում նոր դասակարգը՝ հարուստ քաղաքացիութիւնը, որ նոյնիսկ մրցում էր ֆեոդալների հետ» եւ այլն[1].

Մ. Աբեղեանի տեսակէտը «հայկական վերածնութեան» եւ նրա սոցիալ-տնտեսական նախադրեալների մասին ձգողական մեծ ուժ ունէր եւ կարճ ժամանակում լայն տարածում գտաւ: Մասնակի լրացումներով կամ, աւելի յաճախ, առանց որեւէ վերապահման՝ այդ տեսակէտն ընդունուեց հայ միջնադարեան մշակոյթի պատմութեան այլեւայլ բնագաւառներն ուսումնասիրող մի շարք մասնագէտների կողմից, այն տեղ գտաւ նոյնիսկ միջնակարգ դպրոցների համար կազմուած գրականութեան պատմութեան դասագրքում[2]:

Ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիստական յարաբերութիւնների սաղմերի առաջացման մասին, ինչպէս տեսանք հայագէտների մտքերի ու տեսակէտների հակիրճ շարադրանքից, յայտարարութիւններ շատ են եղել, սակայն նրանցից եւ ոչ մէկը չի փորձել յատուկ ուսումնասիրութեամբ անդրադառնալ այդ հարցերին սկզբնաղբիւրների ընձեռած տուեալների ըստ կարելւոյն ամբողջական եւ անկողմնակալ օգտագործումով: Այդ աշխատանքը մասամբ կատարել է ականաւոր հայագէտ Աշ. Յովհաննիսեանը, «Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» մեծարժէք աշխատութեան առաջին հատորում, (Երեւան, 1957) Այստեղ, այլեւայլ առիթներով անդրադառնալով Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների հարցերին, նա իր խօսքն է ասել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի մասին, բնորոշելով այն որպէս զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջան: Յատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում աշխատութեան այն դրուագները, որոնք նուիրուած են X-XVI դդ. գրեթէ բոլոր նշանաւոր քաղաքական ու մշակութային գործիչների գաղափարական դիմապատկերմանը: Առանց բանավէճի մտնելու «հայկական վերածնութեան» ջատագովների հետ, Աշ. Յովհաննիսեանը, փաստական ուշագրաւ նիւթերի օգտագործումով եւ կուռ տրամա-

1 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք երկրորդ, Երեւան, 1946, էջ 4-6
2 «Հայկական վերածնութեան» այս տեսութիւնն ընկալողներից իրենց ջանասիրութեամբ աչքի են ընկնում յատկապէս Վ. Չալոյեանը: Տե՛ս նրա "Роль восточных народов в истории развития философской мысли", "Основные вехи, развития философской мысли в Армении (V-XVIII вв.)", «Հայկական վերածնութեան մասին» («Տեղեկագիր», 1955, N 12, էջ 85-114) եւ այդ յօդուածները, եւ Մ. Մկրեանը, տե՛ս նրա «Գրիգոր Նարեկացի» (Երեւան, 1955) ուսումնասիրութիւնը եւ «Հայ գրականութեան պատմութեան» երեք հրատարակութեամբ (1949, 1951 եւ 1954) լոյս տեսած դասագրքի առաջին հատորի համար գրած գլուխները:

Սովետական պատմագրութիւնը, բնականաբար, լռելեայն չէր կարող անցնել Հայաստանի, ինչպէս նաեւ մեր հարեւան Վրաստանի մի խումբ գիտնականների կողմից առաջ քաշուող «Արեւելեան (կամ հայկական) վերածնութեան» նոր ու հետաքրքրական պրոբլեմի կողքով: Եւ «Սովետական մեծ հանրագիտարանի» երկրորդ հրատարակութեան խմբագրութիւնը անհրաժեշտ գտաւ «Վերածնութիւն» ("Возрождение") բառի տակ անդրադառնալ այդ խնդրին, նշելով, որ այն «առայժմ բաւարար չափով չի լուսաբանուած: Ամէն դէպքում նրա դրական լուծման համար անհրաժեշտ է հաստատել ոչ միայն կուլտուրայի ծաղկման, անտիկ կուլտուրայի նկատմամբ հետաքրքրութեան առաջացման փաստը եւ այլն, այլ, ամենից առաջ, *այդ շրջանում արեւելեան երկրներում կապիտալիզմի սաղմնաւորման յատկանիշների առկայութեան փաստը*»: Տե՛ս «Большая Советская энциклопедия», второе издание, т. 8, ц. 534 (ընդգծումը մերն է-Լ.Խ.)

բանութեամբ բացայայտել է նրանց տեսակէտների վարկածային լինելը: Կարեւոր ու գնահատելի աշխատանք է կատարել նաեւ Բ. Առաքելեանը «Հայաստանի քաղաքները X-XIII դդ.» տպագրութեան յանձնուած մենագրութեան մէջ:

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը յիշեալ դարերում գիտականօրէն որոշելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է ձեռագիր ու տպագիր աղբիւրների մանրակրկիտ հետախուզութեամբ երեւան բերել ու արժէքաւորել բոլոր այն նիւթերը, որոնք այս կամ այն չափով կարող են նպաստել մեր պատմագրութեան մէջ իրենց լուծումը չստացած մի շարք խիստ կարեւոր հարցերի պարզաբանման գործին:

Սոյն յօդուածով ի մի ենք բերում X-XIV դդ. արհեստագործութեան վիճակի ու զարգացման աստիճանի մասին մեր ձեռքի տակ եղած նիւթերը, ծրագրելով առաջիկայում յօդուածներ գրել նաեւ հետեւեալ հարցերի մասին.

1) Հայ մեծատունները եւ նրանց գործունէութեան բնագաւառները

2) Վարձկաններն ու ծառաները հայկական քաղաքներում ու գիւղերում,

3) Գիւղական համայնքը X-XIV դդ. եւ այլն:

* * *

Կ. Մարքսը «Կապիտալի» առաջին հատորում գրում է. «Թէեւ կապիտալիստական արտադրութեան առաջին սաղմերը սպորադիկ կերպով հանդիպում են արդէն XIV ու XV դդ. Միջերկրական ծովի առանձին քաղաքներում, բայց եւ այնպէս կապիտալիստական դարագլուխն սկսւում է միայն XVI դ.: Այնտեղ, որտեղ սկսւում է նա, վաղուց արդէն ոչնչացել է ճորտատիրութիւնը, եւ արդէն զգալիօրէն թօշնել է միջնադարի ամենափառ ծաղիկը՝ ազատ քաղաքները»[1]:

Արդ. որոնք էին արտադրական այն յարաբերութիւնները, որոնց հիման վրայ Մարքսը գտնում էր, որ XIV-XV դդ. հէնց Իտալիայում էր «կապիտալիստական արտադրութիւնն ամենից վաղ զարգացել»[2]:

Ռուսական պատմագրութիւնը զգալի նուաճումներ ունի միջնադարեան Եւրոպայի քաղաքների արտադրական կեանքի ու սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների ուսումնասիրման բնագաւառում: Մասնաւորապէս կարեւոր են Վ. Ռուտենբուրգի աշխատութիւնները, նուիրուած իտալական քաղաքներում կապիտալիստական արտադրական յարաբերութիւնների սաղմնաւորման հարցերին[3]: Փաստական հարուստ նիւթերի հիման վրայ Վ. Ռուտենբուրգը վերականգնել է իտալական ամենախոշոր քաղաքներից մէկի՝ Ֆլորենցիայի արդիւնաբերական ու առեւտրական պատկերը, ցոյց տալով, որ XIV դ. քաղաքի տնտեսական կեանքում առաջնակարգ դեր էին կատարում արդիւնաբերական ընկերութիւնները. իրենց կապիտալները զգալի չափով մահուդագործական ձեռնարկութիւնների մէջ էին ներդրել նաեւ առեւտրական ու բանկային ընկերութիւնները:

«Բրդի մշակման մասին տրակտատը» (XIV դ.) եւ այլ նիւթեր հնարաւորութիւն են տուել

1 Կ. Մարքս, Կապիտալ. Ա հտ., Երեւան, 1954, էջ 748

2 Նոյն տեղում, էջ 749, ծնթ. 189

3 Տե՛ս **В. И. Рутенбург,** Очерк из истории раннего капитализма в Италии, М.-Л., 1951; Налогообложение и общественный кредит Флоренции XII-XV вв., Л., 1941, աշխատութիւնները:

հեղինակին ուշադրաւ մանրամասնութիւններով պատկերելու մանուֆակտուրային տիպի կապիտալիստական ձեռնարկութեան կառուցուածքն ու բնոյթը: Ըստ այդմ բրդի հումքը Ֆլորենցիա էր ներմուծւում Անգլիայից, Ֆրանսիայից, Թունիսից, Իսպանիայից, Հայաստանից եւ Լեւանտեան երկրներից, իսկ պատրաստի արտադրանքը արտահանւում նոյն եւ մի շարք այլ երկրներ: Ներմուծուող հումքը տեղ հասնելով ստուգւում ու գնահատւում էր յատուկ մասնագէտների՝ գնահատու հսկիչների կողմից. այլ մասնագէտներ տեսակաւորում էին հումքը ըստ որակի, ապա ուղարկւում նախնական մշակման՝ ճարպից, քրտինքից եւ կեղտից մաքրելու համար: Կաթսաներում եռացնելուց, Առնօ գետում լուանալուց եւ արեւի տակ չորացնելուց յետոյ՝ բուրդն ուղարկւում էր կենտրոնական արհեստանոց, որտեղ աշխատում էին բացառապէս վարձու բանուորներ (XIV դ. Ֆլորենցիայում կար 30000 վարձու բանուոր): «Այստեղ արդէն,- գրում է Վ. Ռուտենբուրգը,- չկան տուեալ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ բոլոր գործողութիւնները կատարող վարպետներ, ենթավարպետներ կամ աշակերտներ: Արտադրութեան բարդ ու լայնօրէն դիֆերենցուած պրոցեսը յանգեցնում է ընկերութեան կենտրոնական արհեստանոցի ներսում աշխատանքի նոյնպիսի լայն բաժանման, ստեղծում է բանուորների մի ամբողջ բանակ, որոնցից իւրաքանչիւրը ձեռք է բերում շատ նեղ բնագաւառի, յաճախ ամբողջ պրոցեսի միայն մէկ առանձին գործողութեան փորձ: Այդ բանուորը դադարում է ունիւերսալ լինելուց. նա արագօրէն ու հմուտ կերպով կատարում է տարէցտարի կրկնուող մէկ գործողութիւն: Չհաշուած ներկելու պրոցեսը, բուրդը, ինչպէս եւ մահուդի տարբեր կիսաֆաբրիկատները ընկերութեան արհեստանոցում անցնում են աւելի քան 20-25 առանձին գործողութիւններով»[1]:

Եւ այսպէս, մշակուող բուրդը մի քանի անգամ դուրս էր գալիս կենտրոնական արհեստանոցից, տարւում Ֆլորենցիայում եւ շրջակայ գիւղերում բնակուող չքաւոր կանանց մօտ մանելու, ապա ներկելու համար: Այնուհետեւ կրկին բերւում էր կենտրոնական արհեստանոց եւ, ի վերջոյ պատրաստի արտադրանքը մեծ հակերով արտահանւում էր հեռաւոր երկրներ:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ արդիւնաբերական ընկերութիւնները իրենց չէին ենթարկել Ֆլորենցիայի բոլոր տնայնագործներին: Թոյլ ու աղքատ համքարութիւններից շատերը հազիւ քարշ էին տալիս իրենց գոյութիւնը արդիւնաբերողներին սպասարկելով եւ նրանց կողմից վարձուելով: Այդ համքարութիւններում ընդգրկուած արհեստաւորների վիճակը քիչ բանով էր տարբերւում կենտրոնական արհեստանոցներում աշխատող բանուորների վիճակից: Այսպիսով, համաշխարհային շուկաներում հռչակուած ֆլորենտեան մահուդը XIV-XV դդ. մեծ չափով արտադրւում էր կապիտալիստական տիպի արդիւնաբերական ձեռնարկութիւններում: Արտադրական այսպիսի յարաբերութիւններ, այս կամ այն չափով, գոյութիւն ունէին նաեւ իտալական մի շարք այլ քաղաքներում եւ, անտարակոյս, «կապիտալիստական արտադրութեան առաջին սաղմեր» ասելով Մարքսն ի նկատի ունէր հէնց այս կարգի յարաբերութիւնները:

Արդ, եղե՞լ են արդեօք այդպիսի յարաբերութիւններ Հայաստանում X-XIV դդ.:

Աշխատենք պատասխանել այս հարցին մատենագրական, մեծ մասամբ ձեռագիր ու անտիպ, փաստերի օգնութեամբ:

1 **В. И. Рутенбург**, Очерк из истории раннего капитализма в Италии, с.134-135

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, յատկապէս XII-XIII դդ., Հայաստանում արհեստագործութեան մի շարք ճիւղեր, որոնց արտադրանքը հանւում էր երկրից դուրս՝ աննախընթաց զարգացում էին ապրել: Արտահանուող ապրանքների մէջ զգալի տեղ էին բռնում զանազան թանկարժէք գործուածքները, գորգերը, մետաղեայ իրերը, ներկերը եւ այլն: Յայտնի է, օրինակ, որ Երզնկայի ճարտար մանագործները XIII-XIV դդ. հիւսում էին «աշխարհի լաւագոյն բեհեզները» (Մարկո-Պոլո)[1] եւ «իր անունով կոչուող գեղեցիկ կերպասները» (Եակուտ[2] եւ Իբն-ի Բատուտա)[3]: Ժամանակակիցների վկայութեամբ Երզնկայում արտադրուած պղնձէ ամանները, եւ, մանաւանդ, զարդարուն աշտանակները մեծ հռչակ էին վայելում (Իբն-ի Բատուտա)[4]: Երզնկան Հայաստանի մի շարք այլ քաղաքների հետ միասին, յայտնի էր նաեւ բարձրարուեստ իր ոսկերիչներով ու արծաթագործներով:

Արհեստագործութեան զարգացումը հիմնականում ընթանում էր ոչ թէ գործիքների կատարելագործման ուղիով, այլ առաջին հերթին, աշխատանքի բաժանման յետագայ խորացմամբ: Արհեստի որոշ բնագաւառներ կատարելագործուելով բաժանւում էին ենթաճիւղերի, առաջ էին գալիս արհեստագործական նոր մասնագիտութիւններ: Գրիգոր Մագիստրոսը «Առ տէր Պետրոս» գրած Բ թղթում, իրեն յատուկ դիպուկ արտայայտութիւններով, խօսում է հիւսնութեան, ոսկեգործութեան, երկաթագործութեան եւ պղնձագործութեան մայր արհեստների՝ մի շարք ենթաճիւղերի բաժանուած լինելու մասին: Նա գրում է. «...Ըստ օրէն հիւսանց, որք արհեստին են մակացուք, ոչ նախուստ յանտառս կամ ի մայրս ճեպին հատանել փայտս, քանզի այլ ոք են պարապեալ այնոցիկ, եւ այլ, որք հարթեն եւ սղոցեն, եւ ապա ծայրագոյնքն՝ ճախարակօք եւ այլովք գործարանօք գեղապանծ գնոսա յարդարեն գահաւորակս եւ աթոռս եւ այլ ինչ գործարանս: Այսպէս եւ որք ոսկւոյն են պարապեալք եւ երկաթոյ եւ պղնձոյ»[5]:

Նմանօրինակ տուեալ ունենք նաեւ թանկարժէք գործուածքների արտադրութեան մասին. ոսկեհուռ ասեղնագործ կերպասէ կտորները արտադրւում էին արդէն տարբեր մասնագէտների միահամուռ ջանքերով: XIV դ. վերջերին եւ XV դ. սկզբներին ապրած մատենագիր Մատթէոս Ջուղայեցին մի առիթով գրել է այսպիսի տողեր. « Զոր օրինակ գործէ ոք կերպաս ի յապրշմէ, եւ ապա յետոյ զարդարեն զնա ոսկի թելով»[6]:

Ուշագրաւ է նաեւ նոյն հեղինակի հաղորդած տուեալը **քեմխա եւ նաշիճ** *թանկարժէք գործուածքների արտադրման բարդ պրոցեսի մասին, որի հետ նոյնպէս արժէ ծանօթանալ. «Զոր օրինակ,- գրում է Մ. Ջուղայեցին,- թէ ոք քեմխայ կամ նաշիճ գործել ուսանի. եւ յայնմանէ զկտաւն եւ զբուրթն հնարեն գործել, որք են այլ մանրուամունք: Եւ թէ է՞ր է դժուար, ասիցէ ոք նախն եւ նաշիճն: Զի զվարազ ոսկին ի վերայ մորթոյ կացնեն եւ մանր թել կտրեն եւ այնպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երեսն ի վեր լինի. եւ վասն այսո-*

1 Յ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, I, 1932, էջ 48

2 Եակուտի աշխարհագրութեան հետ ծանօթացել ենք հանգուցեալ արաբագէտ Հ. Նալբանդեանի կատարած թարգմանութեամբ, որի տպագրութիւնը, չգիտես ինչու, շարունակ ձգձգւում է:

3 Իբն-ի Բատուտա (1301-1378), Օտար աղբիւրները հայերի մասին (քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան, Երեւան, 1940, էջ 31)

4 Նոյն տեղում

5 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 9

6 «Քննութիւն Գործոց առաքելոց», ՄՄ ձեռ. N 1402, էջ 187ա

րիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ»[1]:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, անտարակոյս, եղել է արհեստագործական որոշ գործիքների կատարելագործում, ինչպէս նաեւ տեխնիկական նորարարութիւններ:

Պրոֆ. Բ. Առաքելեանը, օրինակ, ուշադրութիւն է դարձրել Վարդան Անեցու (X դ.) «Վասն կառացն Աստուածութեան» չափածոյ բարձրարուեստ գրուածքի մի հատուածի վրայ, որի մէջ ակնարկ կայ ինչ-որ լարով աշխատող բրուտագործական ճախարակի մասին («զհամատարած լարն վիճակի, որով շարժէ զճախարակ բրուտ»)[2]: Ճիշտ է, բանաստեղծական այս արտայայտութեան հիման վրայ դժուար է պատկերացնել ճախարակի կառուցուածքը, սակայն կարելի է չկասկածել, որ այն աւելի կատարելագործուած դազգահ է եղել, քան ոտքերի օգնութեամբ դարձող դուրգը:

Ուշագրաւ ձեռագրական վկայութիւն ունենք այն մասին, որ կատարելագործուել է նաեւ ոստայնանկի դազգահը: Գետնագործ կամ տափնիգործ կոչուող դազգահի կողքին, որի վրայ ոստայնանկը գործում էր միայն ձեռքերի օգնութեամբ, գործածութեան մէջ է մտնում ու լայն տարածում գտնում արդէն հօրագործ կոչուող դազգահը, որի վրայ աշխատում էին ե՛ւ ձեռքերով, ե՛ւ ոտքերով: Մեզ արդէն ծանօթ Մատթէոս Ջուղայեցին, նկարագրելով ոստայնանկի աշխատանքը, գրում է. «Յորժամ ոստան հենէ, նախ չափէ զմի թելն եւ ապա հենէ. եւ ի գործելն՝ ոտիւքն եւ ի ձեռօքն վճարէ, եւ զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սայմնին»[3]:

Տեխնիկական որոշ առաջադիմութիւն, ըստ երեւոյթին, եղել է նաեւ մետաղամշակութեան մէջ: Հայ արհեստաւորները կարողացել են ստեղծել ձուլածոյ բարդ, տարբեր մասերից կազմուած, արձանիկներ: Ալքիմիական մի ձեռագրում կարդում ենք այսպիսի տողեր. «Առ կարմիր պղինձ, հալէ զինքն եւ լից մարդոյ պատկեր, որ առիւծ է հեծէր. վերայ գլխուն՝ թագ, եւ ունի Գ. եղջիւր, եւ իւր ձախ ձեռն խօսող, եւ հալաւն ամէն՝ երկաթի»: Արձանագործական այս բարդ կոմպլեքսը մի կաղապարով շատ դժուար կլինէր ձուլել: Այդ է նկատի ունեցել հեղինակը, խրատի շարունակութեան մէջ գրելով. «Թէ ամէնս մէկ տեղ չէ կարէս հանել, դու հան զառիւծն, զմարդն եւ զխօսողն... խառնէ, որ աղէկ պատկեր ելանէ, եւ ծածկէ զմարդն յերկու անդամն, որ մտանէ առիւծին փորն, եւ զամ զարկ յինքն երկաթի կամ պղնձի»[4]:

Ալքիմիական մի այլ ձեռագրում, որն ընդօրինակուած է XVII դ., բայց գրուած պէտք է լինի դարեր առաջ, գտնում ենք պղնձի օքսիդ (ժանգառ) ստանալու մի խրատ, որի մէջ, ի միջի այլոց, ասուած է. «Առ պղնձի քերուքն, զայն որ չարխէն վաթի» եւ այլն[5]:

Սրանից կարելի է թերեւս եզրակացնել, որ գոյութիւն է ունեցել անուաւոր յատուկ յարմարանք, մետաղներ, տուեալ դէպքում պղինձ մշակելու համար: Մետաղամշակման պատմութեան մասնագէտ չլինելով՝ դժուարանում ենք ասել, թէ այդպիսի յարմարանք առաջին անգամ երբ եւ որտեղ է ստեղծուել: Այնուամենայնիւ, նրա առկայութիւնը Հայաստանում ինքնին վկայում է մետաղամշակման բնագաւառում եւս համեմատաբար աւելի կատարելագործութեան հասած գործիքների կիրառման մասին: Անհրաժեշտ է կրկնել, սակայն, որ նոր մասնա-

1 Նոյն տեղում, էջ 19ա

2 «Բազմավէպ», 1919, էջ 164-169

3 «Քննութիւն Գործոց առաքելոց», ՄՄ ձեռ. N 1402, էջ 64ա

4 ՄՄ ձեռ. N 2954, 178ա

5 ՄՄ ձեռ. N 7322, էջ 37ա

ճիւղերի էին բաժանւում եւ տեխնիկապէս այս կամ այն չափով առաջադիմում միայն այն արհեստները, որոնց արտադրանքի զգալի մասն արտահանւում էր երկրից դուրս: Եւ ընդհակառակը, արհեստագործութեան ամենամասսայական բնագաւառները, որոնց արտադրանքը տեղական շուկայից դուրս չէր գալիս, շարունակում էին իրենց գոյութիւնը պապենական հնամենի ձեւերով ու տեխնիկական միջոցներով:

Բերենք մի բնորոշ օրինակ. մորթիներից վերարկու եւ գլխարկ պատրաստող արհեստաւորը՝ ճոնը, կենդանուն մորթազերծ անելուց սկսած մինչեւ հանդերձ կարելը՝ կատարում էր ինքը միայնակ: Այս մասին եւս պերճախօս տուեալ է հաղորդում բանիմաց Մատթէոս Ջուղայեցին. «Ճոնն հանէ զայլ կենդանեաց մորթ, եւ աղէ եւ չորացուցանէ, եւ դարձեալ լուանայ, եւ հանէ զմիսն, եւ դնէ յաղոց՝ զարէ ալերբ, եւ խմորով, եւ հանեալ՝ դարձեալ չորացուցանէ, եւ ապա գործէ եւ կակղէ, եւ յետոյ ներկէ, եւ ի բազում մորթոյ մի հանդերձ կարէ»[1]:

Այսպիսով, բերուած փաստերը հնարաւորութիւն են տալիս եզրակացնելու, որ X-XIV դդ. Հայաստանում արհեստագործութիւնը՝ ընդհանուր առմամբ եւ, յատկապէս իրենց արտադրանքով արտաքին շուկայի հետ կապուած արհեստի ճիւղերը՝ զարգացում էին ապրում: Մայր արհեստի մասնատումով ստեղծւում էին արհեստագործական նոր մասնաճիւղեր, ուստի եւ նոր մասնագիտութիւններ: Ներքին շուկայի սահմանափակ պահանջները բաւարարող արհեստները բանում էին հնաւանդ ու պարզունակ տեխնիկական միջոցներով, այն դէպքում, երբ արհեստագործական միւս ճիւղերում նկատւում են տեխնիկական որոշ նորարարութիւնների ու գործիքների կատարելագործման երեւոյթներ:

Այժմ աշխատենք սկզբնաղբիւրների ընձեռած սուղ ու պատահական ակնարկների ի մի բերումով հնարաւորին չափ պարզաբանել, թէ ի՞նչ սկզբունքներով էր կազմակերպուած արհեստագործութիւնը Հայաստանում X-XIV դդ., որքանո՞վ էր խորացել արհեստի բաժանումը գիւղատնտեսութիւնից, կա՞յին արդեօք Հայաստանի քաղաքներում արհեստագործական համքարութիւններ եւ այլն:

Անիի ու Դուինի պեղումների ընթացքում յայտնաբերուած երկրագործական գործիքները (արօրներ, խոփեր, գերանդիներ, կալսելու կամներ, բահեր եւ այլն) վկայում են այն մասին, որ հայկական միջնադարեան քաղաքների բնակչութեան համար երկրագործութիւնը, որպէս օժանդակ զբաղմունք, որոշակի դեր է կատարել[2]: Եւ ընդհակառակը, գիւղերում ու աւաններում գիւղատնտեսութիւնից զատ զբաղուել են նաեւ արհեստագործութեամբ, եղել են դարբիններ, հիւսներ, դերձակներ եւ այլ արհեստի տէր մարդիկ, որոնք բաւարարել են իրենց համագիւղացիների ոչ բարդ, ամէնօրեայ պահանջները[3]: Աւելին՝ տուեալներ ունենք այն մասին, որ գիւղական տնտեսութիւնները գերազանցապէս փակ նատուրալ բնոյթ կրելով, աննշան չափերով էին կապուած շուկայի հետ եւ բաւարարում էին իրենց սուղ պահանջները՝ ինքնովին:

Այս մասին ուշագրաւ տեղեկութիւն ենք գտնում Գրիգոր Տաթեւացու «Համառօտ հաւաքումն առակաց գրոցն Սողոմոնի» ձեռագիր աշխատութեան մի հատուածում, որը կրում է «Վասն գովութեան մրազլուխ կնոջ» խորագիրը: Աւելորդաբանութիւններով լի այդ հատուածից քաղուածաբար մէջբերենք որոշակի հետաքրքրութիւն ներկայացնող մի-երկու տող. «Այլ

1 «Քննութիւն Գործոց առաքելոց», ՄՄ ձեռ. N 1402, 189բ-190ա

2 Տե՛ս Յ. Օրբելի, Անւոյ աւերակները, Վաղարշապատ, 1919, էջ 51. Կ. Ղաֆադարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, Երեւան, 1952, էջ 156:

3 Այս մասին ուշագրաւ նիւթեր կան ճաշերէն ձեռագրերի յիշատակարաններում:

եւ ինքն (մրազլուխ կինն) աշխատի եւ գործէ ձեռաւքն՝ մանէ կամ ոստայնէ... Ոչ միայն ի ցերեկի գործէ, այլ եւ ի գիշերի... զտեալ ասր եւ կտաւ՝ արար հանդերձս պիտանիս եւ վաճառեաց... Զի եւ պատրաստէ հանդերձս իւր եւ առն իւրում եւ ամենայն ընտանեաց, եւ ոչ կարօտին յարտաքուստ գնելոյ»:

Շարունակութեան մէջ Տաթեւացին յայտնում է նաեւ, որ «սեպհական գործ կնոջ մանելն է եւ ներկելն»[1]:

Այսպիսով, պարզ է դառնում, որ սովորական ու պարզ գիւղական հագուստ ձեռք բերելու համար «մրազլուխ» կին ունեցող գիւղացին հարկ չունէր դիմելու ջուլհակի կամ ոստայնանկի:

Անտարակոյս, ապահով եւ ունեւոր գիւղական տանուտէրը, չբաւարարուելով տանը պատրաստուած կոպիտ հագուստ-կապուստով, անձամբ կամ միջնորդ առեւտրականի միջոցով կապւում էր քաղաքային շուկաների հետ, ձեռք բերելով թանկարժէք կտորներ ու զարդաւածքներ: Այդպիսիներից էր անշուշտ միջնադարեան ժողովրդական առակներից մէկի հերոսը, որը նոյնիսկ պատարագի ժամանակ՝ մտքով գեղերում ու առեւտուր էր անում խոշոր քաղաքների ճոխ շուկաներում. «Միտքս ի Թաւրէժ էր եւ քո մաւրն գլխադիր եւ կաւշիկ կուգնէի»,- ասում է նա իր երկիւղած որդուն, որը պատարագի ժամանակ, իբր, տեսնում էր հրեշտակներ[2]:

Պէտք է ենթադրել, որ ֆեոդալական ու վանական խոշոր տնտեսութիւնները եւս իրենց անհրաժեշտ արհեստագործական արտադրանքի մի մասը ձեռք էին բերում ոչ թէ քաղաքային շուկաներից, այլ պատրաստում դղեակներին ու վանքերին կից գոյութիւն ունեցող արհեստանոցներում:

Խոշոր վանքերի արհեստանոցների մասին կարեւոր են Ստ. Օրբելեանի հաղորդած տուեալները: Խօսելով Տաթեւի վանքի շինութեան առանձին էտապների մասին՝ պատմիչը գրում է, որ այնտեղ կառուցուել են «գաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն՝ ծածուկ երկրաւ, բազում տունս եւ դարանս ի պէտս եկեղեցւոյն... եւ սրբաշէն տրապէզս եւ գործատունս, համբարանոցս եւ սրբարանս եւ գրատունս», կամ «շինէ (թագուհին Սիւնեաց Շահանդուխտ) եւ... զհամբարանոցս եւ գործատունս եւ շուրջ պարսպէ զվանքն»[3]:

Այս վկայութիւններում խօսք չկայ այն մասին, թէ վանական գործատներում ովքեր էին աշխատում, սակայն մեծ հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ այդ արհեստաւորների գէթ մի մասը հոգեւորական է եղել: Այդպէս էր, օրինակ, հարեւան Վրաստանում[4] եւ, ինչպէս կարելի է եզրակացնել Յակոբ Կլայեցի կաթողիկոսի (1268-1286) «Մեկնութիւն նուրբ գրեանց» անտիպ աշխատութեան տուեալների հիման վրայ, նաեւ Հայաստանում: Կլայեցին իր աշխատութեան էջերից մէկում գրում է. «յատուկ ամենայն վանաց ամենայն եղբարց արուեստ որոշել չէ պարտ: Վասն զի ոմն վանուց այս ինչ պիտոյ է եւ ոմն՝ այս ինչ. եւ է

1 ՄՄ ձեռ. N 1264, էջ 367ա

2 ՄՄ ձեռ. N 3179, էջ 127ա

3 Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 225

4 Տե՛ս Շոթա Մեսխիայի «X-XII դդ. վրացական վանքերում արհեստագործութեան եւ աշխատանքի կազմակերպման հարցի շուրջը» յօդուածը (վրացերէն)՝ տպագրուած Վրացական ՍՍՌ ԳԱ Պատմութեան ինստիտուտի «Միմոմխիլվելի» ժողովածուի մէջ (1949, I):

արուեստաւոր մի վանիցն չգայ ի պէտք վասն նիւթոցն անպատրաստութեան եւ դժուարագիւտ լինել(ոյ), բայց այլում տեղոջ՝ նիւթն առատ եւ պիտանի եղբարցն եւ դիւրավաճառ»: Շարունակութեան մէջ կաթողիկոսը պահանջում է կղերական-արհեստաւորներից չզբաղուել պերճանքի իրերի, ոսկեկար գործուածքների եւ այլ թանկարժէք ապրանքների արհեստագործութեամբ. «Դիպակագործութիւն, ոսկեգործութիւն,- գրում է նա,- այսպիսիքս ցանկութեանց մարդիկ սպասաւորք են, զի ոմն թագ ցանգայ ունել եւ խնդրէ առնել յարուեստաւորէն, ոմն փողնոց, ոմն ծգանոց, այլ ոմն այլ ինչ. եւ նա (արուեստաւորն) լնու զցանկութիւնսն, այսպէս եւ դիպակագործն... զոր չէ պարտ կրօնաւորացն ուսանել»: Նա խրատում է բաւարարուել «այծէիւք ոստայնանկութեամբ» եւ «լոկ եւ թանձր» (իմա՛ պարզ ու անզարդ) կօշիկներ կարելով[1]:

Շատ աւելի սակաւ են մեր տեղեկութիւնները ֆեոդալական դղեակներին կից եղած գործատների մասին: Հիմք կայ ենթադրելու, որ նրանցում, ճիշտ այնպէս, ինչպէս մոնղոլական իշխանութեան ժամանակաշրջանի «քարխանէ»-գործատներում[2], բանում էին ստրուկ արհեստաւորներ, որոնց գոյութիւնը Հայաստանում թերեւս հաւաստում է Գրիգոր Տաթեւացու քարոզներից մէկով: Տաթեւացին, դիմելով Յուդային, ասում է. «Ո՜վ թշուառական, զծառայ մի որ ոչինչ գիտէ ի հարիւր դահեկան ծախեն, դու զվարդապետն եւ զարարողն երկնի եւ երկրի վասն երեսուն արծաթի՞»[3]: Պէտք է ենթադրել ուրեմն, որ վաճառւում էին նաեւ այնպիսի ծառաներ, որոնք բան (իմա՛ արհեստ) գիտէին:

Պատմական սկզբնաղբիւրները, բարեբախտաբար, փոքր-ինչ առատ են մեզ հետաքրքրող հարցերի տեսակէտից անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունեցող քաղաքային արհեստագործութեան այլեւայլ կողմերը լուսաբանող նիւթերով: Եւ դա միանգամայն բնական է, եթէ նկատի առնենք քաղաքային արհեստագործութեան տեսակարար կշռի ծանրութիւնը:

Արհեստները միջնադարեան Հայաստանի քաղաքներում, անտարակոյս, կազմակերպուած են եղել համքարական սկզբունքներով:

Համքարութիւնների գոյութիւնը Հայաստանում X-XIV եւ յետագայ դարերում այժմ արդէն հաւաստւում է նշանակալից փաստերով: Դրանք մասամբ օգտագործուած են Իւ. Ախուերդովի, Ս. Եղիազարովի, Վ. Աբրահամեանի եւ ուրիշների՝ Հայաստանի արհեստագործութեան

1 ՄՄ ձեռ. N 598, էջ 175բ

2 Այդ «քարխանաներում», որ պատկանում էին իշխաններին ու թագաժառանգներին, արտադրում էին զէնք ու զինամթերք, հագուստ, ինչպէս նաեւ ապակի ու հայելի: Այդ մասին տե՛ս **А. М. Беленицкий**, К вопросу о социальных отношениях в Иране в хулагуидсую эпоху ("Советское востоковедение", V, с. 123-124):
Ա. Բելենիցկին, յենուելով պարսկալեզու աղբիւրների վրայ, կարծում է, որ առաջին «քարխանաները» ստեղծուել են Միջին Ասիայում XIII դ. 30-ական թթ. (տե՛ս նոյն տեղում): Ներսէս Շնորհալու (մհ. 1173 թ.) հանելուկներից մէկում, կարծում ենք, կայ ակնարկ այն մասին, որ այդպիսի գործատներ Արեւելքում եղել են մինչմոնղոլական շրջանում եւս: Մարգի մասին գրած Շնորհալու հանելուկում ասուած է.

«Ի սուլտանի մեծ քարխանան
Կայր մին ուշտայ խիստ անննման,
Առանց հորի եւ մաքոքան
Գործեր բարակ գործ անխափան»
(«Տաղարան», 1512, էջ 52-53):

«Սուլթանի քարխանա» ասելով՝ հեղինակը նկատի է ունեցել, մեծ հաւանականութեամբ, սելջուկեան սուլթանի գործատունը, ուստի եւ այդպիսի գործատներ գոյութիւն են ունեցել նաեւ XII դ.:

3 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 581

ու համքարային կազմակերպութեան պատմութեանը նուիրուած տպագիր աշխատութիւններում[1]:

Որոշ նոր տուեալներ, յատկապէս Երզնկայում 1280 թ. ստեղծուած առեւտրական ու արհեստաւորական խաւերին պատկանող ամուրի երիտասարդներից կազմուած «եղբայրութեան» կանոնադրութիւնը, որը շօշափման շատ եզրեր ունի յետագայի համքարական կանոնադրութիւնների հետ, հրատարակեցինք մենք 1951 թ.[2]:

Վերոյիշեալ աշխատութիւններում հաւաքուած, ինչպէս նաեւ ուրիշների կողմից անտեսուած այլ նիւթերի օգտագործմամբ համքարութիւնների գոյութեան հարցը բազմակողմանիօրէն ուսումնասիրեց Բ. Առաքելեանն իր «Քաղաքները Հայաստանում IX-XIII դդ.» դիսերտացիոն աշխատութեան մէջ:

Համքարութիւնների գոյութիւնը հաւաստող կարեւոր փաստերից յիշենք մի քանիսը:

Յովհաննէս Երզնկացին իր անտիպ քարոզներից մէկում, նկարագրելով արքաների թագաւորութեան առիթով քաղաքներում տեղի ունեցող հանդէսները, յայտնում է նաեւ, որ «զանազան գործօնեայքն արուեստիցն գիւրեանցն զարդարէլ փութան փողոցս»[3], այլ խօսքով՝ տուեալ է հաղորդում այն մասին, որ քաղաքներում միեւնոյն մասնագիտութեան տէր արհեստաւորները գրաւում էին մի փողոց կամ շարք:

Անի քաղաքի արձանագրութիւններում կան տուեալներ, որոնցով հաստատւում է Երզնկացու հաղորդածը: Ըստ այդ արձանագրութիւնների քաղաքն ունեցել է «բազզնոց», «կաւշկակարաց», «նալպանդնոց», «սարաճփողոց», «փոլկարարոց» անունով փողոցներ կամ արհեստագործական շարքեր:

Քաղաքներում եղել են արհեստաւորների միջեւ ծագած վէճերը հարթելու համար «ծերոց ատեաններ»[4], դատական մի մարմին, որն ազգագրական նիւթերից դատելով՝ սերտ կերպով առնչւում է համքարական կազմակերպութիւններին:

XIX դ. համքարական կազմակերպութիւններում կար իգիթբաշի կոչուող մի պաշտօնեայ, որի պարտականութիւնն էր ուստաբաշու (համքարութեան ընտրովի աւագի) կարգադրութիւնները համքարութեան անդամներին հաղորդելը: Վերը յիշատակուած մեր յօդուածում բաւարար փաստերով ցոյց ենք տուել, որ այդ պաշտօնը ժառանգուած է միջնադարեան հայկական համքարութիւններից: Մանկտաւագ կամ մանգասար կոչուող պաշտօնեաները («իգիթբաշի» թուրքերէն նշանակում է հէնց «մանկտաւագ») միջնադարեան քաղաքներում կատարում էին կարեւոր դեր, լինելով երիտասարդ քաղաքացիներից կազմուած ջոկատի հրամանատար:

Վերջին դարերից մեզ հասած համքարական կազմակերպութիւնների ստատուտներում համքարութեան անդամների փոխյարաբերութիւնների եւ միմեանց նկատմամբ ունեցած պարտաւորութիւնների մասին կան բազմաթիւ յօդուածներ: Դրանք իրենց մեծագոյն մասով,

1 Տե՛ս **Ю. Ф. Ахвердов**, Тифлисские амкары, Тифлис, 1883; **С. А. Егиазаров**, Исследование по истории учреждений в Закавказье, ч. II, Городские цехи, Казань, 1891. **Վ. Աբրահամեան**, Արհեստները եւ համքարական կազմակերպութիւնները Հայաստանում IX-XIII դդ., Երեւան, 1946:

2 **Լ. Խաչիկեան**, Երզնկայում 1280 թ. կազմակերպուած «եղբայրութիւնը» («Տեղեկագիր», 1951, N 12, 73-84)

3 ՄՄ ձեռ. N 2173, էջ 66բ. [**Է. Բաղդասարեան**, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977]

4 **Մխիթար Գոշ**, Առակներ (կազմեց Է. Պիւազեան, Երեւան, 1951, էջ 122)

առնչւում են Երզնկայի 1280 կանոնագրութեան համապատասխան յօդուածներին:

Ի միջի այլոց նշենք նաեւ հետեւեալը. մինչ այժմ հայկական համքարութիւնների մասին պահպանուած հնագոյն ուղղակի վկայութիւնը համարւում էր Էջմիածնի Մայր տաճարի վրայ 1682 թ. Թիֆլիսի հայ համքարութիւնների փորագրել տուած նուիրաբերական արձանագրութիւնը[1]: Ձեռքի տակ այժմ ունենք շուրջ մէկուկէս դար աւելի վաղ գրուած մի փաստաթուղթ, որի մէջ պարզ ու որոշակի տուեալ կայ Բերկրի քաղաքում 1541 թ. ոչ շատ ուշ գոյութիւն ունեցած սոլկարների համքարութեան մասին: «Յիշատակ է սուրբ Աւետարանս սոլկար ասնաֆին, ձեռամբ ուստայ Ալխասին»,- գրուած է այնտեղ[2]:

Պէտք չէ կասկածել, որ հայերէն ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրութեամբ հնարաւոր կլինի առաջիկայում լրացնել հայկական համքարութիւնների մասին մեր գիտելիքները: Այժմ իսկ ձեռքի տակ ունենք նիւթեր, որոնք այս կամ այն չափով նպաստում են միջնադարեան արհեստագործութեան հետ կապուած մի շարք հարցերի պարզաբանման գործին:

Այսպէս օրինակ՝ Գրիգոր Տաթեւացին իր Քարոզգրքի Ամառան հատորում ունի այսպիսի մի պարբերութիւն. «Զօրութիւն եպիսկոպոսին ի վերայ քահանայիցն եւ սարկաւագացն է, որպէս զօրութիւն թագաւորի ի վերայ արուեստաւորաց քաղաքին, զի ամն կացուցանէ վերակացու, շահնայ, ձեռնաւոր եւ զիւրաքանչիւր արուեստ կարգաւորէ՝ զգարբին, զոսկերիչ եւ զայլսն»[3]: Նրան լրացնում է Մատթէոս Ջուղայեցին. «Մարմնաւոր կարգաւորութիւնք են Ե (5),- գրում է նա,- նախ՝ այր եւ կին, երկու՝ տանուտէրն եւ ընտանիքն, երեք՝ վերակացուք քաղաքին եւ արուեստաւորք»[4]:

Քաղաքի «վերակացուները» հսկողութիւն էին սահմանում արհեստաւորների վրայ, պահանջում, որ արտադրուած ապրանքը համապատասխանի աւանդական ձեւին ու որակին (լինի «ըստ չափոյ եւ կանոնի»), նիւթը խարդախուած չլինի եւ այլն: Ըստ երեւոյթին, նրանք էին հաւաքում արհեստաւորներից պետութեանը հասանելիք հարկերն ու տուրքերը: «Արուեստաւոր չկարելով գործել զարուեստն՝ զրկեալ գտանի յայնմ կոչմանէ»,- գրել է XIV դարի հեղինակ Բարսեղ Մաշկեւորը[5]: Արհեստով զբաղուելու իրաւունքից զրկելու հրամանը, հաւանաբար նոյնպէս տալիս էին այդ «վերակացուները»:

Ամէն մի արհեստաւոր շահագրգռուած էր իր արհեստը սովորեցնելու նախ եւ առաջ իր որդիներին: Համքարային արհեստագործութեան համար բնորոշ այս երեւոյթի արտացոլքը գտնում ենք միջնադարեան մի առակի մէջ, որի գայլ-հերոսը իրեն ներկայացնում է այսպիսի խօսքերով. «Մեք յազգէ յազգ մսագործ՝ մսագործի որդիք ենք»[6]:

Սակայն, սովորաբար, ամէն մի վարպետ ունենում էր աշակերտներ, պարտաւորուելով որոշեալ ժամանակամիջոցում մասնագիտացնել նրանց այն աստիճանի, որ նրանք կարողանային ինքնուրոյն գործ սկսել:

1 «Վիմական տարեգիր» (կազմեց Կ. Կոստանեան, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 195)

2 ՄՄ ձեռ. N 5067, էջ 360ա (ընդօրինակուած է 1473 թ.)

3 «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ... Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 179

4 «Քննութիւն Գործոց առաքելոց», ՄՄ ձեռ. N 1402, էջ 146

5 «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, արարեալ երանելւոյն Բարսեղի Շնորհալի վարդապետի», Կ. Պոլիս, 1826, էջ 189 (ՄՄ ձեռ. N 1314, էջ 121ա)

6 Н. Я. Марр, Сборники притч Вардана, II, с. 132

Ծնողները, իրենց որդիներին արհեստի տալով, վարպետի հետ կնքում էին յատուկ պայմանագիր, սահմանում ուսման ժամկէտ եւ այլն: Այդ մասին ուշագրաւ տեղեկութիւն է գրանցել վերը յիշատակուած Բարսեղ Մաշկեւորը. «Արդ,- գրում է նա,- եթէ զորդի քո յարուեստ տայիր եւ նա միշտ ի տան մնայր եւ կամ թէ այլուր խաղայր, ո՞չ հրաժարէր ի նմանէ ուսուցիչն եւ ասէր՝ ժամանակ սահմանեցեր ուսանելոյ մանկանդ եւ յայնքան ժամանակս ոչ կարէ դա ուսանել, զի չկայ (իմա՛ չգայ) մօտ առ իս եւ ուսանի, եւ զայս ինձ հարկ էր, ասէ, առնել քեզ»[1]: Մէջբերուած վկայութեան իմաստը պարզ է. վարպետը պատասխանատուութիւնից խուսափելու համար, բնականաբար դիմելու է իր ծոյլ աշակերտի ծնողներին՝ հրաժարուելով նրանից, կամ տեղեկացնելով, որ «սահմանուած ժամանակում» աշակերտի մեղքով, չպէտք է կարողանայ նրան արհեստաւոր դարձնել:

1387 թ. հասել է մեզ «աշակերտի» ծնողների եւ «վարպետի» միջեւ կնքուած մի համաձայնագիր, ըստ որի Մարգարէ անունով մի երիտասարդի ծնողները իրենց որդուն որպէս «հոգոյ որդի» յանձնում են Մովսէս քահանային, որպէսզի սա նրան ի վերջոյ քահանայ դարձնի: Արժէ ծանօթանալ այդ համաձայնագրին.

«Յանուն Աստուծոյ, ես Ովանէս, կողակիցն իմ Թանկսուղ, տուինք մեր աւժարութեամբ զմեր որդիս Մարգարէ՝ հոգոյ որդի Մովսէս քահանայիս մինչեւ ի մահն, որ երէց առնէ…

Ի թվ. ՊԼԶ (1387)»[2]:

Աշակերտները, դառնալով իրենց վարպետների հոգեւոր որդին, նրանց մեծարում էին «հայր» պատուանունով («Եւ որք արուեստս ուսուցանեն մանկանց՝ նոցա հայրք կոչեն»,- գրում է այդ մասին Մատթէոս Ջուղայեցին)[3] եւ յաճախ, ուսումնառութեան ողջ ժամանակաշրջանում, բնակութիւն էին հաստատում վարպետների տանը: Այսպէս էր վարուել, օրինակ, Թամբագործ ու քասակակար Աւագը, որը «լեալ երբեմն ի Սալմաստ քաղաք ի տիս տղայութեան ընդ արուեստապետին իւրոյ՝ ումեմն Պարսկի եւ մահմեդականի, ի տղայութեան ժամանակի ընդ նմին կեցեալ վասն օգտութեան արուեստին»[4]: Աշակերտների ժամանակի մեծագոյն մասն անց է կացել ուսուցչի տանն ու արհեստանոցում յոգնեցուցիչ ու սեւագործ աշխատանքի մէջ: Այս կապակցութեամբ պերճախօս տուեալ է հաղորդում Սարգիս Շնորհալին (XII դ.). չար մարդիկ,- ասում է նա,- երբ տեսնում են վարդապետի, որը «զմի ոք աշակերտ ունիցի, որ զկարեւոր պէտս նորայ վճարիցէ, զի մի անձամբ ջրաբեր լինիցի եւ փայտակոտոր եւ հրավառ… բամբասեն, երգիծանեն, մեծատուն է, ասեն»[5]: Պարզ է ասուած. աշակերտ էին պահում, նրան օգտագործելու համար որպէս ջուր բերող, փայտ կոտրող, թոնիր վառող եւ այլ սեւ աշխատանքներ կատարող:

Ծեծը խրատելու եւ ուսուցանելու համընդհանուր ու տարածուած միջոց է եղել: XIII դ. ընդօրինակուած մի Կանոնագրքի մէջ հանդիպել ենք յատուկ յօդուածի, որով 7 տարուայ ապաշխարութիւն է սահմանուած այն վարդապետի համար, որը գազանաբար ծեծելով կապա-

1 «Մեկնութիւն սրբոյ Աւետարանի, որ ըստ Մարկոսի», տպ. էջ 25, ձեռ. էջ 15բ

2 ՄՄ ձեռ. N 6288 էջ, 111բ

3 ՄՄ ձեռ. N 3854, էջ 296ա

4 «Հայոց նոր վկաները», գիտ. հրտ., էջ 157

5 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, Կ. Պոլիս, 1826, էջ 654

նի իր աշակերտին[1]:

Աշակերտի անվճար ու չսահմանափակուած աշխատանքը հնարաւորին չափ երկար շահագործելու դիտաւորութեամբ վարպետները շարունակ ձգտել են երկարաձգել ուսումնառութեան ժամանակաշրջանը: Այնքան դանդաղ են մատուցել նրանք իրենց արհեստի գաղտնիքները աշակերտներին, որ ժամանակակիցները, երբ ցանկացել են ճանաչուած ու հասկանալի օրինակ բերել «սակաւ սակաւ» մի բան անելու, յիշել են խկոյն աշակերտի ուսումնառութիւնը վարպետի մօտ[2]:

Աշակերտն ստիպուած է եղել լուռ ու մունջ, երկար տարիների ընթացքում, հնազանդուել իր վարպետին, կատարել նրա բոլոր պահանջներն ու հրամանները, որովհետեւ այլ ճանապարհ չի եղել արհեստը տիրապետելու եւ ինքնուրոյն գործ սկսելու: «Զի որպէս տղայն,- ասում է այդ մասին Բարսեղ Մաշկեւորը,- ոչ ընդդիմանայ ուսուցչին եւ ոչ հարցաքննէ իրաւունս հակառակելով, այլ խոնարհութեամբ հնազանդի եւ երկիւղիւ չափաւորեալ զինքն՝ յայնժամ կարէ ստանել յարուեստն»[3]:

Միջնադարեան հայկական արհեստագործութեան մէջ եղել են նաեւ ենթավարպետներ: Այդ մասին որոշակի տուեալ է հաղորդում Յովհան Որոտնեցին Տաթեւի վանքի տաճարի եւ զանգակատան շինութեան առթիւ արտասանած ճառի մէջ («ի յօրհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին եւ զանգակատանն... վանիցն Ստաթէի»): Նա գովասանքի եւ շնորհակալութեան խօսք է ուղղում շինարարական աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց. յատկապէս դրուատանքի է արժանանում ճարտարապետը («մանաւանդ զիմաստուն ճարտարապետ եւ զհանճարամիտ վարպետն»), սա աշխարհական մարդ է, ունի որդիներ, աշխատել է ոչ միայնակ, այլ «աշխատակցօք եւ աշակերտեալ մանկամբք»[4]:

«Աշակերտեալ մանուկ» տերմինը մեկնութեան կարօտ չէ, իսկ «աշխատակից» տերմինը, անշուշտ, նշանակել է ենթավարպետ[5]: Ենթավարպետները մեր ձեռագրական աղբիւրներում յիշւում են նաեւ «փոքր (կամ՝ փոքրագոյն) արուեստաւոր» եւ «օգնական» կոչումներով:

Արտադրութեան պրոցեսում նրանց կատարած դերի մասին կան մի-երկու անուղղակի վկայութիւններ:

Բարթողիմէոս Բոլոնիացին (XIII դ. 30-ական թթ.) գրում է. «Յորժամ շինեալ լինին ապրանք եւ լինին անդ փոքրագոյն արուեստաւորք եւ մեծամեծք, եւ զի թէպէտ երկուքն առնեն զգործն, այլ որ մեծ ճարտարապետն է՝ նայ ածէ ի կատարումն շինուածն»[6]:

Գրիգոր Տաթեւացին լրացնում է իր նախորդին: «Փոքր արուեստաւորն,- գրում է նա,- պատրաստէ զնիւթն եւ գլխաւորն տա զտեսակ գործոյն»[7], իսկ Առաքել Սիւնեցին աւելացնում է՝ «արուեստն ոչինչ կարէն առնել առանց օգնականի»[1]:

1 ՄՄ ձեռ. N 715, էջ 9ա

2 Այսպէս օրինակ՝ Յովհան Որոտնեցին իր աշխատութիւններից մէկում խորհուրդ է տալիս եկեղեցու քարոզիչներին «սակաւ սակաւ խրատու» խելքի բերել անհաւատներին, ճիշտ այնպէս ինչպէս արհեստաւորն է ուսուցանում իր աշակերտին. «զորօրինակ արուեստաւոր զաշակերտս իւր» (ՄՄ ձեռ. N 5871, էջ 19բ):

3 «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի», էջ 67

4 ՄՄ ձեռ. N 1843, էջ 188ա

5 Համեմ. ռուս. Работник եւն:

6 «Քարոզգիրք» (ՄՄ ձեռ. N 2181, էջ 201ա)

7 «Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին» (ՄՄ ձեռ. N 1198, էջ 289բ)

Այս մէջբերումները թոյլ են տալիս եզրակացնելու, որ ենթավարպետները ծանօթ են եղել արհեստի տուեալ մասնաճիւղի արտադրութեան պրոցեսին, մասնակցել են նրան, բայց մասնագիտական խոր պատրաստութիւն պահանջող ու հիմնական աշխատանքը, այնուամենայնիւ, կատարել է վարպետը («գլխաւորը», «մեծ ճարտարապետը»). նա էր, որ «ածէր ի կատարումն շինուածն»:

Վարպետները շահագործում էին ենթավարպետների ու աշակերտների աշխատանքը. նրանց միջեւ տնտեսական հողի վրայ շարունակ տեղի էին ունենում վէճեր, թշնամանք ու պայքար: Այս մասին հետաքրքրական վկայութիւն է պահպանուել Յակոբ Կլայեցու մեզ արդէն ծանօթ «Մեկնութիւն նուրբ գրեանց» աշխատութեան մէջ. խարազանելու համար կղերականների նախանձն ու հակառակութիւնը միմեանց նկատմամբ, Կլայեցին կատարում է օգտակար մի համեմատութիւն. «Թէ զոր ինչ յարտաքին արուեստաւորսն տեսանեմք,- գրում է նա,- որ նախանձին ընդ իրեարս եւ հակառակին, մանաւանդ փոքրքն՝ այսինքն ընդիր արուեստաւորքն՝ ի վայր հարուն զախմարսն եւ նոքա նախանձեն ընդ իրսն»[2]:

Այսպիսով, միջնադարեան հայկական քաղաքների արհեստաւորները աշխատում էին՝ ձեռքի տակ ունենալով ենթավարպետներ ու աշակերտներ: Նրանք, բոլորն էլ, տարբեր չափերով մասնակցում էին արտադրութեան պրոցեսին, սակայն ոչ ենթավարպետը, ոչ էլ աշակերտը վարպետի վարձկան բանուորները չէին, նրանք, որոշ ժամանակ անց, իրենք դառնալու էին վարպետներ:

Արհեստաւորները, առիթից առիթ, որեւէ բեռ տեղափոխելու կամ արտադրութեան հետ անմիջապէս չառնչուող որեւէ սեւ աշխատանք կատարել տալու համար՝ վարձում էին մշակներ կամ վարձկաններ: Դրանց մասին մանրամասն խօսք կլինի առանձին, նշենք այստեղ, որ սկզբնաղբիւրներում չկայ գէթ մի հատիկ վկայութիւն կամ ակնարկ այն մասին, որ վարձկանները մասնակցել են արտադրութեան պրոցեսին:

Այսպիսով, ամենայն իրաւամբ, կարող ենք եզրակացնել, որ X-XIV դդ. Հայաստանի արհեստագործութեան մէջ վարձու աշխատանք չէր կիրառւում, հետեւաբար արտադրութեան մէջ դեռեւս չէին նկատւում նոյնիսկ թոյլ սաղմեր կապիտալիստական կամ վաղ-կապիտալիստական արտադրական յարաբերութիւնների:

Մեր այս եզրակացութիւնն առաւել կամրապնդուի, երբ մենք, ընդհանուր գծերով ծանօթանանք արհեստաւորի եւ պատուիրատուի կամ գնորդի փոխյարաբերութիւններին:

Քննութեան ենթակայ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքների արհեստաւորները, եթէ միայն նրանց արտադրանքը դուրս չէր հանւում երկրից, կապւում էին գնորդի կամ պատուիրատուի հետ առանց միջնորդի, անձամբ: Արտադրուելիք ապրանքի նիւթը շատ դէպքերում տալիս էր ինքը՝ պատուիրատուն:

Այս մասին վկայութիւն կայ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ մասի 124-րդ՝ «Յաղագս դատաստանից բնաւից արուեստականաց խարդախողաց» խորագիրը կրող յօդուածում: Այնտեղ գրուած է. «Արուեստաւորք ամենայն, ըստ որում եւ իցեն արուեստ, եթէ

1 «Քարոզ տարեմտին» (ՄՄ ձեռ. N 969, էջ 12բ)

2 ՄՄ ձեռ. N 598, էջ 172բ

հատուածով գործիցեն եւ եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից Տեառն գործիցեն, այլ եւ զնիւթն ապականիցեն, դատաստան է ըստ հաճոյից նոցա առնել դարձեալ, կամ զապականեալն ի գնոյն ըստ արժանւոյն լնուլ եւ ապա լիով հասանել վարձու…»[1]:

Այս յօդուածը հետաքրքրական է մի քանի կողմերով. առայժմ ուշադրութիւն դարձնենք յօդուածի այն տուեալի վրայ, ըստ որի արհեստաւորն աշխատել է պատուիրատուի նիւթով եւ պարտաւորուած է եղել, այն փչացնելու կամ պատուէրի համաձայն չմշակելու դէպքում, վճարել նիւթի արժէքը, ապա միայն ստանալ իր աշխատանքի վարձը լրիվ:

Այս եզրակացութիւնն ամրապնդւում է մատենագրական բազմաթիւ այլ վկայութիւններով:

Այսպէս օրինակ՝ Ներսէս Շնորհալին իր «Յիսուս Որդի» պոեմում գրում է.

«… Որք յաշխարհի գործ արուեստին
Ի յերկաթոյ կամ արծաթին[2]
Եւ կամ յայլ ինչ նիւթեղէնին
Ջտեարըս նիւթոցն ենգեցին՝
Հատուցանեն անդրէն նոցին
Ի քո արդար դատաստանին»[3]:

Գրիգոր Տաթեւացին իր քարոզներից մէկում գող ու զրկող է կոչում այն արհեստաւորին, որն «ի յարուեստն վնասէ եւ խառնէ եւ կամ զայն նիւթն, զոր էառ պակասեցուցանէ»[4]:

Այդ մասին խօսում է նաեւ Մատթէոս Ջուղայեցին. «Գողք կոչին արուեստաւորք,- գրում է նա,- որք առնուն յայլոց նիւթ, եւ խորեն ի գործելն, եւ ի պահանջելն ուրանան»[5]:

Տաթեւացու աշակերտ Յովհան Կոլոտիկը, հեղինակ «Մեկնութիւն Եսայեայ» աշխատութեան, ուղղակի յայտնում է, որ արհեստաւորները որեւէ բան արտադրելու համար «նիւթ խնդրեն»[6]:

Այս կարգի վկայութիւնների թիւը կարելի է բազմապատկել, սակայն բերուածն էլ բաւական է համոզուելու համար այն բանում, որ հայ արհեստաւորը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում հիմնականում աշխատում էր պատուիրատուի նիւթերի վրայ, ըստ նրա պահանջի արտադրելով հարկ եղած ապրանքը:

Պատուիրատուի եւ արհեստաւորի միջեւ այս կարգի յարաբերութիւնը բնորոշ է ապրանքային արտադրութեան խիստ ցածր մակարդակին, երբ Կ. Մարքսի արտայայտութեամբ՝ «Предложение подчинено спросу и поэтому производство расширяется лишь

1 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, հրտ. Վ. Բաստամեանի, Վաղարշապատ, 1880, էջ 436

2 Այս տողը ձեռագրերում հանդիպում է «Առ ի յոսկոյ կամ յարծաթին» տարբերակով: Տե՛ս, օրինակ, ՄՄ ձեռ. N 2236, էջ 419ա:

3 «Գիրք, որ կոչի Յիսուս Որդի», Ս. Պետերբուրգ, 1785, էջ 173-174

4 «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր», էջ 25-26

5 ՄՄ ձեռ. N 2229 , էջ 133ա

6 ՄՄ ձեռ. N 1128, էջ 186ա

медленно»[1]:

Չի կարելի տարակուսել այն բանում, որ արհեստաւորը, պատուիրատուից նիւթ ստանալուց բացի ինքը եւս նիւթ է ձեռք բերում եւ պատրաստում իր արուեստին համապատասխան ապրանք՝ վաճառելու համար[2]: Այս դէպքում եւս, եթէ միայն արտադրուած ապրանքը չէր արտահանւում երկրից դուրս, արհեստաւորը կապւում էր գնորդի հետ անմիջականօրէն, առանց միջնորդի:

Յակոբ Կլայեցին մեր կողմից մի քանի անգամ արդէն յիշատակուած իր աշխատութեան մէջ խօսում է ինչ-որ կրպակաւորների մասին: Վանական արհեստաւորներին նա խորհուրդ է տալիս իրենց արտադրանքը վաճառելու համար քաղաք տանելիս՝ ընկերանալ եւ միասին գնալ («ամենայն ոք զիւրն ժողովէ ի միասին զվաճառսն եւ ապա ճանապարհակցին»), որովհետեւ «բազումքն ի միասին… պնդութիւն են միմեանց… յաւազակացն… ի ճանապարհին», մեծ վտանգ են ներկայացնում նաեւ կրպակաւորները. «կրպակաւորքն ջանան խաբել զվաճառն եւ զբազումն ինքեանց առնել, ընդ բազումսն անվնաս անցանէ խաբէութիւնն նոցա եւ ոչ կարէ վնասել, կամ բազումք անվնաս անցանեն քան մին, զի երկնչին ի բազմացն, գուցէ վկայ լիցին միմեանց առաջի դատաւորաց»[3]:

Այս մէջբերումներից կարելի է հետեւեցնել, որ կրպակաւորները քաղաքի շուկաներում կրպակ ունեցող առեւտրականներ էին, որոնք հնարաւորութեան դէպքում չէին խորշում խաբել իրենց արտադրանքը վաճառելու համար քաղաք բերողներին, նոյնիսկ երբ նրանք վանական-արհեստաւորներ լինէին: Հաւանալի է, որ էժան գնով ձեռք բերած ապրանքը նրանք թանկ գնով վաճառելու էին իրենց կրպակներում: Յակոբ Կլայեցին այդպէս էլ ասում է՝ «ջանան խաբել զվաճառն եւ զբազումն ինքեանց առնել»:

Արհեստաւորներն իրենց աշխատանքի վարձը հիմնականում ստանում էին դրամով:

Մատթէոս Ջուղայեցին իր «Հաւաքումն բանից, որ հայի առ Զ. աւուր գործս Աստուծոյ» աշխատութեան մէջ փորձում է սպառիչ պատասխան տալ այն հարցին, թէ ինչի՞ համար են ստեղծուած ոսկին եւ արծաթը: Նրա կարծիքով պատճառներից մէկն էլ այն է, որ առանց ոսկու եւ արծաթի արհեստաւորներն ու առեւտրականները չէին կարող գնել ու վաճառել. Նա գրում է. «գործաւորք եւ վաճառականք ի՞ւ վաճառէին եւ գնէին. վասն որոյ զայսպիսի նիւթս արար (Աստուած), զի զմիմեանց կարիս լցցեն եւ աջողեսցի շինութիւն աշխարհիս»[4]:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» վերը մէջբերած 114-րդ յօդուածում, ինչպէս տեսանք, կար այսպիսի արտայայտութիւն. «Արուեստաւորք ամենայն… եթէ հատուածով գործիցեն եւ եթէ վարձով…»: Ուշադրաւ այս հատուածից դժուար չէ եզրակացնել, որ դրամական վարձատրութիւնից բացի, արհեստաւորներն աշխատել են նաեւ «հատուածով», այսինքն՝ աշխատավարձի դիմաց ստացել պատուիրատուի նիւթի մի մասը՝ «հատուածը», այն մշակելու եւ վաճառելու համար:

Ըստ երեւոյթին կիրառուել է նաեւ ապրանքափոխանակութիւն. որեւէ արհեստաւոր իր պատրաստի արտադրանքը փոխանակել է մի այլ արհեստաւորի արտադրանքի հետ: Մատթ-

1 К. Маркс, Формы предшествующие капиталистическому производству, 1940, с. 50

2 Հմմտ. Մխիթար Գոշ, Դատաստանագիրք հայոց, էջ 437 (ՃԻԴ յօդուածի շարունակութիւնը)

3 «Մեկնութիւն Սուրբ գրեանց» (ՄՄ ձեռ. N 598, էջ 176ա)

4 ՄՄ ձեռ. N 774, էջ 332բ

նադարանի ձեռագրերից մէկում մի արհեստաւոր (հաւանաբար կտաւագործ) գրանցել է մանր հաշիւներ. դրանցից մէկը կարդացւում է այսպէս. «կտաւ մի փալնի շինել է տուաք»[1], այսինքն՝ մի համետ (փալան) կամ, թերեւս, բանալի շինողին որպէս աշխատավարձ տուել է մի կտաւ:

Այսպիսով, պարզւում է, որ արհեստաւորներն իրենց աշխատավարձն ստանում էին հիմնականում դրամով, սակայն դեռեւս տարածուած էր նիւթի աւելցուկը որպէս աշխատավարձ արհեստաւորին թողնելու, ինչպէս նաեւ տարբեր արհեստաւորների արտադրանքը միմեանց հետ փոխանակելու պրակտիկան, մի բան, որը նոյնպէս ցուցանիշ է ապրանքային արտադրութեան զարգացման ցածր մակարդակի:

Միջնադարեան հայկական քաղաքների արհեստագործութեան զարգացման աստիճանի, կազմակերպչական սկզբունքների եւ յարակից հարցերի մասին վերը մէջբերուած նիւթերը, ինչքան էլ նրանք միակողմանի լինեն ու ակնարկային, այնուամենայնիւ բաւարար են X-XIV դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը հիմնական կոնտուրներով պատկերելու համար: Այդ փաստերը միաբերան վկայում են այն մասին, որ հայկական քաղաքներում արհեստները կազմակերպուած են եղել միջնադարին յատուկ համքարային սկզբունքներով: Զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում գիւղական նատուրալ տնտեսութեանը համապատասխանում էր քաղաքում համքարային կազմակերպութիւնը: Եւ մէկը, եւ միւսը արտադրութեան ֆեոդալական եղանակի տարբեր կողմերն էին. միեւնոյն օրէնքն էր գործում եւ գիւղացու նատուրալ տնտեսութեան, եւ համքարային արհեստագործութեան մէջ՝ պարզ վերարտադրութեան օրէնքը[2]:

1 ՄՄ ձեռ. N 5910, էջ 117բ (կտաւագործի գրանցումները, ըստ հնագրական տուեալների, գրուած պէտք է լինեն հաւանաբար XVI դ.):

2 Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Վ. Չալոյեանը «Հայկական վերածնութեան մասին» իր յօդուածում մեր կողմից 1944 թ. (ասպիրանտական շրջանում) գրուած եւ 1947 թ. տպագրուած «Աղանդաւորական գաղափարախօսութիւնը Հայաստանում XII-XIV դդ.» (Ն. Մառի անուան կաբինետի «Աշխատութիւններ», N 2, էջ 181-209) յօդուածից քաղել է ձեռագրական մի տուեալ, ուր ասուած է, որ «վարձու աշխատողները սովորել են վերակացուն երեւալիս ջանասիրութիւն ցուցաբերել աշխատանքում» (թարգմանել է ինքը՝ Վ. Չալոյեանը): Չպարզելով, թէ ո՞վ է այդ տուեալի հեղինակը եւ խորամուխ չլինելով նրա բովանդակութեանը՝ Վ. Չալոյեանը եզրակացրել է, թէ՝ «Այստեղից հետեւում է, որ միեւնոյն արտադրական ձեռնարկութիւնում աշխատել են այնպիսի քանակութեամբ վարձու աշխատողներ, որ անհրաժեշտ է եղել նրանց նկատմամբ հսկողութիւն սահմանել ի դէմս յատուկ պաշտօնատար անձի՝ վերակացուի, որն, անշուշտ, մէկը չի եղել» («Տեղեկագիր», 1955, N 12, էջ 99):

Պարզուեց, որ այս տուեալի հեղինակը Գրիգոր Տաթեւացին է (տե՛ս «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր», էջ 459), որը իր աշխատութիւններում բազմիցս խօսել է երկրագործութեան մէջ աշխատող վարձկանների մասին: Այս տուեալը քնաւ բացառութիւն չի կազմում եւ դարձեալ վերաբերում է երկրագործական աշխատանքների համար վարձուած մշակներին, որովհետեւ եթէ իրօք Հայաստանում եղած լինէին մանուֆակտուրային տիպի արտադրական ձեռնարկութիւններ, որոնցում, մի յարկի տակ, այն էլ (ինչպէս կարծում է Վ. Չալոյեանը) մի քանի վերակացուների հսկողութեամբ աշխատէին վարձկաններ, ապա այդ վերակացուները միշտ էլ «կերեւալին» վարձկաններին ու շարունակ կհսկէին նրանց աշխատանքը, ուստի եւ Տաթեւացին չէր գրի Չալոյեանին գայթակղած՝ «սովոր են վարձկանք փոյթ առնել գործոյն մերձ գալով վերակացուին» նախադասութիւնը:

Հայաստանում մանուֆակտուրային տիպի արտադրական ձեռնարկութիւնների գոյութեան մասին Վ. Չալոյեանի ձեռքի տակ եղած միակ «փաստը» այս է. եւ մնում է զարմանալ, որ նա իր իսկ խօսքերով՝ «ձեռքի տակ չունենալով բաւականաչափ ծանրակշիռ փաստեր», այնուամենայնիւ հնարաւոր է համարել անել այսպիսի յայտարարութիւն. «...*պնդում ենք*, որ այն ժամանակուայ Հայաստանի էկոնոմիկայում *անպայման*, գոյութիւն են ունեցել պարզ կոոպերացիան ու մանուֆակտուրան. *գերազանցապէս* վարձու աշխատանքի հիման վրայ» («Տեղեկագիր», 1955, N 12, էջ 99: Ընդգծումները մերն են - Լ. Խ.):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՄԷՋ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ*

Հայերէն ձեռագրերի, յատկապէս Աւետարանների, Յայսմաւուրքների, Ճաշոցների, Մաշտոցների եւ ծիսական բովանդակութիւն ունեցող այլ ժողովածուների դատարկ էջերին ու լուսանցքներին, բացի ձեռագրերի նորոգողների ու յետագայ ստացողների յիշատակարաններից, միջին դարերում գրանցւում էին նաեւ նուիրաբերական արձանագրութիւններ, պայմանագրեր, կալուածագրեր, մուրհակներ եւ տնտեսական այլ գործարքների մասին ուշագրաւ վաւերագրեր: Ձեռագրերը այս պարագայում կատարում էին ճիշտ այն դերը, ինչ միջնադարեան ճարտարապետական յուշարձանների պատերը՝ վիմական արձանագրութիւնների համար: Եւ եթէ հայերէն վիմական արձանագրութիւնների հաւաքման, վերծանութեան եւ հրատարակութեան գծով անցեալում զգալի գործ է կատարուել, իսկ այժմ ծրագրուած ու լայն ծաւալի աշխատանք է տարւում, ապա ձեռագրերի էջերին գրանցուած արձանագրութիւնները գրեթէ աննկատելի են մնացել առ այսօր:

Հայերէն ձեռագրերի առանձին հաւաքածուներ նկարագրող բանասէրներից մի քանիսը՝ Գ. Սրուանձտեան[1], Ղ. Փիրղալեմեան[2], Հ. Աճառեան[3], Բ. Սարգիսեան[4], Ե. Լալայեան[5] եւ ուրիշներ, ձեռագրերի յիշատակարանների հետ մէջընդխառն ընդօրինակել ու հրատարակել են նաեւ մի քանի արժէքաւոր վաւերագրեր, սակայն նրանցից եւ ոչ մէկը յատուկ ուշադրութիւն չի դարձրել այն իրողութեան վրայ, որ դրանք ձեռագրական յիշատակարաններ չեն եւ որեւէ կերպ չեն առնչւում ձեռագրի բովանդակութեան կամ պատմութեան հետ: Այլ խօսքով՝ միջնադարեան Հայաստանի տնտեսական կեանքի պատմութեան մի շարք բնագաւառների ուսումնասիրութեան համար հարուստ նիւթեր պարունակող այդ վաւերագրերի գոյութեան մասին իսկ հայագիտութեան մէջ պատշաճ խօսք չի ասուել:

1948 թ., զբաղուած լինելով XIV-XV դդ. հայերէն ձեռագրերի յիշատակարանները հաւաքելու եւ հրատարակութեան պատրաստելու աշխատանքով, զուգահեռաբար մենք հաւաքել ենք նաեւ նոյն ձեռագրերի էջերում գրանցուած այդ վաւերագրերը, նպատակ ունենալով դրանք հրատարակել առանձին ժողովածուով[6]: Այս նոյն աշխատանքը մասամբ կատարել է

* «Բանբեր Մատենադարանի», N 5, 1960, էջ 21-42

1 Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար. Հայաստանի ճամբորդ, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, մասն երկրորդ, Կ. Պոլիս, 1885

2 «Նօտարք հայոց, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսբեցւոյ...», Կ. Պոլիս, 1883

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին», Վիեննա, 1900. «Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի», Վիեննա, 1910 եւ այլն

4 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատոր Ա, Վենետիկ, 1914, նոյնի Բ հատոր, Վենետիկ, 1924

5 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ առաջին, Թիֆլիս, 1915

6 Այս մասին խօսել ենք «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուի (Երեւան, 1950) 81-րդ էջի ծանօթագրութեան մէջ: Իսկ մի շարք կարեւոր փաստաթղթեր օգտագործել ենք «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» ժողովածուի Բ մասի (Երեւան, 1958) ընդարձակ առաջաբանի «Համառօտ

նաեւ Մատենադարանի գիտական աշխատող Ս. Լալաֆարեանը, որը հրատարակութեան է պատրաստում XVI դ. հայերէն ձեռագրերի յիշատակարանները. այսպիսով առ այսօր մենք ձեռքի տակ ունենք Մատենադարանի ձեռագրերից եւ (ոչ մեծ քանակութեամբ) տպագիր ձեռագրաց ցուցակներից քաղուած, XI-XVIII դդ. վերաբերող 300-ից աւելի վաւերագրեր: Այդպիսիք, անշուշտ, կան նաեւ XVII-XVIII դդ. ընդօրինակուած ձեռագրերի, ինչպէս նաեւ Հայաստանից դուրս պահուող հայերէն ձեռագրերի մէջ. ուստի եւ դրանց հաւաքումը առաջիկայում պէտք է շարունակել, ներգրաւելով այդ գործի մէջ այլ մասնագէտների: Չնայած դրան, արդէն մեր ձեռքի տակ եղող նիւթը, թէ՛ քանակով եւ թէ՛ բովանդակութեամբ՝ հնարաւորութիւն է ընձեռում ընդհանուր գծերով ծանօթանալու վերոյիշեալ փաստաթղթերի բովանդակութեան հետ, արժէքաւորելու դրանք որպէս պատմական սկզբնաղբիւր:

Մեր ձեռքի տակ եղող վաւերագրերի ճնշող մեծամասնութիւնը գրանցուած է հնում Վասպուրականի (յատկապէս Ոստանիքի եւ Մոկսի) վանական հաստատութիւնների սեփականութիւնը կազմող ձեռագրերի էջերում: Այս հանգամանքը, անշուշտ, պատահական չէ. նոյն այդ վանական հաստատութիւնների շինութիւնների պատերից գրեթէ իսպառ բացակայում են վիմական արձանագրութիւնները, այն դէպքում, երբ Պատմական Հայաստանի այլ նահանգներում՝ Այրարատում, Սիւնիքում, Գուգարքում, Արցախում եւ այլ վայրերում, վանքերի ու եկեղեցիների պատերը ներսից ու դրսից, յաճախ ծայրից ծայր, լի են մանր ու խոշոր արձանագրութիւններով: Վասպուրականում գերադասել են նոյն այդ նպատակի համար օգտագործել վանքերում պահուող ձեռագրերը, որոնց վրայ գրանցումներ կատարելը տեխնիկական դժուարութիւնների եւ մեծածախս աշխատանքների հետ կապուած չի եղել:

* * *

Ըստ բովանդակութեան ձեռագրերի էջերին գրանցուած վաւերագրերը բաժանւում են հիմնականում հետեւեալ խմբերի.

1. Նուիրական գրառումներ.
2. Պայմանագրեր.
3. Կալուածագրեր:

Նուիրաբերական գրառումները կամ «վակֆերը»[1], որ քանակով ամենից շատ են, իրենց հերթին բաժանւում են ենթախմբերի:

Զգալի թիւ են կազմում վակֆերը, որոնցով այս կամ այն անհատ անձնաւորութիւնը կամ գերդաստանը, որեւէ վանական կամ եկեղեցական հաստատութեան նուիրում է իր սեփականութիւնը («մուլքը») կազմող որեւէ անշարժ կալուածք՝ արտ, այգի, կրպակ, ջրաղաց, ձիթհանք, փոխհատուցում ստանալով որոշակի քանակութեան պատարագ կամ օրհնութիւն: Այս կարգի վակֆերի հարիւրաւոր օրինակներ են յայտնի վիմական արձանագրութիւններից. ձեռագրական գրառումները տարբերւում են իրենց վիմական նմանակներից ոճական առանձնայատկութիւններով: Սրանք գրուած են աւելի մանրամասնօրէն. տեղ շահելու եւ հակիրճ ու սեղմ լինելու մտահոգութիւնը այնքան էլ չի զբաղեցրել դրանց շարադրողներին:

ակնարկ սոցիալ-տնտեսական կեանքի պատմութեան» ճառուածը շարադրելիս:

1 «Վակֆ» էին կոչում եկեղեցական հաստատութիւններին նուիրաբերած կալուածքները ու ստացուածքները, որոնք ենթակայ չէին օտարման: Այդ (վակֆ) բառը մեր վաւերագրերում գործ է ածուած շուրջ երկու տասնեակ աղաւաղ ձեւերով՝ ախվ, ոլւ, ոխվ, ոխն, ոխֆ, ոճվ, ոճֆ, ողբ, ուճվ. վախբ, վախմ, վախն, վաղուպ, վոխմ, օճվ եւ այլն:

Ծանօթանանք այդ կարգի մի քանի նուիրաբերական գրառումների.

1. Գրանցուած է 1303 թ., Գրիգոր Լուսաւորչի անապատում. նուիրաբերութեան առարկան է մի խանութ, որը գտնուել է, հաւանաբար, Երզնկայում.

«Ես սիր Սիմոնս, որ տուի զիմ խանութն որ ի Քաֆկտրնոցն ոխֆ ի սուրբ Լուսաւորիչն անջինջ, որ քանի յայն աւրն Վարագայ խաչին կիրակէն պատարագ լինի՝ ինձ լինի, որ դրել եմ ինձ հոգեբարձ զԹագւորշահն, որ զիմ հոգիս հոգա զինչ Աստուած իւր ցուցնէ: Եւ է խանութին հասերն՝ մէկ դեհն մեծ պարոն Յատարն, ու մէկն Կարապետ աղեղրարն, ու մէկն Սուլէման գանուշմանն, ու մէկն ճանապարհն, որ առաջի եւ /// ի թվ. ՉԾԲ. (1303)»[1]:

2. Գրանցուած է 1335 թ., նուիրաբերութեան առարկան է մի ձիթհանք.

«Յանուն Աստուծոյ եւ կարողութեամբ Սուրբ Հոգւոյն ես պարոն Հայրուտս, որ շինեցի զաղօթանոցներ սուրբ մենաստանացս զՔարի վանուցս, զԹանահատի վանուց եւ զսուրբ Կաթողիկէիս, զի այն էր խնդրուածք իմ յԱստուծոյ: Եւ գնեցի ի Սապուխի որդոյ Մահմատայ զձորի յեզեր ձիթահանքն սուրբ Կաթուղիկէիս լուսացու եւ ետու ի ձեռն Իբրանոս քահանային վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ արեւշատութեան զաւակաց իմոց:

Ես Առաքել վարդապետս միջնորդ եւ վկայ եմ էս հաստատ եւ անդարձ վախմիս ի թուաբերութեան հայկազեան տումարի ՉՁԴ (1335)»[2]:

3. Գրանցուած է 1461 թ., Ս. Նշանի վանքում. նուիրաբերութեան առարկան է մի այգի.

«Ես Յոհաննէս եւ իմ հարսն Սալչուքն տուաք զԱմենատնին այգին զշինխտուօն (°) յիշատակ ի սուրբ Նշանն Ամենատնին հոգուն, իր ննջեցելոցն: Ի ներքին դեհն Յայսատին տղան եւ ի վերին դիհն աղբիւրն. այլ մարդոյ տաւէ տալապայ չկայ. ի յաղբիւրէն վայր՝ ամէնն իւր է, այլ մարդոյ չկայ. եկեղեցին գլուխ է, աղբիրն եւ ամէն նորա է:

Ես տէր Դաւիթ եւ տէր Սիմէոն եպիսկոպոսք վկայ եմք. ես ռայիս Ամենաւագս վկայ եմ. ես խոճա Ճալալս վկայ եմ. ես մղտսի Ճրհանշէկս վկայ եմ. ես խօճայ Կարապետս վկայ եմ. ես խօճայ Զոփլուս վկայ եմ այս բանիս: Ով որ այսոր տաւէ տալապա առնէ նա զմասն զՅուդային առցէ եւ զխաչահանուացն:

Ես Յոհաննէսս եւ իմ եղբօր որդիքս Ալէքսանոս եւ Մովսէսն Ը. (8) ֆլի (=ֆլորի) տուաք. եւ գնեցաք զայգին, եւ տուաք ի սուրբ Նշանն յիշատակ Ամենատնին հոգուն. այլ մարդոյ տաւի տալապա չկայ:

Ի. թվ. Ջ. եւ Ժ. (1461)»[3]:

4. Գրանցուած է Աղթամարի Ստեփաննոս Գ կաթողիկոսի աթոռակալութեան տարիներին (1464-1489 թթ.) Ոստանիքում. նուիրաբերութեան առարկաներն են երկու արտեր.

«Ծառայս Աստուծոյ Ստեփաննոս, Հերեների որդիս՝ Կեմայ տանուտերաց կամօք՝ մեծաց եւ փոքունց, ետու զիմ հէրենական գնած մուլքն՝ զՓոս արտն՝ Պուտուլկի վանաց սուրբ Աստուածածնին եւ սուրբ Գէորգ զօրավարին եւ սքանչելագործ Եղիշայ վարդապետի սուրբ աջին ոխվ եւ անջինջ յիշատակ: Յիշխանութեան Սուլէյման-բէկին եւ ի հայրապետութեան տէր Ստեփաննոսին, ի յառաջնորդութեան Յովհաննէս եպիսկոպսին ///

1 Բ. Սարգսեան, Մայր ցուցակ..., հտ. Բ, Վենետիկ, էջ 35

2 ՄՄ ձեռ. N 4515, էջ 94-95

3 A Cataloque of the Armenian Manuscripts in the British Museum, by Frederick C. Conybeare, London, 1913, էջ 31

Ես Ստեփաննոս Հերենըսի որդիս եւ Աստուածատուր որդիքս Զաքարն եւ Եոզարս գծարի գրան արտն օխմ տուինք Թադէոս առաքելոյն. Աստուծոյ վկայութեամբն եւ Հոգեւոր տէրի վկայութեամբն, եւ Յովհաննէս եպիսկոպոսին եւ ուագերէցուն եւ ամենայն Կեմայ տանուտերաց վկայութեամբն:

Զինչ էրէց որ եկեղեցւոյն ծառայութիւն առնէ՝ զէն արտի բերք այն ուտէ եւ ի տարին հինգ անգամ գչէրենըսենց գերեզմանէրն օրհնէ:

Ես տէր Ստեփաննոս կոթուղիկոս վկայ եմ» (ՄՄ, ձեռ. N 4515, էջ 229-230):

5. Գրանցուած է 1581 թ., Ներքին Մարմետ գիւղում.նուիրաբերութեան առարկան է մի ջրաղացի մէկ քառորդ մասը, որ տրուած է Սորբի սուրբ Կարապետի վանքին:

«...Յիշեցէք զՆերքին Մարմետու տանուտէրն զպարոն Ղամրարն, որ չարեք մի ի Խոջենց ջաղացէն էառ եւ եսուր ի դուռն սուրբ Կարապետին, ի ձեռն Հայրապետ եպիսկոպոսին եւ յայլ միաբանացն. ի թուականին Հայոց ՌԼ (1581)...:

Գրեցաւ ձեռամբ Կարապետ աբեղային, ի գիւղս որ կոչի Ներքին Մարմետ, վկայութեամբ սուրբ Ստեփանոսի նախավկային: Իմացումն լիցի ձեզ եղբարք, որ ջաղացն ի յԱնանավանք է. եւ որք կարդայք ասացէք բոլոր սրտիւ եւ ուղիղ հաւատով Աստուած-ողորմի իւրեանց հոգոյն, ամէն. եղիցի»[1]:

Այս կարգի նուիրաբերական գրառումներ կարելի է մէջբերել տասնեակներով. նրանց մէջ, ինչպէս տեսանք վերը բերած օրինակներում, փոխւում են նուիրաբերութեան առարկաները (խանութ, ձիթհանք, այգի, արտ, ջրաղաց), սակայն դրանք բոլորն էլ նուիրաբերողներին պատկանող «մուլքեր» են, մեծ մասամբ ձեռք բերուած գնումների ճանապարհով, ուստի եւ նուիրատուները իրաւասու են եղել օտարելու դրանք ցանկացած եղանակով՝ վաճառելու, ժառանգութիւն թողնելու իրենց մերձաւորներին, նուիրաբերելու վանական-եկեղեցական որեւէ հաստատութեան:

XIV եւ յետագայ դարերի նուիրաբերական գրառումների մի պատկառելի քանակութիւնը վերաբերում է գիւղական համայնքի հողային ֆոնդի մէջ մտնող առանձին արտերի ու հողակտորների վանական հաստատութիւններին վակֆ անելու հարցին: Ուշագրաւ այս երեւոյթը, որ նոր երանգ է տալիս վակֆին, արժանի է յատուկ քննութեան:

Մանօթանանք նաեւ վակֆերի այդ տարատեսակի բնորոշ մի քանի օրինակների հետ:

1. «Ով դասք քահանայից, յիշեցէք ի սուրբ եւ ի [յերկնա°] լուր յաղաւթս ձեր ///էի պարոնին որդին [Խո]ճասար պէկին ///թումն տեղ՝ անջրդի արտն՝ որ է ի Կար/// եզերն որբ իդիր [Աստուած]ածնին. ով որ վա[յելէ] լիտր մի ձէթ [Աստուա]ծածնին տայ: Ով որ այս բանիս հակառակ լինի կամ դայս արտս խորէ յեկեղեցոյս՝ յազգաց կամ յաւտարաց, զանէծս Կայէնի առցէ եւ ընդ խաչհանուացն պատժեսցի: Եւ այս բան կամակցութեամբ տէր Աւետեացն եղեւ: Յիշատակ գնաւղն եւ վաստակաւղն, որ հանապազ զայն ձէթն [վառէ]՝ աստուծոյ անճառ լուս[ոյն] արժանի լիցին. [ամէն]:

Ի թվ. ՊՁ (1431)»[2]:

2. «Քրիստոս Աստուած... լո[ւ]սաւորեայ զհայրապատոնց տէր Աբրահամի հոգին, որ կամեցաւ գիւր հալալ դատքն՝ Ժ (10) դռչ. (դուռուշ) եսուր, զՇիրիկայ բաժին գնեց՝ Խ (40) կոտ գարալ. Ժ (10) եթող. Լ (30) ախւ արար ի վերայ Գ. խորանին յիշատակ իւր. ծնօղաց նորին՝ հաւրն՝ տէր Հայրապետին հանգուցելոյն առ Քրիստոս եւ մաւրն Ջանադին...: Աստուած զՅառանանից տանուտէրքն ուրհնէ՝ զմեծն զփոքրն, որ այս բանիս վկայ եղան. ով որ հակառակէ, կամ յաւսն ձգէ. կամ այլայլէ՝ նա զանէծքն զԿայէնի եւ Յուդային եւ զխաչխանողացն առցէ, ամէն, ամէն, եղիցի»[1]:

3. «Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Պետուեց Գեւօին, հօրն՝ Կարապետին, մօրն՝ Գուլազին, հօրեղբօրն՝ Հայ[ր]ապետին, եւ որդուն՝ Յովանէսին՝ Ներքին Թաղ առտն օհմ արարին ի դուռն սուրբ Կարապետին, կալին մի աշընցան կաքալ տան ձեռամբ Ա- գըլեանայ բաէս Ներսօին, բաէս Յօվանէսին, բաէս Կազարին, տանուտէրաց՝ մեծամեծաց եւ փոքրաց: Ով հակառակ կենայ՝ անէծք Կայէնին առնէ եւ այլ խաչհանողացն, ամէն...»[2]:

4. «Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Մարկոսին, որ զՇարակաձոր օխմ երար ի վերայ սուրբ Գէորգա՝ կէս կալին կապալ»[3]:

5. «Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք մահտեսի Աղաջանին եւ մահտեսի Սարուխանին եւ տան մեծի եւ փոքու՝ առհասարակ ամենեցուն, ամէն որ զՋաղցի վերեւ օխմ երար ի վերայ սուրբ Գէորգա՝ կալին կէս կապալ, եւ գձմի առտ՝ կէսրար, եւ զաւաղին օխմ ի վերայ սուրբ Երուսաղեմա՝ կէս զ[ու.]ռ [ուշ][4]:

6. «Յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք մահդասի Գուլամիրին, եւ հօրն մահդասի Ստեփանին, եւ մօրն Զադին, եղբօրն Վարդանէսին, որ կամեցան եւ տուին Կռանյարս՝ օխտ արարին ի դուռն Ապարանից սուրբ Նշանին. տարին Ե. (5) կալին հաց տան սուրբ Խաչին, Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին, ամէն»:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի ասացէք Սահակին, եւ հօրն Նիկ[օ]ղոսին, եւ մօրն Թարեզին, եւ եղբայրն Մուրադին, որ կամեցան եւ տուին զՋրուընիկ՝ օխտ արարի[ն] [ի] դուռն Ապարանից սուրբ Նշանին, տարին զրիւ մի հաց կապալ տան. Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգիքն, ամէն...»[5]:

7. «Կամաւն Աստուծոյ ես՝ Պօղոսի որդի Արագս, իմ եղբայր Պօղոսս, իմ հօրեղբօր Թռան Խնչատուրս եւ մեր որդիքս գիր տուինք առաջի աստուծոյ, որ մեր նախնիքն մէկ ուրայվար հող իւրեանց հոգոյն համար տուել էին Անդրէասանց Սարգսին. յետոյ Սարգսին անյիշատակ էլաւ, մեր տուած հողն անտէր մնաց. մենք էլ պարնիցն հողն ճարեցինք, մէկ ուրաւար հող էլ մենք վրէն հաստատեցինք, Բ. (2) ուրավար հող տուինք վախմ Սանահնոյ սուրբ Աստուածածնին. ով որ մեր ազգ, մեր որդի կամ այլ մարդ վարէ՝ Ե (5) ծեւ վարողն տանի, մէկ ծեւ դրէ Աստուածածնի դուռն, որ միաբանքն ուտեն մեր ննջեցելոցն Քրիստոս որդի առնեն...»[6]:

Օրինակները համարենք բաւարար: Ինչպէս տեսնում ենք, վերոյիշեալ գրառումների մէջ

---

1 ՄՄ ձեռ. N 4869, էջ 669ա

2 Ն. Սարգիսեան, Մայր ցուցակ..., հտ. Ա., Վենետիկ, էջ 664

1 ՄՄ ձեռ. N 4955, էջ 155բ-159ա. ժամանակ՝ XVI-XVII դդ.

2 ՄՄ ձեռ. N 4915, էջ 1ա. ժամանակ՝ XVII դ. վերջերը

3 ՄՄ ձեռ N 4915, էջ 137բ, գրանցուած է մերձաւորապէս 1701 թ.

4 ՄՄ ձեռ. N 4915, էջ 137բ-138ա. գրանցուած է մերձաւորապէս 1701 թ.

5 ՄՄ ձեռ. N 5526, 138բ. ժամանակ՝ XVI-XVII դդ.

6 ՄՄ ձեռ. N 3050, էջ 273բ. ժամանակ՝ XVII դ.

վակֆ են արւում վարելահողեր. սակայն նրանք ոչ թէ դրւում են յիշատակուած վանական-եկեղեցական հաստատութիւնների իրաւասութեան տակ, այլ մնում նուիրաբերողի ձեռքում, պայմանով որ նուիրաբերողը կամ վակֆ արուած այդ հողակտորի գալիք մշակողը՝ բաժին հանի վանական հաստատութեանը - մի լիտր ձէթ, 40 կոտ բնավարձի 3/4-ը (30 կոտ), կէս մէկ, մէկուկէս կամ հինգ կապիճ հաց, մի գրիւ հաց, բերքի 1/6 մասը եւ այլն:

Վակֆ արուած այդ հողակտորները, այսպիսով, չէին դադարում գիւղական համայնքի հողային ֆոնդի մասը լինելուց: Նրանց մշակող գերդաստանները, որոնք պարտաւոր էին ռենտա- հարկ վճարել պետութեանն ու հողատիրոջը, կամովին յանձն էին առնում յիշատակուած հողակտորների բերքից ամէն տարի որոշակի մաս՝ «ղարալ» (արաբ. «յանձնառութիւն», «համաձայնութիւն» բառից) յանձնել վակֆ ստացող հաստատութեանը: Գրառուած վաւերագրի ուժով ու գիւղական համայնքի տանուտէրերի՝ «մեծի ու փոքրի» յանձնառութեամբ՝ այդ պարտաւորութիւնը տարածւում էր վակֆ արուած հողակտորի յետագայ մշակողների վրայ:

Ընդհանուր առմամբ այսպիսի բովանդակութիւն ունեն մեր բերուած եւ մեր ձեռքի տակ եղող մի քանի տասնեակ միւս վաւերագրերը: Նրանց մէջ սակայն կան նաեւ տարբերութիւններ:

Այսպէս, օրինակ, առաջին վաւերագրից (որը դժբախտաբար լրիւ չի վերծանուած) կարելի է հետեւեցնել, որ վակֆ անողը կալուածատէր է՝ ոմն Խոճասար-բէկ, որի հայրը (անունը անընթեռնելի) մեծարուած է «պարոն» տիտղոսով: Նկատի առնելով այս հանգամանքը, կարելի է թերեւս եզրակացնել, որ վակֆ արուած «անջրդի արտը» Խոճասար-բէկի կողմից տրուած է եղել վարձակալման եւ տարին մի լիտր ձէթ Ս. Աստուածածնի եկեղեցուն տալու պարտաւորութիւնը դրուել է վարձակալողի («ով որ վայելէ») վրայ:

Ուշագրաւ է նաեւ մէջբերուած երկրորդ վաւերագիրը, Երեք խորան կոչուող սրբավայրին տարին 30 կոտ ցորեն տալու պարտաւորութիւն ստանձնած, վաւերագրի գրանցման ժամանակ արդէն հանգուցեալ Հայրապետանց Աբրահամը 10 դուռուշով գնել էր «Շիրիկայ բաժին» կոչուած հողը: Հողակտորի վարձակալողի (Շիրիկի՞) եւ նրա մէջ համաձայնութիւն էր կայացել ամէն տարուայ բերքից տալ Աբրահամին 40 կոտ ցորեն («Խ. կոտ ղարալ»): Ահա այդ 40 կոտից 30 կոտն է, որ Աբրահամի եւ նրա ծնողների հոգու փրկութեան համար վակֆ է արուել Երեք խորան կոչուող եկեղեցուն:

Մէջբերուած հինգերորդ վաւերագրում, բացի «կապիճ կէս կապալի» մասին յիշատակութիւնից, որ տրուելու էր տարեկան ջրաղացի վերեւում գտնուող վարելահողից սուրբ Երուսաղէմին, յիշատակութիւն կայ նաեւ «ձմի» (ձմեռային) մի արտի մասին, որպէս կիսրար արտ եւ «աւազիկ» արտի մասին, որի դիմաց պարտաւորուել են եկեղեցուն տալ ամէն տարի կէս ղուռուշ դրամ:

Հողի վարձակալութեան (ИЗДОЛЬЩИНА) *սիստեմի գոյութեան մասին վկայող «կիսրար» տերմինի հետ սերտ աղերսի մէջ է նաեւ «ոխմերու (խմա՛ վակֆերի») չարեք» տերմինը, որը բացատրութեան կարիք է զգում:*

XV դ. պահպանուել է մի վաւերագիր, որի մէջ յիշատակուած է այդ՝ «ոխմերու չարեք» տերմինը.

«Քրիստոս Աստուած... ողորմեայ ամենայն հաւատացելոց, եւս առաւել Դովլաթիարին եւ Խոսրովին, Միրոչին եւ Թումին, եւ ծնողաց նոցին, որ զոխերոյ չարէքն բաշխեցին. արարիչն Աստուած զիւրեանց մեղքն թողու, ամէն: Ընդ նոսին զԽունկանց Կարապետին, որ միջնորդ եղեւ այսմ բարի գործոյս, ամէն»[1]:

Այդպիսի մի վկայութիւն էլ պահպանուել է 1476 թ. ընդօրինակուած մի Ճառընտրի յիշատակարանի սորեւ բերուող հատուածում.

«Դարձեալ յիշեցեք զբարեպաշտ հաւատարիմ տանուտէրքն Վանայ քաղաքիս՝ զխոջա Յովանէսն, զմելիք Բախտիարն, զխոջա Պարսամն, զաէս Փերիջանն, զաէս Սարխոշն, զխոջայ Աղնաւուրն, զխոջա Գրիգորն, զխոջա պարոն Գորգն, զխոջա Յովանէսն, միւս խոջա Յովանէսն, զխոջա Կարապետն, զԱնձրեւանց Մուրատն, զխոջա Էզդանբախշն, մեծ եւ փոքր քաղաքի տանուտէրքս, որ ամէն եկեղեցեաց ոխթերու չարէքն թողլեցին»[2]:

«Չարեք» (խմա՛ «չհար-յեք») կոչւում էին վարձակալութեան տրուած այն վարելահողերը, որոնց մշակման դիմաց անմիջական արտադրող գիւղացին պարտաւոր էր կալուածատիրոջը յանձնել բերքի մէկ քառորդը:

Գիւղական համայնքի մէջ ընդգրկուած գիւղացիներից ոմանք վանական տարբեր հաստատութիւններին վակֆ էին անում առանձին հողակտորներ, որոնց օգտագործման իրաւունքն էր միայն զտնւում իրենց ձեռքին «չարեքի» սկզբունքով վարձակալման պայմանով:

Այդ հողակտորների մշակման իրաւունքը երբ անցնում էր վանական այս կամ այն հաստատութեանը, նրանց ռենտայի վճարման պարտաւորութիւնը նոյնպէս, ինքնաբերաբար անցնում էր նոր օգտագործողին (տուեալ դէպքում՝ վանական-եկեղեցական հաստատութեանը):

Եւ ահա, որոշ դէպքերում քաղաքային եւ գիւղական համայնքների մեծամեծները՝ մելիքներ, ռեսներ, խոջաներ, իրենց համայնքների անունից պարտաւորութիւն էին ստանձնում վճարել վանքերին վակֆ արուած այդ կարգի հողակտորների կալուածատիրական ռենտան՝ «ոխմերու չարեքը». Եթէ տուեալ վարելահողը վարձակալման էր տրուած բերքի մէկ քառորդը կալուածատիրոջը յանձնելու պայմանով, կամ կէսը՝ «կիսրարի» դէպքում, կամ էլ մի այլ մասը, նայած վարձակալութեան պայմանին եւ կալուածատիրոջից գիւղացու կախման աստիճանին:

Ինչպէս տեսնում ենք այս («կիսրար» եւ «չարեք») տերմինները հնարաւորութիւն են ընձեռում պարզելու, որ ֆեոդալական շահագործման բնավարձակալման սիստեմը լայն տարածում ունէր Հայաստանում՝ XV եւ յետագայ դարերում:

Նուիրաբերական գրառումների երրորդ ենթախմբի մէջ են մտնում մեծաքանակ այն վաւերագրերը, որոնցով տարբեր մասնագիտութեան ու զբաղմունքի մարդիկ յանձն են առնում վանական որեւէ հաստատութեան համար ամէն տարի անվարձ որեւէ ծառայութիւն կատարել կամ որոշեալ չափով նիւթական որեւէ նպաստ բերել:

Ծանօթանանք նաեւ վակֆերի այս տարատեսակի մի քանի բնորոշ օրինակների հետ:

1. «Ես Աւաքս եւ Զըմրուծս՝ ծառայ սուրբ Աւետարանիս եւ սուրբ Կոստընդնայ: Ես Զըմրուխս ի յիմ ձեռացս ի բանէն յամէն տարի Դ. (4) նուկի իրըլխոին կիրիոն լընում ու տամ. եւ

---

1 ՄՄ ձեռ. N 4674, էջ 51ա: Այս նույն անձնավորությունները, որոնց հետ նաև մելիք Ստեփանոսը, նույն առիթով յիշատակւում են մի այլ ձեռագրի մէջ եւս (տե՛ս «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Բ, էջ 405-ի ծանօթագրությունը):

2 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Բ, էջ 405

ես Աւագս ի յիմ ձեռացս յամէն տարի աղեկ գառ մն սուրբ Գրիգորոյ եւ սուրբ Կոստընդնոյ ուխտին բերեմ անպատճառ: Եւ որ ոչ կատարէ զհրաման սուրբ ուխտիս՝ առցէ ի յահեղ դատաստանէն Քրիստոսէ Աստուծոյ մերոյ զվրէ/// թէ ուրէնեւոյ յաւիտեանս. ամէն:

Վկայ է այս բանիս սուրբ աւետարանս Քրիստոսի եւ ժողովուրդք, որ աստ յանդիպեցան:

Ես Լուսս վկայ:

Ես Միքայէլս վկայ.

Ես Ղարիպշահս վկայ.

Եւ ես Նվ[ա՞սա] Գրիգոր երէցս, որ գիրս գրեցի՝ վկայ:

Գր. ի Թվ. Հյ. ՉՂԷ. (1348), ի մայիսի ԺԸ. (18)»[1]:

2. «Ես Վարձիգուլս որդի Ամիրադինին եկի ի Մաւղնոյ վանքս՝ գրի յիշատակ իմ հոգւոյս, որ զինչ վանուցն աղուն լինի իմ ջաղացն աղցուի, որ զինչ միաբանք լինին վանքս՝ ուտեն...: Եւ միաբանք վանիցս՝ Իգնատիոս եպիսկոպոս եւ այլ աբեղայքս՝ ի տարին մէկ ժամ կատարենք Վարձիգուլին հոգուն. քանի վանքս ենք. եւ յետ մեզ հաստատուն պահողքն աւրհնին յԱստուծոյ. ամէն. եւ ով որ որ վանքս լինին՝ զայս կատարեն»[2]:

3. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱզուաշի որդին զՍմանէս, զԲուլեկ. որ զ///աձանէն դաշտապահութիւն ոսկի արարին սուրբ Քառասնից. զինչ սուրբ Քառասունք պատարագ լինի՝ խրեանց մասն եւ բաժին [եղիցի]»[3]:

4. «Քրիստոս Աստուած քո սուրբ ծնուգի բարեխաւսութեամբք ողորմեա ամենայն հաւատացելոց. ես տաւել ուսթա խալիֆին. որ յամէն տարի Բ (2) գութան է տուէր սուրբ Վարդանայ...»[4]:

5. «Յիշեցէք ի Քրիստոս զուսթայ Միրիջան՝ զՍղեբթյին եւ զխէր որդին Էւատշէն. որ ամէն տարի երկու սոլ տայ վանից մշակուն: Փոխանակ Քրիստոս զերկնից արքայութիւն տայ իւր ծնողաց եւ ամենայն արեան մերձաւորացն. ամէն»[5]:

6. «...Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս եւ Աստուած ողորմի տացէք նալբանդ Յակոբուն, որ սուրբ Սահակայ առաջնորդի ձին անվարձ նալէ, որ ոսկի արար: Զինչ որ պատարագ մատչի եւ սաղմոս ասուի ի սուրբ եկեղեցիս՝ մասն եւ բաժին եղիցի իւր եւ իւր ծնողացն. ամէն»[6]:

7. «Դարձեալ Աստուած ողորմի տացէք ուսթայ Փանոսին, եւ ծնողացն՝ հորն Շահիջանին եւ մորն Խանումին, եւ կողակցին Մարգարիտին, որ ոսկի արար զձեռն սուրբ Միրանուոր[ի], որ ինչ կողպէս թէ բալնիս շինելոյ լինի՝ շինի...»[7]:

8. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Խէքէնց Էազարն, որ Ի (20) տարի Աւուրաւ նախորդ

1 ՄՄ ձեռ. N 3793, էջ 88բ

2 ՄՄ ձեռ. N 3646, էջ 256ա, ժամանակ՝ XIV-XV դդ.

3 ՄՄ ձեռ. N 4845, էջ 1ա, XV-XVI դդ.

4 ՄՄ ձեռ. N 1524, էջ 921բ, ժամանակ՝ XV դ.

5 ՄՄ ձեռ. N 5462, էջ 314բ, ժամանակ՝ XVII դ. սկիզբ

6 Ե. Լալայեան, Ցուցակ, էջ 680, գրառման ժամանակը՝ անյայտ

7 ՄՄ ձեռ. N 4749, էջ 350բ-351ա, ժամանակ՝ XVII դ. սկիզբ

հկայց եւ վանաց նախիրն ոսկի եւ նուէր արար սուրբ Գէորգայ դրանն. ար[ա]րիչն Աստուած զինքն աւրհնէ... եւ զայն մարդ, որ նախորդ կենայ՝ նայ զայս ոֆ[ի]ս[ն] [տ]եղն պահէ. թէ չէ՝ նայ ի սուրբ Գէորգէն սեւերես լինի...»[1]:

9. «Դարձեալ յիշեցէք... տանուտէրն՝ գեներկարար Էմնազին... զսուրբ Պօղոսու քահանայից ներկ Թարխան արար»[2]:

Ինչպէս տեսնում ենք, վանական հաստատութիւնների օգտին անվարձ որեւէ ծառայութիւն կատարելու յանձնառութեան մասին վակֆերը վերաբերում են տնտեսական գործունէութեան ամենատարբեր մարզերի՝ վանքի լուսաւորութեան համար ձէթ հայթայթել, տարին մի գառ նուիրել, վանքի աղունն աղալ առանց վարձի, յանձն առնել վանքի դաշտերի պահպանութիւնը, տարին 2 օր սեփական գութանով ու լծկաններով հերկել վանքի վարելահողը, տարին երկու սոլ (տնտաման) տալ վանքի մշակների համար, անվարձ պայտել վանահօր ձին, անվարձ շինել վանքի համար անհրաժեշտ կողպէքներն ու բանալիները, անվարձ արածեցնել վանքի նախիրը, անվարձ ներկել քահանաների բուրդն ու հալաւը եւ այլն, եւ այլն:

Նման բովանդակութիւն ունեցող բոլոր վաւերագրերի տուեալները, լրացնելով մէկը միւսին, կարող են մեծապէս նպաստել միջնադարեան Հայաստանի վանական տնտեսութիւնների գործունէութեան տարբեր բնագաւառների ուսումնասիրութեանը:

Նուիրաբերական գրառումների շարքում առանձնայատուկ տեղ ունեն նաեւ այն վաւերագրերը, որոնք շարադրուած են դրամական վակֆերի կապակցութեամբ: Ծանօթանանք այդ կարգի մի-երկու վաւերագրերի հետ:

1. «Ի թուին ՋԽ (1491) եւ նոյեմբեր ամսոյ ԻԷ (27): Ես մղտսի Կուլխատուն ծառայս Աստուծոյ՝ սուրբ Թորոսու եկեղեցոյն ծառայ եմ եւ հնազանդ, իմ սրտի կամաւս Ռ (1000) ապ[ի]տակ[] կու տամ, որ ամէն տարի գիս յիշեն քահանայքն ժամ առնելով եւ Աստուած անեղ ասեն...: Եւ տան զայս սպիտակս ամէն տարի ի մէկ տանուտէր եւ զկաթն առնուն քահանայքն եւ աստուած անեղ ասեն...:

Այս բանիս վկայ տէր Պետրոսն սուրբ Գորգու.

Այս բանիս վկայ տէր Յակոբն Խոճին եկեղեցուն.

Այս բանիս վկայ տէր Ղազարն սուրբ Թորոսու.

Այս բանիս վկայ պարոն Հարիբաւագ Նիկաւղոսն.

Այս բանիս վկայ պարոն Պաւրաշն.

Այս բանիս վկայ պարոն Խուբլուպէկն.

Եւ ես Յոհաննէս աբեղայս այլ վկայ ///, որ գիրս գրեցի»[3]:

2. «Ի թուին ՋՂԹ (1550)...

Աստուած աւրհնի Աղբիգան պապային զուստր, որ եբէտ, սուրբ Թորոսու յիշատակ Ռ (1000) ապ[իտակ]՝ իր մոր հոգւոյն յիշատակ անջնջելի. Աստուած անեղ ասելով: Կատն (իմա՝

1 ՄՄ ձեռ. N 5805, էջ 333բ, ժամանակ՝ ճաւանաբար XVI դ.

2 Ն. Ջուղա. ձեռ. N 544, ՄՏՄ, ժամանակ՝ ճաւանաբար XV դ.

3 ՄՄ ձեռ. N 7449, էջ 498

կաթն) առնուն՝ Ճ (100) եկեղեցոյ, Ճ (100) իրիցներուն Աստուած անիցի»[1]:

3. «Ես վանեցի տէր Ըստէփանոս ԺՌ (10000) դկ. (դահեկան) սուրբ Խաչիկ յաւետարանին տուի. որ տաճարի տեղն չինեն՝ խարճեն, յիշատակ իմ հաւր Մխիթարին, իմ մաւր Խանազին, եղբայր Աւոմին, Աստուածայատուրին, Ախիճանին, Գիրիգորին, իմ որդոյ Աւոմին. Աստուած ընդ երկայն աւուրց անէ. ամէն, հայր:

Թվկ. ՌԼԴ. (1585) էր, փետրուարի Ժ (10)-էն աւրն...»[2]:

Այս վաւերագրերից ուշագրաւ են յատկապէս առաջին երկուսը, որոնք գրանցուած են, հաւանաբար, Ղրիմի Կաֆա քաղաքում: Բուն Հայաստանի վանական հաստատութիւններին արուած դրամական նուիրաբերութիւնների մասին մեր ձեռքի տակ եղած մի շարք համանման գրառումներից եւ ոչ մէկը տեղեկութիւն չի պարունակում նուիրաբերուած գումարի շահով տալու եւ տարեկան ստացուող վաշխի տոկոսի մասին: Վերը բերուած երկրորդ վաւերագրից յայտնի է դառնում, որ 1000 սպիտակ գումարը տարին բերում էր 200 սպիտակ, այլ խօսքով՝ 20 տոկոս շահ:

Առաջին վաւերագրի «եւ տան գայս սպիտակս ամէն տարի ի մէկ տանուտէր» արտայայտութիւնից կարելի է արտաբերել, որ Ղրիմում կային վաշխառուական գործարքներ կատարող հայ գերդաստաններ:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում «կաթն» տերմինը, որը Ղրիմի վաւերագրերում գործ է ածուած մայր գումարի ամէն տարի բերող շահի իմաստով:

Մ. Կովալեւսկին իր «Օրէնքն ու սովորոյթը Կովկասում» ուսումնասիրութեան մէջ կանգ է առնում կովկասեան լեռնականների (բալկարներ, օսեր, կարաչայցիներ) միջավայրում շահի հաշուարկման հետաքրքիր եղանակի վրայ. «Նրանց մօտ,- գրում է Կովալեւսկին,- շահոյթի հաշուարկման հիմքում դրուած է կովի բնական աճը, դրա հետ մէկտեղ հաշուած եւ այն ենթադրութեամբ, որ տալիս է նա կաթի եւ պանրի ձեւով»[3]:

«Կաթն» հայկական տերմինի գոյութիւնը «շահ», «տոկոս» նշանակութեամբ հնարաւորութիւն է տալիս ենթադրելու, որ հնում շահի հաշուարկման այդպիսի մի եղանակ կիրառուել է նաեւ հայկական միջավայրում:

Միւսական բովանդակութիւն ունեցող ձեռագրերի էջերին գրանցուած տնտեսական բնոյթի գրառումների մի պատկառելի մասը պայմանագրեր են: Որպէս պայմանաւորուող կողմեր հանդէս են գալիս ինչպէս տարբեր վանական հաստատութիւններ կամ որեւէ վանական հաստատութիւն՝ մի եւ գիւղական որեւէ համայնք՝ միւս կողմից, այնպէս էլ առանձին անհատներ: Բնականաբար, տարբեր են նաեւ այդ կարգի վաւերագրերի շարադրման ձեւերը:

Յատուկ հետաքրքրութիւն են ներկայացնում վանական հաստատութիւնների եւ գիւղական համայնքների հողային ու ջրային վէճերի մասին տեղեկութիւններ պարունակող վաւերագրերը, որոնք պարզ լոյս են սփռում իրենց հողեւոր տէրերի դէմ հայ գիւղացիութեան մղած սոցիալական պայքարի դրուագների վրայ:

1 ՄՄ ձեռ. N 7449, էջ 498: Նույն այս ձեռագրում, որ գրված է ճաւաճարար Ղրիմի Կաֆա քաղաքում, կան նման գրառումներ նաեւ 1503, 1541, 1543, 1544, 1546, 1557 թթ.:

2 Հ. Աճառեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 74

3 Максим Ковалевский, Закон и обычай на Кавказе, т. 1, М., 1890, с. 208

Մանօթանանք այդ կարգի մի-երկու վաւերագրերի հետ.

1. «Ի թվ. Հայոց ՋԼԶ (1487):

Այս է վանից սնոր կնդուզոն՝ արգի եոր եւ սաման խաչ եւ Բարաշար եւ Կուսանաց սար. եւ գայ ձորն. ձորէ մինչեւ ի խաչի արգի ճանապ/// էս մինչեւ Տորունս արգի գլուխ:

Այս բանիս եմ՝ տէր Խաչատուր վկայ. եւ ուլս Թառ/// վկայ եղեւ մենք հաստատութիւնն այս բանիս մենք /// վկայ: Եւ այս բանիս ով հակառակ կայցէ՝ Ուղայի եւ Կայէնին տացէ, ամէն»[1]:

Վաւերագիրը շարադրուած է շատ անսրբագլա ձեռագրով, որոշ բառեր մաշուած են ու անընթեռնելի, այնուամենայնիւ բովանդակութիւնը, իր հիմնական գծերով, պարզ է:

Ինչ-որ վանքի հողային սահմանների շուրջ վէճեր են տեղի ունեցել վանքի եւ մօտակայ գիւղի բնակիչների միջեւ: Վանականներին յաջողուել է պարտադրել իրենց կամքը եւ շարադրել տալ վանքի սահմանները ճշգրտող այս պայմանագիրը, որի «ճշտութիւնը» հաստատուել է գիւղի «հասարակութեան» կողմից՝ յանձինս քահանայի եւ ռեսի: անէծքի ուժով վանքն ամրացրել է իր ձեռք բերածը:

2. «Թվն. ՌԽԶ (1597), ես՝ Բարսեղ վարդապետս, ի ժամանակս Հալլա խանին բերդակցիք եւ նորշենցիք տագեցին (" ադաւաղ բառ) առնուլ դջուր. ԵՃ (500) ղուռուշ խարճեցի եւ ուրբ Առաքելոց օգնականութեամբն յաղթեցի նոցա եւ զաւթ արի, եւ ամենեքեան հնազանդեցան եւ անկան: Ով որ եկեալ կրկին ջանայ ջրին՝ զանէծս Կայէնի եւ Յուդայի տացէ եւ հոգով, մարմնով եւ որդով զրկեսցի յողորմութենէն Աստուծոյ եւ ի սրբոց առաքելոցն, եւ Յիսուսէ՝ տեառնէ մերմէ նզովեալ լիցի առ եւ ի հանդերձեալն, ընդունողք գրոցս օրհնեալ լիցին, ամէն»[2]:

Ձեռագիրը, որի զատորդ մի էջի վրայ գրանցուած է այս ուշագրաւ փաստաթուղթը՝ Մշոյ Առաքելոց վանքի նշանաւոր Տօնականն է (ամենախոշոր հայերէն ձեռագիրը):

Բարսեղ վարդապետը՝ Առաքելոց վանքի վանահայրը կամ հոգեւորական միաբաններից մէկը, 1597 թ. 500 ղուռուշ ծախսելով կարողանում է վանքի սեփականութիւնը դարձնել («զաւթ» անել) ջրանցքը (կամ առուն), որից օգտւում էին նաեւ Բերդակ եւ Նորշէն կոչուող գիւղերի բնակիչները: Եղեռնապատիկ անէծք է թարգուում իրենց տնտեսական շահերի պաշտպանութեան համար Առաքելոց վանքի դէմ ելած գիւղացիների գլխին, եթէ նրանք այնուհետեւ եւս համարձակուէին փէճ բացել այդ ջրի համար («Ով որ եկեալ կրկին ջանայ ջրին՝ զանէծս Կայէնի եւ Յուդայի տացէ»):

3 «Գրեցաւ գիրս ի Ջրրաշէն, ի դուռն սուրբ Աստուածածնին, ձեռամբ Աւետիս վարդապետին Ակըբեցոյ, եւ կամակցութեամբ հայր Կարապետին, եւ գիւղի քահանայից եւ գլուխմաւորաց մարիֆաթով... (նշուում են գիւղի քահանաների եւ գեղաթաւորների անունները), վասն արտերաց, որ է Բանկի ձորումն ի յայն գեհն, որ այլ եւ ոչ լինի, թէ մերաց եւ թէ յատարաց, թէ առաջնորդ[ա]ց, թէ քահանայից, թէ յաշխարհականաց եւ որոց հմուտ գիտութեան արտերացս, զոր գրեցաք այլ եւ այլ արտացէ՝ երեք հարիւր եւ Ժ. եւ Ը. հայրապետաց նզովեալ եղիցի. ամէն:

1 ՄՄ ձեռ. N 9223, Ն, էջ 6բ

2 ՄՄ ձեռ. N 7729, էջ 2ա

Ի Թուականութեանն Հայոց ՌՃ° (1651°)...»[1]:

Այս վաւերագիրը եւս շարադրուած է սահմանավէճերի կապակցութեամբ: Ջղրաշէնի քահանաներն ու «գոլլաթաւորները» հանդէս գալով գիւղական համայնքի անունից, պարտաւորւում են այլեւս վէճ չբացել «Բանկլի ձորովն ի յայն դէհն» գտնուող արտերի վերաբերմամբ, ընդունելով, որ դրանք պատկանում են Ջղրաշէնի Ս. Աստուածածնի վանքին: Վանական հաստատութիւնների եւ գիւղական համայնքների միջեւ հողի ու ջրի համար մղուող տեւական պայքարի մասին են վկայում նաեւ մի շարք այլ վաւերագրեր, որոնք առաջին հայացքից թողնում են սոսկ այս կամ այն վանքի տարբեր գիւղերում ունեցած վարելահողերի թուարկման տպաւորութիւն:

Այդ կարգի վաւերագրերի վերջում գրանցուած անէծքի բանաձեւերը, ուղղուած բոլոր նրանց հասցէին, ովքեր երբեւէ կհամարձակուեն հակառակել եւ չընդունել այդ վարելահողերի պատկանելութիւնը վանքին, ըստ ինքեան վկայութիւն են այն մասին, որ դրանք եւս՝ վերը բերուած առաւել ցայտուն օրինակների նման, շարադրուած են վանականների կողմից, իրենց կամքը շրջակայ գիւղերի համայնքներին թելադրելու եւ այդ համայնքների հողային ֆոնդի մէջ մտնող մի շարք արտերի մշտապէս տիրելու նպատակով: Ծանօթանանք այդպիսի երկու վաւերագրերի հետ, որոնցից առաջինը շարադրուած է Խառաբաստի վանքում, 1420 թ. առաջ (մինչեւ Կարա Իւսուֆի մահը), իսկ երկրորդը՝ Ռշտունիքի Կարմրակ սուրբ Աստուածածնի վանքում, 1602 թ.:

1. «Ի Ղանութեան Ղարայ-Իւսուֆին, եւ ի պարոնութեան Իսպին, եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս Կարապետ վարդապետի՝ տուաւ նպաթլամով մուլք՝ Ի (20) մութ (իմա՝ մոթ) ոստին ի Կորած-քար Սուրբ աստուածածնիս, ի գիւղն Անիշատ՝ ի շինամէջ՝ երեսուն մութ տեղ ջրով, քառն մութ՝ ոստին, ի Կորած-քար Ժ (10) մութ ջրով, Ի (20)՝ ոստին, ի Փակաճ՝ ԺԵ (15) մութ տեղ, ի Հայրիկէ՝ ԺԵ (15) մութ տեղ, ի Վառնջիկն՝ Երկու-խաչ արտն, երկու ակն ջաղաց, ի Բոլորամարգն՝ Ա (1) արտ, ի Բլուրն Ա (1) արտ, յԱկանց՝ Դ (4) արտ, յԻրիշատ՝ Ա (1) արտ, ի Մկնաւերն՝ Բ (2) արտ, ի Խառաբաստ՝ Զ (6) արտ, Բ (2) ջաղաց, ի Սոսկուն Բ (2) արտ, ի Գանձակ՝ այգի մի:

Ով որ հակառակ լինի՝ զանէծքն Ուդային առնու, եւ որ կամակից լինի՝ օրհնի յԱստուծոյ եւ յամենայն սրբոց» (Ղ. Փիրղալեմեան, Նոտարք հայոց, էջ 31-32):

2. «Թուին [Ռ]ԾԱ (1602).

Ի Նորիգեղ Քուրտիկանց երկան արտ, Սաթօի գուրու պատ... Մ[ա]րգ[ա]րի ճոթ, արջախո[ր]երն, Սիմոնի տուաւիկ, Կռեթին գոմկներ, Փիրի գոմկներ, տուաւիկ արջահորերն, Ղազոյի գոմկներն տուաւիկ, գանձգին, Քամալի տուաւիկ, Առաքելի ցնին, Կարոյի ցնին, Մուրատի խաչի արտ, Կիրակոսի բոլորիկ [ա°րտ], Խլոի գանձգին, Տարմօնց արջահորեր, Մարտոյի ցնին, Քաղպարի գանձգին, Շաղպանի արեգդէմն, Գլուկանի արտն, Աստուածամօր ճոթ: Գորգիս Սանդուքարով վեր մինչեւ արեգդէմն, մինչեւ ծմէն՝ ամենեքեան սոքա արծաթագին են՝ ի դուռն սուրբ Աստուածածնին եւ Կարմրակ սուրբ Նշանին եւ սուրբ Սահակայ գերեզմանին վախմ է տրուած, որ հակառակ կացցէ՝ ատենին Քրիստոսի պատասխանի տալոց է: Աստուած զայն տանուտէր օրհնէ, որ անտրտունջ Աստուածածնա տասանորդ տա սպաս[ւ]որի ձեռն, որ վանից պէտան հոգացէ: Եւ որ հակառակէ՝ զանէծք Կայէնի առցէ. հքուն ԺԲ (12) քիլա

1 ՄՄ ձեռ. N 4782, էջ 2բ

ցորեն է:

/// եւ Սանդուքարով վայր՝ մինչեւ ծովու յափ Սուլթզանին թեւ թեւ, մինչեւ Շոռատան գլօխ, Գոտնց դաշտ /// (մի անընթեռնելի բառ) ջուր վանից ոխվ է [ա°րած], որ հակառակէ անէծք եւ պատիժն Կայէնի առցէ»[1]:

Պայմանագրային բնոյթ ունեցող վաւերագրերի շարքում կան նաեւ իշխող ու ենթակայ վանքերի, ինչպէս նաեւ վանահօր ու միաբանների միջեւ ծագած վէճերը հարթելու, կամ համապատասխան փոխհատուցում ստանալուց յետոյ որեւէ արտօնութիւն շնորհելու մասին գրառումներ:

1457 թ., օրինակ, Աբրահամ վարդապետից ստանալով չորս գոմէշ եւ չորս եզ, Աղթամարի վանքը պարտաւորւում է այնուհետեւ չպահանջել Ռշտունիքի Գանձակ գիւղի մօտ գտնուող Թովմա առաքեալի վանքից «աջհամբուրի փարայ» կոչուող եկեղեցական տուրքը[2]: Գաբնից վանքի վանահայր տէր Հայրապետը Աղթամարի Ստեփանոս կաթողիկոսից (1465-1489) գնում է «Կողոպուտ» կոչուող եկեղեցական տուրքից Աղթամարին այլեւս մաս չհանելու իրաւունքը[3]:

Վանքերի եկամուտների մեծագոյն մասը սեփականելու ձգտում ունեցող վանահայրերի ու առաջնորդների եւ շարքային միաբանների միջեւ տնտեսական հողի վրայ առաջ եկող վէճերի ու դժգոհութիւնների մասին է վկայում 1608 թ. շարադրուած, ստորեւ բերուող իւրայատուկ «պայմանագիրը»:

«...Յիշեցէք ի Քրիստոս զտէր Գրիգոր եւ զիւր հօրեղբայրն զԱսգանդարն, եւ զիւր ծնօղն զԹուրւանդէն, որ զահմաթաւ զվանաց տօգանքն՝ զպակղրամն, զխաչխամբուրն՝ զամէն բաշխեց վանից միաբանին, սուրբ Գամաղիէլի վկայութեամբ, ինչ մարդ որ վանից հայր լինի, որ զայս բաներս դարձուլ չառնէ՝ զանէծք զԿայէնին առնէ եւ զպատիժն զՅուդային եւ զխաչհանողացն, ամէն, եղիցի, եղիցի:

Ի Թուին հայոց ՌԾԷ (1608)»[4]:

Գիւղական համայնքի ներսում, մի կողմից ռեսների, քահանաների եւ ազդեցիկ տանուտէրերի, միւս կողմից շարքային գիւղացիների միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնների ու պայքարի մասին մութ ակնարկներ են պարունակում սակաւաթիւ այն վաւերագրերը, որոնցով ռեսները պարտաւորւում են վերացնել ապօրինի որոշ տուրքեր, թեթեւացնել որոշեալ չափից աւելի գանձուող որոշ հարկեր եւ անձամբ մասնակցել այդ հարկերի վճարմանը:

Ծանօթանանք XV-XVI դդ. շարադրուած այդ կարգի մի վաւերագրի հետ.

1. «Քրիստոս Աստուած աւրհնէ զըռես Ստեփանոսն եւ զիւր որդիքն, որ ողորմեցաւ գեղիս Մթայ եւ եթող զաղչկան յաղկն, որ ի գեղատանին եւ դշանիգաղէն, եւ զմեր շարաֆի /// ըռէսն ի հետ գե[ղ]էն տայ եւ զաւերանիքն ի վերայ գեղիս չի դնէ: Քրիստոս Աստուած զինքն աւրհնէ եւ զիւր որդիքն եւ զիւր եղբարքն, եւ զգեղի տանուտէրք, որ կամակից եղան՝ զէս բաղադաթս ի գեղէս ի վեր կալին: Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն եւ իւրեանց ծնաւղացն, ա-

1 ՄՄ ձեռ. N 5454, էջ 321ա
2 Այդ մասին կազմուած համաձայնագիրը տե՛ս Ղ. Փիրղալեմեան, Նոտարք հայոց, էջ 186-187:
3 Ե. Լալայեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 672
4 ՄՄ ձեռ. N 5462, էջ 314ա

մէն:

Ով որ յիրար տայ, կամ առնու, կամ ի յաւան ձգէ, նոյ զանէծն զԿայէնին առնու եւ զպատուհան զՅուդային եւ զխաչհանողացն, եւ զբարկութիւն Աստուծոյ ի վերայ իւրն բերէ եւ ի վերայ սանն. ամէն»[1]:

Ուշագրաւ է 1596 թ. շարադրուած նման բովանդակութեամբ մի այլ վաւերագիր, այստեղ ասւում է, որ Կոկոս անունով մէկը, գանելով Բասո գեղի անծ, «պարտ մեծ բարութիւն», «վերուց ի գեղէն զչափ ցորէն այրյան, որ ամէն տարի չափ մի ցորէն կու տային ի յրաչան ոյնյան, վասն որոյ զմատու ածեալ զոր մաշուն Կոկոսն եւ զերկիւղն Աստուծոյ եւ վերաց զայն չար զարալն ի գեղէն»[2]:

Այս եւ նման մի շարք այլ գրառումները հնարաւորութիւն են ընձեռում ստուերագծելու միջնադարեան հայկական գիւղական համայնքի ներքին կեանքի ու սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների պատկերը, մի բան, որ անհնարին էր կատարել այլ կարգի սկզբնաղբիւրների միջոցով[3]:

Որոշակի արժէք ունեն նաեւ անհատ անձնաւորութիւնների միջեւ կնքուած պայմանագրերը, որոնք վերաբերում են տնտեսական գործունէութեան ու հասարակական եւ ընտանեկան յարաբերութիւնների տարբեր բնագաւառների:

Այդպիսիներից է, օրինակ, կաթողիկ վանական Պետրոս Սալիթաղեցու եւ ոմն Մխիթարի որդի Խաչիշահի միջեւ 1442 թ. կնքուած պայմանագիրը՝ ջրաղաց կառուցելու մասին: Ծանօթանանք պայմանագրին.

«Յանուն Աստուծոյ: Յամի տեառն ՊՂԱ (1442), ես ֆ[րա] Պետրոս Սալիթաղեցի՝ որդի Թուարային, հետ Խաչիշին՝ որդո Մխիթարին շինեցինք զջրաղացն ի Թաջառին հողումն: Տեղն Խաչիշին էր եւ տուի ի տեղն վանիցս: Մեք զամենայն պիտոյքն, այսինքն՝ զքարն, զերկաթ, զհացն, եւ զայլ ամենայն փայտերն, որ ի պէտք է շինութեանն, զամենայն մեք պատրաստեցինք եւ շինեցինք Բ (2) վանիցս, Ա (1) Խաչիշին: Յառաջի՝ շինութեանս յետեւ զինչ պակասութիւն լինի՝ նա Բ (2) բաժինն կանցնի եւ, մեր՝ Դ (4) բաժինն: Ով որ ուխտի խաւսի կամ բան՝ յաւելցու Աստուած զամենայն հարուածս, զոր ի սմա գրեալ է, եւ թէ պակասեցուցեն՝ պակասեսցին ի գրոյն կենաց, ամէն»[4]:

Այ՛ս գործարքը շատ բնորոշ է ֆեոդալական յարաբերութիւնների պայմաններին. Խաչիշահը կառուցուող ջրաղացի 1/3 մասի փայատէր է դառնում, լինելով միայն այն հողի տէրը, որի վրայ կառուցւում է ջրաղացը: Կառուցման ծախսերն ամբողջ վերցնում է իր վրայ Պետրոս Սալիթաղեցին:

Հարեւան գիւղացիների միջեւ սահմանավէճերի առկայութեան մասին են վկայում XVI դ. վերջերին կամ XVII դ. սկզբներին շարադրուած հետեւեալ հաշտագրերը.

«Արարիչն Աստուած զտէր Սահակին աւրհնէ եւ զիւր որդիքն... զԿոստանդին աւրհնէ եւ զիւր որդիքն..., որ միջնորդութեամբ Ստեփանոս վարդապետին եւ Ներսէս աբեղին եւ տէր Բարսեղամին բարիշեցան ու միջաւորան (միջորա՞ն) փուշ տնկեցին, որ շիտակ կենայ՝ ոչ ի գէն կղի, ոչ ի գէն, բայց փուշ Կոստանդին է, որ այլ ու այլ խաւսար չի լինի: Ով որ ի խոսաց ելնու՝ նզովեալ եղիցի»[1]:

Ձեռագրերի էջերին գրանցուած պայմանագրերից մի քանիսը զգալի հետաքրքրութիւն են ներկայացնում ազգագրութեան համար:

1387 թ., օրինակ, պահպանուել է մի գրանցում, որով Մարգարէ անունով մի երիտասարդի ծնողներ իրենց որդուն յանձնում են ոմն Մովսէս քահանայի «մինչեւ իմահ», պայմանով, որ նրան, ի վերջոյ, երէց դարձնի[2]:

Յայտնի է, որ Միջնադարեան Հայաստանում արհեստաւորների եւ նրանց աշակերտների ծնողների միջեւ կնքուել են պայմանագրեր ուսուցման ժամկէտի ու պայմանների մասին[3], սակայն դրանցից եւ ոչ մէկը չի հասել մեզ, այդ իսկ պատճառով այս իւրայատուկ եւ եզակի պայմանագիրը որոշակի արժէք է ստանում եւ արժանի է մէջբերման.

«Յանուն Աստուծոյ ես Ովաննէս եւ կողակիցս իմ Թանգասեղ տուինք մեր ամուսնութեամբ զմեր որդիս Մարգարէ՝ հոգոյ որդի Մովսէս քահանայիս՝ մինչեւ ի մահն, որ երէց առնէ. վկայութեամբ Արաւկանայ՝ Ակիփկայ որդոյ, Բեկիկայ՝ Խաչատայ Լարեցի (՞): Զինչ մարդ, որ զայս բանս խափանէ՝ ՅԺԸ. հայ[րապետաց նզովեալ եղիցի՞]:

Ես Խաչատուր երէցս վկայ, որ զգիրս գրեցի»[4]:

Նոյն այս ձեռագրի նոյն էջի վրայ գրանցուած է մի այլ պայմանագիր եւս. ոմն Արխութա իր զաւակը տալիս է հաւանաբար նախորդ գրութեան մէջ յիշատակուած նոյն Մովսէս քահանային: Ի՞նչ պայմանով է կատարուել այս տարօրինակ «նուիրաբերութիւնը»՝ մութ է մնում: Կարելի է միայն մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ տնտեսական խիստ ծանր վիճակն է ստիպել Արխութային այդպէս տնօրինելու իր զաւկի ապագան, որը քահանայի գերդաստանում, ըստ երեւոյթին, լինելու էր աղախնի ստորադաս վիճակում:

Ստորեւ բերում ենք այդ յուրօրինակ ու սեղմ շարադրուած համաձայնագիրը.

«Յանուն Աստուծոյ ես Արխութայ՝ Մայլիքայ որդի միաբանեցայ սուրբ Աւետարանիս ու տուի զիմ աղջիկս՝ զէշայն՝ Մովսէս երիցոյ: Ով խափանէ՝ դատի Աստուծոյ: Ով կարդէք լի բերանով ասացէք Աստուած - ողորմի Մայլիքայ, ամէն զա[ւ]րութէն պահեսցի խորին ծերութեանն[5]:

Պայմանագրեր են պահպանուել նաեւ որեւէ մէկին հոգեւոր որդի կամ եղբայր դարձնելու մասին:

Ոմն տէր Գրիգոր, XVI դ. շատ անգրագէտ ձեռագրով, այսպիսի մի գրանցում է թողել Մատենադարանի N 4948 ձեռագրի դատարկ մի էջի վրայ. «Ես՝ տէր Գրի[գ]որս գիր տուի

1 ՄՄ ձեռ. N 4814, էջ 129ա

2 Ա. Սիրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի, առաջին հատոր, 1948, էջ 358-359

3 Այս աշխատանքը մասամբ կատարուած է մեր կողմից (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1958 թ., N1, էջ 110-133 եւ «ԺԱ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն Բ, 1958, էջ LXXXVIII-CV):

4 Ն. Ջուղա, ձեռ. N 481՝ քաղուած Ս. Տէր-Աւետիսեանի ձեռագիր ցուցակից:

1 ՄՄ ձեռ. N 5371, էջ 2ա

2 ՄՄ ձեռ. N 6288, էջ 111բ

3 Տե՛ս մեր «Արհեստագործութեան վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում Ժ-ԺԴ դդ.» յօդուածը («Տեղեկագիր», 1958, N 3, էջ 43-44):

4 ՄՄ ձեռ. N 6288, էջ 111բ

5 Նոյն տեղում

Զայգոյին իմ հոգիս հոգոյէք Կէտէվանի ձեռովն: Մեծ որդին Զէկէլ, Ա. որդին Զայգոյն, Ա. որդին Ոյհանէս: Ինչվէն ես մեռ[ն]իմ ձեր բայժան չակայ, որ մեռնիմ՝ դուք գիտէք, թէ քո բաժանիք»:

Գրեթէ ոչինչ չէր հասկացուելու, եթէ նոյն այս տողերի տակ մի այլ մէկը, վարժ ձեռագրով ու աւելի պարզ շարադրանքով չէրկնէր վերը բերուած պայմանագիրը, նրան տալով այսպիսի կերպարանք.

«Ես՝ տէր Գրիգորս գիր տուի, Զաւէին որդի վեր կալայ. Գ. (3) աղբէր յլինին՝ հողի, ջրի, յիգուն, կարասի, ապրանքի.ով որ սուտ դուրս գայ՝ ակէերես ինձ գայ: Ես տէր Գրիգորս վկայ եմ. Աստուած յել որդի տայ, յէն յէլ յիրանց աղբէր իլի»[1]:

Ձեռքի տակ ունենք նաև XVI դ. շարադրուած մի համաձայնագիր Մկրտիչ երէցի եւ Կիրակոս դպրի միջեւ. առաջինը պարտաւորւում է երկրորդին «հոգեւոր եւ հարազատ» եղբայր դարձնելու, «մինչեւ մահ եւ կեանք»: Եթէ երբեւէ բաժանուելու հարց լինի, «նայ ինչ ես ապրանք որ ունիմ,- գրում է Մկրտիչ երէցը,- հետ նորա (Կիրակոս դպրի) կէս լինի»[2]:

Մեր հաղորդման հէնց սկզբում ասացինք, որ ձեռագրերի էջերին գրանցուած վաւերագրերի մի պատկառելի մասը կալուածագրեր են՝ անշարժ ու շարժական գոյքերի վաճառքի ու օտարման մասին արժէքաւոր փաստաթղթեր:

Դրանց շարքում առաջնակարգ նշանակութիւն ունեն Մատենադարանի N 9165 ձեռագրի 1ա-8բ էջերին գրանցուած 6 կալուածագրերը, որոնց մէջ որպէս գնորդ հանդէս է գալիս անխախտ միեւնոյն անձնաւորութիւնը՝ Աւիբէկի որդի պարոն Միրիման-բէկը, իր Շահեսի, Զուրապ եւ Աւթանդիլ որդիների հետ միասին:

Կալուածագրերից միայն մէկը (6բ էջի վրայ գրանցուածը) ունի թուական՝ ՌՃԺԹ (1670), ուստի դրանք բոլորն էլ գրուած են մերձաւորապէս նոյն տասնամեակներում, XVII դ. երկրորդ կէսին:

Միրիման-բէկի գործունէութեան ասպարէզը Լոռին է. կալուածագրերից շատերն աւարտւում են այսպիսի բանաձեւով. «Ով որ յետ ու առաջ տայ Լոռու հէքիմին ԺԲՌ (12000) դահեկան տայ»: Կալուածագրերից մէկում յիշատակուած է Արդւի գիւղը: Մի դէպքում որպէս վկայ, հանդէս է գալիս ոմն Վարդան պարոնէր: Այս տուեալների հիման վրայ կարելի է ենթադրել, որ Միրիման-բէկը Սանահնի կամ մօտակայ որեւէ այլ գիւղի կալուածատէրերից է եւ կալուածագրերում յիշատակուող վարելահողերը գտնուել են Սանահնի շրջակայքում: Վաճառուող կամ այլ ճանապարհներով Միրիման-բէկի ձեռքն անցած հողակտորները թուարկւում են այսպէս.

«Գ (3) օրավար հող, յԱրտւու ճանբի Դուեթի հողի վեր կռան. Բ (2) աւրավար հող աղբի[ւ]րի դիմաց. Վարդիգուլի հողի տակի Բ (2) աւրավար հողն», «Խէչէրկուտի հողն», «Բնաւռի վերին կուռն», «Նշանաքարի հողն», «Ճանբի ափանբիսի (°) վեր հողի կէսն, հին մլի վերին կռան՝ Բ (2) աւրավար հողն, Ծէնկու վանանց հողի վերի կռան հողն», «Մոխրատփկայ Բ (2) աւրավար հողն», «Թալբբիսի վեր հողն», «Ա (1) աւրավար յեղնանատի հողն, Ա (1) աւրավար միջի ճանբի տակի հողն», «Է (7) աւրավար հողիցն Ա (1) աւրավար հող»,

1 ՄՄ ձեռ. N 4948, էջ 1բ

2 ՄՄ ձեռ. N 1625, էջ 1ա

«Հատիտոպրակի վանանց հողի վերի կռան հողն», «Կէչի հողի կէսն», «յԱւձանբերի Ա (1) աւրավար հողն»:

Կալուածագրերից մէկը եզակի է իր բովանդակութեամբ. այն չի վերաբերում վարելահողի վաճառքի:

«Ես Թումանի որդի Բայրամս, իմ աղբէր Շահնազարն Միրիմանին պարտքն պարտ էր. իր որդի Գոհարն իր պարտքումն տուի. պակաս հախն էլ առայ, մեր կարեցն արի, այլ ոչ ում բան չկայ, տուինք Միրիմանին եւ իւր որդայն: Ով որ յետ ու առաջ տա Գ. (3) թուման հէքիմին (միւս կալուածագրերում գրուած է՝ Լոռու կամ Լաւռու հեքիմին - Լ. Խ.) տուող ըլի:

Գրիգոր փեսայ Թամազն վկայ. ես Թումանչէս գիրս գրեցի վկայ եմ»[1]:

Ինչպէս պարզ է դառնում այս կալուածագրից, Թումանի որդի հանգուցեալ Շահնազարը պարտք է վերցրած եղել Միրիման-բէկից: Ոչինչ չունենալով եղբօր պարտքը մարելու համար, Բայրամը Միրիման-բէկին է տալիս Շահնազարի որդի (°) Գոհարին: Հասկանալի է, որ այդ Գոհարը դառնում է Միրիման-բէկի ճորտը:

Կարելի է ենթադրել, որ իրենց հողակտորների կամովին վաճառողների դերում հանդէս եկողներից շատերը ստիպուած են եղել այդ գործարքը կատարելու, նոյնպէս լինելով անվճարունակ պարտապաններ:

Այսպիսով, կարճ ժամանակամիջոցում, Լոռուայ հայ կալուածատէրերից մէկը, փաշխառուի իր ցանցի մէջ ձգելով մի շարք գիւղացիների, ընդարձակում է իր կալուածքները նրանց վարելահողերի հաշուին:

Ձեռքի տակ ունենք նաեւ աւելի հին կալուածագրեր. 1483 թ.՝ մի արտի վաճառքի մասին (ԽՍՀՄ ԳԱ արեւելագիտ. ինստ. ձեռ. N C-56), Բեններոց Ջրաղացի 4 բաժնի վաճառքի մասին[2], բազմաթիւ ձեռագրերի վաճառքի մասին (օրինակելի ձեւով է շարադրուած N 2846 ձեռագրի 149ա էջի վրայ գրանցուածը), կովի եւ այլ շարժական ու անշարժ գոյքերի վաճառքի մասին:

Սովորոյթային իրաւունքի նորմերի ուսումնասիրութեան կապակցութեամբ այս կարգի վաւերագրերը մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում: Ծանօթանանք, օրինակ, կովի վաճառքի մասին կազմուած վաւերագրի հետ.

«Ես Մարտիրոս իմ կովն ծախեցի… թէ որ ծնեցօ՝ իր կովն է, թէ չէ՝ որ յղի չլօ, էն կովն յիս տայ՝ մէկէլն տանի:

Յակոբն վկայ, Ներսէսն վկայ, Մարտիրոսն վկայ, Խաչ Մէլէքն վկայ, որ գիրս գրեցի է կիրակի օրս»[3]:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ մասի ԾԷ յօդուածով նոյնպէս մէկ տարուայ ժամկէտ է սահմանւում կովի վաճառքը վերջնական համարելու համար:

Ձեռագրերում հանդիպում են նաեւ պարտամուրհակներ (1333, 1504, եւ 1536 թթ.), վաշխառուի գրանցումներ (XIV դ.), վանքերի թեմերի ցուցակներ եւ այլ կարգի վաւերագրեր,

1 ՄՄ ձեռ. N 9165, էջ 5ա

2 ՄՄ ձեռ. N 5196, էջ 297ա

3 ՄՄ ձեռ. N 5163, էջ 280բ

որոնք լինելով հայերէն լեզուով գրուած այդ կարգի փաստաթղթերից հնագոյնները՝ եզակի արժէք են ստանում:

Մենք ստանձնեցինք ձեռագրերի մէջ գրանցուած վաւերագրերը ըստ իրենց հիմնական տեսակների (նուիրաբերական գրառումներ, պայմանագրեր-համաձայնագրեր, կալուածագրեր) ներկայացնելու եւ բնութագրելու աշխատանքը:

Դրան զուգընթաց ձգտեցինք համառօտակի ցոյց տալ այդ վաւերագրերի նշանակութիւնը սոցիալ-տնտեսական կեանքի որոշ մութ կողմերի լուսաբանման համար, այն չափով, ինչքան հնարաւոր էր այդ կատարել վաւերագրերի խմբաւորման ու տեսակաւորման հետ զուգընթաց:

Մեր ձեռքի տակ եղող վաւերագրերի գիտական նշանակութիւնը, սակայն, բնաւ չի սպառւում վերոյիշեալով: Այդ վաւերագրերը փաստեր են պարունակում XIV-XVII դդ. գանձուող հարկերի ու տուրքերի ուսումնասիրութեան համար: Կան մի շարք հարկային տերմիններ, որոնք այլ աղբիւրներից յայտնի չլինելով՝ գիտական շրջանառութեան մէջ են դրւում քաղուելով հէնց այն վաւերագրերից: Դրանցից շատերը, լինելով ընդհանուր հարկային տերմիններ, հնարաւորութիւն են ընձեռում լուսաբանելու տիրող դինաստիաների հարկային քաղաքականութեան որոշ կողմերը ոչ միայն Հայաստանում, այլեւ հարեւան երկրներում:

Այս հարցերին անդրադարձել ենք մեր մի այլ ուսումնասիրութեան մէջ[1]: Աւելորդ չենք համարում, սակայն, այստեղ եւս մէջբերելու քննարկուող վաւերագրերից քաղուած հարկային տերմինների այբուբենական ցանկը, որոշ յաւելումով ու խիստ համառօտ բացատրականներով.

Արգան - ջրային հարկ (ըստ Ս. Բարխուդարեանի).

Ալեղ, ալեղան - անասնակեր, ձիերի համար պահանջուող կեր.

Աղջկան յաղկ - հաւանաբար նոյնն է «հարսանեաց դրամը» (տե՛ս).

Բադադամ, բադխամ - նորահնար, ապօրինի պահանջմունք (այդպիսիք են պարոնի, մահթասիրի, դարուղայի եւ թամղաչու օգտին գանձուող տուրքերը).

Դահիանդալ (պրսկ. դահյանդզահ - տասն-տասնմէկ) կալուածատիրական ռենտա, տասանորդ, մուլք.

Իջեւանելու հախ - հաւանաբար տուրք, որ գանձւում էր կամ այգիներում կառուցուած տներից, կամ էլ աւելի մեծ հաւանականութեամբ, հնձաններից.

Թամղա - արհեստանոցներից, հումքի մշակման օբյեկտներից գանձուող հարկ (յիշատակուած ունենք՝ ձկան-ձկնորսարանների եւ ընկոյզի - ձիթհանների՝ թամղա).

Թթխմարի դրամ - թթխմոր գործածելու համար հայերից գանձուող ապօրինի տուրք.

Իդու գինի - գինուց գանձուող տուրք.

Խարան - գլխահարկ (նաեւ պետական ռենտա - հարկ).

[1] Տե՛ս մեր «ԺԷ դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ» (մասն Ա) ժողովածուի ընդարձակ առաջաբանի CXVIII-CXXXVI էջերը:

Խչընկերու հորահող - ցուլհակներից գանձուող հարկ (*).

Հարսնեաց դրամ (գրուած՝ խարսնեց դրամ) - ամուսնացող աղջիկներից գանձուող հարկ.

Մաստղու փարձ - մաստղի գինաց տրուող տուրք (*).

Մեղաց գին - մեղքերի թողութիւն ստանալու համար եկեղեցուն տրուող դրամ.

Շանիգալէ (հմա՛ չանակիլպաթ) - ապօրինի պահանջմունքներ.

Շառ - կալուածատիրական ռենտա.

Չարեկ - կալուածատիրական ռենտա, բերքի մէկ քառորդի չափով («ոխվերու չարեք», «ձիթահանաց չարեք»).

Սալամյաղի - շնորհաւորական տուրք, որ տրւում էր փեոդալին որեւէ գիւղ այցելելիս (*).

Սուզ - ջրաղացներից գանձուող հարկ (*).

Սուհարտի պողի - (*).

Տախրկի դրամ - ճախարակից գանձուող հարկ (*)[1]:

Միջնադարեան հայկական պատմական սկզբնաղբիւրները գիւղատնտեսութեան զարգացման աստիճանի եւ հողամշակոյթի վիճակի մասին գրեթէ ոչինչ չեն պարունակում: Քննարկուող վաւերագրերը նոյնպէս հարուստ չեն այդ բնագաւառի նիւթերով: Այնուամենայնիւ նրանցում, յատկապէս նուիրաբերական գրառումների եւ պայմանագրերի մէջ, հանդիպում ենք գիւղական համայնքի հողային ֆոնդի մէջ մտնող արտերի եւ, ընդհանրապէս, հողերի մանրակրկիտ տեսակաւորման հարուստ փորձի առկայութեան մասին վկայող բազմաթիւ տերմինների, որոնք կարող էին առնչուել միայն երկրագործական հազարամեայ կուլտուրա ունեցող եւ հողամշակութեան բնագաւառում նշանակալից յաջողութիւնների հասած ժողովրդի կողմից:

Ստորեւ, այբբենական դասաւորութեամբ, տալիս ենք նաեւ այդ տերմինների ցանկը.

Ադրինք, ադրին - պարարտ կամ պարարտացուած հող.

Անջրդի.

Աւոտոյ - նախապէս առուոյտ ցանուած հող.

Արեգդէմ.

Աւազ, աւազիկ - աւազահող.

Գոմէներ - հաւանաբար՝ նախկին գոմատեղերի շուրջ եղած հողակտորներ.

Հայուտ - բերքատու.

Կորդ - խոպան.

Ձմայ, ձմի, ծմայ - ծմակային.

Ճամ, ճէմ - ճահճուտ.

[1] [Սոյն տերմիններից մի քանիսը մանրամասն քննարկուած են Ս. Աւագեանի «Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն», (Երեւան, 1978) եւ «Վիմագրական պրպտումներ» (Երեւան, 1986) գրքերում:]

Մոխրատափիկ - *մոխրով պարարտացուած հո՞ղ.*

Շամբ - *ճահճուտ.*

Ոստին - *անջրդի.*

Ուռուտ, ուռն.

Ջայիր - *մարգագետին.*

Տռաւիկ - *(՞).*

Ցնի - *(՞).*

Փշուտ.

Քարուտ.

Քռայ:

Թուարկուած տերմինների բովանդակութեան ճշգրտման, գիւղական համայնքի անդամների միջեւ տարբեր որակի հողերի բաշխման ձեւերի որոշման եւ յարակից այլ հարցերի լուծման համար, անշուշտ, օգտակար կլինի կատարել յատուկ ուսումնասիրութիւն, որը յաջողութեամբ կպսակուի վիմական արձանագրութիւնների արժէքաւոր տուեալները, ինչպէս եւ հարեւան երկրների (յատկապէս Իրանի) երկրագործութեան մասին եղած աղբիւրները օգտագործելու դէպքում[1]*:*

Օգտակար տուեալներ կան քննարկուող վաւերագրերում նաեւ միջնադարեան Հայաստանի տարբեր նահանգներում գործածուող չափ ու կշռի միաւորների մասին, որոնցից են, օրինակ՝ գրիւ, կապիճ, կոտ, մոթ (նաեւ մութ), քիլա եւ այլն: Դրանց միջոցով որոշւում էր յաճախ նաեւ արտի մեծութիւնը՝ «կապիճ ու կէս ցորենի արտ», «Ի (20) մութ ոստին», «Ժ (10) մութ ջրով» եւ այլն. գործածական է նաեւ «օրավար հող» տերմինը:

Քաղաքային կեանքի ու արհեստագործութեան հետ առնչուող վաւերագրերի քանակը չափազանց քիչ է. այնուամենայնիւ չի կարելի արհամարհել նրանց նշանակութիւնը նաեւ հարցերի այդ ոլորտի ուսումնասիրութեան համար:

1303 թ. մեզ արդէն ծանօթ նուիրաբերական գրառման մէջ, որ կազմուած է ամենայն հաւանականութեամբ, Երզնկայ քաղաքում, ասուած է, որ Ս. Լուսաւորչի վանքին վակֆ արուած խանութը գտնւում է «ի Քաֆկըտրնոցն»: Ինչ էլ որ նշանակելիս լինի այս «Քաֆկտրնոց» բառը (արդեօք սալանդանո՞ց), դրանից կարելի է եզրակացնել, որ Երզնկայ քաղաքում եւս գոյութիւն են ունեցել արհեստի միեւնոյն մասնաճիւղի համար յատուկ թաղեր կամ շուկայական շարքեր:

Մեր վաւերագրերում, այլեւայլ առիթներով, յիշատակուած են երկու տասնեակ տարբեր արհեստի ու զբաղմունքի մարդիկ՝ աղեղրար, բազազ, գդակկար, դարբին, թերզի, խոճա, կոշկակար, հարիւրաւագ, ղազազ, ղազանչի, ղասաբ, նալբանդ, նաղարաճի, նետրար, ներկարար, ոսկերիչ, սառաֆ, փամբուղչի, քիւրքչի, փառաճ: Արհեստագործութեան պատմութեան հարցերով զբաղուող մեր մասնագէտները, անտարակոյս, օգտակար նիւթեր կքաղեն այդ վաւերագրերից:

[1] Այս բնագաւառում ծանրակշիռ աշխատանք է կատարել անուանի արեւելագէտ Ի. Պ. Պետրուշեւսկին, իր "Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV вв." (М.-Л., 1960) աշխատութեան մէջ:

Անգնահատելի ու հարուստ նիւթեր են պարունակում քննարկուող վաւերագրերը Պատմական Հայաստանի հին գիւղանունների եւ, յատկապէս գիւղերի հանդերում գտնուող առանձին արտերի անունների ուսումնասիրութեան, այլ խօսքով՝ պատմական միկրոտոպոնիմիկայի համար: Այդ կարգի բազմաթիւ տեղանուններից են, օրինակ, հետեւեալները՝ Անաշատ, Առաջաձոր, Առնանք, Աւազախոռ, Աւձանբեր, Բանկլի-ձոր, Բարգեւանայ առու, Բոլորամարգ, Եգնանիստ, Ելեգապատ, Ըսշտոնիկ արտ, Իրիշատ, Կուսանասար, Կոնայարտ, Մկնաւէր, Ջրուընիկ, Վառնջիկ, Ցամաքձոր, Քարափոս եւ այլն:

Վաւերագրերի մեծագոյն մասը գրուած է հազիւ գրաճանաչ, կիսագրագէտ գիւղական քահանաների կողմից: Այս հանգամանքը ունի իր ե՛ւ բացասական, ե՛ւ դրական կողմը:

Անգրագէտ ձեռագրով ու լեզուով շարադրուած այդ վաւերագրերի վերծանման եւ ճիշտ մեկնաբանման համար պահանջւում է հմտութիւն եւ ջանք. քիչ չեն դէպքերը, երբ որեւէ վաւերագիր կամ նրա այս կամ այն մասերը մնում են անվերծանելի եւ անհասկանալի: Հայոց լեզուի պատմութիւնն ուսումնասիրողի համար, սակայն, վաւերագրերի այս յատկանիշը զուրկ չէ օգտակարութիւնից: Դրանք անաղարտօրէն պահպանել են իրենց մէջ միջին հայերէնի, բարբառների եւ միջնադարեան աշխարհաբարի ուսումնասիրութեան համար անսպառ ու կուսական նիւթեր, ուստի չպէտք է կասկածել, որ քննարկուող վաւերագրերի ուսումնասիրութեամբ կզբաղուեն նաեւ մեր լեզուաբանները:

Հայերէն ձեռագրերի դատարկ էջերի վրայ գրանցուած նուիրաբերական արձանագրութիւնների, պայմանագրերի-համաձայնագրերի, կալուածագրերի եւ տնտեսական այլ բնոյթի փաստաթղթերի մասին համառօտ այս հաղորդման հիմնական նպատակն էր արժէքաւորել դրանք որպէս Հայաստանի միջնադարեան պատմութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող սկզբնաղբիւր եւ շահագրգռել հայագէտ բանասէրներին դրանց հաւաքման աշխատանքով զբաղուելու:

Մատենադարանի ձեռագրական ֆոնդերից, ինչպէս ասացինք, այդ վաւերագրերը մասամբ արդէն հաւաքուած են, եւ այդ ուղղութեամբ աշխատանքը շարունակւում է: Սակայն այդ կարգի փաստաթղթերի ամբողջական ժողովածու ստեղծելու եւ հրատարակութեան պատրաստելու համար հարկ կլինի ստանալ նաեւ Երուսաղէմի, Վենետիկի, Վիեննայի եւ հայ ձեռագրերի այլ հաւաքածուների մէջ գտնուող նոյնատիպ նիւթերը:

Հայագէտ այն բանասէրները, որոնք մօտ էին կանգնած հայերէն ձեռագրերի վերոյիշեալ հաւաքածուներին, անգնահատելի ծառայութիւն մատուցած կլինէին օգտակար այս գործին, ուղարկելով իրենց մատչելի ձեռագրերի էջերին գրանցուած նոյնատիպ վաւերագրերի ընդօրինակութիւնները, կամ էլ հրատարակելով դրանք հայագիտական պարբերականներում:

ՔՌՆԱՅԻ ՀՈԳԵՒՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԵՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՌՆԵՑՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ*

Դիոնիսիոս Թրակացու եւ նրա հայ մեկնիչների մասին Ն. Ադոնցի դասական աշխատութեան հրապարակումով[1] հայ քերականական մտքի պատմութեան ուսումնասիրութիւնը դրուեց ամրակուռ հիմքերի վրայ: Անուանի բանասէր-պատմաբանը, բնագրագիտական մանրախոյզ քննութիւններ կատարելով, շրջանառութեան մէջ դրեց Դ. Թրակացու «Քերականութեան» հայկական թարգմանութեան գիտական բնագիրը, յաջողութեամբ վերականգնեց հայ հին քերականների՝ Դաւթի, Անանուն Մեկնչի, Մովսէս Քերթողի, Ստեփանոս Սիւնեցու եւ Համամ Արեւելցու մեկնութիւնների կարեւոր մասերը, բացայայտեց նրանց ազգակցութիւնը միմեանց ու յունական մեկնութիւնների նկատմամբ եւ պարզեց յունաբան դպրոցի սկզբնաւորման ու թարգմանչական սկզբունքներին առնչուող բանասիրական բազմաթիւ հարցեր[2]:

Յաջորդ առաջընթաց քայլն այս բնագաւառում կատարեց Գ. Ջահուկեանը՝ հայ քերականական եւ ուղղագրական աշխատութիւնների մասին շարադրած իր զոյգ մենագրութիւններով[3]: Դրանցից առաջինում քննական վերլուծութեամբ բացայայտուեցին վերոյիշեալ հայ հեղինակների քերականագիտական հայեացքները եւ, առաջին անգամ լինելով, գիտական խօսք ասուեց յաջորդ շրջանի քերականագէտների եւ գրչութեան արուեստի հետ կապուած ուղղագրական-կէտադրական աշխատութիւնների հեղինակների՝ Գրիգոր Մագիստրոսի, Արիստակէս գրչի, Գէորգ Սկեւռացու, Վարդան Արեւելցու, Յովհաննէս Երզնկացու, Եսայի Նչեցու, Գրիգոր Տաթեւացու, Առաքել Սիւնեցու ժառանգութեան մասին: Երկրորդ աշխատութեամբ, որ նուիրուած էր XVII-XIX դդ. հրապարակուած գրաբարի քերականութիւնների վերլուծութեանը, վաստակաշատ գիտնականն ամփոփեց այս բնագաւառում կատարած իր հետազօտութիւնների արդիւնքները՝ առանձնացնելով գրաբարի քերականական կառուցուածքի ուսումնասիրութեան երեք շրջան.

1. Յունատիպ քերականութիւնների, որ գոյատեւել է շուրջ 12 դար (V դ. մինչեւ XVII դ. սկիզբները).

2. Լատինատիպ քերականութիւնների (XVII դ. սկզբներից մինչեւ XVIII դ. 3-րդ քառորդը).

3. Ինքնատիպ քերականութիւնների (XVIII դ. վերջին քառորդից մինչեւ մեր օրերը)[4]:

---

* **Յովհաննէս Քռնեցի**, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակութեան պատրաստեց Լ. Ս. Խաչիկեանը, ներածութիւնը՝ Լ. Ս. Խաչիկեանի եւ Ա. Ա. Աւագեանի, Երեւան, 1977, էջ 5-51: Այստեղ հրատարակւողը ներածութեան Լ. Ս. Խաչիկեանի գրած մասն է:

1 "Дионисий Фракийский и армянские толкователи", издал и исследовал Н. Адонц, Петроград, 1915.

2 [Ն. Ադոնցի աշխատութեան հանգամանալից գնահատութիւնը տրուած է Ն. Մառի եւ Ս. Ժեբելեւի գրախօսականում: Տե՛ս "Христианский Восток", հտ. V, պրակ I, էջ 52-66, 67-72:]

3 **Գ. Բ. Ջահուկեան**, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները հին եւ միջնադարեան Հայաստանում (V-XV դդ.), Երեւան, 1954, Գրաբարի քերականութեան պատմութիւն (XVII-XIX դդ.), Երեւան, 1974

4 **Գ. Բ. Ջահուկեան**, Գրաբարի քերականութեան պատմութիւն, էջ 4: Նոյն այս պարբերացումը տրուած է նաեւ հեղինակի «Հին հայերէնի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը» (Երեւան, 1959, էջ 11-26) աշխատութեան մէջ, ուր, սակայն, կան նաեւ որոշ տարբերութիւններ. լատինատիպ քերականութիւնների վախճանի ու ինքնատիպ

Այս պարբերացումը հիմնականում ճիշտ պատկերացում է տալիս հայ քերականագիտական մտքի զարգացման ընթացքի մասին, սակայն որոշ հատուածներում (մասնաւորապէս ենթաշրջանների բնորոշման մասերում) կարիք է զգում բարեշտկումների: Հարկ է նշել, որ վերոյիշեալ երեք շրջանները, գիտելիքների այդ բնագաւառի օրինաչափ զարգացման արդիւնք լինելով հանդերձ, միշտ չէ, որ յաջորդել են միմեանց՝ որպէս ընդհանուր շղթայի իրար կապող օղակներ՝ մէկի վախճանով պայմանաւորելով միւսի սկիզբը: Տուեալները վկայում են, որ առանձին ժամանակահատուածներում կեանքի են կոչուել ու զուգահեռաբար գոյատեւել տարբեր ուղղութիւնների պատկանող քերականագիտական երկեր, որոնց հեղինակները յաճախ բախուել են միմեանց՝ առաջնորդուելով գիտական տարբեր սկզբունքներով: Եւ եթէ այս եւ յարակից մի շարք հարցեր դեռեւս բաւարար ծաւալով ու խորութեամբ չեն ուսումնասիրուել հայ քերականագիտութեան պատմութեան մասին գրուած աշխատութիւններում, այդ առաջին հերթին պէտք է բացատրել այն իրողութեամբ, որ տակաւին գիտական շրջանառութեան մէջ չեն դրուել կարեւոր նշանակութիւն ունեցող որոշ սկզբնաղբիւրներ, ինչպէս նաեւ չեն գրուել մենագրական առանձին ուսումնասիրութիւններ ուշ միջնադարի սակաւաթիւ այն քերականագէտների մասին, որոնք նոր ուղիներ են որոնել գիտութեան այս բնագաւառի յառաջադէմ զարգացման համար:

Դրանցից մէկն է, ահա, XIV դ. առաջին կէսի հեղինակ Յովհաննէս Քռնեցին, որի «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատութիւնը, առաջին անգամ լինելով, դրւում է գիտական շրջանառութեան մէջ:

Յովհաննէս Քռնեցին անծանօթ դէմք չէ հայ մատենագրութեան եւ եկեղեցու պատմութեան մէջ: Ունիթորական շարժման պարագլուխ այս գործչի մասին հետաքրքրուողն ընդհանուր տեղեկութիւններ կարող է գտնել հայագիտական բազմաթիւ հետազօտութիւններում: Կղեմէս Գալանոսից[1] սկսած մինչեւ Մաղաքիա Օրմանեան[2]՝ տարբեր դիրքորոշում ունեցող հայ եւ օտարազգի բանասէրներ անդրադարձել են Հայոց եկեղեցին Հռոմէական եկեղեցու հետ միաձուլելու նրա ձախորդ ծրագրերին: Դրուատական խօսք ասողներ շատ քիչ են եղել, մեծագոյն մասը ազգային եկեղեցու ինքնուրոյն ճանապարհն ընտրած ու Կաթոլիկ եկեղեցուն բոլորանուէր ծառայագրուած այս գործչին, իրաւամբ, համարել է հայ ժողովրդի ազգային շահերի անգիտացող: Ըստ այդմ էլ, մերժելով Յովհաննէս Քռնեցու եւ նրա կուսակիցների գործունէութեան շարժառիթներն ու բուն նպատակը, հայ բանասիրական միտքը բաւարար ուշադրութիւն չի դարձրել մշակոյթի մարզում նրանց կատարած աշխատանքների վրայ, մինչդեռ յայտնի իրողութիւն է, որ Եւրոպայից Հայաստան առաքուած կաթոլիկ քարոզիչներն ու նրանց հայ հետեւորդները, գաղափարական իրենց դիրքերի ամրապնդման շահերից ելնելով, ծաւալել են նաեւ գիտական ու գրական աշխոյժ գործունէութիւն, ստեղծել թարգմանական եւ ինքնուրոյն գրականութիւն, որի մէջ, ծիսական բազմաթիւ գրքերից բացի, կան նաեւ իմաստասիրական, բնագիտական ու պատմագրական երկեր: Եւ եթէ առ այսօր որոշ աշխատանք կատարուել է արդէն ունիթորական գրականութեան ամբողջական մասն-

---

քերականութիւնների ծագման ժամանակաշրջանն այստեղ XVIII դ. միջնամասն է համարուած (եւ ոչ 3-րդ քառորդը):

1 Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն, շարադրեալ ի յերկուս հատորս՝ ի պատմական եւ վիճաբանական, ի կարգէ Թէատինեաց Կղեմէս վարդապետէ, առաջին հտ., Հռոմ, 1650, էջ 509-523:

2 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Բ հտ., մասն Ա, Պէյրութ, 1960, էջ 1844 եւ հտ.

նագիտութիւնը կազմելու գծով[1], նոյն այդ գրականութեան բովանդակութիւնը բացայայտե-լու եւ պատմաճանաչողական նշանակութիւնը պարզաբանելու ուղղութեամբ դեռեւս շատ քիչ գործ է կատարուած[2]: Այժմ, սակայն, հասունացել է ժամանակն ըստ արժանւոյն գնահատելու այն դերը, որ միջնադարեան Հայաստանի գիտութեան զարգացման գործում կատարեցին եւրոպական սխոլաստիկայի խոշոր ներկայացուցիչների առանձին երկերի XIV դ. առաջին կիսամեակի ընթացքում իրականացուած թարգմանութիւնները, ինչպէս նաեւ Հայաստան առաքուած լատին քարոզիչների ու հայ գիտնականների համագործակցութեամբ հենց հայերէն լեզուով ստեղծուած իմաստասիրական աշխատութիւնները:

Այս հարցը, որ արժանի է յատուկ մենագրական ուսումնասիրութեան, ներածական այս յօդուածի մէջ կարող է միայն շօշափուել համառօտակի եւ իր հիմնական գծերով:

* * *

Հայ գիտական միտքը մինչեւ XIV դ. 30-ական թուականները սնւում էր հին յունական գիտական գրականութեան այն փշրանքներով, որ շրջանառութեան մէջ էին դրուել V-VIII դդ. ընթացքում յունաբան դպրոցին պատկանող գիտնական-թարգմանիչների կողմից: Մեծ չէր գիտական այդ ժառանգութիւնը, սակայն հիմք չունենք նաեւ թերագնահատելու նրա ծաւալն ու նշանակութիւնը, քանի որ աւելի բախտաւոր վիճակի մէջ գտնուող եւրոպական ժողովուրդ-ները (որոնց մտաւորական գործիչները հնարաւորութիւն ունէին օգտուելու նաեւ անտիկ գրականութեան լատիներէն լեզուով գոյութիւն ունեցող բազմաբովանդակ ու մեծաքանակ յուշարձաններից), նոյնպէս բաւարարւում էին սակաւաթիւ այն երկերով, որ կրօնական իր աշխարհայեացքը հիմնաւորելու համար թոյլատրելի էր համարում քրիստոնէական եկեղեցին:

Ինչպէս Եւրոպայում, այնպէս էլ Հայաստանում վաղ միջնադարում Արիստոտելին ճանա-չում էին միայն նրա «Ստորոգութիւնք» եւ «Յաղագս մեկնութեան» աշխատութիւններով (շրջանառութեան մէջ էին նաեւ կեղծ-արիստոտելեան «Յաղագս աշխարհի» եւ «Յաղագս առաքինութեան» երկերը: Մեծ հեղինակութիւն ունէր III դ. նոր-պլատոնական մեկնիչ Պոր-փիւրի «Ստորոգութեանց ներածութիւնը»: Հայաստանում շատ էին տարածուած նաեւ Արիս-տոտելի վերոյիշեալ աշխատութիւնների (ինչպէս նաեւ «Անալիտիկայի») մի շարք մեկնու-թիւններ, որոնցից մի մասի հեղինակն էր հայազգի Դաւիթ Անյաղթը (աւելի շատ յայտնի իր «Սահմանք իմաստասիրութեան» աշխատութեամբ), իսկ միւս մասինը՝ Համբլիքոսը եւ ուրիշ (անուններն անյայտ) հեղինակներ:

VI դ. հայերէն էին թարգմանուել նաեւ Պլատոնի երկախօսութիւններից մի քանիսը (Տիմէոս, Եւթիփրոն, Պաշտպանութիւն Սոկրատայ, Յաղագս օրինաց, Մինովս), որոնք, սա-կայն, մեծ տարածում չէին գտել մեզանում: Հայ իմաստասիրական մտքի կազմաւորման գոր-ծում զգալի դեր էին կատարել նաեւ Փիլոն Աղեքսանդրացու 14 աշխատութիւնների թարգմա-նութիւնները (դրանցից շատերի յունարէն բնագրերը չեն պահպանուել), Զենոնին, Հերմէս

1 Նկատի ունենք յատկապէս հետեւեալ աշխատութիւնները. Ղ. Ալիշան, Սիսական, էջ 382 եւ հտ., Գ. Զարբհա-նալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան, հտ. Բ, էջ 194-212, եւ յատկապէս՝ Marcus Antonius von den Oudenrijn, Linguae Haicanae Scriptores, ordines praedicatorum congregationes fratrum unitorum... Bernae, 1960:

2 Վերջին տասնամեակներին հայ փիլիսոփայութեան պատմութեան տարբեր հարցերի մասին ուսումնասի-րութիւններ գրած մեր մասնագէտների մեծագոյն մասը հպանցիկ է անդրադարձել հայ միաբարների գործու-նէութեանն ու նրանց գիտական ժառանգութեանը: Այս առումով բացառութիւն է կազմում Հ. Գաբրիէլեանը: Տե՛ս «Հայ փիլիսոփայական մտքի պատմութիւն», հտ. 2, Երեւան, 1958, էջ 114-121:

Եռամեծին վերագրուած իմաստասիրական երկերը, ինչպէս նաեւ մի քանի աւելի պակաս ծաւալ ու նշանակութիւն ունեցող բնագրեր[1]:

Հին յունական իմաստասիրական մտքի նուաճումներին հաղորդակից լինելու հնարաւո-րութիւններ էին ընձեռում նաեւ ճարտասանական եւ քերականական մի շարք արժէքաւոր թարգմանական աշխատութիւններ, մասնաւորապէս «Պիտոյից գիրքը», Թէոն Աղեքսանդրա-ցու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» դասագիրքը եւ, վերջապէս, Դիոնիսիոս Թրա-կացու «Արուեստ քերականի» վերոյիշեալ աշխատութիւնը, որ, թարգմանուելով V դ. վերջե-րին, ինչպէս ասացինք արդէն, մինչեւ ուշ միջնադար բազմիցս մեկնաբանուել էր հայ քերա-կանների կողմից՝ հանդիսանալով քերականագիտական հիմնական դասագիրքը բարձրագոյն դպրոցների համար:

Տիեզերագիտական, տոմարագիտական եւ օդերեւութաբանական գիտելիքների հարուստ աղբիւր էին Անանիա Շիրակացու աշխատութիւնները, որոնք իրենց զգալի մասով յունարէն լեզուով գոյութիւն ունեցող համապատասխան գրուածքների թարգմանութիւններ կամ փոխա-դրութիւններ էին՝ կատարուած անուանի հայ գիտնականի կողմից՝ որոշակի ծրագրով ու նպատակադրութեամբ: Բնագիտական արժէքաւոր տեղեկութիւններ էին հաւաքուած նաեւ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատութեան մէջ, որը թարգմանուել էր հայերէն VIII դ. սկզբներին:

Անտիկ գիտութեան որոշ նուաճումների հայ ընթերցողը հաղորդակից էր դառնում նաեւ եկեղեցական հայրերի՝ Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Յովհան Ոսկեբերանի, Կիւ-րեղ Երուսաղէմացու եւ մի շարք այլ հեղինակների գրուածքների միջնորդութեամբ, որոնցից շատերը նոյնպէս թարգմանուել էին հայերէն հայ գրականութեան արշալոյսին: Պէտք է հաշուի առնել, սակայն, որ աստուածաբանական վերոյիշեալ աշխատութիւնների մէջ անտիկ հեղինակների մտքերը յաճախ մէջ էին բերւում աղաւաղուած եւ ձեւափոխուած, եկեղեցական գաղափարախօսութեանը յարմարեցուած կերպարանքով:

X-XI դդ. զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը թեւակոխած Հայաստանում տնտե-սական կեանքի զարգացմանը զուգընթաց բուռն զարգացում են ապրում նաեւ հոգեւոր մշա-կոյթի որոշ ճիւղեր: Ծաղկում են գրականութիւնը եւ կերպարուեստը, ստեղծւում են գեղա-րուեստական գրականութեան նոր ժանրեր՝ առակներ, տաղեր, «բանք» կոչուող չափածոյ ստեղծագործութիւններ (ստեղծուած ընթերցանութեան եւ ո՛չ երգասացութեան համար) եւ այլն:

Մատենագրական աշխատանքով սկսում են զբաղուել նաեւ աշխարհական մարդիկ, որոնք ոչ միայն նոր շունչ են հաղորդում աւանդական հայ գրականութեանը, այլեւ փորձում են ընդարձակել ու խորացնել հայ ընթերցողին մատչելի գիտելիքների ծաւալը՝ կատարելով նոր թարգմանութիւններ ինչպէս հին յունական եւ բիւզանդական, այնպէս էլ արաբական մատենագրութիւններից: Իմաստասիրական երկերից բացի, ստեղծւում ու թարգմանւում են նաեւ բժշկական, աստղաբաշխական, ալքիմիական, գիւղատնտեսական, ձիաբուժական գրուածքներ, որոնք զգալի չափով ընդարձակում են հայ գիտական գրականութեան սահմանները: Բնագիտական գրականութեան զարգացման գործին իւրովսանն նպաստում են

1 Իմաստասիրական բովանդակութիւն ունեցող յունաբան թարգմանութիւնների ամբողջական ցանկը տե՛ս հետեւեալ աշխատութեան մէջ. С. С. Аревжатян, Формирование философской науки в древней Армении (… вв.), Ереван, էջ186-188:

նաեւ Կիլիկեան Հայաստանում հաստատուած մի քանի հայախօս ասորիներ (Աբուսայիդ[1], Իշոդ), որոնք շարադրում են բնախօսական ու բնագիտական ուշագրաւ երկեր: Նշանաւոր գիտնական Յովհաննէս Երզնկացին ձեռնամուխ է լինում արաբական իմաստասիրական երկերից քաղուածքներ կատարելու աշխատանքին, թարգմանում է առանձին հատուածներ նիւթի ու տեսակի, լինելութեան ու ապականութեան եւ այլ հարցերի մասին[2]:

Սրանք են, աչա, ամենահամառօտակի թուարկութեամբ մինչեւ XIV դ. առաջին տասնամեակները հայ գիտական գրականութիւնը սնող սկզբնաղբիւրները: Սրանց մէջ առկայ տուեալների խոր իմացութեամբ էր չափւում միջնադարեան այս կամ այն գիտնականի մեծութիւնը: Եւ եթէ կային տաղանդաւոր անհատներ, որոնք գիտակցում էին փորձի կարեւորագոյն դերը գիտութեան զարգացման համար եւ ձգտում եղածի վրայ նոր բան աւելացնել[3], նոյնիսկ նրանք անկարող էին բարձրանալ իրենց ժամանակի գիտական մակարդակից վեր, քանի որ սնունդ էին առնում անտիկ գիտութիւնից ժառանգութիւն մնացած եւ բնական երեւոյթների, մարդու եւ կենդանական աշխարհի մասին մակերեսային տեղեկութիւններ պարունակող այն սկզբնաղբիւրներից, որոնք ընդհանուր առմամբ համահնչուն էին Աստուածաշնչի եւ եկեղեցական հայրերի ասոյթներին:

Որպէս արդիւնք ֆեոդալական արտադրական յարաբերութիւնների յառաջագայ զարգացման՝ եւրոպական տարբեր երկրներում ստեղծւում եւ աննախադէպ բարգաւաճում են արհեստագործութեան եւ առեւտրական գործարքների նշանաւոր կենտրոններ հանդիսացող քաղաքները: Քաղաքական, տնտեսական եւ մշակութային սերտ կապեր էին ստեղծւում եւրոպական ու արեւելեան երկրների միջեւ. արեւելեան շքեղ ապրանքների հետ Եւրոպա էին ներթափանցում նաեւ արհեստագործական գիւտեր, տեսական ու գործնական նոր գիտելիքներ ու գաղափարներ: Խոշոր քաղաքներում ստեղծւում են համալսարաններ, ուսումնական այդ նոր կենտրոններում, որոնք մեծապէս տարբերւում էին միջնադարեան վանական դպրոցներից, լայն տեղ էր յատկացւում փիլիսոփայութեան, իրաւագիտութեան, բժշկութեան եւ գիտական այլ առարկաների դասաւանդմանը: Իսպանական արաբների ու հրեաների միջնորդութեամբ եւրոպական գիտական միտքը հաղորդակից էր դառնում նաեւ արաբալեզու հարուստ իմաստասիրական գրականութեանը. լատիներէն էին թարգմանւում Արիստոտելի գլխաւոր աշխատութիւնները, որոնք այնպիսի լայն տարածում էին գտնում եւրոպական գիտական կենտրոններում, որ նրանց հեղինակն ամէնուրեք ընդունւում էր որպէս «անսխալական իմաստասէր»:

Նոր միայն շրջանառութեան մէջ դրուող անտիկ իմաստասէրների աշխատութիւններից միջնադարեան գիտնականները քաղում էին այնպիսի արժէքաւոր տեղեկութիւններ բնական եւ հասարակական երեւոյթների մասին, որոնք ոչ միայն տարբերւում, այլ յաճախ հակասում էին Աստուածաշնչի առանձին դրոյթներին:

Արտաեկեղեցական գաղափարները լայն տարածում էին գտնում յատկապէս քաղաքներում: Կաթոլիկ եկեղեցին, խաչակրաց արիւնահեղ արշաւանքներ կազմակերպելով, ճնշում

1 **Աբուսայիդ**, Յաղագս կազմութեան մարդոյ, աշխատասիրութեամբ Ս. Ա. Վարդանեանի, Երեւան, 1974

2 «Ի տանելաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք»: Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 297-315:

3 Այսպիսի նշանաւոր գիտնական էր, օրինակ, Յովհաննէս Սարկաւագը: Տե՛ս **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870, էջ 295. **Մ. Աբեղեան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երեւան, 1946, էջ 43-52:

էր հերետիկոսական շարժումներն ու փորձում արմատախիլ անել նրանց գաղափարները: Դրան զուգընթաց ստեղծւում էին վանական նոր տիպի կազմակերպութիւններ՝ ֆրանցիսկեան ու դոմինիկեան միաբանութիւնները, որոնց անդամները, դուրս գալով իրենց խցերից, մտնում էին կեանքի յորձանուտի մէջ, կատաղի պայքար ծաւալում աղանդաւորական գաղափարների դէմ ի պաշտպանութիւն եկեղեցու դոգմաների:

Սխոլաստիկային զուգընթաց զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի Եւրոպայում ծաղկում էր նաեւ միստիցիզմը: Եկեղեցական գաղափարախօսութեան այս թեւին պատկանող գործիչները, հետեւելով նոր-պլատոնական փիլիսոփայութեան աւանդներին, ձգտում էին ինքնահայեցողութեան ճանապարհով անհատին առաջնորդել դէպի երանելի համաձուլումը աստուածաբանութեան հետ: Միջնադարեան գիտութիւնն իր առջեւ դնում էր նաեւ այս նպատակը, ուստի այն հանդիսանում էր միաժամանակ նաեւ միստիկա: Այսպիսով, սխոլաստիկան եւ միստիկան գոյատեւում էին համատեղ եւ որպէս ֆեոդալական հասարակութեան իշխող դասակարգերի գաղափարախօսութիւն՝ լրացնում մէկը միւսին:

Այս հարցերի մասին հետաքրքրուողը հանգամանալից տեղեկութիւններ կարող է գտնել միջնադարեան Եւրոպայի փիլիսոփայական մտքի պատմութեանը նուիրուած ուսումնասիրութիւնների մէջ: Փոքր-ինչ շեղուելով բուն նիւթից՝ աշխատեցինք ընթերցողի յիշողութեան մէջ թարմացնել հանրայայտ գիտելիքներն այդ հարցերի մասին՝ նկատի ունենալով դրանց անմիջական անդրադարձը հայ միջնադարեան իմաստասիրական եւ գիտական մտքի վրայ եւ բացայայտելու համար այն ուղիները, որոնցով եւրոպական գիտական միտքը ներթափանցում էր հայկական միջավայր՝ խթանելով հայ իմաստասիրութեան ու գիտութեան յառաջագայ զարգացմանը:

***

Հայ-եւրոպական մշակութային առնչութիւնները դարերի խորքից են գալիս, սակայն շօշափելի կերպարանք են ստանում՝ սկսած XII դ. կէսերից, երբ Կիլիկեան հայկական իշխանութեան սահմաններում ու Մերձաւոր Արեւելքի յարակից շրջաններում քաղաքական ու տնտեսական սերտ կապեր են ստեղծւում մի կողմից՝ հայերի, միւս կողմից՝ խաչակիր իշխանութիւնների միջեւ: XIII դ. վերջերին Կիլիկեան հայկական պետութիւնը իր գոյութիւնը պահպանելու համար ստիպուած էր անհաւասար պայքար մղել երկու ճակատներով՝ Եգիպտոսի եւ Սիրիայի մամլուկների եւ Փոքր Ասիայում հաստատուած սելջուկ-թուրքերի դէմ: Քաղաքական այս անբարենպաստ պայմաններում Կիլիկիայի հայ աւատատէրերի մեծ մասը (Հեթումեան դինաստիայի գլխաւորութեամբ), եւրոպական երկրների հետ տնտեսական սերտ կապեր ունեցող մեծահարուստ առեւտրականների հետ դաշնակցած, հայկական Կիլիկիայի ապագան կապում էր Եւրոպայից ակնկալուող ռազմական օգնութեան հետ: Կաթոլիկ եկեղեցու պետերը շահայլօրէն խոստանում էին, նոր խաչակրաց արշաւանքներ կազմակերպելով, հայերին ազատել մահմեդական ճնշումից՝ փոխարէնը պահանջելով հայ եւ հռոմէական եկեղեցիների «միութիւն»՝ հայոց եկեղեցու ազգային աւանդութիւններից հրաժարուելու եւ Կաթոլիկ եկեղեցու անվերապահ ենթակայութեան տակ մտնելու ճանապարհով:

Ինչպէս յայտնի է, Կիլիկիայում այս պահանջներին ընդառաջ են գնում մի շարք դահակալներ ու կաթողիկոսներ. XIII դ. վերջերին եւ XIV դ. առաջին տասնամեակներում հրաւիրւում են նաեւ ազգային ժողովներ եկեղեցական այդ «միութիւնը» հաստատել տալու համար: Քաղաքական եւ գաղափարական ուժեղ բախումներ են տեղի ունենում Կիլիկիայի

հայ վերնախաւերի եւ մայր հայրենիքի աշխարհիկ ու հոգեւոր տէրերի միջեւ: Հեռատես ու հայրենասէր ուժերը ոչ միայն մերժում են Հռոմին անվերապահօրէն ենթարկուելու վնասակար ծրագիրը, այլեւ միջոցներ են որոնում Հայոց եկեղեցու գաղափարական եւ տնտեսական հիմքերն ամրապնդելու համար ի դէմս այդ կազմակերպութեան՝ տեսնելով տարբեր բռնակալական վարչակարգերի տակ հեծող ժողովրդի համախմբմանը եւ դարաւոր մշակութային աւանդութիւնների պահպանութեանն ու զարգացմանը սատարող կարեւոր մի գործօն[1]:

Կաթոլիկ եկեղեցին, իհարկէ, չէր բաւարարւում Կիլիկեան Հայաստանում ձեռք բերած յաջողութիւններով. Ֆրանցիսկեան միաբանութեանը պատկանող տասնեակ քարոզիչներ վխտում էին արեւելեան երկրներում եւ փորձում իրենց համար յենակէտեր ստեղծել յատկապէս այն վայրերում, որոնք, գտնուելով միջազգային առեւտրի բանուկ ճանապարհների վրայ, նշանակալից դեր էին կատարում որպէս կարաւանային ճանապարհների վաճառաշահ կանգառներ: Ստեփանոս Օրբելեանը, անդրադառնալով Լատինական եկեղեցու ծաւալած քարոզչական գործունէութեան յաջողութիւններին, XIV դ. սկզբներին մեծ վշտով արձանագրում էր այսպիսի տողեր. «Կիլիկիա բոլոր, որ տեղի էր մեր պարծանաց, յայս (իմա՝ լատինական դաւանանքով) վարկեալ կայ, եւ գլխաւոր քաղաքք, որ ի Հռոմք՝ ի սոյն մոլորեալ են, եւ եհաս մինչեւ առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի թագաւորական քաղաքն ի Տփխիս, եւ ի հին տունն Բագրատունեաց յԱնի՝ որ ի Շիրակ, նաեւ ի Թավրէժ շահաստան, եւ յայլ բազում տեղիս»[2]:

Այդ «բազում տեղիսի» մէջ յետագայում յատուկ նշանակութիւն ստացաւ Արտազի շրջանը Թադէոս առաքեալի վանքով ու Մործորի դպրոցով, որոնք գտնւում էին Կաթոլիկ եկեղեցու հետ ամենասերտ միութիւն ստեղծելու քաղաքականութեան ջատագով Զաքարիա Մործորեցու հոգեւոր եւ աշխարհիկ իշխանութեան ներքոյ: Եռանդուն այս գործիչը, համա-

1 Այս հարցն աւելի հանգամանօրէն քննարկուած է մեր «Արտազի հայկական իշխանութիւնը եւ Մործորի դպրոցը» յօդուածում:

Նկատի ունենալով միջնադարեան կեանքի առանձնայատկութիւնները չգիտակցող որոշ ձախորդ բանասէրների՝ աւելորդ չենք համարում այստեղ մէջբերել Ֆ. Էնգելսի «Իրաւաբանական սոցիալիզմ» յօդուածի՝ արեւմտաեւրոպական ժողովուրդների կեանքում կաթոլիցիզմի եւ հռոմէադաւան եկեղեցու կատարած խոշոր դերի մասին ուշագրաւ տողերը: «Միջին դարերի աշխարհայեացքը,- գրել է նա,- գերազանցապէս աստուածաբանական էր: Եւրոպական աշխարհը, փաստօրէն զուրկ ներքին միասնութիւնից, քրիստոնէութեան միջոցով էր համախմբուած ընդդէմ ընդհանուր արտաքին թշնամու՝ սարակինոսների: Միասնութիւնն առանձին ժողովուրդների խմբերից բաղկացած արեւմտաեւրոպական աշխարհի, որի զարգացումն իրականանում էր մշտական փոխազդեցութիւնների ճանապարհով, այդ միասնութիւնը կաթոլիցիզմի միջոցով էր կեանքի կոչւում» (**К. Маркс и Ф. Энгельс**, Соч., т. XVI, ч. I, էջ 295):

Հայրենի երկրում ինքնորոյն պետականութիւնից զուրկ եւ մահմեդական զաւթիչների ստեղծած տաժանակիր լծի տակ կեղեքուող եւ աշխարհով մէկ սփռուած գաղթօջախներում հազիւ գոյութիւնը քարշ տուող հայ ժողովրդի համար, բնականաբար, շատ աւելի մեծ նշանակութիւն ունէր միակ համազգային հաստատութիւնը՝ հազարամեայ մշակութային աւանդութիւններով զօրացած Լուսաւորչական Հայոց եկեղեցին:

Եւ իրաւացի է, իհարկէ, անուանի գրող Մարիետա Շահինեանը, երբ Հայոց եկեղեցու՝ միջնադարում կատարած դերի մասին գրում է. "Армяне терпели всяческие бедствия сотни лет... от всяких иноплеменных завоевателей, но цепко держались за свое армяногрегорянство как за стержень их исторического единства, за честь и достоинство их бытия-быть верными вере. Их ни турки, ни персы, ни монголы, ни римляне не смогли заставить переменить веру. Тут дело было не в религии, дело было в нации, в народном единении" (**М. Шагинян**, Человек и время, "Новый мир", 1971, N 4, էջ 152):

2 Տեառն Ստեփաննոսի նախագահ արքեպիսկոպոսի Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց. շարադրեալ ի թուին հայոց ՉՃԱ (1302), Կ. Պոլիս, 1758, էջ 42-43

խմբելով հայ եւ եւրոպացի մի խումբ անուանի վարդապետների, ձեռնամուխ եղաւ եւրոպական սխոլաստիկայի նշանաւոր ներկայացուցիչների երկերից մի քանիսի հայերէն թարգմանութեանը:

Զաքարիայի հովանաւորութեան տակ աշխատում էին Յովհաննէս Մործորեցի նշանաւոր մատենագիրը, Ֆրանցիսկեան միաբանութեան անդամ Ֆրա Պոնցիուսը եւ Իսրայէլ հայ վարդապետը, որը խմբագրում էր Պոնցիուսի հայերէն շարադրանքը՝ ոճական ու լեզուական բարեշտկումներ կատարելով:

Սրանց ջանքերով XIV դ. 20-30-ական թթ. լատիներէնից հայերէն թարգմանուած աշխատութիւններից մեզ յայտնի են հետեւեալները.

1. Թովմա Աքուինացու «Գիրք խորհրդոց» (Liber Sacramentorum)[1] կոչուող նշանաւոր աշխատութեան մի մասը (թարգմանել է Յովհ. Մործորեցին):

2. Նիկողայոս Լիւրացու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» աշխատութիւնը[2] (թարգմանել է Ֆրա Պոնցիուսը՝ Իսրայէլ վարդապետի օժանդակութեամբ):

3. Նոյն հեղինակի «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի, որ առ Եբրայեցիսն» (թարգմանութիւն նոյն Ֆրա Պոնցիուսի):

4. Ֆրանցիսկեան միաբանութեան մեծ գաղափարախօս Բոնավենտուրայի «Վասն սրբոյն Ֆրանցիսկոսի» աշխատութիւնը (թարգմանել է Ֆրա Պոնցիուսը 1339 թ.):

5. «Գիրք Պատարագի» ծիսական մատեանը (նոյն թարգմանութեամբ):

Սրանք, անտարակոյս, մի փոքր մասն են կազմում Արտազի շրջանում իրագործուած թարգմանութիւնների: Լատինական եկեղեցական ժամանակագրութիւնների մէջ տեղեկութիւններ կան Գուլիելմոս Սորազի կոչուած ոմն ֆրանցիսկեան հոգեւորականի մասին, որն, իբրեւ հաստատուելով Թադէոս առաքեալի վանքում, «ինչ-ինչ գրքեր լատիներէնից հայերէն թարգմանելով, հոգեկան մեծ օգուտներ է արել այնտեղ»՝ «կատարելապէս ծանօթ լինելով նրանց (իմա՝ հայոց) լեզուին»: Նոյն վանքում մեկնել է Սուրբ Գիրքը կրտսեր եղբայրների (այսպէս էին կոչւում ֆրանցիսկեան միաբանութեան անդամները) եւ բազմաթիւ հայ աշակերտների համար, գրել է նաեւ Մատթէոսի Աւետարանի եւ Յայտնութեան մեկնութիւններ եւ այլն[3]:

Հայկական աղբիւրները Գուլիելմոս Սորազի անունով որեւէ անձնաւորութիւն, որ գործել է Թադէոս առաքեալի վաքում կամ Արտազի շրջանում XIV դ. առաջին տասնամեակներին, չեն ճանաչում: Չի բացառուած, որ դա հէնց վերոյիշեալ Ֆրա Պոնցիուսի իսկական անունն է՝ անծանօթ մնացած հայերին: Այս հարցի պարզաբանումը մեր նպատակից դուրս համարելով՝

1 Թ. Աքուինացու այս աշխատութիւնը համառօտ վերլուծութիւնն էր Կաթոլիկ եկեղեցու նշանաւոր գաղափարախօս Պետրոս Լոմբարդացու (մհ. 1164 թ.), «Վկայութիւնք» (Sententiorum) կոչուող աշխատութեան, որը մինչեւ ռեֆորմացիայի ժամանակաշրջանը տարածուած էր ողջ Եւրոպայում՝ որպէս Կաթոլիկ եկեղեցու դաւանաբանական սկզբունքների համապարփակ ուղեցոյց:

2 Ֆրանցիսկեան միաբանութեան անդամ Նիկողայոս Լիւրացին, որ յայտնի է նաեւ Լիրա մականունով, գրել է Աստուածաշնչի բոլոր գրքերի մեկնութիւնները՝ օգտագործելով նաեւ հրէական գրականութեան տուեալները (նա ծագումով հրեայ է եղել): Մի քանի դար շարունակ կաթոլիկ աշխարհում այդ մեկնութիւնները անգերազանցելի են համարուել:

3 Այս տեղեկութիւնները քաղում ենք Մ. Ա. Ուղենրիդի «Հայ-դոմինիկեան մատենագիտական ծանօթութիւններ» խորագրով յօդուածաշարից, որ թարգմանաբար տպագրուել է «Բազմավէպ» պարբերականում (1922, էջ 263):

կարող ենք այստեղ արձանագրել, որ ֆրանցիսկեան հեղինակների վերը թուարկուած կամ առայժմ մեզ անյայտ աշխատութիւնների հայերէն թարգմանութիւններով սկիզբն էր դրւում մշակութային այն գործունէութեան, որ աւելի լայն ծաւալ է ստանալու քիչ յետոյ՝ ունիթորական շարժման երկրորդ կարեւոր կենտրոնում՝ Քռնայի վանքում, այս անգամ արդէն դոմինիկեան քարոզիչների ջանքերով:

Այս երկու ազդեցիկ կրօնական միաբանութիւնները՝ ֆրանցիսկեաններն ու դոմինիկեանները, գրեթէ իրենց սկզբնաւորման օրերից պայքարում էին միմեանց դէմ Կաթոլիկ եկեղեցու գաղափարական ղեկն իրենց ձեռքն առնելու համար: Այդ պայքարը շարունակւում էր նաեւ արեւելեան երկրներում, ուր քարոզչական գործունէութեան յենակէտեր էին ստեղծել նախ ֆրանցիսկեանները:

Յովհան ԻԲ պապի յատուկ կոնդակով 1318 թ. ֆրանցիսկեան եւ դոմինիկեան միաբանութիւնների միջեւ քարոզչական գործունէութեան շրջանների նոր բաժանում կատարուեց: Դոմինիկեան կրօնաւորները, ըստ այդ նոր կարգադրութեան, սեփականեցին արեւելեան երկրներում Տիրոջ խօսքը տարածելու մենաշնորհը՝ փորձելով այդ շահաւէտ ասպարէզից դուրս վանել ֆրանցիսկեաններին: Ինչպէս եւ սպասելի էր, ուժերի այս վերադասաւորումը հարթ ընթացք չունեցաւ. Թադէոս առաքեալի վանքում եւ Թաւրիզում հաստատուած կրտսեր եղբայրները ոչ միայն ընդվզեցին այդ որոշման դէմ, այլեւ նոյնիսկ հերետիկոս համարեցին դոմինիկեանների հովանաւոր Յովհաննէս ԻԲ պապին ու նրա կողմից սուրբ հռչակուած Թովմա Աքուինացուն[1]: Պայքարը սուր կերպարանք ընդունեց, բայց յաղթանակն ապահովուած էր դոմինիկեանների համար: Նրանք պապի վերոյիշեալ կոնդակի թելադրանքով ստեղծեցին մի նոր արքեպիսկոպոսական թեմ, որի անծայրածիր սահմանները որոշւում էին այսպէս. «Արարիտ (իմա՝ Արարատ) լեռից սկսած դէպի արեւելք, ներառեալ պարսկական Թաթարիայի մեծ պետութիւնը... ինչպէս եւ Դոխիի ու Խայդուի թագաւորութիւնը (իմա՝ Միջին Ասիայի երկրները) եւ նրանց ենթակայ բոլոր շրջանները: Այս արքեպիսկոպոսութեանն են ենթարկւում նաեւ Հնդկաստանն ու Եթովպիան, իսկ եպիսկոպոսն ինքն այսուհետեւ նստելու է Սուլթանիա քաղաքում, քանի որ այդ արժանավայել ու մեծ բնակավայր է»[2]:

Սուլթանիայի արքեպիսկոպոս նշանակուեց դոմինիկեան միաբանութեան անդամ Ֆրանկօ Պերուջացին՝ իր ենթակայութեան տակ ունենալով վեց եպիսկոպոսութիւններ, երեքը՝ Ատրպատականի Թաւրիզ, Մարաղա եւ Դեհխարկան քաղաքներում[3]: Սրանցից մէկին՝ Մարաղայի եպիսկոպոս Բարթուղիմէոսին, վիճակուած էր զգալի դեր կատարել հայ մշակոյթի պատմութեան մէջ՝ հանդիսանալով հայ ունիթորների առաջնորդը[4]:

1 Այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ կան Մ. Ուդենրիյնի վերոյիշեալ յօդուածի մէջ: Տե՛ս «Բազմավէպ», 1922, էջ 263:

2 **G. Golubevich,** Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell' Oriente Francescono, հտ. II, էջ 570 եւ հետ. (օգտուել ենք М. Я. Свет-ի "После Марко Поло" աշխատութեան միջնորդութիւնից):

3 **M. A. Oudenrijn,** էջ 19-20

4 Բարթուղիմէոսի մականունը դէ Պոդիօ է (Bartholomaeus de Podio), սակայն եւրոպական ու հայ գիտական գրականութեան մէջ սրան թիւրիմացաբար տալիս են Parvus (Փոքրիկ) կամ Bononiensis (Բոլոնիացի) մականունները (տե՛ս **M. A. Oudenrijn,** էջ 304): Նա հայկական միջավայրում քարոզչական գործունէութիւն ծաւալեց՝ հաստատուած լինելով Մարաղա քաղաքում, եւ իր հայ ժամանակակիցների կողմից ճանաչւում առաւել որպէս Մարաղայի եպիսկոպոս: Նկատի առնելով այդ հանգամանքը՝ գերադասում ենք նրան կոչել հայացուած ձեւով՝ Բարթուղիմէոս Մարաղացի:

* * *

Բարթուղիմէոսի Մարաղայում ծաւալած գործունէութեան, Երնջակի շրջան տեղափոխուելու, Քռնայի դպրոցի հիմնադրութեան եւ յարակից դէպքերի մասին տեղեկութիւններ են գրանցուած ունիթոր մատենագիր Մխիթար Ապարանեցու մօտ[1]: Պահպանուել են նաեւ Յովհաննէս Քռնեցու «Շրջաբերական թուղթը», Քռնայում շարադրուած մի շարք ձեռագրական յիշատակարաններ (որոնք ըստ մեծի մասի ձուլուած են նոյն կաղապարով): Անշուշտ, եղել են եւ այլ գրութիւններ, որոնք շրջանառութեան մէջ են գտնւում դեռեւս XVII դ. եւ մասամբ օգտագործուել լատին մատենագիր Կղեմէս Գալանոսի կողմից[2]:

Համադրելով այս տեղեկութիւնները՝ մի շարք անուանի հայագէտներ (որոնք տարբեր առիթներով անդրադարձել են այս դէպքերին[3]) միաբանական շարժման սկզբնաւորման պատմութիւնը շարադրում են ահա այսպէս. Բարթուղիմէոսի քարոզչութեան համբաւը տարածուելով հասել է Գլաձոր, մեծանուն րաբունապետ Եսայի Նչեցին իր աշակերտներից մէկին՝ Յովհաննէս Քռնեցուն, որն արդէն վարդապետական գաւազան էր ստացել ու կարգուել Երնջակի գաւառի վանքերի առաջնորդ, «ի ձեռն հրեշտակի» (այսինքն՝ մարդ ուղարկելով նրա մօտ) յանձնարարութիւն է տալիս՝ մեկնել Մարաղա ու պարզել, թէ «որպիսի իցէ վարդապետութիւն նորին» (իմա՝ Բարթուղիմէոսի) եւ նոյնիսկ (այսպէս է ներկայացնում Մխ. Ապարանեցին) այդ ֆրանկ գիտնականին հրաւիրել Գլաձոր, «զի ամենեւին ուսուցէ զամենեսեան ըստ ձեւոյ սուրբ եկեղեցւոյ»: Ստանալով իր մեծ ուսուցչի հրահանգը՝ Յովհաննէս վարդապետը մեկնում է Մարաղա, ունկնդրում Բարթուղիմէոսին եւ այնքան զմայլւում նրա գիտութեամբ եւ ուղղութեամբ, որ անմիջապէս փոխում է իր դաւանանքը եւ ծառայագրւում Կաթոլիկ եկեղեցուն[4]: Այս տեղի է ունեցել 1328 թ.: Մարաղայում նա մնում է տարի ու կէս, սովորում լատիներէն, իր հերթին հայերէն է սովորեցնում Բարթուղիմէոսին ու նրա եւրոպացի գործընկերներին, թարգմանում է մի քանի գրքեր եւ որոշում կայացնում իր հայրենի Քռնա գիւղում ժողով գումարել Հայոց եկեղեցին «ընդ Կաթողիկէ եկեղեցւոյն» միաւորելու համար: 1330 թ. այստեղ, Քռնայում, հաւաքւում են 12 վարդապետներ (մեծ մասամբ Յովհաննէս Քռնեցու աշակերտակիցներից)[5], գալիս է նաեւ Բարթուղիմէոս վարդապետը Մարաղայի իր պաշտօնակիցներով (Պետրոս Արագոնացի, Յովհաննէս Անգլիացի եւ այլն): Հայ ժողովականները միաձայն որոշում են կայացնում ոչ միայն անձամբ, այլեւ

1 **Մ. Ապարանեցի,** Գիրք ուղղափառաց (սրանից ընդարձակ քաղուածքներ են հրատարակուել բազմիցս): Տե՛ս, օրինակ, Ղ. Ալիշան, Հայապատում, II, էջ 550-553. **M. A. Oudenrijn,** էջ 216-221 եւ այլն:

2 **Կ. Գալանոս,** էջ 508 եւ հետ.

3 Նկատի ունենք յատկապէս Մ. Չամչեանին, Գ. Զարբհանալեանին, Ղ. Ալիշանին եւ Մ. Օրմանեանին:

4 «Գնացեալ առ վանս երանելոյն Բարթողիմէոսի,- գրում է Կղեմէս Գալանոսը,- եւ ճաշակեալ անդ յետ չորից ամսոց, զայնչափ ինչ ետես եւ լուաւ, մինչ զի նոյնժամայն առ հնազանդութիւն Հռովմայ եկեղեցւոյն հոգւով եդ զինքն»:

5 Իր նշանաւոր շրջաբերական թղթի մէջ, «Թուղթ «Յոհաննու վարդապետին Քռնեցւոյ առ միաբանեալ եղբարսն հայոց» խորագրով (տպագրուած է Կ. Գալանոսի վերոյիշեալ աշխատութեան մէջ, էջ 518-521), Յովհաննէս Քռնեցին այս վարդապետներին կոչում է «աշակերտակիցք իմ ի միում համալսարանի» եւ թուարկում նրանց անունները (այս ցանկը պահպանուել է նաեւ ՄՄ N 2180, էջ 320ա, N 1301, էջ 341ա եւ այլ ձեռագրերում՝ անունների զգալի տարբերութիւններով): Դրանք են՝ «Մարգարէ վարդապետն ի գեղջէն Օծոպոյ, Յակոբ վարդապետն ի գեղջէն Քռնայ, Հայրապետ վարդապետն յՅօթնաղբիւր գեղջէ, Յովհաննէս վարդապետն ի Մուան գեղջէ, Սիմէոն վարդապետն ի Բասին գեղջէ (տպբր. ի Բասէն գաւառէ), Ներսէս վարդապետն ի Թարսոն գաւառէ (տպբր. ի գաւառէն Տարօնոյ), Առաքել եւ Լեւ (տպբր. Իսրաէլ) վարդապետք յԱրտազոն գաւառէ (տպբր. ի գաւառէն Արտազու), Գրիգոր վարդապետն յԱգրակոծնիս գեղջէ, Կոստանդին եւ Յովհաննէս վարդապետք ի Կլաջգուանաց գաւառէն (տպբր. ի յաշխարհէն Կիլիկիոյ), Սիմէոն վարդապետն ի Խաչին (տպբր. Խաչէն) գաւառէ, եւ այլք բազումք, որոց անուանք գրեալ են ի գիրս կենաց»:

իրենց ենթակայ հաւատացեալ ժողովրդով հնազանդուել Հռոմի քահանայապետին, ընդունել Կաթոլիկ եկեղեցու դաւանանքը՝ կտրելով իրենց կապերը Հայոց եկեղեցուց: Նրանք ծաւալում են քարոզչական լայն գործունէութիւն՝ նպատակ ունենալով բոլոր հայադաւաններին «դարձի բերել», այսինքն, պոկելով մայր եկեղեցուց եւ ազգային աւանդութիւններից, հնազանդեցնել Կաթոլիկ եկեղեցուն:

Քռնա գիւղի տէր պարոն Գորգը, որ Յովհաննէս Քռնեցու քեռին էր, իր տիկնոջ հետ (ըստ երեւոյթին որոշ դիմադրութիւնից յետոյ)[1] միանում է սրանց՝ չխնայելով նիւթական առատաձեռն աջակցութիւնը: Զարմանալի կարճ ժամանակամիջոցում (ընդամէնը երկու ամսուայ ընթացքում) Քռնայի վանքի շրջափակում սրանք կառուցում են նոր եկեղեցի, ստեղծում նոր կրօնական միաբանութիւն՝ դոմինիկեան միաբանութեան հովանաւորութեան ներքոյ, հիմնադրում բարձրագոյն ուսումնական մի նոր հաստատութիւն: «Ժողովեցան,- գրում է այս կապակցութեամբ Մխ. Ապարանեցին,- բազումք սուրբ եւ ընտիր վարդապետք ի յերկիրն Նախիջեւանու, ի գաւառն Երնջակոյ, եւ եղաւ նոր Աթենք ի Քռնայ, եւ (արարին) բազում թարգմանութիւնք սուրբ գրոց եւ ծովացեալ գանձուց ճշմարիտ իմաստութեան եւ դաւանութեան ի լատինացոց եպիսկոպոսաց եւ վարդապետաց...»[2]:

Մենք հիմք չունենք անարժանահաւատ համարելու Երնջակի շրջանում Հայ ունիթորական եկեղեցու հիմնադրմանն առնչուող ժամանակագրական վերոյիշեալ տուեալները եւ հակուած ենք նոյնիսկ կարծելու, որ հիմնական դէպքերը կատարուել են հէնց այդպէս ու այսպիսի յաջորդականութեամբ: Պատմա-բանասիրական ու աղբիւրագիտական մեծ աշխատանք պէտք է կատարել, սակայն, ունիթորական աղբիւրների (իսկ մեր ձեռքի տակ եղած նիւթերի մեծագոյն մասը հէնց այդ միջավայրում է ստեղծուած) արժէքը որոշելու, Բարթուղիմէոսի, Յովհաննէս Քռնեցու եւ միարարական շարժման միւս ղեկավարների գործունէութեան իրական շարժառիթները եւ նպատակները բացայայտելու համար: Հասկանալի է, որ մենք այստեղ հնարաւորութիւն չենք ունենալու հանգամանօրէն անդրադառնալ այդ խնդիրներին, բայց մի-երկու խօսք ասել անհրաժեշտ է:

Նախ դժուար է հաւատալ այն վարկածին, որ Յովհաննէս Քռնեցին, իբր, Մարաղա է մեկնել Եսայի Նչեցու յանձնարարականով, եւ որ վերջինս ցանկութիւն է ունեցել, նոյնիսկ, Բարթուղիմէոսին հրաւիրել Գլաձոր: Նչեցի րաբունապետը իր մի քանի գրութիւնների մէջ շատ որոշակիօրէն սահմանազատուել է Եւրոպայից Արեւելք առաքուող կաթոլիկ քարոզիչներից՝ սաստու հրահանգելով իր աշակերտներին եւ Հայ եկեղեցու թեմական առաջնորդներին՝ մերժել ու հալածել բոլոր նրանց, ովքեր թշնամական դիրք են գրաւել Հայոց եկեղեցու նկատմամբ[3]: Որ Եսայի Նչեցին որեւէ առնչութիւն չի ունեցել Յովհաննէս Քռնեցու եւ Բարթուղիմէոսի մերձեցման գործում, պարզ երեւում է «Թուղթ Յոհաննու վարդապետին Քռնեցւոյ առ միաբանեալ եղբարսն Հայոց» վերոյիշեալ գրութիւնից: Այստեղ Քռնեցին յիշատակում է,

1 Այս մասին ակնարկ կայ Կղեմէս Գալանոսի մօտ (տե՛ս նշ. աշխ., էջ 511):

2 **Մ. Ապարանեցի**, Գիրք ուղղափառաց, **M. A. Oudenrijn,** էջ 216

3 Այս հարցի մասին մանրամասնութիւններ տե՛ս «Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը» յօդուածի մէջ: «Դարձեալ լսեցաք,- գրել է Եսայի Նչեցին Թաւրիզի հայոց առաջնորդ Մատթէոս եպիսկոպոսին,- թէ սուտ վարդապետներ ի ֆրանկաց յազգէ եւ այլք ի հայոց՝ ծագեր, եկեալ են առ ձեզ եւ զհայոց քրիստոնէութիւնս հայհոյեալ՝ նախատեն զեկեղեցի, եւ զառաջնորդս ուրանալ տուեալ, բազում հակառակութիւնս յեկեղեցիս ձգեն: Զայնպիսի հերձուածողսն մի՛ ընդունեցէք ի տունս ձեր եւ մի՛ ողջոյն տայք նոցա, եւ մի՛ առնուք ողջոյն նոցանէ, զի ուրացողք են, այլ եղիցին ձեզ իբրեւ զհեթանոս եւ զմաքսաւորս»:

որ ինքը սովորել է «ի մէջ Հայոց յոյժ հռչակելի» Եսայի վարդապետի մօտ ու նրանից ստացել վարդապետական գաւազան, բայց իր մտքի մէջ միշտ փայփայել է «միաբանել ընդ սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» եւ այլն: Այս միտքն արձանագրելուց յետոյ նա խօսում է Մարաղա գնալու, Բարթուղիմէոս վարդապետի մօտ մէկուկէս տարի մնալու, «ի նորին իմաստահոս աղբերէ» յագենալու, լատիներէնից գրքեր թարգմանելու վերը թուարկուած դէպքերի մասին, սակայն ոչ մի խօսք չի ասում, որ այդ բոլորը կատարել է Եսայի Նչեցու յանձնարարութեամբ, այն դէպքում, երբ այդ հանգամանքը կարող էր հսկայական նշանակութիւն ունենալ իր որդեգրած կեցուածքը Հայոց եկեղեցու նկատմամբ արդարացնելու, նոր կողմնակիցներ շահելու, Հայ եւ հռովմէական եկեղեցիների միաբանութեան վաղուց փայփայած իր ծրագիրն իրականացնելու համար: Ուստի պէտք է ենթադրել, որ այդ ուղին Յովհաննէս Քռնեցին ընտրել է մինչեւ Մարաղա մեկնելը: Ինչպէս յիշատակեցինք վերը, այդ մասին նոյնիսկ ակնարկ կայ նրա վերոյիշեալ թղթի մէջ: Եսայի Նչեցուց վարդապետական գաւազան ստացած լինելու մասին տեղեկութիւն գրանցելուց անմիջապէս յետոյ նա գրում է այսպիսի տողեր. «Անդադար զմտաւ ածեալ զնոյն, տռչորեալ փափականօք ցանկանայի յայտնի վկայ լինել ինձ դարձման ազգին իմոյ առ ճշմարիտ փրկութիւն, ուստի խնդրելով զօգնութիւն լատինացւոցն վասն կատարելոյ զգործս զայս, մեծաւ հառաչանօք բեկեալ անձամբ, ի խորոց սրտէ բաղձայի միաբանիլ ընդ սուրբ եկեղեցւոյն Հռովմայ»[1]: Անշուշտ, մանուածապատ է միտքը, բայց այստեղ, կարծում ենք, որ խօսքը միայն Հայ հոգիների «փրկութեան» մասին չէ, այլ լսւում են քաղաքական ինչ-որ բաղձանքների արձագանքներ: Յովհաննէս վարդապետը Նախիջեւանի շրջանի Երնջակ նշանաւոր ամրոցին առընթեր գտնուող Քռնա խոշոր գիւղի կալուածատիրոջ քեռորդին էր, ուստի սնուել ու կազմակերպուել էր մի միջավայրում, ուր տակաւին XIII դ. կէսերից ծրագրեր էին մշակւում ֆրանկների օգնութեամբ օտար տիրապետողների լուծը թօթափելու հնարաւորութիւնների մասին: 1254 թ. Ֆրանսիայի Լիւդովիկոս Թ թագաւորի դեսպանի հանգամանքով դէպի Կարակորում էր ճանապարհւում ֆրանցիսկեան կրօնաւոր Ռուբրուքը: Նախիջեւանում կանգ առնելով՝ նա զրոյց է ունեցել մօտակայ մի վանքից այդտեղ ժամանած ոմն Հայ եպիսկոպոսի հետ, որը նրան պատմել է մի լեգենդ Հայաստանի ազատագրման ակնկալութիւնների մասին: Ըստ այդմ ֆրանկները, հայերի օգնութեամբ, պարտութեան են մատնելու թաթարներին, «ֆրանկների թագաւորը առաջ է գնալու մինչեւ Թաւրիզ քաղաքը եւ հիմնելու այդտեղ իր գահը: Ապա նրանք քրիստոնէութեան են դարձնելու ամբողջ Արեւելքն ու բոլոր անօրէններին՝ հաստատելով երկրի վրայ այնպիսի մի խաղաղութիւն, որ վերապրողներն աւաղելու են մեռածներին, որոնց չէր վիճակուած տեսնել նոր դարաշրջանի երանութիւնը»[2]:

Միջազգային նշանակութիւն ունեցող փոխանակային առեւտրի գլխաւոր ճանապարհներից մէկն անցնում էր Նախիջեւանի վրայով: Եւ նրա մերձակայքում գտնուող հայկական գիւղերից շատերը, ինչպէս XVI-XVIII դդ. (Հին Ջուղան, Ագուլիսը, Շոռոթը, Դաշտը եւ այլն), այնպէս էլ դրանցից առաջ (մեծ հաւանականութեամբ՝ Երնջակի ձորում գտնուող գիւղերը), ներգրաւուել էին այդ առեւտրի մէջ: Այդ գիւղերից դուրս եկող վաճառականները, կապուած լինելով արեւելեան ու եւրոպական երկրների հետ, քաջատեղեակ լինելով տարբեր ժողովուրդների վարք ու բարքին, իմանալով մի շարք լեզուներ, նշանակալից դեր էին կատարում

1 **Կ. Գալանոս,** էջ 518

2 Տե՛ս **Ա. Յովհաննիսեան,** Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, Երեւան, 1957, էջ 83-86: Հմմտ. նաեւ **Յ. Յակոբեան,** Ուղեգրութիւններ, հտ. Ա, ԺԳ-ԺԶ դ., Երեւան, 1932, էջ 16-17:

միջազգային արդանքափոխանակութեան մէջ: Այսպիսի միջավայրում, բնականաբար, նպաստաւոր պայմաններ կային Եւրոպայից Արեւելք առաքուող քարոզիչների համար, որոնք Լատինական եկեղեցու դաւանաբանական սկզբունքները մեկնաբանելուց աւելի, սին խոստումներ էին շռայլում եւրոպական երկրների զինական օժանդակութեամբ օտար լծի տակ տառապող ժողովրդի ազատագրման հնարաւորութիւնների մասին[1]:

Հայ ժողովրդի աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդները, միասնական ճակատ կազմելով, անհաշտ կռիւ սկսեցին Երնջակի շրջանում բուն դրած ունիթորների դէմ: Եւ ինչպէս յայտնի է, այդ շարժումը լայն ծաւալ չստացաւ: Նախիջեւանի շրջանի Քռնա, Սալիթաղ, Ապրակունիս, Խոշկաշէն, Ապարաներ, Ջահուկ, Շահապոնք եւ մի քանի այլ գիւղերի կաթոլիկ դարձած հայերը, դիմագրաւելով բազում ճնշումների (թէ՛ մահմեդական իշխանութիւնների, թէ՛ Հայ Լուսաւորչական եկեղեցու կողմից), գոյատեւեցին մինչեւ XVII դ. վերջերը եւ, խզուած լինելով իրենց հոգեւոր կապերը մայր ժողովրդից, զանգուածաբար ընդունեցին մահմեդականութիւն:

* * *

Դէպքերի վերոյիշեալ համառօտ թուարկումն իսկ բաւական է ցոյց տալու Յովհաննէս Քռնեցու ղեկավարութեամբ ծաւալուած ունիթորական շարժման քաղաքական կողմնորոշման սնանկութիւնն ու խիստ վնասակար հետեւանքները հայ ժողովրդի համար: Շրջահայեաց պէտք է լինել ու մեծ զգուշութիւն ցուցաբերել, սակայն, Քռնայում ստեղծուած բարձրագոյն դպրոցի շուրջ համախմբուած եւրոպացի ու հայ վարդապետների գիտական ժառանգութիւնը գնահատելիս: Բարթուղիմէոս Մարաղացին, Պետրոս Արագոնացին, Յովհաննէս ու Յակոբ Քռնեցիները, Յովհաննէս Անգլիացին եւ ուրիշները արդէն 1330 թ. (երբ Բարթուղիմէոսը տեղափոխուեց Քռնա, եւ այնտեղ ստեղծուեց հայ ունիթորների միաբանութիւն) սկսեցին թարգմանել կամ, համագործակցելով միմեանց, հէնց հայերէն լեզուով ստեղծել ծիսական մատեաններ՝ Բրեւիար (Ժամագիրք), Միսալ (Պատարագամատոյց), Դիւռնալ (Ժամուց գիրք), կանոնական հրահանգներ, աղօթագրքեր, դաւանաբանական գրուածքներ եւ այլն: Դրանց մեծագոյն մասը զուրկ է գիտական որեւէ նշանակութիւնից եւ կարող է նիւթ մատակարարել միայն հայոց լեզուի պատմութեան հարցերը եւ ունիթորների եկեղեցական արարողութիւնների ուսումնասիրողներին, բայց նոյն գործիչների ջանքերով թարգմանուեցին ու ստեղծուեցին նաեւ դասագրքեր, քարոզգրքեր, աստուածաբանական աշխատութիւններ ու մեկնութիւններ, իմաստասիրական ու բնագիտական երկեր եւ այլն: Դրանք, ուշագրաւ տուեալներ պարունակելով ժամանակակից կեանքի պատմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական երեւոյթների ուսումնասիրութեան համար, միաժամանակ նոր լոյս են սփռում այն ուղիների վրայ, որով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հայ գիտական միտքը նոր հնա-

1 Բարթուղիմէոս Մարաղացին իր քարոզներից մէկում արեւելեան քրիստոնեաների ծանր քաղաքական ու տնտեսական վիճակը բացատրում է հէնց Հռոմի աթոռից անջատուած լինելու հանգամանքով եւ լատիններին ապագայի խոստումներ է շռայլում եկեղեցիների «միութիւնը» իրականացնելու նախապայմանով: Նա գրում է. «Հաւատացեալ քրիստոնեայք, որ բաժանեցան ի միմեանց եւ ի գլխոյ աթոռոյն Հռոմայ, եւ ցրուեցան եւ անկան ի ծառայութիւն այլազգեաց, այնոցիկ որք եմն են ցրուեալ եւ ցամաքեալ [illegible] եւ զի յերկարեցան ի գերութենս այս, վասն այն ճառս յայս բազմաց: Ով ողորմելի քրիստոնեայք, մի՛ յուսահատիք, զի յայս գերութենէս եւ ի մահուանէս կամիք յառնել, ամէն առ ամէն կամին յօդիլ միջնորդութեամբ չյալն, բանզի քրիստոնեայք կամին միաբանիլ ընդ իրարս եւ ընդ սուրբ եկեղեցւոյն Հռոմայ՝ միջնորդութեամբ սուրբ սիրոյն... զի լինելոց են առնել մի արարողութիւն ի տօնս եւ ի պատարագս: Եւ յորժամ այսպիսի սիրով միաբանին ընդ իրար, յայնժամ գայ ի վերայ նոցա հոգին Աստուծոյ...: Աղաչեսցուք զՔրիստոս զի արժանի արասցէ եւ զմեզ միաբանել» (ՄՄ ձեռ. N 2184, էջ 99բ):

բաւորութիւններ է ձեռք բերում հաղորդակցուելու անտիկ գրականութեան եւ իմաստասիրութեան որոշ ուղղութիւնների, զգալի չափով ընդարձակում հետաքրքրութեան իր շրջանակները եւ համալրում բնական ու հասարակական երեւոյթների մասին դարերի ընթացքում կուտակուած գիտելիքների իր գիտանոցը:

Քռնայի դպրոցի գաղափարական աշխատանքների ղեկավարութիւնը գտնւում էր Բարթուղիմէոս Մարաղացու ձեռքին, գիտնական այս քարոզիչը, որ հայերէն լաւ չգիտէր, հէնց հայերէն լեզուով աշխատութիւն էր ստեղծում Յովհաննէս ու Յակոբ Քռնեցիների օժանդակութեամբ: 1330 թ. տեղափոխուելով Քռնա՝ նա դասախօսական ու մատենագրական գործունէութիւն ծաւալեց մինչեւ իր մահը: Կ. Գալանոսը Բարթուղիմէոսի կեանքի վերջին այս տարիների մասին գրում է. «Իսկ ապա երջանիկ Բարթուղիմէոս ու տէր Յովհաննէս Անկլեցի ի միասին, հանդերձ Յովհաննու եւ Յակոբայ վարդապետացն պարապեցին զանձինս իւրեանց առ ի թարգմանութիւնս Սուրբ Գրոց ի լատին բարբառէ ի հայս, որոց եւս եղեւ ձեռնտու Տր. Պետրոս Արագոնացին ի նոյն ջանս գրոց: Եւ այնչափ աշխատեցան ի սոյն, մինչեւ զի անհամար եղեն գիրք, զորս թարգմանեցին ի մէջ երից ամաց, յորում եկաց կենդանի երանելին Բարթուղիմէոս յետ արարեալ միաբանութեանն, որ յետոյ լի շնորհօք եւ առաքինութեամբ փոխեցաւ ի Տէր յամի Կենարարին Տեառն ՌՅԼԳ (1333)»[1]:

Բարթուղիմէոսից յետոյ այդ գործը գլխաւորեց Պետրոս Արագոնացին, որը մինչեւ իր կեանքի վերջը (մահացել է 1347 թ. յունիսի 3-ին)[2], օգնական ունենալով Յակոբ Քռնեցի «թարգման» կոչուող վարդապետին (որա գործն էր հայերէն սահուն շարադրանքով ներկայացնել լատինացի գիտնական-քարոզչի մտքերը), անդադրում զբաղուած էր մատենագրական աշխատանքով: Ստորեւ, առաջնորդուելով հիմնականում Մ. Ա. Ուդենրիյնի վերը յիշատակուած աշխատութեամբ, օգտագործելով նաեւ հայերէն ձեռագրերի յիշատակարանների մէջ առկայ տուեալներն ու այլ աղբիւրներ, ներկայացնում ենք դոմինիկեան այդ երկու նշանաւոր քարոզիչների ու նրանց հայ գործընկերների կողմից ստեղծուած աստուածաբանական-իմաստասիրական կարեւոր երկերի ցանկը.

1. Ջիլբերտուս Պոռետացու (մհ. 1154 թ.) «Գիրք վեցից սկզբանց» (De sex principus) աշխատութիւնը (թրգմ. Պետրոս Արագոնացի, Յակոբ Քռնեցի, 1334 թ.): Պետրոս Արագոնացին գրել է նաեւ այս աշխատութեան մեկնութիւնը:

2. Ալբերտուս Մեծի (Albertus Magnus, 1193-1280) «Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան» աշխատութիւնը (թրգմ. Պետրոս Արագոնացի եւ Յակոբ Քռնեցի, 1344 թ.):

3. Թովմա Աքուինացու (1225-1274) «Հաւաքումն աստուածաբանութեանը» (Summae Theologiae), տարբեր բաժինների թարգմանութիւնը կատարել են Յովհաննէս Քռնեցին (շուրջ 1329 թ.), Յովհաննէս Անգլիացին (1337 թ.) եւ Պետրոս Արագոնացին (1344 թ.), (վերջին երկուսը՝ Յակոբ Թարգմանի օժանդակութեամբ): Այս մասերը հայկական միջավայրում շրջանառութեան մէջ են դրուել որպէս առանձին միաւորներ՝ ունենալով տարբեր խորագրեր՝ «Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ եւ զօրութեանց նորին», «Յաղագս առաքինութեանց

1 Կ. Գալանոս, էջ 512

2 E. Tisserant, Codices Armeni Bybliothecae Vaticanae, Romae, 1927, էջ 75: Բարթուղիմէոսի, Պետրոս Արագոնացու, Յովհաննէս Քռնեցու մահուան ճշգրիտ թուականները (ամսաթուերով հանդերձ) գրանցուած են Վատիկանի Codices Borgiani Armeni 45 ձեռագրերում: Բարթուղիմէոսը մահացել է 1333 թ. օգոստոսի 15-ին:

հոգւոյն», «Յաղագս բնութեան Հրեշտակաց», «Յաղագս տնօրինութեանն Քրիստոսի», «Յաղագս Է խորհրդոց եկեղեցւոյ» եւ այլն:

4. Բարթուղիմէոս, Գիրք ի վերայ երկուց բնութեանց եւ անձնաւորութեան ի Քրիստոս (Թրգմ. Յովհաննէս Քռնեցի, 1329 թ.):

5. Բարթուղիմէոս, Գիրք դժոխոց (Թրգմ. Յովհաննէս Քռնեցի, 1329 թ.):

6. Համառօտ հաւաքումն եւ յոյժ օգտակար ի դիալէքթիկէն, որ է տրամաբանութիւն, կարգեալ եւ թարգմանեալ ձեռամբ Բարդուղիմէոսի Ֆրանկ եպիսկոպոսի:

7. Բարթուղիմէոս, Յաղագս Վեցօրեայ գործոց արարչութեանն (Թրգմ. Յակոբ Քռնեցի):

8. Բարթուղիմէոս, Քարոզգիրք (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1331 թ.):

9. Պետրոս Արագոնացի, Գիրք դատաստանաց հաւաքեալ ըստ կանոնաց եկեղեցւոյն Հռոմայ (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1331 թ.):

10. Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1339 թ.):

11. Պետրոս Արագոնացի, Գիրք մոլութեանց (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1340 թ.):

12. Պետրոս Արագոնացի, Համառօտ վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1344 թ.):

13. Պետրոս Արագոնացի, Վերլուծութիւն ի վերայ գրոցն, որ կոչի Պերի արմենիաս (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1344 թ.):

14. Պետրոս Արագոնացի, Համառօտ հաւաքումն ի վերայ Ներածութեան Պորփիւրի (Թրգմ. Յակոբ Քռնեցի, 1344 թ.):

15. Համառօտ հաւաքումն ընդդէմ հերետիկոսաց, որ կոչի Սուր Պետրոսի (թարգմանեալ ի վանս Քռնո, ձեռամբ Ֆր. Պետրոսի եւ միջնորդութեամբ Ֆր. Յակոբոսի):

Սրանցից բացի, կան մի քանի տասնեակ աւելի փոքր աշխատութիւններ, որոնցից շատերը թուարկուածների առանձին ընդօրինակուած մասերը լինելով, ինքնուրոյն հետաքրքրութիւն չեն ներկայացնում:

Այս աշխատութիւնները, ստեղծուելով Քռնայի ունիթորների միջավայրում, նրանց դպրոցի ու եկեղեցու հոգեւոր պէտքերի համար, շատ շուտով դուրս են գալիս անձուկ այդ սահմաններից եւ տարածւում Հայ Լուսաւորչական եկեղեցու գիտա-ուսումնական կենտրոններում, հակառակ Քռնայի մատենագիրների եռանդուն արգելքների: Բարթուղիմէոս Մարաղացին, օրինակ, իր Քարոզգրքի յիշատակարանում բանադրանքի սպառնալիքով արգելում է այդ գիրքը հակառակորդներին յանձնելը. «Այլ ի կարողութենէն Քրիստոսի եւ գլխաւոր աթոռոյն Պետրոսի,- գրում է նա,- բանադրանօք լինի մարդն այն եւ ընդ կապանօք, որ տայ զՔարոզգիրքս այս ի ձեռն հակառակաց եւ կամ ի ձեռն սուտ միաբանաց: Զի փորձեցաք բազում անգամ, որ հակառակ մարդիկ զմեր բանս իւրեանց զէն արարին եւ սրով մեր պատերազմեցան ընդ մեզ եւ ընդ ճշմարտութեանն»[1]:

Այս կարգի արգելքները, սակայն, ազդու չեն եղել: Հայոց եկեղեցու գաղափարախօսներից շատերը կարողացել են ձեռք բերել եւ անձամբ կամ իրենց աշակերտների միջոցով

1 **M. A. Oudenrijn,** էջ 131

բազմացնել Քռնայի դպրոցում ստեղծուած վերոյիշեալ աշխատութիւնների մեծ մասը: Այսպէս, օրինակ, 1363 թ. Գրիգոր Տաթեւացին Յովհան Որոտնեցու պատուէրով ընդօրինակել է Մաշտոցի անուան Մատենադարանի N 2382 ձեռագիրը (կամ նրա գաղափար օրինակը)[1], որի մէջ տեղ են գտել նաեւ Բարթուղիմէոսի «Դիալեկտիկան», Ջիլբերտուս Պոռետացու «Վեցից սկզբանց գիրքը» եւ դրա մեկնութիւնը՝ կատարուած Պետրոս Արագոնացու կողմից: Յակոբ Ղրիմեցին Կապոսի վանքում 1389 թ. ընդօրինակել է Մատենադարանի N 3437 ձեռագիրը, որն ամբողջութեամբ ունիթորական գրականութեան յուշարձաններից է բաղկացած (Թովմա Աքուինացի, Պետրոս Արագոնացի եւ այլն), կարելի է այսպիսի տասնեակ այլ փաստեր բերել: Հարցը, սակայն, միայն ընդօրինակութիւնների առկայութեան մասին չէ: Քռնայի դպրոցի իմաստասիրական արտադրանքի մեծագոյն մասը իր ստեղծումից ընդամէնը մի քանի տարի յետոյ մուտք է գործում հայկական ուսումնական բարձրագոյն հաստատութիւններ, մեկնաբանւում հայ բաբունապետների կողմից[2] եւ, որ ամենից կարեւորն է, նրանց միջնորդութեամբ,- ինչպէս արդէն նշեցինք քիչ առաջ,- հայ ուսումնական կենտրոններն են ներթափանցում բնական ու հասարակական երեւոյթների մասին հին աշխարհից ժառանգած նոր տեղեկութիւններ, որոնք XII-XIII դդ. ընթացքում տարածուել էին Եւրոպայում եւ իւրացուել սխոլաստիկայի նշանաւոր ներկայացուցիչների կողմից: Դաւիթ Անյաղթի եւ Անանիա Շիրակացու ժամանակներից երկար ու ձիգ դարեր էին անցել, որոնք գիտական մտքի զարգացման առումով մեծ արդիւնքներ չէին բերել: Այս թարգմանութիւնների շնորհիւ, թէկուզ եւ ոչ անմիջական ակունքներից, այլ միջանկեալ մի շարք օղակների միջնորդութեամբ (յունական ու հելլենիստական մշակոյթ-արաբական ու հրէական թարգմանութիւններ-լատինական սխոլաստիկական գրականութիւն-հայկական թարգմանութիւններ)՝ հայ գիտական շրջանները նոր հնարաւորութիւն են ստանում ծանօթանալու անտիկ գիտութեան նուաճումներին:

* * *

Վերոյիշեալ երեւոյթը բացայայտենք մի բնորոշ փաստով: Ինչպէս ասացինք արդէն, Բարթուղիմէոս Մարաղացին, ի թիւս այլ աշխատութիւնների, Յակոբ Թարգմանի օժանդակութեամբ հայերէն լեզուով շարադրել էր նաեւ «Յաղագս վեցօրեայ արարչութեան» խորագրով ընդարձակ մի մեկնութիւն: Ինչպէս միջնադարեան բոլոր Վեցօրէից մեկնութիւնները, այդ աշխատութիւնը նոյնպէս հնարաւորութիւն էր ընձեռում անդրադառնալու բուսական ու կենդանական աշխարհի եւ մարդու ծագմանը, տիեզերքի կառուցուածքին, բնական տարբեր երեւոյթների ու յարակից բազմապիսի բնագիտական հարցերի: Եւ հէնց միայն այս աշխատութեան մէջ, տարբեր առիթներով, Բարթուղիմէոսը վկայակոչում է հին յունական իմաստա-

1 Այս ձեռագրի ընդօրինակութեան թուականը նշուած է ՊԾԲ (1403), սակայն այն ընդօրինակուած է Յովհաննէս Որոտնեցու համար, ուստի այդ թուականից տարիներ առաջ (Յ. Որոտնեցին մահացել է 1386 թ.): Կարծում ենք, որ թուականը պէտք է սրբագրել՝ ՊԺԲ (1363):

2 Թ. Մեծոփեցին պատմում է, թէ ինչպէս Ապրակունեաց վանքում դպրոց բացած Սարգիս Սորբեցի բաբունապետին կաթոլիկ դարձած մի հայ աբեղայ գաղտնաբար տալիս է Պետրոս Արագոնացու «Գիրք առաքինութեանց» աշխատութիւնից մի օրինակ, որպէսզի նա տեղեակ լինի բովանդակութեանը եւ կարողանայ ճիշտ պատասխաններ տալ Քռնայի ունիթորների հարցումներին: Յետագայում, ուսանողների խնդրանքով, Սարգիսն այդ գրքով «դաս է առում», պատճառ դառնալով շատերի գայթակղութեան: «Աշակերտք նորա,- յայտնում է Մեծոփեցին,- տկարացան ի հաւատոց եւ կամէին ազգափոխ լինել»: Գործին միջամտում է Յովհան Որոտնեցին, իր աշակերտներով հանդերձ եւ այլն (տե՛ս **Թ. Մեծոփեցի,** Պատմութիւն Լանկ Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 37-40):

սէր-գիտականներից (թուարկում ենք ժամանակագրական կարգով)՝ Անաքսագորասին (ն. մ. թ. 500-428), Էմպեդոկլէսին (ծն. ն. մ. թ. 490), Դեմոկրիտէսին (ն. մ. թ. 460-370), Պլատոնին (ն. մ. թ. 427-347), Պտղոմէոսին (II դար ն. մ. թ.), Ստրաբոնին (ն. մ. թ. 54-մթ. 24):

Ինչպէս եւ սպասելի էր, հեղինակը շատ աւելի քաջատեղեակ է եկեղեցական հայրերի եւ եւրոպական սխոլաստիկայի նշանաւոր ներկայացուցիչների աշխատութիւններին, որոնց վրայ նա յաճախ յենւում է, երբեմն ընդարձակ մէջբերումներ կատարելով: Յանուանէ նա յիշատակում է միջնադարեան հետեւեալ մատենագիրներին (դարձեալ թուարկում ենք ըստ ժամանակագրութեան). Բարսեղ Կեսարացի (329-379), Յովհան Ոսկեբերան (347-407), Օգոստինոս (353-430), Բոեցիոս (475-525), Դիոնիսիոս Արիոպագացի (VI դար), Բեդա (674-735), Յովհան Դամասկացի (676-777), Իբն-Սինա (կոչուած՝ Ալի Բուսինա, 987-1037), Իբն Ռոշդ (կոչուած՝ Աւերոես, 1126-1198), Մայմոնիդ (կոչուած՝ Ռաբի Մոսէս, 1135-1204), Բոնաւենթուրա (1121-1174), Թովմա Աքուինացի (1225-1274) եւ այլն:

Բարթուղիմէոսի «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատութեան ամենաուշագրաւ կողմն այն է, սակայն, որ նրա մէջ, տարբեր առիթներով, վկայակոչւում ու քաղուածքներ են արւում Արիստոտելի տասից աւելի այնպիսի աշխատութիւններից, որոնք հայ ընթերցողի համար յայտնագործութիւն էին: Ահա դրանց ցանկը. Գիրք էթիքոց (ωIluikէ), Գիրք կենդանեաց (Per*** tq z¨a °sto=¤ai), Գիրք ֆիզիքոց(Fusikq կամ Per¤ jQsewV), Մետաֆիզիկա (Metq tq jusikq), Գիրք երկնից (Per¤ oQranoЉ), Գիրք թոփիքոց (Topikq), Գիրք քնոյ եւ արթնութեան (Per*** upnou ka¤ egrhgprsewV), Գիրք լինելութեան եւ ապականութեան (Per*** genåsewV ka*** jnorէV), Գիրք հոգւոց (Per*** yuc†V), Գիրք Մետէորոց (Metewrologikq)[1]: Մի քանի անգամ առանց հեղինակի անուան յիշատակութեան վկայակոչուած է նաեւ «Գիրք անկոց» խորագրով մի աշխատութիւն, որն ըստ երեւոյթին, Արիստոտէլի բնագրով մեզ չհասած եւ լատիներէն ու արաբերէն թարգմանութիւններով միայն պահպանուած Per*** jutvn -ն է:

Եթէ վերյիշենք, որ միջնադարեան հայ ընթերցողը Արիստոտելին ճանաչում էր միայն տրամաբանական երկու աշխատութիւններով, ապա պարզ կլինի, թէ Բարթուղիմէոսի հէնց միայն այս երկի միջնորդութեամբ բնագիտական տարբեր հարցերի մասին որքան նոր ու հետաքրքրական տեղեկութիւններ են գրանցւում հայերէն եւ դրւում լայն շրջանառութեան մէջ: Հայ ընթերցողը «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատութեան միջնորդութեամբ, առաջին անգամ լինելով, տեղեկանում է, որ ըստ անտիկ որոշ գիտնականների («առաջին փիլիսոփայքն»,- այսպէս է վկայակոչում նրանց Բարթուղիմէոսը)՝ ոչնչից ոչինչ չի կարող առեղծուել. «յորմէ երեւի, թէ առեղծանելն, որ է յոչնչէ ինչ առնել, ըստ նոցանց է անկարելի»[2]: Եղել են այնպիսի գիտնականներ,- նրանց Բարթուղիմէոսը «յիմարք» է անուանում,- որոնք ասել են, թէ երկինքը չէ, որ շարժւում է երկրի շուրջ, այլ ընդհակառակը՝ «երկիրս շարժի, եւ երկինքն հանգչին»[3], որ արեգակից եւ լուսնից շատ աւելի մեծ աստղեր կան, բայց փոքր են երեւում, որովհետեւ երկրից շատ են հեռու[4] եւ այլն:

Բարթուղիմէոսը, խօսելով արեգակի չափերի մասին, յայտնում է, որ ըստ հին փիլիսո-

1 Աշխատութիւնների թուարկումը կատարել ենք այն հերթականութեամբ, ինչ նրանք յիշատակուել են Բարթուղիմէոսի «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատութեան մէջ:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. N 9478, էջ 176ա:

3 Նոյն տեղում, էջ 208բ-209ա

4 Նոյն տեղում, էջ 214բ-215ա

փաների այն երկրից ութ անգամ է միայն մեծ, սակայն «ըստ նորոց աստեղաբաշխից, որ ճշմարտագոյն իմացան,- ասացին զարեգակն զճԿԵ (165)-պատիկ քան զերկիրս»[1] (իրականում արեգակի տրամագիծը մեծ է երկրի տրամագծից 109 անգամ), այս աստղաբաշխները, արեգակի ու լուսնի խաւարումները դիտելով «նախաճանաչ լինին… ի բազում իրս, որք անգիտելիք են ի մարդկանէ»[2]: Բարթուղիմէոսը սխալ է համարում այն գիտնականներին, որոնք բոլոր աստղերին համատեսակ են համարում. ասում է, որ ըստ Աւեռոէսի նրանք տարատեսակ են («ամենայն աստեղք բաժանին սեռիւ»), իսկ ուրիշ գիտնականների կարծիքով, նրանք ոչ թէ ըստ սեռի, այլ ըստ տեսակի՝ տարբերւում են միմեանցից (Բարթուղիմէոսը, այս երրորդ կարծիքն է ճշմարիտ համարում[3]: Ինչպէ՞ս են բազմանում կենդանիները: «Ոչ ինչ կենդանի կարէ ծնանիլ առանց սերման»,- այսպէս է ասում Աւեռոէսը (բերում է եւ այլ տեսակէտներ), սակայն ինքը համամիտ է նրանց, ովքեր գտնում են, թէ «անկատար կենդանիները» կարող են ծնուել առանց սերմի՝ «ի փտելութենէ եւ յապականութենէ» տարբեր նիւթերի. խօսում է նաեւ այն մասին, որ «ի խառնմանէ զանազան տեսակաց՝ ծնանի նորագոյն տեսակ»[4]: Մանրամասնօրէն անդրադառնում է մարդու ուղղահայեաց կեցուածքի հարցին, յանգում է այն եզրակացութեան, որ այդ կեցուածքն է, որ հնարաւորութիւն է տալիս մարդուն ճանաչելու «վերկնային եւ վերկրաւոր» մարմիններին, ի տարբերութիւն կենդանիների, որոնք իրենց ի «յերկիր կորացեալ» երեսով չեն կարողանում լայն հորիզոնով դիտել շրջապատը: Այնուհետեւ նա նկատում է, որ եթէ մարդը լինէր կենդանիների նման «կորացեալ յերկիր», ստիպուած պէտք է լինէր ձեռքերն օգտագործել «ի տեղի առաջադնաց ոտից», ուստի չպիտի կարողանար ձեռքերով գործ կատարել: Նոյն պատճառով, պէտք է բերանով քաղէր իր կերակուրը, ուստի կունենար «պինդ ու ստուար» շրթունքներ ու չէր կարողանայ խօսել, ուստի դառնայ բանաւոր կենդանի եւ այլն[5]: Ամբողջ աշխատութիւնը լի է տիեզերական մարմինների, երկրի ու երկնքի, կենդանական ու բուսական աշխարհի տարբեր երեւոյթների մասին անտիկ աշխարհից ժառանգած այս կարգի տեղեկութիւններով ու դատողութիւններով, որոնցով, անտարակոյս, բազմապատկւում էին հայ ընթերցողների բնագիտական գիտելիքները, եւ սէր ու հետաքրքրութիւն էր արթնանում գիտական հարցերի նկատմամբ:

Այսպիսի դրական նշանակութիւն ունեցան միջնադարեան հայ գիտութեան յետագայ զարգացման համար նաեւ Բարթուղիմէոսի ու նրա գործընկերների վերը թուարկուած աշխատութիւններից շատերը եւ, մասնաւորապէս, Յովհաննէս Քռնեցու «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» երկասիրութիւնը, որով հայ քերականական միտքը խզում էր հազարամեայ իր կապանքները, դուրս գալիս փակուղուց ու հայոց լեզուի իսկական քերականութիւն դառնալու ընթացքի մէջ մտնում:

***

Երնջակի շրջանի հայ ունիթորների պարագլուխ Յովհաննէս Քռնեցին ծնուած պէտք է լինի 1290-ական թթ. այդպէս ենք կարծում՝ նկատի ունենալով, որ նա 1328 թ. մի քանի տարի առաջ աւարտել էր արդէն Գլաձորի համալսարանը եւ կարգուել Երնջակի շրջանի հոգեւոր

1 Նոյն տեղում, էջ 215ա

2 Նոյն տեղում, էջ 216ա

3 Նոյն տեղում, էջ 220ա

4 Նոյն տեղում, էջ 225ա-225բ, նաեւ 240բ

5 Նոյն տեղում, էջ 233բ

առաջնորդ: 1328 թ. նրա համար եղաւ շրջադարձային. մեկնելով Մարաղա՝ նա սկսեց աշակերտել Բարթուղիմէոսին եւ այնքան տարուեց նրա գիտութեամբ ու Կաթոլիկ եկեղեցու հետ միաբանելու գաղափարներով, որ շատ չանցած, ինչպէս ասել ենք արդէն, ամբողջովին ծառայագրուեց ունիթորական շարժմանը: Հէնց Մարաղայում եղած մէկուկէս տարիների ընթացքում «միջնորդութեամբ պարսից թարգմանչի»[1] լատիներէնից հայերէն թարգմանեց Թովմա Աքուինացու «Հաւաքումն աստուածաբանութեան» ծաւալուն երկի բաժիններից մէկը (եկեղեցու եօթ խորհուրդների մասին) եւ, ինչպէս ինքն է ասում, «դայլ բազում գրեանս»[2]: Շատ արժէքաւոր է նրա «Առ միաբանեալ եղբարսն Հայոց» խորագրով յայտնի թուղթը, որի մէջ տալիս է Երնջակի ունիթորական եկեղեցու հիմնաւորման պատմութիւնը՝ փորձելով բացատրել կաթոլիկ դաւանանքն ընդունելու եւ Հռոմէական եկեղեցու հետ միաբանելու իր որոշումը. լուսաւորչական հայերին նա վերագրում է 19 «աններելի» մոլորութիւններ («ոչ ունին զամենայն եօթն խորհուրդս եկեղեցւոյ», «ոչ առնեն զյատուկ ձէթ վասն դրոշմանն տղայոց» եւ այլ անհեթեթութիւններ), կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում իր մասին եւ այլն[3]:

Բարթուղիմէոսի եւ միւս լատին քարոզիչների հետ Քռնա տեղափոխուելուց յետոյ Յովհաննէսը մխրճւում է միաբարական շարժման գործերի մէջ. Բարթուղիմէոսի մահուանից յետոյ (1333 թ.) ուղեւորւում է «առ յարեւմտական լատինսն՝ ի մայրաքաղաքն Հռովմ»: Վերադառնալով հայրենիք՝ ընտրւում է «գաւառական առաջնորդ մերոյ կարգիս միաբանողաց», հաստատւում այդ պաշտօնի մէջ Յովհաննէս Փլորենտացի լատին եպիսկոպոսի կողմից, որ պապի կարգադրութեամբ 1330 թ. հաստատուել էր Թիֆլիս քաղաքում՝ այդտեղ փոխադրելով Զմիւռնիայի եպիսկոպոսական աթոռը[4]: Այդ պաշտօնի մէջ Քռնեցին մնում է մինչեւ իր մահը, որ տեղի է ունեցել 1347 թ. յունուարի 6-ին[5]: Ըստ այդմ՝ Երնջակում ունիթորական եկեղեցի ստեղծելուց յետոյ նա ապրել է ընդամէնը 17 տարի. այդ ժամանակամիջոցում այստեղ ստեղծուել են իմաստասիրական ու ծիսական բազմաթիւ մատեաններ, եւ նրանցից մեծագոյն մասն օժտուած է Յակոբ Քռնեցու կողմից շարադրուած մի յիշատակարանով, որի մէջ տրուել է Յովհաննէս Քռնեցու կեանքի ու գործունէութեան կարեւոր դէպքերի տարեգրութիւնը. ասւում է, որ նա «յոյժ հմուտ եղեալ էր ի մէջ ընկերաց իւրոց Հայաստանեայցս ուսման», սակայն չի բաւարարուել ձեռք բերածով (խօսքն, անշուշտ, Գլաձորի համալսարանում ստացած գիտելիքների մասին է) եւ, որովհետեւ «առեալ էր սակաւ մի դճաշակ գիտութեան հռովմայեցւոցն», միաբանել է նրանց հետ, յաղթահարելով մեծ դժուարութիւններ. Բարթուղիմէոս Մարաղացուն բերել է Քռնա, գիւղի «առաջնորդ» (իմա՛ կալուածատէր) պարոն Գորգի՝ իր սուեղբօր միջոցներով այստեղ կառուցել է «զհրաշալի եկեղեցիս եւ զընակութիւնս», հաւաքել շուրջը ընկերակիցներից շատերին եւ այլն: «Արդ,- ասուած է այնտեղ,- վերոասացեալ վարդապետն Յոհան եղեւ պատճառ բազում բարութեան, զի ժողովեաց աստ վարդապետք լատինացոց եւ ի Հայոց, տածելով զամենեսեան ըստ հոգւո եւ ըստ մարմնոյ, եւ թարքմանեաց եւ թարքմանէ գիրս բազումս՝ ողջաշահս եւ լուսաւորիչս»[1]:

Ի՞նչ գրքեր է Քռնայում ստեղծել կամ թարգմանել Յովհաննէս վարդապետը, տուեալներ չեն պահպանուել այս հարցին սպառիչ պատասխան տալու: Դրանցից մէկը եւ, գուցէ, ամենակարեւորը հէնց «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատութիւնն է՝ մեր քննութեան առարկան[2], որի միակ ընդօրինակութիւնը պահպանուել է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի N 293 ձեռագրի մէջ[3]:

Բացառիկ արժէք ունեցող այդ ձեռագիրը, որ իր էջերում պահպանել է Յովհաննէս Քռնեցու Քերականութիւնից բացի, նաեւ Պետրոս Արագոնացու մի շարք իմաստասիրական մեկնութիւնների (Արիստոտելի «Ստորոգութեանց» ու «Պերի արմենիասի», Պորփիւրի «Ներածութեան») ընդօրինակութիւնները, արտագրուել է 1350 թ. Ֆրա Յակոբի ձեռքով Կաֆա քաղաքում, հայ ունիթորների երկրորդ կարեւոր կենտրոնում, «ընդ հովանեաւ սրբոյն Նիկոլաոսին»:

Կ. Գալանոսը, խօսելով Հայոց միաբանողաց կարգի Քռնայում հաստատուելու մասին, յայտնում է, որ հայ ունիթորները «ոչ միայն ի Հայս եւ ի Վիրս շինեցին զվանորայս, այլ եւս սփռեալք մինչեւ յայնկոյս Սեաւ ծովուն, հասին ի մայրաքաղաքն Կաֆա, որ յայնժամ կայր ընդ տէրութեամբ ֆռանկաց Ջենուացւոց, եւ անդ հիմնեցին զհասարակական համալսարան ուսմանց (լատիներէն օրինակում՝ universale studiorum collegium), յորմէ ելին ոչ սակաւ արք իմաստագոյնք»[4]: Ուշագրաւ է, որ Յովհաննէս Քռնեցու մահուանից ընդամէնը երեք տարի անց նրա Քերականութեան օրինակներն արդէն տարածուել են Հայաստանից դուրս ստեղծուած ունիթորական ուսումնական կենտրոններում:

Հ. Տաշեանը Վիեննայի Մխիթարեանների մատենադարանի հայերէն ձեռագրերի իր

---

1 Յովհաննէս Քռնեցին Մարաղա մեկնելու ժամանակ դեռեւս լաւ չգիտէր լատիներէն, իսկ Բարթուղիմէոսը՝ հայերէն, ուստի սկզբնական շրջանում նրանք համագործակցում էին «միջնորդութեամբ պարսիկ թարգմանչի»:

2 Սրանց մէջ եղել են Ս. Օգոստինոսի կանոնները ու քարոզող եղբայրների (այսինքն՝ դոմինիկեանների) Սահմանադրութիւնը, մի գիրք «Խղճի դիպուածների վրայ» (տե՛ս «Բազմավէպ», 1922, էջ 139), հաւանաբար նաեւ Բարթուղիմէոսի վերը յիշատակուած «Գիրք ի վերայ երկուց բնութեանց...» եւ «Գիրք դժոխոց» աշխատութիւնները:

3 Ինչպէս ասել ենք վերը, այս թուղթը տպագրուած է Կղեմէս Գալանոսի վերոյիշեալ աշխատութեան մէջ (էջ 513-521):

4 «Հայ-դոմինիկեան մատենագրական ծանօթութիւններ», Բազմավէպ, 1922, էջ 138

5 Վատիկանում պահուող վերոյիշեալ (Codices Borgiani Armeni 45) հայերէն ձեռագրի յիշատակարանի մէջ գրուած է, որ «վերոասացեալ վերախնամողս Յոհան Քռնեցի յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս յունուարի Զ (6)», թուականը՝ 1347 թ. Նշուած է յիշատակարանի սկզբում. «...յամի ծնընդեան Փրկչին մերոյ հազարերորդի երեք հարիւրերորդի քառասուներորդի եօթներորդի եւ ի թուականութեանս Հայոց եօթն հարիւրերորդի յիսներորդի վեցերորդի» (E. Tisserant, նշ. ցուցակ, էջ 74-75):

1 Տե՛ս, օրինակ, «ԺԴ դ. հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 216-217, 338 եւ այլն:

2 Ոմանք կարծել են, թէ այս Քերականութիւնը Յովհաննէս Քռնեցին շարադրել է Մարաղայում եղած մէկուկէս տարիների ընթացքում (1328-1329 թթ.)՝ քարոզող եղբայրներին (այսինքն՝ լատին կրօնաւորներին) հայերէն ուսուցանելու նպատակով (տե՛ս «Բազմավէպ», 1922, էջ 139): Այս տեսակէտը (աւելի ճիշտ՝ ենթադրութիւնը) հիմնազուրկ է ու անհաւանական, քանի որ «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատութիւնը հայոց լեզուի գործնական քերականութիւն չէ, այլ իր հիմնական մասով քերականութեան տեսութիւն, որտեղ քննարկւում են այնպիսի հարցեր, որ լատին քարոզիչները պէտք չունէին նոր սովորելու, այն էլ՝ հայերէն՝ իրենց համար գրեթէ անհասկանալի լեզուով:

3 Մեր հաճելի պարտքն ենք համարում խորին շնորհակալութիւն յայտնել Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ղեկավարներին, որոնք մեր տրամադրութեան տակ դրեցին այդ մեծարժէք ձեռագրի մանրաժապաւէնը եւ միշտ, ըստ կարելւոյն, օժանդակում են մեզ մօտ տարուող բանասիրական աշխատանքներին՝ առաքելով անհրաժեշտ բնագրերի լուսանկարներ եւ յայտնելով տուեալներ իրենց հարուստ ձեռագրատանը, դիւանում ու գրադարանում պահուող մեծարժէք նիւթերի մասին:

4 **Կ. Գալանոս**, էջ 523: Կաֆան թուրքերի կողմից գրաւուելուց յետոյ (1475) հայերը գանգուածաբար գաղթեցին ուրիշ երկրներ: Հայ կաթոլիկների այս միաբանութիւնը տեղափոխուեց Ջենովա, եւ, ըստ որոշ տեղեկութիւնների, մինչեւ այժմ այնտեղ յարատեւում է Կաֆայի հայ ունիթորներից սերուած միաբանութիւնը, որ ժառանգութիւնը կատարում է հայկական ծէսով:

նշանաւոր ցուցակում ձեռագրի մեջ հետաքրքրող մասը նկարագրել է շատ թռուցիկ՝ այսպէս.

«Թղ. 2ա-29ա[2]. Յովհաննու Քռնեցւոյ «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին: Քանզի մարդկային գիտութիւն պատճառի ի յիրաց, վասն այսորիկ պիտոյ է զի եւ գիտութիւնքը բաժանեսցին ըստ օրինակի իրացն» եւն: Թղ. 2բ. «Յաղագս գրոյ: Գիր է. Լ. եւ Զ. յԱյբէ մինչեւ ի Քէ եւ գիր ասի, վասն զի գրելով իմն գաղափարի» եւն: Թղ. 3ա. Վասն վանկի եւ փաղառութեանց: Վանկ է պարառութիւն տառից» եւն եւն: Բազմաթիւ մանր գլուխներով, որոնք թուարկեալ չեն. ի միջի այլոյ՝ Թղ. 4ա. «Յղ. անուան: Անուն է մասն բանի հոլովական» Թղ. 7ա[2]. «Յղ. դերանուան.» Թղ. 9ա. «Յղ. բայի». յետոյ՝ Մակբայի Շաղկապի եւ Թղ. 15ա. «Յղ. նախդրի», Թղ. 20ա. «Յղ. ուղղականին» եւ միւս հոլովներու վրայ եւն: Վերջինը՝ 27բ. «Յղ. վերլուծութեանց» ծայրը (Թղ. 29ա) կայ յիշատակարանս. «Ես Ֆրա Յոհան...» (բերուած է յիշատակարանը, որին կծանօթանանք յետագայ էջերում)[1]:

Մ. Ուդենրիյնը, ձեռքի տակ ունենալով սոսկ այս նկարագրութիւնը, ստացել է ոչ ճիշտ տպաւորութիւն, որ իբր Յ. Քռնեցու քերականական աշխատութիւնը ուրիշ բան չէ, քան Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի» աշխատութեան մի մեկնութիւն (*"est commentarius in antiquam versionem Artis Grammaticae Dionysii Thracis"*)[2]:

Նոյն աղքատիկ տուեալներն է ունեցել նաեւ Գ. Ջահուկեանը. Հայ միջնադարեան քերականագիտական յուշարձանների հմուտ ուսումնասիրողը յանգել է այն ճիշտ հետեւութեան, որ Յ. Քռնեցու «Համառօտ հաւաքումը» շարադրուած է ոչ միայն հայկական նիւթերի, այլեւ լատիներէնի քերականութիւնների հիման վրայ, ուստի այն հաւանաբար եղել է «17-18-րդ դդ. տարածուած լատինատիպ քերականութիւնների նախակարապետը»[3]:

Եւ իրօք, հեղինակի իսկ վկայութեամբ, «Համառօտ հաւաքումը» շարադրուած է հայերէն ու լատիներէն լեզուներով գոյութիւն ունեցող քերականական աշխատութիւնների հիման վրայ: Իր կատարածն ինքը՝ Քռնեցին, ներկայացնում է այսպէս. «Ես Ֆրա Յոհան՝ մականուն կոչեցեալ Քռնեցի. Համառօտ հաւաքեցի ի Հայոց եւ ի Լատինացւոց՝ զսակաւս ի բազում շարագրաց եւ ի քերթողաց, տալով դուռն եւ ճանապարհ նորամարզիցն, մտանել եւ ընթանալ ի քաղաքս իմաստից» (բնագիր, էջ 29ա): Ասում է «ի բազում շարագրաց եւ քերթողաց», սակայն բուն աշխատութեան մէջ յիշատակում է սոսկ երկուսին. մէկի անունը չգիտի, ճանաչում է «Քերթող» մականունով, միւսը Պրիսցիանոսն է:

«Քերթողի» մասին գրում է այսպէս. «Որպէս տայ խրատ Քերթողն՝ ասելով «զի ողբերգութիւնն դիւցազնաբար վերծանեսցուք, եւ զկատակերգութիւնն աշխարհաւրէն, եւ զամբանականն ուժգնակի...» (բնագիր, էջ 28բ). բառացի քաղուած է Դիոնիսիոս Թրակացուց[4]: Նշանաւոր յոյն այս հեղինակը, որ ապրել է մեր թուարկութիւնից առաջ II դ., յունական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ գտնուող երկրներում մէկ հազարամեակից աւելի համարուել է ամենահեղինակաւոր գիտնականը քերականագիտութեան մարզում: Թարգմանուել է բազմաթիւ լեզուներով. Հայկականը համարւում է յունական դպրոցի ամենավաղ

1 Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 719

2 **M. A. Oudenrijn**, էջ 205

3 **Գ. Ջահուկեան**, Քերականական եւ ուղղագրական աշխատութիւնները, էջ 291

4 Հմմտ. **Ն. Ադոնց**, էջ 2-3: Ուշագրաւ է, որ գրաբարեան որոշ ձեւեր ինչպէս այստեղ, այնպէս էլ միւս քաղուածքներում փոքր-ինչ ձեւափոխում են Յովհաննէս Քռնեցու գրչի տակ՝ մօտենալով աշխարհաբարին:

շրջանի թարգմանութիւններից, որ իրագործուել է V դ. վերջին տասնամեակներին եւ դարձել հայ քերականագիտական մտքի անկիւնաքարը: Միջնադարեան բոլոր հայ քերականները, սկսած Դաւթից մինչեւ Առաքել Սիւնեցի, տարբեր ձեւերով սոսկ մեկնել են ու բացատրել նրա «Արուեստ քերականի» (*Tecnh grammatikh*) աշխատութեան հայերէն հին թարգմանութիւնը՝ կաշկանդուած լինելով նրա ճնշող հեղինակութեամբ եւ, ըստ մեծի մասի, անտեղեակ լինելով, թէ ով է իրենց ուսումնասիրած քերականութեան հեղինակը:

Յովհաննէս Քռնեցու աշխատութեան մի զգալի մասը բառացի քաղուած է Դիոնիսիոսից: Այսպէս. առաջին («Յաղագս պարզ գիտութեանց») գլխի հետեւեալ ենթագլուխները ամբողջութեամբ կամ մասամբ արտագրուած են նրանից.

ա. Յաղագս գրոյ (ամբողջութեամբ),

բ. Յաղագս վանկի եւ փաղառութեանց (մի նախադասութիւն),

գ. Յաղագս երկար փաղառութեանց (գրեթէ ամբողջութեամբ),

դ. Յաղագս սուղ փաղառութեանց (ամբողջութեամբ),

ե. Յաղագս հասարակ փաղառութեանց (ամբողջութեամբ).

զ. Յաղագս բառի (մի նախադասութիւն),

է. Յաղագս անուան (առանձին հատուածներ սկզբից եւ միջին մասերից):

Դիոնիսիոսից է քաղուած նաեւ չորրորդ գլխի («Յաղագս առոգանութեան») մի հատուած եւ հինգերորդի («Յաղագս ներչափական տառից») կէսից աւելին[1]:

Դիոնիսիոսի քերականութիւնից շարահիւսութիւնը բացակայում է, ուստի շարահիւսութեան հարցերը շարադրելիս Յովհաննէս Քռնեցին հետեւել է հիմնականում Պրիսցիանոս (*Priscianus*) լատին քերականին[2]:

VI դ. սկզբներին ապրած նշանաւոր այս գիտնականն իր *"Institutionum grammaticarum"* 18 մասերից բաղկացած ընդարձակ աշխատութեան մէջ ի մի էր բերել ու համադրել լատիներէնի քերականութեան բոլոր նուաճումները: Ինչպէս յոյն եւ հայ միջնադարեան քերականները դարեր շարունակ զբաղուել էին սոսկ Դ. Թրակացու աշխատութեան մեկնութեամբ, այնպէս էլ բովանդակ Եւրոպայում մինչեւ XIII դ. սերտում, մեկնաբանում եւ ուսուցանում էին

1 Բնագրի տողատակում նշել ենք վերոյիշեալ տեղիների տարբերութիւնը Դիոնիսիոս Թրակացուց:

2 Պրիսցիանոսի մասին տե՛ս **Т. А. Амирова, Б. А. Ольховиков, Ю. В. Рождественский**, Очерки по истории лингвистики, М., 1975, էջ 162-166, **В. Томсен**, История языковедения до конца XIX века, М., 1938, էջ 33: Նաեւ Կ. Տիւրոյի (Thurot) "Histoire des doctrines grammaticales" աշխատութեան մէջ, որի համառօտ վերաշարադրութիւնը, կատարուած Ա. Չուդինովի կողմից, հրապարակուած է ռուսերէն (տե՛ս Очерки из истории языкознания, развитие грамматических теорий в средние века, А. Чудинова, Воронеж, 1871):

Մինչեւ XIII դ. Պրիսցիանոսի աշխատութիւններից գիտէին "De Accentibus"-ը, (որ վերագրւում է նրան) եւ «Institutionum grammaticarum»-ը, որի առաջին 16 գրքերը յայտնի էին Prisciani maior անունով եւ բովանդակում էին հնչիւնափոխութեան եւ ձեւաբանութեան ուսմունքը, իսկ վերջին երկու գրքերը, յայտնի Prisciani minor անունով, շարահիւսութեան ուսմունքն էին: Պրիսցիանոսի աշխատութիւնը համարւում է լատիներէնի առ մեզ հասած ամենամանրակրկիտ ու կատարեալ քերականութիւնը: Եւ մինչեւ XIII դ. Եւրոպայի բոլոր ուսումնական կենտրոններում ըստ Պրիսցիանոսի էին ուսումնասիրում լատիներէնը: Բայց այդ դարի ընթացքում նա աստիճանաբար առաջնութիւնն սկսեց բաժանել իր երկու մեկնիչների՝ Պետրոս Ելիասի եւ Ռոբերտ Կիլվարդբիի հետ, իսկ XIV դ. Պրիսցիանոսը դուրս մղուեց համալսարաններից Ալեքսանդր Վիլադիեցու «Դոկտրինալիս» եւ Էւրարդ Բեթունեցու «Գրեցիզմ» աշխատութիւններով: Սակայն այս նոր հեղինակները բոլոր միջնադարեան մեկնիչների նման բանաքաղներ էին լոկ:

Պրիսցիանոսին՝ հին հեղինակներից նրան համահաւասար համարելով միայն Դոնատոսին[1]:

Քռնեցին Պրիսցիանոսին յանուանէ յիշատակում է մի քանի անգամ. նախ խօսքի մէջ բայի կատարած դերը բացատրելիս («Վասն զի ասէ Պրիսխիանոս, թէ ոչինչ բան է կատարեալ թարց բայի», բնագիր, էջ 16ա), այսուհետեւ վերաբերականութիւն տերմինը մեկնաբանելիս («Արդ վերաբերականութիւն է նախ ասացեալ իրին վերստին յիշեցումն, որպէս ասէ Պրիսխիանոս», բնագիր, էջ 24ա), սակայն նշանաւոր այդ քերականի հետեւողութեամբ է կառուցում իր աշխատութեան երկրորդ մասն ամբողջութեամբ. ստեղծում է տերմիններ՝ լատիներէն տերմինների հայացմամբ, յաճախ էլ նոյնութեամբ օգտագործում է հէնց Պրիսցիանոսի տերմինները՝ առանց թարգմանութեան: Այսպէս, օրինակ, ասում է, որ շարամանութիւնների մի շարք եղանակներ կան, որոնցից ինքը հինգի մասին է խօսելու. այնուհետեւ թուարկում է դրանք՝ օգտագործելով ճիշտ այն տերմինները, որոնք ընդունուած էին լատինական քերականագիտութեան մէջ ըստ Պրիսցիանոսի. Փրոլէմսիս, Սէլէմսիս, Սիմթոզիս, Զէօմայ, Անթիթոզիս (բնագիր, էջ 23ա):

Սրանցից պէտք չէ, անշուշտ, հետեւեցնել, որ Յովհաննէս Քռնեցին Պրիսցիանոսից բացի, ուրիշ լատինական սկզբնաղբիւրներ չի ճանաչել: Բայի ոչ դիմաւոր ձեւերին անդրադառնալով Քռնեցին, առանց թարգմանելու, հայերէն տառադարձութեամբ մէջ է բերում նաեւ gerundia եւ supina տերմինները. «Եւ անանձնական բայք են,- գրում է նա,- ամենայն աներեւոյթականք, եւ ջերունդիականք եւ սուփինականք» (բնագիր, էջ 11ա): Բայց յայտնի է, որ սրանք որպէս քերականական տերմիններ շրջանառութեան մէջ են դրուել XIII դ. Պրիսցիանոսի նշանաւոր մեկնիչներից մէկի՝ Պետրոս Յելիուսի կողմից[2]: Այս փաստը առիթ է ընծայում մտածելու, որ մեր հեղինակը ձեռքի տակ ունեցել է նաեւ Պետրոս Յելիուսի մեկնութիւնը կամ թերեւս հէնց այդ մեկնութեան միջնորդութեամբ է ծանօթացել Պրիսցիանոսի "Institutionum grammaticarum" աշխատութեանը: Սրանք, սակայն, խնդիրներ են, որ կարող են լուծում ստանալ միայն յետագայում, երբ հնարաւոր լինի բաղդատել Յովհաննէս Քռնեցու աշխատութիւնը լատիներէն լեզուի՝ մինչեւ XIV դ. շարադրուած բազմաթիւ քերականութիւնների հետ: Այդ մեր նպատակից դուրս եւ հնարաւորութիւնից վեր համարելով՝ կարծում ենք, որ Քռնեցու աղբիւրների հարցը քննարկելիս պէտք չէ շրջանցել Բարթուղիմէոս Մարաղացուն: Անտարակոյս «Համառօտ հաւաքումն յաղագս քերականին» աշխատութեան շարադրմանը մեծապէս նպաստել է գիտնական այդ քարոզիչը՝ ոչ միայն յորդորելով, այլեւ գործնական օժանդակութիւն ցոյց տալով: Վերյիշենք այստեղ, թէ ինչպիսի մեծարանքի խօսքեր էր շռայլում Քռնեցին իր լատին ուսուցչի հասցէին. «Ի նորին իմաստահոս աղբերէ,- գրում էր նա,- որպէս ծարաւի եղջերու այնպէս լցեալ եղէ, մինչ զի ի նոյն ընթացս ժամանակին, միջնորդութեամբ պարսիկ թարգմանչի, դարձուցաք ի լատին բարբառոյ ի հայս... բազում գրեալս»[3]:

---

1 Դոնատոսը եւս ծանօթ է եղել Հռոմի մատենագիրներին: Արիստոտելի «Պերի արմենիասի» Պետրոս Արագոնացու մեկնութեան մէջ, օրինակ, նշանաւոր այդ քերականից բերուած է հետեւեալ հատուածը. «...յերկուանալի է յայնմանէ, որ ասէ (Արիստոտէլ), թէ անուն եւ բա[յ] եղիցի ասութիւն միայն, եւ այն զի են անուանք ոմանք եւ բայք, որք ունին զիմացումն կատարեալ բացերեւութեան, քան զի զանուանէ ասէ Դոնատոսն, թէ յորժամ ասէ զի՞նչ է լաւագոյն ի ներկայումս, եւ պատասխանեցի՝ Համեստութիւնն, այդ անունս այս՝ Համեստ, ունի զիմացումն կատարեալ բանի» (ՄՄ ձեռ. N 1684, էջ 177ա):

2 А. Чудинов, նշ. աշխ., էջ 47

3 Կ. Գալանոս, էջ 518

Իսկ որ Բարթուղիմէոս Մարաղացին լայն տեղեկութիւններ է ունեցել նաեւ քերականութեան տարբեր հարցերի մասին, այդ պարզ երեւում է նրա «Հաւաքումն համառօտ եւ յոյժ օգտակար ի դիալէքթիկէն» նշանաւոր աշխատութիւնից, որի մէջ կան քերականագիտական բազմաթիւ ընդարձակ եւ արժէքաւոր հատուածներ[1]:

Պէտք չէ մոռանալ եւ այն հանգամանքը, որ Յովհաննէս Քռնեցին, լինելով Գլաձորի համալսարանի շրջանաւարտ, քաջատեղեակ էր նաեւ քերականական այն գիտելիքներին, որ դասաւանդում էին այնտեղ Եսայի Նչեցի րաբունապետն ու նրա օգնական վարդապետները:

Այս բոլորը, անշուշտ, կարեւոր նախապայմաններ էին հայերէնի մի նոր քերականութիւն ստեղծելու, բայց ոչ պակաս նշանակութիւն ունէր եւ այդ ծանր պարտականութիւնը ստանձնած անձնաւորութիւնն ինքը:

Հայ քերականական միտքը աւանդական արահետից մայրուղի դուրս բերելու համար ե՛ւ համարձակութիւն էր պէտք, ե՛ւ գիտելիքների պաշար: Եւ Յովհաննէս Քռնեցին օժտուած էր այդ յատկութիւններով: Քռնեցու կենսագրութեան մասին խօսելիս նշել ենք արդէն, որ մինչեւ Մարաղա գնալն իսկ նա ինչ-որ չափով գիտէր լատիներէն. առիթ ենք ունեցել յիշելու, որ գիտէր նաեւ պարսկերէն, քանի որ սկզբնական շրջանում «պարսիկ թարգմանչի» միջնորդութեամբ էր համագործակցում Բարթուղիմէոսին՝ լատիներէնից հայերէն թարգմանութիւններ կատարելիս: «Համառօտ հաւաքման» մէջ կան վկայութիւններ եւ այն մասին, որ Քռնեցու համար անծանօթ չէին նաեւ յունարէնն ու արաբերէնը. պատմական որեւէ վկայութիւն չունենալով էլ՝ կարող ենք համոզուած լինել, որ նա, թէկուզ եւ ոչ կատարելապէս, գիտէր նաեւ մոնղոլերէն ու թուրքերէն՝ Հայաստանը նուաճած քոչուորների լեզուն, եւ այլն: Ըստ այդմ՝ Քռնեցին լեզուագէտ մի գիտնական էր՝ ծանօթ հնդեւրոպական, սէմական եւ թուրքական լեզուաընտանիքներին պատկանող մի շարք լեզուների: Այս հանգամանքը, անշուշտ, կարեւոր նշանակութիւն ունէր իր առջեւ ծառացած լեզուաբանական բազմազան խնդիրների յաջող լուծման համար[2]:

Եւս մի կարեւոր խնդիր: Յովհաննէս Քռնեցին, ինչպէս միւս, այնպէս էլ իր այս աշխատութիւնը շարադրել է գրաբար լեզուով. «Համառօտ հաւաքման» մէջ գրաբար են ոչ միայն

---

1 Ծանօթանանք բայի սահմանման եւ բայերի խոնարհման մասին Բարթուղիմէոսի տեսակէտներին:

«Բայն սահմանի այսպէս. բայ է ձայն նշանական ըստ կամաց, ամանակաւ, որոյ մասն ոչ է նշանական զատեալ որոշակի, ուղղակի. եւ է միշտ զայլմէց ասիցել նշանակ...» (ՄՄ ձեռ. N 69, էջ 276ա):

«Ըստ քերթողաց Ե (5) խոնարհմունք են բա[յ]ից, որ են այսք. սահմանական, աներեւոյթ, հրամայական, ըղձական, ստորադասական: Միայն առաջին խոնարհումն է բա[յ], որ է սահմանական, այլ է ոչ բոլորովին, վասն զի այս առաջին խոնարհումն, որ է սահմանական, բաժանի ի Ե (5) ժամանակս: Առաջին է ներկայ՝ կու ընթանում, երկրորդն է անցեալ անկատար, որպէս կու ընթանայի, երրորդն է անցեալ կատարեալ՝ ընթացայ, չորրորդն է անցեալ գերակատար՝ ընթացեալ եմ, հինգերորդն է ապառնի՝ ընթացայց:

Իսկ միայն բա[յ] սահմանական ներկայ ժամանակի կոչի բայ՝ ըստ Դիալէքթիկաց, որպէս՝ կու ընթանամ, կու ընթանաս, կու ընթանայ, կու ընթանամք, կու ընթանայք, կու ընթանան, իսկ այլ Դ (4) ժամանակ սահմանական խոնարհմանն եւ այլ ամենայն Դ խոնարհմունք՝ ոչ են բա[յ], այլ հոլովք բա[յ]ից» (նոյն տեղում, էջ 276բ): Այստեղ կան քերականագիտական եւ այլ կարեւոր հատուածներ:

2 Բերենք երկու օրինակ: Գոյականների սեռերի մասին խօսելիս Քռնեցին գրում է. «Գիտացիր աստ, զի սերից զանազանութիւն կամ իմացումն ասութեանցն թէպէտ են յայտնի ի յոյն եւ լատին բարբառ, այլ ոչ ի հայումս զրուցատրութեանց, այլ ճապաղ եւ ցիր եւ ցան. վասն այսորիկ փութով անցցուք յայլ իրս» (բնագիր, էջ 6ա):

Երկակի թուի մասին ասում է. «Գիտելի է, զի ի բարբառս յունաց եւ արաբացոց լինի երկուորական նշան ասութեանց, այլ ոչ ի հայս եւ ի լատինն. վասն այսորիկ ոչ է պարտ բռնադատել եւ դնել երկուորական նշան եւ լինել եւ երեւիլ ի յոչ հարստութենէ հարուստ» (բնագիր, էջ 6ա):

Դիոնիսիոսից քաղուած տեղիները, այլեւ բոլոր քերականական սահմանումներն ու հեղինակի բացատրութիւնները, բայց աշխարհաբարախառն միջին հայերէն է այն լեզուն, որը ներկայացնում է ընթերցողին այլեւայլ առիթներով յօրինուած օրինակ-նախադասութիւններով. միջին հայերէն է բայերի խոնարհման համակարգը, ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները կազմւում են կու մասնիկով՝ կու սիրեմ, կու գնամ, կու խնդամ... կու սիրէի, կու գնայի, կու խնդայի... Իսկ ինչպէս յայտնի է, հէնց կու մասնիկն է համարւում «միջին հայերէնի բացարձակ որոշիչ նշանը»[1]: Այդպիսին է նաեւ մակար (իմա՛ երանի, օչ, թէ իցէ) բայականչութիւնը, որով կազմւում է Քռնեցին ըղձական անկատար եւ ըղձական գերակատար (տերմինները Քռնեցունն են) բաղադրեալ ժամանակները. մակար թէ սիրէի, մակար թէ սիրեալ էի եւ այլն:

Մանօթանանք մի քանի օրինակ-նախադասութիւնների.

Ես կու գնեմ զձին ի Պետրոսէ խ (40) դեկնի.

Վասն ոչխի կու գնամ:

Կու նուիրեմ թագաւորին:

Ջատագով կու լինիմ ընկերին:

Բազ կու գամ բարեկամին:

Կու առաջնորդեմ կուրին:

Կու ցաւակցիմ աղքատին:

Կու նաչխեմ զատւնս,

Կու առնեմ ուրախութս, կու կարեմ սրոցութս,

Կու փախչեմ զկատուն փոքր գնով.

Դէպի ի վեր գնացաք, այնչափ գնացաք՝ մինչեւ տեսաք:

Այս է ինձի հայր, այս է ինձի ծառայ եւ այլն եւ այլն:

Սրանք առատ նիւթ են տալիս մասնագէտին՝ ուսումնասիրելու Արեւելեան Հայաստանի կենտրոնական շրջաններից մէկի խօսակցական լեզուն XIV դ. առաջին կիսամեակում:

«Համառօտ հաւաքման» պատմա-գիտական արժէքը, անշուշտ, չի սպառւում սրանով. հայագիտութեան տարբեր բնագաւառի մասնագէտներ առաջիկայում այս երկից սկզբնաղբիւրից քաղելու են իրենց հետաքրքրող հարցերի մասին շահեկան եւ ուշագրաւ բազմաթիւ տուեալներ: Սակայն հաւանական է, որ Յովհաննէս Քռնեցու աշխատութիւնը, որպէս հայոց լեզուի քերականութիւն, առաջին հերթին իր մեծ նպաստն է բերելու հայ քերականական մտքի պատմութեան ուսումնասիրութեանը[2]:

1 Հ. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, II մաս, Երեւան, 1951, էջ 443

2 [Այդ խնդիրների ուսումնասիրութեանն է նուիրուած Լ. Գ. Խաչերեանի «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը եւ քերականական միտքը V-XVI դարերում» երկհատոր գիրքը (Լիզբոն, 1992): Յովհաննէս Քռնեցուն վերաբերող էջերը (263-278), ցաւօք, բնութեան փոխարէն լեցուն են հրատարակիչներին հասցէագրուած անզուսպ յանդիմանութիւններով ու «որակումներով»]:

ԴԻԱՀԵՐՁՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Միջնադարից մեզ հասած հարուստ ձեռագրական ժառանգութեան մէջ երկրի տնտեսական ու սոցիալական կեանքի ուսումնասիրութեան համար կարեւորագոյն նշանակութիւն ունեցող սկզբնաղբիւրներ են հանդիսանում եկեղեցիներում կարդացուած քարոզները:

Իրենց բովանդակութեամբ քարոզները բաժանւում են մի շարք խմբաւորումների: Մեծ մասամբ նրանք մեկնողական բնոյթի են եւ նպատակ ունեն Աստուածաշնչի որեւէ տողի մանրակրկիտ քննարկմամբ բարոյագիտական խրատներ տալ ժողովրդին, արմատացնել քրիստոնէական մորալն ու Եկեղեցու դոգմաները:

Սակայն թուով քիչ չեն նաեւ պատմական որեւէ դէպքի կամ գիտական հարցի առիթով կարդացուած քարոզները, որոնցից, առաւել չափով քան նախորդներից, կարելի է քաղել սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների, կենցաղի, ժողովրդի հաւատալիքների, ինչպէս եւ գիտութեան ու արուեստի վերաբերեալ հետաքրքրական այնպիսի փաստեր ու ակնարկներ, որ այլ ժանրի ձեռագիր աշխատութիւնների մէջ սակաւ են հանդիպում: Սոյն յօդուածով մենք բժշկագիտութեան պատմաբանների ուշադրութիւնն ենք հրաւիրում XIII դ. նշանաւոր մատենագիր Յովհաննէս Երզնկացու մի քանի քարոզների վրայ, որոնցում պահպանուել են կարեւոր տեղեկութիւններ միջնադարեան հայ բժշկութեան մասին:

Յովհաննէս Երզնկացին ծնուել է մօտաւորապէս 1256 թ.:

Յովհաննէսի գրական, գիտական, մանկավարժական ու քաղաքական գործունէութեան մասին անգամ համառօտ տեղեկութիւններ հաղորդելու կարիքը, մեզ հետաքրքրող նիւթի կապակցութեամբ, չի զգացւում: Նշենք միայն, որ նա հեղինակ է արուեստով գրուած բազմաթիւ բանաստեղծութիւնների, կազմել է Դիոնիսիոս Թրակացու Քերականութեան հայ հին մեկնիչների աշխատութիւնների շարայարմամբ «Քերականի հաւաքածոյ մեկնութիւն», գրել է տիեզերագիտական երկեր, բարոյագիտական խրատներ, մեկնութիւններ եւ այլն եւ այլն:

1281 թ. Երզնկացին լինում է Երուսաղէմում[1]: Վերադարձին մտնում է Կիլիկիա եւ սիրով հիւրընկալւում գիտութիւնների հովանաւոր Յակոբ կաթողիկոսի (1268-1286), ինչպէս եւ Լեւոն Բ թագաւորի կողմից:

Որպէս բոլորից ճանաչուած մեծանուն ու հեղինակաւոր վարդապետ, գիտական ու եկեղեցական գործերից զատ, բազմաթիւ քարոզներ է կարդում արքայանիստ Սսում, Դրազարկում, Աւարզայում եւ Կիլիկիայի այլ քաղաքներում[2]: Այդ քարոզներից յատկապէս հետաքրքիր է իր բովանդակութեամբ 1283 թ., Հեթում եւ Թորոս արքայորդիների, ինչպէս եւ այլ իշխանութիւնների ասպետական կարգը մտնելու առթիւ կազմակերպուած հանդէսում արտասանածը, որով Երզնկացին քարոզում է մարդասիրութիւն, արդարութիւն, խնամք հպատակների նկատմամբ եւ այլն:

Հաւանօրէն նոյն 1283 թ. էլ Երզնկացին թողնում է հիւրընկալ Կիլիկիայի սահմանները,

* «Տեղեկագիր» (հասարակ. գիտութիւններ), 1947, N 4, էջ 83-90

1 Երուսաղէմում է, հաւանաբար, գրել «Յորդորակ եկեղեցւոյ» գողտրիկ ձօնը, Ստեփանոս վարդապետ Կոռիկոսցու խնդրանօք:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. N 2173, էջ 1ա, 66ա, 86ա, 101ա եւ այլն:

որովհետեւ արդէն 1284 թ. նրան գտնում ենք Թիֆլիսի եկեղեցիներից մէկում տիեզերագիտական բովանդակութեամբ դասախօսութիւն կարդալիս: Այսպիսով, Երզնկացին Կիլիկիայում եղել է 1281-1284 թթ. միջեւ ընկած ժամանակամիջոցում, ուստի Կիլիկիայում կարդացած քարոզների համար ունենք վստահելի ժամանակագրական եզրեր (1281-1284)[1]:

Քարոզները ունկնդիրներին դիւրամատչելի դարձնելու, ինչպէս եւ մեծ թուով հանդիսականներ գրաւելու համար, քարոզիչ վարդապետները դիմում էին մի շարք հնարների:

Տաղանդաւոր քարոզիչ Վարդան Այգեկցին իր քարոզները համեմում էր հետաքրքրական առակներով, որոնք յետագայում, անջատուելով քարոզներից, Վարդանի անունով մեզ հասած առակների ժողովածուների համար ատաղձի դեր կատարեցին:

Այլ քարոզիչներ մուծում էին քարոզների մէջ անգամ առանձին բանաստեղծութիւններ, ինչպէս եւ գեղարուեստական խօսքին բնորոշ մի շարք յատկութիւններով (պատկեր, համեմատութիւն, մետաֆորա, էպիտետ եւ այլն) աւելի հետաքրքրական էին դարձնում քարոզները:

Յովհաննէս Երզնկացու քարոզների ամենաբնորոշ կողմը՝ կեանքից վերցուած ու բոլոր ունկնդիրներին հասկանալի համեմատութիւններով վերացական նիւթը պարզեցնելն ու հաճելի դարձնելն է:

Բերենք մի օրինակ. «Ի թագաւորանիստ քաղաքն ի Սիս». Քրիստոսի Ծննդեան ու մկրտութեան տօնին կարդացած քարոզում, հանդիսականներին հասկացնելու համար, թէ ինչպիսի խորհրդաւոր ու հրաշալի տօն է ծննդեան ու մկրտութեան տօնը, եւ թէ ինչպիսի մեծ ոգեւորութեամբ ու շքեղութեամբ պէտք է հաւատացեալները կատարեն այդ տօնի հանդէսները: Երզնկացին դիմում է հետեւեալ համեմատութեանը.

«Յորժամ նոր արքայ աշխարհակալ յաթոռ թագաւորութեան նստիցի եւ գիրս թագաւորական հրամանի յաշխարհն առաքիցէ, ի բազմամբոխ ժողովս քաղաքացն եւ ի յոգնակի շինուածս փողոցացն, աւետեաց իմն հնչիւն եւ բերկրական դիմաց տեսութիւն եւ խրախճանութիւնս ամենապատիկս ընդ բոլոր հրապարակս քաղաքին առնիցեն, զփողոցն զարդարելով ի բազմածաղիկ նկարագործական կտաւոցն ծածկութից. ծառս եւ ծաղիկս ոստոց եւ համադամ պտղոցն գեղեցկութեամբ վայելչացուցանեն զիւրաքանչիւր զդրունս եւ զխանութս: Եւ զանազան գործօնեայքն արհեստիցն զիւրեանցն զարդարել փութան փողոցս. եւ այսպէս հրապարակաւ զուրախութիւն սրտիցն առնիցեն» եւ այլն[2]:

Հետեւութիւնը պարզ է. եթէ երկրաւոր թագաւորի պատուին կատարւում են նման խրախճանքներ, «ապա քանի՞ եւս առաւել պարտ է մեզ զուարճանալ տէրունական տօնիւք»:

Այսպիսի համեմատութիւններից մի քանիսը վերաբերում են բժշկագիտութեանը, եւ հայ բժշկութեան պատմութեան մի շարք հարցերի մասին լուրջ խորհրդածութիւնների հնարաւորութիւն են ընձեռում:

1 Ղ. Ալիշանն իր «Երզնկա եւ Յովհաննէս Երզնկացի» յօդուածում (տե՛ս «Յուշիկք Հայրենեաց Հայոց», հտ. Բ, Վենետիկ, 1870) յայտնում է, որ Երզնկացին այցելել է Կիլիկիա նաեւ 1293 ու 1316 թթ.: Սակայն Երզնկացու կենսագրութեանն ու գրական գործունէութեանը լաւատեղեակ Ա. Սրապեանի կարծիքով, վերոյիշեալ ենթադրութիւնը չի հաստատւում եղած ձեռագիր ու տպագիր փաստերի մանրակրկիտ քննութեամբ:

2 ՄՄ ձեռ. N 2173, էջ 66ա-բ. բերուած հատուածի «եւ զանազան գործօնեայքն արուեստից զիւրեանցն զարդարել փութան փողոցս» տողերում ակնարկուած են արհեստաւորական համքարութիւնները, որովհետեւ միջնադարում իւրաքանչիւր համքարութիւն ունէր իր փողոցը: Այս տեղեկութիւնը նոյնպէս ցոյց է տալիս, թէ քարոզներն ինչքան բան կարող են տալ երկրի տնտեսական կեանքի չպարզաբանուած հարցերի լուծման համար:

Մեզ հետաքրքրող առաջին համեմատութիւնը գտնւում է ճէ (107) սաղմոսի մեկնութեանը նուիրուած քարոզում[1]:

Երզնկացին քննարկում է այն հարցը, թէ ինչու Աստուած խստացրեց եգիպտական փարաւոնի սիրտը, որի հետեւանքով եգիպտացիք կրեցին բազմաթիւ պատիժներ ու արհաւիրքներ: Պատասխանը սրամիտ չէ. «Որպէսզի,- գրում է նա,- ուսցին ամենայն արարածք զզաւրութիւն եւ զիրաւունս Աստուծոյ»:

Այս բացատրութիւնը համոզիչ դարձնելու ցանկութեամբ Երզնկացին դիմում է իր սիրած համեմատութիւն կատարելու, օրինակ բերելու մեթոդին: Օրինակն անշուշտ պէտք է լինէր այնպիսին, որ ցրէր ունկնդիրների մօտ առաջացած հնարաւոր տարակուսանքը: Հանրայայտ ու սովորական կեանքից վերցուած համեմատութիւնը միայն կարող էր կատարել այդ դերը: Եւ այստեղ Երզնկացին յարմար է գտնում յիշեցնելու հանդիսականներին հերձման փաստը: Բժիշկը մահապարտին հերձելով, չնայած բազմապիսի ցաւերի ու տանջանքների միջոցով սպանում է նրան, բայց, ծանօթանալով մարդու ներքին օրգաններին, սովորում է հիւանդներին բուժելու արուեստը եւ շատ-շատերին փրկում մահուան ճիրաններից:

Մեզ հետաքրքրող հատուածը, առանց որեւէ փոփոխութեան, հետեւեալն է. «Զոր օրինակ բժիշկ հանճարեղ եւ իմաստուն մահապարտ ոք առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ եւ ազգի ազգի կտտանօք եւ կեղեքելով, մինչ գտանէ զամենայն յօդուածոցն եւ զլլացն եւ զերակացն եւ զփորոտեացն որպիսութիւն, ի ձեռն միոյ լլկանաց բազմաց արասցէ աւգուտ» (էջ 214բ):

Բերուած հատուածը տարակուսանքի ու կասկածների որեւէ տեղիք չի տալիս. պարզ է, որ Երզնկացու ունկնդիրների միջավայրում (իսկ մենք տեսանք, որ այդ քարոզները նա կարդացել է Կիլիկիայում, 1281-1284 թթ. միջեւ) բժիշկները ոչ միայն կատարում էին հերձում, այլեւ հերձումն այնքան հանրայայտ օպերացիա էր, որ նրա որպէս համեմատութիւն յիշատակութեամբ հնարաւոր էր անգամ ընդունելի ու համոզիչ դարձնել աստուածաշնչային այս կամ այն պատմութիւնը:

Հասկանալու համար Յովհաննէս Երզնկացու հաղորդած տեղեկութեան նշանակութիւնը բժշկագիտութեան պատմութեան համար, համառօտ մի ակնարկով վերյիշենք դիահերձման պատմութիւնը:

Որքան մեզ յայտնի է, առաջին յիշատակութիւնները դիահերձման մասին վերաբերում են վերջին դարերին մ.թ.ա.: Յայտնի է, որ Եգիպտոսում Պտղոմէոս թագաւորի կարգադրութեամբ մահապարտների դիակները յանձնւում էին բժիշկներին՝ գիտական հետազօտութիւններ կատարելու նպատակով:

Յետագայ դարերում կրօնական նախապաշարումների արմատաւորման շնորհիւ դիահերձումները դադարեցին: Եզակի բժիշկներ միայն երբեմն կատարում էին կենդանիների հերձումներ:

Միջին դարերում դիահերձումը համարւում էր պղծութիւն ու դիւային մի բան, եւ դրա

1 Յովհաննէս Երզնկացու այս եւ միւս քարոզների համար օգտագործել ենք ՄՄ N 2173 (2187) ձեռագիրը, որը Յովհաննէս Երզնկացու աշխատութիւնների մի ժողովածու է՝ գրուած XIV դ. (ստացողն է Ստեփանոս Րաբունին, բաղկացած է 424 թղթեայ թերթերից): Սոյն քարոզը, «Նորին (Յ. Երզնկացի) ի ՃԷ սաղմոսն (ի բանն)՝ Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է» վերնագրով, գտնւում է ձեռագրի 210ա- 224ա էջերում:

մէջ կասկածուողները ենթարկւում էին ամենածանր հալածանքների:

Անգամ Սալերնոյի հանրահռչակ բժշկագիտական դպրոցում, ըստ լաւատեղեակ մասնագէտների, հերձւում էին միայն կենդանիների դիակներ: Ճիշտ է, Սիցիլիայի բժշկապետ Մարցիանը հաղորդում է, որ Ֆրիդրիխ Բ-ի հրամանով (1238) թոյլատրւում էր 5 տարին մի անգամ բժիշկների ու վիրաբուժների ներկայութեամբ Սալերնոյի դպրոցում կատարել դիահերձում, սակայն այդ տեղեկութիւնը դեռեւս ստուգման ու հաստատման կարիք է զգում[1]:

Միայն XVI դ. Պիոս Դ պապի կոնդակով եկեղեցու կողմից թոյլատրուել է ու առաջարկուել դիահերձումը՝ որպէս հիւանդութիւնների բուժումն աւելի գիտական հիմքերի վրայ դնելու կարեւոր միջոց. դրանից յետոյ հերձումը բժիշկների պրակտիկայում դարձաւ սովորական եւ անհրաժեշտ օպերացիա: Այս բնագաւառում յատկապէս հռչակուեց Վեզալիոսը (1514-1564), որը, դիահերձման մեծ փորձ ձեռք բերելով, իր "De corporis humani fabrica" աշխատութեան մէջ կարողացաւ ուղղել յոյն մեծանուն բժիշկ Գալենի սխալները (Գալենը կատարել էր միայն կապիկների հերձումներ):

Նշենք նաեւ, որ բժշկագիտութեան պատմութիւնը կտրականապէս պնդում է, որ արաբական բժշկագիտութեան մէջ դիահերձումների անգամ եզակի դէպքեր չեն եղել, եւ այդ մասին մտածելն անգամ համարուել է սրբապղծութիւն եւ անարգանքի արժանի յանցգնութիւն[2]:

Այսպիսով, Յովհաննէս Երզնկացու տեղեկութիւնը մեծ արժէք է ստանում ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային բժշկագիտութեան պատմութեան համար:

Շարունակենք մեզ հետաքրքրող հատուածի քննութիւնը:

Ինչպէս տեսանք, բժիշկները հերձում կատարում էին մահապարտների վրայ եւ, ըստ երեւոյթին, ոչ թէ դիակների, այլ՝ կենդանի մահապարտների («Բժիշկ հանճարեղ եւ իմաստուն մահապարտ ոք առեալ բազմաղիմի մահուամբ սպանանէ»,- ասուած է քարոզում):

Իսկ նրանք իրաւունք կունենային կենդանի մահապարտի մարմինը հերձել միայն այն դէպքում, երբ հանդէս գային ոչ որպէս անհատ գիտնականներ, այլ պետական հովանաւորութիւնը վայելող մարդիկ, որոնց գործունէութիւնը պետութեան կողմից դիտուէր որպէս հանրօգուտ, հասարակութեան շահերից բխող գործունէութիւն: Հակառակ դէպքում անհնարին է բացատրել, թէ ինչ իրաւունքով եւ միջոցներով պէտք է որեւէ բժիշկ տէր դառնար դատական մարմինների կողմից մահուան դատապարտուած յանցագործի մարմնին:

Մի շարք անուղղակի վկայութիւններ գալիս են հաստատելու մեր այս ենթադրութիւնը: Թուենք դրանցից մի քանիսը:

Ղեւոնդ Ալիշանը յայտնում է, որ Լեւոն Ա-ի արքունիքում հիւրընկալուած մի ֆրանկ (եւրոպացի) տեսել է այնտեղ վաթսունից աւելի ներքինի սպասաւորներ, որոնցից շատերը ներքինացուել էին ի պատիժ գործած յանցանքի[3]:

Մի այլ եւրոպացի (Burchardus de Monte Sion), 1824 թ. այցելելով Կիլիկիա եւ թողնելով իր շատ հետաքրքրական յուշերը, ուշադրութիւն է դարձնում թագուհու ապարանքում եղող 40 ներքինի սպասաւորների վրայ եւ հաղորդում է, որ «այն ոճրագործները, որոնք թեթեւ

1 Т. Мейер-Штейнег, К. Зудгоф, История медицины, М., 1925, с. 196-198
2 Л. А. Оганесян, История медицины в Армении, т. I, Ереван, 1946, с. 209
3 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885 թ.

ոճիր ունեն կատարած, ամորձատւում են, որպէսզի հայրերի ոճրագործութիւններն ընդօրինակող զաւակներ չծնեն»[1]:

Ներքինացումը բարդ եւ վիրաբուժական հմտութիւն պահանջող օպերացիա է: Ուստի սոյն փաստերն էլ գալիս են հիմնաւորելու Կիլիկիայում պետական ու դատական մարմինների եւ բժիշկների միջեւ սերտ համագործակցութիւն լինելու մասին արուած վերոյիշեալ ենթադրութիւնը:

Յանցագործների հանդէպ, նայած յանցանքի չափին (պետութեան կողմից ներքինացման կամ մահուան դատապարտելու դէպքում), բժիշկները ստանձնում էին դատարանի որոշումն իրագործողների դեր՝ մահուան դատապարտուածին դիահերձելով (գիտական նպատակներով), ներքինացման դատապարտուածին ներքինացնելով (ե՛ւ գիտական, ե՛ւ արքունիքին անհրաժեշտ սպասաւորներ մատակարարելու նպատակներով):

Վերոյիշեալից դժուար չի եզրակացնել, որ Կիլիկիայում բժշկութիւնն ու առողջապահութիւնը դիտուել է որպէս պետական գործ եւ ֆինանսաւորուել է պետութեան կողմից:

1833 թ. Սսում պատահական պեղման հետեւանքով դուրս եկած մի արձանագրութիւն ուղղակի կերպով հաստատում է այս:

Արձանագրութիւնը վերաբերել է Զապէլ թագուհու կառուցած հիւանդանոցին եւ հետեւեալն է. «Յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս, քրիստոսասէր թագուհւոյ Զապէլի, ի թուին հայոց ՈՂ»: Հասկանալի է, որ Լեւոն Բ-ի դուստր թագուհի Զապէլը, 1241 թ. արքայանիստ Սսում կառուցելով հիւանդանոց, պէտք է հոգար նաեւ հիւանդանոցի ծախքերը, մտածէր բժշկական կադրեր աճեցնելու մասին եւ այլն եւ այլն:

Արժանի է յիշատակութեան, որ Կիլիկիայում ընդհանրապէս սէր է տածուել դէպի գրականութիւնն ու գիտութիւնը, հովանաւորուել ու զարկ է տրուել կուլտուրական հաստատութիւններին:

Բժշկութիւնն այս առումով բացառութիւն չի կազմել եւ եղել է ուշադրութեան կենտրոնում: Բժիշկները մերձաւոր կապեր են ունեցել ժամանակի ամենանշանաւոր քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ: Որպէս օրինակ՝ նշենք, որ Ներսէս Շնորհալին «ի խնդրոյ» Մխիթար Հերացի բժշկապետի գրել է բանաստեղծութիւններ, Ներսէս Լամբրոնացին մօտ է եղել մի այլ բժշկի՝ Արուսայլիզին, եւ նրա պատուէրով գրել է «Անուանք քաղաքաց շինողաց» աշխատութիւնը եւ այլն եւ այլն:

Նշանակալից է նաեւ, որ որոշ իշխաններ ցանկացել են ուսումնասիրել բժշկութիւնը եւ այդ նպատակով արտագրել են տուել բժշկարաններ (յիշենք Հեթում պատմիչին, որի մասին իր համար արտագրուած մի բժշկարանում պահպանուել է հետեւեալ յիշատակարանը. «Զստացող բժշկարանիս զմեծ Սեւաստոս եւ թագաւորազն եւ բարեհամբաւ զայրն զպարոն Հեթում տէր Կոռիկոսոյ... յիշեսջիք ի Քրիստոս»):

Հասարակութեան մէջ բժիշկների ունեցած դիրքն ու բարեկեցութիւնը նկատի ունի Յովհաննէս Երզնկացին, երբ իր մի այլ («Ի ԽԶ սաղմոսն Դաւթի, ի մեկնողաց բանից յարմարեալ») քարոզում գրում է. «Մի յուսայք յիշխանս... զի ոչ են միշտ իշխանք, եւ դիւրաթառամ է փառք եւ մեծութիւն նոցա իբրեւ զծաղիկ խոտոյ, եւ մի յայլ որդիս մարդկան, թէ

1 "Descriptio Terrae Sanctae" (Peregrinatores Medii aevi quattuor, ed. F. C. M. Lauent, Lipsiae, 1864)

արուեստագէտ է կամ բժիշկ եւ թէ այլ ինչ յերկրաւորացս յաջողեալ…»[1]*:*

Այս հատուածը պարզում է, որ բժիշկները իշխանների ու արհեստաւորների նման տնտեսական ու իրաւական այնպիսի պայմաններում են գտնուելիս եղել, որ շարժել են հասարակ ժողովրդի նախանձը:

Մնում է պարզել եւս մի խնդիր:

Հերձումները Կիլիկիայում կատարուե՞լ են արդեօք սովորական տիպի բուժանոցներում, թէ՞ պետութեան կողմից հովանաւորուող, թերեւս պետական սեփականութիւն հանդիսացող հիւանդանոցներից մի քանիսը միաժամանակ եղել են բժշկական դպրոցներ, որոնցում եւ ուսուցման նպատակով յաճախակի կատարուել են հերձումներ:

Վերյիշենք, որ Ֆրիդրիխ Բ-ի 1238 թ. հրամանով դիահերձման իրաւունք ստանում էին ոչ թէ բոլոր բժիշկները, այլ միայն Սալերնոյի բժշկագիտական դպրոցը (այն էլ՝ 5 տարին մէկ անգամ), ուր սովորում էին բազմաթիւ աշակերտներ, եւ որոնց ողջ ուսուցման ընթացքում անհրաժեշտ էր մէկ անգամ տեսնել մարդու հերձուած մարմին:

Այս հարցին դրական պատասխան տալու միջոց չէինք ունենայ, եթէ այս անգամ էլ Յովհաննէս Երզնկացին իր քարոզներից մէկում կատարած չլինէր մի թանկարժէք համեմատութիւն:

1283 թ. Հեթում եւ Թորոս արքայորդիների ասպետական կարգի մէջ մտնելու հանդէսում արտասանած իր քարոզում բազմապիսի բարոյագիտական ու մարդասիրական խրատներ տալով՝ Երզնկացին յորդորում է նորաօծ ասպետներին լաւատեղեակ լինել երկրի կառավարման եւ ժողովրդին սփոփելու, նրա պահանջները հոգալու գաղտնիքներին եւ բերում է հետեւեալ համեմատութիւնը.

«Զոր օրինակ եթէ ոք անուանէ զինքն բժիշկ, կազմէ բժշկանոցս, ստանայ աշակերտս, ժողովէ եւ դեղս բազումս, եւ թէ ոչ գիտէ զարուեստ եւ խառնուած դեղոցն՝ սուտ են ասացեալքն ամենայն: Այսպէս եւ իշխան եւ թագաւոր բժիշկ է հասարակաց ժողովրդեան, ունի բժշկանոց՝ արքունիսն, աշակերտս՝ սպասաւորսն, հիւանդս՝ զժողովուրդս, եւ թէ ոչ գիտէ զթագաւորական եւ իշխանական սահման եւ զգործ՝ ոչ է ճշմարիտ»[2]*:*

Ի՞նչ իմաստով է հատուածում գործածուած «բժշկանոց» տերմինը: Այդ բառին Հայկազեան լեզուի Նոր բառգրքում տրուած մեկնութիւնները անբաւարար են թւում հատուածի իմաստին խորամուխ լինելու համար: Ըստ բառգրքի հեղինակների՝ «բժշկանոց» եւ «բժշկարան» բառերը նոյնանիշ են եւ համապատասխանում են յունական (յունարէն) բառին: Նրանք կարողացել են տարբերել այդ բառերի հետեւեալ իմաստները մեր մատենագրութեան մէջ՝ (ա) տուն եւ կրպակ բժշկի, (բ) տեղի եւ առիթ բժշկութեան, (գ) գիրք կամ մատեան բժշկութեան արհեստի, (դ) դեղ եւ դարման բժշկութեան եւ այլն: Մեր կարծիքով՝ Յովհաննէս Երզնկացին

1 ՄՄ ձեռ. N 2173, էջ 265բ

Օգտուելով առիթից՝ ստորեւ բերում ենք նոյն քարոզից բժշկութեան սահմանման մասին Երզնկացու հետաքրքիր դատողութիւնները. «…բժշկական արուեստ նիւթ ունի զմարդկային մարմինն, զի յաղագս մարդկան մարմնոյ եմանէ երակացն, եւ ըստ ժամանակին եւ ճաշակին եւ բնութեան տեղոյն՝ դեղս կազմել յարմարական շարախառնութեամբ: Իսկ կատարումն բժշկութեան է կամ զներկայ առողջութիւն պահել կամ զ՚ի բաց գնացեալն վերստին դարձուցանել» (էջ 261ա):

2 ՄՄ ձեռ. N 2173, էջ 98բ

իր քարոզում այլ իմաստով է գործածել «բժշկանոց» տերմինը: Հատուածի իմաստը պահանջում է տեսնել դրա տակ ինչ-որ հաստատութիւն, չէնք՝ աշակերտներով ու հիւանդներով, այլապէս արքունիքի եւ «բժշկանոցի» միջեւ համեմատութիւնը անհիմն կլինէր:

Երզնկացին չի օգտագործել յաճախ գործածուող «հիւանդանոց» տերմինը, որովհետեւ այն նշանակում է հիւանդների բուժման վայր (հիւանդ-ան-ոց), այլ՝ «բժշկանոց», որը եթէ համեմատենք նման ձեւով ստեղծուած «վարդապետ-ան-ոց» (վարդապետների ուսուցման վայր), «դպր-ան-ոց» (հնում դպիրների ուսուցման վայր) տերմինների հետ, ապա ակնյայտ կդառնայ, որ այն նշանակել է եւ մէջ է բերուել Երզնկացու կողմից «բժշկական դպրոց», աւելի ճիշտ՝ «կլինիկա» իմաստով: Այս մեկնութիւնը հաստատւում է հատուածի բովանդակութեամբ: Վերյիշենք. այնտեղ ասուած է՝ «եթէ որեւէ մէկն իրեն կոչի բժիշկ, հիմն բժշկանոց, ձեռք բերի աշակերտներ, հաւաքի բազմաթիւ դեղեր…» եւ այլն, իսկ շարունակութեան մէջ՝ «Բժշկանոցը արքունիքն է (կամ նման է արքունիքի), աշակերտները սպասաւորներն են, հիւանդները՝ ժողովուրդը» եւ այլն[1]*:*

Կարծում ենք, որ Երզնկացու քարոզներում եղած վերոյիշեալ համեմատութիւնները լիակատար իրաւունք են տալիս եզրակացնելու, որ Կիլիկիայում (թերեւս նաեւ բուն Հայաստանի շրջաններում) գոյութիւն են ունեցել բժշկագիտական դպրոցներ, այդ դպրոցներում ուսուցումը զուգորդուել է կլինիկական պրակտիկայի հետ, եւ, որ ամենակարեւորն է, կլինիկաներում բժշկապետները գիտական եւ ուսուցողական նպատակներով կատարել են պետութեան կողմից մահուան դատապարտուած յանցագործների հերձումներ (vivisectia)*:*

1 Հայաստանում բժշկագիտական դպրոցների գոյութեան օգտին է խօսում նաեւ Բարդուղիմէոս Բոլոնացու քարոզներից մէկում («Քարոզ օծման հիւանդաց», ՄՄ ձեռ. N 2183, էջ 160բ) պահպանուած հետեւեալ հատուածը. «Հոգեւոր բժիշկն նման է մարմնաւոր բժշկի, եւ մարմնաւոր բժիշկն այլ ազգ դեղ կու տայ յորժամ ի դասատունն է եւ զգիրքն կու կարդայ. զի յայնժամ ծանր դեղ կու տայ, զինչ ի գիրքն գրած է, եւ այլ ազգ դեղ կու տայ յորժամ ի դասատանէն ի դուրս կուգայ եւ ի մէջ հիւանդաց կու շրջի. եւ զի ճանաչէ զտկարութիւն հիւանդացն վասն այն դողդոջած լինի եւ թեթեւ դեղ տայ. ապա այլ ազգ դեղ տայ հիւանդին եւ եւս, յորժամ ինքն հիւանդ լինի կացեալ եւ դառն դեղ առեալ, եւ յայնժամ առաւել խղճի հիւանդին»:

ՑԱՆԿԵՐ

(Կազմեցին Մարգարիտ եւ Շուշանիկ Խաչիկեանները)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղա խան 51
Աբգար 63
Աբեղեան Մ. 298, 299, 340
Աբրահամ աբեղա 88
Աբրահամ վարդապետ 327
Աբրահամ 168
Աբրահամ, Մոսկուայի բնակիչ 199
Աբրահամ Հայրապետունց 319
Աբրահամեան Ա. 151
Աբրահամեան Յ. 274
Աբրահամեան Վ. 306
Աբուլ Հասան 153
Աբուկամ 329
Աբուսայիդ 340, 365
Ագապիտ 183
Ադոնց Ն. 124, 212, 297, 356
Ազարիա արքեպիսկոպոս 29
Ազնաւուր, խոջա 321
Աթաբեկ Իւանէ 275
Աթաբեկ Սուֆի-Խալիլ 30
Աթանաս 208
Ալբերտոս Մեծ 349
Ալեքսանդր, Օլեքսանդր 216
Ալեքսանդր, վրաց թագաւոր 17, 18, 210
Ալէքսանոս 317
Ալեքսէյ III 317
Ալեքսէյ Միխայլովիչ 229, 231, 259, 260, 268
Ալի 81
Ալի Ռուսինա, տե՛ս Իբն-Սինա
Ալի-Ջադէ Ա. 288
Ալի-Իլյաճ 81
Ալի-Սարգիս Կարապետ-օղլի 144
Ալիմշահ սպարոն 136
Ալխաս 308
Ալինախ 10
Ալիշան Ղ. 7, 10, 11, 23-26, 28, 31, 41, 53, 69, 83, 85, 87, 92, 97,116, 138, 193, 194, 223, 226, 247, 249, 250, 266, 269, 337, 340, 345, 362, 364
Ալպոյաճեան Ա. 196
Ալփիկ 329
Ախինեան 324
Ախուերդով Ի. 306
Ակինեան Ն. 188, 190, 244, 247, 263, 270, 272
Ահարոն 270
Ահմադ Ղան Զեյափրեան 15
Ահմեդ-Ակրատով 144
Աղ-կոյունլու(ներ) 15, 30, 81, 133, 136, 141, 275
Աղաբեկեան Հ. Օ. 84
Աղանեանց Գիւտ 166
Աղաջան 319
Աղբարիկ 154
Աղբարշահ 195
Աղբիգան 324
Աղեքսանդր, որդի Փիլիպոսի 94
Աղուպշ 322
Աճառեան Հ. 13, 16, 24, 27, 67, 81, 133, 140, 142, 145-148, 156, 178, 207, 211, 213, 216, 281, 291, 315, 324-360, 379
Ամատա Օահունեցի 10-13, 39
Ամատունիներ, Ամատունեաց 43, 124, 125, 137
Ամինաւագ 317
Ամիրագիզ 322
Ամիր-Ասադ Պրոշեան 38
Ամիր-Բաքօ 277
Ամիր Սարգիս տե՛ս Սարգիս
Այուազ, տանուտէր 281
Այուազովսկի Գաբրիէլ 76
Անագուրակ-Նուին 51
Անակսագորաս 352
Անանայ 156
Անանիա 156,168
Անանիա Շիրակացի 151, 339, 351
Անանկ 156
Անանուն Մեկնիչ 336
Անասեան Յ. 87, 256
Անաւարզեցի, տե՛ս Գ. Անաւարզեցի
Անդրեյ Նեմիրովիչ 190
Անդրէաս Կապադովկացի 89
Անդրիասանց Սարգիս 319
Աննա 168
Անտոն 216
Աշոտ Ա Բագրատունի 178
Աշոտ Բագրատունի 296
Ապրակսեինա 237, 239
Ապօնց, ֆրա, տե՛ս Պօնցիուս
Առաքել, տանուտէր 287, 326
Առաքել Դաւրիժեցի 252, 253, 260, 263, 268
Առաքել իշխան 132, 133, 136, 139
Առաքել Սիւնեցի 28, 29, 310, 336, 355, 357
Առաքել վարդապետ 114, 116, 317, 345
Առաքելեան Բ. 157, 170, 300, 303, 307
Առիւծ 154
Ասգանդար 327
Աստուածաբան 89
Աստուածատուր, գրիչ 139
Աստուածատուր, հայր Եղիայի 209
Աստուածատուր, վանեցի 324
Ասվատուր 189
Աստուածատուր Խաթայեցի 158
Ատիբէկ 330
Ատինա 127
Ատոմ 324
Ատրներսեհ 234
Արազ 319
Արապշահ 280
Արիստակէս, աշակերտ 272
Արիստակէս, գրիչ 336, 355
Արիստակէս Լաստիվերցի 171
Արիստակէս Սեբաստացի 88
Արիստոտել 91, 268, 338, 340,350, 352, 355, 358, 377
Արխութա 329
Արծրունի Գ. 143
Արղութ (Զաքարիա Մործորեցու եղբայր) 56, 59, 80
Արղուն խան 52, 54
Արշակ Բ 43
Արշակունիներ, Արշակունեաց 43, 151
Արտակ եպս. Սմբատեան 24, 26
Արտաշէս Ոչեղ 94
Արտաշէս Քսերքսէս 94
Արտաշիր 277
Արցիխովսկի Ա. Վ. 196
Աւագ, գրիչ 11
Աւագ, տէր 284
Աւագ, թամբագործ 309
Աւաք, Տանձիկանց 17
Աւաք 322
Աւագեան Ս. 211, 294, 333, 336
Աւան 288
Աւգերեան Մ. 64
Աւգսեն 266
Աւեռոէս, Աւիռոխս, Իբն-Ռուշդ 352, 353
Աւետիս, խոջայ 160
Աւետիս, վարդապետ 325
Աւետիք 217
Աւետիք իշխան 147
Աւետիք Կրօնաւոր 88
Աւզպէկ, խան, տե՛ս Ուզբեկ
Աւէտշահ 280
Աւթանդիլ 330
Աւինիոն 115
Աւիռոխս, տե՛ս Աւեռոէս
Աւղուլ 179
Աւրպէլ Աւրպէլեանց, տե՛ս Օրբէլ Օրբէլեանց
Աֆղազ, որդի Սեթիկայ 17
Բաբեկ 217
Բագրատունիներ, Բագրատունեաց 46, 65, 128, 129, 137, 166, 168, 169, 170, 179, 182, 234, 296
Բագրատունի-Պահլաւունի 168
Բագիլեւիչ Կ. Վ. 233
Բաթու խան 45-47
Բաթուկենց Յակոբ 226
Բախտիար, տանուտէր 280
Բախտիար 321
Բաղդասար, Պետրոսի որդի, Զաքարիա Մործորեցու եղբօրորդի 80
Բաղդասարեան Է. 87, 88, 307
Բայազիթ 78
Բայդու 54
Բայրամ 331
Բարաղամ Յ. 277
Բարայղամ, տէր 329
Բարբարո Ջ. 226
Բարդօլիմէոս, տե՛ս Բարթուղիմէոս
Բարթիկեան Հ. 148
Բարթուղիմէոս, Բարդօլիմէոս 350
Բարթուղիմէոս առաք. 50, 63, 64
Բարխուդարեան Մակար 227
Բարխուդարեան Ս. 332
Բարխուդարեան Վ. Բ. 196, 210, 214
Բարդուղիմէոս Բոլոնացի, տե՛ս Բարթուղիմէոս Բոլոնիացի
Բարթուղիմէոս Բոլոնիացի 27, 310, 367, 386
Բարթուղիմէոս եպս., տե՛ս Բարթուղիմէոս Մարաղացի
Բարթուղիմէոս եպս., Բարթուղիմէոս Մարաղացի,
Բարթուղիմէոս դէ Պոդիօ 111, 120, 344-348, 350, 352, 355, 367-370, 372-374, 377, 378
Բարձրբերդցի, տե՛ս Կոստանդին Բարձրբերդցի
Բարսեղ, որդի Յովհաննէսի 208
Բարսեղ, հայր Պօղոսի 224
Բարսեղ, վարդապետ 26, 41
Բարսեղ վարդապետ, Առաքելոց վանքի վանահայր 325

Բարսեղ քահանա, Առաքել Սիւնեցու աւագ եղբայր 28
Բարսեղ քահանա 45
Բարսեղ Կեսարացի 86, 138, 260, 339, 352
Բարսեղ Մաշկեւոր 308-310
Բեդա 352
Բեդրոս Զախարիասեւիչ 214
Բելենիցկի Ա. 306
Բելսկի Լազար Իւանովիչ 229
Բելցա, տե՛ս Կոստ. Պետունով
Բէլ 94
Բէկիկ 329
Բեշքէն, որդի Բուրթէլի 11, 14, 16, 23, 37, 39
Բեշքէն, Բեշկէն Ամբատի որդի 15-20, 23, 29, 30
Բեռնատովիչ Նիկոլայ 214
Բերամ-բէկ 280
Բերձենիշուիլի Ն. 153
Բերմետատա Վասիլիչ, Բերնետատա 238
Բերնետատա, տե՛ս Բերմետատա Վասիլիչ
Բերքէ խան 156
Բժշկեան Մ. 125, 126, 142, 144, 166, 175, 176, 188, 189, 243, 244, 248, 249, 262-264
Բիւրթէլեանց, տե՛ս Բուրթէլեանց
Բոգդան 216
Բոգդան, Իւան Սալթանով 229
Բոգդանով Բոգդան 209
Բոգդան Դոն-Օվակովիչ 247
Բոգդան Խմելնիցկի 256-258
Բոգդանով Իլեա 209
Բոգդանով Իւաշկա 229
Բոգդանով Մատիւշկա 229
Բոգոլիւբսկի Անդրեյ 153, 182, 227
Բոգոլիւբսկի Իւրի (Գեորգի) 153
Բոեցիոս 352
Բոլեսլաւ Քաջ 242
Բոլկ, տե՛ս Պետունով Կոստանդին
Բոլկով, տե՛ս Պետունով Կոստանդին
Բոնավենտուրա 119, 120, 343, 352
Բորիս 184, 230, 242, 243
Բորոդավկա 257
Բըճեցի 55
Բրայեր Ա. 212
Բրուն Ֆ. 76, 171, 202
Բուլիկ 322
Բուղտա, Պուղտա եղբայր Բուրթէլի 10
Բուղտա, ուստայ 231
Բուրթէլ, որդի Իւանէ Բուրթէլեանի 14-16, 19, 23, 38, 77
Բուրթէլ Օրբէլեան 9-12, 14, 23, 25, 37, 39, 77, 156
Բուրթէլեան, Բուրթէլեաններ, Բուրթէլյուններ, Բուրթէլեանց 7, 9, 15, 17, 18, 21, 23, 24 26, 29, 30, 31, 33, 34, 39
Բուրթէլյուններ, տե՛ս Բուրթէլեաններ
Բուրո Քրիստոֆեր 155
Գաբրիէլեան Հ. 338
Գալանոս Կ. 54, 72, 115
Գալստեան Ա. 47
Գալէն 364
Գանձակեցի, տե՛ս Կիրակոս Գանձակեցի
Գասպար, համշինահայ 141
Գասպար 224
Գարեգին Ա կաթողիկոս 154
ալ Գարնատի 152
Գաւզէն, տե՛ս Գաւրզէն
Գաւրաս(ներ), Գովրաս(ներ) 212
Գաւրզէն, Գաւզէն 275
Գեշմարդ ամիրա 294
Գեւորգ վրդ., տե՛ս Գեւորգ Երզնկացի
Գեւորգ Երզնկացի, Գեւորգ վրդ. 88, 107
Գեւորգ Սկեւռացի 88, 336
Գէորգ զօրավար 317
Գիշուկ 284
Գիլնազար Օտուխենց 208
Գիւլեր 212
Գլեբ 184, 230, 242, 243
Գլուկան 326
Գոլոխվոստով Օլեգ 217
Գոլովա, տե՛ս Խովրին Իւան
Գոլովին(ներ) 212, 228
Գոհար 331
Գովրաս(ներ), տե՛ս Գաւրաս(ներ)
Գովրիկեան 212
Գորգ 355
Գորգ, պարոն 346
Գորգ, խոջա 321
Գորգուն (Գորգունէ, Գորգոն, Գուգուն, Գօրգունէ) Բուրթէլեան 14, 16, 19, 32, 38-40, 42, 77
Գրեկով Բ. 228
Գրիգոր Գ. 53, 54
Գրիգոր, կաթողիկոսի պատուիրակ 67
Գրիգոր, արքեպիսկոպոս 193, 244
Գրիգոր, Ամատունեաց տան եպս. 43
Գրիգոր, եպս. 45
Գրիգոր, երէց 70
Գրիգոր, երէց 322
Գրիգոր, իշխան 128, 129
Գրիգոր, խոջա 321
Գրիգոր, պարոնտէր 179
Գրիգոր, վանեցի տէր Ըստեփանոսի եղբայր 324
Գրիգոր, տէր 327
Գրիգոր, տէր 329, 330
Գրիգոր, փեսայ 331
Գրիգոր, վարդապետ 41
Գրիգոր վարդապետ, Ակրակունիս գիւղից 345
Գրիգոր վարդապետ, Համշենից 135
Գրիգոր քահանա 14
Գրիգոր քահանա, Ստեփանոս եպիսկոպոսի հայր 192
Գրիգոր Ախալցխացի 16
Գրիգոր Անաւարզեցի 53, 55, 62, 66
Գրիգոր երէց Անեցի 125
Գրիգոր երէց, Համշենից 135
Գրիգոր Աստուածաբան 114
Գրիգոր Դարանաղցի 179
Գրիգոր Լուսաւորիչ, Գրիգոր Պարթեւ 41, 53, 64, 65, 70, 86, 115, 118, 163, 191, 220, 270, 317
Գրիգոր Ծերէնց Խլաթեցի 107, 289
Գրիգոր վրդ. Ծործորեցի 81, 120
Գրիգոր Կեսարացի վրադապետ 252
Գրիգոր Մագիստրոս 302, 336
Գրիգոր Մակուեցի Ջալալբէկեան 71, 78
Գրիգոր Նազիանզացի 138
Գրիգոր Պարթեւ, տե՛ս Գրիգոր Լուսաւորիչ
Գրիգոր Նարեկացի 89, 289
Գրիգոր Նիւսացի 89, 138, 339
Գրիգոր քահանա Սուղդացի 163, 172
Գրիգոր Տաթեւացի 27, 28, 88, 113, 133, 137, 275, 278, 279, 285, 286, 304-306, 308, 310, 312, 314, 336, 351
Գրիգոր Տղայ 184
Գրիգոր Տուտեորդի 184
Գրիգոր Վանեցի 269
Գրիգոր Վկայասէր 53
Գրիգորեան Վ. Ռ. 186, 188, 191, 216, 234, 258
Գրիգորեւ Դաւիդ 209
Գրիգորիս Ախթամարցի 158
Գրիգորիս 195
Գուգուն, տե՛ս Գորգուն Բուրթէլեան
Գուդզի Ն. Կ. 233
Գուլազ 319
Գուլամիր, Ներքին Մարմետ գիւղից 280
Գուլամիր 319
Գուլիեմոս Սորաղ 343
Գույուկ խան 45
Գույուկ Խարան 132
Գուրջիբէկ 279
Գուրգէն 234
Գուրկո-Կրիաժին Վ. 170
Դաղեան Խ. Վ. 61
Դանաբէկ 280
Դանիէլ, մարգարէ 93
Դանիէլ, վարդապետ 137
Դանիէլ Թաւրիզեցի 63
Դանիէլ 113
Դանիէլեան Է. Լ. 151
Դաշկեւիչ Եա. 176, 187, 189
Դատա 135
Դարեհ 94
Դաւիթ, եպիսկոպոս 317
Դաւիթ, երէց 286
Դաւիթ, որդի Ամբատի 203
Դաւիթ, հայր Առաքել Սիւնեցու 28, 32
Դաւիթ Ա, համշենցի իշխան 135, 137, 138, 141
Դաւիթ Բ, համշենցի իշ-խան 132-134, 136, 139
Դաւիթ Անյաղթ 338, 351
Դաւիթ Մարեց 292
Դաւիթ Կիւրոպալատ 129
Դաւիթ Ղրիմեցի 167
Դելի-Հասան Ջալալի 270
Դեմոկրիտէս 352
Դիմիտրի 242
Դինար, վրաց թագուհի 233, 234
Դինիպէկ 163
Դիոկղետիանոս 272
Դիոնիսիոս Արեոպագացի (Արիպագացի) 268, 352
կեղծ Դիոնիսիոս Արիոպագացի 138, 352
Դիոնիսիոս Թրակացի 91, 336, 339, 356-358, 361
Դլէն իշխան 13
Դմիտրի Դոնսկոյ 150, 206-210, 212, 213
Դմիտրի (Դմիտրեյ) Չեռնոյ (Չեռնի(յ), Չերնոն(յ)) 208, 212
Դյումեզիլ Ժ. 145
Դոխի 344
Դոնատոս 358
Դովլաթիար 276
Դովլաթիար, եղբայր Խոսրովի 321
Դովլաթշահ, պարոն 279
Դոփեան 11
Դօթ, տե՛ս Դաւիթ Ա, համշենցի իշխան
Եակոբսոն Ա. Լ. 212, 230, 231
Եակուբ 152
Եակուբովսկի 228
Եաղուպ 135, 136
Եարոսլաւ Իմաստուն 192
Եարոսլաւիչ 183
Եգանեան Օ. 117, 207
Եզեկիէլ 110
Եզեկիէլ, գրիչ 101
Եզտանբաշխ, տանուտէր 280
Եզր, կաթողիկոս 85
Ելտոտ 17
Ելֆերես (Ելուֆերես, Օլուֆերես, Օլֆերես)
Ենդոր 208
Եղիա 209
Եղիա Կարնեցի 224
Եղիազարով Ս. 306
Եղիշա, վարդապետ 317
Եղիշէ, Եղիշա, արքեպիսկոպոս, Ամբատի որդի 19, 23, 32
Եղիշէ եպս. Օրբէլեան 24, 25
Եոլպեկ Օրմենին 195
Եսայի Եղիպատրուշեցի կաթողիկոս 123
Եսայի Նչեցի 10, 11, 27, 67, 69, 73, 87-89, 91, 97, 336, 345-347, 359
Ետգար 318
Երեմեան Ս. 153
Երզնկացի, տե՛ս Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի 67
Երմոլին Վասիլի Դմիտրեւիչ 228
Եփրեմ 93, 94
Եփրիկեան Հ. 83
Զաբելին Ի. 204, 205, 208
Զաղ 319
Զախարիա 216
Զախնովիչ 254
Զամինեան 116
Զայդը, Զատէ 330
Զանբան Զորաբաբէլ 153
Զապէլ 365
Զատէ, տե՛ս Զայդը 330
Զարբհանալեան Գ. 70, 82, 83, 87, 94, 98, 100, 112, 116, 269, 338, 345
Զարպհանալեան Գ., տե՛ս Զարբհանալեան Գ.
Զաքար, տէր, տես Զաքարիա Ծործորեցի
Զաքարեան Աւագ 51
Զաքարեան Շահնշահ 51
Զաքարեաններ 125
Զաքարէ 12, 13
Զաքարէ տէր, տես Զաքարիա Ծործորեցի
Զաքարիա, հայ ֆեոդալ 48
Զաքարիա 343
Զաքարիա Ա եպս., տե՛ս Զաքարիա Ծործորեցի
Զաքարիա Բ եպս. 74, 77, 80
Զաքարիա կաթողիկոս 280, 282
Զաքարիա Ագուլեցի 224
Զաքարիա Ծործորեցի, տէր Զաքարէ 55-57, 59-61, 64, 66, 67, 69, 70-74, 77, 80, 82, 84-87, 93, 97, 99, 111-115, 117, 118, 342
Զաքարիա Սարկաւագ 125
Զաւրիեւ Զուրաբ 224
Զելինսկի Ս. 284
Զեննեանց Պողոս 209
Զենոն 338
Զեւակին Ե. 174, 179
Զէկէլ 330
Զըմրուծ/թ 322
Զինովեւ Պաւել 209
Զուրապ 330
Զօրաբեգ 224
Էնկարշահ, պարոն 280
Էդուարդ Բետունեցի 357
Էզդանբախշ 321
Էլէկ(ս)ան Լոռեցի 17
Էլիկում, Բուրթէլ Օրբէլեանի հայր 9
Էլիկում, Կուկա (Բեշքէնի որդի) 11, 12, 23, 39
Էլ-Խաթուն 38
Էլ-Խութլու, Էլխութլու 26, 34, 35, 37-39, 42
Էլոյ Դաշի 44
Էլտուր 17
Էլ-Օմարի 152
Էմանուէլ 103
Էմանուէլ, տե՛ս Մանուէլ, Զաքարիա Ծործորեցու հայր 61
Էմին Մ. 184, 243
Էմնադին 323
Էմպեդոկլէս 352
Էյուբեան, Էյուբեաններ 46, 118
Էնգելս 361
Էսո 329
Էվտոշահ 195
Էվլիէա Չելեբի 58
Էփրիկեան Հ.Ս. 81
Էւատշահ 322
Ըննիցունց, տե՛ս Ինովկենտիոս
Ըրստամ, տե՛ս Ռուստամ Բուրթէլեան
Ըստեփանոս, տէր 324
Ըսքանդար, որդի Կարա-Յուսուֆի, տե՛ս Սքան-դար Թագւորշահ 317
ս. Թադէ, տե՛ս Թադէոս առաքեալ
Թադէոս, ս. Թադէ 43, 50, 51, 52, 54, 55, 59, 61, 63, 73, 74, 83, 86, 117, 118, 120, 121
Թաթէոս, տե՛ս Թադէոս առաքեալ
Թաթուլ, որդի պարոն Գրիգորի 248
Թաղիադեան Մ. 224
Թաղիադին Կիւրիկեան 48
Թամազ 331
Թամար 203
Թամար(ա), թագուհի 153, 233
Թամերլան, տե՛ս Լանկ Թամուր
Թամսի, Թամթի 59
Թամուր, տե՛ս Լանկ Թամուր
Թամուրբեկ, տե՛ս Լանկ-Թամուր
Թամուրեաններ, Թեմու-րեաններ 17, 57, 130
Թան 196
Թանգուտ 329
Թանկուտ 309
Թանդրիւերան 229
Թառ 325
Թարեգ 319
Թարխան 228
Թավիթ 100
Թեմուրեաններ, տե՛ս Թամուրեաններ
Թերձակենց Թումա 287
Թէոդոր Դմիտրեւիչ 175, 176, 242
Թէոդորոս Վարդանովիչ 260
Թէոն Աղեքսանդրացի 339
Թոլայլ 189
Թոխմախեան Ա. 57, 59, 61, 81, 83
Թողթամիշ 14
Թովմա առաքեալ 63
Թով(ւ)մա Աքուինացի 111, 112, 115, 119, 120, 343, 344, 349, 351, 352, 354
Թովմա Մեծոփեցի 13, 15-17, 19, 27, 30, 71, 76, 77, 168, 276, 284, 351
Թովմաս եպիսկոպոս 53, 54
Թորոս 361, 366
Թորոս Դրազարկցի 53
Թորոս Ռոսլին 44
Թորոսովիչ, Նիկոլ 192, 214
Թոփտի 203
Թում 321
Թումա Արծրունի 43
Թումա Մինասենց, գրիչ 79
Թումա Սպատկերտցի, գրիչ 40
Թումայ երէց 17
Թուման 331
Թումանբէկ Մամայ 198
Թումանեան Յ. 141
Թումանեանց Պ. 126, 127, 142-145
Թումանեան (Թումանով) Օթար 220, 224
Թումանշահ 331
Թումանով Օթար, տե՛ս Թումանեան Օթար
Թումանպէյ 180
Թուղթանի 13
Թուրանդա 327
Ժուրդեն դէ Սեւերակ 63-65
Իբն-ի Բատուտա 157, 203, 302
Իբն-Հաուքալ 152, 170
Իբն Ռոշդ, տե՛ս Աւերոես
Իբն-Սինա 352
Իբն-Ֆադլան 154
Իբրանոս քահանա 317
Իգնատիոս եպիսկոպոս 322
Իգորոդուա Պ. 153
Իթիլ 151-153
Իլեա 45
Իլեա Օրմենին 195
Ինանայ 156
Ինանակ 156
Ինանիկ, որդի Սարգսի 156
Ինանիկ, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Իննիճեան Հ. 83
Ինովկենտիոս 50
Իշխանիկ 234
Իշող 340
Իսահակ Անգելոս կայսր 169
Իսահակ վրդ. Մակուեցի 61
ալ Իսթախրի 170
Իսպ 326
Իսրայէլ, հռետոր, բաբունի, վրդ. 114, 116-119
Իսրայէլ, վարդապետ 343, 345
Իսքանդար, Սքանդար, Ըսքանդար (Կարա-Կոյունլու) 71, 77, 81
Իրինչեյ 202
Իւան, վաճառականի որդի 225, 235
Իւան III Վասիլեւիչ 215-217, 219, 231
Իւան IV Ահեղ 160, 220, 230
Իւան Մակարով 209
Իւան, տե՛ս Բոգդան, Իւան Սալթանով
Իւան, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Իւանէ, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Իւանէ, որդի Ամբատի Բուրթէլեան, տե՛ս Իւանէ Ստեփանոս
Իւանէ իշխան, տէր Որոտան գաւառի 12, 13, 25, 26, 31, 32
Իւան Որոտնեցի, տե՛ս Իւանէ իշխան, տէր Որոտան գաւառի
Իւանէ 168
Իւանէ Օրբէլեան 156, 168
Իւանի, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Իւանիկ, տե՛ս Իւանէ Բուրթէլեանի
Իւանին, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Իւանէ, Իւան, Իւանի, Իւանիկ, Ինանիկ, Նանիկ Բուրթէլեան 11-14, 16, 19, 21, 23, 24, 26, 32, 34-42

Իսահէ-Ստեփանոս, որդի Ամրատ Բուրթէլեանի 16, 18, 20, 21
Իւանով Աֆանասի 209
Իւանով Սերգէյ 209
Իւանով Պետր 209
Իւանով Վասիլի 209
Իւաշկեւիչ Զաքար 213
Իզբաշեան Կ. Ն. 171
Լալ վրդ. 345
Լալայեան Ե. 53, 277, 282, 315, 322
Լալաֆարեան Ս. 316
Լանկթամուր, Լենկթամուր, Թամուր 15, 17, 19, 57-59, 76, 121, 132, 159
Լեապունով Հ. Օ. 179
Լենկ-Թեմուր, տե՛ս Լանկթամուր
Լեշին, որդի Դիլանի 17
Լեւ Դանիլովիչ 249
Լեւոն 92
Լեւոն Ա 364
Լեւոն Բ 361, 365
Լեւոն Դ թագաւոր 52, 55
Լինճիչենկո Ի. Ա. 186, 242, 244-247, 250
Լիպարիտ Օրբէլեան 25, 32
Լիտուին Միխայիլ 187, 212
Լիրա, տե՛ս Նիկողայոս Լիւրացի, 117, 119, 343
Լիւտմիրսկի 248
Լիւդովիկոս Թ 46, 47, 347
Լիւրացի, տե՛ս Նիկողայոս Լիւրացի
Լոզինսկի Վ. 245
Լոժկին Մ. 178
Լոպատա 256, 270
Լուս 322
Լուսաւորիչ, տե՛ս Գրիգոր Լուսաւորիչ
Խաթլուշան, տե՛ս Գրիգոր Տաթեւացի
Խաթուն 224
Խալիֆ (Ճոնոի գիւղի բնակիչ) 292
Խալփախչեան Յ. 189, 228
Խախանով Ա. 153, 154
Խաղբակեան Պռօշ 48
Խայդու 344
Խանաղ 324
Խանում 322
Խաչատրեան Պ. 26, 34, 35, 37, 40
Խաչատուր աւագերէց 263
Խաչատուր գրիչ 139
Խաչատուր երէց 21
Խաչատուր երէց 329
Խաչատուր, կրօնաւոր 88
Խաչատուր, հայր Օմառն Անգեղակոթցու 30, 33
Խաչատուր, որդի Գիշուկ եւ Ծամշա ամուսինների 284
Խաչատուր, որդի Ծամշադնի 133
Խաչատուր, տէր 325
Խաչատուր, քահանայ 156
Խաչատուր Կաֆայեցի 179, 180
Խաչերեան Լ. 91, 360
Խաչիկ, գրիչ 90
Խաչիկ վարդապետ Դաղեան 55
Խաչիկեան Լ. 57, 77, 87, 158, 173, 183, 232, 242, 262, 307, 336, 355
Խար Մէլէք 331
Խարանգուլ 217
Խեչատուր 319
Խերան 217
Խէքէնց Էոզար 322
Խիզան 77
Խլո 326
Խոզի-Մարում 210
Խոճասար-բէկ 320
Խոշակ 275
Խոսրով 321
Խովրին(ներ) 212, 213
Խովրին, տե՛ս Կուզմա (Կոզմա) Կովերեա
Խովրին Դմիտրի 228
Խովրին Իւան 228
Խովրին Վլադիմիր (Գրիգորեւիչ) 213, 228
Խտրշահ 328
Խրմալէյ (Կաֆացի) 177, 179
Խութլու, տե՛ս Էլ-Խութլու
Խութլուբուղա 56, 59 80
Խութլուպէկ 323
Խունկանց Կարապետ 321
Խօճասար պէկ 318
Խօշնադար 280
Ծովական Ն. Վ., տե՛ս Պողարեան 24, 25
Կազիմիր IV 194
Կազուր 173
Կաժդան 212
Կակոս, Կոկոս 216, 217
Կախիկ, տե՛ս Յովհան Որոտնեցի
Կակոս 216, 295, 328
Կակոս, կաֆայեցի վաճառական 216
Կաղար 319
Կապրովսկի 254
Կալ 216
Կատերինա 238
Կարա-Բոյատ 203
Կարա-Իւսուֆ Կարա-Կոյունլու 15, 29, 77, 78, 326
Կարակիտայներ 44
Կարա-Կոյունլու, Կարա-կոյունլուներ, 15, 20, 77, 81, 132, 133, 136, 275
Կարա-Կոյունլուներ, տե՛ս Կարա-կոյունլու
Կարապետ, Ղազարի աշակերտ 272
Կարապետ, տանուտէր Վաղարշապատի 277
Կարապետ, Աբրահամի որդի 224
Կարապետ աբեղա 318, 319
Կարապետ, երէց 139
Կարապետ, խոճայ 317
Կարապետ, Խունկանց 321
Կարապետ, Չզրաշենից 325
Կարապետ վարդապետ 326
Կարապետ րաբունապետ 119
Կարապետ քահանայ 143
Կարապետ Վանեցի 281
Կարաուլով Ն. Լ. 170
Կարո 326
Կեմալ 317, 318
Կէտէվան 330
Կիպրիանոս 199, 219
Կիրակոս 326
Կիրակոս, Կակոս 216
Կիրակոս (Յովսէփ վարդապետի դաւքնկեր) 51
Կիրակոս դպիր 330
Կիրակոս տե՛ս Կ. Գանձակեցի
Կ. Գանձակեցի 44, 45, 47, 48, 51, 52, 292
Կիրակոս Վիրապեցի 71
Կիրիլ-Կիւրեղ 236
Կիրկոր Օղիրկովիչ 195
ս. Կիւրեղ 230
Կիւրեղ Աղեքսանդրացի 89
Կիւրեղ Երուսաղէմացի 339
Կիւրոս 94
Կլիչեւսկի Վ. Օ. 211
Կղեմէս Գալանոս 55, 253, 254, 264, 337, 345, 347, 349, 354, 355, 359
Կոզմա, տե՛ս Կուզմա (Կոզմա) Կովերեա
Կոխ Կարլ 126-128, 141, 143
Կոկոս, տե՛ս Կակոս
Կոնտարինի Ա. 226
Կոստանդիանոս 64, 93
Կոստանդեա 156
Կոստանդին (Ամենայն հայոց կաթողիկոս) 156
Կոստանդին վրդ. 345
Կոստանդին VI 123
Կոստանդին, Կոստընդին Բարձրբերդցի 43, 44, 49, 51, 114, 261, 290
Կոստանդին Ծիրանածին 147, 148
Կոստանդին Կատուկեցի (Պղնձգործ) 69
Կոստանդին Կեսարացի 62, 69
Կոստանդին Հերձուածող 71
Կոստանդին Երզնկացի 232
Կոստանեան Կ. 275, 308
Կոստընդին կաթողիկոս, տե՛ս Կոստանդին Բարձրբերդցի
Կովալեւսկի Մ. 324
Կովերեա, տե՛ս Կուզմա (Կոզմա) Կովերեա
Կովիր, տե՛ս Կուզմա (Կոզմա) Կովերեա
Կովրեա, տե՛ս Կուզմա (Կոզմա) Կովերեա
Կոտով Ֆ. 226
Կորվին 212
Կորտոնոս, տե՛ս Օնտոնով (Անտոնով) Սեմեոն
Կտեթ 326
Կուզմա (Կոզմա) Կովերեա (Կովիր, Կովրեա, Խովրին) 208, 212
Կուլի 217
Կուկա, տե՛ս Էլիկում, որդի Բեշքէնի
Կուտենց Մաթա 224
ալ-Մուզաֆֆար Սայֆ ադ-դին Կուտուզ 48
Կուրիկէ 16
Հազարեան Յ. 207
Համամ Ամատունի 123-128
Համամ Արեւելցի 234, 336
Համբրիքա 338
Համդուլլյա Ղազուինի, տե՛ս Համդուլլա Ղազուինի
Հայդ 162
Հայդար, Սեֆեան շեյխ 134
Հայկ, հայոց նախահայր 94
Հայկունի Ս. 60, 124-128, 139, 140, 143
Հայրապետ եպիսկոպոս 318, 319
Հայրապետ կրօնաւոր 140
Հայրապետ, տէր 327
Հայրապետ, վարդապետ 345
Հայրապետենց Աբրահամ 320
Հայրում, պարոն 317
Հասան Որոտան իշխան, հայր Սարգիս եպս. 12, 13, 26, 32
Հասան-Ալի, Ջհանշահ փադիշահի որդի 81
Հասան-Միրանշահ, Հասան-Միրաշա 75
Հասան Միրաշա, տե՛ս Հասան-Միրանշահ
Հացունի Վ. 56, 71, 74, 86
Հաւիկ ձեռնաւոր 294
Հեթում 361, 365, 366
Հեթում Ա 45-51
Հեթում Բ 53-55, 69
Հեթում պատմիչ 46, 47, 126
Հենրիկոս Դ (Սպանիայի թագաւոր) 58, 74
Հերենոս, Ստեփաննոսի հայր 317, 318
Հերմէս Եռամեծ 338
Հիպողիտ 93, 94
Հռիփսիմէ 191, 265
Հուդուդ ալ Ալամ 170
Հուլաղու 46-48, 51
Հուլպա խան 325
Հունանեան Վարդան 85
Ղազան խան 54
Ղազար, եղբայր Ռամազի 224
Ղազար, տէր 323
Ղազար Բաբերդացի 264
Ղազար Թոխաթեցի 269, 272
Ղազար Ճահկեցի 82
Ղազար Սլովենովսկի 254
Ղազո 326
Ղամբար, պարոն 318
Ղասում 280
Ղարա(յ) Ուսուֆ, տե՛ս Կարա Իւսուֆ
Ղարիպշահ 322
Ղաւզար 276
Ղափադարեան Կ. 183, 304
Ղեւոնդ պատմիչ 122-124
Ղեւոնդ 86
Ղուկաս գրիչ 117
Ղուկաս հայրապետ 31
Ղօշատար 280
Ճալալ, խոճա 317
Ճիհանգէկ, մղտսի 317
Ճֆլա, Սթունի գիւղի բնակիչ 292
Մաթուսաղա 85
Մալխասեանց 59, 284, 291, 292
Մալովիստ Մ. 187
Մախսուտ 285
Մակարով Վասիլ 209
Մահմատ 317
Մահմուդ Յովհաննէս-օղլի 144
Մաղաքիա, տէր, տե՛ս Մաղաքիա Ղրիմեցի
Մաղաքիա Ղրիմեցի 168
Մալքիք 329
Մայմոնիդ Ռաբի Մօսէս 352
Մանանդեան Յ. 48, 170, 182, 275, 281, 297, 298
Մանգու խան 45-48, 165
Մանկասար, Պետրոսի որդի, Զաքարիա Մորձորեցու եղբօրորդի 59
Մանուէլ 125
Մանուէլ, հայր Զաքարիա Մորձորեցու 56, 61, 80
Մանուէլ Ա կայսր 164
Մանուիէլ քահանայ 163
Մառ Ն. 10, 57, 113, 148, 290, 291, 298, 336
Մասուդի 152
Մասուտ-շահ 38
Մատթէ, Մատթէոս 92
Մատթէոս 113
Մատթէոս 120
Մատթէոս 286
Մատթէոս աւետարանիչ 103, 343
Մատթէոս եպիսկոպոս 69, 70, 71, 73, 80, 85
Մատթէոս րաբունապետ 120
Մատթէոս Բեմբոս 251
Մատթէոս Մոնոզոն 15, 17
Մատթէոս Ջուղայեցի 39, 275, 278, 293, 302-304, 308, 309, 312, 313
Մարգար 168
Մարգար 326
Մարգարէ 309
Մարգարէ վարդապետ 345
Մարգարեան Հայրապետ 125
Մարգարիտ 322
Մարգարիտ-Խաթուն 18, 21
Մարթա 180
Մարիամ 27
Մարկո-Պոլո 302
ս. Մարկոս 97
Մարկոս 319
Մարկոս վարդապետ 45
Մարկուարտ Յ. 128
Մարտիրոս, Կոռը գիւղի տանուտէր 76, 331
Մարտիրոս իշխան 128, 129
Մարտիրոս տանուտէր 287
Մարտիրոս փակակալ 31
Մարտիրոս Ղրիմեցի 166-169
Մարտիրոսեան Ա. Ա. 166
Մարտոռ 326
Մարցիան 364
Մարքս Կ. 198, 300-302
Մաքսիմ Կրիանոս 257
Մաքսուդեան Մ. Վ. 53
Մելիք 28
Մելիք Օհանջանեան Կ. Ա. 44
Մելիք-Աշրաֆ Չոբանեան 126
Մելիքսէթ-բէկ 243, 245
Մելիքսեթ Վանեցի 281
Մելքիսեդեկ 15
Մելքիսեդեկ կաթողիկոս 251, 256
Մեծոփեցի, տե՛ս Թովմա Մեծոփեցի
Մենգլի-Գիրեյ 216
Մեսխիա Շ. 153, 305
Մեսրոպ կաթողիկոս 193
Մեսրոպ վրդ. Նշանեան 179
Մեսրոպ (վրդ., րաբունապետ, եպս.) 70, 71, 80
Միարեւ 322
Միխայիլ Ալեքսանդրովիչ 206
Մինախաթուն, կին Տարսայիճ Օրբէլեանի 38, 288
Մինաս Թոխաթեցի 188, 269, 270
Մինասեան Լ. Գ. 59, 61, 112
Մինորսկի Վ. 59, 61, 75, 84
Միշկո Դ. 195-197
Միսրո 258
Միրզա-Օմար, Լենկ Թեմուրի թոռ 15, 16, 19, 76
Միրիման-բէկ 330, 331
Միրիջան 322
Միքայէլ Ասոտապատես 71
Միքայէլ Պալեոլոգ 164
Միքայէլեան 170, 172, 174, 176, 181, 195, 198, 203, 218
Մլխամ, Մլհամ 276
Մխիթար, քահանայ 45
Մխիթար վանեցի 324
Մխիթար, հայր Խտրշահի 328
Մխիթար, գրիչ 101, 114
Մխիթար, րաբունապետ Տաթեւի 29
Մխիթար Անեցի 125
Մխիթար Ապարանեցի 69, 74, 120, 345, 346
Մխիթար Բաղիշեցի 158
Մխիթար Գոշ 113, 290, 292, 307, 311, 313, 331,
Մխիթար Գռներցի կաթողիկոս 158
Մխիթար Հերացի 365
Մխիթարիչ րաբունապետ, տե՛ս Մխիթար Ապարանեցի
Մխիթարիչ Ապարանեցի, տե՛ս Մխիթար Ապարենեցի
Մխիթարիչ ֆրա, տե՛ս Մխիթար Ապարանեցի
Մկնաւերն 326
Մկրեան Մ. 299
Մկրտիչ 321
Մկրտիչ, գրիչ 89
Մկրտիչ, երէց 330
Մկրտիչ, որդի Սադաթելի 279
Մկրտիչ, քահանայ 163
Մնացականեան Ա. 12, 26, 35, 37,38, 40, 41, 184, 231, 232, 234, 287
Մոիսեեւ Գ. 208
Մոհր 187
Մոնտեկորվինո Ջովանի 53
Մովսէս 317
Մովսէս, տանուտէր 280
Մովսէս, քահանայ 309, 329
Մովսէս աբեղա (Համշէնցի գրիչ) 140
Մովսէս Խորենացի 88
Մովսէս Կաղանկատուացի 152, 289
Մովսէս Քերթող 336
Մորդին Օրմենին 195
Մսերեան Մ. 223
ալ-Մուկադդասի 170
Մուհամմադ Բ-Ֆաթիհ 136
Մուշեղեան Խ. 183
Մուսեխ 280
Մուրադ 319
Մուրատ 326
Մուրատ, մահտեսի 285
Մուրատ Անձրեւենց 321
Մուրադեան Հ. 149
Մուրադեան Պ. 9
Յակոբ 322, 323
Յակոբ 331
Յակոբ, գրիչ 14
Յակոբ, եպիսկոպոս 72
Յակոբ, թոռ Յովհաննէս Աւագերէցի 266
Յակոբ կրօնաւոր 27
Յակոբ վարդապետ 46
Յակոբ վարդապետ 345
Յակոբ վկա 64
Յակոբ տէր 70
Յակոբ քահանայ 256
Յակոբ Թարգման 349, 351
Յակոբ Թոխաթեցի 269, 270-272
Յակոբ Կլայեցի 305, 311, 313
Յակոբ Համշէնցի, գրիչ 140
Յակոբ վրդ. Ղրիմեցի 88, 351
Յակոբ Մեղապարտ 111
Յակոբ կաթողիկոս Ջուղայեցի 259
Յակոբ կաթողիկոս 361
Յակոբ Քռնեցի 111, 348-350, 354, 355
Յակոբեան Յ. 75, 131, 155, 226, 302, 347
Յակոբեան Ս. Ե. 274
Յակոբեան Վ. Ա. 136, 179
Յակոբ(ոս), ֆրա, տե՛ս Յակոբ Քռնեցի
Յասար, մեծ պարոն 317
Յարութիւնեան Բ. 128
Յարութիւնեան Պ. 274, 277
Յարութիւնեան Վ. 192
Յոդա 306
Յոհանէս, տե՛ս Յովհաննէս Երզնկացի-Մորձորեցի
Յոհաննէս 135
Յոհան(ն)էս, Ալէքսանդրի եւ Մովսէսի հօրեղբայր 317
Յոհանէս, Մատղավանք գիւղից 280
Յովանէս 321
Յոհաննէս, աբեղա 323
Յովանէս գրագիր, տե՛ս Յովհան Որոտնեցի
Յովանէս եկեղեցպան 17
Յովանէս, քանդխուտայ 281
Յովք 99
Յովհան աւետարանիչ 116, 117, 282
Յովհան, եպս. 158
Յովհան ԻԲ պապ 344
Յովհան Դամասկացի 352
Ս. Յովհան Լեստուիչնիկ 230
Յովհան Մամիկոնեան 124
Յովհան Ոսկեբերան 114, 219, 339, 352
Յովհան Երզնկացի, տե՛ս Յովհաննէս Երզնկացի-Մորձորեցի

Յովհան Որոտնեցի (Կախիկ) 13, 14, 16, 24-28, 32, 33, 88, 283, 310, 351
Յովհան Սսեցի 70
Յովհան Օրբէլ 115
Յովհաննէս եկեղեցպապան 17
Յովհաննէս վարդապետ 17
Յովհաննէս, որդի Պետունց Գեւոյի 319
Յովհաննէս, Բջնիի եպիսկոպոս 56
Յովհաննէս, Համշենից 135
Յովհաննէս, հայր Աթանասի ու Բարսեղի 208
Յովհաննէս ԻԲ պապ 65
Յովհաննէս արքեպիսկոպոս 29
Յովհաննէս Աւագերէց 256, 265, 266
Յովհաննէս, գրիչ 17, 28
Յովհաննէս եպիսկոպոս (1478 թ.) 25
Յովհաննէս Առաքելոց եպիսկոպոս 55
Յովհաննէս եպիսկոպոս (Ուշտունիքի) 318
Յովհաննէս երէց 44
Յովհաննէս երէց (Նորքն-ծայ, 1503 թ.) 292, 293
Յովհաննէս կրօնաւոր 193
Յովհաննէս ձեռնաւոր 276
Յովհաննէս, որդի Գիշուկ եւ Շամշա ամուսինների 284
Յովհաննէս, Յակոբ քահանայի որդի 256
Յովհաննէս, Մաղարթա վանքի սպասաւոր 86
Յովհաննէս փակակալ 25
Յովհաննէս քահանա 12
Յովհաննէս Անգլիացի (Անկլեցի) 346, 348, 349
Յովհաննէս Բարթոսովիչ 261
Յովհաննէս Բջնեցի 56
Յովհաննէս Երզնկացի-Մործորեցի 60, 62, 67, 82, 84, 88-107, 111-116, 119, 120, 307, 336, 340, 343, 361-363, 365-367
Յովհաննէս Երզնկացի Պլուզ 87, 91, 112
Յովհաննէս Մործորեցի, տե՛ս Յովհաննէս Երզնկացի Մործորեցի
Յովհաննէս Կամենեցի 267
Յովհան(նէս) Կոլոտիկ, բաբունապետ Հերմոնի դպրոցի 29, 312
Յովհաննէս Ղրիմեցի 177
Յովհաննէս Համշէնցի 137-140
Յովհաննէս Մալազ գրիչ 139
Յովհաննէս Շահխաթունեանց 85
Յովհաննէս Որոտնեցի, տե՛ս Յովհան Որոտնեցի
Յովհաննէս Ոսկեփոր 125
Յովհաննէս Պարկանցի 88
Յովհաննէս Պլուզ, տե՛ս Յովհաննէս Երզնկացի Պլուզ
Յովհաննէս Սարկաւագ 55, 340
Յովհաննէս Վանական, Վանական Վրդ. 51, 55
Յովհաննէս Տիրացու եպս., տե՛ս Տիրացու 55
Յովհաննէս Փլորենտացի 354
Յովհաննէս Քռնեցի, Յովհան Քռնեցի 111, 114, 336, 337, 345-350, 353-359
Յովհաննէս-Օրբէլ (Օրպէլ), եպս. 24, 25, 32, 33, 56 66, 67, 84, 86, 112, 115
Յովհաննիսեան Ա. 47, 299, 347
Յովհաննէսեան Հ. Մ. 58
Յովսէփ վրդ. Արտազեցի 50, 51, 80
Յովսէփեան Գ. 7, 61, 66, 69, 125
Յուդա-Թադէոս 63
Յոհաննէս վարդապետ 168
Նազխաթուն 163
Նաթիլ 11, 12, 39
Նալբանդեան Յ. 122, 123, 302
Նաղիւայկո, տե՛ս Սեւերին Նալիւայկո
Նաղաշ Յովնաթան 232
Նանա վրդ. 89
Նանիկ, տե՛ս Իւանէ Բուրթէլեան
Նասրատին 193
Նատեր, գրիչ 173
Նաւասարդ 280
Նաւռուզ, տե՛ս Նովրուզ
Նեմեսիոս Եմեսացի 339
Ներ 93, 95
Նեստոր 70
Ներսէս 329, 331
Ներսէս եպիսկոպոս 24, 26
Ներսէս, տէր 285
Ներսէս, վրդ. 345
Ներսէս քանդխուտայ 281
Ներսէս Աշտարակեցի 85
Ներսէս Լամբրոնացի 88, 262, 365
Ներսէս Շնորհալի 70, 92, 93, 103-105, 107, 111, 133, 139, 306, 312, 365
Ներսէս Տարօնացի 87
Ներսէս Տէր Ներսէսեան 92, 93
Ներսօ 319
Նեքամատ 205-207
Նեքամատիկ 207
Նիկանդրոս 323
Նիկոլ Թորոսովիչ 214, 249, 251-254, 258, 263
Նիկողայոս Լիւրացի 117, 119, 120, 343
Նիկողոս 319
Նիկոմեդէս 205
Նիւ-Խորոփ 92
Նողայ 160, 204
Նոյ 63
Նովրուզ 54, 55, 86
ս. Նունէ 233
Նուրադին 57, 74-77, 80
Շազպան 326
Շախմատով Ա. 211
Շահ, որդի Սմբատ Բուրթէլեանի 15-19, 23
Շահ-Աբբաս Բ 59
Շահալի 134, 135
Շահխաթունեանց Յ. 61, 69, 85
Շահազիզ Երուանդ 168
Շահազիզ, տանուտէր 280
Շահանդուխտ 305
Շահինեան Մարիետա 342
Շահ-Իսմայիլ 280
Շահնազար 331
Շահռուխ, Շահռուխ 17, 284
Շահրիմանեան Զաքար 229, 231
Շահրիմանեան Սարհադ 229
Շահվերդի 224
Շահունեցի իշխաններ, Շահունեցիներ 11, 39
Շահունեցի, Վահրամայ որդի 12
Շահսելի 330
Շաղապաթ 277
Շամշա 284
Շամշադին, խոջայ 133, 134
Շապադին 126
Շապուհ Ամատունի 123, 125-127
Շեհիշան 322
Շիխ Իսան 208
Շիխով(ներ) 209
Շիլտբերգեր Հանս 76
Շիրիկ 319, 320
Շիրուանով Լովա 224
Շիւց Է. 180
Շմաւոն, տե՛ս Սիմոն առ. 63
Շմաւոն, վարդապետ (Տաթեւի վանքի) 21
Շմաւոն, վարդապետ (Սանահնի վանքի) 17
Շմաւոն (Սիմոն) Անգեղակոթցի եպս., որդի Խաչատուրի 24, 25, 30, 33
Շմաւոն Բ եպս. 31, 33
Շնորհալի, տե՛ս Ներսէս Շնորհալի
Շոռոթ 347
Շտրումեր Ոլման 162
Ոսկանեան Վ. Կ. 210, 214, 259
Ոսկեան Հ. 53, 83, 98, 100, 125, 136-140, 177
Ովանէս, հայր Մարգարէ 309, 329
Ովանէս, որդի Աղուպշի 322
Որպէլ, տե՛ս Յովհան Օրբէլ
Որոտնեցի, տե՛ս Յովհան Որոտնեցի
Չալաբ, իշխանաց իշխան պարոն 125
Չալոյեան Վ. 299, 314
Չաղար 318
Չամչեան(ց) Մ. 53-55, 66, 67, 69, 83-85, 87, 115, 116, 345
Չեռնի(յ) տե՛ս Դիմիտրի (Դմիտրեյ) Չեռնոյ
Չերմնո(յ), տե՛ս Չեռնոյ Դմիտրի (Դմիտրեյ)
Չիթախ 136
Չոպանեան Ա. 116
Չոփլու 317
Չուղինով Ա. 357
Չուրիլա (Պլենկովիչ) 235-239
Պալեան Տրդատ վրդ. 107
Պահլաւունի (Փոքր Վկայասէր) կաթողիկոս 54
Պահլաւունիներ 168
Պաշարաթ 17
Պապասկիրի Զ. 153
Պարսամ, խոջա 321
Պարսամ Տրապիզոնցի 269
Պարսամեան Վ. 259
Պաւղոս, տէր 133
Պաւրաշ 323
Պեգոլոտտի Ֆ. Բ. 162
Պենչկո Ն. 174, 179
Պեշքէն, տե՛ս Բեշքէն
Պեոտր Գրիգորեւիչ 214
Պետրոս 168, 323, 360
Պետրոս II 224
Պետրոս առաքեալ 49, 50, 118
Պետրոս արքեպիսկոպոսի Եղեգիսի 29
Պետրոս եպիսկոպոս 71, 80
Պետրոս, Զաքարիա Մործորեցու եղբայր 56, 57, 59, 61, 72, 80
Պետրոս, Հռոմի պապ 63
Պետրոս, տէր 323
Պետրոս ֆրա, տե՛ս Պետրոս Արագոնացի
Պետրոս Արագոնացի 111, 116, 346, 348-351, 355, 358
Պետրոս Լոմբարդացի 111, 343
Պետրոս Մեծ 153, 224
Պետրոս Յելիուս 357, 358
Պետրոս Սալիթաղեցի 328
Պետրուշեւսկի Ի. Պ. 334
Պետունց Գեւօ 319
Պետունով (Վոլկ. Բոլկ. Բոլկով. Բեյցա) Կոստանտին 208
Պիղու Ալոիսիոս 192, 243, 244, 247, 253, 254, 258, 260, 264, 265
Պիմեն (մետրոպոլիտ) 161
Պիշոֆ 222
Պիոս Դ պապ 364
Պիւազեան Է. 113, 307
Պլատոն 338, 352
Պլենկո 236-238
դէ Պոդիո, տե՛ս Բարթողիմեոս եպս. 344
Պողարեան Նորայր եպս. 16, 24-28, 71, 72, 78, 79, 88, 93, 98, 99, 114, 132, 224
Պոնոս, տե՛ս Փանոս 216
Պոնցիուս ֆրա, տե՛ս Պօնցիուս
Պոտուրեան Մ. 28, 83, 116
Պորփիւր 338, 350, 355
Պոօշեաններ 76
Պտղոմե(է)ոս 352, 363
Պրիսիանոս, տե՛ս Պրիսցիանոս
Պրիսցիանոս 356-358
Պուլխերիա կայսրուհի 265
Պուղտա, տե՛ս Բուղտա
Պուրթէլեանց, տե՛ս Բուրթէլեանց
Պուրսա, տե՛ս Բուրսա 225
Պօղոս 71
Պօղոս, կաֆայեցի վաճառական 217, 218
Պօղոս, որդի Բարսեղի 224
Պօղոս, հայր Արազի 319
Պօղոս, եղբայր Արազի 319
Պօղոս առաքեալ 50, 119
Պօղոս, արքեպիսկոպոս 156
Պօղոս, Ե պապ 251
Պօնցիուս, Պօնցիոս, Պօնցի 109, 116-118, 343
Ջալալ, Խաչէնի իշխան 38
Ջալալ Օրբէլեան, հայր Ստեփանոս-Տարսայիճ եպիսկոպոսի 24, 25, 32
Ջալալիներ (Ջալալեաններ) 168, 222, 225, 269
Ջահան Շահ Միրզա 75
Ջահկեցի Ղ. 87
Ջահուկեան Գ. 91, 336, 356
Ջանաղ 319
Ջանիբէկ խան 126, 158, 162
Ջանփոլադեան Հ. 154, 155, 159
Ջաջուռ, տանուտէր 278
Ջելալիրեան, Ջելալիրեաններ 15, 77, 130
Ջեսար Օրբէլեան 9
Ջիլբերտուս Պոռետացի 349, 351
Ջհանշահ փադիշահ Կարա-Կոյունլու 81, 133, 280
Ջուան-Խորոփ 92
Ջումա, Պոօշեան իշխան 22
Ջուվեյնի 132
Ռաբան-Աթա 48
Ռաքի Մօսէս տե՛ս Մայմոնիդ
Ռամազ 224
Ռոբերտ Կիլիւերբի 357
Ռոկտինա Կ. Ա. 178
Ռոման 184
Ռստակէս գրիչ 56
Ռուբրուք 347
Ռուի Գոնսալես դէ Կլաւիխո 58, 74, 76, 77, 126, 131, 132
Ռուստամ (Ըռստամ) Բուրթէլեան 17, 18, 20, 21, 30
Ռուտենբուրգ Վ. 300, 301
Սադաղ պարոն 279
Սադկո 235, 236
Սադրադդին Սահիպ 54
Սաթօ 326
Սալամատ 309
Սալար 211
Սալարեւ(ներ) 205, 208, 209, 211, 216
Սալարեւ (Սարաեւ, Սամարեւ) Միխայիլ (Միխայլո) 208
Սալարեւ (Սարաեւ) Դեմենտեյ (Դմիտրի) 208
Սալղահեդդին Իւսուֆ 48
Սակի 168
Սահակ 319, 329
Սաղդաթիար տանուտէր 280
Սաղումեան 7
Սամատ 203
Սամարեւ տե՛ս Սալարեւ Միխայիլ (Միխայլո)
Սամէղ տե՛ս Սամուէլ
Սամուել, Սամեղ 11
Սամուէլ Անեցի 16, 60, 69, 134
Սանասար 59, 80
Սանատրուկ թագաւոր 63
Սանդուխտ 63, 64, 83
Սանճեան Աւետիս 68
Սապուխ 317
Սատադ, տանուտէր 280
Սարաեւ տե՛ս Սալարեւ Միխայիլ (Միխայլո)
Սարգիս 135
Սարգիս, կաֆայեցի վաճառական 217
Սարգիս, աւագերէց որդի Մանուէլ քաղ. 163
Սարգիս գրիչ (1306 թ.) 9
Սարգիս գրիչ (1383 թ.) 120
Սարգիս, Զաքարիա Մործորեցու եղբայր 56, 59, 61
Սարգիս եպիսկոպոս, Սիւնեաց մետրոպոլիտ 12, 13, 24-26, 31-33
Սարգիս կաթողիկոս (ի թվ. Հայոց ՋԽԴ (1495) 19
Սարգիս կաթողիկոս (ի թվ. Հայոց ՋՀ (1521) 276
Սարգիս, հայր Իւանիկի 156
Սարգիս հայր Գրիգոր Տաթեւացու 27, 32
Սարգիս ճգնաւոր 45, 46
Սարգիս պարոն, Բիազտի որդի 279
Սարգիս, որդի Գիշուկ եւ Շամշա ամուսինների 284
Սարգիս տէր, որդի պարոնաց պարոն Առաքելի 132
Սարգիս վարպետ 157
Սարգիս Շնորհալի 309
Սարգիս Սորբեցի 351
Սարգիսեան Բ. 19, 173, 315, 317
Սարթախ 45-48
Սարխոշ 321
Սարկաւագ վարդապետ, տե՛ս Յովհաննէս Սարկաւագ
Սարուխան 319
Սալթանշայ տե՛ս Ստեփանոս-Սուլթանշահ
Սեդրակ 168
Սեդրակեան Ա. 85
Սեթիկ 17
Սելիմ II սուլթան 153
ս. Սեղբեստրոս 64
Սեմեոն Մելիք տե՛ս Սիմէոն Մելիքով
ս. Սերգէյ 230
Սերգեյ 213
Սերգիոս, Սերգիս, Սերգիուս 213
Սերկիզ 213
Սերկիզեան (Սերկիզէն) Ֆեդկո 195, 213
Սերկիզովիչ Անդրեյ 213, 214
Սեւադա Խոյէնցի 48
Սեւաստիոս 365
Սեւերին Նալիւայկո 256, 266
Սեփնջ 153
Սեֆեր Մուրատովիչ 214
Սիգիզմունդ Բ 250
Սիգիզմունդ Գ 247
Սիգիզմունդ մեծ իշխան 195
Սիգիզմունդ Օգոստոս 222
Սիմէոն տե՛ս Շմաւոն Անգեղակոթցի
Սիմէոն, Սիմոն առ. 63, 64
Սիմէոն եպիսկոպոս 317
Սիմէոն քահանա 179
Սիմէոն Երեւանցի 71
Սիմէոն Զամոստիեցի (Լեհացի) 190, 191, 196, 238, 243-247, 249, 252, 254, 261, 264, 267, 284
Սիմէոն Լեհացի տե՛ս Սիմէոն Զամոստիեցի
Սիմէոն Կաֆացի 177
Սիմէոն Մելիքով, Սիմեոն Մելիք 210
Սիմէոն Վիտոցկի 268
Սիմոն, արքեպիսկոպոս Գողթան գաւառի 29
Սիմոն 317
Սիմոն, Նորիգեղից 326
Սիմոնեան Ս. 7
Սիսական տուն, Սիսակայ տուն 9, 11, 18, 25, 29
Սիրադան 280
Սիրոտեչկովսկի Վ. 205, 207, 208, 210, 211, 217
Սիւրմէեան Ա. 295, 328
Սղերթցին 322
Սմբատ, Սմպատ, Սըմբատ որդի Իւանէ Բուրթէլեանի, հայր Ստեփանոս-Իւանէ եպս.ի 14-18, 21, 23, 29, 32, 33, 38
Սմբատ իշխան, որդի Ստեփանոս-Իւանէ եպս.ի 21, 22, 23, 32
Սմբատ, որդի Տարսայիճի 19, 23
Սմբատ, Դաւթի հայր 203
Սմբատ 77
Սմբատ սպարապետ 47
Սմբատ, Աշոտ Ա-ի հայր 178
Սոբոլեւսկի Ա. 237
Սոհրաբ Ռոռոթցի (Որոտնեցի) 21, 23
Սոկրատ 338
Սողոմոն Իմաստուն 104
Սողոբեանց Ալաւերտի 224
Սորղաթմիշ, Սուրղաթմիշ 57, 75-77, 79, 80
Սոցինսկի 257
Սպերանսկի Մ. 233
Սվետոսլաւ Իգորեւիչ 175
Ստեփան 319
Ստեփան (Խովրին) 212, 213
Ստեփան Բատոր 197
Ստեփանէ 16
Ստեփանոս եպս., որդի Որոտնեցի Իւանէի 24, 25, 31
Ստեփանոս (Սիւնեաց եպս.) տե՛ս Ստեփանոս-Իւանէ, որդի Սմբատ Բուրթէլեանի
Ստեփանոս եպս. Օրպէլ 24
Ստեփանոս խոջայ 133
Ստեփանոս եպս., որդի Սմբատ Օրբէլեանի 25
Ստեփանոս եպս., որդի Գրիգոր քահանայի 163
Ստեփանոս տէր, տե՛ս Ստեփանոս Օրբէլեան
Ստեփանոս, Փանոս 216
Ստեփանոս 287
Ստեփանոս, տե՛ս Ստեփանոս Սուլթանշահ
Ստեփանոս արքեպիսկոպոս 24, 25, 30, 33
Ստեփանոս արքեպիսկոպոս Ղրիմի 172

Ստեփանոս գրիչ 101
Ստեփանոս եպիսկոպոս, որդի Խաւնէի 31
Ստեփանոս եպիսկոպոս, Սեբաստիայի 36, 41
Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց 54
Ստեփանոս, որդի Գիշուկ եւ Ճամշա ամուսինների 284
Ստեփաննոս, Հերենքսի որդի 286, 317, 318
Ստեփանոս եպիսկոպոս, որդի Ստեփանոս-Խաւնէ եպիսկոպոսի 23, 32
Ստեփանոս կաթողիկոս Աղթամարի 279, 327
Ստեփանոս Դ կաթողիկոս 317
Ստեփանոս Դ Աղուանից կաթողիկոս 156
Ստեփանոս ձեռնաւոր 275, 276
Ստեփանոս մելիք 321
Ստեփանոս, Մութ գիւղի ռես 278, 294
Ստեփանոս վարդապետ 329
Ստեփանոս Թոխաթեցի 223, 225
Ստեփանոս Լեհացի 259, 260, 267, 268
Ստեփանոս, վարդապետ Կոռիկոսցի 361
Ստեփանոս Հռոմկլայեցի 53
Ստեփանոս Ռարեշ 270
Ստեփանոս Ռոշկա, Կամենեցի աւագերէց 268
Ստեփանոս Սիւնեցի 89, 336
Ստեփանոս Սարոձցի 202
Ստեփանոս Րաբունի 363
Ստեփանոս Օրբէլեան 9, 13, 25, 30, 32, 33, 38, 54, 55, 62, 305, 342
Ստեփանոս-Խաւնէ եպիսկոպոս, որդի Սմբատ Բուրթէլեանի 18, 21, 23, 29, 30, 31, 33
Ստեփան(ն)ոս-Սուլթանշահ եպիսկոպոս 11, 14, 23, 26, 32-42
Ստեփանոս-Տարսայիճ, որդի Ջալալ Օրբէլեանի 25, 32, 33
Սորաքոն 352
Սրապեան Ա. 87, 88, 116, 362
Սրուանձտեանց Գ. 140, 141, 281, 285, 315
Սուիդրիգայլո 193
Սուլայման 122, 123
Սուլէման-բէկ տե՛ս Սուլէյման-բէկ
Սուլէյման-բէկ 317, 318
Սուքեան Սիրատորենց 169
Սուլթան-Ահմադ տե՛ս Ահմադ Ղան Ջելաիրեան
Սուլթանշահ տե՛ս Ստեփանոս-Սուլթանշահ
Սուլթանշահ-Ստեփանոս տե՛ս Ստեփանոս-Սուլթանշահ
Սուլթանէշն տե՛ս Ստեփանոս-Սուլթանշահ
Սուլթանշէն տե՛ս Ստեփանոս-Սուլթանշահ
Սումբա 211
Սուրղաթմիշ տե՛ս Սորղաթմիշ
Սքանդար Կարա-Կոյունլու 17, 20, 77-79, 133, 134
Սօլթանշահ, Մատղավանք գիւղից 280
Վախ սուլթան 73
Վախախ իշխանուհի 11-13
Վախթանգ թագաւոր 9
Վախթանգ VI. թագաւոր 186, 223, 224
Վախուշտի 153
Վահան, արքեպիսկոպոս Հաղբատի 85
Վահրամ 14
Վահրամ, քերթող 275
Վահրամ Շահունեցի 10
Վահրամ Րաբունի 89
Վանական Վարդապետ տե՛ս Յովհաննէս Վանական 55, 243
Վաշդեան, վրաց իշխան 124
Վաշօ որդի պարոն Մկրտչի 277
Վաչուտեան, Վաչուտեաններ 46, 125
Վասակ 13, 26
Վասիլ 14
Վասիլ գրիչ 160
Վասիլեւ Վլադիմիրովիչ 202
Վասիլեւ Ա. 212
Վասիլեւսկի Վ. 201-203, 208, 210, 237
Վասիլի I 160
Վասիլի II 213
Վասիլի III 161, 228
Վասիլի Երանեյի 220
Վասիլի Կապիցա (Պալիցա) 208
Վասկով տե՛ս Վեսեսկով Տիմոֆեյ
Վարագեցիք 55
Վարագ-Տրդատ 92
Վարդ 134-136, 277
Վարդան գրիչ 101
Վարդան եպիսկոպոս 90, 91
Վարդան պարոնտէր 330
Վարդան ուսուցիչ 52
Վարդան Այգեկցի 268, 362
Վարդան Անեցի 303
Վարդան Արեւելցի 50, 52, 93, 336
Վարդան Բաղիշեցի 112
Վարդան Բարձրբերդցի 93, 94
Վարդան վարդապետ 50
Վարդանեան Ս. Ա. 340
Վարդանէս 319
Վարդերես 258
Վարդիգոյլ 330
Վարձիգոյլ 322
Վեգայիոս 364
Վեգեսկով տե՛ս Տիմոֆեյ Վեսեսկով
Վեսեսկով (Վասկով, Վեգեսկով) Տիմոֆեյ 208
Վեսեսկով(ներ) 209, 228
Վեսելովսկի Ա. Ն. 236
Վերոլինգին Անտոն, Օնտոն 208, 212
Վերէ իշխան 134-136
Վիգեն 134
Վիշնեւեցկի Դիմիտրի Իւանովիչ 266
Վլադիմիր իշխան 237, 238, 239
Վլադիմիր Մոնոմախ 183
Վլադիսլաւ թագաւոր 247
Վոլկ տե՛ս Պետունով Կոստանտին
Վսեվոլոդ 153, 183
Վրթանէս վարդապետ Սռնկեցի 262
Տաթեւացի տե՛ս Գրիգոր Տաթեւացի
Տանձիկանց Աւագ 17
Տաշեան Հ. 85, 92, 112, 135, 141, 144, 356
Տարմօէնք 326
Տարոկան 228
Տարսայիճ Օրբէլեան 288
Տարսայիճ եպիսկոպոս 24
Տարսայիճ, որդի Գորգուն Բուրթէլեանի 16, 19, 23, 32, 77
Տարսայիճ Օրբէլեան, Իւանէ Բուրթէլեանի մեծ պապ 9, 32, 38
Տաւերնիէ Ժ. Բ. 226
Տերատոր վարդապետ տե՛ս Տիրատուր վարդապետ
Տէր-Աւագիմովա Ս. 259
Տէր-Աւետիսեան Ս. 27, 52, 117, 118, 277, 118, 277, 284
Տէր-Միքելեան Ա. 184
Տէր-Մկրտչեան Գալուստ 268
Տէր-Մովսիսեան Մ. 73, 79, 277, 277
Տէր-Ներսէսեան Ն. 28
Տէրտէր Երեւանցի, գրիչ 163
Տիգրան Հոնենց 169, 298
Տիխոմիրով Մ. Ն. 161-163, 165, 183, 199, 205, 206, 208, 219, 220
Տիկնանց-Տիկին 13
Տիմանչ, Տիմանչ 50
Տիմէոս 338
Տիրատուր, արքեպիսկոպոս Արտազի 85
Տիրատուր, վարդապետ 10, 26, 27, 98, 211
Տիրացու Ա. եպիսկոպոս 52, 54-56, 63, 77 80
Տիրացու Բ. եպիսկոպոս, Զաքարիա Մործորեցու եղբօրորդի 61, 69, 72-74, 77, 80
Տիրացու Գ 77, 80
Տիւրո Վ. 357
Տոլստոյ Գ. 253
Տրդատ 64
Տրդատ, Աբրահամի որդի 168
Տրդատ Կաֆացեցի 168
Տրետեակով 212
Տուրք, այգեպան 195
Ցիարենկո 264
Ցինցաձէ Յա. 153, 233
Ուդենրիյն Մ. Ա. 343, 349, 356
Ուզբեկ խան 162, 163, 203
Ուզուն-Հասան (Ակ-Կոյունլու) 81, 136
Փայիկ 17
Փանոս 216
Փանոս, ուսթայ 322
Փաշա 11
Փափազեան Յ. 20, 221, 276
Փերիշան 281, 321
Փիլիպոս 94
Փիլիպոս կաթողիկոս 260
Փիլիպոս Հայ 195
Փիլիպոս Հանդուգն 196
Փիլոն Աղեքսանդրացի 338
Փիր 326
Փիրղալեմեան Ղ. 88, 287, 315, 326
Փլարիոս Յովսէփ 268
Փոնցիանոս 272
Փոռնակ ցեղ 134
Փոռնակ Շահնայի 135
Փորքշեան Խ. 170-172, 174-176, 179, 203
Քաղպար 326
Քամալ 280-326
Քաջ-Լեւոն 92
Քաջ-Վարդան 92
Քեշիշեան Մ. 72, 114, 116
Քերական 113
Քերթող 356
Քիթբուղա 48
Քիւրդեան Յ. 58, 87, 88, 115, 116
Քոչլոֆ Մուստաֆա 258
Քուշուկ-Յովհաննիսեան Խ. 173, 178
Քուրտիկանք 326
Օբայդուլլահ իբն ալ-Մահդի 122, 123
Օրդոն 195
Օգոստինոս Ս. 352, 354
Օլեքսանդր տե՛ս Ալեքսանդր 216
Օղուլ 195
Օմար-Միրզա 75
Օնտոն տե՛ս Անտոն
Օնտոնով Սիմէոն (Սեմեոն) Կոտոնոս 208, 212
Օնտոնով(ներ) 209
Օշին, թագաւոր 71, 114
Օրբէլ Օրբէլեանց 25
Օրբէլեան, Օրբէլեաններ 7, 11, 13, 18, 20, 21, 23, 33, 34, 56, 62, 65
Օրմանեան Մ. 50, 53, 55, 66, 69, 71, 72
Օրմանեան Մ. 337, 345
Օրպել տե՛ս Յովհաննէս Օրբել 55, 56
Օստաֆեւ Մարչկա 229
Օրբելի Յ. Ա. 169, 304
Օրեխովիչ Նազար 208
Ֆեխներ Մ. 222
Ֆեոդորա, իշխանուհին 212
Ֆիլիպով Մակսիմ 209
Ֆրանգեան Ե. 59
Ֆրանկո Պարուջացի 66, 344
ս. Ֆրանցիսկոս 119
Ֆրիդրիխ Բ 364, 366

Агапит 242
Адрианова-Перетц В.П. 211, 213
Адонц Н. 43, 124, 336
Али-заде А.А. 51, 54, 157, 288
Амирова Т.А. 357
Антон, Онтон 216
Аревшатян С.С. 339
Арциховский А.В. 196
Ахвердов Ю.Ф. 307
Бартольд В.В. 151, 152, 158
Беленицкий А.М. 306
Бельские 230
Бермята, Пермята, Бурмяна, Вельма, Берма, Ерма 237
Богос 217
Борис 184
Брун Ф.К. 76, 171, 174, 203, 212
Васильевский В.Г. 162, 186, 201, 203, 206-208
Вахтанг Леонтевич 223
Вермяна 237
Веселовский А.Н. 201, 236, 237
Владимир князь 237, 238
Восканян В.К. 259
Гиббонс Г. 163
Гильфердинг А.Ф. 238
Глеб 184
Гоян Г. 265
Греков Б.Д. 159, 182, 184, 186
Григорьян К.Н. 160
Григорян В.Р. 242
Грушевский М. 189, 190
Гумилев Л.Н. 45
Гурко-Кряжин В. 170
Даль В. 201
Дашкевич Я.Р. 188, 192, 242
Джанполадян Р.М. 155
Динара 233
Егиазаров С.А. 282, 307
Еремян С.Т. 153, 154
Забелин И.Е. 205, 220
Зурап Завриев 224
Закревский Н. 191
Захарий 229, 231
Заходер Б.Н. 152
Зевакин Е.С. 163, 165, 174, 176
Зомбарт Вернер 164
Зудгоф К. 364
Ибн-Фадлан 154
Измайлова Т.А. 157
Исаевич Я.Д. 186, 197
Исхаги Н.И. 57
Каждан А.П. 213
Казакова Н.А. 216
Карамзин Н.М. 219
Караулов Н.А. 170
Качерис 217
Кирша Данилов 235
Ключевский В.О. 211
Ковалевский 324
Колесок Б.В. 193
Кондаков Н.П. 183
Костомаров Н. 161, 190, 218, 219
Крамаровский М.Г. 156
Крачковская В.А. 179
Кудряшов К.В. 152, 153
Кучук-Иоаннесов Х.И.178
Линч Х.Ф.Б. 144
Ложкин М. 178
Манандян Я.А. 170, 171, 297
Маркс К. 313, 342
Марр Н.Я. 113, 138, 146, 158, 234, 308
Ваграм Мартиросян 198
Мах П.П. 193
Мейер-Штейнер Т. 364
Меликсет-Бек Л. 183, 186, 191, 242
Микаелян Г.Г. 47
Микаелян В. 198
Микула Васильевич 213
Миллер Б.М. 159
Минорский В. 81
Михайло Иванович 213
Молева Нина 223, 229, 230
Мушегян Х.А. 183
Мышко Д.И. 189, 194-196, 214, 239
Некомат 206
Новосельцев А.П. 154
Оберемок Е. 192
Оганесян Л.А. 364
Ольховиков Б.А. 357
Ондрей Серкизович 213
Орбели И.А. 174
Павел Василев 224
Панос, Понос 216
Папаскири З.В. 153
Папазян А.Д. 21
Парсамян В.А. 229, 259
Пашуто В.Т. 154, 185
Пенчко Н.А. 165, 174, 176
Петрушевский И.П. 226, 275
Пленка Сароженин 236
Понос тե՛ս Панос
Рабинович М.Г. 150
Рождественский Ю.В. 357
Роктина К.А. 178
Рутенбург В.И. 300, 301
Рюи Гонзалес де Клавихо 58, 76, 126, 131
Садко 235
Саларевы 208
Салтанов Иван 223, 229
Санжаров Л.П. 193
Свет М.Я. 53, 66, 344
Семен Михайлович 213
Серкиз 217
Серкизен Федко 213
Симашкович 250
Смирнов А.П. 154
Соболевский А.И. 236
Старокадомская М.К. 196
Сыроечковский В.Е. 162, 199, 201, 202, 205, 208, 210, 213, 214, 216, 217, 220, 225
Сытин П.В. 223, 228
Тарокан 228
Тер-Авакимова С.А. 259
Тизенгаузен В.П. 126, 153, 157
Тимофей Волуевич 213
Тихомиров М.Н. 150, 161-163, 165, 183, 187, 199-201, 205-209, 211, 213, 214, 219, 228, 229
Тихонравов Н. 208, 236
Томсен В. 357
Троицкий И. 183
Туманов А.И. 53
Туманов Отар 224
Успенский Ф.И. 137, 171
Федор Семенович 213
Фехнер М.В. 155, 160, 187, 198, 212, 216, 219, 222, 227
Флоря Б.Н. 200
св. Фома 184
Халпахчьян О.Х. 192, 222
Хаханов А.С. 154
Хачатрян А.А. 21
Хачикян Л.С. 192, 241
Чудинов А. 357, 358
Чурива տե՛ս Чурила Пленкович
Чурила Пленкович, Чурива, Шурилушка Щапленкович 237, 238
Шагинян М. 342
Шамбинаго С. 210
Шастина Н.П. 45
Шепелева Л.С. 233
Шурилушка Щапленкович տե՛ս Чурила Пленкович
Шюц Э. 132
Эмин Н.О. 184
Энгельс Ф. 342
Якобсон А.Л. 165, 171, 212, 231
Якубовский А.Ю. 157, 159
Янин В.Л. 197

Akbiyik Ismet 145
Bartholomaeus de Padio 344
Bononiensis 344
Boetius 116
Bonifacius 116
Brosset 135
Bryer A. A. M. 212
Burghardus de Monte Sion 364
Conybeare C. 317
Dumezil G. 145
Evans A. 162
Golubcrich G. 66, 344
Karamianz D. N. 26
Koch K. 127, 128, 144
Marian Malowist 187
Oudenrijn M. A. 69, 112, 119, 337, 344-346, 350, 356
Parvus 344
Francesco Balducci Pedolotti 162
Priscianus 357
Schutz E. 180
Jean Baptiste Tavernier 226
Thurot 357
Tisserant E. 349
Toumanoff Kyrille 7

Աբխազիա 122, 149, 177
Ագուլիս 347
Ադանա 67, 71, 72, 114, 115
Ադլեր 149
Ադրբեջան 157, 288
Ադրիանապոլիս 164
Ազախ, տե՛ս Ազով
Ազիտան 77
Ազով, Ազախ (Տանա) 161-164, 176, 180, 181, 249
Ազովի ծով 152, 158, 163, 180, 201
Աթանանց գիւղ 282, 285
Աթենա գիւղաքաղաք 127
Աթէնական հերցոգութիւն 135
Աթըլ գետ, տե՛ս Վոլգա
Աթինայի կազա 146
Ալանատամ գիւղ 147
Ալանաց աշխարհ 158
Ալանդ 57
Ալշաք-տերէ գիւղ 147
Ալուշտա 201
Ախսարայ, Աղսարայ 167
Ակամփս գետ (Ճորոխ) 123
Ականց 326
Ակարնանիա 164
Ակի ձոր 83, 84
Աղանց գիւղ 288
Աղեքսանդրիա 154
Աղթամար 54, 107, 168, 279, 284, 285, 317
Աղթամարի վանք 327
Աղըրի արտ 285
Աղճապատ 147
Աղսարայ 125, 167, 169
Աղցք գիւղ 77
Աղու գիւղ 281
Աղուանից թագաւորութիւն 234
Աղուանք 128
Աքքէրման 162, 185, 192, 194
Ամասիա 171
Ամիդ 171, 207
Ամիսոս 148
Ամրդոլու վանք 112
Ամոյն գետ 158
Այաս 156
Այղր լիճ 127
Այրարատ 316
Այրարատեան նահանգ 56, 124-127, 280 (գաւառ)
Անանավանք 318
Անանդ 156
Անաշատ 335
Անապա 177, 180
Անատոլիա 144
Անցեղակոթ գիւղ 15, 17, 28
Անգլիա 301
Անդրկովկաս 15, 46, 48, 50, 65, 76, 81, 126, 137, 164, 175, 177, 181, 185, 214, 225
Անի 65, 125, 126, 155, 167, 169, 170, 171, 182, 190, 297, 298, 304, 307, 342
Անիշատ գիւղ 326
Անիֆա գիւղ 147
Անկարա 245
Անտիոք 185
Ապարաներ 348
Ապիոն գիւղ 147
Ապրակունեաց վանք 27, 351
Ապրակունիս գիւղ 28, 345, 348
Առաջաձոր 335
Առաքելոց երկիր, տե՛ս Արտազ
Առնանք 335
Ասիա 164, 187
Ասորիք 48
Ասպարածին վանք 84
Ասպինձակ 276, 278
Աստրախան 85, 151, 155, 157, 159, 160, 162, 167
Աստրախանի խանութիւն 159, 222
Ատապազար 143
Ատրնա 232
Ատրպատական 34, 43, 51, 66, 69, 73, 76, 221, 344
Արաբիա 187
Արագածոտն 46, 124-126
Արագ-բանարի 57
Արարատ, Արարիտ լեռ 63, 65, 344
Արաքս 51
Արբերդ գիւղ 285
Արդաբիլ 126, 134
Արդոզական գաւառ, տե՛ս Արտազ 43
Արդի գիւղ 330
Արեւելեան Եւրոպա 181, 188, 200, 207, 209, 212, 221, 226
Արեւելեան Հայաստան 34, 53, 67, 223
Արեւմտեան Բուգ 185
Արեւմտեան Եւրոպա 181, 245
Արխանգելսկ 223
Արծն 169, 171, 182, 298
Արճէշ 81, 171, 276, 280
Արմենիակոն 148
Արնո գետ 301
Արշակաւան 43, 84
Արտազ 43, 44, 49-57, 59-63, 65-67, 69-74, 76-79, 81-86, 88, 90, 93, 94, 97, 98, 114-117, 119-121, 342, 343, 345
Արտամետ 286
Արտանուջ 171
Արտաշէն 127-129
Արցախ 234, 316
Արփա գիւղ 11, 13
Աւագախոռ 335
Աւ(ա)ջուղ 59, 61, 84
Աւարայրի դաշտ 43
Աւարգա 361
Աւլախաց, տե՛ս Վըլախաց աշխարհ 193
Աւլայտէմի, Աւլատէմուր, տե՛ս Վլադիմիր
Աւձանքեր 335
Ափխազաց աշխարհ, տե՛ս Աբխազիա
Աֆլիսցիխէ, Ախլիսցիխէ 15, 17
Աֆղանստան 196
Բաքաջուղ 57
Բաբերդ 130, 133, 135, 136, 142, 145, 148, 171, 215
Բազարան 277
Բագրատունեաց Հայաստան 234, 297
Բաթում 146
Բաղդադ 47, 48, 171, 226, 232
Բալթիկ ծով 182, 185, 222
Բալխաշ լիճ 158
Բաղէշ 77, 285
Բայլական 126
Բանկլի-ձոր 325, 335
Բասդ գիւղ 295
Բասեն 133, 345
Բասին գիւղ 345
Բաստ գիւղ 328
Բասրա 171, 224, 232
Բարգեւանայ առու 335
Բարձր Հայք 126, 136
Բարոն գիւղ 81, 120
Բեթղեհէմ 44
Բելայա գետ 177, 178
Բելգրադ 245
Բելորէչենսկայա ստանիցա 177, 178
Բերդագրակ (Սիսկիմ) գաւառ 143
Բերդաղաշտ 57, 121
Բերդակ գիւղ 325
Բեսաւենք գիւղ 283, 288
Բերկրի 171, 308
Բերն 237
Բիւզանդական կայսրութիւն, Բիւզանդիա 122, 123, 130, 135, 164, 170, 176, 185
Բլուր 326
Բոգինա գիւղ 146
Բոլոնիա 119
Բոլորաբերդ 29
Բոլորամարգն 326, 335
Բոլոգնա 266
Բոսնիա 135
Բջնի 53, 56, 76
Բրասլաւ 189
Բրեանսկ 198
Բրեստ 197, 250
Բրիտանիա 63
Բուդապեշտ 194
Բուլղար 151, 154, 159
Բուխարա 158
Բուխարեստ 194
Բուկելարներ 148
Բուրսա 221
Բուք տե՛ս Փորթունա
Գագրի 149
Գալիչ 189, 244
Գալիցիա 175, 176, 186, 193, 197, 228, 245, 249
Գալիցիա-Վոլինեան իշխանութիւն 243
Գաղատիա 165
Գամենակ, Քամենակ 173
Գայլ գետ 145
Գայլիձոր, տե՛ս Գլաձոր
Գանձակ (Գեանջա) 82, 190, 232, 281, 283, 326, 327
Գանձասար 15, 155, 156, 158, 193
Գառըր, Գառրա գիւղ 147
Գարայնի 61
Գդանսկ 245
Գելենջի 177
Գեղամայ երկիր 31
Գեղարքունիք 31
Գերմանիա 150
Գիլան 9
Գլաձոր 10, 27, 67, 69, 70, 88, 89, 95-97, 101, 345, 346, 354, 355, 359
Գողթան գաւառ 27, 52, 82
Գողտն 29, 118
Գոմել 198
Գոռել, տե՛ս Լեհաստան
Գովաթա 145
Գոտլանդ կղզի 183
Գորդանիա 131
Գորի 15
Գորոդենկա 244
Գրիգոր Լուսաւորչի անապատ 317
Գրմա գիւղ 147
Գրուզինի թաղամաս 224
Գրունվալդ 191
Գուգարք 316
Գուշնի գիւղ 147
Դամասկոս 48
Դաշտ 347
Դանուբ 152, 171
Դարանաղեաց գաւառ 27, 28, 137
Դարաշամբ 117, 118
Դարդանելի նեղուց 164
Դարէժ, տե՛ս Թաւրիզ
Դեհխարկան 66, 344
Դեշտ-ի Ղփչախ 152-154
Դեսնա 198
Դերբենդ (Երկաթէ դուռ) 157, 181, 211
Դիարբեքիր 226
Դիժոն 196
Դնեպր 152, 162, 182, 185, 187, 189, 194, 245
Դոխիի թագաւորութիւն 65
Դոն 152, 153, 161-163, 175, 176, 180, 187, 196
Դոնեցկ 152
Դոշ-բանդլար 57
Դրազարկ 361
Դուբոկ 161
Դուին 122, 155, 170, 171, 182, 183, 223, 304
Եազլովեց 272, 273
Եաիկ գետ 154
Եակուտ 302
Եաշ (Եասսի) 270, 271
Եարոսլավ 161
Եգեր 123
Եգերացւոց աշխարհ 177
Եգիպտոս 63, 154, 157, 204, 232, 341, 363
Եդեսիա 63
Եզնանիստ 335
Եթովպիա 65, 344
Ելեգասպառ 335
Եկատերինոդար 122, 149
Եղեգեաց ձոր, Եղեգէց ձոր տե՛ս Եղեգնաձոր, Եղեգիս
Եղեգնաձոր, Եղեգիս 9, 10, 16, 19, 29, 32, 34, 36, 39-42, 77
Եղնովիտ (Էլեհովիտ) գիւղ 138, 139, 144
Եղջախոռ սար 28
Ենկի Սարայ, Ընկի-Սարայ, Ընկի-Սալայ 193, 194
Երեւան, Հերեեր 10, 12, 13, 21
Երեւան 20, 76
Երզնկա 88, 133, 137, 148, 156, 171, 190, 215, 302, 307, 308, 317, 334
Երկաթէ դուռ, տե՛ս Դերբենտ
Երնջակ 27, 66, 82, 345-348, 354
Երուսաղէմ 26-28, 30, 44-46, 48, 63, 110, 132, 134, 139, 185, 224, 267, 292, 293, 335, 361
Եւդոկիա, տե՛ս Թոխաթ
Եւթիփոոն 338
Եւստաթէ, տե՛ս Տաթեւ
Եւրոպա 49, 75, 111, 121, 162-165, 186, 197, 200, 204, 240, 298, 300, 337, 338, 340, 341, 343, 346, 348, 351, 357, 358
Եօթը-Փարա գիւղ 127
Զամոստիէ, Զամոսցա 244, 267, 270
Զենգիմար գետ 83, 84
Զենգիմերա Ասպարածին, Ասպարածին վանք, տե՛ս Ծործորի վանք 83
Զերիշատ 276
Զեփանոս գիւղ 147
Զինգիմեր գետ, տե՛ս Զենգիմար
Զմիւռնիա 267, 354
Զմմառի վանք 112
Զուրպիչի գիւղ 146
Էթիլ գետ 158
Էլեմոնաս գիւղ 147
Էլեու գիւղ 147
Էպիրոս 164
Էջմիածին 20, 30, 71, 78, 118, 156, 253, 255, 256, 260, 267, 280, 308
Էտոլիա 164
Էրզրում 232
Էօրէն գիւղ 147
Ընկի Սալայ, Ընկի Սարայ, տե՛ս Ենկի Սարայ
Ըռշտունիկ արտ 335
Ըստաթէ, տե՛ս Տաթեւ
Ըստամպօլ 225
ս. Թադէի վանք, ս. Թաթէի վանք, ս. Թադէոս Առաքելոյ վանք 54, 56, 60, 61, 63, 70-73, 78, 79, 83, 84, 86, 90, 342-344
Թաթարիա 344
Թաման 175, 180, 181, 216
Թամանեան թ. կղզի 175, 177, 180, 181
Թամաշալար 57
Թայզաբարա հովիտ 84
Թանահատի վանք 317
Թավրէժ, տե՛ս Թաւրիզ
Թարոն գաւառ 345
Թաւրիզ, Թավրէժ 11, 26, 34-36, 38-40, 51, 64-66, 69, 72, 73, 76, 78, 117, 125, 126, 171, 226, 305, 342, 344, 346, 347
Թբիլիսի, տե՛ս Թիֆլիս
Թեբերդա 177
Թերեպոլու տե՛ս Տրիպոլի 147
Թերեք 177
Թերեւեթ հովիտ 127
Թերեփիթ սար 127
Թերմէի շրջան 147
Թեփեքյոյ գիւղ 147
Թէոդոսիա 133, 148, 262, 267
Թէոդորո իշխանութիւն 212
Թիւրքիա, տե՛ս Թուրքիա
Թիֆլիս, Թվլիս, Թբիլիսի 153, 224, 272, 308, 354, 361
Թմոգուի 27, 125
Թոխաթ, Եւդոկիա 71, 171, 221, 225, 226, 232, 269, 270, 273
Թորոսանց լեռ 145
Թոփտի գիւղ 203
Թրակիա 164
Թունիս 301
Թուրքիա, Թիւրքիա 59, 145, 159, 163, 164, 198, 214, 221, 222, 226, 241, 245, 246, 267
Ժելտիէ Վոդի 257
Ժիտոմիր 189
Ժուանեց 244
Ժումբ գիւղ 147
Իլով տե՛ս Լուով 244, 253
Իկոնիայի սուլթանութիւն 46,48, 130
Իսպանիա, Սպանիա 46, 58, 74, 76, 232, 301
Իսսիկ-Կուլ 158
Իտալիա 157, 162, 300
Իրան 15, 43, 46, 48, 50, 65, 76, 81, 126, 132, 133, 150, 165, 175, 177, 181, 185, 214, 221, 223, 226, 235, 240, 278, 334
Իրաք 157
Իրիգէ 127
Իփիշատ 326, 335
Իւրեւ-Պոլսկի 228
Լադոգա 183
Լազիստան, տե՛ս Ճանիք
Լակոպա, տե՛ս Կոպա 176
Լատինական կայսրութիւն 185
Լաւոի, տե՛ս Լոռի
Լաւվ, Լով, տե՛ս Լուով
Լեհաստան, Գոռել 132, 165, 166, 186, 187, 192, 194, 197, 221, 225, 241, 243-245, 250, 251, 260, 265, 266, 273
Լեմբերգ, տե՛ս Լուով
Լեոպոլիս, տե՛ս Լուով
Լեսբոս կղզի 135
Լեւանտեան երկրներ 301
Լիբիա 63
Լիվոնիա 272
Լիտուա 186, 187, 195, 221, 238, 239
Լիտուական (Լիտովեան) մեծ իշխանութիւն 186, 197
Լիւբեչ 198
Լոռ 149
Լոռի, Լաւոի 17, 20, 234, 330, 331
Լով, տե՛ս Լուով
Լուով, Լեոպոլիս, Իլով, Լով, Լաւվ 158, 162, 166, 186-189, 191-194, 197, 221, 222, 243-247, 250-255, 259-267, 269
Լուցկ, Լուցկա 186, 191, 193, 194, 243, 244
Խազարական խաքանաթ 151, 152, 154, 155
Խաթա(յ) քաղաք 158
Խաղնեա, տե՛ս Խաղտիք
Խաղտիք 122, 124, 130, 140
Խաչավանք սար 127
Խաչափիթ գիւղ 146
Խաչեքարի վանք 138, 139
Խաչէն 38, 345
Խաչի արտ 285
Խայդուի թագաւորութիւն 65
Խառաբաստ 326
Խարբանդ 9
Խարբերդ 171, 207, 284
Խերսոնէս 171, 174
Խժիշկ գիւղ 277
Խիզան 282
Խլաթ 51, 77
Խոհօղլու գիւղ 147
Խոյ, Հեր 64, 65, 171
Խոշաբ 57
Խոշկաշէն գիւղ 66, 82
Խոշկելիր գիւղ 147
Խոշնիշին գիւղ 146
Խոպէի շրջան 145, 146
Խոտին 255, 256, 266
Խոր վիրապ 52
Խորասան 63, 158
Խորեզմ 154
Խրիմ, տե՛ս Ղրիմ
Խութա 232
Խումկայ վանք 139
Խուլայո վանք 207
Խուռշունեի աւան 142
Ծար 11, 16, 27
Ծեբելդա 149
Ծղուկ 29
Ծործոր 43, 81, 113, 114, 119, 342
Ծործորի վանք 44, 60, 67, 71, 73, 74, 81-84, 89, 90, 92, 93, 113, 114, 116, 117, 120
Ծուռ արտ 285
Ծուփա 146
Կազոխ 180
Կալա- Դարասի, տե՛ս Բերդաղաշտ
Կալապոտամոս, Կալապատոմուզ 127
Կալաֆկա գիւղ 147
Կալէ գետակ 127
Կահիրէ 267
Կաղզուան 171
Կամա 151, 155
Կամբեչան 234
Կամենեց-Պոդոլսկ 166, 186, 189, 191, 193, 194, 216, 244-248, 250, 254-258, 263, 264, 268
Կանեւ 187, 189
Կաչգար, Կաշկար 138
Կաչգար-սու 138
Կապադովկիա 85, 86
Կապի կիրճ 60
Կապոսի վանք, 88, 137, 138, 351
Կասպից ծով, Կասպիական 46, 152, 153, 156, 158, 177, 223
Կասպ-Վոլգեան ճանապարհ 157
Կարա-դերէ 128, 142-147

Կարա-կոյսն 57
Կարակորում, Ղարաղորում 45-47, 347
Կարբոյ գաւառ 125
Կարին 171
Կարս 169, 171, 182, 190, 296, 298
Կաֆա 125, 126, 133, 161-167, 169, 171-175, 177, 179-181, 185, 187, 188, 191-193, 195, 198, 200-204, 211, 212, 214-218, 232-234, 262, 263, 267, 324, 355
Կեծուկ գիւղ 81, 82
Կես գիւղ 286
Կենտրոնական Ասիա 44
Կեսարիա 86
Կերչեան նեղուց 175
Կեֆար գետ 177
Կիեւ, Մանքերման, 175, 179, 181-187, 189, 190, 192-197, 206, 212, 213, 221, 237-239, 242-244
Կիեւ(ո)-Պեչորեան վանք 192, 242
Կիլիկիա, Կիլիկեան Հայաստան, Կիլիկեան թագաւորութիւն 28, 44-53, 62, 65, 70, 72, 73, 115, 120, 156, 167, 178, 184, 185, 261, 340-342, 361-367
Կիպրոս 47, 185
Կիտայգորոդ 199, 218, 220, 223, 232
Կիրասոն 147
Կիրէկիւկայա գիւղ 155
Կիրիլո-Բելոզերսկ 230
Կլեազմա 186
Կլարջք 129
Կոլոմնա 161, 198
Կող գաւառ 123
Կողբ 52, 76
Կողոնիայի շրջան 140
Կոշոտ 180
Կոնոնտ 180
Կոստանդնուպոլիս 125, 135, 143, 145, 161, 163, 164, 166, 171, 185, 200, 211, 217, 226, 245, 267, 272
Կոպա, Լակոպա, Կոպարնո 176, 177, 179
Կովկաս 138, 152, 157, 158, 177, 179, 182, 185
Կովկասեան լեռնաշղթա 175, 181,
Կոտայք 124-126
Կորսուն 257
Կուլնիկանց գիւղ 135
Կունայ արտ 335
Կուռմիյա գիւղ 147
Կստրած-քար 326
Կրակով 244
Կրապոտկինի շրջան 178
Կրասնայա-Պոլեանա 155
Կրասնոդար տե՛ս Եկատերինոդար
Կրեմենեց 189
Կրետէ կղզի 164
Կուբան գետ 149, 177, 180
Կուբան 176, 178, 180
Կուլիստան 323
Կուխլյա գիւղ 147
Կուսանաց գետ 84
Կուսանասար, Կուսանաց սար 325, 335
Կուր գետ 177, 234
Կուրենեւկա 195
Կոռիկոս 365
Հագարան 151
Հալէպ 48, 225, 267
Հաղբատ 53, 85, 137
Համամաշէն տե՛ս Համշէն
Համշէն, Համշին 122-143, 145-148, 156
Հայաստան 7, 36, 38, 43, 46, 49, 50, 52, 60, 62-66, 72-74, 76, 77, 79, 93, 101, 105, 118, 120, 122-126, 128, 132, 133, 137-139, 147, 148, 150, 155, 157, 158, 164, 166-171, 178, 179, 181-184, 188, 190, 196, 211, 216, 226, 228, 232, 234, 241, 243, 253, 259, 260, 264, 272, 274, 275, 282, 283, 285, 289, 290, 296-302, 304-306, 311, 314-316, 321, 323, 324, 329, 334, 335, 337-339, 347, 355, 356, 359-361, 363, 367
Հայոց-ձոր 286
Հայք, տե՛ս Հայաստան
Հաշտարխան, տե՛ս Աստրախան
Հարաւային Ռուսաստան 189
Հեր, տե՛ս Խոյ
Հերեթ-Կախեթ 234
Հերներ, տես Երեւան 21
Հերմոնի վանք 18, 26, 27, 29, 40-42
Հին Ջուղա 126, 347
Հին Սարայ, տե՛ս Սարայ Բերքէ
Հիւսիսային Եւրոպա 156
Հիւսիսային ծով 240
Հիւսիսային Կովկաս 125, 152, 155, 158, 162, 165, 175-179, 181, 196
Հիւսիսային Հայաստան 17
Հնդկաչին 170
Հնդկաստան, Հնդուստան 63, 65, 125, 150, 158, 171, 175, 187, 232, 344
Հոնաց աշխարհ 169
Հոռոմք 65
Հորդա, տե՛ս Ոսկէ Հորդա
Հռոմ, Հռովմ 49, 50, 63, 65, 77, 111, 115, 185, 196, 197, 211, 243, 261, 267, 342, 346, 348
Հռոմէական կայսրութիւն 182
Հռոմկլա 44, 49, 50, 53
Հրազդանի ձոր 125
Հունգարիա 194, 245
Հունուտ 137
Ձորագետ 296
Ղազախական անապատ 154
Ղազախստան 146, 152
Ղազան 151, 159, 160, 161, 167, 215
Ղազանի խանութիւն 158, 220, 222
Ղազանի շրջան 234
Ղալաթիա 232
Ղալինոս գիւղ 147
Ղարաղորում, տե՛ս Կարակորում
Ղարամանիա 135
Ղարաքիլիսա 83
Ղզլար 196
Ղրիմ 125, 126, 133, 135, 137, 147, 148, 152, 156, 157, 159, 160-165, 169-174, 176-178, 180, 184, 185, 187, 189, 192, 195, 198, 200-205, 208, 209, 211, 212, 214-218, 224, 225, 236, 239, 241, 246, 249, 260, 266, 267, 324
Ղրիմի խանութիւն 159
Ղում 158
Ղփչախ 154
Ճանիկ, Ճանիք, Լազիստան 124, 147, 148
Ճիտկանց արտ 285
Ճոշարա գիւղ 147
Ճորոխ 123, 124, 127, 143, 146, 171
Ճռեռի գիւղ 292
Ճուղա, տե՛ս Ջուղա 167
Ճուքուլիթի գիւղ 146
Մագդեբուրգ 186
Մագու գետ, տե՛ս Մակու գետ
Մաղրաս 272
Մալա գիւղ 147
Մալթա 180
Մախաթելա գիւղ 147
Մակու, Մագու 43, 57-61, 71, 73-79, 81-85, 119-121, 156
Մակու գետ, Մագու, Մակուչայ 59, 83
Մահոնա գետ 145
Մաղարթա վանք 86
Մամուտանի շրջան 279
Մայկոպ 149, 177
Մայրամ-Նանա վանք 84
Մանազկերտ, Մանաւազկերտ 124
Մանգերման, տե՛ս Մանքերման
Մանգուպ 174, 201, 204, 212, 217, 174,
Մանդրայ գիւղ 147
Մանիշակ գիւղ 147
Մանքերման, Մանգերման, Մանքրման, Մանքըման 187, 190, 192-194, 244, 249
Մապարա գետ 127
Մաքառուաց գիւղ 284
Մատղավանք գիւղ 280
Մատրեգա, Մատրախա, Տամատարխա 176, 179,
Մարաղա 27, 51, 54, 66, 69, 73, 111, 344-347, 354, 355, 359
Մարանդ 171
Մարգար գիւղ 285
Մարմանդ գիւղ 127
Մարմարայ ծով 164
Մարմետ 279, 280, 293, 318
Մարուխա 177
Մացեստա 149
Մացուկա 130
Մափարի գետ 127
Մաղնոյ վանք 322
Մաւրիտանիա 63
Մելեսկուր գիւղ 146
Մելիտինէ 171
(Մեծ) Բուլղար 154, 155
Մեծ Գրուզինսկի փողոց 224
Մեծ Զելենչուկ գետ 178
Մեծ Հայք 51, 53, 55, 62-67, 69, 70, 72, 77, 115, 120, 121, 226
(Մեծ) Նովգորոդ 161, 182, 206, 215, 222,
Մեծոփայ վանք 28, 29
Մերդին 171
Մերձաւոր Արեւելք 44, 46, 47, 49, 76, 341
Մերձբալթեան երկրներ 148
Մըսր 232
Միլանեան իւրտ 57
Միջագետք 48, 151
Միջերկրական ծով 48, 156, 164, 165, 185, 300
Միջին Ասիա 44, 125, 150, 158, 159, 162, 164, 175, 181, 200, 306, 344
Միջին Վոլգա 154
Մծարա 149
Մկնաւէր 335
Մոգիլեւ 183
Մոզդոկ 194
Մոժայսկ 198
Մոլդաւիա, Մոլդովիա 186, 191, 193, 194, 200, 244, 246, 255, 262, 266, 270, 271
Մոկս, Մոկք 287, 316
Մոսկով, տե՛ս Մոսկուա
Մոսկովեան (մեծ) իշխանութիւն, պետութիւն 150, 151, 161, 165, 204, 207, 239
Մոսկուա, Մոսկով 150, 155, 156, 160-162, 165, 186, 187, 197, 199, 200-207, 210-225, 227-234, 236, 239, 240, 245, 266
Մոսկուա գետ 161
Մորեա 135
Մութ գիւղ 278, 294
Մուղան 64
Մուղնի գիւղ 280
Մուսագրըց գիւղ 147
Մուշ 57, 267, 325
Յամպոլի գետ 145, 147
Յանքերդոյ գաւառ 125
Յեազլովեց 244
Յեարոսլաւ 244
Յոնիական կղզիներ 164
Յորդանան 103
Յովհաննավանք, Յոհաննավանք 124, 125
Յունական ծով, տե՛ս Սեւ ծով
Յունաստան 157, 185, 189, 213
Յունաց աշխարհ 123
Յունիա 143
Յունիէի շրջան 147
Նախիջեւան, Նախճաւան 54, 66, 74, 81, 82, 126, 168, 171, 346, 347, 348
Նախջուանայ երկիր 82
Նարեկ գիւղ 289
Նեժին 198
Ներկարարենց արտ 285
Ներքին Մարմետ 318
Նիժնի-Նովգորոդ 151, 160, 161
Նիկոմեդիայի շրջան 147
Նոր Աթէնք 346
Նոր-Աֆոն 149
Նոր-Նախիջեւան 148, 172
Նոր-Ջուղա 25, 230
Նոր Սարայ, տե՛ս Սարայ Բաթու
Նորագեղ 286
Նորատուս 9, 11
Նորավանք 25, 82, 117, 288
Նորիգեղ 326
Նորշէն գիւղ 325
Նովգորոդ 156, 165, 183, 187, 191, 200, 215, 216, 230
Նովգորոդ-Սեւերսկ 198
Նովոռոսիյսկ 180
Շահապոնք 66, 76, 348
Շահբունիս գիւղ 82
Շամ, տե՛ս Սիրիա
Շամախի 30, 225-227
Շամրան 30
Շանա (Մինկիլա, Կիւշանա) գիւղ 147
Շապխոնց արտ 285
Շարակաձոր 319
Շարուր 57
Շափշուկա 149
Շաւարշան լեռներ 84
Շաւարշաւան 43
Շեյոն գետ 215
Շիրակ 65, 342
Շիրակաւան 275
Շիրվան 157, 225
Շողդադիա, տե՛ս Սուրոժ
Շչեկավիցա 195
Շրջկան գիւղ 278
Ոզմի գիւղ 287
Ոսկէ Հորդա 126, 151, 154-159, 162, 164, 169, 194, 198, 202, 206, 207, 210, 211, 213, 215, 237,
Ոստան 77
Որոտան, Որոտն 12-16, 26, 27, 32, 33, 37, 77
Որոտնայ գաւառ 168
Ովեակ, տե՛ս Ուկեկ
Որոտն տե՛ս Որոտան
Չաթար Փոտանա գիւղ 147
Չաթխոս 127
Չալդրան 57
Չամալ գիւղ 147
Չայ-բասար 57
Չայփարա 57
Չարխափան եկեղեցի 133
Չարշամպայ 142, 143
Չաուշի գիւղ 146
Չերկաս 187, 189
Չերնիգով 183
Չերքեզիա, Չերքեզաց աշխարհ 177, 180, 181
Չինաստան 150, 158, 162, 170, 196, 232
Չիչով, տե՛ս Սեչով
Պազարսու գիւղ 147
Պահ 146
Պաղեստին 45, 47, 48
Պարխար, Պարխարի լեռներ 64, 135, 138
Պարկանց գիւղ 88
Պարսից ծոց 171
Պարսկական Թաթարիա 65
Պարսկահայք 69
Պարսկաստան, Պարսից աշխարհ 34, 59, 63, 75, 157, 168, 170, 171, 187, 224, 226, 259
Պարտաւ 122, 126
Պափլագոնիա 148
Պաֆրա 143
Պելոպոնէս 164
Պեչորեան վանք 183
Պետրովիցի 189
Պերա 164, 165
Պերեկոպ 181, 187
Պերեյասլաւ, տե՛ս Ռեազան
Պիցխելա Սուփլա գիւղ 146
Պոդոլ, Պոդոլիա 188, 194, 195, 257, 273
Պոդոլեան երկրամաս 189
Պոդոլսկ 254, 255
Պոնտոս, Պաւնտոս 123
Պոսադ 220
Պորտուգալիա 245
Պսկով 187
Պտին, Պուտին (Բուդապէշտ) 193, 194
Պտղնավանք 125
Պրեսնեա 223, 224
Պրուսիա 221
Պուլթան գիւղ 147
Պուտա-Բէշտ, տե՛ս Բուդապէշտ
Պուտիվլ 198, 222
Պօթուշան 270
Ջալալինեան իւրտ 57
Ջահուկ գիւղ 66, 348
Ջահուն գետ 158
Ջեմիլ գիւղ 127
Ջեմիլի շրջան 141
Ջենովա 163-166, 170, 171, 185, 200, 236, 355
Ջրուընիկ 335
Ջուղա 167
Ջուրպիջի գիւղ 146
Ջքրաշէն 325, 326
Ռաշկով 244, 248
Ռեազան, (Պերեյասլավ) 161, 215
Ռեւել 148
Ռշտունիք 63, 281, 283, 316, 317, 326, 327
Ռոման 270
Ռոմանիա 147
Ռուսաստան, Ռուսիա 44, 148, 150, 153, 157, 159-161, 163, 164, 175, 177, 181, 182, 184, 186, 187, 191, 193, 196-200, 204, 205, 207, 209-211, 213-215, 217, 220, 223, 227, 229, 231, 235, 236, 240-241, 245, 249, 265, 273
Սաթարիա գիւղ 147
Սալերնո 364, 366
Սալիթաղ գիւղ 62, 82, 348
Սալին-քեոյ 146
Սալմաստ 72, 309
Սահար լեռ 84
Սամարղանդ 15, 131, 158
Սամարուքսա գիւղ 147
Սամիրա գիւղ 143
Սամսոն 147, 171
Սամցխեթ 276
Սայանա գիւղ 147
Սանահին 17, 30, 330
Սանասարուկ լեռ 84
Սառուցեալ ովկիանոս 215
Սարայ 157, 249
Սարայ Բաթու 151, 155-158, 162, 169.
Սարայ-Բերքէ 151, 156, 157, 159, 194
Սարատով 155
Սարէս գիւղ 147
Սարիղայիր գետ 83, 84
Սարկել 153
Սարմատիա 152
Սաքսին 153
Սեաւ, տե՛ս Սեւ ծով
Սեբաստիա 36, 41, 64, 171, 284
Սելանիկ 232
Սելիտերնոյէ գիւղ 155
Սեչով, Չիչով 193, 194
Սերաբ 126
Սերաթ 193, 194
Սերբիա 135, 189
Սեւ ծով, Յունական ծով 48, 127, 131, 133, 142, 145-149, 151-153, 156, 158, 162-166, 171, 174, 176, 181, 182, 185, 201, 205, 206, 214, 222, 355
Սեֆեան Իրան 221
Սըմընդըր 152
Սթունի գիւղ 292
Սիբիր 160
Սինեական անապատ 27
Սինոպ 143, 146, 147, 161, 171, 172, 226
Սիս 46, 50, 62, 66, 67, 71, 115, 120, 158, 167, 193, 261, 263, 361, 362, 365
Սիսական Նահանգ 62
Սիրեց 195, 196
Սիրիա, Շամ 46, 48, 157, 172, 187, 225, 232, 341
Սիցիլիա 364
Սիւնավանք, Սիւնայվանք 17
Սիւնիք 7, 9, 12-15, 17-21, 23-30, 32-35, 39, 42, 51, 54-56, 62, 67, 84, 90, 112, 115, 117, 121, 168, 224, 234, 296, 305, 316
Սիւրմենէ 131, 132, 143-147
Սկիւտար 232
Սմոլենսկ 198, 200
Սնետին 244
Սոլդայա, տե՛ս Սուրոժ
Սոլլար գիւղ 147
Սոկմանաբադ 57
Սողդարիա, տե՛ս Սուրոժ
Սոչի 149
Սոսկուն 326
Սպահան 224, 229, 245
Սպանիա, տե՛ս Իսպանիա
Սպեր 127, 128, 130-137, 142, 148
Սպիտակ ծով 223, 240
Սպիտակ 223
Ստանիսլավով 244
Ս(տ)րետենսկի փողոց 218, 219
Ստուդենեց 244
Սրկղունք 23, 29
Սուարանց գիւղ 20, 288
Սուգդեա, տե՛ս Սուրոժ
Սուգդիա, տե՛ս Սուրոժ
Սուդակ, Սուդաղ տե՛ս

Սուրոժ
Սուղդայա, տե՛ս Սուրոժ
Սուզդալ 206, 236
Սուզդալեան-Նիժգորոդեան իշխանութիւն 160
Սուլթանիա 39, 64-66, 125, 137, 344
Սուլխաթ. տե՛ս Սուրխաթ
Սուխում 149, 175
Սուդդա, Սուդտա, տե՛ս Սուրոժ
Սուչաւա 191, 245, 246, 262, 270
Սուր գիւղ 282
Սուրխաթ 172-174, 180, 195, 201, 204
Սուրոժ. 172, 174, 200-204, 206, 212
Սուրոժեան թ. կղզի. տե՛ս Ղրիմ
Սուփար 159
Սուրմարի 76
Վազանկովեան թաղամաս 223
Վալախիա 192, 194, 200, 243-245
Վահանցիք գիւղ 147
Վաղադին 13, 17, 25-28, 32
Վաղարշակերտ 51, 171
Վաղարշապատ 277
Վայոց ձոր. Վայուձոր 10, 19, 26, 29, 34, 41, 42, 88
Վան 77, 78, 166, 171, 280, 321
Վանանդ 168
Վանք 10, 12
Վառնա 191
Վառնչիկն 326, 335
Վասպուրական 43, 51, 54, 171, 234, 296, 319
Վատիկան 49, 241, 251, 253-255, 258, 264, 273, 349
Վարդենիս գիւղ 46, 48
Վարշամակի վանք 138, 139
Վարշաւա 253, 255, 257
Վարսամբեկ-Կաչգար 138
Վարսամպեկի վանք. տե՛ս Վարշամակի վանք
Վարսկայա (փողոց) 199
Վարուարկա (փողոց) 199, 220
Վենետիկ 81, 88, 163-166, 188, 200, 232, 236, 267, 335
Վերանա գիւղ 147
Վերին Նորավանք 32
Վիեննա 335, 355, 356
Վինիցա 189
Վիշգորոդ 195
Վիսլա 185
Վիտովնիցէ 189
Վիրք տե՛ս Վրաստան
Վլադիմիր. Օլատեմիր 153, 186, 193, 194, 186, 202, 228
Վլադիմիր-Սուզդալեան (մեծ) իշխանութիւն 227, 228, 236
Վլադիմիրո-Սուզդալեան Ռուսիա 150
Վլախաց երկիր. տե՛ս Վալախիա
Վոլգա 46, 150-155, 158-162, 167, 169,180, 181, 187, 223, 235
Վոլգա-Ախտուբինեան հովտամաս 156
Վոլգոգրադ 156
Վոլին 193, 228, 242, 273
Վոլինեան Վլադիմիր 202, 206
Վոլինեան երկրամաս 186, 189, 202
Վրաստան 15, 17-19, 27, 29, 30, 76, 123, 125, 128, 153, 211, 223-225, 233, 234, 299, 305, 355
Վրացական ՍՍՀ 177
Տաթեւ 11, 13-18, 20, 21, 24-26, 28-31, 53, 116, 137, 288
Տաթեւի վանք 305, 310
Տալլին տե՛ս Րեւել
Տամատարխա, տե՛ս Տմուտարական
Տամբուր 123, 124
Տայք 123, 129, 135
Տանա, տե՛ս Ազով
Տանձատափ գիւղ 20, 288
Տաշու գիւղ 20
Տարօն 137,345
Տաւանեան գետանցք 187
Տարոնի ձոր 130
Տեյիռմէն-տեբէ 147
Տէմերտաղ լեռ 138
Տըրնովո 211
Տիվրիկ 137
Տղմուտ գետ 43
Տմուտարական. Մատրեգա 175, 176, 179, 180
Տրապիզոն 46, 125, 130, 131, 133, 135-137, 141, 143, 144, 146-148, 156, 171, 172, 215
Տրգովիշտէ 194
Տրիպոլի 147
Տուեր 206
Տուլա 172
Տփղիս. Տփխիս 27, 65, 125, 135, 342
Րեչպոսպոլիտա 197
Ցախացքար 25
Ցամաքձոր 335
Ցարգրադ 218
Ցեպերով գիւղ 193
Ցոցորա 266
Ուզ գիւղ 147
Ուկեկ, տե՛ս Ուվեկ. Ուվեակ
Ուկրաինա 148, 186, 188, 241, 243-251, 255, 259-261, 263, 265, 266, 269, 272, 273
Ուվեկ. Ուկեկ 151, 155
Ուրում (Բիզանդիա) 64
Ուփլիսցիխէ. տե՛ս Աֆլիսցիխէ
Փական 326
Փարպի գիւղ 27
Փերիա գաւառ 278
Փերուանա գիւղ 147
Փիրկի գիւղ 147
Փլաթանա 147
Փոս արտ 286
Փոքր Ասիա 43, 46, 48, 135, 138, 147, 161, 185, 222, 225, 246, 341
Փոքր Գրուզինսկի փողոց 224
Քաբուլ 196
Քալատակ 10, 12
Քաղկեդոն 70
Քամնակ 173
Քաշուտ 179, 180
Քաջարան 57
Քաջբերունիք 27, 276, 284
Քարափոս 335
Քարուակ գիւղ 287
Քելթափէ գիւղ 147
Քինուսցոց գիւղ 147
Քիւչուք-տերէ գետ 145
Քյողցեր լեռ 127
Քռնա 66, 82, 119, 336, 344-351, 354, 355, 358
Քութունց գիւղ 147
Քըռտ 57
Օլախաց երկիր, Ալախաց երկիր, տե՛ս Մոլդաւիա
Օլատեմիր. տե՛ս Վլադիմիր
Օլթիի շրջան 143
Օձուն գիւղ 345
Օկա 161
Օղակ գիւղ 83, 84
Օշական, Աւշական, Օւ-շական 124, 275, 277, 294
Օսմանեան կայսրութիւն, Օսմանեան Թուրքիա 127, 141, 142, 144, 221
Օր. տե՛ս Պերեկոպ
Օրթաքէյոյ 127
Օրիմբերան, տե՛ս Պերեկոպ
Օրոգի հարթավայր 64
Օրտու 143, 147
Օֆ 145
Ֆանար 200
Ֆացայի շրջան 147
Ֆէոդոսիա 167
Ֆլորենցիա 300, 301
Ֆոշ գիւղ 147
Ֆորթունա, Բուք գետ 127, 145, 138
Ֆռանկստան 210, 211
Ֆրանսիա 46, 196, 301, 347

Армения 297
Астраханское царство 235
Бебедvук 84
БелыVй ɒрод 223
Венеция 163
Волга 235
Генуя 163
Дон 213
Европа 163
ЖелезныVe врɑа 211
ЗападныйV Кавказ 179
Зенги мар (река) 84
Каф(ф)а 163, 175, 211, 212
Константинополе 163
КрыVм 208
Куликово поле 213, 238
Маку 84
Макинская долина 84
Манкуп 212
Москва 224, 228
Орда 237, 238
Пресня 223
Рим 211
Россия 163
Русе 211, 236
Средиземноморее 163
Судак 163,212
Суздале 236, 237
Суро=сс 237
Тифлис 224
Торнаə 211
Хвалинское море 235
Цирəграф 211
ºамаха, ºемаха 226, 227

Indes 226
Perse 226
Turquie 226

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք 6

Դրուագներ հայոց իշխանական տների եւ վարչական կազմաւորումների պատմութիւնից

Սիւնեաց Օրբելեանների Բուրթէլեան ճիւղը 7
Օրբելեան իշխանների Բուրթէլեան գերդաստանը եւ Սիւնեաց եպիսկոպոս պարոնտէր Ստեփանոսը 34
Արտազի հայկական իշխանութիւնը եւ Մորձորի դպրոցը 43

Հայկական գաղթավայրեր

Էջեր Համշինահայ պատմութիւնից 122
Հայերը հին Մոսկուայում եւ Մոսկուա տանող ճանապարհների վրայ 150
Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI-XVII դարերում 241

Գիւղական համայնք եւ արհեստագործութիւն

XIV-XV դարերի հայկական գիւղական համայնքի մասին 274
Արհեստագործութեան վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում X-XIV դարերում 296
Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերէն ձեռագրերի մէջ եւ դրանց աղբիւրագիտական նշանակութիւնը 315

Դաւանական եւ գաղափարախօսական խնդիրներ

Քռնայի հոգեւոր-մշակութային կենտրոնը եւ Յովհաննէս Քռնեցու գիտական գործունէութիւնը 336

Յաւելուած

Դիահերձումը հին Հայաստանում 361
Ցանկեր 369